Աշոտ դպիր Արևշատյան

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ

Հատոր I

Գիրք-I Երկիր, որտեղ արարվեց Եդեմական Դրախտը
Գիրք-II Երկիր, ուր հանգրվանեց փրկության Տապանը
Գիրք-III Երկիր, որին բախվելով սասանվեց համաշխարհային չարիքը
Գիրք-IV Երկիր, որտեղ գործածության մեջ է Դրախտի լեզուն
Գիրք-V Երկիր, որի մշակույթը եղավ հին աշխարհի զարգացման մատակարարը
Գիրք-VI Երկիր, որին շնորհված է հինավուրց խորհուրդների բացահայտումներ

Երևան
Աստղիկ Գրատուն
2015

ՀՏԴ 94(479.25):27
ԳՄԴ 63.3(5Հ)+86.37
Ա 865

Գրքի տպագրությունն իրականացվել է «Բարեպաշտ սերունդ»
հիմնադրամի մեկենասությամբ
(հոգաբարձուների խորհրդի նախագահ՝ Բարսեղ Բեգլարյան):

խմբագրական կազմ
***Մինաս քահանա Մարտիրոսյան, Գայանե Թերզյան, Լիլիթ Թափալեցյան,
Կարմեն Մարտիրոսյան, Մանվել Բաբայան***

Վերջնական խմբագրումը և սրբագրումը՝
Սասունիկ Ալեքսանյանի

Շապիկի ձևավորումը՝
Արման Կարախանյանի

Համակարգչային ձևավորումը՝
Միսակ Գևորգյանի

Համակարգչային շարվածքը՝
Գայանե Թերզյանի

Արևշատյան Ա.
Ա 865 **Հայաստան. Արարչագործությունից մինչև Երկրորդ Գալուստ** /
Ա.Արևշատյան.- Եր.: «Աստղիկ Գրատուն», 2015.- 528 էջ:

Ընթերցողին ներկայացվող սույն աշխատությունը նվիրված է Հայոց պատմության այն էջերին, որոնց մասին շատ քիչ է խոսվել, իսկ որոշ նյութեր ընդհանրապես ծածկված են եղել անհայտության շղարշի ներքո: Այնինչ՝ պատմության հենց այս հատվածներն ի հայտ են բերում հայ ժողովրդի ինքնության գաղտնիքները:

Աշխատությունը հագեցված է մասնագետների ուսումնասիրություններից մեջբերված բազմաթիվ հղումներով, որոնք գիտական ապացույցներ են և կամա-ակամա հաստատում են նաև սուրբ հայրերի մեկնությունները:

Գիրքը հանրությանն է ներկայացվում 4 հատորով: Կարծում ենք, որ տարբեր լեզուներով թարգմանվելու դեպքում այն մեծապես կնպաստի Հայաստանի և հայ ժողովրդի վարկանիշի աճին և ճանաչմանը:

ՀՏԴ 94(479.25):27
ԳՄԴ 63.3(5Հ)+86.37

ISBN 978-9939-74-014-0

© Աշոտ դպիր Արևշատյան, 2015
© «Աստղիկ Գրատուն» հրատարակչություն, 2015

«Երանի այն ազգին, որի օգնականը Տեր
Աստված է, երանի այն ժողովրդին, որին Իր համար Նա
ժառանգություն ընտրեց»[1]:





«Թող օրհնվեն քեզ օրհնողները,
և անիծվեն քեզ անիծողները»[2]

[1] Սաղմոս Դաւթի 32:12:
[2] Թվեր 24:9



Երկու խոսք

Ինքնատիպ մի գիրք է դրվում հայ ընթերցողի սեղանին՝ անսպասելի, նոր ու հրաշալի բացահայտումներով լի մի ընդգրկուն հատոր, որին, կամոքն Աստծո, պիտի հաջորդեն ևս երեքը: Այս գիրքը երկար տարիների տառապագին պրպտումների ու երկնառաք աղոթքների արգասիքն է մի նվիրյալ հայորդու՝ Հայ Եկեղեցու խոնարհ մի սպասավորի՝ Աշոտ դպիր Արևշատյանի:

Հայ ազգին բաժին հասած աստվածային առանձնաշնորհների մասին հեղինակը վաղուց էր խորհրդածում ու մտորում՝ երազելով այդ ամենի մասին իրազեկել և՛ իր ազգակիցներին, և՛, մանավանդ, օտարներին՝ հուսալով, որ նման տեղեկատվությունը կնպաստի ոչ միայն ամեն մի հայի հոգևոր զարթոնքին, ազգային ինքնության նորովի կերտմանը, Հայ Եկեղեցու և հայրենիքի հանդեպ սիրո և ակնածալից վերաբերմունքի հաստատմանը, այլև կօգնի օտարներին՝ ավելի ճիշտ ու նրբորեն ճանաչելու և սիրելու մեր ժողովրդին, ձերբազատվելու տարածված բազում պատմական զեղծարարություններից ու խեղաթյուրումներից, խորապես ըմբռնելու վերջին հարյուրամյակի՝ հայոց պատմության ողբերգական իրադարձություններն ու դեպքերը:

«Հայաստան. Արարչագործությունից մինչև երկրորդ գալուստ». այս խորագիրն արդեն իսկ խոսուն մի ճշմարտություն է՝ առինքնող մի վկայություն...

Թերևս այս աշխատությունը շատ ավելի շուտ պիտի լույս տեսած լիներ, որպեսզի, որպես մի ձեռնարկ, հայ ծնողների և ուսուցիչների կողմից օգտագործվեր մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության անդաստանում՝ նրանց հոգիներում աստվածասիրություն և հայրենասիրություն սերմանելու համար:

Այս գիրքը մեզ համար բացահայտում է բազում-բազում հրաշալի ու անակնկալ պատմական իրողություններ՝ ներկայացված սկզբնաղբյուրներից քաղված հավաստի վկայություններով: Մենք համոզվում ենք, որ մարդկության առաջին և երկրորդ բնօրրանն է պատմական Հայաստանը, և որ հանձին Բելի՝ Ջարի դեմ առաջին հաղթանակը հայոց նահապետի ձեռամբ է իրականացվել: Ջարմանքով ընդունում ենք, որ Հայկ նահապետը Բարձրյալ Աստծո քրիստոսատիպ քահանան էր՝ Աստվածաշնչյան Մելքիսեդեկը, և որ Աստվածորդին տեսիլքով իջել է հայոց հողի վրա և կնքել հայ ժողովրդի հոգևոր կենտրոնի սրբազան վայրը: Մեզ անհերքելի ապացույցներ են ներկայացվում, որ հայոց այբուբենը աստվածապարգև գիր է, և որ հայ ժողովուրդը՝ «փոքրիկ այդ ածուն», դարերով մաքառել է, նահատակվել ու մոխիրների միջից ամեն անգամ անքնին տնօրինությամբ փյունիկի պես հառնել: Ընթերցելիս՝ մեզ անդադար հիացնում ու զարմացնում է Արարչի՝ մեր հանդեպ անսահման առատաձեռնության և սիրո դրսևորումը, նաև խոր կսկիծ ու ցավ ենք զգում՝ մեր անարժանության պատճառով մեր նախնական շնորհների մեծ մասից զրկվելու համար: «Աստուած ընտրեց այս աշխարհի տկարներին, որպէսզի ամաչեցնի հզորներին. և Աստուած աշխարհի ոչ տոհմիկներին, արհամարհուածներին եւ ոչինչներին ընտրեց, որպէս-

զի իրենք իրենց մի բան կարծողներին ոչնչի վերածի. որպէսզի ոչ մի մարդկային էակ չպարծենայ Աստծու առաջ» (Ա Կորնթ. 1.27-29)։

Գիրքը, սակայն, այլ խորհուրդներ էլ ունի՝ թերևս ավելի կարևոր, քան պատմական անդրադարձները. վերադառնալ հոգևոր արմատներին՝ ապաշխարությամբ ու ցավով՝ մեր անարժանության պատճառով կորուսյալ շնորհների համար. այս ուղղափառ գիտակցումով հանապազ խնդրել բազումողորմ ու գթառատ Տիրոջը՝ ներել մեր մեղքերը, այդ շնորհների հանդեպ մեր անտարբերությունը և մեր Լուսավորիչ հոր խոսքերով խրատված՝ ծնկաչոք բարբառել. «Դարձյալ պարգևի՛ր մեզ դրանք և պահի՛ր մեզ Քո արքայության մեջ»։

Սիրով ողջունում ենք հեղինակի սույն գրքի առաջին տպագրությունը և մեծազոր Աստծո շնորհներն ու օրհնությունը հայցում՝ գրքի հրատարակման տարբեր փուլերում իրենց մասնակցությունն ու օգնությունը ցուցաբերած բոլոր անձանց ու կազմակերպություններին, ի մասնավորի՝ «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի տնօրինությանը, ում սիրահոժար հովանավորությամբ իրագործվել է գրքի հրատարակչական ծախսերի զգալի մասը և տպագրությունը։

Թող Տերը պատրաստի այս շահեկան գրքի ընթերցողների մտքերն ու սրտերը՝ խոնարհությամբ ընկալելու և երկյուղալից բերկրանքով ցնծալու՝ Մայր Հայաստանին Հայր Աստծուց շնորհված առատ պարգևների համար։

Իսկ մենք էլ ազգովի՝ մեծ թե փոքր, այր թե կին, աշակերտ թե ուսուցիչ, հոգևորական թե մտավորական, բանվոր թե գինվոր, գիտնական թե շինական, բժիշկ թե օդաչու, թախանձագին պաղատենք Տիրոջը՝ ամեն պարգևների Տվիչին՝ մեզ վերստին այդ նվիրական շնորհներին արժանացնելու՝ բնավ և երբեք չմոռանալով, որ «նրան, ում շատ է տրված, նրանից էլ շատ կպահանջվի» (տե՛ս Ղուկ. 12.48)։ Ամեն։

Մինաս քահանա Մարտիրոսյան
Սևանավանքի վանահայր

Խմբագրի առաջաբանը

Մասնագիտության բերումով և հոգևոր, գիտական ու գեղարվեստական մեծածավալ գրականության ուսումնասիրմամբ հանդերձ, խոստովանում եմ, որ երբևէ չեմ հանդիպել այնպիսի գրքի, ինչպիսին Աշոտ դպիր Արևշատյանի մտահղացմամբ ամբողջացած այս արժեքավոր գործն է, որի խմբագրման պատիվն ունեցա։

Սա սովորական կառուցվածքի գիրք չէ՝ իր ընդգրկումով, շոշափած թեմաներով, խնդրահարույց առեղծվածների քննարկմամբ, համոզիչ և համարձակ եզրահանգումներով, առավել ևս՝ հազարամյակներով ծածկված խորհուրդների բացահայտումով, ազնիվ ու անաչառ վերլուծություններով՝ Սուրբ Գրքի, հայրաբանական և այլ ոլորտների գիտական ու փաստական անհերքելի հակայածավալ նյութերի տրամաբանական համադրմամբ։

Վստահաբար կարծում ենք, որ հանրագիտարանային խորքով սույն ինքնատիպ գործը պարտադիր ընթերցման՝ սեղանի գիրք պետք է դառնա ոչ միայն հայ ծնված յուրաքանչյուր անհատի, այլև մեր մոլորակի բազմալեզու մարդկության համար, որ ըմբռնեն, թե որտեղից են գալիս և ուր են գնում, որպեսզի նաև «կույր հեղեղների» համաշխարհային նկրտումներից զգուշանան, ճանաչեն և սիրեն իրենց հին ու սիրելի նախահայրենիքը՝ Արարչագործությունից մինչև Տիրոջ երկրորդ գալուստը ձգվող Հայաստան աշխարհը, Արարատ եկեղեցատեսք լեռը, որի ստորոտում և շուրջը հարատևում է հնամենի հայոց ազգը՝ համարյա անաղարտ պահելով իր աստվածային նախաստեղծ հոգու պատկերը, լեզուն, դիմագիծն ու մշակույթը։

Նախաբանը կարդացողին կարող է թվալ, թե պերճաբանում ենք։ Սակայն գիրքն ընթերցելիս՝ ապշեցուցիչ, իրար հաջորդող բացահայտումներ կտեսնեք և կնկատեք, որ մեր կարծիքը նվաստ է՝ մագիստրոսական մակարդակի այս աշխատությունը գնահատելիս։

Յուրատեսակ և անսովոր բաժիններով ներկայացվող գրքի ուսումնասիրման ընթացքում ձեր մեջ կզգաք լուրջ տեղաշարժեր. կդառնաք ավելի խաղաղ, ավելի մարդասեր ու աստվածամերձ և, ինչու՞ չէ, ավելի իրատես, մարտնչող և իմաստասեր, նաև այնպիսին, որ մտքով թեթևորեն կարող է սահել նախնի ժամանակների միջով և տեսնել հավերժական հայի, հավերժող անհատ մարդու և տիեզերքի ներդաշնակ միասնությունը ոչ թե բանաստեղծորեն, այլ վավերական ճշմարտության իմացաբանության մեջ։

Սասունիկ Ալեքսանյան

ԱՌԱՋԱԲԱՆ

«Պետք է ճանաչել Հայաստանը: Արևային երկիր, ինչը ոչ մի բանի հետ չի համեմատվի: Աքանչելի երկիր, որտեղ քարերը և ջուրը, այգիները և որթատունկերը շնչում են հավիտենականությամբ: Ջիթենու ճյուղը կտուցին՝ Նոյ նահապետի կողմից արձակված աղավնին պտտվեց այդ երկրով մեկ, թե կա՞ արդյոք մարդկանց փրկություն: Եթե իրականում և երբևէ եղել է ոսկե դար և եղել է Դրախտի այգին, ապա այդ այգու մի մասը եղել է այստեղ՝ Արարատ լեռան ստորոտին»[1].

Երկիր մոլորակի վրա բազմաթիվ ազգեր և երկրներ կան, որոնք միմյանցից տարբերվում են ոչ միայն ծագմամբ, աշխարհագրական դիրքով, այլև՝ ճակատագրով ու առաքելությամբ: Որոշ ժողովուրդներ հին են, մյուսները՝ համեմատաբար ավելի երիտասարդ, սակայն յուրաքանչյուրն ունի իր ուրույն տեղն ու նշանակությունը: Նրանցից մի քանիսի պատմությունը հարուստ է հիշարժան դեպքերով, որոնք խորը հետք են թողել մարդկության ճակատագրի վրա:

Ինչ վերաբերում է հայ ժողովրդի պատմությանը, ապա այն գալիս է մարդկության արարման, քաղաքակրթությունների ձևավորման ակունքներից:

Հայ ժողովրդի բնօրրանը Հայաստանն է: Հայաստան ասելիս՝ նկատի ենք առնում Փոքրասիական և Իրանական բարձրավանդակների, Սև ծովի, Անդրկովկասի ու Միջագետքի հարթավայրերի միջև ընկած տարածքները, որոնք իրենց բարձր դիրքի պատճառով կոչվում են Հայկական լեռնաշխարհ:

Կարելի է թվարկել տասնյակ գործոններ, որոնց հետևանքով թվում է, թե հայ ազգն այժմ պետք է բնաջնջված լիներ, մինչդեռ չկա որևէ երկրային հիմնավորում, թե նա ինչպե՞ս է հասել մինչև մեր օրերը: Դա կարելի է բացատրել միայն Նախախնամությամբ, աստվածային կամքով՝ մեզ վրա Տիրոջ կողմից դրված հատուկ առաքելությամբ:

Հայոց պատմությունը շատերն են գեղծել:

Ջեղծարարությունը լայն թափ ստացավ հատկապես 20-րդ դարի 50-ական թվականներից՝ աթեիզմի աննախադեպ տարածման հետևանքով, երբ լայն զանգվածների մոտ խաթարվեց Սուրբ Գրքի հեղինակությունը. հետևաբար, նաև՝ մարդկային ցեղի պատմության ճիշտ ընկալումը:

Հորինվեց տեսակետ, թե իբր հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկները չեն: Խորհրդային Միության անաստվածության և կողմնակալ քաղաքականության հետևանքով բազմաթիվ կարևոր դեպքեր, փաստեր, տեղեկություններ արհեստականորեն օտարվեցին հայությունից կամ միտումնավոր ներկայացվեցին սխալ մեկնաբանություններով: Դա է պատճառը, որ ոչ միայն աշխարհը, այլև նույնիսկ հայերից շատերը պատկերացում չունեն իրենց իսկ իրական պատմության մասին:

---

[1] Эдуардас Межелайтис, Армянский феномен, “Советакан грох”, Ереван, 1982, ст. 108.

Կապված այս ամենին՝ տարիներ առաջ մենք սկսեցինք ամբարել հայ ազգին տրված զարմանահրաշ շնորհների վերաբերյալ նյութեր, որոնք համաշխարհային և համաքրիստոնեական արժեքներ են, սակայն ցաքուցրիվ են և մինչ այժմ մանրամասն հետազոտման չեն ենթարկվել: Դրանք աչալրջորեն ուսումնասիրելով և մեկտեղելով՝ ստանում ենք հիրավի աքանչելի, զարմանահրաշ և ավարտուն խճանկար, ինչը յուրօրինակ Հայոց պատմությունն է՝ հոգևոր շեշտադրմամբ, քանզի հենց նման մոտեցումն է բացահայտում Հայաստան աշխարհի ճշմարիտ էությունն՝ իր ողջ հարստությամբ, ճոխությամբ ու գեղեցկությամբ:

Այն սկիզբ է առնում արարչագործության շրջանից և, որպես մի կուռ շղթա, առանց որևէ օղակի խաթարման կամ կորստի՝ հասնում է մինչև մեր օրերը:

Իսկ Հայաստանի ապագայի մասին դարերի խորքից եկած մարգարեությունների մեկտեղումը վկայում է, որ Հայոց պատմությունը, ներկա օրերի միջով անցնելով, շարունակվելու է՝ ընդհուպ աշխարհի վախճանը:

Այս գրքում ներկայացվող մոտ յոթհազարամյա պատմությունը ծանրաբեռնված չէ աշխարհիկ թեմաների անհիշարժան դրվագներով: Հիմնականում ընտրվել են Հայաստանին և հայ ժողովրդին վերաբերող առանձնաշնորհները և վերելքները պայմանավորող զարմանահրաշ դեպքերը:

Այստեղ փորձել ենք վեր հանել նաև անկումային ժամանակաշրջանների պատճառները՝ հետագայում կործանարար քայլերից խուսափելու նպատակադրումով:

Ներկայացվող նյութը ծավալուն գիտական աշխատություն է՝ հոգևոր և աշխարհիկ բազմաթիվ հեղինակների հիմնավորումներով: Լինելով յուրօրինակ տարեգրություն՝ այն նաև գիտահետազոտական և մեկնողական գրականություն է:

Այս աշխատության մեջ ընթերցողին կմատուցվեն Սուրբ Գրքի այնպիսի համարների մեկնություններ, որոնք հազարամյակներ շարունակ եղել են առեղծված, իսկ, դրանց բացահայտումը սերտորեն կապված է հայոց պատմության հետ:

Մենք քաջ գիտակցում ենք, որ անգամ մի փոքրիկ սխալը կամ չհիմնավորված նյութը կարող է ստվերել ողջ աշխատությունը: Այդ իսկ պատճառով ներառել ենք միայն սկզբնաղբյուրներում նշված և քանիցս ստուգված փաստեր:

Այս աշխատանքը ծրագրվում է իրականացնել չորս հատորով:

Առաջին հատորը բաղկացած է վեց գրքերից.

- *Եդեմը՝ Դրախտի պարտեզը.*
  Այն հաստատված է եղել Մեծ Հայքի տարածքում, և Դրախտում ու Դրախտից դուրս կատարված նախաջրհեղեղյան բոլոր դրամատիկ դեպքերը տեղի են ունեցել Հայոց հողի վրա: Բոլոր նահապետները՝ մինչև Նոյը, բնակվել են Մեծ Հայքի տարածքում. այս տարածքը համայն մարդկության և կենդանական աշխարհի բնօրրանն է:
- *Արարատ լեռը և Նոյան տապանը.*
  Այս սրբություններ Հայաստան աշխարհը ներկայացնում են որպես փրկության երկիր և մարդկության ու կենդանական աշխարհի կրկնակի

նախահայրենիք: Ջրհեղեղից հետո էլ այստեղ կատարվեցին դեպքեր, որոնք խորը հետք թողեցին մարդկության ճակատագրի վրա:

- *Հայկը.*
  Նա Նոյից ժառանգեց ճշմարիտ աստվածպաշտությունը և սպանեց «առաջին նեռ» համարվող Բելին՝ Նեբրովթին: Սա առաջին մեծ պատերազմն էր՝ հանուն մեր Տեր Աստծո և մեր հայրենիքի:
- *Հայոց լեզուն.*
  Հայկ նահապետը վերադառնալով Բաբելոնից՝ շարունակեց խոսել Ադամի լեզվով, որը մարդկության նախասկզբնական, անխառն լեզուն էր:
- *Հայաստանի վերելքը.*
  Հայկ նահապետի ժամանակ Հայաստանը հասավ հոգևոր-մշակութային, տնտեսական և քաղաքական մեծ բարձունքների: Ծնունդ առած հրաշալի մշակույթը գիտական շրջանակներում անվանվում է «Քուռարաքսյան»:
- *Հայկ նահապետ և Մելքիսեդեկ.*
  Հայկը նույնացվում է Հին Կտակարանի ամենաառեղծվածային անձնավորության՝ Մելքիսեդեկի հետ, ով Բարձրյալ Աստծո քահանա էր, Սաղեմի (Երուսաղեմի) թագավոր և մեր Տեր Հիսուս Քրիստոսի նախակերպար: Նա էր, որ օրհնեց հայր Աբրահամին, և Աբրահամը տասանորդ մատուցեց Մելքիսեդեկին՝ որպես փոքրը՝ մեծին:

Հաջորդ հատորում, նորից վեց գրքերով, կներկայացեն են Հայոց պատմության այն իրողությունները, որոնք տեղի են ունեցել առաջին հատորում շարադրված դեպքերից մինչ Տեր Հիսուս Քրիստոսի երկրավոր ծնունդի ժամանակաշրջանը: Այնտեղ նույնպես կխոսվի շատ հետաքրքիր առեղծվածների մասին:

Մյուս երկու հատորներում կներկայացվի Հայոց պատմության՝ Քրիստոսի ծնունդից մինչ երկրորդ գալուստն ընկած ժամանակաշրջանը:

Հատորներում շատ վերնագրեր կան, որտեղ ներկայացվող առանձնաշնորհները հիմնասյուներ են, սակայն կան նաև բազմաթիվ այլ յուրահատուկ շնորհներ, որոնցից յուրաքանչյուրը ցանկացած ազգի համար կարող է պարծանք համարվել:

«Իսկ մենք պարծենում ենք ոչ թէ չափից դուրս, այլ՝ ըստ չափի այն կանոնի, որը Աստված մեզ բաժանեց»[2]:

Այսօր Հայաստանում վխտում են տարաբնույթ աղանդներ: Աստվածամերժ խորհրդային շրջանից ժառանգած անհավատությունը ևս դժվարությամբ է նահանջում: Կարծում ենք, որ բարոյահոգեբանական նման անկումային շրջանում այս աշխատությունը կարող է մեծ դեր ունենալ, եթե այն հավուր պատշաճի ներկայացվի մեր հայրենակիցներին ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև՝ Սփյուռքում: Արդյունքում՝ կարթնանա մեր ազգային ինքնագիտակցությունը, հարգանք և նախանձախնդրություն կառաջանա Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու, հայրենիքի և ազգի նկատմամբ, ըստ արժանվույն կգնահատ-

[2] Բ Կորնթ. 10:13:

վեն հայոց լեզուն, պատմությունն ու եզակի մշակույթը, իրենց պատշաճ բարձրության վրա կդրվեն հայոց մեծերը։

Բնական է, որ աշխատությունն իր ողջ լրջությամբ հանդերձ՝ հիմնականում կհետաքրքրի նրանց, ովքեր հավատում են, որ իրենք Արարչի կողմից ստեղծված նախահոր՝ Ադամի սերունդներն են, այլ ոչ թե պատահականության արդյունք։ Դրանից ելնելով՝ անհրաժեշտ ենք համարում նաև հնարավորինս մեծ թվով ազգերի տեղեկացնել Հայաստանի ու հայոց ազգի առանձնաշնորհների մասին, քանզի կան միլիոնավոր քրիստոնյաներ՝ ուղղափառ, կաթոլիկ, բողոքական և այլք, ում վրա այս ամենը, ըստ մեր դիտարկումների, կարող է ցնցող տպավորություն թողնել։ Հայոց պատմության բացառիկության մասին տեղեկանալով՝ աշխարհի ժողովուրդները նոր լույսի ներքո կճանաչեն Հայաստանն ու հայությանը։

Հուսով ենք, որ դա կբազմապատկի մեր բարեկամների թիվը, և այլազգի քրիստոնյաները ևս իրենց ձայնը կբարձրացնեն՝ ի պաշտպանություն ցեղասպանություն ապրած հայության պահանջատիրության, Արցախի հարցի լուծման և արդարության հաղթանակի։

Այս գործն իր հոգևոր ու բարոյական նշանակությամբ նաև կնպաստի Հայաստանի տնտեսության վերականգնմանը, մասնավորապես՝ հոգևոր զբոսաշրջության զարգացմանը։

Եթե այլ ազգերն ունենային հայոց շնորհների փոքր մասն անգամ, չէին հապաղի աշխարհով մեկ այդ մասին ազդարարել։

Մենք՝ հայերս, իրավունք չունենք Արարչի շնորհած անթիվ-անհամար գանձերը թաղել հողի տակ՝ Ավետարանի քանքարաթաքույց չար ծառայի պես։

Թյուրըմբռնումների դեպքում ակնկալում ենք ընթերցողների ներողամտությունը։ Գոհությամբ կընդունենք այլազան կարծիքներն ու առաջարկությունները՝ հաջորդ տպագրության ժամանակ։

Աշոտ դպիր Արևշատյան

ԳԻՐՔ I

Երկիր, որտեղ արարվեց Եդեմական Դրախտը

«Ուրախ եղիր և ցնծա, Հայաստան աշխարհ՝
երկիր Ավետյաց, Դրախտ աստվածատունկ՝ զարդարված
առաքյալներով ու մարգարեներով և սրբերի լուսեղեն դասերով.
վկաների արյամբ քո մեջ մարեց մոլորության բոցը, և ճշմարտության
ջահը վառվելով բորբոքվեց, ու ճառագայթեց Լույսն անաղարտաբորբոք»[1]:

Ջուտ խորհրդանշաբար չի ասվում, որ Հայկական լեռնաշխարհի պատմությունը գալիս է հազարամյակների խորքից: Դա իսկապես այդպես է: Ավելին. այն սկսվում է բուն արարչագործության շրջանից, և որքան էլ զարմանալի թվա, Հայկական լեռնաշխարհի մասին Սուրբ Գրքում Եդեմի պարտեզի ստեղծումից առաջ արդեն իսկ հիշատակում կա:

Առաջին անվանումը «Արևելքն» է, ինչի մասին մանրամասն կխոսվի այս հատորի երկրորդ՝ «Աստվածաշնչյան Արևելք» գրքում:

Այնուամենայնիվ, Հայաստանի բուն պատմությունը սկսվում է Դրախտի արարումով՝ երկրագնդի վրա առաջին մարդկանց բնակության վայրով:

«Հայաստանն ինքնին նախախնամված երկիր է և Բարձրյալի կողմից սիրված, որին շատ վաղ հայտնեց, և պետք է, որ ամեն ազգ իր ծագումը փնտրելիս՝ նախ ետ դառնա և այդ երկրին նայի»[2]:

«Հայաստան» անվան համար շատերի մոտ հոմանիշ է ծառայել և ծառայում «Երկիր Դրախտավայր» կոչումը: Դա սոսկ գեղեցիկ հաճոյախոսություն չէ, այլ մատնանշում է այն երկիրը, որտեղ Աստծո կամոք արարվեց Եդեմի պարտեզը: Սակայն վերջին շրջանի որոշ մեկնիչներ և հետազոտողներ, չունենալով բավարար հիմնավորումներ, դրախտավայրի պատիվը վերագրել են այլ երկրների.

«Երկար ժամանակ Սուրբ Գրքի մեկնիչներից ոչ ոք Հայաստանում Եդեմի գտնվելու հետ կապված տարակուսանք չէր հայտնում, միայն վերջին դարերին այն սկսեցին քննադատել՝ ցանկանալով այս փառքը խլել մեզանից և պարգևել Հնդկաստանին, Եթովպիային և այժմ նաև՝ Ասորեստանին... Բայց մինչև այսօր էլ չեն պակասում ոչ միայն ազգային ոգով լցված հին ավանդության պաշտպանները, այլև օտար և անշահախնդիր բանասերները»[3]:

Քարտեզի վրա Հայաստանի տեղանքին թռուցիկ հայացք գցելն էլ բավ է,

---

[1] Սբ. Մովսես Խորենացի, Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, Սբ. Էջմիածին, 2003 թ., էջ 104-105:

[2] Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար, Վենետիկ, 1920, էջ 67:

[3] Հ. Յ. Աւգեր. Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան, Բազմավէպ, 1912, հատոր Հ, թիվ 12, Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 34:

որպեսզի պարզ լինի, թե երկիր մոլորակի ո՞ր տարածքն է առավել հարուստ այն նշաններով, որոնցով պայմանավորված է Դրախտի գտնվելու վայրը։

Այդ նշանները, ըստ Աստվածաշունչ մատյանի, երեքն են՝ Արևելքը, Եդեմը, և չորս գետերը։

*Եվ քանի որ Առաքյալը պատվիրում է՝ **«փորձել ամեն ինչ, և բարին ամուր պահել»**[4], մենք էլ կաշխատենք այս վերնագրի տակ ի մի բերել տվյալ հարցի շուրջ կողմ, դեմ և ձեռնպահ կարծիքները և, անկախ ամեն ինչից, բարին ամուր պահել։*

Դառնանք Դրախտի գտնվելու վայրի երեք հիմնական նշաններին՝ սկսելով չորս գետերից։

Եդեմաբուխ չորս գետեր

«Ես աշխարհով մեկ՝ անապատներով,
կշրջեմ որպես Բեզվին և օազիս կգտնեմ.
ինձ հայտնի է, թե որտեղ է այն։
Կհպվեմ ես շուրթերով հայկական ջրին։
Կարծես երազանք է այդ ջուրը,
մի՞թե ունի այն իրեն հավասարը»[5]։

Դարեր շարունակ՝ բազմաթիվ ուսումնասիրողներ փնտրել են եդեմական Դրախտի գտնվելու վայրը, սակայն որոշ հակասություններ թույլ չեն տվել վերջնական եզրակացության հանգել։ Բայց որտեղ էլ ցանկանան տեղադրել Դրախտը, միևնույն է՝ Տիգրիսից ու Եփրատից հեռանալ չեն կարող, քանզի, ըստ Սուրբ Գրքի, այդ գետերը բխում էին Եդեմից։ Իսկ որ դրանց ակունքները գտնվում են Մեծ Հայքի տարածքում, անհերքելի փաստ է։

*Դրախտի արարման և նրա գտնվելու վայրի մասին տարբեր ազգեր, ըստ իրենց կրոնական պատկերացումների, ընկալել են յուրովի։ Բայց այդ մասին ամենահստակ տեղեկությունները մեզ տալիս է Աստվածաշունչ մատյանը։ Եվ շատերը դարեր ի վեր իրենց փնտրտուքներում առաջնորդվում են հենց Սուրբ Գրքի հետևյալ հատվածով. **«Աստված Դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն։ Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը և բարու և չարի գիտության ծառը տնկեց Դրախտի մեջտեղում։ Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր Դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի։ Մեկի անունը Փիսոն էր։ Նա է, որ պատում է ամբողջ Եվիլատ երկիրը՝ այնտեղ, ուր ոսկի կա։ Այդ երկրի ոսկին ազնիվ է։ Այնտեղ կա նաև սուտակ և դահանակ ակնաքարը։ Երկրորդ գետի անունը Գեհոն է։ Նա պատում է Եթովպացվոց երկիրը։ Երրորդ գետը Տիգրիսն է։ Սա հոսում է դեպի Ասորեստան։ Չորրորդ գետը Եփրատն է»[6]։***

Դրախտի մասին այս հիշատակումը հիմք է հանդիսանում՝ նրա տեղանքը

---

[4] Ա Թեսաղոնիկ. 5.21:

[5] Синг Сафир (Индия), տե՛ս Солнечный очаг, изд. “Айастан”, Ереван, 1970, ст. 105-106.

[6] Ծննդոց 2:8-14:

երկրի վրա ճշտելու համար, ինչին նպաստում են նաև վերջին շրջանում մեծ առաջընթաց ապրող հնագիտության տվյալները, որոնք համահունչ են սուրբգրային այս վկայությանը։

Սակայն կան մեկնիչներ, որոնք սուրբգրային և հնագիտական տվյալները հիմք ընդունելու փոխարեն՝ տարվում են էկզոտիկ բնապատկերներով, վայրի գեղեցկությամբ և, նման մակերեսային, անկարջ հանգամանքներից ելնելով, համոզմունք են հայտնում, թե Դրախտը հենց այդ տեղում է եղել (եթե դա անգամ իր աշխարհագրական դիրքով վերոնշյալ տեղանքին անհարիր ինչ-որ կղզի է)։

«Սուրբ Գիրքը մեզ ամեն ինչ հայտնում է, և ուրիշ կարծիք լինել չի կարող, բայց որևէ հիմնավորում չունենալով՝ յուրաքանչյուր ազգ գրեց այն, ինչ ցանկացավ և Դրախտը դրեց այնտեղ, որտեղ կամեցավ՝ հաշվի չառնելով Սուրբ Գրքի բուն պատմությունը, որին խելամուտ լինելը դժվար չէր»[7]։

Հիշյալ չորս գետերը Դրախտի գտնվելու վայրի ամենաակնառու նշաններից են։ Ուսումնասիրողների մեծ մասն առաջնորդվում է՝ հիմք ընդունելով դա։ Սակայն նման դրվատելի մոտեցումը միշտ չէ, որ բերել է խնդրի տրամաբանական բացահայտմանը։ Ընդհակառակը՝ երբեմն նույնիսկ պատճառ է դարձել հակասական եզրահանգումների, քանզի ի տարբերություն Տիգրիսի և Եփրատի՝ Փիսոն և Գեհոն գետերի մասին չկան հստակ տեղեկություններ։ Իսկ Սուրբ Գիրքը մեզ ինչ հաղորդում է Փիսոնի և Գեհոնի մասին, առաջին հայացքից անհամատեղելի է թվում Տիգրիսի և Եփրատի գտնվելու վայրի հետ. սակայն դա միայն առաջին հայացքից։ Սուրբգրային հատվածը որոշ մեկնիչների շփոթության մեջ է գցում, երբ իրենց ուշադրությունը սևեռում են կասկածահարույց Փիսոն և Գեհոն գետերի վրա։ Այնինչ հարկ էր՝ ուսումնասիրությունների մեկնակետ ընտրել հայտնի Տիգրիսն ու Եփրատը.

«Արդ, թեպետ մատենագիրների մոտ այսքան բազմազան կարծիքներ առաջացան, բայց ընդհանրապես չմեկնեցին Սուրբ Գրքի հայտնի խոսքերը երկու գետերի՝ Տիգրիսի և Եփրատի մասին, որոնց անունները մինչև այժմ մնացել են»[8]։

Նման մեկնակերպը դրդում է՝ Դրախտը փնտրել Հնդկաստանում, Եգիպտոսում և այլուր՝ հաշվի չառնելով այն անհերքելի փաստը, որ չորս գետերն էլ սկիզբ են առնում միևնույն վայրից, և նրանցից երկուսի ակունքների վայրի մասին (կրկին շեշտում ենք) կասկած չկա։

Քանի որ Եվիլատ երկիրը, որին պատում էր Փիսոնը, հարուստ է ոսկով և թանկարժեք քարերով, ոմանք համապատասխան վայրը փնտրելու միտումով իրենց հայացքն ուղղել են Հնդկաստանի կողմը՝ Գանգես գետը ընդունելով որպես Փիսոն։ Եվ դա համարելով հիմք՝ եկել են համոզման, թե Դրախտը գտնվել է Հնդկաստանում, իսկ Գեհոնը քանի որ պատում է եթովպացիների երկիրը, այն պետք է Նեղոս գետը լինի։ Սակայն, այս երկու դեպքերում էլ տեսնում ենք մեծ անհամապատասխանություն, քանզի բոլոր չորս գետերի ակունքներն էլ գտնվել են միևնույն վայրում, ինչն էլ հուշում է, որ մյուս երկու անհայտ գետերն էլ

---

[7] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. I, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1835 թ., էջ 245։

[8] Նույն տեղում, էջ 246։

պետք է հայտնիների՝ Տիգրիսի ու Եփրատի մերձակայքում փնտրել: Նրանք, ովքեր համարում են, թե Գեհոնը Նեղոսն է, ցանկանալով հարմարեցնել Աստվածաշունչ մատյանի տված տեղեկությանը, մինչև անգամ կարծիք են հայտնում, թե Ջրհեղեղի ժամանակ մայրցամաքների տեղաշարժ է եղել, և Աֆրիկան պտտվել է, ինչի հետևանքով Նեղոսի ակունքը բացարձակ հակառակ դիրք է գրավել Տիգրիսի ու Եփրատի ակունքների նկատմամբ: Սակայն մի այլ պարագա էլ կա. եթե Գեհոնը պատել է եթովպացիների երկիրը, ապա Նեղոսը համարյա թե չի առնչվում ներկայիս Եթովպիայի տարածքի հետ: Ուստի նպատակահարմար է՝ Գեհոնն այլ տեղ փնտրել, քան ամեն գնով մնալ այդ կարծիքին: Նույն կերպ պետք է վերաբերվել նաև Փիսոնի հարցին. Այսինքն, այն ևս փնտրել Հնդկաստանից հյուսիս ընկած տարածքում՝ հայտնի գետերի ակունքների մոտ:

«Այսքան բազմաբնույթ կարծիքներն առավելապես երկու պատճառով առաջացան: Առաջինը, որ Դրախտի տեղի մասին Մովսեսի հայտնած նշաններն անփոփոխ չմնացին: Երկրորդ, որ Հայաստանի մասին հիմնավոր տեղեկություններ չունեին: Առաջին պատճառից առաջացան այն կարծիքները, որ միայն գետի մեծությանը նայելով՝ որտեղ մեծ գետ գտան, մինչև այդ վայրը տարածեցին Դրախտի սահմանը: Հովսեփոսը, Եպիփանը, եգիպտացի քուրմ Լուկանոսը և Հանսենիոսը, սկսելով Տիգրիսից ու Եփրատից, Դրախտի տեղը տարածեցին մինչև Հնդկաստանի Գանգես և Աֆրիկայի Նեղոս գետերը. Փիսոնը համարեցին Գանգեսը, իսկ Գեհոնը՝ Նեղոսը:

Այսպես վարվեցին նաև Եվիլատ անվան հետ, քանզի Սուրբ Գրքում, որտեղ նման անվան հիշատակություն գտան, այնտեղ էլ հաստատեցին այն:

Ոմանք էլ նայելով միայն Մովսեսի նշած բարիքներին (այսինքն, որտեղ ոսկի և թանկարժեք քարեր գտան)՝ այնտեղ հաստատեցին Դրախտը՝ անտեսելով այն գլխավոր նշանները, որոնք մատնանշում են Դրախտի տեղը: Իսկ ոմանց անհեթեթ կարծիքներն արժանի չեն հիշատակելու»[9]:

Կան նաև կարծիքներ, որոնք ոչ թե հիմնված են լուրջ հետազոտությունների վրա, այլ ուղղակի բխել են Տերունական վայրերի հանդեպ հարգանքից:

Ոչ միայն Դրախտի, այլև որոշ այլ հարցերում առաջնությունը տալիս են Իսրայելին՝ առանց գիտական հիմնավորումների, ինչի մասին կխոսվի հաջորդիվ:

«Ժամանակակիցներից ոմանք, ի պատիվ Պաղեստինի, ասացին, որ այնտեղ է Դրախտը: Այս կարծիքին էր նաև բազմահմուտ այր Հարդուինը, սակայն նրան ավելի չեն ընդունում անգլիացի հեղինակները, իբր առավել անհավանականի, քան մյուսների կարծիքները, քանզի այդտեղ Մովսեսի տված նշաններից ոչինչ չկա: Նախ՝ Մովսեսը հստակ ցույց է տալիս, որ այն գտնվում է Հրեաստանից կամ Արաբական անապատից հեռու մի աշխարհում, երկրորդ՝ այս կարծիքից անլուծելի կնճռոտ հարցեր են առաջանում Սուրբ Գիրքը մեկնաբանելիս. այնքան, որ Տիգրիս և Եփրատ գետերի միջև գտնվող Միջագետքի փոխարեն կեղծ Միջագետքեր են առաջ քաշում, ինչը մերժում է կալմետը, քանզի հաշվի չեն առնվել բազմաթիվ այլ փաստեր՝ այսինքն, ջրերի առատությունը, տեղանքի

---

[9] Նույն տեղում, էջ 245-246:

բերրիությունը, կլիմայական պայմանները և այլն: Ոմանք էլ Դրախտը դրեցին Ասորեստանում, Լիբանանում կամ Դամասկոսում՝ Հորդանան գետի ակունքներում՝ Խրիսորրոա գետը համարելով Մովսեսի Փիսոնը, իսկ Որոնդիս գետը՝ Գեհոնը. այդ կարծիքին է Հովհաննես Կղերիկոսը կամ Քլեռքը»[10]:

Ոմանք էլ, համոզված լինելով, որ Տիգրիսն ու Եփրատը Դրախտի գետերն են և բխում են Հայաստանից, չգիտես ինչու, Սուրբ Գրքին հակառակ, մյուս երկու գետերն ու Դրախտը այդ նույն վայրում չեն փնտրում.

«Ասում են, որ Դկլաթի (Տիգրիս) և Արածանու (Եփրատ) ակունքները բխում են Հայոց լեռներից, սակայն Դրախտն այնտեղ չէ, ինչպես նաև մյուս երկու գետերի ակունքները»[11]:

Կան այլ մեկնիչներ, ովքեր Փիլոնի պես խուսափում են Դրախտի տեղանքի մասին հստակ կարծիք հայտնել, սակայն ի տարբերություն նրա՝ համոզված են, որ այն հարկ է փնտրել Տիգրիսի և Եփրատի մոտ, որոնց բխման վայրը գտնվում է Հայկական լեռնաշխարհում: Բայց ակնհայտ իրողությունը դարձյալ անտեսվում է՝ Հայաստանը ընդամենը դասելով այն հավանական երկրների շարքում, որոնք այդ երկու գետերի ակունքներից պատկառելի հեռավորության վրա են գտնվում.

«Եդեմական այգու գտնվելու վայրը ներկայումս ճշգրտությամբ սահմանելը շատ դժվար է: Մատնանշելով նրա տեղը՝ Մննդոց գրքի հեղինակը հիշատակում է գետերի մասին, որոնք բխում են Եդեմից՝ ոռոգելու համար Դրախտը, այնուհետև բաժանվում չորս գետերի, որոնց անուններն են՝ Փիսոն, Գեհոն, Տիգրիս և Եփրատ: Վերջին երկու գետերը հայտնի են, իսկ առաջին երկուսը տարաբնույթ ենթադրությունների տեղիք են տալիս: Երկրի վրա դրանց համապատասխան գետեր չգտնելով՝ ոմանք Եդեմը երկնքում տեղադրեցին, մյուսները այլաբանական նշանակություն տվեցին դրան, ոմանք էլ Եդեմը մե՛կ Աֆրիկայում տեղադրեցին, մե՛կ՝ Հայաստանում և Կովկասում, մե՛կ Սիրիայում և Պաղեստինում, մե՛կ՝ Միջագետքում և Բաբելոնում, փնտրեցին նույնիսկ Հնդկաստանում, Հիմալայների հովտում և Ցեյլոնում: Բայց այս ամենն ընդամենը ենթադրություններ են, հավանական է մնում միայն այն, որ Եդեմի տարածքը և Դրախտը գտնվել են Տիգրիս և Եփրատ գետերի մոտ»[12]:

Աշխարհի որ կողմում էլ ցանկանան տեղադրել Դրախտը, որքան էլ ցանկանան փնտրտուքների ծավալն ընդարձակել, միևնույն է՝ երկու հայտնի գետերը ծանր խարսխի նման պահում են՝ թույլ չտալով, որ Հայաստանը հետազոտությունների շրջանակից դուրս մնա.

«Ներկայիս ուսումնասիրողները և մեկնիչները չեն տարակուսում՝ Դրախտն իր չորս գետերով հանդերձ՝ Հայաստանում տեսնել, իսկ ովքեր շատ ավելի ընդարձակ են պատկերացնում Եդեմական երկիրը, անպայման Հայաստանն էլ նրա մեջ են տեղադրում»[13]:

---

[10] Նույն տեղում, էջ 246:

[11] Փիլոնի Եբրայեցւոյ Մնացորդք ի Հայս, ի Վենետիկս, ի Վանս սրբոյն Ղազարու, 1826, էջ 9:

[12] Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора. М., 1891 3-е издание, Москва, 2005, ст. 189-190.

[13] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 9:

Որոշ մեկնիչներ էլ կարծում են, թե Ջրհեղեղից հետո երկրի մակերեսն այն աստիճան է ձևափոխվել, որ ընդհանրապես անհույս են դարձել Դրախտի տեղանքը հայտնաբերելու բոլոր ջանքերը։

Այդ վայրի մասին այսօր մոտավոր պատկերացում կազմելու միակ մնայուն նշանը Միջագետքի հարևանությամբ գտնվելն է, ինչը պարզորոշ ակնարկում է Մեծ Հայքի տարածքը.

«Առաջին երկու գետերը (Փիսոն և Գեհոն) այժմ չունեն իրենց համապատասխանող մի բան՝ ո՛չ աշխարհագրական դիրքով, ո՛չ անվամբ։ Այդ պատճառով էլ առիթ են տվել կամայական գուշակումների և մոտեցումների։ Ոմանք դրանք համարել են Գանգեսը և Նեղոսը, մյուսները՝ Փասիսն ու Արաքսը, որոնք սկզբնավորվում են Հայաստանի բարձրադիր շրջաններից, մի մասն էլ՝ Սիր-Դարիան և Ամու-Դարիան, և այսպես շարունակ։ Բայց բոլոր այս քմահաճ ենթադրությունները լուրջ նշանակություն չունեն և հիմնվում են քմահաճ մոտեցումների վրա։ Այս ամենը միայն հանգեցնում է նրան, որ Եդեմը իսկապես գտնվել է Միջագետքի հարևանությամբ, ինչը ցույց են տալիս նաև բոլոր հին ժողովուրդների ավանդությունները։ Սակայն նրա գտնվելու վայրը հնարավոր չէ ճշգրտորեն նշել։ Երկրի մակերեսը դրանից հետո այնքան է փոփոխության ենթարկվել (հատկապես Ջրհեղեղի ժամանակ), որ ոչ միայն կարող էին փոխվել գետերի ուղղությունները, այլև կարող էր նույնիսկ նրանց միջև կապը կտրվել, և նույնիսկ հնարավոր էր, որ նրանցից որոշները դադարեին գոյություն ունենալ»[14]։

Եթե անգամ այդպես է, և երկու անհայտ գետերը դադարել են գոյություն ունենալ, միևնույն է՝ պարզ տրամաբանությունը հուշում է, որ եթե դրանք մնացած լինեին, ապա Տիգրիսից ու Եփրատից հեռու գտնվել ուղղակի չէին կարող։ Քանզի այլ դեպքում պետք կլիներ կասկածի տակ դնել Սուրբ Գրքի հեղինակությունը, որը մի գետից է բխեցնում այդ չորս գետերը։ Եվ եթե համարենք, որ երկու գետերը իսկապես դադարեին գոյություն ունենալ, դարձյալ հանգիստ կարելի էր կողմնորոշվել եղած երկուսով՝ Տիգրիսով ու Եփրատով և նրանց ակունքների մոտ փնտրել Եդեմական Դրախտը։

Բնականաբար, Դրախտի վայրի հարցին անդրադարձել են նաև շատ հայ հոգևոր գործիչներ և գիտնականներ, սակայն հայազգի հետազոտողները, միակարծիք լինելով առ այն, որ Դրախտը Հայաստանում է գտնվել, գետերի հետ կապված տարբեր կարծիքներ են հայտնել։ Ոմանք ընդունել են, որ միայն երկու գետերն են սկիզբ առնում Հայաստանից, ոմանք՝ երեքը, իսկ մեծ մասը չորս գետերն էլ Հայաստանում են տեսնում։

5-րդ դարի պատմիչ Եղիշեն գրում է. ***«Երկու գետերով և տապանով առավել ենք բոլորից»[15]։***

Իսկ Գրիգոր Տաթևացին Աստծո կողմից Հայոց ազգին տրված առանձնաշնորհները թվարկելիս՝ Դրախտի հետ միասին, ի տարբերություն Եղիշեի, հիշա-

---

[14] А. П. Лопухин, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986, ст. 12.


[15] Սուրբ Եղիշէ, Արարածոց Մեկնութիւն, Մատենագիրք Հայոց հ. 1, Անթիլիաս, Լիբանան 2003, էջ 801:

*տակում է եղեմաբուխ երեք գետեր. **«Այս կողմերում է Աստվածատունկ Դրախտը, և այստեղից են հոսում եդեմաբուխ երեք գետերը»**[16]:*


Դրախտի տեղանքի մասին առավել ծավալուն աշխատություններ ունեն հայազգի հեղինակներից Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբան Ղևոնդ Ալիշանը և Ղուկաս Ինճիճյանը: Նրանք իրենց խորը գիտական հետազոտություններում շատ համոզիչ կերպով հերքել են բոլոր կարծիքները, որոնք չեն համընկնում Դրախտի տեղանքի սուրբգրային տեղեկությանը.

***«Բայց թե այս գետերի ո՞ր մասում էր գտնվում Դրախտը, մինչ օրս տարակարծություններ կան. սրանցից ոմանք դրեցին Միջագետքում, Կրոտիոսը դրեց Բաբելոնում, Կելլարիոսը՝ քաղդեացիների երկրում, Եփրատից ու Տիգրիսից ձգելով մինչև Հնդկաստան՝ Փիսոն գետը համարելով Հնդկական Ինդոսը, իսկ Գեհոնը՝ Գանգեսը, մինչև Հնդկաստան հասցնելով Դրախտի վայրը՝ այն հարմարեցնելով Սուրբ Գրքում հիշատակվող բոլոր բարիքներին և սահմաններին: Թեև կարծես շատ դյուրին է այս հարցը, բայց շատ հմուտ հնագետներ չեն կարողացել այն ընկալել, քանզի անտեղյակ են եղել մեր ազգի հնությանը, իսկ նրանք, որ ասում են, թե ամենակարող Աստված Դրախտը կարող էր ամբողջ աշխարհով մեկ ձգել, հաշվի չեն առնում այն, որ Դրախտը իբրև պարտեզ ստեղծեց և այնտեղ դրեց մարդուն, «որպեսզի սա մշակի և պահպանի այն»**[17]**, որով բացահայտորեն ցույց է տալիս, որ հստակ սահմաններ է ունեցել, ինչպես վայել է այգուն:*

Ամենաընդունելի վարկած համարվեց այն, որ Դրախտը գտնվել է այնտեղ,



[16] Սուրբ Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, տպ. սբ. Յակոբեանց, Երուսաղէմ, 1993, էջ 555:
[17] Ծննդ. 2:15:



ուր Տիգրիսն ու Եփրատը քաղդեացիների երկրի մոտ միանում են իրար՝ մինչև Բասրա քաղաքը, որը երկու օրվա ճանապարհ է, որտեղ գտնվում է Խուռնա քաղաքը, և անցնելով 5 փարսախ՝ հասնում են Շադ էլ Արաբ, որտեղից դարձյալ անջատվում են միմյանցից և թափվում Պարսից ծոց. այդ միացման տեղում, ասում են, գտնվում է Եդեմը: Առաջին երկու գետերը Տիգրիսն ու Եփրատն են, իսկ վերջիններները՝ Փիսոնն ու Գեհոնը: Այս կարծիքին է Կալվինը, նրա հետ համամիտ է նաև Սկալիգերը, ով հիացմամբ գոչում է. «Այս բացատրությունից առավել հանրահայտ, ճշմարտացի և հմտագույն բան չկա»: Այս կարծիքին են նաև Պետավիոսը, Պոշարը և Մոռինոսը: Յրելով այս կարծիքները այլ փաստերով՝ այն մերժում են Պեռդի աստվածաբանը, Կալմետը՝ Մննդոց 2:14-ի մեկնության ժամանակ, և այլք»[18]:

Ինչպես տեսնում ենք, նրանք ջանում են Դրախտը գտնել՝ ուղեցույց ունենալով Տիգրիսն ու Եփրատը, սակայն գալիս են նման անտրամաբանական եզրահանգման, ինչը հետևանք է այն բանի, որ մեզ անհայտ պատճառներով չեն ցանկանում Հայաստանի կողմը նայել:

Գրված է, որ չորս գետերն էլ Դրախտից էին ելնում: Այս պարագայում երկուսը մտնում են Դրախտ, իսկ մյուս երկուսը՝ դուրս գալիս Դրախտից, ինչը բացարձակապես չի համընկնում Աստվածաշունչ մատյանի տեղեկության հետ:

Տիգրիս և Եփրատ

«Հայաստան, երկիր դրախտավայր,
Դու մարդկայնո ցեղիս օրրան,
Դու և բնիկ իմ Հայրենիք ...
Գետք քաջառաջք ադենաբուխ,
Ջհողդ բարի առնեն հուռթի,
Քև ապրիմ ես, քև միշտ ցնծամ,
Քև, քև պանծամ, փառք իմ միայն»[19]:

Եվ այսպես, մեզ համար Դրախտի տեղանքի պարզաբանման հիմնական կողմնորոշիչներն են սուրբգրային չորս գետերը, որոնցից Տիգրիսն ու Եփրատը

[18] Ղուկաս Ինճիճեան... էջ 246, 249:
[19] Միրզա-Վանանդեցի, Սիրված Երգեր, Երևան, 1971, էջ 100-101:

մինչ օրս կան և պահպանել են իրենց անունները, իսկ ակունքները գտնվում են Մեծ Հայքի տարածքում: Ղևոնդ Ալիշանն ասում է՝ ***ողջամիտները հենց այդ երկուսով են կողմնորոշվում:***

«Եփրատն ամեն տարի ամռան սկիզբը հեղեղում է՝ սկսած գարնանից, երբ հալվում են ձյունները Հայաստանից...



Տիգրիսը Հայաստանի ամենահարավային մասերից առնելով իր սկիզբը և մոտիկ լինելով Բաբաելոնին՝ ստանում է հարավային կողմերից ոչ մեծ քանակությամբ ձյունաջուր, և նվազ ենթակա է հեղեղման»[20]:

«Հայաստանում մի լեռ կա, ոչ շատ զառիվեր է... այստեղից երկու աղբյուրներ են բխում, որոնք անմիջապես վերածվում են երկու գետերի, դրանցից աջակողմյանը կոչվում է Եփրատ, իսկ ձախակողմյանը՝ Տիգրիս»[21]:

«Եփրատի հիմնական ակունքները գտնվում են Էրզրումի հարավարևմտյան կողմում՝ Կարինի շրջանում: Արևմտյան Եփրատը միավորվում է Արևելյան Եփրատին և, ուղղություն վերցնելով դեպի հարավ, Փոքր և Մեծ Հայքերի միջով անցնելով, բաժանում է Միջագետքը Սիրիայից, հոսում է Պարսկական Իրաք և, վերջապես, թափվում Պարսից ծոց... Տիգրիսը բխում է Զորրորդ Հայքից»[22]:

«Տիգրիս գետը սկիզբ է առնում Հայկական լեռնաշխարհից, հոսում Մեծ Հայքի տարածքով, մտնում է Միջագետք, ապա խառնվում է Եփրատին, կազմում «Շատ էլ Արաբ» գետը և թափվում է Պարսից ծոց... Դեռևս հռոմեացի բանաստեղծ Օվիդիոս Նազոնը (մ.թ.ա. 43 թ.) հավաստել է Եփրատի և Տիգրիսի հայկական լինելը՝ գրելով. «Եփրատն է այս՝ աղբյուրաշատ, եղեգնապատ. մյուսը, որմե կապույտ վարսեր կհոսին՝ Տիգրիսը. ուրեմն, ըլլա պիտի ըսե՝ հայերն են ասոնք»[23]»[24]:

«Եփրատը, ըստ Մննդոց 2:14-ի, Դրախտի չորս գետերից մեկն էր: Գետը սկիզբ է առնում ձյունածածկ Հայոց լեռներից... Եփրատին համարյա զուգահեռ հոսում է Տիգրիսը, որը նույնպես սկիզբ է առնում Հայաստանից»[25]:

«Սուրբ Գրքի չորրորդ (մեզ համար առաջին) գետը Եփրատն է՝ Առաջավոր Ասիայի մեծագույն, հռչակավոր և գրեթե սրբազնագույն գետը... Մենք գիտենք,

---

[20] Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Ամատոյանը, հրատ. Պ. Հ., Երևան 1940, էջ 87:

[21] Прокопий Кесарийский, Война с персами, С.-Петербург, 2001, стр. 44.

[22] Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852, ст. 6-8.

[23] Բազմավէպ, թիվ 4-6, Վենետիկ, սր.Ղազար 1968, էջ 126:

[24] Հանրագիտակ օրացույց, Կազմեց Հայկ Խաչատրյանը, Երևան, 1990, էջ 72:

[25] Доктор Эрик Нюстрем, (19-й в.) Библейский Словарь, 1989, ст. 120-121.

որ Եփրատը երկու տեղից՝ Արածանուց և Վանից է օժանդակություն ստանում, և կարող ենք հարցնել, թե դրանցից ո՞րն է Եդեմաբուխը՝ պատասխանը թողնելով հետագային։

Մեզ համար՝ երկրորդ և ըստ Սուրբ Գրքի՝ երրորդ գետը Տիգրիսն է... անկասկած, նա հոսում է Հայոց աշխարհով, որը գտնվում է Ասորեստանի դիմաց, ինչը մինչ այսօր էլ տեսանելի է»[26]։

Եփրատի և Տիգրիսի՝ Հայաստանի տարածքից բխելու մասին գրում է նաև հույն պատմիչ Հերոդոտոսը[27]։

Այս երկու գետերի՝ Հայաստանում գտնվելու մասին վկայություններ կան նույնիսկ շումերական արձանագրություններում, ուր Հայաստանը համարվել է մի վայր, որի շնորհիվ գոյատևել է իրենց երկիրը, քանզի այստեղից են հոսում նրանց համար կենսական նշանակություն ունեցող Տիգրիսն ու Եփրատը.

«Մեզ նույնպես հայտնի է, որ Հայաստանը կարևոր դեր է խաղացել շումերների ինքնաճանաչման և հայացքների զարգացման գործում և իր ներդրումն է ունեցել կոսմոպոլիտ քաղաքակրթության կազմավորման հարցում՝ կապված քաղդեական Ուրի հետ։ Անսովոր հետաքրքրություն է ներկայացնում մ.թ.ա. երրորդ հազարամյակին պատկանող մի հարթաքանդակ, որ հասել է մինչև մեր օրերը։ Լեոնարդ Վուլը դա հայտնաբերել է Դուբլամախում, որը գտնվում է Ուրում՝ հին մի սրբավայրում։ Այդ հարթաքանդակի վրա պատկերված է էա աստվածը՝ էրիդու քաղաքի հովանավորը։ Վուլն իր «Քաղդեական Ուր» գրքում գրում է.



«Հին շումերների ավանդության համաձայն՝ հովանավոր աստվածը պատկերված է սափորը ձեռքին, որից երկրի վրա են թափվում ջրի երկու հոսանքներ՝ լողացող ձկներով։ Էա աստվածը, որպես անդնդային ջրերի տիրակալ, իր ձեռքում պահում է այն ակնաղբյուրը, որից ծնվում են Միջագետքին կյանք տվող զույգ գետերը՝ Տիգրիսն ու Եփրատը»։ Այս տպավորիչ պատկերը մեզ ցույց է տալիս, որ այդ ժամանակաշրջանից մինչև մեր դարաշրջանն այդ վայրի բնակիչները խոստովանում էին, թե ինչով են պարտական Վանի և Արարատ լեռան շրջաններին և հասկանում էին, որ Հայաստանից կենսաբեր ջուրը հոսում է դեպի Միջագետքյան հարթավայր»[28]։

Հստակ է այն, որ Դրախտի գետերից Տիգրիսն ու Եփրատը սկիզբ են առնում Հայաստանից և հոսում նրա տարածքով. դրա դեմ, իհարկե, որևէ առարկություն լինել չի կարող։

Մնում է երկու անհայտ գետերի՝ Փիսոնի և Գեհոնի հարցը, սակայն սրանց

---

[26] Ղեւոնդ Ալիշան… էջ 5-6:

[27] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, Հ.Ս.Գ. Ակադեմիայի հրատ., Երեվան 1986, էջ 74, 307:

[28] Девид Лэнг, Армяне народ-созидатель, Центрполиграф, Москва, 2004, ст. 76-77.

ի հայտ բերելու գործընթացը հեշտացնում է այն փաստը, որ բոլոր չորս գետերն էլ առաջացել են մի եդեմաբուխ գետից ու ոռոգել են Դրախտը. և այնտեղից դուրս գալով՝ ամեն մեկը մի կողմ է հոսել։

Այդ անհայտ գետերի հայտնաբերման ամենապարզ և հուսալի միջոցը, ինչպես արդեն ասվեց, հայտնի երկու գետերի ակունքների մոտ նրանց փնտրելն է։

Նշեցինք, որ մեկնիչներից ոմանք այն կարծիքին են, թե Ջրհեղեղից հետո երկրի մակերեսը փոփոխությունների է ենթարկվել, և երկու գետերն ուղղակի դադարել են գոյություն ունենալ, և կամ մայրցամաքների այնպիսի տեղաշարժ է եղել, որ գետերից մեկը հայտնվել է Աֆրիկայում, մյուսը՝ Հնդկաստանում։ Այո՛, հնարավոր է և նույնիսկ խիստ հավանական, որ ինչ-ինչ փոփոխություններ իրոք եղել են, բայց ո՛չ նման անհավանական ընդգրկմամբ։ Այդ փոփոխությունների միակ հետևանքը կարելի է համարել այն, որ սկզբնական գետը, որից առաջացել են չորս գետերը, դարձել է ստորգետնյա մի մեծ ջրամբար, որից մինչ օրս բխում են Դրախտի չորս գետերը։

Փիսոն

«Հայաստան. երկիր մեծ լեռների,
Հայաստան. երկիր խրշակային գետերի,
Հինավուրց, ինչպես առաջին մարդը,
Եվ երիտասարդ, ինչպես քսաներորդ դարը»[29]*։*

Քանի որ Տիգրիս և Եփրատ գետերը Դրախտի չորս գետերից երկուսը լինելու և Հայաստանից սկիզբ առնելու դեմ որևէ առարկություն չկա, մնում է քննել խնդրահարույց մյուս երկու գետերի՝ Փիսոնի և Գեհոնի հարցը։

Տեսնենք, թե հետազոտողներն ինչ են ասել Տիգրիսի և Եփրատի ակունքների մոտակայքում գտնվող գետերի մասին. կա՞ արդյոք մի գետ, որը հնարավոր լինի նույնացնել եդեմաբուխ գետերից առաջինի՝ Փիսոնի հետ։

*Նման գետ իսկապես կա, որի ակունքը հեռու չէ այն տարածքներից, որտեղից բխում են հայտնի երկու գետերը. դա Ճորոխն է, որն սկիզբ առնելով Հայաստանի տարածքից և հոսելով դեպի հյուսիս՝ լցվում է Սև ծով։ Սակայն տպավորիչն այն է, որ ոչ վաղ անցյալում այդ գետը կրել է մի անուն, որը շատ նման է Փիսոնին՝ Փասիս. **«Փասիս՝ մեծ գետ, որ սկսվում է Հայաստանից»**[30]։*

Իսկ որ Փասիսը Ճորոխի նախկին անվանումն է, կասկած չկա, քանի որ հետազոտողների նկարագրությունը Փասիսի վերաբերյալ՝ միանգամայն համապատասխանում է Ճորոխի նկարագրությանը.

«Եթե Հայաստան գնանք Պարսկահայաստանի կողմից, ապա աջ կողմում կտեսնենք Տավրոսի լեռները։ Իսկ ձախ կողմում՝ մեծ տարածության վրա ձգվող

---

[29] Сирбай Мауленов (Казахстан), Солнечный очаг, изд. “Айастан”, Ереван, 1970, ст. 79.

[30] Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Ամատյանը, հրատ. Պ.Հ., Երևան 1940, էջ 27:

մի ճանապարհ՝ ամբողջ ժամանակ թեքությամբ գնացող, իսկ նրա վրա կախված են կտրուկ, զառիթափ լեռներ, որոնք պատված են հավերժական ամպերով և ձյունով: Այստեղից բխում է Փասիս գետը, որն այնուհետև հորդահոս սլանում է դեպի Կոլխիդա երկիրը»[31]:



Փասիս և Փիսոն գետերի անվանումների նմանությունն արդեն իսկ հուշում է, որ մենք գործ ունենք հինչյունակազմի չնչին փոփոխության հետ:

Ուշ շրջանի անվանափոխությունը պատճառ է դարձել, որ հետազոտողներից ոմանք Դրախտի գետերը փնտրելիս՝ անտեսեն այս գետը, քանզի ներկայումս, ինչպես ասվեց, այն անվանվում է ոչ թե Փասիս, այլ Ճորոխ:

«Դժվարությունը կայանում է մյուս երկուսի հարցում. Փիսոնի համար խիստ հավանական է, որ այս գետն այլոց մոտ Փասիս է կոչվել, իսկ ներկա լեզվով Ճորոխ կամ Ծորոխ է ասվում:

***Հին աշխարհագիրերից Պտղոմեոսը, Ստրաբոնը, Դիոնիսիոսը, Պլինիոսը և այլք վկայում են, որ Փասիս գետը Հայաստանից է դուրս գալիս, և նրա ակունքները Եփրատի մոտ են գտնվում: Ինչ ընթացք որ Ճորոխն ունի, նույնը հնագետները տալիս են Փասիսին, և եթե Ճորոխը մի առանձին գետ լիներ, աշխարհագետները չէին կարող այն անտեսել, որովհետև ավելի փոքր գետերն են հիշատակում»*[32]:

Փիսոն նշանակում է հորդառատ և արագահոս, ինչը լիովին բնութագրում է Ճորոխին. այս լեռնային գետը նման կերպ է նկարագրվում հետազոտողների կողմից: Դա էլ իր հերթին մի նպաստող փաստարկ է Փասիսի և Փիսոնի նույնության մասին.

«Կալմետը և բոլոր նրանք, ովքեր ասում են, որ Դրախտը Հայաստանում է եղել, գիտեին, որ Սուրբ Գրքի «Փիսոն» կոչված այս գետը հույն և հռոմեացի հին մատենագիրները կոչել են «Ֆասիս», իսկ մենք՝ «Փասիս»... Սուրբ Գրքի Փիսոն գետը, որ կոչվում է Փասիս, Հայաստանի Ծորոխ կամ Ճորոխ գետն է, իսկ ծոր ուղիս կամ ջուր ուխ արմատները հայտնի են դարձնում նրա հորդահոս և արագահոս լինելը, ինչն էլ պատճառ է հանդիսանում նրա անընդհատ աճելու և հոսելու. ահա այստեղից էլ վերցված է եբրայական «Փիսոն» անունը, որը նշանակում է աճել, հոսել: Այս գետը սաստիկ սրընթաց է, ինչի պատճառով էլ այժմեական տաճկական զրույցի մեջ իր հորդահոսության պատճառով կոչվում է հիմար կամ հանդուգն: Սա բխում է Սարջամ գետակի ակունքների մոտ գտնվող լեռնե-

---

[31] Прокопий Кесарийский… стр. 42.

[32] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896, էջ 11:

րից, որտեղ է նաև Եփրատի ակունքներից մեկը։ Տե՛ս, թե այսպիսի մեծամեծ գետերի ակունքների՝ միմյանց այսքան մոտ լինելը, որքան հարմար է, որ Դրախտն, ըստ Մովսեսի նկարագրման, Հայաստանում տեղադրվի»[33]։

Տեսնում ենք, որ Ճորոխ - Փասիսը թե՛ անվան նմանությամբ, թե՛ տեղանքի համապատասխանությամբ (Եփրատի և Տիգրիսի ակունքների մոտակայքից բխելը), թե՛ բնութագրով (արագահոսությամբ) միանգամայն համընկնում է սուրբգրային Փիսոնին։

Սակայն տեղանքի հետ կապված մի կարևոր խնդիր դեռ պարզաբանման կարիք ունի։ Դա Եվիլատ երկրի հարցն է։

«Եվիլաթա երկիրը՝ Խավիլաթը, ըստ եբրայեցիների, Խաղտիք աշխարհն է, որտեղ խուլադ լեռը և Խալթ ժողովուրդը մինչև այժմ պահում են հին անունը, որին և հին հելլենները կոչում էին Խալիվբս և Հայախալիվբս և Քաղդեայս՝ այսինքն, Խաղտիս։ Եթե բնագետներն իմանային այս, ապա նրանք էլ կողմնակից կլինեին այն բանին, որ Եվիլաթն ամենայն հավանականությամբ Խաղտիքն է, այլ ոչ թե Ուրալյան լեռների և Վոլգա գետի մերձակայքը։ Եվ այսպես, Ճորոխը պատում է Խաղտեաց երկիրը»[34]։

Ըստ Սուրբ Գրքի՝ Եվիլատ երկիրը հարուստ է եղել ոսկու և թանկարժեք քարերի հանքերով. նմանապես՝ և Ճորոխի մերձակայքն է հարուստ եղել թանկարժեք քարերի ու մետաղների հանքերով.

«Մովսեսն ասում է, թե Փիսոնը Եվիլատ երկրի չորս կողմն է պտտվում. շատ հավանական է, որ Եվիլատ կամ եբրայերեն Խավիլատ կոչվածը մեր Խաղտիք նահանգն է, որը նույն գետի (Ճորոխի) մոտակայքում է գտնվում, իսկ ինչ վերաբերում է Եվիլատի ոսկուն և քարերին, ապա հնարավոր է, որ խոսքը Սպեր գավառի և Կողքիսի հանքերի մասին է»[35]։

Այն, որ Եվիլատ երկրի ոսկին ազնիվ է եղել, խոսում է այն մասին, որ այդտեղի ոսկու հանքը հիմնականում եղել է ձուլակտորներով և մեծ մաքրությամբ, հետևաբար, խիստ հավանական է, որ այն տևական շահագործման է ենթարկվել, ինչի պատճառով այսօր Ճորոխի մոտակայքում ոսկի չի հայտնաբերվում։ Եթե այդ ոսկին ազնիվ չլիներ, և ոսկի կորզելու համար տոննաներով հանքանյութ հարստացվեր, գուցե մինչ օրս այդ հանքերը դեռ գոյատևեին։ Եվ քանի որ այդ հինավուրց հանքավայրը վաղուց արդեն հայտնի էր, հետևաբար, դարերի ընթացքում ոսկին պետք է սպառված լիներ։ Սակայն ներկայումս պահպանվել են հնագույն հանքերի հետքերը։ Նույն կերպ՝ և թանկարժեք քարերի՝ մանավանդ սուտակի հանքերը, չէին կարող հազարամյակներում չսպառվել։ Ուրեմն, ազնիվ ոսկու և թանկարժեք քարերի բացակայությունը ոչ թե հակասում է, այլ փաստարկ է այն տեսակետի, որ հենց Ճորոխն է սուրբգրային Փիսոնը, և ոչ թե մինչ օրս այդ հանածոներով հարուստ հնդկական գետերը։

---

[33] Ղուկաս Ինճիճեան… էջ 255-257:

[34] Ղեւոնդ Ալիշան… էջ 9:

[35] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896, էջ 11:

Ղ. Ալիշանն ասում է՝ հին ավանդությունները վկայում են, որ ժամանակին Ճորոխի մոտ, այնուամենայնիվ, եղել են ոսկու պաշարներ. ***«Զարմանալի է, որ աշխարհի Առաջին մատյանում (Աստվածաշնչում) բոլոր մետաղներից առաջ հիշատակվում է ոսկին։ Աստվածաշունչը Եվիլատի ազնիվ ոսկու տեղը Փիսոնի ափերի մոտ է մատնանշում, որը Եդեմի առաջին գետն է, որ կոչում ենք Ճորոխ։ Այն երկրները, որոնցով անցնում է այս գետը, մեր Խաղտիք և հունաց Խալիբս կոչվածներն են, և եթե այնտեղ հիմա ոսկի չկա, մի՛ զարմացեք, քանի որ Մովսեսի և մեր օրերի միջև 3400 տարվա տարբերություն կա։ Բայց, անտարակույս, հիշում եք Արգոնավորդներին, որ Մովսեսից երեք կամ չորս դար հետո եկան այս կողմերը՝ ոսկե գեղմը հափշտակելու համար, ինչը ես ընդունում եմ որպես ոսկու հանք»***[36]*։*

Ակնհայտ է, որ Փիսոնի համար Ճորոխից առավել հավանական «թեկնածու» չկա։ Սա անհամեմատ շատ հիմքեր ունի Դրախտի առաջին գետը համարվելու, քան մնացած բոլոր գետերը։

Գեհոն

«Սուրբ գագաթներից ջրերը կենդանի՝
սլանում էին Դրախտ՝ դեպի հարթավայրերը
հայրենի, որտեղ ուրախ երգերով հայրը
դիմավորում էր հաղթանակի այգաբացը»[37]*։*

Գեհոնը Մովսեսի գրքում երկրորդ՝ Փիսոնին հաջորդող գետն է։ Նա ևս պատճառ է դարձել տարաբնույթ կարծիքների, քանզի ներկայումս նման անվամբ գետ չկա։ Գրված է, որ այն պատել է Եթովպիան։ Եթե դա համարենք այսօրվա Եթովպիան, ապա կստացվի, որ այդ երկրորդ գետը գտնվել է ուրիշ մայրցամաքում՝ որևէ կասկած չհարուցող երկու գետերի ակունքներից չափազանց հեռու։ Սխալ կլինի՝ թողնել Տիգրիսի ու Եփրատի ակունքները և Գեհոնը որոնել անհավանական վայրում.

«Շատ գետեր կան այս երկրում, ամենից նշանավոր են Փասիսը և Լիկոսը, որոնք թափվում են Պոնտական ծովը, Կուրը և Արաքսը՝ Կասպից ծովը, Եփրատն ու Տիգրիսը՝ Երիթրյան ծովը։ Հայաստանում կան նաև մեծ լճեր»[38]*։*

Սակայն, առավել հավասարակշիռ մեկնաբանություններ ունեն այս հարցերի շուրջ հատկապես մեր հայագետներն ու հնագետները, քանի որ նրանցից շատերի համար այս նյութը ոչ միայն Աստվածաշնչյան և հնագիտական ուսումնասիրությունների ոլորտ է, այլ նաև սեփական երկրի պատմություն և աշխարհագրություն.

Ալիշանը գրում է. ***«Եթե Եփրատի և Տիգրիսի հետ կապված բոլորը միաբան են, ապա Գեհոնի և Փիսոնի հարցում բոլորը տարաձայն են։ Գեհոնը, որի մասին Սուրբ Գրքում ասվում է, թե պատում է Եթովպացիների երկիրը, ոմանք համարում***

---

[36] Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկ, 1920, էջ 44:


[37] В. Немирович-Данченко, Русские писатели об Армении, Ереван, 1946, ст. 96.

[38] Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, հրատ. Պ.Հ., Երևան 1940, էջ 31:

են, թե Հնդկաստանի Ինդոս մեծ գետն է՝ այս երկիրը համարելով Եթովպիա կամ Քուշ (եբրայերեն)՝ բնակչության սևության և Քուշ-Կանտավա կամ Քուշա երկրի համար, որոնց միջով անցնում է Ինդոսը: Իսկ ոմանք էլ համարում են, որ Նեղոսն է բուն Եթովպիային մոտ... Սակայն այսչափ հեռավորությունն իսկ հակառակ է Սուրբ Գրքում նշված գետերի կարգին, քանզի հարկ է, որ Գեհոնի ակունքը մոտ լինի վերոհիշյալ երկու գետերին. իսկ նշանավոր Տիգրիսին և Եփրատին մոտ գտնվող գետը Երասխն է՝ բուն հայկական գետը, և բազում ողջամիտ մարդիկ համաձայնություն են տալիս այս կարծիքին... Նախ՝ ինչպես ասացինք, «Գեհոն» եբրայերենով նշանակում է հախուռն և արագ ընթացող գետ: Նույնն էլ ճշմարտացիորեն վկայվում է հնագույն շրջանի օտար հեղինակների և մեր կողմից՝ Երասխի մասին: Եվ նույնիսկ անունը՝ «Երասխ», Երագս «արագ ընթացող» է նշանակում: Այնքան էլ դժվար չէ ընդունել այս, քանի որ գետերի անունները շատ փոփոխություններ են կրել, և միայն Եփրատն ու Տիգրիսը, իրենց մեծությամբ և շատ ծանոթ երկրներով անցնելով, աշխարհահռչակ և անփոփոխ են մնացել»[39]:

Հետազոտողներից ոմանք էլ Գեհոնը գտնելու համար հենվում են անվանումների վրա՝ անկախ նրանից, թե այդ գետերն ինչ հեռավորության վրա են գտնվում հայտնի գետերի ակունքներից: Իսկ Հայաստանի պատմությանը ծանոթ հեղինակները Գեհոնի հարցում միակարծիք են, եթե հաշվի չառնենք աննշան տարբերությունները.

«Նախնիների աշխատություններում հիշատակվում է Օքսոս գետը, որ արաբները Ջահուն կամ Ջեյհուն են կոչում, և այս անունների մոտ լինելու պատճառով ոմանք կարծեցին, թե դա Սուրբ Գրքի «Գեհոնն» է, բայց սրան ընդդիմանում է սահմանների այդչափ հեռավորությունը, քանզի Եփրատից մինչև Ջահուն հասնելու համար պետք է անցնել Կասպից ծովից այն կողմ: Այսքան անհամապատասխանություններով հանդերձ՝ հնագետները համարժեք դատողություն չարեցին, միայն անվան որոշ նմանություն գտան, այն էլ ոչ հնուց եկած, այլ՝ հետագայում արաբների կողմից անվանված, քանի որ նախկինում միայն նրա Օքսոս անունն էր մեզ հայտնի: Եթե Սուրբ Գրքից գիտենք չորս գետերի՝ նույն ակունքից դուրս գալու մասին, ապա հարկ է Դրախտը փնտրելու համար շատ չհեռանալ Տիգրիսի և Եփրատի ակունքներից, որոնց Սուրբ Գիրքը հայտնի անուններով է կոչում: Այդ պատճառով, բոլոր նրանք, ովքեր Դրախտը տեղադրում են Հայաստանում, Երասխ կոչվող գետը համարում են Սուրբ Գրքի «Գեհոնը», քանզի սա բխում է այն նույն լեռներից, որոնցից բխում են Տիգրիսն ու Եփրատը»[40]:



Արդեն համոզվեցինք, որ Ճորո-

[39] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, էջ 6:

[40] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. I, էջ 259:

խը անցյալում Փասիս անվանված Փիսոն գետն էր: Իսկ, Երասխ-Արաքսի անվան հետ արդյոք կապվա՞ծ է Գեհոնը: Այո. որքան էլ զարմանալի թվա, հնում Երասխը հենց այդպես էլ անվանվել է՝ «Գեհոն».

«Արամայիսը՝ Արամանյակի որդին և Հայկի թոռը, Գեհոն գետի ափին քաղաք հիմնեց և այն անվանեց Արմավիր, իսկ գետն անվանեց Երասխ՝ իր թոռան՝ Երաստի անվամբ, ինչն այժմ անվանում են Արաքս»[41]:

*Եթե վաղ անցյալում Երասխի բուն անվանումը եղել է Գեհոն, ապա այն չէր կարող անհետ կորչել, և իսկապես, այդ անվանումը օգտագործվել է ոչ միայն այդ հեռավոր ժամանակաշրջանում, այլ նաև հետագա դարերում և հնչել է համարյա նույն կերպ. **«Արաքս և Գեհոն անվանումները կարծես թե չունեն ոչ մի ընդհանրություն: Սակայն, մենք այստեղ գործ ունենք անցյալում տեղի ունեցած***



անվանափոխության հստակ օրինակի հետ: Այսպիսով, որտե՞ղ է բանալին այդպիս փոփոխության, և ե՞րբ է հինավուրց Գեհոնը վերածվել Արաքսի: Պատասխանը, ինչքան որ տարօրինակ է, այնքան էլ հեռվում չէ պահված: Մահմեդականների Կովկաս ներխուժման ժամանակ՝ մ. թ. 8 դ., այս տեղանքի երրորդ մեծ գետը անվանվել է Գայհուն: Սակայն Գայհունի՝ Արաքսի վերածելու միջանկյալ աստիճան է համարվել կրկնակի անվանումը. այդպես պարսիկները դեռ 19-րդ դարում այդ գետին անվանում էին Ջիհոն-Արաքս: Ի դեպ, շատ հետաքրքիր է, որ Գեհոն-Արաքս անվանմանը կարելի է հանդիպել և՛ հին Աստվածաշնչյան հանրագիտարաններում, և՛ վիկտորիական դարաշրջանի մեկնաբանություններում: Սակայն մեր օրերում պատմական հիշողության այդ կարևոր բեկորը հիմնավորապես մոռացվել է: Պատրաստ եմ երաշխավորել, որ ձեզ հազիվ թե հաջողվի գտնել ժամանակակից աշխատություն Մննդոց Գրքի վերաբերյալ, որտեղ խոսվում է Գեհոնի և Արաքսի կապի մասին: Ահա և ձեզ ժամանակակից պահպանողական գիտությունը»[42]:

Ահա, տեսնում ենք Արաքսը Գեհոնը լինելն ավելի հիմնավոր պատճառներ ունի, քան Հնդկաստանում կամ այլ վայրերում գտնվող գետերը. նախ նա բխում է այն տարածքից, որտեղից և Եփրատը, իսկ Տիգրիսի և Փասիս – Ճորոխի ակունքները գտնվում են մոտակայքում: Եվ եթե Ճորոխը ժամանակին անվանել են Փասիս, ապա վաղ շրջանում Արաքսին ուղղակի այդպես էլ անվանել են՝ Գեհոն, հետագայում էլ՝ Գայհուն: Նաև, ի տարբերություն Նեղոսի, որը ընդամենը հպանցիկ հոսում է Եթովպիայով, Արաքսը պատում է այն տարածքները, որոնցով հոսում է:

*Այդ առթիվ Ալիշանը շարունակում է. **«Իսկ Գեհոնի մասին ասված է, որ «պատում է Եթովպացիների երկիրը». արդ, ո՛չ Նեղոսը, ո՛չ Օքսոսը, եթե նույ-***

---

[41] Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва, 1832, стр. 56-57.

[42] Дэвид Рол - Генезис цивилизации, откуда мы произошли …, Москва, Эксмо, 2005, стр. 68-69.

նիսկ Եթովպիայով էլ անցնեն, միևնույն է, չեն կարող կատարելապես պատել այն, իսկ Երասխը, բավական է, որ քարտեզի վրա նայեն, կտեսնեն, որ հասնելով Արարատյան դաշտ՝ պատում է հարավը և արևելքը, որ Մովսեսից դեռ շատ առաջ, ըստ մեր պատմիչների, կոչվում էր, այժմ էլ կոչվում է Սյունիք կամ Սիսական, որը հետո երկու աշխարհի բաժանվեց՝ Մեծ և Փոքր, որոնցից մեկը կոչվեց Արցախ։ Գետը տարածվում է արևմուտքից դեպի հարավ և արևելք, ինչն ակնհայտ է և անտարակույս»[43]։

Սակայն այս ամենը որպեսզի հիմնավոր և վերջնական ապացույց համարվեն, նախ հարկ կլինի քննել Եթովպիա – Քուշ երկրի խնդիրը. չէ՞ որ Գեհոնը պատել է այդ երկիրը, իսկ նման անվամբ երկիր ներկայումս կա միայն Աֆրիկայում, որի տարածքով հոսում է Նեղոս մեծ գետը, ինչն էլ հանդիսացել է պատճառ, որ ոմանք համարեն, թե Նեղոսը հենց Գեհոնն է։ Ստացվում է, որ Նեղոսն այդ առումով առավելություն ունի Արաքսի հանդեպ։ Բայց ակունքների՝ նույն տեղից բխելու և անվան հարցերում առավելությունը պատկանում է Արաքսին։

Առաջին հայացքից սա կարծես փակուղի է, սակայն դեռ պարզաբանման կարիք ունի։ Նախ՝ Սուրբ Գրքի տարբեր թարգմանություններում տարբեր անվանումներով է հանդես գալիս այն երկիրը, որին պատել է Գեհոնը։ Յոթանասնից թարգմանությամբ՝ հունարենով, այն անվանվում է Եթովպիա, իսկ եբրայերեն տարբերակում՝ Քուշ։ Բանն այն է, որ այդ երկու անվանումներն էլ նույն իմաստն ունեն.

«Այժմ քննենք Եթովպացիների երկրի հարցը, որին պատում է Գեհոնը։

Այս անունների հետ կապված՝ հարկ է իմանալ նախ այն, որ յոթանասնից թարգմանության մեջ որ վայրերը Եթովպիա են կոչվում, այդ վայրերը եբրայական թարգմանության մեջ Քուշ են կոչվում՝ լինի դա Աֆրիկայում, թե Ասիայում։ Աֆրիկայում Քուշ կամ Եթովպիա անվանվում են այժմյան Հաբեշը, իսկ Ասիայում՝ Արաբիան...

Սակայն պետք է նախ իմանալ, թե որտեղի՞ց են վերցվել Քուշ կամ Եթովպիա անունները և կիրառվել նախնիների կողմից. այն առավել լավ լուսաբանում են Մառդինա աշխարհագրի խոսքերը. «Այս անունը բնորոշ է Ասիայի և Աֆրիկայի զանազան վայրերի համար՝ թեև այժմյան աշխարհագրությունը միայն վերջինին՝ Աֆրիկային է այն տալիս։ Հույները Եթովպացի են կոչում սևամորթ և թխամորթ բոլոր ժողովուրդներին։ Եթովպիա անունը որևէ ազգի կողմից սեփականացված անուն չէ, այլ հույների ընծայած անվան մակդիր է՝ ազգի բնիկ անվան փոխարեն. այս բանը հատուկ է նաև այլ լեզուներին։ Ճշմարիտ է այն, որ նախկինում Հնդկաստանի անունը բազմիցս տալիս էին Եթովպացիներին և Եթովպացիների անունը՝ բնիկ հնդիկներին»։ Գրում է նաև, որ Պրոկոպիոսի կողմից Հնդկաստանն է Եթովպիա կոչվում, ինչին հանդիպում ենք նաև եկեղեցական և քաղաքական պատմության այլ մատենագիրների մոտ...

Մառդինայի խոսքի հետ կապված և որպես դրա վկայություն՝ նաև Կելլարիոսն է ասում, թե Հնդկաստանը սևադեմ բնակիչների պատճառով նախնիների

---

[43] Ղեւոնդ Ալիշան... էջ 6-7:

կողմից կոչվեց Քուշ կամ Եթովպիա, քանզի Կելլարիոսը Դրախտի մասին ճառի 650-րդ թղթում ասում է. «Եթովպիան Մեծ Ասիայի վերջին մասն է, որտեղից նրա ժողովուրդը սփռվեց նաև Աֆրիկա, քանզի այսպես են վկայում բազում հին մատենագիրներ», այնուհետև 651-րդ թղթում գրում է. «Ապա, քանզի Սևերը՝ այսինքն եթովպացիները, Հնդկաստանի և նրա մերձակայքի ժողովուրդներից էին, ապա հարկ էր՝ այդ ժամանակ «Եթովպիա» կոչել, և կոչվեց, ինչը մինչ այս՝ բավականին ցույց տվեցինք»[44]:

Այս մասին վկայություն կա նաև սուրբ առաքյալ Մատթեոսի վարքում.

«Հեռանալով Երուսաղեմից՝ սուրբ Մատթեոսը քարոզում էր Ավետարանը բազմաթիվ ազգերի: Նա ավետարանելով անցավ Սիրիայով, Պարսկաստանով, Պարթևների երկրով, Մեդիայով և վերջապես՝ ասիական Եթովպիայով կամ Հնդկաստանով, որտեղ և վերջացնելով իր առաքելական ջանքերը հանուն Քրիստոսի անվան՝ նահատակությամբ կնքեց իր մահկանացուն»[45]:

Ռուս պատմաբան Բոլոտովն իր հետազոտություններում եկել է եզրակացության, որ Հերոդոտի, Ստրաբոնի և մյուս հույն պատմաբանների տեղեկությունները խճճված են և ոչ հստակ, հատկապես երբ խոսքը վերաբերում է այսպես կոչված բարբարոսական աշխարհին, քանզի նրանք առանձնապես խորը ուսումնասիրություն չէին անցկացնում՝ այդ ազգերի ով լինելը պարզաբանելու համար, և մի քանի անվամբ ներկայացնում էին բոլորին. օրինակ՝ սկյութացի ասելով՝ նրանք նկատի ունեին մի ամբողջ տարածք, որտեղ բազմաթիվ ազգեր էին բնակվում, որոնց մեջ, իհարկե, կային նաև սկյութներ և այլ ցեղեր:

«Ընկալումների նման անորոշություն և խառնաշփոթություն գոյություն ուներ հույների մոտ նաև Եթովպիայի և Հնդկաստանի վերաբերյալ... Թվում է, թե ի՞նչը կարող է առավել պարզ լինել «Եթովպիա» տերմինից. մեզ մոտ միանգամից առաջանում է զուգակցում՝ Աֆրիկայում եղող երկրի հետ, որտեղ այսօր մոտավորապես գտնվում է Հաբեշստանը: Սակայն տվյալ տերմինը չունի այդպիսի որոշակի նշանակություն»[46]:

Բոլոտովի աշխատությունից տեղեկանում ենք նաև, որ դեռ Հոմերոսի մոտ հիշատակվում է Եթովպիա անվանումը, որն ըստ նրա՝ գտնվում է ինչ-որ տեղ՝ հարավում, ուր արևի աստված Հելիոսը կանգնած է զենիթում, ինչի հետևանքով էլ տեղաբնակները մուգ մաշկի գույն ունեն:

Ինչպես Ինճիճյանը, այդպես և Բոլոտովը ապացուցում են, որ տարբեր ժամանակաշրջաններում այդ անվամբ կոչվել են միանգամայն տարբեր երկրներ. ***«Եվ հայտնի չէ, թե դեռ ի՞նչ այլ երկրների կանվանեին այդ անվամբ, եթե չգտնվեր ազգ, որը չսեփականացներ եթովպացիների անունը՝ այսինքն հաբեշները, և չդառնար համընդհանուր հասկացություն: Դառնալով քրիստոնյա՝ նրանք համախմբվեցին և վերցրեցին «եթովպացիներ» անվանումը՝ արհեստական կերպով իրենց նույնացնելով այն «եթովպացիների» հետ, որոնք հիշատակ-***

---

[44] Ղուկաս Ինճիճեան… էջ 259-264:

[45] «Жития святых славных и всехвальных Апостолов», Сибирская Благозвонница, Москва 2015, ст. 111.

[46] Болотов В.В. История Древней Церкви, Белоруссия, 2008, стр. 396.

վում են Աստվածաշնչում... Այդ նույն պատմությունը պատահեց և Հնդկաստանի հետ՝ չնայած «Հնդկաստանը» որոշակի հասկացություն է, իսկ «Եթովպիան» միայն հասարակ անուն: Հնդկաստան հասկացությունը այնքան էր տարածվել, որ նման անվամբ երկիր փնտրում էին Արաբական թերակղզում, Աֆրիկայի ափերին, և նույնիսկ եթովպացիների տարածքն էլ ոմանք Հնդկաստան էին անվանում, փնտրել են Հնդկաստանը նաև Կովկասում: Այսպիսով, հույն գրողների համար գոյություն են ունեցել բազմաթիվ Հնդկաստաններ և Եթովպիաներ»[47]:

*Ըստ ռուս պատմաբանի՝ այն Եթովպիան, որտեղ քրիստոնեություն քարոզվեց Փիլիպպոս առաքյալի կողմից դարձի եկած ներքինիին, որևէ կապ չունի ներկայիս Եթովպիայի հետ, քանզի այն իրականում եղել է Մերոյե անվամբ երկիրը: Իսկ ներկայիս Եթովպիայում, որը հնում անվանվել է Հաբեշստան, Եթովպիա անվանումը Ք. ծ. հ. VII դարից վաղ չէր կարող կրել, ինչի մասին տեղեկացնում են նաև տարբեր հանրագիտարանները. **«Եթովպացի բառը առաջացել է հունարեն արևաթուխ բառից. այն եթովպական բարձրավանդակի բնակիչների ինքնանվանումն էր: Հնում եթովպացի են անվանվել հարավում բնակվող բոլոր ժողովուրդները, իսկ VII դարից հետո՝ միայն Եթովպիայի բնակիչները»**[48]:*

Քանի որ Հաբեշստանը միայն Ք. ծ. հ. VII դարում է անվանվել Եթովպիա, ուրեմն հստակ է, որ Նեղոսը հոսել է ոչ թե Եթովպիայով, այլ Հաբեշով, և Նեղոսը ոչ միայն հայտնի երկու գետերից մեծ հեռավորության վրա է, այլև իրական Եթովպիայի հետ ոչ մի առնչություն չունի. ուստի չէր կարող Սուրբ Գրքի Գեհոնը լինել:

Եթովպացիները հենվելով իրենց ավանդություններին՝ պնդում են նաև, որ Սաբբայի թագուհին իրենց թագուհին է եղել. իսկ եթե իրականում այդպես է, ուրեմն, այդ հինավուրց շրջանում Հաբեշստանը անվանվել է Սաբբա, և ոչ Եթովպիա կամ Քուշ:

Նկատում ենք, որ Եթովպիա կամ Քուշ անվանել են ոչ թե մի ինչ-որ պետության, այլ ուղղակի ժողովրդի, ովքեր մուգ մաշկ են ունեցել, և քանի որ աշխարհի տարբեր վայրերում՝ Արաբիայում, Հնդկաստանում, Աֆրիկայում և այլուր եղել են և կան նման ժողովուրդներ, դա էլ հենց պատճառ է դարձել, որ պատմության մեջ հիշատակվեն բազմաթիվ Եթովպիաներ և Քուշեր:

Սուրբ հայրերի վարքերում և աշխատություններում հաճախ հանդիպում ենք չար զորությունների մասին բազմաթիվ պատմությունների, որոնց նկարագրերում այդ ուժերը նման են եթովպացիների:

Օրինակ՝ Պետրոս առաքյալի աշակերտ Բագարատ եպիսկոպոսի վկայաբանության մեջ կարդում ենք.

***«Ու մի օր, մինչդեռ ժողովրդին ուսուցանում էր, հայտնվեց սատանան՝ եթովպացու նման, բազում սևադեմ դևերով»**[49]:*

Մասնավորապես սուրբ հայրերն իրենց թույլ չէին տա՝ որևէ ազգի, այն էլ

---

47 Болотов В.В... ст. 397.

48 Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977, էջ 489:

49 Տորոմենի քաղաքի եպիսկոպոս սուրբ Բագարատի վկայաբանությունը, Վարք Սրբոց, սբ. Էջմիածին, 2009, էջ 183:

քրիստոնյա, մշտապես համեմատել սատանայի հետ (հատկապես, որ այդ շրջանում Եթովպիա անվամբ պետություն չկար)։ Ուրեմն, «եթովպացի» ասելով՝ ուղղակի շեշտվել է մաշկի մգությունը։

Իսկ եթե Եթովպիա կամ Քուշ ասելով նկատի են ունեցել զուտ տեղանք, որտեղ ապրել են մուգ մաշկ ունեցող մարդիկ, այդ դեպքում կարող է հարց առաջանալ, թե Արաքսը, որ բավականին մեծ հեռավորության վրա է գտնվում արևաթուխ մարդկանցով բնակեցված երկրներից, ինչպե՞ս կարող էր պատել այնպիսի տարածք, որն անվանված լիներ Եթովպիա կամ Քուշ։

*Ղ. Ինճիճյանի տեղեկությունները լույս են սփռում շատ հարցերի և թյուր կարծիքների վրա. «**Պետք է իմանալ, որ եբրայեցիների մոտ Քուշ կոչվածը քաղդեացիների մոտ Քութ է անվանվում։ Արդ, Կալմետը այս անուններին մոտ է համարում Գութ կամ Սկյութացի անունները, որոնք, ըստ նախնիների, սկզբում Երասխի մոտ էին բնակվում, որը Հայաստանում է գտնվում, ինչի մասին ասում են, որ Մովսեսը այն ժամանակվա բնակիչներից լսելով է գրել, թե Երասխը (կամ որ նույն է՝ Գեհոնը) պատում է ամբողջ Քուշ երկիրը կամ (Սուրբ Գրքի յոթանասնից թարգմանության) Եթովպացիների երկիրը, ինչը Նիկոլայն ու Կալմետը հաստատում են և ասում, որ Դրախտը Հայաստանում է եղել։ Առաջ է քաշվում նաև Մակալոդդեայի խոսքն այն մասին, որ ոմանց կարծիքով Եթովպացիներն իջել են Հայաստանի կողմից։ Սրանք այսքան բան են գրել, քանի որ անծանոթ են եղել Հայաստան աշխարհին, բայց մենք այդ նույն անունները, որ Մովսեսն անվանեց, գտնում ենք Հայաստանում. դա Արցախ նահանգի Քուստի գավառն է, որ Երասխի մոտ է։ Այդ պատճառով էլ Մովսեսի ասածը պետք չէ հասկանալ Եթովպիան, որ հրեաների կողմից կոչվում է Քուշ, այլ՝ Հայաստանի այն տարածքը, որով անցնում է Երասխը, որտեղ նույն անունը հորջորջվում էր Քուս, որը հենց Քուստին է։ Ահա տեսնում ենք՝ Մովսեսի ժամանակ այս Քուստի գավառն Արցախի երկայնքով էր ձգվում, այդ պատճառով էլ ամբողջ Արցախ նահանգը, գուցե նաև նրա շրջակա սահմանները, այդ անունով էին կոչվում....***

Այս ամենի վրա ավելացնենք նաև այն, ինչը տալիս է մեզ Հայաստանի հին աշխարհագրությունը, ըստ որի՝ Ուտի նահանգում մի ժողովուրդ է եղել, որի նախահայրը կոչվում էր Սև կամ Սևուկ, այդ պատճառով էլ այդ ողջ ժողովուրդը կոչվում էր Սևորդիներ։ Հովհաննես կաթողիկոսն ասում է. «Իրենց հոր սև կոչվելու պատճառով այդ ազգը Սևորդիներ կոչեց»։ Մի ուրիշ տեղ՝ «Իրենց նախնի Սևակայի պատճառով ազգին կոչում էին Սևորդիներ»։ Անհիշելի ժամանակներից իրենց առաջին հայրերին այդպես անվանելով՝ հայտնի են դարձնում, որ այն հստակորեն վերաբերում է մի ժողովրդի, որոնք ի սկզբանե բնակվել են այնտեղ՝ Սև կամ Սևորդիներ կոչված, որոնք հաստատված մի ուրույն ազգ և ուրույն ժողովուրդ էին...

Եվ այսպես, Մովսեսը կարող էր ճշմարտացիորեն Քուս կոչել այս երկիրը, որովհետև նախ նույն անվամբ երկիր կար Արցախ նահանգում...

Արդ, եթե Հնդկաստանն իր թխամորթ բնակիչների պատճառով Եթովպիա կոչվեց, ապա առավել ևս նպատակահարմար էր, որ Մովսեսը Եթովպիա կոչեր Երասխի կամ Գեհոնի այն սահմանը, որի բնակիչները որոշ պատճառներով ար-

դեն իսկ կոչվում էին Սևեր կամ Սևորդիներ[50]: Այս սովորույթը կարելի է տեսնել նաև այժմ՝ մեր ժամանակներում, երբ արաբ ենք կոչում նաև այն ազգին և այն մարդուն, որը մաշկի գույնով նմանվում է նրանց: Այսքան բացատրությունները, ըստ իս, բավական են՝ հիմնովին ցույց տալու Երասխ գետի համապատասխանումը Գեհոնին, որով և ի դերև են ելնում անգլիացի հեղինակների (Հուետհոսի և Հարդուինի)՝ ընդհանուր պատմության մասին այն թյուր կարծիքները, թե Մովսեսի նկարագրությունը Եդեմի վերաբերյալ անկատար է»[51]:

Ինճիճյանի այս կարծիքը եզակի չէ. նման եզրակացության են հանգել նաև օտար հնագետերից ոմանք.

«Վիկտորիական դարաշրջանի գիտնականները ոչ միայն նույնացնում էին Արաքսը Գեհոնի հետ, այլև ... համարում էին, որ Մեդիայի և Կասպից ծովի մոտ ընկած անտիկ երկիր Քոսսիան, համաձայն անտիկ աշխարհագրագետների, կարող է նույնացվել Աստվածաշնչյան Քուշի հետ, որով հոսում էր Գեհոնը»[52]:

*Սակայն հետաքրքիր է, որ այդ տարածքը, որտեղով հոսել է Արաքսը, անվանվել է ոչ միայն Քուս, Քոսսիա կամ Քուշ, այլև հենց Եթովպիա. **«Հեղինակավոր գիտնականները համարում են, որ Գեհոնը Արարատյան Երասխն է... Իսկ այն հարցին, թե «ինչպե՞ս կարող է Երասխը պատել Եթովպիային», ոմանք պատասխանում են, որ գետի մոտ ապրում էր ժողովուրդ, որ անվանվում էին Եթովպացիներ»[53]:***

*Այս տեղեկատվությանը կարող է հիմք ծառայել այն, որ Ուտի և Արցախ նահանգների միջև կար մի տարածք, որը վաղ անցյալում իր անվամբ շատ նման էր Եթովպիային. **«Եղել է, որ Փիսոնը նույնացրել են Գանգեսի, Գեհոնը՝ Նեղոսի հետ: Բայց դրանց՝ մեկ ակունքից բխելու խնդիրը չի բացատրվում՝ լռելյայն թյուրըմբռնում վերագրելով Աստվածաշնչին: Մինչդեռ Եվիլատ երկիրը կարող էր Հայաստանի հյուսիս-արևելքը նշանակել, որի միջով հոսում էր Փասիս-Ճորոխը, իսկ Եթովպիան անհնար չէ նույնացնել էթիուն երկրի հետ, որ ոռոգվում էր Արաքս գետով, իսկ Տիգրիսն ու Եփրատը այն ժամանակ ևս ամենքին էին հայտնի»[54]:***

*Այդ կողմերում բնակվող ժողովուրդների մասին, որոնք անվանվել են եթովպացիներ, տեղեկատվություն է մնացել դեռ հին ժամանակաշրջանից. ն. Ք. 13-րդ դարում սրանք Հայաստանի թագավոր Զարմայրի փոքրաքանակ զորքի հետ միասին գնացել են Տրոյայի արքա Պրիամոսին օգնության. **«Մեր Զարմայրը, որ ասորեստանցիների հպատակ էր, քիչ մարդով, եթովպական զորքի հետ, օգնական է եղել Պրիամոսին և այնտեղ հելլենացի քաջերից վիրավորվելով՝ մեռել է»[55]:***

Հավանաբար, սրանք հենց այն սևորդիներն են, որ ապրել են Արցախի կողմերում և կամ էլ ասորեստանցիների հպատակ հնդկական մի այլ զորախումբ են:

---

[50] Սևորդիները հունգարական ցեղ էին, որոնք, հյուսիսից անցնելով Կովկասյան լեռնաշղթա, բնակություն էին հաստատել Հայաստանում՝ Ուտիք նահանգում: Սևորդիները մերվել էին հայ միջավայրին և հաճախ դաշնակցում էին հայերի հետ (տե՛ս Թովմա Մեծոփեցի, ծնթ. էջ 362):

[51] Ղուկաս Ինճիճեան… էջ 259-264:

[52] Дэвид Ролл… стр. 68-69.

[53] Պետրոս Արքեպիսկոպոս Բերդուման, Ծննդոց գրքի մեկնություն, սբ. Էջմիածին, 2010 թ., էջ 114:

[54] Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյան. Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 197:

[55] Մովսեսը Խորենացի, Պատմություն Հայոց. Հայաստան հրատ., Երևան 1968, էջ 122:

*Արաքսի շրջակա տարածքներից բացի՝ հնում Եթովպիա և Քուշ անվանումները եղել են նաև դեպի հյուսիս ընկած վայրերում. ըստ վկայության՝ «Եթովպիա» է կոչվել նաև Ուտիից հյուսիս-արևմուտքում գտնվող Սև Ծովի ափամերձ կողքիս և Խաղդյաց նահանգը. **«Գեհոն գետը մեր Երասխն է, որին օտարազգիները «Արաքս» են ասում, որի ակունքը Բարձր Հայքում է. այս գետի վրա էլ Ճորոխի նման կարող է դժվարություններ ծագել, որովհետև Մովսեսն ասում է, թե Գեհոնը Եթովպիայի առջևից է անցնում, բայց հին հեղինակների մոտ գտնում ենք, որ «Եթովպիա» էին կոչվում նաև Կողքիս և Խաղդյաց նահանգները»**[56]:*

Որ Հայաստանի հյուսիսային սահմանների հարևանությամբ՝ Սև Ծովի ափերի մոտ ապրող ազգերին էլ են եթովպացի անվանել, այդ մասին հանդիպում ենք նաև Բոլոտովի մոտ.

***«Հայտնի է, որ Անդրեաս առաքյալը քարոզել է Սկյութիայում, ինչպես որ գրված է այդ մասին Օրիգենի մոտ: Բայց որտե՞ղ էին Սկյութները: Նրանց սկսեցին փնտրել Հռոմեական կայսրության մոտակայքում, Սև ծովի արևելյան ափերի մոտ: Անդրեաս առաքյալի գործունեությունն էլ տեղայնացվում է հատկապես Սևաստոպոլ մեծի շրջակայքում (ներկայիս Փոթիի մոտ): Իսկ դրանից այն կողմ ապրում են «եթովպացիները». այս անվամբ կոչվում են բոլոր բարբարոս ժողովուրդները»**[57]:*

Տեսնում ենք, որ ճշմարտությանը շատ ավելի մոտ է այն տեսակետը, որ Փիսոնն ու Գեհոնը հենց Հայոց Ճորոխ և Արաքս գետերն են: Այս մասին մյուս հետազոտողները համեմատաբար քիչ են խոսել, քանի որ Հայոց պատմության մանրամասներից անտեղյակ են եղել: Սակայն մեր տարածքի պատմությանն ու աշխարհագրությանը տեղյակ լինելն է դյուրին դարձնում Դրախտի տեղանքի հայտնաբերումը: Քանզի թե՛ Եվիլատը, թե՛ Քուշ-Եթովպիան, որոնց մասին խոսում է Աստվածաշունչ մատյանը, գտնվել են հենց այս տարածքում:

Գոյություն ունեն նաև հին քարտեզներ՝ պատրաստված եվրոպական գիտնականների կողմից, որոնք Դրախտը տեղադրել են Հայաստանում, որտեղից սկիզբ է առնում Գեհոն-Արաքս գետը: Այն դուրս գալով Հայաստանի արևելյան սահմաններից՝ անցնում է Եթովպիա և Քուշ անվանումներով նշված տարածքներով:

Ուրեմն, Աֆրիկյան Եթովպիան ընդամենը անվանակից է իրականում սուրբգրային Հայոց տարածքներին: Այս մասին լսելը կարծես թե դժվար է ընկալվում: Պատճառն այն է, որ Աստվածաշունչն ընթերցելիս՝ չենք օգտվում հնագիտական և պատմական գրքերից: Դա և կանխակալ այլ գործոններ պատճառ են դարձել, որ հատկապես վերջին շրջանում ներկայիս Եթովպիան համարվի բուն այն երկիրը, որին պատել է Գեհոնը, ինչը տեսանք, որ բերում է նույնիսկ այնպիսի եզրակացությունների, որ ոմանք, հանձին անգլիացի գիտնականների, համարում են, թե Մովսեսի «Ծննդոց» գիրքը կատարյալ չէ: Եվ իսկապես, եթե համարենք, որ Նեղոսն է Գեհոնը, ապա Սուրբ Գրքի տեղեկությունը, որ բոլոր գետերն էլ սկիզբ են առել նույն տարածքից, դառնում է շփոթմունքի պատճառ:

Իսկ Հայաստանի տարածքում Եդեմի գտնվելը ամփոփ հավաստում է էրիկ

---

[56] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896թ., էջ 11:

[57] Болотов В.В… стр. 396-397.

Նյուստրեմը և շատ ուրիշներ. ***«Այդ այգու գտնվելու վայրի մասին բազում ենթադրություններ են արել: Հիշատակված չորս գետերից հայտնի են միայն երկուսը՝ Տիգրիսն ու Եփրատը, մյուս երկուսը՝ Գեհոնն ու Փիսոնը, դժվար է որոշել: Ոմանք ենթադրում են, որ Գեհոնը Արաքսն է, իսկ Փիսոնը՝ Փասիսը (Ճորոխը), այդ դեպքում Եդեմը տեղադրված կլիներ ներկայիս Հայաստանում»[58]:***

«Ինչպես ենթադրում են, Հայաստանում էր գտնվում երկրային Դրախտը: Հայաստանում իրենց սկիզբն էին առնում երկիրը ոռոգող չորս նախապատմական գետերը»[59]:

«Ինձ թվում է, որ Մովսես Մարգարեն մարդկային ցեղի ծագումը դնում է Հայաստանի մեջ, ինչպես այն գետերը, որոնց մասին խոսում է, իջնում են Հայոց լեռներից: Եվ նույն Մովսեսը մարդկային ցեղի վերանորոգությունը դնում է Հայաստանում, քանզի նա Տապանը իջեցնում է Արարատ լեռան վրա»[60]:

Վենետիկի հռչակավոր Սուրբ Մարկոս եկեղեցու վրա մնացել են հին փորագրություններ, որտեղ Նոյի տապանի հետ հիշատակվում են նաև չորս գետերը.

«Եկեղեցու գլխավոր դռան աջ կողմում փայլացայտ պատկերները պատմում են մեզ Նոյի տապանի մասին, որի շնորհիվ աշխարհը վերապրեց Ջրհեղեղից հետո... Եթե մեր ուշադրությունը կենտրոնացնենք ներքնամասի վրա, անհնար կլինի չնկատել արևելյան մարմարի մի կտոր՝ հետևյալ գրությամբ. «Ս. Մարկոսի Աթոռ», որի վրա փորագրված են այլաբանական հերոսներ և Եդեմական պարտեզի չորս գետերը՝ Եփրատը, Տիգրիսը, Փիսոնը և Գեհոնը, որոնք, ըստ տարբեր հնագիտական աղբյուրների, գտնվել են Հայաստանում»[61]:

Այսպիսով՝ կարող ենք լիովին ապացուցված համարել, որ Դրախտի չորս գետերը բոլորն էլ մինչ օրս գոյություն ունեն, և նրանց ակունքները գտնվում են, ըստ Սուրբ Գրքի, միևնույն վայրում՝ Մեծ Հայքի տարածքում, ինչն էլ ապացույց է, որ Դրախտը հենց այս վայրում է սահմանվել.

«Ահա այսպես, առանց մեծ դժվարությունների, Դրախտի չորս գետերը Հայաստանում գտնելով՝ զմայլվում ենք, որ Ադամի և Եվայի երջանիկ օրերից մինչև օրս պատմում են նրանց երանելի Դրախտի փառքը՝ նույն երկրի մեջ անխախտ պահելով իրենց հիմքը, ինչպես որ աշխարհի սկզբին Ճարտարապետը սահմանել էր»[62]:

Բայց և այնպես, միայն վերոնշյալ չորս գետերը չեն, որ Դրախտի տեղանքի կողմնորոշիչ են հանդիսանում: Հաջորդ գլուխը՝ «Աստվածաշնչյան Արևելքը», այդ մասին դեռ իր խոսքն ունի ասելու:

---

58 Доктор Эрик Нюстрем… ст. 124.

59 Ալեքսանդր Դյումա (Հայր): Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 212:


60 Գոթֆրիդ Լայբնից. գերմանացի փիլիսոփա, լեզվաբան, աստվածաբան: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 129:

61 Ալերամո Հերմետ, Պաոլա Կոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 42-43:

62 Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896թ., էջ 11:

Բազմաթիվ քարտեզներ են պահպանվել եվրոպական տարբեր երկրների քարտեզագիրների մոտ, որոնցում հստակ ցույց է տրված, որ Դրախտի չորս գետերը բխում են Հայաստանից: Իսկ Հայաստանի արևելյան տարածքները հեղինակները անվանել են Քուշ կամ Եթովպիա: Այդ տարածով է անցնում Գեհոն-Աբաբսը: Իսկ հյուսիսային կողմում Եվիլատն է, որով անցնում է Փիսոն- Ճորոխը: Օտար հեղինակների կողմից պատրաստված այս բազմաթիվ քարտեզները ևս մեծ ապացույց են Դրախտի՝ Հայաստանում գտնվելու մասին: Որոշ քարտեզներ շատ նման են միմյանց սակայն պատկանում են տարբեր հեղինակների և փոքր-ինչ են իրարից տարբերվում:





*1. «*tabula-paradisi-terrestris-justa-systema-auctoris-incisa-a-p-stark-man *քարտեզը տպվել է 18-րդ դարի վերջին հավանաբար 1775թ.»*[63]*:*

[63] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/





2. «Երկրային դրախտը՝ ըստ Դեսբրուլինսի՝ 1700-1799, Ֆրանսիայի ազգային գրադարան»[64]՝ Այստեղ ի ցույց է դրված Դրախտի տեղանքի երկու տարբերակ. մեկը Հայաստանում, մյուսը՝ Միջագետքում՝

[64] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/






3. «1672–1757 Օգոստինոս Կալմեյի երկրային Դրախտի քարտեզը, «Carte du paradis terrestre», *նրա հետևյալ աշխատությունից.* «Commentaire litteral sur livres de L'Antien et du Nouvean Teastament», *Փարիզ 1724-1726»*[65]*:*

[65] Рубен Атоян, Земля Эдема, Журнал "Анив", ном. 2 (29), Минск, 2010.


CARTE
DU PARADIS
TERRESTRE,
selon MOYSE.
Chap. 2. de la Genese
V.8. Le Seigneur avoit planté dés le commencement vulg. (vers l'Orient hebr.) un JARDIN DELICIEUX. v.9. Le Seigneur avoit aussi fait naitre de la Terre toutes sortes d'arbres et l'ARBRE DE VIE au milieu de ce Jardin et l'Arbre de la science du bien et du mal. v.10. de ce lieu de delices sortoit un Fleuve, pour arroser ce Paradis, et de là ce Fleuve se partage en quatre Canaux ou Fleuves
v.11 Lun s'appelle PHISON et c'est celui qui tournoie dans tout le Pais d'HEVILATH ou il vient de l'or.....
v.13. Le 2d. Fleuve s'appelle GEHON et c'est celui qui coule tout autour de l'ETHIOPIE (hebr. le Pais de CUSCH)
v.14. Le 3e. Fleuve est le TIGRE, qui a son cours vers les ASSYRIENS, et le 4e. de ces Fleuves est l'EUPHRATES même.
Chidkel en Hebreu Signifie le Tigre
Diglito aux anciens dou Iert formé
Tiglit en changeant D. en T. et L. en R.
Diglat dans Josephe, dans le Parraphraste Chaldeen, dans les versions Arabes et Persanes.
Tigri aux Medes a cause de sa rapidité qui est semblable a celle d'une fleche quils appelolent Tigris
Tegil ou Tigil aux Modernes Selon D. Calmet
Moyse a ecrit la Genese dans les Deserts de l'Arabie l'an du monde 2681.
PONT EUXIN
PARADIS TERRESTRE
HORTUS in EDEN hebr.
JARDIN DELICES
ARARAT mont
Ophir
D'HEVILATH
TERRE D'ETHIOPIE vulg.
et de CUSCH. hebr.
GEHON ou Araxes fl.
Sapires
MEDIE
Caspiennes portes
MER CASPIENNE
Sophene
E desse
M. Masius
Samosate
Euphrates fl.
Elongosine
ARMENIE
Tigre fl.
Adiabene
Assyrie
M. Taurus
Nisibe
M. Singar.
Nimphée
Haran
Ur
ASSYRIE
Tigre fl.
Ninive Ninus
Tapsaq; Pethore
ARAMA HARAIM hebr. ou MESOPOTAMIE
la SYRIE au milieu des Fleuves
Euleé fl.
Ancien Seleucie
Sibacene
Elymais
Ura
BABYLONIE
Babylone
Suses
SUSIANE
Campagnes de Sennaar
CALDEE
ARABIE
Occident
Orient
Midi
Septentrion
60
65
70
75
80
85
90
30
35
40
HORTUS in EDEN hebr.
PARADISUS VOLUPTATIS vulgo
Geneseos Cap. Secundo v. 8.
Seu
TABULA GEOGRAPHICA
attinens
ad PRIMAM MUNDI ÆTATEM
quæ complectitur 1656. annos
dies decem usque ad Diluvii
Vide Tabulas Methodicas
Genealogicas et Chronologicas
Petri MOULLART-SANSON
Regis Christianis. Geographi
Luxtiæ Parisiorum
in via vulgo dicta
la Rue Froimanteau
prope Ædes Regias
CIↃIↃCCXXIV
Cum Priv. Reg. 8. mart. 1704
J.B.D.L.H. sculpsit



4. «Մուլյար – Սանսոնի քարտեզում (1724 թ.) և այլ բազմաթիվ Արևմտյան քարտեզագիրների մոտ Դրախտը և Արարատ լեռը, նաև Տիգրիս և Եփրատ ակունքները գտնվում են Հայաստանում: Նրանցից արևելք գտնվող տարածքները ներկայացված են որպես թե՛ Քուշ և թե՛ Եթովպիա, որով հոսում է Արաքս – Գեհոնը, իսկ Հյուսիսում գտնվում է Եվիլատը»[66]:

[66] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise

Tom. I. V. T. pag. 83.

TABULA
PARADISI TERRESTRIS





5. «Եդեմական այգու անտիկ քարտեզը՝ պատրաստված Կալմետի կողմից, 1789 թ.»[67]:

[67] antique-map-of-the-garden-of-eden-by-calmet-1789


PONT EUXIN of SWARTE ZEE
PHISON, holendsch Phis
T LANDT VAN HAVILAH
Ophir
AARDSCHE PARADYS
EUPHRATES, holendsch FRAT of FORAT
ARMENIEN
Cordijsche gebergte
EDEN
gebergte ARARAT
PARADYS
ARAXES
Artaxata
GIHON RIV.
Sapires B.
DE CASPISCHE ZEE
MEDEN
De Caspische Poorten
CHUS
Edessa
Samosata
De berg Masius
Chaboras Riv.
ARAM NAHARAIM
Elongosine bron
ASSYRIEN
Berg Taurus
Moeras Thospites
Maran
Nisibis
B. Singara
Chalach
OF
Resen
Ur
ADIABENEN
Nineve of Ninus
Tapsacus
Pedora
Sabatha
t Landt
cittacene
Virta
TIGRIS holendsch
Selencia
Ctesiphon
Ura
BABYLONIEN
Van Sinear
Sabatis
Elymais
Sula
SUSIANA
BABEL
DIGLAT of Diglito
Chalanna
Eulæus Riv.
Achad
Arach
CHALDEEN
Casdim
Orchoa
KAARTE van het AARDSCHE PARADYS, volgens het ontwerp van den SCHRYVER, en opgemaakt door P. STARCK-MAN.



6. «Դրախտի հնագույն քարտեզը, Huet / Stark-man *1725,* "Kaarte van Het Aardsche Paradys"»[68]:

[68] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise


THE EUXIN or BLACK SEA
PISON, non Phasis R.
THE LAND
OF
HAVILAH
THE CASPIAN SEA
Cyrus R.
Ophir
CUSH
TERRESTIAL
EUPHRATES non FRAT or FORAT.
ARMENIA
ARAXES non
MEDIA
Gordian Mountains
EDEN
Artaxata
GIHON R.
Edessa
Mount ARARAT
PARADISE
Sapiras M.
M. Masius
The Spring Elongasin
ASSYRIA
The Caspian Gates
M. Taurus
ARAM
Chaborus R.
The Lake Thospites
Chalach OR
Haran
Niribus R.
M. Singara
Lycus R.
Mesluh
Chaborus
Phalga
Ur
Resen
Circesium or Carchemish
Saocoras or Aborras R.
ADIABENE
The Land
Nineveh or Ninos
Iappacus
Pestora
Marcias R.
Virta
Cittacene
EUPHRATES non FRAT or FORAT
Seleucia
Ctesiphon
Sabatha
Elymais
Ura
BABYLONIA
Sabatis
Susa
DIGLAT or Diglath
Babel
SUSIANA
Chalanna
Cidzeus R.
Achad
CHALDEA
Casdim
Arach
Orchoa
A MAP of the TERRESTRIAL PARADISE according to the AUTHOR'S SCHEME.



*7. «Անգլիացի էմանուել Բուենի քարտեզում (*էմանուել Բոուեն (1714-1767), Անգլիա, fարտեզ «Երկրային դրախտը»: Անձնական հավաքածու, Լոնդոն, *Ref. RG31.)*[69]*, տպագրված՝ 1780 թ., աչքի է ընկնում սվաստիկաի խորհրդանիշը, որի ճյուղերը հանդիսանում են Դրախտից բխող չորս գետերը: Այստեղ Դրախտը գտնվում է Հայաստանի տարածքում, որտեղ է և Արարատ լեռը: Գեհոն – Արաքս գետը պատում է Քուշ երկիրը, ինչը համապատասխանում է Լեռնային և Դաշտային Ղարաբաղին: Իսկ Փիսոնը նմանապես բխելով Հայաստանի տարածքից և անցնելով Եվիլատի միջով՝ լցվում է Սև ծով»:*

[69] Ռուբեն Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, Պատկեր 102, էջ 217:



8. Այս քարտեզում ևս հեղինակը Արաքսը և Գեհոնը նույնացրել է[70]։

[70] Карен Фаррингтон, Исторические Атласы Библейский, Мир, Издател. - Мир Книги, 2008.

Աստվածաշնչյան Արևելք

«Լեգենդն ասում է, թե Հայաստանում
Արարատը կաթ ու մեղր է ծորել,
Արևն այնտեղից է լուսավորել:
Եվ ժողովուրդը այդ լեռնաստանում
Միշտ իմաստությամբ էր հարստանում»[71]:

Այս բաժնում խոսվում է Դրախտի երկրորդ նշանի՝ արևելյան տեղանքի մասին:

Արևելք ասվածը բավական խրթին հարցեր է պարունակում և կարծես չի համընկնում այն աշխարհագրական դիրքին, որտեղ գտնվում են վերոհիշյալ գետերի ակունքները:

*Հայտնի է, որ Մովսեսը Ծննդոց գիրքը գրելու ժամանակ գտնվում էր Սինայի անապատում և Դրախտի գտնվելու վայրը նշում էր այսպես. **«Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը»[72]:***

Սրանից կարելի է ենթադրել, որ խոսքը Մովսեսի գտնվելու վայրից արևելք եղող տարածքների մասին է, որին էլ, ըստ աշխարհագրական դիրքի, համապատասխանում են Շումերը, Բաբելոնը, Ասորեստանը և Հնդկաստանը, ինչը հաստատում է Սուրբ Գիրքը[73]: Ահա այն հիմնական պատճառներից մեկը, որ մեկնիչներից ոմանք, արևելյան դիրքի թյուրըմբռնմամբ, այդ կողմերում են ջանացել փնտրել Դրախտի գտնվելու վայրը, սակայն նման մոտեցումն էլ իր հերթին հակասության մեջ է մտնում գետերի ակունքների տեղանքի հետ: Նման կարծիքները բերել են նրան, որ հետազոտողներից ոմանք ջանացել են չհեռանալ Հայաստանից (ուր գետերի ակունքներն են), միաժամանակ նաև Միջագետքից, որը Մովսեսից արևելք ընկած տարածքն էր: Հետևաբար, նրանք չեն կարողացել կենտրոնանալ մի տեղի վրա. այլ Եդեմը տարածել են Տիգրիսի և Եփրատի ամբողջ երկայնքով մեկ՝ ընդգրկելով հսկայական տարածք:

Ուրեմն, արևելքի հարցում առաջնությունը կարելի է տալ այլ երկրների, իսկ գետերի հետ կապվածը Հայաստանի՞ն: Սակայն նման բաժանումը, բնականաբար, անհնարին է, քանզի կասկածից վեր է, որ այդ երկու նշաններն էլ միևնույն վայրում պետք է փնտրել. կա՛մ այստեղ, կա՛մ այնտեղ: Իսկ որ գետերի ակունքները Մեծ Հայքի տարածքում են գտնվում, բավականին ապացույցներ վերևում արդեն իսկ բերվեցին:

*Այդ դեպքում ինչպե՞ս մեկնաբանել Արևելքը. չէ՞ որ Հայաստանի տարածքը գտնվում է Սինայի և Իսրայելի հյուսիսում, որը և հաստատում է Եզեկիելի մարգարեությունը՝ **«Թորգոմա տունը՝ հյուսիսի կողմերից»[74]:***

Մեկնիչներից ոմանք էլ տեսնելով, որ Սուրբ Գիրքն արևելքն ու գետերի ա-

---

[71] Սանդրո Շանշիաշվիլի, տե՛ս Սրտի ձայն, հրատ., Հայաստան և Սաբճոթա Սաքարթվելո Երևան-Թբիլիսի, 1970, էջ 13-14:

[72] Ծննդ. 2:8:

[73] Եսայի 9:11, Բարուք 4:36-37 և այլն:

[74] Եզեկիել 38:6:

կունքները միևնույն տեղում է դնում, կարծիք են հայտնում, որ Հայաստանը Մովսեսի գտնված վայրից դեպի արևելք ընկած տարածք է: Սակայն, որքան էլ ցանկանանք, միևնույն է՝ աշխարհագրական դիրքով Հայաստանը Մովսեսից արևելք տեղադրել չենք կարող: Ճիշտ է, Հայաստանը ինչ-որ չափով հյուսիս-արևելքում է, սակայն հյուսիս-արևելքը դեռ արևելք չէ:

«Այս «Եդեմ» կոչվածը Հայաստանի գավառներից մեկն է՝ Մովսեսի ասած արևելյան կողմը: Արևելյան կողմ ասելով՝ նկատի ունի կա՛մ իր կանգնած տեղի համեմատ, որը Արաբական անապատն էր, կա՛մ Հրեաստանի, ուր պիտի գնային հրեաները. որն էլ որ լինի, Հայաստանը նրա Արևելքն է»[75]:

Արևելքի և գետերի՝ նույն տեղում գտնվելու անհամատեղությունը բերում է նրան, որ մեկնիչները երբեմն էլ Հայաստանի անունը չտալով՝ անուղղակիորեն մատնացույց են անում այդ կողմը.

««Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը»... Այս նկարագրությունից նախ և առաջ պարզ է դառնում այն, որ Եդեմը մի լայնատարած երկիր է արևելքում, որտեղ գտնվել է Դրախտը՝ որպես մի փոքր կառույց՝ նախատեսված առաջին մարդկանց բնակության համար: Այնուհետև երրորդ և չորրորդ գետերի անունների նշումը հստակ ցույց է տալիս, որ այդ Եդեմական երկիրը որոշ չափով հարևանություն է ունեցել Միջագետքի հետ: Դրանով էլ մեզ համար սահմանափակվում է աշխարհագրական դիրքը»[76]:

Այո, իսկապես Հայաստանը Միջագետքի հարևանությամբ է գտնվում, և ավելի հավանական հարևան չկա, սակայն Հայաստանի անունը հստակորեն տալուն խանգարում է հենց այն, որ Հայաստանը ոչ թե արևելքում է գտնվում, այլ՝ հյուսիսում, սակայն նրա անունն էլ ամեն դեպքում հիշատակվում է հավանական երկրների հետ, քանզի հայտնի երկու գետերի ակունքների առկայությունը թույլ չեն տալիս անտեսել հյուսիսում գտնվող Հայաստանը:

«Ենթադրվում է, որ Դրախտը Եդեմում է՝ մի երկիր, որը, ըստ Սուրբ Գրքի[77], ամենայն հավանականությամբ կարելի է փնտրել Միջագետքում, Սիրիայում կամ Հայաստանում՝ դեպի արևելք այն երկրի համեմատ, որտեղ նա գրում էր, կամ՝ Ավետյաց երկրում»[78]:

Գետերի ակունքների և արևելքի տեղանքի առեղծվածը բերում է նույնիսկ այնպիսի եզրահանգման, ըստ որի՝ Սուրբ Գրքում դա գրվել է՝ մարդկանց շփոթության մեջ գցելու նպատակով: Անգամ նման անընդունելի եզրահանգման դեպքում Եդեմը տեղադրում են Հայաստանում:

«Ննդոց գրքի 2:8 համարը («Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը, և այնտեղ դրեց իր ստեղծած մարդուն») մտցված է մարդկանց շփոթեցնելու համար: Հետագայում այս շփոթությունները համոզեցին որոշ բաբելոնյան

---

[75] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896, էջ 11-12:

[76] А. П. Лопухин, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986, ст. 11-12.

[77] Ելք. 37:12, Եզեկ. 27:23:

[78] Святитель Филарет, Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 71.

հրեաների՝ նույնացնել Եդեմը Բեիտ-Եդեմի հետ (Տե՛ս Եզեկիել 27:23)։ Բեիտ-Ադին անունը ասորական աղբյուրներում շատ է եղել մ.թ.ա. 10-9-րդ դարերում։ Բեիտ-Ադենը Հայաստանում է գտնվել և ինչպես ենթադրվում է, եղել է սկզբնավայրը ոչ միայն Տիգրիսի և Եփրատի, այլև Նեղոսի և Օրոնտի (Փիսոնի). այդպես էր համարում Ալեքսանդր Մեծը»[79]։

*Բայց խնդիրը կարծես էլ ավելի է խճճվում, երբ Սուրբ Գիրքը մի այլ տեղ էլ հենց բուն Հայաստանի տարածքն է ներկայացնում որպես Արևելք։ Երբ Նոյ նահապետն իր ընտանիքով իջավ Արարատ լեռան ստորոտ և բնակություն հաստատեց այնտեղ, միաժամանակ անց՝ նրա սերունդը բազմացավ, և ստիպված եղան նոր բնակավայր փնտրել. **«արևելքից տեղաշարժվելու ժամանակ նրանք Սենաար երկրում մի դաշտ գտան և բնակվեցին այնտեղ»[80]։***

Հետևաբար, տեսնում ենք, որ Սուրբ Գիրքը Հայաստանը ներկայացնում է մեկ՝ որպես հյուսիս, մեկ՝ որպես արևելք, սակայն իր աշխարհագրական դիրքով այդ երկրների համար այն միանշանակ հյուսիսային տարածք է։

*Այս խնդրի հետ կապված՝ բավականին հետաքրքիր մի պարզաբանում կա, ըստ որի՝ հնում Տիգրիսի մի կողմը կոչվել է «արևելք», իսկ մյուսը՝ «արևմուտք»։ Հայաստանը հյուսիսային երկիր լինելով հանդերձ՝ միևնույն ժամանակ գտնվում է Եփրատի արևելյան կողմում։ Եվ ըստ այս կարծիքի՝ հենց այդ պատճառով էր Մովսեսը իրենից հյուսիս գտնվող Հայկական լեռնաշխարհը համարում «արևելյան կողմ». **«Արդ, որ Մովսեսն Արևելք ասելով նկատի ուներ Արարատյան լեռները, ինչը Հայաստանն է, այս բանը բոլորն են վկայում։ Եվ Կոշարը, իմաստությամբ քննելով Մննդոցի 7-րդ համարը, ասում է. «Մովսեսը հետևում էր ասորական պատկերացումներին, ըստ որի՝ Արևելքը և Արևմուտքը համարվում էին Տիգրիս գետի երկու եզրերը, ինչն իրենց տերության սահմանն էր։ Տիգրիսի այն կողմն ընկած տարածքը կոչում էին Արևելք, իսկ Տիգրիսի այս կողմը՝ Արևմուտք, և ըստ այս բաժանման՝ Արարատ լեռն ու Հայաստանը, որտեղից շարժվեցին մարդիկ, անվանում էին Արևելք։ Այստեղից պարզ է դառնում նրանց կարծիքի անհիմն լինելը, ովքեր Դրախտը տեղադրել են Պաղեստինի մոտակայքում, Ասորեստանում կամ Բաբելոնում»[81]։***

Այս վարկածն, իհարկե, բավականին տրամաբանական է, սակայն ոչ այնքան համոզիչ, քանզի Եգիպտոսում ծնված, մեծացած և իր ողջ կյանքի ընթացքում Սինայից այն կողմ չանցած Մովսեսը դժվար թե ասորիների սովորույթներին տեղյակ լիներ և եթե ինչ-որ չափով տեղյակ էլ լիներ Աստվածաշունչ մատյանի առաջին՝ Մննդոց գիրքը գրելիս, չէր առաջնորդվի ասորական ավանդություններով։ Եվ պետք է նկատի ունենալ, որ Մովսեսը պատմաբան չէր, այլ՝ մարգարե և իր գիտելիքների հիման վրա չէր գրում, այլ, միանշանակ, Աստվածային շնորհի հայտնության, ինչից ելնելով էլ կարծում ենք, որ ամեն բան չէ, որ կարելի է տարբեր ազգերի պատկերացումներով հիմնավորել։

---

79 Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, с. 106.

80 Ծննդ. 11:1-2:

81 Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. I, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1835 թ., էջ 254-255:

Բայց ամենաառեղծվածայինն այստեղ այն է, որ Սինայի և Իսրայելի հանդեպ ինչ-որ չափով դեռ հյուսիսարևելյան դիրք ունեցող Արարատը, որ Հայոց սրբազան լեռն է և ըստ Մովսեսի՝ արևելյան կողմում էր գտնվում, Սենաարի համար այն արդեն 180 աստիճանով դեպի հյուսիս էր. ինչն էլ մեկնիչների մոտ մեծ շփոթություն է առաջացնում.

«Շարժվելով Արևելքից՝ գտան Սենաարի հարթավայրը: Հայաստանի համար, որը Ջրհեղեղից հետո եղավ մարդկության առաջին բնակավայրը, Սենաար երկրի ճանապարհը դեպի հարավ է ընկած: Այսպիսով՝ այստեղ ասվում է ո՛չ առաջին տեղաշարժման մասին, կամ Արևելք անունն օգտագործվում է անորոշ»[82]:

Իսկապես, Սենաարը Արարատի հարավում է գտնվում և, բնականաբար, Արարատը Սենաարի հյուսիսում պետք է լինի: Հետևաբար, երբ ասվում է «Արևելքից տեղաշարժվեցին» դեպի Սենաար, ապա դա չէր կարող Արարատի կողմը լինել, քանզի Սենաարից դեպի արևելք Հնդկաստանն է, իսկ այն, որ Նոյի սերունդը Արարատ լեռան մերձակայքում էր գտնվում և այնտեղից իջավ Սենաար, ոչ ոքի մոտ կասկած չի հարուցում:

Սա էլ իր հերթին կարծես մի անլուծելի խնդիր է դառնում, մանավանդ, որ Աստվածաշունչն այդ ժամանակաշրջանի այլ տեղաշարժի մասին ոչ մի տեղեկություն չի տալիս:

Տարակարծությունները հանգեցնում են նրան, որ մեկնիչներից ոմանք Սուրբ Գրքում «արևելքը» որակում են «անորոշ» (ինչպես անգլիացի մեկնիչներն էին Մովսեսի կողմից Դրախտի գետերի նկարագիրը «անկատար» համարում):

Սակայն, ինչպես գետերի բաժնում հերքվեց անգլիացի մեկնիչների այդ կարծիքը, այդպես և Արևելքի պարագայում կհամոզվենք, որ «անորոշ» ասվածն ընդամենը սուրբգրային այդ թվացյալ անհամապատասխանությունն ինչ-որ կերպ հարթելու փորձ է:

Եթե Մովսեսը ասում է, որ Դրախտը արևելյան կողմում է գտնվում, ուստի, Դրախտի չորս գետերի ակունքներն էլ այդ նույն արևելյան կողմում պիտի գտնվեն:

Տեսանք, որ Մովսեսը Արարատ լեռը նույնպես արևելքում է տեղադրում, ինչից գալիս ենք այն համոզման, որ Արարատը և Դրախտը գտնվել են միևնույն վայրում: Իսկ որ Արարատը Հայաստանի սրբազան լեռն է ոչ մի կասկած լինել չի կարող: Այսինքն, որտեղ գետերի ակունքներն են, այնտեղ էլ Դրախտն է. նաև որտեղ Արարատ լեռն է, այնտեղ էլ Դրախտն է:

Եվ սա նորություն չէ, քանզի բազմաթիվ մեկնիչներ և հետազոտողներ են ունեցել այն համոզումը, որ Դրախտը և Արարատ լեռը պետք է փնտրել միևնույն վայրում.

«Լատին մատենագիրները Հայաստանը կոչում են «ամենաընտիր ազգ և ամենաընդարձակ աշխարհ», ինչը վերցրել են հունական ավանդություններից, իսկ Աստվածաշունչը, որ մարդկային ցեղի պատմության աղբյուրն է, այնտեղ է հաստատում մարդկության առաջին օրրանը. աստվածագործ Դրախտը իշխում

---

[82] Святитель Филарет, Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 239.

է հայկական բարձրավանդակի վրա, և իր չորս եղեմաբուխ վտակները մինչ օրս գրեթե նույն ակունքն ունեն և պահպանում են իրենց հին անունները...

Երկրորդ անգամ էլ Հայաստանը հանդիսանում է Ջրհեղեղով վերասրբված մարդկության բնակարան, և այս անգամ քննադատությունը ստիպված է պատկառելով գլուխ խոնարհել, եթե չհանդգնի ամբողջ Աստվածաշունչը մերժել։ Ալեծուփ տատանումներից հետո Նոյան տապանը եկավ և հանգրվանեց Հայաստանի լեռների վրա, և Մասիսը դարձավ ազգային ավանդության սրբազան կենտրոն»[83]։

«Գրեսմանն իր հրատարակություններից մեկի մեջ ավելի պայծառ կերպով է խոսում այն մասին, որ աստվածների բնակավայրը՝ Դրախտը, Հայաստանն էր. «Ըստ Ծննդոց 2։10-ի՝ Դրախտը գտնվում էր այնտեղ, որտեղ Փիսոն, Գեհոն, Տիգրիս ու Եփրատ գետերը մի ընդհանուր ակնաղբյուրից են բխում։ Թեև Փիսոնն ու Գեհոնը վստահորեն չի կարելի որոշել, իսկ Տիգրիսն ու Եփրատն ընդհանուր ակնաղբյուր չունեն, սակայն անտարակուսելի է, որ ավանդությունը Դրախտը տեղադրում է Տիգրիս ու Եփրատ գետերի ակնաղբյուրների մոտակայքում՝ այսինքն Հայաստանի բարձրավանդակում։ Միևնույն պատկերն ենք ենթադրում Ջրհեղեղի մասին գլխում։ Տապանը կանգնում է Արարատ լեռան վրա։ Այս բանը բաբելացիներին ծանոթ էր, մանավանդ որ բաբելացիներից է ծագել։ Քանի որ Եփրատն ու Տիգրիսը աստվածների գետեր են համարվում, և պետք է, որ սրանց ակնաղբյուրը աստվածների աշխարհում գտնվի։ Ուտնապիշտին հափշտակվում է երկու գետերի ակնաղբյուրի մոտ, և այն, որ սա ասվել է ուղիղ իմաստով, ապացուցում է նաև Բերոսոսը, որը հայտնապես հիշատակում է Հայաստանն իբրև վայր, ուր կանգ առավ տապանը, և Քսիսութրոսը անհետացավ՝ այսինքն Դրախտ կամ այն աշխարհ մտավ»[84]։

«Պատմական Հայաստանի տարածքը ձգվում էր Անդրկովկասի դաշտավայրից մինչև Անատոլիայի բարձրավանդակը, Սև ծովից մինչև Միջագետքի հարթավայրը՝ շրջապատված բարձր լեռնագագաթներով, որոնցից շատերը հանգած հրաբուխներ են։ Այս լեռներից են սկիզբ առնում պատմության ամենահայտնի գետերը՝ իմաստության խորհրդանիշ Եփրատը, բերրիության խորհրդանիշ Տիգրիսը և հավատի խորհրդանիշ Արաքսը, որոնք հոսում են դեպի Միջին Արևելք։ Իսկ այդ բոլոր գագաթներից վեր՝ վեհորեն խոյանում է 5165 մ. բարձրության ունեցող, ողջ հայության սրբության խորհրդանիշ Արարատ լեռը, որի վրա վեց հազար տարի առաջ հանգրվանեց Նոյի տապանը։ Հայոց բերքառատ հողի վրա են շատ հեղինակներ տեղակայում վայելքների այգին՝ եդեմական պարտեզը՝ հիշատակելով Մովսես մարգարեի խոսքը. «Եվ Տեր Աստված արևելքի կողմը՝ Եդեմի մեջ, պարտեզ տնկեց և իր ստեղծած մարդուն դրեց այնտեղ»[85]»[86]։

---

83 Հ. Յ. Աւգեր. Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան, Բազմավեպ, 1912թ., հատոր Հ, թիվ 12 Վենետիկ Սուրբ Ղազար էջ 34, 530:

84 Վահան Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 125-126:

85 Ծննդոց 2:8:

86 Ալերամո Հերմետ, Պաոլա Գոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 24:

Ահա տեսնում ենք, որ այս հատվածները՝ ***«Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմը»***[87]*, և* ***«արևելքից տեղաշարժվելու ժամանակ նրանք Սենաար երկրում մի դաշտ գտան»***[88]***,*** *Հայաստանում Դրախտի գտնվելու անսասան ապացույց են: Եվ այսպես, թե՛ Դրախտը, թե՛ Արարատ լեռը Մովսեսը տեղադրել է իրենից հյուսիս գտնվող տարածքում, որն անվանել է Արևելք:*

«Նայեցեք դեպի հարավ, Արարատ լեռը... Անկասկած, աշխարհում ոչ մի տեղ նրա նմանը չկա... Այս դաշտում կամ նրա մոտիկ մի վայրում գտնվել է Եդեմը, չորս գետերի սկզբնավորության հետ...

Այս վայրը եղել է նաև մարդկության երկրորդ հայրենիքը, որտեղ Նոյն իջավ (Արարատ) սարից, խաղողի այգի գցեց և մարդկությանը սովորեցրեց խաղողի պատճառած ցնծությունը»[89]*:*

Այս հանգամանքից եզրակացվում է, որ Հայաստանը ոչ թե որևէ երկրի հանդեպ ունեցած աշխարհագրական դիրքի պատճառով է «Արևելք» կոչվել, այլ Հայաստանի համար «Արևելքն» ուղղակի տեղի անվանում է եղել. ինչպես այժմ, երբ ասում են «Մագող արևի երկիր», բոլորը հասկանում են, որ խոսքը Ճապոնիայի մասին է: Այդպես են անվանում Ճապոնիային նույնիսկ այն երկրները, որոնք գտնվում են նրանից հյուսիս, հարավ կամ արևելք: Այսպիսով, Սուրբ Գրքում Հայաստանն անվանվում է «Արևելք»՝ որպես տեղանուն, սակայն ինչո՞ւ հատկապես «Արևելք» և ոչ հյուսիս, հարավ կամ արևմուտք:

Տիրոջ ողորմածությանն ապավինելով՝ այժմ աշխատենք մտորել այդ առեղծվածի շուրջ: Նախ ասենք, որ Մեծ Հայքը երկիր մոլորակի վրա յուրահատուկ տեղ է գրավում, քանզի այն գտնվում է երկու կիսագնդերից մեծի՝ արևելյան կիսագնդի կենտրոնում: Իհարկե, տվյալ դեպքում Հայաստան ասելով՝ նկատի ունենք Մեծ Հայքի տարածքը և ոչ այն, ինչ ունենք ներկայումս:

«Ոչ հայկական աղբյուրներից «Բրոկհաուզ-Եֆրոն» հանրագիտարանը գրում է. «Հայաստանը տեղադրված է ար. երկ. 55 և 67 աստիճանի միջև (Ֆերրոյից հաշված) և 37,5-41,75 աստիճան հյուս. լայնության միջև: Նրա երկարությունը արևմուտքից արևելք հավասար է 975-1065 կմ, իսկ լայնությունը՝ 525 կմ. այն զբաղեցնում է 375 հազար քառ. կմ»: Առաջին համաշխարհային պատերազմից հետո, ապա Անդրկովկասում խորհրդային կարգեր հաստատելու ընթացքում «Հայաստան» ընդհանուր անունը կրող երկիրը բզկտվեց, և հային մնաց նրա բնօրրանի մի փոքրիկ բեկորը՝ Հայկական լեռնաշխարհի տարածքի միայն 7-8%-ը՝ 29,8 հազ. քառ. կմ.:

Հնդեվրոպական նախալեզվի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն ու Փոքր Ասիան են, և պատահական չէ, որ այդ նախահայրենիքը աշխարհագրական միջին լայնություններում է»[90]*:*

---

87 Ծննդ. 2:8:

88 Ծննդ. 11:1-2:

89 Ֆրիտյոֆ Նանսեն, նորվեգացի բևեռախույզ: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 405:

90 Գաբրիէլեան Հ. Կ., Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհ, Հանդես ամսօրյա, 1998, էջ 385-386, 406:

«Հին աշխարհի ամենագեղեցիկ և նպաստավոր վայրն է սա... Այն մեր կիսագնդի հողային մակերեսի գրեթե կենտրոնում է գտնվում, կլիման գրավիչ է, ջուրն առատ, արևը՝ տաք»[91]։



«Հայկական լեռնաշխարհում է գտնվում պարսկական, հունական և եվրասիական աշխարհների խաչմերուկը։ Նույնիսկ քարտեզի վրա թռուցիկ հայացք գցելով՝ կարող ենք տեսնել այն կենտրոնական տեղը, որը զբաղեցնում է Հայաստանը։ Այս երկիրը գրեթե հավասար հեռավորության վրա է գտնվում Բարե հուսո հրվանդանից և Բերինգի նեղուցից՝ կես ճանապարհի վրա՝ Խաղաղ և Ատլանտյան օվկիանոսների միջև»[92]։

«Երբ մեծն Ալիշանը Հայաստանն աշխարհի կենտրոն է անվանում, դա վերագրում են նրա չափազանց ազգասիրությանը, մինչդեռ նա այդ ասում է՝ հետևելով Ռեպանին և հնագույններին, և իրենից շատ հետո էլ Փրայսի նման այլ հետախույզներ ևս չեն վարանում հաստատել դա»[93]։

«Եթե մեկը վերին կիսագնդից զննի ցամաքը, կտեսնի, որ Հայաստանը գրեթե կենտրոնում է գտնվում կամ աշխարհի կենտրոնին մերձ, գրեթե նույնքան էլ հեռու է Մեծ օվկիանոսից և աշխարհի չորս կողմերից։ Արդ, որքա՜ն հարմար էր Արարչապետի մտքին, որ ցանկանում էր մարդուն տեր և իշխան նշանակել ամբողջ երկրի վրա՝ բնակեցնելով ցամաքի կենտրոնում, որը աշխարհի մեջտեղն էր, որտեղ Հայաստանն է, որտեղից հնարավոր էր նաև մարդկության հետագա

---

91 Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Բ հատոր, Կ. Պոլիս, 1914, էջ 42:

92 Девид Лэнг… ст. 22.

93 Հ. Յ. Աւգեր… էջ 34:

սերունդը հեշտությամբ տարածել աշխարհի չորս կողմերում: Այս մասին հիշատակում է և Կալմեթը Մննդոցի (2:14) մեկնության մեջ. «Հնում շատերը Հայաստանի լեռները, որոնց միջև տեղադրում ենք երկրավոր Դրախտը, համարեցին մեր ցամաքի կենտրոնը»:

Երկրորդ՝ Հայաստանի դիրքը ընկնում է ամբողջ աշխարհի երևելի ծովերի միջև. մի կողմից Պոնտական ծովն է, մյուս կողմից՝ Կասպից ծովը, մի այլ կողմում՝ Միջերկրական ծովը, և մյուս կողմում՝ հարավային (Հնդկական) օվկիանոսը: Այս ամենի վրա ավելանում են նաև Հայաստանի գետերը, որոնք, նույն ծովերի մեջ թափվելով միանում են նրանց՝ հստակորեն ցույց տալով իրենց բարձր դիրքը, ինչպես վայել էր Դրախտի վայրին[94]. այդ պատճառով այն վայրը, որտեղ մենք ասում ենք, որ Դրախտն է եղել, իր նախկին բնակիչների կողմից կոչվեց Բարձր Հայք, որ «Իր անունով բարձր է բոլոր երկրներից, քանզի չորս կողմերից գետեր է արձակում», - ասում է Խորենացին»[95]:



«Աստված ստեղծեց մարդուն և բնակեցրեց նրան Եդեմական այգում՝ Ասիայի հարավ-արևմուտքում՝ Տիգրիս և Եփրատ գետերի ակունքների մոտ... Այդ պատճառով կարող ենք համարձակորեն ասել, որ մարդը ստեղծվել է երկրի մակերեսի կենտրոնում, քանի որ այս Կովկաս-Եփրատյան շրջանը գտնվում է արևելյան կիսագնդի կենտրոնում՝ երկու կիսագնդերից մեծում: Էթնոլոգները սովորաբար մարդկային ցեղի ելքի և տարածման սկզբնավայր են համարում երկրի այս մասը, որտեղից էլ ելել են և կենդանիները...և պտուղները: Այս վայրը կարելի է համարել մարդկային քաղաքակրթության օրրան: Թեև ոմանք համարում են, որ Հայոց լեռները Եփրատ և Տիգրիս գետերի ակունքների մոտ այնքան բարձր չեն եղել ծովի մակերևույթից, ինչպես որ այսօր է, այնուամենայնիվ, հիմք կա մտածելու, որ այստեղ է գտնվել Եդեմական այգին»[96]:

Այս վկայություններով՝ տեսնում ենք, որ Մեծ Հայքի տարածքը գտնվում է արևելյան կիսագնդի կենտրոնում և, ըստ Սուրբ Գրքի, անվանվում է «Արևելք»: Ուրեմն, ի՞նչն է պատճառ դարձել, որ հյուսիսային երկիր Հայաս-

---

[94] Եվրոպացիները նույնպես համամիտ են սրա հետ, նրանք էլ են այսպես հարմար գտնում. երևելի աշխարհագիր Մալդ Պռիունը աշխարհագրության պատմության երկրորդ գրքի սկզբում ասում է, որ այն առավել միջին վայր է. «...քանզի հնդիկները՝ արևելքից, գոթերը կամ սկանդինավները՝ հյուսիսից, սևերը կամ եթովպացիները՝ արևմուտքից, այս երեք ժողովուրդները հնում բնակվելով այն սահմաններում, որոնք կրում են իրենց անունը, գրեթե հավասարապես հեռացել են Հայաստանից և Միջագետքից»:

[95] Ղուկաս Ինճիճեան… էջ 264-265:

[96] Генри Г. Геллей, Библейский сптавочник Геллея, Канада, 1989, ст. 29, 72.

տանն անվանվել է «Արևելք». մի՞թե միայն ցամաքի վրա կենտրոնական դիրք գրավելը:

Այս հարցին սպառիչ պատասխան տալու համար պետք է անդրադառնանք Աստվածաշունչ մատյանի Ծննդոց գրքին. ***«Ի սկզբանե Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը: Երկիրն անձև ու անկազմ էր»***[97]*:*

Ահա այստեղ տեսնում ենք, որ նախքան բոլոր արարածների ստեղծումը՝ Տերն առաջին իսկ օրն արարեց երկիր մոլորակը, և ապա միայն չորրորդ օրը՝ աստղերը, որոնց մեջ՝ նաև Արեգակը. ***«Աստված ասաց. «Թող լուսատուներ լինեն երկնքի տարածության մեջ, որպեսզի լուսավորեն երկիրը և իրարից բաժանեն ցերեկն ու գիշերը»...Աստված ստեղծեց երկու մեծ լուսատուներ. մեծ լուսատուն՝ ցերեկն իշխելու, իսկ փոքր լուսատուն՝ գիշերն իշխելու համար, ինչպես նաև աստղեր: Աստված դրանք դրեց երկնքի տարածության մեջ՝ երկիրը լուսավորելու համար, ինչպես նաև ցերեկվա ու գիշերվա վրա իշխելու և լույսն ու խավարը իրարից բաժանելու համար: Աստված տեսավ, որ լավ է: Եվ եղավ երեկո, և եղավ առավոտ՝ օր չորրորդ»***[98]*:*



Եթե, ըստ Սուրբ Գրքի, նախ եղել է երկիրը, հետո Արեգակը, ու նաև ըստ մարգարեի՝ ***«Աստղերը ծագել են յուրաքանչյուրն իր տեղում»***[99]***,*** *ուրեմն, Արեգակի ստեղծման պահին երկրի վրա եղել է առաջին արևածագը:*

Որ արեգակը ստեղծվել է իր ծագման վայրում՝ արևելքում, ասում է նաև սբ. Եփրեմ Ասորին. ***«Եթե լուսատուներն այն ժամանակ, երբ ստեղծվել են, մեծ էին և ստեղծվեցին առավոտյան, հետևաբար, արևն այդ ժամանակ կանգնած էր արևելքում, իսկ լուսինը նրան հակառակ՝ արևմուտքում. արևը ցածր էր և մասամբ ընկղմված, որովհետև ստեղծվել է երկրի վրա ծագման վայրում»***[100]*:*

Իսկ որ ըստ Աստվածադիր կարգի՝ արեգակը ունեցել է իր առաջին ծագման վայրը, այդ մասին տեղեկանում ենք նաև Սուրբ Գրքի եբրայերենից թարգմանությունում, երբ Տերը հարցում է անում Հոբին. ***«Արշալույսին իր ծագելու տեղը ցույց տվեցի՞ր»***[101]*:*

---

97 Ծնն. 1:1-2:
98 Ծնն. 1:14, 16-19:
99 Բարուք 3:34:
100 Святой Ефремь Сиринь, Том 6, 1995, ст. 224.
101 Հոբ 38:12:

Այսպիսով, ըստ Երկիր մոլորակի վրա Հայաստանի տարածքի կենտրոնական դիրքի, հենց այստեղ է եղել առաջին արևածագը՝ առաջինը երկրի վրա լուսավորելով այն վայրը, որտեղ պիտի ստեղծվեր եդեմական Դրախտը, և ուր պիտի հանգրվաներ Նոյի տապանը, որտեղ պիտի երևար Բեթղեհեմի Աստղը, որտեղ պիտի լիներ առաջին քրիստոնյա պետությունը, և որտեղից էլ կայծակը վերջին օրը խփելով՝ պիտի երևա մինչև արևմուտք՝[102] այսինքն, կլինի Տիրոջ երկրորդ փառավոր գալուստը:



«Արևելքից մոգերը եկան Քրիստոսի մոտ, քանի որ Դրախտը արևելքում է գտնվում, և արևելքից է ելնում արեգակը, նույնպես և արևելքից պիտի գա արդարության արեգակն՝ Քրիստոս»[103]:

Հետևաբար, Հայաստանի տարածքը բուն Արևելքն է՝ արևի ծագման վայրը, և անվանվում է «Արևելք» որպես տեղանուն և ո՛չ որպես աշխարհագրական դիրք՝ այլ երկրների նկատմամբ:

Սա այն է, ինչի մասին վերն ասվեց, թե նախքան Դրախտի ստեղծումն իսկ՝ ընդգծվել է Հայաստանի տարածքը, ինչն էլ լիովին պարզաբանում է Դրախտի գետերի և Արևելքի մեկտեղման հետ կապված տարակարծությունները և դառնում անհերքելի ապացույց առ այն, որ Եդեմի պարտեզը՝ Դրախտը, գտնվել է Հայաստանում:

*Պատահական չէ այն կարծիքը, որ Հայոց նահապետ Հայկը սերվել է այնտեղից, որտեղից ծագում է արեգակը. **«Հայկը սերվել է այն լեռնային շրջաններից, որտեղ փայլում է արևը՝ ամենուր տարածելով իր շողերը»[104]:***

Այսպիսով, մինչ Ջրհեղեղը՝ Հայկական լեռնաշխարհն անվանվել է Արևելք և Ջրհեղեղից հետո միայն՝ Արարատյան երկիր: Սակայն ինչպես որ Հայաստանը հազարամյակների ընթացքում կոչել են տարբեր անվանումներով՝ Արարատյան երկիր, Հայաստան, Արմենիա և այլն, սակայն չեն դադարել անվանել նաև «Արևելք»: Ըստ Ղուկաս Ինճիճյանի՝ Կիլիկիայի, Փոքր Հայքի և Կոստանդնուպոլսի բնակիչների կողմից Հայաստանի տարածքը շատ հաճախ անվանվել է «Արևելք» և ոչ՝ «Մեծ Հայք»: Որպես ապացույց՝ նա մեջբերումներ է անում սբ. Ներսես Շնորհալու աշխատություններից և այլ ձեռագրերից և հանգում հետևյալ եզրակացությանը.

---

[102] Մտթ. 24:27:

[103] Գիրք Թղթոց, այլ Բան է ասացյալ Վանական վարդապետին, Թիֆլիս 1901, էջ 34:

[104] Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва, 1832г., ст. 57.

«Այսպիսով տեսնում ենք, որ ձեռագրերում տեղ-տեղ «Արևելք» անունը գործածվում է որպես Մեծ Հայքի բնիկ անվանում»[105]:

Փոքր Հայքից արևմուտք ընկած տարածքները՝ մինչ Եվրոպա, անվանվում էր «Անատոլիա», ինչը թարգմանաբար նշանակում է «Արևելք»: Իսկ Մեծ Հայքին՝ ավելի ստույգ՝ Արևմտյան Հայաստանին, որը գտնվում է Փոքր Հայքի արևելյան կողմում, արևմուտքի քաղաքական գործիչները տասնիններորդ դարի վերջին սկսեցին անվանել «Արևելյան Անատոլիա», ինչը թարգմանվում է «Արևելյան Արևելք»: Ճիշտ է, այս անվանափոխությունը զուտ քաղաքական ենթատեքստ ունի և ակնհայտորեն ոչ հայանպաստ, սակայն խորհրդանշական է այն առումով, որ աշխարհի վերջի շրջանում Հայաստանի տարածքը ակամա նորից անվանվեց այն անվամբ, ինչպես որ նրան անվանում էին մինչ Ջրհեղեղ ընկած ժամանակաշրջանում՝ «Արևելք»:



Միջագետքյան երկրների համար հյուսիսում գտնվող Հայաստանը Մովսեսի համար Արևելք էր: Բայց զարմանալի և հիասքանչ է այն, որ հին աշխարհի այդ ժողովուրդները՝ շումերները, բաբելացիները, չեն էլ կասկածել, որ հյուսիսում գտնվող Հայաստանն «Արևածագի» երկիրն է՝ առաջին արևածագի վայրը, և 180 աստիճան դեպի հյուսիս գտնվող երկրին հենց այդպես էլ անվանել են՝ «Արևածագի երկիր»: Եվ ոչ միայն միջագետքյան, այլև հայկական էպոսում Հայաստանի մասին խոսվում է՝ որպես Արևելյան երկիր՝ Բաղդադի՝ այսինքն Բաբելոնի տարածքի նկատմամբ.

«Ըստ հին միջագետքյան պատկերացումների... Հայաստանն արևածագի (արևի ելման՝ արևելքի) ու մայրամուտի երկիրն էր՝ արևի հանգրվանատեղին: Եվ Միջագետքից ու Պաղեստինից հյուսիս տարածվող լեռնաշխարհը համարվել է «արևելք» ոչ թե որպես աշխարհագրական կողմ ցույց տվող, այլ՝ «արևի ելքի երկիր» իմաստով: Հետագայում նախնական իմաստը մոռացվել է, և բառն ընկալվել է աշխարհագրական իմաստով: Այն կարելի է հիմնավորել նաև նրանով, որ Հայկական լեռնաշխարհի՝ արևի հանգրվանատեղը լինելու մասին պատկերացումը պահպանվել է նաև խեթական աղբյուրներում: Վերջիններիս համաձայն՝ արեգակը ծագում էր «Արևելյան ծովից», որը, դատելով փաստերից, Վանա լճի խեթական անվանումն էր: Դա լիովին համահունչ է Գ. Սրվանձտյանցի՝ 19-րդ դարում գրի առած հայկական ավանդազրույցներին, որոնց համաձայն՝ արևի ննջարանը գտնվում էր Վանա լճի հատակին, որտեղից ամեն առավոտ ելնում և ուր ամեն գիշեր վերադառնում էր ցերեկվա լուսատուն:

Հայաստանի՝ արևելքի երկիր (ոչ աշխարհագրական իմաստով) լինելու մասին չափազանց հետաքրքիր տեղեկություն է պահպանել «Սասնա ծռեր» կամ

[105] Դուկաս Ինճիճեան... էջ 15:

«Սասունցի Դավիթ» էպոսը, ինչը մի տեսակ անուշադրության է մատնվել: Էպոսի «Սանասար և Բաղդասար» ճյուղերի առաջին մասում (Կռիվ Բաղդադի խալիֆության դեմ) Մովինարը որդիներին խորհուրդ է տալիս Բաղդադից փախչել Հայաստան՝ հետևյալ խոսքերով.

«Փախեք, գնացեք Հայոց թագավորի քաղաք:
Գիշեր պայծառ աստղ բռնեք նշան.
Ցերեկն էլ հարցուցեք
Արևելից թագավորի էրկիր[106]»:

Հայաստանը մեր էպոսում կոչվում է «Արևելքի թագավորի երկիր»՝ մի բնորոշում, որը կարող էր ծագել ու պահպանված լինել միայն ու միայն հնագույն ժամանակներից[107]:

Ի մի բերելով շումերա-աքքադական, խեթական, հին եբրայական (Աստվածաշնչյան) և հայկական աղբյուրների տվյալները՝ տեսնում ենք, որ Հայաստանը հնագույն ժամանակներում պատկերացվել է իբրև արևի բնակության վայր, հանգստարան, արևի ելքի և մուտքի երկիր»[108]:

Միջագետքի ժողովուրդների կողմից Հայաստանին «Արևելք» անվանելը հատկապես ցայտուն կերպով երևում է Գիլգամեշի ճանապարհորդության մասին էպոսում.

««Լեռան անունը Մաշու է:
Երբ Մաշու լեռը հասավ, ուր ամեն օր պահպանվում է արևի ելքն ու մուտքը,
Նրանց վրա է երկնաթումբը,
Նրանց լանջը հասնում է սանդարամետներից էլ ներքև,
Կարիճ-մարդիկ պահպանում են նրա դուռը,
Նրանց ահագնությունը զարհուրելի է, նրանց տեսքը մահ է,
Նրանց սարսափելի ահարկու փայլը լեռներ է տապալում,
Արևի ելքի ու մուտքի ժամանակ նրանք պահպանում են արեգին»:

Մաշու լեռը, որ կարիճ-մարդը պահպանում է, այս և այն աշխարհների միջև սահմանագլուխ է կազմում, միաժամանակ նաև արևադուռն է, այսինքն Արևելքի՝ Հայաստանի դռան մուտքը, որտեղից էլ ամեն օր արևը ծագում և մայր է մտնում: Այս դռնով է ցանկանում անցնել Գիլգամեշը՝ հասնելու համար իր նախահոր՝ Ուտ-Նապիշտիմի (Նոյի) մոտ:

Ի վերջո, թույլ է տրվում Գիլգամեշին, որ գնա «Մաշու լեռները», «ողջ ու առողջ կարողանա աշխարհների դռներից անցնել»: Կարիճ-մարդու այս թույլտվությամբ Գիլգամեշը բռնում է դեպի արևը տանող ճանապարհը...

---

[106] Սասունցի Դավիթ, 1939, էջ 27:

[107] Ուշագրավ է, որ Լաբուբնա դպրի երկում Թադեոս առաքյալի՝ Եդեսիայից դեպի հյուսիս՝ Հայաստանի խորքերը քարոզելու գնալը ներկայացվում է այսպես. «Եվ նա ելավ գնաց դեպի Արևելք՝ քարոզելու Քրիստոսի Ավետարանը» (Լաբուբնեայ, 1868, էջ 46: Հմմտ. Պետրոսյան. 1990, էջ 7): Բնագրի հին ասորական տարբերակի համաձայն՝ Թադեոսը Եդեսիայից անցել է Ծոփք, որը Եդեսիայից հյուսիս էր գտնվում: Տվյալ բնագրում Հայաստանի հանդես գալն իբրև «Արևելք», թերևս հնագույն շրջանից եկող հիշողության արտահայտություն է:

[108] Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, էջ 13-14:

Որ Մաշուն նույն հայկական Տավրոսն է, վկայում է նաև 10-րդ երգի մեջ հիշատակված մայրիների լեռը, որը 5-րդ երգի մեջ ավելի մանրամասնորեն է նկարագրվում: Սրա մեջ լեռը կոչվում է «աստվածների բնակավայր, Իրնինի տաճար», հետևաբար, այն նույնացվում է Դրախտի հետ»[109]:

*Սբ. Կյուրեղ Երուսաղեմացին իր աշխատություններից մեկում գրում է, որ Արևելքը, որտեղ գտնվում է երկրային Դրախտը, ներկայանում է որպես լույսի վայր. **«Երբ դու հեռացար սատանայից և ոտնակոխ արեցիր նրա հետ ունեցած ամբողջ համաձայնությունը և դրա հետ միասին լուծեցիր դժոխքի հանդեպ ունեցած քո նախկին պայմանադրությունները նրա հետ, այնժամ Աստված բացեց Դրախտը քեզ համար, որ տնկել էր արևելքում, և որտեղից արտաքսվեց մեր նախահայր Ադամը՝ իր ըմբոստության և օրինազանցության պատճառով: Եվ այդ է խորհրդանշում քո շրջվելը արևմուտքից դեպի արևելք, որն էլ լույսի վայրն է»[110]:***

Ակնհայտ է, որ ըստ սբ. Կյուրեղի՝ Հայաստանը «լույսի» վայրն է, իսկ արևի լույսը Հայաստանում շատ առանձնահատուկ է (վկայություններ կան, որ աշխարհում նման արտասովոր լուսավորություն որևէ այլ տեղ չկա, ինչի մասին ասում են ոչ միայն տեղաբնակները, այլև օտարները): Ըստ Մարտիրոս Սարյանի՝ Հայաստանում արևն ուրիշ է՝ այնպիսին չէ, ինչպես նույնիսկ հարավային երկրներում: Այստեղ և՛ գույների փոփոխությունն է կտրուկ, և՛ երանգների հակադրություններն են ուժեղ, և՛ արևն է շոայլ. Վարպետի կարծիքով սրա մեջ է հայկական բնության ոգին:

Իսկ իտալացի լուսանկարիչ Ֆուլվիո Օրսինեգոնը նկատել է, որ լույսը Հայաստանում ունի մի քանի առանձնահատկություններ. մեկը նրա խտությունն է, մյուսը՝ գույնը: Նման խտություն և ուժ, ըստ նրա, կա նաև այլ երկրներում, սակայն Հայաստանում առանձնահատուկ է արևային լույսի գույնը: Նրան մեծ զարմանք է պատճառել այն, որ լույսն այստեղ սառն է, իսկ գետնի գույները՝ տաք: Եվ ամենահետաքրքիրը Օրսինեգոնի համար՝ երկնքի հյուսիսային լույսի և երկրի մակերեսի հարավային գույների ապշեցուցիչ հակադրությունն է:

Ռուս գրող Անդրեյ Բիտովն իր «Հայաստանի դասերը» գրքում նկարագրելով Հայաստանի առանձնահատկությունները՝ մեծ տպավորվածությամբ է խոսում նաև այս յուրահատուկ արևային լույսի մասին.

«Լույսը Հայաստանում գուցե իմ հիմնական տեսողական տպավորությունն էր, իմ գլխավոր ֆիզիկական տվայտանքը: Ասել, թե լույսն այստեղ չափազանց պայծառ է և չափազանց շատ, կնշանակի ոչինչ չասել: Դա հատուկ որակի լույս է, ինչպիսին ես առաջ ոչ մի տեղ չեմ տեսել: Ես վերհիշում էի Ղրիմի լույսը, Միջին Ասիայի ձյունափայլ լեռների լույսը. ահա այնտեղ շատ լույս կար, պայծառ լույս, կուրացուցիչ, նույնիսկ աղմկալից լույս, բայց ես լույսը երբեք և ոչ մի տեղ այնպես ուժեղ չեմ զգացել, ինչպես Հայաստանում: Այնտեղ առաջին անգամ լույսն ինձ համար այնքան շոշափելի դարձավ, որքան ջուրը, խոտը, քամին: Նրանից հնարավոր չէր փրկվել, փախչել, թաքնվել: Ավելին՝ ես նրանից չէի էլ ու-

---

[109] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 112-113, 122-123:
[110] Սուրբ Կյուրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայության, Էջմիածին, 2007, էջ 365:

զում թաքնվել, թեև նա ինձ իսկական տառապանքներ է պատճառել. զարթնում էի, անցնում էր երկու-երեք ժամ, բայց աչքերս շարունակում էին ցավել, արցունքակալվել, և ինչ-որ մի առանձնահատուկ հոգնածություն, աչքերիս միջով անցնելով, պատում էր ամբողջ մարմինս: Նույնիսկ սև ակնոցս առաջին իսկ օրը ես թաքցրեցի ճամպրուկիս հատակում ոչ միայն այն պատճառով, որ չէի ուզում աչքի ընկնել հայերի շրջանում, որոնք այդպիսի ակնոցներ չեն կրում: Ես ուզում էի շարունակ զգալ այդ անհասկանալի քաղցր տառապանքը, ուզում էի, որ այս երկու շաբաթում, մինչև վերջին օրն ու ժամը, այդ ամբողջ լույսը մինչև վերջին շողը անցնի իմ միջով, ողողի ինձ ոտից գլուխ»[111]:

Հայաստանը, լինելով առաջին արևածագի վայրը, դարձավ նաև հոգևոր Արևելք. Աստծո կամոք լուսավորվելով սուրբ Գրիգոր Լուսավորչի քարոզներով՝ աշխարհում առաջին քրիստոնյա երկրի պատիվն ստացավ:

«Մեր հայրենի և պանծալի բնիկ հայկազյան աշխարհը տունն է Արևելքի, որ առաջին մասն և գլուխն է համայն աշխարհի, քանզի այստեղից են սկսում աշխարհի լուսատուներն իրենց շարժումը: Եվ իրավամբ այն համարվում է համայն մարդկության հայր և նախահայր, քանզի այստեղ հանգրվանեց Նոյան տապանը, որտեղից էլ դարձյալ սերվեց մարդկային ցեղը: Այս նույն արևելյան կողմից էլ, ինչպես որ ծագում է Արևի տեսանելի լույսը, լուսավորելով ամբողջ երկիրը, Ավետարանի հոգևոր փառապանծ լույսը ծագեց, ինչը ընդունեցինք մեր մեծ Լուսավորչի՝ Գրիգորի կողմից»[112]:

Հետաքրքիր և շատ խորհրդավոր է, որ առաջին քրիստոնյա պետություն դառնալով՝ Հայաստանը եղավ բուն Արևելքի միակ քրիստոնեական երկիրը, և այդ ժամանակից մինչ օրս՝ մոտ 1700 տարվա ընթացքում, Հայաստանի տարածքից դեպի արևելք գտնվող ոչ մի պետություն չի դարձել քրիստոնեա և գուցե չդառնա՝ մինչև Տիրոջ երկրորդ գալուստը:

Արևելքը մեծ խորհուրդ ունի քրիստոնեության համար: Այդ պատճառով քրիստոնեական եկեղեցիների խորանները գտնվում են արևելյան կողմում: Եկեղեցում որպեսզի հրաժարվեն սատանայից, պտտվում են դեպի արևմուտք: Իսկ Տիրոջը խոստովանելիս՝ դառնում են դեպի արևելք: Եվ ընդհանրապես ընդունված է՝ աղոթքի ժամանակ թե՛ եկեղեցում, թե՛ տանը կանգնել դեպի արևելք:

«Աղոթքի ժամանակ մենք նայում ենք դեպի արևելք, սակայն քչերը գիտեն որ մենք սրանով նաև փնտրում ենք հին հայրենիքը՝ Դրախտը, ինչը «Տերը տնկեց Եդեմում, արևելքում»[113]:

Քրիստոնյայի համր մահվանից հետո էլ արևելքը չի կորցնում իր խորհուրդը, քանի որ ննջեցյալին թաղում են՝ դեմքով դեպի արևելք, և հանգուցյալի հոգին հրեշտակները տանում են արևելքի կողմը: Իհարկե, խոսքն այն մասին չէ, որ աղոթելիս՝ բոլորը դառնան Հայաստանի կողմը, ինչպես որ ժամանակին այլ երկրներում ապրող հրեաները աղոթելիս դառնում էին դեպի Երուսաղեմ. սա-

---

[111] Андрей Битов, Уроки Армении, Советакан грох, Ереван – 1978, ст. 60.

[112] Սամուել Անեցի, «Ներսես Լամբրոնացու վարքը», 1190 ա., ձեռագիր 67, Անթիլիասի կաթողիկոսության գրապահոց. Լիբանան:

[113] Творения Василия Великого, часть III, глава 27, О Святом Духе, Москва 1993, ст. 334.

կայն պետք է ընդունել, որ դա ևս ակնարկ է Հայաստան աշխարհի խորհրդավորության մասին։

Վարդապետները Դրախտի տեղանքի Արևելքը և Աստծո Որդու Երկրորդ գալստյան Արևելքը նույնացնում են. այսինքն, որտեղ եղել է Դրախտը, այդ նույն վայրի երկնակամարից էլ պետք է ծագի Տիրոջ Երկրորդ գալուստը.

«Դառնում ենք դեպի արևելք, քանի որ Դրախտը, որտեղից վտարվեց մարդկային էակը, գտնվում է Արևելքում։ Եվ նորից սպասում ենք, որ մեր Փրկիչը կգա Արևելքից»[114]։

«Շրջվելով դեպի արևելք Քրիստոնյան երկրպագում է Աստծուն, իր հայացքը դարձնելով դեպի արևելք՝ «հնագույն հայրենիքի» կողմը, ինչը նա փնտրում է Դրախտից վտարվելուց ի վեր...

Այդտեղից՝ արևելքից, քրիստոնյան սպասում է նաև իր Տիրոջ Երկրորդ փառավոր Գալուստը»[115]։

Երևանի Մաշտոցի անվան Մատենադարանում և Վենետիկի Սբ. Ղազարի ձեռագրատանը պահպանվել են մի քանի հին ձեռագիր մատյաններ, որոնց մեջ կա բաժին՝ «Բարսեղ Մեծի և Գրիգոր Աստվածաբանի հարցմունքները» խորագրով։ Այնտեղ Հայաստանը կրկին ներկայացվում է որպես Արևելք և Դրախտի գտնվելու տարածք և Տիրոջ երկրորդ փառավոր գալստյան վայր.

«Բարսեղը հարցնում է. «Ինչո՞ւ ես պարծենում Հայաստանով»... Գրիգորն ասում է. «Պարծենում եմ Հայաստանով, քանզի Հայաստանում խաչն ավելի են պաշտում և փառքով ընդունում, քան Հռոմում։ Եվ Հայաստանն Արևելք է, և ադամական Դրախտը Եդեմում՝ արևելքում տնկվեց։ Սուրբ խաչը ճառագայթելով պիտի փայլատակի Արևելքից։ Եվ արևը, լուսինը և աստղերը արևելքից են սկսում իրենց երթը, և հրեշտակներն էլ բոլոր մարդկանց հոգիները տանում են արևելք։ Այս պատճառով էլ ես իրավունք ունեմ պարծենալու»»[116]։

Եվ եթե Հայկական լեռնաշխարհը, բուն Աստվածաշնչյան Արևելքն է, ապա այս տարածքը երկրային շնչավոր ողջ գոյաձևերի սկզբնավայրն է։ Եվ քանզի նաև Տիրոջ երկրորդ գալուստն է լինելու նույն խորհրդակիր Արևելքից, ուրեմն, ոչ միայն երկրային ամեն նախասկզբի այլև վախճանի հանգուցակետը Հայաստանն է։

«Արևելք են անվանում Հայաստանը։ Այս կողմում է գտնվում Աստվածատունկ Դրախտը։ Այս կողմից են շարժվում լուսավորները՝ սկսելով իրենց ընթացքը, որոնք Մեծ Լույսի ծագման կարապետներն են։ Քանզի Արդարության Արեգակ Քրիստոս հայրական փառքով և աստվածագումար դասով, կարապետված Աստվածային Նշանով՝ այս տեղից է գալու ըստ Տիրոջ. «Ինչպես փայլակը, որ ելնում է արևելքից, այդպես կլինի և Մարդու Որդու գալուստը»[117]։ Որին փառք և զորություն Իր Հոր և Սուրբ Հոգու հետ։ Ամեն»[118]։

---

[114] Սբ. Գրիգոր Տաթևացի, գիրք Ճմեռան, Կոստանդնուպոլիս 1740 թ., էջ 243:

[115] Иеромонах Габриэль Бунге, Скудельные сосуды, Рига 1999 г., ст. 57-58.

[116] Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 487 ձեռագիր. Հարցմունք Գրիգոր Աստվածաբանի և սրբոյն Բարսղի, քանզի Գրիգոր զՀայք հաստատէր և Բարսեղ զՀռոմ, էջ 94 ա:

[117] Մտթ. 24:27:

[118] Սբ. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, «Վասն Հայոցս Առանձին», Երուսաղեմ 1993 թ., էջ 555:



Այսպիսով, եկանք եզրահանգման, որ Հայաստանը համարվել է Արևի ծագման վայր, իսկ արեգակը դիտվում է որպես նույն վայրից Արդարության Արեգակի ծագման նախակարապետ. այսինքն, Հայաստան աշխարհի երկնակամարը դիտվում է որպես մեր Տեր Հիսուս Քրիստոսի երկրորդ՝ հրաշափառ գալստյան սկզբնավայր:

Նաև Սուրբ Կույսին մենք մեծարում ենք՝ անվանելով Իմանալի Արևելք, ումից ծագեց Արդարության Արեգակ Հիսուս Քրիստոս:

«Դու՝ Արդարության Արեգակի ճշմարիտ Արևելք, ումից ծագեց փրկությունը տիեզերքի. միաբանական ձայնով երգելով մեծարում ենք Քեզ»[119], *- ասում է շարականը:*

Ուստի, Հայոց երկինքն ինքնին նաև Սուրբ Կույս Աստվածածնի խորհրդանիշն է:

«Արմավենիների օրը, որ օրհնյալ օր անվանեցին Եկեղեցու իմաստունները, օրինակն է վերջին օրվա՝ Քրիստոսի գալստյան. երբ Հոր փառքով և համայն հրեշտակների դասերով կիջնի երկիր՝ կույս Արևելքից»[120]:



Ամփոփենք. երեք հիմնական փաստարկներ կան, ըստ որոնց՝ Հայաստանը, գտնվելով Սինայի անապատից և Միջագետքից հյուսիս, անվանվում է «Արևելք»: Նախ, ըստ Սուրբ Գրքի, Դրախտը արևելքի կողմում ստեղծվեց, որտեղ են եդեմաբուխ գետերը, որոնց ակունքները գտնվում են Հայաստանում. երկրորդ՝ արևելքից՝ Արարատ լեռան կողմից իջան Սենաար. և երրորդ՝ միջագետքյան երկրներն իրենցից հյուսիս գտնվող Հայաստանն անվանում են «Արևելք»:

Կարծում ենք՝ այս երեք առեղծվածային փաստարկներին սպառիչ պարզաբանումներ տրվեցին:

Այս բաժնի ավարտին մեկ անգամ ևս անդրադառնանք Միջագետքի խնդրին:

---

[119] Շարական, Անթիլիաս – Լիբանան. 1980, էջ 243:

[120] Սբ. Գրիգոր Տաթևացի, գիրք Ձմեռան, Կոստանդնուպոլիս 1740 թ., էջ 473:

Դրախտի տեղանքը՝
ըստ շումերական ընկալումների

«Եդեմական Դրախտի մասին ընդհանրական կարծիք է,
թե Աստված այն Հայոց աշխարհում տեղադրեց»[121]:

Դրախտի մասին մեզ տեղեկացնող հիմնական աղբյուրը Սուրբ Գիրքն է: Սակայն մեկ անգամ ևս անդրադառնանք Միջագետքի տեղեկատվությանը: Միջագետքյան աղբյուրները՝ բաբելաշումերական արձանագրությունները, նույնպես տեղեկություններ են պարունակում Դրախտի տեղանքի մասին: Դրանք հիմնված են բանավոր զրույցների, ավանդությունների վրա, որոնք հետագայում գրի են առնվել: Իսկ ինչո՞ւ հետագայում. որովհետև լեզուների խառնակումից հետո տարբեր ցեղերը, բնականաբար, պետք է ըստ իրենց նոր լեզուների գրեր ստեղծեին:

Իսկ այդ ամենը տեղի է ունեցել Դրախտից վտարվելուց մոտ երկու հազար տարի հետո, ինչն էլ պատճառ է դարձել, որ Դրախտի մասին ավանդազրույցները որոշ աղավաղումների ենթարկվեն: Իսկ ինչ վերաբերում է Սուրբ Գրքին, այն կապ չունի միջագետքյան և ընդհանրապես որևէ ավանդազրույցի ու արձանագրության հետ, քանզի դա զուտ Աստվածային հայտնություն է, որը շնորհվել է Մովսես մարգարեին, ինչը քրիստոնյաների համար անսասան ճշմարտություն է: Իհարկե, չի նշանակում, որ դա մեկնության կարիք չունի, որը նույնպես առանց Տիրոջ կամքի չէ, որպեսզի, ըստ Տերունական խոսքի, խնդրողը ստանա, փնտրողը գտնի, և դուռը թակողի առջև բացվի[122]:

*Երբ սկսվեցին բաբելաշումերական պեղումները, ի հայտ եկան արձանագրություններ, որոնք ևս վկայում էին Դրախտի գտնվելու վայրի մասին. **«Եդեմական պարտեզի գլխավոր տեղը գտնվում է Ուր քաղաքից 15 կիլոմետր հեռավորության վրա գտնվող «էրիդու» վայրում... Հին բաբելական արձանագրությունն ասում է՝ «էրիդուի մոտ եղել է պարտեզ, որտեղ գտնվում էր խորհրդավոր սուրբ ծառ՝ կյանքի ծառը... այն պահպանվում էր հսկող հոգիների կողմից, որպեսզի մարդկանցից ոչ ոք չկարողանա մտնել պարտեզ»»[123]:***

Այդ արձանագրություններն իրականում ոչ թե նշված վայրում Դրախտի գտնվելու մասին են վկայում, այլ արդյունք են Դրախտի մասին հիշողությունների: Ի դեպ, Նոյի և տապանի մասին հինավուրց լեգենդներ են պահպանվել երկրագնդի տարբեր մասերում գտնվող ժողովուրդների մոտ: Նույն պատմությունը լինելով՝ այն տեղայնացվել է և տարբեր ազգերի կողմից նկարագրվել յուրովի: Սակայն դա չի նշանակում, որ տապանը պետք է փնտրել նաև այդ երկրներում: Այդպես և շումերաաքքադական արձանագրություններում Դրախտի մասին պատմությունը տեղայնացվելով՝ «տեղադրվել է» էրիդուի մեջ:

---

[121] Միքայել Չամչյան, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985, էջ 143:
[122] Տե՛ս Մատթեոս 7:7:
[123] Генри Г. Геллей, Библейский сптавочник Геллея, Канада, 1989, ст. 29, 72:

Այդ արձանագրություններում պահպանվել է մի այլ վկայություն, որի մեջ Դրախտը գտնվում է «Թիլմուն» կոչված վայրում: Սակայն ըստ հետազոտողների՝ շումերական աղբյուրներում խոսվում է երկու՝ իրարից տարբեր Թիլմունների մասին, որոնցից մեկը համարվում է Դրախտի գտնվելու վայր, իսկ մյուս Թիլմունը ներկայանում է որպես առևտրի կենտրոն: Ստացվում է, որ այս անվանակից տեղանքները բնույթով միանգամայն տարբեր են միմյանցից: Որոշ գիտնականներ փորձել են այս երկու՝ հոգևոր և աշխարհիկ նույնանուն վայրերը տեսնել միևնույն տեղանքում: Ոմանք դա համարում են անհամատեղելի:

Պեղումները պարզել են, որ Թիլմունը գտնվում է Պարսից ծոցի Բահրեյնյան կղզիներում: Սակայն Թիլմունը Դրա՞խտն է, առևտրի կենտրո՞ն է, թե՞ երկուսը միասին...

«Ստացվում է տարօրինակ մի իրավիճակ. մի կողմից Թիլմունը դրախտավայր է՝ անեղծ ու սրբազան երկիր, որտեղ բնակվում են աստվածները, մյուս կողմից (ոչ դիցաբանական բնույթի բնագրերում) այն ծովային առևտրի կենտրոն է, և արքաներն անգամ նվաճում են այն և դարձնում հարկատու: Ի՞նչ ատեղծված է սա, և ո՞րն է դրա լուծումը»[124]:

Լուծումը շատ հետաքրքիր է. շումերական Դրախտը գտնելու ճանապարհին գիտնականները նորից իրենց հայացքն ուղղում են դեպի Հայկական լեռնաշխարհի՝ Շումերից հյուսիս գտնվող «Արևելք» երկրի կողմը.

«Ջրհեղեղի մասին 1914 թ. հայտնաբերված հնագույն շումերական բնագրի համաձայն՝ աղետից փրկված հերոս Ջիուսուդրան («շումերական Նոյը») աստվածների կամքով բնակեցվում է Թիլմունում, «որտեղից ծագում է արևը»[125]: Այս արտահայտությունը պատճառ է դարձել, որ որոշ ուսումնասիրողներ Թիլմունը տեղադրեն Շումերից արևելք և հասցնեն մինչև Հնդկաստան: Դա իրավացի լինել չի կարող, քանի որ, ինչպես տեսանք «Արևի երկիրը» բաժնում, շումերա-աքքադական պատկերացումների համաձայն՝ արևը ծագում էր Մաշու (Մասիուս, Մասիոն) լեռներից և մայրամուտին վերադառնում այնտեղ: «Գիլգամեշ» էպոսում ևս Ջրհեղեղից փրկված հերոսը բնակվում է Մաշու լեռներից հյուսիս: Այսինքն, ըստ հնագույն միջագետքյան հավատալիքների, Թիլմուն-դրախտը նույն անմահության երկիրն է, որտեղ հասնելու համար պետք էր հաղթահարել «ճանապարհը դեպի Արատտա», իսկ վերջինս Հայաստանի տարածքում հիշատակված առաջին պետությունն է: Եթե ավելացնենք, որ Արատտան շումերական դյուցազնավեպում հայտնի է «աստվածային սուրբ օրենքների երկիր» մակդիրով և համադրելի է Աստվածաշնչի Արարատի հետ (որն, ինչպես և Եդեմը, գտնվում էր «արևելքի կողմում»), հասկանալի կդառնա, որ շումերների անմահության երկիր-դրախտը նույն Արատտան է կամ երկուսն էլ գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Ստանում ենք երկու Թիլմուն՝ հին Առաջավոր Ասիայում. դիցաբանական Թիլմունը՝ Հայկական լեռնաշխարհում, և պատմական (ոչ դիցաբանական) Թիլ-

---

[124] Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, էջ 24-26:

[125] The Deluge (tr. S. N. Kramer), ANET, p. 44; Kpamer, 1965, c. 180, ETCSl, 1.7.4.

մունը՝ Բահրեյնյան կղզիներում (Ք. ա. 5-6-րդ դդ.)։ Երկու նույնանուն երկրների մասին տեղեկությունները միահյուսվել են միջագետքյան բնագրերում, ինչն էլ դարձել է հին արևելագիտության ամենից առեղծվածային խնդիրներից մեկի ծագման պատճառը։ Իսկ կապ ունե՞ն նույնանուն այդ երկրները։ Եթե անուններ-ի համընկնումը պատահական չէ, կարելի է ենթադրել Հայկական լեռնաշխարհից բնակչության մի մասի արտագաղթը Բահրեյնյան կղզիներ, ինչի արդյունքում տեղի է ունեցել նաև տեղանվան փոխադրում»[126]։

Թիլմունի՝ շումերական դրախտի տեղանքի առեղծվածը բացահայտելու համար պատմաբան Արտակ Մովսիսյանը կողմնորոշվել է նրանով, որ Հայաստանը շումերների համար եղել է Արևածագի երկիր։

Իսկ հնագետ Դեվիդ Ռոլը նույն տրամաբանությամբ, հիմնվելով Գիլգամեշի ճանապարհորդության վրա, եկել է այն համոզման, որ շումերական դրախտավայր Թիլմունը գտնվել է Հայաստանում, սակայն նրա համար կողմնորոշիչ են ոչ թե Հայաստանի Արևածագի երկիր լինելը, այլ Հայաստանից բխող եդեմական գետերը.

«Հիմնվելով Դրախտի մասին շումերական առասպելի սեփական թարգմանության վրա՝ կրամերը նկարագրում էր Թիլմունը՝ որպես «մաքուր, լուսավոր և փայլող» երկիր։ Դա ողջերի երկիր էր, որի բնակիչները չգիտեին, թե ինչ բան են հիվանդությունները, մահը, բայց դրա փոխարեն այնտեղ չէր բավականացնում քաղցրահամ ջուրը՝ կյանքը պահելու ամենաանհրաժեշտ նախապայմաններից մեկը։ «Եվ այդ ժամանակ շումերական ջրային տարերքի մեծագույն աստվածը՝ Էնկին, պատվիրեց Ութուին՝ արևի աստծուն, այս երկիրը լցնել քաղցրահամ ջրով՝ բխեցնելով երկրի ընդերքից։ Եվ Թիլմունը վերածվեց աստվածային այգու՝ բուսականությամբ, առատ պտուղներով, մարգագետիններով և դաշտերով»։ Հին շումերական գրականության այս երկնային Դրախտը, անկասկած, այն նույն այգին է, որտեղ մի ժամանակ, մինչ իր անհնազանդությունը, ապրել է Ադամը. այսինքն՝ երանության, հանգստության և ամենակարևորը՝ անվտանգության վայրը։

Այսպիսով, ողջերի երկիր տանող ճանապարհը միաժամանակ Արատտա, նաև Եդեմ տանող ճանապարհն էր։ «Գիլգամեշ» էպոսի էջերում թաքնված է նաև ողջերի երկրի գտնվելու վայրի վերջին գաղտնիքը բացահայտելու բանալին. այնտեղ ասվում է, որ Ուտնապիշտիմի (բաբելական Նոյի) բնակարանն ընկած է «հեռավոր երկրամասում՝ գետաբերանի մոտ»։ Էպոսում հիշատակված գետերը, իհարկե, Տիգրիսն ու Եփրատն են։ Միջագետքյան տեքստերում հստակորեն պարզ է դառնում, որ «գետաբերան» ասելով՝ պետք է հասկանալ ակնաղբյուր։

Ինչպես արդեն գիտենք, Տիգրիսի և Եփրատի ակունքները Հայաստանի լեռներում են՝ այսինքն այնտեղ, որտեղ, ըստ Մննդոց գրքի, գտնվել է Եդեմական այգին...

Այլ խոսքով՝ շատ հնում գոյություն են ունեցել երկու Թիլմուն. առաջին Թիլմունը տեղադրված է եղել Եդեմում, իսկ վերջին շրջանի Թիլմունը՝ մեռյալների

---

[126] Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, էջ 24-26:

սրբազան կղզին, Ներքին ծովի շրջանում ընկած ծովային աշխույժ առևտրական ճանապարհի խաչմերուկում»[127]*։*

Իհարկե, կարելի էր միայն Աստվածաշունչ մատյանի վրա հենվելո՛վ ասել, որ Դրախտը գտնվել է հենց բուն Հայաստանի տարածքում։ Սակայն երբ հնագիտությունն էլ իր խոսքն է ասում, հաստատելով սուրբգրային տեղեկությունները, ապա այն առավել համոզիչ է դառնում լայն զանգվածների համար, ովքեր, ցավոք, դեռ հեռու են Եկեղեցու ավանդություններից և վստահությամբ չեն նայում Սուրբ Գրքին և սուրբգրային ճշմարտություններին։

Եդեմական Դրախտի՝ Հայոց հողի վրա գտնվելու մասին կան հեղինակավոր այլ անձանց վկայություններ ևս, որոնցից են ամերիկացի միսիոներ Պակմելին (IX դ.), գերմանացի գրող, Նոբելյան մրցանակի դափնեկիր Թոմաս Մանը և ուրիշներ.

«Բայց որտե՞ղ է գտնվում դրախտը։ Արևելքի պարտեզը՝ հանգստի, անդորրի, երջանկության հանգրվանը...

Դրախտը գտնվում է Միջագետքի հարթավայրից հյուսիս ընկած լեռնային Հայաստանում։ Ահա այս նկատառումով առաջնության դափնին պետք է տալ Հայաստանին»[128]*։*

Ըստ Ղուկաս Ինճիճյանի՝ Եվրոպայի երևելի մասնագետներ Սանսոնը, Ռելանտը, Կալմետը, եբրայական լեզվի ուսուցիչ Բասինին, կոմս Մաալոդդին, Ղուկասը, Առդիյնին և Լուպին՝ Դաղղիո թագավորի աշխարհագիրը, Պեռդինը և Նիկոլայ մեկնիչը թեպետև որոշ վերապահումներով, սակայն նույնպես Հայաստանում են տեսնում Դրախտը։ Իսկ Ղևոնդ Ալիշանն իր «Հայաստան յառաջ, քան զլինելն Հայաստան» աշխատությունում նշում է, որ Դրախտի՝ Հայաստանում լինելու փաստի կողմնակից են նաև շատ այլ հեղինակություններ՝ Պոշանը, Պորտանը, Ռոմմելը, Ռոպեն Միլերը, Պիանգոն, Դուռնըֆորը, Պերթոյը, Ռավմէրը, Հանրիոնը, Մոնիեն և այլք։ Այդ մասին են վկայում նաև Դուռինի և Վենետիկի հին աշխարհացույցները (1436), Bible de Vence*։*

Այս մեկնիչներն ու հետազոտողները ժամանակին հանրահայտ են եղել, քանզի նրանց աշխատություններին քաջատեղյակ են եղել այնպիսի մեծահամբավ գիտնականներ, ինչպիսիք են Ղևոնդ Ալիշանն ու Ղուկաս Ինճիճյանը։

Հայաստանում Դրախտի գտնվելու փաստն ավելի շատ ուսումնասիրողներ կհաստատեին, եթե խոչընդոտներ չլինեին։

Հայաստանը հատկապես վերջին դարերում եղել է բարբարոս ցեղերի ասպատակության վայր, ժամանակ առ ժամանակ ընկել նրանց տիրապետության տակ, եղել շահերի բախման կիզակետ, այդ իսկ պատճառով հնագետների համար արգելված վայր է դարձել՝ վտանգավոր գոտի։ Այդ պատճառով Հայաստանն անարդարացիորեն քիչ է ուսումնասիրված.

«Արևելքը՝ մարդկային ցեղի օրրանը, նաև խիստ հետաքրքրաշարժ հնությունների գանձարան է։ Ցավոք, Հայաստանի կարևորագույն վայրերը, հավա-

---

[127] Дэвид Рол, Генезис цивилизации откуда мы произошли., Москва, 2005, 271-272, 274.

[128] Թոմաս Ման, գերմանացի գրող: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Խոյանը. Երևան 2014, էջ 405:

նաբար, դեռևս երկար ժամանակ հասու չեն լինի հնագետների և այլ գիտնականների ուսումնասիրմանը։ Եփրատի և Տիգրիսի հարթավայրը և դրանց միջև ընկած տարածքը, իսկապես, երկրային դրախտ է՝ բարենպաստ օդով և հարուստ բնապատկերով»[129]։

«Անգլիացի մատենագիրներն ընդհանուր պատմության մեջ (հատոր ա, գլ. ա, հդվ. 1) գրում են. «ովքեր ցանկանում են ըստ օրենքի հասնել Դրախտի վայրին, հարկ է իմանալ աշխարհագետների և ճանապարհորդների նոր և ճշգրիտ տեղեկությունները։ Եվ քանի որ Եվրոպայի ճանապարհորդներից ոչ ոք չշրջեց Հայաստանով՝ զննելու Դրախտի տեղը, և ոչ էլ Հայոց աշխարհի այլ կողմերով շրջեցին, որտեղ գտնվում են չորս գետերի ակունքները, ապա նրանց համար անծանոթ մնաց Դրախտի վայրը, և մեզ մնաց լուսաբանել այս վայրը՝ հիմնավորելով աշխարհագրական տեղեկություններով»[130]։

Եվ այսպես՝ բազում փաստերով հաստատվում է, որ Դրախտի տեղանքը Հայաստան «Արևելքն» է, որտեղից սկիզբ են առնում եղեմաբուխ չորս գետերը։

[129] Шопен, Исторический памятникъ... ст. 222.
[130] Ղուկաս Ինճիճեան... էջ 265:


Ինչպես ասվեց, բազմաթիվ են եվրոպացի այն գիտնականները, որոնք աներկբայորեն համարել են, որ Դրախտն ու Արարատը գտնվում են Մեծ Հայքի տարածքում, ինչը հստակ երևում է իրենց պատրաստած քարտեզներում:





1. «Այս քարտեզում Դրախտը և Արարատ լեռը Նոյան տապանով՝ նույնպես գտնվում են Հայաստանում»[131]:

[131] Աշխարհի փոքր քարտեզագիրք, քարտեզ 3, «Le monde sacre» տպագրվել է Փարիզում 1821 թ.:





2. «Մոքսոնի եդեմական այգու Դրախտը՝ նահապետների կողմից բնակեցված շրջակա երկրներով Տպագրված է 1690 թ.»[132]։


[132] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/





3. «Ֆիլիպ Բուաշի քարտեզում, տպագրված 1783 թ, Դրախտը և Արարատ լեռը գտնվում են հայաստանում, Ս. Պողոսյանի հավաքածու, Փարիզ»[133]:

[133] Ռուբեն Գալչեան, Հայաստանը՝ համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, Պատկեր 103, էջ 218:





4. «Յորկշիրի եպիսկոպոս Մարմադյուկ Կրավերի քարտեզում Դրախտի միակ գետը իր սկիզբն առնում է Մեծ Հայքի տարածքից, սնում է իր ջրերով Եդեմական այգին, իսկ հետո բաժանվում է չորս մասերի»[134]:

[134] Рубен Атоян, Земля Эдема, Журнал “Анив”, ном. 2 (29), Минск, 2010.





5. «Ֆրանսիացի քարտեզագիր Ռոբեր Վուգոդին (1688-1768), ստեղծեց իր «Միջնադարյան աշխարհի քարտեզը» ... որտեղ Երկրային Դրախտը գտնվում է Հայաստանի կենտրոնում: Անձնական հավաքածու, Լոնդոն, Ref. RG *13.»*[135]*:*

[135] Ռուբեն Գալչեան, Հայաստանը՝ համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, Պատկեր 98, էջ 212:





6. «Քարտեզ՝ տպագրված Դեզաուշի կողմից և փորագրված՝ Մարի Ֆ. Դուվալի կողմից»[136]։

[136] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/





7. «Քարտեզ՝ Աբրահամ Արտելիուսի «Աշխարհի թատրոնը» ատլասից, որտեղ Եդեմը նշված է Հայաստանում: Անտվերպ, 1601 թ.»[137]:

[137] Рубен Атоян, Земля Эдема, Журнал “Анив”, ном. 2 (29), Минск, 2010.





8. «Երկրային Դրախտը՝ ըստ Լուի Բրիոն դե լա Տուրի /1780/, «Histoire Universelle depuis le Commencement du Monde»-*ից*»[138]*:*

[138] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/



9. «1675 թվականին Եվրոպայում պատրաստված քարտեզ, որտեղ Եդեմը տեղադրված է Հայաստանում»[139]։

[139] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/



10. «Նմանատիպ մի այլ եվրոպական քարտեզ, որտեղ Դրախտը գտնվում է Հայաստանում»[140]։

[140] «carte-du-paradis-terrestre-suivant-le-systeme-de-l-auteur-et-execute-par-p-starck-man» http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/

Եդեմ

«Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան՝
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան.
Եդեմական դրախտավայր
Նա կոչվում է Մայր Հայաստան»[141]:

«Եդեմաբուխ չորս գետեր» և «Աստվածաշնչյան Արևելք» գլուխներում բերված փաստերը հավաստեցին, որ Եդեմի գտնվելու վայրը Հայաստան աշխարհն է: Սակայն դա չի նշանակում, որ այդ հրաշափառ այգին սփռված է եղել ամբողջ Հայաստանով մեկ: Ինչպես գետերի ու Արևելքի հարցերի շուրջ կային տարբեր կարծիքներ, այդպես էլ Հայաստանի տարածքում Դրախտի բուն տեղանքի շուրջ վեճեր կան: Դրանք հիմնականում երեքն են: Ոմանք համարում են, որ Դրախտը գտնվել է Վանա լճի մոտ, ուրիշներն այն տեղադրում են ավելի հարավ՝ Ուրմիա լճի մոտ: Սակայն մեծամասնությունն այն կարծիքին է, որ Դրախտը գտնվել է չորս գետերի՝ Ճորոխի, Արաքսի, Եփրատի և Տիգրիսի ակունքների մոտ:

Մինչ այդ տեսակետների քննարկմանն անցնելը՝ հարկ է անդրադառնալ Դրախտի տեղանքի վերջին նշանի՝ Եդեմի հետ կապված պարզաբանումներին:

«Դրախտի նկարագրության մեջ երեք նշաններ կան, որոնք ցույց են տալիս նրա գտնվելու վայրը. նախ՝ տեղանունը Եդեմ է, երկրորդ՝ Արևելյան դիրքը, և երրորդ՝ գետերը: Հայտնի է, որ «Եդեմ» անվամբ վայր կամ վայրեր հիշատակվում են Սուրբ Գրքում, սակայն շատ անորոշ կերպով, իսկ «Եդեմ» անվամբ քաղաք կա միայն Լիբանանում, ինչը տարբեր թարգմանություններում գրվում է տարբեր կերպ՝ Եդոմ, Եմաթ և այլն»[142]:

«Ոմանք էլ... համարեցին, որ Դրախտը գտնվել է Կիլիկիայի Ադանա քաղաքի մերձակայքում, քանի որ մոտ էր «Ադին» կամ «Եդեմ» անվանը, ոմանք էլ՝ Արաբական Մեսոպոտամիայի մոտ»[143]:

*Սակայն, ինչպես ասում է Ալիշանը, հարկ է Եդեմին վերաբերվել ոչ թե որպես ուղղակի տեղանվան, այլ խորամուխ լինել բառի նշանակության մեջ. **«Ամենակարևորն այն է, որ «Եդեմ» անունը օգտագործվում է ոչ այնքան որպես տեղանուն, որքան այդ բառի բուն իմաստով: Եդեմ նշանակում է բարձրություն, և նույնիսկ պարտեզ բառը, որը օտարազգիները՝ հրեաները, հույները, լատիններն են կոչում Պարադիզ (Դրախտ), սանսկրիտ լեզվով նշանակում է «բարձր տեղ»: Այսպիսով, պարզ է դառնում, որ Դրախտը չէր կարող այնպիսի ցածրադիր վայրում գտնվել, ինչպես Ասորիքը: Այն պետք է լիներ Հայաստանի նման բարձրադիր երկրում»[144]:***

---

[141] Աշուղ Միջազի, Երգարան 1966թ. էջ 370:

[142] Ղեւոնդ Ալիշան Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան էջ 4:


[143] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեացց Աշխարհի, սր. Ղազար, Վենետիկ 1835, էջ 245:

[144] Ղեւոնդ Ալիշան... էջ 4:

Այն, որ Եդեմը եղել է բարձրադիր շրջանում, նշում է նաև Եփրեմ Ասորին. ***«Դրախտը գտնվել է մեծ բարձրության վրա»***[145]*:*

Տեսնում ենք, որ «Եդեմ» նշանակում է բարձրադիր վայր, ինչին համապատասխան է չորս գետերի ակունքների տարածքը: Հետևաբար, հարկ է Եդեմը վերոհիշյալ գետերի ակունքների մոտ փնտրել:

Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեանը գրում է. ***«Հայաստանը բարձր է բոլոր երկրներից, և նրա չորս կողմերից հոսում են Դրախտի գետերը»*** [146]*:*



Մի այլ տեղ ասվում է. ***«Մատենագիրներից ոմանք համարում են, որ Եդեմը բարձր և կենտրոնական վայրում է գտնվում, որտեղից տարբեր գետեր բխելով՝ հոսում են ամեն կողմ... Այդպիսի բարձր գավառներ կան Հայաստանում՝ Մասիսից արևմուտք: Այդտեղ շրջանագծից, որի տրամագիծը մի քանի մղոն է, բխում են չորս գետեր՝ Եփրատը և Տիգրիսը, որ հոսում են դեպի հարավ և լցվում Պարսից ծոց, Երասխը, որ հոսում է դեպի հյուսիս-արևելք՝ լցվելով Կասպից ծով, և Փասիսը, որն էլ հոսում է դեպի հյուսիս – արևմուտք՝ մինչ Սև ծով:***

Այս չորրորդ գետը հավանաբար Եդեմի Փիսոնն է, իսկ Երասխը թերևս Գեհոնն է, քանզի այս երկու անվանումներն էլ միևնույն նշանակությունն ունեն, որ ցույց են տալիս գետի արագահոսությունը: Այս բարձր երկիրը տակավին գեղեցիկ և բարեբեր է, ինչը թերևս Եդեմի երկիրը կարող է լինել, իսկ նրա ընտիր մասում՝ դեպի արևելք, հավանաբար գտնվել է երանավետ Դրախտը»[147]*:*

«Հայաստանի դիրքը ընկած է համայն աշխարհին հայտնի ծովերի միջև. մի կողմից Պոնտոսի ծովն է, մյուս կողմից՝ Կասպից ծովը, մի ուրիշ կողմից՝ Միջերկրական ծովը, իսկ մյուսից էլ՝ Հարավային (Հնդկական) օվկիանոսը: Այս ամենին ավելանում են նաև Հայաստանի գետերը, որ այդ նույն ծովերի մեջ լցվելով՝ միանում են նրանց հետ՝ հստակորեն ցույց տալով իրենց բարձ դիրքը, ինչը որ վայել է Դրախտի տեղանքին: Այս պատճառով էլ այդ վայրը, որտեղ մենք համարում ենք՝ եղել է Դրախտը, նախկին բնակիչների կողմից անվանվել է «Բարձր Հայք», որը, ըստ Խորենացու, «իր անվան համեմատ՝ բարձր է բոլոր երկրներից, քանզի իր չորս կողմերով գետեր է հոսեցնում»»[148]*:*

«Բարձր Հայքն «Աշխարհացույցում» բնութագրվում է հետևյալ կերպ. «Այս

---

[145] Пр. Ефремь Сиринь, Творение, Томь 6, Издательство, Отчи дом, 1995, ст. 231.

[146] Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեան, Մեկնություն Ծննդոց, հրտ. Էջմիածն, ս. Էջմիածն 2010, էջ 159:

[147] Բառարան Սուրբ Գրոց, տպա. Ա. Յակոբ Պոյաճեան, Կոստանդնուպոլիս 1881, էջ 151:

[148] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 265:

երկրամասը, իրապես, ինչպես ցույց է տալիս իր իսկ անունը, բարձր է ոչ միայն Մեծ Հայքի մնացած մասերից, այլև ողջ աշխարհից, այդ պատճառով էլ այն կոչել են «Աշխարհի գագաթ»: Նա գետեր է արձակում աշխարհի չորս կողմերը. Բարձր Հայքից սկիզբ են առնում չորս խոշոր գետեր»... Հին հայոց աշխարհընկալումներում Բարձր Հայքը համարվել է «Աշխարհի գագաթ», իսկ նրա մեծ լեռը՝ «Աստվածների տեղ»: Ուշագրավ է, որ «Աշխարհացույցը» «Աշխարհի գագաթ» անունով է հիշում Բարձր Հայքի հարևանությամբ տարածվող Բյուրակնի լեռների (որտեղ, մինչև մեր ժամանակները պահպանված հայկական ավանդազրույցների համաձայն, գտնվել է երկրային Դրախտը) ամենաբարձր գագաթը՝ Սերմանց (Սրմանց) լեռը: Այն կարող է համապատասխանել հնդարիական ավանդազրույցների սերմնաժայթքող կենսածին լեռանը»[149]:

Հարկ է նաև հաշվի առնել տեղանքի բնական պայմանները, որոնք գոնե ինչ-որ չափով պետք է հիշեցնեն Դրախտի բնությունը՝ չանտեսելով նաև կլիմայական պայմանները: Բնական է, որ այդ տարածքը պետք է նաև շատ ջրառատ լինի:

«Հայաստանի մյուս հռչակավոր լեռը գտնվում է Էրզրումից դեպի հարավ՝ Բինգյոլի տարածքում, որը կոչվում է «Հազար լճերի լեռ»: Այդ հրաբխային զանգվածը հայտնի է նաև «Բինգյոլ-Կոխ» անվամբ կամ «Հազար աղբյուրների կաթսա»[150]:

«Եդեմից կամ Դրախտի վայրից մնացած նշաններն են նախ՝ ջրառատ վայրը, երկրորդ՝ բերքառատությունը, երրորդ՝ բարեխառն օդը: Ոչ մի այլ տեղ չես կարող գտնել, որ բոլոր այս նշանները մեկտեղած լինեն՝ բացառությամբ այն լեռների, որոնք ձգվում են Բարձր և Ջորրորդ Հայքերում, և այժմ կոչվում են Բինգյոլի լեռներ, նաև Բյուր լճակ կամ Բյուրակն: Այս լեռները գոտեվորող են. սկսվելով Տարոնի տարածքից՝ հասնում են մինչև Էրզրումի կողմերը՝ ընդգրկելով ընդարձակ տարածություն: Այս լեռների գագաթների ու ստորոտների այս և այն կողմերից բխում են բազմաթիվ հորդառատ աղբյուրներ, որոնցից առաջանում են լճակներ և գետակներ՝ ըստ Մովսեսի. «Բայց աղբյուր էր բխում երկրից և ոռոգում ողջ երկիրը»[151]: Բինգյոլում բազում աղբյուրներ կան, բայց քանի որ բոլորը նույն վայրում են, ապա դրանք իբրև մի աղբյուր համարելով՝ խոսում ենք դրա մասին՝ ըստ Սուրբ Գրքի. «Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր Դրախտը»[152]: Հաշտենքից, որն ըստ մեզ՝ Եդեմն է, այժմ էլ Բինգյոլ լեռան սահմանի մոտ տարբեր տեղերից ջուր է բխում, որոնք այստեղ և այնտեղ հոսելով՝ ոռոգում են մի ամբողջ լայնածավալ տարածք՝ այսինքն այն վայրը, որտեղ գտնվում էր Դրախտը:

Ուրիշ ի՞նչ նշան կա առավել համապատասխան նաև այն խոսքին, թե՝ «ոռոգում էր ողջ երկիրը». քանզի, արդարև, այստեղ Բինգյոլի սահմաններից ջրեր են ելնում, Մովսեսը դրանք աղբյուր և բազմաբուխ ջրեր է կոչում, որոնք այս ու այն կողմերից բխելով և Դրախտը ոռոգելով՝ իրենց հորդառատության պատճառով նաև դուրս են գալիս Դրախտից, չորս մասի բաժանվելով, ոռոգում են ողջ

---

149 Արտակ Մովսիսյան... էջ 11-12:

150 Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004, ст. 11.

151 Ծննդոց 2:6:

152 Ծննդոց 2:10:

երկիրը, ինչպես ասաց Մովսեսը Ծննդոց 2։6 համարում։ Դա այն ժամանակ ծանոթ էր հրեաներին, քանզի Եփրատը և Տիգրիսը ոռոգում էին լայնածավալ երկիրը, որը ձգվում էր մինչև Պարսից ծոց, Երասխը կամ Գեհոնը հասնում է Կասպից ծով, Ճորոխը կամ Փիսոնը՝ մինչև Պոնտոս։ Ընթերցելով Խորենացու նկարագրությունը Եփրատի աղբյուրների մասին Գ գլխում՝ գտնում ես նույն նշանակությունը, որ Մովսեսը տալիս է Եդեմի աղբյուրներին։

Ոմանք Դրախտի վայրում ցանկանում են լճակներ գտնել, և ահա այս վայրում ոչ թե մեկ, այլ մի քանի լճակ կա։ Ջորրորդ Հայքում կա լճակ՝ Անուշ Ջուր անունով, որը նախկինում ծով էր համարվում. այժմ փոխվել է լճակի, որի մերձակայքից բխում է Տիգրիսը. մյուսը Կարնո Ծովակն է, որից բխում է Եփրատը. ապա՝ Հյուսիսային Ծովակը, որտեղից բխում է Կուր գետը։ Սրանք են այն ջրառատ վայրերը, որոնք հիշատակված են Սուրբ Գրքում, քանզի Ջորրորդ Հայքում են այն վայրերը, որոնք կոչվում են Բազմաղբյուր, Ճապաղջուր։ Բարձր Հայքում է գտնվում Կարին գավառը, որը Խորենացին 3-րդ գլխում կոչում է Շատաջուր, այնտեղ են նաև Եփրատի ակունքների մոտ բխող աղբյուրները։ Նույնիսկ Կարին քաղաքն այնպիսի լեռան ստորոտին էր, որի մասին ասում են, թե այն գտնվում է «Բազմաթիվ ականակիտ աղբյուրների բխման վայրում»։ Կարին քաղաքից փոքր-ինչ հեռու՝ Բասենում, գտնվում է Արթածաբերքը, որտեղ բազում աղբյուրներ կան։ Այս բոլոր ծովակները, աղբյուրները և ջրերը գտնվում են մի տարածքում, որը կոչվում է Բինգյոլ։ Մովսեսի օրերից մինչև այժմ բոլոր մասերի համընկնումից հետևություն ենք անում, որ մեծ փոփոխություններ չեն եղել, այլ միայն փոքր, ինչպես Կարին քաղաքի կառուցման ժամանակ, երբ անհետացան այն աղբյուրները, որոնք ընկել էին տների շինությունների տակ» [153]։

Համոզվում ենք, որ այս բարձունքը Հայաստանում ամենաջրառատ վայրն է։ Նման եզրահանգման են եկել ուսումնասիրողներից շատերը. «Հյուսիս-արևմտյան Եփրատի այս կողմը չի կարող լինել Ծննդոց Գրքի երկրային Դրախտի գտնվելու վայրը, քանի որ նրա հարևանությամբ չկան պահանջվող մյուս գետերի ակունքները։ Սակայն, ես մյուս կողմում գտա մի այլ տեղ, որը լիովին համապատասխանում է այդ պայմաններին՝ Բինգյոլ-դաղը, ինչը հայերի կողմից ճանաչվում է որպես երկրային Դրախտի վայր, և այդտեղից աշխարհի չորս կողմ են սփռվում (չորս) գետերը, որոնցից երեքի ակունքները միմյանց շատ մոտ են գտնվում»[154]։

Գետը, որ իր սկիզբն էր առնում Եդեմից, ըստ Ինճիճյանի, Ջրհեղեղից հետո մասնատվեց՝ վերածվելով բազմաթիվ աղբյուրների, որոնք մինչ այժմ էլ սնում են դրախտային գետերը։

Կենդանություն պարգևող այդ գետը խորհրդանշում է Քրկչին, Ով ասաց. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա և խմի։ Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»[155]։

Դա հաստատում է նաև արքեպիսկոպոս Պետրոս Բերդումյանը՝ Արարածոց գրքի իր մեկնության մեջ. «Այլաբանորեն այս գետը Քրիստոսն է Դրախտում՝ այ-

---

[153] Ղուկաս Ինճիճեան… էջ 266-268:

[154] В. Штреккера, Очерки Верхней Армении, Тиблись, 1873, ст. 19.

[155] Հովհ. 7:37–38:

սինքն եկեղեցում, և բաժանվում է չորս մասի, ինչը չորս ավետարանիչներն են: Այս գետը ելնում էր Դրախտի անդնդից, այդպես և Քրիստոս՝ Հոր անդնդային ծոցից հոսեց Եկեղեցու մեջ»[156]:



Խաչատուր Խիզանցու (1591 թ.) այս մանրանկարչության մեջ դրախտի չորս գետերը սկիզբ են առնում Խաչից[157]:

*Ինչպես որ Հայաստանի երկինքը, այնպես էլ Հայոց սուրբ երկիրը խորհրդանիշ են Սուրբ Աստվածածնի, քանզի այդ եդեմական գետը, որ բխում է այս սուրբ հողից, ևս խորհրդանիշն է Փրկչի. **«Ուրախ եղիր Լույսի մայր Մարիամ, Երկիր բանավոր, Արեգակի օթևան, բարեխոս եղիր մեր անձեր համար»**[158],- ասվում է շարականում:*

Ակնհայտ է, որ այդ չորս գետերի բխման վայրը միանգամայն համապատասխանում է «Եդեմ» բառի նշանակությանը՝ բարձրադիր վայրին:

*Նաև ջրառատ տեղանքն է Դրախտի ամենակարևոր նախապայմաններից մեկը: Սակայն ոչ միայն ջրառատությունն է բնորոշ Եդեմին, այլև բերրիությունն ու եղանակային պայմանները. **«Եդեմը Ասիայի երկրներից է, որտեղ հենց Աստծո կողմից տնկվել է Եդեմական այգին՝ Դրախտը, առաջին մարդու բնակության համար, որ գտնվում էր Արևելքում: Եդեմ բառը կիրառվում է բոլոր այն վայրերի նկատմամբ, որոնք հիասքանչ են իրենց գեղեցկությամբ և պտղաբերությամբ»**[159]:*

*Այժմ տեսնենք, թե ինչ են ասում նշված վայրի բերրիության մասին. **«Երկրորդ նշանի մասին, որը երկրի բերրիությունն է, հարկ չկա երկար դեգերելու, քանզի մեր նախնիների վկայություններում հին ժամանակների բերրիության մասին գրվածը փոփոխությունների չի ենթարկվել և այժմ էլ այդպես է նոր Հայաստանում: Միայն Բինգյոլի բերքառատությունն արդեն զարմանալի է. նրա զանազան ինքնաբուս ծաղիկները, կարծես հատուկ հրամանի ենթարկվելով, աշխարհի չորս կողմերից բերել և տնկել են այստեղ, որպեսզի այս վայրում հաստատեն արքայավայել Դրախտը կամ բուրաստանը: Զանազան դեղաբույսերի ու բանջարների բազմությունն այս տեղը դարձնում է բոլոր ցավերի դեղատուն, նաև՝ աչքի ցավերի: Դրանք քննել են շատ բժիշկներ և բուսաբաններ, դրանցով***

---

[156] Պետրոս արքեպիսկոպոս Բերդումեան, Մեկնություն Ծննդոց, հրտ. Էջմիածն, ս. Էջմիածն 2010, էջ 113:

[157] Վասպուրականի հայկական մանրանկարչությունը, Երևան 1978, նկար 88:

[158] Շարական, Անթիլիաս – Լիբանան. 1980, էջ 243:

[159] Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора. М., 1891, 3-е издание, Москва 2005, ст. 189-190.

հիացել են նաև երկու եվրոպացի ճանապարհորդներ, որոնք մի քանի ամիս առաջ անցել են այստեղով։ Բինգյոլի լեռներից մեկի՝ Խամլբերդի արոտավայրերը հոտերը պարարտացնելու շատ յուրահատուկ զորություն ունեն, ինչի մասին նաև նախկինում վկայում էր Գորգիոս պատմագիրը, որ 5-րդ գլխի սկզբում խոսում էր Տիգրիսի և Եփրատի արգասաբեր ջրերի մասին՝ ասելով. «Եփրատի և Տիգրիսի միջև կա մի երկիր, շատ արգավանդ և պարարտարոտ, այնքան, որ անգամ հոտը հեռացնում են, որ կենդանիներն ուտելուց չպայթեն, իսկ բերրիության պատճառն այն երկու գետերի ջրերն են, որոնք հոսում են գրեթե ամբողջ երկրով մեկ»։

Մի՞թե Բինգյոլ լեռան բույսերի այս բազմազանության հավաստումը չէ Մովսեսի ասածը. «Տեր Աստված երկրից բուսցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համեղ մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը և բարու և չարի գիտության ծառը տնկեց Դրախտի մեջտեղում»[160]։ Ինչպես վկայում են մեկնիչները, Սուրբ Գրքում ասված ամեն տեսակի ծառեր տնկելը վերաբերում է Դրախտին, քանզի ամբողջ աշխարհի մասին արդեն սկզբից գրվել էր առաջին գլխի 11-12 համարներում։ Ինչպես Տիգրիսի և Եփրատի ջրերը, այնպես էլ Երասխի կամ Գեհոնի ջրերն ունեն բեղմնավոր զորություն, քանզի որտեղով անցնում են, այդ երկիրը պարարտացնում են՝ մանավանդ Այրարատ նահանգը, որի մասին զանազան տեղերում գրել ենք»[161]։

«Այն բարձունքները, որոնցից սկիզբ են առնում այս գետերը, հիրավի, երանելի վայրեր են՝ փարթամ բուսականությամբ, քաղցրահամ ջրերով, կուսական գեղեցկությամբ։ Այսպես, Տիգրիս գետի արևելյան վտակի ակունքը, որ ընկած է Հայկական Տավրոսում, իրենից մի հիասքանչ տարածք է ներկայացնում, բայց ավելի լավ է խոսքը տանք Գարեգին Սրվանձտյանցին. «...Հոս ամենայն ինչ ոսկեղեն է։ Արևուն ճառագայթը ոսկեփայլ։ Թևք թռչնոց ոսկեգույն։ Ձայն երգոց հավուց ի ձայն ոսկելար քնարի։ Ցողունք խոտոց և բուսոց՝ ոսկի։ Ծաղկունք ամենայն և ամենուրեք՝ ծաղկասփյուռ, շուշանն ու համասփյուռ տերևն ոսկի, տեսիլն ոսկի... Քանի մը առաջավոր ակունք կբխին այս տեղեն, ամենն ևս անմահության ջրեր»։ Աղբյուրի ակունքի մոտ մատուռ է կառուցվել, ուր ուխտի էին գալիս ոչ միայն հայեր, այլև քրդեր ու ասորիներ...

«Բյուրավոր ակների այս բարձրադիր հայրենիքը Հայաստանի բնության ամենագեղեցիկ անկյուններից մեկն է,- գրում է Լեոն։- Աննման է լեռնային օդը, որը տոգորված է բյուրավոր ծաղիկների անուշահոտությամբ։ Ջնայած բարձրության՝ լեռներն ունեն ցուրտ քամիներից լավ պաշտպանված լանջեր, ուր օդը բարեխառն է, ամառը՝ նույնիսկ տաք։ Եվ այս կողմերի հայ ժողովուրդը այստեղ էլ, ինչպես և Արածանիի վերին ակունքների վրա, զետեղում է Դրախտը...»։

Եփրատի Արևելյան ճյուղը՝ Արածանին, սկիզբ է առնում Արարատի հարավարևմտյան լանջերին հարող Ծաղկանց լեռների Թոնդուրեկ գագաթից։ Այս տարածքը ևս աչքի է ընկնում իր անկրկնելի գեղեցկությամբ։

---

160 Ծննդ. 2:9:

161 Ղուկաս Ինճիճեան… էջ 268-269:

Անցյալ դարի կեսերին ռուս ճանապարհորդ Մ. Լիխուտինը, շրջելով Արևմտյան Հայաստանում, Արածանիի ակունքների մասին գրել է. «Այդ գեղանկար վայրն ուներ բիբլիական բանաստեղծության ամբողջ հքնաղությունը: Եվ սքանչանալով նրա տեսքով՝ ցանկություն էր ծնվում բնակեցնել այդտեղ հրեշտակներ, որոնել նրա մենավոր, գաղտնի խորշերից մեկում, թե արդյոք հիմա էլ չե՞ն շրջում մեր նախահայրն ու նախամայրն այնտեղ, և արդյոք այժմ չե՞ն բուսնում այնտեղ արգելված պտուղներ»[162]:

«Հետազոտողները XVII դարում շատ ավելի վստահորեն էին կապում Եդեմը Հայաստանի հետ: Տիգրիսի և Եփրատի վերին մասերում Դրախտի տեղանքի հարցի հետ կապված ոչ այնքան մեծ հոդված գրել է Մարմադյուկ Կրավերը՝ նկարագրելով այս վայրերի հարստությունը. «Թանկարժեք քարեր և ոսկու հանքեր, բազմաթիվ տարատեսակ ծառեր, որ բերում են հազվագյուտ և համեղ պտուղներ, դեղաբույսեր՝ ծաղկող բերրի հողերում»»[163]:

Իհարկե, կան նաև երկրներ, որոնք ևս ինչ-որ չափով պարունակում են այսպիսի նշաններ, սակայն Բինգյոլին բնորոշ չափանիշները գերազանց են բոլորից:

«Ոմանք հաշվի չառնելով մյուս հանգամանքները՝ ասում են, թե Դրախտը Հնդկաստանում է, քանզի այնտեղ ձմեռ և դժնդակ ցուրտ չի լինում, և նրանց երկիրը մշտադալար է ու բազմազան պտուղներ ունի, և մարդկությանը սննդով ապահովելու համար հարմար վայր է, որ ուրիշ երկրներում չկա: Բայց սրանք չեն հիշում այն իրարամերժ հանգամանքները, որոնք բացառում են այդ կարծիքը: Հնդկաստանի ջերմությունն այնքան կիզիչ և թուլացնող է, որ մարդու ուժից գցում է և բազում հիվանդությունների առիթ է հանդիսանում: Նույնիսկ փոքրիկ՝ չնչին կենդանիները, որ բնակվում են նրանց մոտ և նրանց հանդերձներում, պատճառ են հանդիսանում տենդի և այլ ծանր հիվանդությունների, ինչի պատճառով գրեթե միշտ բողոք ենք լսում հենց հնդիկ բնակիչներից: Այնտեղ խիստ սակավ են այն կարևոր և սովորական պտուղները, ինչպիսիք են տանձն ու խնձորը, որոնք, ըստ նախնիների, Դրախտի պտուղներն էին և նույնիսկ արգելված պտուղներ էին համարվում: Արդ, քանզի այս օրինակներից անհավանական է դառնում Դրախտի՝ Հնդկաստանում գտնվելը, պետք է մնալ այն կարծիքին, թե ում էլ որ բաժին ընկներ Դրախտի վայրը, Աստծո նախախնամությամբ այն միշտ մշտադալար և մշտապտուղ կմնար միայն այն դեպքում, եթե նախահայրերը պահեին իրենց անմեղությունը»[164]:

Եվ եթե Բինգյոլի (Բյուրակնի) տարածքը նման փարթամություն ունի, ապա նրա կլիմայական պայմանները պետք է յուրահատուկ լինեն.

«Իսկ երրորդ նշանը բարեխառն օդն է: Այս վայրի զովության մասին վկայում են բոլոր ճանապարհորդները, ինչի մասին ես ինքս էլ բազմաթիվ անգամներ հարցրել եմ, այժմ այն խաշնարած քրդերն են վայելում՝ սփռված Բինգյոլի լեռներում, որոնք քաջառողջ կյանք են վարում՝ չհիվանդանալով այլ վայրերի

---

[162] Սամվել Դիլանյան, Մոռացված գանձերի արձագանքը, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001, էջ 68-69:

[163] Рубен Атоян, Земля Эдема, Журнал Анив №2 (29), Минск, 2010.

[164] Ղուկաս Ինճիճեան... էջ 249-250:

սովորական հիվանդություններով, առավել երկարակյաց են, քան սովորական մարդիկ՝ շնչելով քաղցրահոտ և քաղցրաշունչ օդը, որը մաքուր է ամեն տեսակի ապականագործ գոլորշիներից»[165]*։*

«Ջրհեղեղից հետո երկիրը կերպարանափոխվեց, բարեխառն կլիման ցրտեց, բայց, այնուամենայնիվ, մնացին որոշ նշաններ, առաջին հերթին՝ գետերը։ Մյուս նշաններից են Բարձր Հայքի եդեմաշունչ օդի և Սրմանց բարձրավանդակների գարնանային և ամառային օդի պարզությունն ու քաղցրությունը, անապակ շունչը՝ ջինջ և քաղցրահամ ջրերով հանդերձ։ Սրանց վատը միայն մշտատև չինելն է, այսինքն՝ երկարաշունչ ձմեռվա պատճառով խափանվելն է, որն ամեն տարի Դրախտի կորուստն է հիշեցնում, բայց կրկին նորոգվում է ամենազվարթ գարունով և պայծառ արեգակով, որի ամառն էլ որքան կարճ, այնքան էլ կիզիչ և բեղմնաբեր է, և եթե կարճության պատճառով չի բավականացնում ջերմասեր բույսերի բարգավաճման համար, սակայն բավարար է պտուղների և մանավանդ արմատների համար՝ հատկապես բանջարների և առավել ևս՝ ալպյան և լեռնային բույսերի, և սրանց այնքան գեղեցիկ աճ ու զանազանություն է տալիս, որը ոչ միայն զմայլեցնում է բազում բուսաբանների, այլև համարձակորեն նրանց ասել է տալիս, որ փափկության Դրախտն իսկապես այստեղ է եղել»[166]*։*

Վարկած կա նաև, որ Եդեմը գտնվել է Վանա լճի մոտ։ Սակայն այդ կարծիքը չունի նույն կշիռը, ինչն ունի Բինգյոլի տարածքը. «Այժմ մնում է տեսնել, թե Եդեմը Հայաստանի ո՞ր կողմում է գտնվում. ժամանակակից բանասերներից ոմանք գտնում են, որ արևելյան կողմում է՝ Վանա լճի մոտ՝ իր մեջ ներառելով նաև Վանա լիճը, այն համարելով որպես Եդեմի ակնաղբյուր»[167]*, -շարունակում է Ղ. Ալիշանը։*

Իսկ Միքոս Ալեքսանդրապուլոսը բանաստեղծորեն է մոտենում խնդրին. «Այս գեղեցիկ լիճը և Արարատ սարը խորհրդանշում են հայերի կորած հայրենին։ Վանա լիճը տեսնողները հիացմունքով են նկարագրում այն. «Երկնքում Դրախտն է, իսկ երկրի վրա՝ Վանա լիճը»։ Ի դեպ, Դրախտն էլ տեղադրում են այս լճի շրջակայքում»[168]*։*

Է. Ջիլբերդը նույնպես գտնում է, որ Դրախտը Վանա լճի մոտակայքում է.

«Այդ «Եդեմից» այն կողմ, դեպի արևելք, գտնվում է Վանա լիճը, հնարավոր է՝ սկզբնական «դրախտային այգին», իսկ հյուսիսային կողմում Արաքսի հովտին է նայում Արարատը, որտեղ, ըստ ավանդության, իր տապանը կանգնեցրեց և իջավ Նոյը։ Անկախ այն բանից՝ մենք հավատո՞ւմ ենք Ջրհեղեղի պատմությանը և Նոյի նավաբեկությանը Արարատ լեռան վրա, թե ոչ, բոլոր տվյալները մատնացույց են անում այս տարածքը՝ որպես վայր, որտեղից դուրս են եկել Նոյի «մեծ» ընտանիքի անդամները»[169]*։*

Վանա լիճն այդ գետերի ակունքներից մեծ հեռավորության վրա չէ։ Կարելի

---

[165] Նույն տեղում, էջ 269:

[166] Ղեւոնդ Ալիշան... էջ 10-11:

[167] Նույն տեղում, էջ 9:

[168] Միքոս Ալեքսանդրապուլոս, Հայերը, Երևան, 1984, էջ 16:

[169] Эдриан Джилберт, Тайны волхвов, изд. “Вече”, Москва, 1998, стр. 396.

է կարծել, որ լիճը գտնվում է Եդեմի արվարձաններում կամ նրա հարևանությամբ, բայց ոչ նրա կենտրոնում։

Կա նաև Վանա լճից հարավ-արևելք ընկած Ուրմիա լճի վարկածը։

«Սակայն ի՞նչ աղբյուրներ կան, և որո՞նց է պետք անդրադառնալ պատմական Եդեմի գտնվելու վայրը ճշտելու համար։ Առաջին հերթին, իհարկե, հենց Մննդոց գիրքն է՝ Աստվածաշնչի առաջին գիրքը։ Բայց այս գործում պակաս ներդրում չունեն նաև շումերական էպոսները։ Դրանք իրենց հավաստիությամբ, ճշգրտությամբ անհամեմատ ավելի արդյունքներ են գրանցում, քան Միջին Արևելքում 200 տարվա ընթացքում իրականացված հնագիտական պեղումները։

Ամեն դեպքում, հարմար գտանք մեր ուսումնասիրությունն սկսել Աստվածաշնչյան վկայություններից...

Մննդոցի 2։10-14 գլուխներում հիշատակված չորս գետերն են՝ Փիսոնը, Գեհոնը, Տիգրիսը և Եփրատը։

Հիշատակված բոլորը գետերը սկիզբ են առնում Վանա և Ուրմիա լճերի մերձակայքում։ Այս երկու աղի լճերի ավազանը գտնվում է այդ ընդարձակ շրջանի կենտրոնում և աշխարհում ճանաչվում է «Արմենիա» անվամբ։ Ժամանակակից քաղաքական քարտեզում ամեն ինչ փոփոխության է ենթարկվել։ Այդ երկրամասի արևմուտքում մենք տեսնում ենք արևելյան Թուրքիայի տարածքը, հյուսիսում Հայաստանն է, արևելքում՝ Ուրմիա և Կասպից ծովերի միջնամասը զբաղեցնում է Իրանական Ադրբեջանը, իսկ հարավում Քուրդիստանն է։ Սակայն համառոտության և պարզության համար այստեղ օգտագործվեց «Արմենիա» անվանումը՝ օգտագործելով նրա հնագիտական, պատմական, այլ ոչ թե քաղաքական անվանումը։ Ասորեստանցիները, ապրելով մ. թ. ա. առաջին հազարամյակում, այդ շրջանը «Ուրարտու» կոչեցին, որից և գալիս է բիբլիական հայտնի անունը՝ Արարատ... Մեծ ճշգրտությամբ սահմանելով Սուրբ Գրքում հիշատակված չորս գլխավոր գետերի հավանականությունը և ցույց տալով, որ դրանք գտնվում են այն շրջանում, որը սովորաբար «Արմենիա» է կոչվում՝ մենք պետք է ուշադրություն դարձնենք այլ աշխարհագրական մանրամասնությունների վրա, որոնք նույնպես պարունակում են Սուրբ Գրքի՝ իրականում անգին հատվածները...

Աստվածաշնչյան Քուշ երկիրը գտնվել է ներկայիս Ադրբեջանի տարածքում, իսկ Հավիլատը գտնվում էր Իրանի լեռնային շրջանում, որն այսօր հայտնի է «Անգուրան» անվամբ։

Այսպիսով, սահմանելով Եդեմի գտնվելու վայրը՝ եկեք քննարկենք այդ մասին Մննդոց գրքում եղած հիմնական վկայությունները, որոնք Եդեմական պարտեզը նկարագրում են տարբեր տեսանկյուններից և կօգնեն՝ հաստատելու նաև հենց վերջինիս գտնվելու վայրը։

Այդ այգին գտնվում էր Եդեմի արևելքում (բառացիորեն՝ նրա մեջ)[170]։ Ըստ երևույթին, այստեղ նկատի ունի Եդեմի արևելյան մասը, որովհետև այգին հստակորեն վերաբերում է «Եդեմ» կոչված վայրին։

---

[170] Մննդ. 2:8:

Ինչպես արդեն ասվեց, այս վայրերի հնագիտական և կլիմայագիտական ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այն շրջանը, որը մենք պայմանականորեն կոչում ենք Արմենիա, ժամանակին հայտնի էր առավել տաք և խոնավ կլիմայով, քան մեր օրերում: Եդեմի այգու բուսականությունն անհամեմատ ավելի հարուստ էր, մերձակա բլուրների լանջերն ամբողջովին պատված էին սաղարթախիտ անտառներով, իսկ հարթավայրում աճում էին արևադարձային պտղատու ծառեր: Նույնիսկ այժմյան չոր կլիմայի պայմաններում այս հարթավայրի առանձին հատվածներ զարմանալիորեն գեղատեսիլ են ու բերրի: Այս ամենը ամբողջովին համապատասխանում է Սուրբ Գրքում նկարագրված Եդեմի հարուստ հողերին, որտեղ աճում են «ամեն տեսակի ծառեր», որտեղ ամեն տեսակի պտուղների լիություն է, և այս ամբողջ երկիրը ողողում է քաղցրաբուխ գետը: Ինչպես նշում է Լանգը, զարմանալի չէ, որ «այս ամենը տալիս են հիմնավորումներ հօգուտ այն բանի, որ Հայաստանն իրականում հենց այն վայրն է, որտեղ գտնվել է Աստվածաշնչյան Եդեմական այգին»...Եվ այսպես, Դրախտը գտնված է, իսկ այժմ եկեք ի մի բերենք այն ամենն, ինչ մեզ հայտնի է առասպելական Դրախտի և նրա Եդեմական այգու մասին:

Ամենից առաջ վստահաբար կարող ենք ասել, որ Դրախտն իրականում գոյություն է ունեցել, և ոչ ինչ-որ առասպելական վայրում՝ զրկված աշխարհագրական կոորդինատներից: Եդեմը գտնվել է հին Հայաստանի հենց կենտրոնում՝ Վանի և Ուրմիայի ավազաններում: Սա հենց այն երկիրն է, որը Սուրբ Գրքում «Արարատ» է կոչվում, իսկ ասորերեն՝ «Ուրարտու»: Եդեմից բխող չորս գետերն են Եփրատը, Տիգրիսը, Գեհոն-Արաքսը և Ուիզխուն-Փիսոնը»[171]:

Այստեղ Արևելքն ընկալելով որպես աշխարհագրական դիրք, այլ ո՛չ տեղանուն՝ Դևիդ Ռոլը, Դրախտը հեռացնելով վերոնշյալ գետերի ակունքներից, այն տեղափոխում է Ուրմիա լճի արևելյան ափամերձ շրջաններ: Ռոլի նշած գետերից երեքը Դրախտի գետերն են, սակայն, ինչպես տեսանք, դրանց ակունքներն իրականում Ուրմիա լճի ավազանից զգալի հեռավորության վրա են: Հետևաբար, անհասկանալի է, թե ինչպե՞ս կարող են այդ գետերը բխել Ռոլի նշած Դրախտի տարածքից, երբ դրանց ակունքները բոլորովին այլ վայրում՝ Ուրմիայից հյուսիս-արևմուտք են գտնվում: Իսկ Ռոլի նշած չորրորդ գետը, որի ակունքը գտնվում է Ուրմիայից արևելք, ընդհանրապես որևէ առնչություն չունի մյուս երեք գետերի ակունքների տեղանքի հետ:

Տեսնում ենք, որ կարծիքները տարբեր են, սակայն բոլոր հիմնավորումները ծանրացնում են կշեռքի նժարը՝ հօգուտ Մեծ Հայքի Բինգյոլ տարածքի. «Եվ այսպիսով, վե՛րջ. որևէ կասկած լինել չի կարող: Դրախտը գտնվում է Հայաստանի Բյուրակնյան՝ Բինգյոլ լեռների մոտ, որտեղ բյուրավոր և կենսատու աղբյուրները, գույնզգույն և անհամար ծաղիկները, լիապարարտ գեղեցկատեսիլ բույսերը, ամեն տեսակ գեղեցկությամբ զարդարված անզուգական լեռնադաշտերը հստակ ցույց են տալիս Դրախտի՝ այնտեղ գտնվելու անհերքելի ճշմարտությունը»[172]:

---

[171] Дэвид Рол, Генезис цивилизации откуда мы произошли . . ., Москва, 2005г. 67, 70-71, 73, 81, 84.

[172] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896, էջ 12:

«Արդ, այս ամենից առավել ի՞նչ նշաններ կարելի է տեսնել, որ հարմար լինեն այնտեղ Դրախտի մնացորդների համար։ Արդարև, այս ամենը կրկին փաստում են, որ սա այն նույն բնական տեղն է, որ մինչև այսօր մնացել է և լիովին համապատասխանում է Մովսեսի նկարագրածին, որոնք բոլոր կասկածները դուրս են մղում։ Դրախտի տեղի հետ կապված այս բուռն վեճերից հետո բոլոր անաչառ քննողները վճռեցին և իրենց հավանությունը տվեցին Հայաստան աշխարհի օգտին»[173]։

«Հեղինակավոր կրոնական հանրագիտարանները, օրինակ՝ «Մակ Քլինտոն և Մորոգան» (XIX век), Դրախտը տեղադրել են Հայկական լեռնաշխարհում... Ալեքսանդր Սկաֆին, ուսումնասիրելով Դրախտի տեղանքի աշխարհագրական պատկերացումների տարբեր օրինակներ, իր մեծածավալ գրքի առանձին մի վերնագիր՝ «Դրախտի քարտեզագրումը» (Alessandro Scafi «Mapping Paradise», 2006) անվանեց «Վերադարձ ակունքներին՝ Դրախտը Հայաստանում»։ Գիրքը միջնադարյան աստվածաբանների և տիեզերագիրների աշխատությունների ժամանակակից գիտական հետազոտություն է իրենից ներկայացնում, որը նվիրված է Դրախտի վերաբերյալ աշխարհագրական պատկերացումներին»[174]։

«Պերերիուսը և Լապիդը նույնպես առաջարկել են Հայաստանը որպես Եդեմի և Դրախտի տրամաբանական տեղանք։ Ջոհան Վորստիուսը, հաստատելով, որ Սուրբ Գիրքը հստակ նշել է, որ մեծ գետը սկիզբ է առել հենց Եդեմից, նույնպես համոզված էր, որ Դրախտը պետք է լինի Հայաստանում»[175]։

Բազմաթիվ փաստարկներով ավարտելով Դրախտի տեղանքին վերաբերող բաժինը՝ վստահությամբ եզրակացնում ենք, որ երկրային Դրախտը գտնվել է Հայաստանի տարածքում։

«Եվրոպացիներից առաջինը Հայկական լեռնաշխարհի հստակ նկարագրությունը տվել է Հենրի Լինչը (իռլանդացի ճանապարհորդ, որ այցելել է Հայաստան XIX դարի վերջին)։ Իր գրքի անգլերեն տպագրության առաջաբանում նա գրում է. «Հայաստան այցելելու մղումներից մեկը հետաքրքրությունն էր՝ արդյոք ի՞նչ է թաքնված այնտեղ՝ լեռների այն լայն կիսաշրջանում, որը սնում է Միջագետքի հարթավայրը։ Այսինքն՝ մեծ գետերի ակունքները,... Տապանի լեռը, և մարդկության լեգենդար բնօրրանը՝ նրա Դրախտը»[176]։

Հաջորդիվ կներկայացվեն այն բոլոր ճակատագրական դեպքերը, որոնք տեղի են ունեցել Դրախտում և Դրախտից դուրս, որոնցով և պայմանավորվել է մարդկային ցեղի հետագա ընթացքը։ Այդ ամենը, բնականաբար, տեղի է ունեցել բուն Հայոց հողի վրա։

---

[173] Ղուկաս Ինճիճեան… էջ 269:


[174] Рубен Атоян, Земля Эдема...

[175] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/

[176] Рубен Атоян, Земля Эдема, Журнал “Анив”, ном. 2 (29), Минск, 2010.

Արևմտյան գիտնականների քարտեզները, որտեղ Հայաստանը ներկայացվում է որպես Արարչագործության կենտրոն, պատկանում են տարբեր դարերի: Մեր տրամադրության տակ եղածները ութերորդ դարից մինչև հսկայերորդ դարի քարտեզներ են:






1. «Այսպես կոչված Բեատուս աշխարհացույցը T-O *քարտեզների ընտանիքի տեսակից է, որը վերցված է Լիբենացի Բեատուսի 8-րդ դ. «Ապոկալիպսիս» աշխատության 12-րդ դ. ձեռագրի պատճենից: Ջոն Ռայլանդ գրադարան, Մանչեստերի համալսարան –* Latin MS. *8,* ff *43*b/*44*a»[177]:


[177] Ռուբեն Գալչեան, Հայաստանը՝ համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, Պատկեր 15, էջ 15:






*2. «8-րդ դարի (*mappa mundi*) աշխարհի քարտեզը՝ Թուրինից»*[178]*:*

[178] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/




а. ОБАЛЬНАЯ КАРТА МИРА БЕАТА 776 г. Ориентирована на восток. Уменьшена в 2,5 раза

Цифрами обозначены: 1. Албания 2. Каппадокия 3. Малая Азия 4. Македония 5. Понт 6. Эгейское море 7. Дунай 8. Сарматия 9. Европа 10. Адриатическое море 11. Италия 12. Франция 13. Аквитания 14. Гасконь 15. Пиренеи 16. Британские о-ва 17. Испания 18. Индия 19. Азия 20. Месопотамия 21. Халдея 22. Цейлон 23. Аравия 24. о. Кипр 25. о. Крит 26. о. Корсика 27. о. Сицилия 28. о. Сардиния 29. Египет 30. Нил 31. Арабское море 32. Красное море 33. Ливия 34. Африка



*3. «8-դարի այս քարտեզում էլ Ադամի ներքևի մասում գրված է «*Armenia regio*»։*



4. «Այս հին քարտեզը պատրաստվել է Փարիզում, վերանորոգվել և տպագրվել է 1960 թ.»[179]*:*

[179] Atlas de cartographie historique de l` Armenie, Paris:



5. «Բեատուսի աշխարհի այս քարտեզը նկարվել է Ք.հ 1050 թ.՝ Աքվիտեյնի Սուրբ-Սեվերի աբբայությունում»[180]։

[180] http://www.peopleofar.com/2013/12/02/armenia-the-forgotten-paradise/

Ներդրախտային շրջան

***«Ինքն Արարիչն իր արյամբ մեզ
համար տեղ գնեց այն քաղաքում
(Դրախտում)։ Իսկ նրա տեղում միայն
մեր Հայոց ազգն է բնակվում»[181]։***

Նախորդ գլուխներում ապացուցվեց, որ Եդեմական Դրախտը գտնվել է Հայաստանի տարածքում։ Հետևաբար, Դրախտի բոլոր դեպքերը զարգացել են Հայոց երկրում։

«Տեր Աստված իր ստեղծած մարդուն տեղավորեց բերկրության Դրախտում, որպեսզի սա մշակի ու պահպանի այն։ Տեր Աստված պատվիրեց Ադամին ու ասաց. «Դրախտում ամեն ծառի պտուղներից կարող ես ուտել, բայց բարու և չարի գիտության ծառից մի՛ կերեք, որովհետև այն օրը, երբ ուտեք դրանից, մահկանացու կդառնաք»»[182]։

*Այդ պարտեզը՝ Դրախտը, աննկարագրելի գեղեցկության, հարմարավետության և երանության վայր էր, որ Արարիչը սահմանել էր Իր կերտած մարդ արարածի համար. **«Այս լեռնային բարձրավանդակի վրա (Բյուրակնում) Արարչապետը ստեղծեց փափկության Դրախտը մարդկանց համար՝ ամենատունկ, ամենահոտ, ամենապտուղ, շատ բերկրալի մի երկիր, քաղցր ակնաղբյուրների եզերքին բարձրաբերձ և սաղարթախիտ ծառերով, այդ պատճառով էլ «այգի» կոչվեց, որն էլ սահմանագծված Դրախտն է, ինչպես Սուրբ Գիրքն ու ավանդությունը միաձայն ասում են»[183]։***

Ջրհեղեղից հետո այն չոչնչացավ։ Կա՛ և պիտի գոյության ունենա հավիտյան։ Իսկ թե որտե՞ղ է այժմ՝ երկնքո՞ւմ, թե՞ աներևութապես երկրի վրա՝ մնում է ծածկված։

*Պողոս առաքյալը Դրախտի գոյության մասին վկայում է՝ ասելով հետևյալը. **«Ես գիտեմ այդպիսի մարդու (թե մարմնով էր կամ առանց մարմնի՝ չգիտեմ, Աստվա՛ծ գիտե), որ հափշտակվեց մինչև Դրախտ և լսեց անպատում խոսքեր, որ մարդս արտոնված չէ խոսել»[184]։***

*Եվ ոչ միայն Դրախտում լսած խոսքերը հնարավոր չէ արտաբերել երկրավոր կյանքում, այլև անհնարին է նույնիսկ պատկերացնել այնտեղ եղածը. **«Ինչ որ աչքը չտեսավ, և ականջը չլսեց, և մարդու սիրտը չընկավ, Աստված այն պատրաստեց իր սիրելիների համար»[185]։***

Այդ նույն Դրախտը գտնվելիս է եղել Մեծ Հայքի «Արևելքի» տարածքում՝ իր հրաշալիքներով հանդերձ, ինչն այդ ժամանակ երկրի վրա միակ լուսավոր

---

[181] Առաքել Սյունեցի, Դրախտգիրք, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1956, էջ 75:
[182] Ծննդոց 2:15-17:
[183] Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 12:
[184] Բ Կորնթ. 12:3-4:
[185] Ա Կորնթ. 2:9:

վայրն էր՝ արդարների բնակարանը, անմահության երկիրը, որտեղ մարդ արարածը վայելում էր Արարչի ներկայությունը։

Այդ մասին է վկայում նաև Աքքադական "Enuma Elish"՝ (Երբ բարձրության վրա) էպոսը. ***«Արևելքում՝ երկրի մարդաբնակ հատվածում, գտնվում է Դրախտային Այգին, որտեղ ապրում են արդարները։ Արևմուտքում տարածված է Օվկիանոսը՝ կղզիներով, իսկ դրանից հետո՝ Անապատը՝ արևից չորացած, որտեղ սողում են միայն օձերն ու կարիճները...»*** [186]*։*

Դրախտում առանձնահատուկ տեղ էին գրավում երկու ծառեր. ***«Կյանքի ծառը որպես անմահության խորհրդանիշ, լայն տարածում է գտել Արևելքում։ Այն նաև նշանակում է վերին իմաստություն (Առակ. 3. 18, 11. 30), հարաբերություն Աստծո հետ (Հայտ. 2.7) և ճշմարիտ բարություն (Գրիգոր Նյուսացի)։ Իսկ բարին ու չարը ճանաչելու ծառը խորհրդանշում է Աստծո կողմից սահմանված բարոյական կանոնը»*** [187]*։*

Այդ ծառերից մեկի՝ բարու և չարի գիտության ծառի հանդեպ ցուցաբերած անխոհեմ վերաբերմունքն արտաքսման, նզովքի և մահվան պատճառ դարձավ։

Մյուսը կենաց ծառն էր։ Նրա պտղի ճաշակմանը կարժանանան միայն նրանք, ովքեր Ադամի պես չեն պարտվի չարի գայթակղիչ պատրանքներից. ***«Ով ականջ ունի լսելու, թող լսի, ինչ որ Հոգին ասում է եկեղեցիներին. ով հաղթի, ես նրան թույլ կտամ ուտելու կյանքի ծառից, որ գտնվում է Աստծո Դրախտի մեջ»***[188]*։*

Հայաստանում է գտնվել անմահության ծառը։ Այդ մասին ասում է ոչ միայն Սուրբ գիրքը. ***«Դրախտի տեղորոշմանը ծառայող գլխավոր փաստարկը՝ այնտեղից չորս գետերի արտահոսելը, աներկբայորեն ցույց է տալիս, որ Աստվածաշնչում հիշվող Դրախտը, հետևաբար նաև նրա կենտրոնում բարձրացող կենաց և իմաստության ծառերը, գտնվել են Հայկական լեռնաշխարհում։ Այսինքն՝ արարչագործության կենտրոնը, ըստ Աստվածաշնչի, Հայաստանի տարածքն է։***

Թերևս ավելի սպասելի պիտի լիներ, որ Հին Կտակարանը գրի առած հրեաները արարչագործության կենտրոնը համարեին իրենց հայրենի երկիրը, ինչը, սակայն, այդպես չէ։ Այս փաստն առավել ուշագրավ և հատկանշական է դառնում, երբ Հայկական լեռնաշխարհը որպես արարչագործության կենտրոն է հանդես գալիս հին Առաջավոր Ասիայի մի շարք ժողովուրդների տիեզերաստեղծման ավանդություններում, որոնք գրի են առնվել Հին Կտակարանից դարեր առաջ»[189]*։*

Դրախտը համայն մարդկության բնօրրան էր, քանզի առաջին մարդկանց՝ Ադամին ու Եվային Աստված արարեց և բնակեցրեց այստեղ՝ Հայոց սրբազան հողի վրա. ***«Եդեմի հետքը գտնելու ամենավստահելի ճամփան Հայաստանն է։***

---

[186] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, с. 43.

[187] Библия с приложениями, Брюсель 1989. ст. 1854.


[188] Հովհաննու Հայտնություն 2: 7:

[189] Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000, էջ 6:

Ինքը (Հայոց հողը) Աստծուն տվեց իր օրհնյալ կավից, և Նրա ձեռքից ընդունեց մարդկության հորն ու մորը, ինքը նաև խանձարուր եղավ առաջին ծնվածին և գերեզման՝ առաջին մեռյալի համար» [190]:

Սա իր անսուտ բերանով հաստատում է նաև Օգոստինոս Երանելին. ***«Այնտեղ՝ Հայաստանի դաշտերում, երկրի առաջին բնակիչն Աստծո ձեռքից կերպարանք և կյանք ստացավ»*** [191]:

«Նոր ժամանակների առաջին ամենահամարձակ ճանապարհորդներից էր Ֆրանսիացի բնագետ Ժոզեֆ Պիտտոն Տուրենֆորը (1656-1708)։ Ճանապարհորդելով Հայաստանով XVIII դարի սկզբին՝ նա հաղորդում է նամակով իր ղեկավարին. «...ես համոզված եմ, որ Ադամը և Եվան ստեղծվել են հենց այստեղ»» [192]:



Մարդը, որպես արարչագործության թագ ու պսակ, բնակեցվեց իր կարգավիճակին համապատասխան վայրում, որտեղ մարդու համար աշխատանքը պիտի լիներ երանելի զբաղմունք և ո՛չ նզովքի հետևանք, ինչը եղավ Դրախտից վտարվելուց հետո, երբ արդեն ճակատի քրտինքով պիտի վաստակեր իր հացը. ***«Քո երեսի քրտինքով ուտես հացդ՝ մինչև հող դառնալդ»*** [193]:

Այս պարտեզն անմահության երկիրն էր՝ բերկրության Դրախտը, որտեղ ամեն բան երանելի էր և օրհնյալ: Այստեղ էր, որ մարդկությանը՝ հանձինս Ադամի և Եվայի, տրվեցին առաջին պատվիրանն ու հանձնարարությունները: Հանձնարարականներ տրվեցին, որպեսզի մարդը դրսևորեր իր ստեղծագործական ունակությունները՝ նմանվելով Արարչին: Իսկ պատվիրանը տրվեց, որ նրանով ցուցաբերեն Աստծո հանդեպ իրենց որդիական հավատարմությունը:

«Այն բազմավտակ հայկական բարձրավանդակներում, որ այսօր քրդերն ու թուրքերը ծածկել են իրենց հոտերով, և որոնց եզերքում Հայկի հին ժողովրդի մնացորդներն են ապաստանում, աստվածային առաջին պատգամները և մարդու հետ առաջին զրույցը լսվեց, ում սովորեցնում էր Արարիչը, թե ինչպես պիտի գործի Դրախտում. այսինքն՝ ինչպես է պետք խնամել ծառերը, որպեսզի նրանք գեղեցիկ երևան և քաղցր պտուղներ տան, որպեսզի այնտեղ զբոսնեն ծաղիկների, պտղատու ծառերի մեջ և պահպանեն այդ վայելուչ տեղը՝ զգուշանալով և նորոգելով այն վնասը, որը կարող էր տարերքի կամ անասունների և կամ նախաչարի կողմից հասցվեր, որի թշնամությունը Աստված հայտնեց և տվեց զգուշության պատվիրան՝ մահվան սպառնալիքով արգելելով ծառին մեր-

---

[190] Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկ, 1920, էջ 67:
[191] Օգոստինոս Երանելի, Գիշերային խորհրդածություններ, Լոս Անջելես, 1993, էջ 212:
[192] Рубен Атоян Земля Эдема Журнал Анив №2 (29), Минск, 2010:
[193] Ծննդոց 2:19:

ձենալ: Այսպիսին էր մարդու վիճակը երկրի վրա, բնակության առաջին վայրկյաններից սկսած, մինչև նախահոր վախճանը» [194]:

Համայն կենդանական աշխարհն Ադամին տեր ճանաչեց՝ դրանով ցույց տալով նրա որդիական կարգավիճակը՝ ի տարբերություն մյուս արարածների: Դա նրա համար մեծագույն պատիվ էր, բայց և՝ մեծ պատասխանատվություն. ***«ում շատ է տրված, նրանից շատ էլ կուզվի»*** [195]:

Ի տարբերություն մնացած բոլոր արարածների՝ Ադամն արարված էր ոչ թե խոսքով, այլ՝ Աստծո ձեռքով, ուներ Նրա նմանությունն ու պատկերը. հետևաբար, օժտված էր նաև գիտությամբ ու հանճարով, ինչը հայտնի դարձավ, երբ նա կենդանական աշխարհի տեսակներին համապատասխան անուններ դրեց:



Կենդանական աշխարհի անվանումների պատիվը նույնպես պատկանում է Հայաստանին. ***«Տեր Աստված ստեղծեց նաև դաշտային բոլոր գազաններին, երկնքի բոլոր թռչուններին և բերեց Ադամի մոտ, որ տեսնի, թե Ադամն ի՞նչ անուն կտա դրանց: Եվ Ադամն ինչ անուն որ տար ամեն մի կենդանուն, այն էլ կլիներ դրա անունը: Ադամը բոլոր անասուններին, երկնքի բոլոր թռչուններին և դաշտային բոլոր գազաններին տվեց անուններ»*** [196]:

Դրախտում արարվեց Եվան, ինչը դարձյալ Ադամի հանդեպ Տիրոջ մեծ հոգածության ու սիրո արդյունքն էր. Ադամի իմաստնությունը Եվայի առնչությամբ ևս հայտնի է դառնում, քանզի տեսնելով նորաստեղծ Եվային՝ իսկույն բնութագրում է նրա կոչումը.

«Տեր Աստված թմրություն բերեց Ադամի վրա, և սա քնեց: Աստված հանեց նրա կողոսկրերից մեկը և այդ տեղը մաշկով ծածկեց: Տեր Աստված Ադամից վերցրած կողոսկրից կին արարեց և նրան բերեց Ադամի մոտ. Ադամն ասաց. «Այժմ սա ոսկոր է իմ ոսկորներից և մարմին՝ իմ մարմնից: Թող սա կոչվի կին, որովհետև իր ամուսնուց ստեղծվեց»: Այդ իսկ պատճառով տղամարդը թողնելով իր հորն ու մորը՝ պետք է միանա իր կնոջը, և երկուսը պետք է լինեն մի մարմին: Եվ երկուսն էլ՝ Ադամն ու իր կինը, մերկ էին ու չէին ամաչում» [197]:

Ադամին տրված էր ոչ միայն արարածներին ճանաչելու հանճար, այլև, ըստ Հովհան Ոսկեբերանի, Եփրեմ Ասորու և այլ մեկնիչների, նաև մարգարեության շնորհ:

Եվ այսպես, ամբողջ Երկիր մոլորակի վրա մեկ բնակության վայր կար, որտեղ բնակվում էին առաջին մարդիկ՝ նախահայրն ու նախամայրը. ***«Հայաստա-***

---

194 Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904 թ., էջ 14:
195 Ղուկաս 12:48:
196 Ծննդոց 2:19-20:
197 Ծննդոց 2:21-25:

նի առաջին բնակիչների պատմությունն սկսվում է ամբողջ մարդկային ցեղի առաջին բնակության պատմությամբ, քանզի Աստված, կամենալով Իր ստեղծած մարդու՝ Ադամի համար պատրաստել բնակարան, ընտրեց Հայաստանը և ցանկացավ այստեղ մի պարտեզ ստեղծել, որ լինի բնակարան՝ նախաստեղծ մարդու համար, այսինքն՝ Դրախտը, որը արարվեց Հայաստանում, ինչն էլ դարձավ աշխարհի առաջին պարտեզը»[198]:



Դրախտը մի վայր էր, որտեղ մարդն անմիջականորեն հարաբերվում էր Աստծո հետ: ***«Դրախտը Եդեմում գտնվող այգի էր: Ըստ Եկեղեցու Հայրերի ուսմունքի՝ այդ այգին ոչ միայն առաջին մարդկանց բնակության վայրն էր, այլև Աստծուն մերձ լինելու խորհրդանիշը[199]»[200]:***

Դրախտը նաև Եկեղեցու խորհուրդն ուներ. ***«Թմրեց Ադամը, և նրա կողից ստեղծվեց Եվան: Թմրեց նաև Քրիստոսը և ննջեց խաչի վրա, և Նրա կողի բխումից ստեղծվեց Սուրբ Եկեղեցին: Դրախտն Արևելքում ստեղծեց և իր ստեղծած մարդուն այնտեղ դրեց, որ մշակի և պահպանի այն: Եկեղեցին էլ ստեղծեց Արևելքի դիմաց և հավատացյալներին դրեց այնտեղ, որպեսզի մշակեն այն և պահեն Աստծո պատվիրանները. ահա թե ինչու Աստծո Եկեղեցին կոչվում է Դրախտ՝ երկրի վրա»[201]:***

Այլ մարգարեական խորհուրդներ ևս Դրախտը կրում էր իր մեջ.

«Դրախտի անվան տակ կարող ենք հասկանալ Եկեղեցին, ինչպես որ նրա մասին ասվում է Երգ Երգոցում: Չորս գետերի տակ կարող ենք հասկանալ չորս Ավետարանները, պտղաբեր ծառերի տակ՝ սուրբերին, նրանց պտուղների տակ իրենց գործերը, կյանքի ծառի տակ՝ Սրբությունն սրբոցը, այսինքն՝ Քրիստոսին, բարու ու չարի ծառի տակ ազատ կամքի թույլտվությունը»[202]:

Սակայն Հայոց Բյուրակնի բարձունքը եղավ ոչ միայն բարօրությունների, այլև չարագույժ իրողությունների վկան: Այս վայրը սահմանված էր անմահության երկիր լինելու: Բայց դարձավ նաև մահվան ի հայտ գալու տեղ. Ադամն ու Եվան չգնահատեցին Տիրոջ մեծ սերն ու հոգածությունը՝ անարգելով Տիրոջ տված միակ պատվիրանը:

Խախտելով այն՝ մերկացան անմահական փառքից, որով զգեստավորել էր նրանց Աստված. ***«Օձը երկրի վրա Աստծո ստեղծած բոլոր գազաններից ավելի***

---

198 Ղորկաս Ինճիճեան... էջ 244:

199 Գրիգոր Աստվածաբան, Խոսք 30.17, Ամբրիոսիոս Մեդիոլանցի, Դրախտի մասին, 11:

200 Библия с приложениями, Брюсель, 1989, ст. 1854.

201 Գրիգոր Տաթևացի. Ճմեռան Հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 595:

202 Августин Иппонийский (Блаженный), «О граде Божьем», Книга тринадцатая, Глава XXI. http://krotov.info/library/01_a/avg/ustin_035.htm

խորամանկ էր։ Օձն ասաց կնոջը. «Ինչո՞ւ Աստված ասաց, թե Դրախտում գտնվող բոլոր ծառերի պտուղներից չեք կարող ուտել»։ Կինն ասաց օձին. «Դրախտի ծառերի պտուղներից կարող ենք ուտել։ Սակայն Դրախտի մեջտեղի ծառի պտղի համար Աստված ասաց. «Դրանից չուտեք և չմոտենաք, որպեսզի չմեռնեք»։ Օձն ասաց կնոջը. «Չեք մահանա, որովհետև Աստված գիտեր, որ այն օրը, երբ դրանից ուտեք, կբացվեն ձեր աչքերը, և դուք կլինեք աստվածների նման՝ կիմանաք բարին ու չարը»։ Կինը տեսավ, որ ծառի պտուղը լավ է ուտելու համար, ակնահաճո է և գրավիչ՝ ըմբռնելու համար։ Նա առավ նրա պտղից, կերավ և տվեց իր մոտ կանգնած ամուսնուն, և նրանք կերան։ Երկուսի աչքերն էլ բացվեցին, և նրանք հասկացան, որ մերկ են։ Նրանք թզենու տերևներն իրար կարեցին և իրենց համար գոգնոց շինեցին» [203]։



Առաջին մարդիկ հեշտությամբ խախտեցին իրենց տրված պատվիրանը և, ունենալով նման իմաստնություն, ունկնդրեցին Արարչին վարկաբեկող սողունին։ Նրանք իրենց սխալը մասամբ գիտակցեցին միայն այն ժամանակ, երբ պտուղն ուտելով ոչ թե աստվածացան, այլ մերկացան երկնային փառքից։ Ադամն ու Եվան իրենց ամոթալի արարքը ցանկացան թաքցնել ընդամենը թզենու մի քանի տերևների օգնությամբ՝ լիովին չըմբռնելով իրենց արարքի անպարագրելի վտանգն ու լրջությունը։

Այսպիսով՝ Հայոց հողը վկան է ոչ միայն մարդ արարածին բաժին ընկած յուրօրինակ փառքի, այլև՝ նրա անարգ գահավիժման։

«Երեկոյան նրանք լսեցին Տեր Աստծո՝ Դրախտում շրջագայելու ոտնաձայնը, և Ադամն ու իր կինը Տեր Աստծուց թաքնվեցին Դրախտի ծառերի մեջ» [204]։

Իսրայելը երկրորդ երկիրն էր, որի հողի վրա Իր սուրբ ոտքերով քայլեց մարմնացյալ Աստված։ Իսկ առաջինը, ըստ Սուրբ Գրքի, Աստված շատ ավելի վաղ քայլել է Հայոց հողի վրա.

«Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրան Աստուծ է քալեր՝ հանելով զԱդամ» [205]։

Մարդ – Աստված հարաբերությունը շատ պարզ և մատչելի էր Դրախտում, քանի որ Ադամը և Եվան ստեղծվել էին միանգամայն մաքուր՝ առանց մեղքի նշույլ կրելով իրենց մեջ, ինչն էլ պատճառ էր ամենասուրբ Արարչի հետ նրանց

---

[203] Ծննդոց 3:1-7:

[204] Ծննդոց 3:8:

[205] Նար-Պէյ, Խորեն Արք. Գալֆայեան, Ստվերք հայկական, տպ. Գալաֆյան, Կոստանդնուպոլիս 1874, էջ 154:

անմիջական շփման։ Սակայն մեղանչելով՝ մղվեցին թաքնվելու իրենց որոնող Աստծո ծանոթ ոտնաձայնից։

«Բարերարը ձայն տվեց, թե «ո՞ւր ես, Ադամ» և նա ասաց՝ «Լսեցի քո ձայնը և երկնչեցի, քանզի քայլում էիր այստեղ՝ Դրախտում, իսկ ես մերկ էի և թաքնվեցի»։ Տեսնո՞ւմ ես, թե նրանք որչափ մերձավոր և ծանոթ էին Աստծուն, որ մինչև անգամ ոտնաձայնին անտեղյակ չէին։ Այսպիսով Բարերարը նախ ոտնաձայնն էր լսեցնում՝ զղջումի առիթ տալով տգետին, որպեսզի մարդը, մերձենալով քավություն բերող ոտքերին, անձամբ պատմի իր հանցանքները ու փրկություն գտնի»[206]։

Ճիշտ է, Հովհան Ոսկեբերանն ասում է, թե չպետք է մտածել, որ Աստված մարդու նման ոտքեր ունի, և չի կարելի Նրա ոտնաձայնը ուղղակի հասկանալ, սակայն ոչ էլ ժխտելի է, քանզի Աստծո մոտ անհնարին ոչինչ չկա, և ոտնաձայները հենց վկայում են, որ Տերն իսկապես քայլեց այս խորհրդավոր հողի վրա և հավանաբար, մարդկային կերպարանքով հայտնվեց առաջին մարդկանց.

«Հավանական է որ, պտղի ուտելը տեղի ունեցավ առավոտյան, քանի որ Տերը Ադամին և Եվային այցելեց երեկոյան, իսկ նույն օրը այցելելը խոսում է մարդու հանդեպ հատուկ հոգածության մասին։ Նա սրանով ի հայտ բերեց նաև Իր մարդեղության խորհուրդը... Եվ որպեսզի չվախեցնի, Ամենաբարձրյալը եկավ մարդու կերպարանքով և նուրբ քայլվածքով, այլ ոչ այլ կերպ» [207]։

«Ոչ միայն նախածնողներին ցուցաբերած համբերատարությամբ Աստված ցանկացավ նպաստել նրանց, այլև Իր ոտնաձայներով ցանկացավ նրանց օգնություն ցուցաբերել։ Նրա հանդարտ ոտնաձայները լսվեցին, որպեսզի պատվիրանազանցները պատրաստվեին շարժել այդ ոտնաձայների Տիրոջ գութը։ Իսկ երբ ո՛չ Նրա դանդաղկոտությունը, ո՛չ Իրեն նախորդող ոտնաձայները պատճառ չդարձան, որպեսզի գայթին ու մեղավորությամբ կանգնեին Տիրոջ առջև, այդժամ Աստված Իր ոտնաձայներին ավելացրեց նաև Իր ձայնը, և ասաց. «Ո՞ւր ես»» [208]։

Յավոք, նախածնողներն իրենց գործած մեծ անօրինությունը հարթելու հնարավորությունը բաց թողեցին՝ կարծելով, թե ինքնարդարացումն ավելի լավ է, քան զղջումը։ Եվ ավելի խրվեցին՝ օձին, միմյանց և նույնիսկ Աստծուն մեղադրելով իրենց գործած հանցանքի համար։

«Տեր Աստված ասաց օձին. «Քանի որ այդ բանն արեցիր, անիծյալ լինես երկրի բոլոր անասունների ու գազանների մեջ։ Քո լանջի ու որովայնի վրա սողաս, ողջ կյանքումդ հող ուտես։ Թշնամություն պիտի դնեմ քո և այդ կնոջ միջև, քո սերնդի ու նրա սերնդի միջև։ Նա պիտի ջախջախի քո գլուխը, իսկ դու պիտի խայթես նրա գարշապարը»[209]։

Տեսնում ենք, որ արարչագործության այս արշալույսին Հայոց հողի վրա անիծվեց սկզբնաչարը, որը նշանակում է, թե պատժվեց։

---

[206] Ագաթանգեղոս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը, Պատմություն հայոց, Երևան, 1983, էջ 161:

[207] Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումյան, Ծննդոց մեկնություն, Սբ. Էջմիածին 2010, էջ 123-124:

[208] Св. Ефрем Сириньь, Толкование на книгу Бытия, Москва, 1995, ст. 205.

[209] Ծննդոց 3:14-15:

(Հետագայում կտեսնենք, որ նույն բանը տեղի կունենա նաև աշխարհի մայրամուտին, և այս տարածքից կգա վերջին չարի՝ Նեռ-դերաքրիստոսի կործանումը)։



Արարչի անեծքի մեջ առկա էր փրկարար, հուսադրող մարգարեությունը, որն ավետում էր իր ժամանակին Փրկչի՝ «կնոջ սերնդից» աշխարհ գալու մասին, Ով պիտի ջախջախեր հին օձի՝ սատանայի գլուխը.

«Որո՞նք էին մեղանչման առաջին հետևանքները. օձը՝ այսինքն սատանան անիծվեց, հանցագործ նախածնողները և նրանց սերունդները զրկվեցին Աստծո հետ մերձ հարաբերությունից՝ ընկնելով մահվան իշխանության տակ։ Սակայն օձին բախտ չէր վիճակված հաղթանակ տոնել։ Հաղթող է դուրս գալիս կնոջ բարեպաշտ սերունդը։ Եկեղեցու Հայրերը որպես «կնոջ սերունդ» հասկանում էին գալիք Քավչարարին։ Այս պատճառով էլ Ծննդ. 3. 15-ը համարվում է նախավետարան» [210]։

«Կնոջ կողմից նրա գլխի ջախջախումը պիտի լիներ նախ նրա ապաշխարությամբ և ապա՝ Քրիստոսի գալստյամբ, որ պիտի գար նրա զավակից (սուրբ Աստվածածնից)՝ գլխովին ջախջախելու օձի ամբողջ զորությունը» [211]։

Մեծ Հայքի տարածքը համայն մարդկության համար նզովքից զատ՝ նաև փրկչական ավետիսի վայր է կանխանշվել.

«Իսկ կնոջն ասաց. «Պիտի անչափ բազմացնեմ քո ցավերն ու քո հառաչանքները։ Ցավերով երեխաներ պիտի ծնես, քո ամուսնուն պիտի ենթարկվես, և նա պիտի իշխի քեզ վրա»։ Աստված Ադամին ասաց. «Քանի որ անսացիր քո կնոջ ձայնին և կերար այն ծառի պտղից, միայն որից քեզ պատվիրեցի չուտել, բայց կերար դրանից, թող անիծեալ լինի երկիրը քո արածի պատճառով։ Տանջանքով հայթայթես քո սնունդը՝ քո կյանքի բոլոր օրերին։ Փուշ ու տատասկ թող աճեցնի քեզ համար երկիրը, և դու դաշտային բույսերով սնվես։ Քո երեսի քրտինքով ուտես հացդ՝ մինչև հող դառնալդ, որից ստեղծվեցիր, որովհետև հող էիր և հող էլ կդառնաս» [212]։


Տիրոջ պատվիրանների հանդեպ անհնազանդությունը, քամահրանքն ու զղջման կոչի անտեսումը բերեցին ծանր հետևանքների. ոչ միայն նախածնողներն էին իրենց մեղքերի համար կրելու արտադրախտային չարքաշ կյանքն ու վշտերը, այլև նրանցից սերված մարդկությունն ու կենդանական աշխարհը։ Անմահները դարձան մահկանացու, ինչն էլ ժառանգաբար մինչ օրս կրում է Ադամի սերունդը՝ տանջանքների և վշտերի մեջ։

---

[210] Библия с приложениями, Брюсель, 1989. ст. 1855-56.

[211] Ստեփաննոս վարդապետ Ագոնց, Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, Վենետիկ, 1819, էջ 9:

[212] Ծննդոց 3:16-19:



«Եվ Ադամն իր կնոջ անունը դրեց Կյանք (Եվա), որովհետև նա է բոլոր մարդկանց նախամայրը: Տեր Աստված Ադամի ու նրա կնոջ համար կաշվից զգեստներ պատրաստեց և հագցրեց նրանց»[213]:

«Տեր Աստված ասաց. «Ահա Ադամը դարձավ մեզ նման մեկը, նա գիտի բարին և չարը: Արդ, գուցե նա ձեռքը մեկնի, քաղի կենաց ծառից, ուտի և անմահ դառնա»: Եվ Տեր Աստված արտաքսեց նրան բերկրության Դրախտից, որպեսզի նա մշակի այն հողը, որից ստեղծվել էր» [214]:

Երկրի վրա առաջին ծնունդները դառը վիճակի արժանացան: Եվայից Կյանք ստացած մի զավակը երիտասարդ տարիքում պիտի զոհվեր, իսկ մյուսը դառնար մարդասպան և եղբայրասպան՝ Ադամի մեծ տրտմության վրա ավելացնելով նոր դառը ցավ:

Դրախտում Ադամն ուշադրություն չդարձրեց կենաց ծառի վրա, քանզի նա անմահ էր՝ մինչ պատվիրանազանցությունը: Իսկ երբ դարձավ մահկանացու, արդեն ուշ էր. նա կերել էր արգելված պտղից. մնում էր բաղձանքով նայել կենաց ծառի կողմը, որի վրա ժամանակին արգելք չէր դրված:

Փակվեցին Դրախտի դարպասները, և քերովբեներն ու բոցեղեն սուրը անհաղթահարելի արգելք դարձան նրանց համար:

Այսպիսով, Հայոց լեռնաշխարհի պատմությունն սկսվում է հենց արարչագործության ակունքներից և լի է մարդկությանը վերաբերող դրամատիկ դեպքերով, ինչի հետ հաշվի են նստում անշահախնդիր հետազոտողները:



Անգլիացի հռչակավոր բանաստեղծ Ջորջ Գորդոն Բայրոնը գրում է. «Ինչպիսին էլ եղած լինի նրանց ճակատագիրը (իսկ դա անցյալում դառն է եղել), ինչպիսին էլ այն լինի ապագայում, նրանց երկիրը հավետ պիտի մնա որպես աշխարհի ամենահետաքրքիր երկրներից մեկը: Ըստ Սուրբ Գրքի՝ Դրախտը Հայաստանում էր՝ Հայաստան, որ Ադամի սերունդների պես թանկ վճարեց իր հոգու վաղանցուկ մասնակցության հա-

[213] Ծննդոց 3:20-21:
[214] Ծննդոց 3:22-23:

մար այն մարդու երջանկությանը, որն իր իսկ փոշուց էր ստեղծված: Հայաստանում էր, որ առաջին անգամ Ջրհեղեղը տեղի տվեց, ապա իջավ աղավնին: Բայց կարելի է նշել, որ Դրախտի անհետացման հետ մեկտեղ՝ համարյա սկսվեց այդ երկրի տարաբախտությունը, որովհետև չնայած երկար ժամանակ այն հզոր թագավորություն էր, բայց անկախ գրեթե չմնաց, և պարսից սատրապներն ու թուրք փաշաները հավասարապես անապատ դարձրին այն երկիրը, ուր Աստված մարդուն ստեղծել էր Իր իսկ պատկերով» [215]:

Հայոց երկիրը՝ արարումի ներդրախտային դեպքերի սուրբ հողը, շարունակեց լինել նաև արտադրախտային իրողությունների վկան ու մասնակիցը:

Արտադրախտային շրջան

«Դրախտի փակված դռների մոտ ես
Նայում եմ դյութված՝ սեգ Ալագյազին:
Երբ ամեն վայրկյան բարձունքից իր վեհ
Նայում է ճերմակ թագն Արարատյան,
Հավատում ես դու՝ այստեղ է ասվել
Սուրբ խոսքն առաջին, «արդ և հավիտյան...» [216]:

Դրախտից վտարվելուց հետո Ադամն ու Եվան դուրս չեկան Հայաստանի սահմաններից, այլ բնակություն հաստատեցին Եդեմի մերձակայքում: Աստվածաշունչ մատյանի թարգմանություններից մեկում գրված է, որ նրանք բնակվեցին «Դրախտի դիմաց», իսկ այլ թարգմանություններում՝ «Դրախտի արևելյան կողմը»:

Ենթադրում ենք, որ նրանք, հեռանալով Եդեմից դեպի արևելք, հաստատվեցին Արարատ լեռան ստորոտում՝ Արարատյան դաշտավայրում:

Մեղանչումից հետո բնությունն էլ խախտվեց, և գուցե թե այդ ժամանակ Արարատ լեռն էլ սկսեց ծխալ...

«Արարատը իր արծաթյա երկատված պսակաթագով, ժամանակին հավանաբար լինելով բոցաշունչ լեռ, ըստ հայերի լեգենդների և ասքերի, եղել է հրեշտակապետի այն բոցեղեն սուրը, որ արգելում էր Ադամի և նրա սերունդների մուտքը կորսված Դրախտ: Համաշխարհային Ջրհեղեղը հանգցրեց բոցեղեն սուրը և վերացրեց Եդեմը, և հենց այդ պատճառով Նոյը պետք է հանգրվաներ Արարատի վրա, որպեսզի մարդկային ցեղը կրկին սկսեր իր գոյությունը Դրախտի դարպասների մոտից» [217]:

Իհարկե, բոցեղեն սրի և Արարատ լեռան նույնությունը կարող է միայն խորհրդանշական բնույթ կրել, սակայն միևնույն ժամանակ դա ևս հաստատում

---

[215] Անահիտ Բեքարյան, Բայրոնը Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1983:

[216] Տիգիան Տաբրիձե, Սրտի ձայն, հրատ. «Հայաստան» և «Սաբճոթա Սաքարթվելո» Երևան-Թբիլիսի, 1970, էջ 32-33:

[217] В. А. Потто, Страна Арарата, Санкт-Петербург, 1905, стр. 22.

է, որ Դրախտից վտարվելուց հետո մարդկության բնակության հիմնական կենտրոնը դարձավ, Արարատյան դաշտավայրը։

*Դրախտից դուրս՝ Եդեմի դիմաց, սկսվեց նորաստեղծ մարդկության արտադրախտային կյանքը. **«Զրկվելով իրենց նախկին երանելի կյանքից՝ առաջին մարդիկ բնակվեցին Եդեմի արևելքում։ Այդ արևելյան արտադրախտային երկիրը դարձավ մարդկության բնօրրան։ Այստեղ սկսվեցին առօրյա դաժան կյանքի առաջին դժվարությունները, և այստեղ ի հայտ եկավ «ծնված» մարդկանց առաջին սերունդը»** [218]։*

Ադամն ու Եվան, փաստորեն, աքսորվեցին, և դրախտային բերկրանքն ու ուրախությունը վերափոխվեց վտարանդիների տրտմության։ Այնժամ նրանք հասկացան Դրախտի արժեքը՝ այն համեմատելով իրենց մեղքերի պատճառով անիծված երկրի հետ, որը փուշ ու տատասկ էր տալիս։

Դա ունի խորհուրդն այս աշխարհի ցավերի, նեղությունների, վշտերի և վերջապես՝ մահվան։ Այս համեմատությունը նրանց հասկացրեց, թե ի՛նչ մեծ պատվի մեջ էին և ի՛նչ անարգ վիճակի մատնվեցին՝ վտարվելով բաղձալի հայրենի Դրախտից։

***«Իսկ Դրախտի դիմաց բնակեցնելը երկու բացատրություն ունի. Նախ, որ միշտ Դրախտի կողմը նայելով՝ հիշեն իրենց հանցանքը և ապաշխարեն. իսկ մյուսը՝ նորից այնտեղ վերադառնալու ակնկալություն ունենան»** [219]։*



*Այս մասին կարդում ենք նաև Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարդապետության մեջ. **«Քանզի երբ ճաշակի դառնություն և մահվան անորոշությամբ պաշարված լինի, ինքնաբերաբար իր միտն է գալու կենաց ծառի հիշատակը, և հեծեծելով խնդրելու է Դրախտի վայելքներին մոտենալը։ Հենց նրա՝ Դրախտի դեմ հանդիման բնակվելը այս ասածներիս վկայությունն է»** [220]։*

*Իսկ թե որքա՞ն ժամանակ նրանք մնացին Դրախտում՝ հստակ կարծիքներ չկան. **«Որքա՞ն ժամանակ տևեց նախածնողների երանական, անարատ կյանքը փափկության Դրախտում։ Որքա՞ն ժամանակ նրանք մշակեցին մեր երկրի նախաջրհեղեղյան հողը, որը սնեց իր անմահական մշակներին։ Քանի՞ առավոտ արեգակը Դրախտի արևելյան դռնից՝ բարձրաբերձ ծառերի գագաթներից, իր ոսկեծիրան ճառագայթներն արձակեց նրանց երանելի հովանոցի վրա՝ չգիտենք, չենք քննել։ Հայրենական երկրի հիշատակը մեզ համարձակու-***

---

[218] А. П. Лопухин, Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986, ст. 12-13.

[219] Սուրբ Եղիշէ, Արարածոց Մեկնութիւն, Մատենագիրք Հայոց հ. 1, Անթիլիաս, Լիբանան 2003, էջ 796։

[220] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 163։

թյուն տվեց, մի պահ կանգ առնելով այստեղ, մտածել ոչ միայն նախածնողների, այլև մեր իսկ (հայերիս) սահմանված վիճակի մասին, ինչին մեր բնության Արարչապետը, որպես բնակության վայր, նախասահմանել է այս վայրը՝ Հայաստանը, ինչը հանդիսացավ որպես շեմ և դուռ մարդկության՝ աշխարհով մեկ սփռման համար»[221]:

Ադամն ու Եվան երկու որդի ունեցան՝ Կայենն ու Աբելը, ովքեր մարդկության առաջին ծնունդն էին, և նրանց ծննդավայրը, բնականաբար, Հայաստան աշխարհն էր: Նրանք ինչ-որ չափով կարծես մխիթարանք էին նախածնողների համար, սակայն, միևնույն է, նրանց կորցրած Դրախտին ոչինչ չէր կարող փոխարինել, մանավանդ՝ շուտով զավակներով այդ փոքրիկ մխիթարությունն իր հետ բերելու էր է՛լ ավելի մեծ վիշտ:



Ապաշխարող Ադամն իր զավակներին ջանում էր դաստիարակել Աստծո պատվիրաններով, ինչն արդեն իսկ տրվել էր նորաստեղծ մարդկանց:

*Չնայած Սուրբ Գիրքն ուղղակի չի խոսում այդ մասին, սակայն դա երևում է այն զոհաբերություններից, որոնք պարբերաբար մատուցվում էին Արարչին. **«Աբելը դարձավ ոչխարների հովիվ, իսկ Կայենը հող էր մշակում: Որոշ ժամանակ անց՝ Կայենը երկրի բարիքներից ընծա բերեց Աստծուն, իսկ Աբելը բերեց իր ոչխարների առաջնեկներից ու գերերից: Աստված բարի աչքով նայեց Աբելին ու նրա ընծաներին, իսկ Կայենի ու նրա ընծաների վրա ուշադրություն չդարձրեց»[222]:***

*Հայոց հողը նախաստեղծ մարդկանց և Աստծո անմիջական շփման վայրը լինելով՝ նաև երկիր մոլորակի առաջին աստվածպաշտության սրբատեղին էր: Արտադրախտային շրջանում Արարատյան դաշտավայրում կառուցվեց մարդկության առաջին սրբարանը, որտեղ Աստված անմիջականորեն ուսուցանում էր նրանց. **«Կայենը շատ տրտմեց, նրա դեմքը մռայլվեց: Տեր Աստված Կայենին ասաց. «Ինչո՞ւ տրտմեցիր, ինչո՞ւ մռայլվեց դեմքդ: Չէ՞ որ եթե արդար ես զոհաբերում, բայց արդար չես բաժանում, մեղանչած ես լինում: Հանգի՛ստ եղիր, դու կարող ես մեղքից ազատվել, դու ի վիճակի ես այն հաղթահարելու»[223]:***

Ավա՛ղ... Նախածնողները երկար չվայելեցին իրենց առաջնեկների մխիթարությունը. Կայենը նախանձեց իր եղբայր Աբելին և խաբեությամբ մի կողմ տանելով՝ սպանեց: Սակայն ինչպես մեղսագործ նախածնողներին Տերը իսկույն չպատժեց, այլ երկայնամտությամբ կամեցավ նրանց մեջ զղջում արթնացնել, որ

---

[221] Ղեւոնդ Ալիշան... էջ 15-16:
[222] Ծննդոց 4:2-5:
[223] Ծննդոց 4:6-7:

իրենց մեղքը խոստովանեն ու չդատապարտվեն, այդպես և Կայենի հանդեպ համբերատար գտնվեց: Բայց Կայենն էլ ինքնարդարացման կործանիչ ուղին բռնեց: Եվ դատապարտվեց. ***«Կայենն ասաց իր եղբայր Աբելին. «Արի գնանք դաշտ»: Երբ նրանք դաշտ հասան, Կայենը հարձակվեց իր եղբայր Աբելի վրա և սպանեց նրան: Տեր Աստված հարցրեց Կայենին. «Ո՞ւր է քո եղբայր Աբելը»: Սա պատասխանեց. «Չգիտեմ, մի՞թե ես իմ եղբոր պահակն եմ»: Աստված ասաց. «Այդ ի՞նչ արեցիր, քո եղբոր արյան կանչը երկրից բողոքում է ինձ: Արդ, անիծյալ լինես երկրի վրա, որը բացեց իր բերանը՝ եղբորդ՝ քո ձեռքով թափած արյունն ընդունելու համար: Դու պիտի մշակես հողը, բայց նա պիտի չկարողանա քեզ տալ իր արդյունքը: Ահ ու դողի և երերման մեջ պիտի լինես երկրի վրա»»[224]:***



Հայաստան աշխարհի սուրբ հողն իր մեջ ընդունեց առաջին նահատակի՝ բարեպաշտ Աբելի արյունը: Եվ դեռ անթիվ-անհամար նահատակների արյամբ պիտի ոռոգվեր այս սուրբ երկիրը:

Կայենը վտարվեց Արարատյան դաշտավայրից, հեռացավ ավելի արևելք. ***«Արդ, Ադամին Դրախտից հանեցին, իսկ Կայենին՝ Աստծո աչքի առաջից, որը ավելի չար էր, քան Ադամը»[225]:***

Սակայն նա շատ հեռու գնալ չէր կարող և, հեռանալով Արարատի ստորոտից, մնաց Մեծ Հայքի հյուսիսարևելյան սահմաններին մերձ:

«Նայիդը ոմանք թարգմանում են թափառական կամ անկայուն, ինչպես Կայենն անկայուն կյանքով ապրեց Եդեմի դիմաց, սակայն ընդհանուր կարծիք կա, թե իբր դա հատուկ տեղանուն է: Այդ անվամբ զանազան տեղեր կան Գեղարքունիքում, Սոթում, Սյունիքի Վայոց ձորում և Շիրակին մերձ Բասենում... Սևանա լճի հյուսիսարևելյան ծայրամասը կոչվում է Կայենի ձոր կամ աշխարհ, որը Բագրատունյաց հարստության ժամանակ կոչվել է Կայենի բերդ, իսկ թե այդ դեպքերի հիշատակո՞վ եղբայրասպանի անվա՞մբ, թե ուրիշ պատճառով է այդպես կոչվել՝ հայտնի չէ»[226]:

Նախաջրհեղեղյան անձանց անվանումներով բազմաթիվ վայրերի գոյությունն էլ ինքնին ապացույց է, որ Հայոց հողը եղել է մինչջրհեղեղյան նահապետների բնակության վայր. ***«Ապացուցված է, որ հնդեվրոպական ժողովուրդների ամենահին նախնիները, այսպես ասած նախալեզվով խոսող մարդիկ, բնակվել են Հայկական բարձրավանդակում՝ Տիգրիսի և Եփրատի հովտում, վա-***

---

[224] Ծննդոց 4:8-14:

[225] Եղիշէ, Արարածոց մեկնութիւն, Մատենագիրք Հայոց, հ. 1, Անթիլիաս, Լիբանան 2003, էջ 801:

[226] Ղևոնդ Ալիշան... էջ 25-26, 30:

նա լճի ավազանում. ապացույց, որով հաստատվում է քաղաքակրթության սկզբնավայր Եդեմ-Դրախտի գտնվելն այդ աշխարհամասում:

Վերոհիշյալը հաստատում են նաև Հայաստանի հնագույն տեղանունները, որ կապված են Եդեմի առաջին բնակիչների ժառանգների անունների հետ: Այսպես՝ Խնուսում, Հարամիկ գյուղից քիչ հեռու, մինչև 1915 թվականը տեղի հայերը ցույց են տվել ծառերի մի պուրակ, որը կոչվել է «Կայենի ծառեր» հնադարյան անունով: Խնուսի դաշտի հարավային բարձր լեռը կոչվել է Ղամեքի լեռ:



Ինչպես տեսնում ենք, Հայաստանի աշխարհագրական-պատմական տեղանունները համահունչ են սուրբգրային տվյալներին ու պահպանված են մինչև այսօր» [227]*:*

Կայենի սերունդը բազմացավ և, հեռու լինելով Արարատյան երկրից, հեռացավ նաև Աստծո ներկայությունից ու ամբողջովին տրվեց մարմնավորին՝ անտեսելով հոգևորը: Դրա հետևանքով նորից սպանության գործվեց. այս անգամ արդեն՝ Նայիդ երկրում: Սակայն դա տեղի ունեցավ զուտ կենցաղային և ո՛չ աստվածպաշտության հողի վրա, քանզի աստվածպաշտությունն այդ սերնդի մոտ արդեն տեղ չուներ:

*Իսկ Ադամը մխիթարվեց նոր որդի ունենալով, որին անվանեց Սեթ, ում սերունդն, ի տարբերություն Կայենի, բարեպաշտ ու աստվածավախ էր. **«Ադամը պառկեց իր կին Եվայի հետ, սա հղիացավ, ծնեց որդի, նրա անունը դրեց Սեթ և ասաց. «Կայենի սպանած Աբելի փոխարեն Աստված ինձ ուրիշ զավակ պարգևեց»: Սեթին ունեցավ որդի և նրա անունը դրեց Ենովս: Նա հուսալով կանչում էր Տեր Աստծո անունը»*** [228]*:*

*Այն, որ Ենովսը կանչում էր Աստծուն, դա չի նշանակում, որ մինչ այդ՝ աստվածպաշտությունը բացակայում էր. իհարկե՝ ոչ, քանզի թե՛ Աբելը, թե՛ Կայենը զոհ էին մատուցում Արարչին, և բնական է, որ նրանց ուսուցիչը բոլոր հարցերում հենց Ադամն էր: Պարզապես Աբելի մահից և Կայենի վտարումից հետո աստվածպաշտությունը հավանաբար, ավելի ձևական բնույթ էր կրում, իսկ Ենովսն իր մեծ հավատով խանդավառություն առաջացրեց Արարատյան երկրում. **«Սեթի անդրանիկը՝ Ենովսը, ով նման էր հորը, սիրելի և հաճելի եղավ Ադամին ու Աստծուն, և «Նա հուսալով կանչում էր Տեր Աստծո անունը»*** [229]*: Ըստ Սուրբ Գրքի՝ հնարավոր է, որ Ենովսը սկսեց Աստվածային պաշտամունքի մեջ ծես և տոնակատարություն մտցնել, նա եղավ քահանայապետ և իր որդիներին թողեց այդ պատիվը, ինչի համար նրանք Աստծո որդիներ կոչվեցին, իսկ Կայե-*

---

[227] Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 47-48:
[228] Ծննդոց 4:25-26:
[229] Ծննդոց 4:26:

նի սերունդը՝ մարդու որդիներ, և այս խտրությանն ականատես էր նախահայրը, ով, ըստ Սուրբ Գրքի յոթանասունից թարգմանության, տեսավ իր թոռան թոռին՝ Մաղաղայելին, իսկ ըստ հրեաների՝ նա ապրեց մինչև ութերորդ սերունդ, այսինքն նրան տեսավ Ղամեքը՝ Նոյի հայրը» [230]:

Մեկնիչները գրում են, որ աստվածպաշտությունը օրեցօր բարգավաճում էր Արարատյան երկրում, իսկ տոնակատարությունները իրականացվում էին Արարատ լեռան ստորոտին կառուցված սրբարանում, և զոհաբերություններն էլ իրականցվում էին այդտեղ՝ Ադամի կառուցած զոհասեղանի վրա, որտեղ իր հաճելի զոհն էր մատուցել Աբելը:

Նույն սրբավայր-զոհասեղանը Ջրհեղեղից հետո էլ չկորցրեց իր նշանակությունը. հետջրհեղեղյան մարդկությունը Նոյ նահապետի առաջնորդությամբ այդ նույն վայրում էր փառաբանում Արարչին:

Հետագայում դա կմանրամասնենք:

Այստեղ մեր նպատակը Ծննդոց գրքի մեկնությունը չէ. մենք միայն շեշտադրում ենք, որ ներդրախտային և արտադրախտային հիմնական դեպքերը զարգացել են բուն Հայոց հողի վրա: Ուրեմն, բացի Ադամից, Եվայից, Աբելից և Կայենից՝ այս օրհնյալ հողի վրա ապրել և գործել են նաև մյուս նահապետները՝ Սեթը, Ենովսը, Կայնանը, Մաղաղայելը, Հարեդը, Ենոքը:

Վերջինս սիրելի եղավ Աստծուն և անհայտացավ, որովհետև Աստված նրան տարավ Իր մոտ:

Այստեղ էր, որ Ենոքը մարգարեացավ աշխարհի վախճանի մասին, ինչի վերաբերյալ խոսվում է առաքելական թղթերում[231]*: Եվ այստեղից էր, որ նա երկինք հափշտակվեց:*

Ենոքի ավագ որդին Մաթուսաղան էր, իսկ Մաթուսաղայինը՝ Ղամեքը, Ղամեքինն էլ՝ Նոյը, որի զավակներն էին Սեմը, Քամը և Հաբեթը:

Սրանց բոլորի ծննդավայրն ու հայրենիքը Հայաստան աշխարհն է:

Արդար Սեթի բարեպաշտ սերունդները համայն մարդկության նահապետներն են, որոնք բնակվել են Արարատ լեռան շուրջ: Աստվածաշունչը նրանց անվանում է «Աստծո որդիներ»:

Դեռ կտեսնենք, որ Ջրհեղեղից հետո էլ այս վայրը նահապետների բնակատեղի կդառնա՝ Միջագետքի և այլ երկրների կողմից կոչվելով «սուրբ օրենքների», այլ կերպ՝ բարեպաշտության երկիր:

Իսկ աստվածամերժ Կայենի սերունդն ապրում էր մարմնավոր և նյութական հակումներով, ինչի համար էլ սրանք կոչվեցին «մարդկանց որդիներ»:

*Որոշ ժամանակ անց՝ Կայենի սերնդի աղջիկներն իրենց գեղեցկությամբ գայթակղեցին Սեթի որդիներին, ինչի հետևանքով խառն ամուսնություններ տեղի ունեցան, և անօրինությունը, որ բույն էր դրել Նայիդում, սկսեց սողոսկել Արարատյան երկիր. **«Մարդկային ցեղը բազմացել էր և հասել ապականության ամենավերջին աստիճանի: Աստծո որդիները՝ այսինքն, Սեթի բարեպաշտ սե-***

[230] Ղևոնդ Ալիշան... էջ 31:
[231] Հուդա 1:14:

րունդը, այնքան էր չարացել, որքան մարդկանց որդիները, այսինքն, Կայենի պիղծ սերունդը: Ամեն մի մարմին ապականել էր իր ընթացքը, և ամբողջ երկիրն անարդարությամբ էր լցվել»[232]:

Երբ Աստծո որդիները խառնակվեցին մարդկանց որդիների հետ, մարդկությունն սկսեց էլ ավելի բազմանալ, քանզի մի կողմ էին թողել ժուժկալությունը:

Ապա Եդեմի ու Նայիդի տարածքից սփռվեցին դեպի հարավային շրջաններ՝ հետջրհեղեղյան Բաբելոնի և Շումերի կողմերը:

Այդ ժամանակ Նոյ նահապետը Արարատյան երկրում թագավոր և քահանա էր, ով այդ թագավորական գահն ու քահանայական օծությունը ժառանգաբար ստացել էր Ադամից, ինչի մասին մանրամասն կխոսվի:

*Նոյը մեծ ցավով էր նայում իր ժողովրդի հոգևոր անկմանը, սակայն մարդկանց որդիներից վարակն այնքան էր տարածվել, որ դրա դեմն առնելն արդեն անհնար էր. **«Ադամի ընտանիքն իր օրերն անցկացնում էր անմխիթար սրտով և սգի մեջ, մինչև որ ծնվեց մխիթարության որդին՝ Սեթ նահապետը, որը Աստվածորդու իրական նախատիպարն էր, և ինչպես Սեթի սերունդն Աստծո որդիներ կոչվեցին, այդպես էլ Քրիստոսն Իր հավատացյալ որդիներին այդ բարձր անվամբ կոչեց: Քննարկման արժանի են հատկապես Սեթի և Կայենի ընտանիքները: Սեթն իր սերնդի համար առաքինության օրինակ և դաստիարակ է հանդիսանում, իսկ Կայենը՝ ագահ, ինքնասեր, վայրագ մշակ, ով չարություն է սերմանում ընտանիքում, որից մեծամեծ հսկաներ են առաջանում և որոնք աճելով և զորանալով՝ խեղդեցին Սեթ նահապետի բարեբույս ծաղիկներին և նրա ընտանեկան անխառն անդաստանը խառնագնաց անառակությամբ ապականեցին»[233]:***



Շատերը կարծիք են հայտնել, թե իբր Աստծո որդիները հրեշտակներ են և ո՛չ Սեթի սերունդը: Սակայն դա հակառակ է Սուրբ Գրքին, քանի որ հրեշտակները անմարմին, անսեռ զորություններ են, ուստի և չէին կարող խառնակվել մարդկանց հետ: Նշենք, որ Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին և շատ այլ մեկնիչներ հաստատում են, որ խոսքը վերաբերում է Սեթի՝ Աստծո որդիների և Կայենի՝ մարդկանց որդիների խառնակմանը:

«Ջրհեղեղից առաջ Աստծո որդիների խնամությունը մարդկանց որդիների հետ տարբեր կարծիքների և ավանդությունների առիթ է տվել: Սկսած Ենովքի գրքի հեղինակից մինչև անգլիացի բանաստեղծ Մուրը՝ այնպիսի կարծիքներ

---

[232] Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Библейско-Биографический словарь, Мвсква 2001, ст. 591, 594-597.

[233] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 192-193:

են հայտնել, թե մարդկանց դուստրերի և Աստծո որդիների միջև եղած խնամությունը Սեթի որդիներին չի առնչվել, և դրանք իբր եղել են հրեշտակներ, որոնց «ենովք» գրիչը «զորություններ» է կոչում՝ փոխանակ ասելու, թե Սեթի սերունդը իրենց առաջին մաքուր կյանքի համար զվարթունքներ և հրեշտակներ էին կոչվում: Արդ, այս խնամությունից և դրանից առաջ եղած հսկաների ծննդով, այդ չարիքը տարածվել էր նաև Հայաստան աշխարհի վրա, և ոչ միայն մարմնով էին վիթխարի հսկաները, այլև զորավոր էին թե՛ կրքով, թե՛ բնությամբ, թե՛ կռվի մեջ, թե՛ ցանկությամբ և թե՛ ամեն տեսակ փափկությունների հնարման մեջ»[234]:

Այսպիսով, համայն մարդկությունը հեռացավ բարեպաշտությունից ու խրվեց անօրինության կործանիչ ճահճում, և Նոյի օրոք արդեն ինքն ու իր ընտանիքն էին հնարավորինս զերծ մնացել այդ ախտերից.

«Երբ Տեր Աստված տեսավ, որ մարդկանց չարագործությունները բազմանում են երկրի վրա, և ամեն ոք իր մտքում ամեն օր խնամքով չարագործություններ է նյութում, զղջաց Աստված, որ մարդ է ստեղծել երկրի վրա և տրտմեց իր հոգու խորքում: Տեր Աստված ասաց. «Երկրի երեսից վերացնելու եմ իմ ստեղծած ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն և սողուններից մինչև երկնքի թռչունները, որովհետև զղջացել եմ, որ ստեղծել եմ նրանց»: Նոյը, սակայն, արժանացել էր Տեր Աստծո սիրուն» [235]:

Միայն անբասիր Նոյը հավատարիմ մնաց Աստծուն և իրեն հեռու պահեց անօրինությունից:

Տերն էլ իր ընտրյալ ծառային պատվիրեց պատրաստվել գալիք արհավիրքին, որ շուտով պատուհասելու էր մարդկությանը.

«Ապականվեց երկիրն Աստծո առաջ, աշխարհը լցվեց անարդարությամբ: Տեր Աստված տեսավ, որ երկիրն ապականված է, որովհետև երկրի վրա ամեն էակ ապականել էր իր ճանապարհը: Տեր Աստված ասաց Նոյին. «Բոլոր մարդկանց վերջը հասել է, որովհետև երկիրը լցվել է նրանց անիրավություններով: Ես կոչնչացնեմ նրանց ու երկիրը: Արդ, դու քեզ համար քառակուսի փայտից տապան կշինես»» [236]:



*Ոմանք այնպիսի անհիմն կարծիք են հայտնում, թե իբր տապանը կառուցվել է Բաբելոնի կողմերում. **«Թեև ամբողջ երկրագնդով մեկ տարածվել էր Ջրհեղեղի համբավը, բայց հավանաբար առավել այնտեղ, որտեղ համարվում էր մարդկության բնակավայր, և անշուշտ դրանց մեջ էր մեր Հայոց աշխարհը, և***

---

234 Ղևոնդ Ալիշան... էջ 38-39:

235 Ծննդոց 6:5-8:

236 Ծննդոց 6:11-14:

հավանաբար այնտեղ էլ Նոյի բնակության և տապանի շինության վայրն էր, ինչը ոմանք, չգիտես ինչու, Փոյուգիա են տեղափոխում, իսկ քաղդեացիները՝ Բաբելոնի կողմերը»[237]*:*

Սակայն դրանք թյուր ու անտրամաբանական կարծիքներ են, քանզի Նոյը չէր կարող այդ տարածքներում հայտնվել: Դրա համար նա գոնե պիտի ամուսնացած լիներ կայենի սերնդի աղջիկներից մեկի հետ. և ոչ միայն ամուսնացած լիներ, այլև այդ անօրինության օջախներում տանու փեսա դառնար, ինչը միանգամայն խորթ էր Նոյի կերպարին: Ուրեմն,Նոյը երբեք չի հեռացել Արարատյան երկրից և, բնականաբար, հենց այդ վայրում էլ սկսել է կառուցել տապանը:

***«Ինչպես կյանքի սկիզբը, այնպես էլ նրա վայելչություններն ու հեշտությունները ստեղծվեցին մեր երկրում, ապա սփռվեցին օտար երկրներում: Նախաջրհեղեղյան աշխարհը, ըստ երևույթին, 2242 տարի տևեց: Այդքան երկար ժամանակ, իհարկե, մարդիկ բազմացել և Հայաստանի սահմաններից դուրս են եկել՝ գնալով դեպի արևմուտք, տարածվել հարավի կողմ՝ Հայոց բարձրավանդակից իջած գետերի ուղղությամբ: Այդ ժամանակաշրջանում մարդկանց մեծ մասը կամ գոնե կեսը Հայաստանում էր, և ըստ այդմ էլ այս երկիրը միշտ բազմաբնակ է եղել: Սեթը և նրա հաջորդները չհեռացան իրենց նախահոր բնակության վայրից՝ Եդեմի սահմաններից: Նախահոր մահվանից հետո, որ 700 տարում էր, Սեթը հավաքեց իր հավատարիմ ազգատոհմին ադամաբնակ լեռնակողմում և ամբողջովին զատվեց կայենի ցեղից»**[238]*:*

*Եղել է նաև կարծիք՝ իբր տապանը կառուցվել է Միջերկրական ծովի մոտ, այն էլ՝ ո՛չ Նոյի կողմից. **«Ոմանք ասում են, թե Լավոդիկեոս Փոյուգացին է շինել տապանը, որը երկրի երկրորդ՝ Ասիա կոչված մասում էր: Բայց հույժ անհավատի են նրանց ասածները, որովհետև ոչ ոք չի ասել, թե տասը սուրբ նահապետներն ապրել են Միջագետքում, այլ՝ Աստծո հրամանով բնակվել են Դրախտի դիմաց, պահեցողությամբ ու ապաշխարությամբ սգացել են, ողբացել առաջին մարդկանց սխալվելը, ամբողջովին հրաժարվել մարմնականից և հոգիները զարդարել մարգարեությամբ, քիչ են գործածել միս և գինի... Եվ արդար նահապետներն այնտեղ նույն կերպ ապրեցին և վախճանվեցին: Այնտեղ կառուցվեց նաև տապանը, և երկրի վրա թափվեցին սաստիկ չարիքներ»**[239]*:*

Նոյը այդ ժամանակների համար շատ մեծ ծավալի գործ ձեռնարկեց, իհարկե, Աստծո հովանավորությամբ և օրհնությամբ: Նոյը սովորական մարդ չէր, ինչպես վերը ասվեց, այլ թագավոր էր և քահանա: Եվ չնայած աստվածպաշտությունը մեծ անկում էր ապրել, սակայն շատերը հնազանդվում էին նրան՝ որպես թագավորի և աշխատում տապանի վրա, որի համար Նոյը նրանց վճարում էր արքունի գանձարանից, և սրանք շատ ուրախ էին դրա համար, քանզի իրենց նյութական կարիքները լիովին հոգում էին այդ աշխատանքի շնորհիվ:

Բայց Նոյը նաև բարձրյալ Աստծո քահանա էր, ինչի համար էլ նրան առաք-

---

[237] Ղևոնդ Ալիշան... էջ 40-62:

[238] Ղևոնդ Ալիշան... էջ 33-34:

[239] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, նրբ. թրգմ. և ծնթ. Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978, էջ 40:


յալն անվանում էր **«արդարության քարոզիչ»**[240]: Նա ժողովրդին քարոզում էր՝ Աստծուն հնազանդ լինել և ահազանգում էր գալիք արհավիրքի մասին: Սակայն մարդիկ ամբողջովին նյութապաշտության գերի էին դարձել և այդ քարոզների մեջ չէին տեսնում նյութական շահ և արհամարհում էին Նոյին: Սրանք իրենց ձեռքերով կառուցում էին փրկության տապանը, որի մեջ չպիտի մտնեին, քանզի այդ անում էին զուտ դրամական ակնկալիքից, ինչն էլ լիովին տրվեց նրանց:



Ոմանք կարծում են, թե Հայաստանի տարածքում համապատասխան փայտանյութ չի եղել տապանի կառուցման համար, և իբր նման փայտանյութը եղել է Միջագետքի երկրներում՝ հատկապես Բաբելոնում:

*Սակայն փաստերն այլ բան են ասում: Հայտնի է, որ Եդեմի տարածքը նույնպես սաղարթախիտ անտառներով է պատած եղել, ինչը մեկ անգամ ևս փաստում է, որ տապանը կառուցվել է Եդեմի մոտակայքում. **«Մեր նախնի վարդապետներից մեկն ասում է. «Օրհնյալ Աստված նախաստեղծ մարդկանց Արևելյան կողմում՝ Եդեմի լեռան վրա դրեց», ինչից էլ եզրակացնում են, որ որոշ լեռների վրա է գտնվում Դրախտը, և նույնիսկ Եդեմն ընկալվում է որպես լեռան անուն և Դրախտի տեղ: Այդպիսի մի տեսակետ է հայտնում նաև Եզեկիել մարգարեն՝ անտառային և լեռնային ծառեր հիշատակելով Դրախտի մեջ՝ կաղնի, նոճի, մայրի, սոսի»**[241]»[242]:*

Իհարկե, հնարավոր է, որ Ջրհեղեղից հետո որոշ ծառատեսակներ անհետացած լինեն, սակայն միևնույն է՝ Հայկական լեռնաշխարհը միշտ էլ հարուստ է եղել տարբեր ծառատեսակների անտառներով: Ըստ Ստրաբոնի՝ Հայաստանում նույնիսկ ձիթենի է աճել:



***«Բուսականությունը Հայաստանում, համեմատաբար ասած, ամենահարուստն է աշխարհում, նրա բազմաթիվ լեռների լանջերը ծածկված են կաղնու, հաճարենու, մայրիների, սոճու հրաշալի անտառներով»** [243]:*

Ինչպես Եդեմում կենդանական աշխարհն Ադամի մոտ բերվեց և անվանակոչվեց, այդկերպ՝ մեր խորհրդավոր

---

[240] Բ Պետրոս 2:5:
[241] Եզեկ. 31:8:
[242] Ղևոնդ Ալիշան... էջ 12:
[243] Лагов Н. М., Армения, тип. Ареснальная…, Петроград 1915, ст. 61.

հողի վրա կենդանական աշխարհի տեսակները ներկայացան ու հավաքվեցին Նոյի շուրջ՝ նրանից հայցելով տապան մտնել՝ ի հեճուկս անհավատ և անօրեն մարդկանց, որոնք իրենց ստորադասեցին անբան անասուններից, ըստ այնմ՝ ***«Եզն իր տիրոջն է ճանաչում և էշը՝ իր տիրոջ մսուրը, բայց... Իմ ժողովուրդն Ինձ չհասկացավ»***[244]*:*

Երբ կենդանիները, Նոյն ու իր ընտանիքը մտան տապան, և Տերը փակեց տապանի դուռը, այնժամ սկսվեց Ջրհեղեղը. ***«Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ: Հորդացավ ջուրն ու բարձրացրեց տապանը, և տապանը կտրվեց գետնից: Ջուրն ավելի ու ավելի վարարեց, ողողեց երկիրը, և տապանը լողաց ջրերի վրա: Ջուրն այնքան սաստկացավ երկրի վրա, որ ծածկեց երկնքի տակ գտնվող բոլոր բարձրաբերձ լեռները: Տասնհինգ կանգուն ավելի վեր բարձրացավ ջուրը և ծածկեց բոլոր լեռները: Մեռան երկրի վրա շարժվող բոլոր կենդանի էակները՝ թռչունները, անասուններն ու գազանները, երկրի վրա սողացող բոլոր սողուններն ու բոլոր մարդիկ: Ցամաքի վրա եղած ամեն բան, որ կենդանի շունչ ուներ իր ռունգերի մեջ, ոչնչացավ: Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին: Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը»***[245]*:*



Կայենի սերունդները մոռացության մատնեցին իրենց նախնիների պատմությունը և իրենց տարածքներում ստեղծեցին նոր քաղաքակրթություն, որում տեղ չունեին հավատն առ Աստված, քանզի նրանք այլևս չէին ապրում այն գիտակցությամբ, որ իրենք գտնվում են ընդամենը աքսորավայրում և պետք է մտածեն հայրենիք՝ Դրախտ վերադառնալու մասին: Նրանք արդեն հայրենիք էին համարում անիծված աշխարհը՝ վաղանցուկ կյանքի վայելքը դարձնելով միակ նպատակ, ինչի մեջ ներքաշեցին նաև Սեթի սերունդներին՝ Աստծո որդիներին: Եվ քանզի մարդկությունը հեռացավ գլխավորից՝ Աստծո երկյուղից ու հավատից, ապաշխարությունից և բարեպաշտ կյանքից, որոնք կորսված Դրախտի ուղին էին, ապա նրանց կյանքը երկրի վրա բացարձակ անիմաստ դարձավ: Եվ Ջրհեղեղը ոչնչացրեց ունայնացած մարդկությանը[246]*:*

Այսօր էլ աշխարհը հանձն է առել ունայնությունը՝ մոռանալով իր լինելիության բուն նպատակը:

Ըստ Տիրոջ խոսքի՝ աշխարհի վերջին էլ այնպես կլինի, ինչպես Նոյի ժամա-

---

[244] Եսայի 1:2:

[245] Ծննդոց 7:17-24:

[246] Տե՛ս Սաղմոս 23:3:

նակ էր. «Եվ ինչպես Նոյի օրերն էին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալըստյանը. որովհետև, ինչպես որ Ջրհեղեղից առաջ եղած օրերն էին՝ երբ ուտում էին և խմում, կին էին առնում ու մարդու էին գնում, մինչև այն օրը, երբ Նոյը տապանը մտավ, ու նրանք բան չիմացան, մինչև որ Ջրհեղեղը եկավ ու վերցրեց տարավ բոլորին, այնպես պիտի լինի Մարդու Որդու գալստյանն էլ»[247]:

Եզրահանգում

«Դեռ չի չորացրել Աստված արմատը հայի,
Եվ իզուր չէ նրան դարեդար պահել.
Չէ՞ որ մեր հողը Դրախտն է,
Եվ մեծ զորությամբ այն դեռ կծաղկի»[248]:

Ավարտին հասավ «Հայաստանն արարչագործությունից մինչ երկրորդ գալուստ» աշխատության առաջին հատորի առաջին գիրքը՝ «Եդեմական Դրախտը»:

Եկանք համոզման, որ Հայաստանն է բուն արևածագի երկիրը՝ Արևելքը, և նրա տարածքում է բխել սկզբնական գետը՝ ճյուղավորվելով չորս գետերի՝ Փիսոն-Ճորոխի, Գեհոն-Արաքսի, Տիգրիսի և Եփրատի: Այստեղ էին Եդեմը, Դրախտը և կյանքի ծառը: Հայաստանն է առաջին մարդկանց՝ Ադամի և Եվայի բնակության վայրը, որտեղ իջել է Աստված և երես առ երես զրուցել Իր նմանությամբ ու պատկերով ստեղծած առաջին մարդու՝ Ադամի հետ: Այս վայրում կենդանիներն իրենց անունները ստացան, այստեղ կատարվեց չարաբաստիկ անհնազադությունը՝ արգելված պտղի ճաշակումը, ինչի հետևանքով աշխարհ մտավ մահը: Այստեղ էր արտադրախտային կյանքը, որտեղ ծնվեցին և ապրեցին բոլոր աստվածահաճո նահապետները: Այստեղ էր երկրի վրա առաջին աստվածպաշտության վայրը, և Հայոց սուրբ հողն էր, որ ընդունեց առաջին սուրբ նահատակի՝ Աբելի արյունը, որտեղից Կայենի դեմ մինչ օրս բողոք է բարձրացնում առ Աստված:

Մեծ Հայքի տարածքում էին բնակվում Սեթի բարեպաշտ սերունդները, ինչի համար այն կոչվում էր «Աստծո որդիների երկիր»: Եվ այս սուրբ հողում են ամփոփված նրանց բոլորի մասունքները:

Եվ վերջապես՝ այստեղ կառուցվեց Նոյան տապանը՝ Քրիստոսի Եկեղեցու խորհրդանիշը և համայն մարդկության ու կենդանական աշխարհի օրրանը:

Հաջորդ հատորում նույն մանրամասնությամբ կներկայացվեն Արարատ լեռան ստորոտում կատարվող հետջրհեղեղյան ոչ սակավ դրամատիկ դեպքերը:

---

[247] Մատթեոս 24:37-39:

[248] Խորէն Արքեպիսկոպոս Նար Պէյ, Ստուերք Հայկականք, տպ. Գավաֆեան, Կոստանդնուպոլիս 1874, էջ 107:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ագաթանգեղոս, Սուրբ Գրիգոր Լուսավորչի վարդապետությունը, Պատմություն հայոց, Երևան, 1983:
2. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1999:
3. Ալերամո Հերմետ, Պաոլա Կոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000:
4. Անահիտ Բեքարյան, Բայրոնը Հայաստանի և հայերի մասին, Երևան, 1983:
5. Աշուղ Միջազի, Երգարան, 1966:
6. Առաքել Սյունեցի, Դրախտգիրք, Վենետիկ, 1956:
7. Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2000:
8. Աւգեր Հ. Յ., Դասեր Հայոց եւ Հայաստանի հնագոյն պատմութեան, Բազմավէպ, 1912, հատոր Հ, թիվ 12, Վենետիկ, Սուրբ Ղազար, էջ 34[249].
9. Գաբրիէլեան Հ. Կ., Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհ, Հանդես ամսօրյա, 1998:
10. Գիրք Թղթոց, այլ Բան է ասացյալ Վանական վարդապետին, Թիֆլիս 1901:
11. Գրիգոր քահանայի Մանդակունի, Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, Թիֆլիս, 1896:
12. Գրիգոր Տաթեւացի, Գիրք հարցմանց, տպ. սբ. Յակոբեանց, Երուսաղէմ, 1993:
13. Գրիգոր Տաթևացի. Ճմեռան Հատոր, Կ. Պոլիս, 1740:
14. Եղիշէ, Արարածոց մեկնութիւն, Մատենագիրք Հայոց, հ. 1. Անթիլիաս, Լիբանան 2003:
15. Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014:
16. Էդուարդաս Մեժելայտիս, Իմ կրկնակի Արարատը, Երևան 1994:
17. Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, նրբ. թրգմ. և ծնթ. Վրեժ Վարդանյանի, Երևան, 1978:
18. Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:
19. Լինչ Հ, Ֆ. Պ., Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Բ հատոր, Կ. Պոլիս, 1914:
20. Նար-Պէյ, Խորեն Արք. Գալֆայեան, Ստվերք հայկական, տպ. Գալաֆյան, Կոստանդնուպոլիս 1874:
21. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992[250]:
22. Կյուրեղ Երուսաղեմացի, Կոչումն ընծայության, Էջմիածին, 2007:
23. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 3, Երևան, 1977:

[249] Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբան:
[250] Ամենայն Հայոց Կաթողիկոս:

24. Հանրագիտակ օրացույց, Կազմեց Հայկ Խաչատրյանը, Երևան, 1990:
25. Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920:
26. Ղեւոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան[251]:
27. Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատ. I, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1835[252]:
28. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 487 ձեռագիր:
29. Միրզա Վանանդեցի, Սիրված Երգեր, Երևան, 1971:
30. Միցոս Ալեքսանդրապուլոս, Հայերը, Երևան, 1984:
31. Միքայել Չամչյան, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985:
32. Մովսես Խորենացի, Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության, Սբ. Էջմիածին, 2003:
33. Մովսեսը Խորենացի, Պատմություն Հայոց. Հայաստան հրատ., Երևան 1968:
34. Ներսես Արքեպիսկոպոս Պոզապալյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:
35. Շարական, Անթիլիաս – Լիբանան. 1980:
36. Պետրոս Արքեպիսկոպոս Բերդումյան, Ծննդոց գրքի մեկնություն, սբ. Էջմիածին, 2010:
37. Ռուբեն Գալչեան, Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005:
38. Սամվել Դիլանյան, Մոռացված գանձերի արձագանքը, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001:
39. Սամուել Անեցի, «Ներսես Լամբրոնացու վարքը», 1190 ա., ձեռագիր 67, Անթիլիասի կաթողիկոսության գրապահոց. Լիբանան:
40. Ստեփաննոս վարդապետ Ագոնց, Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, Վենետիկ, 1819[253]:
41. Ստրաբոն, Քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, հրատ. Պ.Հ., Երևան 1940:
42. Վահան Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947:
43. Վասպուրականի հայկական մանրանկարչությունը, Երեվան 1978:
44. Վարք Սրբոց, Տորոմենի քաղաքի եպիսկոպոս սուրբ Բագարատի վկայաբանությունը, , սբ. Էջմիածին, 2009:
45. Տիգիան Տաբրիձե, Սրտի ձայն, հրատ. «Հայաստան» և Սաբճոթա Սաքարթվելո» Երևան-Թբիլիսի, 1970:
46. Փիլոնի Եբրաեցւոյ Մնացորդք ի Հայս, ի Վենետիկս, ի Վանս սրբոյն Ղազարու, 1826:
47. Օգոստինոս Երանելի, Գիշերային խորհրդածություններ, Լոս Անջելես, 1993:

[251] Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբան:
[252] Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբան:
[253] Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան միաբան:

48. Андрей Битов, Уроки Армении, Советакан грох, Ереван – 1978.
49. Армения в мировой картографии, автор Рубен Галчян, Ереван, 2005.
50. Библия в иллюстрациях, Юлиуса Шнорр фон Карольсфельда, изд. Свет на Востоке, 1991.
51. Библия с приложениями, Брюсель, 1989.
52. Болотов В. В., История Древной Церкви Белоруссия, 2008
53. Генри Г. Геллей, Библейский сптавочник Геллея, Канада, 1989.
54. Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004[254].
55. Дэвид Рол, Генезис цивилизации откуда мы произошли …, Москва, 2005[255].
56. Доктор Эрик Нюстрем, Библейский словар, Украина, 1989[256].
57. Ефремь Сиринь, Творение, Издательство, Отчи дом, Москва, 1995.
58. «Жития святых славных и всехвальных Апостолов», Сибирская Благозвонница, Москва 2015.
59. Иеромонах Габриэль Бунге, Скудельные сосуды, Рига 1999.
60. Лопухинь А. П., Библейская История Ветхого Завета, Монреаль, 1986[257].
61. Немирович-Данченко, Русские писатели об Армении, Ереван, 1946
62. Прокопий Кесарийский, Война с персами, С.-Петербург, 2001.
63. Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002.
64. Рубен Атоян, Земля Эдема, Журнал Анив №2 (29), Минск, 2010.
65. Святитель Филарет Дроздов, Толкование на книгу Бытия, Москва, 2004[258].
66. Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва, 1832.
67. Синг Сафир (Индия), Солнечный очаг, изд. “Айастан”, Ереван, 1970.
68. Сирбай Мауленов (Казахстан), Солнечный очаг, изд. “Айастан”, Ереван, 1970.
69. Творения Василия Великого, часть III, глава 27, О Святом Духе, Москва 1993.
70. Шопен, Исторический памятникь, С. – Петербургь.
71. Штреккера В., Очерки Верхней Армении, Тиблись, 1873.
72. Эдуардас Межелайтис, Армянский феномен, “Советакан грох”, Ереван, 1982
73. Эдриан Джилберт, Тайны волхвов, изд. “Вече”, Москва, 1998.
74. Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора. М., 1891, 3-е издание, Москва 2005.
75. Яцкевич Ф. И., Благовещенский П. Я., Библейско-Биографический словар, Мвсква 2001.
76. The Deluge (tr. S. N. Kramer), ANET, p. 44; Kramer, 1965, c. 180, ETCSl, 1.7.4.

[254] Հայտնի անգլիացի կովկասագետ:
[255] Հանրահայտ բրիտանացի գրող և հնագետ:
[256] 19-դար
[257] 19-20 век.
[258] 1783-1867г.

ԳԻՐՔ II

Երկիր, ուր հանգրվանեց Փրկության Տապանը

«Արարատը գրավել, ապշեցրել, կախարդել է իմ երևակայությունը... հորիզոնում կարծես Աստծո արծաթապատ գահը լինի: Այժմ մենք մարդկության մանկության ավանդությունների երկրում ենք՝ մարդկության իրական օրրանում: Բոլոր ազգերի հազարամյա ավանդությունները հենց այս վայրն են համարում մարդու սկզբնական բնակավայրը, որտեղից նա սկսեց իր տարածվելը ամբողջ աշխարհով մեկ և իր բաժանումը սեմիտների, հաբեթականների և քամականների, որոնք իրենց մեջ պարունակում էին հետագա բոլոր անվերջանալի ամենատարբեր ցեղերը և լեզուները: Առաջին մարդկանց Դրախտը որոշ գրողների կարծիքով նույնպես հեռու չէր գտնվում Արարատից՝ Եփրատ գետի ակունքների մոտ: Այս կարծիքի կողմնակիցն էր նաև գրող Միլտոնը՝ իր «Կորած Դրախտ» պոեմում»[1]:

Եվ այսպես, Ջրհեղեղը կլանեց ցամաքը, և երկրի երեսից վերացան մարդկությունն ու կենդանական աշխարհը:

*Որոշ հետազոտողներ համոզված են, որ Ջրհեղեղը ծածկել է ամբողջ աշխարհը, մյուսները պնդում են, թե ջրի տակ է անցել միայն երկրի այն մասը, որտեղ այդ ժամանակաշրջանում տարածվել էին Ադամի սերունդները: Իսկ ոմանք էլ մերժում են Ջրհեղեղի իրական լինելն ընդհանրապես՝ այն դասելով առասպելների շարքին. **«Բնագետներն աշխատում են պարզել, թե Նոյի Ջրհեղեղն իսկապե՞ս համաշխարհային էր, թե՞ սոսկ տեղային բնույթ էր կրում, ինչպես եգիպտական և հունական ջրհեղեղները: Բոլոր հին ազգերի ավանդությունները՝ Հայաստանից մինչև Ամերիկա և Օվկիանիայի կղզիներ, վկայում են, որ հնագույն ժամանակներում համաշխարհային ջրհեղեղ է եղել: Երկրորդ՝ Սուրբ Գրքի և հնագույն պատմիչների ավանդություններից ևս պարզ է դառնում, որ համաշխարհային Ջրհեղեղը եղելություն էր: Երրորդ՝ երկրաբանական զանազան նշաններն էլ այդ են ցույց տալիս: Չորրորդ՝ եթե նույնիսկ սահմանափակ տարածքում եղած լիներ, ապա երկրի այդ մասի մեջ էր նաև Հայաստանը, և այն նույնպես ողողվել է, որտեղից էլ ջնջվել է հին մարդկանց սերունդն ու բնակությունը, և սա է մեր պատմության համար կարևոր գիտելիքը»**[2]:*

Ջրհեղեղի իրական լինելու մասին բազմաթիվ հիմնավորումներ են պարունակում նաև հնագիտական, պատմական և աշխարհագրական տվյալները: Երկիրն ամբողջովին ջրով ծածկված լինելու անժխտելի ապացույցներից են հատ-

---

[1] Евгенний Марков. Русская Армения. Вестник Европы. журнал, Книга V, Том III. Санктпетербург 1901. ст. 448, 489, 490

[2] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 40:

կապես աշխարհի տարբեր լեռնագագաթներում եղող գտածոները՝ խխունջները, ջրային այլ կենդանիների և նույնիսկ կետ ձկան կմախքները։

«Մարդկային ցեղի ոչնչացումն իրագործվեց, բնությունը մաքրվեց նրանց հանցանքներից և անօրինություններից, բայց Արարիչը նրա վրա դրեց Իր բարկության անհարթելի կնիքը։ Հնդկական փղերի կմախքները գտնվում են Սիբիրի սառույցների տակ, Մագելանյան խխունջները՝ Ֆրանսիայի հողաշերտերում։ Ալպիական և Տավրոսյան լեռների գագաթներին բազմաթիվ ծովային կենդանիների մնացորդներ են հայտնաբերվել։ Սակայն բնության այս համընդհանուր վկայությունները չեն կարողանում համոզել մարդկային անհավատությանը»[3]։

Դեռևս առաջին դարում մարդիկ տեսել են Ջրհեղեղի թողած հետքերը։ Դրանցից են այն ապարները, որոնց վրա եղել են տվյալ երկրամասի համար օտար բույսերի շատ դաջվածքներ. ***«Փիլոնն ապացուցում է համընդհանուր Ջրհեղեղի իրական լինելը նրանով, որ սարերի վրա ծովային խխունջներ են եղել, որոնք գտնվել են ամենաբարձր լեռների գագաթներին։ Ջրհեղեղի նման հետքեր շատ տեղերում են տեսանելի՝ ի զարմանս անհավատների։ Ֆրանսիայում՝ Ֆոնտենելը, Գերմանիայում՝ Լեիբնիցը հայտնաբերեցին, որ բնական քարերի վրա կան այնպիսի բույսերի դաջվածքներ, որոնք ծագումով արևելյան Հնդկաստանից և հարավային Ամերիկայից են։ Բյուֆոնը համարում է, որ սա այլ կերպ չի կարելի մեկնաբանել, քան որպես մեծ Ջրհեղեղի հետևանք»[4]։***

Անհերքելի ապացույց է նաև, որ աշխարհի տարբեր կողմերում բնակվող, տարբեր լեզուներով խոսող և տարբեր կրոնների պատկանող շուրջ 200 ազգի մոտ պահպանվել են պատմություններ՝ աշխարհակործան Ջրհեղեղի մասին։ Ջրհեղեղի մասին մոտ 50 լեգենդ պահպանվել է Հյուսիսային Ամերիկայում, 46-ը՝ Կենտրոնական և Հարավային Ամերիկայում, 31-ը՝ Եվրոպայում, 17-ը՝ Աֆրիկայում, 23-ը՝ Ասիայում, 37-ը՝ հարավային ծովերի կղզիներում և Ավստրալիայում։ Համաշխարհային Ջրհեղեղի վերաբերյալ բազմաթիվ վկայություններ են պահպանվել նաև հին միջագետքյան արձանագրություններում.

«Ջորջ Սմիթը 1872 թ. Բրիտանական թանգարանում գտավ Նինվեի Աշուրբանիպալի քարե տախտակների գրադարանը։ Այնտեղ հիշատակված իրադարձությունները համապատասխանում էին Աստվածաշնչյան տեղեկություններին։ Դրանք գրված էին քարե տախտակների վրա, որոնք վերաբերում էին Ուրի առաջին դինաստիային՝ այսինքն, Ջրհեղեղից մինչև Աբրահամը եղած ժամանակաշրջանին։ Ավելի ուշ հայտնաբերվեցին նման ավելի շատ քարե տախտակներ։ Նրանցում կրկնվում էին հետևյալ արտահայտությունները. «Ջրհեղեղ», «նախաջրհեղեղյան ժամանակ», «Ջրհեղեղից առաջ եղած ժամանակ»»[5]։

Ջրհեղեղի մասին տեղեկություններ են պահպանվել նաև երկրի ընդերքում։ Այդ ապացույցները գտնվեցին, երբ հնագետները հայտնաբերեցին Շումերական Ուր քաղաքը։

Քսաներորդ դարի սկզբին անգլիացի հնագետ Լեոնարդ Վուլլին Ուրի մեր-

---

[3] Библейско-Биографический словарь, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Мвсква 2001, ст. 594.

[4] Святитель Филарет Дроздов, Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 183.

[5] Генри Г. Геллей, Краткий Библейский толкователь, Канада, 1989, ст. 83-84.

ձակայքում մի հոր փորել տվեց և 14 մետր խորության վրա հայտնաբերեց 5000 տարվա վաղեմության գերեզմաններ, որոնք պատկանում էին շումերական արքաներին: Դա էին ապացուցում մարդկային ոսկորների մնացորդների հետ գտնված մեծաքանակ գանձերը: Շարունակելով պեղումները՝ նրանք հայտնաբերեցին տիղմի շերտ, ինչից եզրակացրեցին, որ հասել են բնահողին, և այլևս անիմաստ է շարունակել: Սակայն արշավախմբի ղեկավար Վուլլին պնդեց, որ կանգ չառնեն:

Մեծ էր արշավախմբի զարմանքն ու ուրախությունը, երբ ևս մի քանի մետր փորելուց հետո հայտնաբերեցին բնակության նոր հետքեր, որոնք միանգամայն տարբեր էին տիղմի մակերեսից վեր գտնվող գտածոներից. դրանք պատկանում էին բոլորովին այլ մշակույթի: Ըստ հնագետների՝ տիղմի գրեթե երեք մետրանոց շերտը կարող է միայն մեծ ջրհեղեղի հետևանք լինել, որն ըստ հետազոտությունների՝ եղել է մոտ 6000 տարի առաջ: Այդ ահռելի ջրհեղեղը նույնացվում է Աստվածաշնչյան համաշխարհային Ջրհեղեղի հետ:

Հարկ է շեշտել, որ գիտությունը զարգանալով՝ ոչ թե ժխտում է Աստվածաշնչյան եղելությունները, այլ ընդհակառակը՝ նորանոր հիմնավորումներով ապացուցում է դրանց ճշմարտությունը.

«Հակառակ տարախոհ գիտնական այրերի հավակնոտ դատողությունների՝ զարգացող գիտությունն իր բոլոր ուղղություններով շարունակաբար հաստատել և հաստատում է Աստվածաշնչի տվյալների ու տեղեկությունների հավաստիությունը: Ջորօրինակ՝ հնագիտությունը վաղուց է ապացուցել, որ ն. Ք. 3000-ական թվականներին Միջագետքում համաշխարհային չափանիշի ջրհեղեղ իրոք եղել է: Հաշվարկված է ու հաստատված, որ Նոյի տապանում իրոք հնարավոր էր զետեղել նկարագրվածի պարունակությունը: Պատմական իրողություն է նաև Բաբելոնի աշտարակը: Այսօր այլևս անկասկած է, որ սուրբգրական տվյալներից ու տեղեկություններից որևէ մեկի ճշմարտապատում լինելու վերաբերյալ որևէ հնարավոր թերահավատություն դատապարտված է գիտական հիմնավորվածություն չունենալու հեռանկարին»[6]:

Տապանի ուղղությունը

«Երևում է ծերուկ Արարատը հեռվից՝ հսկայական,
անթարթ, ինչպես հավերժություն...»[7]:

Այժմ փորձենք ճշտել, թե Ջրհեղեղից հետո որտե՞ղ հանգրվանեց Նոյի տապանը: Երբ ջրերը սկսեցին ծածկել ցամաքը, Եդեմի արևելյան կողմից՝ Արարատ լեռան ստորոտից, տապանը սկսեց վեր բարձրանալ՝ հեռանալով մեղավոր աշխարհի միջավայրից և նրան հասած պատուհասից:

---

[6] Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 47:

[7] Վերա Զվյագինցեվա, Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003էջ 12-13:

Ակնհայտ է, որ տապանաբնակները չէին կարող այն ղեկավարել, քանզի տապանի դուռը ոչ թե Նոյը փակեց, այլ Տերը, և տապանի ուղղությունը կախված էր ոչ թե Նոյի, այլ Տիրոջ կամքից:

Տապանը երկրի վրա միակ վայրն էր, որտեղ պահպանվել էր կյանքը, և այն հանդիսանում էր խորհրդանիշն ու նախակարապետը՝ Քրիստոսի Եկեղեցու:

Եվ ինչպես Դրախտի տեղանքի մասին կարծիքները տարբեր էին, նմանապես տարբեր են կարծիքները Նոյան տապանի վերաբերյալ, թե որտե՞ղ, ո՞ր երկրում և ո՞ր լեռան վրա այն հանգրվանեց:

«Ըստ սանսկրիտական (հին հնդկերեն գրական լեզուն) Մագադգարատան էպիկական պոեմների /ենթադրաբար Քրիստոսից 2000 տարի առաջ/, Մենուի տապանը կանգ է առել Հիմալայան լեռների վրա՝ Հիմալայան լեռնաշղթայի ամենաբարձր կետում, որը նաև երկրագնդի ամենաբարձր գագաթն է: Կովկասյան սերունդների մոտ տապանի մասին իշխում են այն ավանդությունները, որ տապանի լեռը Էլբրուսն է, իսկ բուխարացիների մոտ՝ իրենց Նուր-Դագու լեռը, վերջապես քաղդեական գրողներ Բերոզը և Օնկելոսը ջանում են տապանը կանգնեցնել Կորդվաց լեռների վրա: Բայց ըստ նորագույն հեղինակների՝ այս բոլոր վեճերը չեն կարողանում հաղթել Աստվածաշնչյան ավանդությանը»[8]:

«Եվրոպայում նույնիսկ գտնվեց մեկը, որը բոլոր կարծիքներին հակառակ՝ Արարատյան լեռը համարում է Չինաստանի մերձավոր լեռնաշղթան և ասում, որ այնտեղ բազմացան Նոյի որդիները և հիմնեցին Չինական թագավորությունը և այնտեղից էլ սփռվեցին աշխարհով մեկ: Այս կարծիքը հայտնել է մատենագիր Շուքֆրտը: Բայց անգլիացի հեղինակներն ընդհանուր պատմության 20 հատորի 16 գլխում խոսելով Չինաստանի հնության մասին՝ 17 պատճառ են բերում, որով մերժում են այս օտարախորթ կարծիքը:

Ոմն Վալտեր Ռալեյկ Արարատը չի դնում Հայաստանում, այլ այն լեռներում, որոնք գտնվում են Պարսկաստանի, Թաթարների և հնդիկների միջև:

Սակայն անգլիացի հեղինակները մերժում են նաև այս կարծիքը՝ իրենց ընդհանուր պատմության առաջին գլխի 8-րդ հոդվածում»[9]:

Իսկ որոշ մեկնիչների կարծիքները ընդհանրապես չունեն ստուգություն՝ կապված տապանի իջման վայրի հետ, քանզի խոսում են անորոշ, ինչպես Փիլոն Եբրայեցին, թե՝ ***«Տապանը նստեց լեռների գագաթին»[10]:***

Բազմաթիվ տարաբնույթ կարծիքներ կան, սակայն ստորև կբերենք հիմնավորումներ, որ տապանը հանգրվանել է հենց Հայաստանում՝ Հայոց լեռներից մեկի վրա:

---

[8] Виктор Абаза (Русский историк и военный деятел, генерал 1831-1898), История Армении, С. Петербургъ, 1888, ст. 15-16.

[9] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Սբ Ղազար, Վենետիկ 1835, էջ 276-277:

[10] Փիլոն Եբրայեցի, Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826, էջ 112:

Հայաստանը որպես տապանի հանգրվանատեղի

«Ինքը՝ Հայաստանը, Ջրհեղեղից ազատված մարդկության միակ ընտանիքին բարձրացրեց Արարատի գագաթը և իրեն հյուրընկալվող այդ մեկ ընտանիքով երկրորդ անգամ երկիրը մարդաբնակ դարձրեց»[11]:

Հայտնի է, որ տապանը ո՛չ առագաստանավ էր, ո՛չ էլ թիավարելու հնարավորություն ուներ, և իր ահռելի չափերով ու տապանաբնակներով ծանրաբեռնված՝ պետք է՝ ուղղակի խարիսխ ձգած նավի նման մնար իր տեղում: Տապանը շարժող ուժ կարող էին լինել քամիները և անհանգիստ ջրերի հոսանքները, սակայն այդ ուժերի ազդեցության ներքո նման ծանրաբեռնված նավը միևնույն է՝ չէր կարող մեծ հեռավորություն կտրել- անցնել, ինչից էլ հետևում է, որ տապանը Եդեմի սահմանների մոտից չի հեռացել և մնացել է մոտավորապես հենց այն տարածքում, որտեղ կառուցվել է:

«Արդ, Նոյի՝ Հայաստանում իջևանելու մասին հայտնի է դառնում նախ Սուրբ Գրքի Ծննդոց 8:4 համարից՝ ըստ յոթանասնից թարգմանության, որտեղ գրված է տապանի մասին. «Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա»: Այսպես են ասում նաև եբրայական ու սամարական թարգմանությունները, որտեղ Արարատ ասելով՝ հասկանում են Հայաստանը, մինչդեռ լատինական Վուլկադա կոչվող թարգմանությունը և ասորական թարգմանությունը Արարատի փոխարեն դնում են Արմենիա, որը Հայաստանն է՝ նույնացնելով Արարատն ու Արմենիան, ինչպես որ կա... Տապանը Հայաստանից դուրս չեն դնում նաև արաբական թարգմանությունն ու քաղդեական Թարկում Ոնքելոսը...

Նախկին հեթանոսական ժամանակաշրջանի արտաքին մատենագիրներն էլ թեև զանազան անուններով կոչեցին լեռը, որի վրա իջել էր Նոյի տապանը, սակայն այն աշխարհը, որտեղ գտնվում էր լեռը, միշտ կոչեցին Հայաստան կամ Արմենիա: Ըստ դրա էլ՝ Եվսեբիոսի Քրոնիկոնի Ա հատորի 34 թղթում Ալեքսանդր Բազմավեպը պատմելով Քսիսութրայի՝ Նոյի նավաշինության և Ջրհեղեղի մասին, ասում է, որ Ջրհեղեղի դադարելուց հետո բացելով նավի լուսամուտը՝ տեսավ, որ նավը գնում է դեպի լեռան կողմ: Ապա 36-րդ գլխում գրում է. «Եվ այն տեղը, որտեղ մարդիկ դուրս ելան նավից, Հայոց աշխարհն էր»: Եվսեբիոսի Քրոնիկոնի 50-րդ թղթում գրված է Աբուդդենոսի կարծիքը, ըստ որի՝ «Նոյան տապանը գնաց կանգ առավ Հայոց աշխարհում և իր փայտերով այդ աշխարհի բնակիչներին բժշկություն էր պարգևում»...:

Այս հեթանոս մատենագիրների հետ համաձայնում են նաև քրիստոնյա մատենագիրները, որոնցից Եվստաքեոս Անտիոքացին 4-րդ դարում գրում է. «Նոյի տապանը ջրերից բարձրանալով՝ իջավ Հայաստանում գտնվող մի լեռան վրա»:

---

[11] Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920, էջ 67:

Ոսկեբերանն էլ Ա Թեսաղոնիկեցիներին ուղղված 389-րդ թղթի 8-րդ ճառում գրում է. «Հավատո՞ւմ եք արդյո՞ք, որ Ջրհեղեղ է եղել, թե՞ զառանցանք է թվում ձեզ այն, ինչի մասին վկայում են Հայոց լեռները, որոնց վրա կանգնել է տապանը»: Ով սիրո մասին ճառում գրում է. «Արդարև, նաև Հայաստանի այժմյան լեռներն են վկայում Ջրհեղեղի մասին, որտեղ կանգնեց Նոյի տապանը, մի՞թե այնտեղ պահված նշխարները մեզ չեն խրատում»: Արատոսը 4-րդ թղթում գրում է. «Նոյան տապանը կանգնած մնում է Հայաստանի բարձրաբերձ լեռներում»»[12]:

Հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսն էլ վերը նշված հեղինակների կարծիքին է (ի տարբերություն Փիլոն Եբրայեցու):

«Միայն անձրևի դադարելուց 150 օր հետո՝ հենց 7-րդ ամսվա 7-րդ օրը ջուրը սկսեց կամաց-կամաց հետ քաշվել: Այնուհետև, երբ տապանը կանգնեց Հայաստանի լեռներից մեկի վրա, և դա նկատեց Նոյը, բացեց այն և տապանի մոտակայքում մի քանի տեղ ցամաք տեսնելով՝ սկսեց բարի հույսով լցվել և հանգստացավ»[13]:

Արարատը որպես երկիր և գավառ

***«Արարատը լեռնային երկիր է, որտեղ կանգ առավ
Նոյան տապանը, երբ հեղեղի ջրերը սկսեցին ցամաքել:
Ասորեստանյան արձանագրություններում այն կոչվում է
Ուրարտու, որն արդի Հայաստանն է»[14]:***

Արարատ անվանումը տարբեր աղբյուրներում տարբեր նշանակություն է ստանում. մի տեղ այն հանդես է գալիս որպես երկիր, մյուսում՝ գավառ, իսկ հաջորդում՝ որպես լեռ: Ըստ Ագաթանգեղոսի, Ղազար Փարփեցու, Եղիշեի և այլոց՝ Արարատ ասելով՝ նկատի են ունեցել Հայաստանի գավառներից մեկը, սակայն առավել այն հասկացվել է որպես ամբողջ Հայաստան երկիրը:

*Հայաստանի ամենահին անվանումներից մեկը շումերական արձանագրություններում Արատտան է: Այդ ժողովրդի ավանդությունն հարևանությամբ գտնվող Արատտա երկրի բնակիչներին մեծարում է այսպես. **«Նրանք կանգնեցին Ջրհեղեղի մեջ այն ժամանակ, երբ Ջրհեղեղը սրբեց ամեն բան»[15]:***

Հրեական ձեռագրերում Հայաստանը կոչվել է Արարատ, ասորական արձանագրություններում՝ Ուրարտու, հայկական աղբյուրներում՝ Այրարատ:

Ակնհայտ է, որ Հայաստանի անվանումը տարբեր երկրներում գրեթե միանման է հնչել՝ աննշան տարբերություններով, ինչը հուշում է, որ Արարատը ոչ թե լեռան անվանումն է, այլ երկրի:

---

[12] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 271-273:

[13] Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000, ст. 17.

[14] Փեթ Ալեքսանդր, Աստվածաշնչի հանրագիտարան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն, Երևան 1999 թ., էջ 255:

[15] Gohen S., Enmerkar and the Lord of Arata, Ann Arbor, 1973, 2. 140.

Թե՛ ըստ Աստվածաշնչում, թե՛ միջագետքյան երկրների ավանդություններում տապանը հանգրվանել է Հայաստանում՝ Արարատ – Արատտա - Ուրարտու երկրում՝ նրա բազմաթիվ լեռներից մեկի վրա:

Սուրբ Գրքում Արարատ անվանումը հիշատակվում է հինգ անգամ, որոնցից չորսում այն վերաբերում է երկրին և միայն մեկում՝ լեռանը, որն էլ ըստ որոշ հետազոտողների՝ նորից պետք երկիր հասկանալ:

*Սիմոն Վեբերն իր «Արարատը Սուրբ Գրոց մեջ» աշխատությունում մի ամբողջ գլուխ է նվիրել այս խնդրի պարզաբանմանը, ինչից եկել է հետևյալ եզրահանգմանը. **«Եսայի 37:38-ում Արարատը երկիր է կոչվում, նույնն է նաև Թագավորությունների մեջ: Երեմիան Արարատի թագավորության մասին է խոսում, և որպեսզի չկարծես, թե Մննդոցին հետագա գրքերի հետ կապող կամուրջը բացակայում է, Տովբիթը, բովանդակության կողմից միաբանվելով Եսայու և Թագավորության հետ, իսկ լեզվի կողմից՝ Մննդոցի հետ, գրում է. «նրանք փախան Արարատյան լեռները»:***

Սուրբ Գրքում չորս տեղ Արարատ անունը երկիր է մեկնվում, և դա ենթադրել է տալիս, որ առաջին անգամ հանդիպած տեղն էլ (Մննդոցում Արարատ ասելով) երկիր նկատի ունի:

Սրա վրա հիմնվելով՝ Սուրբ Գրքի մեկնիչներն ասում են. «Արարատը Հին Կտակարանի մեջ երկրի անուն է» [16]... Արդ, արդարացի՞ է Արարատը Հայաստան թարգմանելը... Հստակ երևում է, որ Հայերն էլ Արարատ ասելով հասկանում էին ամբողջ երկիրը...

Վերոհիշյալ նկատողություններով եկանք այն եզրակացության, որ Սուրբ Գրքում Արարատը երկու իմաստ ունի. մեկը նշանակում է ամբողջ Հայաստան երկիրը, իսկ մյուսը՝ որպես նրա նահանգներից մեկը»[17]:

Այսպիսով, տապանակիր լեռն այլ երկում փնտրելն անիմաստ է: Դրա համար ոչ մի հիմք չկա: Միակ վայրը, որտեղ այն պետք է փնտրել, Արարատյան երկիրն է՝ Հայաստան աշխարհը:

Արարատ անվան ստուգաբանությունը

«Երբ իրիկնադեմին ցրվում է տաք մշուշը, հորիզոնում վերջալույսի ցոլքերի մեջ երևում է Արարատը՝ Բիբլիական լեռը՝ Նոյի հանգրվանը՝ Հայաստանի փառքի և անցյալ անվերջ փորձանքների դարավոր վկան»[18]:

Թեև մեկնիչները տարբեր իմաստներ են վերագրում Արարատ անվանը, սակայն բոլորն էլ համակարծիք են, որ այն մեծ խորհրդավորություն ունի.

«Շոլցը Արարատ անվանումը հավանաբար վերագրեց Այրարատին (երկ-

---

[16] Hoberg, Die Cenesis. Freiburg, 1899. S. 85.

[17] Սիմոն Վէբեր, Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901, էջ 12-13, 17-18, 19:

[18] Անատոլի Մակարով, Յոթ գարունների երկրում, գիրք II «Պահապանները», Երևան 1983, էջ 556:

րին), և այն «սուրբ երկիր» թարգմանելը հնարավոր համարեց։ Գոշեն Այրարատը մեկնեց որպես արիվարտայե (ժողովատեղի արեաց)։ Իսկ Հումմելաուերը Շրադերին հետևելով՝ ասում է. «Արարատը նույնն է սեպագիր արձանագրություններում Ուրարտուի կամ Ուրտուի հետ...և, ըստ ստուգաբանության, նշանակում է լեռնային երկիր»։ Ըստ Շպիգելի՝ Արարատ նշանակում է ամբողջ աշխարհը պատող դյուցալեռ։ Արարատը թե՛ երկրի անուն հասկացողը և թե՛ լեռան անուն մեկնողը կարող է ըստ այդմ ստուգաբանական հենարան գտնել, քանի որ այդ ստուգաբանությունների հիմքը՝ Արարատ բառը, թե որ լեզվին է պատկանում, հիմնավոր չի կարելի ասել։ Արարատ անվան առաջին հիշատակության հետ կապված պարագաները ենթադրել են տալիս, որ այն ասորեստանյան բառ չէ, թեպետ հնարավոր է, որ ասորեստանցիների կողմից փոփոխության ենթարկված լինի։ Ինչո՞ւ ամենահին տեղեկության մեջ, որում ասորեստանցիները Արարատ անունը կրող երկրի մասին են խոսում, Արարատ անունը չի հիշատակվում, այլ այդ երկիրը պարզապես Նաիրի է կոչվում։

Մտածելու տեղիք է տալիս այն, որ Արարատը հայերենում, եբրայերենում և հունարենում գրեթե նույն կերպ է հնչում և որ առանց ասորեստանյան և բաբելական միջնորդության՝ դրանք մտել են նույն լեզուների գանձարան. այնպես, որ կարելի է ենթադրել, թե Արարատ բառի արմատը ո՛չ ասորեստանյան լեզվից է և ո՛չ էլ բաբելական» [19]։

Իսկ թե ո՞ր լեզուն է ի զորու բացահայտել Արարատ անվան իրական իմաստը, բնական է, որ դրա պատասխանը պետք է փնտրել նույն երկրում, որն իր վրա կրում է այդ անվանումը, և խնդրի պատասխանը գտնել այն լեզվում, որով այնտեղ խոսում են։

«Արարադ /Արարատ/ անունը հայ պատմագրության մեջ հիշատակված հայոց հնագույն երկրանունն է։ Անունն իր արար և ատ բաղադրիչներով թույլ է տալիս ենթադրել, որ այս երկրանունը կապ ունի արարչագործության ու մարդու արարման հետ։ Արարատ անվան առաջին՝ արար բաղադրիչը, հենց արարել, ստեղծել իմաստն ունի։ Անվան ատ բաղադրիչը տեղանվանակերտ մասնիկ է (հմմտ. Տանբատ, Շաղատ, Նպատ, Որդուատ, նաև բացատ, անապատ, հեղեղատ, խորխորատ)։ Հետևաբար, հայոց հնագույն ԱՐԱՐԱՏ երկրանունն իր ծագմամբ ու հնչողությամբ հայկական է և արարելու, ստեղծելու վայր, տեղ իմաստն ունի։ Կարևորվում է հատկապես այն հանգամանքը, որ Հին Կտակարանում վկայություններ կան արարչագործության, երկրային Դրախտի, համաշխարհային Ջրհեղեղի, Արարատ լեռան ու մարդկային ցեղի փրկության մասին։ Հստակորեն մատնանշվում է, որ արարչագործության, Դրախտի, ինչպես նաև համաշխարհային Ջրհեղեղից մարդկային ցեղի փրկության երկիրը Արարատի երկիրն է՝ Հայաստանը» [20]։

---

[19] Սիմոն Վէբեր, Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901, էջ 3-4, 6:

[20] Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 18, 23:

Արարատը որպես լեռ

«Երևանը հետևում թողնելուց հետո մենք անցանք ընդարձակ ու հարթ Արարատյան դաշտավայրով, որտեղ մեր աջ կողմում վեր էր խոյանում հեռավոր ձյունապատ Արարատ-Մասիսի գագաթը (5,165 մ.)՝ սավառնելով մշուշապատ ամպերից վեր՝ նման երկնքից իջնող Նոր Երուսաղեմին»[21]:

*Հնուց շատերի մոտ ձևավորվել է կարծիք, որ Արարատ անվան տակ պետք է հասկանալ տապանակիր լեռ: Սակայն, պարզվում է, որ Արարատը ոչ թե տապանակիր լեռան անվանումն է, այլ երկրի, որը միայն հետագայում վերագրել են նաև լեռանը: **«Իսիդոր Սիվիլիացին 7-րդ դարում «Սկզբնավորության» 14-րդ Թղթի 8-րդ գլխում գրում է. «Արարատը Հայաստանի լեռներից է, որի մասին պատմությունը վկայում է, որ Ջրհեղեղից հետո նրա վրա է նստել տապանը»: Այս մասին են գրում նաև բազում այլ հեղինակներ»[22]:***

«Այնուհետև տեղի ունեցավ համաշխարհային Ջրհեղեղը, որ ուղարկվեց վերին աստվածների կողմից՝ Ադամի սերունդների վրա և ոչնչացրեց նախկին աշխարհը: Ողջ մնացին միայն բարեպաշտ Նոյը և իր ընտանիքը, նրանք տապան կառուցեցին, որպեսզի փրկվեն Ջրհեղեղի ալիքներից: Ջրհեղեղից հետո տապանը կանգնեց Արարատ լեռան գագաթին»[23]:

«Պատիժն իրագործելուց հետո Աստված պատվիրեց ծովերին՝ անդունդ մտնել, և անձրևին՝ դադարել. և ջրերը սկսեցին հետ քաշվել: 115 օրեր հետո նրանք զգալիորեն քչացան, և տապանը կանգ առավ Հայաստանում գտնվող Արարատ լեռան վրա»[24]:

Տեսնում ենք, որ ամեն ինչ խոսում է այն մասին, որ Տապանը գտնվել է Հայաստանում և նստել Արարատ լեռան գագաթին: Սակայն ինչպես Դրախտի պարագայում մեկնիչները համաձայն էին, որ այն գտնվում է Հայաստանում, բայց տարակարծիք էին, թե Հայաստանի հատկապես ո՞ր մասում, այդպես էլ՝ տապանակիր լեռան հարցում:

Մեծ հեղինակություն վայելող մեկնիչներից ոմանք տապանի հանգրվանատեղ համարել են Հայաստանը՝ չնշելով լեռան անունը: Նրանց թվում են Հովսեփոսը, Եվստաթիոս Անտիոքացին, Եվսեբիոսը, Հովհան Ոսկեբերանը, Թեոդորիտոսը և այլք:

Հիմնական կարծիքները բաժանվում են երկու մասի: Խնդիրը նրանում է, որ Հայաստանի տարածքում կան երկու լեռներ, որ Արարատ են անվանվում: Մեկը Բյուրակնի՝ Եդեմի տեղանքից դեպի արևելք գտնվող Մեծ Մասիսն է, իսկ

---

[21] Մետրոպոլիտ Սերաֆիմ Գլասթոնբերի (Բրիտանական Ղպտի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ), Ճանապարհորդություն դեպի Արցախ, Երևան 2008, էջ 4:

[22] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 273:

[23] Дэвид Рол, Генезис цивилизации откуда мы произошли..., Москва, 2005, ст. 59.

[24] Библейско-Биографический словар, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Мвсква 2001, ст. 594:

մյուսը՝ Հայաստանի հարավում գտնվող Կորդվաց լեռներից մեկը: Այս երկու լեռների հարցում է հիմնական տարակարծությունը.

«Գալով փրկարար տապանի հանգրվանին՝ նշենք, որ թե՛ հին հեղինակները և թե՛ սերնդեսերունդ փոխանցված ավանդազրույցները մատնանշում են իջման երկու շրջան՝ Հայաստանի հարավը (Կորդվաց լեռներ) և լեռնաշխարհի կենտրոնում գտնվող Մեծ Մասիս-Արարատը: Սկզբնաղբյուրների մի խումբ էլ պարզապես նշում է, որ փրկության նավն իջել է Հայաստանի լեռներում՝ առանց որոշակիացնելու տեղը: Երեք դեպքում էլ վկայվում է հնագույն առաջավորասիական հոգևոր ընկալումներում Հայաստանի հանդես գալն՝ իբրև մարդկության վերածննդի երկիր, նոր մարդկության հայրենիք»[25]:

Կորդուք

«Հայաստանի տարածքի Արարատ լեռը (Մասիսը) ընդհանրապես համարվում է Սուրբգրային Արարատը՝ տապանի լեռը. նրա մասին առաջին անգամ հիշատակվում է Մննդոց գրքում»[26]:

Գերիշխող է այն տեսակետը, որ տապանը հանգրվանել է Մասիս լեռան վրա: Սակայն ինչպե՞ս բացատրել, որ մեկնիչներից ոմանք տապանակիր են համարում Կորդվաց լեռները.

«Մեր հարավային հարևան ժողովուրդները՝ քրիստոնյաները և հեթանոսները, ինչպես նաև նախնի սուրբ հայրերից շատերը, Կորդվաց լեռներին են պարգևում տապանի իջման պատիվը, և նրանցից շատերն էլ այն Արարատյան լեռներ անվամբ են ճանաչում» [27]:

Կորդվաց լեռների տապանակիր լինելու մասին մեզ վկայություններ են հասել դեռևս հեթանոսական շրջանի հեղինակներից: Այդ վկայությունները պետք է, որ ամրապնդեին Կորդուքի՝ տապանակրի լեռ լինելու դիրքերը, սակայն դրանց ավելի մանրամասն ծանոթանալիս՝ կտեսնենք, որ դա ընդամենը թյուրըմբռնման արդյունք է.

«Այս Ջրհեղեղի և տապանի մասին հիշատակում են բոլոր նրանք, ովքեր գրել են մինչև հրեական պատմությունը: Դրանց թվին է պատկանում քաղդեացի Բերոսոսը: Իր աշխատություններից մեկում նա հետևյալ կերպ է պատմում Ջրհեղեղի մասին. «Ասում են, որ դեռևս Հայաստանի Կորդվաց լեռներում պահպանվել են այդ տապանի մնացորդները, և որ ոմանք ձյութ են պոկում դրանից և պահում իրենց մոտ՝ որպես թալիսման հիվանդությունների դեմ»[28]:

---

[25] Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ. էջ 31:

[26] Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852, ст 238.

[27] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 43:

[28] Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000, ст. 17.

*Ալեքսանդր Բազմավեպը (Պոլիստոր, մ.թ.ա. I դար) նույնպես այդ տեսակետի կողմնակիցն է. **«Եվ այն նավի մասունքները, որը կանգնեց Հայաստանում, ասում են՝ մինչ օրս դեռ գտնվում են Կորդվաց լեռներում»**[29]:*

*Քրիստոնեա մեկնիչների մեջ էլ կան Կորդվաց լեռների կողմնակիցներ, ինչպես 9-րդ դարի հայ մատենագիր Թովմա Արծրունին. **«Աստվածային հրամանը կատարվելուց հետո ալեծուփ ջրերը տապանը բերեցին Միջերկրայքի արևելքը, և այն նստեց Կորդվաց լեռներին»**[30]:*

Կորդվաց լեռների վերաբերյալ կարծիք ձևավորողները հիմնականում Հայաստանի հարավային հարևաններն են եղել: Մեծ Հայքի հարավային կողմում գտնվող Կորդվաց լեռները Հայաստանը բաժանում են միջագետքյան երկրներից, որի բնակիչների՝ աքքադացիների, ասորիների և շումերների համար այդ լեռնաշղթան Հայաստանի խորհրդանիշն էր: Նրանք չեն կասկածել, որ տապանը Հայոց լեռների վրա է հանգրվանել, սակայն քանի որ իրենց համար տեսանելի են եղել Հայաստանի Կորդվաց լեռները, այն համարել են ամենաբարձր և տապանակիր լեռ և նույնիսկ այդ լեռնաշղթայի գագաթներից մեկն էլ անվանել են Արարադու:

Սուրբ Գիրքը և Կորդվաց լեռները

***«Քաղդեացիք և ասորիք բնակվելով անլեռ և ոչ բարձրադիր երկրի Մեջ՝ բնական է, որ իրենց ամենամոտ և սահմանակից լեռը պետք է համարեին տապանակիր. և զարմանալի չէ, որ Սուրբ Գրքի զգուշավոր թարգմանիչներն էլ Արարատի փոխարեն Կորդվաց լեռներ են գրել»**[31]:*

Դարերի ընթացքում Աստվածաշունչ մատյանը թարգմանվել է տարբեր լեզուներով: Հավանաբար, ըստ տվյալ լեզվի առանձնահատկությունների, նոր ի հայտ եկած պատմական տվյալների և այլ պատճառներով թարգմանություններում որոշ բառեր, անվանումներ բնօրինակից տարբերվել են:

Տապանի իջման տեղի դրվագը որոշ թարգմանություններում ևս փոփոխությունների է ենթարկվել: Արարատյան լեռները, որ Սուրբ Գրքի բնագրում այդպես էլ կոչվում են, մի շարք տեղերում դառնում են «Կորդվաց լեռներ»:

*Սակայն մասնագետների մոտ հիմնականում անընդունելի տարբերակ է «Կորդվաց լեռներ» թարգմանությունը. **«Կաթոլիկ մեկնիչ Դիլը կարծում է, թե Կորդուքի ավանդությունն ընդհանրապես Աստվածաշնչյան լեզվի մեջ հիմք չունի, և թվում է, թե բաբելական զրույցներից է վերցված»**[32]:*

Հետագայում Դիլի այս կարծիքը հաստատվեց, երբ գտնվեցին Կումարյան ձեռագրերը, որոնց հինավուրց բնագրում ոչինչ չի ասվում այդ լեռների մասին.

---

[29] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 272:

[30] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1978, էջ 42:

[31] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 45:

[32] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947թ. էջ 22:

«Կորդվաց լեռների հիշատակությունն առկա է նաև Ս. Գրքի ասորերեն «Պեշիտտա» կոչվող թարգմանությունում[33], ինչը վկայում է այն մասին, որ ասորական միջավայրում ձևավորվել էր մի պատկերացում՝ Կորդվաց գավառի Հայոց լեռներին տապանի իջման մասին, ինչն արտացոլվել է նաև որոշ հույն և հայ պատմիչների երկերում: Նույնիսկ այսպիսի պատկերացման դեպքում տապանի իջման վայրը նշվել է Հայկական լեռնաշխարհում... Բայց 1947թ. Մեհյալ ծովի մերձակայքում՝ Կումրանում, գտնված եբրայերեն ձեռագրերը ցույց են տալիս, որ Աստվածաշնչի ասորերեն թարգմանությունը միտումնավոր կեղծված է»[34]»[35]:

Նշենք, որ Հայաստանի հարավային կողմում գտնվող այդ տարածքը հետզհետե լցվեց քուրդ բնակչությամբ, ինչի հետևանքով վերջին շրջանի ուսումնասիրողներից ոմանք Կորդվաց աշխարհի այդ լեռնաշղթան սկսեցին անվանել նաև քրդական լեռներ.

«Առաջին հիմնավոր տեսակետը, ըստ որի՝ իբրև թե Նոյի տապանը կանգնել է քրդական լեռների վրա, դա Աստվածաշնչի քաղդեական Ինքելոսյան թարգմանությունն է: Բայց առավել վստահել թարգմանությանը, քան Աստվածաշնչի բնագրի սուրբ տեքստերին, բացահայտ աններելի անարդարություն է...

Իսկ ինչ վերաբերում է արաբական թարգմանությանը, որն Արարատյան լեռները փոխարինում է քրդականով, ապա այն, ինչպես հայտնի է, հանդիսանում է քաղդեական տեքստի պարաֆրազ և ի հայտ է եկել Քրիստոսից հետո՝ 9-րդ դարից ոչ շուտ: Նոյան տապանի մասին այսպիսի նոր և անհաշվետու վկայությունը մի՞թե կարող է ինչ-որ ուժ ունենալ»[36]:

Կորդուքը որպես երկիր

«Հայաստան աշխարհում կան Կորդվաց անվամբ լեռներ,
որոնք հռչակավոր են որպես Հայոց աշխարհի լեռներ,
այդ պատճառով էլ (օտարները) կոչում են Հայոց լեռներ,
և հնարավոր է, որ Կորդվաց լեռների ինչ-որ մաս նկատելով՝
այն համարել են Արարատ մեծ լեռը (Մասիսը)»[37]:

Ինչպես Արարատն է դիտվում թե՛ որպես լեռան և երկրի անուն, թե՛ որպես այդ երկրում գտնվող մի գավառի, նույնն է նաև Կորդուք անվան պարագայում:

Տպավորություն է ստեղծվում, թե Կորդուք ասելով՝ հասկանում ենք ընդա-

---

[33] Տե՛ս Հ. Գ. Մելքոնյան, Հայ-ասորական հարաբերությունների պատմությունից, Երևան, 1970, էջ 82:

[34] G. Abgarjan. Selbstbild der Armeniet. Bild der Armenier in Deutsechland. – "Europaische Hochschulschriften", Reihn 21, Berlin, 193, Bd. 123, S. 104-105.

[35] Էդուարդ Դանիելյան, Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը, Աստվածաշնչյան Հայաստան, Երևան, 2005, էջ 155-156:

[36] Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852, ст 240-242.

[37] Միքայել Չամչյան, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985, էջ 150:

մենը մի լեռնաշղթա՝ Կորդվաց լեռները: Սակայն իրականությունն այլ է. Կորդուքը ոչ թե լեռնաշղթայի անվանում է, այլ Հայաստանի նահանգներից մեկի, որի մեջ է գտնվում տվյալ լեռնաշղթան: Այն նույնիսկ հստակ անվանում չունի. պարզապես Կորդուք գավառում գտնվելու պատճառով է կոչվում Կորդուքի կամ Կորդվաց լեռներ.

«Մովսես Խորենացու անունը կրող աշխարհագրությունը Կորդուքը Հայոց աշխարհի մի մաս է համարում: Փավստոսը նույնպես Կորդուքը Հայաստանի մաս է համարում: Տրդատի իշխանության ժամանակ Կորդվաց իշխանը հայոց իշխանների կարգում է ներկայացվում»[38]:

«Մեծ Հայքի 15 աշխարհներից մեկն էլ համարում էին Կորճայքը, որտեղ էլ գտնվում են Կորդվաց գավառն ու լեռները»[39]:

Տեսնում ենք, որ Կորդուք ասելով՝ նկատի են ունեցել թե՛ Հայոց գավառներից մեկը, թե՛ լեռնաշղթան: Սակայն ստորև կտեսնենք, որ երբեմն էլ Կորդուք անվան տակ հասկացել են ամբողջ Հայաստանը, ինչպես Արարատի դեպքում.

«Հայաստանի մեծ լեռը՝ Արարատը, որտեղ հանգրվանեց Նոյան տապանը, հայտնի է, քանզի Մննդոց Գրքի 8:4-ում ասորական և լատինական թարգմանության մեջ այն կոչվում է Արմենիայի լեռ.., իսկ քաղդեական ու արաբական թարգմանությամբ այն կոչվում է Կորդվաց: Նույնպես Դ Թագավորաց 19:37, Եսայի 37:38 և Երեմիա 51:27-ում Արարատյան աշխարհը (երկիրը) փոփոխակիորեն ոմանք Արարատ են կոչում, ոմանք՝ Արմենիա, ոմանք էլ՝ Կորդվաց»[40]:

*Այն, որ Կորդուքը հնում հասկացվել է նաև որպես ամբողջ Հայաստանը, Սիմոն Վեբերը նկատել է Եփրեմ Ասորու մոտ ևս. **«Նա Կորդուքը, Արարատն ու Հայքը նույնացնում է»[41]:***

Փաստորեն, հին միջագետքյան ժողովուրդները «Կորդվաց լեռներ» ասելով՝ նկատի են ունեցել ոչ թե Հայաստանի հարավում ընկած նահանգի լեռները, այլ ընդհանրապես ողջ Հայաստանի լեռները: Ուրեմն, երկու դեպքում էլ, թե՛ Արարատյան լեռներ, թե՛ Կորդվաց լեռներ ասելով, պետք է ընդունել, որ խոսքը ոչ թե հստակ մի լեռան, այլ ընդհանրապես Հայոց լեռների մասին է: Ուստի, «Արարատյան» և «Կորդվաց» լեռներ անվանումները միևնույն նշանակությունն ունեն. դրանք ուղղակի պետք է հասկանալ Հայոց լեռներ:

---

[38] Սիմոն Վեբեր, Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901, էջ 75:

[39] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 45:

[40] Միքայել Չամչյան, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985, էջ 150:

[41] Սիմոն Վեբեր, նույն տեղում:

Մասիս - Արարատ

«Ով տեսել է Արարատը՝ «Սուրբ լեռը», գիգանտ, որի վեհությունը վեր է մարդկային ամեն երևակայությունից, ապա կարծում եմ, ինչպես ես, նա էլ կզգա, որ միայն սա կարող էր լինել այն գագաթը, որի վրա կանգնեց տապանը՝ նոր մարդկության բնօրրանը»[42]:

Այժմ տեսնենք, թե ի՞նչ հիմնավորումներ կան՝ կապված Մեծ Մասիսի՝ տապանակիր լեռ համարվելու հետ:

*Հետազոտողներից ոմանք պնդում են, թե Մասիսի շուրջ ավանդություններ համեմատաբար նոր են, և միայն 11-րդ դարից հետո է այն հիշատակվում՝ որպես Նոյի տապանի լեռ. **«Ըստ էության, այն մասին, որ Նոյի տապանը զուգակցվում է Արարատ լեռան հետ, մենք իմանում ենք միայն այն ժամանակ, երբ այդ երկիր էր գնացել Վինսետ դե Բովեն՝ ենթադրելով, որ տապանը գտնվում է Արաքս գետի մոտակայքում: Այդ տեսակետն էին պաշտպանում նաև այլ ուխտագնացներ՝ հատկապես եղբայր Ուիլյամ Ռուբռուկը (13-րդ դար), Օդորիկը (մոտ. 1286-1331) և այնպիսի նշանավոր ճանապարհորդ, ինչպիսին է Մարկո Պոլոն (1234-1324): Պետք է հստակորեն հասկանալ, որ այս վայրերի բնակիչները, չէ որ, բացառությամբ հայերի (քրիստոնյա), չեն համարում, որ այս հսկայական կոնը (Մասիսը), ինչը մենք Արարատ ենք կոչում...այն վայրն է, որտեղ հանգրվանեց Նոյի տապանը»[43]:***

Ի հակաճառություն Ռոլի՝ կարող ենք ասել, որ այս լատին ճանապարհորդները կարող էին գնալ Կորդվաց լեռների և ոչ թե Մասիսի կողմը, եթե իշխող կարծիքն այն լիներ, որ տապանը Կորդուքում է հանգրվանել: Չէ՞ որ նրանք պատահական մարդիկ չէին և, ճանապարհ ընկնելուց առաջ, պետք է ուսումնասիրած լինեին այն նյութերը, որոնք վերաբերում էին տապանակիր լեռանը: Մասիսի ուղղությամբ գալն արդեն իսկ ապացուցում է, որ հնում ավանդություն է եղել հենց Մասիսի վերաբերյալ, ինչին տեղեկանալով՝ նրանք իրենց ճանապարհն ուղղել են Մասիսի կողմը, այլ ոչ թե Կորդուքի:

Ինչ վերաբերում է նրան, որ այդ շրջանում միայն հայերն էին Մասիսը տապանակիր լեռ համարում, դա բնական է և պակաս հիմնավորում չէ, քանզի նրանք այս տեղանքի բնիկներն են:

*Նման տրամաբանությամբ է առաջնորդվում նաև Ինճիճյանը, երբ ասում է. **«Բնիկ հայոց ազգի վկայությունն առավել է բոլորից»[44]:***

Իսկ մոտակայքում բնակվող այլակրոն ժողովուրդներից պարսիկները, որ հին ժամանակներից բնակվում են այդ տարածքներում, հակառակ թրքալեզու ազգերի, Մասիսն են համարում Նոյան տապանի լեռը:

Ճիշտ է, հայերն ամուր են կանգնած իրենց կարծիքին, սակայն նրանց մեջ

---

[42] Барон Август фон-Гакстгаузен. Закавказский Край. Санкпетербург, типография ... Ваенно-ученымь Заведениям 1850 г., Ст. 161-162.

[43] Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005, ст. 166.

[44] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 279:

*էլ կան Կորդվաց լեռների կողմնակիցներ: Նրանցից Վահան Ինգլիզյանը մի ամբողջ աշխատություն է նվիրել դրան. **«Եթե XI-XII դդ. առաջ Մասիսի ավանդությունն ընդհանրապես գոյություն ունեցած լիներ, այդ ժամանակ, վստահաբար, այդքան երկար դարերի վկայությունը մեզ հասած կլիներ, որովհետև այդ ժամանակաշրջանի մի շարք մատենագիրներ կրկին ու կրկին անգամ Նոյի, Ջրհեղեղի և տապանի մասին են խոսում, բայց նույնիսկ ամենաչնչին կերպով չեն ակնարկում, թե ո՞ր լեռան վրա է իջել տապանը: Այս պարագան անկարելի է ըմբռնել, երբ տեսնում ենք վեհափառ Մասիսին, որ հին դարերից արդեն զանազան առասպելների օրրան ու միջնակետ է դարձել, և իր ներկայությամբ բոլորին Մասիսի ավանդությունը պիտի հիշեցներ, եթե նման ավանդություն գոյություն ունեցած լիներ:***

Նույնիսկ Ծննդոց 8:4-ի հայերեն թարգմանությունն այդպիսի ավանդությանը հակառակ է: Եթե Սուրբ Գրքի հայ թարգմանիչները Մասիսի ավանդության մասին գեթ աղոտ գաղափար ունեցած լինեին, այդ ժամանակ** ta Ararat**-ը Այրարատ նահանգի հետ համեմատելով՝ ոչ թե միայն «Այրարատ»-ով կթարգմանեին, այլ հակիրճ կերպով «ի լերինս Մասեաց». սա ընթերցողների համար շատ ավելի պարզ և հասկանալի կլիներ և միաժամանակ ամբողջությամբ կարտահայտեր իր իմաստը:

Այսօրվա մեր ձեռքի տակ եղած հայ մատենագրությունը հիմք ընդունելով՝ 11-րդ դարից առաջ Մասիսի ավանդության գոյության մասին այլևս խոսք անգամ լինել չի կարող»[45]:

*Ինգլիզյանն իբրև թե իր կարծիքի հիմնավորում՝ հիշատակում է Մասիսի վերաբերյալ Հովհաննես Երզնկացու (13-րդ դար) խոսքը. **«Արարատյան լեռների բարձրագագաթ Մասիսը տապանի հանգրվանելու վայրն է»** [46]: Ապա եզրակացնում է, թե ըստ Գելցերի՝ Երզնկացու այս խոսքը իբր Մասիսի մասին առաջին վկայությունն է: Սակայն Երզնկացին Հայոց աշխարհում մեծ հռչակ վայելող վարդապետ էր և իրեն թույլ չէր տա՝ թյուր կարծիք հայտնել: Ընդհակառակը՝ նման մեծ հեղինակության խոսքը ևս պետք է համարել ապացույց, որ Մասիսն ավանդաբար համարվել է տապանի իջման վայր. **«Ըստ Մուրադի՝ Հովհաննես Երզնկացին հետևյալով ցանկանում է ապացուցել, որ տապանակիր լեռը Մասիսի հետ նույնացնելը հնուց ընդհանուր ճանաչում գտած իրողություն է»** [47]:*

*Եվ այդպես էլ կա. հնուց եկած ոչ սակավ վկայություններ կան այդ մասին: Որ Մասիսն է եղել տապանի լեռը, այդ մասին տեղեկություն կա նույնիսկ 5-րդ դարի տիեզերական եկեղեցու տասներկու վարդապետներից Եպիփան Կիպրացու՝ Ծննդոց գրքի մեկնության մեջ, որտեղ տապանի մասին ասում է. **«Այն հաստատվեց Արարատյան լեռների վրա, որ Մասիսն է»** [48]:*

---

[45] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947, էջ 41-42:

[46] Սոփերք Հայկական, Ե, ներբողեան ի Ս. Գրիգոր Լուսաւորչի, Վենետիկ, 1853-1861, էջ 124:

[47] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան... էջ 39:

[48] Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխ. Հ. Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Էջմիածին 2013 թ., էջ 117:

տանի այն տարածքը, որտեղով հոսում է Երասխը, ասում է. ***«Արարատը Հայաստանի մեջ դաշտային երկիր է, որի միջով Երասխն է հոսում, այն անհավանականորեն բերրի է և տարածվում է մինչև Տավրոսի ստորոտը: Ուստի տապանը, որի մեջ մտնելով՝ Նոյն իր զավակներով փրկվեց, ոչ թե Հայաստանի Արարատ լեռան վրա կանգ առավ, այլ Տավրոսի ամենաբարձր լեռների, որոնք Արարատյան դաշտերի վրա են իշխում»***[49]*:*

Այդ հեռավոր ժամանակներում ճանապարհորդելը դյուրին բան չէր, և երբ գրում էին որևէ երկրի մասին, հաճախ հիմք էին ընդունում ականատեսների նկարագրությունները, որոնք էլ կարող էին անճշտությունների պատճառ դառնալ: Այստեղ Հերոնիմոսը նկարագրում է Արարատյան դաշտավայրը, որի կենտրոնում գտնվում են ոչ թե Տավրոսի լեռները, այլ մեծ Մասիսը: Սրան համամիտ են հետազոտողներից շատերը. ***«Տապանակիր լեռան մասին Հերոնիմոսի տված այս բացատրությունը, բնականաբար, հարմարեցվում է Մասիսի հետ»***[50]*, նաև* ***«անտարակույս, այս ասվածը պատշաճ է Մասիսին»***[51]*:*

Եթե օտարազգի և Հայաստանից բավականին հեռավորության վրա գտնվող վարդապետներն են ասում Մասիսի մասին, ապա պետք է, որ հայաստանաբնակ վարդապետներն էլ այդ մասին գոնե ակնարկեին: Եվ իսկապես՝ հենց 5-րդ դարի հայոց պատմիչ և վարդապետ սբ. Եղիշեն ոչ թե ակնարկում, այլ հստակ գրում է այդ մասին: Նրա «Արարածոց մեկնություն»-ից նկատում ենք, որ տապանակիր լեռան վերաբերյալ այն ժամանակ էլ միակարծիք չէին:

Եղիշեն լինելով նույն երկրից, որտեղ հանգրվանել էր տապանը, քաջածանոթ էր տեղանքին: Նա առանց աղավաղումների հայտնում է տապանակիր լեռան իրական անունը՝ ի տարբերություն այլազգի մեկնիչների. ***«Արարատ լեռը ոմանք ասում են, թե Կորդվաց լեռն է, սակայն ճշմարտությունն այն է, որ նա Մասիսն է»***[52]*:*

Եվ որպեսզի հասկանալի լինի, թե խոսքը տապանակիր լեռան մասին է, շարունակում է. ***«...քանզի երկու գետերով և տապանով բարձր ենք բոլորից: Եվ ի՞նչ օգուտ դրանից: Նախ դա մեզ համար իմաստության պատճառ է՝ անմոռաց պահել Աստծո արարչագործության հիշողությունը, և նորից այնտեղ (Դրախտ) վերադառնալու ակնկալիք ունենալ. նաև երեք բարեխոսներ ունենք Աստծո մոտ (նկատի ունի տապանը և երկու գետերը)»***[53]*:*

Տարածքին քաջածանոթ Եղիշեի խորքային փաստարկները լիովին հերքում են այն պնդումները, թե 11-րդ դարից առաջ Մասիսի անունը չի շրջափվել՝ որպես տապանակիր լեռ:

Մասիսի հետ կապված՝ պահպանվել են նաև հին ավանդազրույցներ.

«Ավելորդ է նաև տապանն ընդունող լեռների մասին մեր ազգակիցների ասածները կրկնելը: Ասենք, որ ջրի նվազելուն զուգընթաց՝ տապանը հանգստի

---

[49] Migne, Patr. Lat. 24, col 403.

[50] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան... էջ 13:

[51] Սիմոն Վէբեր (դոկտր), Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901, էջ 67:

[52] Եղիշէ, Արարածոց մեկնութիւն, Մատենագիրք Հայոց, հ. 1, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 810:

[53] Նույն տեղում:

հարմար դիրքի փնտրտուքով տատանվելով՝ անցել է լեռից լեռ և հասել ներկա-յումս ծանոթ մի լեռան ու ասել. «Գրգո՛ւռ, ընկալ զիս»։ Եվ լսել է պատասխանը. «Գնա՛ ի Մասիս, զի բարձր է, քան զիս» [54]։

*Այս նույն հիշատակությունը մեզ է հասել նաև մեկ ուրիշ տարբերակով, որ-տեղ Գրգուռ լեռան փոխարեն նշվել է Սիփան լեռը. «**Գրավոր աղբյուրներում պահպանվել է Սիփան լեռան (Արարատի մոտ գտնվող) մասին հնագույն երգը։ Սկզբում իբր տապանը հանգրվանել է նրա վրա, և այդ ժամանակ Նոյն ասել է.***

«Սիփան, ընդունիր ինձ, Սիփան, ընդունիր ինձ։

Իսկ Սիփանը պատասխանել է.

Գնա Մասիսի վրա, գնա Մասիսի վրա, որ ինձանից բարձր է»։

Մասիսը հայերի կողմից Արարատ կոչված լեռն է» [55]։

Պետք է ասել, որ այս տարակարծությունները դարերով շարունակվել են։

*14-15-րդ դարերում էլ այդ հարցն առկա էր, և այդ ժամանակաշրջանում կենցաղավարած սբ. Գրիգոր Տաթևացին, դիմելով Եղիշեի օրինակին, բարձրա-ձայնում է իր խոսքը՝ ի նպաստ Մասիսի. «**Իսկ թե ո՞ր աշխարհում է գտնվում տապանը. ասենք, որ Պաղեստինում, Գամրիքում և Կորդվաց լեռներում կան նույնանուն Մասիս և Արարատ լեռներ։ Բայց ճշմարտությունը հայտնապես ցույց է տալիս, որ դա մեր Մասիսն է»*** [56]։

Եվ, ընդհանրապես, Մասիսը տապանակիր լեռ համարողների թիվն ավելին է, քան Կորդվաց լեռներինը.

«Կաթոլիկ մեկնիչ Դիլը... Մասիսին է տալիս առաջնությունը։

Ավելի որոշիչ ու հստակորեն է արտահայտվում Հեգեեանաուերը՝ ի նպաստ Մասիսի ավանդության։ Արարատի աշխարհագրական տարածքը պարզելուց հետո, հետևելով Բրոքհաուսի և Հերդերի հանրագիտարաններին, «Հավետ ձյու-նապատ Արարատ» կամ Մասիս լեռան մասին խոսելուց հետո ավելացնում է. «Թեև սրբազան բնագիրն այն լեռը, որի վրա տապանը կանգ առավ, անվանացի չի հիշատակում, սակայն ուրիշ շատերի հետ այստեղ Մեծ Արարատն ենք հաս-կանում (Շատ եվրոպացիների հետ սա էլ Մասիսը Արարատ է անվանում)։ Այն մարդիկ, ովքեր Աստվածաշնչի բացատրությանը հակառակ՝ համարում են, թե պետք է հասկանալ երկրի այլ մասերի լեռները, սխալվում են։ Հոլցինգերը, Գունկելը, Պրոքչը, կեոնիգը և այլոք միանշանակ Մասիսն են համարում տապա-նակիր լեռ» [57]։

Վահան Ինգլիզյանի նման հետազոտողների պնդումները, թե Մասիսի շուրջ 11-րդ դարից առաջ հիշատակություն չի պահպանվել, ուղղակի զարմանք են պատճառում. նման անձինք պետք է տեղյակ լինեին, որ Մասիսի՝ տապանակիր լեռան ուղղակի և անուղղակի հիշատակությունները եղել են թե՛ 5-րդ դարում, թե՛ Քրիստոսի երկրավոր ծննդից առաջ՝ հեթանոսության շրջանում։

---

[54] Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան 2002, 36:

[55] Шедровицкий Д., Введение в Ветхий Завет, Пятикнижие Моисеево, том 1, книга Бытия, лекция 4. http://www.gumer.info/bogoslov_Buks/bibliologia/schedr/04.php

[56] Սբ. Գրիքոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 508-509:

[57] Դկտ. Վահան Ինգլիզեան… էջ 22-24:

Գիլգամեշ և Նոյ

«Հինավուրց ու կուսական երկնքում մինչև զենիթ էր խոյանում երկսապատ ձյունափառ մի լեռ՝ ծածկելով երկրի մի ամբողջ եզերը և երկնակամարի կեսը: Դա Արարատն էր: Նրա ձյունները, թվում էր, մինչև արևն են հասել: Դրանց փայլն օդը լցրել էր լուսավոր մշուշով»[58]:

Ըստ Գիլգամեշ էպոսի՝ Նոյի տապանը նիսիր լեռան վրա է հանգրվանել, իսկ Նիսիրը մասնագետների կողմից նույնացվում է Հայաստանի հարավային կողմում գտնվող լեռների հետ:

Գիլգամեշը, որ ապրել է մեզանից մոտ 4500 տարի առաջ, մի մեծ նպատակ էր հետապնդում. ճանապարհ ընկնելով դեպի հյուսիս՝ գտնել Նոյ նահապետին, որի միջոցով էլ հույս ուներ՝ իմանալ անմահության գաղտնիքը: Գիլգամեշին Ութնա՝ արևի աստվածը, մանրամասն պատմում է այն ճանապարհի մասին, որը տանում է Նոյի մոտ, ինչը լի էր փորձություններով: Իսկ որտեղ Նոյն էր, բնականաբար, այնտեղ էլ տապանը պիտի լիներ: Անմահություն գտնելու հույսով Գիլգամեշն ուղևորվում է Արատտա՝ այսինքն, Արարատյան երկիր:

Ըստ էպոսի բաբելական տարբերակի՝ Գիլգամեշն անցնում է Մաշու լեռներով և շարունակում իր ճանապարհը: Իսկ թե դրանից հետո ինչ ուղղությամբ է գնում, այդ մասին պատմում է էպոսի խեթական տարբերակը: Վերջինիս համաձայն՝ նա իր նպատակին հասնելու համար ելնում է Եփրատի հոսանքն ի վեր՝ դեպի նրա ակունքները, որ էր Հայաստանի կենտրոնական մասը, ուր գտնվում էր Նոյ նահապետը:

Նախ տեսնում ենք, որ Նոյին հասնելու համար Գիլգամեշը բարձացել է վեր՝ դեպի Եփրատի ակունքները: Իսկ Այդ տարածքը գտնվում է Մեծ Հայքի կենտրոնական մասերում՝ Մասիս լեռան մոտակայքում: Նաև եթե իսկապես Նիսիր ասելով միջագետքյան էպոսը նկատի ունենար Կորդվաց, Մաշու կամ այդ տարածքում գտնվող մի այլ լեռ, ապա Գիլգամեշը շատ շուտ կհասներ և այդքան փորձությունների չէր ենթարկվի՝ հաղթահարելով չափազանց դժվար ու երկար ճանապարհ: Ինչից էլ եզրակացնում ենք, որ Նիսիր ասելով՝ նրանք նկատի են ունեցել Մասիս լեռը, որի շուրջբոլորը լի է Նոյի և Ջրհեղեղի մասին վկայող ապացույցներով.

«Գիլգամեշի էպոսին ավելի շատ համապատասխան է Արարատ (Մասիս) լեռը, քան Նիսիր լեռը: Կեռնինգն ընդունում է, որ այն լեռը, որի վրա տապանը կանգնեց, Մասիսն է, և երկրի անունը (Արարատ) անցավ լեռանը...Բոլոր մեկնիչները առանց խտրության համամիտ են, որ լեռը կոչվում է երկրի անունով»[59]»[60]:

Գիլգամեշը եկավ հենց հանրահայտ Տիգրիս և Եփրատ գետերի ակունքնե-

---

[58] Կոնստանտին Պաուստովսկի, Յոթ գարունների երկրում, գիրք I, «Հազարամյակների Մշուշը» Երևան 1978, էջ 80-82:

[59] Այսպես է գրում Gottfried Hoberg (Die Genesis, Freiburg i. Br. 1908, S. 94):

[60] Դկտ. Հ. Վահան Վ. Ինգլիզեան… էջ 24-26:

րի մոտ, որտեղ էին նաև Փիսոնի և Գեհոնի ակունքները. այսինքն այնտեղ, ուր մինչ Ջրհեղեղը՝ եղել էր Դրախտը: Վերջիններս մոտ էին Արարատ լեռան ստորոտին, որտեղ գտնվում էր Նոյ նահապետը՝ բավական հեռու հարավային կողմում գտնվող Կորդվաց լեռներից:

Դրախտի մասին շումերական ավանդություններն առաջացել էին, երբ Արարատյան երկրից դեպի Սենաար գնալով՝ իրենց հետ հարավային երկրներ էին տարել հիշողությունները (ուր ժամանակի ընթացքում աղավաղված ավանդություններն սկսեցին վերագրել իրենց երկրի նմանատիպ վայրերին):

Նույնն արվեց նաև տապանի լեռան հարցում.

«Մարդկության փրկության սար է համարվում նաև շումեր-աքքադական դյուցազնավեպից հայտնի երկգագաթ Մասու (Մաշու) լեռը, որը նույնացվում է Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում գտնվող Մասիս-Մասիոն (այժմ Տուր Աբդին) լեռների հետ:

Ենթադրվում է, որ շումերները միջագետքի հարավային մասեր են իջել Հայկական լեռնաշխարհի հարավային մասերից՝ տանելով իրենց հետ մշակութային շատ արժեքներ, այդ թվում՝ կրոնադիցաբանական: Անկասկած, նրանք իմացել են հնագույն Սիս ու Մասիս (Մա-սիս՝ «Մայր-սնուցիչ, սնուցող») անունով սրբազան լեռների մասին, և նոր հայրենիքում խոսելով Ջրհեղեղի մասին («Գիլգամեշ» դյուցազնավեպում)՝ անշուշտ, ոչ պատահաբար, տապանի երկգագաթ սարը կոչել են Մասու (Մաշու): Ի դեպ, լեռան գագաթը, որի վրա կանգ է առել փրկարար տապանը, նույն դյուցազնավեպի աքքադական տարբերակում կոչվում է Նիսիր, որը ևս հեռավոր նմանություն ունի Մասիս անվանը: Այսպիսով կարելի է ասել, որ Մասու (Մաշու), նաև Նեխ-Մասիք (Սիփան) լեռների անունների համար հիմք է հանդիսացել հայոց հնագույն սրբազան լեռան Մասիս անունը»[61]:

Բարիս

«Նրա համար, որ Արարատը միայնակ է հարթավայրի կենտրոնում, նա սարսափելի է և զարհուրելիորեն հսկայական. այնպես, որ մեր զինվորները համեմատելով Արարատը կազբեկի հետ՝ ասում են. «Կազբեկն ի՞նչ է որ. երեք Կազբեկ է հարկավոր իրար վրա դնել, որպեսզի Արարատ լեռ ստացվի»[62]:

*Նիկողայոս Դամասկոսցին (ծնված Ք. ա. 64 թ.) նույնպես անդրադարձել է տապանակիր լեռան հարցին: Նա այն համոզումն ունի, որ տապանն իջել է Հայաստանում գտնվող մի հսկա լեռան վրա, այլ ո՛չ լեռնաշղթայի, ինչպիսին Կորդվաց լեռներն են. **«Նիկողայոս Դամասկոսցին իր 96-րդ գրքում այսպես է գրում.***

---

[61] Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 27:

[62] К. Спасский-Автономов. Восход на Арарат, Москва тип. Августа Семена 1839г, ст. 85.

«Մինուասից վերև՝ Հայաստանի մեջ, մի հսկա լեռ է գտնվում Բարիս անվամբ, որի վրա մեծ Ջրհեղեղի ժամանակ շատերն են ապաստանել և այդպես փրկվել: Մեկը տապանով նավարկել է և լեռան գագաթին հասել. այնտեղ երկար ժամանակ մնացել են նավի տախտակների մնացորդները: Գուցե այս նույն բանն է, ինչն ավանդել է Մովսեսը՝ հրեաների օրենսդիրը»»[63]:

Նիկողայոսը տապանակիր լեռանը Բարիս անունն է տալիս՝ ի տարբերություն Բերեսոսի և Ալեքսանդր Բազմավեպի: Սակայն Հայաստանի տարբեր անվանումների շարքում, ինչպես տեսանք, կային Արարատյան և Կորդվաց անվանումները, որոնք հստակ որևէ մի լեռան չէին պատկանում, իսկ Բարիս անունը չի հիշատակվում որպես Հայաստանի անվանումներից մեկը, այլ միայն՝ լեռան: Հետաքրքիր է, որ բացի Մասիս լեռից՝ մյուս բոլորը, որոնք համարվում են տապանակիր, լեռնաշղթաներ են, և միայն Մասիսին է համապատասխան Դամասկոսցու «հսկա լեռ» նկարագրությունը:

Բարիս և Մասիս անվանումների նմանությունն էլ խոսում է Մասիսի օգտին:

«Ջրհեղեղի մասին այս զրույցի կարևորությունն այն է, որ ցույց է տալիս, թե հնագույն ժամանակներից այն համոզումը կար, որ Մասիսն է տապանակիր լեռը: Եթե Նիկողայոս Դամասկոսցու Բարիսը Հայոց Բարձր Մասիսն է հիշեցնում, այդ դեպքում Հայաստանի Մինուաս գավառի վերևում ուրիշ՝ այլ լեռ փնտրելու կարիքը չկա, քանզի Մասիսը Դամասկեցու մատնացույց արած երկրի՝ Այրարատի ամենաբարձր սարն է: Այս կետից էլ կարելի է հետևություն անել, որ հայերի համար առհասարակ նվիրական, պաշտելի Մասիսը մեծ ու բարձր լեռ է, որի շուրջ հյուսվել է զրույցների մի ճոխ պսակ»[64]:

Իսկ թե ի՞նչ իմաստ ունի Բարիս անվանումը և ի՞նչ առնչություն ունի Մասիսի հետ, այդ մասին խոսել են Մուրադը, Սանտալճեանը և այլոք: Ըստ Մուրադի՝ Բարիս անունը Մասիսի մակդիր է, որ նշանակում է բարձր (բարեզ = բարձրություն, բարեզանտ = բարձր), որը հավանաբար պարսիկների միջոցով է տարածվել հարևան ժողովուրդների մեջ: Իսկ Սանտալաճեանը Բարիս անվանը, ըստ ուրարտա-հունական գավառաբարբառի և հելլենական լեզվի, տալիս է «նավակ» նշանակությունը, ինչը հիշեցնում է Ջրհեղեղը, և ենթադրվում է, որ դա Մասիս լեռն է:

Ըստ Միքայել Ջամչյանի՝ Բարիս անվանումը Մասիսի փոխարեն գրվել է թյուրիմացաբար: Իսկ թե ի՞նչն է դարձել պատճառ, որ այդ թյուրիմացությունը տեղ է գտել Դամասկեցու մոտ, կտեսնենք ստորև.

«Սեպագրերում լայն տարածում ուներ բազմանշանակությունը, և** bar **վանկն ընթերցվում էր նաև** mas, par**...Սեպագրից հունարենի թարգմանվելուց, եթե դպիրը չգիտեր լեռան ճշգրիտ անունը, կարող էր տեղի ունենալ վրիպակ, որի հետևանքով լեռնանունը հունարեն թարգմանության մեջ տեղ կգտներ ընթերցման ցանկացած այլ տարբերակով... Հավանաբար, հելլենիստական դարաշրջանում ավանդությունը սեպագիր սկզբնաղբյուրներից թարգմանվել է հունարենի,

---

63 Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000, ст. 17-18.

64 Friedr. Murad, Ararat und Masis, Heidelberg 1901. S. 49.

որի ընթացքում էլ նույնիմաստ սեպանշանների խումբը Masis *ընթերցման փոխարեն տեղ է գտել* Baris *տարբերակով։*

Տեսնում ենք, որ Նիկողայոս Դամասկոսցու «Ընդհանուր պատմության» մեջ տապանակիր լեռան անունն աղավաղված է, և սեպագրագիտական քննությամբ հնարավոր է դառնում վերականգնել նախնական ճիշտ տեսքը՝ Masis*։ Դրա շնորհիվ պարզաբանվում է, որ Ջրհեղեղի մասին հայկական ավանդությունը (որում Մեծ Մասիսն է տապանակիր լեռը) չի ստեղծվել Հայաստանում քրիստոնեության տարածման հետևանքով, այլ հայտնի է եղել դրանից դարեր առաջ և, դուրս գալով հայ իրականության սահմաններից, Ք. ա. 6-րդ դարասկզբից ոչ ուշ՝ գրի է առնվել սեպագիր դպրության կենտրոններից մեկում։ Հետագայում սեպագրից հունարենի թարգմանվելու ընթացքում տեղի է ունեցել գրագրական վրիպակ. ավանդությունը, լեռնանվան աղավաղմամբ, տեղ է գտել Ն. Դամասկոսցու երկում և մեզ հասել Հովսեփոս Փլավիոսի «Հրեական հնախոսության» էջերում»*[65]*։*

ա)	Bar - is	Mas - is
բ)	Ba - ri - is	Ma - si - i s
գ)	Ba - ar - is	Ma - aš - is
դ)	Ba - a'r - is	Ma - a'š - is

Շատերն առանց երկմտանքի համարում են, որ Բարիս անվան տակ պետք է հասկանալ Մասիսը, սակայն հիմնավոր ապացույցների առկայությունն այն առավել ընդունելի է դարձնում. ***«Ավանդությունը ենթադրում է, որ տապանը գտնվում է Հայաստանի կենտրոնում՝ Արարատ լեռան վրա։ Դեռևս Նիկողայոս Դամասկոսցին, որն ապրում էր Օգոստոս կայսեր թագավորության ժամանակ, ցույց էր տալիս այն վայրը, որտեղ հատկապես կանգնել է տապանը։ Այս կարծիքը, որ ամենահիշտն է, թե Հայաստանի կենտրոնում է գտնվում տապանակիր Արարատը, ընդունվել է լատին և հույն եկեղեցու բոլոր հոգևոր հեղինակների կողմից»***[66]*։*

Հնագետների, պատմաբանների և այլ հետազոտողների մոտ չնայած տապանակիր լեռան մասին կարծիքները տարբեր են, սակայն քրիստոնեական եկեղեցիների համընդհանուր համոզմամբ հենց Մասիսն է համարվում տապանակիր, և դա, բնականաբար, հիմնված է հնագույն ավանդությունների վրա։ Եկեղեցիների այս միաբան դիրքորոշումը նույնպես մեծ ապացույց է՝ ի նպաստ Մասիսի, որը, ինչպես և Դրախտը, գտնվում են նույն տեղանքում՝ Արևելյան Կիսագնդի կենտրոնում.

«Ջրհեղեղից հետո մարդկության վերապրումը յուրօրինակ մի նոր արարչագործություն էր, և ոչ պատահականորեն այն տեղի է ունենում մարդկության արարման վայրում՝ Հայկական լեռնաշխարհում։ Պատահական չէ նաև, որ հնում մի շարք ժողովուրդների դիցա-վիպական պատկերացումներում առաջին մար-

---

[65] Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհիր, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000, էջ 50-52:

[66] Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852, ст. 238.

դու ծննդավայրն ու Ջրհեղեղից փրկվելու տեղը համարվել է երկրի պորտը, որտեղ գտնվում էր աշխարհի առանցքը, որը և աշխարհի կենտրոնն էր: Հենց այդպիսի ձևակերպմամբ է պահպանվել Ջրհեղեղի պատմությունը Թովմա Արծրունու մոտ. «Աստվածային հրամանը կատարվելուց հետո ալեծուփ ջրերը տապանը բերեցին արևելք՝ աշխարհի կենտրոն»[67]»[68]:

Նշված տարաբնույթ մոտեցումներից հստակվում է, որ Նոյը տապանը կառուցել է Հայոց լեռնաշխարհի տարածքում՝ Եդեմի արևելյան կողմում: Բազմաթիվ մեկնիչներ հաստատում են, որ տապանը իջել է Մասիս լեռան վրա, ինչից էլ եզրակացնում ենք, որ տապանը չի հեռացել իր կառուցման վայրից, այլ կառուցվելով Մասիս լեռան մերձակայքում՝ Արարատյան դաշտավայրում, լեռան ստորոտից ջրերի հետ վեր բարձրանալով՝ ընդհամենը փոքր-ինչ տեղաշարժվել է և լողալով նստել Արարատի գագաթին.

«Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին: Աստված հողմ բարձրացրեց երկրի վրա, և անձրևը դադարեց: Փակվեցին ստորգետնյա աղբյուրներն ու երկնքի սահանքները, դադարեց նաև երկնքից թափվող անձրևը: Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց՝ այն նվազեց: Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա»[69]:

Մասիսի և նրա շրջակայքի հետ կապված ավանդազրույցները

«Ջրհեղեղը, թվում է, այլևայլ կերպով կա բոլոր հին ազգերի ավանդությունների մեջ, սակայն քիչ կլինի կամ հազիվ թե լինի ազգ, որ բավարար կամ չափավոր հավանականության փաստերով կարողանա ասել, թե այն աշխարհակուլ ջրերից մարդկանց սերունդն ապրեցնող տապանն իր երկրի մի լեռան վրա է դադար առել»[70]:

Հայաստանը հարուստ է ոչ միայն նախաջրհեղեղյան, այլև հետջրհեղեղյան ժամանակները հիշեցնող տեղանուններով ու ավանդազրույցներով: Ըստ մասնագետների՝ Հայոց աշխարհում Ջրհեղեղի հետ կապված այդ տեղեկությունները գալիս են դեռ հնագույն շրջանից, ինչի մասին վկայում են այն հեղինակները, որոնք ապրել են Ն. Ք. հեթանոսական ժամանակներում.

«Ջրհեղեղի մասին հիշողությունները մնացել են աշխարհի ժողովուրդների մեծամասնության մոտ: Հիշատակենք Միջագետքին մոտ գտնվող ժողովուրդների

---

[67] Թովմա Արծրունի և Անանուն, Երևան, 1978, էջ 42:

[68] Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ. էջ 31:

[69] Ծննդոց 8:1-5:

[70] Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 36:

ավանդությունները. օրինակ՝ հայ ժողովրդինը՝ ծագած Բիբլիական Արարատյան երկրում, որը հիշատակվում է Եսայի 37:38-ում, Երեմիա 51:27-ում: Գոյություն ունեն հայկական բազում ավանդություններ՝ կապված Նոյի և Ջրհեղեղի հետ, որոնք մեզ են հասել հեթանոսության շրջանից՝ այսինքն, վերցված չեն Աստվածաշնչից»[71]:

Այն, որ Մասիսին է իրականում Աստվածաշնչյան Արարատը, հաստատում են նաև Ջրհեղեղի հիշողությունը պահող բազմաթիվ տեղանուններն ու ավանդազրույցները.

«Աստվածաշնչի հայերեն թարգմանիչները միշտ հետևում էին «Յոթանասնից» թարգմանության տեքստերին, քանի որ այնտեղ իրենց հայրենիքը ճանաչվում է որպես մարդկային ցեղի բնօրրան: Մինչ օրս Հայաստանի տեղաբնիկները ցույց են տալիս Արարատը և նրա մերձակա վայրերը, որոնք կրում են այն անվանումները, ինչը հիշեցնում է Նոյ նահապետի՝ այնտեղ ապրած լինելը»[72]:

Երևան

Երևան. դեռ քաղաքը չտեսած՝ այն արդեն ընկալել էի իմ ողջ էությամբ: Եթե ամբողջ Երևանում, նրա փողոցներից մեկում կամ որևէ ամայի վայրում միայն ու միայն չորացած խոտի մի մենավոր ցողուն աճեր, այդ էլ բավական կլիներ, որպեսզի ես զգայի այստեղի առասպելականությունը, նրա շնչող հնությունը և ուժը»[73]:

Մասիս լեռան առջև է սփռված Արարատյան դաշտավայրը, որտեղ գտնվում է ներկայիս Հայաստանի մայրաքաղաք Երևանը:

Ըստ ավանդության՝ երբ Նոյը տապանի լուսամուտից առաջին անգամ տեսավ ցամաքը, ասաց «երևան», այսինքն՝ ցամաքը երևան եկավ, երևում է, որտեղից էլ առաջացել է Երևանի անվանումը:

«Արդարև, Մասիս լեռան վրա կանգնած տապանի բնակիչները մեծ բաղձանքով և ուրախությամբ սպասում էին՝ ժամ առաջ տեսնել ցամաքը: Ցամաքի առաջին վայրը տեսնելով՝ նրանք երբեք այն մոռացության չէին մատնի, այլ միշտ կհիշեին և միմյանց ցույց կտային: Ինչն էլ ինքնին պատճառ է հանդիսացել, որ ցամաքի երևման այդ օրը անմոռաց մնա: Ըստ ավանդության՝ Երևանի տարածքն էր, որ առաջինը երևաց տապանից ելնողներին, այդ պատճառով էլ նրանց կողմից կոչվեց Երևան» [74]:

---

[71] Щедровицкий Д., Введение в Ветхий Завет, Пятикнижие Моисеево, том 1, книга Бытия, лекция 4. http://www.gumer.info/bogoslov_Buks/bibliologia/schedr/04.php

[72] Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852, ст 239.

[73] Կոնստանտին Պաուստովսկի, Յոթ գարունների երկրում, գիրք I «Հազարամյակների Մշուշը», Երևան 1978 թ., էջ 80-82:

[74] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր երրորդ, Վենետիկ, 1835, էջ 16:

Երևանը՝ Հայոց 12-րդ մայրաքաղաքը, հռչակավոր է հենց նրանով, որ գտնվում է Մասիս-Արարատի ստորոտում և տապանի բնակիչների աչքին ի հայտ եկած բաղձալի ցամաքն է:



Իսկ թե ինչո՞ւ է հայերեն «երևան» բառը եղել Նոյի շուրթերին, կխոսվի ադամական սկզբնական լեզվին վերաբերող բաժնում՝ այս հատորի չորրորդ գրքում:

Իսկ մինչ այդ՝ շարունակենք անդրադառնալ ավանդական անվանումներին.

«Մինչ օրս գոյություն ունեն անվանումներ, որոնք հաստատում են Սուրբ Գրքի պատմության իրողությունը, որ պատմում են Ջրհեղեղից հետո Նոյի կյանքի մասին. օրինակ՝ Երևան՝ «հայտնություն», դա այն վայրն է, որտեղ Նոյն առաջին անգամ տեսավ ցամաքը»[75]:

Ջրերից ազատված ցամաքի այդ մասի մեջ է եղել նաև այն վայրը, որտեղ գտնվում էր մինչջրհեղեղյան զոհասեղանը՝ սուրբ էջմիածնի տարածքը:

Տապանը եկեղեցու խորհուրդն ունի, իսկ երկիրը պատած ջրերը՝ աշխարհի: Իսկ ցամաքի սբ. էջմիածին - Երևան տարածքը երկնքի արքայության խորհրդանիշ է:

Ինչպես արդեն ասվեց, երկիր մոլորակի վրա առաջին արևածագի վայրը Հայոց աշխարհն է. առաջինը հենց այս տարածքը լուսավորվեց:

Երբ ջրերը ետ քաշվեցին, Նոյ նահապետը առաջինը ցամաքի այն հատվածը տեսավ, որտեղ եղել էր մինչջրհեղեղյան առաջին սրբավայրը:

Երևանն ըստ ուրարտական սեպագրերի՝ մոտ երեք հազար տարեկան է: Բայց նրա հարավային կողմում գտնվող Շենգավիթ հնավայրի պեղումների համաձայն՝ նա ավելի քան հինգ հազար տարվա բնակավայր է և հասնում է մինչև Նոյի օրերը: Դեռ ավելին. քանի որ մինչ Ջրհեղեղ ապրած Սեթի սերունդները (որ Աստծո որդիներ էին անվանված) բնակվում էին հենց այս տարածքում՝ Արարատ լեռան շրջակայքում, ուրեմն, շատ հավանական է, որ Երևանի տարածքը բնակելի է եղել դեռ Ադամի ու Եվայի ժամանակներից՝ մոտ յոթը հազար տարի.

«Նոյ նահապետը կարող է այստեղ բնակված լինել Ջրհեղեղից առաջ, ինչպես որ Եվրոպական առաջին այցելուներից մեկը՝ Շարտենը, լսել է այդ մասին իր հայ բարեկամներից: Քաղաքի անվան ժողովրդական ստուգաբանությունը սա է՝ թե առաջացել է երևալ բայից: Իսկապես, Նոյ նահապետն առաջին անգամ այս վայրը պետք է տեսած լինի: Այստեղ կարող է եղած լինել Նոյի սկզբնական քաղաքի վայրը»[76]:

---

[75] Св. Димитрий Ростовский, Жития святых, Сентябр книга I, Москва 1904, ст 653.

[76] Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Ա հատոր, Կ. Պոլիս, 1913, էջ 137, 154:

Երբ Նոյն ասաց՝ երևան կամ երևաց, գուցե նկատի ուներ նաև այն, որ երևաց հենց իրենց միևչջրհեղեղյան բնակատեղին, քաղաքը՝ ներկայիս Երևանի տեղանքում։

Այսպիսով, Երևանը տարածքում հիշատակված նախաջրհեղեղյան անդրանիկ բնակավայրերից է և, համաձայն այս վարկածի, Երկիր մոլորակի ամենահին քաղաքն է։

Հետջրհեղեղյան առաջին ոստանները՝ Ակոռի, Նախիջևան

«Արարատյան լեռների մեջ, ինչպես նաև նրանք, որ տեսել եմ աշխարհի տարբեր մասերում, ես սրանից փառահեղ ոչ մի լեռ չգիտեմ, որը մի ժամանակ ծառայել է որպես «կամուրջ»՝ հին և նոր աշխարհների միջև»[77]։

Տապանից իջնելով՝ բոլոր փրկվածները նախ հանգիստ առան Մասիսի լանջին, և ըստ ավանդության՝ Նոյն այդ վայրն անվանեց Ակոռի՝ վայր, որտեղ նա տնկեց խաղողի այգի։ Այս տեղը հռչակվեց որպես հետջրհեղեղյան առաջին բնակավայր.

«Բնակիչներն, ըստ ավանդության, ցույց են տալիս նույնիսկ Նոյի այգու տեղը, ինչպես հիշատակվում է Սուրբ Գրքի Մննդոց 9։20 համարում. «Նոյը՝ հողագործ այդ մարդը, առաջինն էր, որ հող մշակեց և այգի տնկեց»։ Հայերի ավանդությունը նույնիսկ հաստատում է անունը, որը հայկական բառ է և ստուգաբանվում է արկ ուռի՝ այսինքն, տեղ, արկ, որտեղ Նոյը տնկեց ուռի (որթ)»[78]։

Հազարամյակներ հետո՝ 1840 թ., այս հռչակավոր գյուղը, ուր ապրում էր մոտ 2000 մարդ, հզոր երկրաշարժից կործանվեց։ Գյուղից նույնիսկ հետք չմնաց.

«Ակոռին, ըստ հայերի պատմածի, եղել է աշխարհի ամենահին բնակավայրը, քանի որ նրա հիմնադրումը վերագրվում է Նոյին, ով այստեղ տնկեց առաջին խաղողի այգին։ Ակոռիի բնակիչներից ողջ մնացած ականատեսների վկայությամբ այդ երկրաշարժի պատկերը սարսափելի էր»[79]։

*Ակոռիի կործանումն առավել պատկերավոր ներկայացնում է ֆրանսիացի աշխարհագիր էլիզե Ռէկլին. **«Ստորերկրյա ջրերը լավայի հնոցներից և երկրի խորքերի բնական ջերմության բարձր աստիճանից գոլորշիանում են, որով էլ թերևս բացատրվում է 1840 թ. սարսափելի ժայթքումը։ Այդ ժամանակ նախկին մի խառնարան, որ գտնվում էր Սուրբ Հակոբի վանքից ներքև, հանկարծակի բացվեց, թանձր գոլորշին բարձրացավ դեպի երկինք՝ շատ ավելի բարձր Արարատի գագաթից, և օդի մեջ ծծմբի հոտ տարածվեց։ Լեռն սկսեց մռնչալ խուլ***

---

[77] (Американский миссионер Смит) Библейский словарь, Доктор Эрик Нюстрем 19-й в. 1989, ст. 25.

[78] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն … էջ 14:

[79] Е. П. Ковалевский, Гора Арарать, С.-Петербургъ, 1903, ст. 30.

ձայներով, և բացվածքներից մեծ քանակությամբ քարեր և ժայռեր դուրս ժայթքեցին, որոնցից մի քանիսը կշռում էին մինչ հինգ տակառաչափ: Գետինը ճաքճքեց՝ դուրս վիժելով գոլորշու շատրվաններ, իսկ Արաքսի հատակից դուրս էին ժայթքում հանքային ջրեր՝ մեծ պղպջակներով: Սուրբ Հակոբի վանքն անհետացավ փլվածքի տակ, ինչպես նաև Ակոռի գյուղը, որը հայերի ասելով՝ ամենահինն էր աշխարհի երեսին: Եվ իսկապես Ակոռի նշանակում է «որթ տնկել». և ըստ ավանդության՝ այդ տեղում է Նոյ նահապետը տնկել առաջին որթը՝ իջնելով տապանից»[80]:

Ինքնին հասկանալի է, որ Նոյն իր աճեցրած խաղողի այգու մոտ է ժամանակին գինովցել...

Այգի տնկելուց բացի՝ նահապետը կառուցեց հետջրհեղեղյան առաջին քաղաքը, որը կոչվեց Նախիջևան՝ առաջին իջևանատեղ: Այս ավանդությունը տարածված է եղել աշխարհի տարբեր կողմերում: Դա վկայում են նաև այլազգի պատմիչների մոտ պահպանված տեղեկությունները: Նրանցից է Հովսեփոս Փլավիոսը, որը հավանաբար օգտվել է իրենից առաջ եղած պատմիչների աշխատություններից:

*Պատմաբան Ա. Մովսիսյանը գրում է. **«Որ Ջրհեղեղի մասին հայկական ավանդությունը չի ստեղծվել Աստվածաշնչի քարոզչության հետևանքով, կարող է վկայվել այլ փաստով ևս. Հովսեփոս Փլավիոսի հիշյալ երկում պահպանված տեղեկության համաձայն՝ Նոքոսը (իմա՝ Նոյը), «իր գերդաստանով դուրս գալով, Աստծուն զոհեր մատուցեց և խնջույք արեց ընտանիքի անդամների հետ: Հայերը մինչ օրս այդ վայրը կոչում են իջնելու տեղ»[81]: Առաջին դարում հրեա հեղինակի գրի առած այս զրույցը գրեթե նույնանում է Նախիջևանի՝ որպես Նոյի առաջին իջևանի մասին հայկական ավանդությանը»[82]:***

Նախիջևանի մասին բազում այլ վկայություններ էլ կան, ինչը խոսում է այն մասին, որ, չնայած ազգային և կրոնական պատկանելության, տարբեր ազգերի մոտ Նոյի հետ կապված ամեն ինչը ընդունվել է որպես համամարդկային սրբություն: Եվ նույնիսկ հին քարտեզների մեջ այդ տարածքը նշվել է որպես ամենահին բնակավայր.

«Զրույցներն ու ավանդությունները ստեղծվում են դարերի ընթացքում, հետևաբար Նոյի ու Ջրհեղեղի հետ կապված հայոց ավանդությունները Փլավիոսի ժամանակներից շատ ավելի հին են: Ի դեպ, այս վայրը հույն աշխարհագիր Պտղոմեոսը (II դար) ևս իր կազմած քարտեզում անվանում է Նոյի իջնելու տեղ՝** Naxuana **և այլն»[83]:

Հետջրհեղեղյան առաջին բնակավայրեր են եղել Ակոռին, Երևանը և Նախիջևանը: Հնության տեսանկյունից այս երեքից կարծես առաջնությունը տրվում

---

[80] Էլիզէ Ռէկլիի (Ֆրանսիացի հռչակավոր աշխարհագիր), Ռուսական Հայաստան կամ Արաքսի ավազանը, Վաղարշապատ, 1890, էջ 15-17:

[81] Հովսեփոս Փլավիոս, Հրեական հնախոսություն, էջ 54:

[82] Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 51:

[83] Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 26:

է Նախիջևանին: Բայց դա հավանաբար ավելի կապված է ոչ թե առաջինի սկզբնական բնակավայր լինելու հետ, այլ որ այն դարձավ արդեն բազմացած մարդկության կենտրոն, որտեղից նրանք տարածվեցին դեպի միջագետքյան երկրներ: Քանզի օտար պատմիչներն էլ նշում են, որ հնում Նախիջևանը անվանվել է նաև «Ելք».

«Այս ամենին ավելանում է նաև Եվսեբիոսի վկայությունը վայրերի մասին, որը, ըստ Հերոնիմոսի թարգմանության, հետևյալն է. «Այժմ հայերը այդ վայրը (Նախիջևանը) կոչում են Ելք»»[84]:

Առնոյոտն – Մարանդ

«Եթե Մեծ Արարատը լեռների մեջ ամենավեհափառն է,
Փոքր Արարատն ամենաշքեղը կարելի է համարել»[85]:

Նախիջևանում են գտնվում Նոյի և նրա կնոջ գերեզմանները: Բնական է, որ նրանք երբեք չէին հեռանա այն վայրից, որտեղ կանգնեց տապանը: Եվ իրենց մահկանացուն էլ պիտի այստեղ կնքեին:

Հետջրհեղեղյան մարդկության համար նրանք նախածնողներ էին՝ բարեպաշտ և աստվածահաճո, ինչի պատճառով էլ նրանց գերեզմանները սրբությամբ պահպանվել և հասել էին մինչ մեր օրերը...

«Քաղաքի անունը հայերենում նշանակում է «առաջին իջևան», իսկ տեղի քահանաները ցույց են տալիս մի հողաբլուր, ինչը, իբր, Նոյի շիրիմն է: Այս քաղաքը նույնքան հին է, որքան պատմությունը, և հիշատակված է դեռ Պտղոմեոսի կողմից Նաքսուանա անվամբ և շատ անգամ կառուցվել և վերակառուցվել է: Այժմյան բոլոր տները կառուցված են ավերակներից հանած քարերով» [86]:

*Նոյի գերեզմանն իր անվանումն ունի. **«Առնոյոտն է Նոյի թաղման վայրը»[87]:** Բառացի նշանակում է «Նոյի ոտքերի մոտ»: Նոյի կնոջ՝ Նոյեմզարի գերեզմանն էլ իր անունն ունի. **«Նոյի կնոջ՝ Նոյեմզարի թաղման տեղը Մարանդ են կոչում»[88]:***

*Դա նույնպես հայերեն է. **«Մարանդ է կոչվում՝ «մայր անդ», այսինքն, Նոյի բոլոր ծնունդների մայրն էր, որ այնտեղ թաղվեց»[89]:***

*Ավանդությունը հազարամյակների խորքից բերել և մեզ է հասցրել Նոյին հիշեցնող շատ բան. նրա կառուցած առաջին տան հիշատակությունը, Հայոց առաջին ամսանունը և շատ այլ բաներ. **«Նոյ նահապետը թաղվեց Հայաստանի***

---

[84] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 373-374:

[85] Джэмс Брайс (Անգլիայի հասարակական խորհրդի անդամ), Վերելք յԱրարատ, Կ. Պոլիս, 1890, էջ 10, 15, 35, 60:

[86] Էլիզէ Ռէկլիի Ռուսական Հայաստան… էջ 73:

[87] Св. Димитрий Ростовский, Жития святых, Сентябр книга I, Москва 1904, ст. 635.

[88] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 273:

[89] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 16:

մեջ, նրա մոտ թաղվեց նաև նրա կինը, որի թաղման տեղը մինչ այժմ կոչվում է Մարանդ՝ այսինքն, մայրն է այնտեղ։ Նոյի այգի տնկած տեղը կոչվում է Ակոռի։ Նրա բնակված տեղը՝ Նախիջևան՝ նախ իջան. նրա առաջին շենքի կառուցած տեղը՝ Նպատ՝ Նոյապատ։ Սրանք բոլորը Արարատի՝ այսինքն Մասիսի վրա և շուրջն են գտնվում, և բոլորն էլ մինչ օրս անփոփոխ կրում են իրենց բնիկ անունները, իսկ տապանի՝ Արարատի գլխին հանգրվանելու հիշատակի համար Հայոց առաջին ամիսը կոչվում է Նավասարդ՝ այսինքն, նավն այստեղ հանգչեց կամ «նավ հաս արդ»»[90]։

Վարդավառ-Նավասարդ

«Յուրաքանչյուր զգայուն հոգի, տեսնելով Արարատը,
նրա հրաշքի հավերժ գերին է դառնում»[91]։

Երբ Նոյն իր ընտանիքով դուրս եկավ տապանից և ոտք դրեց մայր հողի վրա, սահմանեց, որ տապանից դուրս գալու առաջին ամսվա մեջ (որն անվանվեց Նավասարդ) կատարվի աշխարհակործան Ջրհեղեղի հիշատակության և նրանից հրաշալի կերպով փրկվելու տոնակատարություն։

Տոնն ուղեկցվում էր միմյանց վրա ջրի ցողումով և աղավնիներ թռցնելով.

«Ավանդությունը պատմում է, որ Արարատից իջնելուց հետո Նոյը իր որդիներին պատվիրել է ջուր լցնել իրար վրա՝ ի հիշատակ Ջրհեղեղի ու Ջրհեղեղից փրկվելու»[92]։

Ոմանք այն կարծիքին են, թե Վարդավառի տոնին ջրի ցողումը հեթանոսությունից մնացած ավանդույթ է։ Դա անտեղյակության արդյունք է։ Այն ավելի հին է, քան հեթանոսությունը, քանի որ գալիս է բուն Նոյի ժամանակներից, երբ Արարատյան աշխարհում ծաղկում էր ճշմարիտ աստվածպաշտությունը։

Որոշ ազգերի մոտ նույնպես պահպանվել է ջրի ցողման ավանդույթը, ինչը հիմնականում բոլորի կողմից կապվում է Ջրհեղեղի հիշողության հետ և, անկասկած, տարածվել է համայն մարդկության օրրանից՝ Հայաստանից։

Հայաստանում Վարդավառի սուրբ տոնին ջրցողումը իրականում կապ չունի Վարդավառի հետ, այլ արդյունք է մի ուրիշ տոնակատարության՝ Նավասարդի։ Ժամանակի ընթացքում այս երկու տոները մեկտեղվել են և այժմ նշվում են նույն օրը։

Այդ տոների մեկտեղումը սկիզբ է առել չորրորդ դարում՝ մեր սուրբ հայր Գրիգոր Լուսավորչի պատվերով. տոների այս միացումն Աստվածաշնչի Հին և

---

[90] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 28:

[91] Ֆրիդրիխ Պարրոտ, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 64-65:

[92] Հ. Ակինյան, Հայոց եկեղեցական տարին եօթերորդ դարու սկզբին, Հանդէս ամսօրէայ, 1947, էջ 369; Ա. Ղանալանյան, 1969, 789 բ:

Նոր Կտակարանների խորհուրդն ունի: Արարատ լեռը, որի վրա հանգրվանել էր փրկության խորհրդանիշ տապանը և հանդիսավորվում էր Նավասարդի տոնով, խորհրդանիշն էր նաև Հին Կտակարանի: Իսկ Թաբոր լեռը Նոր Կտակարանի խորհուրդն ունի, որի վրա արդեն Ինքը՝ Փրկիչն էր պայծառակերպվել. դրա համար էլ Նավասարդի և Պայծառակերպության (Վարդավառի) տոներն սկսեցին միասնաբար նշել: Այսպիսով, ջրի ցողումը, որպես խորհուրդ աշխարհակործան Ջրհեղեղի, մեզ հիշեցնում է գալիք ահեղ դատաստանի մասին, իսկ Վարդավառը մեզ ցույց է տալիս դատաստանից խուսափելու միակ ուղին:

«Նավասարդ ամսվա տոնը, որ քրիստոնեության ժամանակ միացավ Վարդավառի տոնին, կարծում եմ՝ ի սկզբանե եղել է Ջրհեղեղի հետ կապված տոն կամ հիշատակություն: Ինչ վերաբերում է ջրի հեղմանը, այն այնքան հին սովորություն է, որ այլազգիներն էլ այլ մեկնություն չեն կարողանում տալ՝ բացի Ջրհեղեղից. աղավնի թռցնելն էլ, որ տեղ-տեղ ընդունված է, մեծ ապացույց է իմ այս կարծիքին»[93]:

Գինեգործություն

«Սա նաև իմաստուն լեռ է և նույնիսկ Աստվածային լեռ:
Այս լեռան մեջ հոգևորի զգացողությունը անվերջանալի է,
ինչպես մի սպիտակ ոգի՝ հարթավայրի վրա: Եվ արդեն
չես հասկանում՝ կա՛մ մենք ենք նայում գեղեցիկին,
կա՛մ էլ նա է մեզ նայում»[94]:

*Հայաստանը բուսաբանների կողմից համարվում է խաղողագործության հայրենիք: Իսկ գինին, որ հնում միայն խաղողից էր ստացվում, առաջին անգամ հիշատակվում է Ծննդոց Գրքում. **«Նոյը՝ հողագործ այդ մարդը, առաջինն էր, որ հող մշակեց և այգի տնկեց: Նա խմեց դրա գինուց, հարբեց»[95]:***

Եվ քանի որ գինին Արարատ - Մասիսի ստորոտում է պատրաստվել, բնական է, որ Հայաստանը պետք է համարվի գինեգործության հայրենիք, ինչի մասին ավելի մանրամասն կխոսվի առաջիկայում:

Գինու օգտագործմամբ Նոյի գինովվելու տարբեր պատճառներ են ենթադրվում: Ոմանք այն կարծիքին են, թե առաջին անգամ գինի ստանալով՝ Նոյը, ըստ երևույթին, անտեղյակ էր նրա բնույթին և, խմելով որպես հյութ, հաճելի ըմպելիք՝ հարբեց գինու զորությունից.

««Նա խմեց նրա գինուց, հարբեց»[96] (Ծննդ. 9:21): Խաղողի հյութի չափավոր օգտագործումն իր մեջ պարունակում է բուժիչ հատկություն, այնպես, որ այս տեսակետից խաղողագործությունը լավ և օգտակար գործ էր: Բայց նախաջրհե-

---

93 Գաթըրճյան. Տիեզերական Պատմութիւն Ա, Վիեննա 1849, էջ 38:
94 Нелли Саакян, Мировая Гора, Ереван 2004, ст. 22.
95 Ծննդ. 9:20:
96 Ծննդ. 9:21:

ղեղյան մարդկությունը բոլորովին ծանոթ չէր դրան և գինու օգտագործմանը. բոլորից առաջ Նոյը ծանոթացավ դրան, և շատ հնարավոր է, որ նա, չիմանալով գինու ուժի ու ներգործության մասին, չափից ավելի խմեց, ինչպես որ տեղի ունեցավ, և ընկավ այն վիճակի մեջ, ինչն այստեղ ցույց է տալիս»[97]:

*Սակայն համոզիչ է նաև սբ. Հովհան Ոսկեբերանի խոսքը, որ Նոյը հիշելով մարդկանց կործանումը՝ մեծ վիշտ էր ապրում և գինով ցանկանում էր այդ վիշտը փարատել, ինչն էլ դարձավ հարբելու պատճառ. **«Նոյը դուրս եկավ... տեսավ երկիրը քանդված ու ավերված, տեսավ պատրաստ գերեզմանը, ցեխը, տիղմը... տրտմությամբ լցվեց և իրեն պաշարած վշտերից տառապելով՝ գինի խմեց ու քնեց, որպեսզի մոռանա տրտմության ցավերը: Մեջքի վրա ընկած՝ իբրև բժշկի՝ քնին էր մատնել իրեն, որպեսզի մոռանա տխուր տեսարանը: Ինչպես այդ պատահում է ծերերին՝ գինուց հարբած և քնով ծանրացած: Հարկ է մեզ՝ արդարի մասին ասել, որ այդ անառակ հարբեցողություն չէր և ոչ էլ ցանկության ախտ, այլ այդ երկու բանով (գինով և քնով) նա բժշկում էր իր ցավը: Այդ մասին նաև Սողոմոնն է գրում և ասում. «Գինի տվեք խմելու վշտացածներին ու տառապողներին, թող խմեն...» [98]» [99]:***

Ջրհեղեղի հետ կապված այլ վկայություններ

«Հայոց տաճարներն այնքան ավարտուն են, որ ընկալում ես որպես միասնական օրգանիզմ: Թվում է՝ մի կտոր քար պոկես, ցավից կտնքան տաճարի բոլոր պատերը՝ հիմքից մինչև գմբեթ: Թվում է, թե նրանցից յուրաքանչյուրի համար վաղորոք տեղ է պատվիրված հայկական երկնակամարում: Այն երկնակամարում, որտեղ...կանգնած է տաճարների տաճարը՝ Հայաստանի գերագույն տաճար Արարատը»[100]:

*Ջրհեղեղի եղելության ապացույցներից մեկն էլ Մասիսի ստորոտի աղածածկ տարածքներ են. **«Տարօրինակ է, որ Արարատի սառույցների կատարելապես հղկված կոնի փեշերին, կիլոմետրեր շարունակ, եղեգների մեջ փայլատակում են աղի դաշտեր: Որտեղի՞ց են գոյացել, եթե ոչ՝ երբեմնի Ջրհեղեղի ետ քաշվող Ջրերից: Բնականաբար, դրանք այսօր ոչ մեկի վրա տպավորություն չեն գործում: Հիմա այդ տեղերից աղ է արդյունահանվում: Երբեմնի չարիքի վաղուց մոռացված այդ վկայությունները վեր են ածվել օգտակար հանածոների: Լեգենդներ՝ խանութներում վաճառվող աղի բյուրեղիկների տեսքով»[101]:***

---

[97] А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904-1907, ст. 63.

[98] Առ. 31: 6:

[99] Սուրբ Հովհան Ոսկեբերան, Ճառեր-Բ, Ս. Էջմիածին, 2009, էջ 159:

[100] Ռամիլ Հաքիմով, Յոթ գարունների երկրում, գիրք II, «Զրույց քարի հետ», Երևան 1983 թ., էջ 79-80:

[101] Վրթան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան, 1989, էջ 30:

Քիչ չեն նաև Ջրհեղեղի մասին հայկական հին ավանդազրույցները: Սակայն սրանցից հնագույնը, ինչպես արդեն ասվել է, Քսիսութրոս–Նոյի պատմությունն է, որը մեզ է հասել Մովսես Խորենացու «Հայոց պատմությունից»:

Հայաստանում պահպանվել են նաև հինավուրց բազմաթիվ ժայռաքանդակներ, որոնցից շատերը առնչվում են Ջրհեղեղի հետ:

Մասիսը որպես սրբազան լեռ

«Արարատ: Ոչ մի կերպ չէի կարողանում հավատալ, որ իմ սեփական աչքով եմ տեսնում այդ լեռը: Հնագույն բոլոր առասպելները, հեռավոր դարերի բոլոր հեքիաթներն էին մարմնավորվում այդ հսկայի մեջ... Այստեղ հանգույցն էր կրոնների, ավանդությունների, առասպելների, պոեզիայից անբաժան պատմության և պատմության բոցերում թրծված պոեզիայի»[102]:

Մասիսը սուրբ և խորհրդավոր լեռ են համարել ոչ միայն հայերը, այլև այն ժողովուրդները, որոնց մոտ վառ են մնացել Ջրհեղեղի և տապանի հիշողությունները.

«Մեծ և Փոքր Արարատի այս երկու գագաթներին նաև տեղաբնիկները բազում հիմքեր ունեն վերագրելու վերերկրային զորություն: Մեծ Արարատը, որը ծովի մակարդակից ունի 16, 919 ոտնաչափ բարձրություն, վճռականորեն տիրում է ոչ միայն մերձակա շրջակայքի վրա, այլ նույնիսկ ավելի հեռուն՝ իր չորս բոլորը գտնվող լեռների վրա, հյուսիսում, հարավում և աշխարհի մյուս բոլոր կողմերում: Այդ պատճառով էլ հասկանալի է նրա դերը՝ որպես սրբազան լեռ՝ արևմտյան Ասիայի բոլոր պատմական ժողովուրդների մոտ»[103]»[104]:

«Մասիսն ունի «Մեծ» կամ «Փառահեղ» նշանակություն...Բնական է, որ այս աքանչելի, իր փառքով առանձնացած լեռը, որն ավելի վեհ է, քան Հելլենների Օլիմպոսները, Եփրատի հովտի բնակիչների կողմից ընդունվել է որպես աստվածային կատար, և որ արևելյան առասպելներում նրան համարել են սրբազան գագաթ, որտեղից իջան մարդիկ և անասունները՝ աշխարհը լցնելու համար»[105]:

*Սակայն Մասիսը սրբություն է համարվել առավելապես հայկազունների համար: Եթե այլ ժողովուրդներ կարող էին ժամանակի ընթացքում մոռացության մատնել այդ մեծ աղետի և նրա պատճառների ու հետևանքների հիշողությունները, ապա հայերի դեպքում դա անհնար էր, երբ թե՛ լեռը, թե՛ տապանը մշտապես նրանց աչքի առջև են եղել՝ որպես զարմանահրաշ դեպքերի անխափան հուշարձան. **«Անտարակույս է ոչ միայն տեղաբնիկ, այլև օտար ու հեռու աշխարհների քրիստոնյաների ուխտագնացությունը Մասիս: Ուրեմն ինչո՞ւ զար-***

---

[102] Կոնստանտին Պաուստովսկի, Յոթ գարունների երկրում, գիրք I, «Հազարամյակների Մշուշը», 1978 թ., էջ 80-82:

[103] Дневникъ археол. Работъ, веден. в Закавк., краъ осенью 1879, И. С. Поляковиымъ, 171-172.

[104] Д. Л. Мордовцева, На Араратъ, С.-Петербургъ, 1883, ст. 77.

[105] Էլիզէ Ռէկլիի Ռուսական Հայաստան… էջ 7-8:

մանանք, որ Մասիսը Ազատ անունով պատվական և սրբազան ճանաչվեց հին հայերի կողմից։

Հավանական է թվում, որ Մասիսին ընծայվել էր հատուկ պաշտամունք կամ պատիվ, կամ Մասիսը որևէ կերպով սրբացվել և դյուցազնացվել էր հայկազունների կողմից»[106]*։*

Իսկ այն երկրները, որոնք մոռացության էին մատնում այս ամենը, Նախախնամությունն Ինքն էր հիշեցնում Հայաստանում գտնվող սրբազան լեռան մասին, ինչպես մարերի թագավոր Աժդահակի պատումում։

Մասիսի-Արարատի մասին հետաքրքիր տեղեկություններ են մնացել պարսից Կյուրոս արքայի ժամանակներից, որի օրոք Հայաստանում թագավորում էր Երվանդյան Տիգրանը։ Նա Կյուրոսի դաշնակցին ու մտերիմն էր։ Տիգրանի նկարագիրը շատ նման էր Կյուրոսին, ով Սուրբ Գրքում ներկայացվում է որպես Աստծո օծյալ(այդ դեպքերի մասին ավելի մանրամասն կխոսվի իր տեղում)։

*Այստեղ մեջբերենք միայն մի հատված, թե ինչպես մարերի թագավոր Աժդահակը, Կյուրոսի և Տիգրանի դաշինքի մեջ մեծ վտանգ տեսնելով իր տերության համար, խռովքի մեջ է ընկնում։ Եվ սկսում է իր մերձավորների հետ նենգ խարդավանքներ հյուսել Տիգրանի դեմ։ Սակայն Աժդահակը մի օր սարսափելի երազ է տեսնում, ինչից գուշակում է, որ Տիգրանն իրեն անխուսափելիորեն կործանելու է։ Սա կեսգիշերին սարսափած վեր է թռչում քնից և երազից ահաբեկված՝ իսկույն կանչում է իր խորհրդականներին. **«Եվ տխուր դեմքով, գետին նայելով սրտի խորքից հառաչանք է արձակում։ Երբ խորհրդակիցները պատճառը հարցնում են, նա ժամերով ուշացնում է պատասխանը և վերջապես հեծկլտանքով սկսելով՝ բաց է անում սրտում ծածուկ պահված խորհուրդներն ու կասկածը, նաև սարսափելի երազը։***

«Ով սիրելիներ, ասում է նա, երազումս ես մի անծանոթ երկրում էի գտնվում, մի լեռան մոտ, որ գետնից երկար բարձրացած էր և որի գագաթը թվում էր սաստիկ սառույցներով պատած, և կարծես թե այն Հայկազանց երկրում էր։ Եվ երբ ես շատ երկար նայում էի այդ լեռանը, մի ծիրանազգեստ կին երևաց իր երկնագույն քողով, բարձր լեռան գագաթին նստած, խոշոր աչքերով, բարձրահասակ, կարմիր այտերով, որ բոնված էր ծննդի երկունքով։ Երբ ես երկար նայում էի այս երևույթին և հիացման մեջ էի, հանկարծ կինը երեք զավակ ծնեց՝ կատարյալ դյուցազուններ հասակով և էությամբ։ Առաջինը առյուծ հեծած՝ սլանում էր դեպի արևմուտք, երկրորդն ընձառյուծ հեծած՝ դեպի հյուսիսի էր դիմում, իսկ երրորդը վիթխարի վիշապ սանձած՝ արշավակի մեր տերության վրա էր հարձակվում։

Այս խառը երազների մեջ մեկ էլ ինձ թվաց, թե կանգնած էի իմ ապարանքի տանիքի վրա. տեսնում էի նրա կտուրը բազմաթիվ գեղեցիկ շատրվաններով զարդարված, մեզ պսակող հրաշալի տեսքով աստվածներին այնտեղ կանգնած, և ես, ձեզ հետ միասին, նրանց զոհերով և խնկերով պատվում էի։ Երբ հանկարծ վեր նայեցի, տեսա, որ այն վիշապ հեծած մարդը, իսկական արծվի թևերով սլա-

---

[106] Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 26:

նալով, հարձակվեց և մոտենալով ուզում էր աստվածներին կործանել։ Իսկ ես՝ Աժդահակս, մեջ ընկնելով, այն հարձակումն ինձ վրա ընդունեցի՝ սքանչելի դյուցազնի հետ կռվի բռնվելով։ Նախ նիզակների տեգերով իրար մարմինները խոցոտելով՝ արյան վտակներ վար հոսեցրինք և ապարանքի՝ արեգակի նման փայլող երեսը արյան ծով դարձրինք։ Հետո ուրիշ զենքերով՝ ոչ սակավ ժամեր։

Բայց երկար խոսքը էլ ի՞նչ օգուտ կբերի ինձ. որովհետև գործի վերջը իմ կործանումը եղավ։ Տագնապից սաստիկ քրտինք կոխեց, և քունս փախավ, և այլևս կենդանի չէի թվում։ Որովհետև այս երազը ուրիշ բան չի նշանակում, քան այն, որ Հայկազյան Տիգրանի կողմից ուժգին հարձակում պիտի կատարվի մեզ վրա» [107]։

Նախախնամությունը մեկ անգամ ևս ի ցույց է դնում այս լեռան խորհրդավորությունը։ Լինելով համաշխարհային փրկության լեռ՝ միշտ շեշտվում է նաև նրա հայկական լինելը՝ չնայած ներկայումս գտնվում է թուրքական գերության մեջ։ Վստահաբար, որտեղ տապանն էր, այնտեղ էլ կանգնած էր այդ հրաշատես կինը, որը խորհրդանիշն է Մայր Հայաստանի, որը ժամանակ առ ժամանակ ծնում է նման դյուցազուններ՝ համաշխարհային չարիքի դեմն առնելու համար, և Տիգրանին վայել՝ վրեժ լուծելու Աստծո դեմ ապստամբած կռապաշտներից։ Քանզի Տիգրանը հարձակվելով մարերի թագավորության վրա՝ առաջնահերթ ցանկանում էր կործանել նրանց կուռքերը։

Տեսիլքի լեռը Մասիսն է, քանի որ նա ոչ միայն Հայաստանի, այլև աշխարհի այլ լեռներից տարբերվում է նրանով, որ անմիջապես հարթավայրից է վեր խոյանում՝ հասնելով տպավորիչ բարձրության, և գլուխն էլ ծածկված է հավերժական սառցադաշտերով.

***«Նրա բարձրությունն իսկապես հսկայական է, և եթե հաշվենք ծովի մակարդակից, ապա այն կլինի 4 վերստ 415 սաժենաչափ.նշանակում է՝ մոտ 5 վերստ։ Արարատը համեմատելով այլ լեռների հետ՝ մենք տեսնում ենք, որ նա շատերից բարձր է։ Ալպիական, Կարպատյան և Ուրալյան լեռները ցածր են նրանից, Մոնբլանի բարձրությունը գրեթե 200 սաժենաչափ ցածր է Արարատից։ Կովկասն իր բոլոր գագաթներով, բացի էլբրուսից, նույնպես ցածր է նրանից։ Հիմալայան լեռներն Ասիայում և Կորդի լեռներն Ամերիկայում, թեև ավելի բարձր գագաթներ ունեն, բայց միևնույնն է՝ ցածր են թվում, որովհետև Արարատը կանգնած է ոչ թե լեռնաշղթաների վրա կամ միջև, ինչպես նրանք են, այլ հարթավայրում, բոլորովին միայնակ, կարծես ձեռքի ափի մեջ։ Ահա թե ինչու յուրաքանչյուր ճանապարհորդ, ցանկանալով բարձրանալ այդ լեռը, տեսնելով նրան՝ սկսում է ակամա սարսափ զգալ և պատրաստ է հրաժարվել բոլոր ծրագրերից։ Այդ պատճառով էլ երկար ժամանակ մտածում էին, որ Արարատի գագաթ չի կարելի հասնել, իսկ տեղաբնիկները մինչև օրս չեն հավատում, որ կարող է նրա վրա որևէ մեկը բարձրանալ»* [108]։

Մասիս լեռան շուրջ հիշատակություն կա նաև 3-4-րդ դարի պատմիչ Ագաթանգեղոսի մոտ։ Այնտեղ Մասիսը ներկայանում է որպես սուրբ լեռ, քանզի երբ

---

[107] Մովսես Խորենացի. Պատմություն Հայոց. Երևան 1968, էջ 112-113 էջ:

[108] Е. П. Ковалевский, Гора Арарать, С.-Петербургъ, 1903, ст. 22-23.

*հեթանոս Տրդատը դարձի եկավ և ընդունեց քրիստոնեությունը, նա, որպես ապաշխարություն, իր նահատակած կույսերի սրբատեղիները կառուցելու նպատակով որոշեց քարեր բերել հենց Մասիսի բարձունքներից. **«Եկավ թագավորը, հրաժեշտ խնդրեց սուրբ Գրիգորից՝ յոթնօրյա ճանապարհ գնալու բարձր լեռն՝ Մասիսն ի վեր։ Այնտեղ լեռան գլխից առավ կարծր, անտաշ, անկոփ, խոշոր, ծանր, երկայն, հաստ ու մեծամեծ քարեր, որոնցից մեկը ոչ ոք չէր կարող շարժել՝ թեկուզ և մարդկանց բազմություն»**[109]։*

*Մասիսը, լինելով սուրբ լեռ, միաժամանակ նաև մի մեծ աշտարակ է, որտեղից հսկվում է աշխարհի կարգը. **«Տիեզերական լեռը սովորաբար հանդես է գալիս եռամաս կառուցվածքով, որի գագաթին բնակվում են աստվածները, լեռան տակ՝ չար ուժերը, իսկ կենտրոնում (երկրի վրա)՝ մարդիկ։ Մեծ Մասիսը հայ մատենագրության մեջ հայտնի է իբրև «Արեգակնաճեմ լեռն»**[110]**, «բարձրագոյն լեռն, քան ընդ ամենայն տիեզերս»**[111]**, որի ընդերքում բնակվում էին չար ուժերը։ Դա ցույց է տալիս, որ հայոց վաղնջական հավատալիքներում Մեծ Մասիսը ևս ներկայացել է որպես արարչագործությունից հետո տիեզերակարգը պահպանող սրբազան լեռ»**[112]։*

Արարատ բարձրացողների վկայությունները

«Նրանով է լի հորիզոնը լայն,
Տեր-տիրականն է երկնին ու երկրին.
Ջէ՞ որ նա լեռ չէ մի սովորական.
Լեռ-գաղափար է, խորհուրդ է վերին։
Թող հավերժ վառվի ադամանդը այս՝
Նյութված անհամար կայծ ու կարատից,
Ինձ անհնար է բաժանվել, գնալ,
***Բայց բաժանվո՛ւմ եմ ես Արարատից»**[113]։*

Հնում տապանը հաճախակի երևացել է սառցադաշտերի միջից, քանի որ Հայաստանում կլիման այնքան խիստ չի եղել, և այնտեղից ձյութը, որպես հրաշագործ մասունք, վերցնելն առանձնապես մեծ դժվարություն չի եղել։ Սակայն հետզհետե եղանակի խստանալու հետևանքով տապանը հազվադեպ է երևում և աչքից հեռու լինելով՝ դառնում է միայն զրույցների նյութ, որոնց հիմքում ընկած են նախկին տեսնողների թողած արձանագրություններն ու ավանդազրույցները։

---

[109] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 431:
[110] Մովսիսի Խորենացւոյ, 1913, էջ 39:
[111] Հեթում պատմիչ, 1842, էջ 14:
[112] Արտակ Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 12:
[113] Միխայել Մատուսովսկի՝ Ռուսաստան, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը. կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003 էջ 19-20:

Քրիստոնեության շրջանում տապանի հանդեպ հետաքրքրությունն ավելի մեծացավ, և սկսվեցին որոնումները։

Հարկ է նշել, որ չի հիշատակվում որևէ մեկը, որը տապանը փնտրեր մի այլ երկրում։ Առանց բացառության՝ բոլորը Հայաստանում են այն փնտրել. իսկ Հայաստանի լեռներից տապանակիրը միշտ էլ ընտրվել է Մասիս-Արարատը։

Քրիստոնեության շրջանում առաջինը տապանը գտնելու փորձ արեց Մծբինի հայրապետ սբ. Հակոբը (4-րդ դար) ։Երբ նա արդեն բավականին բարձացել էր լեռն ի վեր, երկնային հրաշքով նրան տրվեց տապանից մի փոքր կտոր։ Այդ պատմությունը պահպանվել է «Վարք սրբոց»-ում, Սոփերքում և Փավստոս Բուզանդի «Պատմության» մեջ։

*«Վարք սրբոցում» և «Սոփերքում» սբ. Հակոբի բարձրացած լեռը, ի տարբերություն Բուզանդի, Մասիսն է. և դեռ մինչև վերջին ժամանակները Մասիսի վրա պահպանվել էր սբ. Հակոբի վանքը, որ կառուցվել էր՝ ի նշան նրա կողմից լեռը բարձրանալու։ Հանրահայտ է նաև Մասիսի վրա գտնվող հրաշագործ աղբյուրը, որը բխել է սրբի աղոթքներով. **«Արդ, Սուրբ Հակոբն, որ այդպիսի հրաշագործ մարդ էր, մի՞թե կարող էր չիմանալ տապանի գտնվելու վայրի մասին։ Ոմանք ասում են, թե այն գտնվում է Կորդվաց լեռներում, ոմանք էլ՝ Մասիս լեռան վրա, որը գտնվում է Այրարատ գավառում, որտեղ էլ Մասիսի ստորոտում մի աղբյուր է բխում, և նրա անվամբ եկեղեցի կա կառուցված, որը մինչև այսօր կանգուն է»**[114]։*

*Մասիսի վրա գտնվող սբ. Հակոբի հրաշագործ աղբյուրը հռչակավոր ուխտատեղի է եղել. այդ ջրից խմողները ոչ միայն բժշկվել են հիվանդություններից, այլև օգտագործել են՝ տարբեր փորձություններից ձերբազատվելու համար. **«Ակնաղբյուրի ջուրը, որից մի ժամանակ խմել է սբ. Հակոբը, համարվում է սուրբ, հրաշագործ ջուր։ Ուխտավորներն այս ջրի համար շատ հեռվից են գալիս, ինչպես որ գնում են Հորդանանի ջրերի համար։ Իսկ երբ դաշտերում մորեխ է հայտնվում, այս ջուրը փրկում է նաև մորեխներից. միայն հարկավոր է այս ջրից մի քանի կաթիլ լցնել թռչող թշնամու կողմից խժռվող արտի մեջ, և այդ ժամանակ, չգիտես որտեղից, հայտնվում են սարյակների հսկա երամներ և իրենց հերթին սկսում են խժռել մորեխներին»**[115]։*

*Տապանի փայտի փոքր հատվածը, որը հրեշտակը տվեց Մծբնա հայրապետին, Մասիսի մոտակայքից չհեռացավ, այլ հանգրվանեց նրա ստորոտում գտնվող սբ. Էջմիածին վանքում և մինչ օրս էլ գտնվում է այնտեղ. **«Այդ նախաջրհեղեղյան ծառի բեկորը այժմ պահվում է Էջմիածնի վանքում՝ որպես Բարձրյալի բարեհաճության գրավական»**[116]։*

Հայտնի է, որ քրիստոնեության շրջանում Մասիս լեռը առաջին անգամ փորձել է բարձրանալ Հակոբ Մծբնա հայրապետը, և Մասիսի վրա առկա են այդ վերելքի հետքերն ու իրեղեն ապացույցները։

13-րդ դարում արդեն հիշատակվում են այնպիսի ուխտավորներ, ինչպիսիք

---

[114] Սոփերք Հայկականք, ԻԲ, Վենետիկ, 1853-1861, էջ 22:

[115] Д. Л. Мордовцева, На Араратъ, С.-Петербургъ, 1883, ст. 121.

[116] Е. П. Ковалевский, Гора Араратъ, С.-Петербургъ, 1903, ст. 22-23.

են Վինսեթ դե Բովեն, Ուիլյամ Ռուբռուկը, Օդորիկը և Մարկո Պոլոն, որոնք տապանը գտնելու նպատակով ուղևորվել էին դեպի Մասիս.

«Ճանապարհորդներն ու հետախույզները, որոնք անցել են Հայկական բարձրավանդակով, հավաստում են, որ տեսել են Տապանը՝ պահպանված Արարատ լեռան ձյունոտ լանջերին: Վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն ևս հաստատում է Հայաստանում տապանի գոյության փաստն իր IL Millione գրքի տասնվեցերորդ գլխում. «Նորից եմ ձեզ ասում, որ Նոյի Տապանն այն Մեծ Էրմենիայում է՝ մի մեծ լեռան կատարին»»[117]:

Մասիս բարձրանալու հաջորդ հիշատակումը տասնյոթերորդ դարում է. ***«Սուրբ Հակոբի վանքի և Ակոռի եկեղեցու կառուցումն Անաստաս կաթողիկոսի կողմից՝ 1200 տարվա հնություն ունի, և քանի որ այնտեղ հյուրանոց էլ է կառուցվել, հայտնի է դառնում, որ դրանից առաջ էլ, ոչ թե միայն մեր աշխարհում էր հռչակված, այլ նաև հեռավոր այլ երկրներում, որտեղից էլ ուխտի էին գալիս և պատմում էին, որ դեռ տապանը կամ նրա մեծ մասը գտնվում է լեռան վրա: Մանավանդ 14-րդ դարում թաթարների աշխարհակալության օրերին արևմտյան առաջին ճանապարհորդները սկսեցին այս լուրը տարածել Եվրոպայում և շարժել զբոսաշրջիկների հետաքրքրությունը, որոնցից նշանավորներն էին Սգրույս Հոլանդացին, որ 1670 թ. պատմում է, թե բարձրացել է Արարատ լեռը յոթ օրվա ընթացքում և այնտեղ գտել մի ճգնավորի՝ հռոմեացի Դոմինիկոս Աղեքսանդրին, որը 25 տարուց ավել՝ բնակվում էր մի քարայրում և մտել էր տապանի մեջ և այն ամբողջությամբ գտել, որի փայտից պատրաստված մի խաչ տվեց հրաշապատում ճանապարհորդին: Հաջորդ դարասկզբին (1702) անվանի բուսաբան ճանապարհորդ Դուռնըֆորը բարձրացավ Մասիս, բայց ոչ մինչև գագաթ. այդ պատճառով էլ տապանի մասին տեղեկություն չի տալիս, այլ մեծ ճեղքի եզերքում մի ճամփա գտավ, որից հավանաբար իջել էր Նոյը՝ իր ընտանիքի հետ»[118]:***

Ըստ ուսումնասիրողների՝ Մասիս լեռը մեծ ձգողական ուժ ունի: Դա է վկայում նաև այն, որ շատերը ցանկացել են տապանը հենց այնտեղ գտնել. ***«Սուրբ Հակոբի վանքը,- գրում է Պոլյակովն իր օրագրում,- սահմանագիծն է, որից այն կողմ՝ բարձունքում, ընկած է հայտնությունների մի ամբողջ շղթա՝ Արաքսի հովտում երբեմն կատարված և մինչ օրս տեղի ունեցող: Այստեղ, վերջապես, հերթը հասնում է Արարատին, որը հեռվից պատկերվում է այդքան անմատչելի, դիտելու համար՝ անհասանելի և երևակայությունը ճնշող հսկայի կերպարանքով: Մինչդեռ դեպի նրա բարձունքը կատարած յուրաքանչյուր քայլափոխին բացվում են մի շարք հայտնություններ՝ առավել ու առավել ապշեցուցիչ և վեհաշուք, անուս մարդու մոտ սնոտիապաշտական երկյուղ առաջացնող և հետազոտողին հմայելով՝ դեպի վեր բարձրացնող»[119]:***

19-րդ դարից սկսած՝ տապանը գտնելու նպատակով Հայաստան ժամանողների թիվը զգալի ավելացել է: Քանի որ այդ ժամանակաշրջանում Հայաստանի

---

[117] Ալերամո Հերմետ, Պաուլա Կոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000, էջ 22:
[118] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 49:
[119] Д. Л. Мордовцев... ст. 118-119.

այն տարածքը, որտեղ Մասիսն է, ռուսական կայսրության տիրապետության տակ էր գտնվում, սուրբ լեռը բարձրացողների մեջ մեծ թիվ էին կազմում ռուս ուսումնասիրողները.

«Իսկ ինչո՞ւ է Արարատի գագաթը բարձրանալը մեղք համարվում, որտեղ եղել է Նոյ նահապետը: Որպեսզի հայերին ապացուցի այս տեսանկյունի սխալ լինելը, իմպերատոր Նիկոլայ առաջինը 1850 թ. ուղարկեց գեներալ Խոդսկոյին, ով մի քանի ուղեկիցներով բարեհաջող հասավ Արարատի գագաթը և այնտեղ մնաց հինգ օր: Բարձրանալն իսկապես շատ դժվար էր:

Գեներալ Խոդսկոյից բացի՝ մոտ տասն անգամ օտարերկրացիներ և ռուսներ բարձրացել են, որոնցից առավել հաջողվածը կարելի է համարել 1829 թ. պրոֆեսոր Պարրոտի բարձրանալը, 1845 թ. Աբիխի և 1888 թ. Մարկովի և Կովալևսկու: Վերջիններին հաջողվեց հասնել երկու գագաթներին էլ՝ առանց հնչնոր սարսափելի միջադեպերի»[120]:

***«Դժվար է ամբողջ խորությամբ արտահայտել այն տպավորությունները, որ մարդ ունենում է Արարատ բարձրանալիս: Օրինակ՝ Սպասսկի-Ավտոնոմովն ասում է, որ նա ուրախություն չի զգացել, այլ մի հնչ-որ սառը դատարկության և ճնշվածության զգացողություն է ունեցել, երբ իր առջև ավելի ու ավելի լայնորեն է բացվել հորիզոնը՝ ըստ լեռը բարձրանալու աստիճանի. «Աստված իմ,- մտածում էի ես (գրում է նա)՝ նայելով նոր պատկերին,- ի՛նչ հրաշալի են փայլում այս երկու սառցակալած բլուրները, ի՛նչ վայելչագեղ է ամբողջ հովիտը՝ ծածկված արևի ճառագայթներով. վառվում է անհամար ալմաստներով, որպեսզի ես ակնածանքով վայելեմ այս տեսարանը. բայց իմ հոգին սառն է, թախծոտ: Իմ ամբողջ զորությունը ճնշվել էր բնության վեհությունից»»[121]:*

Հայերը դեռ հնագույն ժամանակներից աներկբա հավատ են ունեցել Մասիսի՝ տապանակիր լեռ լինելու հարցում.

«Այսօր էլ հայերը հեռվից ցույց են տալիս ճիշտ այն տեղը, ուր կանգնել է Նոյի տապանը: Հրեղեն սրով զինված ոգիները հսկում են սրբազան նավին, որ դարատափերի սեզի նման կանաչ գույն ունի»[122]:

Մինչ օրս էլ բազմաթիվ են լեռ բարձրացողները: Նրանց վկայությունները ոմանց համար կասկածելի են, ոմանք ընդհանրապես մերժում են դրանց հավաստի լինելը, մյուսներն էլ ընդունում են որպես աներկբա իրականություն: Այս մասին կան ոչ միայն բազմաթիվ գրքեր, այլև գիտահանրամատչելի շարժանկարներ, որտեղ ներկայացվում են տապանը տեսնողների համոզիչ փաստարկները.

«1916 թ. ռուսական կայսերական օդային ուժերը թռչում են Արարատ լեռան վրայով և դիտարկում թուրքական զորքերի շարժումը: Հանկարծ լեյտենանտ Ռոսկովինսկին Արարատ լեռան թեքության վրա սառած լիճ է նկատում: Երբ ավելի են մոտենում, նա լճի մեջ տեսնում է կիսով չափ սուզված նավ հիշեցնող հնչ-որ առարկա: Կապիտանն այդ մասին հաղորդում է Սանկտ-Պետերբուրգ, որպեսզի ցարը հնժեներների խումբ ուղարկի՝ լեռը հետազոտելու հա-

---

[120] Е. П. Ковалевский… ст. 24-25.

[121] Д. Л. Мордовцева… ст. 150.

[122] Էլիզէ Ռէկլիի Ռուսական Հայաստան… էջ 8:

մար։ Գրեթե մեկ ամիս է պահանջվում, որպեսզի արշավախումբը հասնի տապանին, արվում են չափումներ, բազմաթիվ լուսանկարներ, գծվում է տապանի ուրվագիծը, և այդ ամենն ուղարկվում է Պետերբուրգ՝ ցարի անձնական ուսումնասիրմանը. սակայն Նիկոլայ Բ-ը 1917 թ. հեղափոխության պատճառով ամենայն հավանականությամբ այդպես էլ չստացավ հետազոտության արդյունքները. ուսումնասիրություններ երբևէ չարվեցին և չլուսաբանվեցին։ Հետագայում ամսագրերից մեկում տպագրվեց միայն արշավախմբի անդամներից մեկի վկայությունը։ Համաձայն նրա պատմության՝ տապանը պարունակում էր հազարավոր փոքր ու մեծ սենյակներ, սենյակները պատված էին վանդակային այուններով, դրանք կարծես կառուցված էին փղերից տասն անգամ մեծ չափսեր ունեցող գիշատիչների համար, իսկ կատարված աշխատանքի հղկվածությունը խոսում էր զարգացած քաղաքակրթության մասին։

1916 թ. արշավախմբի մասին շատ տարակարծություններ կան, թե իրո՞ք նրանք գնացել են Արարատ, թե՝ ոչ։

Պատմում է Նեգան Բաթլերը. «Մենք 20 տարի ուսումնասիրել ենք Նիկոլայ Բ-րդի աղջկա՝ Անաստասիայի կյանքը, ով ռուսական արքայական ընտանիքի միակ փրկված անդամն էր։ Նա պատմել է, որ տեսել է տապանի 1916 թ. արված լուսանկարները։ Պատմում էր, որ իր հոր արշավախումբը Արարատ լեռան վրա գտել էր Նոյան տապանը, և որ նույնիսկ ուներ խաչ, որը պատրաստված էր Նոյան տապանի փայտից։ Սա եզակի դեպք չի եղել»։

1883 թ. ամռանը մի քանի երկրաշարժեր ցնցեցին Արարատը և կործանեցին բազմաթիվ գյուղեր։ Թուրքական կառավարության ներկայացուցիչները բրիտանացիների հետ համատեղ մեկնեցին՝ վերաբնակեցնելու մարդկանց և վերացնելու վնասները։ Այդ ժամանակ նրանք պատահաբար բախվեցին փայտյա մեծ նավ հիշեցնող ինչ-որ բանի, որը դուրս էր պրծել լեռան միջից։ Խումբը մտավ շինության մեջ, բայց հետագա առաջընթացը դադարեցվեց, քանի որ կառույցը կարող էր փլվել նրանց վրա։

Ասենք, որ Նոյան տապանի ականատեսներ մեր ժամանակներում էլ են եղել, համենայն դեպս իրենք այդպես են հայտարարել։

Ժամանակակից առաջին վկայությունը և թերևս ամենահետաքրքիրը պատկանում է Գևորգ Հակոբյանին, որն առաջին անգամ հրապարակվեց 1970-ական թվականներին՝ չնայած տեղի էր ունեցել շատ ավելի վաղ։ Գևորգ Հակոբյանը Վան քաղաքի ծնունդ էր։ Համաձայն նրա պատմության՝ 1908 թ., երբ դեռ 8-11 տարեկան երեխա էր, քեռին իրեն տանում է Արարատի գագաթը։ Նրանք բարձրանում են ու հասնում ինչ-որ բանի, որը մեծ նավի տեսք ուներ, այն տեղավորված էր լեռան մեջ՝ ապառաժների վրա և մասամբ ծածկված էր ձյունով։ Փոքրիկ Գևորգը սկզբում մտածում է, որ դա քարից պատրաստված տուն է, բայց երբ նրա քեռին հայտնում է, որ փայտից է արված, նրանք հասկանում են, որ իրենց առջև Նոյան տապանն է։ «Այն հսկայական չափեր ուներ, ավելի մեծ էր, քան իմ կյանքում տեսած ամենամեծ շինությունը։ Քեռիս բարձրացրեց ինձ այդ կառույցի վրա։ Իմ ընտանիքը պատմել էր ինձ տապանի պատմությունը, և ես գիտեի, թե որտեղ եմ կանգնած։ Առաստաղի վրա ես տեսա մեծ անցք, գնացի և ներս

նայեցի։ Ջափազանց մութ էր, որպեսզի ինչ-որ բան տեսնեի։ Ես համբուրեցի առաստաղը, որը շատ հարթ էր, հղկված և հարմար՝ կանգնելու համար»։ Գևորգի քեռին փորձում է տապանից մի կտոր պոկել, բայց չի կարողանում, քանի որ այն քարի պես ամուր էր։ Երբ Հակոբյանը վերադառնում է գյուղ և պատմում հասակակից տղաներին հայտնագործության մասին, նրանք պատասխանում են. «Այո, մենք նույնպես տեսել ենք տապանը»։ Բայց Մեծ եղեռնից հետո Հակոբյանը գաղթում է Միացյալ Նահանգներ։ Նա առաջին անգամ իր պատմությունը պատմում է տապանը հետազոտողներին, երբ մոտ 80 տարեկան էր։ Գևորգ Հակոբյանը շատ վատառողջ էր և որոշ ժամանակ անց մահանում է։ Մինչ այդ՝ նա հարցաքննվում է տապանի բազմաթիվ հետազոտողների կողմից։ Այդ նկարագրություններում տապանը մեծ էր, վագոնատիպ, առանց դռների և պատուհանների։ Նա ասաց, որ այդ ժամանակից տապանն արդեն լիովին ծածկվել էր ձյունով։ Էլֆրեդ Լին (հնէաբան-իլյուստրատոր) երկար ժամանակ անցկացրեց Հակոբյանի հետ՝ վերականգնելու նրա հիշողությունները տապանի մասին։ Գևորգ Հակոբյանը կատարել էր իր վերելքը չորս տարվա հալոցքից հետո և տեսել տապանն՝ ամբողջությամբ պահպանված։ Նա տեսել էր առաստաղի հղկված եզրագծերը, միակ պատուհանը։ Տապանի կառուցման ամբողջ աշխատանքը կատարված էր շատ մանրակրկիտ, տեսածը քարեղեն չէր, դա մարդու կողմից ստեղծված փայտե կառույց էր։ Այսօր տապանը կարող է լիովին այլ տեսք ունենալ, քանզի երկրաշարժերի պատճառով տապանի տեղում մեծ անդունդ է առաջացել, շատ հավանական է, և կան որոշ վկայություններ, որ տապանը երկու մասի է բաժանվել։ 1987 թ. ստուգվեց Հակոբյանի նշած ժամանակի եղանակի տեսությունը։ Այն, ինչ հայտնաբերվեց, ապշեցուցիչ էր։ Ուղիղ չորս տարի՝ 1901-1904 թվականներին, երբ Հակոբյանը բարձրացել է լեռան վրա, Արարատի շրջանում տարօրինակ բարձր ջերմաստիճան է գրանցվել։

Էդ Դեվիսը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում եղած ժամանակ ընկերանում է մի երիտասարդի հետ, ով համաձայնում է ցույց տալ նրան Նոյան տապանը։ «Երիտասարդը սկզբում ասաց, որ տարվա այդ եղանակին հնարավոր չէ տեսնել տապանը, և եթե ես վերադառնամ որոշ ժամանակ անց, ապա ինձ կտանեն տապանի մոտ։ Բայց ես չէի կարող։ Մի քանի օր անց նա վերադարձավ և ասաց, որ կարող ենք տեսնել այն։ Գնացինք։ Բոլոր բարձրացողներս կապված էինք իրար։ Ես երբեք չէի եղել այդքան քաղցած, այդքան հոգնած և այդքան թրջված իմ կյանքում, որքան այն ժամանակ, երբ բարձրանում էինք Արարատ։ Նրանք ինձ ցույց տվեցին տապանը, ես կանգնած նայում էի մեծ լեռնաբեկորի մեջ մխրճված տապանին։ Չեմ կարող բացատրել այդ պահի զգացողությունը, բայց դա նման էր ուժեղ հարվածի»։

Իսկ էդ Բեհլինգի պատմությունն ի հայտ է եկել 70-ական թվականների կեսերին և ժամանակին մեծ մասսայականություն է ստացել։ Նա ասում էր, որ իրեն ցույց են տվել տապանը՝ Թուրքիայում օդանավով պտույտի ժամանակ։ Տապանի մոտ նրան տարել է մի թուրք։ «Նա ասաց, որ իր մեծ քեռին գիտի, թե որտեղ է տապանը։ Ես իհարկե կասկածում էի, բայց ինձ առաջնորդում էր բացահայտման հետաքրքրությունը։ Մենք անցնում էինք բլուրներով, բայց դա նման

էր արդեն գծված արահետի։ Մերունին կոնկրետ գիտեր, թե ուր է գնում։ Ես հոգնած էի ու սառած, ասացի, որ եթե մենք շուտով չտեսնենք տապանը, ապա ես ետ կդառնամ. քիչ անց՝ ծերունին շրջվեց դեպի ինձ և հեռվում ինչ-որ սև կետ ցույց տվեց։ Ես նայեցի և տեսա հսկայական նավ, ինչպիսին պատկերում են նկարներում կամ կարող ես տեսնել երազում»։

Ահմեդ Արլի Արսլանը թուրքական գլխավոր թերթի Վաշինգտոնյան թղթակիցն է, նա Արարատը շատերից լավ գիտի։ «Ես բարձրացել եմ Արարատի գագաթ ավելի քան 50 անգամ։ 1989 թ. գնացի Արարատ լեռան հյուսիսային կողմը՝ Աուռի կիրճի վերին հատվածը։ Գնացի ստուգելու ամերիկյան օդանավից արված լուսանկարների մատնանշված տարածքը։ Հանկարծ 100 քայլի վրա տեսա փայտյա կառույց, որը նման էր նավի։ Ես լիովին վստահ եմ, որ այն, ինչը ես տեսա ու լուսանկարեցի, անկասկած, առանց որևէ հարցի, Նոյան տապանն է»։

Վերջին 20 տարում բազմաթիվ գրքեր և փաստաթղթեր տեղեկացնում էին, որ Միացյալ Նահանգների հետազոտական կոմիտեն Նոյան տապանի՝ ինքնաթիռից արված լուսանկարներ ունի։ Սակայն կոմիտեն երբևէ պաշտոնապես չէր հաստատում այդ տեղեկությունները։

Դագ Ուոլֆ («Իրական Նոյան տապանը» գրքի հեղինակ), «1948 թ. ես տեսա Միացյալ Նահանգներում օդային ռազմական ուժերի նկարահանած ֆիլմը՝ Արարատ լեռան վրայով թռիչքի ժամանակ։ Երևում էր նավի տեսք ունեցող մեծ հետք, որը բացարձակ տարբերվում էր շրջապատող սառույցներից»։

1955 թ. հուլիսի 5-ին ֆրանսիացի հայտնի արդյունաբերող և հետազոտող Ֆերնանդ Նավարան մուտք գործեց պատմության, երբ դարձավ նոր ժամանակների առաջին մարդը, ով Արարատի վրա 1 մ. 50 սմ. երկարությամբ մշակված փայտի հնագույն կտոր գտավ։

Նավարան իր առաջին ուղևորությունը 5 այլ լեռնագնացների հետ միասին կատարել էր 1952 թ.։ «Քուրդ տղան ուղեկցեց ինձ դեպի Նոյան տապանը։ Ես արեցի ամեն ինչ, որպեսզի հասնեմ տապանին, բայց չկարողացա։ Ես չգտա տապանը, բայց սառույցի փայլուն շերտի տակ տեսա հսկայական ստվերոտ սև հետք։ Գիտեի, որ պետք է վերադառնամ բացահայտելու, թե ի՞նչ է դա»։

Երկրորդ անգամ նա վերադարձավ Արարատ 1955 թ. իր որդու՝ Ռաֆայելի հետ. «1955 թ. շատ տաք էր։ Հասկացա, որ եթե ես հնարավորություն ունեմ երբևէ գտնելու տապանը, ապա հենց դա էլ այդ պահն է։ Այս անգամ Ռաֆայելն առաջինը նկատեց ստվերոտ հատվածը՝ 4000 մ. բարձրության վրա։ Այն սառույցի մեջ էր՝ կիրճի խորքում»։ Նավարան իջավ սառույցի մեջ բացված անցքի մեջ։ Փայտը շատ հեշտ էր տեսնել, բայց այն քարացել էր սառույցի մեջ։ «Մինչ այդ՝ ես չէի էլ պատկերացնում, թե տապանը որքան մեծ կարող է լինել։ Ես երազում էի այդ մասին իմ ամբողջ կյանքում»։ Նավարան 4000 մ. բարձրության վրա մեծ քանակությամբ փայտ գտավ։ Փայտը չէր կարող լեռան վրա աճած լինել։ Այս տեղեկությունը սենսացիա առաջացրեց ողջ քրիստոնյա աշխարհում։ Փայտը փորձաքննության ենթարկվեց երեք տարբեր լաբորատորիաներում։ Բոլորը մատնանշեցին միևնույն ժամանակաշրջանը՝ 5000 թ. Քրիստոսից առաջ։

Ջորջ Շուինգհամեր (ԱՄՆ օդային ուժերի օդաչու). «Մենք գիտենք, որ մեր

կառավարությունն ունի Նոյան տապանի տարածքի ֆոտոներ և արբանյակից արված լուսանկարներ: Մենք կարծում ենք, որ նրանք չեն ուզում հրապարակել այդ լուսանկարները, որովհետև կբացահայտեն նաև, թե ինչպիսի հետախուզական տեխնոլոգիաներ ունեն: 1982 թ. տեղեկատվության ազատության օրենքի համաձայն և Փոլշեր Թեյլորի ջանքերի շնորհիվ լուսանկարները հրապարակվեցին: Այսպիսով, 1949 թ. ամռան արևոտ մի օր՝ հունիսի 17-ին, Միացյալ Նահանգների օդային ուժերի ինքնաթիռը թռչում է՝ լուսանկարելու և չափագրումներ կատարելու առաքելությամբ: Ֆոտոխցիկը 4200 մ. բարձրության վրա պատահաբար հայտնաբերում է սառույցե փայլուն շերտի միջից կիսով չափ դուրս եկած և նավի տեսք ունեցող «անոմալիա»: «Անոմալիա», որովհետև հայտնաբերվածը բացարձակապես բնորոշ չէր լեռան համար: Հրապարակումից հետո օդային ինժեներները և օպտիկական տեխնոլոգիաների երկարամյա փորձ ունեցող մասնագետները նշում էին, որ լուսանկարներում «անոմալիան» մեծ է և երևում է անգամ անզեն աչքով: Համաշխարհային մամուլի մեծ մասը արձագանքեց հայտնագործությանը. ինչն ամենահետաքրքիր էր, Նավարայի հայտնաբերած տարածքը «անոմալիայից» մի քանի հարյուր մետր հեռավորության վրա էր: Քանի որ Պենտագոնի 1949 թ. լուսանկարները չէին հրապարակվել մինչև 1982 թ., ուստի Նավարան ոչ մի կերպ չէր կարող իմանալ դրանց գոյության մասին: 1982 թվից Արարատ լեռան վրայի ստվերոտ, տարօրինակ հատվածը ստացավ նոր անուն՝ «Արարատյան անոմալիա»: Ականատեսների այս բոլոր վկայությունները ծնում են մի շատ հետաքրքիր հարց: Ինչպե՞ս են ոմանք հեշտությամբ գտնում տապանը, իսկ ուրիշները, զինված առավել մեծ տեխնիկական հնարավորություններով և գրեթե ճշգրիտ իմանալով տապանի տեղը, այդպես էլ չեն հասնում դրան: Տապանը ժամանակ առ ժամանակ կարծես անհետանում է»[123]:

Արարատի մասին ականատեսների Զգացումները և տպավորությունները

«Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագավոր Մասիս Ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մրմուր,
Գլուխը վեր՝ Դրախտի դուռ»[124]:

Հայ և այլազգի հեղինակների նկարագրությունները և ասույթները ընդամենը մի մասն են Արարատի մասին ասված բազմաթիվ հիացական խոսքերի և ապացույց, որ Արարատ լեռը Նախախնամությունն ընտրել է որպես պատվանդան՝ Քրիստոսի Եկեղեցու խորհրդանիշ Նոյան տապանի համար:

---

[123] Այս նյութերը վերցված են «Նոյան տապանի առեղծվածը» ֆիլմից, հեղինակ Արմինե Հարությունյան:

[124] Հովհաննես Շիրազ, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 74-76:

Ստորև առանց միջամտության ներկայացնում ենք նշանավոր անձանց կարծիքներ և մի շարք ականատեսների վկայություններ։

«Ես Մեծ Հայքում տեսա մի հույժ նշանակալից բան՝ այսինքն, լեռներից բարձրագույնն ու վիթխարագույնը։ Ասում են՝ նրա գագաթը միշտ ձյունով է պատած, միշտ ամպերի մեջ է, և հազվադեպ է լինում, որ լեռան գեթ երեք քառորդը ծածկված չլինի ամպերով... Լեռան վրա մի տուն կա, որը, ինչպես ասում են, Նոյն ինքն է շինել»[125]։

* * *

«Հարթավայրը, որի վրա բարձրանում է Աստվածաշնչյան լեռը, արևշատ և լայնատարած է։ Տիրոջ հավերժ կանգառի և հոգու բնակության վայր։

Զգայական հարստության պես մի մեծ ճոխություն է այն թվում։ Այս լեռան հոգևոր անտեսանելիությունը մաքրում և բարձրացնում է ամեն ինչ։ Կարելի՞ է արդյոք մեծաբեկոր բազալտի, արծաթափայլ սառույցի և ձյան մասին ասել, որ նրանք հոգևոր են։ Կարելի է, եթե դա Արարատն է։ Որքան էլ որ աչքդ հեռացնես Արարատյան դաշտավայրի տեսարանից՝ նյութականից, աշխարհագրականից, քարեղենից, միևնույն է՝ նա ճախրում է։ Եվ հոգում հանելուկ է առաջացնում և չարչարում է իր անլուծելիությամբ և աննկարագրելիությամբ։ Այս ամենի մեղավորը լեռան կերպարն է և հարթավայրի հանդեպ նրա դիստանցիոն վիճակը։ Չէ՞ որ նույնիսկ Էվերեստը կախված է Հիմալայների այլ բարձր լեռների վրա։ Նրա գագաթը բարձր է, սակայն միակը չէ, նաև սրածայր է, փափուկ, կլորավուն չէ, ինչպես Արարատինը։ Էվերեստի առջև չի բացվում ո՛չ լայնատարած հարթավայր, ո՛չ էլ անապատ, ինչը, իհարկե, ավելի կշեշտեր նրա գեղեցկությունը, ավելի կամրապնդեր մարդկության գլխավոր լեռան տեսքը։ Սակայն ոչ։ Էվերեստը կանգնած է մի քանի բարձրագույն լեռնագագաթների հետ միասին՝ լեռների օղակի մեջ, իսկ Արարատը միայնակ է, նրա գագաթը միակն է ամբողջ Մերձավոր Արևելքում։ Հիմալայները փակված լեռներ են՝ իրենք իրենց մեջ կենտրոնացված, իսկ Արարատը առանձին կանգնած հոգի է՝ իր դեմ տարածված հարթավայրի մեջ»։

Կարող է լինել Արարատից բարձր, բայց հնարավոր չէ նրանից կատարյալ և նրանից հոգևոր լինել, հնարավոր չէ նաև նրանից ավելի առասպելական լինել։ «Խանդաղատանքով և աղոթական վիճակով պետք է կանգնել այդ գեղեցկության և սրբության առջև»[126]»[127]։

* * *

«Էվերեստը չորս կողմից շրջապատված է անձկության ոգով, իսկ Արարատը՝ լայնածավալության։ Ինչո՞ւ է այդպես. որովհետև նրա վրա կա Աստծո նախախնամությունը։

---

[125] Ժուրդեն Դը Սևերակ՝ կաթոլիկ քարոզիչ, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 61:

[126] Ա. Պուշկին:

[127] Нелли Саакян, Мировая Гора, Ереван 2004, ст. 18-20:

Այո, հավերժ հուզական լեռ է, մշտապես երևակայության վրա ներգործող, թևավոր լեռ էր։ Մշտապես հոգում պոեզիա արթնացնող, որը պոեզիայի ամենաբարձր տեսակն էր։ Մագնիսական սար է. կարծես մագնիսի պես ձգում է դեպի իրեն։

Արարատը ճախրում է՝ կանգնած է հորիզոնում, բայց գնում է քարավանի պես։ Իսկ Մեծ Արարատի ճախրող գագաթը հաճախ ծածկում է միայնակ մի ամպ։ Լուսեպսակի զգացողությունը նրա սուրբ և լուսավոր ճակատին պատրաստ է. «Ինձ հաջողվեց տեսնել ամպերի ծառայությունը Արարատին... Ես իմ մեջ ստեղծեցի վեցերորդ՝ «արարատյան» զգացողությունը, լեռան ձգողականության զգացողությունը»[128]»[129]։

* * *

«Այս լեռը հետաքրքիր է ոչ միայն այն բանի համար, որ նրա հետ սրբազան հիշողություններ են կապված, այլև իր դիրքով և մեզ համար քիչ ծանոթ վայրերով, արտաքին տեսքով և իրեն շրջապատող ժողովուրդներով... Այս վայրը կրում է ընդհանուր անուն՝ Անդրկովկաս, իսկ հատկապես այնտեղ, որտեղ գտնվում է Արարատը, կոչվում է Հայաստան...

Մի ֆրանսիացի ճանապարհորդ տեսնելով Արարատը՝ ասել է. «Ես ակամա ճնշվեցի՝ զգալով իմ ոչնչությունը Հայաստանի այս հսկայի առջև։ Նա այնքան հսկայական բարձրություն ունի, որ հարևան գագաթները, որոնք 50 անգամ բարձր են մեծ զանգակատնից, նրա առջև թվում են որպես թզուկներ։ Այս վեհությունն առավել կապված է նրա պարզ կառուցվածքից, միատարր գույնից և անհարթության բացակայությունից, ինչը մի ինչ-որ անհուն զգացողություն է առաջացնում։ Ամբողջ աշխարհում, - շարունակում է նա, - ես չգիտեմ առավել գեղեցիկ լեռներ, չգիտեմ նույնիսկ մեկ լեռ, որ այդքան մերձ լինել, իսկապես մերձ լիներ ամպերին»...

Տարօրինակ ոչինչ չկա այն բանում, որ Արարատին շրջապատող ժողովուրդները այդքան սիրում են այդ լեռը։ Նրան, ում բարեբախտաբար վիճակվել է գեթ մեկ անգամ տեսնել այդ լեռը, նա չի կարող այն մոռանալ իր ամբողջ կյանքում։ Դժվար է պատկերացնել ավելի վեհաշուք և գեղեցիկ տեսարան, քան Արարատը՝ լավ արևոտ եղանակին։ Նայելով հեռացող անմատչելի բարձունքին և հավերժական ձյունով շողշողուն նրա գագաթին՝ հասկանում ես, որ նրան շրջապատող բնակիչները, ովքեր դիտել են նրան վաղ մանկությունից մինչև խոր ծերություն, կարող են այդ լեռը հոգու պարզությամբ կոչել «աշխարհի մայր» և նրա հանդեպ որդիական հարգանք զգալ»[130]։

* * *

«Աստվածաշունչը ցույց է տալիս նաև համաշխարհային Ջրհեղեղից փրկված մարդկության վայրը. դա Արարատն է։

---

128 Осип Мандельштам, տե՛ս Нелли Саакян, Мировая Гора… ст. 21:

129 Нелли Саакян, Мировая Гора… ст. 20-21:

130 Е. П. Ковалевский, Гора Арарать, С.-Петербургъ, 1903, ст. 5-6, 20-21, 39.

Սա ժամանակակից, հետջրհեղեղյան մարդկության օրրանն է...

Պաղեստինից և Եգիպտոսից հետո, բնականաբար, ցանկություն կար տեսնել Արարատը: Քեոփսի բուրգ բարձրանալուց և օրհնյալ Երուսաղեմն իր Գողգոթայով, Կեդրոնի հեղեղատը, Զիթենյաց լեռը, Հորդանանի Մեռյալ ծովը և այլ, մեզ համար սրբազան աստվածաշնչյան վայրերը տեսնելուց հետո ես անհագ ցանկություն ունեի տեսնել Աստվածաշնչյան սրբությունը և սկսել վերելքը՝ դեպի նրա անմատչելի բարձունքը՝ այն խորհրդավոր տարածքը, որտեղ սուրբգրային մարդու (Մովսեսի) պատկերացումները համաշխարհային Ջրհեղեղից փրկված իր նախահայր Նոյին՝ նրա տապանով, ագռավով և աղավնիով հանդերձ՝ տեղադրեց այստեղ, որտեղ ժամանակակից մարդու պատկերացմամբ մինչ օրս մտածում են գտնել, նույնիսկ եթե ոչ տապանը՝ որպես անապականության աքանչելի հուշարձան, այլ ծայրահեղ դեպքում գոնե այն վայրը, ուր նա այն ժամանակ կանգ է առել: Եվ ես որոշեցի այդ ամառ՝ 1882 թ., գնալ Փոքր Ասիա, որպեսզի տեսնեմ Արարատը և փորձեմ բարձրանալ նրա վրա: Բացի այն, որ տեսնելու էի Արարատը, պիտի տեսնեի նաև այն վայրը, որը առաջին մարդու կողմից իր հիասքանչ և խորհրդավոր հայրենիքը՝ երկրային Դրախտը կորցնելուց հետո դարձավ մարդկության երկրորդ ծննդավայրը: Դա նշանակում է՝ անձամբ տեսնել այն վայրը, ուր Նոյը, Ջրհեղեղից անմիջապես հետո դուրս գալով տապանից, Աստծուն երախտագիտության զոհ մատուցեց իր փրկության համար և որտեղ նա, ի հիշատակ այդ մեծ իրադարձության, տնկեց առաջին խաղողի այգին...

Փառահեղ երկնքում գոնե մի փոքր ամպ, գոնե մի ստվեր՝ ոչ. կուսական, մաքուր երկինք: Աստղերը դանդաղ, բայց նկատելի խամրում են: Իմ շուրջը ապշեցուցիչ կապույտ է՝ կարծես մուգ փիրուզագույն, և միայն հորիզոնում չէր, որ այդքան կապույտ էր. հավանաբար դա երկրային մթնոլորտի շերտն էր:

Հանկարծ կարծես թե մի ինչ-որ վառ, տարօրինակ, անբնական սպիտակ բան փայլատակեց այդ մուգ կապույտ հորիզոնի շերտին: Ի՞նչ էր դա:

Այո, չէ՞ որ սա նա է՝ Արարատը... Ինչ-որ բան սեղմեց սիրտս:

Ես ուշադիր նայում եմ դեպի աջ. այնտեղ բարձրանում է ձյունե գագաթով մի հսկա, դա էլ Ալագյազն էր: Բայց այն ոչնչությունն է Արարատի առաջ: Ջարմանքից ապշած՝ չեմ կարողանում Արարատից հայացքս կտրել՝ առավել զարմացած, քան սարսափելի տեսարանից: Դա մի ինչ-որ անասելի բան էր: Ամբողջ լեռը, մի ամբողջ ձյունապատ տարածք, մեր առջև կանգնած է ավելի քան 100 վերստ բարձրությամբ. այնքա՜ն հսկայական է այդ հողե և քարե զանգվածը՝ երկինք բարձրացած և քուն մտած ձյունով...

Թե՛ ստորոտը և թե՛ միջին մասը իրենց վրա կրում են մյուս բոլոր լեռների հետ ընդհանուր դեղնամոխրագույն երանգ, բայց նրանց երկնահաս, ձյունածածկ գագաթները երկնագույն երանգ են ընդունում, այնպես, որ գրեթե անհնար է դառնում սահմանազատել, թե որտեղից է սկսվում երկնային կապույտը, և որտեղ է վերջանում լեռան գագաթը...

Առավոտը հիասքանչ էր: Արարատի տեսքը, հենց մեր աչքերի առջև գրեթե ուղղաձիգ երկինք բարձրացող, իրենից ներկայացնում էր առավել վեհասքանչ,

առավել ահարկու մի տեսարան, քան ես ակնկալում էի. այն, ինչ ես տեսա, չէր կարող պատկերվել նույնիսկ իմ երևակայության մեջ»[131]։

* * *

«Արարատի մասին ասածները բոլորը ճշմարիտ էին, ամեն տեսակի ընդհանուր արտահայտություններ, որոնք առաջ ինձ ծիծաղելի էին թվում, պարզվեց՝ զուտ ճշմարտություն էին։ Մեկ-երկու օր ես փորձում էի դիմադրել Արարատին։ Սակայն լեռան ուրվագծերը տեսնում էի ամենուրեք. դրանք հառնում էին թաղամասերի ծայրին՝ իրենցով լցնելով ամպերի և մայրաքաղաքի կառուցապատ տների միջև ընկած ազատ տարածությունը... մի անգամ լուսաբացին, կանգնած քաղաքի բարձր կետերից մեկի՝ Մատենադարանի աստիճանների վրա, առաջին անգամ Արարատը տեսա՝ իր ողջ հմայքով։ Այն հիասքա՛նչ էր՝ վխտացող մրջնանոց հիշեցնող քաղաքի վերևում, անհամեմատ ավելի վեհ էր Սփյուռքում տարածված անհամ, շաբլոն պատկերներից։ Այդ լեռն անհավանականության, անբնականության աստիճանի բարձր էր թվում։ Թեև ես գտնվում էի նրանից քառասուն մղոն հեռու, այն զգացողությունն ունեի, որ բավական է մի քայլ անեմ, և կկարողանամ ազատ դեգերել նրա ծալքապատ լանջերով։ Վաղորդյան լույսով ողողված ձյունածածկ գագաթը շողշողում էր թագի նման։ Այլևս անկարող էի անտեսել նրա ներկայությունը։ Մի շաբաթ էլ չանցած՝ այն լիովին տիրացավ ինձ՝ հարկադրելով գողունի ետ նայել իրեն, հայացքով որոնել արևմուտք ուղղված փողոցների ծայրին և տրտմել, երբ նրա ուրվագծերը տեսողությանս համար դառնում էին անհաղթահարելի։ Բոլոր հայերի նման՝ այժմ ես էլ հրապուրված էի այդ լեռով»[132]։

* * *

«Ճանապարհին իմ առջև բացվեց երևանյան շրջանի լայնարձակ և պտղառատ դաշտավայրը։ Անմիջապես ես տեսա Արարատյան լեռները, որոնք հսկայական գագաթների պես վեհապանծորեն բարձրանում էին դեպի ամպեր։ Եթե նույնիսկ ես չհիշեի էլ Նոյան տապանի մասին, ապա այդ դեպքում էլ Արարատն ինձ կապշեցներ իր հիասքանչ տեսարանով...

Արարատը, որ իր կողմն է գրավում ամպերին, հանդիսանում է ամպրոպների և փոթորիկների բնակավայր։ Այստեղ հոգին բերկրում է, և միտքը լցվում նրանով, ինչը ծածկվում է հայացքներից» [133]։

* * *

«Արարատյան լեռների վրա հանգրվանեց Նոյան տապանը։ Ավանդությունը ցույց է տալիս բարձր և ձյունածածկ մի լեռան՝ Մասիսին։ Ամերիկյան միսիոներներ Սմիթը և Դվայտը այցելեցին Հայաստան։ Սմիթը գրում է. «Մենք անցնում էինք հայտնի լեռան մոտով, որին հայերը Մասիս են անվանում, իսկ եվրո-

---

131 Д. Л. Мордовцева, На Араратъ, С.-Петербургъ, 1883, ст. 3-4, 76-77, 117.

132 Ֆիլիպ Մարսդեն, Խաչմերուկ, ՀԳՄ հրատ. Երևան 2008, էջ 202-203:

133 Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 11-13.

պացիները՝ Արարատ։ Քսան օրից ավելի՝ այն չծածկվեց մեր աչքից... Ես անկախ ինձանից՝ ընկա խոր մտածմունքների մեջ, թե այս (Արարատի) գագաթին ժամանակին հավաքվել էին ամբողջ աշխարհում եղող միակ կենդանի արարածները։ Եվ որ ես Արաքսի հովտում կանգնած եմ մարդկության երկրորդ օրրանի վայրում» [134]։

* * *

«Ահավասիկ, իմ առջևում է իմ ճամփորդությունների, իմ հույսերի նպատակակետը։ Աչքերս հետազոտում և առանց առաջնորդի կանգ են առնում այն կետերի վրա, որոնց դիրքը հստակ գոյություն ուներ իմ գիտակցության մեջ։ Ինչոր չափով կարծես սեփական տանս մեջ եմ, և զարմանալի զգացում է համակում հոգիս։ Հավանաբար, ամեն մի ուխտավոր, որ հավատով լի այցի է գնում հեռավոր սրբավայր, նույնպիսի զգացում է ապրում։ ...Եվ ահա, այսօր առաջին անգամ տեսա... այդ աննկարագրելիորեն գեղեցիկ լեռը՝ Արարատը, իր ողջ վսեմ փառավորության մեջ։ Առավել գեղեցիկ բան, քան բնության կողմից ստեղծված այս գեղեցիկ տաճարներն են, անհնար է, որ գոյություն ունենա աշխարհում։ Հրաբխային լեռներից մինչև այժմ հայտնի եղածները խոնարհվում են սրա պայծառության առջև։ Եվ հնարավո՞ր է, արդյոք գտնել նման մի բազմազանություն՝ պահպանելով հանդերձ ամբողջականությունը ու օրինաչափությունը։ Եվ որտե՞ղ կարելի է տեսնել երկու լեռների այնպիսի մի ներդաշնակություն, որոնք, գտնվելով այդպիսի հեռավորության վրա, մի ամբողջություն կազմեն և այդպիսի ճիշտ ու ներդաշնակ միությամբ հիացմունք պատճառեն։ Եվ աշխարհում որտե՞ղ կարելի է գտնել այնպիսի մի շրջակայք, ինչպիսին Արարատինն է։ Եվ ո՞ր հողն է ավելի սուրբ, քան նրանը։ Ո՞ր լեռան հետ են կապված այդքան հիշողություններ, որքան Արարատի։ Ողջ աշխարհում և ոչ մի տեղ»[135]։

* * *

«Ինչպե՛ս սեղմվեց իմ սիրտը, երբ իմացա, որ նա (Արարատը), սահմանի մյուս կողմում է գտնվում՝ ձեր նախնիների հողում։ Մշտապես հայերի աչքի առջև է, բայց անձեռնմխելի, անհասանելի և այնքան մոտ, որ թվում է, թե ուր որ է՝ նա իր սպիտակաձյուն գագաթներով և տաք, ջերմ սրտով կփարվի Երևանին։

Արշալույսին ես ժամերով հյուրանոցի պատուհանի մոտ կանգնած՝ սպասում էի հանդիսավոր ակնթարթին, թե ե՞րբ վեհապանծ լեռը դուրս կգա իրեն պատող մեգից։ Երկու օր Արարատը ծածկվել էր թուխ մառախուղով։ Հույսն ու հավատն ինձ չէին լքում, ինչպես որ, հավանաբար, առաջին քրիստոնյաները սպասում էին Աստծո հայտնությանը։ Եվ ահա, երրորդ օրը տեղի ունեցավ հրաշքը։ Արարատը մի ակնթարթում դուրս եկավ մառախուղից և փայլեց իր ամբողջ վեհությամբ։ Աննկարագրելի կախարդական ակնթարթ էր. Աստվածաշնչյան

---

[134] Библейский словар, Доктор Эрик Нюстрем 19-й в. 1989, ст. 24-25.

[135] Հերման Վիլհեմ Աբիխ, գերմանացի երկրաբան, ակադեմիկոս: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 233:

հսկան՝ պսակադրված մարմարյա թագով։ Սա մի Տիրակալ էր՝ առանց իր ազգի՝ հայացքով դեպի Հայաստան ձգտող։ Եթե ինձ որևէ այլ բան վիճակված չլիներ տեսնել Հայաստանում, ապա միայն դա ինձ բավարար կլիներ, որպեսզի միշտ հիշեի ձեր երկիրը. այս արշալույսը՝ լի հանդիսավորությամբ և վեհությամբ» [136]։

* * *

«Մենք բակ դուրս եկանք։ Հենց իմ առջևում արևից փայլում էր Մեծ Արարատի ձյունապատ գագաթը։ Ոչ միայն զգացմունքներս, այլև մտքերս անսովոր ձևով սրվեցին։ Բազմաթիվ ասոցիացիաներ, որ ընդունակ էին առաջանալ մարդկության լեռան՝ հավատքի լեռան շուրջ, հանկարծ ճախրեցին իմ մտքով։ Աստվածաշունչը զարմանալիորեն պարզ կերպով կապվում է մեր օրերի հետ. ես տեսա Արարատն այն մարդկանց աչքերով, որ ապրել են Հայոց լեռան լանջերին՝ մինչ Քրիստոսի ծնունդը։ Ես տեսա սև, արագընթաց ջրհեղեղյան ջրերը, տեսա խեղդվող ոչխարների, ավանակների, ծանր, բութ քթով բեռնանավին, որ ահեղորեն լողում է ջրերի վրա... Բայց ես չէի մտածում միայն Բիբլիական լեռան մասին։ Ես հագենում էի նրա գեղեցկությամբ, այն փայլում էր իր ամբողջ հասակով մեկ, նրան չէին ծածկում Երևանի տները, իր քարե ստորոտից մինչ իր սպիտակ գագաթը նա կանգնած էր՝ լուսավորված առավոտյան արեգակով։ Նա ցավակցում էր այս կյանքի անցած հազարամյակներին։ Ամեն ինչ անցնում է։ Ոչինչ չի անցնում...

Մխանման կարմիր լույսը կանգնել էր կարմիր քարերի վրա։ Այդժամ Արարատը, և նրա մասին Բիբլիական լեգենդը կարծես դարձել էին այժմեական։ Աստղերը կախված էին մեր գլխավերևում՝ հարավային, հայկական աստղերը՝ նրանք, որոնք կանգնած էին Արարատի վրա, երբ դեռ չէր գրվել Աստվածաշունչը»[137]։

* * *

«Երևանի մոտերքում, իր մենավոր գեղեցկությամբ ամենքին հիացմունք պատճառելով, կանգնած է Արարատը։ Ես չեմ հիշում, թեև սարեր շատ եմ տեսել, կա՞ մի ուրիշ՝ այնքան ապշեցնող ու միևնույն ժամանակ գերող, ինչքան այդ գագաթը։ Նրա գեղեցկությունը ոչ միայն նրանում է, որ ձյուներն անընդմեջ գունափոխվում են արտասովոր քնքուշ նրփներանգներով, և ոչ միայն նրանում, որ թվում է, թե Արարատը սավառնում է երերում՝ որպես կիսանյութեղեն մի բան, այլև նրա գեղեցկությունը նրանում է, որ այդ գագաթը համարյա թե միայնակ է։ Նրա շուրջը բարձր բլուրներ են, իսկ կողքին հազիվ նկատվում է Փոքր Արարատը, և այդ բոլորից վեր՝ բարձրանում, երկնակամարի մեջ է սուզվում այդ հսկան։ Նա թվում է մի անսահմանորեն հին իմաստուն, և ակամա մտաբերում ես, որ նրա ոտքերի տակ է սկզբնավորվել մարդկային քաղաքակրթությունն՝ ամենահին ժամանակներից ի վեր, մեկը մարդկային առաջնակարգ քաղաքակրթու-

---

[136] Десанка Максимович, сербская поэтесса с мировым именем, տե՛ս Нелли Саакян, Мировая Гора, Ереван 2004, ст. 35-36.

[137] Васили Гросман, տե՛ս Нелли Саакян, “Мировая Гора”, Ереван 2004г., ст. 39.

թյուններից, որ երբևիցե գոյություն է ունեցել երկրագնդի վրա: Եվ Արարատն այն ժամանակ էլ հենց այսպիսին էր, և նրա պատկառելի խաղաղությունն ու միայնությունն այնպես էին առինքնում քաղաքակրթության առաջին մարդկանց ուշադրությունը, որ ամբողջ Առաջավոր Ասիայի ավանդություններն այս լեռը դարձրել են իրենց ամենախորունկ առասպելների կենտրոնը»[138]:

* * *

«Արարատը մշտապես առկա է հայոց լեզվում, հայի հիշողության, հայ քերթության մեջ, հայ կյանքում: Բայց և այսօրվա հայկական պետության սահմանների մեջ չէ. գտնվում է գերության մեջ:

Ընդհանրապես, բոլորս մեր լեռների մասին ասում ենք՝ «ամենագեղեցիկը աշխարհում»: Ամեն մեկն՝ ի՛ր լեռան մասին: Սակայն այստեղ այցելող օտարազգին ևս պարտավորվում է խոստովանել, որ Արարատն իրոք աշխարհի ամենագեղեցիկ լեռն է: Դա ինչ-որ անմոռանալի բան է: Այստեղ մարդ սոսկ մի սարալանջ կամ բարձր լեռնագագաթ չէ, որ տեսնում է: Նա տեսնում է լեռն ամբողջությամբ՝ ստորոտից մինչև բարձրաբերձ գագաթը՝ հինգ հազար երկու հարյուր մետր: Ամեն առավոտ հայն այս ամենը տեսնում է...

Պետք է շատ բախտավոր լինես, որ պատահես պայծառ օրվա, որպեսզի տեսնես, թե մինչև ո՞ւր է հասնում և ինչպե՞ս է գծագրվում կապույտ երկնքում հսկայական լեռնադաշտի նմանվող նրա զանգվածեղ գմբեթը: Դա բոլորովին էլ հեշտ բան չէ: Երբ Նիկոլայ ցարն այս հողերը գրավել էր պարսիկներից և կցել իր կայսրությանը, ժամերով կանգնել է լեռան դիմաց, բայց մինչև վերջ էլ չի կարողացել տեսնել Արարատի գագաթը: «Դե հանիր, վերջապես, քո գդակը և խոնարհվիր քո տիրոջ առաջ», գոռացել է ցարը: Բայց մեկնել է ձեռնունայն: Իսկ նույն այդ ժամանակ բանաստեղծ Պուշկինին Արարատը հայտնվել է անմիջապես: Պետերբուրգից հեռացած Պուշկինն անցել է այս վայրերով և գնացել է Էրզրում՝ հետևելով հաղթական ռուսական զորքերին: Իր ուղեգրության մեջ նա իր թռուցիկ տպավորություններն է գրել առասպելական լեռան մասին. «Կազակներն ինձ արթնացրեցին լուսաբացին... Դուրս եկա վրանից՝ առավոտյան մաքուր օդի: Արևն էր ծագում: Ջինջ երկնքում սպիտակին էր տալիս Ձյունապատ, երկգլխանի մի լեռ: «Սա ի՞նչ լեռ է», - հարցրի ես՝ ձգելով մարմինս: «Արարատն է», - լսեցի պատասխանը: Որքա՜ն զորավոր է հնչյունների ներգործությունը: Անհագորեն նայում էի բիբլիական լեռանը. տեսնում էի տապանը, որն իջել էր նրա գագաթին՝ նորոգման և կյանքի հույսով, դրա միջից թռչող ագռավին ու աղավնուն՝ որպես դատաստանի և հաշտության խորհրդանիշ»:

Ջրույցները ցեղը կապում են բնության և պատմության հետ: Տվյալ դեպքում՝ հայերին Արարատի և Նոյի տապանի հետ»[139]:

---

[138] Անատոլի Լունաչարսկի՝ ռուս քաղաքական գործիչ, քննադատ, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 68-69:

[139] Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայերը, Երևան, 1984, էջ 14-15, 47:

* * *

«...Նորից՝ լեռներ։ Ասես հատիչով տաշած լինեն։

Երկինքը կապույտ է, ինչպես ամենուր, և մի տեսակ անսովոր, սառնավուն-թափանցիկ լեռների երկինք է՝ ոչ թե տափաստանի, ոչ թե ծովի, այլ՝ լեռների, որոնք շարունակ սառնություն են արտաշնչում։

Դա Հայաստանի երկինքն էր, որ բացվեց հանկարծակի...

Իսկ ես ուզում եմ տեսնել Արարատը։ Ջէ՞ որ վերջապես ես պետք է տեսնեմ այն, ինչի մասին միայն կարդացել եմ, կարդացել եմ դեռևս դպրոցում՝ դասի ժամանակ գիրքը նստարանի տակ թաքցրած...

Ես միայն առավոտյան տեսա այն, ինչն արդեն գիտեի և վաղուց սպասում էի։

Եվ, այնուամենայնիվ, երբ տեսա, հանկարծակիի եկա։ Իսկ ես կարծում էի, թե այլևս ոչ մի բան ի վիճակի չէ ինձ հանկարծակիի բերելու...

Մաքուր երկնակամարում կապտին էր տալիս ձյունապատ երկու գագաթներով լեռը։ Գագաթները փափուկ լույսով էին օծված, չէին փայլում, արտացոլելով արևը, այլ լույս էին ճառագում։ Բուն լեռը, որ հավասար լույսից և խիտ օդից էր հյուսված, բարձրանում էր ոչ թե իրար հրմշտող լեռների միջից կամ ամեն ինչի նկատմամբ անտարբեր, քար լռությամբ իրար վրա կուտակված ժայռերի արանքից, այլ աճում էր անմիջապես լայնարձակ դաշտավայրից, որը տվնջական լույսի պահապանն էր» [140]։

* * *

«1300 մետր բարձրության վրա կառուցված Աստղադիտարանը իշխում է Արարատյան դաշտավայրի վրա։ Լեռները դեպի դաշտավայր են իջնում լայն սանդղավանդակներով։ Այստեղից՝ Աստղադիտարանից, չքնաղ տեսարան է բացվում հեռավոր Արարատի՝ աշխարհի ամենագեղեցիկ լեռան և դաշտավայրի կապույտ հեռաստանների վրա։

Արթնանալով լուսաբացին՝ դուք կարող եք հետևել, թե արևածագի հետ մեկտեղ Մեծ Արարատի ձյունափառ կատարը ինչպե՛ս է փոփոխում իր գունեբանգները, դառնում մեկ՝ վարդագույն, մեկ՝ նարնջագույն, մեկ մուգ կարմիր, որպեսզի հետո՝ ամբողջ օրը, ամպերի տակ խաղաղվի իր բաց կապույտ հոյակապության մեջ» [141]։

* * *

«Այսօր երկինքը պարզ է, և առավոտից արդեն Արարատն են բաժանում։ Մեզ այն տվեցին առանց սակարկելու, լրիվ՝ և՛ Մեծը և՛ Փոքրը։ Բայց չէ՞ որ Արարատը քմահաճ է։ Եվ անկաշառ։ Նախկինում Պուշկինի փողոցը կոչվում էր Ցարական, որովհետև այնտեղ էր իջևանել Նիկոլայ Առաջինը՝ մի տան մեջ, որը մինչև այսօր էլ պահպանվում է։ Քանի ցարը Երևանում էր, Արարատը ոչ մի ան-

---

[140] Լև Կրիվենկո, Յոթ գարունների երկրում, գիրք II, «Անմահականը», Երևան1983 թ ., էջ 573-575:

[141] Եկատերինա Ստրոգովա՝ ռուս գրող, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրայր Խաչատրյան, Երևան, 2003, էջ 76-77:

գամ չերևաց ամպերի ետևից։ Կարելի էր կասկածել նրա գոյությանը։ Այդպես էլ Նիկոլայը մեկնեց՝ չտեսնելով Արարատը։ Նա զայրույթով ասաց. «Բայց Արարատն էլ չտեսավ ռուսական ցարին»։ Ամպերը Արարատի ծառաներն են։ Ուզած պահին նա կարող է ամպերով վարագուրել իր՝ մոդայիկ կեղծամ դրած գլխանման ճերմակ գագաթը։ «Ինձ հաջողվեց տեսնել ամպերի ժամասացությունը Արարատին»,- բերկրալից ասում է Օսիպ Էմիլևիչը, որին Արարատը բարեհաճ է վերաբերվել։ Ինչևէ, բանաստեղծը հավաստիացնում է, թե իր մեջ մշակել է վեցերորդ՝ «արարատյան» զգայություն՝ լեռան ձգողության զգացողություն։ Մի խոսքով, Արարատը Երևանի տեսարժան վայրն է. թեև որպես այդպիսին չի նշված ուղեցույցներում, բայց դրա փոխարեն ներհյուսված է Հայկական գերբին»[142]։

* * *

«Նայում ես՝ թվում է, թե դուրս է պրծել ինչ-որ վիթխարի բան, և հանկարծ՝ դրվագված գլուխ, որ հեռու է բոլոր գագաթներից և փառահեղ է։ Եվ այն տպավորությունն է առաջացնում, թե մարմնից պոկված է գլուխը, ճերմակ մոլորակ է և պիտի ընկնի-փշրվի կամ ընդմիշտ համբառնա երկինք՝ իր հետ տանելով նահապետների ժամանակները։ Ցնորք չէ՞ քսաներորդ հարյուրամյակում տեսնել տապանի պատվանդանը, որ լողացել է ահա՛ այստեղ՝ օդի մակերևույթի վրա։ Եվ վերհիշել հայերի լեգենդը, թե Դրախտը հենց այստեղ է ստեղծվել։

Ոչ. Արարատի համար անվայել է՝ երևալ քսաներորդ դարի քսանական թվականներին։ Եվ մեզ էլ անվայել է՝ նրան նայել այս դարից։ Նայում ես՝ ամեն ինչ շուրջդ մթագնում է»[143]։

* * *

«Լեռը դեմք ունի՞։

Առաջ այդ հարցին ես երևի չիմանայի, թե ինչ պատասխանեմ։

Իսկ հիմա ասում եմ՝ այո, ունի՛։ Այդ նրանից է, որ ես տեսա Արարատը. նա միշտ շրջված է դեպի Հայաստանը՝ իր գեղեցիկ ու վշտալի դեմքով։

Արարատը հանգիստ ու լուռ կանգնած է Երևանի վրա, ամբողջ Հայաստանի վրա։ Նույնիսկ երբ ամպերը ծածկում էին ամբողջ երկինքը, միևնույնն է, զգում էիր, որ նա կա, նա այստեղ է։ Եվ գիտեիր, որ Հայաստանի երկինքն էլ իր հերթին հավաքված է նրա ճերմակ գագաթի շուրջ։

Երազանքի լեռ։ Լեռ-խորհրդանիշ։ Մայր լեռ...

Առավոտյան ես միշտ բարձրանում էի հյուրանոցիս ամենավերին հարկը, որպեսզի առաջինը «բարի լույս» ասեմ նրան, հետո նոր միայն ներքև էի իջնում, քայլում այն նույն ճանապարհներով ու կածաններով, որոնք բոլորն էլ, միևնույնն է, դեպի Արարատ էին տանում»[144]։

---

[142] Լև Սլավին, Յոթ գարունների երկրում, գիրք II, «Հայաստան, Հայաստան», Երևան1983 թ էջ 23-24:

[143] Андрей Белый, Армения, Ереван, 1985, ст. 15-16.

[144] Ռամիլ Հաքիմով, Յոթ գարունների երկրում, գիրք II, Զրույց քարի հետ, Երևան1983 թ էջ 348:

* * *

«Գիշերը գնացքը բարձրացավ սարահարթ։ Ցրտեց։ Իսկ առավոտյան տեղիցս վեր թռա, երբ արևի լույսի առաջին քառակուսին գաղտագողի սողաց կուպեի մի անկյունից մյուսը։ Ես նետվեցի դեպի պատուհանը և քարացա։ Մեջքովս մի թեթև սարսուռ անցավ։ Առաջին ցանկությունս էր՝ արթնացնել բոլոր ուղեկիցներին։

Ես նետվեցի մի պատուհանից մյուսը, երրորդը, հետո ամբողջ ուժով ձգեցի փոկը, իջեցրի փեղկը։ Սառն օդի հետ մեկտեղ վագոն ներխուժեցին խստաշունչ եզրագծերն ու անաղարտ գույները. այնտեղ՝ դրսում, հինավուրց ու կուսական երկնքում, մինչև զենիթ էր խոյանում երկսապատ ձյունափառ մի լեռ՝ ծածկելով երկրի մի ամբողջ եզրը և երկնակամարի կեսը։ Դա Արարատն էր։ Նրա ձյունները, թվում էր, մինչև արևն են հասել։ Դրանց փայլն օդը լցրել էր լուսավոր մշուշով։

Արարատ։ Ոչ մի կերպ չէի կարողանում հավատալ, որ իմ սեփական աչքով եմ տեսնում այդ լեռը։ Հնագույն բոլոր առասպելները, հեռավոր դարերի բոլոր հեքիաթներն էին մարմնավորվում այդ հսկայի մեջ։ Օդի հաստ շերտը ծածկել էր նրա հզոր ստորոտում սփռված հողերը, և դրանք բնավ չէին երևում։ Լեռան գագաթը, ճեղքելով մշուշը, իշխում էր աշխարհի վրա։

Ես աչքս չէի կտրում Արարատից։ Ո՛չ ուտել էի ուզում, ո՛չ խմել։ Վախենում էի՝ եթե դրանով զբաղվեմ, Արարատը կանցնի, կանհետանա...

Հազարամյակներն էին հպվում աչքերիս։ Ես շնչում էի քարերից տաքացած օդը, քարեր, որոնք առատորեն փռված էին Հայաստանով մեկ։ Քարերն այդ տաքությունը ստանում էին հսկայական արևից, որն այստեղ ճեղքել էր երկնքի կապույտը՝ վստահությամբ և ուժով։

Լույսի գետեր էին հոսում երկրով... Այստեղ հանգույցն էր կրոնների, ավանդությունների, առասպելների, պոեզիայից անբաժան պատմության և պատմության բոցերում թրծված պոեզիայի»[145]*։*

* * *

«Նախնիների երևակայության մեջ Արարատը համարվում է գերբնական ուժի մի հրաշալի գործ։ Նրա հավիտենական ձյունապատ գագաթի հետ կապված են մոռացված դարերի աղոտ հիշողություններ, ավանդությամբ գեղազարդված դեպքեր։ Աստվածային ձեռքով կերտված այս Արարատը դրված է որպես հակադրություն առասպելական աշտարակի, որ մահկանացուները զուր աշխատեցին մինչև երկինք բարձրացնել։ Այս հրաբխային լեռան վեհությունից ստեղծվել է ուժի և վսեմության մի այնպիսի մեծ տպավորություն, այնպիսի բարձրագույն բանաստեղծություն, որ պարզամիտ հոգիները բնության այս հրաշալիքի առջև ամեն ժամ երկյուղով ու հիացմամբ են պաշարված, մանավանդ, երբ գիշերվա մթության մեջ այս վիթխարի լեռան գագաթը ցոլում է փառավոր լուսավորությամբ։

Մասիսը Առաջավոր Ասիայի հրաշալի լեռն է, որ իրեն շրջապատող ամեն ինչին նսեմացնում է և տիրաբար իշխում...

---

[145] Կոնստանտին Պաուստովսկի, Յոթ գարունների երկրում, գիրք I, «Հազարամյակների Մշուշը», Երևան 1978 թ., էջ 80-82:

Ոչ մի հանդիպագոտի, ոչ մի հարակից լեռ չի գա ու ծածկի հսկա լեռան ստորոտը, չի նսեմացնի նրա մեծությունը։ Արարատն ինքն իրենով վեր է խոյացած, կարծես թե հանկարծ դուրս ելած երկրի խորքերից՝ ամենազոր կամքի զորությամբ»[146]։

* * *

«...մեր աչքերը ըմբոշխնեցին Արարատի վեհափառ կերտվածքի ամբողջությունը։

Կարող ենք վստահաբար ասել, որ մեր աչքերի առջև բացված տեսարանից առավել գերազանց՝ տիեզերքում ոչ մի այլ տեղ չկա. տպավորությունը, որ թողնում է այդ տեսարանը մարդու վրա, միանգամայն ուժգին է և մնայուն։ Ոչ մի տեղ բնությունն այսքան հիապատում կերպով ի ցույց չի դրվել, ոչ մի տեղ հղացման մեծագույն համանմանություն և հատակագծի ներդաշնակություն չի շնորհել, և ոչ մի տեղ շրջակա վայրերը այսքան վեհափառ չեն։

Լայնատարած օվկիանոսի և բաց երկնքի հմայքը կազմող բոլոր խորհրդածությունները, հյուսիսային կլիմայի տխրությունը փարատող լույսի բոլոր խաղերը և հարավային երկրների երփներանգ ճառագայթարձակումները շռայլորեն թափված են այն համայնապատկերի վրա, որի կենտրոնում գտնվում է Արարատը՝ որի ոտքերի տակ թագավորության նման փռված է այն...

Վերջապես մենք կանգնած ենք Արարատի գագաթին, բայց... Ավետյաց երկրի համայնապատկերի փոխարեն մենք խուզարկում ենք մառախուղի թանձրությունը...

Մենք կանգնած ենք այնտեղ, որտեղ հանգրվանեց փայտե տապանը, և ուր առաջին նահապետը ոտք դրեց վերանորոգված երկրի վրա... Ջրերի արտաշընչության մեջ կանգնած է երփներանգ աղեղը՝ իբր մարդու հետ Աստծո կնքած դաշինքի հավիտենական նշան»[147]։

* * *

«Արարատ-Մասիս։ Վերջապես նա երևաց ինձ համար։ Ջորս օր նա թաքնվել էր սև ամպերի տակ, ցույց չէր տվել դեմքը՝ ներկայացնելով միայն իր կապույտ լանջը, և միայն այս առավոտ չհանդուրժելով՝ դեն նետեց շղարշը։

Նա, իսկապես, զարմանալի վեհություն և գեղեցկություն ունի։

Մի անգամ այն տեսնելով՝ անհնար է մոռանալ։

Գնացքը սրընթաց շարժվեց՝ հեռանալով Արարատից, իսկ նա արհամարհելով տիեզերքի ֆիզիկական օրենքը՝ չշարժվեց, չափսերով չփոքրացավ։ Նա կանգնած մնաց նախկինի պես թագավորական, երկինք ձգված, կանգնած՝ ժամանակից և տարածությունից դուրս, իր անծայրածիր հավերժությամբ» [148]։

---

[146] Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947, էջ 19-20, 22:

[147] Հ. Ֆ. Պ. Լինչ, Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Ա հատոր, Կ. Պոլիս, 1913, էջ 73, 104, 106-107:

[148] Реваз Джапаридзе, четыре дня в стране Айоса, Тбилиси Мерани, 1988, ст. 172-173.

* * *

«Հեռու-հեռաստանում՝ հորիզոնից վեր, բարձրանում է երկգլխանի լեռը, որը երկու անուն ունի՝ Արարատ կամ փաղաքշորեն՝ Մասիս։

Հաճախ դուք այն տեսնում եք մշուշի մեջ, ինչպես հիմա, և նրա գագաթները երկնքի գույնից մի քիչ ավելի մուգ են թվում։ Մի այլ անգամ նրանք սպիտակին են տալիս կապույտի մեջ։ Հայաստանի որ ծայրում էլ լինեք, ուր էլ գնաք, դուք ամենուրեք հայացքով որոնելու եք այդ գագաթները՝ մոռանալով, որ դրանք ամեն տեղից չեն երևում։ Որոնելու եք, որովհետև Արարատ-Մասիսը Հայաստանի ոգին է, այն չես կարող վանել նրա երգերից ու հեքիաթներից, չես կարող պոկել նրա բնանկարից, նրա պատմությունից։

Նրա գագաթներից վեր՝ բարձրում, կախվել է արևի դեղին սկավառակը։ Նոյի վայրէջքի տեղը պատած է թափանցիկ մշուշով։ Սառցաջրի առվակներ են հոսում սարն ի վար։ Փոքր Արարատն ուղիղ կիսով չափ ծածկված է ձյան շաքարաշերտով։ Մի երկարաձիգ, նեղ ամպի կտոր պոչով կպել է նրան. թվում է, թե հրաբխի նման ծխում է նա։

Կովկասի լեռնաշղթաները ձեր առջև կանգնում են որպես իններորդ ալիք՝ քարե կոհակների փոթորկի մեջ։ Արարատը վեր է խոյանում առանց նախաբանի, բացեիբաց կանգնում դաշտավայրի գորգի վրա, և դրա մեջ է նրա յուրահատուկ, անահեղ փառահեղությունը»[149]։

* * *

«Ես այն ժամանակ նույնիսկ չէի մտածում, թե ինձ համար այսքան ծանր կլինի Արարատից բաժանվելը։ Գրեթե անհավանական է թվում, որ այս լեռը, գրողների, նկարիչների, երաժիշտների հազարավոր ստեղծագործություններից հայտնի լեռը, հարյուրավոր ֆիլմերում նկարահանված լեռը, գինու, ծխախոտի և այլ տրեստների միլիոնավոր պիտակների վրա բազմած լեռը կարող է այդպիսի ապշեցուցիչ տպավորություն թողնել։ Ոչ միայն նրա համար, որ հենց անունը միայն՝ Արարատ, ինչ-որ խորհրդավոր ու առինքնող իմաստ է պարունակում, այլև շնորհիվ իր եզակի ու անկրկնելի գեղեցկության. այդ լեռը գրեթե ամենաուժեղ տպավորությունն է թողնում բոլոր այն գեղեցկություններից, ինչով այնքան՛ հարուստ է Հայաստանի բնությունը։ Թափանցիկ ու մով՝ նա ճանապարհորդների առջև կանգնում է՝ որպես պատրանք, որպես գրգռված երևակայության ծնունդ։

Ինչպիսի՛ ազդեցություններ ու հոսանքներ, ինչպիսի՛ հրապուրանքներ ու նորաձևություններ, հասարակական ճաշակի ինչպիսի՛ փոփոխություններ չի տեսել արար մարդկությունը իր պատմության ընթացքում, որ ակնթարթ է միայն լեռան տարիքի համեմատությամբ։ Որքա՜ն կեղծ ու իսկական ակնեղեն է կորցրել նա իր գանձարանից։ Կորցրել ու գտել։ Իսկ Լեռը հազարամյակներ ի վեր կանգուն է մնացել այդ գանձարանում՝ որպես անձեռնմխելի պաշար։

Օրեր ի վեր՝ ես քնում ու արթնանում էի Լեռան ստորոտում։ Առավոտյան նա պատուհանիդ շրջանակի մեջ ծնվում էր օդից, վաղորդյան մշուշից, ինչպես

---

[149] Լեոնիդ Վոլինսկի՝ ռուս գրող, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 74-76:

Անադիոմենոսի Վեներան՝ ծովի ալիքներից։ Սրա ստորոտը ստվերի մեջ է, ձյունոտ գագաթը լողում է առավոտյան մշուշի մեջ՝ իրենից ներկայացնելով վիթխարի թեթևության անմոռանալի նմուշ։ Իսկ ցերեկը, երբ ստվերները հեռանում էին նրանից, Արարատն ավելի էր մեծանում ու այնքան էր մոտենում, որ եթե ձեռքս մեկնեի, կհասներ։ Իրիկնադեմին նա սկսում էր հալչել, համբառնալ երկինք և այնքան թափանցիկ էր դառնում, որ գիշերը անէանում էր իսպառ»[150]։

* * *

«Արդյոք կա՞ այլ երկիր, որտեղ այդքան արյուն է հեղվել։ Արդյոք կա՞ այլ ժողովուրդ, որ հյուսել է այդքան երգեր բարեկամության և սիրո մասին։

Եվ այդ ամբողջ երկրի մեջ, թշնամու վրա ոստյունի պատրաստ հզոր, սև առյուծի պես սապատաձև, բարձրանում է Արարատը։ Ամբողջ ժողովրդին, ամբողջ երկրին երևում է հին բիբլիական Արարատը, սրբազան Մասիսը՝ փոքր-ինչ ծածկված ձյունով և ամպերով»[151]։

* * *

«Մի բլրի վրա, անծայր հովիտը պատող ամպածածկից դուրս գալով հանկարծ տեսանք երկու լեռ, մեկը՝ ավելի մոտ եղածը, անսովոր բարձրության... Կովկասյան ոչ մի լեռնասար իր վիթխարիությամբ այդպիսին չէր. երկուսը միասին գրավել էին ողջ հեռաստանը։ Դա երկսայր Արարատն էր, յոթանասուն վերստի վրա այն դիտակետից, ուր առաջին անգամ երևում էր իր ողջ հզորությամբ։ Դեռ նախօրեին կապտել էին նրա գագաթները։ Բացի այն հուշերից, որ խռովում են ամեն մեկիս, ով հարգում է անցյալի ավանդությունները, այդ լեռան սոսկ արտաքին տեսքը խոր զարմանք է պատճառում։ Ես արձանացել էի տեղումս»[152]։

* * *

«Մի ծերունի մի շատ բնական պատճառաբանություն արեց, թե ինչու պետք չէ փորձել բարձրանալ այս լեռը՝ Մասիս... «Ոչ ոք,- նա ասաց,- պետք չէ բարձրանալ Մասիսը, նա աշխարհի մայրն է»»[153]։

«Արարատը, հայերը. ի՞նչ ընդհանուր բան.
Համաձայն եմ ձեզ հետ – իրարից հավե՛րժ անբաժան,
Մեր գիտակցության մեջ հայ է Արարատը
Ահա՛ միասնություն անխախտ...»[154]։

---

150 Ալեքսանդր Ռուսով՝ ռուս գրող, Արարատն է տաճարների տաճարը… էջ 81-82:

151 Սերգեյ Բրոդին, դիվանագետ: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 588:

152 Ալեքսանդր Գրիբայեդով ռուս գրող, դիվանագետ: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 192:

153 Ուլիյամ Ռոբրուկ, ֆրանսիացի դիվանագետ XIII դար: Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 90:

154 Ռաֆայիլ Զինուրով (Ուֆայեցի): Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 631:

Հետջրհեղեղյան շրջան

«Հայաստանը մարդկության երկրորդ օրրանն է, քանի որ Նոյի տապանն իջավ Արարատի վրա, որը գտնվում է Մեծ Հայքում»[155]:

«Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին: Աստված հողմ բարձրացրեց երկրի վրա, և անձրևը դադարեց: Փակվեցին ստորգետնյա աղբյուրներն ու երկնքի սահանքները, դադարեց նաև երկնքից թափվող անձրևը: Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց այն նվազեց:

Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ լեռան վրա: Ջուրը մինչև տասներորդ ամիսը քաշվում էր, նվազում: Տասնմեկերորդ ամսի առաջին օրը երևացին լեռների գագաթները»[156]:

*Ջրերի վրա երկար տարուբերվելուց հետո տապանը հպվեց Եդեմի մերձակայքում գտնվող լեռանը: Նոյն էր տապանաբնակների առաջնորդը, սակայն ոչ որպես տապանի նավապետ, քանզի նա ամենահեռավոր պատկերացումն իսկ չուներ տապանի ուղղության վերաբերյալ: Ինչպես արդեն ասվել է, տապանին ուղղություն էր տալիս Տերը. **«Նոյի տապանի նավապետը Աստվածային տեսչությունն էր, որը վարելով այն առանց ղեկի՝ բերեց և Մասիսի բարձր գագաթին կանգնեցրեց»[157]:***

Ջրհեղեղը դադարեց, և տապանն իր հանգիստը գտավ Արարատ լեռան գագաթին՝ Եդեմի սահմաններում: Տապանի նպատակը մեծ ճամփորդությունը չէր, այլ՝ երկրից միաժամանակ կտրվելը և վեր բարձրանալը, մինչև որ երկիրը մաքրվեր, սրբվեր մարդկանց ամբարշտությունից: Եվ երբ այդ կատարվեց, տապանը նորից իջավ երկրի վրա.

«Հին Կտակարանում եղած վկայություններն արարչագործության, Ջրհեղեղի, Նոյան տապանի, Արարատ լեռան, դրախտի և այնտեղից բխող գետերի մասին՝ կասկած չեն թողնում, որ արարչագործության, դրախտի, իմաստության ու կենաց ծառի երկիրը Հայաստանն է: Պատահական չէ նաև, որ Արարչի կողմից Հայկական լեռնաշխարհում արարված մարդը Ջրհեղեղի ժամանակ իր փրկությունը գտնում է Հայկական լեռնաշխարհում՝ Արարատ լեռան վրա»[158]:

Այս տարածքն ամբողջ երկրագնդի վրա միակ վայրն էր, որտեղ պահպանվել էր կյանքը:

Ավելորդ չենք համարում կրկնել, որ Տապանը Քրիստոսի Եկեղեցու խորհուրդն ունի, որտեղ արդարները պատսպարվում են՝ զերծ մնալու աշխարհին սպառնացող պատուհասից:

Ըստ Կյուրեղ Ալեքսանդրացու՝ տապանը խորհրդանիշն էր նաև մկրտության

---

[155] Св. Димитрий Ростовский, Жития святых, Сентябр книга I, Москва 1904, ст. 653.

[156] Ծննդոց 8:1-5:

[157] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 194:

[158] Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 25:

ավազանի: Հետազոտողները պարզել են, որ տարվա այն ամսին և այն օրը, երբ Նոյան տապանն իջավ Արարատ լեռան գագաթին, հազարամյակներ անց՝ այդ նույն օրը Քրիստոս հարություն առավ մեռելներից, և Իր եկեղեցու հիմքը դրվեց.

«Եվ յոթերորդ ամսվա 17-րդ օրը տապանը կանգ առավ Արարատյան լեռների վրա»[159]: Փրկվողների համար նեցուկ հանդիսացող, ապագա եկեղեցին խորհրդանշող տապանը հաստատվում է քարոտ լեռան վրա, որը նախատիպն էր այն քարի, անսասան ժայռի, անխախտ հիմքի, որ դարձավ Քրիստոսի ուսմունքը (Մատթ. 7:24-25, և Պետրոս 2:4-6):

Բայց ինչո՞ւ տապանի հաստատվելը տեղի է ունենում հենց յոթերորդ ամսվա 17-ին: Ըստ հին հաշվարկի՝ դա նիսան ամիսն է՝ գարնան առաջին ամիսը: Խաչելության օրվանից՝ այսինքն նիսանի 14-ից երեք օր հետո՝ նիսանի 17-ին, Քրիստոս հարություն առավ (Մատթ. 12:40, Ղուկ. 24:46, Հովհ. 19:14): Հատկապես հենց այդ օրը դրվեց «Անկյունաքարը»՝ Նոր Կտակարանյան եկեղեցին»[160]:

Եկեղեցու խորհրդանիշերից երկուսը եղել են Մեծ Հայքի տարածքում. Ջրհեղեղից առաջ Եդեմի բարձունքում գտնվող Դրախտը և Ջրհեղեղից հետո՝ Նոյան Տապանը, որը հանգրվանեց Արարատ լեռան վրա:

Ավետաբեր աղավնին

«Հայաստանում բնության ամենանշանավոր
խորհրդանիշն Արարատ լեռն է՝ Նոյան տապանի
լեգենդար նավահանգստի վայրը»[161]:

Նոյը մի աղավնի արձակեց՝ հուսալով, որ նրա միջոցով կարող է իմանալ ջրերի ետ քաշվելու մասին: Աղավնին Նոյի մոտ ետ եկավ ավետիսով, որը ձիթենու ճյուղն էր.

«Աղավնին նրա մոտ վերադարձավ երեկոյան: Նրա կտուցին ձիթենու մի շյուղ կար: Նոյը դրանից հասկացավ, որ ջրերը քաշվել են երկրի վրայից»[162]:

«Սուրհանդակ աղավնին ձիթենու կանաչ ճյուղով նշան բերելով ավետում էր, թե պատուհասի ձմեռն անցավ, և գարուն է եկել աշխարհի վրա»[163]:

Ոմանք կարծում են, թե Հայաստանի տարածքում ձիթենի չի եղել, և աղավնին գնացել, Պաղեստինի կողմերից է բերել ձիթենու ճյուղը: Սակայն փոքրիկ թռչնի համար մի քանի ժամում նման տարածք կտրել-անցնելը և վերադառնալը հնարավոր չէր: Կարծիք կա նաև, որ ջրերը ձիթենու ճյուղը հեռու վայրերից են քշել բերել Արարատ լեռան մոտ: Սակայն պետք է հաշվի առնել, որ Ջրհեղեղից հետո եղանա-

---

159 Ծննդոց 8:4:

160 Щедровицкий Д., Введение в Ветхий Завет, Пятикнижие Моисеево, том 1, книга Бытия, лекция 4, потоп. http://www.gumer.info/bogoslov_Buks/bibliologia/schedr/04.php

161 Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004, ст. 9.

162 Ծննդոց 8:11:

163 Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 194:

կային փոփոխություններ են առաջացել նաև այնտեղ, ուր գտնվում էր եդեմական Դրախտը, որի բուսական աշխարհն առավել հարուստ էր: Բայց դա դեռ չի նշանակում, թե Ջրհեղեղից հետո Հայաստանի տարածքում երբևէ ձիթենի չի եղել.

«Ոմանք չեն կարողանում հասկանալ, թե Հայաստանում որտեղի՞ց է վերցրել ձիթենու ճյուղը, այն էլ Ջրհեղեղից հետո: Բայց Հայաստանում ձիթենի գտել է դեռ Ստրաբոնը, ով ապրել է Հայաստանին մոտ՝ Կապադովկիայում: Իսկ այս ծառի տերևները միշտ պահպանվում են, և ըստ Թեոդորաստի ու Պլինիոսի վկայության՝ այն կարող է աճել նաև ջրի տակ»[164]:

Եվ ոչ միայն ասվել է, որ Հայաստանում ձիթենի է եղել, այլև ցույց են տրվել այն նահանգները, որտեղ նա աճել է. ***«Հնում Մովսես Խորենացին ասում է, թե Հայաստանի Ուտիք նահանգում ձիթենի է եղել, իսկ օտարազգի Ստրաբոնն այն տեղադրում է Գուգարքում»[165]:***

Շատ հեռու չգնանք. քսաներորդ դարիս յոթանասունական թվականներին Սյունիքում՝ Տաթևի հռչակավոր վանքի կիրճում, ձիթենու այգիներ կային...

Հայաստանը որպես հետջրհեղեղյան առաջին բնակության վայր

«Ինչպես որ կարծվում է, Դրախտը Հայաստանի մեջ էր, և կյանքն այս աշխարհից սկսվեց, Նախախնամությունն այնպես կամեցավ, որ նորից մարդկության սերնդի աճը Դրախտի մոտից սկսվի: Այդ պատճառով էլ Հայոց Արարատյան աշխարհը մարդկային ցեղի նոր խանձարուրը եղավ: Նոյ նահապետն իր ընտանիքով Մասիսի հովտում հաստատվեց, որ այժմ Նախիջևան է կոչվում, և գրեթե հինգ հազար տարուց ավելի այս ավանդական անունը անկորուստ պահելով՝ մինչև այսօր նույն անունով է կոչվում»[166]:

Ինչպես Դրախտից դուրս գալով Ադամն ու Եվան բնակվեցին Դրախտի արևելյան կողմը և չմեկնեցին այլ վայր, այդպես էլ Նոյն ու իր ընտանիքը տապանից դուրս գալով՝ այլ բնակության վայր չընտրեցին. բնակություն հաստատեցին իրենց նախկին բնակավայրում՝ Արարատ լեռան ստորոտում:

«Նոյի կյանքի վեց հարյուր մեկերորդ տարում, առաջին ամսի առաջին օրը ջրերը քաշվեցին երկրի վրայից: Նոյը բացեց իր կառուցած տապանի ծածկը և տեսավ, որ ջուրը քաշվել է երկրի երեսից: Երկրորդ ամսի քսանյոթերորդ օրը երկիրը ցամաքեց:

Տեր Աստված Նոյին ասաց. «Դո՛ւրս եկեք այդ տապանից դու, քո կինը, քո որդիները և քո որդիների կանայք, նաև քեզ հետ եղող բոլոր գազանները, բոլոր էակները՝ թռչուններից մինչև անասունները: Դո՛ւրս հանիր քեզ հետ նաև երկրի

---

[164] Святитель Филарет (Дроздов), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 189.

[165] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր երրորդ, Վենետիկ, 1835, էջ 274:

[166] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 196:

վրա սողացող բոլոր սողուններին, նրանք թող սողան երկրի վրա: Աճեցե՛ք և բազմացե՛ք երկրի վրա»: Դուրս ելան Նոյը, նրա հետ նաև իր կինը, իր որդիներն ու իր որդիների կանայք: Երկրի բոլոր գազանները, բոլոր սողուններն ու բոլոր թռչունները՝ իրենց տեսակներով, դուրս ելան տապանից» [167]:

Եվ միայն երկար ժամանակ այստեղ բնակվելուց և բազմանալուց հետո Նոյի սերունդների մի մասն սկսեց իր մեծ գաղթը դեպի Միջագետքի հարթավայրերը: Այս տարածքից աշխարհով մեկ ցրվեց նաև կենդանական աշխարհը:

Անկասկած, Աստծո կամոք էր, որ Հայաստանի տարածքը կայացավ առաջին բնակության վայր, քանզի իր դիրքով և կլիմայական պայմաններով այն շատ հարմար էր այդ դերի համար. ***«Հայաստանը, վերին (արևելյան) կիսագնդի մեջտեղում գտնվելով, գետերով, լեռներով, ծովերով պատած, շատ հարմար էր աշխարհի առաջին գավառը լինելու, և բացի իր սքանչելի կլիմայից՝ բոլոր երկրների ամենալավ բաները պարունակում է իր մեջ. ունի ծովեր, դաշտեր, լեռներ, գետեր, լճեր, հանքեր և այլն, բոլորից էլ՝ միջին չափով. և երևում է, որ նույնիսկ հրաբուխ է ունեցել: Բայց եթե մենք մեր աչքերը հառենք Մասիս լեռան վրա՝ ի՞նչ կտեսնենք. մի՞թե երկրորդ Դրախտը չէ Նոյի տապանը, արդյոք ինչո՞ւ տապանն աշխարհի վրա լողալուց հետո Մասիսի վրա իջավ»*** [168]:

Արարատ լեռան վրայից Աստծո հրահանգով իջան մարդիկ ու կենդանիները, և երկրի վրա սկսվեց հետջրհեղեղյան կյանքը: Արարատի ստորոտը Նոյի գլխավորությամբ դարձավ մարդկության ու կենդանական աշխարհի բնօրրան, ինչպես Ադամով կայացել էր մինչջրհեղեղյան շրջանում:



Նոյի որդիները՝ ողջ մարդկության երեք նահապետները, այստեղ արագ բազմացող իրենց սերունդների համար քաղաքներ և գյուղեր կառուցեցին:

««Աճեցեք և բազմացեք երկրի վրա»: Աստվածային այս պատվիրանի առիթով, որն անմիջապես կապված է կենդանիների հետ, բայց վերաբերում է նաև մարդկանց, սուրբ Հովհան Ոսկեբերանն ասում է հետևյալը. «Տես, թե ինչպես այս արդարը նորից ստանում է այն օրհնությունը, ինչը ստացավ Ադամը՝ նախքան հանցանք գործելը: Ինչպես նա, որ իր արարվելու ժամանակ լսեց՝ «Աճեցեք և բազմացեք երկրի վրա», այնպես էլ սա այժմ («Աճեցեք և բազմացեք երկրի վրա»), որովհետև ինչպես Ադամն սկիզբն ու արմատն էր բոլոր նրանց, ովքեր ապրեցին մինչև Ջրհեղեղ, այդպես էլ այս արդարը դառնում է որպես թթխմոր, սկիզբն ու արմատը՝ Ջրհեղեղից հետո ծնված բոլոր մարդկանց» [169]»[170]:

---

[167] Ծննդոց 8:13-19:

[168] Սուրբ Գրոց Հին Ուխտի Պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը լուսաբանութեամբ եւ աշխարհի անցքերով, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունոյ, Թիֆլիս, 1896, 12 էջ:

[169] Ոսկեբերան, զրույց 26:

[170] А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904-1907г., ст. 56-57.

Նոյի զոհաբերությունը

««Նոյը զոհասեղան շինեց Աստծո համար»։
Դա Աստվածաշնչյան առաջին հիշատակումն է
սուրբ զոհասեղանի մասին»[171]։

Հայաստանում՝ Դրախտի տեղանքում առաջին անգամ Արարիչը հարաբերվեց Իր արարած մարդու հետ։

«Նոյը զոհասեղան շինեց Աստծո համար։ Նա առավ բոլոր տեսակի անպիղծ անասուններից, բոլոր տեսակի անպիղծ թռչուններից և ողջակիզեց զոհասեղանի վրա։ Եվ Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը։ Տեր Աստված իր մտքում ասաց. «Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլևս չեմ անիծի, որովհետև մարդկանց միտքը մանկուց չարի ծառայության մեջ է։ Ես այլևս ոչ մի կենդանի էակի չեմ պատուհասի, ինչպես արեցի։ Այսուհետև, քանի դեռ կա երկիրը, թող չդադարեն սերմն ու հունձը, ցուրտն ու տոթը, ամառն ու գարունը, ցերեկն ու գիշերը»[172]։

Դրախտից վտարումից հետո էլ Հայաստանը եղավ առաջին աստվածպաշտության վայրը։

Այդ է վկայում Աբելի մատուցած զոհը։

Ջրհեղեղից հետո Արարատյան դաշտավայրը դարձյալ եղավ առաջին աստվածպաշտության վայր, քանզի այդ ժամանակ Նոյը քահանայապես այստեղ զոհության զոհ մատուցեց Աստծուն։

«Նոյը Ադամից ավելի հմուտ գտնվեց. փրկարար տապանից դուրս գալով... դեռ նոր ոտք դնելով ցամաքած բարձր նավահանգստի վրա՝ սեղան կառուցեց Աստծո համար և իր խնամքով մի տարի սնած մաքուր չորքոտանի և թևավոր կենդանիներից ողջակեզի պատարագ արեց՝ իր ընտանիքով հանդերձ սեղանի չորս կողմը կանգնելով և շնորհակալություն հայտնելով Տիրոջը, գթություն հայցելով ապագա մարդկության համար և խնդրելով, որ խնայի այդ մեծ բարկությունից, եթե հանկարծ երբևէ նորից հանցավոր դառնա սխալական մարդկությունը»[173]։



Սուրբ Գրքում առաջին զոհասեղանի մասին հիշատակությունը Նոյի զոհաբերության հետ է կապված, ինչը նորից մեծ խորհուրդ ունի. սա նախատիպն է Սուրբ Խաչի, որի վրա զոհաբերվեց Աստծո անարատ Գառը՝ Քրիստոս. նաև նախատիպն է Եկեղեցու Սուրբ

---

171 А. П. Лопухина… ст. 57.

172 Ծննդոց 8:20-22:

173 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 50-51:

սեղանի, որի վրա ամեն կիրակի կատարվում է Սուրբ և Անմահ զոհաբերությունը՝ Սուրբ Պատարագը։

Աբելի և Կայենի մատուցած զոհն էլ վստահաբար զոհասեղանի վրա է եղել՝ չնայած այդ մասին ոչինչ չի գրված։

Նոյ նահապետն էլ տապանից ելնելով՝ անծանոթ մի վայրում չէր հայտնվել։ Իհարկե, շատ բան էր փոփոխվել. շինություններն ավերվել, բլուրները հարթվել և նորերն էին առաջացել, սակայն ընդհանուր բնապատկերը մնացել էր նույնը։

Նոյը հեշտությամբ գտավ այն վայրը, որտեղ ինքը՝ մինչջրհեղեղյան քահանան և թագավորը, բազմիցս զոհեր էր մատուցել Տիրոջը։ Սակայն զոհասեղանը Ջրհեղեղից այնպես էր տուժել, որ հավանաբար միայն հետքերն էին մնացել, ինչի համար էլ չի ասվում, թե Նոյն այն նորոգեց, այլ կառուցեց զոհասեղան.

«Եվ Նոյը զոհասեղան կառուցեց»։ Զոհասեղանի անունը Սուրբ Գրքում առաջին անգամ այստեղ ենք հանդիպում, սակայն բուն նյութը այդ ժամանակ նորույթ չէր, քանզի պետք չէ մտածել, որ Նոյը համարձակվեց ինչ-որ նոր բան ներմուծել զոհաբերության ծիսակատարության մեջ՝ ընդունված բարեպաշտ նախնիներից և հաստատված հենց Աստծո կողմից»[174]։

Ըստ ավանդության՝ զոհը մատուցվել է Արարատյան դաշտում՝ սուրբ լեռան դեմ հանդիման՝ նրա հովանու տակ։

*Այդ վայրում հանդիսավորությամբ և մեծ երկյուղով հավաքվել էին Ջրհեղեղին նախորդող մարդկության մնացորդ այն ութը հոգին, որ Ջրհեղեղից առաջ էլ միայն իրենք էին երկյուղածությամբ կանգնել զոհասեղանի առջև՝ չնայած բազմահազար մարդիկ կային այն ժամանակ, որոնք հոգևորապես արդեն մեռած էին, ըստ այնմ թե. **«Թող որ մեռածնե՛րը թաղեն իրենց մեռելներին»[175]։***

Արարատյան դաշտավայրի կենտրոնում՝ նախկին տեղում, կառուցվեց նոր զոհասեղանը, ինչը կմնա հավետ սրբավայր՝ մինչև Տիրոջ Երկրորդ Գալուստը։

*Անանիա Սանահնեցին գրում է. **«Եվ ապա փրկագործ սուրբ տապանը, որ իսկապես տեղ և օրինակ է ճշմարտության, իջևանեց բարձրաբերձ և աշխարհատենչ Մասիս լեռան վրա...Եվ ապա Տիրոջ հրամանով երանելի Նոյը դուրս գալով այստեղից՝ իջնում է Արարատյան դաշտի վաղարշապատ քաղաքը։ Եվ այստեղ զոհասեղան է կառուցում, որի վրա հաշտության պատարագ է մատուցում»[176]։***

Գոհության զոհ մատուցելով՝ նրանք տոնեցին իրենց հրաշալի փրկությունը։ Սակայն տապանի տեսքը նրանց մեջ միշտ արթուն պիտի պահեր Աստծուն և Նրա պատվիրանները մոռանալու դառը հետևանքների հուշերը, որպեսզի նոր աշխարհում երկյուղածությամբ և զգոնությամբ կենցաղավարեին։

«Այնուհետև Տեր Աստծուն զոհ մատուցելուց հետո նա իր մերձավորների հետ զոհաբերության տոնակատարություն արեց։ Այդ վայրը հայերը «վայրէջքի տեղ» են կոչում և մինչ օրս էլ տեղաբնակները ցույց են տալիս այն մնացորդները, որոնք պահպանվել են տապանից[177]»[178]։

---

[174] Святитель Филарет (Дроздов), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 196.

[175] Ավետարան ըստ Ղուկասու, 9:60:

[176] Անանիա Սանահնեցի, Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր և ուսումնասիրություններ, Սբ. Էջմիածին, 2000, էջ 343-344:

Դարեր անց՝ հայերն ընկան հեթանոսության մեջ, ինչը մի նոր՝ արդեն հոգևոր ջրհեղեղ էր. զոհասեղանն ավերվեց հոգևորապես, սակայն նյութապես մնաց կանգուն: Այդ վայրը դարձրեցին մեհյան, ուր զոհեր էին մատուցում ոչ թե Աստծուն, այլ կուռքերին:



Սակայն 301թ. մեծ փառքով, անթիվ-անհամար երկնային զորությունների ուղեկցությամբ Տերը սբ. Գրիգորին հայտնվեց հենց նույն վայրում (որտեղ ժամանակին հայտնվել էր Նոյին), ոսկե մուրճով հարվածեց մեհենատեղին, որից, ինչպես ասում է ավանդությունը, ցնցվեց սանդարամետը: Եվ պատվիրեց այդտեղ կառուցել սուրբ տաճար:

Այստեղ մինչ օրս կանգուն է Տիրոջ իջման Սուրբ սեղանը:

*Ըստ ավանդության՝ հենց այս զոհասեղանի մոտակայքում են հողին հանձնվել Ադամի և Եվայի մարմինները՝ Աբելի շիրիմի կողքին: Բնականաբար, այստեղ հուղարկավորված պետք է լինեն նաև մյուս սուրբ նախահայրերը՝ Սեթը, Ենովսը և այլոք. **«Նախահոր գերեզմանը հավանաբար իր ապաշխարության վայրից հեռու չէր՝ Եդեմի դիմաց, որտեղ Եպիփանն էլ է ասում, որ թաղված է զոհասեղանի մոտ՝ Աբելի աջ կողմում, Եվան էլ՝ Ադամի աջ կողմում»** [179]:*

Ինչպես որ քրիստոնյա աշխարհում ընդունված է եղել հոգևորականներին և բարձրաշխարհիկ անձանց եկեղեցիների մոտ և նույնիսկ եկեղեցու մեջ թաղելը, հավանաբար, այն ժամանակ էլ հուղարկավորել են մինչջրհեղեղյան այդ սրբավայրում՝ ներկայիս սուրբ էջմիածնի տարածքում:

Այս առաջին զոհաբերության վայրը նշանավոր է նաև նրանով, որ հանուն ճշմարիտ հավատքի՝ բազմաթիվ բարեպաշտներ կամավոր զոհ մատուցվեցին Աստծուն: Մասնավորապես հիշարժան են երկրորդ դարում քրիստոնեության դեմ ծավալված հալածանքների ժամանակ այստեղ իրենց արյունը հղած «արարատյան 10.000 նահատակները», որոնց մասին առավել մանրամասն կխոսվի, երբ հասնենք այդ դարաշրջանին:

---

[177] Այն վայրը, որտեղ գտնվում է լեռը, կամ ավելի ճիշտ, Արարատյան լեռները (դրանք երկուսն են՝ Մեծ և Փոքր), ասորական արձանագրություններում կոչվում է Urarti: Այն, որ Արարատ ասելով նկատի է առնված Հայաստան երկիրը, մատնանշում է ոչ միայն Հովսեփոս Փլավիոսը, այլև Աստվածաշունչը և սեպագիր արձանագրությունները, ինչպես նաև Մովսես Խորենացին:

[178] Иосиф Флавий, Иудейские древности, том 1, “Феникс” Ростов-на-Дону, 2000, ст. 17.

[179] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 32:

Հետջրհեղեղյան պատվիրաններ

«Իմ վերևում հառնում էր Արարատի ալեզարդ, իմաստուն գլուխը: Անմեկնելի հանգստություն էր տիրում լեռան լանջերին... Հավիտենական խաղաղության ուխտ կար Արարատի ժպիտի մեջ»[180]:

«Աստված օրհնելով Նոյին ու նրա որդիներին՝ ասաց նրանց. «Աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրն ու տիրեցե՛ք դրան: Ձեր ահն ու երկյուղը թող լինի երկրի բոլոր գազանների, երկնքի բոլոր թռչունների, երկրի բոլոր զեռուների և ծովի բոլոր ձկների վրա, որ ենթարկել եմ ձեզ: Ամեն մի կենդանի զեռուն թող կերակուր լինի ձեզ, ինչպես խոտն ու բանջարն եմ տվել: Կենսատու արյուն պարունակող միս չուտեք, քանզի ես էլ ձեր կենսատու արյունը կպահանջեմ, բոլոր գազանների, ինչպես նաև մարդու միջոցով կպահանջեմ այն: Մարդու միջոցով պիտի պահանջեմ իր եղբոր հոգին: Ով թափի մարդու արյունը, նրա արյան փոխարեն թող թափվի իր արյունը, որովհետև Աստծո պատկերով եմ ստեղծել ես մարդուն: Իսկ դուք աճեցե՛ք, բազմացե՛ք, լցրե՛ք երկիրը և բազմացե՛ք դրա վրա»[181]:

Աստված մինչ Քրիստոնեության աշխարհ գալը հինգ անգամ պատվիրաններ է տվել մարդկանց, որոնցից երեքը հնչել են Արարատյան սուրբ երկրում.

«Հին Կտակարանում Աստծո և մարդու միջև կնքված հանդիսավոր ուխտը ներկայանում է հինգ անգամ՝ յուրահատուկ կերպերով. Ադամի հետ արարչագործությունից հետո (Մննդ. 2:16-17), նորից նրա հետ՝ մեղանչումից հետո (3:15), Նոյի, Աբրահամի հետ (15:18, 17:10) և հրեաների (Մովսեսի) հետ (Ելից 24:8)»[182]:

Հայաստանի տարածքում երեք անգամ հնչած պատվիրանները համայն մարդկության համար էին՝ ի տարբերություն մյուս երկուսի, որոնք վերաբերում էին միայն հրեաներին:

Արարչագործությունից մոտ երկու հազար տարի հետո Նոյին տրված պատվիրանների մեջ կային այնպիսիք, որ բացակայում էին մինչջրհեղեղյան պատվիրաններում.

«Այս ուխտի լեռան վրա մարդկության բարոյական և բնական կյանքի մեջ մեծ փոփոխություն տեղի ունեցավ: Բնության Ստեղծիչը հրամայեց, որ անբան կենդանիները ոչ միայն մարդուն ծառա լինեն, այլ նաև սնունդ: Այդ պատվիրանը համարում ենք, որ տրվեց հենց մեր հայրենի երկրի վրա» [183]:

Հայաստանում աճելու և բազմանալու պատգամի հետ Նոյի երեք որդիները՝ մարդկության այդ երեք նահապետները սովորում էին աստվածային նոր պատվիրանները, որպեսզի այն փոխանցեին իրենց սերունդներին.

---

[180] Սերգեյ Գորոդեցկի՝ ռուս բանաստեղծ, թարգմանիչ, տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 67:

[181] Ծննդոց 9:1-7:

[182] Святитель Филарет (Дроздов), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 172.

[183] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 52:

««Եվ Աստված, օրհնելով Նոյին և նրա որդիներին, ասաց. «Աճեք և բազմացեք և լցրեք երկիրը»: Բոլոր կենդանիները հնազանդեցվեցին մարդուն, և նրան թույլատրվեց, բացի բուսական սնունդից, որպես սնունդ օգտագործել նաև կենդանու միսը, բայց ոչ նրանց արյունը, որովհետև «կենդանիների արյան մեջ նրանց հոգին է»: Այդ նույն ժամանակ տրվեց նաև մարդ չսպանելու օրենքը, այն հիմնավորմամբ, որ բոլոր մարդիկ եղբայրներ են, և այդ պատճառով էլ յուրաքանչյուր սպանություն եղբայրասպանություն է, և որ մարդը ստեղծվել է Աստծո նմանությամբ: Առաջին մարդասպանը մարդկային հասարակությունից վտարվեց, բայց նրա կյանքը հռչակվեց անձեռնմխելի. այժմ սահմանվեց, որ «ով մարդկային արյուն հեղի, մարդու ձեռքով էլ իր արյունը հեղվի»: Այս օրենքներով հաստատվեց պետական իշխանության իրավունքը՝ մարդասպանին պատժել մահվամբ:

Նման ձևով շաբաթին և ամուսնությանը միացան ևս երեք նոր օրենքներ՝ չօգտագործել արյունը, արգելվեց մարդասպանությունը և պետական իշխանության իրավունքների մասին օրենքը: Սրանք այսպես կոչված՝ «Նոյի օրենքներն» էին, որոնք հրեաները յոթն էին համարում՝ դրանց ավելացնելով կուռքերին չերկրպագելու, աստվածհայհոյության, անբարոյականության և գողության դեմ օրենքները: Վերջապես, որպես այս որոշումների ավարտ, Աստված կնքեց Նոյի հետ հանդիսավոր կտակ...Նա հանդիսավորությամբ բացատրեց Նոյին, որ «այլևս ոչ մի մարմին չի ոչնչացվի ջրհեղեղի միջոցով, և այլևս համաշխարհային ջրհեղեղ չի լինի». և որպես այդ ուխտի նշան՝ ծիածան ցույց տվեց, որն անձրևից հետո հայտնվում է երկնքում՝ որպես նշան, որ այդ անձրևը ջրհեղեղի համար չէ, այլ՝ օրհնության»[184]:

Ծիածան

«Դժվար է պատկերացնել ավելի հրաշափառ
տեսարան, քան Արարատ լեռն է»[185]:

«Տեր Աստված, դիմելով Նոյին ու նրա որդիներին, որոնք նրա հետ էին, ասաց. «Ահա ես ուխտ եմ դնում ձեզ հետ, ձեզնից հետո եկող ձեր սերունդների հետ, ձեզ հետ եղող բոլոր կենդանի էակների հետ՝ թռչունների, անասունների, երկրի բոլոր գազանների, այդ տապանից դուրս եկած բոլորի և երկրի բոլոր կենդանիների հետ: Ես ուխտ եմ դնում ձեզ հետ. այլևս ոչ մի էակ չի մեռնի ջրհեղեղից, ողջ երկիրը ոչնչացնող ջրհեղեղ չի լինի այլևս»: Տեր Աստված ասաց Նոյին. «Իմ ու ձեր միջև, ձեզ հետ եղող ամեն կենդանի էակի միջև գալիք բոլոր սերունդների համար իմ հաստատած ուխտի նշանն այս է. իմ ծիածանը կկապեմ ամպերի մեջ: Եվ դա թող լինի իմ ու ողջ երկրի միջև հավիտենական ուխտի նշանը: Երբ երկրի վրա ամպեր կուտակեմ, իմ ծիածանը թող երևա ամպերի մեջ: Այնժամ ես կհիշեմ իմ ուխտը, որ հաստատել եմ իմ ու ձեր միջև և շնչավոր բոլոր էակների միջև: Այլևս ջրհեղեղ չի լինի, որպեսզի բոլոր էակները չոչնչանան: Թող

---

[184] А. П. Лопухинь, Библейская История Ветхаго Завета, Монреаль, 1986, ст. 26.
[185] Е. П. Ковалевский, Гора Арарать, С.-Петербургъ, 1903, ст. 19

իմ ծիածանը լինի ամպերի մեջ, որպեսզի ես տեսնեմ այն և հիշեմ իմ ու երկրի վրայ գտնվող բոլոր շնչավոր էակների միջև իմ հաստատած հավիտենական ուխտը»: Տեր Աստված ասաց Նոյին. «Այս է նշանն այն ուխտի, որ հաստատեցի իմ ու ձեր միջև և երկրի վրա գտնվող բոլոր էակների միջև»»[186]:

*Միածանն իր հրաշագեղ գունազարդով և պայծառությամբ տարածվել էր ամբողջ Արարատյան երկնակամարով մեկ: Մարդ արարածն առաջին անգամ էր տեսնում այդ սքանչելի աղեղը, քանզի անձրևն սկսել է պարբերաբար գալ միայն Ջրհեղեղից հետո, ինչը դարձել է ծիածանի երևալու պատճառ. **«Ահա հայտնվում է ծիածանը Արարատյան աշխարհի վրա՝ Արարատի գագաթից ձգվելով մինչև Արագած: Աստված արդարի հետ հավիտենական ուխտ է կնքում, որ այլևս ջրհեղեղով աշխարհը չպիտի կործանի»[187]:***

Արարատի գագաթին հաստատված Տապանը ոչ միայն փրկության խորհրդանիշ է, այլև մարդկանց հիշողության մեջ Ջրհեղեղի պատմությունն արծարծելու միջոց:

*Քանի որ այդ արհավիրքն արդյունք էր մեղանչումների, ապա դրա հիշողությունը մարդկությանը պիտի զգոնության մղեր Աստծո պատվիրանների հանդեպ. որ երկյուղածությամբ վերաբերվեին Տիրոջ մեծ համբերատարությանը՝ չնայած մարդկանց միտքը **«մանկուց չարի ծառայության մեջ է»[188]:***

Իսկ հուսադրող ծիածանը շարունակ հուշում է Աստծո գթասրտության ու երկայնամտության մասին և ողորմածությունը՝ զղջացողների և ապաշխարողների հանդեպ.

«Անձրևը միշտ ուղարկվում է որպես Ջրհեղեղի թույլ հիշողություն, իսկ ծիածանը միշտ փարատում է նրա վախը և հիշեցնում Աստծո խոստումը: Իսկ Աստծո և մարդկանց միջև որպես ուխտի հզոր նշան հանդիսանում է Արարատը. այն կոթող է երկնքի և երկրի միջև և կա ու մնում է որպես վկա՝ անցյալ և ներկա աշխարհի. և հիշատակ է երկրի և մարդկության մեծագույն իրադարձության»[189]:

Միածանը խորհուրդն է նաև Տերունական սուրբ նշանի՝ Խաչի, որին նայելով՝ Աստված հիշում է այն զոհաբերությունը, որը եղավ Golgotայում. և համբերատարությամբ է վերաբերվում մարդկանց ամբարշտությանը՝ նրանց ապաշխարելու ժամանակ տալով:

Գիտենք, որ վերջին օրը Հայոց երկնակամարում (ուր երևաց ծիածանը) պիտի հայտնվի Տերունական Սուրբ Խաչը՝ ազդարարելով Փրկչի Երկրորդ՝ փառավոր Գալուստը:

Միածանը բազմաթիվ այլ խորհուրդներ էլ ունի.

«Նոյան պատվիրանի և ծիածանի գաղտնիքի ներքին բանալին կարելի է գտնել Եսայի (24:8-10), Եզեկիել մարգարեների (1:28) մոտ և Հովհաննու Հայտնությունում (4:3):

Նոյի և նրա որդիների հետ Աստծո ուխտը նշանակում է աշխարհի հետ հա-

---

[186] Ծննդոց 9:8-17:

[187] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, 194-195:

[188] Ծննդոց 8:21:

[189] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 54:

վիտենական ուխտ՝ Աստծո և Եկեղեցու միջև: Աղեղը որպես այդ ուխտի կնիք (խորհրդանիշ) է հոգիներում և Արդարության Արեգակի բարեբեր գործունեության: Միածանի երեք հիմնական գույները՝ բոցագույնը, ծիրանագույնը և զմրուխտագույնը, արտահայտում են Աստծո արդարադատության կրակը, Քրիստոսի արյունը, Նրա շնորհով կյանքի վերստին նորոգումը»[190]:

*Հայոց սուրբ երկիրը, որ եղել է առաջին աստվածպաշտության վայրը, բավարարել է նաև առաջին նահապետների նյութական պահանջները. **«Ինքը (Հայաստանը) կերակրեց առաջին նահապետներին և երկար ժամանակ նրանց հավատքը անխառը պահեց»** [191]:*

*Դեռ Աստված չէր կանչել Աբրահամին, դեռ հրեա ազգը չէր ձևավորվել, դեռ Մովսեսին չէին տրվել պատվիրանները, երբ այս վայրում, Ադամի օրերից սկսած, մոտ երկու հազար հինգ հարյուր տարի պաշտել են երկինքը և երկիրն արարող Աստծուն: Այստեղ ջանացել են ապրել Նրա պատվիրանների համաձայն՝ այն նույն պատվիրանների, որոնցով հետագայում սկսեցին ապրել հրեաները՝ որոշ հավելումներով, որ ստացան Սինա լեռա վրա. **«Ինչը որ ուսուցանում էր Մովսեսը, այդ նույնը պահել էր Աբրահամը, իսկ ինչ պահել էր Աբրահամը, այն գիտեին Նոյը և Ենոքը, որ տարբերում էին մաքուրն անմաքուրից՝ գոհացնելով Աստծուն: Աբելն էլ դարձավ նահատակ՝ իմացությամբ, ինչը սովորել էր Ադամից, երբ ինքն՝ Ադամն էլ սովորել էր Տիրոջից, Ով «այժմ՝ դարերի վախճանին, մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց՝ իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար»[192] և ասաց՝ «նոր պատվիրան չէ, որ տալիս եմ ձեզ այլ հին, ինչը որ լսել էիք ի սկզբանե»»[193]:***

Այո, ի սկզբանե այստեղ տրվեցին պատվիրանները, և իրական հոգևոր կյանքն այստեղ էր ծաղկում. և շարունակվեց Նոյ նահապետի ննջումից հետո՝ դեռ երկար ժամանակ:

Աթանաս Մեծն ասում է՝ թե՛ Ջրհեղեղից առաջ և թե՛ Ջրհեղեղից հետո այս վայրում նույն օրենքներն էին գործում. այն նույն զոհաբերություններն էին, ինչը որ Մովսեսի ժամանակ էին արվում. Սինայի անապատում ինչը Մովսեսն ավանդեց եբրայեցիներին, դեռ դարեր առաջ, իհարկե մասամբ, իրագործվում էր Հայոց սրբազան հողի վրա:

Երբ Նոյի սերունդները հեռացան Արարատյան երկրից, շեղվեցին նաև Աստծուց: Իսկ տեղում մնացած ժողովուրդը Նոյ նահապետի գլխավորությամբ հավատարիմ մնաց իր հայրերի Տեր Աստծուն.

«Ջրհեղեղից հետո տապանը կանգնեց Հայաստանի Մասիս կամ Արարատ լեռան վրա... Կամաց-կամաց (Նոյի սերունդները) Աստծո և Ջրհեղեղի մասին մոռացան, քանի որ հեռացան Նոյի և նրա որդիների մոտից, որոնք պահպանում էին ճշմարիտ կրոնը»[194]:

---

[190] Святитель Филарет (Дроздов), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 209.

[191] Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920, էջ 67:

[192] Թուղթ Եբրայեցիներին 9:26-27:

[193] Святитель Афанасий Великий, Творения в четырех томах, Том 1, Москва, 1994, ст. 404.

[194] Ամբրոսիոս Վ. Գալֆայեան, Պատմութիւն Աստուածաշունչ Սուրբ Գրոց Հին Կտակարանի, Վաղարշապատ, 1897, էջ 13-15:


Նոյ և Քամ

«Այո, Արարատը նահապետ է»[195]։

Ջրհեղեղից առաջ Ադամը և իր սերունդները ջանացին ապրել Տիրոջ պատվիրաններով, սակայն Կայենի կողմից կատարվեց մարդասպանության ծանր մեղքը, և նա անեծքի արժանացավ։

*Ջրհեղեղից հետո էլ այստեղ մեղանչում եղավ. այս անգամ՝ Նոյի որդիներից մեկի՝ Քամի կողմից, ինչին նորից հետևեց անեծքը. **«Նոյը՝ հողագործ այդ մարդը, առաջինն էր, որ հող մշակեց և այգի տնկեց։ Նա խմեց դրա գինուց, հարբեց ու մերկացավ իր տան մեջ։ Քամը՝ Քանանի հայրը, տեսավ իր հոր մերկությունն ու դուրս գնալով՝ այդ մասին պատմեց իր երկու եղբայրներին։ Սեմն ու Հաբեթը, երկուսն էլ, հագուստներ առան իրենց ուսերին և, հետ-հետ գնալով, ծածկեցին իրենց հոր մերկությունը։ Նրանք մեջքով էին կանգնած, այնպես, որ իրենց հոր մերկությունը չտեսան։ Նոյը սթափվելով գինովությունից՝ իմացավ, թե ինչ է արել իր նկատմամբ իր կրտսեր որդին և ասաց. «Անիծյալ լինի ստրուկ Քանանը և իր եղբայրների ծառան թող լինի»։ Նա ավելացրեց. «Օրհնյալ լինի Տեր Աստված՝ Սեմի Աստվածը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան։ Աստված թող բարգավաճեցնի Հաբեթին, նա թող բնակվի Սեմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան»[196]։***

Այստեղ հատուկ շեշտվում է Նոյի հողագործ լինելը, ինչը, սակայն, խոսում է միայն թագավոր-քահանայի խոնարհության, այլ ոչ թե նոր ձեռք բերած արհեստի մասին։ Նոյն այդ ժամանակ, շրջապատված լինելով միայն իր որդիներով, բնականաբար, չէր նստելու արքայական գահին, որ հրամաններ արձակեր։ Ըստ երևույթին, նրա խոնարհ պահվածքը պատճառ դարձավ, որ Քամը կորցնի ակնածանքը հոր հանդեպ։



Ջրհեղեղից բավական ժամանակ էր անցել, արդեն կառուցվել էին բնակավայրեր։ Նոյը տնկել էր խաղողի այգի, և մի քանի տարի պետք էր, որ այն պտուղ տար։

Ըստ Եփրեմ Ասորու՝ քանի որ Ջրհեղեղից հետո հողը դեռ այն վիճակում չէր, որ կարողանային այնտեղ խաղողի սերմեր ցանել, այդ արեցին մոտ երեք տարի հետո, իսկ մինչ նրա պտղաբերությունը՝ ընդհանուր հաշվով պետք է, որ մոտ վեց տարի անցած լիներ[197]։

«Նոյը Աստծուն գոհության պատարագ մա-

---

[195] Андрей Белый, տե՛ս Мировая Гора, эссе Нелли Саакян, Ереван 2004, ст. 28.

[196] Ծննդոց 9:20-27:

[197] Св Ефремь Сиринь, Творения, том 6, толк. Бытия, Москва 1995, ст. 270.

տուցելուց հետո Հայաստանի Այրարատ նահանգում՝ Մասիս լեռան ստորոտում, հաստատեց իր և իր որդիների բնակութիւնը և սկսեց զբաղվել հողագործութիւնամբ. և այգի տնկեց ու անպատեհութեան առիթ հանդիսացավ, քանզի կա՛մ անփորձ էր գինուն, կա՛մ անտեղեակ նրա զորութեանը, որ տալիս էր այդ վայրը, և անգիտութեան պատճառով հարբեց»[198]:

*Տեղի ունեցող դեպքերն իրենց մեջ պարունակում էին բազում խորհուրդներ և մարգարեութիւններ: Նույնիսկ Նոյի հարբելը, մերկանալն ու ծաղրվելը կրում են մեսիական խորհուրդ և մարգարեութիւն. **«Հարբած, մերկացած, անարգված, ծածկված, հանդիմանված և օրհնված Նոյն ըստ պատշաճի՝ համարվում է Հիսուս Քրիստոսի նախատիպը՝ խմած՝ Աստծո ամբողջ բարկութեան բաժակը և, մարդկանց հանդեպ ունեցած իր սիրուց, մերկացած՝ խաչի վրա»[199]:***

*Խաղող-որթատունկը, որի հայրենիքն Արարատյան երկիրն է, նույնպես մեծ խորհրդավորութիւն ունի. այն նույնպես Տիրոջ և Եկեղեցու խորհրդանիշերից է, ինչպես Տերն ասաց. **«Ես եմ որթատունկը, իսկ դուք՝ ճյուղերը»[200]:***

*Արարատյան Որթատունկի գինին նաև գալիք Մեսիայի սուրբ արյան խորհուրդն էր կրում. **«Ա՛յս է Նոր Ուխտի Իմ արյունը, որ կթափվի շատերի համար: Ճշմարիտ եմ ասում ձեզ, որ այլևս որթատունկի բերքից չեմ խմելու, մինչև այն օրը, երբ կխմեմ նոր գինին Աստծո արքայութեան մեջ»[201]:***

Հայոց հողը Ջրհեղեղից առաջ և հետո պարուրված է եղել Մեսիական խորհուրդներով:

Նոյան շրջանի ոսկե դար

«Հայաստանն իր ավանդութիւններով հարուստ է. առավել ևս նրանցով, որոնք հավաքված են Մովսեսի գրքում, նա ծառայեց որպես նոր և երկրորդ բնօրրան մարդկային ցեղի համար: Արարատի գագաթին կանգ առավ տապանը՝ իր մեջ պարունակելով մարդկային ցեղի հետագա ճակատագիրը: Այդպիսի ավանդութիւնները խթանում են հոգևոր թռիչքը և առաջացնում այնպիսի հիշողութիւններ, որոնք միտքը տանում են դեպի դարերի խորքերը»[202]:

Արարատյան երկրում Ջրհեղեղից հետո մարդկանց արագ աճին զուգահեռ՝ օրեցօր ավելի բուռն էր ծավալվում քաղաքների և այլ բնակավայրերի կառուցումը: Շինարարութիւնը մեծ թափով ընթացավ առաջին հարյուր տարիների ընթացքում, և երկար ու ձիգ տարիներ այստեղ բնակվելուց հետո միայն Նոյի

---

198 Տեսութիւն պատմութեանց Աստուածաունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819, էջ 24:

199 Святитель Филарет (Дроздов), "Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 216

200 Հովհաննես 15:5:

201 Մարկոս 14:23-25:

202 Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 7.

սերունդները ճանապարհ բռնեցին դեպի Սենաար. ***«Իսկ եթե նրանց մոտ արդեն եղել են քաղաքներ, ապա, անկասկած, դրանք կառուցվել են երկար տարիներ»***[203]*:*

Երկիր մոլորակի վրա տվյալ ժամանակում այստեղ էր միայն եռում կյանքը. կառուցում էին, տնկում և ցանում, գործվածքներ հյուսում, խեցեղեն պատրաստում և այլն: Հիմնական քաղաքներն էին Երևանն ու Նախիջևանը: Իսկ Ակոռիի դիրքն այնպիսին էր, որ թույլ չէր տալիս շատ ընդարձակվել, և նա, որպես առաջին բնակության վայր, մնաց գյուղ:

Հարյուր տարիների ընթացքում թե՛ Երևանը, թե՛ Նախիջևանն արժանացել են Նոյի բնակությանը: Սակայն վերջնական հանգիստը Նահապետն ու իր կինը գտել են Նախիջևանում:

Հարյուրամյակը նոր դեպքերով աչքի չընկավ, երբ թագավոր և քահանա Նոյի գլխավորությամբ ապրում էին հաշտ և խաղաղ: Սա էլ խորհրդանշում էր գալիք երկնքի արքայությունը, որտեղ արդարները հավիտենական թագավոր և քահանա Հիսուս Քրիստոսի թագավորությունում անվախճան խաղաղության մեջ պիտի բնակվեն:

«Նոյի Հայաստան իջնելուց մինչև մարդկության տարածվելը Սենաար՝ տևեց մոտ 100 տարի: Այսքան ժամանակ ամբողջ մարդկային ցեղը բնակվում էր Հայաստանում և, ըստ իրենց բազմանալու չափի, հետզհետե սփռվելով ծավալվում էին՝ սկսած Արարատից կամ Մասիսի լեռներից, որտեղ իջավ Նոյի տապանը, մինչև Հայոց աշխարհի շրջակա երկրները: Բոլորը միաբան էին և ընդունում էին Նոյ նահապետին՝ որպես առաջնորդ, որպես հայր և գլուխ: Այդ շրջանը նրա ղեկավարությամբ՝ կարելի է կոչել ընտանեկան կամ հայրական, քանզի ապրում էին հանդարտ և հանգիստ կյանք վարելով, ինչպես որդիները հոր հովանու տակ: Այս հարյուրամյակը ոսկեդար է՝ այնքա՜ն հռչակված և գովված նախնի բանաստեղծների կողմից, որը և մեր բանաստեղծների կողմից, իբրև այս երկրի բնիկ բնակիչների, երգով նկարագրվեց:

Բայց մարդկային այս ցանկալի կյանքը լիովին փոխվեց, երբ առաջինները ցրվելով շարժվեցին դեպի Սենաար և ձեռնարկեցին աշտարակաշինության գործը. այդ ժամանակվանից էլ սկիզբ դրվեց միապետությանը և հավետ բռնությանը» [204]*:*

---

[203] Св Ефремь Сиринь, Творения, том 6, толк. Бытия, ст. 271.

[204] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն… էջ 282-283:

Եզրահանգում

«...այսօր Արարատը լավ է երևում, օդի մեջ անշարժ ճախրում է նա՝ ձյունափառ, անմատչելի, անիրական, ինչպես լեգենդ՝ Նոյան տապանի. ինչպես նշան՝ ուղարկված մի այլ աշխարհից՝ հեռու-հեռավոր հեքիաթային անտիկ ժամանակներից»[205]:

Վերևում ներկայացրինք այն հիմնական իրադարձությունները, որ տեղի են ունեցել Հայոց հողում թե՛ մինչ Ջրհեղեղը և թե՛ հետո:

Այս երկիրն ի սկզբանե կրկնակի բնօրրան է սահմանված մարդկային և կենդանական աշխարհի համար:

Արարատյան երկրում՝ Մեծ Հայքի տարածքում էր, որ հանգրվանեց տապանը: Աստվածպաշտության այս առաջնեկ վայրում մատուցվեց առաջին զոհաբերությունը, երևաց ուխտի ծիածանը, տրվեցին նախնական պատվիրանները:

Սենաար իջնելուց հետո էլ այստեղ մնացած ժողովուրդը Նոյ նահապետի գլխավորությամբ հավատարիմ մնաց իր Արարչին:

Այստեղ Քամի անպարկեշտ արարքից հետո Նոյ նահապետը մարգարեանալով՝ օրհնեց Սեմին ու Հաբեթին և նզովեց Քամի սերնդին:

Ավելի քան հարյուր տարի՝ հետջրհեղեղյան բոլոր նահապետները և նրանց սերունդները այստեղ ապրեցին:

Այստեղ կառուցվեցին առաջին բնակավայրերը:

Այստեղ են գտնվում հետջրհեղեղյան մարդկության նահապետ Նոյի և իր կնոջ գերեզմանները:

Եվ այստեղ հավերժ անշարժ՝ իր տեղում հաստատուն է այս բոլորի անսասան վկան՝ վեհափառ Արարատը.

«Նախաջրհեղեղյան աշխարհի ահեղ հուշարձանը (Արարատը) նախաջրհեղեղյան և հետջրհեղեղյան մարդկության պատմության զարմանալի սահմանագիծն է: Ահա մի ժամանակ երկրագնդի ամբողջ բնակչությունը համատեղեց այստեղ՝ ութը հոգուց բաղկացած մի փոքր ընտանիքի մեջ, և միակն էր, որ տապանի մեջ՝ այս լեռների վրա, փրկվեց համաշխարհային Ջրհեղեղից»[206]:

Արարատը մինչ օրս, ի ցույց աշխարհի, իր գագաթին է պահում փրկության խորհրդանիշ տապանը: Սակայն ծածկել է ձյունե քողով, որպեսզի այսօր այն տեսնեն միայն հավատի աչքերով, որպեսզի հավատքով փրկվեն գալիք կրակի հեղեղից:

Եվ երբ Տիրոջ երկրորդ գալուստին Նրա կարապետ հուրը կվերցնի ձյունե քողը տապանի վրայից, այն ժամանակ բոլոր անհավատները հայտնապես՝ սեփական աչքերով կտեսնեն տապանը, սակայն արդեն ոչ թե որպես փրկության, այլ՝ դատապարտության նշան:

---

[205] Վիմ Բակշի, Յոթ գարունների երկրում, գիրք II, «Երկնքից երեք խնձոր ընկավ» Երևան1983 թ., էջ 215:

[206] Энциклопедия Библейская, (труд и издание архимандрита Никифора, М. 1891), Москва, 2005г., ст. 49-50.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստուածաշունչ, Արևելահայերեն նոր թարգմանություն, Ս. Էջմիածին, 1994:
2. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
3. Ալերամո Հերմետ, Պաուլա Կոնի Ռատտի Դի Դեզիո, Հայերի Վենետիկը, Երևան, 2000:
4. Ամբրոսիոս Վ. Գալֆայեան, Պատմութիւն Աստուածաշունչ Սուրբ Գրոց Հին Կտակարանի, Վաղարշապատ, 1897:
5. Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002:
6. Արարատ (պատկերազարդ ալբոմ), Էջմիածին, 1984:
7. Արարատն է տաճարների տաճարը, կազմող Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003:
8. Աստվածաշնչյան Հայաստան, Երևան, 2005:
9. Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000:
10. Գաթըրճյան. Տիեզերական Պատմութիւն, Ա, Վիեննա 1849:
11. Գրիքոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740:
12. Եղիշէ, Արարածոց մեկնութիւն, Մատենագիրք Հայոց, հ. 1, Անթիլիաս-Լիբանան, 2003:
13. Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014:
14. Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխ. Հ. Քյոսեյանի, Էջմիածին 2013:
15. Էդուարդ Դանիելյան, Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը, Աստվածաշնչյան Հայաստան, Երևան, 2005:
16. Էլիզէ Ռէկլիի (Ֆրանսիացի հռչակավոր աշխարհագիր) Ռուսական Հայաստան (բազմահատոր Նոր Ընդհանուր Աշխարհագրությունից), Վաղարշապատ, 1890:
17. Թովմա Արծրունի և Անանուն, Երևան, 1978:
18. Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947:
19. Լինչ Հ. Ֆ. Պ, Հայաստան ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, Ա հատոր, Կ. Պոլիս, 1913:
20. Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:
21. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992:
22. Հ. Ակինյան, Հայոց եկեղեցական տարին եօթերորդ դարու սկզբին, Հանդէս ամսօրէայ, 1947,
23. Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր երրորդ, Վենետիկ, 1835:
24. Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:

25. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան 2002:
26. Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920:
27. Մետրոպոլիտ Սերաֆիմ Գլասթոնբերի (Բրիտանական (Ղպտի) Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ), Ճանապարհորդություն դեպի Արցախ, 2008:
28. Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայերը, Երևան, 1984:
29. Միքայել Չամչեանց, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985:
30. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց. Երևան 1968:
31. Յոթ գարունների երկրում, գիրք I, Երևան 1978:
32. Յոթ գարունների երկրում, գիրք II Երևան 1983:
33. «Նոյան տապանի առեղծվածը» ֆիլմի, հեղինակ Արմինե Հարությունյան:
34. Ջեյմս Բրայս (Անգլիայի հասարակական խորհրդի անդամ), Վերելք յԱրարատ, Կ. Պոլիս, 1890:
35. Սիմոն Վէբեր (դոկտր), Արարատը Սուրբ Գրոց մէջ, Վիեննա, 1901:
36. Սոփերք Հայկական, հատոր Ա-ԻԴ, Վենետիկ, 1853-1861:
37. Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896:
38. Սուրբ Հովհան Ոսկեբերան, Ճառեր-Բ, Ս. Էջմիածին, 2009:
39. Վահան Վ. Ինգլիզեան, Հայաստան Սուրբ Գրքի մէջ, Վիեննա, 1947:
40. Վրբան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան, 1989:
41. Տեսութիւն պատմութեանց Աստուածաունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819:
42. Փեթ Ալեքսանդր, Աստվածաշնչի հանրագիտարան, Հայաստանի Աստվածաշնչային ընկերություն:
43. Փիլոն Եբրայեցի, Մնացորդք ի Հայս, Վենետիկ, 1826:
44. Ֆիլիպ Մարսդեն, Խաչմերուկ, ՀԳՄ հրատ. Երևան 2008:
45. Андрей Белый, Армения, Ереван, 1985.
46. Библейско-Биографический словар, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва 2001.
47. Барон Август фон-Гакстгаузен. Закавказский Край. Санкпетербург, типография ... Ваенно-ученымь Заведениям 1850.
48. Библейский словар, Доктор Эрик Нюстрем 19-й в., 1989.
49. Виктор Абаза (Русский историк и военный деятел, генерал 1831-1898), История Армении, С. Петербургь, 1888.
50. Генри Г. Геллей, Краткий Библейский толкователь, Канада, 1989.
51. Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004.
52. Евгенний Марков. Русская Армения. Вестник Европы. журнал, Книга V, Том III. Санктпетербург 1901.

53. Димитрий Ростовский, Жития святых, Сентябр книга I, Москва 1904.
54. Дэвид Рол - известныи британскйи писатель и археолог, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005.
55. Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000.
56. Ковалевский Е. П., Гора Арарать, С.-Петербургь, 1903.
57. Лопухинь А. П., Библейская История Ветхаго Завета, Монреаль, 1986.
58. Лопухина А. П., Толкования Библия, 1, Петербургь, 1904-1907.
59. Мордовцева Д. Л., На Араратъ, С.-Петербургъ, 1883.
60. Нелли Саакян, Мировая Гора, Ереван 2004.
61. Реваз Джапаридзе, четыре дня в стране Айоса, Тбилиси Мерани, 1988.
62. Св. Ефремь Сиринь, Творения, том 6, толк. Бытия, Москва 1995.
63. Святитель Филарет Дроздов, Толкование на книгу Бытия, Москва, 2004.
64. Святитель Афанасий Великий, Творения в четырих томах, Том 1, Москва, 1994.
65. Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832.
66. Спасский-Автономов. Восход на Арарат, Москва 1839.
67. Шопен, И. В., Исторический памятник, Армянской области, С. Петербург, 1852.
68. Щедровицкий Д., Введение в Ветхий Завет. http://www.gumer.info/bogoslov_Buks/bibliologia/schedr/04.php
69. Энциклопедия Библейская, (труд и издание архимандрита Никифора, М. 1891), Москва, 2005.
70. Friedr. Murad, Ararat und Masis, Heidelberg 1901. S. 49.
71. Gohen S., Enmerkar and the Lord of Arata, Ann Arbor, 1973, 2. 140.
72. Migne, Patr. Lat. 24, col 403.

ԳԻՐՔ III

Երկիր, որին բախվելով սասանվեց համաշխարհային չարիքը

«Այնպիսի տպավորություն է, որ Հայաստանում պատմությանը սկիզբ չկա՝ այն եղել է միշտ: Եվ իր հավիտենական գոյությամբ նա սրբացրել է ամեն մի քար և ամեն մի քայլ: Երևի չկա այնպիսի մի գյուղ, որն ինչ-որ ժամանակ մի հինավուրց պետության մայրաքաղաք եղած չլինի, չկա մի բլուր, որի մոտ տեղի ունեցած չլինի մի վճռական ճակատամարտ, չկա քար, որ արյամբ թաթախված չլինի, և չկա մարդ, որ անտարբեր լինի այս ամենի հանդեպ»[1]:

Ջրհեղեղից հետո էլ Հայաստանի տարածքը շարունակեց մնալ համայն մարդկության բնօրրանը: Այս հատորի երկրորդ գրքում ընդգծեցինք, որ Ջրհեղեղին հաջորդող մոտ հարյուր տարին Արարատ լեռան շրջակայքում կյանքն ընթանում էր խաղաղության ու աստվածպաշտության մեջ, և այդ ժամանակաշրջանը համարվեց ոսկե դար: Բոլորը հնազանդ էին թագավոր-քահանա Նոյ նահապետին և ջանում էին ապրել այն կանոնների համաձայն, որ Ադամը ստացել էր Եդեմում և Նոյը՝ Արարատ լեռան տարածքում: Այստեղ էին ապրում մարդկության նահապետներ Սեմը, Քամը և Հաբեթը:

Ըստ Սուրբ Գրքի՝ այդ ժամանակաշրջանում այստեղ էին բնակվում Սեմի սերնդից՝ Եբերը, Քամի սերնդից՝ Նեբրովթը, և, ըստ հնագույն ավանդազրույցների ու պատմական փաստերի, Հաբեթի սերնդից՝ Թորգոմի որդի Հայկը, որը դարձավ հայոց ազգի նահապետը:

*Հայաստանը հնուց կոչվել է նաև Թորգոմա տուն: Թորգոմից հայերի սերվելու մասին գրել են բազում հեղինակներ, այդ թվում Ստրաբոնը, Գևորգ Սինկելոսը[2] և այլք: Եվսեբիոս Կեսարացին ժամանակագրության մեջ դա հավաստում է այսպես. **«Թորգոմը և նրանից՝ հայերը»**[3]:*

*Մովսես Խորենացին իր Պատմության մեջ Հայոց մեծերի ծննդաբանության բաժնում գրում է. **«Հաբեթը սերում է Գամերին. Գամերը սերում է Թիրասին, Թիրասը սերում է Թորգոմին, Թորգոմը սերում է Հայկին. ... »:** Այնուհետ շարունակում է. **«Այս Հայկը՝ Թորգոմի որդին, Թիրասի որդին, Գոմերի որդին, Հաբեթի որդին հայաստանցիների նախնին է...»**[4]*

Դարեր անց՝ Մովսես Կաղանկատվացին իր նախնի պատմիչի խոսքը հաս-

---

[1] Андрей Битов. Уроки Армении. Ереван 1978 г., ст. 20.

[2] Chronographia, հրատ. Weber (Bonn 1829), էջ 91:

[3] Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ, հրտ. Հ. Մ. Աւգերեան, Վենետիկ, 1818, հատ. Բ, էջ 12:

[4] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Հրտ. Հայաստան,1968 թ., էջ 76, 92:

*տատում է Հայոց Աղվանքի պատմության մեջ՝ ասելով. **«Իսկ Թիրասի որդիներն են՝ Աքաանազը (որից առաջացել են սարմատները), Երիփաթը (որից՝ սավրոմատները), Թորգոմը (իսկ սրանից էլ՝ հայերը)»**[5]:*

Նեբրովթը, Հայկը և Եբերը ապրում էին նույն ժամանակաշրջանում: Եբերը դեռ այստեղ՝ Արարատյան երկրում էր, երբ որդիներ ունեցավ, և նրա որդի Փաղեկի ժամանակ սկսվեց Արարատից դեպի Սենաար մեծ գաղթը, ինչն ապացուցում է, որ Նեբրովթը և Հայկը նույնպես այդ ընթացքում գտնվում էին այս տարածքում, քանզի ըստ տոհմաբանության՝ Նեբրովթն ու Թորգոմը՝ Հայկի հայրը, սերնդակիցներ էին, իսկ Եբերը երկու սերնդով կրտսեր էր նրանցից:

*Աստվածաշունչը նրանց ծննդաբանությունը հետևյալ կերպ է տալիս. **«Սեմի որդիներն են Ելամը, Ասուրը, Արփաքսադը, Լուդն ու Արամը... Արփաքսադը ծնեց Կայնանին, Կայնանը ծնեց Սաղային, իսկ Սաղան ծնեց Եբերին: Եբերը ծնեց երկու որդի. մեկի անունը Փաղեկ էր, որովհետև նրա օրոք ցրվեցին մարդիկ»**[6]:*

***«Քամի որդիներն են Քուշն ու Մեսորեմը, Փուդն ու Քանանը...Քուշը ծնեց Նեբրովթին»**[7]:*

***«Հաբեթի որդիներն են Գամերը, Մագոգը, Մադան, Հավանը, Ելիսան, Թոբելը, Մոսոքը և Թիրասը: Գամերի որդիներն են Աքաանազը, Րիփաթը և Թորգոման»**[8]:*

Իհարկե, Սուրբ Գիրքը հիշատակում է Նեբրովթի և Եբերի մասին, իսկ Հայկի, նրա տոհմի և ծնողների մասին լռում է: Բայց շուտով կտեսնենք, որ այդ լռությունն ունի իր շատ խորհրդավոր պատճառները: Չնայած նրա և իր ազգատոհմի մասին Աստվածաշնչում կարծես ուղղակիորեն ոչինչ չի ասվում, սակայն իրականում Սուրբ Գիրքը նրա մասին շատ յուրահատուկ տեղեկություններ է պարունակում, որոնք դեռևս ծածկված են առեղծվածային շղարշով, ինչի մասին առավել հստակ կխոսվի այս հատորի վերջին գրքում:

Հայկի մասին մեզ տեղեկություններ են հասել հինավուրց ավանդազրույցներից և Ն. Ք. երկրորդ դարում Նինվեի արքունական դիվանում գտնված մատյաններից:

*Ըստ Մովսես Խորենացու՝ Հայոց արքա Վաղարշակի (132 թ. Ն. Ք.) հրամանով ասորի Մար Աբաս Կատինան ուղևորվում է Մեծն Արշակ աշխարհակալի մոտ, որպեսզի նրանից Նինվեի արքունական դիվանատանը Հայաստանի պատմության մասին տեղեկություններ փնտրելու թույլտվություն ստանա. **«Սա իր իշխանությունը լիովին կարգի բերելով և իր թագավորությունը հաստատելով՝ կամեցավ իմանալ, թե ովքե՞ր արդյոք և ինչպիսի՞ մարդիկ տիրելիս են եղել Հայաստանի վրա իրենից առաջ, արդյոք ինքը անցյալ քաջերի՞ տեղն է գրավում, թե ապիկարների: Նա գտավ մի ուշիմ ասորի՝ Մար Աբաս Կատինա անունով, քաղդեական և հունական գրության մեջ վարժ, և նրան ուղարկեց իր եղբոր՝ Արշակ Մեծի մոտ արժանավայել ընծաներով (խնդրելով)՝ բանալ նրա առաջ արքունական դիվանը»**[9]:*

---

[5] Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969, էջ 2:

[6] Ծննդոց 10:22-25:

[7] Ծննդոց 10:6-8:

[8] Ծննդոց 10:2-3:

[9] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 83:

*Մար Աբասը գտնում է իր ուզածը, այն վերցնում և վերադառնում է Հայաստան՝ Վաղարշակի մոտ. **«Նա՝ Մար Աբասը, աչքի անցկացնելով բոլոր մատյանները՝ գտնում է մի մատյան, հունարեն գրված, որ ուներ, ասում է, այսպիսի վերնագիր. «Մատյանի սկիզբը»:***

Այս մատյանն Ալեքսանդրի հրամանով քաղդեերեն լեզվից թարգմանված է հունարենի և պարունակում է բուն հների և նախնիների պատմությունը:

Սրա սկզբում, ասում է, եղել են Զրվանը, Տիտանը և Հապետոսթեն, և այս երեք նախարարական մարդկանց սերունդներից բոլոր նշանավոր մարդիկ՝ յուրաքանչյուրն իր տեղում հերթով դասավորված է երկար տարիների ընթացքում:

Մար Աբաս Կատինան այս մատյանից հանելով միայն մեր ազգի հավաստի պատմությունը՝ հույն և ասորի գրերով, բերում է Մծբին՝ Վաղարշակ թագավորին: Եվ բարեկազմ ու քաջ աղեղնավոր, հռետոր և հանճարեղ, արի Վաղարշակը սա ստանալով՝ համարում է առաջինն՝ իր գանձերի մեջ, դնում է արքունական պահեստը մեծ զգուշությամբ և հրամայում է՝ մի մասը քարի վրա արձանագրել»[10]:

*Այս ասորական հինավուրց մատյանում Սեմը անվանվում է Զրվան, Քամը՝ Տիտան, իսկ Հաբեթի անունը մնացել է անփոփոխ: Մատյանում, ի տարբերություն հնամենի ավանդազրույցների, առավել ստուգությամբ պատմվում է Թորգոմի որդի հայոց Հայկ նահապետի մասին, որին Մար Աբասը, դասելով հսկաների շարքին, հետևյալ կերպ է նկարագրում. **«Սրանցից մեկն էր և Հապետոսյան Հայկը՝ հաստ աղեղով ու հզոր նետաձիգ, անվանի և քաջ նախարարը... Այս Հայկը վայելչակազմ էր, թիկնավետ, գեղագանգուր մազերով, վառվռուն աչքերով, հաստ բազուկներով: Սա քաջ և երևելի հանդիսացավ հսկաների մեջ» [11]:***

Հայկ նահապետի մասին առավել ամբողջական պատկերացում կարող ենք կազմել, երբ այս փաստերը մեկտեղենք Սուրբ Գրքի, հին ավանդազրույցների և հնագիտական տվյալների հետ:

Նեբրովթը և Հայկը լինելով հսկա դյուցազուններ՝ հավանաբար նախկինում լավ հարաբերությունների մեջ էին միմյանց հետ: Նեբրովթն այդ ժամանակաշրջանում ապրում էր աստվածային պատվիրանների համաձայն: Երբ սկսվեց մեծ տեղաշարժը դեպի Սենաար, նրանք երկուսն էլ գտնվում էին այդ գաղթի ճանապարհին:

Մարդկությունը բազմացել էր, և այլևս հնարավոր չէր մեկտեղ բնակվել: Ուստի, Նոյի սերունդը պատրաստվեց մեկնել դեպի հարավային երկրները:

«Իսկ թե ինչո՞ւ ցրվեցին նրանք, Սուրբ Գիրքը ոչինչ չի նշում, բայց արտաքին ինչ-ինչ հիշատակություններ ենք գտնում, քանզի սուրբ Եպիփանը գրում է[12], թե Նոյ նահապետը, նախքան նրանց ցրվելը, իբրև հայր և տեր, բաժանել էր երկիրն իր երեք որդիների միջև: Ծննդոցի այն համարը, թե մարդկանց բազմությունը Արևելքից տեղաշարժվեց և սփռվեց ամբողջ աշխարհով մեկ[13], ցույց է տալիս, որ նրանք բազմացել էին Հայաստան աշխարհում... Նախապես զգալով,

---

[10] Նույն տեղում, էջ 84-85:

[11] Նույն տեղում, էջ 85-86:

[12] Այս բանը հիշատակում է Նաև Խորենացին Ա գլխի 6-ում:

[13] Տե՛ս Ծննդոց 11:2-4:

որ առավել բազմանալու դեպքում կռիվ կծագի միմյանց միջև, նրանցից ոմանք հանձն առան դուրս գալ իրենց բնակավայրից և հեռու աշխարհ գնալ: Ինչպես հետագայում տեսանք Աբրահամի և Ղովտի հետ պատահածը, որ եռօրյա ճանապարհով հեռացան միմյանցից, քանի որ իրենց միջև կռիվ ծագեց»[14]:

Փաստորեն Նոյի օրհնությամբ էր այս տեղաշարժը, այլ ոչ որպես անհնազանդության հետևանք, քանզի բնակության պայմանների անբավարարությունն էր ստիպում այդ քայլին դիմել:

Արդյոք Նոյը լքե՞ց Արարատյան երկիրը

«Քանի որ Ջրհեղեղից հետո Նոյան տապանը կանգ առավ Արարատյան լեռների վրա, ապա Հայաստանը եղավ Ջրհեղեղից հետո մարդկության բնակության առաջին վայրը»[15]:

Ինչ վերաբերում է Նոյին, ապա նա մնաց այստեղ, քանի որ այս վայրի հետ էին կապված բազմաթիվ խորհրդավոր եղելություններ, մանավանդ Արարատ լեռան հովանու տակ նա միշտ աչքերի առջև ուներ փրկարար տապանը՝ Աստծո մեծ սիրո և ողորմածության արգասիքը՝ իր և իր սերունդների հանդեպ: Այստեղ ամեն բան հիշեցնում էր այդ մասին, ինչն էլ պատճառ էր, որ մարդկությունը երկյուղածությամբ ապրեր Աստծո պատվիրանների համեմատ:

Սակայն երբ նրանք հեռացան Արարատի ստորոտից, կամաց-կամաց մոռացության մատնեցին նաև Աստծո մասին հիշողությունը: Եվ բարեպաշտությունն սկսեց տեղի տալ կռապաշտությանը:

Հավանաբար, Նոյի հետ մնացին Սեմն ու Հաբեթը. ***«Ազգիս նահապետները երբեք չմեկնեցին Արարատից, և նույն նահապետներն ու թագավորները բազում քաղաքներ կառուցեցին այնտեղ՝ Այրարատ նահանգում»***[16]:

Որոշ ուսումնասիրողների կարծիքով Նոյը նույնպես հեռացել է Հայաստանից: Ըստ ոմանց՝ նա իր կյանքի մայրամուտին իջել և բնակություն է հաստատել Բաբելոնի և Նինվեի միջև գտնվող տարածքում: Մյուսներն էլ կարծում են, թե նա գնացել է Իտալիայի կողմը, ոմանք էլ՝ Դամասկոսի: Բայց այդ երկրներում ոչ մի ավանդություն չի պահպանվել Նոյի գերեզմանատեղի մասին: Այդ ամենին հակառակ՝ Նոյի այստեղ մնացած լինելու շուրջ խոսում են ոչ միայն վերը բերված փաստերը, այլև այն, որ Նոյի և իր կնոջ գերեզմանները մինչ օրս պահպանվել են Արարատ լեռան մոտակայքում. ***«Հայաստան աշխարհի սուրբգրային խորհրդանիշները բազում են ու բազմազան... Այդ է վկայում նաև ժողովրդի հիշողությունը: Այս առիթով Գարեգին եպս. Սրվանձտյանցը գրել է. «Տեսած եմ Հին Նախիջևանում գերեզմանատան մեջ մի ցած կամարով ծածկուած շատ հին գերեզ-***

---

[14] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր Ա, Վենետիկ 1835, էջ 302-304:

[15] А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904-1907, ст. 79.

[16] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 274:

ման, զոր հայք և պարսիկք Նոյի գերեզման կանուանին։ Նույնօրինակ մի գերեզման ևս Մարանդ քաղաքի մեջ կա, ուր բնակիչք բոլորովին պարսիկք են. բայց ճրագլուսով կը պատուեն այն շիրիմը և կը պատմեն, թե Նոյի կնոջ գերեզմանն է, ինչպես որ մեր հնագետքն ալ Մարանդ անունը կը ստուգաբանեն Մայր Անդ»։

Աստվածաշունչը վկայում է, թե Ջրհեղեղից հետո Նոյն ապրեց երեք հարյուր և հիսուն տարի։ Անկասկած է, որ այդ ամբողջ ժամանակամիջոցում Նոյն ապրել է Արարատյան դաշտում։ Մի՞թե պատահական է, որ նրա գերեզմանը ժողովուրդը ոչ մի ուրիշ վայրում ցույց չի տվել»[17]։

Այլազգի հին ու նոր հեղինակներից շատերը նույն կարծիքին են. թե Նոյը չի հեռացել Հայաստանից. մինչև իր մահը բնակվել է այստեղ։ Այդ մասին կան թե՛ ուղղակի, և թե՛ անուղղակի հիմնավորումներ։

*Միքայել Չամչյանը գրում է. **«Եվ այն, որ Նոյը Հայաստանում մնաց մինչ իր մահը, այդ ևս կարելի է ապացուցել, քանզի նախնի մատենագիրները Աստվածաշնչին համապատասխան՝ ասում են, թե Նոյի տապանը կանգնեց Հայաստանում, և Նոյը այնտեղ էր, և երբ պատմում են նրա մահվան մասին, չեն հիշատակում, թե որտեղ մեռավ, ինչից հստակ երևում է, որ նա Հայաստանից չէր մեկնել, այլ այնտեղ էր մնացել մինչև իր մահը և այնտեղ էլ թաղվել էր։ Այսպես է նաև Հայոց ազգի հնագույն ավանդությունը, ըստ որի՝ ժողովածու գիրն էլ ավանդում է, թե Նոյն ու իր կինը այնտեղ թաղվեցին, ինչպես ասում են նաև հույն պատմիչներ Սունկելոսը և Կեդրենոսը։ Հովսեփոսն էլ Նոյի մասին գրելիս՝ չի հիշատակում, որ Նոյը իջել է Սենաար, այլ պատմելով նրա մահվան մասին (ի գիրս նախնեաց Ա. գլ. 3)՝ հաջորդ գլխում գրում է, թե Նոյի որդիներն իջան Սենաարի դաշտ, ուրեմն համարում է, թե Նոյը չէր իջել Սենաար»[18]։***

Քանի որ մեծ տեղաշարժն սկսվեց տապանից դուրս գալուց մոտ 130-150 տարի անց, իսկ Նոյը Ջրհեղեղից հետո դեռ 350 տարի էլ ապրեց, հետևաբար, գաղթից հետո Նոյ նահապետն այս վայրում ապրեց ևս 200 տարի։

Դեպի Սենաար

«Արարատ լեռից մարդիկ և կենդանիները ցրվեցին ամբողջ աշխարհով մեկ։ Ահա թե ինչու Արարատը կարելի է կոչել Ջրհեղեղից հետո մարդկային երկրորդ բնօրրան»[19]։

Ահա մարդկանց բազմությունը նախապատրաստվում էր հեռանալ Արարատյան երկրից դեպի Սենաարի դաշտ։ Ինչպես արդեն ասվեց, Հայաստանից հեռանալը հիմնականում պայմանավորված էր մարդկանց բազմանալով, սակայն հեռանալով՝ նրանք ակամա հեռանում էին նաև հոգևոր և մշակութային

---

[17] Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 51:

[18] Միքայել Չամչեանց, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 155:

[19] Ковалевский Е. П., Гора Арарать, С.-Петербургъ, 1903, ст. 5.

արժեքներից, Արարատից, տապանից, Նոյից և Ջրհեղեղի սաստի հետ կապված այլ հիշողություններից: Այս երկիրը բոլորի համար հանդիսանում էր բնօրրան, որտեղ ծնվել, սնվել և կրթվել էին թագավոր-քահանա հոր՝ Նոյի ոտքեր մոտ:

Այսպիսով, նոր վայրում հաստատվելու նպատակով մարդկանց հոծ բազմությունը սկսեց իր գաղթը՝ հեռանալով Ավետյաց երկիր Արարատյան հայրենիքի սահմաններից...

*Հովսեփոս Փլավիոսն այդ արտագաղթող ժողովրդի գլուխ համարում էր Նոյի երեք որդիներին, որոնք համոզեցին ժողովրդին՝ համարձակություն ցուցաբերել և ճանապարհ բռնել դեպի Սենաար. **«Նոյի երեք որդիները՝ Սեմը, Քամը, Հաբեթը, որոնք ծնվել էին Ջրհեղեղից 100 տարի առաջ, լեռան վրայից առաջինն իջան հարթավայր, բնակվեցին այստեղ և համոզեցին մյուս մարդկանց (ովքեր ահավոր սարսափում էին ցածրադիր տարածքներից և դժվարությամբ էին իջնում բարձրադիր վայրերից՝ վախենալով նոր Ջրհեղեղից)՝ համարձակորեն հետևել իրենց օրինակին: Իսկ այն հարթավայրը, որի վրա սկզբում նրանք բնակվեցին, կոչվում է Սենաար»**[20]:*

Եթե իսկապես Նոյի որդիներն էին առաջնորդում արտագաղթը, այդ դեպքում պետք է կարծել, որ շատ քչերն էին մնացել Նոյի մոտ: Հնարավոր է, որ Սեմն ու Հաբեթը նրանց տեղավորելու նպատակով միայն գնացին, որպեսզի հետո վերադառնան:

*Թերևս Սենաար իջավ նաև Թորգոմը՝ իր հետ տանելով ավագ որդուն՝ Հայկին. **«Շատերը միաբանվեցին, որպեսզի գնան Սենաար, Թորգոմն էլ այդ հանդուգն և նախաձեռնող նահապետներից մեկը լինելով՝ Հայկին էլ իր հետ վերցնելով՝ այնտեղ տարավ»**[21]:*

Քանի որ Հայաստանն ընկած է արևելյան կիսագնդի կենտրոնական մասում, բազմաթիվ հետազոտողներ Արարատ լեռան կենտրոնական դիրքը համարել են աշխարհով մեկ մարդկանց ցրվելու ամենահարմար վայրը: Սա ևս փաստ է, որ տապանը պատահականորեն չէր իջել Արարատի վրա. լեռան դիրքը նրա հատուկ ընտրվածության մասին է խոսում:

«Ոչ այնքան այս նշանները, ավանդություններն ու երևույթներն են հավատացողների համար հավատալու պատճառ հանդիսանում, որքան Արարատյան Մասիսի սքանչելի և կենտրոնական դիրքը, ինչը գրավում է հնագույն աշխարհագետների միտքը և զարմանք առաջացնում: Քանզի մարդկության սփռման համար Աստվածային նախախնամությամբ ընտրված առավել հարմար կետ են համարում այն, քան Հնդկաստանի և Տիբեթի բարձրագույն լեռները:

Արարատյան Մասիսը, որ Մեծ Հայքի կենտրոնում է գտնվում, իր զանգվածով հանդիսանում է ամբողջ հին աշխարհի ծանրության կենտրոնը: Արարատյան աշխարհն էլ երկրի վրա հանդիսանում է որպես բնական և քաղաքական կենտրոն:

Հին աշխարհի ամենաերկար գիծը, որ ձգվում է Բերինգից մինչ Բարեհուսո

---

[20] Иосиф Флавий, Иудейские древности, том 1, “Феникс” Ростов-на-Дону, 2000, ст. 20.

[21] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 130:

հրվանդան, դրա կենտրոնում է գտնվում Արարատը՝ Ատլանտյան և Խաղաղ օվկիանոսների միջև է գտնվում Արարատը. Իսլանդիայի (որը Եվրոպայի հյուսիսային ծայրում է գտնվում) և Հնդկաստանի հարավային ծայրի միջև է գտնվում Արարատը. Աֆրիկայի Սենեգալի սահմանների և Պեկինի մեջտեղում է գտնվում Արարատը. Չիբլարթարից մինչև Բայկալի մեջտեղում է գտնվում Արարատը. որպես օազիս, որպես ծով՝ ցամաքի մեջ և ցամաք՝ լճերի մեջ, կովկասյան ցեղերի, մոնղոլական և եթովպական ցեղերի սահմանում է գտնվում Արարատը, իսկ բարձրությամբ առավել է շրջակա աշխարհից։

Նախախնամությունը այսպիսի բարեխառն տեղում գտնվող մի գագաթի վրա իջեցրեց երկրորդ մարդկության նահապետին՝ իր պատսպարան նավով ու ընտանիքով, և այդպիսի բարձր տեղից ու հրաշալի տեսարանից ցույց տվեց երկրի չորս կողմը, ուր իր սերունդը բազմանալով պիտի տարածվեր. ինչպես այդ ջրերը՝ հեռանալով լեռից՝ տարածվեցին այս ու այն կողմը, և տապանը նստեց այնտեղ»[22]։

Իհարկե, առաջին մարդկային ցեղի աշխարհով մեկ տարածվելը հիմնականում եղավ Բաբելոնից, սակայն այդ տարածման համար որպես սկզբնակետ եղավ Արարատյան երկիրը. «Եթե հաստատապես այստեղ էր, որ մարդն առաջին անգամ նորից ոտք դրեց անբնակ երկրի վրա, դյուրին է պատկերացնել, թե մարդիկ ինչպես ցրվեցին, տարածվեցին այս նվիրական բարձունքից՝ ընդարձակ գետերի ուղղությամբ...և Ասորիների երկրից անցնելով՝ հարավային օվկիանոսի եզերքը հասան, որտեղից էլ ուրիշ երկրներ և կղզիներ փոխադրվեցին։ Աշխարհի վրա ավելի հոյակապ կենտրոն անկարելի է պատկերացնել։ Ստորև՝ Արաքսի հովիտն հայկական ավանդությունը Դրախտի վայր է համարում»[23]։

Բնական է, որ այդ ընթացքում Արարատյան երկրում կյանքը շարունակվում էր Նոյի գլխավորությամբ՝ աստվածային պատվիրաններին հետամուտ։ Իսկ թե ինչպիսին էր այն Սենաարում, կտեսնենք ստորև։

Աշտարակաշինություն

«Աստվածային ձեռքով կերտված այս Արարատը դրված է որպես հակադրություն առասպելական աշտարակի, որ մահկանացուները զուր աշխատեցին՝ մինչև երկինք բարձրացնել»[24]։

Սուրբ Գիրքը և ավանդազրույցներն ասում են՝ Սենաարում սկզբնական շրջանում բարեպաշտություն էր տիրում։ Այս էր պատճառը, որ Աստծո օրհնությունը նրանց վրա էր, և ապրում ու բազմանում էին՝ կառուցելով նոր բնակավայրեր։

---

[22] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 49-50:

[23] Ջեյմս Բրայս, Վերելք Յարարատ, Կ. Պոլիս, 1890, էջ 62:

[24] Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947, էջ 20:

Նրանց մեջ աչքի էր ընկնում Նեբրովթը, որը շնորհ էր գտել Տիրոջ առջև. ***«Նա առաջին հսկան էր երկրի վրա: Նա քաջ որսորդ էր Աստծո առաջ: Դրա համար էլ ասույթ դարձավ. «Ներբովթի պես քաջ է Տեր Աստծո առաջ»: Նրա թագավորությունն սկիզբ առավ Բաբելոնում և ընդգրկում էր Որեքը, Աքքադն ու Քաղանեն, որոնք գտնվում էին Սենաար երկրում: Նեբրովթը ելավ այդ երկրից ու գնաց Ասուր, կառուցեց Նինվեն, Ռոբոթ քաղաքը, Քաղանը, ինչպես նաև Նինվեի ու Քաղանի միջև գտնվող Դասեմանը: Սա մեծ քաղաք էր»*** [25]:

Նեբրովթը ոչ միայն աչքի էր ընկնում իր հզոր ուժով, որսորդական ու շինարարական ունակություններով, այլև աստվածապաշտությամբ. ***«Տերը նրան պարգևատրեց արիությամբ և որսորդության ունակությամբ: Սպանելով որսին՝ նա երբեք չմոռացավ զոհասեղան կառուցել և Աստծուն զոհ մատուցել»*** [26]:

Սենաարում Նեբրովթի գործակիցներից ամենաակնառուները, ըստ միջագետքյան ավանդությունների, համարվում էին Հայկը և Լամսուրը: Այդ ժամանակ նրանց գլխավորությամբ կառուցվեցին բազմաթիվ քաղաքներ, գյուղեր և այլ բնակավայրեր: Տնկվում էին պտղատու այգիներ, անցկացվում էին ոռոգման ջրանցքներ, զարգանում էր կենդանիների բուծումը... Մի խոսքով՝ կյանքը բուռն կերպով զարգանում էր: Նրանք մշտական կապ էին պահպանում Նոյ նահապետի հետ, որը մնացել էր Արարատյան երկրում:

Սակայն Նեբրովթը, տեսնելով այն հսկայածավալ աշխատանքները, որի գլխին ինքն էր կանգնած, հպարտացավ իր սրտում և ամբողջ աշխատանքների հաջողությունը սկսեց վերագրել իրեն, այլ ոչ թե Տիրոջը, ինչպես ասում է Հովսեփոս Փլավիոսը. ***«Տեր Աստծո հանդեպ հանդուգն անհնազանդություն ցուցաբերեց Նեբրովթը՝ Նոյի որդու՝ Քամի թոռը, որ քաջ մարդ էր և տարբերվում էր մյուսներից իր հզոր ֆիզիկական ուժով»*** [27]:

Սա մի կողմ թողնելով իր ձեռնարկած քաղաքաշինությունը՝ որոշեց ամբողջ ուժերը նվիրել իր փառքի համար մի հզոր աշտարակի կառուցման: Սկզբնական շրջանում նա ծածուկ էր պահում աշտարակաշինության նպատակը. պատճառ էր բերում Տիգրիս ու Եփրատ գետերի հաճախակի հեղեղումները, ինչի ժամանակ աշտարակը կարող էր ծառայել որպես ժամանակավոր ապաստարան: Եվ ինչպես քաղաքաշինության և այլ հարցերում գլխավոր դերն ունեին Լամսուրն ու Հայկը, այդպես էլ աշտարակաշինության մեջ. նրանք չկասկածեցին Նեբրովթի անկեղծությանը և անցան գործի:

Այսպիսով՝ ***«Աշտարակաշինությունը գլխավորում էին Լամսուրը, Հայկը և Նեբրովթը»*** [28]:

Թե ո՞վ էր Լամսուրը, այդ մասին տեղեկություններ չեն պահպանվել, բայց քանի որ Նեբրովթը Քամի սերնդից էր, իսկ Հայկը՝ Հաբեթի, հավանաբար, Լամսուրն էլ Սեմի սերնդից էր: Հնարավոր է, որ նա եղել է Եբերը, քանզի նրանք բոլորն էլ սերնդակիցներ և երևելի անձեր էին: Իսկ թե ինչո՞ւ Լամսուր, այլ ոչ թե Ե-

---

[25] Ծննդոց 10:9-12:

[26] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, ст. 182.

[27] Иосиф Флавий, Иудейские Древности, Том 1, “Феникс”, Ростов на Дону, 2000, ст. 20.

[28] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871, էջ 20:

բեր, այդտեղ զարմանալի ոչինչ չկա: Նոյն էլ մինչ Աստվածաշնչի գրի առնվելը՝ տարբեր երկրներում տարբեր անվանումներով էր հիշատակվում՝ Քսիսութրոս, Ուտ-նապիշտի, Սիզուգռուս և այլն: Սրանք սոսկ անուն չեն, այլ՝ հատկանիշներ, որոնք լեզուներում տարբեր հնչյունակազմ ունեն:

Նեբրովթը (որին անվանում են նաև Բել) շինարարների մեջ ջերմեռանդություն առաջացնելու նպատակով հայտարարում էր, թե աշտարակի օգնությամբ կարող են փրկվել ոչ միայն այդ երկու գետերի վարարումից, այլև հետագա աշխարհակործան ջրհեղեղից ու հրից: Դրանով առավել էր կարևորում աշտարակի դերը և մեծացնում շինության ծավալները:

Բացահայտ էր դառնում, որ աշտարակն իրականում կառուցվում էր՝ իբր Աստծո հավանական պատժից պաշտպանվելու միջոց, ինչը բարեպաշտ Հայկի համար միանգամայն անընդունելի էր, քանզի դա Տիրոջ հանդեպ ապստամբության նշան էր:

«Հայկը միանալով Նեբրովթին կամ Բելուսին՝ աշտարակի կառուցման ընթացքում դարձավ նրա ամենանախանձախնդիր գործակիցը, սակայն չէր ենթադրում, որ այդ հարկավոր էր՝ երկնային բարկությանը հակադրվելու համար. այլ մտածում էր, որ դա ընդամենը ծառայելու է որպես ապաստարան՝ նիփրատի հաճախակի հեղեղումների ժամանակ [29]» [30]:

Նեբրովթի ճառերից հմայված ժողովուրդն աշխատում էր գիշեր ու զօր՝ իր թվացյալ փրկության աշտարակը ժամ առաջ ավարտելու նպատակով:

Կառուցման համար օգտագործում էին հատուկ հնարքներ, որ ջուրը չկարողանա ներթափանցել աշտարակից ներս. ***«Նրա լայնությունն այնքան մեծ էր, որ դրա պատճառով բարձրությունն այդքան էլ աչքի չէր ընկնում դիտողի աչքին: Այն կառուցվեց ձյութով շաղախված թրծած աղյուսով, որպեսզի ջուրը չկարողանա նրա մեջ սողոսկել» [31]:***



Աշտարակաշինությունը նաև անվտահություն էր Աստծո խոստման հանդեպ, որ այլևս մարդկությանը ջրհեղեղով չէր պատժելու: Ի վերջո, դա առանց Աստծո սուրբ երկյուղի ապրելու փորձ էր:

Աշտարակը հսկայական բարձունքի հասավ:

Նրա մեծությունը չափազանցելով՝ հետագայում սկսեցին այդ մասին առասպելաբանել. ***«Սկսելով Ռագավի ծննդից՝ մինչև 40 տարի անդադար՝ ամառ թե ձմեռ [կառուցեցին] բարեխառն***

---

[29] Sե́u. I. A. Remers Handbuch der alteru Ceschichte.

[30] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 43.

[31] Иосиф Флавий, Иудейские Древности, Том 1, “Феникс”, Ростов на Дону, 2000, ст. 21.

տեղի շնորհիվ, մինչև հասան հորձանուտ և խեղդող օդին, որով, ասում են, չեն կարողանում ընթանալ թռչունները, քանզի այրվում են թևերը, և ընկնում են երկիր: Ասում են, թե ելնելն ու իջնելը տասը ամսվա ճանապարհ էր, և դրա իշխաններն էին Բելը, Լամսուրն ու Հայկը» [32]:

Օրեցօր կառուցվում էր թե՛ Բաբելոնը, թե՛ Բաբելոնյան աշտարակը: Դրա հետ բացահայտվում էր նաև Նեբրովթի բռնատիրական դեմքը: Սա, որ աստվածպաշտության մեջ առաջիններից էր և Աստծո կողմից ընտրված ու շնորհազարդված, Հերոբովամի պես ուրացավ իր Բարերարին [33] *և սկսեց պաշտել կուռքերին՝ իրեն հնազանդ ժողովրդին էլ համոզելով և պարտադրելով նույնն անել: Մարդիկ լավ իմանալով Նեբրովթի նախկին բարեպաշտության և ընտրվածության մասին՝ վստահում էին նրան, և սրա կողմից ներմուծված կռապաշտությունը համարում էին աստվածպաշտության նորացում: Եվ շատ շատերը մոլորվելով՝ ընկնում էին կռապաշտության մեջ:*

Ինչպես մեկնում է Եղիշեն՝ ***«նրանք սրան ապավինեցին, այլ ոչ թե Աստծուն և համարում էին, որ եթե մեհյան կառուցեն, դա նրանց համար ջրհեղեղի ժամանակ ապավեն կլինի»*** [34]:

Այնուհետ սա կուռքերի պաշտամունքը փոխարինեց իր հաղթանդամ անձի պաշտամունքով՝ ասելով՝ եթե Տերն ընդհամենը ութը հոգու կարողացավ փրկել Ջրհեղեղից, ապա ինքն աշտարակի միջոցով կփրկի բոլոր իրեն ապավինողներին:

Այսպես՝ աշտարակը վերածվում էր մեհյանի, որը որպես պաշտամունքի առարկա՝ իր մեջ կրում էր կենդանի կուռք Նեբրովթին:

*Մարդիկ իրենց առջև տեսնելով այդ փառահեղ հսկային, իմանալով նրա մեծամեծ գործերի մասին, նրանով հմայված՝ կատարում էին նրա բոլոր հրամանները. «****Սա համոզեց նրանց, որ իրենց բարեկեցությունը չվերագրեն Տեր Աստծուն, այլ իրենց բարեհաջողության պատճառը համարեն իրենց սեփական քաջությունը: Որոշ ժամանակ անց՝ Նեբրովթը սկսեց համառորեն ձգտել վերին իշխանությունների՝ համոզված լինելով, որ մարդիկ միայն այդ դեպքում կդադարեն վախենալ Աստծուց և կհեռանան Նրանից, եթե համաձայնվեն ապրել իր՝ Նեբրովթի իշխանության հովանու տակ: Դրա հետ մեկտեղ՝ նա սկսեց պարծենալով հայտարարել, որ կպաշտպանի նրանց Տեր Աստծուց, եթե Նա նորից ցանկանա երկիրը ջրհեղեղով ողողել: Սա խորհուրդ տվեց նրանց՝ աշտարակը կառուցել այնքան բարձր, որքան կարող է բարձրանալ ջուրը, և դրանով վրեժխնդիր լինել նախնիների կորստի համար:***

Ամբոխը միահամուռ ցանկություն հայտնեց հետևել Նեբրովթի առաջարկին՝ Տեր Աստծուն ծառայելը համարելով ստոր ստրկություն» [35]:

Մարդիկ սկսեցին երես թեքել Արարչից, ապերախտորեն մոռացան այն ամենն, ինչը վայելում էին Նրա օրհնությամբ. իրենց բաժին հասած բոլոր բարիքնե-

---

[32] Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց, Մատենագիրք Հայոց, հ. 1, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 816:
[33] Տե ս Գ. Թագավորաց 14.7-11:
[34] Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց… էջ 816:
[35] Иосиф Флавий, Иудейские Древности... ст. 20-21.

*րը վերագրեցին կուռքերին: Իսկ աշտարակը դարձավ անաստվածության կոթող, կռապաշտության մի հսկա հուշարձան. **«Արդ, այն առաջին ժամանակներում, Ջրհեղեղից հետո, երբ մարդիկ բազմացան երկրի երեսին և վայելում էին Աստծո խնամքի պարարտությունը, հղփացան ու խռովություն մտահղացան՝ ինքնամոռացության մեջ հիմարացած: Հավաքվելով որոշ վայրում, խորհուրդ արեցին՝ սնոտի խորհուրդ՝ մեհյանների պաշտամունքի համար շինել բարձր՝ անհասանելի աշտարակ, և այն կոթողեցին Սենաար դաշտում՝ Ասորեստան երկրում: Արդ, շինեցին շենքը՝ դևերի պաշտամունքի համար իրենց անձերին կապելով մեհենաշեն անունը. և այն կտակեցին իրենց որդիներին: Հոխորտալով, հպարտանալով գործի անցան և ջանասիրաբար աշխատեցին, քանզի այն անմիտ առաջին ցեղը կամենում էր՝ չարության պաշար թողնել իրենից հետո եկող սերունդներին»**[36]:*

*Նեբրովթը ցանկանում էր՝ Արարատ լեռը փոխարինել բաբելոնյան աշտարակով՝ դրա գագաթը ներկայացնելով որպես հետագա ջրհեղեղներից փրկվելու համար ավելի լավ միջոց. **«Դեռևս ավանդությունից հիշելով, թե ինչպես բարձրագագաթ Մասիսը Նոյան տապանին հանգրվան եղավ, այդ մեծագույն աշտարակն էլ կարող է իրենց ազատել, եթե կրկին անգամ ամբողջ աշխարհում ջրհեղեղ լինի»**[37]:*

Աշտարակն ավելի արժևորելով, քան Արարատ լեռը, իր անձն էլ ավելի բարձր ներկայացնելով Նոյից՝ նա ցանկանում էր, որպեսզի թե՛ նյութական, թե՛ հոգևոր կարիքների համար մարդիկ միայն իրեն դիմեն և հայացքներն այլևս չուղղեն Արարատյան երկրի կողմը:

*Նեբրովթն **«ապստամբեց Աստծո դեմ, քանի որ ասաց. «Ես վրեժ կլուծեմ Նրանից՝ իմ նախնիների կորստյան համար: Եթե Նա երկրորդ ջրհեղեղն ուղարկի մեզ վրա, իմ աշտարակն Արարատից բարձր կլինի և կփրկի ինձ»: Նա ցանկանում էր աշտարակի օգնությամբ սպառնալ Երկնքին, ոչնչացնել Աստծուն և Նրա փոխարեն կուռքեր կանգնեցնել»** [38]:*

Նեբրովթը, ըստ Գրեյվսի, Ջրհեղեղի ժամանակ կորստի մատնված ամբարիշտ սերնդին համարում էր իր նախնիները: Այդպիսին էին նաև փարիսեցիները, որ ասում էին, թե իրենց հայրերի փոխարեն իրենք չէին սպանի մարգարեներին՝ դրանով ապացուցելով, որ իրենք այդ մարգարեասպանների և Աստծո դեմ ապստամբածների որդիներն են:

*Թե՛ Նեբրովթը, թե՛ իրեն հետևողները համարվեցին սրբապիղծ ապստամբներ, ինչի համար էլ Փիլոն Ալեքսանդրացին Արարատյան երկիրն անվանում է առաքինության վայր, իսկ Բաբելոնը՝ հիմարության. **«Սրբապիղծները, դժգոհ լինելով մեր նախնիների պետությունից, մշտապես անարգելով և դատափետելով նրա կարգ ու կանոնները՝ բարձրանում են իրենց անաստվածության նավը... Եվ նրանք բոլորը, ովքեր լքեցին առաքինության տարածքը և հենարան գտան հիմարության մեջ, փնտրում են ամենահարմար վայրը և բնակվում այնտեղ: Հրեաների մոտ այն կոչվում է «Սենաար», հելլենների մոտ՝ «ցնցում», քանզի անպիտանների ամբողջ կյանքը բուռն է, ուռճացած, ցնցումներով լի. այն մշտա-***

---

[36] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983, էջ 321, 323:

[37] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 196-197:

[38] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, ст. 183.

պես ալեկոծված է, և իրական բարիքից ոչ մի կաթիլ նրա մեջ չի մնում։ Տե՛ս. թափահարումից դուրս են ընկնում այն ամենը, ինչը պահվում է միասնականության ուժով։ Նույնն էլ, ինձ թվում է, տեղի է ունենում շեղված և անօրեն հոգու հետ. ցնցումից նրանից դուրս է թափվում ամեն տեսակի առաքինություն այնպես, որ այդպիսի հոգում այլևս չես տեսնում ո՛չ առաքինության ուրվականը և ո՛չ էլ ստվերը»[39]։

*Ինչ վերաբերում է Հայկին, ապա նա Բաբելոնում ոչ միայն մեծ հարգանք էր վայելում, այլև սեր, քանզի նախանձախնդրորեն հետևում էր Նոյի բարեպաշտական պատվիրաններին՝ հակառակ Նեբրովթի, որն ավելի ու ավելի էր հեռանում Աստծուց՝ խռովքի պատճառ դառնալով Միջագետքի բնակիչների համար, ինչպես ասում է Սերգեյ Գլինկան. **«Այդ ժամանակ Հայկը քաղդեական տարածքում էր ապրում՝ խաղաղություն և երջանկություն վայելելով և առավել ևս վայելելով ժողովրդի սերը։ Բայց մարդկության բազմանալու պատճառով նահապետների կառավարման շրջանում կանոնակարգված և ամրապնդված բնության օրենքները ժամ առ ժամ սկսեցին սասանվել, պառակտումներ ծագեցին, անհետացավ հանգիստն ու փոխհամաձայնությունը»** [40]։*

Հայկը տեսնելով, որ Բելի բռնած ուղին իրականում մարդասիրական չէ, այլ միայն հեռացում է Աստծուց, սկսում է համոզել սրան, որ ետ դառնա այդ աղետալի ուղուց։ Սակայն, ինչպես պատմությունն է ցույց տալիս, Հայկը հաջողության չի հասնում։

*Լեզուների խառնակումից հետո լքելով Նեբրովթին՝ Հայկը Բաբելոնից վերադառնում է Տիգրիսի և Եփրատի ակունքների մոտ գտնվող Արարատյան երկիրը. **«Համոզվելով, որ Բելը ձգտում է հաստատել իր միապետությունը և այդ հարաբերությունում ոչ ոքի զիջումներ անելու մտադրություն չունի, Հայկն իր որդիների հետ միասին վերադարձավ իր հոր մոտ»**[41]։*

Լեզուների խառնակումը

***«Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի
բնակիչների լեզուները և այնտեղից նրանց
սփռեց ողջ աշխարհով մեկ»**[42]։*

Բաբելոնում աշտարակաշինությունը կարծես դարձել էր կյանքի նպատակ, և ոչ ոք նույնիսկ չէր մտածում, թե իր կյանքը կարող էր ավարտվել հենց այդ ընթացքում՝ առանց տեսնելու դրա ավարտը։ Իսկ եթե տեսներ էլ, ապա ընդամենը դրա գագաթից կարող էր զմայլվել իր առջև սփռված հեռաստանների խաբկանքով, ինչպես որ սատանան՝ ստի հայրը, լեռան գագաթից Տիրոջը ցույց տվեց

---

[39] Филон Александрийский, Толкования Ветхого Завета, Москва, 2000, ст. 308, 318.

[40] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 43.

[41] Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888, ст. 25.

[42] Ծննդոց 11: 9:

*ամբողջ աշխարհի պատրանքը և ասաց. **«Այս բոլորը քեզ կտամ, եթե գետին ընկնելով ինձ պաշտես»** [43]։*

Նման վիճակի մեջ ընկած ժողովուրդը, որ լիովին մոռացության է մատնել կյանքի իրական նպատակը և ամբողջապես ներքաշվել ունայնության մեջ, որպես խոտան՝ չնչվում է աշխարհի երեսից, ինչպես դա եղավ Ջրհեղեղի ժամանակ, իսկ հետագայում՝ Սոդոմի և Գոմորի հանդեպ՝ արդեն կրակով։

Բայց և այնպես, Աստված Միջագետքի այս մոլորված ժողովրդին խնայեց՝ հմայությունից նրանց սթափեցնելու միջոցներ ձեռնարկելով։

*Սուրբ Գիրքն այդ չարության գործի խափանումը հետևյալ կերպ է ներկայացնում. **«Տերն իջավ, որպեսզի տեսնի այն քաղաքն ու աշտարակը, որ կառուցում էին մարդկանց որդիները։ Տերն ասաց. «Սրանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու և սկսել են այդ գործն անել։ Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կառուցեն այն, ինչ կամենում են։ Արի իջնենք և խառնենք նրանց լեզուն այնպես, որ ոչ մեկը չհասկանա իր ընկերոջ ասածը»։ Տեր Աստված այնտեղից նրանց սփռեց աշխարհով մեկ, և նրանք դադարեցին քաղաքն ու աշտարակը կառուցելուց։ Դրա համար այն կոչվեց Խառնակություն (Բաբելոն), որովհետև Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները և այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մեկ»** [44]։*

*Հեթանոսական աղբյուրները նույնպես աշտարակաշինության կասեցումը նման կերպ են պատճառաբանում՝ ըստ իրենց հեթանոսական պատկերացումների. **«Աստվածներից առաջիններն ահեղ էին և երևելի ու աշխարհի մեծամեծ բարիքների պատճառ, աշխարհի և բազմամարդկության սկիզբ։ Սրանցից առաջ եկավ հսկաների սերունդը՝ խոշոր, հաղթանդամ, վիթխարի մարդիկ, որոնք ամբարտավանությամբ հղանալով՝ ծնեցին աշտարակաշինության անօրեն գաղափարը, որը և ձեռնարկեցին իրագործելու։ Աստվածների ցասումից ինչ-որ ահագին և աստվածային հողմ փչելով՝ կործանում է աշտարակը և մարդկանց յուրաքանչյուրին տալիս է մյուսներին անհասկանալի լեզուներ, որով նրանց մեջ աղմուկ և շփոթություն է ընկնում»** [45]։*

Աշտարակաշինության և լեզուների խառնակության մասին պատմություններով հատկապես հարուստ է եղել Միջագետքը, քանզի դա այն տարածքն է, որտեղ տեղի է ունեցել խառնակումը։

*Այդ մասին վկայում է նաև քաղդեացի Սիբիլլան. **«Երբ դեռ բոլոր մարդիկ մեկ լեզվով էին խոսում, նրանցից ոմանք սկսեցին սարսափելի բարձրության աշտարակ կառուցել, որպեսզի նրա օգնությամբ երկինք բարձրանան։ Սակայն աստվածները քամի ուղարկեցին, կործանեցին աշտարակը և բացի դրանից՝ յուրաքանչյուրին (կառուցողներից) հատուկ լեզու տվեցին, այդտեղից էլ քաղաքը սկսեց Բաբելոն կոչվել»** [46]։*

Աստված խառնեց չարության մեջ միաբանված ժողովրդի լեզուները, որ աշ-

---

[43] Մատթեոս 4:9:

[44] Ծննդոց 11: 5-9:

[45] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 85:

[46] Иосиф Флавий, Иудейские Древности, Том 1... ст. 21:

տարակի կառուցման մոլուցքը կասեցնի և նրանց կորստից փրկվելու միջոց տա։

Լեզուների խառնակությունը մասամբ պատիժ էր, բայց նաև Աստծո հայրական սիրո, ողորմության և խրատի դրսևորում.

«Հավատացյալ Նոյի սիրելի, պաշտելի Աստվածը, որ հաշտության ուխտ էր կապել, մի պահ ծածկեց իր հաշտության աղեղը և Մասիսի գլխից իջավ դեպի Բաբելոն և մի շնչով խորտակեց աշտարակը և խառնեց միաբարբառ մարդկանց լեզուները և ցրեց չարաժողով միաբանությունը, որպեսզի Բաբելոնի ամբարիշտ ընտանիքը ճանաչի, որ իրենց մեծամեծ խորհուրդներն ու ունայն գործերն Աստծո դեմ էին, և որ այլևս չհամարձակվեին Բարձրյալի դեմ աշտարակ կանգնեցնել» [47]։

Արարատյան երկրում աստվածապաշտությունն ընթանում էր բնական հունով, և տրամաբանական է, որ Բաբելոնի գլխին իջած պատժից միանգամայն անմասն մնացին Արարատյան երկրում, ինչպես որ հետագայում Գեսեմում էին զերծ մնում, երբ Եգիպտոսի գլխին իջնում էին Աստծո հարվածները։

Դրանից հետևություն, որ Արարատյան սուրբ տարածքում լեզուն չխառնակվեց, այլ մնաց նույնը, որով խոսում էին դեռ Ջրհեղեղից առաջ։

Այդ մասին՝ հաջորդ գրքում։

Կռապաշտությունից մոլեգնած՝ Բաբելոնում ջանում էին ունայնության աշտարակն ավարտել՝ նույնիսկ լեզուների խառնակումից հետո։ Մարդկային կյանքն այստեղ ոչ մի արժեք չուներ, և հազարավոր մարդիկ իրենց կյանքը զոհում էին՝ հանուն փուչ գաղափարի։

*Բայց լեզուների խառնակումն այնպիսի քաոս ստեղծեց, որ այլևս չէին կարողանում համախմբված աշխատել. **«Հերիք էր, որպեսզի շինարարը ձեռքից գցեր և վնասեր աղյուսը, որ բոլորը ողբային այդ կորստի վրա, բայց եթե հենց կառուցողն ընկներ, ոչ ոք անգամ գլուխը չէր թեքի այդ կողմ...Աստված դիմեց իր գահի մոտ գտնվող յոթանասուներորդ հրեշտակին. «Պետք է նորից իջնել նրանց մոտ, և թող նրանք մի լեզու չունենան, այլ յոթանասուն»։ Այդպես էլ Նա արեց, քանզի շինարարներն անմիջապես դադարեցին միմյանց հասկանալ։ Եթե վարպետը բանվորին ասում էր՝ «Ինձ ձյութ տուր», բանվորը նրան աղյուս էր տալիս, որով վարպետը բարկությամբ սպանում էր բանվորին։ Այդ ժամանակ բազում սպանություններ եղան հենց աշտարակի վրա և նրա ստորոտին, այն պատճառով, որ մարդիկ միմյանց չէին հասկանում, իսկ հետո աշխատանքն ընդհանրապես դադարեց»*** [48]։

Բաբելոնի անաստվածության խորհրդանիշ աշտարակը կառուցելիս՝ մարդիկ մոռացան մահվան, հանդերձյալ կյանքի և Աստծո դատաստանի մասին. անձնազոհաբար ջանում էին երկրի վրա կառուցել կորցրած Դրախտին փոխարինող մի այլ ապահով երկիր։

Սա նախատիպ ունենալով՝ հետագայում նման նախանձախնդրությամբ

---

[47] Խրիմյան Հայրիկ, Երկեր, 1992, էջ 197:

[48] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы... ст. 183-184.

սկսեցին Խորհրդային աստվածամերժ միությունում կառուցել կոմունիզմի աշտարակը: Սակայն այստեղ էլ 15 հանրապետությունների լեզուները «խառնակվեցին», և կոմունիզմի կիսատ «աշտարկն» էլ փլուզվեց:

Ամեն անխոհեմ կառույց դատապարտված է փլուզման: Այդպես եղել է հազարամյակների ընթացքում՝ որպես անբեկանելի օրենք:

Եվ վերջին ամենահզոր «աշտարակը», որի նախաձեռնողը կլինի նեռը՝ գալիք դերաքրիստոսը, հավիտենապես պիտի փլուզվի իր և հպատակների գլխին:

Կրկին դառնալով լեզուների խառնմանը՝ նշենք, որ Աստված ծրագրել էր՝ նրանց ցրել աշխարհով մեկ, որպեսզի հետագայում տարբեր ազգերի սերունդներից կազմավորեր Քրիստոսի Եկեղեցին:

*Այդ միաբանության ազդարար էր Հոգեգալստյան օրը, երբ տարբեր լեզուներով խոսող մարդիկ բոլորն սկսեցին մի ակնթարթում իրար հասկանալ և խոսել միմյանց հետ. նրանք նորից պիտի դառնային մի ազգ ու մի լեզու՝ ըստ այնմ, **թե՝ «Խտրություն չկա ո՛չ հրեայի և ո՛չ հեթանոսի, ո՛չ ծառայի և ո՛չ ազատի, ո՛չ արուի և ո՛չ էգի. որովհետև դուք ամենքդ մեկ եք ի Քրիստոս Հիսուս»[49]:***

Բաբելոնից Ժողովրդի ցրվելը

«Երբ լեզուներն ամբողջ աշխարհի վրա ցրվեցին,
այս բանը չկատարվեց խառնիխուռն և առանց
առաջնորդների... յուրաքանչյուրն իր սահմանը
ժառանգեց կարգով ու զորությամբ»[50]:

Այլալեզվությամբ քանդվեց միաբանության կապը, և տարբեր լեզուներով խոսող ազգատոհմերը ցրվեցին աշխարհով մեկ:

*Աստծո բարի կամքով էր ցրումը, որպեսզի երկիր մոլորակը հետզհետե ամբողջապես բնակելի դառնա: Իսկ լեզուների տարբերությունը և բնակության վայրերի հեռավորությունը հետագայում նմանատիպ չար միությունից խուսափելու համար էր. **«Եվ սկսեցին սփռվել ամբողջ աշխարհով մեկ, ինչպես Սուրբ Գիրքն է ասում՝ «Տեր Աստված այնտեղից նրանց սփռեց աշխարհով մեկ»[51], և նորից՝ «այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մեկ»[52]: Որտեղից էլ իմաստասիրում ենք, թե աշտարակաշինությունից առաջ էլ Աստծո կամքն էր, որ նրանք սփռվեն, ինչը Նոյից բաժանվելու միջոցով ցույց էր տվել»[53]:***

*Այդ ցրումը շատ կազմակերպված իրականացավ, և ամեն մի ցեղ հնազանդ էր իր առաջնորդին, քանզի տեղի էր ունենում Աստծո հրամանի համաձայն. **«Երբ լեզուներն ամբողջ աշխարհի վրա ցրվեցին, այս բանը չկատարվեց խառ-***

---

[49] Գաղատ. 3:28:

[50] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 124:

[51] Ծննդոց 11:8:

[52] Ծննդոց 11:9:

[53] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 304:

Նիխուռն և առանց առաջնորդների, այլ կարծես մի աստվածային ակնարկությամբ որոշվեցին գլխավորները և ցեղապետերը, որոնցից յուրաքանչյուրն իր սահմանը ժառանգեց կարգով ու զորությամբ» [54]:

Սրանցից ոմանք հեռացան աշխարհի հեռավոր անկյուններ, իհարկե, ոչ իրենց նախաձեռնությամբ, այլ Տիրոջ կողմից ուղարկված հրեշտակը յուրաքանչյուր ազգի առաջնորդեց իր համար նախատեսված վայրը՝ լիներ դա հեռավոր կղզի, թե մի այլ մայրցամաք:



*Ամեն մի ազգ իր վրա կրում էր իր հայրերից ժառանգած օրհնության կամ անեծքի հետևանքները. **«Վերջ ի վերջո, մարդիկ իրենց բազմալեզվության պատճառով սկսեցին բաժանվել և տարածվել ամբողջ աշխարհով մեկ՝ ով ուր պատահի կամ ում ուր Աստված պատվիրեր, այնպես, որ ամբողջ ցամաքը, ինչպես ներքին, կենտրոնական վայրերը, այնպես էլ ափամերձ գոտիները, լցվեցին բնակչությամբ: Ի հայտ եկան նաև այնպիսի մարդիկ, ովքեր նավերով տեղափոխվեցին կղզիներ և զբաղեցրեցին դրանք»*** [55]:*

Սակայն Նեբրովթը այս ցրման հետ չհամակերպվեց և նորից ապստամբելով երկնային կամքի դեմ՝ մնաց իր կիսաքանդ աշտարակի կողքին: Սա լավ գիտեր իր պապի՝ Քամի գործած մեղքի պատճառով այդ սերնդին բաժին հասած անեծքի բնույթը. որ պիտի ծառա դառնար մյուսներին: Ուստի, ամեն կերպ ջանում էր խոչընդոտ լինել Բաբելոնից հեռացողների համար, որպեսզի ինքը, հակառակ այդ անեծքի, բոլորի վրա դառնար միահեծան իշխան:

«Աշտարակաշինության դրդապատճառներից մեկը փառասիրությունն էր, մյուսը՝ մարդկային ցեղի տարածմանն ու բաժանմանն արգելք հանդիսանալու ցանկությունը, ինչի շնորհիվ նախապես կարող էին խուսափել Նոյի մարգարեությունից: Հավանական է, որ Քամի սերունդը, որին ամենից շատն էր սպառնում այդ մարգարեությունը, մյուս սերունդներից առաջ մտածեց հնարավորինս նրանց բոլորին պահել միասնության մեջ՝ կենտրոնացնելով մի ընդհանուր վայրում՝ աշխարհի մայրաքաղաքում, որպեսզի խույս տա իր հասցեին ուղղված ստրկության անեծքից և շտապի հասնել համընդհանուր տիրապետության» [56]:*

Բայց այդ խառնաշփոթության մեջ չափազանց դժվար էր ազգերի դեմն առնել, և սրան պետք էր՝ ուժերը վերականգնել, որպեսզի հետագայում նորից կարողանար իր տիրապետության մեջ ներառել նրանց:

Հայկն էլ տեսնելով, որ իր բարի խորհուրդներն անտեսվեցին Նեբրովթի

---

[54] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 124:

[55] Иосиф Флавий, Иудейские Древности... 2000, ст. 21-22.

[56] Святитель Филарет Дроздов, (1783-1867), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 240.

կողմից, որոշեց հեռանալ Բաբելոնից: Հատկապես, որ չարության մեջ Նեբրովթի համառելը պատճառ դարձավ լեզուների խառնակման:

*Սակայն լեզուների խառնումից առաջ Հայկի բռնած հաստատուն աստվածահաճո դիրքը չանտեսվեց. իր սրտի փափագի համեմատ՝ յոթանասուն ազգերի միջից Աստծո հրեշտակը նրան առաջնորդեց դեպի Արարատյան երկիր, քանզի միայն նա էր, որ **«խրոխտանալով՝ ձեռք բարձրացրեց Բելի բռնատիրության դեմ... Հայկը, չկամենալով սրան հնազանդվել Բաբելոնում իր Արամանյակ որդուն ունենալուց հետո, չվեց գնաց Արարատի երկիրը, որ գտնվում է հյուսիսային կողմերում, իր որդիներով, դուստրերով և որդիների որդիներով, զորավոր մարդկանցով՝ թվով մոտ երեք հարյուր հոգի և ուրիշ ընդօծիներով, նրան հարած եկվորներով և բոլոր տուն ու տեղով»**[57]:*

Սենաարը լեզուների խառնակումից հետո

Լեզուների խառնակումից և մարդկանց ցրվելուց հետո Սենաարում կյանքը հիմնովին փոխվել էր: Նեբրովթը վիրավորանքից ու կատաղությունից իր տեղը չէր գտնում, քանի դեռ իր փառքի և զորության խորհրդանիշ աշտարակը կիսավեր ցցված էր իր առջև՝ արդեն որպես պարտության և նվաստացման նշան: Սրա բազմահազար հպատակները ցրվել էին աշխարհով մեկ, և այլևս չկար այն հզոր միապետությունը, որի գլխին կանգնած էր: Սակայն այս ամենը դաս չեղավ Նեբրովթ-Բելին: Սա իր անձը խոնարհեցնելու փոխարեն՝ ավելի անմտացավ և տեսնելով, որ չկարողացավ իր նախնիների համար վրեժ լուծել, մտադրվեց վրեժխնդիր լինել երկնքից՝ իրեն հասցված վնասների և վիրավորանքի համար: Չհասկացավ, որ դա արվեց նաև իր հանդեպ Աստվածային ողորմածության պատճառով՝ կործանարար ուղուց իրեն ետ պահելու նպատակով: Բայց Նեբրովթը դա իր անձի հանդեպ որպես թշնամանք ընդունեց:

*Երկնքից վրեժխնդիր լինելու համար էլ ավելի զարկ տվեց կռապաշտությանը. **«Հպարտանալով՝ Նեբրովթն առավել շատ չարիքներ գործեց, քան ցանկացած այլ մարդ Ջրհեղեղից հետո՝ կուռք կառուցելով քարերից ու փայտից, որին բոլորը պիտի երկրպագեին»**[58]:*

Սենաարում մնացած իրեն ենթակա ամբողջ ժողովրդին սա ներքաշեց չարիքի մեջ՝ ստիպելով մոռացության մատնել նախնիների ճշմարիտ աստվածպաշտությունը, անտեսել Աստծո պատվիրանները, պաշտել և հնազանդվել միայն իրեն: Լեզուների խառնակումից հետո իր անունն էլ փոխեց և սկսեց անվանվել Բել:

Հետագայում այդ անվամբ միջագետքյան և այլ ազգերի կողմից պաշտվում էր՝ որպես նախընտրելի կուռք:

*Բոլոր մեկնիչները միանշանակ Նեբրովթին համարել են աստվածամարտ, ապստամբ և կռապաշտության հիմնադիր. **«Առաջին կռապաշտ թագավորը ե-***

---

[57] Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, Երևան, 1968, էջ 86:

[58] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы... ст. 183.

ղավ Նեբրովթը՝ Բելը, որ Քամի Քուշ որդու որդին էր, որ ժողովուրդներին իրեն պաշտել տվեց»[59]*։*

«Բելը իշխանատենչ էր և նկրտումներ ուներ հակամարտության մեջ մտնելու երկնքի հետ և զավթելու երկիրը»[60]*։*

Նույնիսկ Նեբրովթ անունը նշանակում է «ապստամբող կամ ամբարտավան» [61]*։*

Նեբրովթի մասին վկայում են ոչ միայն Սուրբ Գիրքը, այլև հին աշխարհի տարբեր ազգերից մնացած պատմական փաստերը։

Ինչպես Նոյը տարբեր երկրներում տարբեր անուններով էր ճանաչվել, այդպես էլ Նեբրովթին հնում տարբեր կերպ են անվանել. «Բելի մասին, որին ժամանակակից էր մեր նախնին՝ Հայկը, շատերը շատ բաներ խառնաշփոթ են պատմում, բայց ես ասում եմ, թե Կռոնոս[62] *կոչվածը և Բելը Նեբրովթն է»*[63]*։*

Աս առաջին բռնապետը հույների մոտ կոչվել է Կռոնոս, Բաբելացիների մոտ՝ Բել և Մարդուկ, ասորիների մոտ՝ Տիտան, Քանանում անվանվել է Բահաղ և Բերփեգովր, Աստվածաշնչում՝ Նեբրովթ կամ Նեմրութ, իսկ շումերական արձանագրություններում, անվանվել է նաև էնմերքար։

Դևիդ Ռոլը ասում է, որ նրա կերպարին համապատասխանում է շումերական աղբյուրներում պահպանված միջագետքյան Ուրուկի արքա էնմերքարի կերպարը, քանզի սա էլ անվանվել է «գագանորս», եղել է հզոր որսորդ, աչքի է ընկել նաև իր շինարարական գործունեությամբ, ինչն ասվում է նաև Նեբրովթի մասին. «Նեբրովթը սերտորեն կապված էր էռեխոմի հետ, որը Աստվածաշնչում կոչվում է Ուրուկա, որտեղ կառավարում էր էնմերքարը։ էնմերքարը Ուրուկում կառուցեց հսկայական սրբատեղի և մի տաճար էլ կառուցեց էրիդում։ Այս ամենը մեզ հայտնի է՝ շնորհիվ «էնմերքարը և Արատտայի տիրակալը» էպիկական պոեմի։ Շումերական թագավորների ցանկում ավելացվում է, որ էնմերքարը եղել է հենց այն թագավորը, ով կառուցել է Ուրուկը։ Նեբրովթը նույնպես համարվել է մեծ շինարար՝ կառուցելով Ուրուկը, Աքքադը և Բաբելոնը։ Եվ էնմերքարն ու Նեբրովթը փառաբանվել են՝ շնորհիվ իրենց որսորդական սխրագործությունների» [64]*։*

Նեբրովթը որքան էլ ջանում էր բոլորին կռապաշտության մեջ ներքաշել, միևնույն է, դա նրան լիովին չէր հաջողվում, քանզի Արարատյան աշխարհը նրանց համար մնում էր որպես Սուրբ Երկիր, և հոգևոր պահանջների դեպքում նրանք ուխտագնացություն էին կատարում դեպի այն երկիրը, որտեղ դեռ ապրում էր Նոյ նահապետը։

Քանի որ Նեբրովթը ցանկանում էր ոչ միայն աշխարհիկ, այլև հոգևոր գերիշխանության հասնել, դրա համար նրան պետք էր միջագետքյան ժողովրդների մի-

---

59 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 42-43:

60 Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 41.

61 Святитель Филарет (Дроздов, 1783-1867), Толкование на книгу Бытия, Москва, 2004, ст. 225.

62 Կռոնոս՝ հունաց դիցաբանության մեջ ժամանակի աստվածը և Զևսի հայրը:

63 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 82:

64 Дэвид Рол, Генезис цивилизации откуда мы произошли . . ., Москва, 2005, ст. 241.

ջից վերացնել Արարատյան երկրի հոգևոր հեղինակությունը: Եվ ուխտագնացությունների դեմն առնելու համար սա դիմում է խաբեության: Նեբրովթը համոզում է ժողովրդին, թե իբր ինքն անձամբ գնացել է Արարատյան երկիր՝ Արատտա, և ըստ շումերական պատումների՝ հանդիպել է Արատտայի «քուրմին»՝ այսինքն քահանայապետ Նոյին և նրա հետ հոգևոր հարցերի շուրջ բանակցություններ է վարել, ապա Նեբրովթն իբր Արատտայի աստվածուհուն իր երկիր է հրավիրել:

Նեբրովթի դիվական ծրագիրն էր՝ խաբել ժողովրդին, թե իբրև Նոյը ոչ թե Տեր Աստծուն է պաշտել, այլ եղել է կռապաշտ, և նրա «պաշտած» չաստվածուհին հիմա իրենց մոտ՝ Սենաարում է, ուստի այլևս որևէ պատճառ չկա՝ Միջագետքից դեպի Արարատյան երկիր ուխտագնացության մեկնելու:

Նման միջոցներով սա ցանկանում էր համոզել բաբելացիներին և այլոց, իբրև թե Արարատի երկրից շնորհն առնվեց և տրվեց իրենց, և այլևս նրանք կարող են չնայել Արարատի կողմը՝ որպես աստվածապաշտության վայրի:

*Ապա իր կուռքին Նեբրովթը մի հսկայական տաճար է նվիրում՝ այն դարձնելով իր հպատակների հոգևոր կենտրոն. **«Այսպիսով, մենք այժմ գիտենք Էնմերքարի մասին, որ այդ կառավարիչը ակամա դառնում է մեր ուշադրության գլխավոր առարկան: Ինչպես մենք արդեն գիտենք, հենց նա է եղել այն թագավորը, ով Արատտայի աստվածուհուն հրավիրեց Միջագետքի հարթավայր և նրա համար կառուցեց հիասքանչ տաճար, որը կոչվեց Էաննա կամ «Երկնքի տուն»: Մենք արդեն նշեցինք չորրորդ քաղաքի՝ Ուրուկի ճարտարապետական շքեղության մասին, որի կառուցումը ես վերագրում եմ Էնմերքարին: Մենք ասացինք նաև այն մասին, որ Էնմերքարը եղել է երկրի վրա առաջին հզորագույն տիրակալը՝ Աստվածաշնչյան Նեբրովթը»**[65]:*

*Նեբրովթի ձեռնարկած այս խաբեպատիր գործունեությունը շուտով տվեց իր չար պտուղները. Սենաարում լիովին մոռացության մատնվեցին բարեպաշտության բոլոր այն պատվիրանները, ինչը ժառանգել էին Նոյ նահապետից. **«Այս գաղթական ընտանիքը շուտով մոռացավ Նոյ նահապետի՝ արդար ծերի հիշատակը, նրա հավատքն ու աստվածապաշտության երկյուղածությունը»**[66]:*

Հնագիտական տեղեկություններն հաստատում են, որ Ջրհեղեղից հետո դեռ երկար ժամանակ Միաստվածություն է տիրել:

***«Դոկտոր Ստեփան Լանգտոնը՝ Օքսֆորդի համալսարանից, երևան հանեց վաղ-բաբելոնյան արձանագրությունները, որ մարդու սկզբնական հավատալիքը եղել է միաստվածությունը, և որ դրանից քիչ ժամանակ անց՝ շատ արագ անկում տեղի ունեցավ դեպի բազմաստվածություն և կռապաշտություն»**[67]:*

*Նեբրովթը խոնարհվեց դևերի առաջ և, սրանց պիղծ հմայությունների մեջ ներքաշվելով, ինքն էլ սկսեց հմայության ու կախարդության մեջ առաջանալ, ինչի միջոցով առավել մեծ ազդեցություն էր գործում բազմության վրա. **«Նեբրովթն ինքնակամորեն իրեն համարեց աստված և մեծ զորությամբ թագավորեց Բաբելոնում: Կախարդությամբ բոլորի աչքերի առաջ հրաշքներ գործեց, մինչև***

---

[65] Дэвид Рол, Генезис цивилизации... ст. 246.

[66] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 196:

[67] Генри Г. Геллей, 19-й век, Краткий Библейский Толкователь, Торонто, Канада, 1989, ст. 70.

որ զարմացրեց նրանց: Նա տիրեց երկնքի տակ եղած բոլոր ժողովուրդներին: Այնուհետև արձակեց ահավոր հրաման՝ ամենուրեք կանգնեցնել իր արձանը, և իբրև աստծո՝ երկրպագել ու զոհ մատուցել: Դա եղավ կռապաշտության սկիզբը: Պաշտում էին ոչ միայն Բելին, ինչպես ասել էր ինքը, կամ մյուս երևելի կուռքերին ու խաբեբա ոգիներին, այլև ձեռակերտ մեռելակերպ կուռքերին»[68]:

Այս պատրանքներից Սենաարի երկիրն իսպառ մխրճվեց կռապաշտության ճահճի մեջ: Ամենուր վեր էին խոյանում կուռքերի արձանները, հազարավոր մարդիկ մեհյաններում զոհաբերություններ էին կատարում ու խունկ ծխում. ***«Բաբելոնացիները երկրպագում էին բազում աստվածների և աստվածուհիներին: Նրանք երկրպագում էին կրակին, արևին, լուսնին, աստղերին և բնության տարբեր ուժերին: Ներքովբը, ով տարբերվում էր Աստծո դեմ իր հակառակությամբ՝ Բաբելոնյան աշտարակի կառուցմամբ, հետագայում համարվեց բաբելոնյան գլխավոր աստվածներից մեկը:***

Մարդուկի մեծ տաճարը կանգնած էր Բաբելոնի աշտարակի կողքին և ամբողջ եփրատյան հովտով մեկ համարվում էր ամենամեծ սրբատեղին: Նրա մեջ տեղադրված էր Բահաղի ոսկե արձանը և ոսկե սեղանը՝ քաշով 21000 կգ-ից ոչ պակաս»[69]:

Ներքովբը նմանվեց ընկած հրեշտակին՝ սատանային, քանզի նա էլ ընտրյալ քերովբե էր երկնքում, բայց հպարտացավ իր փառքի մեջ և ուզեց իր եղած դիրքից վեր ելնել ու աթոռը դնել Աստծո գահին հավասար: Սակայն դրա փոխարեն քերովբեական բարձունքից անդունդ գահավիժեց[70]:

«Հենց այդ ժամանակ այդ անաստված մարդը հեռացավ իր Տիրոջից և իրեն ստեղծող Արարչից և մասնիկը դարձավ պիղծ սատանայի: Եվ այդ հեռանալն այլ պատճառով չեղավ, քան նրա ծայրահեղ հպարտության, հանդգնության, համարձակության, ինչպես այն հսկաներն էին, որոնց մասին գրում են պոետները, թե լեռը լեռան վրա կուտակեցին և ցանկանում էին պատերազմել Աստծո հետ, կամ էլ այն չար հրեշտակը, որը ապստամբել էր Աստծո դեմ, և դրա համար՝ նրա հպարտության և մեծամտության պատճառով, Աստված վտարեց նրան: Քանզի ով ցանկանում է բարձրանալ, նա էլ բարձունքից ընկնում է» [71]:

Բաբելոնից կռապաշտության ախտը տարածվեց աշխարհով մեկ. ***«Աստվածաշնչում այս քաղաքը հայտնի է որպես Աստծո թագավորության դեմ թշնամացած աշխարհի մայրաքաղաք»[72]:***

Բաբելոնը դարձավ իբրև կռապաշտության առաջացման և անաստվածության խորհրդանիշ՝ թե՛ Ջրհեղեղից առաջ, թե՛ հետո:

Իսկ Արարատյան երկիրը լի էր Մեսիական, Փրկչական և այլ սուրբ խորհրդանիշերով:

---

[68] Թովմա Արծրունի և Անանուն, Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1987, էջ 46:

[69] Генри Геллей, Краткий Библейский Толкователь… ст. 337.

[70] Տե՛ս Եսայի 14:13-15, Եզեկ. 28:12-19:

[71] Легенда о Докторе Фаусте, издание подготовил В. М. Жирмунцкий, Москва-Ленинград, 1958, ст. 57.

[72] Библейский словарь, Доктор Эрик Нюстрем, 1989, ст. 55.

*Ուստի, զարմանքի ենթակա է այն կարծիքը, թե իբր Դրախտն ստեղծվել է «խառնակության» Բաբելոնի մոտակայքում, և Նոյն էլ մինչև Ջրհեղեղը ապրել է այդ կողմերում: Դա թյուրըմբռնում է. **«Բաբելոնը ոչ միայն աշտարակաշինության դրվագում, այլև Սուրբ Գրքի ողջ տեքստում հանդես է գալիս որպես հեթանոսության հոմանիշ և խորհրդանիշ»**[73]:*

*Նեբրովթը միահեծան տիրակալ դառնալով աշխարհիկ և հոգևոր ոլորտներում՝ ամրապնդեց իր տիրույթները, ավարտեց մայրաքաղաք Բաբելոնի և մի շարք այլ քաղաքների կառուցումը և պատրաստվեց մեծ արշավանքի՝ ցրված ազգերին նորից իրեն ենթարկելու համար. **«Լեզուների խառնակումից և ազգերի բաժանումից հետո Նեբրովթը զբաղվեց Բաբելոնի կառուցմամբ, այնուհետև նա կառուցեց երեք իրար մոտ գտնվող քաղաքներ՝ Էրեխ, Աքքադ և Խալնիե և միավորեց դրանք մի թագավորության մեջ՝ իր ղեկավարությամբ: Այստեղից էլ, հավանաբար, սկսվեց իմպերիալիզմը»**[74]:*

Ասպատակություններով սա շրջակա ազգերին հպատակեցրեց և իր անձի պաշտամունքը պարտադրեց նրանց:

*Գրաված տարածքների մարդկանց ստրկացնելով՝ զարգացնում էր տնտեսությունը և հզորացնում բանակը: **«Առաջնորդվելով հենց նույն՝ ազգերին իշխելու մղմամբ՝ Նեբրովթը շարունակեց առաջ գնալ 500 կմ դեպի հյուսիս և հիմնեց Նինվեն և երեք հարևան քաղաքները՝ Ռեխովոթիր, Կելախ և Ռեսեն: Դրանք կազմում էին Նեբրովթի հյուսիսային թագավորությունը»**[75]:*

*Ովքեր չէի կամենում խոնարհվել կուռքերի և Նեբրովթի առջև, փախչում և ապաստան էին գտնում այն միակ երկրում, որի վրա Բելը դեռ չէր համարձակվում հարձակվել: Դա Արարատյան երկիրն էր, որտեղ դեռ տիրում էր Նոյ նահապետը, ում մոտ վերադարձել էր Հայկը՝ ընտանիքով և համախոհներով: **«Բայց Բելը, գոռոզանալով իր վաթսուն կանգուն անճոռնի հասակով, բոլոր իշխաններին հնազանդեցրեց իրեն՝ ինչպես աստծո, բացի Հայկից, որը Թորգոմի որդին էր»**[76]:*

Նեբրովթը հապաղում էր հարձակվել Արարատյան երկրի վրա: Նախ նպաստում էր, որ սուրբ նահապետի՝ Նոյի մասին հիշողություններն ու պատկառանքն իր հպատակների միջից իսպառ արմատախիլ լինի, քանզի Ջրհեղեղի և Նոյի մասին ավանդազրույցները կարող էին խնդիրներ առաջացնել: Նման պարագայում հարձակվել մի երկրի վրա, որտեղ գտնվում էր Նոյը, կարող էր պառակտել Նեբրովթի հավաքական բանակին: Երկրորդ պատճառն Արարատյան երկրում Հայկի առկայությունն էր: Բելը լավ ծանոթ էր Հայկի ուժին և իմաստությանը:

Նման հուժկու հակառակորդի դեմ ելնելու համար հարկավոր էր լավ պատրաստվել, ինչն էլ սա ջանադրությամբ անում էր՝ մեծացնելով ու սպառազինելով իր բազմազգ բանակը:

---

[73] Ռաֆայել Պապայան, Հայաստանում քրիստոնեության ընդունման հոգևոր նախադրյալները, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (7), Երևան 2005, էջ 146:

[74] Генри Г. Геллей, Краткий Библейский Толкователь … ст. 90.

[75] Նույն տեղում, ст. 90.

[76] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 43:

Հայկ նահապետ

«Հայկի անունը հայ ժողովրդի համար հարատևող սրբություն է։ Նա մեր անվանադիր ու փրկարար նախնին է... Հայկի հայր Թորգոմը և բոլոր նախնիները հիշատակված են Աստվածաշնչում և բազմաթիվ հեղինակավոր հնագույն աղբյուրներում»[77]։

Հայոց մեծ նախնի Հայկը հազարամյակներ շարունակ հայերիս կողմից ընդունվել է ոչ միայն որպես առանցքային պատմական դեմք և ազգի նահապետ, այլև բարեպաշտ արքա, որը պատերազմել է համաշխարհային չարիքի դեմ։ Սակայն վերջին շրջանում, երբ մեծ թափ ստացան աստվածամերժությունը (աթեիզմը) և սրա վրա հիմնված գիտությունները, ջանադրությամբ սկսվեց հայոց պատմության հեղինակազրկման գործընթացը։ Այդ կանխամտածված չարամտությունն իր առաջին հարվածներն սկսեց հասցնել մեր պատմության բուն արմատներին։ Հայկի մասին պատմության և ավանդազրույցների միջոցով մեզ հասած տեղեկությունները մատուցեցին իբրև առասպել։ Կասկածի տակ դրվեց հայ ազգի ծագումնաբանությանը, ինչը հազարավոր տարիներ ընդունել և հաստատել են ոչ միայն հայ, այլև այլազգի բազմաթիվ գործիչներ։ Հետագայում զեղծարարները տեսնելով, որ իրենց հաղթարշավի դեմն առնող չկա, էլ ավելի առաջացան և հայտարարեցին, թե Ուրարտուն, որը Արարատյան երկրի ասորական արտահայտչաձևն է, հայկական պետություն չէ։ Այդ կերպ մեր պատմության ժամանակաշրջանը մոտ 2000 տարով կրճատելով՝ հասցրեցին ն. Ք. 5-րդ դար.

«Աստվածաշնչի մեջ պահպանվել են թանկագին ու եզակի վկայություններ Հայաստանի և հայերի հնագույն անցյալի վերաբերյալ։ Այդ վկայությունները, դժբախտաբար, ցարդ ամբողջությամբ ուսումնասիրված և ըստ արժանվույն գնահատված չեն եղել. կա՛մ չեն նկատվել, կա՛մ արհամարհվել են։ Օրինակ, Նոյան տապանի իրականություն լինելը ժխտելով, գիտության անունից հանդես եկողները յոթանասուն տարի ժխտեցին ու դեռ շարունակում են ժխտել Հայկական Բարձրավանդակում ն. Քրիստոս երկրորդ հազարամյակում հայոց նախնիներ Հաբեթի և Հայկի գոյությունը։ Դա մեծ հարված է հայ ազգի հնագույն քաղաքակրթությանը, որովհետև Նոյի հետ մեկտեղ՝ չեղյալ և առասպել են համարվում նաև Հաբեթն ու Հայկը, որոնց անունները սկզբնավորում են հայոց ազգի ծննդաբանությունը»[78]։

Մենք Հայկ Նահապետի պատմականությունը շեշտելու ենք՝ հիմք ունենալով մոտ 4500 տարվա ընթացքում մեզ հասած պատմական փաստերը, այլ ոչ թե վերջին 70 տարվա խեղաթյուրված աշխատությունները.

«Լինելով համաշխարհային քաղաքակրթության եզակի երևույթներից մեկը՝ Հայկյան արքայատոհմը փառաբանվելու փոխարեն՝ յոթանասուն տարի

---

[77] Լևոն Միրիջանյան, Աստվածաշունչը և մենք, Սբ. Էջմիածին, 2009, էջ 62:

[78] Նույն տեղում, էջ 11:

հետևողականորեն հանվել է պատմությունից: Ոչ միայն խորհրդային միութենական հանրագիտարաններում, արտասահմանյան հրատարակություններում, այլև հայկական բոլոր դասագրքերում, մինչև անգամ «Հայ ժողովրդի պատմության» ակադեմիական և համալսարանական՝ պատկառելի թվացող հրատարակություններում ու բոլոր գիտական կոչված գրքերում սևով սպիտակի վրա գրված է, թե Հայկը հայերի առասպելական նախնին է՝ դիցաբանական կերպար: Ամեն տեղ գրված է «Հայկի և Բելի առասպել», այսինքն, Հայկը և Բելը ներկայացված են որպես առասպելի, ժողովրդական բանահյուսության հերոսներ, երևակայության արդյունք... Յոթհանասուն տարի հայ ժողովրդից խլվել է նրա իրական անցյալի պատմությունը, և փոխարենը նրան մատուցվում է առասպելների վերածված, անկապ, անհեթեթ, մարդկային տրամաբանության, բարոյականության, քաղաքակրթության նույնիսկ ամենացածր չափանիշների հետ ոչ մի կապ չունեցող ինչ-որ շարադրանք՝ առանց ամոթի ու խղճի դա համարելով... հայ ժողովրդի պատմություն»[79]:

Սակայն գիտական աշխարհի ներկայացուցիչներից նրանք, որ հետամուտ են Հայոց պատմության խեղաթյուրմանը, միևնույն է՝ չեն կարող ճշմարտությունը լիովին կոծկել, որքան էլ ջանան, քանզի վաղ թե ուշ ջրի երես կելնի: Այս են վկայում նաև գենետիկների կողմից արված բացահայտումները:

*Անգլիայի Քեմբրիջի մոտ գտնվող Սենգերի ինստիտուտից Մարկ Հաբերի և Քրիս Թայլեր-Սմիթի ղեկավարած գենետիկների կազմը հետազոտում է երկար ժամանակ մեկուսացված ժողովուրդներին (ինչպիսին և հայերն են)՝ որպես ժողովուրդների պատմությունը վերականգնելու միջոց: Այդ նորագույն գենետիկական հետազոտությունների արդյունքում, ինչպես գրում է «*The New York Times*»*[80]*-ը (11.03.15), ի հայտ է եկել հայ ազգի ծագման ժամանակագրական տվյալները, ըստ որի՝ հայերի առաջացման ժամանակաշրջանը համարվում է Ք.ա. 3000-ից 2000 թվականները (ինչը ևս հաստատում է Մովսես Խորենացու ժամանակագրության ճշմարտացիությունը. Խորենացին գրում է, որ Հայաստանը հիմնվել է Ք.ա. 2492 թվականին՝ տարեթիվ, որը որոշ գիտնականների մոտ սովորաբար համարվում է առասպելական):*

Ճիշտ է, գենետիկների ստացած արդյունքները զուտ գիտական են, զերծ՝ պատմական և կրոնական եզրերից (ինչի հետևանքով լիովին չեն կարող արտահայտել պատմական իրողությունները), սակայն կամա-ակամա ապացուցում են հնագույն ժամանակներում հայերի՝ որպես ձևավորված ազգի գոյությունը:

*Հարավային Կալիֆոռնիայի համալսարանի հետ աշխատող պատմաբան Հովհան Սիմոնյանն ասել է. **«Դնթ-ի այս հետազոտությունն ընդհանուր գծերով հաստատում է հայոց պատմության մասին առկա տեղեկությունների մեծ մասը»**:*

Այսպիսով, մնալով մեր նախնիների ժառանգությանը հարազատ, առանց որևէ կասկածանքի ընդունելով մեր նահապետի՝ Հայկի իրական պատմական անձ լինելը, անցնենք առաջ:

---

[79] Նույն տեղում, էջ 62-63:

[80] http://www.nytimes.com/2015/03/11/science/study-backs-5th-century-historians-date-for-founding-of-armenia.html?_r=1

*Հայկը լինելով առաջին հսկաներից՝ միևնույն ժամանակ առանձնանում էր նրանցից, քանզի ուներ առաքինի վարք, հմուտ էր կազմակերպչական, շինարարական և ռազմական ասպարեզներում, արտաքնապես էլ համապատասխանում էր իր կերպարին. **«Մեր նահապետի բարեմասնությունները այլազգի հին պատմիչներն էլ են հիշատակում՝ նրան անվանելով Սկայազոր կամ Հզոր զորությամբ, արի, զորեղ մարտիկ, գեղեցիկ, բարի և այլն... Բայց հսկա լինելուց բացի՝ պատմիչները մեծ տեղ են հատկացնում մեր ազգապետի մարմնի և կերպարանքի գեղեցկությանը կամ վայելչությանը, որով իմացվում է, որ ազգերի մոտ դեռ շատ վաղուց հարգելի և սիրելի է նման անձնական ձիրքը, և նման կերպարին միշտ վերագրում էին շնորհք և պատշաճ կերպարանք՝ որպես կտրիճների և գովելիների: Իսկ այստեղ մեր դյուցազնին ընծայված մասնավոր շնորհն է նաև այն, որ նա խայտակն էր և, ենթադրվում է, որ վառվռուն նայվածք ուներ, քաջագանգուր էր, որի տակ հասկացվում է երկար և հյուսված խոպոպիկները, ինչպես այն տեսնում ենք ասորեստանցիների մոտ: Այս երկու մասնավոր հատկություններն էլ, որպես հայկական առանձնահատկություն, արդեն հայտնի են օտարների կողմից: Հին հռոմեացիները հայերին հիշում և կոչում են վարսագեղ, իսկ այժմ շատերին ծանոթ է հայերի աչքերի գեղեցկությունը: Մեր դյուցազնի երրորդ և մեծ ձիրքը քաջությունն է, և նրան ընծայվում է արի այր մակդիրը»**[81]:*

Արարատյան երկիրը Հայկի և Նոյի ժամանակաշրջանում

***«Հայաստանի հնությունը համեմատելի է առկայծման հետ, ինչը չի հանգչում, չի չքանում նույնիսկ ծով անդնդում»**[82]:*

Բաբելոնում Հայկը հայտնի անձնավորություն էր՝ Նեբրովթին և Լամսուրին հավասար իշխանազուն և համընդհանուր սեր ու հարգանք էր վայելում: Նա Սենաարում իր իշխանական դիրքին համապատասխան՝ մեծ ունեցվածքի ու փառքի տեր էր:

*Սակայն Հայկն անտեսեց այն ամենն, ինչ ուներ Բաբելոնում, բարեպաշտության կանոններին հավատարիմ մնացած իր մեծ ընտանիքով վերադարձավ Արարատյան երկիր. **«Արդ, սա այն Հայկն է, որ Բաբելոնում ծնեց իր որդի Արմենակին: Եվ ծնեց Արմենակը բազում ուստեր և դուստեր, որոնցից անդրանիկը Արամայիսն էր: Եվ ծնեց Արամայիսը բազում ուստեր և դուստեր, որոնցից անդրանիկը Ամասիան էր: Եվ ծնեց Ամասիան բազում ուստեր և դուստեր, որոնցից անդրանիկը Գեղամն էր: Եվ ծնեց Գեղամը բազում ուստեր և դուստեր, որոնցից անդրանիկը Հարման էր: Եվ ծնեց Հարման բազում ուստեր ու դուստրեր, որոնցից անդրանիկը Արամն էր: Եվ ծնեց Արամը բազում ուստեր ու դուստ-***

---

[81] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 131:

[82] Зинуров Рафаиль Нариманович (Уфаеци), Армения-путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 19.

րեր, որոնցից անդրանիկը Արա Գեղեցիկն է... Զվեց գնաց Հայկը կնոջով, որդիներով և բոլոր աղխով հանդերձ։ Եվ գնաց բնակվեց Արարատ երկրում՝ այն տանը, որ լեռան ստորոտում էր»[83]։

Ջրհեղեղից հետո եղանակը որոշ փոփոխություններ էր կրել, և հարավում գտնվող Բաբելոնի համեմատ՝ Արարատյան երկիրն ավելի ցուրտ ու լեռնոտ վայր էր։ Ջուներ Միջագետքի հարթավայրային հարմարավետությունը։ Բայց Հայկն այն ամենից հրաժարվեց, քանզի Բելը Բաբելոնին առաջնորդում էր աստվածուրացության ճանապարհով։ Իսկ Հայկն իր սրտի մեջ կրելով բարեպաշտության լույսը՝ չհանդուրժեց այդ։

Հետագայում Հայկի նման վարվեց նաև Մովսեսը, որը մեծացավ իբրև Եգիպտոսի առաջին իշխաններից մեկը, բայց հանուն Աստծո և իր ժողովրդի՝ այդ ամենից հրաժարվեց և նախընտրեց աստվածահաճո չարչարանքները, քան այս աշխարհի ունայն փառքը [84]։

*Բաբելոնից Հայկի ելնելու պատճառներից կարևոր էր այն, որ Հայկն ակամա մասնակցել էր աշտարակաշինության գործին, սակայն դրա իրական պատճառն իմանալով՝ խղճի մեծ խայթ էր զգացել, հատկապես, որ այդ ամենը վերջին հաշվով հանգեցրել էր կռապաշտության. **«Այն ժամանակ մեր Հայկը դուրս եկավ Սենաարից, չկամենալով այլ վայր գնալ, ինչպես գնացին մյուսները, այլ ցանկացավ այնտեղից Հայաստան վերադառնալ, որտեղից ելել էր»***[85]։

Հիշենք, որ լեզուների խառնումից հետո Աստծո հրեշտակներն ամեն մի ազգի առաջնորդեցին իրենց համար նախատեսված բնակավայրը։

*Բարեպաշտ Հայկին բաժին ընկավ իր բուն հայրենիքը՝ Արարատյան աշխարհը. **«Հայկը, մեր հայրենի երկրից բխող գետերի ընթացքը բռնելով, դեպի վեր ելավ՝ գնալու համար Արարատյան և Նոյյան աշխարհը և, անցնելով Ասորիների (Սեմի անդրանիկների) սեփականացրած երկրով և կտրել անցնելով նրանց և Հաբեթյան ցեղապետության անջրպետ Կորդվաց լեռները, մտավ նոյաբնակ Արարատ»***[86]։

Արարատյան երկրում Հայկը տեղաբնակների հանդիպեց, որոնք մնացել էին Նոյ նահապետի հետ և չէին իջել Սենաարի դաշտավայր։ Սակավաթիվ այս ժողովուրդը տարածված էր Արարատյան երկրով մեկ, որի կենտրոնը կամ մայրաքաղաքը Արարատ լեռան մերձակայքում գտնվող երկու քաղաքներից մեկն էր՝ Նախիջևանը կամ Երևանը, որտեղ խոր ծերության մեջ իր պալատում ապրում էր թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա Նոյ նահապետը.

«Այս է վկայում ազգիս պատմությունը Հայկի մասին, որ Մար Աբասի ձեռքով և խորենացու միջոցով մեզ է հասել. «Գնում բնակվում է մի լեռան ստորոտում, դաշտավայր տեղում, որտեղ ապրում էին սակավաթիվ մարդիկ»[87]։ ***Մար***

---

[83] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 7:

[84] Տե՛ս Եբր. 11. 24-28:

[85] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Սբ Ղազար, Վենետիկ 1835, էջ 304-305:

[86] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 134:

[87] Մովսես Խորենացի, Պատմություն… էջ 86:

Աբասի այս խոսքը Խորենացին հաստատում է նաև Գողթան երգի մեջ, որը ազգիս անգիր պատմությունն էր»[88]*:*

Նոյի հետ Արարատյան երկրում մնացած սակավաթիվ ժողովուրդը, նրա հովվությանն ապավինած, զերծ մնաց բաբելոնյան թոհուբոհից և, խաղաղության մեջ ապրելով, սուրբ հավատքին հավատարիմ մնաց և անխափան պահեց սկզբնական՝ ադամական լեզուն: Այդ պատճառով էլ հեռանալով Բաբելոնից՝ Հայկը գնաց այն երկիրը, որտեղ սրբորեն պահպանվել էր ճշմարիտ աստվածպաշտությունը, որից ինքն էլ երբևէ չէր հեռացել:

Տեղաբնակները տեղյակ էին Բաբելոնում կատարված դեպքերին, տեղյակ էին նաև Հայկի մասին, որ ամուր էր մնացել իր սուրբ հավատքի մեջ: Այդ ամենից ելնելով՝ Արարատյան երկրում նրան մեծ ցնծությամբ ընդունեցին՝ որպես հերոսի, քանզի գիտեին, որ նա է բացահայտել Նեբրովթի իրական ծրագրերը և ամեն կերպ ջանացել՝ ետ պահել նրան այդ ուղուց: Սակայն տեսնելով նրա անզեղջությունը, հպարտության հետևանքով լեզուների խառնակումը՝ թողել հեռացել էր.

«Հայաստանի բնակիչների՝ Սենաար ցրվելուց հետո, երբ Սենաարում աշտարակաշինությունը եղավ, սկիզբ դրվեց կռապաշտության, ըստ բոլոր քաջ հնախոսների վկայության՝ նրանց հետ չխառնվեց մեր Հայկը, այլ այնտեղից վերադարձավ Հայաստան: Վերադառնալով այնտեղ, որտեղ բնակվում էին առաջին նահապետները, ովքեր մնացել էին իրենց առաջին հավատքին, հայտնապես ցույց է տալիս, որ Հայկը ևս ուներ առաջին ճշմարիտ աստվածպաշտությունը: Սա իբրև ստույգ և աներկբա փաստ՝ նշում է Վարդանը՝ Լուսավորչին նվիրված ներբողում, ասելով՝ «Հայկը... չպաշտեց Բելի պատկերը»»[89]*:*

Տեղաբնակների համար Հայկի ներկայությունն Արարատյան երկրում նաև մեծ հույս էր կռապաշտ Բելի աշխարհատիրական նկրտումների դեմ, քանզի մոլագար բռնապետը ոչ միայն աջ ու ձախ գրավում էր շրջակա երկրներն ու հպատակեցնում իրեն, այլև նրանց բոլորին պարտադրում իր սեփական անձի պաշտամունքը: Բնական է, որ վաղ թե ուշ՝ այդ ամենը պիտի սպառնար նաև իրենց՝ սուրբ երկրի բնակիչներին: Եվ բարեպաշտ, հզոր ու իմաստուն Հայկի ներկայությունն ապահովություն էր ներշնչում նրանց, մանավանդ, որ նրա հետ էին նաև նրա քաջարի զավակները: Այդ պատճառով էլ նրանք սիրով հպատակվեցին Հայկին:

Արարատյան երկրում խաղաղության և Աստծո պաշտամունքի երաշխավորը Նոյ Նահապետն էր, որին ժամ առաջ տեսնելը Հայկի ամենբաղձալի նպատակն ու փափագն էր. ***«Մանավանդ վերադարձել էր, որպեսզի տեսներ իր Նոյ նահապետին, որ տակավին կենդանի էր»***[90]*:*

Հայկը ցանկանում էր Նոյ նախահոր շնորհաբաշխ աջն իր գլխին ունենալ և նրա աղոթքներով արժանանալ Աստծո օրհնությանը:

«Մինչդեռ Բաբելոնում Բելի ժամանակ տիրում էր խառնաշփոթ, Արարատ-

---

88 Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... 1835 էջ 306-307:

89 Նույն տեղում, էջ 149:

90 Նույն տեղում, էջ 305:

յան երկրում խաղաղություն էր: Այնտեղ թագավորում էր աստվածպաշտությունն ու ազատությունը: Իսկ արդար Նոյը՝ նահապետների նահապետը, որ դեռ ողջ էր, Մասիսի մեծաշեն պալատի մոտ իր աթոռը դրած՝ հովվում էր ժողովրդին.. Նոյը, որ աշխարհի պահապանն էր, կենդանի օրինակ և քարոզ, արդարության լույսն էր տարածում բոլոր ժողովուրդների կյանքի և ընտանիքների վրա... Նոյի արդարության լույսով զինվեց մեր Հայկ նահապետը՝ աշխարհակալ Բելի դեմ և նրա լուծը թոթափելով՝ Բաբելոնից կրկին վերադարձավ իր հայրենիքը և եկավ ու համբուրեց հինավուրց, ալևորյալ ծերի տապանաշեն աջը» [91]:

Հայկի հայրը՝ Թորգոմը, ըստ վրաց պատմաբան Լեոնտի Մռովելիի, ուներ այլ որդիներ ևս, որոնք նույնպես, լինելով կորովի ու զորեղ մարդիկ, դարձան իրենցից սերված ազգերի նահապետներ՝ քարտվելների, ռանների և մովականների, էրոնների և լեկոնների, մեգրելների և կովկասցիների:

Վրաց պատմաբանն իր բերած տվյալների աղբյուրները, ցավոք, չի հիշատակում, ինչն այն դարձնում է կասկածահարույց՝ հակառակ Մովսես Խորենացու, որ միշտ նշել է աղբյուրները:

Այդ ազգերի նահապետները Բաբելոնից գալով՝ հավանաբար բնակություն հաստատեցին Արարատյան երկրի մերձակա տարածքներում և հարեցին Հայկին՝ հայոց ազգի նահապետին: Թորգոմը, նրա որդիները և ընդհանրապես բոլորն էլ միանշանակ ընդունում էին Աստծո կողմից Հայկի ընտրված լինելը և նրա զորությունն ու իմաստնությունը և, հատկապես, նախանձախնդիր բարեպաշտությունը:

Լ. Մրովելին Թորգոմի տոհմի մասին գրում է. ***«Նրա որդիների միջից առանձնանում էին ութ եղբայրները՝ հզորագույն և փառահեղ հերոսները, որոնց այսպես էին կոչում. առաջինին՝ Հայոս, երկրորդին՝ Քարտլոս, երրորդին՝ Բարդոս, չորրորդին՝ Մովական, հինգերորդին՝ Լեկ, վեցերորդին՝ Էրոս, յոթերորդին՝ Կովկաս, ութերորդին՝ Էգրոս: Եվ այս եղբայրները հերոսներ էին: Բայց այս հերոսներից լավագույնը Հայոսն էր, քանզի նրան մարմնով, հզորությամբ և արիությամբ նման չի եղել ո՛չ Ջրհեղեղից առաջ և ո՛չ էլ հետո»*** [92]:

Եվ քանի որ Թորգոմն արդեն հասել էր խոր ծերության, նախօրոք Հայկին իր մնացած բոլոր որդիների վրա տիրակալ կարգեց: Հայկին նման առավելություն տալը բոլորի կողմից սիրով և հոժարությամբ ընդունվեց.

«Հայոսն էլ հաստատվեց իր հոր՝ Թորգամոսի հայրենաժառանգ կալվածքում և տիրեց հյուսիսային շրջաններին. Օրետյան լեռներից դեպի հարավ, մինչև Գուրգենյան ծով՝ արևելքում և Պոնտական ծով՝ արևմուտքում: Եվ Հայոսն իր այդ յոթ եղբայրների վրա տեր ու տիրակալ էր: Նրանք բոլորը գտնվում էին Հայոսի իշխանության տակ», [93] *- եզրափակում է վրաց պատմիչը:*

---

[91] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992, էջ 197:

[92] Мровели Леонти, Жизнь картлийских царей, Москва, 1979, ст. 21.

[93] Նույն տեղում, ст. 21-22.

Քաղաքաշինություն

Հայկը Նոյի և Թորգոմի օրհնությամբ, որպես հոգատար, առույգ և ջանասեր այր, սկսում է Արարատյան երկրում շինարարական աշխատանքներ ծավալել և առաջին բնակավայրն անվանում է Հայք։ ***«Իսկ ինքը, ինչպես ասում է Մար Աբասը, մնացած մարդկանցով և տուն ու տեղով շարժվում է դեպի հյուսիս արևմուտք. գալիս բնակվում է մի բարձրավանդակ դաշտում և այս լեռնադաշտի անունը կոչում է Հարք՝ այսինքն, թե այստեղ բնակվողները հայրերն են Թորգոմի տան սերունդի»***[94]։

Հայաստանում Հայկի, նրա որդիների և թոռների անունները կրող բազմաթիվ բնակավայրեր են պահպանվել։ Սրանք ևս, բնականաբար, ապացույց են մեր նահապետի ոչ թե առասպելական, այլ իրական անձի մասին.

«Միջնադարյան պատմագրությունը լիովին համապատասխանում է Աստվածաշնչի տառին և ոգուն։ Հայ պատմագիրներն ուսումնասիրել են տասնյակ սկզբնաղբյուրներ, որոնք իրենց հերթին համընկնում են Աստվածաշնչի ոչ միայն Մննդոց Գրքի, այլև Հայաստանին և հայ իրականությանը վերաբերող բազմաթիվ ուրիշ հատվածների վկայություններին։

Հայ ժողովրդի մեծ անվանադիր Հայկի և նրա անմիջական՝ հորից որդի, ժառանգների վերաբերյալ պատմագրական տեղեկություններն իրենց հերթին վկայում են նաև Հայաստան երկրի բազմաթիվ տեղանուններով, այսինքն՝ հազարամյակներ ի վեր գործող ազգային աշխարհագրությամբ։

Հայկն է հիմնել և իր անունով կոչել Հայկաշեն մեծ գյուղը։ Նրա անունով են կոչված Հայկ դաստակերտը, Հայոց ձոր գավառը և այլն։ Հայկի անդրանիկ որդի Արամանյակն իր անունով է լեռը կոչել Արագած, ստորոտի կալվածքը՝ Ոտն Արագածոյ։ Արամանյակի որդի Կադմոսի անունով նրա երկիրը կոչվել է Տունն Կադմեայ, որն, ի դեպ, Ասորեստանի թագավոր Թիգլաթպալասար առաջինի (Ն. Ք. 12-11դդ.) տարեգրության մեջ հիշված է Կադմուխի երկիր անվանումով։ Հայկի թոռ Բազի անունով Վանա ծովը կոչվել է Բզնունյաց ծով»[95]։

Նախապատրաստություն պատերազմի

«Նայեցե՛ք հին ազգերին և տեսեք՝ ո՞վ
հավատաց Տիրոջը և ամոթով մնաց»[96]։

Արարատյան երկրում Հայկը ամեն ջանք թափում էր երկրի բարգավաճման համար՝ միևնույն ժամանակ մեծ ուշադրություն դարձնելով նաև ռազմական վիճակին։

Լուրեր էին հասնում Նեբրովթի գործերի մասին, թե ինչպես է նա զավթել շրջակա երկրները։ Դրանցից ելնելով՝ Հայկն Արարատյան երկրի հարավային

---

[94] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 86:

[95] Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005, էջ 48:

[96] Սիրաք 2:11

տարածքները հանձնում է իր թոռան՝ Կադմոսի տնօրինությանը՝ նրա մոտ թողնելով զինված ջոկատներ, որովհետև Հայաստանի այդ գավառը շատ վտանգավոր էր, քանզի սահմանակից էր Բելի թագավորությանը։

*Հատկապես անհանգստացնող էր, որ Բելը հարկատու էր դարձնում գրաված երկրներին և պարտադրում՝ իր անձի պաշտամունքը. **«Բելը ոչ միայն մերձավորների, այլև բավականին հեռավորների վրա էր իր իշխանությունը տարածել, թեև հայտնի չէ, թե այդ հին ժամանակներում ի՞նչ էր հնազանդվողների պարտքը կամ հրամայողի իրավունքը։ Ըստ պատմիչների՝ Բելը ոչ թե տանուտեր էր իրեն հռչակել, այլ թագավոր՝ իրեն թագով պսակելով, և ուրիշներին թույլ չէր տալիս, որ այդ պատվին արժանանան և ցանկանում էր, որ իրեն համարեն բոլորի գերագույն տերը և նույնիսկ երկրի աստվածը, ինչն էլ, ըստ մեր հին պատմիչների, ջանում էր հավատացնել բյուրավոր կախարդություններով և, իր պատկերը փորագրելով, պարտադրում էր բոլոր ազգերին և լեզուներին»*[97]։

Բելը հապաղում էր հարձակվել Արարատյան երկրի վրա և հաճախակի այնտեղ էր ուղարկում իր պատգամախոսներին, որպեսզի Հայկին համոզեն՝ նախկինի պես միանալ իրեն և արժանանալ այն մեծ փառքին, ինչն ուներ Բաբելոնում։ Բայց Հայկը ոչ մի հարաբերություն չէր ուզում ունենալ աստվածուրաց ամբարշտի հետ։

*Շատերն էլ, որ հարել էին Հայկին, չէին համարձակվում Բելին հակառակվել, և քանի դեռ խոսքը կրոնական հարցերին չէր հասել, ընդունում էին նրա գերիշխանությունը. **«Այն ժամանակ, երբ Հայկը Հարքում և նրա շրջակա տարածքներում իր հոր սեփական բաժնի մեջ իշխանություն և տուն էր ստեղծել, եղբայրներն էլ իրենց տներն էին կառուցում, բայց եթե հավատանք վրաց պատմությանը, բոլորն էլ վախենալով Բելից՝ ընդունում էին նրա գերագույն իշխանությունը»**[98]։*

*Հայկը հանդուրժում էր Բելի հոխորտանքները՝ դրանց տեղիք չտալով հանդերձ։ Սակայն մոտ էր այն պահը, երբ Բելը սպառնալուց պիտի անցներ գործի, ինչի անխուսափելիությունը կանխազգալով՝ Հայկը նրան զիջելու փոխարեն՝ պատրաստվում էր դիմակայության՝ վերջ տալով նույնիսկ նրա հետ բանակցություններ վարելուն։ Հայկին բախումից ջանում էր ետ պահել նաև նրա հայր Թորգոմը, որպեսզի քանի դեռ ծայրահեղ վիճակ չէր ստեղծվել, հեռու մնային արյունահեղությունից։ **«Թերևս, Թորգոմ հայրը դա խոհեմություն էր համարում՝ իր որդիներին հսկայի բռնությունից զերծ պահելու համար, և Հայկն ակնածելով ծեր նահապետից՝ լռում էր»** [99]։*

Հայկը համբերությամբ սպասում էր, որ ինքնավստահ Նեբրովթը համոզելու փորձերից ու սպառնալիքից անցներ ռազմական գործողությունների։ Ինչի համար էլ Հայկն իրեն հպատակ ժողովուրդներին ջանում էր պատրաստ պահել, որպեսզի երբ ժամանակը հասնի, աշխարհատենչ բռնապետին արժանի հակահարված տան։

«Արդ, երկու հակառակորդներն էլ իրենց իշխանությունն ամրապնդեցին և ապահովեցին. մեկը նահապետական պարզությամբ, մյուսը՝ որպես խրոխտա-

---

[97] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան… էջ 134։

[98] Նույն տեղում էջ 136։

[99] Նույն տեղում էջ 136-137։

ցած աշխարհակալի նախօրինակ: Բայց մեր Հայկ նահապետը ո՛չ Բելի դեմ դուրս գալու մտադրություն ուներ և ո՛չ էլ բավական զորություն, իսկ սա գոնե ամբողջ Սենաարի և Միջագետքի մեջ սփռված տոհմերից կտրիճներ էր հավաքել իր մոտ՝ իր հակառակորդներին նվաճելու համար. բոլորից հետո հերթը հասած համարեց նաև Հայկին»[100]:

Հայկը շատ լավ էր ճանաչում Բելին և գիտեր, որ աշխարհն ամբողջովին իր բուռը հավաքելով՝ նա անպայման կանցներ նաև իր պաշտամունքը պարտադրելու գործընթացին: Ուստի, Հայկն իր շուրջը գտնվող բոլոր ազգերին կոչ էր անում՝ հեռու մնալ կռապաշտությունից և միանալ իրեն՝ դառնալով միաստվածության հետևորդներ. ***«Հայկի ցեղակիցները, հարգելով նրա խոհեմությունը, հիանալով նրա իմաստությամբ, որն անհաղորդ էր վայրագ քմահաճությանը, և տալով նրան իրենց հոգին ու սիրտը, կոչեցին նրան Դյուցազն, այսինքն՝ աստվածների սերունդ[101]... Տիրելով Արարատի վրա՝ Հայկը շուտով դարձավ նաև Կովկասի տիրակալ և ամենուր միջոցներ էր փնտրում, որպեսզի վստահորեն կարողանա դիմակայել իշխանատենչին»[102]:***

Եվ քանի որ Սուրբ հավատը հանձն առած ազգի համար Հայկը պատշաճ չէր համարում որևէ հարաբերություն ունենալ աստվածուրացի հետ, կոչ արեց՝ միաբանվել և դիմակայել աշխարհին տիրանալու և բոլորին իր պաշտամունքը պարտադրելու մոլուցքով բռնված այդ առաջին նեռին՝ Տիտանյան Բելին.

«Մի քանի տարի անց՝ Հայոսը կանչեց իր յոթ եղբայրներին, հավաքեց նրանց և հաղորդեց. «Բարձրյալ Տերը մեզ հզորություն և շատ սերունդ տվեց: Այսուհետև Արարչի օժանդակությամբ դադարենք որևէ մեկի ստրուկը լինելուց, և ոչ ոքի չհնազանդվենք՝ բացի Արարչից»: Լսեցին նրան յոթ հերոսները և հաստատեցին նրա որոշումը: Նրանք Նեբրովթից ետ քաշվեցին և դադարեցին նրան հարկ վճարելուց»[103]:

Այսպիսով, այդ ժամանակաշրջանում աշխարհը բաժանվեց երկու կրոնական ուղղությունների. Բելի կայսրությունում տիրում էր կռապաշտությունը, իսկ Արարատյան երկրում՝ Տեր Աստծո պաշտամունքը. ***«Մեր ազգի մեջ ընդունելի ավանդություն է այն, որ Հայկի՝ Բելի դեմ գլուխ բարձրացնելու պատճառը Բելի անաստվածությունն էր, և ընդունված է, որ Հայկը և նրա թոռները ճշմարիտ աստվածապաշտ էին: Եվ մինչև Հայաստանի՝ Ասորեստանի տիրապետության տակ անցնելը (Շամիրամից սկսած)՝ մեր պատմության մեջ ոչ մի դիցաբանական հիշատակություն չկա, որով էլ շատ հավանական է մեր բարեպաշտ նախնյաց կարծիքը Հայկի մասին, որը ոչ միայն անձնական, այլև կրոնական ոգով էր հակառակվում Բելին: Այս երկու հակառակորդներն էին միայն միմյանց դեմ ելել, քանզի Սեմի տոհմապետերը նվաճվել էին Նեբրովթի կողմից, և միայն մեր Հաբեթածին ազգապետն էր մնացել պաշտպան՝ հայրենի և աստվածային իրավունքին»[104]:***

---

[100] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան… էջ 137:

[101] Տե՛ս Краткую Армянскую историю Якова Шамипава.

[102] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 44.

[103] Мровели Леонти, Жизнь картлийских царей, Москва, 1979, ст. 22.

[104] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան… էջ 137:

Հայկը լինելով հսկա, հմուտ առաջնորդ և խիզախ ռազմիկ՝ հույսը դրանց վրա չէր դնում, ինչպես Նեբրովթը, որ հպարտանում էր իր հաղթանդամ մարմնով ու իր հզոր բանակով: Այլ իր հույսը դնում էր միայն Տեր Աստծո զորությանը և իր հպատակներին էլ կոչ էր անում նույնն անել, որովհետև իրենց գործն արդար էր: ***«Եվ կանչելով եղբայրներին, իբրև ամեն մեկի կարգավիճակը հաստատելու համար, ինչպես նաև իրեն հպատակ այլ տոհմապետերի՝ բոլորին տեղեկացրեց, որ Բելը ոչ միայն անհրաժեշտ բռնավոր է, այլև աստվածուրաց, որը պահանջում է, որ մարդիկ ոչ միայն հնազանդվեն իրեն, այլև Աստծո պաշտոնն իրեն մատուցեն: Եվ ասաց. «Նահապետների օրհնությունը մեզ վրա է, Աստված մեզ ընդարձակ երկիր և բազմասերունդ զավակներ և ընդունակներ տվեց. ինչո՞ւ վախենանք Նեբրովթից. մենք մեզանով բավական ենք, Աստված էլ օգնական է»: Բոլորը հավանություն տվեցին և հնազանդվեցին Հայկին՝ իբրև Թորգոմի տան տանուտերի»***[105]:

Բելն իմանալով Հայկի գործողությունների մասին՝ խիստ անհանգստանում է, քանի որ միայն նրան էր տեսնում իրեն արժանի հակառակորդ և իր ծրագրերի լուրջ խոչընդոտ. ***«Մինչ այդ, երբ Բելը երազում էր երիտասարդ աշխարհին ստրկացնելու մասին, Հայկը կամաց - կամաց ավելի էր ամրապնդում իր ժողովրդին ինքնամերժման մեջ՝ հիմնված փոխադարձ սիրո վրա: Կասկածամտությունը և անվստահությունը, ինչպես երկու ահեղ ուրվականներ հետևում են ինքնակալին և իշխանատենչին: Սա խռովքի էր մատնվում իրեն տանջող այս բռնատերերի կողմից, քանզի լսում էր Հայկի ձեռնարկած միջոցների մասին, որոնք կիրառում էր իր երկրի անվտանգությունն ապահովելու համար»***[106]:

Պատգամավորներ Բաբելոնից

Բելն իր հպատակ ազգերին, բոլորին ստիպում էր՝ երկրպագել իրեն, ինչն էլ հնազանդությամբ կատարվում էր բոլորի կողմից:

Մի հսկա կայսրություն էր ձևավորվել: Բացի Արարատյան թագավորությունից՝ բոլորը հայտնվել էին այդ կայսրության ցանցում:

Նեբրովթը ձախողված աշտարակաշինությունը որոշել էր մի նոր՝ համաշխարհային տիրապետության տեսքով իրականացնել: Ավարտին մնում էր միայն վերջին՝ Արարատյան երկիրը, ինչի համար Նեբրովթն արդեն բավարար ուժեր ուներ: Նրան էր ենթարկվել մի հսկայական բանակ, որ իր շուրջն էր հավաքել աշխարհի տարբեր ծայրերից, ովքեր նրա առջև խոնարհվում էին՝ որպես աստծո:

«Այն ժամանակ Բաբելոնում թագավորեց հսկա որսորդ Տիտանյան Բելը, չաստվածացյալ բռնակալը, որը սաստիկ զորություն ուներ և հույժ գեղեցիկ տեսք: Եվ բոլոր ազգերի իշխանն էր, որոնք սփռվեցին ամենայն երկրի երեսին: Նա աշառու կախարդությամբ հնարքներ գործադրեց և թագավորական հրամաններ արձակեց բոլոր ազգերի վրա, իր ամբարտավան գոռոզությամբ կանգ-

---

[105] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան… էջ 137:

[106] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 45.

նեցրեց իր արձանը և երկրպագել ու զոհեր մատուցել տվեց՝ իբրև աստծու։ Իսկույն ևեթ բոլոր ազգերը կատարեցին նրա հրամանները» [107]։

*Եվ ահա, վստահ իր ուժերին, թե ո՛չ Աստված և ո՛չ էլ Հայկի պես հզոր մեկն այլևս չեն կարող իր նոր «աշտարակի» կառուցմանն արգելք լինել, սա պատգամավորներ է ուղարկում Հայկի մոտ՝ առաջարկելով նրան կամավոր հպատակություն. **«Երբ Տիտանյան Բելն իր թագավորությունն ամենքի վրա հաստատեց, ապա իր որդիներից մեկին հավատարիմ մարդկանց հետ ուղարկեց հյուսիսային կողմը՝ Հայկի մոտ, որ նա գա հնազանդության և խաղաղությամբ ապրի»*** [108]։

Պատգամաբերները գալիս են Արարատյան երկիր և Հայկին են փոխանցում Բելի սպառնագին առաջարկը, ինչը Բել-Նեբրովթի՝ Արարատյան երկիրը առանց պատերազմի նվաճելու վերջին հույսն էր.

«Բոլոր ցեղերը և լեզուները, որոնք ցրված են երկրի վրա, ինձ են հնազանդվում և պատշաճ պատիվ են տալիս, ես էլ իրենց եմ խնամում և պաշտպանում, միայն դու ես ինքնագլուխ մնացել և քեզ հետ էլ քո ցեղակիցներին ես մոլորեցրել, որոնք քեզ հետ ելան գնացին դեպի հյուսիս՝ սառնապատ անբնակելի լեռներում մնալով։ Թողեք այդ անհարմար մտածությունն էլ, բնակությունն էլ, նորից Սենաար եկեք, բնակվեք մեր ջերմիկ և բարեբեր դաշտերի մեջ, վայելեք երկրի բարիքները։ Եվ եթե դու, Հայկ, սիրում ես քո աղեղի գործը, արի և Բելի համար որսապետ եղիր։ Այս է խոստանում Բելը, իսկ եթե դեռ համառելով մնաս այդտեղ, ապա Բելը կգա քեզ որսալու»։ Իսկ Հայկը պատգամի սպառնալիքն էլ լսելով՝ անմիջապես մերժեց առաջարկությունը, մանավանդ, որ խստությանը խստությամբ էլ պատասխանեց. «Գիտեմ, որ Բելը շան պես հաչում է, շան պես որսում, իր հետևորդներն էլ նույնն են. իսկ եթե ուզում է, թող գա մեզ վրա և տեսնի մեր ճարտարությունը»» [109]։

*Ինչպես Ջրհեղեղից անմիջապես հետո Արարատ լեռան ստորոտին բոլորի վրա տեր էր բարեպաշտ արքա և Բարձրյալ Աստծո քահանա Նոյը, այժմ էլ ամբողջ աշխարհի վրա կտիրապետեր չարափառ կայսր և չաստված Բելը, եթե Հայկը խոնարհվեր նրա առաջ։ Սակայն նա ծանր պատնեշի դեմ առավ. **«Հայկը ճանաչում էր Բելին, այդ պատճառով էլ արհամարհանքով մերժեց նրա խորամանկ հրավերքն ու դեսպաններին»*** [110]։

Գիտեր Հայկը, որ Բելին հպատակվելու առաջարկը ենթադրում էր ընդունել նաև Բելի պաշտամունքը, ինչի մասին մտածելն անգամ խորշելի էր Հայկի համար։

«Հայկ անունով մեկը՝ ազգերի նահապետը, չհնազանդվեց նրա ծառայությանը, նրա արձանը չկանգնեցրեց իր տանը և չմեծարեց նրան աստվածավայել շուքով»[111]։

Եվ որպեսզի միանգամից վերջ տա խորամանկ բանակցություններին, Հայկն առանց երկմտելու՝ պատգամավորների այդ խմբին, որոնց գլուխը Բելի որդին՝

---

[107] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005թ. էջ 9:

[108] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 87:

[109] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 138:

[110] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 46.

[111] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 9:

*Բաբն էր, ասաց, որ Բելն ընդամենը շուն է, իսկ ինքը շների հետ բանակցություններ չի վարում. **«Հայկը Բելին չպաշտեց որպես Աստված, այլ նրան շուն կոչեց»**[112]:*

*Հայկն արդեն ճաշակել էր այդ հպարտացածի համագործակցության դառնությունը և էլ երբեք, ոչ մի գնով չէր ցանկանա նորից նման վիճակի մեջ հայտնվել. հատկապես այն դեպքում, երբ Սենաարում աշտարակի կառուցման ժամանակ Բելը ծածուկ էր գործում, իսկ հիմա ոչ մի բանից չխորշելով՝ բոլորին հայտնապես կռապաշտություն էր քարոզում և պարտադրում. **«Բայց Հայկի՝ նրան չլսելը և մահվան գնով Ներոովթի հետ պատերազմելու պատրաստակամությունը ցույց է տալիս, որ դրա համար նա մեծ պատճառներ ուներ... ինչը Հայկի կողմից կռապաշտության գործին խառնվել չկամենալն էր»**[113]:*

*Այսպիսով՝ **«Հայկը Բելի պատգամավորներին ետ է դարձնում խստությամբ պատասխանելով: Ուղարկվածը վերադառնում է Բաբելոն»**[114]:*

Գրեթե ամբողջ աշխարհը գրաված ինքնագոհ Բելը տեղից վեր է թռչում՝ լսելով, որ Հայկն իրեն ոչ միայն մերժել, այլև բոլորի մոտ իրեն աստված երևակայող գոռոզ հսկային շուն է անվանել.

***«Բելի որդին և պատգամավորները վերադարձան նրա մոտ՝ Բաբելոն, որոնցից իմանալով Հայկի հաստատակամության մասին՝ Բելն շտապեց զորքի մեծ բազմություն հավաքել իր փորձառու կտրիճների հետ միասին, որոնց մեջ կային 60 անվանի հսկաներ՝ անճոռնի դեմքով, հասակով և ուժով, որոնցից ամեն մեկը կարող էր դասվել առասպելական դյուցազունների շարքին»**[115]:*

Փրփրած, մոլագար հսկան, իր մեծաքանակ բանակի գլուխն անցնելով, հոխորտում և շտապում էր հասնել Արարատյան երկիր, որն իր աշխարհակալ նկրտումների ճանապարհին միակ արգելքն էր:

***«Հպարտ Բելը շարժվեց դեպի Հայաստանի սահմաններ՝ բորբոքված իր հպարտ խանդավառությամբ և վառվելով՝ կատաղի վրեժխնդրությամբ»**[116]:*

Մինչ Քրիստոս՝ առաջին համաշխարհային Պատերազմը

***«Այդ ժամանակ Բելը պատերազմ հայտարարեց՝ մարդկության պատմության մեջ առաջին պատերազմը»**[117]:*

Բելի սուրհանդակները սլանում էին իրենց հպատակ ազգերի և ժողովուրդների մոտ զորաժողովի՝ լուրն հասցնելով նրանց, ինչն անարձագանք չէր մնում,

---

[112] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 43:
[113] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն… էջ 306:
[114] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 87:
[115] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 138:
[116] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 46.
[117] Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888, ст. 25.

և օրեցօր այդ երկրներից եկած ռազմական ուժեր էին կուտակվում Բաբելոնում՝ վերածվելով մի հսկայածավալ բանակի։

Երկու երկրներում՝ Բաբելոնում և Արարատյան երկրում, պատերազմի շունչ էր տիրում։ Մի կողմից Բելն էր՝ իր կայսրության չորս ծագերից հավաքված հզոր և մեծաքանակ բանակով, մյուս կողմից Հայկը՝ իր տոհմով և փոքրաթիվ համախոհներով։ Մի կողմից կռապաշտության խավարն էր, մյուս կողմից՝ բարեպաշտության լույսը։

Բռնկվում էր մի մեծ և անզիջում պայքար, ինչը դառնալու էր Առաջին համաշխարհային պատերազմ։

Բելի մղիչ ուժն աշխարհին տիրելու տենչանքն էր և այն հարվածի անասելի ցավը, որ այդ հպարտացած հրեշին հասցրեց բարեպաշտ Հայկը՝ ինքնակոչ «աստծուն» շուն կոչելով։

*Մ. Խորենացին գրում է. **«Ապա Տիտանյան Բելը զորք է հավաքում նրա դեմ և հետևակ զորքի մեծ բազմությամբ գալիս հասնում է հյուսիս՝ Արարադ երկիրը՝ Կադմոսի տան մոտ»**[118]։*

*Բելը հարավային սահմանի մոտ պատերազմ է հայտարարում Հայկին։ Լուրը Կադմոսն իսկույն սուրհանդակի միջոցով հասցնում է իր պապին. **«Կադմոսը՝ Հայկի թոռը, իր զորագնդով գտնվելով Հայաստանի սահմանագծին, հաղորդում է պապին՝ հսկաների գնդով և հզոր զորքով Բելի մոտենալու մասին։ Ինքն էլ զգուշանալով՝ շտապում է միանալ Հայկի բանակին»**[119]։*

Ոմանք ասում են, թե Կադմոսի հապճեպ նահանջը պատշաճ չէր նման խիզախ մարդուն։ Բայց եթե Կադմոսը կռվի մեջ մտներ, երկար չէր դիմանա և կկորցներ իր մարտիկներին, կզրկվեր նաև կյանքից։ Իսկ Հայկը կկորցներ իր բանակի ամենագլխավոր առաջնորդներից մեկին։

*Կադմոսի մարտավարությունը խելամիտ էր. հատկապես, որ նրա ետ քաշվելը նման չէր խուճապահար դասալիքի, քանզի նա պատերազմի լուրը շուտափույթ ուղարկեց Հայկին, որպեսզի նա հանկարծակիի չգա, և ապա ինքը խուսանավեց Բելի զորքերից. **«Կադմոսը փախուստ է տալիս Հայկի մոտ՝ իրենից առաջ արագավազ սուրհանդակներ ուղարկելով։ «Գիտցած եղիր, ասում է, ով մեծդ դյուցազունների մեջ, որ Բելը դիմում գալիս է քեզ վրա՝ անմահ քաջերով և երկնադեզ հասակով կռվող հսկաներով։ Ով ես իմանալով, որ նա մոտեցել է իմ տանը, փախա և ահա տագնապահար գալիս եմ քեզ մոտ։ Ուրեմն, շտապիր մտածել, ինչ որ անելու ես»**[120]։*

*Բելի գնդերն անարգել սկսում են թափանցել Արարատյան երկրի սահմաններից ներս՝ ենթադրելով, որ այդպես հանգիստ, առանց որևէ մեծ ճիգի, ցիրուցան կանեն Հայկի բանակը՝ նրան կորստի մատնելով։ Այդ վստահության ու անհոգության պատճառը բանակի մեծաքանակությունն էր և իրենց մեջ պատերազմող հսկաների առկայությունը՝ անխորտակելի «աստվածության» Բելի առաջնորդությամբ. **«Իսկ Բելը հանդուգն ու հսկա ամբոխի զորությամբ, ինչպես***

---

[118] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 87:

[119] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 46.

[120] Մովսես Խորենացի, Պատմություն… էջ 87:

մի մեծ հորձանք զառիվայրից ներքև հեղեղվելով, շտապում է հասնել Հայկի բնակության սահմանները՝ վստահ լինելով զորավոր մարդկանց քաջության և ուժի վրա» [121]***, և «Գնաց Հայկի վրա՝ նրան սպանելու։ Եկավ հասավ Արարատ երկիրը՝ այն տունը, որը նրանց նախնիներինն էր»***[122]***։***

Սա այն բարեպաշտության երկիրն էր, որտեղ Նեբրովթը ծնվել և մեծացել էր՝ խաղաղությամբ ապրելով Աստծո պատվիրանների համեմատ, սակայն հետագայում իշխանատենչության մոլուցքով բռնված՝ այլևս իր անցյալի հուշերից ոչինչ չէր արժեքավորում։ Նրա համար արժեք ուներ միայն իր սեփական անձը։

Այդ ընթացքում Հայկն ի մի էր բերում իր զորքերը, որոնց գլուխ կանգնեցրել էր իր որդի Արամանյակին և թոռանը՝ Կադմոսին։ Նրան էին միացել նաև հարևան երկրներում ապրող դաշնակից ցեղերը։

*Եվ ապա Վանա լճի մոտակայքում դիրքավորվելով՝ սպասում էր Բելի բանակի մոտենալուն. **«Այս ժամանակ ուշիմ ու խոհեմ, գեղագանգուր ու զվարթաչյա հսկան շտապով հավաքում է իր որդիներին ու թոռներին՝ թվով շատ նվազ, քաջ և աղեղնավոր մարդկանց և ուրիշ մարդկանց, որ իրեն էին ենթարկվում, գնում հասնում է մի ծովակի ափ, որի ջրերը աղի են և իրենց մեջ մանր ձկներ են պարունակում»***[123]***։***

*Բելը գալիս էր զավթելու սուրբ երկիրը՝ հույսը դնելով իր զորության վրա, իսկ Հայկը խրախուսում էր իր մերձավորներին, որ հուսան առ Աստված և չվախենան իրենց վրա եկող այդ ահարկու բանակից և ամուր կանգնեն հավատի ու հայրենիքի պաշտպանության գործին։ Այդ ժամանակ կարևոր էր Հայկի խրախուսական խոսքը, որպեսզի բանակը չկորցներ զգոնությունը և չընկներ վախի հուսալքող ճիրանների մեջ։ Հայկի խոսքերը մեծ ազդեցություն էին թողնում, քանզի նրանք գիտեին, որ Աստված Հայկի հետ է, և Նրա զորությամբ կարող են դիմակայել կատաղի հակառակորդին. **«Հայկի ընտանիքը չնայած որ փոքրաթիվ էր, բայց խանդավառված էր նրա հոգով, որ գնալով առջևից՝ իր հետևից տանում էր զինվորների սրտերը։ Կայանելով լճի մոտ՝ Հայկը արտասանեց հետևյալ խոսքերը. «Որդիներ իմ և ընկերներ, մի՛ վախեցեք հսկաներից, շարժվենք միասնաբար՝ որպես մի շունչ ու մի հոգի և միաբան արիությամբ սանձենք հանդուգններին։ Հարձակվենք այն կողմից, որտեղ գտնվում է Բելը։ Եթե արագ հարձակվենք իշխանատենչի և նրա համախոհների վրա, այդ ժամանակ նրանք կընկնեն մեր հարվածներից։ Բայց եթե մեր միահոգի պոռթկումը չսասանի բռնակալին, և մենք մահանանք, մենք չենք տեսնի մեր անկախության կորուստը և չենք դառնա հսկաների գերի»***[124]***։***

*Նախնական պատրաստություններ տեսնելով՝ Հայկը ցանկանում էր նախահարձակ լինել, ինչի համար հարկավոր էր նախ լավ հետազոտել տեղանքը և թշնամու գրաված դիրքը, ինչն էլ հետևողականությամբ անում էր. **«Եվ ամբողջ ասպարեզներ դեպի առաջ անցնելով՝ հասնում են շատ բարձր լեռների միջև մի***

---

[121] Մովսես Խորենացի, Պատմություն... էջ 87:

[122] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 9:

[123] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 87-88:

[124] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832г., ст. 46-47.

դաշտաձև տեղ։ Եվ ջրերի հոսանքի աջ կողմում բարձրավանդակի վրա ամուր դիրք գրավելով, գլուխները վեր բարձրացնելով՝ տեսնում են Բելի բազմաթիվ ամբոխի անկարգ հրոսակը, որ հանդուգն հարձակումով ցիրուցան սուրում էր երկրի երեսի վրա, իսկ Բելը մեծ ամբոխով հանդարտ կանգնած էր ջրի ձախ կողմում մի բլրակի վրա՝ իբրև դիտանոցում։ Հայկը ճանաչեց սպառազինված ջոկատի խումբը, որտեղ Բելը մի քանի ընտիր և սպառազինված մարդկանցով ամբոխի առաջն էր անցել, և երկար տարածություն կար նրա ու ամբոխի միջև։ Նա կրում էր նշաններ կրող վերջերով երկաթե գլխանոց, թիկունքի և կրծքի վրա պղնձե տախտակներ, սրունքների և թևերի վրա պահպանակներ, մեջքը կապել էր գոտի, որի ձախ կողմից կախված էր երկայրի սուրը. իր աջ ձեռքում բռնել էր հսկայական նիզակը, իսկ ձախում վահան, նրա աջ և ձախ կողմում գտնվում էին ընտիր զորականները»[125]*։*

«Սրանք ցրված էին ողջ մարգագետնով մեկ, իսկ Բելը բարձունքի վրա իր հսկաների ընտրյալ գնդով առանձին կանգնած էր։ Քննելով իր հակառակորդների դիրքը՝ Հայկն անմիջապես իր զորքը բաժանեց երեք գնդի։ Աջ թևը տվեց իր որդի Արմենակին, իսկ ձախը՝ իր թոռ Կադմոսին, նա անմիջապես պատվիրեց նրանց երկու կողմից շրջապատել թշնամուն, որպեսզի անհրաժեշտության դեպքում մխրճվելով նրանց մեջ՝ բաժանեն նրանց»[126]*։*

«Իսկ ինքը (Հայկը) կանգնում է առջևից, իսկ մյուս բազմությունը կանգնեցնում է իր հետևում. դասավորում է մոտավորապես եռանկյունի ձևով և հանդարտ առաջ է շարժվում»[127]*։*

«Հնչում է միասնական ռազմականչը. «Հաղթենք կամ մեռնենք, չլինենք հսկաների ծառաներ»»[128]*։*

«Եվ երկու կողմերի հսկաները միմյանց հասնելով՝ երկրի վրա ահագին դղրդյուն բարձրացրին գրոհելով և իրար վրա ահ ու սարսափ գցեցին իրենց հարձակումների ձևերով։ Այնտեղ երկու կողմից ոչ սակավ հաղթանդամ մարդիկ սրի բերանի հանդիպելով՝ թավալվում ընկնում էին գետնին, իսկ ճակատամարտը երկու կողմից էլ անլուծելի էր մնում»[129]*։*

«Արմենակն ու Կադմոսը պոռթկումով հարձակվում են բաբելացիների վրա և սրի են քաշում նրանց։ Այդ ընթացքում Հայկը պարտության է մատնում հակառակորդների այն բազմությանը, որոնք շտապում էին օգնել ջախջախված բանակին»[130]*։*

«Հզոր և սաստիկ բախմամբ, որպես ամպերի որոտ՝ նրանք խառնվում են միմյանց, հողն էլ որպես թանձրացած ամպ էր նրանց ոտքերի տակ, նրանց զենքերի փայլատակումը կարծես երկնքից էր ճառագում, նրանց ձայնը որոտում էր որպես շանթ, նետերը և քարերը թափվում էին որպես տեղատարափ, և արյունն

---

[125] Մովսես Խորենացի, էջ 88:
[126] Сергей Глинка, Обозрение… ст. 47-48.
[127] Մովսես Խորենացի, էջ 88:
[128] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 47.
[129] Մովսես Խորենացի, էջ 88-89:
[130] Сергей Глинка, Обозрение… ст. 48.

ընթանում էր որպես հորդահոս գետ, և երկկողմանի մեծ կոտորած եղավ՝ անթիվ և անհամար։ Եվ Հայկը քաջալերում և սրտապնդում էր յուրայիններին՝ իր ահեղագոչ ձայնով և ինքն իբրև կայծակ՝ ասպատակում էր շուրջանակի, և 60 հսկաներն ընկան նրա քաջերի ձեռքով։ Եվ բոլոր թշնամական գնդերը փախուստի մատնելով՝ հաղթական խնդությամբ հավաքվեցին Հայկի շուրջը և ոչ այնքան իբրև իրենց, այլ Աստծո թշնամիներին հաղթող համարեցին իրենց»[131]։

Սա առաջին մարտն էր, որտեղ հաղթանակ էր տանում Արարատյան բանակը՝ Հայկի գլխավորությամբ։ Սակայն Բելի գնդերն անընդհատ ավելանում էին և համալրվում։

*Թե որքան է տևել այս պատերազմը, ստույգ տեղեկություններ չկան։ Ըստ երևույթին, այն մի ճակատամարտով չի ավարտվել. **«Երկար և տարբեր ընդհարումներ են եղել, այլ ոչ թե միայն այդ պատերազմը, ինչպես կարծում են միայն Խորենացու պատմածը հիշելով, և երկու կողմն էլ տագնապ և դժվարություններ են կրել։ Առաջին պատերազմը հավանաբար եղել է Բզնունյաց և Խորխոռունյաց գավառի մոտ»[132]։***

Պարտությունից հանկարծակիի եկած Բելն ի մի է բերում զորքը և պատրաստվում նոր վճռական հարձակմանն։

«Ներքովքը այս աներևակայելի բանը տեսնելով և դեռևս չմարսած՝ շտապում է հանկարծակի Հայկի վրա հարձակվել հակառակ կողմից՝ այսինքն Վանա լճի հարավ-արևելյան եզերքը պաշարելով։ Հայկն էլ ջանում է իր հերթին Բելի դեմ դուրս գալ լճի հյուսիսային կողմով՝ շուտափույթ հասնելով Երվանդունյաց կոչված գավառը. այնտեղ չորս կողմերից լեռնապատ ձորն իջավ, ինչը իր և իր հետևորդիների պատվին Հայոց Ձոր կոչվեց և կոչվում է մինչ օրս, որի արևելքից հոսում է Հորգոմի գետը և թափվում է լիճը՝ նույնանուն գյուղի մոտ, որը դեռ 17-րդ դարում կանգուն էր, իսկ գետը այժմ հայտնի է Խոշապա անվամբ։ Հայկը կանգնեց սրա աջ կողմում՝ մի բարձր և ամուր տեղ. հեռվից տեսնելով Բելի զորքի առաջատարներին՝ միանգամից գուշակելով, որ շատ մեծ բազմություն է գալիս, շտապեց իր փոքրաքանակ զորքը հաստատել ամուր և ճարտար դիրքով՝ երեքանկյուն ձևով, որի ծայրին ինքը կանգնեց, աջ թևը, որ Վանա ծովին էր նայում, հանձնեց իր երեք որդիներին՝ Արմենակին առաջնորդ նշանակելով. ձախ թևն էլ հանձնեց մյուս երկու որդիներին՝ առաջնորդ նշանակելով Արմենակի որդուն՝ Կադմոսին, որն իբրև անդրանիկ ժառանգ և կտրիճ, ավելի նախապատվելի էր, իսկ մյուս որդիներին, թոռներին և նրանց դստերերի որդիներին էլ (ինչպես Սեբեոսն է պատմում) նրանց որպես օգնական տվեց, ոմանց էլ վերջապահ թևի մեջ ընդգրկեց. հավանաբար իր եղբայրներն էլ էին բաժանվել այդ խմբերի մեջ»[133]։

*Ալիշանը եղբայրներ ասելով՝ թերևս նկատի ունի վրաց պատմիչ Մրովելիի պատմության մեջ հիշատակված այն հյուսիսային յոթ ցեղերի առաջնորդներին, որոնք կամավորապես հպատակվել էին Հայկին՝ լինելով Թորգոմի սերնդից, ու եկել լրացրել էին Հայկի բանակը. **«Հայոսն էլ (իր հերթին) կանչեց յոթ (եղբայր)***

---

[131] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 140-141:
[132] Նույն տեղում, էջ 140:
[133] Նույն տեղում, էջ 141:

հերոսներին և ամբողջ թորգամոսների ցեղին: Նրանց օժանդակում էին նաև արևմտյան որոշ ցեղեր... Հենց որ հայտնվեցին Նեբրովթի զորքերը, նրանց ընդառաջ ելան Հայոսի յոթ հերոս եղբայրներն՝ իրենց զորքերով: Նրանց առջև կանգնած էր հենց ինքը՝ Հայոսը՝ հզոր զորքի գլխավորությամբ» [134]:

«Բելն էլ Հայկին նայելով՝ իր առաջահաս զորքերով հանդերձ շտապելով՝ հասավ Հորգոմ գետի ձախ ափը և կանգնեց Հայկի դիմաց՝ մի բարձրագույն բլրի վրա» [135]:

Եվ նորից ճակատամարտ սկսվեց, նորից իրար զարնվեցին խավարի ու լույսի որդիները: ***«Եվ նրանց միջև տեղի ունեցավ դաժան մարտ՝ նման մոլեգին տարերքի... Հայոսը կանգնել էր իր հերոսների թիկունքին և բարձր ձայնով, ինչպես որոտի ճայթյուն, ոգևորում և աջակցում էր իր զորքերին»*** [136]:

«Այս անգամ էլ Նեբրովթը ձախողվելով, հետ քաշվեց իր բլուրը՝ սպասելով զորքերի նոր բազմության հասնելուն: Հայկը նույնպես իր տեղը վերադարձավ. թերևս գիշերն ու հոգնությունն էին ստիպում» [137]:

Ջնայած տարած հաղթանակներին՝ Հայկն սկսում էր մտահոգվել, քանզի Բելի բանակը նորանոր զորքերով համալրվում էր, իսկ իրենը՝ նոսրանում: Սակայն դա հակառակորդի հաջորդ ճակատամարտից խուսափելու պատճառ չէր: ***«Բայց ապագան դժվարանում էր, քանզի իր քչաքանակ գնդին նոր օգնական չկար, իսկ Բելի զորքը մեկը մյուսի ետևից էր գալիս, որով սա ավելի վստահությամբ նորոգեց պատերազմը, Հայկն էլ իր սովորական քաջասրտությամբ հանձն առավ այն, մանավանդ, որ այս անգամ Նեբրովթն իր հսկաների գլուխն անցած՝ առաջինն էր հարձակվում: Հայկն էլ իր ուժով հարձակվեց, բայց չկարողավաց ետ մղել այդքան բազմությանը, որը գնալով ավելի էր շատանում և մոտենում իր բանակին»*** [138]:

Լայնալիճ աղեղ

Պատերազմը երկարում էր, և երկու կողմերն էլ բազմաթիվ զոհեր էին տալիս: Հայկը հաղթանակի միակ ելքը տեսնում էր անձամբ Բելին մոտենալու մեջ, որպեսզի մենամարտում նրան տապալելով՝ վհատության մատներ թվով գերազանցող թշնամու բանակին. ***«Հայկը գիտեր, որ չպիտի սպասեր թշնամու ամբողջ զորքի հավաքվելուն, այլ պիտի նայեր և գտներ, թե որտե՞ղ է Բելը, և այդ կողմի վրա հանկարծակի հարձակվելով՝ նրան սպաներ, և ամբողջ բանակին վախեցնելով՝ փախչել տար, կամ էլ գոնե այդ հսկա բռնավորի և նրա հսկաների հետ կռվելով՝ քաջությամբ մեռներ»*** [139]:

---

[134] Мровели Леонти, ст. 22.

[135] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 141:

[136] Мровели Леонти, Жизнь картлийских царей, Москва, 1979, ст. 22-23.

[137] Ղևոնդ Ալիշան, Հայաստան... էջ 142:

[138] Նույն տեղում, էջ 142:

[139] Նույն տեղում, էջ 142:



Սակայն ոչ մի կերպ չէր հաջողվում մոտենալ Բելին: Սա շրջապատված իր ընտիր զինվորներով և հիմնականում հեռվից էր հետևում պատերազմի ընթացքին: Իսկ նման հեռավորությունից նիզակով կամ սովորական նետով հնարավոր չէր խոցել նրան, որի ամբողջ մարմինը պատված էր զրահներով:

*Այդ մտահոգություններով տարված՝ Հայկը բոլոր իր հպատակներին հորդորում էր աղոթել և Բարձրյալից օգնություն հայցել: Ինքն էլ զատվելով ծնկի էր գալիս և խոնարհությամբ դիմում Տիրոջը. **«Ո՛վ երիկամներն ու սրտերը քննող ամենակալ Տեր, որի առջև բացահայտ են բոլոր խորհուրդները: Դու զորացրու իմ բազուկները և իմաստություն տուր ինձ, որ սպասավոր ես կարգել արարչատուր ազատության վեհ պարգևիդ:***

Եվ եթե նույնիսկ պարտվեմ այդ գազանից, խնդություն է իմ և իմիննների համար այդպիսի մահը՝ նահատակությունը: Լավ է ինձ համար խոշտանգվելը մարդադավ չար գազանի ճիրաններից, քան խարանված խղճմտանքով և նախատինքով լի կյանքը» [140]:

Եվ մինչ նա աչքերը երկինք հառած աղոթում էր, հանկարծ նրան երևաց ամպերից ելած երկնային մի Աջ, որը մի մեծ լայնալիճ աղեղ էր բռնել. և այդ պահին Հայկին տրվեց նման աղեղ պատրաստելու իմացություն:

Մեր բարեպաշտ նահապետը գոհություն է հայտնում և փառավորում մարդասեր Աստծուն, Որը չի անտեսում Իրեն հուսացողների խնդրանքը, և իսկույն անցնում է աղեղի պատրաստման գործին:

*Աղեղի գյուտը Հայկին տեսիլքով տրված լինելու մասին մնացել են տարբեր վկայություններ, որոնցից մեկը պահպանվել է Վանա լճի Աղթամար կղզու վանքի դիվանատան ձեռագրերից մեկում. **«Բայց նրա ամենահատուկ, եզակի և գրեթե սրբազնացված կոչումը Աղեղնավորն է, կամ ավելի ճիշտ՝ զորեղ աղեղնավոր կամ կորովի աղեղնավոր, հաստաղեղ և կորովաձիգ, և նույնիսկ կարող ենք մեր Հայկին համարել աղեղի հեղինակ, աշխարհի առաջին աղեղնավոր: Այստեղ ազգազրույցը և գրավոր մի ավանդություն՝ Դիվանք Աղթամարա, Հայկին են ընծայում նաև լարաշարժ գործիքների գյուտը և կարծես սրբացնում են նրան, քանզի ասում են, թե նրան երազում է երևացել աղեղն ու նետը, որը և պատրաստելով և գործի դնելով՝ դրանով հարվածեց իր թշնամուն, և այս դիպվածը, ըստ զրույցների, եղավ Հայոց Ձորում»*** [141]:

---

[140] Հայր Արսեն Բագրատունի, Հայկ դիւցազն, վեպ, Վենետիկ, 1858, էջ 19:

[141] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 132:

*Ալիշանը պատմում է նաև Հայկի տեսիլքը նկարագրող բաբելական մի հին քանդակի մասին: Հավանաբար, այդ սքանչելի հայտնությունը պահպանվել է նաև բաբելացիների ավանդություններում՝ որպես ապացույց այն բանի, որ իրենց կուռք Նեբրովթի պարտությունը պայմանավորված էր ոչ միայն Հայկի ուժով, այլև երկնային միջամտությամբ. **«Կոնդակն ավելացնում է, թե երկնքից Հայկին երազով էին ցույց տրվում աղեղն ու նետը, ինչը և շինել է նա ու դրանցով հալածել Թշնամուն... Բաբելոնի և Նինվեի քանդակների մեջ շատ կա նրանց Աստուր չաստվածի պատկերը՝ նույն և նման կերպարանքով: Բայց մի այլ՝ ոչ նման քանդակ էլ գտնվել է կոտրած կոթողի վրա (գտնվում է Բրիտանական թանգարանում), որ մի կիսաբոլորի մեջ աղեղը ձեռքին Աստված կամ երկնավոր է: Մի՞թե հար և հարմար չէ սա Հայկի տեսիլքին»**[142]:*



Տեսիլքի աղեղը սովորական չէր, այլ լայնալիճ և շերտավոր, ինչը շատ ավելի էր գերազանցում այդ ժամանակաշրջանում եղած սովորական աղեղներին: Դրա հնարքը լիովին ի հայտ է գալիս, հատկապես երբ գտնվում է հմուտ և մեծ ուժի տեր անձի ձեռքում, ինչպիսին Հայկն էր:

Այդ աղեղի առկայությունը երկար ժամանակ եղել և մնացել է միայն Հայաստանում՝ որպես հայերի մենաշնորհ: Հնագիտական գտածոների մեջ այդ աղեղի չափերը եզակի են. այն հասնում է մոտ երկու մետրի:

Յուրահատուկ է եղել նաև երեքթևյան նետը: Ըստ մասնագետների՝ նետի երեքթևյան ծայրակալի թևերը թեթևակի թեքություն ունեն, ինչը ստիպում է նետին՝ ընթացքի ժամանակ պտտվել բավականին լուրջ արագությամբ: Իսկ այդ պտույտն էլ պատճառ է գերոսկոպիկ ուժերի առաջացման, որոնք նետը պահում են հարթ ուղղության վրա, ինչից հարվածի ուժգնությունը շատ ավելի է մեծանում.

«1979 թվականին Շիրակավանում ուշ բրոնզեդարյան դամբարանների պեղումներից հայտնաբերվեցին լայնալիճ աղեղի բրոնզյա պատյաններ, որոնք հագցվել են փայտե ներճկված ներդիրի վրա: Այդ մետաղյա աղեղներն ամենահինագույնն են ամբողջ Արևելքում: Աղեղներից մեկն ունի 172սմ երկարություն, բաղկացած է մի քանի մասերից, որոնք իրար միացված են մեծ վարպետությամբ: Հարց կարող է ծագել՝ իսկ ինչպե՞ս են նետ արձակել նման մեծություն ունեցող աղեղներից: Քսենոֆոնը «Անաբասիս»-ում նկարագրելով Հայաստանի՝ կարդուխների երկրի բնակիչներին, նշում է. «Նրանք գերազանց նետաձիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր: Նետարձակման ժամանակ նրանք լարը ձգում էին՝ ձախ ոտքը դնելով աղեղի ցածր ծայրի վրա: Նրանց արձակած նետերը ծակում էին վահաններն ու լանջապանակները: Հելլենները երբ այդպի-

[142] Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 19:

սի նետերը ձեռք էին բերում, ապա կաշվե փոկեր հարմարեցնելով դրանց՝ օգտագործում էին տեգերի փոխարեն»։

Հայտնի է, որ շումերներն աղեղի պատրաստման համար ճկուն և առաձգական ծառերի տեսակներ չունենալու պատճառով լիովին հրաժարվել էին նետաձիգ զենքից։ Սակայն ահա Սարգոն առաջինը, գրավելով իշխանությունը, մեծ նշանակություն տվեց այդ զենքին և իր բանակում ստեղծեց աղեղնավորների հատուկ ջոկատներ։ Իսկ դա նրան հաջողվեց անել այն բանից հետո, երբ հնարավորություն ունեցավ թափանցելու Հայկական լեռնաշխարհի կամ Իրանական բարձրավանդակի նախալեռնային շրջանները, որոնք հարուստ էին կենի և տխլենի ծառերով»[143]*։*

Վերադառնանք Հայկին։ Այսպիսով, աղեղը պատրաստ էր, և Հայկի մտահղացումն իրականացնելը շատ հավանական էր դառնում։ Հերթական բախմանը պատրաստվելիս՝ նա այնպիսի մարտաոճ էր մշակել, ըստ որի՝ Բելին պիտի դուրս քաշեր իր պատսպարանից և հարմար պահին երկնառաք աղեղի պարունակությունը պարպեր նրա վրա։

Ըստ այնմ էլ նա իր զորքերին հրահանգեց՝ իր ծրագրի համեմատ շարվել և պատրաստվել մարտի։ Զորաշարժի տրամաբանությունն այն էր, որ մարտի թեժ պահին նրանք ետ քաշվեին՝ ձևացնելով, թե իբր ուժասպառ են լինում, և խուսափելու մարտավարությամբ սկսեին նահանջել։ Եվ երբ ոգևորված հակառակորդները Բելի գլխավորությամբ սկսեին իրենց հետապնդել, այդժամ նրանք միանգամից ետ կդառնային կեղծ փախուստից, ինչի արդյունքում Բելն ու Հայկը միմյանց դեմ հանդիման կելնեին։ Ու այդ ժամանակ Բելը հանկարծակիի կգար, այլևս պատսպարվելու տեղ չէր գտնի, և հնարավոր է, որ հարմար պահ ստեղծվեր՝ երկնառաք աղեղի ամբողջ ուժը Բելի վրա փորձարկելու։

Հաղթանակ

«Հայաստանի սահմաններում ընկավ
առաջին աշխարհակալը կամ մարդկանց
կորստյան մատնողը»[144]*։*

Եվ ահա մարտը վերսկսվեց։

Հայկի ազդանշանով բանակն սկսեց կեղծ նահանջի խուճապահար փախուստը։ Բելը այնպիսի ոգևորությամբ առաջ խոյացավ իր պատսպարանից, որ նույնիսկ հիմնական զորքից իր գնդով առաջ անցավ։ ***«Նույս տվեց Հայկը նրանից և գնաց փախստական, իսկ նրա հետևից փութով գնաց նաև Բելը՝ իր զինակիրի հետ»***[145]*։*

Եվ բոլորը զիջում էին նրան, որպեսզի հաղթանակի ամբողջ փառքը վե-

---

[143] Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001, էջ 71-72:

[144] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. III.

[145] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 9-11:

րագրվեր Աստծո և մարդկանց դեմ հպարտացած այդ զրահապատ հրեշին: Սակայն սա չէր կասկածում, որ այս նահանջը Հայկի կողմից պատրաստված ծուղակ էր: Իսկ Հայկն աշխատում էր նահանջի ժամանակ կողմնորոշվել, թե ո՞ր պահն է առավել նպաստավոր՝ ետ դառնալու և վճռական հարվածը հասցնելու համար.

«Պետք էր ընթացք-ընթացք ետ նայել, որպեսզի երբ հակառակորդը մոտեցած լինի, նորից հարձակվի: Հայկի... կեղծ փախուստը տեսնելով՝ Բելը անզգուշաբար իր զորքերից առաջ անցավ իր փոքրաքանակ մարդկանցով և ցանկանում էր Հայկին իր ձեռքը վերցնել: Հայկն էլ իր մարդկանց զգուշացրեց, որ հետևում կանգնեն և իրեն հետևից պաշտպանեն՝ իր վրա վերցնելով դեմ առ դեմ կռվելը, որի ժամանակն էլ շատ չուշացավ»[146]:

«Հայկը կանգ առավ և ասաց նրան. «Ինչո՞ւ ես կրնկակոխ գալիս իմ հետևից, դարձիր շուտով քո տեղը, որ չմեռնես այսօր իմ ձեռքով, քանի որ իմ նետը չի վրիպում»: Բելը պատասխան տվեց և ասաց. «Նրա համար, որ չընկնես իմ կտրիճների ձեռքը և մեռնես, հանձնվիր իմ ձեռքը և խաղաղությամբ ապրիր իմ տանը՝ ղեկավարելով իմ տան որսորդ զինվորներին»:

Պատասխան տվեց նրան Հայկը և ասաց. «Շուն ես դու և շների ոհմակից՝ և՛ դու, և՛ քո ժողովուրդը: Եվ դրա համար այսօր իսկ պիտի դատարկեմ իմ կապարճը քեզ վրա»»[147]:



*Եվ երբ սա բավական հեռացավ հիմնական զորքից, Հայկի նոր ազդանշանով՝ նահանջող բանակը ետ դարձավ ու շեշտակի հարձակում գործեց հետապնդող հակառակորդի դեմ՝ Բելին ու իր զինակիցներին ծուղակի մեջ գցելով. **«Այս անսպասելի սարսափելի դիպվածը տեսնելով՝ Տիտանյան արքան զարհուրեց և ետ-ետ քաշվելով՝ սկսեց բարձրանալ այն բլուրը, որտեղից իջել էր, որովհետև մտածում էր՝ ամբոխի մեջ ամրանալ, մինչև ամբողջ զորքը հասնի, որպեսզի նորից ճակատ կազմի:***

Աղեղնավոր Հայկն այս բանը հասկանալով՝ իրեն առաջ է նետում, մոտ է հասնում արքային, մինչև վերջը քաշում է լայնալիճ աղեղը, երեքթևյան նետը դիպցնում է նրա կրծքի տախտակին, և սլաքը շեշտակի անցնելով նրա թիկունքի միջով՝ գետին է խրվում, և գոռոզացած Տիտանյանը այս կերպով կործանվում, ընկնում է գետնին ու շունչը փչում»[148]:

Պատմության այս փառավոր դրվագն իրենց աշխատություններում նկարագրել են բազմաթիվ հայ հեղինակներ, ինչպիսիք են Վարդան Արևելցին[149],

---

146 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 142:

147 Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 9-11:

148 Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 89:

149 Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 43:

Թովմա Արծրունին,[150] Հովհաննես Դրասխանակերտցին և այլոք, քանզի այդ նետարձակմամբ գետնին գամվեց աստվածուրացությունը, կռապաշտությունը, բռնատիրությունը և սրանցից բխող բազմապիսի չարիքները։

*Սեբեոսը մենամարտը պատկերում է այսպես. **«Եվ Հաբեթյան Հայկը մոտեցավ. իր ձեռքին բռնել էր աղեղը, ինչպես մայրափայտի հզոր գերան։ Հայկը կանգ առնելով՝ պատրաստվեց նրա դեմ աղեղով։ Եվ զորությամբ քաշելով աղեղը՝ նետով խոցեց երկաթի լանջապանակը և պղնձե վահանի միջով մխրճեց մսեղեն արձանի մեջ՝ գետին կործանելով աստվածակարծյալ հսկային»**[151]:*

Օտար հեղինակներից ասորիների պատրիարք Միխայելը, վրաց պատմիչ Լեոնտի Մրովելին, ռուս պատմիչներ Սերգեյ Գլինկան, գեներալ Վիկտոր Աբազան և շատ ուրիշներ նույնպես, խանդավառված մարդկության պատմության այդ բեկումնային միջադեպից, անդրադարձել են այս մեծ սխրագործությանը.

***«Ոմանք ասում են, թե Նեբրովթն էլ աշտարակի փլուզման ժամանակ մեռավ, բայց մենք գիտենք, որ դրանից հետո նա սպանվեց Հայկի կողմից, քանզի Հայկը չէր կանգնեցրել Բելի պատկերը և նրան աստված չէր համարել, և Բելը մեծ զորքով նրա վրա եկավ, և Հայկը սպանեց նրան»**[152]։*

***«Ընկնում է բռնակալը և նրա հետ փոշիանում են նաև երկրային նկրտումները՝ հպարտությունն ու իշխանատենչությունը»**[153]։*

***«Եվ գնաց նա (Հայոսը) ու կանգնեց Նեբրովթի դիմաց և արձակեց նետն ու հարվածեց Նեբրովթի պղնձապատ կրծքին, և աղեղը խոցելով նրան՝ թիկունքից դուրս եկավ։ Այդժամ ընկավ Նեբրովթը, և ետ փախավ նրա բանակը»**[154]։*

***«Վանա լճի մոտ տեղի ունեցավ կատաղի մարտ, որտեղ Հայկը սեփական ձեռքերից արձակած նետով սպանեց Բելին»**[155]։*

***«Արագահաս Հայկը չհապաղեց, և ահռելի նետից մի ակնթարթում նրա սիրտը խոցեց։ Այդ նետով ջախջախելով զրահը Նեբրովթի՝ Հայկն սկսեց տիրել։ Ցնծում էր բնությունը»**[156]։*

Բելը սպանվեց, որովհետև ուզում էր գրավել այն բարձրադիր լեռնաշխարհը, որտեղ եղել էր Դրախտը և որտեղ սուրբ լեռան՝ Արարատի վրա հանգրվան էր գտել Նոյան տապանը։

***«Ո՞վ կբարձրանա Տիրոջ լեռը, կամ ո՞վ կը կանգնի նրա սրբավայրում. նա, ով մաքուր ձեռքեր և անբիծ սիրտ ունի, ով հանձն չի առել ունայնություն ու նենգությամբ չի երդվել իր ընկերոջը»**[157], -գրում է Սաղմոսերգուն։*

Ստորև բերված Սուրբ Գրքի մարգարեական դրվագները լիովին պարզա-

---

[150] Թովմա Արծրունի և Անանուն, Երևան, 1987, էջ 47:
[151] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 11:
[152] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871, էջ 20:
[153] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 48.
[154] Мровели Леонти, Жизнь картлийских царей, Москва, 1979, ст. 23.
[155] Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888, ст. 25-26.
[156] Зинуров Рафаиль Нариманович (Уфаеци), Армения-путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 35.
[157] Սաղմ. 23. 3-4

բանում են Բաբելոն երևույթը, Հայկի այս պատերազմի ու հաղթանակի ներքին էությունը և բոլոր բելերի կործանման անխուսափելիությունը.

«Մտքիդ մեջ ասում էիր. «Երկինք կբարձրանամ, իմ գահը կդնեմ երկնային աստղերից ավելի վեր. կը նստեմ բարձր լերան վրայ, հյուսիսի բարձր լեռների վրայ, կբարձրանամ ամպերից էլ վեր, կնմանվեմ Բարձրյալին»: Բայց ահավասիկ դժոխք ես իջնելու և երկրի խորքերը: Ովքեր տեսնեն քեզ, պիտի զարմանան քեզ վրա և ասեն. «Սա այն մարդն է, որ ահաբեկում էր երկիրը, ցնցում թագավորներին, ավերակ էր դարձնում աշխարհներ, քանդում նրանց քաղաքները, գերիներին չէր թողնում վերադառնալ»»[158]:

Այո, դա նրան այլևս չներվեց, և համարյա թե ավարտին հասցված ահռելի կառույցը փլուզվեց՝ իր տակ ճզմելով իր իսկ ճարտարապետին՝ առաջին համաշխարհային բռնապետ բաբելոնյան Նեբրովթ-Բելին.

«Այն օրը Տերը հանգստացնելու է քեզ քո ցավերից ու նեղություններից... Ու այս ողբը պիտի հորինես Բաբելոնի թագավորի վրայ և ասես այն օրը. «Ինչպե՛ս այլևս չկա հարկապահանջը, ինչպե՛ս լռեց կողոպտիչը: Տերը խորտակեց մեղավորների լուծը, իշխանների լուծը՝ զայրույթով, սոսկալի հարվածներով ու անողոք բարկությամբ ոչնչացրեց նրանց ցեղերին: Ողջ երկիրը հույսով խաղաղվեց և կանչում է ցնծությամբ... Բոլոր ազգերի թագավորները պատվով ննջեցին՝ ամեն մեկն իր տանը, իսկ դու պիտի ընկնես լերան վրայ՝ իբրև մեռել գարշելի՝ սրակոտոր բազում դիակների մեջ, որոնք դժոխք են իջնելու»[159]:

Սակայն միջագետքյան ազգերի մոտ Բելի հիշատակը պահպանվեց յուրովի: Նրանք ոչ թե այդ ընկած հսկայի սովորական մահկանացու լինելը տեսնելով խելքի եկան, այլ նրա մահվանից հետո էլ շարունակելով մեծարե՝ նրան կարգեցին իրենց կուռքերի դասին.

«Այսպես են բովանդակում մեր հին պատմիչները մեր Հայկի հերոսական և անգին գործը, քանզի նրանով եղավ մեր ազգի ծնունդը և Բելի՝ այդ հպարտ որսորդի և առաջին Աստծո դեմ ապստամբած մարդու և բռնակալի վախճանը, ինչն, իհարկե, իր ազգի կամ հետևորդների պատմության մեջ լուռ է և անհիշատակ, ինչպես հռոմեացիների մեջ՝ Հռոմուլոսի չարաչար մահը, ինչը ծածկելով հայտարարեցին, թե իբր նա աստվածների կողմից հափշտակվել է: Նույնն արեցին նաև բաբելացիները իրենց վեհագույն առաջնորդին, և ինչպես որ մենք Հայկին, այդպես էլ իրենք Բելին համաստեղությունների մեջ դասեցին»[160]:

Շատ խորհրդանշական է այն փաստը, որ հենց այդ հնագույն ժամանակներում Բել – Նեբրովթի ժառանգներն իրենց առաջնորդին նույնացրեցին այնպիսի մի համաստեղության հետ, որը հայտնի է «Շան համաստեղություն» անվամբ, ինչպես որ Հայկն էր վաղօրոք անվանել նրան: Իսկ Հայկի համաստեղությունը, որը նույնպես այդ ժամանակներում է անվանակոչվել հենց իր անվամբ՝ «Հայկի համաստեղություն», ներկայումս հայտնի է «Աղեղնավոր» կամ «Օրիոն» անվանումներով, որոնք շատ ավելի ուշ շրջանի անվանափոխումներ են (այս մասին՝ հետո):

---

158 Եսայի 14 :13-17

159 Եսայի 14: 3-7, 18-19

160 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 144:

«Հայկը՝ մեր լայնաճակատ հայրը, ուժ տվեց բազկին, լայնալիճ աղեղից նետ արձակեց և խփեց Բելի կրծքին, որը պատուհան բացելով՝ անցավ-խրվեց գետնի մեջ շատ զորավոր կերպով, և երկաթի թանձրությունը չխանգարեց նրան: Այսպիսով, ընկնելով սատկեց հսկա և մսաբլուր Բելը, և ազատվեց մեր ազգը»[161]:

Սուրբ հողում բախվելով հայոց մեծ նահապետ Հայկին և նրա սերունդներին՝ փլուզվեց բաբելոնյան «երկրորդ աշտարակը», և ազատության արժանացան ոչ միայն Արարատյան երկրի բնիկները՝ հայերը, այլև բոլոր այն ազգերը, որոնք ընկել էին Բելի բռնատիրության տակ:

Բաբելացիների փախուստը

«Տերը քավություն չտվեց հին հսկաներին, ովքեր, իրենց զորության վրայ վստահ, ապստամբեցին»[162]:

Բելին որպես անմահ աստված ընկալող մարդապաշտների հսկայական բանակը երբ տեսավ իրենց կուռքի անփառունակ մահը՝ հուսալքվեց և խուճապահար փախուստի դիմեց:



Հայոց բանակը հալածեց բաբելացիներին ու նրանց հպատակներին, դուրս վտարեց Արարատյան երկրի սահմաններից:

Այս մասին հայտնում են գրեթե բոլոր պատմիչները.

«Ասորական զինվորները[163] տեսնելով իրենց առաջնորդի կործանումը՝ սկսեցին փախչել՝ թողնելով նրա մարմինը հաղթողի ձեռքում»[164]:

«Իսկ նրա զորքը փախուստի դիմեց: Եվ նրանք հետապնդելով՝ խլեցին նրանցից ձիերի, ջորիների և ուղտերի երամակները»[165]:

«Ասորեստանցիները խուճապահար սկսեցին փախչել լեռները և իրենց երկրի սահմանները. ջանալով փրկել միայն իրենց կյանքը՝ իրենց երկիրն էլ թողեցին հաղթողին՝ որպես ավար»[166]:

«Պատերազմից և Բելի մահից հետո Հայկյան-

---

161 Վարդան Այգեկցի, Խրատներ, Երևան, 1999, էջ 202:

162 Սիրաք 16:8

163 Պատմիչներից ոմանք Բելի ժողովրդին անվանում են ասորեստանցիներ, սակայն իրականում պետք է լինի բաբելացիներ, քանզի սրանք Քամի սերնդից էին, իսկ ասորիները՝ Սեմի, և այս տարածքներին նրանք տիրապետել են ավելի ուշ:

164 Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888, ст. 26.

165 Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 11:

166 Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 48-49.

ներն ընկան փախստականների ետևից՝ մինչև Արարատի և Ասորեստանի միջև ընկած լեռները»[167]:

«Իսկ ամբոխն այս մեծ քաջագործությունը տեսնելով՝ փախչում է ամեն մեկն իր երեսը դարձրած կողմը: Այսքանը բավական թող լինի այս մասին» [168]:

Գերեզմանք

Համաշխարհային տիրապետություն ստեղծելու Բելի երազանքներն ի չիք դարձան: Սրան չհաջողվեց ո՛չ Բաբելոնի աշտարակը ավարտին հասցնել, ո՛չ էլ միահեծան կերպով համաշխարհային կայսրություն ստեղծել: Չհաջողեց ո՛չ Բաբելոնի աշտարակի գագաթից, ո՛չ էլ աշխարհակալ գահի բարձունքից կառավարել համայն մարդկությանը և նրանցից փառք կորզել:

Մոտ 62 տարի գրեթե ամբողջ աշխարհին իշխելուց հետո նրա անշնչացած մարմինը միայնակ, լքված, իր շքախմբի և հսկա թիկնապահների հոգածությունից թափուր՝ անփառունակ ընկած էր Հայկի և հայ զինվորների ոտքերի առաջ, և շուրջը փռված էին բաբելական զինվորների բազմաթիվ դիակներ:

*Հայկը հրամայեց՝ մոտակայքում թաղել այդ զինվորներին, և **«այն բլուրը, որտեղ Բելն ընկավ քաջ զորականների հետ, Հայկը կոչեց Գերեզմանք, որ այժմ ասվում է Գերեզմանակ»***[169]:

*Իսկ այն վայրը, որտեղ Բելի մարմնից հանվեց Հայկի կողմից արձակված հսկայական նետը, անվանվեց Տշող. **«Մի տեղական ավանդություն էլ մինչև այսօր պատմում է, որ Բելի մարմինը Հայոց Ձորից դեպի Բելու տանելու ժամանակ Ոստանի և Նարեկի մեջտեղում իջեցրեցին, և նետը, որ դեռ կրծքի մեջ խրված էր, դուրս քաշեցին այնպես, որ արևի լույսի շողը երևաց (այդ խոցվածքից), ինչի համար էլ այդ տեղը մինչև այսօր կոչվում է Տշող»***[170]:

Բելի թաղման համար Հայկը հատուկ հոգածություն ցուցաբերեց: Սակայն դա Բելի հիշատակը պատվելու նպատակով չէր: Բելի երազանքն էր՝ մեծ բարձունքից տեսնել և կառավարել համայն աշխարհը, և համայն մարդկությունն էլ հայացքը վեր հառած՝ փառաբաներ ու պաշտեր իրեն:

Մեծահոգի Հայկը զմռսեց հպարտ և իշխանատենչ հսկայի դին, թաղել տվեց նրա երազած բարձունքին՝ լեռան գագաթին՝ ի ցույց մարդկությանը՝ որպես նախատինքի առարկա. որպեսզի տեսնեն, որ Աստծո հանդեպ ըմբոստացածի համար անխուսափելի է անփառունակ վախճանը.

«Այն վայրում, որտեղ նա (Բելն) ընկավ, այնտեղ գերեզման կառուցեց և այն կոչեց Գերեզմանք, որպեսզի այն ազդարարի թե՛ ժամանակակիցներին և թե՛ սերունդներին, թե ինչպիսի վախճան է ունենում հպարտ իշխանատենչը»[171]:

---

[167] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 145:
[168] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 89:
[169] Նույն տեղում:
[170] Ղևոնդ Ալիշան... էջ 144:
[171] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 49.

Բարձունքում գտնվող այդ գերեզմանի խորհուրդը պիտի դառնար զգուշացում և սպառնալիք՝ Միջագետքի ու աշխարհի բռնապետերի և Արարատյան երկիրը նվաճել ցանկացողների համար:

Հետագայում կտեսնենք, որ այն ազգերը, ովքեր անմտորեն արհամարհեցին այդ բարձունքի խորհուրդը, արժանացան Բելի ճակատագրին:

Հայաստանի վրա երբևէ հարձակված կայսրությունները՝ բաբելացիները, ասորեստանցիները, խեթերը, հռոմեացիները, պարթևները, հոները և այլոք, վերացան պատմության ասպարեզից:


Եվ ըստ վավերական տարբեր մարգարեությունների՝ այդ երկրների ցանկը շատ շուտով կլրացնի Թուրքիան:

Իսկ Հայաստանն Աստծո կամոք կա և, համաձայն Նրա անփոփոխ խոստման և մեկնիչների հավաստման, պիտի մնա մինչև աշխարհի վախճանը:

Իսկ թե Հայաստանի ո՞ր բարձունքի վրա թաղեցին Բելին, այդ մասին կան երկու հիմնական վարկածներ:

*Մեծ Հայքի տարածքում և մերձակայքում կան երկու լեռներ, որոնք կրում են Նեմրութ անունը. **«Նեմրութ, Նեմրուդ, Սարակն՝ հրաբուխ հայկական լեռնաշխարհում, Վանա լճի արևմտյան ափին, Բզնունիք գավառում»**[172]:*

Այդ լեռներից մեկը գտնվում է Վանա լճի մոտ: Սրա գագաթին կան մի քանի լճակներ. սա հանգած հրաբուխ է, որի ձագարները լցված են ջրով:



Նեմրութ անվամբ լեռ կա նաև Հայաստանի հարավային սահմաններում գտնվող Տավրոսի լեռնաշղթայի՝ Կոմմագենեի երկրում [173]:

Կոմմագենեի Նեմրութը հավանական է այնքանով, որ սա գտնվում էր Ասորեստանի սահմանների մոտ: Բելի հետնորդների համար այդ լեռը տեսանելի էր: Նույնը չի կարելի ասել Վանա լճի մոտ գտնվող տարածքի մասին.

***«Բելի դիակը, ասում է (Մար Աբասը), դեղերով զմռսելով՝ Հայկը հրամայում է տանել Հայք և թաղել մի բարձրավանդակ տեղում՝ ի տես իր կանանց և որդիների»**[174]:*

Հետագայում այդ լեռան վրա կառուցվեց հեթանոսական պաշտամունքի վայր և դամբարան, ինչն էլ հնարավոր է, որ առնչված լինի Բելի՝ կռապաշտության հիմնադրի գերեզմանատեղի հետ:

*Եղել է նաև կարծիք, որ Բելն իբր սարի գագաթին չի թաղվել: Սակայն դա լուրջ հիմնավորումներ չունի. **«Այստեղ՝ Ռշտունյաց գավառի գլխին, Բելու անվամբ մի գյուղ կա, որի մասին մինչև այսօր գյուղացիները պատմում են, թե ի***

---

[172] Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 8,Երևան, 1982, էջ 213:
[173] Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 8,Երևան, 1982, էջ 219:
[174] Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան, 1968, էջ 89:

հիշատակ Բելի է այդպես կոչվել, քանզի նրան սպանելուց հետո այստեղ են բերել և թաղել» [175]։

Եվ այսպես, Արարատյան երկրում մեծ ուրախություն էր տիրում։ Այս մեծ հաղթանակի համար բոլորը գոհանում էին Արարչից ու փառավորում հաղթանակ Պարգևողին, շնորհակալության զոհեր էին մատուցվում բարձրյալ Աստծո հովվապետ Նոյ Նահապետի կողմից. ***«Համայն աշխարհի ժողովուրդներին հայտնի եղավ այս պատերազմի խորհուրդը, որ հաստատվեց այստեղ, և այն օրը, երբ Ջրհեղեղից ազատվելու կապակցությամբ երախտապարտ մարդկությունը սահմանեց Նավասարդի մեծ տոնը, այդ նույն օրն էլ առաջին անգամ տոնվեց մեծ հաղթանակի տոնը, որին մասնակցում էին նաև արդեն ծերացած Նոյը և Թորգոմը։***



Մերունի հայր Թորգոմը դափնիով պսակեց և տվեց գավազանն իր անդրանիկ որդուն՝ Հայկին, որ բնակվում էր Մասիսի ստորոտին՝ Այրարատյան ճոխ նահանգում...» [176]։

Հայոց մեծ նահապետը՝ Հայկը, բոլորի կողմից գովաբանվում էր՝ որպես հավատքի, հայրենիքի և ազգի ազատարար։ Նա ազատություն պարգևեց թե՛ իր և թե՛ շրջակա երկրներին։ Այդ ազգերն էլ սիրով հպատակվեցին Հայկին. ***«Եվ Թորգամոսի ամբողջ ցեղը անկախություն ձեռք բերեց։ Իսկ Հայոսը իրեն թագավոր կարգեց իր բոլոր եղբայրների և իրեն սահմանակից մյուս ցեղերի վրա։ Եվ այդ բոլոր յոթ եղբայրները, որ ցրվեցին իրենց երկրները Հայոսի հպատակության տակ էին»***[177]։

Եթե հաղթեր Բելը, հայոց ազգը կոչնչանար, և ամբողջ աշխարհով մեկ կռապաշտության խավարը կտիրեր։

Սակայն Նախախնամության կամոք ամեն բան այլ կերպ դասավորվեց, ինչի շնորհիվ այդ հեռավոր ժամանակներից մինչ օրս՝ գոյություն ունի Հայոց երկիրն ու ազգը և շարունակում է դավանել նույն Աստծուն, որի համար ավելի քան 4500 տարի առաջ Հայկ Նահապետը մեր բարեպաշտ նախնիներին առաջնորդելով՝ մտավ կենաց - մահու պայքարի մեջ։

«Եթե Բելը հաղթեր մի մեծ բան չէր վաստակի, բայց Հայկի պարտվելով՝ թերևս աշխարհի հնագույն ազգերից մեկը գոյություն չէր ունենա . ուրեմն, սա ոչ թե երկու հակառակորդների կյանքի ու մահվան հարց էր, այլ մի ազգի և ազատության. և դա մեր ազգն էր։ Թելից էր կախված մեր ազգի բախտը, այդ բանը լավ գիտեր նաև մեր ազգահայրը» [178]։

---

[175] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 141:
[176] Հայր Արսեն Բագրատունի, Հայկ դիւցազն, վեպ, Վենետիկ, 1858, էջ 19:
[177] Мровели Леонти, Жизнь картлийских царей, Москва, 1979, ст. 23.
[178] Ղևոնդ Ալիշան... էջ 143:

Հայկը Բելին սպանեց Աստծո օգնությամբ

«Հայոց թագավորը Աստծո ձեռքով է սպանել Բելին»[179]:

*Հայկը միշտ եղել է աստվածապաշտ, Նոյ նահապետի հավատքի արժանավոր ժառանգորդ: Նա կարող էր համարվել ոչ միայն մի ազգի նահապետ և հերոս, այլև կարգվել Աստվածաշնչյան նահապետների հետ սրբոց դասում: Դրա համար բոլոր հիմքերը կային: Քանզի նա Աստծո օրհնությամբ և մղմամբ ելավ պատերազմելու Բելի դեմ, ով ամեն բան անում էր սատանայի ներգործությամբ և մղմամբ. **«Հայկը, Աստծո կողմից խրախուսված, սպանեց Բելին՝ պատկերապաշտության առաջնորդին»**[180]:*

Այս պատերազմի դրդապատճառները ոչ այնքան քաղաքական էին, որքան կրոնական: Եթե Նեբրովթը մնար սուրբ հավատքի մեջ առ Աստված և Հայկին հպատակության առաջարկ աներ, շատ հավանական է, որ Հայկն այդպիսի բարեպաշտ արքային բարեկամ և ավագ եղբայր համարեր և ընդուներ նրա գերակայությունը (ինչպես Բաբելոնում Նեբրովթից հետո երկրորդը լինելը Հայկը նվաստացում չէր համարում):

*Սակայն Նեբրովթը հեռացավ Աստծուց, Հայկն էլ հեռացավ Նեբրովթից: Ինչի համար էլ եղավ այս կենաց-մահու կռիվը. **«Աբեթածին Հայկը չկամեցավ հնազանդվել Բել արքայի ծառայությանը. հրաժարվեց նրան աստված կոչել»**[181]:*

*Եվ ուրեմն, այս պատերազմը հոգևոր էր. **«Թշնամու գնդերը վռնդելով հաղթական խնդությամբ՝ ժողովվեցին Հայկի մոտ՝ ոչ այնքան իբրև իրենց, այլ Աստծո թշնամիների հաղթող համարվելով»**[182]:*

Հետագայում կտեսնենք, որ Հայոց հողում նմանատիպ երկու պատերազմներ էլ եղան. բարեպաշտ նահապետի օրինակով նրա ժառանգները 4-րդ դարում պիտի ելնեին Հռոմի հեթանոս կայսրության դեմ, իսկ 5-րդ դարում՝ կրակապաշտ պարսկական բռնապետության դեմ:

Այդ մասին ևս կխոսվի իր տեղում:

***«Հայկի պատերազմը Բելի դեմ, որը նույնացված է Բաբելոնի հիմնադիր և աշտարակաշինության նախաձեռնող ու ղեկավար Նեբրովթի հետ, ոչ այլ ինչ էր, քան կրոնական պատերազմ՝ սկզբնական Միաստվածության (Հայկ) և նորածին բազմաստվածության (Բել) միջև»**[183]:*

Բելի բազմաթիվ տխրահռչակ անվանումներից մեկն էլ, ինչպես վերևում

---

[179] Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Ը, Երևան, 1985, էջ 149:

[180] Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 149:

[181] Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005, էջ 7:

[182] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904, էջ 141:

[183] Ռաֆայել Պապայան, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (7), 2005, էջ 144:

*նշվեց, «Տիտանն» էր. **«Բելը, որի հետ կռվում է Հայկը, «Տիտանյան» է, այսինքն՝ Տիտանի սերունդից մի թագավոր է, որ իրեն իբրև աստված պաշտել տալով՝ «Բոլոր ազգերին ստիպում է, որ իրեն ծառայեն»»*** [184]։*

Հետաքրքիր է, որ Հովհաննու Հայտնության մեկնիչներից ոմանք գալիք նեռի ինքնությունը պարզելու համար ուշադրությունը սևեռում են հատկապես դերաքրիստոսի թվի՝ 666-ի վրա։ Իսկ այդ թվի վերծանումից ստացված անուններից մեկը, ըստ սբ. Իրինէոսի և այլոց, Տիտանն է։

Հետևություն է արվում, որ Տիտանյան Բել Նեբրովթը առաջին նեռն է և բուն նեռի խորհրդանիշը։

Նրանից հետո աշխարհ եկան բազում այլ նեռեր, սակայն միայն աշխարհի վախճանին պիտի գա բուն դերաքրիստոսը՝ նեռը, որին ևս, ինչպես Բելին, Տիտան կանվանեն։

«Տիտան բառը հունարենում բաղկացած է 6 տառերից և տալիս է խորհրդավոր 666 թիվը** «τειταν» = **300+5+10+300+1+50= 666։

Տիտան է անվանվել երբեմն նաև արեգակը, իսկ արեգակը այն աստվածությունն էր, որին այդքան սիրում էր Ներոնը (Ֆարրա)... Արևը ներկայիս տիրակալների կողմից կոչվում է Տիտան, ինչը որոշ ակնարկներ է պարունակում վրիժառության և վրիժառուի մասին. դերաքրիստոսն էլ իրեն պետք է ներկայացնի իբր հալածվողների վրիժառու։ Բացի այդ, դա հին անուն է, որ ավելի համապատասխան է բռնակալին։ Այսպիսով, եթե Տիտան անունն իր օգտին այդքան շատ հիմնավորումներ ունի, ուստի շատ հավանական է ենթադրել, որ գալիք դերաքրիստոսը հնարավոր է, որ կոչվի Տիտան» [185]»[186]։*

Ծավալուն այս աշխատության վերջին բաժնում քննարկվելու են Աստվածաշունչ մատյանի Հովհաննու Հայտնության մեջ հիշատակված դերաքրիստոսի՝ նեռի աշխարհակալ ձգտումները, իր պաշտամունքը համայն մարդկությանը պարտադրելու փորձերը, ապա և Հայաստանի մարտնչող կեցվածքն այդ ողջ ժամանակաշրջանում։

Արդեն ասվել է, որ կրկնվելու է նույն պատմությունը, ինչը եղավ Հայկի և Բելի ժամանակ։ Նորից ամբողջ աշխարհը պիտի գրավվի, և բոլոր պետությունները պիտի ներքաշվեն նեռի պաշտամունքի մեջ։ Այդ ժամանակ նեռի դիվական, աշխարհակուլ բանակը նորից կհարձակվի Հայաստանի՝ առաջին քրիստոնյա երկրի վրա, որն այս անգամ էլ կմնա՝ որպես աշխարհի միակ, արդեն վերջին քրիստոնյա պետություն։

Եվ ինչպես Հայկը երկնային զորությամբ ոչնչացրեց առաջին նեռ Բելին, այդպես էլ Հայոց երկրից պիտի լինի վերջին նեռի՝ դերաքրիստոսի կործանումը։ Նրան սատակեցնող Տերը՝ Հիսուս Քրիստոս, երկնային փառքով, կարապետված Սուրբ Խաչով, պիտի գա Աստվածաշնչյան Արևելքից՝ բուն Հայաստանի տարածքից (նրա երկնակամարով)։

---

[184] Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Ը, Երևան, 1985, էջ 151:

[185] Тв. Иринея, кн. 5, гл. 20, 28-30.

[186] Апокалипсис святого Ионна Богослова, сборник святоотеческих и богословских истолкований, составител М. Барсев, Св.Троицкая Сергиева Лавра, 1999, ст. 191.

Իսկ Հայկը իր պատմական դերով Քրիստոսի նախակարապետն է և խորհրդանիշը։

Նույնիսկ Հայկի նետարձակումն էլ նման է այն կերպին, որով Տերը պիտի ոչնչացնի բուն նեռին. նետն արձակելիս՝ նշանառության համար մոտեցնում են բերանին, ինչպես և Տերը Իր Բերանի Շնչով պիտի ոչնչացնի այդ վերջին չարին[187]։

Նախաառաջին համաշխարհային պատերազմը հոգևոր մեծ պատերազմ էր Լույսի և խավարի, Բարու և չարի, Աստվածպաշտության և կռապաշտության միջև։ Եվ այդ առաջինը կարելի է դիտել՝ որպես վերջինի խորհրդանիշը.

«Այսպես է ասում ավանդությունը. «Պատմության մեջ հայտնի առաջին պատերազմն ավարտվեց այսպես. իշխանատենչությունն ու նախանձը բորբոքեցին նրան (Բելին), իսկ կյանքի հանդեպ, առավել ևս հայրենիքի անկախության հանդեպ սերը (Հայկի կողմից) արգելք հանդիսացան այդ ամենին... Այն ցավալի ժամանակներից արյան ծովերը կլանել են գավառների և ամբողջ ազգերի։

Բարոյա-փիլիսոփայական պատմության մեջ Հայկին և Բելուսին կարելի է համարել առաջին ներկայացուցիչները այն բանի, ինչը բաժանում է մարդկային ցեղի ընտանիքը։ Ի դեմս Բելուսի՝ տեսնում ենք բռնություն և իշխանատենչություն, ամեն ինչ ստրկացնելու և ոչնչացնելու ծարավ, իսկ ի դեմս Հայկի՝ հանդիպում ենք մարդկության իրավունքն ու անկախությունը պահպանող մեծահոգի արիության»[188]։

*Այս մեծ հաղթանակով Արարատյան երկրում և նրա շրջակայքում բարեպաշտությունը հաստատուն մնաց։ Դեռ կտեսնենք, որ հայ ազգը մշտապես եղել է բարու և չարի պայքարի կիզակետում՝ մեկ՝ անհաջողություն կրելով, մեկ՝ հաղթելով. **«Այս մեծագործությամբ մեր նախահայր Հայկ Նահապետը, ի դեմս հայ ժողովրդի, առաջինը ոտքի ելավ կռապաշտության և բազմաստվածության դեմ պայքարի և Բելին չաստված հռչակած ամբոխին ցույց տվեց, որ Բելը (Նեբրովթը) մարդկությանը ճշմարիտ Աստծուց հեռացնող աստվածամերժ բռնակալ է։ Այս «արիության գործը» ցույց է տալիս նաև, որ հայ ժողովրդի ծննդյան վկայականը հոգևոր ազատամարտն է»[189]։***

Հաղթանակից հետո Հայկը հոգ է տարել թե՛ իր, թե՛ հպատակ երկրների բարգավաճման համար։

*Այդ շրջանում էր, որ Արարատյան երկիրը անվանվեց Հայք. **«Հայկը երկիրն իր անունով կոչեց և դրանից հետո տիրեց մնացյալ ամբողջ աշխարհին՝ նրա արևմուտքին և հյուսիսին»[190]։***

Տիրոջ կողմից շնորհված այդ մեծ և հրաշալի հաղթանակի կապակցությամբ, որպես գոհունակության նշան, Հայկը մտածում էր մի հուշակոթող կառուցել։ Մինչ նա խորհում էր այդ մասին, ըստ Աղթամար կղզու Աթոռի դիվանատան մայր կոնդակի, նրան տրված աղեղի հայտնությունից հետո երկնային մի այլ հայտնությամբ ասվում է, որ այդ վայրում մի բերդ կառուցի։

---

187 Բ Թեսա. 2:8

188 Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 49-50.

189 Ռաֆայել Համբարձումյան, Հանգանակ հայ ինքնության, Երևան, 2010, էջ 8:

190 Ուխտանես Եպիսկոպոս, Հայոց Պատմություն, Երևան, 2006, էջ 33:

Հայկն էլ պատերազմի դաշտին մոտիկ մի բերդ է կառուցում՝ այն կոչելով Աստվածաշեն։

*Հայոց Ձորում այդ մեծ պատերազմի հետ կապված մնացել են բազմաթիվ հիշատակություններ, շինություններ, սակայն, ինչպես ասում է Ալիշանը, Աստվածաշենը դառնում է այդ ամենի պսակը. **«Այս բերդը, որ Հայոց Ձորի կառույցների գլուխն ու պսակն էր՝ ի հիշատակ Հայկի ու իր որդիների, որոնք մեծամեծ գործեր կատարեցին և փոքրաքանակ լինելով հանդերձ՝ շատերին հաղթեցին, ի երախտիք գերագույն Նախախնամության՝ կոչեցին Աստվածաշեն՝ մեր երկրի շինվածքներից ամենավսեմագույն և հնագույն անունը, ինչը, բարեբախտաբար, մնացել է մինչև այսօր՝ թեև ոչ բերդի վրա, այլ նրա արևելյան կողմում գտնվող գյուղի վրա, որը դեռ շեն է և հայաբնակ, և այնտեղ բնակվում է Հայկի սերունդը, որի համար հետևյալ գրավոր ավանդությունը ասում է. «Նրանից հետո նրա ազգականները մնացին Աստվածաշեն բերդում»»*[191]։

*Ըստ ավանդության՝ Հայկը պատերազմի դաշտին մերձ՝ լճի ափին ևս մի քաղաք է կառուցում. **«Ի հիշատակ այս հաղթանակի, որը սկիզբ դրեց ինքնուրույն հայկական թագավորությանը, Հայկը լճի ափին հիմնեց Տուշպա քաղաքը, որից հետագայում առաջացավ ներկայիս Վանը»**[192]։*

Նման աշխարհաքաղաքական դիրք ունենալը և մշտատև պայքարի մեջ լինելը կարող էր հանգեցնել նրան, որ հայ ժողովուրդը վերանար պատմության ասպարեզից։ Բայց Նախախնամությունը հավիտենական պահպանություն է խոստացել Արարատյան երկրին և Հայկի անունով հարատևող հայոց ազգին։

Ամփոփում

«Ահա թե ինչ գործեց մեր հայր Հայկը, որ Հաբեթի որդիներից էր, և որի անունով մենք Հայք կոչվեցինք»[193]։

Արարատյան երկիրը, որ մինչ Ջրհեղեղը կոչվում էր Արևելք և Եդեմ, Հայկ նահապետի անվամբ սկսեց անվանվել նաև Հայք, Հայասա, Հայաստան։ Հայկի անվան հիշատակը միշտ արթուն է մնացել հայ ժողովրդի մեջ՝ որպես հայ ազգի նահապետ, սուրբ հավատքը կրող և համաշխարհային չարիքի դեմն առնող։

Հայկի և իր հայ սերնդի անխորտակության ցուցադրում է նաև այն, որ դեռ Խորհրդային աստվածամերժ պետության կառավարման ժամանակ Երևանում տեղադրվեց աղեղնավոր Հայկի արձանը։

«Հայկի անունը հայ ժողովրդի համար հարատևող սրբություն է։ Նա մեր անվանադիր ու փրկարար նախնին է»[194]։

---

191 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 146:

192 Лагов Н. М., Армения, Очерки прошлаго, природы, культуры и пр., Петроград: Н. П. Карбасников, 1915., ст. 1-2.

193 Վարդան Այգեկցի, Խրատներ, Երևան, 1999, էջ 202:

194 Լևոն Միրիջանյան, Աստվածաշունչը և մենք, Սբ. Էջմիածին, 2009, էջ 62:

Մի՞թե նման անհատականությունը միայն հայ ազգի կողմից պիտի մեծարվի:

Վերջին՝ վեցերորդ գրքում կանդրադառնանք այն խնդրին, որտեղ Հայկը Նոյ նահապետին արժանի փոխարինող է հիշվում քրիստոնյաների, մահմեդականների և հրեաների մոտ, և նրա խորհրդավոր կերպարը դարեր շարունակ տարբեր մեկնությունների առիթ է եղել. ***«Իսկ Հաբեթի Գամեր որդու Թորգոմի որդի Հայկը լեզուների խառնվելուց հետո իր առանձին խմբով վերադառնալով Հայաստան՝ չհոժարեց պաշտել Նեբրովթին, ուստի իր երեքթևյան նետի հարվածով վերջ տվեց նրա կյանքին և սկսեց ազատ պաշտել իր հայրերի ճշմարիտ Աստծուն, որ Նոյը Հայաստանի մեջ պաշտում էր, և նա՝ Նոյը, այդ նույն ժամանակ 840 տարեկան էր»***[195]*:*



Հայկից հետո էլ դեռ երկար ժամանակ Հայոց հողում պաշտում էին միակ և ճշմարիտ Աստծուն՝ երկնքի և երկրի Արարչին:

«Իսկ կռապաշտությունը Հայաստանի մեջ սկսվեց Նոյի մեռնելուց շատ տարիներ հետո»[196]*:*

Այո: Հեթանոսությունն ու կռապաշտությունն այստեղ հետագայում ներմուծվեցին: Սրանք մեզ համար երբեք հարազատ և սեփական չեն եղել, քանզի օտարոտի կրոններ էին: Պարսկական, հունական, ասորական, հռոմեական և նույնիսկ հնդկական կրոնների մի խառնուրդ է ծավալվել Հայաստանում՝ Ճշմարիտ աստվածպաշտությունից հեռանալուն զուգահեռ...

Եվ միայն քրիստոնեություն ընդունելով է, որ մենք նորից վերադարձանք մեր հարազատ հավատքին, որի համար մեր նահապետն ու նախնիները ազգովի մարտնչել են.

«Այն իրողությունը, որ սբ. Գրիգորի ձեռքով 301թ. հարյուր հազարավոր հայեր միասնաբար մկրտվեցին, և որ քրիստոնեությունը առաջինը ազգովի ու պետականորեն հայերս ընդունեցինք, պատահական չէր:

Դա այդպես է, քանի որ սբ. Վարդանի բնորոշումով՝ հայության համար «քրիստոնեությունը ոչ թե հագուստ էր», այլ՝ «մարմնի գույն»: Իսկ Գարեգին Ժդեհի համոզումով՝ «Սկզբից ի վեր հայությունն ու իր քրիստոնեությունը ձուլված են ի մի բնություն: Այս երկուսի ճակատագիրը նույնացած է»: Հետևաբար, հայերս 301 թվականին ոչ թե հեթանոսությունից հրաժարվեցինք, այլ վերականգնեցինք մեր միաստվածությունը»[197]*:*

---

[195] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 42:

[196] Նույն տեղում:

[197] Ռաֆայել Համբարձումյան, Հանգանակ հայ ինքնության, Երևան, 2010, էջ 10-11:

«Դրախտից» և «Արարատից» հետո «Հայկ և Բել» վերնագրի տակ ներկայացված է երրորդ մեծ առանձնաշնորհը, ինչը, ըստ Սերգեյ Գլինկայի, մեկ ազգի համար արդեն իսկ բավական մեծ բան է.

«Հայերի համար բավական է այն, որ նրանք առաջինը դիմակայեցին բռնությանը հենց այն երկրում, ուր վերածնվեց մարդկային ցեղը. հայերի համար բավական է նաև այն, որ առաջին բռնակալը՝ մարդկության առաջին թշնամին, հալածվեց իրենց երկրում. հայերի համար բավական է այն, որ իրենց երկրում ստեղծվեց առաջին կանոնը, թե ինչպես պետք է դիմակայել մոլեգին բռնությանը՝ կանոն, որ իր մեջ պարունակում է խորաթափանց զգուշավորություն, ճիշտ ընկալում և համընդհանուր ինքնամերժում, ինչը գոյություն ունի այնտեղ, ուր հայրենիքի հանդեպ ունեցած սերը գերազանցում է զենքի ուժին»[198]:

Նմանօրինակ այլ առանձնաշնորհների մասին առաջիկայում դեռ կխոսվի:

Ամփոփելով կրկնենք, որ Ջրհեղեղից հետո մարդկության հայրենիք Հայաստանից Նոյի սերունդն իջավ Բաբելոն և ցրվեց աշխարհով մեկ:

Հայոց սուրբ հողի վրա էր, որ կռապաշտության համար տեղ չգտնվեց, և պահպանվեց Աստծո հանդեպ սուրբ հավատը: Այս երկրում էր, որ հնում եղավ առաջին համաշխարհային պատերազմը՝ բարու և չարի միջև, և այստեղ էր, որ հայոց բարեպաշտ նահապետ Հայկի կողմից արձակված նետից ընկավ առաջի նեռը՝ Նեբրովթ - Բելը:

[198] Сергей Глинка, Обозрение истории Армянского народа, Москва, 1832, ст. 50-51.

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստուածաշունչ, Արևելահայերեն նոր թարգմանություն, Ս. Էջմիածին, 1994:
2. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
3. Արսեն Բագրատունի, Հայկ դիւցազն, վեպ, Վենետիկ, 1858:
4. Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց, Մատենագիրք Հայոց, հ. 1, Անթիլիաս-Լիբանան, 2003:
5. Եւսեբի Պամփիլեայ Կեսարացւոյ Ժամանակականք երկմասնեայ, հրտ. Հ. Մ. Աւգերեան, Վենետիկ, 1818, հատ. Բ:
6. Թովմա Արծրունի և Անանուն, Երևան, 1978:
7. Ժագ Դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947:
8. Լևոն Միրիջանյան, Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:
9. Լևոն Միրիջանյան, Աստվածաշունչը և մենք, Սբ. Էջմիածին, 2009:
10. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992:
11. Հայկական Սովետական Հանրագիտարան, հատոր 8,Երևան, 1982:
12. Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր Ա, Վենետիկ1835 :
13. Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:
14. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան 2002:
15. Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Ը, Երևան, 1985:
16. Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, ժամանակագրութիւն տեառն, յԵրուսաղէմ, 1871:
17. Միքայել Չամչեանց, Հայոց Պատմություն, Ա հատոր, Երևան, 1985:
18. Մովսես Խորենացի, Պատմություն Հայոց, Երևան 1968:
19. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, Երևան, 1969:
20. Ջեյմս Բրայս (Անգլիայի հասարակական խորհրդի անդամ), Վերելք Յարարատ, Կ. Պոլիս, 1890:
21. Ռաֆայել Համբարձումյան, Հանգանակ հայ ինքնության, Երևան, 2010:
22. Ռաֆայել Պապայան, Հայաստանում քրիստոնեության ընդունման հոգևոր նախադրյալները, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (7), 2005, էջ 146:
23. Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001:
24. Սեբեոս, Պատմություն, Երևան, 2005:
25. Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896:
26. Վարդան Այգեկցի, Խրատներ, Երևան, 1999:
27. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001:
28. Ուխտանես Եպիսկոպոս, Հայոց Պատմություն, Երևան, 2006:

29. Андрей Битов. Уроки Армении. Ереван 1978.
30. Апокалипсис святого Ионна Богослова, сборник святоотеческих и богословских истолкований, составител М. Барсев, Св.Троицкая Сергиева Лавра, 1999.
31. Библейский словар, Доктор Эрик Нюстрем 19-й в., 1989.
32. Виктор Абаза (Русский историк и военный деятел, генерал 1831-1898), История Армении, С. Петербургь, 1888.
33. Генри Геллей, Краткий Библейский толкователь, Канада, 1989.
34. Дэвид Рол - известныи британскйи писатель и археолог, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005.
35. Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000.
36. Ковалевский Е. П., Гора Арарать, С.-Петербургь, 1903.
37. Лагов Н. М., Армения, Очерки прошлаго, природы, культуры и пр., Петроград: 1915.
38. Легенда о Докторе Фаусте, издание подготовил В. М. Жирмунцкий, Москва-Ленинград, 1958.
39. Лопухина А. П., Толкования Библия, 1, Петербургь, 1904-1907.
40. Мровели Леонти, Жизнь картлийнских царей, Москва, 1979.
41. Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002.
42. Святитель Филарет Дроздов, Толкование на книгу Бытия, Москва, 2004.
43. Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832.
44. Зинуров Рафаиль Наримановичь (Уфаеци), Армения-путь тысячелетий, том I, Москва 2010 г.
45. Филон Александрийский, Толкования Ветхого Завета, Москва, 2000.

ԳԻՐՔ IV

Երկիր, որտեղ գործածության մեջ է Դրախտի լեզուն

«Մենք չենք սխալվի և միանգամայն հարազատ կմնանք հայ պատմաբաններին, եթե ասենք, որ նրանց ազգը և լեզուն ամենահինն են աշխարհում և իրենց սկիզբն առնում են հենց նախահայր Ադամից»[1]:

Այս բաժնում կաշխատենք հստակեցնել լեզվի հետ կապված մի քանի առեղծված:

Նախ այն, թե արդյո՞ք լեզուները ճյուղավորվել են մի սկզբնական լեզվից, թե առաջացել են առանձին-առանձին՝ միմյանցից անկախ:

Եվ երկրորդ՝ եթե բաժանվել են մի մայր լեզվից, ապա ո՞րն է այդ լեզուն, որտե՞ղ է նրա հայրենիքը, և արդյոք այն պահպանվե՞լ է:

Մենք մտադիր չենք բազմակողմանիորեն անդրադառնալ լեզվական խնդիրներին, այլ հենվելով Սուրբ Գրքի և լեզվաբանական ու այլ նյութերի վրա՝ հաստատել, որ բոլոր լեզուներն սկիզբ են առել մի մայր լեզվից, և որ այդ լեզուն հայերենն է:

Շատ լեզվաբաններ են խոսել լեզվի ծագման, նրա զարգացման և ճյուղավորման մասին՝ ներկայացնելով իրենց տեսակետները:

*Հայագետ Նիկողայոս Մառը գրում է. **«Իսկ ի՞նչ է լեզուն: Դա մարդու ներքին կյանքի բացահայտումն ու ճշմարտությունն է, ոչ միայն բանավոր կամ գրավոր խոսք է, այլև մարդկության մեծագույն հուշարձան, ինչպես նյութական, այնպես էլ հասարակական-հոգևոր կյանքում»[2]:***

***«Լեզուն Աստծո նշանավոր պարգևներից մեկն է, որին մեծապես կարոտ է մարդը՝ իր նմանի հետ ապրելու և զարգանալու համար: Պարտավոր է հարգել և այն գործածել վայելուչ կերպով՝ Աստծո փառքի, մարդկանց և ազգի օգտի համար»,-** հավաստում է Գրիգոր քահանա Մանդակունին[3]:*

Որ Հայոց ազգին Նախախնամությունն անպատկերացնելի շնորհներ է պարգևել, այդ մասին մասամբ խոսվեց սույն աշխատության երեք գլուխներում:

Սակայն ցավոք, ըստ արժանվույն չենք գնահատում ի վերուստ տրվածը և մեր հայացքը հաճախ սևեռում ենք նվաստ արժեքների վրա:

Հայերիս մի զանգված, արհամարհելով մայրենին, ձգտում է քաղաքակիրթ

---

1 М. Аховъ Очерки изъ истории Армянскаго государства, С. Петербургъ, 1897, ст.4

2 Николай Марр, Армянская культура, Ереван, 1990, ст. 10.

3 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

երևալ՝ մոռանալով հայոց լեզուն, նրա շեշտադրումն ու մեղեդայնությունը և աղավաղումներով խոսում է օտար լեզուներով՝ անգամ Հայաստանում։

«Շատերն էլ անտեղյակ լինելով հայոց լեզվի պատվականությանն ու հնությանը, ոչինչ են համարում այն... այդ լեզվի հարգը չճանաչելով՝ այն իզուր արհամարհում են, որով անպատիվ են դարձնում ազգը, նրա հետ և իրենց, որ ազգի մասն են»[4]։

Այդ օտարամոլությունը, ցավոք, նոր չէ։ Ժամանակին Արևմտյան Հայաստանում բարձր խավի մեջ խոսում էին ֆրանսերեն և նույնիսկ՝ թուրքերեն։

Խորհրդային տարիներին ֆրանսերենը փոխարինվեց ռուսերենով, որը Հայաստանում դարձավ գերիշխող լեզու։ Իսկ այժմ, երբ Արևմուտքի դռներն են բացվել, արդեն նախընտրում են անգլերենը։ Իհարկե, բոլոր լեզուներն էլ կարևորում ենք, սակայն ոչ երբեք հայերենը գահընկեց անելու, և դրանք հայոց լեզվի գահին բազմեցնելու հաշվին։

«Այն օրից, երբ մեր դպրոցներից ներս մտավ օտար լեզուների ուսուցումը, այդ լեզուների մեջ առաջադիմելով բավականին... պարոններ և օրիորդներ սկսեցին խրոխտ-խրոխտ եվրոպական լեզուներով խոսել, իսկ հայերեն խոսելու ժամանակ սկսում են կմկմալ և ծամծմել, ապա և այն իբր լրացնում են ֆրանսերենով, ռուսերենով, թուրքերենով, միևնույն ժամանակ էլ սկսում են մեղադրել հայերենին՝ ասելով. «Ա՛խ, այս մեր հայոց լեզուն ինչքա՛ն պակաս և կրճատ է»»[5]։

Մինչդեռ հայերենն այն լեզուն է, որ արժանացել է հայ և այլազգի ծանրակշիռ լեզվաբանների ու մշակութային գործիչների հիացմունքին։

Հայերենի կարևորությունը հայ քրիստոնյայի համար հոգու փրկության հոգածությանը հաջորդող դիրքում է դասում մեծ հայրենասեր և հայագետ Ղևոնդ Ալիշանը.

«Ով հայորդի, ով հայ պատանի, լավ քաղաքացի լինելու համար պետք է քննել և սովորել հայերեն։ Այս է առաջին ուսումը հանդերձյալ կյանքի ուսուցումից հետո։ Քննեցեք և սովորեք այդ ազնիվ և բարեբեր Հայաստանը՝ որպես ձեր հայրենիք և համայն աշխարհի դայակ, քննեցեք դրա բնակազմությունը, քննեցեք դրա բարոյականը, քննեցեք դրա հարուստ լեզվի բարգավաճումը, քննեցեք վերջապես իր կրոնի մաքրության և ծիսական վայելչության մեջ։ Այդ քննությունը և ուսմունքը կհորդորեն ձեզ՝ առավել հարգելու հայրենիքը և մշակելու այն։ Քանզի այս է Արարչի կողմից մարդկության հորը տրված առաջին պատվիրանը և տրված է հենց մեր երկրի մեջ՝ մշակել և պահպանել այն» [6]։

Գլոբալացման այս ժամանակաշրջանում, երբ աշխարհն ուղղորդվում է դեպի միակենտրոնություն (ջանում են ձևավորել ազգային պատկանելությունից զուրկ, համաշխարհային ժողովուրդ՝ մեկ ընդհանուր լեզվով, նույն բարքերով, սովորություններով և օրենքներով), բազմաթիվ ազգեր երկրագնդի տարբեր ծայրերում աշխատում են պահպանել իրենց հավատքը, ավանդությունները, ազգային սովորույթները և լեզուն։

---

[4] Պողոս Պատրիարք Ադրիանուպոլեսցի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին 2002 է., էջ 66:

[5] Գարեգին Սրվանձտյանց. Երկեր, Հատոր 1, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978, էջ 35:

[6] Ղեւոնդ Ալիշան, «Յուշիկք հայրենեաց Հայոց», հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920, էջ 71, 62-64:

Ստեփան Զորյանն ասում է. ***«Իր մայրենի լեզուն վատ իմացողը կես մարդ է, չիմացողը՝ թշվառ, ծառից ընկած մի տերև, որ տարվում է ամեն մի պատահական քամուց»***[7]*:*

Հրատապ պահանջ և ժամանակի մարտահրավեր է՝ ջանքերը մեկտեղել ազգային մեծագույն արժեքների՝ հատկապես հայոց լեզվի անաղարտության պահպանման համար՝ համահարթման քաոսի ներկայիս պղտոր հորձանուտում: ***«Արդ, թեպետ արտաքին վնասակար պարագաներից ստիպված ազգն իր լեզվի պահպանման և զարգացման համար մեծ արգելքների է հանդիպում, սակայն ազգը սիրողն իր ուժերի ներածի չափով պարտական է ամեն ջանք ու եռանդ գործածել, որպեսզի իր լեզուն չվնասվի, չփոփոխվի և հատկապես՝ չքանա և չկորչի: Քաղաքակիրթ ազգերի մեջ հաստատված սկզբունք կա. իր ազգի հանդեպ մեծ համարում ունեցող և սիրող մարդն իր լեզուն էլ կսիրի ու կհարգի, անհոգություն չի ցուցաբերի այն հիմնավորապես սովորելու և իմանալու մեջ և նրա ծաղկման ու պահպանման համար իր ուժերի ներածի չափով կաշխատի:***

Այս խոսքիս իրավացիությունը կհասկանա նա, ով ազգերի պատմությունները կարդալով՝ կտեսնի, որ ազգն այն ժամանակ է սկսում օտար ազգերի լեզուները խոսել ու գործածել, երբ իր ազգի հանդեպ ունեցած համարումը պակասելով ու իր նախնիների բարի սովորությունների վրա մեծարանքը կորցնելով՝ հոժարությամբ ուրիշ ազգերի կարգերն ու սովորությունն է թեթևամտությամբ ընդունում և գործածում:

Հայկից մի փոքր ժամանակ անց մեր Արամ նահապետի՝ կապադովկիացիներին հայերեն լեզուն սովորեցնելու և խոսեցնելու մասնավոր խնամքը ստույգ ապացույց է, որ այդ ժամանակներում մեր նախնիներն իրենց լեզուն շատ պատվավոր էին համարում և եթե օտարներին կամ բուն Հայաստանից դուրս գտնվողներին այդ լեզվով խոսեցնելու աշխատանքներ էին տանում, ապա որչափ առավել ժրաջանորեն ցանկանում էին բուն հայրենի երկրի և ազգի մեջ այն պահպանել, գործածել և ծաղկեցնել»[8]*:*

Հայոց լեզվի պահպանմանն են հորդորել նաև Խորհրդային շրջանի հայ մտավորականները՝ չնայած աթեիստական գրական գործեր ստեղծելուն և թերահավատությանը, որ եղել է մեկ սկզբնական լեզու, և որ դա հայոց լեզուն է. թերևս հայոց լեզվի մեջ հոգու աչքով տեսնում էին նրա յուրօրինակ խորհուրդը:

Պարույր Սևակը գրում է. ***«Մեր նախնիները մեզ և աշխարհին փոքր ժառանգություն չեն կտակել: Բայց մենք պիտի հասկանանք և հասկանալով չմոռանանք երբեք, որ մեր ժառանգության մեծագույն գանձը մեր լեզուն է: Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազում ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի յուրատեսակ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի: Այսպես դատելով՝ մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլ՝ աշխարհին. նա միայն մեր սրբու-***

---

[7] http://blognews.am/arm/news/29220/mer-metsery-hayoc-lezvi-masin.html

[8] Հ. Պօղոս վ. Յովնանեանց, Մարդկային Լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման և ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը, Վիէննա, 1857, էջ 90-94:

թյունը չէ, այլև՝ մասունքը հանուր մարդկության։ Այդ լեզվի խնամքը, նրա անաղարտությունն ու պաշտպանությունը դրված է մեզ վրա» [9]։

«Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին։ Ամեն մի բառ նրա մի կտորն է։ Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտը, զրկանքները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձերը, սերը՝ ողջ ժողովուրդը։ Նրա համար ծով արյուն են թափել մեր նախնիները»,- մտորում է Ավետիք Իսահակյանը [10]։

Բոլոր դեպքերում, հայոց լեզվի հանդեպ սերը ցայտուն է արտահայտված այն գնահատող մեր հայրենակիցների մոտ, ինչի մասին վկայում են նաև արտերկրացի հետազոտողները.

«Արարատի՝ Մասիսի հանդեպ տածած սիրուց հետո հայերի հոգում երկրորդ տեղում է մայրենի լեզուն։ «Սա մի ժողովուրդ է,- գրում է Մանդելշտամը,- որ աքանչանում է մայրենի լեզվի բանալիներով նույնիսկ այն ժամանակ, երբ մտադիր չէ դրանով բացել գանձարանի դուռը»» [11]։

Այո՝ Այդ այդպես է։ Հակառակ դեպքում՝ դժվար թե հազարավոր տարիների փորձությունները հաղթահարելով՝ հայերենը կարողանար հարատևել։

Նույնիսկ օտար գրողներն են զգացել հայոց լեզվի խորհրդավորությունը և հորդորում են հայերիս՝ անտարբեր չգտնվել մեր աստվածաշնորհ հայերենի հանդեպ։

Հոգեթով և նույիսկ անսպասելի է կիրգիզ գրող Չինգիզ Այթմատովի խոսքը. «Ինչպե՞ս կարելի է կարդալ Նարեկացի ու չսիրահարվել Հայաստան երկրին, ունենալ Թումանյան, Իսահակյան, Զարենց, Սևակ և ուրիշ մեծեր, ու չապրել հավերժող մշակույթի ժառանգների օրինական հպարտությունը։ Մնում է, որ դուք, թանկագին հայ ուսուցիչներ, համաշխարհային հնչեղություն ունեցող այդ դասերը մատուցեք ձեր սաներին, նրանց տոգորեք աշխարհի ամենահարուստ և հմայիչ լեզուներից մեկի՝ հայերենի տիրոջ բարձր զգացումներով» [12]։

Այն մասին, որ բոլոր լեզուներն առաջացել են մի նախնական լեզվից

«Մարդիկ պնդում են, որ հայերենը եղել է դրախտի լեզուն. և կմնա երկնային աշխարհի լեզուն» [13]։

Ով չի հավատում իր Արարչին, չի հավատում նաև արարչագործությանը։ Մարդկային բարդ օրգանիզմը, կենդանական, բուսական աշխարհը և կարգա-

---

9 http://komitas.nl/onzeschool/

10 http://books.nt.am/books/readbook.php?ID=100&page=22&LangID=4

11 Ֆիլիպ Մարսդեն, Խաչմերուկ, ՀԳՄ հրատ. Երևան 2008, էջ 203

12 http://fact.am/archives/9205

13 Մարիա Վեսթ, միսիոներուհի (1875), Romance of Missions; or Inside Views of Life and Labour, Land of Ararat.https://www.youtube.com/watch?v=7 D4BQCtFjg 4

վոր ընթացքի մեջ դրված տիեզերքն անհավատի կարծիքով անհիշելի ժամանակներից մի ինչ-որ պայթյունի հետևանքով առաջացած քաոսի արդյունք են, որ իբր էվոլյուցիոն շրջան ապրելով՝ եկել-հասել են այս կատարյալ վիճակին:

Դարվինի տեսությանը հարող գիտնականները էվոլյուցիայի արդյունք են համարում նաև լեզուները: Եթե մարդն է իր լեզվի հորինողը, ապա հեղինակը պիտի լինի նաև իր ամբողջ օրգանիզմի: Եվ անհեթեթ է տրամաբանելը, թե այդ ամենի վրա մարդն սկսել է աշխատել դեռ վաղնջական դարերում, երբ գիտատեխնիկական հիմք և միջավայր չկար: Այնինչ՝ մեր ժամանակներում, երբ գիտությունը հասել է աներևակայելի բարձունքների, կարողանում են ընդամենը մարդանման ռոբոտներ՝ անշունչ, անզգա և ձևախեղված սարքեր հորինել:

Եվ եթե գիտության գլուխգործոց այս տիկնիկներին շարժման մեջ դնելու համար հարկավոր է ստեղծագործ միտք, ուրեմն ի՞նչ առավել հզոր, գերագույն ստեղծագործ միտք էր հարկավոր՝ այդ ռոբոտների հեղինակ մարդկանց արարելու համար: Ոչ ոք չի կասկածում, որ եթե ինժեներն այդ ռոբոտին մեկ-երկու բառ խոսել տալու համար ջանք չխնայեր, այն երբեք ինքնուրույն խոսել չէր սովորի: Այդպես և՝ մարդ արարածը. երբեք չէր կարողանա խոսել, եթե Արարիչն այդ հատկությամբ նրան չօժտեր: Երբ երեխան մեծանում է ջունգլիներում, առանց մարդկանց հետ շփվելու, չի կարողանում մարդկային որևէ լեզվով խոսել: Ու թե հանկարծ սկսի խոսել, ապա հարց կառաջանա, թե ի՞նչ լեզվով կամ հնչյունախմբով: Եթե հնարավոր է, որ մարդը կարիքից դրդված խոսի, ապա նույն բանը կարող է լինել նաև կենդանիների մոտ: Նրանք էլ վաղուց պետք է խոսել իմանային. մանավանդ ընտանի կենդանիները, որ ամեն օր շփվում են մարդկանց հետ: Բայց տեսնում ենք, որ դա տեղի չի ունենում, քանի որ խոսելու պատիվը միայն մարդուն է տրված, որովհետև մարդն է կրում Աստծո պատկերն ու նմանությունը:

Հետևաբար, լեզուն և հոդաբաշխ խոսքը մարդուն տրված է ի սկզբանե՝ ի վերուստ:

Իսկ եթե Ադամ-մարդը Արարչի պատկերով և նմանությամբ ստեղծված էակ է, ապա, բնականաբար, այդ կատարյալ արարածը պիտի նաև կարողանար խոսել՝ առանց սովորելու նախապարժանքների: Այդպես նաև Եվան. նա, որ ստեղծվեց Ադամից հետո, խոսել սկսեց միանգամից. ***«Սկզբնական լեզուն գոյություն ուներ նախքան կնոջ ստեղծումը՝ իր կազմավորման և ստեղծման համար երկար ժամանակ և ջանք չպահանջելով, ինչպես որ եղավ առաքյալների՝ լեզուներ ստանալու ժամանակ»***[14]:

Առաջին մարդիկ կարիք չունեին տարբեր լեզուներով խոսելու: Ուստի, ի սկզբանե կար մեկ լեզու:

Հետագայում՝ Ջրհեղեղից հետո, նոր-նոր բազմացող մարդկությունը պետք է խոսեր այդ նույն լեզվով, երբ մնացել էին Նոյն ու իր գերդաստանը. օրինաչափորեն, նրանք պետք է խոսեին իրենց նախահայր Ադամի լեզվով:

Բաբելոնի աշտարակաշինության կասեցման միտումով, Արարիչը խառնեց

[14] Святитель Филарет (Дроздов, 1783-1867), "Толкование на книгу Бытия", Москва, 2004г., ст. 81.

մարդկանց լեզուները, և այդ նախնական մայր լեզվից ծնվեցին բազմաթիվ այլ լեզուներ։ Չի ասվում, թե նրանց նոր լեզուներ տվեց, այլ՝ լեզուները խառնեց, և միակ հիմք լեզվից առաջացան բազմաթիվ նոր լեզվաբնտանիքներ.

«Տերն ասաց. «Սրանք մեկ ժողովուրդ են, ունեն մեկ լեզու և սկսել են այդ գործն անել։ Արդ, ոչինչ չի խանգարում նրանց, որ կառուցեն այն, ինչ կամենում են։ Արի իջնենք և խառնենք նրանց լեզուն այնպես, որ ոչ մեկը չհասկանա իր ընկերոջ ասածը»։ Տեր Աստված այնտեղից նրանց սփռեց աշխարհով մեկ, և նրանք դադարեցին քաղաքն ու աշտարակը կառուցել։ Դրա համար այն կոչվեց Խառնակություն (Բաբելոն), որովհետև Տեր Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները և այնտեղից նրանց սփռեց ողջ աշխարհով մեկ»[15]։

Բարեբախտաբար, քիչ չեն նաև այն լեզվաբանները, ովքեր չեն կասկածում, որ նախ եղել է մեկ մայր լեզու։

*Մեկ հիմք լեզվի հարցը տրամաբանորեն հաստատում է նաև Վիեննայի Մխիթարյան միաբանության Պողոս վարդապետ Հովնանյանցը. «**Հայտնի է, որ եթե մարդկությունը սկսեր ապրել առանց լեզվի կամ խոսելու, դրանից հետո երբեք չէր կարող խոսել... Խոսելու միջնորդը (լեզուն) մի գործիք է, որն այնքան ժամանակ անգործ կմնա, որքան որ ականջը կամ լսելիքը չլսի։ Հայտնի է, որ ի ծնե համրերի չխոսելու պատճառն իրենց խլությունն է։***

Եթե մարդն Աստծուց ստացած չլիներ իր խոսելու կարողությունը, ապա կարիքը չէր կարող մարդուն այն աստիճանի կամ վիճակի բերել, որ նա խոսելու գաղափար ստանար և մտքի խորհուրդներն ու սրտի զգացմունքները հայտնելու միջոց գտներ։

Ինչպես ընդհանուր մարդկային ազգը մեկ մարդուց առաջացավ, այդպես էլ բոլոր լեզուների՝ առաջին մարդու միակ լեզվից ծնունդ առած ու ճյուղավորված լինելը կասկածի տակ չի կարող դրվել։

Լեզուն մարդկային հնարքով գտնված գյուտ չէ... Լեզվի կամ խոսքի գոյությունը, ինչպես բոլոր կենդանիների շարժման սկզբնական գոյությունը, անմիջապես բնության Արարչի կողմից տրված բնական տուրք էր։ Լեզվի սքանչելի կազմությունը մարդկային միտքն իր ամբողջ սրությամբ և ճարտարությամբ չէր կարող ինքն իրենից հանճարել կամ հնարագիտության միջոցով ստանալ։

Գերմանացի երևելի լեզվագետ Այխհոֆը լեզուները խորապես ուսումնասիրելուց հետո հետևյալն է ասում. «Լեզուն աստիճանաբար առաջացած գյուտ կամ երկար խորհրդածությունների պտուղ չէ, այն հոգու ներքին ընդունակություն է՝ Ամենակալի կամքով ստեղծված»... Այսպիսով՝ աշխարհի սկզբից, երբ մարդն սկսեց խոսել, մի լեզու կար։ Նախաստեղծ մարդկանց լեզվով խոսում էին նաև իրենց զավակներն, ու այս լեզուն կարճ ժամանակ անփոփոխ է մնացել։ Սա անտարակուսելի ճշմարտություն է։

Կասկած չկա, որ աշխարհի՝ այդչափ բազմազան ու իրարից լիովին տարբեր լեզուները քննելը, միմյանց հետ համեմատելը, իրենց ազգակցության ու նմա-

[15] Ծննդ. 11. 6-9:

նույան գլխավոր կետերն ու սահմանները որոշելը և դրանով բոլոր (լեզուների) մեջ մի գլխավոր արմատի հետք գտնելը, այսինքն՝ միայն մեկ լեզվից առաջացած լինելը հասկանալը ժամանակատար և ուսումնասիրության արժանի գործ էր։ Բայց հարկ եղած ուսումնասիրություններն ամենայն ճշգրտությամբ և լեզվագիտական կանոններին համապատասխան առաջ տանելուց հետո դրանցից եղած հետևությունները և ստույգ տեղեկությունները բոլորին համոզում են , որ մարդկային ազգի բոլոր ցեղերի լեզուները մի լեզվից են առաջացել։ Սրան համապատասխան՝ Ալեքս Հումպլոսը հետևյալն է գրում. «Թեև մի քանի լեզուներ իրարից լիովին բաժանված և իրար հետ ամենևին կապ չունեցող են երևում, սակայն բոլորն էլ միմյանց նմանություններ ու զուգահեռներ ունեն, և որքան առավել ազգերի փիլիսոփայական պատմությունն ու լեզվագիտությունը կատարելության է մոտենում, այդքան առավել հայտնի են դառնում լեզուների՝ միմյանց հետ ունեցած հարաբերությունները»։

Հռչակավոր աշխարհագիր Ադրիան Պալպին ասում է. «Իրարից հեռու գտնվող երկրների մեջ մարդկանց լեզուների զարմանալի տարբերությունն ու միանգամայն իրար հետ ունեցած նմանությունները մեզ պարտավորեցնում են ընդունելով մեծարել այն հին հեղափոխության հետքերը, որոնց երևելի հիշատակը կամ պատմությունը մեզ է ավանդում Սուրբ Գիրքը»։

Նույն ճշմարտությունն են հաստատում նաև Սևերը, Ֆադեռը, Յուլը, Քլաբրոթը, Ֆրիտ Շլեկելը, Մերիան, Նիպուռը, Լեփսիոսը, Յունգը, Ուայզմեն և բազում այլ նորագույն իմաստուն լեզվագետներ և ուսումնասիրողներ։ Այնպես որ, ըստ սրանց, լեզուների՝ միմյանց հետ ունեցած ազգակցությունն ու խնամությունը գտնելուց հետո, հարկավոր է հետևություն անել, որ սրանք միևնույն ընդհանուր արմատն ունեն։ «Լեզուների ընդհանուր ազգակցությունն ուրիշ կերպով չենք կարող բացատրել կամ իմանալ,-ասում է Քլաբրոթը,-միայն եթե համարենք, որ հին ու նոր աշխարհի բոլոր բարբառների մեջ պահպանվել են մեկ հնագույն լեզվի մնացորդները»։ Իսկ Փ. Շլեկելը հետևյալն է ասում. «Այլևայլ լեզուների խառնակությունը մասնավոր, համատեղ ազգատոհմերի մեջ կարող է հավաքվել և միացվել. դրանց մեջ այնպիսիները կան, որ թեպետ երկրի վրա իրարից անբավ հեռավորության վրա գտնվելով՝ բաժանված են, սակայն միմյանց ցեղակից լինելը հայտնապես ցույց են տալիս, որով էլ երևում է այս բոլոր լեզուների այլևայլ ազգատոհմերի՝ իբրև մեկ բնից կամ արմատից առաջացած ոստեր կամ ճյուղեր լինելը»։ Պետերբուրգի գիտությունների ճեմարանն իր իմաստուն անդամներից մեկի՝ Կոմս Կուլիանովի առաջնորդությամբ այս նյութի հետ կապված երկար ուսումնասիրություն անելուց հետո վճռեց և հրատարակեց, որ բոլոր լեզուները միևնույն նախնական լեզվից են առաջացել։

Այս կարծիքին են բոլոր իմաստուն լեզվաբանները (որ մի մայր լեզվից առաջացել են մյուս լեզուները) երկար ուսումնասիրություն և հետազոտություն անելուց հետո, այնպես, որ ոչ միայն սրբազան պատմությանը խոնարհ հավատքով հետևողները, այլև արտաքին փիլիսոփայությանը լիովին վստահողներն էլ ընդունում են նախնական լեզվի մի լինելը (ինչի չընդունելն այժմ արդեն ոչ միայն հանդգնություն է համարվում, այլև՝ համառություն) և միաբան ասում են,

Թե մեկ լեզվի այլևայլ լեզուների բաժանվելը հանկարծակի, արտակարգ և հրաշալի բան է»[16]*։*

Ակնհայտ է, որ այս կարծիքներն անհերքելի ապացույցներ են։

Այժմ փորձենք պատասխանել հետևյալ հարցին. պահպանվե՞լ է սկզբնական լեզուն, թե անհետացել է հազարամյակների թոհուբոհի մեջ։

«Հներից շատերն էլ հետաքրքրվել էին ստուգելու համար, թե աշխարհի լեզուներից ո՞րն է ամենաառաջինը։ Ոմանք կարծեցին, թե այն առաջին լեզուն կորած պետք է լինի։

Առաջին լեզուն ամբողջովին կորած համարելու պատճառ բնավ չկա, ճիշտ է, որ մի լեզուն կարող է ուրիշ լեզվի բառերին խառնվել, կարող է ժամանակի ընթացքում իր պարզությունը քիչ թե շատ կորցնել, բայց չի կարող այնքան խառնակվել, որ ամենևին չքանա, անհետանա։

Ուրեմն, աշխարհի առաջին լեզուն որն էլ լինի, որքան էլ խառնված կամ փոխված լինի, պետք է, որ գտնվի աշխարհի վրա»[17]*։*

Եթե սկզբնական լեզուն չի վերացել, ուրեմն, այսօր գործող լեզուներից մեկը պետք է լինի։ Իսկ թե ո՞րը, այդ հարցը կպարզաբանենք ստորև։

Հայոց լեզուն որպես առաջին՝ ադամական լեզու

«Դեռ ծանոթ չէ մեր Հայ անուն, դեռ ծանոթ չէ Հայ քաջութիւն... Աշխարհը մոռացել է մեր վեհ լեզուն, որ սովորեցրեց Աստված մարդուն»[18]*։*

Բաբելոնում լեզուների խառնակման ժամանակ մարդկությունը կենտրոնացած էր հիմնականում երկու տեղում՝ Արարատ լեռան շուրջը և Սենաարում։

Արարատ լեռան և տապանի տարածքում Նոյ նահապետն էր՝ իր փոքր ածուով. նա լքողեց իր հայրենիքը, որտեղ ծնվել ու ապրել էր, և Ջրհեղեղից հետո այն դարձել էր առավել նվիրական։

Որոշ ժամանակ անց՝ հետջրհեղեղյան շրջանում, արագ աճած ժողովրդի մեծ մասն իջավ հարավ՝ Բաբելոնի կողմերը՝ նոր հողեր յուրացնելու և բնակվելու համար։ Այդ ժամանակ էլ այնտեղ՝ Սենաարում, սկսվեց Արարչի դեմ ապստամբության աշտարակի շինությունը։

Հպարտացած միալեզու ժողովուրդը նորից ուրացավ իր Տեր Աստծուն։

Որպեսզի այդ միաբարբառ ժողովուրդը վերջնականապես չմոլորվեր և նա-

---

[16] Հ. Պօղոս վ. Յովնանեանց, Մարդկային Լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման և ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը, Վիէննա, 1857, էջ 16 – 56։

[17] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս 1896, էջ 37։

[18] Խորեն Արքեպիսկոպոս – Նար Պեյ, Ստվերք հայկական, Կոստանդնուպոլիս, տպ. Գավաֆեան, 1874, էջ 15։

խաչրհեղեղյան մարդկանց պես չկորչեր, Աստված խառնեց նրանց լեզուները, որ անհնար դառնար չար շինությյան ավարտը։

*Այդ կռապաշտության կենտրոնից ցրվելով աշխարհով մեկ՝ նրանք դարձան օտարալեզու ազգեր և այլևս չկարողանան չարության մեջ միաբանվել, ինչպես գրում է Եփրեմ Ասորին. **«Հավանական է, որ յուրաքանչյուր ցեղ սկսեց խոսել այնպիսի հատուկ լեզվով, ինչպիսին իրեն տրվեց։ Եթե նրանք չզրկվեին իրենց առաջին լեզվից, ապա չէին դադարեցնի իրենց սկսած գործը։ Բոլոր ցեղերը զրկվեցին իրենց սկզբնական լեզվից, այն մնաց միայն մի ցեղի մոտ, և դրանով նրանք դադարեցրին իրենց սկսած գործը։ Նոր լեզուներն այնքան հեռացրեցին այդ ցեղերին իրարից, որ նրանք չէին կարողանում միմյանց հասկանալ»**[19]։*

Լեզուների խառնակումը տեղի ունեցավ մեղքի հետևանքով, բայց Նոյը հավատարիմ մնաց Աստծուն, քանզի մասնակցություն չունեցավ աշտարակաշինությանը։ Այդ պատճառով նա չենթարկվեց լեզուների խառնակման պատժին.

«Հայտնի է, որ Ջրհեղեղից հետո Նոյը դուրս եկավ տապանից և բնակվեց Հայաստանում, որտեղ իր սերունդը բազմանալով՝ շարունակեց խոսել նախահայրերի լեզվով, ինչը, նման ձևով հայրերից որդիներին էր անցնում, ցեղից ցեղ՝ մինչև մեր օրերը։

***Լեզուների խառնակումը տեղի է ունեցել Ջրհեղեղից 114 կամ 200 տարի հետո, բայց քանի որ Նոյի անմիջական սերունդները, մնալով Հայաստանում, մասնակցություն չունեցան աշտարակաշինության ձեռնարկմանը, հետևաբար, նրանց լեզուն էլ համընդհանուր խառնակության ժամանակ անձեռնմխելի մնաց և պահպանվեց իր սկզբնական՝ նախաջրհեղեղյան մաքրությամբ»** [20]։*

«Այստեղ պետք է հիշել և ճշգրիտ կերպով մտաբերել Սուրբ Գրքի մյուս խոսքերը, ուր պատժելու մասին գրում է՝ այսպես ասելով. «Խառնենք նրանց լեզուները»**[21], **և «Աստված այնտեղ խառնեց ամբողջ երկրի բնակիչների լեզուները»**[22]։ **Որով հայտնի է դարձնում, թե միայն այնտեղ խառնակեց Աստված լեզուները, որտեղ շինում էին աշտարակը, և արդար էր և այդպես էլ վայել էր Աստծո արդարությանը։ Քանզի այս լեզուների խառնակությունը պատիժ էր, և միայն արժան էր նրանց պատժել, ովքեր կառուցում էին այդ պատժի արժանի շինությունը, իսկ նրանց, ովքեր չէին միաբանվել աշտարակաշինության գործին և ոչ էլ այնտեղ էին գնացել, հակառակ էր Աստծո արդարությանը՝ պատժել նաև անմեղներին։

Եվ ինչպես բոլորն ընդունում են, որ Նոյը՝ արդար և անմեղ նահապետն, այս պատժին չարժանացավ, քանզի միաբանված չէր աշտարակաշինության գործին, նույնը պետք է ասել նաև նրանց մասին, ովքեր Նոյի հետ մնալով Հայաստանում՝ չմիաբանվեցին նրանց հետ և ոչ էլ նրանց հետ գնացին։ Այնտեղ ասե-

---

[19] Ефремь Сиринь, Творение, Том 6, Москва, 1995, ст. 274.

[20] Шопен, Исторический памятникь, С. – Петербургъ, 1852, ст. 117.

[21] Ծննդոց 11:7:

[22] Ծննդոց 11:9:

լով՝ ցույց է տալիս, որ Աստված չխառնակեց Արարատյան առաջին աշխարհի բնակիչների լեզուները, որ մեր Հայկ նահապետը գտավ այստեղ» [23]*:*

Հայաստանի տարածքի զերծ մնալը լեզուների խառնակման պատժից՝ միանգամայն համահունչ է Սուրբ Գրքին: Այդ տրամաբանության օգտին է խոսում այն, որ երբ Մովսեսի ժամանակ եգիպտացիները ենթարկվում էին տարաբնույթ պատուհասների, Գեսեմը զերծ էր մնում պատիժներից:

Այդպես և Բաբելոնում. երբ լեզուները խառնակվեցին, միայն Արարատյան երկրում, որտեղ բնակվում էր բարեպաշտ Նոյ նահապետը, լեզուն չխառնվեց, այլ մնաց նույն ադամականը.

«Սուրբ Գրքից տեղեկություն չունենք, թե Նոյը և իր երեք որդիները մեկնեցին իրենց առաջին բնակության վայրից: Եվ հայտնի է այն, որ նույնիսկ նրա բազում թոռները մնացին այնտեղ և աշտարակաշինությանը մասնակից չեղան, ինչի պատճառով էլ նրանց բնիկ լեզուն, որն ամենայն հավանականությամբ հայերեն լեզուն էր, մնաց նույնը: Բացի մեզանից՝ այս կարծիքին է նաև Կեսար Կաղինոսն իր «Պարապումն ու ժամանակագրական Հին Կտակարանաց» գրքի Բ գլխ. 4-ում» [24]*:*

Այս համոզմանն է նաև 1892-1907 թ. գահակալած հայոց 126-րդ հայրապետ Տ. Տ. Մկրտիչ Խրիմյան Հայրիկը.

«Մինչդեռ Բաբելոնում Բելի ժամանակ տիրում էր խառնաշփոթ, Արարատյան երկրում խաղաղություն էր: Այնտեղ թագավորում էր Աստվածպաշտությունն ու ազատությունը, յուրաքանչյուր տոհմական նահապետ տանտերի իրավունքով իշխում էր իր ընտանիքի վրա: Իսկ արդար Նոյը՝ նահապետների նահապետը, որ դեռ ողջ էր, Մասիսի մեծաշեն պալատի մոտ իր աթոռը դրած՝ հովվում էր հայոց մտերիմ ժողովրդին, որ իրենց հայրենիքը սիրելով՝ երբեք չբաժանվեցին, որով իրենք անմասն մնացին Բաբելոնի պատուհասից՝ անարատ պահելով հայրենի նախնական լեզուն, կրոնը և երկյուղած աստվածապաշտությունը: Քանզի Նոյ նահապետը, որ աշխարհի պահապանն էր, կենդանի օրինակ և քարոզ, արդարության լույսն էր տարածում բոլոր ժողովուրդների կյանքի և ընտանիքների վրա» [25]*:*

Ոմանք կարծիք են հայտնում, որ Հայոց նախնի Հայկը Բաբելոնում նոր լեզու չստացավ, և նրա մոտ անխառն մնաց ադամական լեզուն՝ նրա բարեպաշտության շնորհիվ:

Կարծիք կա նաև, որ Բաբելոնում Հայկի լեզուն ևս խառնակվել է, և երբ Հայկը իր ժողովրդի հետ վերադարձավ Բաբելոնից, նորից սովորեց այն առաջին լեզուն, որով խոսում էին Արարատյան երկրի բնիկները՝ Նոյ Նահապետի գլխավորությամբ. ***«Ճիշտ է, որ մեր Հայկ նահապետն էլ Բաբելոն էր գնացել և թերևս իր***

---

[23] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 10-11:

[24] Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց արքեպիսկոպոսին ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատորԱ, 1819, էջ 55:

[25] Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան 1992, էջ 197-198:

լեզուն խառնվելով մոռացել էր, բայց շուտով հենց նորից իր հայրենիք վերադարձավ, հայտնի է, որ մոռացված լեզուն պետք եկավ, և սկսեց նորից իր նախնիների լեզվով խոսել»[26]:

«Բայց ո՞ր կամ ի՞նչ լեզու էր դա: Այստեղ պետք է ազգային ավանդությունն ու պարծասիրությունը զտել, եթե այն մեր հայկական լեզուն չէր, ապա իզուր է պարծանքը, իսկ եթե հայկականն էր, ապա ինչպե՞ս է հնարավոր, քանի որ մեր պատմությունը հիմնադրվում է Հայկի՝ Բաբելոնից Արարատյան երկիր գալուց հետո, և հարկ էր, որ մյուսների պես նրա լեզուն էլ այնտեղ խառնված լիներ, և նոր լեզվով գար Արարատ, և եթե պահեց ու ավանդեց այդ բաբելածին լեզուն իր սերնդին և նաև տարածեց Հայաստանում իրենից առաջ գտնվող բնակիչների մեջ, ապա հայերենը չէ նախկին Նոյի լեզուն: Սակայն ինքն ու իր հետ եղողները սակավաթիվ լինելու պատճառով ստացան Այրարատի նախկին բնակիչների լեզուն»[27]:

*Այսպիսով, Հայկն իր ընտանիքով վերահաստատվեց Արարատյան երկրում, որտեղ տիրում էր ճշմարիտ աստվածպաշտությունը, և բոլորը խոսում էին սկզբնական՝ ադամական լեզվով. **«Բիբլիական լեռան ստորոտում խոր արմատներ գցեց նաև այս վայրի ամենահին ծաղիկը՝ հայոց լեզուն: Խանդավառ ազգին խանդավառ լեզու՝ իր արևային երանգով և համով»[28]:***

Այն, որ Արարատյան երկրում Նոյը, Հայկը և մյուս տեղաբնակները խոսում էին ադամական լեզվով, գրել են թե՛ հայ, թե՛ օտարազգի ուսումնասիրողները:

Խորը ուսումնասիրություններ են կատարել հատկապես Մխիթարյան միաբանության հայրերը, որոնցից առավել ակնառուներն են վարդապետներ Հայր Ղուկաս Ինճիճյանը, Ղևոնդ Ալիշանը, Միքայել Չամչյանը և այլք.

«Պետք է ասել, որ այն առաջին բարբառը, որով խոսում էին մարդիկ, սկսած Ադամից, մինչև լեզուների բաժանումը, հայերենն էր, որը և մնաց մինչև այժմ: Եվ սա հեշտությամբ կարելի է ապացուցել, քանզի նրա բաժանումից առաջ մարդիկ խոսում էին այն լեզվով, որը կար Հայաստանում, քանզի Նոյը և նրա որդիները, որոնց մոտ մնաց Ադամի բնիկ լեզուն, Հայաստանում էին, և այնտեղ բազմացան, քանզի ինչպես ավանդում է Աստվածաշունչը Մննդոց 10-րդ գլխում, Նոյի տապանն այնտեղ իջավ՝ Արարատ լեռան վրա, որը Հայաստանում է, ըստ որի՝ Աստվածաշնչի ասորերեն և լատիներեն թարգմանությունները դնում են Արմենյո լեռան վրա:

Իսկ արդ՝ այն լեզուն, որով խոսում էր Նոյն ու իր որդիներն այնտեղ՝ Հայաստանում, չխառնվեց, չվերացավ և ոչ էլ փոփոխվեց, այլ նույնն է, որ այժմ կա Հայաստանում, և ուրեմն այն ժամանակ Հայաստանի կամ հայոց լեզվով էին խոսում Նոյն ու իր որդիները: Նախապես ասացի, որ այն լեզուն, որը Հայաստանում էր, չխառնվեց, քանզի լեզվի խառնակությունը պատիժ էր նրանց համար,

---

[26] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 40:

[27] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1904, էջ 88:

[28] Эдуардас Межелаитис, Армянский феномен, Советакан грох, Ереван, 1982, ст. 84.

որոնք, ըստ Աստվածաշնչի ավանդության, Հայաստանից ելնելով՝ շարժվեցին դեպի Սենաար և այնտեղ աշտարակ կառուցեցին։

Արդ հայտնի է, որ Նոյն աշտարակաշինողների հետ չէր, քանզի Սուրբ Գիրքն այն կոչում է «միաբանություն չարության»[29]։ Ուրեմն, նա չէր միաբանվել և չէր գնացել նրանց հետ, այլ մնացել էր Հայաստանի Արարատյան աշխարհում՝ տապանին մոտ, մինչև իր մահը, ինչի հետևանքով էլ Հայաստանում նրա լեզուն չխառնվեց, այլ մնաց նույնը։ Քանզի ինչպես գեղեցիկ կերպով գրում է Կալմետը Սուրբ Գրքի [մեկնության] առաջաբանում. «Եթե լեզուների բաբելոնյան խառնակությունն Աստծո կողմից ուղարկված պատիժ էր մարդկանց հանդուգն խորհուրդների համար, անհավանական չէ ասել, որ ինչպես հանցանքից, այդպես էլ պատժից Նոյը զերծ մնաց»։

Այն լեզուն, որ մնաց Նոյից Հայաստանում, չվերացավ, քանզի, եթե լեզուների խառնակությունից հետո մյուս լեզուները չվերացան, այլ մինչև այժմ կան և մնում են, ապա ինչո՞ւ պիտի վերանար այն, որ Ադամից մնացել էր մինչև Նոյ և մինչև նրա մահը, որը տեղի ունեցավ լեզուների խառնակությունից 200 տարի հետո։ Հատկապես որ չանհետացավ նաև այն ազգը, որ բազմացել էր Հայաստանում, և ոչ էլ վերացավ նրանց լեզուն։

Եվ չփոխվեց այն, քանզի եթե ուրիշները չփոխվեցին, ինչո՞ւ պիտի սա փոխվեր։ Եվ սա ասում եմ ընդհանրապես, քանի որ պատահական փոփոխություններ պատճառով երևի թե այլայլվել է, ինչպես մյուս բոլոր լեզուները, քանզի այն ժամանակ քերականության արվեստ չկար, մանավանդ, որ այլ ազգեր և նախարարություններ ժամանակ առ ժամանակ մտան մեր ազգի մեջ, որոնցից գուցե որոշ բառեր մուծվեցին մեր լեզվի մեջ։ Սա այն նույն հայոց լեզուն է, որ այժմ Հայաստանում կա, քանզի այն ազգը, որ Նոյից բազմացավ Հայաստանում, այլ ազգ չդառավ, այլ նույն հայոց ազգն է, որ մինչև այժմ սերում է որդոց որդի, քանզի, ինչպես հստակորեն տեսնում ենք պատմությունից, հայոց ազգը Հայկից հաջորդաբար սերում է մինչև այժմ։ Այս ամենից կարելի է եզրակացնել, որ հայոց լեզուն նույն Նոյի լեզուն է՝ առանց խառնակության, որն էլ ցույց է տալիս, թե այն էր առաջին լեզուն, այսինքն՝ Ադամի լեզուն, որովհետև, ինչպես ցույց է տալիս Սուրբ Գիրքը[30], Ադամի լեզուն չէր խառնակվել մինչ Նոյի ժամանակները, և ասում է, թե ամբողջ երկիրը մեկ լեզու և մեկ բարբառ ուներ։

Բայց, թերևս, մեկն առարկի, թե եթե նույնիսկ Հայաստանի լեզուն Ադամի լեզուն էլ լիներ, այնուամենայնիվ չի կարելի ասել, թե դա հայոց լեզուն է, քանզի հայտնի է , թե հայոց ազգը Հայկից է ստացել հայ անվանումը, իսկ արդ՝ եթե Հայկի լեզուն աշտարակաշինության ժամանակ փոխվեց, ուրեմն փոխվեց նաև հայոց ազգի լեզուն։ Պատասխանեմ. այդ առարկությունն անզոր է մեր գրածի դեմ, որը հիմնավորված է Սուրբ Գրքով, որով ցույց տվեցինք, թե քանի որ Հայաստանում, որտեղ գտնվում էր Նոյը, լեզուների խառնակություն չեղավ, այն առաջին լեզուն մնաց Հայաստանի բնակիչներին, այսինքն՝ հայերին։ Իսկ թե

---

[29] Իմաստություն Սողոմոնի 10:5:

[30] Ծննդոց 11:1- 6:

Հայկն այնտեղից խառնակված լեզվով եկավ, թե անխառն, մեր հոգսը չէ։ Բայց ենթադրենք, թե նրա լեզուն խառնակվել էր, և այդպես նա եկավ Հայաստան կամ Արարատ, հնարավոր չէ ասել, թե նա Արարատյան բնակիչների մեջ նոր և օտար լեզու ներմուծեց, այլ մանավանդ պետք է ասել, որ նա այնտեղ գալով՝ հարկադրված խոսեց այն նախնական լեզվով, որով խոսում էին այդ աշխարհի բնակիչները, քանզի երբ Հայկը Հայաստան եկավ, այնտեղի բնակիչներն առավել հարյուրապատիկ կամ նույնիսկ հազարապատիկ էին բազմացել, քան Հայկի հետ եկածները, և Հայկը գիտեր, թե նրանց լեզուն առաջին ու անխառն լեզուն է, և եթե այդպես էր ու նա գիտեր այդ, ապա այնուհետև ոչ իր խառնակված լեզվով, այլ նրանց հարազատ լեզվով սկսեց խոսել։ Ուստի և Հայկի լեզուն, այսինքն՝ հայոց լեզուն, նաև նրանց լեզուն էր, ովքեր բնակվում էին Հայաստանում, և պետք չէ ասել, թե այլ էր հայոց լեզուն և այլ՝ Հայաստանինը, քանզի Հայաստանի բնակիչները և հայոց ազգը նույնն են՝ ոմանք Հայկից սերված և ոմանք էլ՝ Նոյի այլ ծնունդներից, բնակվում էին Արարատ աշխարհում և գտնվում էին Հայկի իշխանության տակ։

Իսկ եթե ոմանք մեզ համար ասեն, թե այս պնդում ենք, քանի որ հայ ենք, ասենք, որ ոչ թե այդ բանի համար ենք պնդում, այլ՝ հանուն ճշմարտության, և եթե դա ևս մեզ համար առիթ հանդիսանար գրելու, այնուամենայնիվ, կար նաև ցույց տալու ճշմարիտ պատճառ՝ Աստվածաշնչի վրա հիմնված, քանզի եթե ուրիշներն այս ամենն իրենց ձեռքի տակ ունենային, մեզանից առավել կպնդեին։ Եվ իսկապես, եթե Աստվածաշունչն ավանդեր, թե Նոյի տապանն իջել է Ֆրանսիայում, Նոյն այնտեղ է այգի տնկել, այնտեղ բազմացել և այլն, մի՞թե ֆրանսիացիների մոտ կասկած կմնար, թե իրենց լեզուն Ադամինը չէ։ Եվ եթե այդպես է, ապա մենք էլ իրավունք ունենք ասել, թե քանի որ Նոյը Հայաստանի մեջ իջավ և այնտեղ բազմացավ և այնտեղ նրա լեզուն չխառնվեց, ապա Հայաստանի լեզուն Ադամի լեզուն է»[31]։

Քանի որ Նոյի անմեղության պատճառով նրա լեզուն Սենաարի մեղավոր ժողովրդի նման չփոխվեց, ապա տրամաբանական է, որ նմանապես Հայկ նահապետի լեզուն մնաց ադամականը, որովհետև նա ևս չմեղանչեց, չնայած դեռ գտնվում էր Սենաարում.

«Քանի որ մարդկանց որդիները հազարավոր լեզուներով խոսում են իրար հետ, ուստի շատերին հուզում է այն հարցը, թե արդյոք այսքան լեզուներից ո՞րն է Ադամի լեզուն։ Երբ մեկը ստույգ գիտե, թե Ադամի Դրախտը Հայաստանի մեջ է, և թե Նոյը, երբ տապանից դուրս եկավ, Հայաստան իջավ և այնտեղ բնակվեց, այլ ապացույցի կարիք չունի համոզվելու համար, թե հայոց լեզուն անչափ հին է, և կարելի է ասել, որ Ադամի լեզուն է մնացած բոլոր լեզուների սկիզբն ու մայրը»[32]։

---

[31] Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985, էջ 153 -157:

[32] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

Հայկի, Նոյի և Ադամի ժամանակներից մնացած տեղանունները վկայում են, որ հայերենը առաջին լեզուն է

«Անշուշտ, երբ լեզուները մայր անվանվեցին, առաջին տեղում գտնվեց մեր հայկական բարբառը և կարևոր ընտանությամբ ծագեց մեծ նահապետի՝ Նոյի լեզվից, որ իր կենարար տապանով դադար առավ մեր Արարատյան աշխարհում»[33]:

Դրախտի, Ջրհեղեղի և Հայկի մասին խոսելիս՝ անդրադարձ եղավ հին անուններին, որոնք հազարավոր տարիների միջով հասել են մեզ: Մասամբ կրկնվելով ասենք, որ այդ անվանումները պահպանվել ու գալիս են դեռ Ադամի և Նոյի ժամանակներից, ունեն բնիկ հայերեն արմատակազմ և համարյա նախնական տեսքով գործածական են հայոց լեզվի մեջ:

Դա լավագույն վկայությունն է, որ դեռ Ադամի և Նոյի ժամանակներում խոսել են նույն լեզվով.

«Հնագույն պատմության բոլոր հնագիր և ողջամիտ ուսումնասիրողները երբ վաղուց մնացած մի վայր են գտնում, որի անունը համընկնում է նախնի պատմությանը, մեջբերում են՝ որպես մի մեծ հիշատակարան կամ մատյան, որպես վկայություն՝ այդ պատմության հաստատման: Սա տեսնում ենք Հունաստանի, Իտալիայի և այլ վայրերի հնախոսություններում: Սա տեսանելի է նաև Մովսեսի հնախոսության մեջ. այսպես՝ տեսնում ենք, որ երկու գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը, մնացել են մինչև Մովսեսի ժամանակները, և ոչ ոք չի տարակուսում, այլ բոլորն ընդունում են, որ նույն գետերն են, որոնց մասին Մովսեսը Ծննդոցում գրում է:

Արդ, որպես մեր երկրի տեղանուններ, ինչպիսիք են Հայկաշենը, Գեղամաշենը և այլն, հանդիսանում են որպես հուշարձան կամ գիր և հիշատակ Հայկի, Գեղամի և այլոց, որով ցույց ենք տալիս մեր լեզվի հնությունը Հայկի ժամանակներից էլ առաջ, նույնպես մեր երկրում այնպիսի վայրեր ունենք, որոնք հիշատակվում են Հայկից առաջ՝ Նոյի ժամանակներից սկսած, և որ առավելագույնն է՝ դրանք Արարատյան լեռների շրջակա վայրերում են գտնվում, ուր Նոյը դուրս եկավ տապանից, որոնք անսուտ վկաներ են այն անցքերի և դեպքերի, որոնք պատմում է Մովսեսը, որ տեղի են ունեցել Նոյի ժամանակ»[34]:

Ինճիճյանը բերում է Նոյի ժամանակներից մինչև մեր օրերը հասած մի շարք անուններ: Դրանցից «Առ Նոյ ոտն», «Նավասարդ» և այլ անվանումներ հիմք ընդունելով՝ ոչ միայն նա, այլև շատ հայ և օտար հեղինակավոր ուսումնասիրողներ ապացուցել են հայերենի՝ մայր լեզու լինելը.

---

[33] Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւներից վարդապետաց աշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Ասգերեան, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 5:

[34] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 13–16:

«Մնում է այստեղ այն խնդիրը լուծել, թե արդյոք առաջին լեզուն, եթե հայերենն էլ լինի, մինչև այժմ անփոփո՞խ է մնացել, թե ոչ: Ըստ մեր կարծիքի՝ անփոփոխ է մնացել, և դրա մեծ ապացույցն է այն, որ Ջրհեղեղից անմիջապես հետո դրված հատուկ տեղանունները տեսնում ենք, որ հայերեն են. օրինակ՝ մեր առաջին նահապետների դրած անունները՝ Յրոնք, Գերեզմանք, Հարք, Հայկաշեն, Արագած, Մասիս, Արարատ և այլն: Սրանք գրեթե Ջրհեղեղից մինչև այժմ անփոփոխ մնալով՝ ցույց են տալիս, որ ոչ թե այն ժամանակ հայոց լեզուն կար, այլ նաև կատարյալ էր, որ հետագա դարերում էլ ամենևին չի փոխվել, և նույն բառերն այժմ էլ նույն կերպ են գործածվում: Իսկ եթե հայերենը Բաբելոնի խառնակութ յունից ելած նոր լեզու լիներ, պետք է, որ հետագա դարերում շատ փոխված լիներ, և այժմ այդ առաջին անունները շատ տարբեր կերպով կհնչեին:

Դարձյալ, ինչպես այս հիշատակած անուններից է իմացվում, որ առաջին մարդիկ, այսօրվա մարդկանցից առավել, իրենց կառուցած քաղաքները կամ նշանավոր վայրերն իրենց անուններով էին կոչում, այնպես էլ կարող ենք ասել, որ Նախիջևան, Ակուռի, Երևան անունները և մի քանի ուրիշ անուններ էլ պետք է որ Նոյ նահապետը դրած լինի»[35]:

«Նախիջևան հայերեն նշանակում է առաջին իջման վայր: Հազիվ թե որևէ այլ լեզվով կոթողների մասին եղած ավանդությունները կարողանան այնպիսի հուժկու անդրադարձ ունենալ, ինչպես որ՝ հայոց լեզվով:

Իր տարածքում ամփոփելով մարդկության նոր նախահոր մասունքները՝ հայերը ուրիշ երկրի չեն զիջում նաև Նոյեմզարի՝ մարդկության ցեղի երկրորդ նախամոր մասունքները: Նրանց կարծիքով՝ նա իր կյանքի վերջին շրջանում եղել է Մարանդում, ինչն էլ ըստ հայերեն թարգմանության՝ նշանակում է «մայրն այնտեղ է»»[36]:

«Էրիվան բառը,-ասում է Անդրկովկասի հիանալի գիտակ և այդ շրջանի անձանձիր հետախույզ Ս. Ի. Զելինսկին,-հայերն էրևան են արտասանում, ինչը նշանակում է երևալ կամ իրեն ցույց տալ: Այս բառի առաջացման ավանդությունը կապում են Նոյի ժամանակաշրջանի հետ: Երբ Նոյն Արարատ լեռան գագաթից նայել է շրջապատող տարածքներին, ապա առաջինն իրեն երևացել է հյուսիս և հյուսիսարևելյան բարձունքի վրա գտնվող էրիվանը, որը Ջրհեղեղից հետո մյուս վայրերից առաջինը ջրի տակից երևաց, այդ պատճառով էլ նա արտասանել է երևում է բառը, այսինքն՝ հողը տեսանելի է (միայն իհարկե, եթե Նոյը խոսել է հայերեն. հնարավոր է նաև, որ խոսել է)»[37]:

«Հետագա դարերում էլ հայերեն լեզուն զգալի փոփոխություններ չկրեց, դա են հավաստում Հայաստանի բազում տեղանուններ, որ հիշեցնում են այնտեղ Նոյի նախնական բնակություն հաստատելու մասին... Այս բոլոր անունները, որ Ջրհեղեղից հետո տրվել են այդ վայրերին, մինչև այսօր պահպանվել են ազգային կիրառության մեջ և մինչև օրս էլ կրում են հայկական լեզվարմատներ:

---

[35] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896թ., էջ 37-41:

[36] Сергей Глинка (1775-1847), “Обозрение истории Армянского народа”, Москва, 1832г. ст. 39.

[37] Д. Л. Мордовцева, На Араратъ, С.-Петербургъ, 1883, ст. 80.

Հետևաբար, եթե հայերեն լեզուն Ջրհեղեղի ժամանակ փոփոխությունների չի ենթարկվել, եթե աշտարակաշինությունը նրա վրա ազդեցություն չի գործել, եթե այն նույն լեզուն է, որով խոսել է Նոյը, վերջապես, եթե Նոյը խոսել է իր հոր լեզվով, ապա, ըստ հայերի, ակնհայտ է, որ հայերեն լեզուն նախաջրհեղեղյան լեզուն է, ինչում այսօրվա հայերից ոչ ոք չի կասկածում» [38]*:*

Այն կարծիքը, որ արդի հայերենը մեծ փոփոխությունների չի ենթարկվել և համեմատաբար քիչ է հեռացել հին հայերենից՝ գրաբարից, եզակի չէ. ***«Ուշագրավ է հայագետ Արմեն Այվազյանի հետևյալ եզրահանգումը. «Պատմական փաստ է այն, որ հին և նոր հայերեններն անհամեմատ ավելի մոտ են, քան ասենք՝ լատիներենն ու իտալերենը, լատիներենն ու ֆրանսերենը, հին կելտերենն ու անգլերենը, հին եբրայերենն ու նոր եբրայերենը»»*** [39]*:*

Նշյալ գիտնականներից մասնավորապես բերեցինք պատմական, վերլուծական և մեկնողական բնույթի ակնառու որոշ հատվածներ՝ քերականական, հնչյունային, արմատական և այլ ապացույցները թողնելով լեզվաբանության նեղ ոլորտին, քանզի դրանք դուրս են մեր գրքի նպատակադրման շրջանակներից:

Հայերենը՞, թե՞ եբրայերենը

«Հայոց լեզուն՝ մայր. և հնությամբ
իր նախորդը չունեցող լեզու է» [40]*:*

Ադամական լեզվի հետ կապված կա նաև կարծիք, որ Բաբելոնում լեզուների խառնակումից հետո նահապետներից մեկի նախնական լեզուն չփոխվեց, այլ մնաց նույնը:

Այն, որ Արարատյան երկրում Նոյ նահապետի լեզուն իսկապես չփոխվեց, դա շատ տրամաբանական է և ընդունելի, իսկ ինչ վերաբերում է նրան, որ Բաբելոնում խառնակումից հետո էլ է եղել այդ լեզուն կրող մեկը, դա արդեն խորհելու առիթ է տալիս: Այդ կապակցությամբ առաջ է քաշվել երկու տեսակետ. մեկը, որ պահպանվել է Եբերի լեզուն Բաբելոնում, իսկ մյուսը, որ չի փոխվել Հայոց նահապետ Հայկի լեզուն: Եբերի հետ կապված կարծիքի հիմնավորումն այն է, թե Եբերն աստվածապաշտ է եղել, քանզի նրանից են սերվել Աբրահամը, Իսահակը և Հակոբը, իսկ Հակոբից էլ՝ հրեա ժողովուրդը.

«Աշտարակի փլուզումից և լեզուների խառնակումից հետո Աստված մի լեզուն բաժանեց 72-ի: 15 լեզու վերցրեց Հաբեթի ազգը, 32՝ Քամի ազգը և 25՝ Սեմի ազգը, և յուրաքանչյուրը գնաց իր ճանապարհով: Իսկ Եբեր իշխանը աստվածա-

---

[38] Шопен, Исторический памятникь, С. – Петербургъ, 1852, ст. 178.

[39] Վարդան Ասատրյան, Նախաժողովրդի բարբառների մասին, Շողակն երկշաբաթաթերթ, 2006, սեպտեմբեր Բ, թիվ 17(156), Երևան, էջ 1-2:

[40] Շրումպֆ Գուստավ Ադոլֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895, էջ 288:

պաշտ մարդ էր և չէր միաբանվել աշտարակը կառուցողների հետ... և ասում են, թե նրա լեզուն մնաց բուն լեզուն» [41]:

*Կա նաև շինծու մի ավանդություն, ըստ որի՝ երբ լեզուները խառնվեցին, այնժամ, որպեսզի իմանան, թե ում լեզուն է մնացել ադամական մայր լեզուն, գտան մինչ Ջրհեղեղը գրված մի գիրք և հերթով փորձեցին կարդալ, և իբր միայն Եբերը կարողացավ այն կարդալ, ինչից էլ եզրակացրին, թե Եբերն է միայն պահպանել իր նախնական լեզուն: Կան վստահություն չներշնչող նմանատիպ այլ հորինվածքներ ևս. **«Հունական ծագում ունեցող փոքր Մննդոց գիրքը, ըստ Սունկեղոսի գրածի, պատմում է, թե հրեշտակը երևաց Մովսեսին և նրան ասաց. «Ես Աբրահամին սովորեցրի քաղդեացիների եբրայերեն լեզուն, որը բուն և առաջին լեզուն էր»: Հայտնի է, որ այս ամենը առասպելաբանություն է»*** [42]:

Սակայն ստորև կտեսնենք, որ Սուրբ Գիրքը ոչնչով չի հիմնավորում Եբերի՝ աստվածապաշտությանը հավատարիմ մնալու վարկածը և ոչ էլ այն, որ Մովսեսից առաջ ընդհանրապես եբրայերեն լեզու է գոյություն ունեցել: Ավելին՝ Սուրբ Գիրքն ինքն է համոզիչ կերպով հերքում այդ շինծու վարկածները:

Իսկ ինչ վերաբերում է Հայկին, ավանդությունից մեզ հայտնի է, որ Տիրոջ հրեշտակը յուրաքանչյուր ցեղի իր նոր ստացած լեզվով առաջնորդեց այն երկիրը, որտեղ բնակություն չկար, որպեսզի բազմանային և ամբողջ աշխարհը բնակելի դարձնեին:

*Գրիգոր Տաթևացին ասում է. **«Լեզուն սահման է կոչվում, որ ազգերին բաժանում է միմյանցից...այս լեզուների սահմանները ոչ ոք չի կարող փոփոխել, այլ միայն՝ Աստված, որ դրեց այդ»*** [43]:

Հետևություն. լեզուներով են գծվել ազգերի սահմանները:

Բայց այստեղ հարց է առաջանում. ինչո՞ւ պիտի հրեշտակը Հայկին ուղեկցեր Արարատյան երկիր. չէ՞ որ այնտեղ դեռ բնակվում էր Նոյ նահապետը և նրա հետ աշտարակաշինությանը չմասնակցած մարդիկ, որ արդեն իսկ ունեին իրենց ադամական լեզուն, որով հաստատված էր Արարատյան երկրի սահմանը: Ուրեմն, քանի որ Հայկը պահել էր ճշմարիտ հավատքը (ինչի մասին խոսվեց «Հայկ և Բել» գլխում), նրա լեզուն չխառնվեց, և այդ պատճառով հրեշտակը նրան նորից Արարատյան երկիր ուղեկցեց, որտեղ ապրում էին նույն լեզվով խոսող բարեպաշտ մարդիկ:

Մի հարցադրում ևս. եթե լեզուների խառնակման նպատակը նաև ամբողջ աշխարհը բնակեցնելն էր, ապա Հայաստանում արդեն բնակչություն կար, և հարկ չկար, որ Հայկը վերադառնար այնտեղ: Նա կարող էր գնալ մի այնպիսի վայր, որտեղ բնակչություն չկար, և դառնալ այդ երկրի նահապետը:

Սակայն Նախախնամության կամքն էր, որ Հայկը վերադարձավ Արարատյան երկիր, որտեղ Նոյի հետ պիտի խոսեր նույն, առաջին, անխառն լեզվով՝ հայերենով:

«Հայերենը եթե ոչ Նոյի տապանից իսկ, ապա՝ հատկապես Բաբելոնյան աշ-

---

[41] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871, էջ 13:

[42] Միքայել Չամչեան, Հայոց Պատմութիւն, հ. Ա, Երևան, 1985, էջ 161:

[43] Սբ. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Երուսաղեմ 1993, էջ 298 :

տարակի կործանումից է սկիզբ առնում: Սակայն ամենից հավանականը հայերենը Նոյի և նրա որդիների ու հետևորդների լեզուն է»[44]:

Իսկ եթե համարենք, որ Բաբելոնում ոչ միայն Հայկը, այլև Եբերն էր պահպանել ադամական լեզուն, ապա պարզ կդառնա, որ խառնակումից հետո Բաբելոնում առաջին լեզվով խոսում էր Եբերի սերունդը, իսկ Արարատյան երկրում՝ Նոյը և իր տեղաբնակ սերունդը: Այդ դեպքում կա՛մ Բաբելոնում Եբերը և իր սերունդը խոսում էին հայերեն, կա՛մ Արարատյան երկրում խոսում էին եբրայերեն:

Այսպիսով, ամենատրամաբանական տարբերակը դարձյալ այն է, որ ադամական լեզուն հին հայերենն է, որով Արարատյան երկրում խոսել են Նոյը, Հայկը և այնտեղ բնակվող նրանց սերունդները:

Աբրահամի և իր նախնիների լեզուն ասորերենն էր

«Ո՛վ հայերեն, լեզուների մեջ
ամենագեղեցիկն ես»[45]:

Ամենայն հավանականությամբ, Եբերը մնաց Բաբելոնում, ինչի մասին տեղեկանում ենք Աբրահամի պատմությունից, քանզի նա Եբերի սերնդից էր և ապրում էր այդ կողմերում: Աբրահամի պատմությունից իմանում ենք նաև, որ Եբերից սերված մարդիկ ասորիներ էին և ոչ եբրայեցիներ, քանզի ըստ Սուրբ Գրքի՝ Աբրահամն էլ Ասորեստանից էր, ազգով՝ ասորի, և բնական է, որ նրա լեզուն պետք է ասորերենը լիներ: Երբ Աբրահամը Իսահակի համար կին գտնելու նպատակով իր ծառային ուղարկեց Խառան, նրան ասաց. ***«Ձեռքդ դի՛ր իմ ազդրի տակ և քեզ երդվեցնեմ Տիրոջ՝ երկնքի Աստծո և երկրի Աստծո անունով, որ իմ որդի Իսահակի համար կին չես առնի քանանացիների դուստրերից (որոնց մեջ եմ բնակվում ես), այլ կգնաս այն երկիրը, որտեղ ծնվել եմ, իմ տունը, և այնտեղից իմ որդի Իսահակի համար կին կառնես»***[46]:

Եվ երբ նրա ծառան եկավ Ասորեստան, աղոթեց, որ Տերը ցույց տա իրեն, թե ով պետք է լինի ընտրյալ հարսնացուն. ***«Նա մտքում դեռ չէր վերջացրել իր խոսքը, երբ եկավ Ռեբեկան, որը Աբրահամի եղբայր Նաքորի Մեղքա կնոջ որդի Բաթուելի դուստրն էր»***[47]:

Իսկ Աստվածաշնչյան այն համարում, որտեղ արդեն Իսահակն էր ուղար-

---

[44] Յոախիմ Յոհան Շրյոդեր, գերմանացի ականավոր արևելագետ. տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 140:

[45] Հայնրիխ Հյուբշման, գերմանացի հայագետ, տե՛ս Նշան Որբերեան: Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

[46] Ծննդոց 24: 2-4:

[47] Ծննդոց 24:15:

*կում իր որդի Հակոբին իր մորեղբայր Լաբանի մոտ, որպեսզի այնտեղից կին առնի, բացահայտ ասվում է, որ Աբրահամը ոչ միայն ծննդով Ասորեստանից էր, այլև ազգությամբ՝ ասորի. «**«Գնա՛ Ասորիների Միջագետք, քո մոր հոր՝ Բաթուելի տունը և այնտեղից, քո մորեղբայր Լաբանի դուստրերից քեզ կին ա՛ռ»... Իսահակը ճանապարհ դրեց Հակոբին, և սա գնաց Ասորիների Միջագետք, ասորի Բաթուելի որդի Լաբանի մոտ, որը Ռեբեկայի՝ Հակոբի ու Եսավի մորեղբայրն էր»*[48]*:*

Այսպիսով, Ռեբեկան Աբրահամի եղբայր Նաքորի որդու՝ Բաթուելի դուստրն էր, իսկ Բաթուելը, ըստ Սուրբ Գրքի, ասորի էր: Եթե Բաթուելն ասորի էր, բնական է, որ նրա հորեղբայր Աբրահամն էլ էր ասորի: Իսկ եթե Աբրահամը քաղդեացիների երկրից էր և ազգով ասորի, ապա նրա լեզուն էլ պետք է ասորերենը լիներ: Եվ եթե ըստ լեզուների են սահմանները գծվել, ուրեմն, Ասորեստանի սահմաններից ներս խոսել են ասորերեն:

Հրեաները, որպես ազգ, ավելի ուշ ձևավորվեցին: Եթե եբրայերենը Եբերի լեզուն լիներ, ուրեմն մինչ հրեա ազգի ձևավորումը՝ Եբերի սերունդներն այդ լեզվով պիտի խոսեին: Սակայն տեսնում ենք, որ նրանք խոսում էին ասորերեն.

***«Նախ հրեաները մինչև Աբրահամը՝ որպես ազգ ձևավորված չէին, այլ՝ քաղդեացիներն էին ազգ կոչվում, ուստի եբրայեցիների սկզբնավորությունն ավելի ուշ ենք տեսնում՝ Աբրահամից սկսած: Նաև, եբրայեցիների բնակության սկիզբը քաղդեացիների աշխարհում ենք տեսնում, որը շատ հեռու էր Նոյի բնակություն հաստատած երկրից, ինչը հայտնի է դառնում Ծննդոց 11:31-ից. «Թարան իր որդի Աբրամին... Քաղդեացվոց երկրից առավ տարավ Քանանացվոց երկիրը: Նրանք հասան Խառան ու բնակվեցին այնտեղ»: Եվ քանզի Աստված ցանկանում էր Աբրահամով նոր ազգ ստեղծել, ասաց նրան. «Հեռացի՛ր քո երկրից, քո ցեղից ու քո հոր տնից և գնա՛ այն երկիրը, որ ցույց կտամ քեզ: Քեզ մեծ ցեղի նախահայր պիտի դարձնեմ»*[49]*: Եվ արդարև, Սուրբ Գիրքը բոլորովին չի կամենում ճանաչել Աբրահամի նախնիներին, որոնք քաղդեացիներ էին, այլ հիշելով հրեաների ծագումը՝ միշտ Աբրահամի այս պատմությունից է սկսում, որի սերունդն աստիճանաբար բազմանում էր, որը հետագայում նոր ազգ պիտի լիներ: Այս մասին է ցանկանում հիշեցնել հրեաներին Օրինաց 10:22-ում, որ նրանք հնագույն ազգերի մեջ չէին մտնում. «Քո նախնիները յոթանասուն հոգով եկան Եգիպտոս, իսկ հիմա քո Տեր Աստվածը քեզ երկնքի աստղերի չափ բազմամարդ է դարձրել»: Ինչի համար էլ հրեա ազգին բոլոր ազգերից առաջինն ասելը հրեական մեծամտություն է և դուրս է Սուրբ Գրքից, քանզի այն, Նոյից սկսած, ցույց է տալիս հրեաների ծննդաբանությունը և հայտնապես ասում, որ մինչ Աբրահամը հրեաները դեռ չկային ուրույն ազգերի*[50]

---

[48] Ծննդոց 28: 2, 5:

[49] Ծննդոց 12:1-2:

[50] Հրեաների ծագումն ու սկզբնավորությունը սկսվում է ոչ թե ազգից, այլ հետո՝ մի տնից, որը կամաց-կամաց բազմանալով՝ ազգ է դառնում: Սա հստակ ցույց է տալիս նաև Սուրբ Գիրքը, որ հրեաները զրկված են առաջին ազգ լինելուց. «Դու ես քո Տեր Աստծո սուրբ ժողովուրդը և քո Տեր Աստվածը քե՛զ է ընտրել, որ դու լինես իր սեփական ժողովուրդը, քան թե երկրի վրա ապրող մնացած բոլոր ազգերը: Տերը բարեհաճեց ու ընտրեց ձեզ ոչ նրա համար, որ դուք բոլոր ազգերից բազմամարդ եք, քանի որ դուք բոլոր ազգերից սակավաթիվ եք, այլ նրա համար, որ Տերը սիրում էր ձեզ» (Բ Օրինաց 7:6-8):

շարքում, այլ քաղդեացիներն էին, այն էլ՝ կռապաշտ։ Արդ, հաստատուն պատճառ չենք տեսնում, որ քաղդեացիներին կարելի լիներ համարել առաջին ազգ. կամ ի՞նչ նպաստավոր բան կա, որպեսզի լեզվի առաջնությունը տան նրանց, քանզի նրանք նույնիսկ Նոյի մոտ չէին վերադարձել»[51]։

Աբրահամի նախնիները կռապաշտ էին

«Ջրհեղեղից հետո հայերի ցեղապետ Նոյը խոսում էր իր հոր՝ մինչջրհեղեղյան մարդու՝ Ղամեքի լեզվով, և ուրեմն հայերեն լեզուն հնարավոր է համարել մարդկության ամենահին լեզուն» [52]։

Ի տարբերություն Հայկի՝ Եբերը, ինչպես նաև նրա սերունդները, հեռացել էին Աստծուց՝ հետևելով ներբովթյան կռապաշտությանը. ***«Այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. «Նախկինում ձեր նախահայրերը՝ Թարան՝ Աբրահամի հայրը և Նաքորի հայրը պանդխտել են գետի այն կողմը և պաշտել օտար աստվածներին»»***[53]։

Եթե Եբերը բարեպաշտ էր, ինչի պատճառով էլ նրա լեզուն չխառնակվեց, ապա ինչո՞ւ նրանից սերված ժողովուրդն այդքան շուտ հեռացավ Աստծուց և ընկավ կռապաշտության մեջ. չէ՞ որ Աբրահամի հայրը և եղբայրները կռապաշտ էին, իսկ Աբրահամը թեև արհամարհել էր կուռքերին, բայց ի սկզբանե աստվածապաշտ էլ չէր, քանզի դեռ չէր ճանաչում Աստծուն. ***«Աբրահամի նախահայրերը կռապաշտ էին։ Նրա հայրը կռապաշտ էր... Ինչպե՞ս Աբրահամը ճանաչեց Ճշմարիտ Աստծուն։ Անկասկած, Աստծո անմիջական հայտնության միջոցով»***[54]։

Եվ եթե ասվում է, որ ***«Աբրահամի նախահայրերը»*** *կռապաշտ էին, ուրեմն պետք է եզրակացնել, որ հակառակ Հայկ նահապետի՝ նրանց նախահայր Եբերն էլ զերծ չի մնացել այդ անկումից.*

«Ինչպես Եբերի սերունդն Աբրահամից առաջ որպես ազգ հաստատված չէր, այնպես էլ չէր մնացել առաջին աստվածապաշտության մեջ, այլ, ինչպես հայտնապես գրում է Սուրբ Գիրքը, հրեաների նախնիներն Աբրահամից առաջ կռապաշտ էին. «Հեռացրե՛ք օտար աստվածներին, որոնց պաշտեցին ձեր հայրերը գետի այն կողմում... որոշեցե՛ք այսօր, թե ո՛ւմ եք պաշտելու. ձեր հայրերի՞ աստվածներին, որոնք գետի այն կողմում էին...»[55]»[56]։

Հուդիթի գրքում նույնպես գրված է այդ մասին. ***«Այս ժողովուրդը քաղդեա-***

---

[51] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 25, 26:

[52] Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888, ст. 15.

[53] Հեսու Նավե 24:2:

[54] Генри Г. Геллей, Библейский Справочник Геллея, Канада, 1989, ст. 103.

[55] Հեսու Նավե 14-15:

[56] Ղուկաս Ինճիճեան... էջ 26, 27:

ցիների ազգից է և առաջինը պանդխտեց Միջագետքից, որովհետև քաղդեացիների երկրում չկամեցավ պաշտել իր հայրերի աստվածներին. նրանք դուրս եկան իրենց հայրենի երկրից և երկրպագեցին երկնքի Աստծուն, որին ճանաչում էին իբրև ճշմարիտ Աստծու: Նրանք, դուրս գալով, գնացին Միջագետք և այնտեղ պանդխտեցին բազում օրեր»[57]:

Սուրբ Գրքի այս համարներում ինքնին հերքվում է այն թյուր կարծիքը, որ Նոյի ժամանակներից սկսած՝ ճշմարիտ աստվածապաշտությունը հաջորդաբար փոխանցվել է Եբերի սերնդին, և Նոյի լեզուն էլ պահպանվել է նրանց մոտ. «Այս ամենը ինքնահնար հրեական կեղծիք է և սնապարծություն, հրեաների նախկին րաբունապետերի կողմից հորինված, ինչը նաև Հուետիոսն է մերժում՝ ասելով. «Անհիմն և առանց վկայության ոմանք գրում են, թե Սեմը կամ Եբերը բաբելական միաբանությանը մասնակից չեղան, և դրա փոխարեն ինքը և իր սերունդները Տիրոջից արտոնություն ստացան՝ պահելու առաջին և սրբազան լեզուն»:

Այլ պետք է ասել, որ կռապաշտությունը վաղուց ներմուծվել էր Եբերի սերնդի մեջ, ինչպես վերը՝ Սուրբ Գրքի վկայության մեջ տեսանք, ինչը կարող ենք տեսնել նաև այլ մեկնիչների մոտ, որտեղից էլ հայտնի է դառնում, որ ընկել էին Ներբրովթի՝ քաղդեացիների հիմնադրի բռնատիրության տակ և նրանից էլ կռապաշտություն սովորել: Այս է հիշում նաև մեր Մագիստրոսն՝ Աբրեհիմ ամիրային ուղղված թղթում, թե «Աբրահամն առաջինը գիտեր, թե գոյություն ունի Աստված, սակայն ցանկանում էր ուղղապես ճշմարտախոհ լինել և ստուգությամբ տեղեկանալ, ինչը մոռացության էր մատնվել իր հայրերի մոլորության պատճառով, որոնք հետամուտ չէին եղել արդարությանը, այլ մոլորվել էին կռապաշտությամբ»: Բազում են նախնիների վկայություններն Աբրահամի առաջին հավատքի մասին: Հովսեփոսն (Փլավիոս) իր հնախոսության մեջ՝ 1:7-ում գրում է. «Աբրահամն առաջինն էր, որ համարձակվեց ասել, թե Աստված մի է, և ամբողջ տիեզերքը Նրա գործն է: Փիլոնը գրում է, թե Աբրահամը նախ կռապաշտ էր, իսկ մի այլ տեղ գրում է, թե Աբրահամի հայր Թարան աստղերին էր պաշտում, բայց Աբրահամի միջոցով ճանաչեց նրանց ստությունը: Սվիդասը գրում է. «Գերբնական լույսով լուսավորված Աբրահամը հանդիմանում էր իր հորը՝ Թարային, որ կուռքեր էր պատրաստում և վաճառում՝ ցույց տալով դրանց ստությունը»: Իսկ բազում րաբբիներ հաստատում են, որ Աբրահամը մինչև 48 տարեկան՝ կուռքերին էր պաշտում:

Ի դերև են ելնում նաև բազում քրիստոնյա մատենագիրների բերած անզոր փաստերը, թե իբր քանի որ Աստված ընտրեց այս ժողովրդին, որ Իրեն պաշտեն և կրթեց նրանց ճշմարիտ աստվածապաշտությամբ, և այդ նույն սերնդից էլ ելավ Քրիստոս-Մեսիան՝ աշխարհի Փրկիչը, և Եբերի լեզվով էլ գրվեց Աստվածաշունչ Սուրբ Գիրքը, պետք է, որ նրանց լեզուն անպատիժ մնար և լիներ առաջին լեզուն, որով Աստված խոսեց Ադամի և Նոյի հետ: Այսպիսի եզրահանգման կարելի էր գալ այն դեպքում, եթե Սուրբ Գիրքը վկայած չլիներ նրանց կռապաշ-

[57] Հուդիթ 5:6-8:

տութ յան մասին, բայց հայտնապես վկայելուց հետո, ինչպես տեսանք, ինչո՞ւ պիտի հավատանք, թե Նոյը մնացել է Եբերի տանը և բնակվել Միջագետքում, որի մասին ոչ մի վկայություն չկա ո՛չ Սուրբ Գրքում և ո՛չ էլ նրանից դուրս: Իսկ Աստվածաշունչ Գրքի բարբառը ոչինչ ցույց չի տալիս:

Պետք է նաև ասել, որ եբրայական լեզվի՝ այս առավելությունները չունենալը հրեա ազգին որևէ թերություն չի համարվում, ինչպես նաև Դրախտի՝ նրանց բնակության վայրում չգտնվելը և Նոյան տապանի այնտեղ չիջնելը, քանզի նրանց ազգի բոլոր առավելությունները հոգևոր են, և հետագայում միայն խաբեպատիր րաբբիների խոսքերն են, որ ամեն ինչ իրենց ազգին վերագրել են նկրտում, ինչպես նաև հնությունը, որ Աբրահամից առաջ էր: Այլ պարտ է հիշել, թե րաբբիները հնության մասին ինչ որ խոսում են Սուրբ Գրքից դուրս, թյուր է»[58]:

Այսպիսով, եթե հնարավոր է, որ նույնիսկ բարեպաշտ Հայկի լեզուն փոխված լինի Բաբելոնի վրա եկած այդ համընդհանուր պատժի հետևանքով, ապա ոչ մի հիմք չկա ենթադրելու, թե Եբերի լեզուն չի փոխվել:

Միայն հնարավոր էր, որ առաջին՝ ադամական լեզուն պահպանված մնար խառնակման վայրից հեռու գտնվող Արարատյան երկրում բնակվող սուրբ և բարեպաշտ Նոյ նահապետի ու նրա հետ մնացած ժողովրդի մոտ:

Բայց բուն խառնակման կիզակետում դա չէր կարող լինել. ***«Առաջին Աստվածապաշտ ժողովուրդն այն ազգն է եղել, որ տապանից իջած օրից մինչև այժմ Մասիսի տակ է բնակվում, այն է՝ Հայոց ազգը: Իսկ Աբրահամ նահապետի հոր կռապաշտ լինելը Սուրբ Գրքից հայտնի է»***[59]:

Ե՞րբ և ինչ պայմաններում առաջացավ Եբրայերեն լեզուն

«Հայերենը, իբրև Արարատյան լեզու, կոչվում է
Աղոթքի լեզու. այն աստվածային
Ճոխ ու աննման լեզու է»[60]:

Եթե Աբրահամը, Իսահակը, Հակոբը խոսել են ասորերեն, ապա ե՞րբ և ի՞նչ պայմաններում առաջացավ եբրայերենը, և եթե այն չի սերում Եբերից, ապա ինչո՞ւ է կոչվում եբրայերեն: Ի դեպ, նշենք, որ Հին Կտակարանը ոչ մի տեղ չի հիշատակում եբրայերեն լեզվի մասին:

«Հին Կտակարանում «Եբրայերեն» կամ «եբրայերեն լեզու» արտահայտությանը որպես հրեաների հնագույն լեզու՝ մենք չենք հանդիպում: Հնագույն եբ-

---

58 Ղուկաս Ինճիճեան... էջ 27-29:

59 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

60 Նիկողայոս Մառ: Տե ս Նշան Որբերեան, Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

րայերեն լեզու այնտեղ կոչվում է կա՛մ քանաներեն լեզուն, կա՛մ հրեերենը: Իսկ Նոր Կտակարանում հանդիպած «եբրայերեն լեզու» արտահայտությունը պետք է հասկանալ որպես արամերեն» [61]:

Ոմանք ասում են, որ ասորերեն խոսող Աբրահամը, գալով Քանան, այնտեղ սովորեց քանաներեն լեզուն, որն էլ, իբր, եբրայերենն է: Սակայն դա ընդունելի չէ, քանի որ այդ դեպքում կստացվեր, թե Քանանում բոլոր ազգերը խոսում էին եբրայերեն.

«Հուետիոսն ասում է. «Սրբազան լեզուն կա՛մ հստակ ու անթերի չմնաց Սեմի և Եբերի տանը, կա՛մ էլ եբրայերեն լեզուն առաջին և սրբազան լեզուն չէ: Քանզի եբրայական լեզուն քանանացիների լեզուն է, որը կոչվում է փյունիկերեն, ինչը պահպանվել է աշտարակաշինությունից ի վեր, ըստ այնմ էլ ոմանք ասում են Աբրահամի համար, որ նա երկու լեզուներով էր խոսում՝ քաղդեերեն, որ աշտարակաշինության ժամանակ էր առաջացել և քանանացիներինը, որ եբրայերեն կոչվեց [62]***, որն էլ եղավ Աբրահամի հաջորդ սերունդների խոսակցական լեզուն»*** [63]:

Մեկնիչներն ասում են, որ նրանց լեզուն փոխվել է կարմիր ծովն անցնելու ժամանակ: Եթե հրեաները խոսում էին Աբրահամից ժառանգած ասորերեն լեզվով, ապա երկար ժամանակ դեգերելով քանանացիների երկրում՝ անխուսափելիորեն շփվում էին տեղաբնակների հետ. և նրանց ասորերենը պետք է որոշ ազդեցություն կրած լիներ: Արդեն աղավաղված ասորերենով, դեռ նոր-նոր ձևավորվող ազգը, բաղկացած 75 տղամարդուց, մտավ Եգիպտոս և 400 տարի ապրեց այնտեղ: Բնական է, որ նրանց լեզվի վրա անխուսափելիորեն ավելի մեծ ազդեցություն թողեց եգիպտերենը:

Տրամաբանական է, որ նրանց այդ խառնակ լեզուն ընդհանրապես պատշաճ չէր կարող լինել այն ժողովրդի համար, որը մեծ դեր պիտի կատարեր՝ անցնելով Կարմիր ծովով, նաև՝ Մովսեսը պետք է գրեր Հնգամատյանը, հետագայում էլ՝ ամբողջացվեր Հին Կտակարանը:

Այս պատճառով առավել ընդունելի է Վարդան Արևելցու և այդ հարցում նրա կողմնակիցների այն կարծիքը, որ երբ հրեաներն անցան Կարմիր ծովով, այդ ասորա-քանանա-եգիպտական խառնակ լեզուն թողեցին այն ափում և նոր լեզվով ելան Սինայի Անապատ, ըստ այնմ, թե՝ ***«հինն անցավ, և հիմա ամեն ինչ նոր եղավ»*** [64]:

Եվ դա իրենց բուն լեզվին՝ ասորերենին հարազատ սեմական լեզու էր, այսինքն՝ եբրայերենը:

«Նրանք դուրս եկան հինգշաբթի օրը և կիրակի օրն անցան Կարմիր ծո-

---

61 Доктор Эрик Нюстрем, Библейский словарь, 1989, ст. 120.

62 Աբրահամ նահապետը խոսում էր քաղդեերենով, Փիլոնը նույնպես ասում է, թե Սուրբ Գիրքը գրել են քաղդեերեն լեզվով. սրանով ցանկացավ ասել՝ այն լեզվով, որով խոսեց Աբրահամը, երբ դուրս եկավ քաղդեացիների երկրից:

63 Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 31:

64 2 Կորնթ. 5:17:

վով... Եվ պարգևով նոր լեզու ստացան և նրանով երգում էին հին օրհնանքը, որը նման էր նրանց հայրենի լեզվին»[65]:

Այսինքն, այն լեզուն, որով նրանք խոսում էին Սինայի անապատում Մովսեսի ժամանակ, մի նոր լեզու էր. դա այլևս նրանց նախկին լեզուն՝ ասորերենը չէր:

Եթե այդպես է, ապա ի՞նչ կապ կարող է ունենալ այդ նորաստեղծ լեզուն Եբերի անվան հետ, ինչո՞ւ են այն անվանում եբրայերեն: Հարցն այն է, որ «եբրայեցի» բառը շատերը բնավ չեն կապում Եբերի անվան հետ, քանզի այն թարգմանվում է «անցնել», ինչը «եկվորությյան» խորհուրդն ունի, և հրեաներին եբրայեցի անվանելով՝ հասկանում են ոչ թե որպես Եբերից սերվածներ, այլ՝ Ասորեստանից Քանան, իսկ հետագայում՝ Եգիպտոսից Սինա պանդխտած եկվորներ.

««Եբրայեցի» բառն առաջացել է... եբեր (անցնել) բայից, ինչը նշանակում է օտարերկրացի, եկվոր: Ժողովուրդը, որ ճանաչված էր եբրայեցի անվամբ, Քանանի երկիր եկավ՝ Եփրատն անցնելով: Այդ պատճառով էլ բնական էր, որ քանանացիները նրանց անվանում էին եբրայեցիներ, այսինքն՝ այլ երկրից եկածներ, ինչպես որ մենք ընդհանրապես որևէ օտարերկրացու մասին ասում ենք, որ նա եկել է ծովի այն կողմից»[66]:

Քանանացիներն ասորի ժողովրդին քաջ գիտեին. իրենց մոտ ժամանած Աբրահամն էլ ասորի էր համարվում, և եթե նա Եբերից սերված լինելու պատճառով եբրայեցի էլ անվանվեր, ապա քանանացիների համար դա ոչ մի նշանակություն չէր ունենա՝ լինելով իրենց համար միանգամայն անծանոթ անվանում. նրան ոչ թե եբրայեցի կկոչեին, այլ՝ ասորի: Եվ եթե Սուրբ Գրքի թարգմանություններից մեկում ասվում է «եբրայեցի Աբրահամը», ապա դա պետք է հասկանալ «եկվոր Աբրահամը»:

*Հովսեփի ժամանակ նույնպես, երբ Հակոբից նոր-նոր ձևավորվում էր հրեա ազգը, երբ Հովսեփը և Բենիամինը դեռ չէին ամուսնացել, այդ մի քանի տասնյակ մարդիկ եթե ինչ-որ չափով Քանանում ճանաչված էլ լինեին որպես եբրայեցիներ, ապա հզոր և մեծ Եգիպտոսի համար նրանք, միևնույն է, կլինեին անհայտ մի ժողովուրդ: Եգիպտացիներն ընդհանրապես այդ փոքրաքանակ ժողովրդի մասին ամենահեռավոր գաղափարն անգամ չէին կարող ունենալ, հատկապես, որ ամբողջ Եգիպտոսում միայն Հովսեփն էր Աբրահամի սերնդից: Եվ եթե նրանք ազգությամբ եբրայեցի էլ կոչված լինեին, ապա այդ եբրայեցուն իր ազգի անվամբ ոչ ոք չէր էլ հիշի, քանզի նա բազմաթիվ ստրուկների մեջ ընդամենը մի օտարերկրացի էր՝ եկվոր ստրուկ: Այսպես, Պետափրեսի կինը, մեղադրելով Հովսեփին, ասաց. «**Մենյակս մտավ քո բերած եբրայեցի ծառան, որպեսզի խայտառակի ինձ**»[67]:*

Բնական է, որ այստեղ «եբրայեցի ծառան» պետք է հասկանալ օտարերկրացի, եկվոր ծառա: Նաև երբ տակառապետը փարավոնին պատմում էր Հովսե-

---

[65] Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001, էջ 50:

[66] Библейская Энциклопедия Архимандрит Никифора, Москва, 1891, ст. 210.

[67] Ծննդոց 39:17:

փի մասին, ասում էր. ***«Այնտեղ մեզ հետ էր դահճապետի ծառա եբրայեցի մի պատանի»***[68]*:*

Այստեղ դարձյալ պետք է հասկանալ նույն կերպ՝ ***«Այնտեղ մեզ հետ էր դահճապետի ծառա՝ եկվոր մի պատանի»:***

Նաև գրված է՝ ***«եգիպտացիները զզվում էին եբրայեցիներից և նրանց հետ սեղան չէին նստում»*** [69]*:*

Այդ ի՞նչ առանձնահատուկ և հանրաճանաչ ազգ էին եբրայեցիները՝ այդ փոքրաթիվ մարդիկ, որ ամբողջ Եգիպտոսում նրանց նկատմամբ առանձնահատուկ նողկանք էին տածում: Ուրեմն, միանգամայն հստակ է, որ եգիպտացիները ոչ թե զզվում էին այդ ժամանակ դեռ միանգամայն անհայտ Աբրահամի սերնդի մի քանի ներկայացուցիչներից, այլ ընդհանրապես բոլոր եկվորներից, այսինքն՝ «եբրայեցիներից»:

Այդպես պետք է հասկանալ նաև Մովսեսի դիպվածում, որտեղ միտքը շատ ավելի հստակ է արտահայտված. ***«Նա նկատեց, որ մի եգիպտացի ծեծում էր իր եբրայեցի եղբայրներից մեկին՝ մի իսրայելացու»*** [70]*:*

Այսինքն՝ եգիպտացին ծեծում էր ազգությամբ իսրայելացի Մովսեսի եկվոր եղբորը: Սակայն հավանական է նաև, որ Մովսեսի ժամանակ ընդհանրապես հրեաներին հրեա կամ իսրայելացի չէի անվանում, այլ հենց՝ եբրայեցիներ, սակայն ոչ որպես եբերից սերված լինելու համար, այլ քանի որ մեծ թշնամանքով էին վերաբերվում հրեաներին. այդ պատճառով էլ հատուկ շեշտում էին նրանց՝ այդ երկրում օտարական լինելը:

«Եբրայեցիներ, այսինքն՝ «եկվորներ», «ուրիշ երկրից եկածներ» անվանումով իսրայելցիները հայտնի էին ուրիշ ազգերին» [71]*:*

Անցնելով Եփրատը՝ նրանք կոչվեցին եբրայեցիներ, այսինքն՝ օտարականներ: Այնուհետև անցնելով Կարմիր ծովով՝ նորից որպես օտարական մտան Սինա և Քանան, որով մեկ անգամ ևս հաստատվեց իրենց «եբրայեցի», օտարական անվանումը:

«Բայց զարմանում եմ, քանզի ոմանք ասում են, թե իսրայելցիները եբերից կոչվեցին եբրայեցիներ: Եվ որ նրա լեզուն մինչև այժմ պահպանում են հրեաները: Սակայն դա անգիտություն է, քանզի Իսրայելի ազգն սկիզբ է առել Հակոբից և Կարմիր ծովն անցնելուց հետո կոչվեցին եբրայեցիներ, քանզի «եբեր» թարգմանվում է անցնել»,- *գրում է ասորիների Միքայել պատրիարքը* [72]*:*

Այս դեպքում անկասկած է, որ նախ՝ Բաբելոնում եբերի լեզուն նույնպես փոխվել էր. երկրորդ՝ նա էլ էր դարձել կռապաշտության հետևորդ. երրորդ՝ հրեաները մինչև Մովսեսի ժամանակները խոսել են ասորերեն. չորրորդ՝ «եբրայեցի» անվանումը եբերի հետ որևէ առնչություն չունի, այլ նշանակում է եկվոր. և հինգերորդ՝ հին եբրայերենն առաջացել է միայն Կարմիր ծովով անցնելուց հետո:

---

[68] Ծննդոց 41:12:

[69] Ծննդոց 43:32:

[70] Ելք 2:11:

[71] Библейский словарь, Доктор Эрик Нюстрем 19-й в. 1989, ст. 120.

[72] Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, Յերուսաղէմ, 1871, էջ 14:

Արդյո՞ք Ծննդոց Գրքի անվանումները հավաստում են եբրայերենի՝ առաջին անխառն լեզու լինելը

«Աստծո հետ խոսելու միակ լեզուն հայերենն է»[73]:

Եբրայերենն առաջին լեզու համարողներն իրենց կարծիքը հիմնավորում են նրանով, որ Ադամից մինչև Աբրահամ գործարկվող անձնանունները եբրայական ծագում ունեն.

«Այն մասին, թե ինչպիսին էր ամբողջ մարդկության սկզբնական լեզուն, կարող ենք միայն ենթադրություններ անել, բայց անկասկած, ինչը նաև հնագույն հեղինակների կարծիքն է (Որոգինես, Հերոնիմոս, Օգոստինոս, Դիոդորոս, Եվսեբիոս և այլք), առաջնությունը տրվում է սեմական լեզուներից մեկին, որն իր հերթին ունի առավելություն. միայն եբրայական լեզվում են առկա առաջին անունները (Ադամ, Եվա, Կայեն, Սեթ)»[74]:

Այս հարցին ևս չպետք է մոտենալ՝ ուղղակի մի հայացք գցելով տվյալ փաստին: Նախ ասենք, որ այս անվանումներն իմաստավորված են. ամեն մեկն իր նշանակությունն ունի, և հավանական է, որ Մովսեսին այդ անվանումները թելադրվել են թարգմանաբար: Քանզի Ադամ, Եվա և մյուս անվանումներն իրականում եղել են հատկանիշ արտահայտող բառեր. Ադամ՝ մարդ, Եվա՝ կյանք և այլն:

*Սուրբ Գիրքն ասում է. **«Աստված ստեղծեց մարդուն՝ Իր պատկերով և նմանությամբ»**, և գրված չէ, թե Ադամին ստեղծեց Իր պատկերով և նմանությամբ. միայն երկրորդ գլխում է շեշտվում Ադամ բառը: Նմանապես նաև Ադամը, երբ անուն էր տալիս Եվային, ասաց՝ սա կոչվի կին, և ոչ թե՝ Եվա, և ապա՝ նրան անվանեցին Եվա, այսինքն՝ կյանք: Ուրեմն, կողածինն ի սկզբանե անվանվեց «կյանք» և ոչ թե Եվա: Իսկ երբ Մովսեսն այն գրեց, այդ ժամանակ կյանքը թարգմանաբար դարձավ Եվա:*

Դա առավել ցայտուն է երևում, երբ տեսնում ենք հայերենում կյանք և կին բառերի նույնությունը:

*Հայ բարբառների մեջ կյանք բառը հաճախ հնչում է կինք. **«Հայկական լեզվում կին և կյանք նույն արմատից են առաջացել, ինչը հատկապես երևում է հոգնակի թվի դեպքում, որովհետև մենք գործածում ենք հատկապես հոգնակի թվով, օրինակ՝ կյանք, կանայք, կենաց, կանանց»[75]:***

Հնգամատյանի գրի առնվելուց դեռ շատ առաջ շումերների, աքքադացիների և այլ ազգերի սեպագրերում պահպանվել են նույն հերոսների անվանումները, սակայն միմյանցից միանգամայն տարբեր, ինչպես որ Նոյ անվանումը

---

[73] Ջորջ Բայրոն, տե՛ս Նշան Որբերեան: Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20): http://hy.wikiquote.org/wiki

[74] А. П. Лопухина, Толкования Библия, том 1, Петербургъ, 1904-107, ст. 79.

[75] Վահան Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 17:

հրեական ծագում ունի, սակայն Ջիսուստրան, Քսիսութրեսը, Սատուրնոսը Նոյի շումերական, աքքադական և հունական անվանումներն են: Նրանց մեջ կան այնպիսիները, որոնք շատ ավելի վաղ են արձանագրված եղել, քան երբ Մովսեսը գրեց Նոյ անունը:

Հնարավոր է նաև, որ անտեսելով հները՝ Տերը Մովսեսին նոր անվանումներ է թելադրել: Ինչպես դա արվեց Հին և Նոր Կտակարաններում, երբ Հակոբը դարձավ Իսրայել, Սիմոնը՝ Պետրոս, Ղևին՝ Մատթեոս, Թադեոսը՝ Հուդա, Սավուղը՝ Պողոս, Հովսեփը՝ Բառնաբաս:

Մինչ օրս էլ կիրառվում է հոգևորական օծվողին նոր անուն տալը: Այդպես և միգուցե, Քսիսութրեսը վերանվանվեց Նոյ...

***«Իսկ որ ոմանք պնդում են, թե այն եբրայեցիների լեզուն էր, ապա հաստատուն պատճառ չունեն, բացի նրանից, թե Սուրբ Գրքի մի քանի բառեր, հատկապես հատուկ անուններ, աշտարակաշինությունից առաջ եբրայերեն լեզվով են ստուգաբանվում: Սակայն դա այդպես չէ, քանզի Մովսեսը եբրայերեն լեզվով և եբրայեցիների համար գրեց այդ անունները՝ դրանք թարգմանելով եբրայերեն, քանի որ դրանք գործածվում էին եբրայերենով և իրերի նշանակությունն էին հայտնում. օրինակ՝ քանի որ Ղամեքը որդի ունենալով՝ նրան այնպիսի անվամբ կոչեց, որը նշանակում էր հանգստություն, Մովսեսն այս իմանալով՝ եբրայերեն այնպիսի բառ գործածեց, որն ուներ հանգստություն նշանակությունը. և քանի որ Նոյ եբրայերեն նշանակում է հանգստություն, Մովսեսն էլ այդ բառն օգտագործեց. այդպես նաև՝ մյուսները: Եվ պետք էր, որ Մովսեսն այսպես աներ, որովհետև եբրայերեն էր գրում, և եթե հունարեն լեզվով գրեր, նույնը կհայտներ հունարեն բառերով:*

Եվ սա մարդկանց մոտ ընդունված սովորություն է, քանզի ինչ լեզվով գրում են, նույն լեզվով էլ բացատրում են թե՛ շարադրելու և թե՛ թարգմանելու դեպքում: Արտաքին մատենագիրները, պատմելով Նոյի և Ջրհեղեղի մասին դեպքերը, Նոյի անունը մեջբերում են ոչ Նոյ բառով, որ իրենց լեզվով ոչինչ չի նշանակում...

Հովսեփոսը, հասնելով «Ի գիրս նախնյաց»-ի 3-րդ գլխի 21 համարին, ասում է, թե հայերն այն վայրը, որտեղ Նոյը ելավ տապանից, կոչում են Աբոպաթերիոն, և դրանով նա ոչ թե ցանկանում է ցույց տալ, թե հայերն Աբոպաթերիոն բառով են կոչում այդ վայրը, այլ այնպիսի բառով, որ հունարեն աբոպաթերիոս է նշանակում, ըստ որի՝ այս բառը նշանակում է տեղ, որտեղ ելան կամ իջան, այսինքն՝ Նախիջևան:

Կասեք, թե նրանք մարդկային մտքով գրեցին կամ թարգմանեցին, իսկ Մովսեսն Աստվածային հայտնությամբ և ո՛չ իր սեփական թարգմանությամբ գրեց, և ինչպես որ այդ անուններն էին, այդ բառերով էլ Աստված հայտնեց նրան, և Մովսեսն էլ այդ բառերով գրեց, ինչպես որ եղել էին՝ նախքան լեզուների խառնակությունը:

Պատասխանեմ՝ Աստված եթե մեկին մի բան է հայտնում, օտար լեզվով չի հայտնում, այլ այն լեզվով, որ խոսում է նա, ում հայտնվել է: Ըստ այդմ էլ՝ Մովսեսին օտար լեզվով չհայտնեց, այլ այն լեզվով, որ նա խոսում էր, և քանի որ Մովսեսը խոսում էր եբրայերեն, Աստված էլ եբրայերենով հայտնեց նրան, և

Մովսեսն էլ այդ լեզվով գրեց, որով առավել ևս հստակ երևում է, որ Մովսեսը ոչ թե առաջին լեզվով գրեց, այլ՝ իր։ Ապա ուրեմն՝ եբրայերեն բառերի նշանակությամբ, որ գրել է Մովսեսը, պետք չէ ցույց տալ, թե եբրայերեն լեզուն առաջինն էր։ Այս բանը լավ քննել է նաև վենետիկցի երևելի փաստաբան Հովհաննես Անտոն Կոստանդեանը (հատոր ա, 106-108, տպ. 1780թ.), որտեղ ասում է, թե դրանով պետք չէ հաստատել, թե եբրայերեն լեզուն առաջինն է։ Եվ ապա մեջբերելով հրեա րաբունիների խոսքերը, որ ասում են, թե եբրայերեն բառերը հայտնությամբ են ստացված և ոչ թե մարդկանց հաճությամբ, ծիծաղում է նրանց այդպիսի պատճառաբանությունների վրա և ինքն էլ իր հերթին բազում պատճառներ է բերում, թե եբրայերեն լեզուն առաջինը չէ և ավելացնում է, թե դա պետք չէ երազել, այլ՝ ապացուցել»[76]։

Ոչ միայն Ծննդոցում օգտագործված անձնանունները, այլև տեղանունները չեն կարող հավաստել, որ դրանք գրվել են առաջին՝ անխառն լեզվով. «Հրեաների լեզուն չի կարող Նոյի ժամանակվա անձնանունների և տեղանունների փաստացի հիշատակարան հանդիսանալ։ Քանզի Սուրբ Գրքում հատուկ և այլ նշանակություն ունեցող անունների հիշատակությունը, որ ոմանք առաջ են բերում հաստատելու համար հրեաների լեզվի առաջնությունը, անզոր են, քանզի Մովսեսը գրում էր՝ թարգմանելով դրանք իր՝ եբրայական լեզվով, այն նշանակությամբ, որով Ադամն ու Նոյն իրենց առաջին լեզվով էին կոչել։ Ինչպես որ Կրոտիոսն է գրում, թե Մովսեսը եբրայերեն լեզվով գրեց, որպեսզի եբրայեցիներին ծանոթացնի դրանց այն նշանակությանը, որ ունեին առաջին (ադամական) լեզվով։ Այդպես էլ Աստվածաշնչի այլ թարգմանիչներն իրենց թարգմանություններն ըստ իրենց լեզվի նշանակության գրեցին։

Իսկ մեր թարգմանիչները հայերեն լեզվով թարգմանելով՝ որոշ անուններ նույնությամբ թողեցին, ինչպես որ Ծննդոցում էր։ Իսկ այլ ազգերի անունները, որ Մովսեսը չի թարգմանել, այլ բնիկ լեզվով է թողել, գիտենք, որ այլ ազգի բառեր են և ոչ հրեական, որի պատճառով ոմանք անխոհեմաբար եբրայական բառ կարծելով՝ բոնի կերպով ցանկանում են դրա նշանակությունը գտնել, ինչպես հայկական Արարատ անվան դեպքում, երբ այն հրեական բառ կարծելով՝ թարգմանեցին անեծք սասանման։ Որի նշանակությունը մենք գիտենք, թե որտեղից է առաջ եկել, երբ և ինչ պատճառով է այդպես կոչվել և զարմանում ենք այդ խորթ թարգմանության վրա։ Որի պատճառով էլ Հուետիոսը ճիշտ է գրում, թե բազում ազգերի անուններ, որ գրում է Մովսեսը, եբրայերենով ոչ մի նշանակություն չունեն, և առավել հավանական է, որ բազում տեղանուններ և անձնանուններ նա փոխել է իր լեզվի նշանակությամբ։

Այս երեք պատճառը բավական է, որ սուտ համարվեն հրեա լեզվի առաջնության մասին պնդումները՝ հիմնված տարբեր, մեծամասամբ հնարված նշանների վրա. դրանցով հայտնի է հատկապես իսպանացի Ապեն Եզրաս կոչվող րաբբին, ով ապրել է 12-րդ դարում»[77]։

---

[76] Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985 էջ 158, 159:

[77] Ղուկաս Ինճիճեան... էջ 29:

Եբրայերենն առաջին լեզու համարողները բերում են նաև այնպիսի անհեթեթ պնդում, ինչը կարող է բերել ամեն մի ազգ՝ այդ կերպ իր լեզուն համարելով առաջինը և ադամականը.

«Կան նաև այնպիսիք, որ ջանքեր են թափում՝ ցույց տալու համար, թե եբրայերեն լեզուն, որով գրեց Մովսեսը, Ադամինն էր։ Հայտնի է, որ ասում են, թե Մովսեսը խոսում էր Աբրահամի լեզվով, արդ՝ Աբրահամը խոսում էր Թարայի լեզվով, Թարան՝ Եբերի, Եբերը՝ Սեմի, Սեմը՝ Նոյի և Նոյը՝ Ադամի, քանզի եթե ուղիղ իջնենք, ապա Ադամի լեզուն, կամ որ նույնն է՝ Նոյի լեզուն, ուղիղ իջնում է Մովսեսին։ Այս դեպքում արժե հարցնել, թե մյուս ազգերը որտեղի՞ց իջան. եթե նրանք Ադամից և Նոյից են, ապա այս նույնը կարելի է ասել նաև նրանց դեպքում։ Ուրեմն ծաղրելի է՝ ճշմարտությունը ցույց տալու համար այս բանն առաջ քաշել»[78]։

Ինչո՞ւ են տիեզերական և հայ եկեղեցու հայրերից շատերը եբրայերենը համարել առաջին լեզու

«Մեր լեզուն կատարյալ է և շատ այլ ազգերի, գուցե և բոլորի լեզուներից էլ հին։ Հավաստի է թվում, ինչը նաև կարելի է բազում փաստերով ցույց տալ, թե սա է այն սկզբնական լեզուն, որով խոսում էին Ադամը, նրա որդիներն ու սերունդները» [79]։

Եբրայերենն առաջին լեզուն համարողների փաստարկներից մեկն էլ այն է, որ քրիստոնյա եկեղեցու բազմաթիվ հեղինակություններ, ինչպիսիք են՝ Որոգինեսը, Հերոնիմոսը, Օգոստինոսը, Դիոդորոսը, Եվսեբիոսը, Հովհան Ոսկեբերանը և այլք, եբրայերենն են համարել առաջին՝ ադամական լեզու։ Սակայն, այս հարցը դավանաբանական և վարդապետական նշանակություն չունի։

Հետևաբար, եկեղեցու հայրերը դրա մեջ խորամուխ չեն եղել, այլ ավելի մակերեսային մոտեցում են ցուցաբերել՝ պարզապես հիմնվելով այն փաստի վրա, որ Սուրբ Գիրքը գրվել է եբրայերենով։ Նրանք խորը գիտելիքներ չեն ունեցել նաև Հայոց հնագույն պատմության մասին, առավել ևս, որ այն ավելի ամբողջական գրի է առնվել միայն 5-րդ դարում՝ Մովսես Խորենացու կողմից.

«Հին սուրբ հայրերը եբրայերեն լեզվին են առաջնություն տալիս, սակայն ավելի բարեպաշտությունից ելնելով են այս կարծիքն ընդունել, քան՝ ուսումնասիրությամբ, ուստի իրենց կարծիքն էլ այս նյութի հետ կապված մեծ նշանակություն չունի, որովհետև սա Սուրբ Գրքի վերաբերյալ բան չէ» [80]։

---

78 Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985 էջ 161:

79 Պողոս Պատրիարք Ադրիանուպոլեսցի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին 2002 է., էջ 66:

80 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառ, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

*Այս մասին է խոսում և այն փաստը, որ Եկեղեցու մեծագույն հայրերից ոմանք էլ բնավ առաջնությունը չեն տվել եբրայերենին. **«Ոմանք կարծեցին, թե այն առաջին լեզուն կորած պետք է լինի, ինչպես կարծեց նաև Սբ. Գրիգոր Նյուսացին»**[81]:*

Ինչ վերաբերում է հայ մատենագիրներին և հոգևոր այրերին, ապա նրանք նույնպես, հիմնականում սևեռվելով վարդապետական, դավանաբանական, պատմական և այլ ուղղություններ վրա, լեզվի և նմանատիպ երևույթների հետ կապված տեղեկություններն առանց խորապես ուսումնասիրելու՝ մեքենայաբար վերցրել են հույն մատենագիրներից և հրեա պատմիչներից:

Հայ մատենագիրներից և հոգևոր հայրերից եբրայերենի օգտին են խոսել Գրիգոր Լուսավորիչը, Հովհաննես Երզնկացին, Գրիգոր Տաթևացին և այլք, բայց ինչպես ասվեց, այդ տեսակետը չի եղել խորը քննության արդյունք, քանզի նրանք վերաբերվել են դրան՝ որպես կարևորություն չներկայացնող հարցի.

«Լուսավորիչն առաջնությունը տալիս է եբրայերենին: Սակայն դա հույն հայրերի վարդապետությունն է՝ վերցված հրեաներից, քանզի նա սովորելով Կեսարիայում՝ հունական դպրոցում, այնպիսի ժամանակներում, երբ նրա առաջ խնդիր կար՝ կռապաշտությունից նոր դարձի եկածներին ճշմարիտ հավատն ուսուցանելու, ուշադիր չքննեց լեզվի մասին ստուգությունը, ինչը լսել էր հունական դպրոցից, որը զուտ բանասիրական խնդիր էր և հավատքին չէր վերաբերում: Սակայն այս փաստերն անզոր են, քանզի նման հարցերում նրանք՝ հայ հեղինակությունները, հետևում էին հրեա րաբունիներին, քանզի նրանք անտեղի էին համարում վիճել այնպիսի հարցերի շուրջ, որոնք հավատքի խնդրից դուրս էին: Եվ քանի որ սկզբնական Սուրբ Գիրքը գրվել էր հրեաների կողմից, այդ պատճառով էլ բանասիրության հետ կապված հրեա րաբունիներն ինչ գրում էին, նրանք ընդունում էին: Այդ պատճառով էլ սուրբ Հերոնիմոսն ասում է, թե նախնիներն, առհասարակ, հավատում էին, որ եբրայերեն լեզուն, որով գրվել է Հին Կտակարանը, սկզբնական լեզուն է եղել: Բայց սուրբ հայրերը դրանից բացի՝ այլ պատճառ չեն առաջադրում, մանավանդ որ սուրբ Գրիգոր Նյուսացին այլ կարծիքի է. թե Մովսեսը մի այլ լեզվով էր խոսում, որն առաջացել էր աշտարակաշինությունից հետո» [82]:

*Հույներն ու լատիններն էլ, համոզված լինելով, որ իրենց լեզուն առաջինը չի եղել, առանց խորամուխ լինելու, նախապատվությունը տվել են եբրայերենին՝ նույնպես հիմնվելով հրեական ավանդության վրա, ինչպես գրում է Ինճիճեանը. **«Որպես վերջաբան ասեմ, թե եթե այսպես է. ապա ինչո՞ւ հայոց մատենագիրները չեն ավանդում այս, այլ մանավանդ եբրայեցիներին են ընծայում: Պատասխանեմ. քանի որ նրանք այսքան ճշտությամբ և երկար չգրեցին, այլ թեթևակի անցան սրա վրայից և ուրիշների ավանդածի մասին խոսեցին: Իսկ թե հույներն ու լատիններն ինչո՞ւ են պնդում՝ ցույց տալով, թե եբրայեցիներինն է***

---

[81] Նույն տեղում, էջ 36:

[82] Ղուկաս Ինճիճեան... էջ 30:

առաջինը, ասենք, որ նրանք հայտնի գիտեն և նույնիսկ խոստովանում են, թե իրենց լեզուն առաջինը չէ և քանի որ այլ լեզուներից միայն եբրայերենն են հարգի համարում, այն էլ հաստատում են՝ իրենց ձեռքի տակ ունենալով նաև այս պատճառը, թե Սուրբ Գիրքը եբրայերենով գրվեց: Բայց այս պատճառները զորավոր չեն, քանզի Սուրբ Գիրքը կարելի էր գրել նաև հունարեն, ինչպես որ գրվեց. այն է՝ Մակաբայեցիների երկրորդ գիրքը և Նոր Կտակարանյան բազում գրքեր»[83]:

Սակայն ասել, որ հույները միանշանակ այդ կարծիքին են, ճիշտ չէ. կան հույն ծանրակշիռ հեղինակություններ, ովքեր գտնում են , որ Ադամի լեզուն եբրայերեն չէր կարող լինել: Ոչ միայն Գրիգոր Նյուսացին, այլև հինգերորդ դարի ականավոր աստվածաբան Թեոդորիտոս Կիրսացին է մերժել եբրայերենի՝ առաջին լեզուն լինելը: Նա և Նյուսացին իրենց աշխատություններով շատ հայտնի են եղել, և բնական է, որ ունեին բազմաթիվ հետևորդներ, ովքեր ընթերցելով նրանց աշխատությունները՝ նրանց կարծիքի կողմնակիցը պիտի դառնային:

Թեոդորիտոսը իր «Սուրբ Գրքի մեկնություններում»,[84] ասում է, որ եբրայերեն լեզուն սուրբ լեզու է, քանզի այն տրվեց Մովսեսին Սինա լեռան վրա, որով և նա գրեց Հնգամատյանը: Նաև Մովսեսն անձամբ սկսեց այն սովորեցնել միայն նրանց, ովքեր պիտի ներգրավվեին աստվածպաշտության քարոզչության մեջ. այլ խոսքով՝ պիտի դառնային քահանա կամ անցնեին ղևտական տարբեր ծառայություններին:

Թեոդորիտոսի հիմնավորումը կարելի է զուգահեռել գրաբար հայերենի հանդեպ մեր այսօրվա մոտեցմանը. որ այն օգտագործվում է հիմնականում եկեղեցում:

Նա «եբրայեցիներ» հին անվանումը նույնպես բացատրում է եկվոր լինելու հանգամանքով: Ասում է նաև, որ եթե եբերից սերված լինելու համար է, որ նրանք եբրայեցիներ են կոչվել, ապա ոչ միայն նրանք, այլև բազմաթիվ այլ ազգեր նույնպես պետք է անվանվեին եբրայեցի, քանզի նրանք էլ են սերվել Եբերից:

«Այսքան գրելուց հետո ընթերցողը հեշտությամբ կարող է տեսնել այն ընդդիմությունների անկարողությունը, որոնք իբրև զորավոր փաստ՝ առաջ են բերում՝ ի պաշտպանություն հրեաների լեզվի առաջնության. այն է՝ սուրբ հայրերի վկայությունները, որոնք լեզվի առաջնությունը նրանց են տալիս»[85]:

*Այս տեսակետի կողմնակից են նաև ժամանակակից հեղինակներից շատերը: Հանրահայտ հնագետ Դևիդ Ռոլը ասում է. **«Ինչպես որ Հիսուս Քրիստոսը չէր խոսում իր նախնիների լեզվով, Աբրահամը և իր սերունդները չէին տիրապետում իրենց սեփական նախնիների՝ Նոյի և Ադամի լեզվին»***[86]:

---

[83] Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, h. Ա, Երևան, 1985, էջ 164:

[84] Феодорит Киррский, Толкование на Священное Писание, Ветхий Завет. http://azbyka.ru/otechnik/?Feodorit_Kirskij/tolkovanie-svjashhennogo-pisanija

[85] Ղուկաս Ինճիճեան... էջ 30-31:

[86] Дэвид Рол, "Генезис цивилизации откуда мы произошли...", Москва, 2005. ст. 155-157.

Իհարկե, ունենալով եբրայերեն լեզվի օգտին այսքան հիմնավորումներ (Հին Կտակարանի լեզուն, Ծննդոց գրքի անվանումները և սուրբ հայրերից շատերի կարծիքն այդ մասին), կարծես մեծ արգելքի ենք դեմ առնում՝ առաջնությունը հայերեն լեզվին տալու համար։

Սակայն հենց բերված փաստարկներից ելնելով՝ կարող ենք համոզված պնդել, որ իսկապես բուն հայերենն է եղել մեր նախահայրերի՝ Ադամի, Նոյի և Հայկի լեզուն, այլ ոչ թե եբրայերենը.

«Եթե ըստ Սուրբ Գրքի՝ մարդկանց Ջրհեղեղից փրկող տապանը,– ասում է Հովհաննես Շրոդերը,- Արարատ լեռան վրա հանգչեց, ապա ո՞վ կարող էր տարակուսել, որ ութ հոգով մարդկային ազգի նախահայրերն այնտեղ հաստատելով իրենց բնակությունը՝ խոսած ու իրենց լեզուն տարածած չլինեն, և որոշ ժամանակ հետո նրանցից սերված սերունդներն էլ նույն՝ իրենց հայրերի և նախնիների լեզվով խոսած չլինեն՝ մինչ աշտարակաշինությունը, ինչի պատճառով լեզուները խառնակվեցին, և մարդիկ միմյանցից բաժանվեցին։ Եվ այս մեծ փաստի առջև ինչ-որ հրեական կամ ուրիշ հին լեզուների համար ենթադրություններ են արվել (որպես ադամական լեզու), սակայն առավել զորեղ են գտնվել այն կարծիքները, որ ասվել են ի նպաստ հայերենի»*[87]*։

Վերը բերված փաստարկներից և հետազոտողների հիմնավորումներից ելնելով՝ կարող ենք համարձակ ասել, որ ադամական լեզուն եբրայերենը չի եղել։

«Մեծապես նշանակալից եմ համարում, որ հայերեն լեզուն, որ այնքան տարբեր է եբրայերենից և արաբերենից, լեզուն է այն երկրի, որտեղ անկասկած, Մովսեսը հիմնել է Երկրավոր Դրախտը»[88]*։*

Իսկ մի այլ լեզու, բացի հայերենից, ընդհանրապես չի դարձել ուսումնասիրության առարկա՝ որպես ադամական, առաջին, մայր լեզու։ Այսպիսով, մնում է կա՛մ հայերենը, կա՛մ եբրայերենը։

Իսկ ծանրության կենտրոնը թեքվում է դեպի հայերենը.

«Այսպիսով՝ տեսանք, որ Նոյի բնակությունը և նրա լեզուն, որով խոսում էր, պետք է փնտրել նախ այնտեղ, որտեղ դուրս եկավ Նոյը տապանից և բնակվեց ինքը և նախնի նահապետներն աշտարակաշինությունից առաջ, և ոչ թե այնտեղ, ուր նահապետներից ոչ ոք չբնակվեց մինչև լեզուների խառնակումը։ Երկրորդ՝ պետք է փնտրել այնպիսի ժողովրդի մոտ, որ Նոյի ժամանակներից սկսած՝ այնտեղ է գտնվել և աշտարակաշինությունից հետո էլ ուրույն ազգ է եղել և տարբերվում է այլ ազգերից։ Եվ երրորդ՝ այն ժողովուրդը կամ ազգը պետք է մնացած լինի ճշմարիտ աստվածապաշտության և իր առաջին անմեղության մեջ։ Սա գտնում ենք այն ազգի պատմության մեջ, որ մնաց Հայաստանում և անմեղ ու զերծ էր աշտարակաշինության չար գործից և որ, Հայկի սերնդի հետ միավորվելով, մի ազգ դարձավ. սրանից էլ գալիս ենք այն եզրակացության, որ

---

87 Ղուկաս Ինճիճեան... էջ 59:

88 Գոթֆրիդ Լայբնից. գերմանացի փիլիսոփա, լեզվաբան, աստվածաբան, տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 129:

հայոց լեզուն Նոյի առաջին լեզուն էր։ Իսկ քանի որ եբրայական ազգին պակասում են այս երեք կարևոր հանգամանքները, ապա արժան չէ նրանց ընծայել լեզվի առաջնությունը»[89]։

«Հայոց լեզվի ծագման կամ հնության մասին եթե հարցնես իմ կարծիքը, այս է՝ ընդունում եմ, որ առաջին՝ Ադամի և Նոյան լեզուն խոսվեց Հայաստանում, երկրորդ՝ այդ լեզուն էր լսվում ամբողջ աշխարհում՝ մինչև Բաբելոնում լեզուների խառնակությունը և երրորդ՝ խառնակությունից հետո անխառն մնաց Հայաստանում»[90]։

«Այսպիսով, բավական հայտնի եղավ, որ եբրայերեն լեզուն Ադամի լեզուն չի կարող լինել»[91]։

Հայոց լեզվի մասին գիտական աշխարհում արծարծվող կարծիքները

«Հայ ազգն իսկապես յուրահատուկ է։ Հայերն ունեն իրենց սեփական լեզուն, որը բոլորովին տարբեր է հնդեվրոպական խմբի բոլոր մյուս լեզուներից, որը որևէ այլ լեզվի ճյուղ չէ»[92]։

Հիմնվելով Սուրբ Գրքի, պատմության և լեզվաբանական աշխատությունների տվյալների վրա՝ եկանք այն եզրակացության, որ սկզբում եղել է մեկ՝ նախնական մայր լեզու, և այդ լեզուն հայերենն է։

Սակայն գիտնականների մի մասը որպես հիմք է ընդունում զուտ լեզվաբանական և հնագիտական հետազոտությունների արդյունքները՝ անտեսելով Սուրբ Գրքի տեղեկությունները և ավանդությունները։ Ինչից ելնելով էլ այժմ անդրադառնալով գիտական աշխատություններին և տեսնենք, թե նրանք ինչ են ասում հայոց լեզվի մասին։

Հայագետները և լեզվաբանները տարբեր կարծիքներ են հայտնում հայերենի ծագման վերաբերյալ։ Որոշ մակերեսային հետազոտությունների հետևանքով մի ժամանակ տարածվեց թյուր կարծիք, թե հայերենն իրանական լեզվից առանձնացած ճյուղ է։ Սակայն այդ տեսակետը երկար կյանք չունեցավ, քանզի հարցի շուրջ բարեխիղճ լեզվաբանների ցուցաբերած լուրջ մոտեցումները հեշտությամբ հերքեցին այն.

«Հայերեն լեզուն այլևս չի դասվում իրանական լեզուների շարքում՝ չնայած նրանում հանդիպում են բազում պարսկական փոխառություններ»[93]։

---

89 Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն... էջ 25:

90 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, էջ 90:

91 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

92 Անտուան Մեյեն, Հայաստանի, հայերի և հայերենի մասին, Երևան, 2006, էջ 15:

93 Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004, ст. 24.

«Այն ամենը, ինչը ես հայերենի մասին մինչ այս վկայակոչել եմ որպես ապացույց, բավական է, որպեսզի այն կարծիքը, որ ես նախկինում կրում էի Ֆր. Մյուլլերի հետ, այսինքն որ այս լեզուն պետք է իրանական լեզուների թվին դասել, դիտվի որպես սխալ, և վճռականորեն հրաժարվե՛լ դրանից։

Հայերենն, անկասկած, հնդեվրոպական լեզվական մասի մի ինքնուրույն ճյուղ է, և ապագայում չի կարելի, ինչպես այդ մինչ այժմ է արվել, հնդեվրոպական լեզուների դասակարգման և նրանց ազգակցական հարաբերությունների ուսումնասիրման ժամանակ այդ փաստը շրջանցել»[94]*։*

«Հայերենը մտնում է հնդեվրոպական մեծ լեզվաընտանիքի մեջ, որին պատկանում են, Հնդկաստանի արիական և Իրանի լեզուների հետ միասին, Եվրոպայում խոսվող գրեթե բոլոր լեզուները։

Այդ լեզուների շարքում նա կազմում է մի առանձին ճյուղ, որը ոչ մի ուրիշից կախման մեջ չէ և ոչ մեկի հետ առանձնապես սերտ կապեր չունի։ Նա նույնքան առանձին է, որքան ավելի շատ խոսողներ ունեցող ճյուղերը, ինչպես գերմանականը և սլավոնականը»[95]*։*

Ներկայումս ոչ ոք չի կասկածում հայերենի՝ հնդեվրոպական լեզվախմբին պատկանելու և ուրույն ճյուղ լինելու հարցում։ Այդ խնդիրն այլևս քննարկման առարկա չէ. «1833 թ. Ֆ. Բոպպը լույս ընծայեց «Համեմատական քերականություն» աշխատությունը, 1837թ. Հ. Պետերմանը դրեց հայերենի համեմատական ուսումնասիրության հիմքը, որի համաձայն՝ հայոց լեզուն պատկանում է հնդեվրոպական խմբին»[96]*։*

«Հնդեվրոպական տեսության մեջ ճեղքեր են հայտնաբերվում. խոսք է լինում նոր տվյալների մասին, որ տապալում են քիչ թե շատ սրբագործված տեսակետները հնդեվրոպացիների ընդհանուր հայրենիքի մասին, նրանց սփռման ժամանակի, նրանց տարածման ուղիների մասին։ Փաստարկները վերցնում են համեմատական լեզվաբանությունից։ Այս գիտության ընձեռած տվյալների հիման վրա առաջին հերթին հաստատվում է հայերենի հնդեվրոպական ծագումը. մի տեսակետ, որը վերջին տարիներին վիճարկվել էր»[97]*։*

«Հայոց լեզվի գենետիկական տարբեր խնդիրների շուրջ վեճերը և քննարկումներն իրենց կառուցողականությամբ դուրս են եկել հայկական սեփական լեզվաբանության սահմաններից և ընդունել են բացառիկ մեծ նշանակություն՝ ամբողջ հնդեվրոպաբանության համար»[98]*։*

Այնուհանդերձ, կան նաև հետազոտողներ, որ ընդունելով հայերենի՝ հնդեվրոպական ընտանիքին պատկանելը՝ համարում են, թե այն ընդամենն այդ լեզվաընտանիքի լեզուներից մեկի ճյուղն է, և նմանեցնում են փոյուգերենին։ Հայերենը որպես մայր լեզու՝ բնական է, որ պետք է նմանություն ունենար բոլոր

---

94 Հայնրիխ Հյուբշման, տե՛ս Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 93:

95 Անտուան Մեյեն, Հայաստանի, հայերի և հայերենի մասին, Երևան, 2006, էջ 32:

96 Գաբրիէլեան Հ. Գ., Հայերի բնօրրանը՝ Հայաստան լեռնաշխարհ, Հանդես ամսօրեա, 1998, էջ 412:

97 Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայեր, Երևան, 1984, 47 էջ:

98 Дегтерева Т. А. Пути развития современной лингвистики. – М., 1962. – Кн. 2. – С. 116 (по В. Порцигу). http://trypillia.narod.ru/articles/armnew.htm

լեզուներին՝ մեկին շատ, մյուսին՝ քիչ: Սակայն բացի մայր լեզվի այդ հատկությունից՝ հայերենի մեջ կա այլ լեզուների հետ ընդհանրությունների ևս մեկ պատճառ: Դա ազգերի հարևանությամբ ապրելն է, քանի որ նրանց շփման հետևանքով շատ հաճախ որոշ բառեր սկսում են երկկողմանի օգտագործվել: Օրինակ՝ Խորհրդային շրջանում Հայաստանում ռուսերենին ավելի մեծ տեղ էր հատկացվում, քան մայրենի լեզվին: Ոմանք միայն ռուսերեն էին խոսում: Այսօր էլ ջախջախիչ մեծամասնությունը հայերեն խոսելիս՝ օգտագործում է ռուսերեն բառեր: Սակայն ծանծաղամտություն կդիտվի, եթե մեկը փորձի ասել, թե հայոց լեզուն պատկանում է սլավոնական լեզվաընտանիքին:

«Ինչ վերաբերում է Եվդոքսոսի այն արտահայտությանը, որ «հայերի լեզվում փռյուգերենից շատ բան կա», ապա սա ևս մի հասկանալի երևույթ է. մ.թ.ա. IV դարում գրված այս արտահայտությունը կարող էր նշանակել, որ միմյանց հարևան հայերի և փռյուգիացիների լեզուները փոխադարձաբար ազդել են միմյանց վրա, և Փռյուգիայի տարածքում կամ այդ երկրին հարևան հայկական հողերում բնակվող հայերի լեզվում փռյուգիական շատ բառեր կային: Գիտենք, որ այլ ժամանակաշրջաններում հայերենի մեջ բառեր են անցել նաև շումերերենից, աքքադերենից, արամերենից, պարսկերենից, հունարենից, արաբերենից, թուրքերենից, ռուսերենից և այլն:

Ուրեմն, Եվդոքսոսի այս վկայությունը՝ մ.թ.ա. IV դարում, որևէ դեպքում չի կարող հասկացվել այնպես, թե իբր հայերենն ու փռյուգերենը նույն լեզուն են եղել կամ իրար շատ մերձակից: Փռյուգերենի ու հայերենի համեմատությամբ զբաղվել են շատ լեզվաբաններ՝ Հ. Հյուբշման, Ա. Մեյե, Հ. Պետերսեն, Հ. Աճառյան, Հ. Տաշյան և ուրիշներ. բոլորը ցույց են տվել, որ հայերենը և փռյուգերենը տարբեր հնդեվրոպական լեզուներ են, ինչպես օրինակ՝ հայերենն ու պարսկերենը կամ հայերենն ու խեթերենը»[99]:

Երբ գիտնականները վերջապես հանգեցին այն եզրակացության, որ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքին է պատկանում, սկսեցին հայ ազգի ծագման մասին «հոգալ»: Քանի որ եվրոպացի գիտնականներից ոմանք պնդում էին, որ հնդեվրոպական լեզուների հայրենիքը Եվրոպան է, իսկ հայերն էլ հնդեվրոպացիներ են, ուրեմն, ըստ նրանց, հայ ժողովուրդը Եվրոպայից, մասնավորապես՝ Բալկաններից է իջել Հայաստանի տարածք: Սա է հայերի եկվորության մասին այդքան չարչրկվող և կեղծ տեսության հիմքը: Սակայն այդ հարցին ամեն մի շինծու մոտեցումը վաղ թե ուշ արժանանում է լուրջ քննադատության և հերքման:

*Հայտնի ռուս լեզվաբան Օլեգ Շիրոկովը, լեզվաբանորեն ապացուցելով հայերի տեղաբնակ լինելը, նաև ավելացնում է. **«Որքանով որ հայտնի է, հնագետների և մարդաբանների մոտ նույնպես չկան արժեքավոր փաստարկներ՝ հօգուտ տարածված հիպոթեզի՝ հայերի նախնիների՝ կենտրոնական և արևելյան Անատոլիա և հարավային Անդրկովկաս համեմատաբար ուշ գալու մասին (Բալկանյան թերակղզուց): Այդ ենթադրությունն ամենից առաջ հիմնվում է Հերոդո-***

[99] Ռ. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988, էջ 12:

տոսի վկայության վրա... Սակայն Հերոդոտոսի այդ նախադասությունը խոսում է ընդամենը տեղական միգրացիայի մասին: Մենք ոչ մի համոզիչ ապացույց չունենք փռյուգիական լեզվի և հայերենի ազգակցական հատուկ կապի օգտին»[100]:

Այդ լեզվաբանները, չգիտես ինչու, միայն հայերին են եկվոր դարձնում, իսկ այս վայրերում ապրող հնդեվրոպական լեզվաընտանիքի այլ անդամներին՝ ոչ.

«Եկվորության» կողմնակիցները խուզարկում էին բազում գրքեր, և իրենց տեսակետին թեկուզ մի քիչ հարմար թվացող որևէ բան գտնելով՝ փաստարկ էին դարձնում: Հայերի «եկվորության» կողմնակիցների բերած բոլոր փաստարկներից միայն մեկն է եղել ուշադրության արժանի, ըստ որի՝ հայերենը հնդեվրոպական լեզու է, և հայերը հնդեվրոպացի են, ուստի հայերը նախապես բնակվել են այնտեղ, որտեղ որ եղել է հնդեվրոպացիների հնագույն մայր հայրենիքը կամ նախահայրենիքը: Եթե ճիշտ է եվրոպացի մի շարք լեզվաբանների ասածն այն մասին, թե հնդեվրոպական մայր հայրենիքը գտնվել է Եվրոպայում, նշանակում է հայերն էլ, ասիական մյուս հնդեվրոպացիներն էլ՝ պարսիկները, հնդիկները, խեթերը և այլք, եկած պետք է լինեն Եվրոպայից»[101]:

Սակայն հնդեվրոպական մայր հայրենիքի՝ Եվրոպայում լինելու վարկածն էլ շուտով հօդս ցնդեց. հատկապես վերջին շրջանում կատարված անաչառ հետազոտությունների և վերլուծությունների շնորհիվ հերքվեց այդ մտացածին տեսությունը, և ավելին՝ ապացուցվեց հակառակը. որ հնդեվրոպական լեզուները Փոքր Ասիայից են ներթափանցել Եվրոպա և տարածվել: Սա էլ իր հերթին հերքում է հայերի եկվորության մասին կարծիքը.

«Լ.Լ. Կավալլի-Սֆորզան իր նոր աշխատության մեջ[102] լեզվաբանական, հնագիտական և այլ բնույթի ուսումնասիրությունների հիման վրա առաջ է քաշում այն տեսակետը, որ հնդեվրոպական լեզուները ծագել են Փոքր Ասիայում, ապա տարածվել դեպի Եվրոպա՝ նեոլիթյան (նորքարեդար) երկրագործ ցեղերի կողմից: Նշվում է, որ Փոքր Ասիայում մոտ 10.000 տարի առաջ խոսել են հնդեվրոպական լեզուներով: Հայոց լեզուն հեղինակը համարում է հնդեվրոպական լեզու, որն այդ տարածքներում խոսակցական լեզու է եղել դեռևս 9000 տարի առաջ»[103]:

Երբ հերքվեց Եվրոպան հնդեվրոպական լեզվի հայրենիք ճանաչելու վարկածը, հայերի եկվորության մասին հորինվածքի հիմքերը լիովին խարխլվեցին, և ավազի վրա կառուցված այդ շենքը փլուզվեց:

Սակայն հատկապես հայերի և հայերենի ծագմամբ «մտահոգ» գիտնականները մի նոր «հայտնագործություն» արեցին, որը ևս դատապարտված էր նա-

---

[100] Олег Широков «Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины» (Автохтонность армян по данным сравнительно-исторического языковедения) Вестник общественных наук, 5 (449) Май, (Москва) Ереван 1980 г., ст. 81.

[101] Ռ. Իշխանյան... էջ14:

[102] L. L. Cavalli-Sforza, «Cenes peoples and Languigis», 2000, pp. 160-161, 164.

[103] Անժելա Տերյան, Հայաստան ապարաչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 8-9:

խորդ կեղծիքների անփառունակ ճակատագրին. առաջ քաշվեց այսպես կոչված՝ «կազմավորման» տեսությունը.

***«Կազմավորման» տեսության ստեղծողները հայերի «կազմավորման» ժամանակը տարբեր դարերի են վերագրել՝ մերթ մ.թ.ա. II դարին, մերթ V-ին, մերթ էլ VI-ին: Նրանք իրենց գրքերում, հոդվածներում, դասագրքերում այնպես են գրում, որ ստացվում է, թե մ.թ.ա. VIII-VII դարերում դեռ հայեր չկային (կազմավորված չէին), բայց կային խեթեր, վրացիներ, հույներ, իրանյաններ և այլն: Ստացվում է անբացատրելի պատկեր՝ հնդեվրոպացի հայերը չկային, դեռ պիտի «կազմավորվեին»: Սա ևս գիտական որևէ քննություն չի բռնում»*[104]:

Շրջանառության մեջ էր դրվել նաև հետևյալ վարկածը. Եգիպտոսում պահպանված մի արձանագրության մեջ հիշատակվում է «ծովի ժողովուրդ» կոչված մարդկանց մասին, որոնք ժամանակին ասպատակել են Եգիպտոսը, և իբրև թե այդ ժողովուրդը, թողնելով իր ծովային տարերքը, հանկարծ որոշել է բնակություն հաստատել լեռնային գոտում: Եվ իբր այդ ժողովրդի և տեղաբնակ ցեղերի խառնակման արդյունքում է առաջացել հայ ազգը և հայոց լեզուն: Սակայն եգիպտական արձանագրություններում որևէ ակնարկ իսկ չկա այդ անհայտ ցեղի՝ Հայաստանի տարածք ուղևորվելու մասին, և չէր էլ կարող լինել: Եթե նրանք նույնիսկ իրենց նավերն, իրավիճակի պահանջներից ելնելով, վերափոխեին անապատի նավերի, ապա ոչ միայն նրանց նավատորմը, այլև եգիպտական ուղտերը դժվար թե կարողանային մագլցելով ասպատակել Հայկական լեռնաշխարհը:

Կան նաև հայազգի գիտնականներ, որ տուրք են տալիս հայերի «եկվորության» և «կազմավորման» տեսությանը:

Սակայն անաչառ հետազոտողներն աներկբա կանգնած են ճշմարտության դիրքերում՝ անառարկելի փաստարկներով ապացուցելով, որ հայերը Հայկական լեռնաշխարհում ի սկզբանե եղել են տեղաբնիկ.

«1940-50-ական թվականներին հրահանգ եղավ՝ Անդրկովկասի ժողովուրդներին տեղաբնիկ համարել: Եվ մի շարք պատմաբաններ ու լեզվաբաններ այս անգամ էլ սկսեցին նոր տեսություններ հյուսել՝ դա հիմնավորելու համար: Դրանցից մեկն այն էր, որ հայերն իբրև հնդեվրոպական ժողովուրդ չեն, և հայոց լեզուն հնդեվրոպական չէ, և որ, իբր հայերը գոյացել են տեղական մի շարք ցեղերի խառնուրդից: Այդ շրջանում առհասարակ հնդեվրոպաբանությունը փակի տակ էր: Երբ այդ փակը հանվեց, նույն պատմաբաններն ու լեզվաբանները «խոստովանեցին», որ հայերենը հնդեվրոպական լեզու է, քանի որ դա շատ ակնառու է, ուղղակի՝ ճչացող: Եվ քանի որ կարծում էին, թե հնդեվրոպացիներն Ասիայում նախապես չեն եղել, այլ եկել են, ուստի մի նոր տեսություն մեջբերվեց, որը եկվորության տեսակետի տարբերակն է: Գրում էին, որ իբր արմենները «Փոքր Ասիա են թափանցել Բալկաններից»[105], խառնվել տեղական ցեղերին, և դրանից առաջացել են հայերը: Հայ մշակույթի մասին գրում էին. «Այն սկզբնա-

---

[104] Ռ. Իշխանյան... էջ 15:

[105] Հայ ժողովրդի պատմություն, Երևան, 1972, էջ 27:

վորում է Հայկական լեռնաշխարհի հնագույն բնիկ ցեղերի ու ժողովուրդների, մասնավորապես խուրրի-ուրարտական տարրի, ինչպեսև հնդեվրոպական եկվոր տարրի մշակույթների համաձուլման պարագաներում» [106]*։*

Հնդեվրոպական այդ «եկվորներին» կոչեցին նախահայեր, հայալեզու ցեղեր, ուրիշները՝ փոյուգիական մուշկեր, արիմներ, մեսխեր, փոյուգա-թրակիացիներ, նաև՝ արմեններ։ Իբր դրանք պետք է խառնվեին այլ ժողովուրդների, ցեղերի հետ, որպեսզի «կազմավորվեր» հայ ժողովուրդը...

Լեզվաբանությունն անհերքելիորեն ապացուցել է, որ հայերը հնդեվրոպացիներ են, նրանց լեզուն՝ հնդեվրոպական, և ըստ հայոց լեզվի նյութի՝ նրանք հնդեվրոպական մայր ժողովրդից, ուստիև մայր լեզվից առանձնացել են այն ժամանակներում, երբ առանձնացել են հունական, խեթա-լուվիական, հնդիրանական խմբերը, ուստիև՝ սրանց լեզուները։ Ուրեմն, ինչպե՞ս կարող էր պատահել, որ հնում, ինչ-որ ժամանակ ապրեին հույներ, այսինքն՝ հունարեն խոսողներ, իրանացիներ՝ իրաներեն խոսողներ, և գոյություն չունենային հայեր, այսինքն՝ հայերեն խոսողներ։

«Կազմավորման» այս տեսակետը հիմքում ունի ոչ թե փաստերի անաչառ ուսումնասիրություն, այլ հարմարեցում, այն ոչ թե տրամաբանորեն բխում է եղած փաստերից, այլ նախօրոք կազմված ծրագրով կցվել է հակառակ փաստերի։ «Կազմավորման» տեսությունն անհամոզիչ էր հենց սկզբից, իսկ երբ նրան կցեցին նաև Ասիայում հնդեվրոպացիների եկվոր լինելու մասին եղած նախկին դրույթը, այն դարձավ սպիտակով սևի վրա կարկատված։ Փորձում էին հարթել հակասությունները. այդ էր պատճառը, որ հայերի «կազմավորման» ավարտը կամ «ծագումը» մ.թ.ա. II դարից ձգելով հասցրին մինչև մ.թ.ա. VI դար, ոմանք՝ մինչև VII դար։

Բայց այս ամենը «կազմավորման» տեսությունը համոզիչ չդարձրեց։ Ամենակարևորն այն է, որ այդ տեսության պաշտպանները հստակ չէին էլ գրում, թե ինչ են հասկանում «կազմավորում» ասելով։ Եթե «կազմավորում», ըստ նրանց, նշանակում է տարբեր ցեղերի, տարբեր լեզուների խառնվելը և նոր (հայոց) լեզվի ու ժողովրդի գոյանալը, ապա նրանք լուրջ սխալմունքի մեջ էին. լեզվաբանական գիտությունը ցույց է տվել, որ այդպիսի բան չի լինում։ Պատմության բազում փաստեր վկայում են, որ երկու կամ ավելի տարալեզու ցեղեր հավասար միավորներով չեն խառնվում՝ գոյացնելու մի նորալեզու ցեղ, այլ մեկը մյուսին ձուլում է իր մեջ։ Պատմության բազմաթիվ փաստեր, համեմատական լեզվաբանությունը մերժում են լեզուների խաչավորումը. անհնար է, որ մի լեզու խաչավորվի մի այլ լեզվի հետ, և գոյանա մի նոր լեզու։ Համենայն դեպս, այդպիսի բան երբևէ տեղի չի ունեցել հարավարևմտյան Ասիայի տարածքում։ Սխալ է այն պատկերացումը, թե a *լեզու +* b *լեզու =* c *լեզու։ Իրականում* a *լեզու +* b *լեզու =* a *կամ* a *լեզու, կամ* b *լեզու։ «Հանդիպող» երկու լեզուներից մեկը հաղթում է։ Օրինակները շատ են. դակերը Հռոմի տիրապետության տակ ընկան, և դակերենը «հանդիպեց» լատիներենին. լատիներենը հաղթեց, դակերը դարձան լատինախոս (ռումինացի), մոռացան դակերենը, որը մեռավ։ Էլամացիները դարձան*

[106] Հայ Ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 6:

պարսկախոս, և էլամերենը մեռավ։ Գալլերը դարձան լատինախոս (ֆրանսիացի), գալլերենը մեռավ։ Շումերները դարձան աքքադախոս, և շումերերենը մեռավ, ու այսպես շարունակ։

Հայերենն էլ շատ լեզուների է «հանդիպել», մերթ հաղթել է, այսինքն՝ այդ լեզուներով խոսողները հայախոս են դարձել՝ հայ, մերթ էլ պարտվել է, այսինքն՝ հայերի որոշ հատվածներ, բոլորովին մոռանալով հայերենը, դարձել են այլախոս՝ հունախոս, պարսկախոս, արաբախոս, թուրքախոս, լեհախոս, վրացախոս, ռուսախոս, ֆրանսախոս, անգլախոս և այլն, որոշ ժամանակ դավանանքի ուժով իրենց հայ են գիտակցել, հետո դարձել են այլազգի։ Բայց ոչ մի դեպք պատմության մեջ չի եղել, երբ հայերենը հանդիպած լինի մի այլ լեզվի և խառնվի այդ լեզվի հետ ու նոր լեզու առաջանա...

Եվ եթե հայ ժողովրդի «կազմավորում» ասելով՝ հասկանում են «եկվոր» հնդեվրոպացիների լեզվի յուրացումը «Հայկական բարձրավանդակի» ոչ հնդեվրոպացի «բնիկների» կողմից, ապա սա նախկին եկվորության վարկածի կրկնությունն է՝ քողարկված «կազմավորում» բառով։ Այժմ ոչ ոք պարսիկների, հույների կամ վրացիների պատմությունը չի սկսում այսպիսի «կազմավորումով», քանի որ այն անառարկա է։

Պարզ է, որ հայերը գոյություն են ունեցել իրենց այդ «կազմավորումից» շատ ու շատ առաջ, և պետք չէ բառախաղերով զբաղվել։ Պատմությունը փաստ ու տրամաբանություն է սիրում և ոչ՝ բառախաղ։

Կովկասում, Փոքր Ասիայում և առհասարակ Մերձավոր ու Միջին Արևելքում, այսինքն՝ հարավարևմտյան Ասիայում, բնակված հին ժողովուրդների տարբերման համար գլխավոր, իսկ հաճախ միակ չափանիշը լեզուն է։ Եթե անտեսենք այդ չափանիշը, կատարյալ շփոթ և անորոշություն կմնա։ Լեզվական չափանիշը, թերևս, գլխավորը չէ ուրիշների համար (օրինակ՝ Ամերիկայի նոր ժողովուրդների), բայց նշված տարածքի ժողովուրդների տարբերակումն անհնար է առանց դրա...

Այսօր հայության, հայ ժողովրդի գոյության գլխավոր և, ըստ ամենայնի, միակ փաստն ու չափանիշը հայոց լեզուն է։ Ինչպես վրաց ակադեմիկոս Շանիձեն էր ասում՝ առանց հայերենի չիք հայ ժողովուրդ, առանց վրացերենի չիք վրաց ժողովուրդ։ Սա թվաբանական ճշմարտություն է։

Արդ, ո՞րն է 500 տարի առաջվա հայ ժողովուրդը. նա, որի մայրենի կամ պապենական լեզուն, լեզվամտածողությունն այսօրվա հայերենի 500 տարի առաջ եղած տարբերակն էր։ Ովքե՞ր էին 3000 տարի առաջվա հայերը. նրանք, որ խոսում էին ու մտածում այսօրվա հայերենի 3000 տարի առաջ եղած վիճակով, իսկ 4000 տարի առաջվա հայե՞րը. դարձյալ նրանք, որ խոսում էին այսօրվա հայոց լեզվի այն ժամանակվա տարբերակով։ Այդ հին ու հնագույն հայերը իրար դեմ կռվել են, հաճախ միմյանց թշնամի ցեղախմբեր ու պետություններ կազմել և այլն, բայց հայ են եղել նրանով, որ նրանց լեզուն է դարերի, հազարամյակների ճանապարհ անցել և այսօր հնչում է արդի հայերի բերանում։

Որևէ լեզու ինքնըստինքյան, առանց մարդու (խոսողի)՝ գոյություն չունի։ Լեզուն գոյանում, զարգանում, ապրում է մարդու շուրթերին, հիշողության մեջ։

Այդպես է նաև հայոց լեզուն. այն գոյություն ունի որպես հայ ժողովրդի մայրենի լեզու։ Ուստի ճիշտ կլինի ասել նաև՝ հայ ժողովուրդ նշանակում է ամենից առաջ հայոց լեզու, իսկ հայոց լեզու՝ հայ ժողովուրդ» [107]։

Հայկական լեռնաշխարհը որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք

«Հայոց լեզու... հնությամբ նրան հավասար արդեն չկա» [108]։

Հնդեվրոպական լեզվի հայրենիքի փնտրտուքների արդյունքում Արևմուտքի գիտնականներից ոմանք այն իբր գտան Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքներում։ Սա գիտական շրջանակներում սկզբնական շրջանում մեծ ընդունելության արժանացավ, և նույնիսկ հայ գիտնականներից ոմանք էլ հարեցին այդ տեսությանը.

***«1862 թ. Ռ. Լաթամի կողմից առաջ է քաշվում այն կարծիքը, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Եվրոպայում։ Լաթամի կարծիքը երկար ժամանակ իշխում էր գիտության մեջ և այժմ էլ շատ կողմնակիցներ ունի։ Այս դեպքում էլ տարակարծությունները պտտվում են այն հարցի շուրջ, թե Եվրոպայի ո՞ր մասում պետք է այն փնտրել։ Ամենից ավելի հավանական է համարվում, որ այն գտնվել է հարավարևելյան Եվրոպայում՝ հատկապես Բալթիկ և Սև ծովերի միջև ընկած տարածքում։ Այս տեսակետը, կարելի է ասել, երկար ժամանակ ընդհանուր ընդունելություն է գտել հայագետների շրջանում։ Իրենց աշխատություններում այս տեսակետը պաշտպանել են եվրոպական հայագետներից Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն... և շատ ուրիշներ, որ համապատասխանաբար համամիտ են եղել հայերի՝ Եվրոպայից գալու կարծիքին և ապացույցներ են փնտրել անտիկ հեղինակների աշխատություններում»** [109]։

Սակայն սա միանգամայն հակառակ է Սուրբ Գրքին, ըստ որի՝ Հայաստանից՝ Աստվածաշնչյան Արևելքից և մերձակա շրջաններից են ազգերը տարածվել աշխարհով մեկ, ինչպես նաև Եվրոպա, այսինքն՝ արևմուտք։

Մտացածին տեսակետների կողմնակիցներն անտեսել են Սուրբ Գիրքը՝ բավարարվելով ինչ-ինչ մակերեսային հետազոտություններով, որոնք կասկածի տակ են դրվել, ապա վերջնականապես հերքվել։ Ապա, կամա թե ակամա, գիտնականներից շատերը, որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք, սկսել են մատնացույց անել Հայկական լեռնաշխարհը, որտեղ, ըստ Աստվածաշունչ մատյանի, եղել է առաջին մարդկանց բնակության վայրը.

---

[107] Ռ. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988 էջ 15 - 20:

[108] Зинуров Рафаиль Нариманович (Уфаеци), Армения-путь тысячелетий, том I, Москва 2010 г., ст. 15.

[109] Գ. Բ. Ջահուկյան, Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 21-22:

«Թեև նախահայրենիքի խնդրի՝ լիարժեք գոհացնող լուծում չկա, ներկայումս բազմաթիվ տարածքներ դիտվում են որպես ենթադրյալ հնդեվրոպացիների նախահայրենիք, և այս կոնցեպցիան լայնորեն աջակցություն է ստանում։ Գիտնականների մի մասը համարում է, որ իրենց նախահայրենիքն Ասիան է՝ հենց Անատոլիայի և Հայաստանի տարածքը, մյուսներն ընդունում են եվրոպական նախահայրենիքի տարբերակը...

Այսպես կոչված մ.թ.ա XIX դ. մոդելը ենթադրում է, որ ամենայն հավանականությամբ, հնդեվրոպական նախահայրենիքի տարածքը գտնվել է Ասիայում։ Այս վարկածը պաշտպանվում է Սուրբ Գրքով։

Ներկայումս ասիական նախահայրենիքի գաղափարն աջակցություն է գտնում այնպիսի լեզվաբանների գործերում, ինչպիսիք են. Թ. Գամկրելիձեն Վրաստանից, Ի. Իվանովը Ռուսաստանից (1984), Ա. Դոլգոպոլսկին (1987) Իսրայելից և այնպիսի հնագետների գործերում, ինչպիսիք են Վ. Ա. Խաֆրոնովան Ռուսաստանից (1989), Կ. Ռենֆրյուը և Է. և Ս. Շերրատտները (1988) Մեծ Բրիտանիայից, այս գիտության կլասիկ Ռ. Դրյուիսն (1988) ԱՄՆ-ից և այլ գիտնականներ։ Սրանք բոլորն էլ ապացուցում են, որ հնդեվրոպացիների տարածվելը կապված է Անատոլիա –Հայաստանի տարածքների հետ» [110]։

Եվրոպան որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք վարկածի հիմքերը խարխլվեցին հատկապես այն ժամանակ, երբ հետազոտությունները ցույց տվեցին, որ հնդեվրոպական լեզուն կրողների սկզբնական բնակավայրը, հայրենիքը եղել է լեռնային երկիր՝ իր բոլոր յուրահատկություններով, ինչը բնավ չի համապատասխանում եվրոպական այն տարածքներին, որ փորձում էին ներկայացնել իբրև այդ լեզվաընտանիքի ծագման վայր.

«Մենք փորձեցինք խնդիրը լուծել մեր կազմած բառարանի օգնությամբ՝ կառուցված նախահնդեվրոպական բառապաշարով, որում արտացոլված է այդ մարդկանց բնակության միջավայրը, նյութական և հոգևոր մշակույթը, այսինքն՝ այն ամենն, ինչ իրենց շրջապատել է, ինչով լցված է եղել իրենց կյանքը։ Մի՞թե պետք չէ նախահայրենիքը փնտրել այն շրջանում, որտեղ մ.թ.ա. IV հազարամյակում և ավելի վաղ կարող էին պայմաններ լինել, ինչի մասին մեզ պատմում է բառի վերականգնումը։

Ամենից առաջ մենք եկանք այն եզրահանգման, որ հնդեվրոպական նախահայրենիքը եղել է լեռնային բնապատկերով տարածք։ Այդ մասին են խոսում բազմաթիվ բարձր լեռների, ժայռերի ու բարձունքների նշանները, լեռնային կաղնու, ինչպես նաև լեռներում աճող այլ ծառերի և թփերի անունները։ Առասպելաբանական տեքստերում պատմվում են լեռնային լճերի և արագասլաց գետերի մասին, որ սկիզբ են առնում լեռներից։ Այդպիսի բնապատկերը հատուկ չէ եվրոպայի հարթավայրային շրջաններին՝ հատկապես Արևելյան Եվրոպայի, ներառյալ Հյուսիսային մերձևեվրոպական շրջանները» [111]։

---

[110] А. Х. Дани и Ж. П. Моэна, История человечества, Москва. Изд. МАГИСТР-ПРЕСС Том II, 2003 ст. 88–89.

[111] Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейцы, Наука и человечество, международный ежегодник, Москва, 1989, ст. 73.

Այսպիսով, հնդեվրոպացիների նախահայրենիքի խնդրի շուրջ առկա աշխատությունները գիտական աշխարհում ճեղքվածք առաջացրին: Բազմաթիվ լեզվաբաններ, հայագետներ և այս ոլորտին հարող այլ ուսումնասիրողներ եկան այն համոզման, որ այդ հայրենիքի տեղանքը եղել է Հայկական լեռնաշխարհում և նրան հարող շրջակա տարածքներում.

«Զգալի թվով գիտնականներ ժամանակ առ ժամանակ վերադարձել են հնդեվրոպացիների նախահայրենիքի՝ Առաջավոր Ասիայում գտնվելու տեսակետին: 19-րդ դ. 90-ական թվականներին գերմանացի գիտնական Ի. Շմիդտը վերադառնում է հնդեվրոպական նախահայրենիքի ասիական վարկածին, 20-րդ դ. այդ տեսակետը գտնում է նորանոր հետևորդներ, որոնց մեջ հատկապես պետք է հիշատակել Զ. Նայտին: Մեր օրերում հնդեվրոպացիների՝ Առաջավոր Ասիայում գտնվելու տեսակետի օգտին նոր փաստեր են բերում խորհրդային գիտնականներ Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը:

Վերջիններս հնդեվրոպական նախահայրենիքը սկզբնապես զետեղում էին Հյուսիսային Իրանում և Հայկական բարձրավանդակում» [112]:

Բազմաթիվ նոր աշխատություններ են երևան գալիս, որ հերքում են եվրոպական տարբերակը և հաստատում ասիականը՝ չնայած այն դեռ համընդհանուր ընդունելություն չի գտել (հավանաբար, այն պատճառով, որ գիտնականներից ոմանք ոչ մի կերպ չեն ցանկանում Սուրբգրային ճշմարտությունների առջև գլուխ խոնարհել):

Այնուամենայնիվ, գիտությունը տեղում չի դոփում, և նրանք, ովքեր մերժում են եվրոպական տարբերակը և ընդունում ասիականը, ի տարբերություն եվրոպական հայրենիքի կողմնակիցների, ավելի ուշ շրջանի մասնագետներ են և, արդեն լավ ուսումնասիրելով վաղ շրջանի եվրոպամետ գիտնականների աշխատությունները, կարողացել են հերքել և ավելի հիմնավոր տարբերակ առաջարկել, որն ասիականն է:

Ասիական տարբերակի կողմնակիցների մոտ էլ ամեն բան հարթ չէր, քանզի նրանք, միակարծիք լինելով ասիական տարբերակին, միակարծիք չէին, թե այն հատկապես Ասիայի ո՞ր մասում պետք է փնտրել: Ոմանք կարծիք են հայտնել, թե այն գտնվել է Հիմալայներից մինչև Կասպից ծով ընկած տարածքներում, ոմանք այն տեղադրել են Փոքր Ասիայից մինչ Միջին Ասիա եղող տարածքներում, իսկ ոմանք էլ այնտեղ, ուր ցույց է տալիս Սուրբ Գիրքը՝ Հայկական լեռնաշխարհում.

«Որոշելու համար հայերի ծագման ժամանակը, պետք է որոշել, թե երբ է տեղի ունեցել հնդեվրոպական մայր ժողովրդի տրոհման հետևանքով հայերի, իբրև առանձին հանրության առանձնացումը: Իսկ հայերի վաղնջագույն հայրենիքի տեղը որոշելու համար պետք է պարզել, թե որտեղ է եղել հնդեվրոպական մայր հայրենիքը:

Վերջին շրջանում մի շարք հայտնագործություններ արվեցին, որ հերքեցին նախնական պատկերացումները հնդեվրոպական ժողովուրդների տարածման,

[112] Գ. Բ. Ջահուկյան, Զրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992, էջ 21-22:

մայր ժողովրդի տրոհման վերաբերյալ, ինչպեսև հիմնովին փոխվեց հնդեվրոպացիների հին հայրենիքի մասին եղած պատկերացումը...

Միանգամայն պարզ դարձավ, որ հիմնովին սխալ է եղել երկար ժամանակ իշխող մի այլ տեսակետ ևս, որի համաձայն՝ իբր Փոքր Ասիան մեզնից 3000-5000 տարի առաջ բնակեցված է եղել ոչ հնդեվրոպացիներով. տեսակետ, որ որդեգրել էին հայտնի մի շարք լեզվաբաններ ու պատմաբաններ: Պարզ դարձավ, որ իրականում եղել է ճիշտ հակառակը՝ հիշյալ ժամանակներում և դրանից էլ առաջ Փոքր Ասիան հիմնականում բնակեցված է եղել հնդեվրոպացիներով...

Բուլղարացի հնդեվրոպաբան Վ. Գեորգիևը գրում է. «Երկար ժամանակ իշխող այն տեսությունը, ըստ որի հնդեվրոպացիների նախահայրենիքը համարվում էր հյուսիսկենտրոնական Եվրոպայի տարածքը, և հնդեվրոպացիների ցրվելը կամ հնդեվրոպական նախալեզվի տրոհումը դիտվում էր. մ.թ.ա. II հազարամյակում, վերջնականապես հերքվեց հնդեվրոպական հնագույն լեզուների հայտնաբերումից հետո»:

Նշենք, որ այս խոսքերով Վ. Գեորգիևը հերքում է նաև իր սեփական՝ նախկինում արտահայտած պատկերացումները հնդեվրոպական նախահայրենիքի և մայր լեզվի տրոհման ժամանակի մասին: Եվ միայն նա չէ նշանավոր հնդեվրոպաբաններից, որ այդպես է վարվում:

Իրոք, հազարամյակների խորքն է գնում հնդեվրոպական մայր ժողովրդի ու լեզվի գոյության ժամանակաշրջանը: Իսկ ե՞րբ է սկսվել տրոհումը: Այժմ ստույգ ասել հնարավոր չէ: Համենայն դեպս, հայոց լեզուն ամբողջությամբ (բարբառներով հանդերձ) բառապաշարային և քերականական այնպիսի տարբերություններ ունի հնդեվրոպական հարևան և ոչ հարևան լեզուների համեմատ, որ նրա անջատումը մայր հնդեվրոպերենից պետք է կատարված լինի ամենավաղ ժամանակներում: Որոշ հնդեվրոպաբանների կարծիքով ամենավաղ շրջանի տրոհումը պետք է սկսած լինի մ.թ.ա. VI-V հազարամյակներում, ուրիշների կարծիքով՝ IV հազարամյակում:

Ուրեմն, հայոց լեզվի և հայերի ծագումը պետք է վերաբերի մ.թ.ա. շուրջ V-IV հազարամյակներին, այսինքն՝ մեզանից 5-6 կամ գուցե ևս հազար տարի ավելի առաջ:

Շրջադարձային եղավ 1964 թ. կատարված մի հայտնագործություն, որ ուղղակի մաթեմատիկորեն ապացուցեց հնդեվրոպական և սեմական մայր ժողովուրդների երկարամյա հարևանությունն ու շփումը վաղնջական ժամանակներում, և որը հիմք դարձավ հնդեվրոպացիների հին հայրենիքը Փոքր Ասիան համարելու համար:

Հենց այդ շրջանն էլ շատ լեզվաբաններ ու պատմաբաններ այժմ համարում են հնդեվրոպական մայր լեզվի ու ժողովրդի հին հայրենիքը՝ բոլոր հնդեվրոպացիների նախահայրենիքը: Համեմատական լեզվաբանության մասնագետներից այդ տեսակետին են Օ. Շիրոկովը, Վ. Իվանովը, Թ. Գամկրելիձեն, Ա. Դոլգոպոլսկին, Ա. Կորոլյովը և ուրիշներ: Արդեն 1970թ. գիտահանրամատչելի ամսագիր «Ջնանիե սիլա»-ն գրում էր. «Մի ժամանակ հնդեվրոպացիները բնակվել են

տաք երկրներում. ըստ նորագույն ենթադրությունների՝ շատ հնում ընդհանուր հնդեվրոպական լեզվով խոսում էին Փոքր Ասիայում»։

Նույն 1970-ին Մոսկվայի համալսարանի լեզվաբանության ամբիոնից տողերիս հեղինակն ստացավ մի նամակ, որի մեջ գրված էր. «Գլխավոր ապացույցն այն բանի, որ հնում հնդեվրոպացիները բնակվել են Բոսֆորից ու Դարդանելից դեպի արևելք ընկած տարածքում, լեզվական փոխառություններն են, որ կատարել է ընդհանուր հնդեվրոպական լեզուն առաջավոր Ասիայի լեզուներից՝ մայր սեմերենից և շումերերենից։ Այդ փոխառությունները կարող են բացատրվել միայն, եթե ընդունենք, որ հեռավոր ընդհանուր հնդեվրոպական դարաշրջանում հնդեվրոպացիները գտնվել են սեմականներին մոտ, իսկ դա անհնար կլիներ, եթե ընդունենք այն վարկածը, ըստ որի՝ հնդեվրոպացիների նախահայրենիքը Եվրոպայում է եղել»։

Նույնիսկ հնդեվրոպական նախահայրենիքը Եվրոպայում տեղադրելու վարկածի ամենաեռանդուն պաշտպան Վ. Գեորգիևը 1975 թ. արդեն Փոքր Ասիան մտցնում էր նախահայրենիքի ոլորտի մեջ[113]։

Իհարկե, գիտական առաջիկա ուսումնասիրությունները նոր տվյալներ կստանան այս հարցի ճշգրտումների համար, բայց այլևս անհերքելի է, որ չտրոհված հնդեվրոպացիները շատ հնում բնակվել են Փոքր Ասիայում և սրան արևելքից կից տարածքում՝ սեմականների հարևանությամբ։ Սա ընդունում է ամեն մի լուրջ լեզվաբան, որ ծանոթ է նորագույն փաստերին ու գրականությանը։ Ջուտ լեզվաբանական փաստերից բացի՝ կան նաև լրացուցիչ այլ փաստեր, որ հաստատում են հնդեվրոպացիների փոքրասիական ծագումը։ Օրինակ՝ այն, որ հնդեվրոպական լեզուներով ամենահին գրավոր հուշարձանները գտնվել են Փոքր Ասիայում։

Վերջին ժամանակաշրջանում ռուս լեզվաբան Օլեգ Շիրոկովն իր մի շարք աշխատություններում լեզվահամեմատական մանրամասն, ուղղակի ոսկերչական աշխատանք կատարելով՝ իբրև եզրակացություն նշեց, որ՝ « ա) հնդեվրոպական նախահայրենիքը եղել է Արևելյան Փոքր Ասիայում, ներառյալ՝ Հայկական լեռնաշխարհը. բ) որ այս ամենը խոսում է հայերի՝ իրենց զբաղեցրած տարածքում տեղաբնիկ լինելու մասին»[114]»[115]։

Փաստորեն, սեմական և հնդեվրոպական լեզուների հայրենիքն ի սկզբանե, մինչև այդ լեզուների՝ աշխարհով մեկ սփռվելը, գտնվել է միևնույն վայրում, ինչը լիովին համահունչ է Սուրբ Գրքին.

«Խոսքն, իհարկե, Հայկական լեռնաշխարհի ամենաանգին հնագիտական նյութի՝ հայոց լեզվի մասին է, որը չնայած հազարամյակների հնամենության՝ արիական արմատական համակարգով ամուր պահպանված է։ Աշխարհի ուրիշ ոչ մի հնդեվրոպական լեզու չի բերել արիական ցեղի այդքան ֆունդամենտալ, հիմնային հասկացություններ և ձայնային կուտակում՝ դեռ ընդհանուր հնդեվ-

---

[113] Вопросы языкознания, 1975, № 5, ст. 9.

[114] Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, դ 5, էջ 91, նաև՝ պատմա-բանասիրական հանդես, 1977, դ 1, էջ 99-100:

[115] Ռ. Իշխանյան... էջ 20-28:

ռոպական ցեղի նախակուտակումից։ Ինչե՛ր արժե միայն «արիացե՛ք» բառը։ Միայն այն, որ սա պահպանվել է հայոց լեզվում և առհավետ մնացել է նրանում, շատ բաների մասին է ասում։ Եվ առաջին հերթին՝ ազգի խիզախության մասին։ Եթե սրան ավելացնենք նաև «Արարիչ» բառը, ապա պարզ կդառնա, որ պեղումները պետք է անել ոչ թե հողում, այլ՝ հայկական հոգում... Արարիչ, արիացեք՝ (այս շարքը հայոց լեզվում անվերջանալի է), ահա նրանք՝ մինչհնդեվրոպական մարդկության առաջին բառերը, ինչն ավելորդ անգամ խոսում է այն մասին, որ հնդեվրոպացիների նախահայրենիքը պետք է փնտրել այս կողմերում՝ Հայկական լեռնաշխարհի, Արևելյան Անատոլիայի, և ընդհանրապես, Փոքր Ասիայի արևելքում և Զագրոսում» [116]։

Աշխարհիկ գիտնականներին մի քանի դար էր հարկավոր, որպեսզի իրենց աշխատանքներով նախ անտեսեին Սուրբգրային տեղեկությունները և Փոքր Ասիայի տարածքից հնդեվրոպական լեզվի հայրենիքը հեռացնեին՝ հասցնելով մինչև Եվրոպա։ Ապա երկար դեգերումներից հետո Եվրոպայից վերադառնային այն նույն վայրը, որտեղ եղել է առաջին՝ մայր լեզուն՝ Հայկական լեռնաշխարհը և նրա շրջակա տարածքները, որտեղից ադամական լեզուն, տրոհվելով տարբեր լեզվախմբերի, տարածվել է աշխարհով մեկ։

Փաստորեն, գիտնականները ակամա հաստատեցին Սուրբգրային ճշմարտությունը։

Գ. Կլիչկովը գրում է. «Ենթադրում եմ՝ կարելի է վստահությամբ բացառել հայերեն լեզվի կրողների արդեն ձևավորված էթնիկական միջուկի՝ մի ինչ-որ այլ տարածքից միգրացիայի մասին կարծիքը։ «Եկվորությունը», «արշավը», «գրավումը» պահանջում են էթնիկական նյութի որոշակի համախմբում։ Հայերն, ավելի հավանական է, բնիկ, տեղաբնակ ժողովուրդ են, այլ ոչ՝ եկվոր. հայերի լեզվաստեղծումը (գլոտտոգենեզ) և ազգաստեղծումը (էտնոգենեզ) չէր կարող տեղի ունենալ հնդեվրոպական լեզվային շրջանի կենտրոնից («նախահայրենիքից») շատ հեռու, քանի որ նկատվում են կապեր հնդեվրոպական լեզուների շատ լայն շրջանակի հետ։ Սրա հետ միասին, հայերենում ավելի լավ են երևում վաղ շրջանի այնպիսի հնագույն հատկանիշներ, որոնք միևնույն ժամանակ ի ցույց են դնում հայերենի մեկուսացած տարածքում լինելը, (այլ կերպ՝ նախահնդեվրոպական լեզվի կողային արեալում)» [117]։

[116] Нелли Саакян. Армяне, Ереван, 1977, ст. 14-15.

[117] Георгии Клычков (Москва) «Происхождение и образование армянского народа, модель глоттогенеза армян» (На материале данных диахронической фонологии индоевропейского консонантизма), Вестник общественных наук 8 (452) Август, Ереван 1980 г., ст. 99.

Արդյո՞ք միայն հնդեվրոպական լեզու և հնդեվրոպական լեզվի հայրենիք

«Հայերեն լեզուն Աստծո հեղինակություննէ»[118]:

Մեջբերումներով ներկայացրինք գիտնականների պնդումները հայոց լեզվի այլ լեզուների հետ խառնակումների, և նման ուրիշ վարկածների շուրջ, որոնց մեջ արժևորեցինք այն տեսակետը, որ հայոց լեզուն հնդեվրոպական լեզու է և իր առանձնահատուկ տեղն է գրավում այդ լեզվաընտանիքում.

«Հայերենը ոչ միայն հավասարվում է եվրոպական լեզուներին, այլ գերազանցում է նրանց: Ոճի տեսակետից հնդեվրոպական ոչ մի լեզու չի գերազանցում հայերենին, նույնիսկ չի հավասարվում նրան»[119]:

Այսպիսով, շատերը Հայաստանի տարածքն սկսեցին համարել հնդեվրոպական լեզուների հայրենիք:

Եվ չնայած այս ամենը կարծես թե պատվաբեր պետք է լինի հայերենի համար, սակայն թե՛ հնդեվրոպական լեզվի հայրենիքի, թե՛ այդ լեզվաընտանիքի պատկանելության հետ կապված եզրահանգումները խիստ թերի են մի լեզվի համար, որ ազգայինն՝ մայր լեզու լինելու պատիվն ունի:

Հայոց լեզուն լեզվաբանների համար այնքան գաղտնախորհուրդ է, որ տարիներ շարունակ ուսումնասիրելով՝ նրանք չէին կարողանում նույնիսկ հասկանալ, թե ո՞ր լեզվախմբին է այն պատկանում: Ի՞նչն է այդ երկար դեգերումների պատճառը: Հարցն այն է, որ հայոց լեզուն, ունենալով բազմաթիվ ընդհանրություններ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող լեզուների հետ, միևնույն ժամանակ պարունակում է բազմաթիվ տարրեր՝ նաև մյուս լեզվախմբերից.

«Թեև այժմյան քննադատությունն այլ կարծիք ունի լեզվի ծագման և ածանցման մասին, սակայն արժանի է հիշել, որ թե՛ ժողովրդի համար, թե՛ նրա լեզվի համար չկա մի երկիր, որ մեր երկրին հավասար այդքան համեմատության և նմանության առիթ դրսևորած լինի: Սկսած Հերոդոտից, Ստրաբոնից և Եվստաթիայից՝ հարցրու բոլոր լեզվագետներին և բանասերներին, ինչպիսիք են Աքոլութոսը, Շվարցը, Պաչարը, Կալմետը, Հերվասը, Վիսդնը, Լակրոզը, Լայբնիցը, Շրեդերը, Հերնը, Ճ. Ուիլյամը, Անգդիլը, Բալլասը, Գլաբրոթը, Ատելունկը, Պոբը, Բոդը, Բեդերման, Վինտիշմանը, Կադդերեյը, Նիպուրը և այլք՝ ո՞ր լեզվին է նման հայերենը: Բոլորն էլ նույն պատասխանը կտան՝ հայերենին մերձավոր և ազգակից համարելով փռյուգիացիների, ասորիների, բաբելացիների, քաղդեացիների, հրեաների, թաթարների, կովկասյան թուրքերի, ղազախների, պարթևների, փեհլեւների, զանդիկների, հնդկագերմանացիների, մարապարսացիների,

---

[118] Շարլ Փ. Ռոբեր, Ֆրանսիա: Տե՛ս Նշան Որբերեան, Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

[119] Անտուան Մեյե, Ֆրանսիացի լեզվաբան: Տե՛ս Նշան Որբերեան: Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

հին հույների, եգիպտացիների և ղպտիների, կելտերի, ֆիննների և սիպերեացիների լեզուները»[120]*:*

Ինչպես տեսնում ենք, հետազոտողները հայերենը նմանեցնում են տարբեր լեզվաընտանիքների լեզուներին, միևնույն ժամանակ նկատում, որ բառացիորեն «ճչում է», որ այն հնդեվրոպական լեզու է. սա տարակուսանք է հարուցում: Հիրավի, դժվար էր տարբեր լեզվախմբերի հետ առնչվող հայերենը դասակարգել.

«Արդ, այսքան խառնաշփոթության մեջ որտե՞ղից են ուզում սերել հայերենը, այս բոլոր ավել կամ պակաս թյուր կարծիքների մեջ պետք է, որ այդ վիհում խորը, ճշմարիտ կամ սկզբնական մի բան լինի, ապա թե ոչ՝ անկարելի կլինի հասկանալ, թե ինչո՞ւ և ինչպե՞ս այդքան ծանր ու գիտուն անձանց գլուխները շրջվել են այդ վիհի վրա»[121]*:*

Զարմանալի է և այն, որ հայերենն ընդհանրություններ ունի ոչ միայն այդ բազմաթիվ լեզուների հետ, այլև՝ Ասիայից և Եվրոպայից բավականին հեռու գտնվող մայրցամաքի բնակիչների՝ հարավամերիկյան բնիկների լեզուների հետ.

«Այմարներն ապրում են Անդյան բարձրավանդակի կենտրոնական մասում գտնվող պետություններում՝ Բոլիվիայում, Պերուում և Չիլիում...

Պրպտելով անգլերեն-այմարերեն ընդամենը 600 բառանոց բառարանը՝ մենք գտանք մի ամբողջ շարք այմարերեն բառեր, որոնց արմատների համեմատական ուսումնասիրությունը համապատասխան հայ բառարմատների հետ բացահայտեց նրանց ֆոնետիկական և իմաստային նմանությունը»[122]*:*

Նմանապես և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ Պոլինեզական լեզուներում էլ, հատկապես Ջատկի կղզու բնակիչների բառապաշարում, այսօրվա տվյալներով մոտ 400 բառ իր անվամբ և նշանակությամբ համապատասխանում է հայերենում առկա նմանատիպ բառերին[123]*:*

*Հայերենի՝ համընդհանուր լեզուների խառնարան հանդիսանալը հայտնի էր շատ վաղուց: Եղիշեն դեռևս 5-րդ դարում ներկայացնելով տարբեր լեզուների հատկությունները՝ ասում է այս մասին՝ շեշտը դնելով հայոց լեզվի այդ առանձնահատկության վրա. **«Հունարենը մեղմ է, հռոմեական լեզուն՝ հզոր, հոներենը՝ ահաբեկող, ասորերենը՝ աղերսական, պարսկերենը՝ պերճ, ալաներենը՝ գեղեցկազարդ, գոթերենը՝ հեգնական, եգիպտերենը՝ տափակախոս ու խավարաձայն, հնդկերենը՝ ճռվողական, հայերենը՝ քաղցր, որը միաժամանակ կարող է մյուս բոլոր լեզուների հատկություններն ամփոփել իր մեջ»***[124]*:*

Հայերենի՝ բոլոր լեզուների հատկություններն իր մեջ ամփոփելը՝ լեզուն լիովին տիրապետողին թույլ է տալիս՝ առանց մեծ դժվարության սովորել ցանկացած այլ լեզու: Իսկ այլալեզու անձանց համար հայերենին կատարելապես

---

120 Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հատոր Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920, էջ 62:
121 Նույն տեղում:
122 Մերի Սարգսյան, Հայոց լեզվի հետքը Լատինական Ամերիկայում. Երևան, 2004, էջ 8-9:
123 https://www.youtube.com/watch?v=EsHbKOyoIxw
124 Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց, Մատենագիրք հայոց, հ. Ա, էջ 817:

տիրապետելը չափազանց դժվար է, քանի որ, ըստ Գրիգոր Տաթևացու, մասնավոր է նրանց լեզուն.

«Փափուկ է հելլենացին, սաստիկ՝ հռոմեացին, սպառնական հույնը, աղաչական՝ ասորին, ճռվողական հնդիկը, գեղեցկազարդ՝ ալանը, պերճ պարսիկը, ծաղրական՝ գոթը, խավարաձայն եգիպտացին և համեղ՝ հայը (հայերենը), որ լիապես կարող է բոլոր լեզուները ճշգրիտ յուրացնել: Իսկ ուրիշները հայոց լեզուն աղճատված և թյուր են ուսանում, քանի որ մասնավոր է նրանց լեզուն»[125]:

Գրիգոր Տաթևացու կարծիքը եզակի չէ: Մխիթարյան հայրերից շատերն էլ այն համոզման են, որ այլալեզու մարդկանց համար ոչ միայն հայոց, այլև աշխարհի տարբեր լեզուները սովորելը դժվար է՝ ի տարբերություն հայալեզու մարդկանց: Դրա պատճառը համարում են հայոց լեզվի՝ մայր լեզու լինելը.

«Ովքեր կատարելապես գիտեն հայոց լեզուն իր բոլոր հատկություններով և հնչման առոգանությամբ, այլազգի յուրաքանչյուր բառ սովորելով՝ կարող են ճշտությամբ արտասանել, կարծես թե իրենց բնական լեզուն է, իսկ այլ ազգերը չեն կարողանում ուրիշ ազգերի բառերը ճիշտ արտասանել, ինչպես ցույց է տալիս փորձը, որից էլ երևում է, թե հայոց լեզուն սկզբնական և հարազատ բարբառն է, իսկ ուրիշներինը՝ ոչ, այլ՝ նրանից առաջացած»[126]:

«Մեր լեզվի ընդհանուր կազմության մեջ պերճությունը գտնում ենք ոչ թե արվեստի միջոցով, այլ՝ բնական. դա նախ՝ հնչյունների հարստությունն է, որը վայել էր առաջին լեզվին, որ սփռվեց աշխարհի բոլոր կողմերում, քանզի ունենալով 36 տառ. մեր հայերը այժմ աշխարհի որ ծայրում էլ գտնվեն, կարողանում են հեշտությամբ օտար լեզուներով խոսել՝ որքան հնարավոր է և հարմար Ադամի լեզվին»[127]:

«Հայ մեծ մատենագիր Վարդան Արևելցին ևս, Եղիշեի նման, համեմատության մեջ դնելով հայերենն այլ լեզուների հետ, եկել է այն համոզման, որ իր մայրենին լավագույնն է՝ ահավասիկ. «Բայց դու, [ով հայ] ազգ, հետազոտիր և քննիր լեզուները. Օրինակ՝ Ֆռանկերենը** *(իմա՝ լատիներենով գրող եվրոպացիները, Ա. Ա.)* **և հելլենացիները, որ մակեդոնացիներն են, շատ են չարչարվում, մինչև որ հասնում են իրենց ուզածին և կարողանում են ընտրությամբ խոսել և լսել բառերը, թե ո՞րն է արականը, իգականը և կամ չեզոքը, ո՞րը՝ երկսեռը:

Բայց ազգս հայոց, լեզվի և գրիս հարստության և փարթամության շնորհիվ, անհարկի համարեց այս, իսկ հույները և այլ ազգերը հարկադրվեցին՝ իրենց լեզվի և գրի սակավության պատճառով և դրանով լցրին [իրենց լեզուների] պակասությունը»»[128]:

Ոմանք հայերենի այդ յուրահատկությունը հիմնավորում են նրանով, թե

---

[125] Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, պրակ Լ.Ջ:

[126] Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985. էջ 156:

[127] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 23:

[128] Արմեն Այվազյան, Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը, Երևան, 2001, էջ 23–24:

ըստ Սուրբ Գրքի, պատմիչների և ավանդության՝ Հայաստանը եղել է ազգերի և ցեղերի սերմնամբար: Այդ հյուրընկալ երկրում օթևան են գտել այլ ազգի պանդուխտներ, ինչպես օրինակ՝ ասորեստանցիները, հնդիկները, հրեաները, քանանացիները, սկյութացիները, կովկասցիները, հույները, մարերը, պարսիկները և այլք: Քանի որ այս բոլոր ցեղերը որոշ ժամանակ իրենց օրենքներն ու լեզուն պահելուց հետո խառնվել են տիրող ազգի՝ հայերի հետ, հնարավոր է, որ հայերենն այդ լեզուներից որոշ բառեր փոխառած լինի: Իհարկե, այդ ազգերի ձուլումը հայոց մեջ չէր կարող չազդել հայոց լեզվի վրա, սակայն հայերենի՝ այլ լեզուների հետ ունեցած նմանությունների իրական պատճառը ոչ թե այդ ազգերի հետ շփումն է, այլ այն, որ հայոց լեզուն առաջին՝ ադամական լեզուն է, որից սերած, առանձնացած մյուս լեզուները, բնականաբար, պետք է ընդհանրություններ և նմանություններ ունենային նրա հետ:

Հարավային Ամերիկայի բնիկների վեց հարյուր բառանոց լեզվում առկա նմանությունը հայերենին՝ բնավ չի խոսում այն մասին, որ այդ ցեղերը եկել են Հայկական լեռնաշխարհ, իրենց ազդեցությունը թողել հայոց լեզվի վրա, ապա նորից վերադարձել Ամերիկա.

«Թեև օտարազգի մատենագիրները՝ ոմանք ակամա, ոմանք էլ խոսքի ոճը պատճառաբանելով, տգիտանալով ասեցին, թե հայոց լեզուն ծնունդ է առել և ազգակից է մարերենին, ասորերենին կամ արաբերենին, սակայն մենք հզոր ապացույցներ ունենք, որ մեր բարբառը, որով այժմ խոսում ենք, մայր լեզուն է և այլ լեզուներին անհաղորդ է, անզուգակից»[129]:

Թեև հայոց լեզուն ընդհանրություններ ունի այլ լեզուների հետ, սակայն առավել՝ հնդեվրոպական մեծ լեզվաընտանիքի հետ, քանզի հայերենը պարունակում է 3000-ից ավելի հնդեվրոպական արմատ. ***«Հարկ է նշել այն բեղմնավոր աշխատանքը, որ կատարել է հայոց լեզվի ուսումնասիրության բնագավառում ակադեմիկոս Արարատ Ղարիբյանը: Քննության առնելով 1960թ. հայոց գրական լեզվի բարբառների կոնսոնանտային խմբերը (բաղաձայների զուգակցությունները)՝ Ղարիբյանը հայտնաբերեց, որ եթե յուրաքանչյուր հնդեվրոպական լեզվին բնորոշ են միայն իրենց հատուկ կոնսոնանտային խմբեր, ապա հայերենում առկա են բոլոր հնդեվրոպականները»[130]:***

«Հայոց լեզվի բացառիկ իզոգլոսանների թիվն անհամեմատ ավելի քիչ է այն ընդգրկող խմբակային իզոգլոսաններից, ինչը պարզորոշ խոսում է մյուս հնդեվրոպական լեզուների շարքում հայոց լեզվի կենտրոնական դիրքի մասին: Հայոց լեզուն, համենայն դեպս այն մասով, որը վերաբերում է նրա բառապաշարին, կամուրջ է գցում արիական լեզուներից դեպի սլավոնաբալթյան և հունարենից դեպի իտալական, կելտական ու գերմանական լեզուները»[131]:

Եզրակացություն. հայերենը կրում է այլ լեզուների և հատկապես հնդեվրոպական լեզուների հատկանիշներ:

---

[129] Ղուկաս Ինճիճեան... էջ 1:

[130] Ս. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան, 1986, էջ 19-20:

[131] Э. А Макаев, Указ соч., стр. 456, УЧИТЕ АРМЯНСКИЙ! Ареальная характеристика армянского языка, Ереван, 1967, стр. 46-47.

«Բացի հնդեվրոպական շերտից, մենք հայոց լեզվի մեջ տեսնում ենք ապշեցուցիչ հարուստ բառապաշար և արտահայտչատեսակների անսահման ընտրություն», - գրում է Ն. Մառը[132]:

*Սակայն ոչ միայն այդ յուրահատուկ ընդհանրականությունն է խոսում հայերենի՝ ադամական լեզու լինելու մասին, այլև դրա միանգամայն հակառակ պարագան. կրելով իր մեջ բոլորինը՝ միևնույն ժամանակ այն հստակորեն տարբերվում, առանձնանում է բոլորից. **«Պահպանելով հանդերձ ընդհանուր հնդեվրոպականի շատ գծեր և առաջին հայացքից երևան գալով որպես սանսկրիտի, հունարենի, լատիներենի, սլավոնականի և այլ լեզուների ցեղակիցը՝ հայերենը ստացել է յուրահատուկ կերպարանք, որով նա խորապես տարբերվում է հնդեվրոպական ընտանիքի բոլոր լեզուներից»[133]:***

«Այն, ինչն առանձնապես աչքի զարնեց հայերենի արմատական բառարան կազմելու նպատակով հայ գրիչներին ընթերցելիս, մի կողմից հայերենի մեծ տարբերությունն էր իրանականից, ինչպես նաև հնդեվրոպական որևէ այլ լեզվից ընդհանրապես»[134]:

«Հայերենն անկախ լեզվախումբ է հնդեվրոպական լեզվաընտանիքում՝ համեմատած գերմանացիների, կելտերի և սլավոնականների հետ»[135]:

«Քանի որ հայերենի տարբերությունը հնդեվրոպական մյուս լեզուներից մեծ է, հայտնվում է այն կարծիքը, թե հայերենի անջատումն ընդհանուր հնդեվրոպականից առաջնածին է»[136]:

«Հայերեն լեզուն պատկանում է հնդեվրոպական լեզվախմբին, այն միջին տեղ է զբաղեցնում հնդիրանական (արիական) և հունական լեզուների միջև, բայց երկուսից էլ տարբերվում է»[137]:

«Հայերեն լեզուն տարբեր է բոլոր հին լեզուներից, ինչը հայտնի է դառնում տարբեր բառերի բազմությունից, նաև բնիկ լեզվի կազմությունից՝ ըստ անունների հոլովման, բայերի խոնարհման, համաձայնության, սեռերի բացակայության և այլն»[138]:

«Պարո՛ն. Դուք լեզվաբանության մեջ իսկույն կդառնաք համաշխարհային դեմք, քանզի խորապես ուսումնասիրում եք հայերեն լեզուն, որ մյուս լեզուներից բոլորովին առանձնանում է...»[139]:

Իրողությունը, որ հայոց լեզուն ամփոփում է իր մեջ բոլորինը և միևնույն

---

[132] Николай Марр, Армянская культура, Ереван, 1990, ст. 35.

[133] Անտուան Մեյեն, Հայաստանի, հայերի և հայերենի մասին, Երևան, 2006, էջ 32:

[134] Հայնրիխ Հյուբշման, տե՛ս Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004, էջ 173:

[135] Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004, ст. 24.

[136] Միցոս Ալեքսանդրոպուլոս, Հայեր, Երևան, 1984, էջ 47:

[137] I. Taylor, The Origin if the Aryans, p 2; EB (14), II, p. 383, i («Armenian Language») – տե՛ս С. К. Дикшит, Введение в археологию, Москва, 1960, ст. 435.

[138] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835, էջ 6:

[139] Գոթֆրիդ Լայբնից. գերմանացի փիլիսոփա, լեզվաբան, աստվածաբան, (Լա Կրոզին հասցեագրված նամակներից): Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 127:

ժամանակ միանգամայն տարբեր է բոլորից, Սուրբ Գրքի տվյալներն անտեսող լեզվաբանների համար դարձել է մի տեսակ անլուծելի խնդիր. ***«Հայոց լեզվի ամենամերձ գենետիկական կապերը և նրա միևչպատմական անցյալի հարցերը... այն խնդիրներից են, որոնց լուծման առումով հնդեվրոպաբանությունը մինչ օրս անզոր է եղել»*** [140]*:*

Իսկ Սուրբ Գրքի ճշմարտությունն ընդունող հետազոտողների և սկզբնական մեկ լեզվի գոյությանը հավատացող լեզվաբանների համար սա բնավ գաղտնիք չէ, քանզի նրանք լիովին համոզված են, որ հայերենը առաջին՝ ադամական լեզուն է, ինչով էլ պայմանավորված են այս լեզվի զարմանալի առանձնահատկությունները.

«Լեզուների մեծ մասն իրար նման են, և շատերն այս կամ այն լեզվից են սերված, որ աղբյուր կամ մայր լեզու են կոչում: Եվրոպական լեզուները մի քանի աղբյուր ունեն, մեկը լատիներենն է, որից սերում են իտալերենը, ֆրանսերենը, իսպաներենը, պորտուգալերենը և այլն, մյուսը հունարենն է, որ լատիներենի հետ շատ նմանություններ ունենալով, կարող է համարվել նրա մայրը, ուստի այս բոլոր լեզուները կոչվում են նաև հունալատինական: Մի գլխավոր աղբյուր էլ սլավոներենն է, որից սերում են ռուսերենը, ուկրաիներենը, լեհերենը, խորվաթը, բուլղարերենը և այլն: Այս աղբյուրն էլ հունարենի հետ որոշ նմանություններ ունի: Առանձին աղբյուր է գերմաներենը, որից սերվել է անգլերենը և նրանց խառնված լեզուները, ինչպես սաքսոնը և այլն, բայց սրանց հին աղբյուրն էլ հայտնի է, որ պարսկերենն է: Արևելյան լեզուներից եբրայերենը, արաբերենը, քաղդիերենը, ասորերենը, եթովպերենը, բոլորը մի աղբյուրից են առաջացել: Հնդկերեն կամ սանսկրիտ կոչված հին լեզուն, որ այսօր շատ մայր լեզուների տատ է կոչվում, գրեթե այժմյան բոլոր եվրոպական լեզուների հետ շատ նմանություն ունի, ինչպես նաև հին և նոր պարսկերենի հետ: Արդ, այսքան լեզուների մեջ հայերենի նման լեզու չլինելը հատակորեն ցույց է տալիս, թե այս լեզուն անխառն է մնացել» [141]*:*

Ռուս լեզվաբան Գեորգի Կլիչկովն էլ հայերենի մասին իր աշխատությունում ի ցույց է դնում հայոց լեզվի յուրահատկությունները: Նա համարում է, որ հայերենը շատ ընդհանրություններ ունի իրենից հեռու գտնվող լեզուների հետ և միանգամայն տարբեր է այն լեզուներից, որ շրջապատում են իրեն, և որ ավելին՝ իր մեջ կրում է նախահնդեվրոպական լեզվի տարրեր: Կլիչկովը եզրակացնում է, որ հայերենը բոլոր լեզուներից մեկուսացած լեզու է և գտնվում է, այսպես կոչված, երրորդ չափումում, ինչը լիովին համապատասխանում է առաջին՝ ադամական լեզվի բնութագրին:


«Հայերենը գրավում է միանգամայն հատուկ տեղ հնդեվրոպական լեզուների մեջ: Եթե համահնդեվրոպական բարբառների՝ լեզվական հատկանիշների բաժանումը կոնտինումի ներսում սովորաբար ունենում է մակերեսային բնութագիր, և իզոգլոսներն էլ ցույց են տալիս նույն չափումում լեզուների մոտ կամ հեռու լինելը, ապա հայերենը տիրապետում է աշխարհագրորեն հեռու գտնվող

---

[140] Десницкая А. В. Вопросы родства индоевропейских языков. - Москва, Л., 1955. - С. 239. http://trypillia.narod.ru/articles/armnew.htm

[141] Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառ, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896, էջ 37:

*լեզուների նմանությանը, տարբերվում է նույն արեալում գտնվող լեզուներից կարծես թե տեղայնացված լինելով երրորդ չափումում (*в третьем измерении*)։ 1937 թվականին կալկուլացիոն ճանապարհով այսպես են եզրակացրել Ա. Լ. Կրուբերը և Զ. Դ. Կրետենը։*



Հայոց լեզվի՝ առավել բացառիկ առանձնահատկությունը դրսևորվում է հնչյունաբանության բնագավառում։ Դեռ 1916 թ. Մ. Գրամմոնը գրել է. «Այն, ինչը հայոց լեզվում ընդհանուր հնչյունաբանության տեսանկյունից մեզ թվում է առավել հետաքրքիր, հայոց լեզվի տվյալների հակասությունն է պատմական հնչյունաբանության համեմատաբար կարևոր սկզբունքներից մեկի հետ, ինչը ձեռք է բերում ավելի ու ավելի էվոլյուցիոն լեզվաբանության հիմնական սկզբունքի նշանակություն։ Դա հնչյունային փոփոխությունների համաչափության, զուգահեռականության և միանմանության սկզբունքն է։ Հայերենում համաչափությունը, միանմանությունը և զուգահեռականությունը խախտված են համարյա թե ամեն տեղ»[142]*։*

Այստեղ, ըստ ռուս լեզվաբանի, բոլոր լեզուներն ապրել են մի ինչ-որ էվոլյուցիոն զարգացում, իսկ հայերենն, ի տարբերություն այլ լեզուների, զերծ է եղել նման զարգացումներից, քանզի ինչպես որ եղել է առաջին անխառն լեզուն, այդպես էլ այն մնացել է.


«Հնդեվրոպական լեզուների մեջ հայոց լեզվի համար բնորոշ է շատ ավելի մերձեցում նախահնդեվրոպական բառի ծննդի խորքային մոդելին, այսինքն՝ ոչ ուշ, քան մ. թ. ա. V հազարամյակի ժամանակագրական մակարդակին։ Մ. թ. ա. III հազարամյակին համահնդեվրոպական նախալեզվի բարբառների մեջ հայերենը, լինելով նախահնդեվրոպական բարբառ, նկատվեց էքստրասիստեմայինև։ Համահնդեվրոպական լեզվի բարբառները՝ (խեթական, հունական, սլավոնական և այլն) բոլորը կրել են նորմալիզացում՝ բնորոշ համահնդեվրոպական դարաշրջանին. հայերենը նրանց մեջ պահպանում է նախկին դարաշրջանի գծերը և նախահնդեվրոպական լեզվի կառուցվածքը»[143]*։*

Լեզվաբանները չնայած հերքել են, որ հայերենը իբր պարսկերենի կամ

---

[142] Георгии Клычков (Москва) «Происхождение и образование армянского народа, модель глоттогенеза армян» (На материале данных диахронической фонологии индоевропейского консонантизма), Вестник общественных наук 8 (452) Август, Ереван 1980 г., ст. 87, 88.

[143] Георгии Клычков (Москва)..., ст. 87, 88.





փոյուգերենի ճյուղ է ու տարբեր լեզուների խառնակումից է առաջացել, և հաստատել են նրա՝ հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանելը Հայաստանի տարածքում, սակայն դա մեզ համար ոչ թե պարծանքի առիթ է, այլ՝ ընդվզումի: Ինչո՞ւ: Որովհետև իրականում հայերենը ո՛չ հնդեվրոպականի, ո՛չ սեմականի, ո՛չ էլ որևէ այլ լեզվաընտանիքի անդամ չի կարող համարվել: Եթե հայերենն է առաջին նախնական լեզուն, տրամաբանական է, որ վերոհիշյալ լեզուները նրանից են առաջացել, ինչպես որ Եվան՝ Ադամի կողից: Ծառը չի կարող իր ճյուղերից առաջանալ կամ ճյուղի մաս կազմել: Ճյուղերն են սկիզբ առնում ծառից. այսինքն, թե՛ հնդեվրոպականը, թե՛ սեմականը և թե՛ մնացած այլ լեզուներն առաջացել են հայերենից: Այս նկարը, որը վերցված է 1749 թ. Մեծ Բրիտանիայում տպագրված անգլերեն Աստվածաշնչից, հենց այդ մասին է վկայում:

Շատ հեղինակավոր գիտնականներ, ինչպես տեսանք, ապացուցել են, որ Հայաստանն է հնդեվրոպական լեզուների հայրենիքը, սակայն դա նույնպես մասամբ է ճշմարիտ, քանզի որտեղ եղել է ծառի բունը, այդ վայրը ոչ թե մեկ ճյուղի, այլ՝ ողջ ծառապսակի, բոլոր ճյուղերի հայրենիքն է: Այլ կերպ՝ Հայկական լեռնաշխարհը ոչ միայն հնդեվրոպականի, այլև բոլոր լեզուների նախահայրենիքն է, նաև՝ համայն մարդկության և կենդանական աշխարհի կրկնակի հայրենիքը.

«Նախալեզվի հետնորդը դարձավ նախահայրենիքում մնացած ժողովրդի լեզուն՝ հայերենը, որով պետք է որոնել աշխարհի լեզուների նախահիմքը և սաղմերը, որով և նա մայր (կամ՝ տատ) է բոլոր լեզուների:

Ուստի՝ ամփոփելով կարող ենք ասել, որ հայերենն ընդհանրական լեզվի սկզբունքային համակարգը պահպանած ժամանակակից լեզու է, և կարող է ընդհանրական լեզվի ուսումնասիրության հիմնական առարկան լինել»[144]:

Հետաքրքիր է ևս մի փաստ, ինչն ակամայից խոսում է ի նպաստ հայոց լեզվի՝ առաջին լեզու լինելու: Երբ 20-րդ դարի 60-ական թվականներին աշխատանքներ էին տարվում միջազգային լեզու ընտրելու կամ ստեղծելու ուղղությամբ, Ֆրեդերիկ Ֆեյդին և մի խումբ այլ Արևմտյան հայագետներ առաջարկեցին՝ հայոց լեզուն դարձնել միջազգային լեզու: Սակայն գերտերություններն ընդդիմացան և ի վերջո որոշեցին արհեստական լեզու ստեղծել՝ «էսպերանտո»:

«Մենք վստահ ենք, որ եթե կա բառերի ճշգրիտ իմաստը արտահայտող մի լեզու, ապա դա հայերենն է. առաջարկում ենք, որ նրան տրվի նախապատվությունը էսպերանտոյի փոխարեն»[145]:

Իսկ եթե համաձայնության գային, և հայերենը դառնար միջազգային լեզու, փաստորեն, մարդկությունը կրկին կսկսեր խոսել այն միակ լեզվով, որով խոսել էր՝ մինչև բաբելոնյան խառնակումը:

Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվում պահպանվել է մի հետաքրքիր ձեռագիր նամակ, որ գրել է հնդկահայ՝ մադրասցի Շահմիր Սուլթանը՝ Մադրասում բնակվող անգլիացի բժիշկ Ջիմ Անդերսենին.

«Մխիթարություն ունեմ այժմ քեզ մի հոդված ուղարկել Իսպանիայի աշխարհագրական պատմությունից վերցված, որը թարգմանել եմ անգլերեն. այն վերաբերում է հայոց լեզվին առ այն, որ դա հաստատ եղել է մեր նախահոր՝ Ադամի լեզուն: Այդ գրքի հեղինակը սրբակրոն Պետր Մուլիոն Մեքսիկացին է, գրքից հանված այդ հատվածը 1852 թ. տպագրեցի Մադրասում. «Հայն է Հայաստանի բնիկը, որտեղ Արարատ կոչված լեռան վրա իջավ Նոյյան տապանը, որտեղից էլ մարդիկ, և ընդհանրապես բոլոր ազգերը տարածվեցին աշխարհի չորս կողմերը, ինչը պետք է հռչակել և խոստովանել, քանզի մենք որդի և սերունդ ենք այդպիսի երջանիկ ազգի, որի լեզուն ավելի մեծ և հարուստ է, քան

---

[144] Վարդան Ասատրյան, Նախաժողովրդի բարբառների մասին, «Շողակն» երկշաբաթաթերթ, 2006, սեպտեմբեր Բ, թիվ 17(156), էջ 1-2:

[145] Ֆրեդերիկ Ֆեյդի. տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 606-607:

աշխարհի մեջ բոլոր եղածները, ինչը ոչ ոք չի կարող հերքել, քանզի սա է առաջինը, որ եղել է երկրի վրա, որ գործածվում էր մեր նախահայր Ադամի կողմից: Քանզի ջրհեղեղից հետո ոչ ոք չմնաց բացի Նոյից և նրա ընտանիքից, նրանք էին, որ տապանի մեջ գործածում էին այդ լեզուն, որ նրանց հայրերը ուսուցանել էին իրենց: Եվ Աստծո հրամանով իջնելով Նախիջևան՝ նրանք խոսում էին այդ նույն բարբառով»[146]:

Տեսնում ենք, որ իսպանացի հոգևորականը վստահորեն համարում է, որ հայոց լեզուն է եղել ադամական լեզուն, և որքան էլ արտառոց է, կարծես հպարտանում է, որ իրենք սերում են հայ ազգից՝ հավանաբար նկատի ունենալով, որ իրենց նախահայրենիքն Արարատյան երկիրն է, որի բնիկները հայերն են, որ ի սկզբանե ապրել են այստեղ և մյուս ազգերի պես չեն հեռացել այստեղից: Եվ այս ամենն այդ ժամանակներում ուսուցանում էին ամբողջ Իսպանիայում: Այս հոգևոր այրի մոտեցումը տվյալ հարցին միանգամայն համահունչ է գիտական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների եզրահանգումներին.

«Հայկական լեռնաշխարհի էթնիկական կազմը համապատասխանում է հին բնակչության թողած նյութական մշակույթին... Առաջավոր Ասիայում և Հայկական լեռնաշխարհում արմենոիդ տիպի ծագումն ավելի վաղ է կատարվել, քան արիական ու սեմական ցեղերի ներխուժումը: Արմենոիդների տարածման սկզբնական ժամանակաշրջանը Առաջավոր Ասիայի տերիտորիայում նախորդել է հնդեվրոպական լեզուների տարածմանը: Այս բանը հաստատվում է նաև մեր պեղումներից գտնված նոր քարի դարի և պղնձի դարի մարդաբանական նյութերով, ուր արմենոիդի առանձնահատկությունները երևան են գալիս լիովին պարզորոշ... Այս ժողովրդին՝ իր մարդաբանական տիպով, քաղաքակրթության և լեզվային մնացորդներով, կարող ենք հետևել անընդմեջ բոլոր դարերում՝ հասնելով մինչև մեր օրեր...

Ժողովրդական այդ խավը, Հայկական լեռնաշխարհի նախասկզբնական հիմնական խավը լինելով, հազարավոր տարիների ընթացքում պահպանեց իր մարդաբանական, մշակութային առանձնահատկությունները... Նա իր մարդաբանական տիպով ու մշակույթով այսօր վերապրում է հայերի մեջ»[147]:

---

[146] Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիւանի արխիւ, թղթապանակ 1, № 70:

[147] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան 1967, էջ 255, 257:

Հայոց լեզվի մասին

«Ամենասուրբ, ամենաանձեռնմխելի ժառանգությամբ,
որով խոսում են հայերը, ինչը միայն հայրը կարող է
թողնել իր երեխաներին, դա հայրենական լեզուն է։
Բոլոր ազգերի մեջ միայն հայերը կարողացան այն բերել
այսքան հարյուրամյակների ընթացքում՝
Նոյից մինչև մեր օրերը և ամբողջությամբ
պահպանել այդ թանկարժեք գրավականը»[148]։

Հայոց լեզվի մասին ասված բացառիկ կարծիքները և ասույթները նույնպես ապացուցում են հայերենի՝ մայր լեզու լինելը. լեզու, որով Աստված խոսել է Ադամի և Նոյի հետ։ Զարմանալի չէ, որ այդ լեզուն, որով խոսել են Դրախտում, դրվատական խոսքերի է արժանացել նաև այնպիսի հետազոտողների կողմից, ովքեր նույնիսկ չհավատալով թե՛ Դրախտի, թե՛ առաջին մայր լեզվի գոյությանը, այնուհանդերձ, կարողացել են տեսնել հայոց լեզվի զարմանահրաշ առանձնահատկությունները։

17-19-րդ դարերում արևելյան լեզուների ուսումնասիրությամբ զբաղվող եվրոպացի լեզվաբաններից շատերն անուշադրության էին մատնել հայոց լեզուն։ Միայն շնորհիվ դրանցից մի քանիսի նախանձախնդրության՝ շատ հետազոտողներ սկսեցին իրենց ուսումնասիրությունների նյութ դարձնել հայերենը, և եվրոպական երկրների համալսարաններում մեկը մյուսի հետևից բացվեցին հայագիտական բաժիններ.

«Ես ափսոսում եմ, որ հայ ժողովրդի լեզուն, մշակույթը, պատմությունը դեռ բավականաչափ չեն ուսումնասիրվել, և չեն հասկացվել նրա՝ ակնհայտ քաղաքակրթություն ստեղծողի նպատակները»[149]։

Այլազգի շատ գիտնականներ են ուսումնասիրել հայերենը, հմայվել նրա խորհրդավորությամբ և ջանացել խորամուխ լինել այդ առեղծվածային ադամական լեզվի յուրահատկությունների մեջ. ***«Սողոմոն Կեսար Մալանը Զմյուռնիայում եղած ժամանակ սկսեց հայերեն սովորել, որովհետև շատ սիրեց և հիացավ այդ լեզվով և այլևս չուզեց ետ կանգնել դրա ուսանումից»[150]։***

«Որպես լեզվաբան՝ ես փորձել եմ թափանցել հայոց լեզվի գաղտնարանները, նրա հոգու խորքերը, պարզել եմ, թե ինչպիսի մասնավոր շնորհ ունի այդ լեզուն, որ կարողանում է այդքան գերազանցորեն արտահայտել գիտական, փիլիսոփայական ամենաճշգրիտ գաղափարները, ինչպես նաև բանաստեղծական ամենանրբին զգացումները։ Հայոց լեզվի մեջ ես գտա այդ բոլոր գեղեցկու-

---

148 Шопен, Исторический памятникь, С. – Петербургъ, 1852, ст. 177.

149 Նիկողայոս Մառ, տե՛ս Նշան Որբերեան: Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

150 Շրումպֆ Գուստավ Ադոլֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս (ԺԴ-ԺԹ դար) Վենետիկ, 1895, էջ 348:

թյունները, սիրահարվեցի և իմ կյանքի ամեն մի վայրկյանը նվիրեցի այդ լեզվի ուսումնասիրությանը»[151]*։*

«Սկսել և շարունակում եմ հայոց լեզվի ուսումնասիրությունը։ Սա մի հարուստ լեզու է և լիովին փոխհատուցում է սովորողի չարչարանքները։ Ես ջանք եմ թափում և կշարունակեմ»[152]*։*

Հայոց լեզուն հետաքրքրել է նաև բազմաթիվ այլ օտարազգի լեզվաբաններին համար, որ տեսել են հայոց լեզվի առանձնահատկությունները, բացառիկ հարստությունը և ձեռնամուխ են եղել նրա խորացված ուսումնասիրությանը, ինչպես՝ Յ. Օտրեմբսկին, Գ. Նոգտը, է. Բենվենիստը, Ժ. Ֆրուկեն, Լ. Զաբրոցկին և շատ ուրիշներ։

Ստորև ներկայացվում են տարբեր լեզվաբանների, բանասերների և հետազոտողների կարծիքները՝ հայոց լեզվի մասին։

Հայոց լեզվի մասին օտարազգի գիտնականների դրվատական խոսքերը

«Հայոց լեզուն ունի 40 հազար արմատ, մինչդեռ շատ ուրիշ լեզուների մեջ 10 հազարը չի անցնում»։

«Հայոց լեզվի մյուս կողմը, որ արժանի է հիացմունքի, նրա բառային և ոճային հարստությունն է։ Այս առանձնահատկությունը հայ բանաստեղծներին հնարավորություն է տալիս համաշխարհային գրականության գանձերը բոլոր նրբերանգներով թարգմանելու հայերեն։ Եվ բառապաշարի հենց այդ հարստությունն է, որ օտարազգի թարգմանիչների առջև դժվար խնդիրներ է դնում հայ գրականությունն իրենց լեզուներով թարգմանելիս»։

«Հայոց լեզուն իր լեզվական և ստեղծողական ուժով ընդունակ է թափանցելու մինչև Մասիսի գագաթը, միաժամանակ բյուրեղյա է, ինչպես Սևանի ջրերը»։

էդմոնդ Շուսց. Հունգարիա, հայագետ

«Ասում են, թե հայերը աղքատ են, բայց դա սխալ է։ Նրանք ունեն մի մեծ գանձարան։ Հպարտ կլինեի, եթե հայերենը մայրենի լեզուս լիներ»։

Վալիսմատ Հովերի. գրող

---

[151] Ֆրեդերիկ Ֆեյդի. տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 606-607:

[152] Ջորջ Բայրոն, տե՛ս Նշան Որբերեան: Վկայութիւններ հայոց լեզուի մասին (2010-02-20), http://hy.wikiquote.org/wiki

«Կյանքիս ամեն մի վայրկյանը նվիրել եմ հայերենի ուսումնասիրությանը. իմ իմացած լեզուների մեջ հայերենը բացառիկ է... նախ՝ որպես զարմանալիորեն տրամաբանական լեզու, ապա նաև՝ իր ճկունությամբ, նոր բառեր կազմելու հնարավորություններով»։

«Հայերենը հիասքանչ, չծերացող ու չհնացող, անեզր հնարավորություններ ունեցող լեզու է։ Ե՛վ մեր ժամանակներում, և՛ գալիք հարյուրամյակներում ու հազարամյակներում, ինչքան էլ մարդկային միտքը զարգանա, հոգևոր, գիտական ու տեխնիկական ինչպիսի առաջընթացներ էլ լինեն, հայերենն ընդունակ կլինի կատարելապես արտահայտելու ամեն բան»։

Ֆրեդերիկ Ֆեյդի, ֆրանսիացի հայագետ

«Հայերենը՝ որպես խոսակցական լեզու, որպես հաղորդակցման միջոց, կատարյալ է եղել ի սկզբանե։ Իբրև գրական լեզու՝ նա մրցել է հունարենի ու լատիներենի հետ։ Հայերենով ստեղծվել են թարգմանական, իմաստասիրական, ճարտասանական, պատմական, քերականական երկեր, որոնք դասվում են հնագույն գրավոր խոսքի համաշխարհային հուշարձանների շարքը։ Հայերենը պահպանել է հնդեվրոպական լեզվի նախնական բառապաշարի շատ շերտեր, ինչպեսև՝ ավելի վաղնջական լեզուների հիմնահետքեր»։

Ջանկարլո Բոլոնեզի, իտալացի հայագետ

«Հայերենն իր ճոխությամբ, ճկունությամբ, իմաստաբանական հազար երանգառումներով փայլատակել է Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմում, պոեմ, որ նման է փիլիսոփայական խորհրդածությունների մի փառահեղ տաճարի»։

Ժան Պիեռ Մահե, ֆրանսիացի հայագետ

«Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործեց հին շրջանում, և հրաշալի լեզվին նվիրաբերեց յուրահատուկ այբուբեն, դրա հետ մեկտեղ՝ Աստվածաշնչի թարգմանությունը և հայոց պատմությունը»։

Յոհան Հերտեր, գերմանացի փիլիսոփա

«Հայոց լեզվի արժեքը բարձր է Արարատի չափ։ Եթե հայ լինեի, իսկապես ինձ հպարտ կզգայի այսպիսի լեզու ունենալու համար։ Հայե՛ր, դուք կարող եք պարծենալ ձեր լեզվով»

Հայր Լուի Մայե, Ֆրանսիա

«Հայոց լեզուն առաջին հայացքից ներկայանում է ոչ միայն՝ որպես կատարելագործված լեզու, այլև՝ մեծ վաստակ ունեցող մատենագիրների ձեռքով մշակված»։

Շրումպֆ Գուստավ Ադոլֆ, ֆրանսիացի հայագետ

«Արիական լեզուների մեջ ասիա-արիականը գերակշռում է եվրո-արիականին, իսկ ասիականի մեջ հայկականը վճռականորեն գերազանցում է սանսկրիտին, և հնդկական լեզվական ընտանիքին, նաև պարսկական լեզվին»։

Ռ. Էլլիս, անգլիացի լեզվաբան

«Այնքան եմ սիրում ձեր լեզուն, որ մեր տան մեջ տիկնոջս և զավակներիս հետ հայերեն եմ խոսում։ Կայսրի նման հպարտ եմ հայոց լեզուն իմանալու համար»։

Ֆրեդերիկ Մաֆլեր, գերմանացի լեզվաբան

«Հայերենի պես մայրենի լեզուն անտեսողները կամ ուրացողները, որքան էլ հարուստ լինեն, ինձ թվում է, թե նրանք մի ինչ-որ կերպով աղքատ են»։

Ռոբեր Կոտել, բելգիացի բանաստեղծ

«Հիասքանչ հայոց լեզուն, զարմանալի գործիք՝ դասական բոլոր մատյանների թարգմանությունների, հիանալիորեն մշակված, արտահայտիչն է հայի մեծաշունչ ոգու»։

Իտալացի հոգևորականներ, պատմաբան, գրող

«Արևելքի մեջ, Մոսկվայում և այլուր հմուտ և գիտնական մարդկանց հետ ունեցած հարաբերությամբ ստացած տեղեկությանս առհավատչյան քեզ եմ վերընծայում՝ հայկական լեզվի գանձը՝ ցանկալի գանձ՝ Եվրոպայի իմաստունների համար և շատերին անծանոթ իր պարունակությամբ, լեզվի պատկառելի հնության, կատարելության և աստվածաբանական, պատմական, իմաստասիրական ուսուցումների համար մեծապես օգտակարությամբ»։

Հովհաննես Շրոդերը, գերմանացի գիտնական

«Ձեր հնամենի լեզուն ես չգիտեմ, բայց սիրում եմ այն։ Նրա մեջ Արևելքն եմ զգում, դարերն եմ նշմարում այնտեղ, տեսնում եմ անցյալի խորհրդավոր նշույլի շողարձակումը։ Ինձ համար պարծանք է հայերենով թարգմանվելը»։

Վիկտոր Հյուգո, ֆրանսիացի գրող

«Հայերը պատկանում են մեծ արիական ցեղին՝ ներկայացնելով նրա ամենագեղեցիկ տեսակը։ Նրանց լեզուն ձայնային առումով զգալիորեն ավելի նման է եվրոպական լեզվին, քան՝ արևելյան։ Միայն այս ազնվական արիական ծագմամբ կարելի է բացատրել, թե ինչու, ապրելով ասիական բարբարոսների միջև, հայերն առաջինն ընդունեցին քրիստոնեությունը»։

Ժուլ Լեկլերկ, ֆրանսիացի ճանապարհորդ

«Ոչ մի ազգ գոյության իր կամքն ավելի ուժեղ չի արտահայտել 2000 տարվա ընթացքում, որքան հայ ազգը։ Ոչ մի ազգ ավելի համառությամբ չի պահպանել իր սեփական լեզուն...

Այն ժամանակ, երբ Ֆրանսիա անունը նույնիսկ գոյություն չուներ, Հայաստանը մեծ դեր է խաղացել պատմության մեջ. այն ժամանակներում, երբ ֆրանսերեն լեզուն դեռ չէր տարբերվում լատիներենից, գոյություն ուներ հայերեն կարևոր գրականություն...

Քաղաքակրթության որևէ լեզու, որ արդեն կազմավորվել է և ունի իր սեփական գրականությունն ու արտահայտման անհրաժեշտ բոլոր միջոցները, համառորեն հարատևում է նույնիսկ ամենադժվար պայմաններում։ Դրա պերճախոս մի օրինակն է հայերենը...

Աստվածաշնչի թարգմանիչը հունարեն բնագիրը փոխադրել է բառ առ բառ՝ առանց նշանակալիորեն փոխելու նախադասության կառուցվածքը, հետևողականորեն պահպանելով շարադասությունը։ Ուրեմն, իրավունք ունեինք ասելու, որ հայ թարգմանիչը լրիվ կերպով հետևել է հունարեն նմուշին։ Դրանով իսկ Հայաստանը ձեռք բերեց գրական ճկուն լեզու, որ վերարտադրում է հունարեն բառապաշարի բոլոր իմաստները։ Այսպիսով, կազմավորվել է գրական մի լեզու, որ ճոխ է և կարող է դրսևորել այն ամենը, ինչ հունարեն լեզուն կարող է արտահայտել։

Այդ լեզվի ճոխությունը և ճկունությունը զորավիգ են եղել հայ ազգի համար այդ թարգմանության օրից ի վեր։ Հայ ազգը հավատարիմ է մնացել դրան և իրեն պատիվ է համարում այն՝ դեռևս այսօր էլ տոնելով այդպիսի ստեղծագործության հիշատակը»։

Անտուան Մեյեն, ֆրանսիացի հայագետ, լեզվաբան

«Ամեն տեղ հայ կա, ովքեր իրենց մեջ ամուր պահելով քրիստոնեական կրոնի և ազգային ավանդությունների կապը, մանավանդ լեզվի խորհրդավոր ու հզոր հաղորդակցությունը,- մի հին ու ազնվական լեզու, զեղուն խորհուրդներով և սկզբունքներով,- ավանդում են հայ մանուկներին....»։

Գոդոն դե Վիարտ. Բելգիացի քաղաքական գործիչ

«Ցավում եմ, որ Հայկի ճկուն լեզուն չեմ կարող սովորել»։

Ջեյմս Բրայս. անգլիացի բաղաքական գործիչ, պատմաբան։

«Ինձ երախտապարտ պիտի թողնեք, պարոն, տեղեկացնելով այն տեսակետները, որ Ձեզ հասու են ազգերի ծագման մասին հայոց լեզվի խոր իմացության շնորհիվ»։

Գոթֆրիդ Լայբնից. գերմանացի փիլիսոփա, լեզվաբան։

«Հայերենը լեզուների անծանոթ գեղուհին է»։

Վալերի Բրյուսով, գրող, Ռուսաստան

«Անտեսելով Ասիայում տեղի ունեցող բոլոր հուզումները, որոնք 3000 տարուց ավել բուռն կերպով թափվել են Հայաստանի վրա՝ բոլոր հայերը մնացին հայ։ Նրանց բարձր լեզուն, պատկանելով գերազանց մտքի, տարբերվում է բոլոր արևելյան լեզուներից։ Մենք արդեն խոսել ենք հայերեն լեզվի առանձնահատուկ զորության մասին. հաճախ մի բառն իր մեջ պարունակում է մի ամբողջ նախադասության միտք»։

Սերգեյ Գլինկա, պատմաբան, Ռուսաստան

«Այս զարմանալի ազգի միայն լեզվական գանձերը կարող են բանալի դառնալ՝ բացելու մարդկության մշակույթի և քաղաքակրթական գաղտնիքները»։

«Հայոց լեզուն դարձել է անսպառ գանձարան և ստեղծագործական ոլորտի ջրհոր։ Այն անառարկելիորեն ունի չափազանց հարուստ բառապաշար և գաղափարներ արտահայտելու հնարավորություններ»։

«Հայոց լեզուն, իր մեջ պահելով նախնադարյան մարդկության լեզվի յուրահատկությունները, ապացուցում է մեզ, որ լեզուն ոչ միայն խոսքի արժեք է, այլ նաև գործի... չէ որ հայերեն «բան»- ը միայն խոսք չի նշանակում, այլ ինչպես հունարեն «լոգոսը», միաժամանակ նշանակում է գործ և առարկա»։

Նիկողայոս Մառ, ռուս հայագետ

«Հայոց լեզուն իսկապես հրաշալի է, խիտ, հագեցված, ֆիզիկապես շոշափելի»։

Յուրի Կարաբաչիևսկի, Ռուսաստան

«Այս լեզուն չափազանց հարուստ է բառերով և ձայնավորներով և զարմանալի ճկունությամբ ընդունակ է կազմել բազմազան դժվար բառերը և դարձվածքներ...

Բանասիրական տեսակետով էլ չպետք է վիճարկել հայերեն լեզվի կարևորությունը... Անկասկած, հայոց լեզուն կարող է բացատրել շատ բառերի ստուգաբանությունը, որոնց ծագումը դեռևս ուսումնասիրված չէ»։

Շոպեն, ռուս ճետազոտող

«Նույնիսկ ամենադաժան ժամանակների մեջ հայերը չեն հրաժարվել իրենց լեզվից, չեն կորցրել հայոց լեզուն»։

Կիմ Բակշի, ռուս գրող

«Ես մեծ հուզմունքով եմ գրիչ վերցնում ձեռքս այս մի քանի խոսքը գրելու համար։ Ինձ համար, իսկապես, ուրախալի է, որ իմ վեպը հնչելու է եղբայրակից հայերի սքանչելի և հնագույն լեզվով»։

Կոնստանտին Գամսախուրդիա, վրացի արձակագիր, ակադեմիկոս

Հայոց լեզվի մասին հայ հեղինակավոր անձանց խոսքը

«Հայոց քաղցր և ճոխ լեզու,
Ադամա լեզու ես հաստատ,
Մլի՛ր, ծաղկի՛ր, գցե արմատ»։

Ջիվանի

«Սուրբ է մեր աշխարհը,
Մեր հողի վրա Աստուած է քայլել,
...Մեր լեզուն ստեղծել և
Ինքն է նախ խոսել»։

Խորեն Արեպիսկոպոս, Նար-Պէյ.

«Մեր լեզուն արյունն է մեր,
Արյունից ավելի թանկ.
Մեր բուրմունքն ու գույնն է մեր,
Մեր լեզուն մենք ենք ու կանք...
Նա պիտի մեր առաջին
Եվ վերջին սերը լինի.
Ի՞նչ ունենք էլ աշխարհում,
Որ այսքան մերը լինի»։

Համո Սահյան

«... Բայց նա է հայ, ով հովազի
Արնախում երախում էլ
Իր մայրենի լեզվով խոսի՝
Իր մայրերի ծնած լեզվով,
Որ հայ գետը ծո՛վ ծնի, ծո՛վ։
Ժխորում էլ Բաբելոնի՝
Խոսի լեզվով իր մայրենի՝
Հայոց լեզվով, որ միշտ ջահել՝
Մեզ բյուր դարեր հայ է պահել»։

Հովհաննես Շիրազ

«Մեր լեզուն բարձր լեռներից և խորունկ ձորերից ծնված լեզու է՝ բարձունքների և խորություններ լեզու»։

Ավետիք Իսահակյան

«Գրաբարը... ոսկի է, դա լեզու չէ, այլ երկնային երաժշտություն է, շքեղություն, հարստություն, ուժ, ճկունություն։ Այդ բոլորը ես հիմա եմ սկսել զգալ։ Ես պատրաստ եմ ամեն բանի, միայն թե իրագործեմ իմ երազանքը։ Ուսումնասիրել կատարելապես, տիրապետել այդ արքայական լեզվին և միայն այն ժամանակ ես կհանգստանամ»։

Վահան Տեր-Յան

«Հայոց լեզուն. որքան ավելի եմ զբաղվում նրանով, ինձ թվում է ճոխություն, հրաշք և ոսկու հանք, որքան մշակում ես, այնքան զտվում է և շողշողում. որքա՜ն գույներ ունի և արտահայտչական հնարավորություններ»։

Նար-Դոս

«Այդ լեզուն «մայրենի» կոչելը մեծ պատիվ է։ Այդ լեզվով խոսելն ու մտածելը մեծ բախտ է։ Գալով անհիշելի ժամանակներից, անցնելով բազում դարերի միջով, շփվելով բազմաթիվ ազգերի լեզուներին՝ հայոց լեզուն մի յուրահատուկ հանրագիտարան է անհիշելի ժամանակների, բազում դարերի և բազմաթիվ այլ ազգերի։ Այսպես դատելով, մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև ամբողջ աշխարհին, նա միայն մեր սրբությունը չէ, այլև մասունքը հանուր մարդկության։ Այդ պատճառով էլ նա ուսումնասիրվում է ոչ միայն մեր պետական համալսարանում, այլև աշխարհի շատ համալսարաններում»։

Պարույր Սևակ

«Ո՞ր ազգն ունի այդ լեզուն, որ լեզվի մեջ կարող է միտքն այնքան ազատ շրջիլ, հոգին այնքան ազատ թռչիլ, որքան հայ լեզվի մեջ»։

Եղիա Տեմիրճիպաշյան

«Հայերենը 5 հազար տարեկան է, բայց հայերեն առանձին բառեր հանդիպում են ավելի հնագույն լեզվաշերտերի մեջ։ Եվ, այնուամենայնիվ, մեր հնաբուն լեզուն այսօր այնքան թարմ, հարուստ ու ճկուն է, որ նրանով կարելի է առանց մի մազի չափ պակասեցնելու արտահայտել ժամանակակից աշխարհի բոլոր գլխապտույտ վերելքները»։

Ժիրայր Տեռեյան, ֆրանսիացի հայագետ

«Իր պատմական ճանապարհին հայ ժողովուրդը շատ բան է կորցրել, շատ բան էլ պահպանել է։ Պահածների մեջ ամենաթանկարժեքը, անփոխարինելին ու անզուգականը մայրենի լեզուն է։ Հայերենն իր մեջ պահպանում է նաև մեր կորուստները (օրինակ՝ հայկական հազարավոր քաղցրանուն տեղանունները)։ Միաժամանակ հայերենն այսօր դասական մակարդակի հասած մեծազոր լեզու է»։

Ավետիս Սաճյան, ամերիկահայ հայագետ

«Քանի որ լեզուն առհասարակ ձայնական է (հնչյունային), ուրեմն՝ գեղեցիկ, ներդաշնակ, դյուրահունչ է այն լեզուն, ուր չկա բաղաձայնների (ինչպես նաև ձայնավորների) կուտակումներ, սովորական է բաղաձայն+ձայնավոր+բաղաձայն+ձայնավոր կաղապարը, ուր բաղաձայնները համեմատաբար մի քիչ շատ են, բայց այնպես են բաշխված, որ ստեղծում են ներդաշնակություն։ Հայերենն այդպիսի լեզու է, ուրեմն և գեղեցիկ է։

Լեզվի հարստության չափանիշը բառապաշարն է՝ բառերի քանակը, որով պայմանավորվում է այն, թե տվյալ լեզուն ինչքանով է ունակ ավելի շատ հասկացություններ արտահայտելու։ Այս իմաստով հայերենը հարուստ լեզուներից է։

Ինչքան կարճ են բառերն, այնքան համառոտ է լեզուն և կատարյալ, քանի որ նվազագույն էներգիա և ժամանակ ենք ծախսում ասելու նույն բանը, ինչ ավելի երկար բառերով։ Համառոտությամբ հայերենը միջին տեղ է գրավում լեզուների շարքում։

Կանոնավոր է այն լեզուն, որն ունի կանոնների միօրինակություն, բացառությունները համեմատաբար սակավ են։ Հայոց լեզուն ձգտում է մի ձևի, մի իմաստի։

Մաքուր է այն լեզուն, որի մեջ օտար բառերը, ոճերն ու ձևերը համեմատաբար քիչ են։ Հայերենն այդպիսի լեզուներից մեկն է, և մենք ամեն կերպ պետք է պահպանենք նրա մաքրությունը՝ լեզուն չխճողելով օտար ձայներով»։

Հրաչյա Աճառյան, լեզվաբան, պրոֆեսոր

«Հայոց լեզու, դու մեր անկողոպտելի գանձը եղար, մեր անընկճելի հայրենիքը։ Մեր ժողովուրդը կորցրեց գահ և թագ, զորք և իշխանություն, ավեր եղան և ավար մեր բերդերն ու քաղաքները, ավար եղան մեր ինչքն ու գույքը, բայց դու մնացիր միայն կանգուն, մնացիր հաղթական։ Ցնցոտի հագավ մեր ժողովուրդը, բայց դու ծիրանիով ծածկեցիր նրա հոգին, թշնամին ջախջախեց նրա սրունքը, դու թևեր տվիր նրան»։

Միխայել Նալբանդյան

«Ո՛վ մեր լեզու, հայելի մաքրության, գորովի և արիության, դու մեր հոգին ու մեր արյունն ես, դու մեր զրահն ու փառքն ես։ Դու տիեզերական ուժի ամե-

նաբարձր երևույթներից մեկն ես։ Որքան ժամանակ կյանքը երկրի վրա տևի, դու հաղթականորեն քո վեհանձն ու պայծառ ընթացքը պետք է շարունակես ժամանակի անծայրածիր դաշտերի միջով»։

Արշակ Չոպանյան

«Հայ ժողովրդի մշակութային ժառանգության գանձարանում ամենամեծ և թանկագին հրաշալիքը հայոց լեզուն է։ Նա մեզ այսօր ծառայում է նույն հաջողությամբ, ինչպես ծառայում էր երկու հազար տարի սրանից առաջ... Այսօր մենք համոզվում ենք, որ իր ներքին՝ խիստ տրամաբանական կառուցվածքի շնորհիվ նա կարող է գնահատվել որպես գիտական լեզու՝ հեշտությամբ և հակիրճ ձևով արտահայտելով ժամանակակից գիտության ամենաբարդ գաղափարները...

Ինձ հաջորդող սերունդներին, թռուներիս, ծոռներիս կտակում եմ տիրապետել հայոց լեզվին։ Ամեն մեկը պետք է իր պարտքը համարի ուսումնասիրել հայոց լեզուն, գրագետ լինի հայերենից... Գիտեք, որքան ապրում եմ, իմ կյանքի ամենամեծ երջանկությունը եղել է ու կմնա հայոց լեզվին տիրապետելը»։

Վիկտոր Համբարձումյան

Այս հիացական խոսքերն ամփոփենք հայերենը լավագույնս բնութագրող հայ բանաստեղծուհու պատգամով.

«-Լսի՛ր, որդիս, պատգամ որպես
Սիրող քո մոր խո՛սքը սրտանց,
Այսօրվանից հանձնում եմ քեզ
Հայոց լեզո՛ւն հազարագանձ։

Կտրել է նա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ Հայկյան նետի,

Ու Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հո՛ւյս, դարձել դրո՛շ,
Պահել երթը մեր անաղարտ...

Նրանո՛վ է մրմրնջացել
Հայ պանդուխտը վերքն իր սրտի,
Նրանո՛վ է որոտացել
Կռվի երգն իմ ժողովրդի,

Նրանո՛վ է մայրս ջահել
Ինձ օրորոց դրել մի օր,
Հիմա եկել, քե՛զ է հասել
Նրա կարկաչը դարավոր...

Բա՛ց շուրթերդ, խոսի՛ր, անգի՛ն,
Ժիր դայլայլի՛ր, ի՛մ սիրասուն,
Թող մանկանա՛ քո շուրթերին
Մեր ալեհե՛ր հայոց լեզուն...


Պահի՛ր նրան բարձր ու վճիտ՝
Արարատի սուրբ ձյունի պես,
Պահի՛ր նրան սրտիդ մոտիկ՝
Քո պապերի աճյունի պես։

Ու ոսոխի զարկիցը սև՝
Դու պաշտպանի՛ր կրծքով նրան,
Ինչպես մո՛րդ կպաշտպանես,
Թե սո՛ւր քաշեն մորդ վրա։

Ու տե՛ս, որդիս, ո՛ւր էլ լինես,
Այս լուսնի տակ ո՛ւր էլ գնաս,
Թե մո՛րդ անգամ մտքիցդ հանես,
Քո մայր լեզուն չմոռանա՛ս»։

Սիլվա Կապուտիկյան

Հայոց լեզվին վերաբերող գլուխն ավելի ավարտուն դարձնելու համար այժմ անդրադառնանք հայոց գրերին։



Հայոց գրերը

«Վիկտոր Լանգլուայի կարծիքով մինչ Մաշտոցյան Գրերը՝ հայերն ունեցել են Դանիելյան նշանագրեր, որոնք լրիվ չլինելու պատճառով դուրս են եկել գործածությունից: Երկրորդը Մաշտոցյան այբուբենն է՝ 36 տառերով, որն ըստ ավանդության՝ աստվածային շնորհ է տրված հայերին»[153]:

Քանի որ ի սկզբանե եղել է մի ընդհանուր լեզու, բնական է, որ պետք է լիներ նաև մի ընդհանուր գիր: Ինչպես համոզվեցինք, այդ լեզուն եղել է հայերենը: Եթե Հայոց լեզուն առաջին լեզուն է և աստվածատուր է, ուրեմն և հայոց գրերը երկնային ծագում ունեն:

Եվ եթե մինչ Ջրհեղեղը գոյություն է ունեցել գիր, ապա դա, վստահաբար, եղել է հենց այսօրվա՝ Մաշտոցյան հայոց այբուբենը, ինչը հազարամյակների ընթացքում կա՛մ կորել է, կա՛մ տուժել՝ պահպանվելով միայն մասամբ և դառնալով անօգտագործելի, մինչև որ կրկին երկնային հայտնությամբ իր կատարյալ ամբողջությամբ տրվել է սուրբ Մեսրոպ Մաշտոցին: Այս մասին է խոսում և այն, որ այդ այբուբենը բոլոր առումներով կատարելապես համապատասխանում է հայոց լեզվին: Եվ ուրեմն, հանգում ենք այն մտքին, որ այդ լեզուն և տառերը միմյանց համար են արարվել.

«Վերջին տարիների ուսումնասիրություններն ամենայն որոշակիությամբ ցույց տվեցին, որ Հին Հայաստանում իրոք գոյություն են ունեցել մինչմեսրոպյան գրեր, և օրեցօր ավելանում են հաստատող ծանրակշիռ ապացույցները»[154]:

Բնական է, որ Ջրհեղեղից հետո էլ այդ տառերը, մինչ լեզուների խառնակումը, պետք է, որ ընդհանուր գործածության մեջ լինեին, և միայն լեզուների խառնակումից հետո նորալեզու ազգերի մոտ այդ գրերը պետք է կորցնեին իրենց իմաստը և դուրս մղվեին գործածությունից:

Քանի որ միայն Արարատյան երկրում էր պահպանվել առաջին՝ ադամական լեզուն, բնականաբար, միայն այդ վայրում էլ պետք է պահպանված լիներ ադամական, հայերեն գրերը:

Դրանք Ջրհեղեղից հետո, հավանաբար, գործածության մեջ են եղել մոտ հազար տարի՝ մինչև հայերի՝ աստվածպաշտությունից հեռանալը և հեթանոսությանը հետևելը:

Իսկ արդեն մոտ 2000 տարի հետո այդ նույն տառերը նորից շնորհվել են հայ ազգին, երբ հայերը վերստին ազգովի դարձել են ճշմարիտ Աստծուն և հաստատվել իրենց հայրերի սուրբ հավատքի՝ միաստվածության դավանության մեջ՝ առաջնահերթ երկնառաք գրերով թարգմանելով Աստվածաշունչ մատյանը.

---

[153] Աելիտա Դոլուխանյան, Եվրոպացի հայագետները Մաշտոցի և Հայոց այբուբենի մասին, Ս. Էջմիածին 2005, էջ 25:

[154] Ս. Մ. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան 1986, էջ 69:

«Գիտե՞ք որևէ այլ ազգ, որի գրականությունը սկսվում է Աստվածաշնչով»,- ճարտասանական հարց է հնչեցնում մտավորականը[155]։

Հետաքրքիր է, որ օտար լեզվաբանների մոտ էլ կան ակնարկներ այս մասին.

«Հայերի մոտ գրերի առաջացմանը նախորդող վերբարբառային շրջանը հավանաբար շատ կարճ է տևել։ Մյուս հնդեվրոպական լեզուներում (օրինակ գերմանական, սլավոնական լեզուներ և այլն) վերբարբառային նորմը առաջացել է գրերից 1000 տարի առաջ։ Մինչդեռ հայերենում այդ խզումը գործնականորեն բացակայում է»[156]։

Գեորգի Կլիչկովի այս միտքը կարելի է այսպես հասկանալ. ի տարբերություն մյուս լեզուների՝ հայերենը և հայոց գրերը միաժամանակ են ի հայտ եկել, այսինքն՝ առաջին լեզուն արդեն իսկ ունեցել է իր այբուբենը։

Իսկ ի՞նչ են եղել այդ սկզբնական գրերը. մի՞թե լիովին անհետացել են։ Ըստ մասնագետների՝ այդ տառերը պահպանվել են, սակայն դարձել են անօգտագործելի, քանզի հնագույն այբուբենից մնացել էր տառերի միայն մի մասը։

*Երբ սբ. Մեսրոպը սկսեց հայոց տառերի ստեղծման մասին հոգալ, նա գիտեր, որ դրանք նախկինում եղել են. **«Եվ երանելի այր Մաշտոցն այս մասին երկար ժամանակ խորհում էր ու փղձկում իր ներսում. չէ՞ որ կային հայերեն լեզվի նշանագրեր, որոնցով հնարավոր էր սեփական ձայնով և ոչ թե մուրացածո լեզվով եկեղեցիներում շահել տղամարդկանց ու կանանց և առհասարակ ամբողջ բազմության սրտերը»[157]։***

Մեսրոպը տեղեկացավ, որ ասորի Դանիել քահանայի մոտ պահպանվել են հայոց գրերի մնացորդները, և առաջնահերթ ջանաց նախ գտնել դրանք...

Սակայն նախնական այբուբենի մնացորդներով հնարավոր չէր մտքեր արտահայտել. այդ նշանագրերն ուղղակի դարեր շարունակ պահպանվել էին՝ որպես սրբասուն մասունքներ. կարելի էր իրար հարմարեցնելով՝ դրանցով որոշ բառեր գրառել, բայց ոչ՝ ամբողջական մտքեր։ Օրինակ՝ Կիլիկիայի թագավորության շրջանում գտնվել է հեթանոսական շրջանի դրամ, որի վրա այդ տառերով գրված է եղել մի քանի անուն.

«Եվ որ մեր նախնիներն ունեցել են հայերեն գրեր, հաստատվեց Լևոն արքայի ժամանակներում, որովհետև Կիլիկիայում գտնվեց դրամ, որի վրա դրոշմված են հայկազյան կռապաշտ թագավորների անունները հայերեն գրերով»[158]։

Հայոց գրերին առնչվող իրադարձությունների և իրենց սուրբ ուսուցչի գործի մասին V դարում վկայել են վարդապետներ Կորյունը, Ղազար Փարպեցին, Մովսես Խորենացին, VII դարում՝ Անանիա Շիրակացին, XIII դարում՝ Վարդան Արևելցին, հետագա դարերում Գրիգոր Տաթևացին և այլք։

---

155 A. A. Bedikian, The goldenage the fifth centry. NewYork, 1963, p. 13 – 21.

156 Георгии Клычков (Москва) «Происхождение и образование армянского народа, модель глоттогенеза армян», Вестник общественных наук 8 (452), Август (На материале данных диахронической фонологии индоевропейского консонантизма), Ереван, 1980 г., ст. 99.

157 Ղ. Փարպեցի, Պատմութիւն Հայոց , Երեւան-1982թ., էջ 30-31:

158 Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան 2001, էջ 86:

Հեթանոսության և ավելի վաղ շրջանի հայոց այբուբենի մասին մնացել են նաև այլազգի ուսումնասիրողների տեղեկություններ: Ֆրանսիացի հայագետ Ֆ. Ֆեյդին նշում է, որ Հիպոլիտոս Բոստրացուն (Ք. հ. 234 թ.) վերաբերող աշխատություններից մեկում գրված է, որ այդ ժամանակաշրջանում գրեր ունեցող երկրների թվում եղել է նաև Հայաստանը[159]:

Մինչմաշտոցյան այբուբենի մասին տեղեկություն է պահպանվել նաև հույն պատմագիր Փիլոստրատոսի մոտ.

«Նախաքրիստոնեական Հայաստանում եղած սեփական գրի և դպրության մասին են վկայում նաև օտար հեղինակները: II – III դարերի հույն պատմագիր Փիլոստրատոսը «Ապոլոն Տիանացու վարքը» երկում հաղորդում է հետևյալ տեղեկությունը. «Պատմում են նաև, որ մի անգամ Պամփյուլիայում բռնվել է մի հովազ, որի ոսկյա մանյակի վրա հայերեն տառերով գրված էր հետևյալը. «Արշակ թագավոր՝ Նյուսիա աստծուն», այսինքն՝ Նյուսիա աստծուն նվեր՝ Արշակ թագավորից...

Խոսքն այստեղ 34-35 թվականներին թագավորած հայոց թագավոր Արշակ Ա-ի մասին է»[160]:

Հարևան օտարալեզու ազգերի հետ շփման նպատակով հայերը այբուբենի հետ միասին օգտագործել են նաև նրանց համար հասկանալի գրային համակարգեր՝ գաղափարագրեր (հիերոգլիֆներ), գծային գրեր, սեպագրեր և այլն: Հավանաբար, այդ է պատճառը, որ հնում հայոց այբուբենի մասին քիչ նյութեր են հանդիպում: Մենք այժմ այբուբենի վերաբերյալ ունենք հիմնականում միայն պատմական տեղեկություններ, փաստացի որևէ շարադրանք դեռ չենք գտել՝ բացառությամբ ժայռապատկերներում հանդիպող առանձին տառերի նմանությամբ նշաններից, և հատկապես Մեծամորի հնավայրում հայտնաբերված Մաշտոցի գրերի նման յոթը տառերից, ինչն արձանագրվել է մոտ 6000 տարի առաջ:

Եվ մի շատ հետաքրքիր տեղեկություն էլ վերջերս տպագրվեց «Հայացք» շաբաթաթերթում, ուր Կոմիտաս վարդապետ Հովնանյանը, պարզաբանումներ տալով Բոլիվիայում գտնված 5500-ամյա վաղեմության մի անոթի մասին, նշում է, որ դրա վրա կա հայոց այբուբենի մի քանի տառ.

«Ուշագրավ էր Բոլիվիայի Պոկոթիա շրջանում գտնված և Բոլիվիայի պետական թանգարանում պահվող մի անոթ, որը, չգիտես ինչու, ներկայացվում էր այսպես. «...հնարավոր է, որ Շումերա-աքադական է»: Անոթի ներսը, որ կարծես կավե գոգավորություն լինի, պատված է սեպագիր արձանագրություններով: Սակայն երբ անոթի հետնամասն էր ցուցադրվում, այնտեղ, ի զարմանս ինձ, շատ պարզ ու հստակ երևացին մի շարք հայերեն տառեր՝ է, հ, ջ, ջ, ղ, դ, յ, ո, ռ, ց, և մի քանի խաչ: Բառեր և բառակապակցություններ չկան, բայց առկա են հայոց գրերը:

Երբ հետագայում սկսեցի մանրամասնորեն հետաքրքրվել այդ գտածոյով, կարդացի մի տեղեկատվություն, որ այն Ք. ա. 3500 տարվա պատմություն ունի:

---

[159] F. Fedit, Considerationssur I' alphabetdesanti Mesrop, p. 13.

[160] Արտակ Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան – 2003, էջ 217-218:

Ինձ ապշեցրեց հայոց տառերի առկայությունը Բոլիվիայում գտնված այդ անոթի վրա, որն իսկապես սենսացիոն իրողություն է»[161]*:*

Եթե հեռավոր Բոլիվիայում գտնված անոթը գիտնականները համարում են «շումերաաքքադական» մշակույթի մասնիկ, ուրեմն, այն կարող է և միջագետքյան այդ ժողովուրդներին ժամանակակից և հայկական մշակույթի նմուշ լինել:



Սակայն քանի որ նախնական այբուբենը հիմնականում Հայաստանի տարածքում է գործածվել, ուրեմն, այն հնարավոր է հայտնաբերել հենց հայոց լեռնաշխարհի տարածքում: Յավոք, ինչպես նշել ենք, հին աշխարհի այլ երկրների համեմատությամբ՝ Հայկական լեռնաշխարհում շատ քիչ պեղումներ են իրականացվել: Այդ տարածքների մեծ մասը գտնվում է այլ պետությունների՝ հիմնականում Թուրքիայի տիրապետության ներքո, և թուրքական իշխանությունները խոչընդոտում են օտարերկրյա գիտնականների գործունեությունն Արևմտյան Հայաստանում, իսկ իրենց պեղումների շնորհիվ գտնված նմուշները, որոնք ապացուցում են այդ տարածքի հայկականությունը, կա՛մ ոչնչացնում են, կա՛մ ներկայացնում որպես այլ քաղաքակրթության մշակույթ:

Հավանական է, որ հետազոտությունների արդյունքում ի հայտ կգան հայկական գրերով շատ ավելի հստակ արձանագրություններ, քանզի Հայաստանի հնագիտական հուշարձաններն այնքան շատ են, որ ըստ հնագետների՝ դրանք հետազոտելու համար հարկավոր է աշխատել 150 տարի՝ առանց հանգստյան օրերի:

Հայաստանում երբ մոռացության մատնվեցին առաջին տառերը, մյուս գրային համակարգերը դարձան հիմնական գործածվող գրերը:

Որ հայոց այբուբենը իսկապես գործել է Ադամի ժամանակներից և մոռացվել այլ գրական համակարգերի պատճառով, այդ մասին հաստատում կա նաև մեծ ճանաչում ունեցող ամերիկացի լեզվաբան Մաքսիմիլլիան դե Լաֆաետտի աշխատությունում.

«Էպիստեմիոլոգիապես (գիտելքների տեսություն) և պատմականորեն հին հայկական Մեսրոպյան ձեռագրերը կոչվում են Երկաթագիր, որը նշանակում է երկաթե դարի ձեռագիր՝ պատմական մի դարաշրջան, որը շատ լավ փաստագրված է Հայաստանի պատմության մեջ և սկսել է մոտավորապես Ք.ա. 5000-7000 թթ...

Ուրարտացիները սկսեցին պաշտոնապես ընդունել միջագետքյան սեպագրերը ինչը վաղ հայկական այբուբենի ամբողջական անկման առիթ դարձավ»[162]*:*

---

[161] «Հայացք» շաբաթաթերթ 10 (318), 12 ապրիլի 2013 թ., Երևան, էջ 3:

[162] Maximillien de Lafayette, "Civilization and Arts of Armenia from Pre-History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities" Volume 1, USA San Bernardino, CA 25 May 2015 p. 35-36.

Սակայն այդ գրային համակարգերը չէին կարող կատարելապես արտահայտել հայոց լեզվի հնարավորությունները, ինչի հետևանքով էլ ներկայումս որոշ հետազոտողներ թերի են թարգմանում ուրարտական և այլ սեպագրերի շարադրանքը։

Հետագայում, երբ շատ այլ ազգեր սկսեցին գրեր օգտագործել, հայերը մինչ հայոց տառերի հայտնությունը՝ հիմնականում օգտվում էին արամեական, հունական, ասորական և պարսկական գրերից։

Կարող ենք կռահել, որ Հայոց լեռնաշխարհում գրային համակարգն սկսվել է ներկայիս հայոց այբուբենով, ապա փոխարինվել այլ գրային համակարգերով, և նորից այդ սկզբնական գրերը գործածության մեջ են մտել արդեն Ք. հ. V դարում։ Իսկ թե այդ նույն՝ հին ու նոր այբուբենների միջանկյալ շրջանում ինչպիսի՞ գրային համակարգեր են գործածվել Հայաստանում, այդ մասին գրվել են ոչ սակավ գիտական աշխատություններ։

Նյութը չծանրաբեռնելու նպատակով ներկայացնում ենք այդ աշխատությունների ընդամենը մեկի ամփոփումը.

«...նախամաշտոցյան Հայաստանում կիրառվել է տասներկու գրային համակարգ, կանգնեցվել են բազմահազար արձանագրություններ մայրենի և օտար լեզուներով։ Դա ավելի քան խոսուն վկայություն է մեր նախնիների՝ գրի ու գրականության նկատմամբ տածած հարգանքի և սիրո»[163]։

Հայոց այբուբենի՝ երկնային ծագման արտահայտություն է ոչ միայն կատարյալ գրային համակարգի առկայությունը, այլև բազմաթիվ այլ խորհրդավոր բաներ.

«Դեռ տարիներ առաջ ինձ հետաքրքրել է, թե հնարավո՞ր է, որ հայոց գրերը, հնչյունային համակարգեր լինելուց առաջ, գաղտնագրեր են։ Ժամանակին Նիկողայոս Մառը, անդրադառնալով հայոց գրերին, գրել է՝ շատ հավանական է, որ դրանք գաղտնագրեր են եղել։ Հայկական գրերի մեջ ինչ-որ գաղտնիք կա, որը մեզ համար տակավին ծածկված է քողով, անհասանելի է»[164]։

*Այդ անհասանելի գաղտնիքներից ամենախորհրդավորն այն է, որի մասին Անանիա Շիրակացին իր «Վասն որպիսութեան կենաց իւրոց» աշխատության մեջ մասնավորապես ասում է. **«Ծածկված գանձ և թաքցրած ակնեղեն կա Հայոց երկրում՝ Թորգոմի տանը, քանզի բոլոր իմաստությունների մայրն է. սա նաև բոլոր արվեստների թվագրման աղբյուր է՝ բոլոր բաժանումներով հանդերձ, որը տեսան հույն իմաստունները մեր նահանգներում և զարմացան... Եվ եթե մեկն իմանա սա, նա կիմանա, թե ինչ իմաստներ են սրանում ծածկված, և եթե չմտնի սրա մեջ, չի կարող իմանալ գրի (մեր այբուբենի) մեջ բովանդակվածը, թե ինչ է տեղեկացնում, քանզի ամեն մի տառ ԺԲՌ (12000) բան է պատմում...»[165]։***

Այս այբուբենի առանձնահատկությունները շատերին են հետաքրքրել, և

---

[163] Արտակ Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան – 2003, էջ 227, 231։

[164] Կոմիտաս վարդապետ Հովնանյան, տե՛ս «Հայացք» շաբաթաթերթ 10 (318), 12 ապրիլի 2013 թ. համարում, Երևան, էջ 3։

[165] Մատենադարան, ձեռագիր N 6968, թիվ 68 ա և N 8098, թիվ 1բ։

տարբեր մասնագիտությունների տեր անձինք աշխատել են նրա խորհրդավորության գաղտնիքները բացահայտել: Այդ հետազոտողների թվին է պատկանում նաև գեոֆիզիկոս Արծվի Ալեքսանյանը, ով մոտ 40 տարի ուսումնասիրելով այս հրաշք այբուբենը՝ եկել է հետևյալ եզրահանգումների.

«Տրամաբանական վերլուծության ենթարկելով մյուս լեզուների այբուբենները, պատրաստ եմ ցանկացած ընդդիմախոսի՝ քար ծակող փաստարկներով ապացուցել, որ բոլոր այբուբենները ծնվել են հայոց այբուբենից...

Ոչ մի այբուբեն չունի մեր այբուբենի մեջ եղած օրինաչափությունների անգամ մեկ տոկոսը, այսինքն՝ նրանք, ի տարբերություն մեր այբուբենի, մաթեմատիկական համակարգ, մաթեմատիկական ալգորիթմ չեն: Մեր այբուբենը, ի տարբերություն մյուս լեզուների, կատարյալ համակարգ է: Մեր այբուբենը համամարդկային գանձ է, և ես հիանում եմ դրանով: Հայոց այբուբենում մենք կարող ենք գտնել արդի շատ կարևոր և կիրառական ինֆորմացիաներ: Օրինակ՝ այբուբենի ալգորիթմով կարելի է ստեղծել ավելի հզոր համակարգիչներ, քան ներկայիս համակարգիչներն են:

Մեր այբուբենը ոչ միայն մեր ազգի, այլև համամարդկային և համաշխարհային գանձ է»:

Մենք արդեն տեսանք, որ հայերենը մայր լեզու է՝ մնացած բոլոր լեզուների համար, իսկ այս հոդվածի հեղինակն էլ համոզված է, որ իր հերթին մեր այբուբենն էլ մայր է՝ մնացած բոլոր այբուբենների համար:

Եվ պատահական չէ վերոհիշյալ այս արտահայտությունը.

«Մեր այբուբենը ոչ միայն մեր ազգի, այլև համամարդկային և համաշխարհային գանձ է», *ինչը համապատասխան է Պարույր Սևակի խոսքին՝ ասված արդեն լեզվի կապակցությամբ.* ***«Մեր լեզուն միայն մեզ չի պատկանում, այլև՝ ամբողջ աշխարհին, նա միայն մեր սրբությունը չէ, այլև՝ մասունքը հանուր մարդկության»:***

Այսպիսով, մեր հրաշալի՝ երկնաստեղծ լեզուն ունի իրեն համապատասխան հրաշալի երկնառաք այբուբեն:

Ինչպես ասվեց հավանաբար հայոց այբուբենը անհետացավ երբ թողնելով Նոյի և Հայկի հավատը հայ ազգը ընկավ կռապաշտության մեջ, իսկ քրիստոնեության ժամանակ դարձի գալով այդ նույն սուրբ հավատին, մեզ նորից շնորհվեց այդ զարմանալի գրերը. ինչի մասին ասում է նաև ֆրանսիացի լեզվաբան Անտուան Մեյեն.


«Հայերենը գրի առնված չի եղել այնքան ժամանակ, որքան քրիստոնյա եկեղեցին իր քարոզչության համար կարիք չի ունեցել Սուրբ Գրքի և ծիսական գրքերի թարգմանության»[166]:

Հայոց այբուբենի երկնային ծագման մասին խոսում են նրա բազում խորհրդավոր առանձնաշնորհները, այն ակրոհնչական եղանակով կազմված կապակցված խոսք է՝ Աստծուն ուղղված աղոթք, և սա էլ անշուշտ շնորհ է, որ չունի աշխարհի և ոչ մի այբուբեն: Այն սկսվում, է Ա-Արարիչով և վերջանում Ք-Քրիստոսով, իսկ յոթերորդ տառը՝ է-ն, խորհրդանշում է «Էություն» բառը:

---

[166] http://www.qahana.am/am/interviews/dialogue/0/798932810

Այս այբուբենը կարծես հայոց պատմության ամբողջականությունն է խորհրդանշում, քանզի Արարիչը մարդկության սկիզբը դրեց Հայաստանում՝ Դրախտում և վերջը՝ այսինքն Քրիստոսի երկրորդ գալուստը նույնպես պիտի լինի Հայաստանով։



Այբուբենը բաժանվում է 4 հավասար ուղղահայաց սյունակների, ինչը խորհրդանշում է 4 Ավետարանները։ Ամեն մի սյունակում կա 9 տառ, ինչն էլ խորհրդանշում է 9 երանելիները։ Մաշտոցյան այբուբենը օժտված է թվային արժեքներով, և ամեն մի տառ ունի իր յուրահատուկ անվանումը։ Ուղղահայաց և զուգահեռ սյունակներում թվային արժեքների խորհրդավոր համաչափություն էլ իր հերթին զարմանք է առաջացնում։

Ինչպես հայոց լեզվի, այնպես նաև հայոց այբուբենի առանձնահատկությունները գնահատող անձանց կողմից ասվել են բազմաթիվ հիացական խոսքեր.

«Մաշտոցի հրաշալի այբուբենի կատարելությունը աշխարհի մեծագույն լեզվաբանների զարմանքն է առաջացրել»։

(Էդմոնդ Շոունց. Հունգարիա)

«Հայոց այբուբենը գլուխգործոց է»։

(Անտուան Մեյե. Ֆրանսիա)

«Մեսրոպ Մաշտոցի այբուբենը իր ժամանակի ամենակատարյալ հնչունաբանված գիրն է»։

(Զեստմիր Լոուկոտկա. Չեխիա)

«Դա հզոր այբուբեն է՝ հնչյունի և տառագրության համապատասխանության տեսակետից։ Այստեղ ամեն ինչ ամբողջական և ավարտուն է...

Հայոց գրերը կատարելություն են։ Այդ գրի մեջ ազգի հոգին է, պատմությունը, ամրությունն ու հոգին։ Այսպիսի այբուբենը չէր կարող գիտնական-լեզվաբանների կոլեկտիվ աշխատանքի արդյունք լինել»։

(Անդրեյ Բիտով. Ռուսաստան)

«Միայն հայերին շնորհվեց աստվածապարգև գիրը Մեսրոպի՝ մեր երկրորդ Մովսեսի ձեռքով»։

(Ղազար Ա Ջահկեցի, XVIII դ.)

«Կորյունը Մաշտոցյան այբուբենը կոչում է «աքանչելի»։ Հայոց այբուբենը իրոք աքանչելի եղավ. այն ավելի հարմար է բոլոր այբուբեններից և, ինչպես իրավացիորեն նշում են մասնագետները, այն ներկայացնում է գրի զարգացման ամենաբարձր աստիճանը»։

(Լևոն Խաչիկյան. ակադեմիկոս)

«Հին աշխարհում գոյություն ունեցող և Մեսրոպին ծանոթ ոչ մի ժողովրդի

այբուբենը և այդ բոլոր ժողովրդների այբուբենները միասին վերցրած չունեն հայերենի հնչյունային համակարգն արտահայտող առնվազն 10 -12 տառ»:

(Գուրգեն Սևակ հայագետ, լեզվաբան)

Հայոց այբուբենի մասին ավելի մանրամասնորեն կխոսվի սույն աշխատության III *հատորում՝ արդեն Ք. հ.* IV *դարին վերաբերող գրքում:*

Ամփոփում

«Քամին սարով կգնա,
Հավքը կերգի պարտեզում.
Հայից բնավ չի խլվի
Աստվածային իր լեզուն»[167]:

Ահա և ավարտին հասավ այս հատորի չորրորդ գիրքը ևս:

Ի՞նչ եզրակացություններ արեցինք. նախ այն, որ հայերը Հայաստանի տարածքում բնիկներ են և այլ ազգերի խառնակման արդյունքում չեն առաջացել: Նաև այն, որ հայերենը ոչ մի լեզվաընտանիքի անդամ չէ՝ ո՛չ հնդեվրոպականի, ո՛չ սեմականի, ո՛չ էլ որևէ այլ լեզվի. բոլոր լեզվախմբերն առաջացել են հայերենից: Նաև՝ Հայկական լեռնաշխարհը ոչ միայն հնդեվրոպական, այլև բոլոր լեզուների նախահայրենիքն է, ինչպես նաև կրկնակի հայրենիք՝ մարդկության և կենդանական աշխարհի համար:

Եվ վերջապես, հայոց այբուբենն էլ, հայոց լեզվի նման, ունի երկնային ծագում և գոյություն է ունեցել ի սկզբանե:

Եզրափակելով չորրորդ գիրքը՝ կարող ենք ասել, որ ինչպես Դրախտը և Նոյան տապանը գտնվել են Հայաստանում, այնպես էլ այստեղ պահպանվել է այն լեզուն՝ հայերենը, որով մինչ Ջրհեղեղը խոսում էին Ադամն ու Եվան Դրախտում, իսկ հետջրհեղեղյան շրջանում, լեզուների խառնակումից հետո, միայն Արարատյան երկրում.

«Պարզ է և բնական այն, որ մարդիկ ի սկզբանե մի գավառում, մի հայրենիքում են ապրել, և խոսել են միևնույն լեզվով, և հարկ չկա ապացուցել, որ մարդկության նախնական այդ եդեմական հայրենիքը Հայաստանն էր: Սուրբ Գրքի անժխտելի վկայության հետ հնախոսներն էլ համաձայնում են Հայաստանի հին ավանդությանը՝ թե Նոյան տապանը Մասիսի վրա է իջել, Նոյի իջևանը Նախիջևանն ու Նոյի այգին՝ Ակոռին է եղել: Ահա այս վայրում միաբարբառ մարդկության գերդաստանը բնակություն հաստատեց, աճեց և խոսեց միաբան»[168]:

Այս հատորի հաջորդ՝ 5-րդ գրքում կներկայացվի այն մշակույթը՝ քաղաքակրթությունը, որը Հայկ Նահապետի տիրապետության ժամանակ ձևավորվել և մեծ զարգացում է ապրել Հայաստանում, ինչը համապատասխանում է քուռարաքսյան մշակույթի տեղանքին և ժամանակաշրջանին:

---

[167] Մորիս Փոցխիշվիլի (Վրաստան), տե՛ս Արարատն է տաճարների տաճարը, կազմեց՝ Հրաչյա Խաչատրյան, Երևան, 2003, էջ 43:

[168] Գարեգին Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978, էջ 324:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աելիտա Դոլուխանյան, Եվրոպացի հայագետները Մաշտոցի և Հայոց այբուբենի մասին, Ս. Էջմիածին, 2005:
2. Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002:
3. Անտուան Մեյեն, Հայաստանի, հայերի և հայերենի մասին, Երևան, 2006:
4. Աստուածաշունչ, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 1999:
5. Արմեն Այվազյան, Մայրենի լեզուն և ազգայնականության սկզբնավորումը, Երևան, 2001:
6. Գ. Բ. Ջահուկյան, Ջրույցներ հայոց լեզվի մասին, Երևան, 1992:
7. Գաբրիէլեան Հ. Կ., Հայերի բնօրրանը՝ Հայաստան լեռնաշխարհ, Հանդէս ամսօրեա, 1998:
8. Գարեգին Սրվանձտյանց. Երկեր, Հատոր 1, Երևան, 1978:
9. Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993:
10. Եղիշէ, Մեկնութիւն Արարածոց, Մատենագիրք հայոց, հ. Ա:
11. Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014:
12. Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիւանի արխիւ, թղթապանակ 1, № 70:
13. Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի Ասորւոյ պատրիարքի, յԵրուսաղէմ, 1871:
14. Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, դ 5:
15. Նար-Պէյ, Խորէն Արքեպիսկ. Գալֆայեան, Ստվերք հայկական, տպ. Գալաֆյան Կոստանդնուպոլիս, տպ. Գավա ֆեան, 1874:
16. Խրիմյան Հայրիկ, Երկեր, Երևան, 1992:
17. Կոմիտաս վարդապետ Հովնանյան, «Հայացք» շաբաթաթերթ 10 (318), 12 ապրիլ 2013 թ., Երևան:
18. Հ. Պօղոս վարդ. Յովնանեանց, Մարդկային Լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման և ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը, Վիէննա, 1857:
19. Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971:
20. Հայնրիխ Հյուբշման, Հայագիտական ուսումնասիրություններ, Երևան, 2004:
21. Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:
22. Ղեւոնդ Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, հ. Ա, Ս. Ղազար Վենետիկոյ, 1920:
23. Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, Վենետիկ, 1835:
24. Մատենադարան, ձեռագիր N 6968, թիվ 68 ա և N 8098, թիվ 1բ:
25. Մերի Սարգսյան, Հայոց լեզվի հետքը Լատինական Ամերիկայում, Երևան, 2004:

26. Միքոս Ալեքսանդրոպուլոս, Հայեր, Երևան, 1984:
27. Միքայել Չամչեան, Հայոց Պատմություն, հ. Ա, Երևան, 1985:
28. Մորիս Փոցխիշվիլի (Վրաստան), Արարատն է տաճարների տաճարը, Երևան, 2003, էջ 43:
29. Նոր բառգիրք հայկազեան լեզուի, երկասիրութիւններից վարդապետաց յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սուրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ. Ա, Վենետիկ, 1836:
30. Շրումպֆ Գուստավ Ադոլֆ, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յարեւմուտս (ԺԴ-ԺԹ դար), Վենետիկ, 1895:
31. Պողոս Պատրիարք Ադրիանուպոլեսցի, Խրատի թանգարան, Ս. Էջմիածին 2002:
32. Ռ. Իշխանյան, Հայ ժողովրդի ծագման ու հնագույն պատմության հարցեր, Երևան, 1988:
33. Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան 1967, էջ 255, 257:
34. Ս. Այվազյան, Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից, Երևան, 1986:
35. Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896:
36. Վարդան Աստվածատրյան, Նախաժողովրդի բարբառների մասին, «Շողակն» երկշաբաթաթերթ, 2006, սեպտեմբեր Բ, թիվ 17(156), Երևան:
37. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001:
38. Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագոնց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819:
39. Ղ. Փարպեցի,Պատմութիւն Հայոց , Երեւան-1982:
40. Толковая Библия, Изданіе преемниковъ, А. П. Лопухина, 1, Петербургъ, 1904-1907.
41. А. Х. Дани и Ж. П. Моэна, История человечества, Москва. Изд. МАГИСТР-ПРЕСС, Том II, 2003.
42. Библейская Энциклопедия, Архимандрит Никифор, Москва, 1891.
43. Виктор Абаза, История Армении, С. Петербургъ, 1888.
44. Генри Г. Геллей, Библейский Справочник Геллея, Канада, 1989.
45. Георгии Клычков (Москва) «Происхождение и образование армянского народа, модель глоттогенеза армян», Вестник общественных наук 8 (452) Август, Ереван 1980.
46. Д. Л. Мордовцева, На Араратъ, С.-Петербургъ, 1883.
47. Девид Лэнг, Армяне народ-созидатель, Москва, 2004.
48. Дегтерева Т. А. Пути развития современной лингвистики, Москва, 1962.
49. Десницкая А. В. Вопросы родства индоевропейских языков, Москва, Л., 1955. - С. 239.

50. Дэвид Рол-известный британский писатель и археолог, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005.
51. Доктор Эрик Нюстрем, Библейский словарь, 1989.
52. Ефремь Сиринь, Творения, Том 6, Москва, 1995.
53. Зинуров Рафаиль Наримановичъ (Уфаеци), Армения-путь тысячелетий, том I, Москва 2010.
54. М. Аховъ, Очерки изъ истории Армянскаго государства, С. Петербургъ, 1897.
55. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов. Индоевропейцы, Наука и человечество, международный ежегодник, Москва, 1989.
56. Нелли Саакян, Армяне, Ереван, 1977.
57. Нерсес Мкртчян, Семитские языки и Армянский, Ереван, 2005.
58. Николай Марр, Армянская культура, Ереван, 1990.
59. Олег Широков, «Место армянского языка среди индоевропейских и проблема армянской прародины», Вестник общественных наук 5 (449) Май, (Москва), Ереван 1980 г.
60. Э. А. Макаев Указ соч., стр. 456, УЧИТЕ АРМЯНСКИЙ! Ареальная характеристика армянского языка, Ереван, 1967, стр. 46-47.
61. Святитель Филарет (Дроздов, 1783-1867), Толкование на книгу Бытия, Москва, 2004.
62. Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832.
63. Филипп Марсден, Перекресток: Путешествие среди Армян, ст. 109 http://fictionbook.ru/author/marsden_filip/perekrestok_puteshestvie_sredi_armyan/am… 12/14/2005.
64. Шопен, Исторический памятникъ, С. – Петербургъ, 1852.
65. Эдуардас Межелайтис, Армянский феномен, Советакан грох, Ереван, 1982.
66. A. A. Bedikian, The golden age the fifth centry, New York, 1963.
67. L. L. Cavalli-Sforza, «Cenes peoples and Languigis», 2000.
68. F. Fedit, Considerations sur I’ alphabet desanti Mesrop, p. 13.
69. Robert Ellis, “The Armenian Origin of the Etruscans”, ib., 1861. http://www.hayagitaran.info/2014/11/etruskneri-haykakan-tcagumeh-the-armenian-origin-of-the-etruscans-mas-2/
70. Maximillien de Lafayette, “Civilization and Arts of Armenia from Pre-History to the Present Day: Its Culture, Society, Stars, Artists and Celebrities” Volume 1.

ԳԻՐՔ V

Երկիր, որի մշակույթը եղավ հին աշխարհի զարգացման մատակարարը

Քուռարաքսյան քաղաքակրթություն

«Արարատի շուրջբոլորը առաջացել է երկրի ամենահին պետություններից մեկը՝ Հայկական թագավորությունը՝ Բաբելոնի և Ասորեստանի ժամանակակիցը, շատ դարեր հայտնի՝ Մովսեսից և Հնգամատյանից առաջ։ Հայերը հիրավի, երկրի հնագույն զավակներն են։ Նրանց մասին ասում են Աստվածաշունչը և ասորական սեպագրերը»[1]։

Հայկ նահապետի և հայ ժողովրդի առանցքային հաղթանակից մեծ կորուստներ կրած Բաբելոնը և նրան հարող ժողովուրդները գլխիկոր մնացին և երկար ժամանակ չէին հանդգնում նոր ասպատակություն ձեռնարկել։ Իսկ Հայոց աշխարհի համբավն ու հեղինակությունը գնալով մեծանում էր, և բոլորը Հայաստանի կողմն էին նայում ահով ու երկյուղածությամբ։ Պատճառը ոչ միայն աշխարհակալ Բելի և նրան հպատակ ծովածավալ զորքի դեմ տարած խոշոր հաղթանակն էր, այլև այն մեծ օրհնությունը, որ Տիրոջ կողմից վայելում էր մարդկության և կենդանական աշխարհի բնօրրան Հայոց երկիրը՝ իր սրբություններով՝ Հայաստանի դրոշ Արարատ լեռով և նրա գագաթին փառահեղորեն հաստատված, մարդկության սերմնամբար Նոյան տապանով։

«Համաշխարհային Ջրհեղեղի պատճառով մարդկային ցեղի բնաջնջումից հետո ևս Նոյի և իր որդիների բնակության վայր հանդիսացավ Հայաստանը, ըստ այդմ էլ երկրի վրա մարդկության երկրորդ բնօրրանը դարձավ Հայաստան աշխարհը»[2]։

Թեև այս բաժնում առանձնապես ընդգրկված են հնագիտական հիմնավորումները, սակայն Հայոց պատմության վավերականությունը հաստատված է նաև կրոնական, պատմական և այլ աղբյուրների տվյալներով։ Ըստ դրանց՝ Հայոց լեռնաշխարհը Ջրհեղեղից հետո երկար ժամանակ մնացել է որպես աշխարհում միակ բնակելի տարածքը.

«Հայաստանն ամենահնագույն ժամանակներից սկսած՝ բնակեցված է ե-

---

[1] Евгенний Марков. Русская Армения. Вестник Европы. Книга V, Том III. Санктпетербург 1901. ст. 490.

[2] Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատոր Ա, Վենետիկ1835 էջ 271:

ղել։ Որոշ հնագետներ՝ Գ. Կոնտենոն, Ժ. դը Մորգանը, ընդունում են նույնիսկ, որ Հայկական լեռնաշխարհը մարդաբնակ է եղել դեռ այն ժամանակ, երբ Միջագետքի դաշտավայրը ծովի հատակ էր, չկար Շումեր երկիրը, իսկ Տիգրիս և Եփրատ գետերը թափվում էին Պարսից ծոցը՝ Մոսուլի ուղղությամբ» [3]:

Չնայած Հայկական լեռնաշխարհի՝ մարդկության նախահայրենիք լինելուն՝ այնուամենայնիվ, միայն հայերն են մշտապես բնակվել և բնակվում այստեղ։ Եվ երբ որևէ հայ այս տարածքում հետադարձ հայացք է ձգում իր նախնիների կողմը, տեսնում է, որ այդ հետագիծը գնում հասնում է մինչև Նոյ և Ադամ. քանզի նրանք էլ մինչ ի մահ բնակվել են Հայոց հողում.

«Երրորդ հազարամյակի սկզբին, այն ժամանակ երբ առանձին ցեղերը՝ հնդեվրոպացիների նախնիները, գաղթում էին դեպի արևմուտք և արևելք, հայերը մնացին ապրելու իրենց նախահայրենիքում։ Այսպիսով, ըստ այս տեսության, հայերը Հայկական լեռնաշխարհի բնիկներն են» [4]*։*

Հնագետների հետազոտությունների արդյունքում ի հայտ են եկել հստակ ապացույցներ, որ շումերներն էլ են իջել Հայկական Լեռնաշխարհից, և որ Արարատյան թագավորությունն է եղել շումերական քաղաքակրթության նախահայրը.

«Եթե աստվածները լեռից իջել են հարթավայր, ապա մարդիկ էլ, հավանաբար, գաղթել են այդ ուղղությամբ՝ բերելով իրենց հետ իրենց նախկին հավատն ու պաշտամունքային ծիսակարգը։ Նման ձևով ստացվում է այնպես, որ Շումերի բնակչության մեծ մասը եկել է Զագրոսի լեռնային զանգվածից՝ այն աշխարհագրական տարածքից, ինչը մենք կոչում ենք Մեծ Հայք, հենց այն տեղից, որտեղ գտնվել է թե՛ Արատտայի թագավորությունը և թե՛ Աստվածաշնչյան երկիրը՝ Եդեմը։

Նախապատմական ժամանակներին վերաբերող հնագիտական պեղումները վկայում են, որ Նեոլիթյան դարաշրջանի հեղափոխությունը սկսվել է Զագրոսի լեռներից և աստիճանաբար տարածվել ամբողջ Միջագետքյան հարթավայրով...

Կարծիք կա, որ Արատտայի թագավորական դինաստիան շումերական արմատներ է ունեցել, ինչի վկայությունը իբրև թե Շումերից հյուսիս եղող լեռնային շրջանների գաղութացումն է։ Սակայն իրականում Արատտայի թագավորությունը կարող է լինել շումերական քաղաքակրթության նախահայրը, այլ ոչ թե հակառակը» [5]*։*

Պեղումները շարունակ հաստատում են, որ Հայկ նահապետի օրոք մեծ վերելք է ապրել Արարատյան երկիրը՝ Հայաստան աշխարհը՝ իր քաղաքաշինությամբ, գյուղատնտեսությամբ, հանքահանությամբ, մետաղագործությամբ, զինագործությամբ, խեցեգործությամբ, մանածագործությամբ, նույնիսկ աստղագիտությամբ և այլն։

Ստորև կմանրամասնենք, որ այս բոլորի հայրենիքը եղել է Հայաստան աշխարհը, և նշված ոլորտներից շատերը երկար ժամանակ մնացել են որպես հայոց մենաշնորհ.

---

[3] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 250:

[4] Джовани Гуайт. 1700 лет вернвсти. Москва 2005, ст. 18.

[5] Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли…”, Москва, 2005. ст. 145, 146.

«Ոչ մի կասկած չկա, որ Արատտան հնագույն շրջանում շումերների կողմից ընկալվում էր որպես հեքիաթային հարստության կախարդական երկիր: Նույնիսկ մի գիտնական Արատտան կոչեց «շումերական էլդորադո»՝ անուրջների, երևակայության և հնագույն փառքի առասպելական կիսաիրական թագավորություն»[6]:

Եթե Հայկի ու Բելի և ընդհանրապես Հայոց պատմության ակունքների մասին մենք տեղեկանում ենք Նինվեի գրադարանից՝ Մար Աբաս Կատինայի միջոցով Հայաստան բերված մագաղաթներից, որոնց բովանդակությունը մեզ փոխանցում է Մ. Խորենացին, ապա Հայաստանում հետպատերազմյան այդ աննախադեպ զարգացման մասին ծանոթանում ենք արդեն հնագետների աշխատություններից: Եվ ըստ այդ հավաստի աղբյուրների՝ Ն. Ք. երրորդ հազարամյակի կեսին՝ Հայկի տիրապետության ժամանակ, հզոր զարգացում ապրած քաղաքակրթության հետքեր են հայտնաբերվել Քուռ և Արաքս գետերի միջև ընկած տարածքում: Ինչի համար էլ դա ստացավ «Կուր-արաքսյան» (Քուռարաքսյան) քաղաքակրթություն կամ մշակույթ անվանումը: Սակայն հետագա հետազոտությունները ցույց տվեցին, որ այն, որպես տեղական բնույթ ունեցող մշակույթ, սփռված է եղել Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում.

«Քուռարաքսյան մշակույթն առանձնացվել է մոտ 30 տարի առաջ՝ Բ. Ա. Կուֆտինի կողմից: Առանձնացնելով այս մշակույթի հիմնական հատկանիշները և հատկապես նրա կերամիկայի բնութագրային գծերը՝ նա այս համարեց Քուռարաքսյան էնեոլիթի մշակույթ: Բանը նրանում է, որ այդ ժամանակաշրջանի մշակույթի հայտնի բոլոր հուշարձանները տեղադրված են եղել Քուռ և Արաքս գետերի միջև...

Անդրկովկասում հանդիպում ենք այս մշակույթի հուշարձանների զգալի կենտրոնացման, հատկապես Քուռարաքսյան միջագետքում և Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքում: Այս հուշարձանների մեջ մեծ ծավալ են կազմում վիթխարի բնակավայրերի մշակութային նստվածքները՝ երբեմն հասնելով նույնիսկ 8 մ հաստության: Դրանք վկայում են բազում դարերի ընթացքում այդ բնակավայրում կյանքի շարունակական տևողության մասին կամ, այլ կերպ ասած, Քուռարաքսյան մշակույթի երկարատև զարգացման մասին»[7]:

Այդ նույն գիտահետազոտական աշխատություններն ի հայտ բերեցին, որ այդ քաղաքակրթության պտուղներից օգտվել են թե՛ դեպի հյուսիս ու արևմուտք, թե՛ հարավ և արևելք ընկած երկրները, որոնք տարբեր ոլորտներում զարգացում են ապրել՝ շնորհիվ Հայաստանից իրենց երկրներ ներմուծված ապրանքների և տեխնոլոգիաների.

«Ներկայումս հաստատվել է, որ այս մշակույթի տարածման շրջանակը նշանակալիորեն ավելի լայն է, քան հարավկովկասյան Միջագետքինը: Այն ընդգրկում է գրեթե ամբողջ Անդրկովկասը՝ Իրանի հարավարևմտյան, հյուսիսարևմտյան մասերը և Արևելյան Անատոլիան, Դաղստանի հյուսիս և հյուսիսարևելյան մասերը, Ջեչենաինգուշետյան և նույնիսկ Հյուսիսային Օսեթիայի ո-

---

[6] Дэвид Рол... ст. 94.

[7] Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975, ст. 149, 191.

րոշ շրջաններ: Հարկ է նաև նշել, որ Քուռարաքսյան մշակույթի առանձին պատառներ որոշակիորեն հայտնաբերվել են նույնիսկ Սիրիայում և Պաղեստինում, որտեղ նրանք կազմում են այսպես կոչված կիրբետկերակսյան մշակույթը: Պարզ է, որ այդ արեալը միշտ այդքան լայն չի եղել և սկզբնական շրջանում հավանաբար սահմանափակվել է Քուռարաքսյան շրջանի որևէ տարածքում և ամբողջ Հայկական լեռնաշխարհում» [8]:

Հնագետներից շատերի համար Սուրբ Գրքի տեղեկությունները չեն համարվել հավաստի աղբյուր և ինքնաբերաբար այդպես են վերաբերվել նաև Հայոց պատմության սկզբնաղբյուրներին, որովհետև կա՛մ հաղորդ չեն եղել դրանց, կա՛մ լուրջ չեն ընդունել:

Ոմանք տեսնելով հանդերձ, թե ինչ բարձր մշակույթ են ունեցել Հայկական լեռնաշխարհի բնակիչները, նրանց մասին խոսել և խոսում են որպես ուղղակի տեղաբնակ ցեղերի, այլ ոչ թե այնպիսի ուրույն ազգի, ինչպիսիք եղել են շումերներն ու եգիպտացիները: Այնինչ՝ քաղաքակրթության հետքերը, որ պահպանվել են այս տարածքում, խոսում են տեղաբնակների կայուն, կազմակերպված և մեծ զարգացում ապրած ազգ լինելու մասին.

«Պատահական չէ, որ մեր դարի խոշորագույն հնագետներից Գորդոն Չայլդը, ուսումնասիրելով Հին Արևելքի հնագիտական նյութերը, եկավ այն եզրակացության, որ Հայկական լեռնաշխարհի մշակույթն իր պատկառելի հնությամբ ու արժանիքներով կարող է մրցել Հարավային Միջագետքի և Նեղոսի հովտի հնագույն մշակույթների հետ» [9]:

«Հայաստան աշխարհի երկնասլաց գագաթներին, անդնդախոր կիրճերում, այրերում, բնաշխարհի լեռնահովիտներում ու դաշտերում ներգծված են հարյուրհազարավոր պատմահնագիտական ու ճարտարապետական հուշարձաններ, որոնք տնտեսական ու մտավոր բարձր զարգացման, նուրբ ճաշակի, ժողովրդի անխորտակ ոգու հրաշապատում դրսևորումներ են» [10]:

Որ այդ արարող բնիկները եղել են հայերը, արդեն վերևում ասվել է: Բարեխիղճ գիտնական պատմաբանները, հնագետներն ու այլ ոլորտի ուսումնասիրողները, իրավամբ, հայերին են համարել Հայկական լեռնաշխարհի հնագույն մշակույթի հեղինակը.

«Հայերը Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության անմիջական հետևորդներն են, որոնք ապրում են Հայաստանում՝ բոլոր ժամանակաշրջաններում անընդմեջ» [11]:

Այն տեսակետը, որ հիմնականում Հայաստանի տարածքից են շատ գիտելիքներ, արհեստներ ներմուծվել Շումեր, Եգիպտոս և այլ երկրներ, անառարկելի է. հատկապես երբ հարցը վերաբերում է մետաղագործությանը.

«Մի խումբ հնագետ-արևելագետների կարծիքով Փոքր Ասիան և Հայկական բարձրավանդակը մետաղահանության և մետաղամշակման ամենանախնական

---

[8] Р. М. Мунчаев... ст. 149:

[9] Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան, 1992թ., էջ 63:

[10] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 5:

[11] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004թ, 481 էջ:

կենտրոններն էին, որտեղից մետաղարդյունաբերության արտադրանքը ներթափանցում էր Ասորիք, Պաղեստին և Հյուսիսային Միջագետք: Կարելի է առանց վարանման ենթադրել, որ Հայաստանի մետաղամշակության ազդեցությունից զերծ չէին կարող մնալ Անդրկովկասի ու հյուսիսային Կովկասի մարզերը»[12]:

Դրան ևս կանդրադառնանք առանձին բաժնով:

Բազմաթիվ այլ ոլորտներ նույնպես շարունակական զարգացում են ապրել: Բնական է, որ դրանց արդյունքները կնպաստեին հարևան երկրների տնտեսության բարգավաճմանը:

«Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակում զգալի տեղաշարժեր են տեղի ունենում տնտեսության տարբեր բնագավառներում: Զարգացման նոր վերելք են ապրում երկրագործությունը և անասնապահությունը: Սկիզբ է դրվում նաև այգեգործությանը»[13]:

Այդ ժամանակներում Հայաստանում այնպիսի բարենպաստ պայմաններ էին ստեղծվել մարդկանց կյանքի առաջընթացի համար, որ բնակչության թիվն արագ աճում էր, և արտագաղթը բացառված էր.

«Նյութական բարեկեցության նշանակալից զարգացումը հասցնում է բնակչության աննախընթաց աճի: Արարատյան, Շիրակի, Վանանդի, Բագրևանդի, Ջալդրանի, Կարնո, Մանազկերտի, Բուլանըխի, Տարոնի դաշտավայրերում, Վանի երկրագործական օազիսում, Տաշիր-Ջորագետում, Սևանի ավազանում, Կոտայքում առաջանում են հարյուրավոր նոր բնակատեղիներ: Հայկական լեռնաշխարհի ողջ տարածքը ծածկվում է բնակատեղիների ու նրանց կից դամբարանադաշտերի խիտ ցանցով:

Վաղ բրոնզեդարյան փուլի բնակատեղիների խտությամբ, հարստությամբ ու ինքնատիպությամբ առանձնապես աչքի է ընկնում Արարատյան դաշտավայրը՝ Հայկական լեռնաշխարհի ամենաընդարձակ և Ասիայի ամենաբարեբեր հովիտներից մեկը»[14]:

Մեծ Հայքը առավելապես լեռնային երկիր է, ինչը զգալիորեն դժվարացրել է կյանքը: Այդ պատճառով բնակավայրերը հիմնվում էին դաշտավայրային շրջաններում, որտեղ եղանակային ու երկրաբանական պայմաններն ավելի նպաստավոր էին հացահատիկային, բոստանային մշակաբույսերի աճեցման և այգեգործության համար: Իսկ լեռնոտ մասերը հարուստ էին այնպիսի օգտակար հանածոներով, որոնք բացակայում էին հարթավայրերում:

Այս ամենը նպաստել է Հայաստանի և Միջագետքի ու այլ տարածքների բնակիչների միջև առևտրական հարաբերությունների ձևավորմանը.

«Հայկական լեռնաշխարհը հայտնի է եղել հանքային հարստություններով, որոնց մասին հիշատակություններ կան շումերական աղբյուրներում: «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգը տեղեկացնում է Արատտայում ոսկու, արծաթի, բրոնզի, կապարի, լաջվարդի ու սարդիոնի հանքերի ու

---

[12] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971. էջ 62:

[13] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967. էջ 41:

[14] Հարություն Մարտիրոսյան... էջ 67:

մշակման մասին։ Իսկ վիպերգի վերջում պատմվում է, որ սպառնալիքներով ուղեկցվող բանագնացություններից հետո (Ա. Ն. Քրամերն այն անվանում է պատմությանը հայտնի «առաջին հոգեբանական պատերազմ») երկու երկրների միջև հաշտություն կնքվեց, որից հետո շումերներն Արատտա էին բերում ցորեն և այլ մշակաբույսեր, իսկ արատտացիները Շումեր էին տանում ոսկի, արծաթ, լաջվարդ և սարդիոն։ Սա միակ տեղեկությունն է Արատտայի՝ այլ երկրի հետ ունեցած ապրանքափոխանակային հարաբերությունների մասին։ Կարևոր է նշել նաև, որ Արատտայում գործ է ածվել չափ ու կշռի միավորը»[15]։

Չնայած Մեծ Հայքի տարածքը լի է հնադարյան հուշարձաններով, բայց դրանց մեծ մասը դեռևս ուսումնասիրված չէ։ Մշակութային շերտերը տարբեր դարերի են պատկանում՝ սկսած մոտավորապես յոթերորդ հազարամյակից։ Այդ հուշարձանների շարքում կան այնպիսիները, որոնք համաշխարհային հնագիտության համար մեծ արժեք են ներկայացնում։ Դրանցից մեկն էլ Երևանի հարավարևմտյան մասում՝ Հրազդան գետի ափին գտնվող Շենգավիթն է.

«Հայաստանի վաղ բրոնզեդարյան հուշարձաններից ամենաերևելին Շենգավիթ կոչվող բնակատեղին է։ Այն գրավում է 6 հեկտար տարածություն, ունի անմշակ քարերից կառուցված հզոր, պարսպապատ և դեպի գետը տանող ստորերկրյա սալածածկ գետնուղի։ Պարսպապատից դուրս՝ տարածվում է դամբարանադաշտը։

Ժամանակագրական տարբեր շերտերի առկայությունը վկայում է, որ Շենգավիթի բնակավայրում կյանքը հարատևել է դարեր շարունակ» [16]։

Շենգավիթում պեղված մի շարք շերտեր ապացուցում են, որ այդ վայրում հազարամյակներ անընդմեջ ակտիվ կյանք է ընթացել, որը շարունակվում է մինչ օրս։ Նա Երևանի մաս է կազմում՝ այն Երևանի, որի տարածքը նկատեց Նոյ նահապետը՝ Արարատ լեռան բարձունքից։

Այդ ժամակներից վերսկսվեց հետջրհեղեղյան կյանքն այս տեղանքում։

Դա, ինչպես ասվել է, թույլ է տալիս կարծել, որ Երևանը եղել է հետջրհեղեղյան առաջին բնակավայրերից մեկը։

Հետևաբար, մեր մայրաքաղաքը ոչ թե երեք հազար, այլ մոտ յոթ հազար տարեկան է։

Ներկայումս էլ այստեղի պեղումների ժամանակ նորանոր արժեքավոր փաստեր են ի հայտ գալիս՝ ապացուցելով, որ Երևանը մեզ է հասել հնագույն ժամանակներից.

«Պեղումներով անառարկելիորեն ապացուցված է, որ Արարատյան դաշտում նստակյաց կյանք ու մշտական բնակավայրեր գոյություն են ունեցել Ք. ա. 6-րդ հազարամյակում. որ այնտեղի բնակիչները զբաղվել են հողագործությամբ, ունեցել են արհեստական ոռոգման պարզագույն կառույցներ։ Այդ բնակավայրերից մեկը Շենգավիթն է՝ չորս կուլտուրական շերտերով։

Շենգավիթին ևս հետագայում կանդրադառնանք։

---

[15] Արտակ Մովսիսյան « Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան, 1992 թ., էջ 58:

[16] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971. էջ 68:

Էնեոլիթի (պղնձի քարեդարյան) ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհում հաստատվել է 5-4-րդ. հազարամյակներում Ք. ա.: Բնիկների մշակույթը զարգացել է այն աստիճան, որ մարդիկ սկսել են հանքաքարից պղինձ ձուլել, նրանից աշխատանքային գործիքներ պատրաստել, զարդերի ամենաբազմազան ձևեր հորինել: Պղնձյա իրերը հասել են շումերներին ու եգիպտացիներին: Էնեոլիթում բնակիչները տիրապետել են նաև խեցեգործությանը, մանածագործությանը, կաշեգործությանը, քարամշակությանը: Սրանք անժխտելի փաստեր են հայերի եկվորության կեղծ վարկածը ժխտելու համար»[17]:

Հնագիտության ասպարեզում մեծ ճանաչում են ստացել Հայաստանի քուռարաքսյան բազմաթիվ այլ հուշարձաններ ևս, որոնք սփռված են ներկա Հայաստանի ամբողջ տարածքով մեկ: Դրանցից են Գառնիի վաղ բրոնզեդարյան շերտը, Աբովյանի (Էլարի) դամբարանները, Արմավիրի Մոխրաբլուրը, Արտաշատի Ջրահովիտը, նաև Վանաձորի (Կիրովականի) քուռարաքսյան մշակույթի բնակավայրերը: Այդպիսի հուշարձանների թվին են վերագրվում նաև Լճաշենի բազմաշերտ բնակատեղերը և դամբարանները, Արթիկի շրջանի Առիճ բնակավայրը, հյուսիսարևելյան Հայաստանի կիկլոպյան ամրոցները և Ջաղացատեղին, Թեղուտը և այլ հուշարձաններ:

«Հայաստանի վաղ պատմությունը ընդգրկում է մարդկության պատմության գրեթե բոլոր ժամանակները՝ հին քարի դարը, նոր քարի դարը և պղնձի դարը»[18]:

Որ հայերն իսկապես եղել են Արարատյան երկրի բնիկները, այդ մասին գրում են ոչ միայն պատմաբանները, հնագետները և լեզվաբանները, այլև մարդաբանությամբ զբաղվող գիտնականները, որոնց ուսումնասիրություններն էլ հաստատում են, որ հայերն են ի սկզբանե եղել Հայկական լեռնաշխարհի բնակիչները, ինչի մասին կխոսվի հաջորդիվ:

«Արարատյան դաշտում գտնված վաղ մարդաբանական նյութերը վերաբերում են մ.թ.ա. VI-IV հազարամյակներին: Սրանց բնորոշ է արմենոիդ մարդաբանական տիպը»[19]:

Արմենոիդներ

«Հայերը, ամենախելացի, ամենակատարյալ ընտրասերված,
ամենաբարձր զարգացած ցեղն են աշխարհում՝
քաղաքակրթվածության տեսակետից»[20]:

Հայկական Լեռնաշխարհում հայերի տեղաբնիկ լինելու ամենամեծ ապացույցներից մեկը մարդաբանական ուսումնասիրությունների արդյունքներն են:

---

[17] Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես Ամսօրյա, հունվար-դեկտեմբեր, 1998թ., էջ 410:

[18] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004. էջ 433:

[19] Նույն տեղում, էջ 397:

[20] Լորենս Արաբացի, ամսագիր «Անդին» 12, Երևան 2013թ., էջ 32:

Գիտությանը հայտնի է, որ ազգերի ցեղային սերման խնդիրը պարզելու համար մեծ կարևորություն ունի նրանց մարդաբանական տիպը։

Հայաստանի հնագիտական հուշարձաններով հարուստ տարածքների պեղումները Հայկական լեռնաշխարհի բնիկների մարդաբանական տեսակի մասին ստույգ տեղեկություններ են հաղորդում.

«Հայաստանում կատարված նոր պեղումներից հայտնաբերված հնագիտական հավաքածուների շարքում հատկապես մեծ հետաքրքրություն է ներկայացնում վաղ մարդաբանական նյութը։ Հայաստանի (Շենգավիթի) մարդաբանական նոր գյուտերը մեզ հնարավորություն են տալիս հիմնականում լուծելու այն կարևոր խնդիրը, թե ո՞րն է Հայկական լեռնաշխարհի նախնադարյան ժամանակաշրջանի բնակիչների էթնիկական տիպը» [21]։

Այդ ոլորտի գիտնականները պարզել են, որ Հայկական լեռնաշխարհում դեռևս մ.թ.ա. 4-րդ հազարամյակի հուշարձաններում բազմաթիվ գանգեր ունեն կարճ և կլորավուն տեսք։

Եվ քանի որ նման տեսակը առավել բնորոշ է Հայոց լեռնաշխարհի բնակիչներին՝ հայերին, գերմանացի նշանավոր գիտնական Ֆ. Ֆոն Լուշանը և ուրիշներ եկել են համաձայնության, որ նման գանգերի տիպը հարկ է անվանել «արմենոիդ»։

Հետագա ուսումնասիրությունները լիովին հաստատեցին տվյալ կարծիքի արդարացի լինելը.

«Արմենոիդ կամ «արմենոիդական տեսակ» հասկացությունը մտցվել է մարդաբանության մեջ՝ անցած (19-րդ) դարի վերջին։ Այդ տեսակը նախ անվանում էին «ասորոիդական», քանի որ համարում էին, որ այն ամենից լավ ներկայացված է ասորական հարթաքանդակներում։ Ավելի ուշ՝ նկատեցին, որ ասորական քանդակներն ընդհամենը հին արվեստի շատ ավելի լայն երևույթի մաս են կազմում։ Պարզվեց, որ բազմաթիվ մարդկանց պատկերները հին քաղաքակրթություններում ունեն նման դեմքեր, և ավելի ապշեցուցիչ է, որ նման են գանգի ուրվագծերը։ Եվ քանի որ դեմքի և գանգի նման տեսակը հաճախ հանդիպում է հայերի մեջ, առաջարկ եղավ մարդաբանական այդպիսի տեսակը անվանել «արմենոիդական»» [22]։

Այդ ուսումնասիրությունների մեջ, բնականաբար, իրենց մեծ ներդրումն են ունեցել նաև հայ գիտնականները, որովհետև ուսումնասիրությունների հիմնական աղբյուրները գտնվում են հենց Հայաստանի տարածքում՝ դառնալով հետազոտության մշտական նյութ.

«Արարատյան դաշտավայրի, Շենգավիթի և մյուս վայրերի՝ նոր քարի դարի ու պղնձի դարի բնակատեղիներում բացված դամբարանների մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց տերերը պատկանում են կարճագանգ (բրախիցեֆալ) մարդաբանական տիպին։ Մեր այս եզրակացության համար հիմք են ծառայում հատկապես Շենգավիթի բնակատեղի դամբարանադաշտում գտնված

---

[21] Ս. Ա. Սարդարյան... էջ 251:

[22] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

մարդաբանական նյութերը (գանգեր)։ Շենգավիթի բնակիչների բնորոշ գծերից մեկը կարճագլխությունն է, որը հատուկ է նախահայկականին։ Պղնձի դարի մարդկանց կարճագլխությունը և հնագույն թաղումներից պահպանված մարդաբանական, մանավանդ հնագիտական նյութերը համոզում են, որ այդ հուշարձանները ստեղծող ցեղերն ու ցեղախմբերը չէին կարող անհետ կորչել» [23]։

Իսկ եթե մարդաբանական այդ տիպը անհետ չի կորել, ապա ո՞ր ազգի մոտ այն պետք է պահպանված լինի. չէ՞ որ հազարամյակների ընթացքում ազգերը ինչ-որ չափով խառնվել են, և որոշներն էլ լիովին տարրալուծվելով մյուսների մեջ՝ անհետացել են.

«Կարճագանգ ցեղի այդ ճյուղը, որ ամենայն հավանականությամբ պատկանում է Հայկական լեռնաշխարհի նախաբնիկ ցեղերին, վկայում է, որ դրանց հետևորդները մինչև այժմ բնակվում են Հայկական լեռնաշխարհում։ Այդ կարճագլուխ (կլոր գանգ) ցեղերի նախահայրենիքը տեղադրվում է Հայկական լեռնաշխարհում...

Իրավամբ ընդունված է, որ արմենոիդներից, եվրոպոիդներից, սեմիտներից են կազմված էթնիկական այն մեծ խմբավորումները, որոնք հանդիպում են այժմ Առաջավոր Ասիայում՝ բացի թուրքական տարրերից, որոնք ունեն ուրալաբայկալյան ծագում։ Դրանց մեջ ,պատմության բերումով, համեմատաբար նվազ խառնուրդ են ներկայացնում միմիայն հայերը, որոնք գրեթե բացառապես համասեռ են և հազարավոր տարիների ընթացքում զարմանալիորեն պահպանել են իրենց մարդաբանական արմենոիդ տիպը...

Հայկական լեռնաշխարհում արմենոիդ մարդաբանական տիպը ծագել է խոր անցյալում, հավանաբար ոչ ուշ, քան նոր քարի դարում, և այդ հնագույն ժամանակի գանգերը շատ են նման այժմյան հայերի գանգերին» [24]։

Բնական է, որ այլ ազգերի հետ անխուսափելի շփման հետևանքով, ինչի պատճառները ամենատարբեր կարող էին լինել, Հայաստանի հնագիտական հուշարձաններում հայտնաբերվում են նաև այլ տիպի գանգեր, որոնք սակայն չունեն մեծ քանակություն և տարածում՝ արմենոիդ տիպի համեմատ.

«Հնագիտական պեղումները Փոքր և Առաջավոր Ասիայում կարճագանգերի հետ միաժամանակ հայտնաբերում են նաև երկար գանգեր։ Այս փաստը ցույց է տալիս, որ Փոքր և առաջավոր Ասիայի հին պատմության մեջ եղել են նաև երկարագանգ ժողովուրդներ, որոնց Ֆոն Լուշանը, Ռ. Վիրխովը և այլոք համարում են եկվոր, դրսեկ տարրեր՝ հետագայում միջամուխ եղած՝ կարճագանգ ժողովուրդների մեջ» [25]։

Հնում՝ Հայկ նահապետի ժամանակ, հիմնականում նրա սերունդներով՝ հայերով է բնակեցված եղել այս խորհրդավոր լեռնաշխարհը, և արդեն ավելի ուշ, տարբեր ցեղերի տեղաշարժերի և այլ հանգամանքների բերումով, Մեծ Հայքի տարածքում ի հայտ են եկել մարդաբանական այլ տիպի ներկայացուցիչներ։ Դա օրինաչափություն է, քանի որ ինչպես Հայկական լեռնաշխարհում հանդի-

---

[23] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 250:
[24] Նույն տեղում, էջ 250, 251:
[25] Նույն տեղում, էջ 256:

պում են ոչ արմենոիդ տիպի գանգեր, այնպես և նրա սահմաններից դուրս հայտնաբերվում են այն տարածքներին ոչ բնորոշ արմենոիդ տիպի գանգեր: Այսինքն, ինչպես այլազգիներն են ներթափանցել Հայկական լեռնաշխարհ, այնպես էլ եղել է հայերի արտահոսք:

Սակայն արմենոիդ տիպը այլ երկրներում մեծ տարածում չի գտել: Այդպես և Հայաստանի սահմաններում այլ մարդաբանական տիպի մարդիկ մեծ տարածում չեն ունեցել.

«Առաջավորասիական մարդաբանական տիպը հանդիպում է նաև Պաղեստինում, Կիպրոսում, նախադինաստյան Եգիպտոսում, Փոքր Ասիայի կենտրոնում (Ալիշար բլուրի երրորդ շերտում): Եթե տիպիկ արմենոիդ առաջավորասիական գանգերը հիշյալ երկրներում երևան են եկել 2-րդ հազարամյակի կեսից ոչ վաղ, ապա Հայկական լեռնաշխարհում՝ Շենգավիթում, հայտնաբերվածները պատկանում են 3-րդ հազարամյակի սկզբին...

Հայաստանի նոր քարի դարի և պղնձի դարի մարդաբանական նյութերի ուսումնասիրությունից հայտնի է դառնում արմենոիդ տիպի խոր հնությունը: Հետագա դրսեկ ժողովուրդները էական ներգործություն չեն ունեցել տեղական ազգաբնակչության մարդաբանական տիպի փոփոխման վրա. ընդհակառակը՝ իրենք են ձուլվել կայուն ձևավորված արմենոիդ ցեղի մեջ: Գրեթե անփոփոխ է մնացել տեղական նախաբնիկ ժողովուրդների արմենոիդ մարդաբանական տիպը» [26]:

Ուստի, պեղումների արդյունքում հաստատվել է, որ այս տարածքում ի սկզբանե եղել է արմենոիդ տիպը, որը պահպանվել է մինչ օրս.

«Արմենոիդ ցեղերի հայրենիքը՝ նրանց սկզբնական վայրը, պետք է համարել Հայկական լեռնաշխարհի կենտրոնը» [27]:

Սակայն գոյություն է ունեցել նաև տեսակետ, ըստ որի՝ արմենոիդ տիպը պատկանել է խեթերին: Բայց այդ կարծիքը հերքվել է հայ և այլազգի գիտնականների (Շլիման, Հիբշման) ուսումնասիրություններով.

«Այսպիսով, Հայկական լեռնաշխարհը, դրացի արևմտյան Փոքր Ասիայի հետ մեկտեղ, հայրենիքն է մի առանձին մշակույթի: Հազարամյակների ընթացքում այստեղ կայուն է մնացել ցեղային դրոշմով մի հիմք՝ Լուշանի «արմենոիդ ցեղը», որը մարդաբանական այդ տիպի կրողն է» [28]:

*Իսկ Ռ. Վիրխովը, ուսումնասիրելով Տրոյայի պեղումներից Շլիմանի հայտնաբերած գանգերը, դրանք ոչ թե համարում է արմենոիդ տեսակի, ինչպես Լուշանը, այլ ուղղակի անվանում է հայկական (*армянский*):*

Արմենոիդ տիպի մարդաբանական ճյուղի ուսումնասիրությունները շարունակվում են մինչ օրս, և աշխարհի տարբեր գիտնականներ հանգել են եզրակացության, որ շատ ազգեր առաջացել են հայերից:

Ըստ փիլիսոփայական գիտությունների դոկտոր պրոֆեսոր Ս. Սարգսյանի աշխատության՝ [29] այս թեմային անդրադարձել է պրոֆեսոր Սերջին, ով իր հե-

---

[26] Ս. Ա. Սարդարյան... էջ 254, 257:

[27] Նույն տեղում, էջ 222:

[28] Նույն տեղում, էջ 256:

[29] “Армяне Арцаха в антропологическом и географическом отношении”.

տազոտություններից եզրակացրել է, որ արմենոիդ ռասան բնակեցրել է Եգիպտոսը, Լիբիան, Սիրիան, Փոքր Ասիան, Հունաստանը, Սիցիլիան, Իտալիան, Սարդինիան, Շվեյցարիան, Ֆրանսիան, Անգլիան, Իռլանդիան, Իսպանիան, նաև Կովկասը, Ղրիմը, Հարավային Ռուսաստանը:

Մուլդաշևը նույնպես համոզված է, որ հենց հայերն են եղել շատ ազգերի սկզբնավորողները: Սակայն նա ևս հայերին համարելով արմենոիդ տիպի կրողներ (ինչը համապատասխանում է այլ գիտնականների տեսակետին)՝ միաժամանակ կարծիք է հայտնում, թե իբր արմենոիդ ռասան առաջացել է պարսկականից:

Բայց դա Մուլդաշևն ընդամենը ենթադրում է և չունի լուրջ հիմնավորում. ***«Այսպիսով, ըստ մեր տեղեկությունների, պարսկական ռասան ծնել է արմենոիդներին՝ հայերին: Վերջիններս էլ հանդիսացել են դինարյան ռասայի նախահայր, որին գիտնականները վերագրում են առաջին հերթին հարավային սլավոններին՝ ուկրաինացիներին, հարավսլավացիներին և այլոց: Բացի դրանից՝ արմենոիդ ռասայից է առաջացել միջերկրական ճյուղը, որի մեջ ըստ իս՝ մտնում են իտալացիները, հույները, իսպանացիները, ռումինացիները, վրացիները, հրեաները, արաբները և մասամբ թուրքերը»***[30]:

Իհարկե, Մուլդաշևի կարծիքը, որ արմենոիդ ռասայից են առաջացել թվարկված ազգերը, հետաքրքիր ուսումնասիրության արդյունք է՝ կապված աչքերի նմանության տեսության հետ: Սակայն այն չի համապատասխանում Սուրբ Գրքին և պատմական աղբյուրներին, որոնցում հայերը սերվել են հաբեթական ճյուղից և արմենոիդ մարդաբանական տիպի բուն կրողներն են: Հայտնի է նաև, որ հրեաներն ու արաբները սեմիտներ են, իսկ թուրքերը առաջացել են Քամի սերնդից:

Հիշենք, որ Հայկի օրոք, հատկապես Բելի դեմ հաղթանակից հետո, մյուս ժողովուրդների մոտ շատ մեծացավ Հայկի և հայերի հանդեպ հարգանքն ու երկյուղածությունը, քանզի նրանց համարում էին «աստվածների կաճառի» բնակիչներ և ընդունում էին՝ որպես բարձր դասակարգի մարդիկ.

«Արմենոիդները հազարավոր տարիներ առաջ կազմել են ազնվական դասակարգը, որը քաղաքակրթությունների կազմավորման գործում կենտրոնական դեր է խաղացել» [31]:

Հայերի խորհրդավորության պատճառով այլ ժողովուրդներ իրենց աստվածներին և թագավորներին պատկերել են արմենոիդ տիպով՝ դրանով ի ցույց դնելով իրենց մեծ երկյուղածությունը Հայկական լեռնաշխարհի բնակիչների հանդեպ: Հավանական է, որ Հայաստանից այլ երկրներ, հատկապես Միջագետքի կողմերը, հայազգի բանագնացներ և դեսպաններ են եղել և միգուցե փոքրաթիվ համայնքներ են կազմել, երբեմն էլ դարձել են այդ պետությունների կառավարիչներ: Դա են ենթադրում այն փաստերը, որ որոշ երկրներում հինավուրց դամբարաններ պեղելիս՝ այլ մարդաբանական տիպի գանգերի կողքին հայտնաբերվել են նաև քիչ թվով արմենոիդ տեսակի գանգեր.

---

[30] Мулдашев Э. Р. “От кого мы произошли?”, СПб: Нева, 2005. ст 50.

[31] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

«Երբ հին դամբարաններում սկսեցին գտնել մեծամասամբ այլ ռասայի մարդկանց մնացորդներ, սովորաբար երկարավուն և կարճ գանգերով, տարօրինակ հակասության զգացում առաջացավ։ Թվում է, որ այդ հակասության առավել բնական բացատրությունը այն է, որ արմենոիդները շատ ավելի լայն ներկայացված են քանդակներում և ավելի քիչ՝ պեղված դամբարաններում։ Սա խոստովանություն է այն բանի, որ նրանք կազմել են Իրանի, Անատոլիայի և Միջագետքի բրոնզեդարյան քաղաքակրթության և ավելի վաղ ժամանակաշրջանի հատուկ բարձրագույն խումբ։ Խումբ, որ եղել է այս քաղաքակրթությունների ակունքում և կողմնորոշել նրանց ոճը։ Այս պատճառով արմենոիդ տեսակով են պատկերվել աստվածները, թագավորները և նրանց շրջապատը։ Իսկ այդ քաղաքակրթության հիմնական բնակչությունը պատկանել է ուրիշ մարդաբանական տեսակների, և դա է պատճառը, որ այդքան հազվագյուտ են արմենոիդները հին դամբարաններում» [32]։

Գիտնականները խոսում են նաև այդ ժամանակների մի տարօրինակ երևույթի՝ գանգերի դիտավորյալ ձևախեղման մասին։ Արմենոիդ ռասայի յուրահատկությունը և ազնվականությունն ընդունելն է դարձել պատճառ, որ այլ մարդաբանական տեսակի պատկանող որոշ ժողովուրդներ ոչ միայն աստվածներին, թագավորներին և իշխանազուններին են քանդակել և պատկերել արմենոիդ տեսքով, այլև արմենոիդներին համարելով կատարյալ տեսակ՝ գրեթե պաշտամունքի աստիճանի են հասցրել իրենց վերաբերմունքը և, սեփական գանգերը ձևախախտելով, ջանացել են նմանվել արմենոիդներին.

«Բազմաթիվ հնագիտական գտածոներ ցույց են տալիս, որ հաճախ ձևախախտման միջոցով, որ արվում էր վաղ մանկության շրջանում, գլխին տալիս էին արմենոիդ ձև...

Թագավորների և աստվածների արմենոիդական պատկերները և կապը «արմենոիդականի» նմանությամբ ազնվականության ձևախախտված գլուխների հետ՝ շատ հավանական են դարձնում այն, որ հինավուրց դարաշրջաններում արմենոիդները նույնացվել են բարձրագույն դասակարգի հետ» [33]։

Սկիզբ առնելով հնագույն ժամանակներից՝ այդ ավանդույթը երկար ժամանակ շարունակվել է և նկատվել նաև հետագայում պատմության ասպարեզ իջած այլ ժողովուրդների մոտ.

«Այդ տարօրինակ սովորությունը շարունակվեց գոյություն ունենալ եվրասիական տափաստանների տարբեր շրջաններում՝ հազարամյակների ընթացքում...

Ձևախեղված գանգեր են գտնվում իրանալեզու սարմատների դամբարաններում և կենտրոնական Ասիայի մի շարք քոչվոր ցեղերի մոտ...

Հայտնաբերվել են քուշանական թագավորների ոչ մեծ թվով արձանիկներ, պատկերներ և դրամներ։ Այդ գլուխների պատկերները այնպես են վեր ձգված և այնպես հարթ են ծոծրակները, որ գիտնականները չէին կարող չգալ այն եզրա-

---

[32] Мойшезон Борис Гершевич...

[33] Նույն տեղում:

կացութ յան, որ քուշանական թագավորութ յան ազնվականութ յունը շարունակում էր գանգերի ձևախախտման ավանդույթը:

Եվրասիական տափաստանների արևելյան ծայրամասերում ապրում էին հոները: Մ. թ. 4-րդ դարում նրանք իրենց ենթարկեցին գրեթե բոլոր քոչվոր ցեղերին և ներխուժեցին Արևմտյան Եվրոպա:

Նրանց գլխավոր հնագիտական հետքը դամբարաններն են, որոնցում գտնվել են ձևախախտված «ուլտրաարմենոիդական» գանգեր» [34]:

Հայտնի է, որ բոլոր ազգերի սերմարանը Նոյան տապանն է, և չկա ազգ, որ այլ ծագում ունենա: Երբ ազգերի նախահայրերը ցրվեցին աշխարհով մեկ, իրենց հետ տարան նաև հուշեր՝ Ջրհեղեղի և Տապանի մասին, ինչպես նաև որոշ սովորույթներ: Դա է վկայում նաև այն, որ Ամերիկայի բնիկներին էլ անցել է գանգերի ձևախախտման այդ տարօրինակ սովորույթյունը.

«Ոչ ոք չգիտե, թե ինչպես է գանգերի ձևախախտման սովորույթյունը մտել ամերիկական մայրցամաք, սակայն դա բավականին շատ հետքեր է թողել: Դեռ եվրոպացիները այդ սովորույթյունը գտան մի շարք հնդկացի ցեղերի մոտ: Պահպանվել է նկարագրություն այն մասին, թե ինչպես են երեխայի գլուխը երկու տախտակների արանքում սեղմում... Մայաների հարթաքանդակներում հավանաբար անդրադարձ է ունեցել Հին Արևելքի մի ինչ-որ ազդեցություն... Մայաների արձաններում պատկերված են արմենոիդական կերպարով մարդիկ՝ գանգի շեշտված ձևախախտմամբ» [35]:

Ի սկզբանե չէր կարող լինել մի քանի մարդկային տեսակ, քանզի առաջին մարդը Ադամն էր: Հավանաբար, Ադամն արմենոիդ տիպի կառուցվածք է ունեցել, և այդ տեսակը հասել է մինչև Նոյ:

Նոյ նահապետի երեք որդիներից՝ Սեմից, Քամից և Հաբեթից առաջացել են տարբեր մարդաբանական տիպեր: Իսկ Արմենոիդ տիպը պահպանվել է Հաբեթի այն ճյուղի մոտ, որից սերվեց Թորգոմը, նրանից՝ Հայկը, և որից էլ՝ հայ ազգը, որն ի սկզբանե բնակվել և բնակվում է այս՝ Ադամական Դրախտի և Նոյան Տապանի երկրում.

«Հայ ժողովրդի պատմության համար յուրահատուկ է այն, որ երբ մյուս ազգերը, այսպես ասած՝ բազմաթիվ տեղափոխություններից հետո, հանգրվանեցին այն երկրներում, որտեղ ներկայումս ապրում են, այս ազգը այն ժամանակներից, երբ Նոյան տապանը կանգ առավ Արարատ լեռան վրա, երբեք չի թողել այդ լեռան շուրջ եղած իր առաջին բնակավայրը: Հաշվի առնելով հայ պատմաբանների կարծիքը, որ երկրային Դրախտն էլ է գտնվել այդտեղ, ուրեմն, մինչ Ջրհեղեղը՝ մարդկությունը նույնպես ապրել է ներկայիս Հայաստանում: Մենք գալիս ենք այն եզրակացության, որ հայ ժողովուրդը ոչ միայն ամենահին ժողովուրդն է երկրի վրա, այլև միակը՝ իր տեսակի մեջ. աշխարհի արարումից սկսած՝ նա թողել է իր հայրենիքը միայն մեկ անգամ՝ ընդամենը 40 օր ու գիշեր, և դա էլ միայն այն պատճառով, որ այն ծածկված էր ջրի տակ» [36]:

---

[34] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ...

[35] Նույն տեղում:

[36] М. Ахов. Очерки из истории Армянского “госвдарства”. С. - Петербург. 1897, Ст. 4-5.

Մետաղագործության Հայրենիքը

«Եթե Պերուն միջին դարերի հեքիաթային էլդորադոն էր, երբեմնի Հայաստանն էլ եղել է հին աշխարհի մետալուրգիական կենտրոնն ու գլխավոր մատակարարը՝ շումերներից սկսած»[37]:

Որևէ ոլորտի մասին խոսելիս՝ հարց է առաջանում, թե որտե՞ղ է այն սկզբնավորվել, ո՞րն է նրա հայրենիքը, և ո՞վ կամ ովքե՞ր են հեղինակները:

Մետաղագործությունն այդ ոլորտում բացառություն չէ:

Կան արդյունաբերական ոլորտներ, արհեստներ, որոնց առնչվող վերոհիշյալ հարցերը ստույգ պատասխան չեն ստացել:

Ինչ վերաբերում է մետաղագործությանը, արդեն ձևավորվել է վերջնական համոզմունք: Սակայն մինչ այդ՝ գիտական շրջանակներում կարծիք կար, թե մետաղները Հայաստան են ներմուծվել այլ երկրներից: Այդ թյուր կարծիքի հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանի տարածքում լուրջ, իսկ ամենակարևորը՝ անաչառ հետազոտություններ չէին իրականացվել:

«Ոչ հեռավոր անցյալում Հայաստանի հնագիտության մեջ ընդունված էր այն կարծիքը, թե մետաղամշակումը Հայաստան է բերվել գաղթի ճանապարհով, արդեն պատրաստի վիճակում՝ բրոնզի դարից երկաթի դարին անցնելու ժամանակ:

Ռ. Վիրխովը և է. Շանթը մետաղամշակումը Կովկաս էին բերում կենտրոնական Ասիայից: Ժակ դը Մորգանը հին աշխարհի համար ընդունում էր մետաղամշակման մի կենտրոն՝ Հարավային Չինաստանը, որտեղից մետաղը կենտրոնական Ասիայի վրայով տեղափոխվել է Կովկաս: Ավելի ուշ՝ Ժ. դը Մորգանը մետաղամշակման գլխավոր օջախը համարում էր Առաջավոր Ասիան՝ էլամից հյուսիս: Գ. դը Մուրտիլիեն առաջին այդպիսի օջախ էր ճանաչում Հնդկաստանը: Մ. Գերնեսը Անդրկովկասի մետաղե գործիքների համար ցույց տվեց գաղթի մի նոր ճանապարհ՝ Արևմտյան Եվրոպան» [38]:

Հայաստանը, որ հնում անվանվում էր Արարատյան երկիր կամ Արատտա, Հայկ Նահապետի ժամանակաշրջանում մեծ զարգացում էր ապրում ամենատարբեր ոլորտներում, որոնցից հատկապես պետք է առանձնացնել մետաղագործությունը՝ չնայած ժամանակին որպես մետաղագործության հայրենիք են առաջարկել տարբեր երկրներ՝ Չինաստանից մինչև Եգիպտոս.

«Այժմ անցնենք այն հարցին, ինչը զբաղեցրել և այժմ էլ զբաղեցնում է գիտնականների միտքը. ինչպե՞ս է տարածվել մետաղագործության մտահղացումը Հին Աշխարհում: Եղել է մետաղի մի՞ նախահայրենիք, թե՞ մի քանիսը: Պատկանել է մետաղագործության գյուտը մի՞ ազգի՝ շումերների՞ն, ինչպես որ համարում է Մոնտելիուսը, թե՞ եգիպտացիներին, ինչպես երբեմն պնդում էին շատերը: Կամ թե դրանք եղել են Անատոլիայի և Տավրոսի լեռնաբնակնե՞րը» [39]:

---

[37] Վրբան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան 1989թ., էջ 75:

[38] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան 1967թ., էջ 163:

[39] Е. Н. Черных, Металл – человек – время, изд. “Наука” Москва 1972, ст. 27-28.

Սակայն տարբեր ուղղություններով կատարված հետազոտություններից եկել են վերջնական եզրակացության, որ Հայաստանն է այն վայրը, որտեղ Ջրհեղեղից առաջ և հետո գործածության մեջ է եղել մետաղը, ապա զարգացել և այնտեղից տարածվել է այլ վայրեր:

Մետաղագործության զարգացման մեջ Հայաստանի դերի անտեսմանը մեծապես նպաստել է նաև Խորհրդային իշխանությունների վերաբերմունքը, որն առանձնապես չէր տարբերվում Թուրքիայի դիրքորոշումից: Խորհրդային Հայաստանի տարածքում հնագիտական պեղումները հասանելի չէին գիտական աշխարհին: Նույնիսկ ներսում դրանք հաճախ կոծկվում էին, նենգափոխվում կամ ոչնչացվում՝ ծառայելով ինչ-ինչ քաղաքական նկրտումների:

Նման ճակատագրի է արժանացել Մեծամորը՝ հին աշխարհի մետաղագործության ամենախոսուն վկաներից մեկը.

***«Աշխարհը գրեթե ոչինչ չգիտե Մեծամորի՝ մ.թ.ա. 4-րդ հազարամյակից սկսած՝ մինչև 18-րդ, այնուհետև կրկին՝ մինչև մ.թ. 7-րդ դարին պատկանող հայտնությունների մասին. քաղաք, որը կանգնեցվել է հրաբխային բլրի վրա և բոլոր կողմերից շրջապատված է եղել գետերով ու լճերով: Վերջին տարիների պեղումների ժամանակ Մեծամորում հայտնաբերվել են մեծ քանակությամբ ժայռակոփ գլանաձև ձուլարաններ՝ մետաղ ձուլելու հրակայուն կաթսաներ, 24 վառարան-օջախներ, տարբեր տեսակի փուքսեր, հարստացնող գործարաններ, աղյուսների մնացորդներ՝ ոսկորից և կավից թրծված, ֆոսֆորի բարձր պարունակությամբ, որն արագացրել է արտադրության ընթացքը: Մեծամորում արտադրվելիս են եղել 14 տեսակի՝ բրոնզից, պղնձից, արճիճից, ցինկից, արսենից պատրաստված իրեր, իսկ ավելի ուշ ժամանակաշրջանում արտադրվել են նաև երկաթ, ոսկի, ապակի և ներկեր: Խեցեգործական իրերի ջնարակումը այնպիսի բարձր մակարդակի է հասած եղել, որ մինչև օրս զարմանք է հարուցում»** [40]:*

Նոր ուսումնասիրությունները հետզհետե սկսեցին փոխել գիտական աշխարհի կարծիքը, և հետագա հայտնագործությունները հանգեցրին այն համոզմանը, որ մետաղամշակումը Հայաստանը չի ներմուծել, այլ ինքնուրույն է զարգացրել.

***«Հնագիտական վերջին հայտնաբերումների ու էնեոլիթյան նյութերի ուսումնասիրության տվյալները վկայում են՝ Հայաստանում հին, ինքնուրույն մետաղամշակման առկայության մասին: Հայաստանի մետաղամշակման զարգացումը, որպես պատմական օրինաչափ երևույթ, սերտորեն կապված է Հայաստանի մշակույթի ընդհանուր զարգացման հետ, ինչպես նաև՝ Հայաստանում պղնձահանքային շրջանների գոյության հետ»** [41]:*

Մի շարք կարևոր նախադրյալներ մղում էին, որպեսզի Հայաստանը մշտապես գտնվեր հետաքրքրության կենտրոնում: Դրանք նախ և առաջ Աստվածաշնչյան տեղեկություններն էին՝ նախասկզբնական և հետջրհեղեղյան մետաղագործության վերաբերյալ, ապա պատմական փաստերը, ըստ որոնց՝ Հայկ

---

[40] Վրբան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան, 1989թ., էջ 143,144:

[41] Ս. Ա. Սարդարյան... էջ 164:

նահապետի օրոք զարգացում էին ապրում շատ ոլորտներ, որոնց թվում՝ նաև մետաղագործությունը։

Դրա զարգացման ամենակարևոր գործոններից էր այն, որ Հայկական լեռնաշխարհը չափազանց հարուստ էր օգտակար հանածոներով, իսկ բնակլիմայական պայմանները նպաստավոր էին հանքարդյունաբերության համար։

Հնագույն ժամանակաշրջանում Արարատյան երկիրն աննախընթաց վերելք է ապրել, և զարգացման բարձր մակարդակի վրա են եղել հատկապես մետաղահանությունն ու դրանց մշակումը։ Մեծամորից զատ՝ դա են վկայում նաև մեծ թվով այլ նորահայտ գտածոներ.

«Մետաղաձուլման հնոցի մնացորդներ են հայտնաբերվել Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիում, Արմավիրում։ Գյումրիում պեղվել է ուշբրոնզեդարյան արհեստանոց։ Հնոցի մնացորդներ են պեղվել Լճաշենում։ Հետաքրքիր է Ախթալայի հանքահորի մոտ հայտնաբերված վառարանը։ Այն վառ պատկերացում է տալիս մետաղի ստացման առաջին փուլի մասին։ Վառարանը կառուցել են անմշակ քարերից, և եղել է քառանկյունաձև։ Քարե այդ արկղի մեջ շերտ առ շերտ դրել են բոխու փայտը և բռունցքաչափ հանքաքարի կտորներ։ Վառելափայտն այրվելով՝ հալեցրել է պղնձի հանքաքարը։

Իսկ ինչպե՞ս են պատրաստվել Մեծամորում, Լճաշենում, Լոռի բերդում, Հայաստանի զանազան շրջաններում գտնված բրոնզե հիասքանչ արձանիկները՝ եղջերուներ, ցուլեր, թռչուններ, մարտակառքեր և տարբեր նրբագեղ քանդակներ։ Մեր հին վարպետներն օգտվել են ձուլման մեկ այլ՝ ավելի բարդ ու մեծ հմտություն պահանջող եղանակից։ Այդ դեպքում արդեն մետաղագործի ջանքերը զուգորդվել են նրբաճաշակ արվեստագետի ստեղծագործական որոնումների հետ»[42]։

Այսօր էլ Հայաստանն իր տարատեսակ մետաղների հանքերով գրավում է աշխարհի գործարարների ուշադրությունը։

«Հայկական լեռնաշղթայի եզակի երկրաբանական կառուցվածքը բացատրվում է այնտեղի արտասովոր հարստությամբ՝ հանքերի, մետաղի հանքաքարերի, ինչպես նաև արդյունաբերական աշխատանքների համար պիտանի շինարարական քարերի մեծ ընտրանիով։ Հրահեղուկ մագմայի տարբեր շերտավորումները, որ առաջացել են տարբեր դարաշրջաններում, պատճառ են այն բանի, որ Հայաստանը հարուստ է պղնձի, մոլիբդենի, ալյումինի, արճիճի, ցինկի, սնդիկի, ոսկու, արծաթի, երկաթի, քրոմի և այլ մետաղների հանքերով, ինչպես նաև կվարցով, ազբեստով և ամենատարբեր հրակայուն և այլ օգտակար հատկություններ ունեցող հանքանյութերով»[43]։

Հայաստանում մետաղի արդյունաբերությունը ժամանակին այնքան է զարգացել, որ տարբեր երկրներ է արտահանել և՛ մետաղի հումք, և՛ մետաղյա պատրաստի պարագաներ։ Հարևան երկրները նույնիսկ ասպատակում էին Հայաստանը՝ հատկապես տարատեսակ մետաղներ կողոպտելու նպատակով.

---

[42] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 78:

[43] Дэвид Лэнг, “Армяненарод-созидатель”, Москва, 2004г., ст. 18.

«Երկրի տարածքում մինչև օրս պահպանված են ավելի քան 600 հին ձուլարաններ և հանքանյութի մշակման արհեստանոցներ: Իսկ մետաղի արտադրությունն այնքան պատկառելի չափեր է ունեցել, որ Սարգոն երկրորդը մ.թ.ա. 714թ. իր նվաճումների ժամանակ միայն մի քաղաքից՝ Մուսասիրից, հափշտակում և տանում է երկու տոննա ոսկի, տասը տոննա արծաթ և հարյուրավոր կառքերով ամենաայլազան բրոնզե իրեր»[44]:

Մետաղագործական հնավայրեր են հայտնաբերվել ոչ միայն Հայաստանի Հանրապետության տարածքում, այլև Հայկական լեռնաշխարհի այլ վայրերում, որոնցից առանձնահատուկ գիտական արժեք են ներկայացնում Նախիջևանի Գյուլ տեպեն և ներկայիս Թուրքիայի տարածքում՝ Տիգրիս գետի ակունքների մոտ գտնվող Չայոնյու թեփեզի տեղանքը, ինչն ընդամեն 400 կմ հեռավորության վրա է գտնվում Հայաստանի Հանրապետության առկա սահմանից: Մետաղագործական այդ հնավայրը, ըստ ռադիոածխածնային հետազոտությունների, գոյություն է ունեցել մ.թ.ա. 8 - 7 հազարամյակներում՝ մինչչրհեղեղյան շրջանում:

Նման հնության մետաղագործական հնավայր չի հայտնաբերվել աշխարհի և ոչ մի այլ վայրում:

Այդ ժամանակաշրջանի և հետջրհեղեղյան մետաղագործության մասին տեղեկանում ենք Աստվածաշունչ մատյանից:

Սուրբգրային տեղեկությունն է առաջին և ամենակարևոր վկայությունը Հայաստանի մետաղագործական կենտրոն լինելու մասին: Նախ, ըստ Սուրբ Գրքի, դեռ Ջրհեղեղից առաջ արդեն գործածության մեջ է մտել ոչ միայն պղինձը, այլև երկաթը, ինչը Ջրհեղեղից հետո՝ մ.թ.ա առաջին հազարամյակի սկզբին է միայն տարածում գտել: Ջրհեղեղից առաջ Կայենի սերնդից Թոբելն է եղել (Թոբելկայենը) առաջին մետաղագործը: Իսկ Կայենի սերունդները բնակվում էին Հայկական լեռնաշխարհի արևելյան կողմում.

«Աստվածաշնչում շարադրված եդեմական ծննդաբանության մեջ վկայվում է, որ Կայենի նախաթոռը՝ Թոբելկայենը, դարձավ բոլոր դարբինների նախահայրը, ով «պղնձի և երկաթի հմուտ դարբին էր» (Մննդ. 4:22): Նաև հենց Նոյի ու նրա սերունդների պատմությունն, անշուշտ, սերտորեն կապված է եդեմի և Արարատի հետ: Ինչպես մենք գիտենք, Թոբելկայենի սերունդը սերվել է Ուրմիա լճի մոտակայքի հյուսիսային լեռնոտ շրջաններից՝ այսինքն, Հայաստանի սրտից:

Այստեղ հնագիտությունն ու ավանդությունը լիովին համամիտ են միմյանց հետ այն բանում, որ Հայաստանը՝ եդեմը, եղել է այն վայրում, որտեղ առաջինն է ծագել մետաղամշակման արհեստը»[45]:

Տեսնում ենք, որ մետաղագործությունը առաջացել է հենց Հայկական լեռնաշխարհի տարածքում և այն էլ՝ մինչ Ջրհեղեղը: Հետաքրքիր է, որ հետջրհեղեղյան մետաղագործությունն արդեն կապված է ոչ թե Կայենի, այլ Նոյի որդի Հաբեթի սերունդներից Թոբելի և Մոսոքի անվան հետ.

---

[44] Վրթան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան, 1989թ.,, էջ 76:

[45] Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли…”, Москва, 2005. ст. 83-84.

*«Բոլոր դարբինների հայրը» անվանվել է երկակի անվամբ՝ Թոբել-Կայեն. Այսինքն՝ Թոբել-դարբին։ Թոբել ազգը հիշատակվում է Աստվածաշնչում Հաբեթի որդիների ցուցակում՝ Մոսոք ազգի կողքին։ Թոբել և Մոսոք ժողովուրդները միևնույն շարքում հիշատակվում են իսրայելյան մարգարեների գրքերում (Ըզեկիել 27։13. 38։2,3. 39)։ Նրանք նույնացվում են Արևելյան և Կենտրոնական Անատոլիայի ժողովուրդների (կամ երկրների) հետ, որոնք հանդես էին գալիս մ.թ.ա. 1-ին հազարամյակի առաջին կեսին՝ որպես Թաբալ և Մուշկեր։ Թվարկելով պարսիկներին ենթակա Փոքր Ասիայի ժողովուրդներին՝ Հերոդոտը նույն շարքում հիշատակում է նաև տիբերաններին և մոսքերին, որոնք ավելի հավանական է, որ նույն Թաբալը և Մուշկերն են կամ Աստվածաշնչյան Թոբելը և Մոսոքը։ Մուշկերը կամ մեսխերը (մոսխերը) վերեփրատյան հայերի ասորական և համապատասխանաբար վրացական անվանումներն են (*История Древного Востока. М., *2002,* с. *674* – ред.*)։ «Թաբալը» ըստ ասորական ժամանակագրության՝ գտնվում է Արևելյան Անատոլիայի մետալուրգիական հնագույն օջախում»* [46]*։*

Գիտնականներից ոմանք ուղղակիորեն չեն նշում Հայաստան անունը, այլ մետաղագործության նախնական՝ առաջին կենտրոնի մասին խոսելիս՝ շեշտը դնում են Անդրկովկասի վրա։ Բնական է, որ եթե բուն կենտրոնը Հայաստանում էր, ապա առաջին հերթին նրա բարիքներից պետք է օգտվեին մերձավոր հարևանները։ Դա է պատճառը, որ Հայաստանին սահմանակից անդրկովկասյան այլ տարածքներում էլ հայտնաբերվել են վաղ շրջանին հատուկ հնագիտական հուշարձաններ, որոնցում առկա են եղել պղնձե և բրոնզե իրեր։

«Ֆրենկֆորտը, որպես համաշխարհային մետաղագործության նախնական կենտրոն, մատնացույց էր անում է Անդրկովկասը» [47]*։*

Հենց բուն Հայաստանի տարածքն է մետաղագործության հայրենիքը, քանզի բազմաթիվ են ապացույցները, որոնք հաստատում են, որ մինչ Ջրհեղեղ և Ջրհեղեղից հետո մետաղագործությունը առաջացել և տարածվել է մեր հայրենիքից։

Ե.Ն. Չերնիխը գրում է, որ առայժմ, որպես մետաղագործության հայրենիք, Հայաստանից (Անատոլիա, Տավրոս) ավելի հավանական թեկնածու չկա.

«Չէ՞ որ հենց նրանք են առայժմ կրում առաջնության պսակը» [48]*, - գրում է նա։*

Հարկ է՝ ի նկատի ունենալ, որ մետաղագործությունը զարգացել է երեք հիմնական փուլով։

Գործածության մեջ մտած առաջին մետաղը պղինձն էր, ինչի համար էլ այդ ժամանակաշրջանն անվանվեց «պղնձե դար»։

Նրան հաջորդեց բրոնզը, և ժամանակահատվածն ստացավ «բրոնզե դար» անունը։

Երրորդը ավելի ուշ հայտնված երկաթն էր։ Այդ շրջափուլն էլ կոչվեց «երկաթե դար»։

Մետաղագործության հայրենիք ասվածը կարծես հարաբերական հասկա-

---

[46] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

[47] Е. Н. Черных, Металл – человек – время, изд. “Наука” Москва 1972, ст.17.

[48] Նույն տեղում, ст. 28.

ցություն է: Հնարավոր է՝ մի երկիր լինի մի մետաղի հայրենիք, մյուսը՝ մեկ ուրիշի: Սակայն մետաղագործության հայրենիք կարող է կոչվել միայն այն երկիրը, որտեղ սկսվել է այս երեք մետաղների արդյունահանումը:

Այժմ տեսնենք թե ինչքանով է «մետաղագործության հայրենիք» անվանումը համապատասխանում Հայաստանին:

Պղնձի դար

«Ե՞րբ և որտե՞ղ է եղել պղնձի առաջին մշակված սուր կտորը և կամ ուլունգահատիկներով ոչ մեծ շարանը ձեռքին՝ մեր երկրի բնակիչը: Ո՞վ էր այն մարդը, որն առաջինը հղացավ մետաղագործությունը: Օ. Լերին հավաստիացնում է, որ նախահայտնագործողի պատիվը պատկանում է Արարատ լեռան շուրջը ապրող արմենոիդ ռասային»[49]:

Ջրհեղեղից հետո մարդկության արագ բազմացման և աշխարհով մեկ ցրվելու պատճառով ոչ բոլորը կարողացան միանգամից յուրացնել մետաղների մշակման բարդություններն ու նրբությունները, և շատ ցեղեր դեռ երկար ժամանակ օգտագործում էին քարե, փայտե, ոսկրե գործիքներ ու զենքեր:

Առաջին մետաղը, որը գործածության մեջ մտավ մարդկության պատմության մեջ, պղինձն էր: Հայաստանի տարածքում միևնույն ժամանակ պահպանվել են թե՛ քարի և թե՛ պղնձի օգտագործման հնագույն հետքեր.

«Նյութական մշակույթի հարուստ մնացորդները հիմք են տալիս ընդհանուր գծերով բնութագրելու Հայաստանի տերիտորիայում մարդկային հասարակության զարգացման բոլոր աստիճանները:

Հայաստանի՝ քարի և պղնձի դարերի մշակույթի մնացորդները թույլ են տալիս լրիվ բնութագրելու ոչ միայն հին, միջին և նոր քարի դարերի, այլև պղնձի դարի ամբողջ ժամանակաշրջանը»[50]:

Գիտենք, որ Հայաստանը, լինելով լեռնային երկիր, հարուստ է նաև տարբեր քարատեսակներով: Քարը ոչ միայն սեփական կարիքների համար էր օգտագործվում, այլև արտահանվում էր հարևան՝ հատկապես հարթավայրային երկրներ, որոնք աղքատ էին քարերից: Այդ երկրների համար առավել նախընտրելի էր հրաբխային ապակին՝ օբսիդիանը, որը լայնորեն օգտագործվում էր զինագործության և կենցաղային կտրող գործիքների պատրաստման մեջ.

«Հայկական լեռնաշխարհում քարի մշակման ավանդույթը շատ հին է: Այն սկիզբ է առել դեռևս պալեոլիթից: Քարե գործիքները երկար ժամանակ լայն կիրառություն են ունեցել տնտեսության տարբեր ճյուղերում, կենցաղում, և իրենց նշանակությունը վերջնականապես կորցրել են երկաթի դարաշրջանում:

---

[49] Նույն տեղում, ст. 16.

[50] Ս. Ա. Սարդարյան... էջ 259:

Ինչպես հնագիտական նյութերն են ապացուցում, վաղ բրոնզեդարում տեղաբնիկ վարպետները ծանոթ են եղել տարատեսակ քարերի մշակման տեխնիկային: Քարամշակման համար հումք են ծառայել Հայկական լեռնաշխարհի հրաբխային ծագում ունեցող լեռնաշղթաները, որոնք արտակարգ հարուստ են քարատեսակներով: Հայտնի է, որ դեռևս հնագույն ժամանակներից սկսած՝ որոշ քարատեսակներ նաև արտահանվել են:

Ծակ դը Մորգանը ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհի՝ հատկապես Արագածի օբսիդաքարի տեղային յուրահատկությունները՝ գտնում է, որ, սկսած պալեոլիթյան դարաշրջանից, այն արտահանվել է Առաջավոր Ասիայի ոչ հրաբխային շրջաններ և մեծ զանգվածով հայտնաբերվում է Լուրիստանի, Էլամի, Շումերի, ինչպես նաև Կովկասի էնեոլիթյան շերտերում» [51]:

Վերջերս որոշ Արևմտյան գիտնականներ հայտարարեցին, որ մարդկությունը առաջացել է Աֆրիկա մայր ցամաքից, քանի որ այնտեղ են հայտնաբերվել ամենահին քարե գործիքները, որոնք պատրաստված են եղել այնպիսի եղանակով, որ հատուկ է արդեն զարգացած մարդուն: Դրանք ուրիշ ոչ մի տեղ չեն հայտնաբերվել: Իհարկե, սրանք էվոլյուցիայի համար մերժելի մոտեցումներ են, սակայն նույնիսկ այս դեպքում, ըստ վերջերս Հայաստանի Հրազդանի կիրճում հայտնաբերված քարե գործիքների գտածոյի, ապացուցվում է, որ լինելով նույն հնության՝ դրանք շատ ավելի բարձր տեխնոլոգիայով են պատրաստված:

Հրազդանի կիրճի պեղումներին մասնակցում էին ոչ միայն հայ, այլև օտարերկրյա մասնագետներ՝ Քենտուկի համալսարանի պրոֆեսոր, անվանի հնագետ Դեն Ադլերովի ղեկավարությամբ:

Այդ պեղումները Սուրբ Գրքի իրողությունները նորից հաստատում են՝ մարդկության բնօրրանը տեսնելով Հայոց աշխարհում, այլ ոչ թե Սև մայրցամաքում, ինչը ջանում են ապացուցել Արևմտյան հետազոտողներից ոմանք:

Եվ այսպես, անցնելով բուն նյութին՝ տեսնում ենք, որ երբ մետաղը մտավ գործածության մեջ, քարը շատ ոլորտներում հետզհետե իր դիրքերը զիջեց, իսկ մարդկության զարգացումն սկսեց կտրուկ վերելք ապրել.

«Պղինձը կարևոր դեր է խաղացել մարդկային մշակույթի պատմության մեջ. այն սկիզբ դրեց մետաղի դարաշրջանին, թույլ տվեց մարդուն՝ ազատվել քարե դարի գրկից: Պղինձն առաջին մետաղն էր, որ մարդը հալեցրեց հանքաքարից՝ դրանով դնելով մետաղագործության հիմքը: Իր ձեռքն առնելով մետաղը՝ մարդկությունն սկսեց զարգանալ անհամեմատ արագ, քան քարե դարում: Դժվար է նշել մարդու համար մի այլ մեծ և երևելի հայտնագործություն, որը կարելի լիներ համեմատել մետաղագործության գյուտի հետ» [52]:

Պղինձը կենցաղական առարկաների օգտագործման մեջ իր առավելություններն ուներ քարի համեմատ, սակայն ամրության և դիմացկանության տեսակետից այն զիջում էր քարին: Քանի որ Հայաստանում այդ երկու նյութերի

---

[51] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967, էջ 84, 85:

[52] Карл Бакс. (И. Немков) Богатства земных недр. Москва. Из. “Прогресс”. 1986, ст. 27.

պաշարներն առատ էին, ապա երկուսն էլ միաժամանակ օգտագործվում և արտահանվում էին:

«Պղնձի առաջին մշակումը, հավանաբար, ծագել է պղնձահանքերով հարուստ վայրերում՝ Փոքր Ասիայում, Հայկական լեռնաշխարհում: Պղնձի օգտագործումը Հայաստանի հնագույն բնակչին հայտնի էր դեռևս մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից»[53]*:*

Կա տեսակետ, որ պղինձը գործածության մեջ է մտել մոտ 10000 տարի առաջ: Սակայն մարդկության գոյությունը, ըստ Սուրբ Գրքի, մոտ 7000 տարի է: Եթե հայտնաբերված պղնձե իրերը իսկապես այդքան հին են, ուրեմն, դրանք մինչջրհեղեղյան մարդկության թողած հետքերն են:

«Ասենք՝ ուզենան, թե չուզենան գիտենալ, փաստը մնում է փաստ: Զայոնու թեփեսի մոտ գտնված պղնձե իրերը, իրենց հումքով հանդերձ, ցույց են տալիս, որ տակավին տասը հազար տարի առաջ այդ վայրերի արմենոիդին ծանոթ է եղել պղինձ ձուլելու բարդ պրոցեսը» [54]*:*

Հազարամյակների այդ շռայլումը վիճելի է, քանի որ Մեծ Հայքի տարածքում ընկած նույն հուշարձանի՝ Զայոնու թեփեսի տարիքի մասին կան նաև այլ կարծիքներ: Ածխածնային մեթոդով տարիքի որոշումը միշտ չէ, որ մեծ ճշգրտություն է ապահովում. և այդ հուշարձանը, որ գտնվում է Տիգրիս գետի ակունքների մոտ՝ Խարբերդի հովտում, ըստ գտածոների ուսումնասիրման արդյունքների, պատկանում է Ք. ա. 8 – 7-րդ հազարամյակներին, որն ավելի համապատասխան է Սուրբ Գրքի տված տեղեկությանը:

Պղնձարդյունաբերության հետ կապված առավել արժեքավոր նյութեր հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի հետջրհեղեղյան հնավայրերում: Պղնձահանքեր Հայաստանում ներկայումս էլ կան: Սակայն հետաքրքիրն այն է, որ մինչ օրս պահպանվել են նաև այնպիսի պղնձահանքեր, որոնց շահագործումն սկսվել է դեռ 5000 տարի առաջ.

«Ե. Ն. Զեռնիխը ենթադրում է, որ Հայաստանում Ղափանի պղնձի հանքավայրերի հնարավոր շահագործման սկիզբը դրվել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակում»[55]*:*

Ուսումնասիրող հնագետները պղնձի հայրենիքի մասին տարբեր մոտեցումներ հայտնելուց հետո ի վերջո ձևավորել են մի ընդհանուր կարծիք. առաջնությունը տրվել է Հայաստանին.

«Հայկական լեռնաշխարհում հայտնաբերվել են ամենահին պղնձե գործիքները՝ պատրաստված մոտավորապես 3300 թ. մ.թ.ա.: Այստեղ երկու հազար տարի մեր թվարկությունից առաջ շահագործվում էին առաջին պղնձահանքերը: Այդպիսով, առկա են փաստեր, որոնք թույլ են տալիս ենթադրել, որ պղնձաքարի հանքափորային այրվածքը և նրա վերահալումը առաջին անգամ օգտագործվել են պղնձե հանքաքարով հարուստ շրջանում ընկած Կովկասի լեռ-

---

53 Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 164, 165:

54 Վրթան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան, 1989 թ., էջ 74:

55 Р. М. Мунчаев, Кавказ назаре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975, ст. 403.

նաշղթայի հարավ-արևմուտքում, այլ ոչ Իսպանիայում, որտեղ հայտնաբերվել են հանքագործության հնագույն հետքեր»[56]:

Հավանաբար, Ջրհեղեղից հետո մինչջրհեղեղյան շատ գաղտնիքներ, որոնց մեջ և մետաղագործության արհեստը, պահպանվել են Հայկական Լեռնաշխարհում, որտեղ բնակվում էին Նոյ և Հայկ նահապետները:

Նման ձեռքբերումները չէին կարող պարփակվել Արարատյան երկրի սահմաններում: Պատրաստի առարկաների հետ մետաղական հումք և մշակման միջոցներ էին արտահանվում դրանց կարիքն ունեցող երկրներ.

«Հայկական լեռնաշխարհը արդեն մ. թ. ա. 3-րդ հազարամյակում դառնում է մետալուրգիայի հզոր օջախ՝ փոխանակման կարգով Հին Արևելքի երկրներին մատակարարելով իր պղինձը»[57]:

Պղնձի տարածումը

Հայերը հաճախ երկար ճանապարհ էին կտրում՝ տարբեր երկրներում պղնձի արդյունաբերություն հիմնելու նպատակով, որպեսզի այդ վայրերի բնակիչները, ծանոթանալով մետաղագործական արհեստի հմտությանն ու պղնձի օգտակարությանը, փոխանակեին իրենց ապրանքները կամ հումք գնեին պղնձի պաշարներով հարուստ Հայաստանից.

«Հայաստանը պղնձի արդյունահանման հիմնական կենտրոնն էր, որտեղից 3-րդ հազարամյակում մ.թ.ա. Միջագետքի ցեղերի մոտ է թափանցել մետաղը (պղինձը): Այդ պղնձից 3-րդ հազարամյակում մ.թ.ա. գործիքներ էին պատրաստում Միջագետքի և Առաջավոր Ասիայի տարբեր շրջաններում:

Որոշ հնագիտական հայտնագործություններ խոսում են Հայաստանի և Միջագետքի միջև եղած կապերի մասին. դրանք ցայտուն կերպով երևան են գալիս պղնձե գործիքների և զարդերի ձևերի նմանության մեջ: Առաջավոր Ասիայի կենտրոնների հետ Հայաստանի էնեոլիթի կապը ակնհայտ է դառնում Շենգավիթի դամբարաններից հանված նյութերով» [58]:

Վերոհիշյալ առաքելությամբ հայերը իջել են ոչ միայն Միջագետքի երկրներ, այլև հասել են հեռավոր Եգիպտոս և նրա բնակիչներին նույպես սովորեցրել են մետաղամշակման արհեստը.

«Պղինձ մետաղի առկայությունը մեզ ուղղում է դեպի հյուսիսային լեռնային շրջաններ՝ դեպի Անատոլիա, Հայաստան, Անդրկովկաս, որոնք, ըստ մեր ենթադրության, ծառայել են որպես մետաղամշակման բնօրրան:

Լեռներից իջած ժողովուրդները ջրից ազատվելուց հետո՝ առանց դանդաղելու զբաղեցրին Քաղդեաստանը. նրանք իրենց հետ բերեցին պղինձը, որի հետ ծանոթությունը փոխանցեցին Եգիպտոսին: Որտեղի՞ց էին սերվել նրանք:

---

[56] Карл Бакс. Богатства земных недр. Москва. Из. “Прогресс”. 1986, ст. 95.

[57] К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа, Ленинград 1970г., изд. “Наука”, ст.136.

[58] Ս. Ա. Սարդարյան... էջ 166, 167:

Իհարկե՝ ոչ Իրանական բարձրավանդակից, որն այդ ժամանակաշրջանում անմարդաբնակ էր, և ոչ էլ Անդրկովկասից. հնարավոր է, որ նրանք իջել էին Հայաստանի լեռներից» [59]:

Գիտական աշխարհում ամենալուրջ հնագետների կայուն կարծիքն է, որ Միջագետքի երկրներ և Եգիպտոս պղինձը ներմուծվել է Հայաստանից.

«Այն հարցը, թե որտեղի՞ց է եկել պղնձի և բրոնզի գործածությունը, վաղուց գրավել է հնագետների ուշադրությունը: Համեմատաբար առավել զարգացած քաղաքակրթություններ՝ շումերները, եգիպտացիները և բաբելացիները, սկսած մ.թ.ա. 5-րդ հազարամյակից, օգտագործել են պղինձը՝ իր մաքուր վիճակով: Սակայն Հարավային Իրաքում, Սիրիայում և Եգիպտոսում պղնձի հանածոների բավականաչափ բնական պաշարներ չկային: Ենթադրվում է, որ այն բերվել է հյուսիսից՝ Հայաստանից: Այս խնդրով հատուկ զբաղվեցին Հ. Ֆրենկֆորտը, Վ. Գորդոն Չայլդը և ՈՒ. Ն. Օլբրայտը, ինչպես նաև Ա. Ա. Իեսսենը: Հին տեխնոլոգիաների բնագավառում փորձագիտության առաջատարներից մեկը՝ Ռ. Ջ. Ֆորբսը, նույնպես իր կողմից ստեղծած մետաղամշակման տեխնոլոգիայի քարտեզում այն տեղադրում է Հայաստանի կենտրոնական վայրերում» [60]:

Որ քաղաքակրթության սկիզբը Եգիպտոսում դրել են Հայկի սերունդները, այնքան էլ զարմանալի չէ: Քանզի դա եզակի երևույթ չէ:

Նախ՝ մենք դեռ կտեսնենք, որ արդեն Ն. Ք. երկրորդ հազարամյակի առաջին կեսին նրանք դարձյալ հայտնվում են Եգիպտոսում (խոսքը վերաբերում է հիքսոսների արշավանքին)՝ նորից իրենց հետ բերելով զենքերի, մարտակառքերի և այլ ոլորտների տեխնոլոգիաներ: Եվ մոտ 150 տարի տիրապետում են Եգիպտոսում:

Հայերի հայտնվելը նախադինաստիական Եգիպտոսում, մինչ բուրգերի կառուցումը, ունի շատ լուրջ հիմնավորումներ: Ըստ Դևիդ Ռոլի՝ այդ դարաշրջանի բազմաթիվ դամբարաններից հայտնաբերված արմենոիդ տիպի գանգերը վկայում են, որ այդ մարդիկ եկել են Հայոց լեռնաշխարհից.

«Գոյություն ունեն հստակ հնագիտական վկայություններ՝ Նեղոսի հովտում Նաքադյան երկրորդ ժամանակաշրջանում օտարերկրացիների հայտնվելու մասին: Այդ եկվորներն իրենց հետ բերեցին նոր տեխնիկական հայտնագործություններ (մասնավորապես զինագործության ոլորտում), իսկ իրենց ննջեցյալներին նրանք հուղարկավորում էին Նեղոսի հովտի Նաքադյան առաջին ժամանակաշրջանի բնակիչներից միանգամայն այլ կերպ: Դամբարաններում գտնված մնացորդների երկու տեսակների մարդաբանական ուսումնասիրությունները միանգամայն կտրուկ տարբերություն են մատնանշում: Մասնավորապես, Նաքադյան երկրորդ ժամանակաշրջանի եկվորներին բնորոշ են արմենոիդական հատկանիշներ» [61]:

Իհարկե, շատ կասկածահարույց կարող էր լինել նման կարծիքը, որ այդ հնագույն ժամանակներում հայերը հայտնվել են Եգիպտոսում, եթե դա եզակի

---

[59] Жакде-Морган, Доисторическое человечество, Москва, 1926г., ст. 117-118.

[60] Девид Лэнг... ст. 70.

[61] Дэвид Рол... ст. 347.

մի բան եղած լիներ: Սակայն, ըստ պատմական հավաստի տեղեկությունների, հայերն են առաջինը ոտք դրել Բրիտանական կղզիներ, նաև մինչ հռոմեացիների կազմավորվելը՝ այդ տարածքներում հիմնել են էտրուսքների քաղաքակրթությունը[62]: Շատ ավելի ուշ՝ մտել են եվրոպական այլ երկրներ՝ մասնավորապես Գերմանիայի տարածք և հիմնել Բավարիան, Իսպանիայում՝ Բասկերի երկիրը, իրենց հետքն են թողել նաև Ֆրանսիայում և այլուր: Զարմանալի չէ, որ նույնիսկ ամերիկյան հնդկացիների արձանագրություններում պատմվում է սպիտակամորթ, մեծ զարգացում ունեցող մարդկանց մասին, որոնք նավարկելով եկել են իրենց երկիր և ծանոթացրել նրանց տարբեր արհեստների և արվեստների: Այդ սպիտակամորթների այցելությունն է հավանաբար պատճառ դարձել, որ նրանց հեռանալուց հետո տեղաբնակներն սկսել են խորհրդավոր եկվորներին նմանվելու ձգտմամբ՝ իրենց գլուխները ձևախեղել՝ դրանց տալով արմենոիդ ձև: Առանց բացառության՝ բոլոր երկրներում, որտեղ հայտնվում էին Հայկական լեռնաշխարհից եկած մարդիկ, իրենց օգտակար գործունեության շնորհիվ արժանանում էին հարգանքի և նույնիսկ մեծարման.

«Հայաստանից և Փոքր Ասիայից մետաղագործության գաղտնիքները և համապատասխան հանքաքարերի հումքը տարածվեցին Սիրիայի և Միջագետքի հարթավայրեր, որտեղ կովկասյան ու անատոլիական ծագում ունեցող հմուտ վարպետները, շնորհիվ իրենց արհեստի, պաշտվում էին այդ հարթավայրային շրջանների բնակիչների կողմից՝ որպես անդրաշխարհային մոգական ուժի կրողներ»[63]:

Հայաստանից պատրաստի պղնձե ապրանքներ և հումք արտահանվել են հին աշխարհի հարավում և արևմուտքում գտնվող այլ երկրներ ևս: Հայերն անցնելով հյուսիսային երկրներ՝ այնտեղի բնակիչներին նույնպես ծանոթացրել են նոր տեխնոլոգիաներին և առևտրական կապեր են հաստատել նրանց հետ.

«Կովկասի և ավելի հյուսիսային շրջանների հնագիտական հուշարձաններով զբաղվող հեղինակներից հարկ է՝ առանձնացնել Ռոստովցեվին և Տալգերնին: Նրանցից առաջինը Հյուսիսային Կովկասի պղնձե դարի մասին իր աշխատությունում այն համոզմունքն է հայտնում, որ մ. թ. ա. 3-րդ հազարամյակում ինչպես Հյուսիսային Կովկասը, այնպես էլ Միջագետքը մատակարարվում էին պղնձով և արծաթով՝ Անդրկովկասի հանքերից, այստեղից էլ պղինձը տարածվում էր դեպի հյուսիս և տափաստանային շրջաններ: Ա. Մ. Տալգերնը նաև համոզված է, որ Կովկասը և Հայաստանը պղինձ էին մատակարարում ասորեստանցիներին և քետերին, իսկ ավելի ուշ՝ հույներին. պղնձեդարյան կուբանյան մշակույթը ևս մետաղը ստանում էր Անդրկովկասից»[64]:

Եվրոպական երկրներում հայտնաբերված հինավուրց քաղաքակրթությանը հնագետները տվեցին «զանգականման գավաթների մշակույթ» անվանումը,

---

62 Армянское происхождение этрусков, Роберт Эллис, Лондон, 1861.

63 Девид Лэнг... ст. 71.

64 А. А. Иессен Б. Е. Деген-Ковалевский “Изистории древней металлургии Кавказа”, изд.Огиз, Ленинград 1935г.,ст. 20.

քանի որ պղնձե առարկաների հետ միասին հայտնաբերվում էին զանգականման խեցեղեն գավաթներ և այլ անոթներ, որոնք տեղական բնույթ չեն ունեցել: Դրանք ներմուծվել են այդ վայրերին օտար մարդկանց կողմից, որոնք նույնպես պատկանել են արմենոիդ մարդաբանական տեսակին.

«Ամենավառ փաստերից մեկը, որը վկայում է արմենոիդների ունեցած կապի մասին հնագույն մետաղագործության հետ, անցած դարում հնագետների հայտնաբերած մշակույթներն են, որ անգլերեն անվանվում է «Beaker People», իսկ ռուսական հնագիտական գրականության մեջ՝ «զանգականման գավաթների մշակույթ»: Իսկ մենք հետագայում կօգտվենք «գավաթով մարդկանց մշակույթ» տերմինից: Հաստատված է, որ մոտավորապես մ. թ. ա. 2 500 -2 300 թ.թ. Արևմտյան և կենտրոնական Եվրոպայի հսկայական տարածքներում (ներկայիս Իսպանիայի, Ֆրանսիայի, Անգլիայի, Հյուսիսային Իտալիայի, Գերմանիայի, Հունգարիայի, Չեխիայի) տարածվել է բավականին միասեռ մետաղական մշակույթ... Կենտրոնական և Արևմտյան Եվրոպայում պղնձի տարածումը կապում են այդ «գավաթով մարդկանց» մշակույթի հետ: «Գավաթով մարդկանց» մշակույթի հայտնաբերումը այն հազվագյուտ դեպքերից է, երբ հնագետներին հաջողվեց բացահայտել ոչ միայն նոր մշակույթի նշանների տարածումը, այլև այդ մշակույթն ուղեկցող մարդկանց մարդաբանական այլ տեսակը, որոնցում դժվար է չտեսնել այդ մշակույթի ուղեկցորդներ: «Գավաթով մարդկանց» մարդաբանական տեսակը հիմնականում արմենոիդական է:

«Գավաթով մարդկանց» մշակույթին մոտ է այսպես կոչված «դամբարանային մշակույթը»՝ ԽՍՀՄ – ի հարավեվրոպական կողմում՝ թվագրված մոտավորապես 2 600 - 2300 թվականները՝ մ. թ. ա.: Այստեղ նույնպես գրանցվում է մետաղագործության ներխուժում՝ արմենոիդների հետ միասին»[65]:

Սակայն քանի որ պղինձը փափուկ էր, այն ամեն տեղ հնարավոր չէր օգտագործել: Անհրաժեշտություն էր զգացվում՝ առավել ամուր մետաղ ստանալ.

«Հայաստանի և Անդրկովկասի էնոլիթյան հիանալի հուշարձանների պեղումները տվեցին պարզ մետաղական արտադրանքի առաջին նմուշները. պղնձե - քարե դարին պատկանող, սառը կռման եղանակով պատրաստված պղինձ՝ մետաղամշակման ակունքներից: Սակայն ինչպես ցույց տվեցին Շենգավիթյան բնակավայրերի պեղումները, մ.թ.ա. երրորդ հազարամյակի կեսերին մետաղների մշակման գործում արդեն հասել էին երևելի արդյունքների: Պղնձի սառը կռումը տեղը զիջեց ձուլմանը և քարե կամ կավե կաղապարի մեջ լցմանը: Այս վիթխարի տեխնիկական թռիչքը սկիզբ դրեց հին բրոնզե շրջանի մետաղագործության իսկական զարգացման»[66]:

Հետագա զարգացումների արդյունքում, արդեն ն. Ք. երկրորդ հազարամյակի սկզբին, Հայաստանի մետաղագործներին հաջողվեց ավելի ամուր մետաղ ստանալ.

«Այսպիսով, Հայաստանում վաղ մետաղի՝ պղնձի յուրացման համար ամե-

---

[65] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

[66] А. Мартиросян. Армения в эпохубронзы и раннегожелеза. Ереван 1964. ст.25.

նահավանական թիվը, որն ընդգրկում է մեծ ժամանակամիջոց, պետք է համարել մ.թ.ա. 4-րդ հազարամյակի վերջից մինչև 2-րդ հազարամյակի սկիզբ:

Հայկական լեռնաշխարհի էնեոլիթը, որպես պատմական փուլ, ավարտում է Հայաստանում նոր քարի դարի ժամանակաշրջանը և նախորդում է բրոնզե դարին»[67]:

Բրոնզի դար

«Ենթադրվում է, որ այս թանկարժեք հանածոյի (մալաքիտի) հանքավայրը և առաջին մշակումը եղել են Հայաստանում մ.թ.ա. III հազարամյակի սկզբում: Այդ բարգավաճ շրջանի հովիտներում և բարձրավանդակներում է եղել վաղբրոնզեդարյան շրջանի Քուռարաքսյան զարգացած մշակույթը (Արաքսը, ինչպես գիտենք, Աստվածաշնչյան Գեհոնն է): Տեղական ցեղերի արհեստավորներն ու բանվորները... հանդես էին գալիս որպես մետաղագործության հնարողներ, որոնք սովորել էին ձուլել պղինձն ու անագը և նման ձևով ստեղծել առաջին բրոնզե սպասքներն ու զենքերը»[68]:

Բրոնզը, ի տարբերության պղնձի, բնության մեջ գոյություն չունի: Այն պղնձի հետ խառնած անագի կամ արճիճի, արսենի և այլ նյութերի համաձուլվածք է: Պղինձը կարծրացնելու ուղղությամբ տարվող աշխատանքներում Հայաստանի մետաղագործները հասնում են մեծ հաջողությունների. փորձառությունը և համապատասխան նյութերի առկայությունը լուրջ նախադրյալներ են ստեղծում բրոնզ ստանալու համար.

«Բրոնզի հայտնագործումը, հավանաբար, կատարվել է հենց այն վայրերում, ուր պղնձի հանքերը մոտ էին այնպիսի հանքատեղերի, որոնք պարունակում էին անագ, մկնդեղ և անտիմոն: Հայաստանը և Վրաստանը երկրներ են, որ նման հայտնագործության համար իդեալական հնարավորություններ ունեն, քանզի այնտեղ պղնձով հարուստ հանքերը գտնվում են անագ, մկնդեղ և անտիմոն պարունակող հանքերի կողքին»[69]:

Սակայն ենթադրություն կա, թե Հայաստանում անագի պաշարները համեմատաբար փոքր են եղել, ինչն էլ կարող էր խոչընդոտ դառնալ բրոնզի ստացմանը:

Եթե կան հնագետներ, որոնց կարծիքով ներկայումս Հայկական լեռնաշխարհը և նրա շրջակա տարածքները հարուստ չեն անագով, դա չի նշանակում, որ հնում էլ այդպես է եղել. դա են վկայում պեղումներից հայտնաբերված պղնձի և անագե խառնուրդով բրոնզե իրերի առատությունը.

«Կովկասում գտել են բազմաթիվ բրոնզե առարկաներ և, ինչպես ցույց տվեցին վերջին հետազոտությունները, մինչև անգամ անագե առարկաներ...

---

[67] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 168:

[68] Дэвид Рол, “Генезис цивилизации: откуда мы произошли…”, Москва, 2005. ст. 83.

[69] ДевидЛэнг, “Армяненарод-созидатель”, Москва, 2004г., ст. 71.

Ս. Ա. Սարդարյանը Երևանում Շենգավիթի պեղումների ժամանակ ականջօղ գտավ, որի 8 տոկոսը անագ էր»[70]:

Այժմ Հայաստանի տարածքում անագի պաշարներ կան Սևանի ավազանում, Հրազդանի և Ստեփանավանի շրջաններում:

Սակայն Հայկական լեռնաշխարհում պղնձին անագ խառնելուց բացի՝ գտել են բրոնզ ստանալու այլ եղանակներ ևս.

«Մեր լեռնաշխարհի մետաղագործ վարպետները պղինձն ամրացնելու այլ գաղտնիքներ ունեին: Նրանք պղնձի հալոցի վրա ավելացրել են զառիկ (արսեն): Եվ այդպես նրանք զառիկային բրոնզ են ստացել՝ մինչև Ք. ա. 4-րդ հազարամյակի վերջը: 4-3-րդ հազարամյակների սահմանագծին Հայկական լեռնաշխարհի մետաղաձուլությունը բուռն ծաղկում է ապրում: Բրոնզե գործիքները, զենքերն ու զարդերն առկա են համարյա բոլոր հնագույն բնակավայրերի մշակութային շերտերում:

Միջին բրոնզեդարում արդեն ստանում էին 5-6 տեսակի համաձուլվածք: Ջճարվող ու ներմուծվող անագին փոխարինում է կապարը, որով հարուստ էին Հայոց լեռները: Հայ երկրաբանների արած քիմիական տարրալուծումները ցույց են տվել, որ մեր նախնիները բրոնզ ձուլելու համար, բացի անագից ու կապարից, օգտագործել են նաև ցինկ, ծարիր (սուրմա) և սրանց տարբեր զուգակցությունները»[71]:

Նման խառնուրդներից ստացված բրոնզի տեսակները տարբեր հատկություններ ունեին, և ամեն մի տեսակն օգտագործվում էր համապատասխան ոլորտում: Բրոնզից պատրաստում էին ոչ միայն աշխատանքային գործիքներ, զենքեր, այլև զարդեր.

«Անտիմոնի խառնուրդով մկնդեղային պղինձը ունի գեղեցիկ արծաթագույն երանգ և յուրահատուկ շողացող փայլ: Անտիմոնյան բրոնզից պատրաստված շողշողուն զարդերը հատուկ են մ.թ. մոտ 2000 տարի առաջվա տիպիկ հայկական դամբարաններին: Մի փոքր ավելի ուշ՝ լայնորեն կիրառության մեջ է մտնում անագեցված բրոնզը (արույրը): Մ.թ.ա. 1500թ. Հայաստանում հաջողությամբ օգտագործում էին մետաղամշակման բազում հնարամիտ մեթոդներ, այդ թվում՝ քանդակադրոշմ (չեկանկա), նաև դարբնում, փորագրում, հատում, փայլեցում և թանկարժեք քարերի տեղադրում»[72]:

Հայաստանի տարածքում պեղված հնագիտական հուշարձաններից հայտնաբերված բրոնզե իրերի հետազոտությունը ցույց տվեց, որ դրանք ավելի քան հինգ հազար տարվա հնություն ունեն. պատրաստվել են Ն. Ք. 4-րդ հազարամյակում:

Դա խոսում է այն մասին, որ Հայաստանի մետաղագործները կանգնած են եղել բրոնզե դարի ակունքներում.

«Մ.թ.ա. 3-րդ հազարամյակում ինտենսիվ մետաղամշակման արդյունաբե-

---

[70] М. А. Кашкай, И. Р. Селимханов, Из истории древней металлургии Кавказа, изд. “Элм”,. Баку, 1973, Ст. 4, 11.

[71] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 77:

[72] Девид Лэнг... ст. 85.

րություն էր ծավալվել Մեծամորում և Արաքսի սարահարթում: Նախիջևանում եղած գտածոների ուսումնասիրությունը ցույց տվեց, որ արդեն մոտ 3 000 տարի մ.թ.ա. տեղաբնակ վարպետները լիովին տիրապետում էին պղնձի և այլ մետաղների խառնման արհեստին, ինչի միջոցով ստանում էին տարբեր տեսակի բրոնզներ. օրինակ՝ Քյուլ թափայի երկրորդ շերտը տվեց բրոնզե առարկաներ, որոնք պարունակում էին մոտ 6 տոկոս մկնդեղի խառնուրդ: Ինչի համար էլ այժմ ընդունված է համարել, որ վաղ բրոնզեդարը Հայաստանում սկսվել է մոտ 3,2 կամ 3 հազար տարի մ.թ.ա.»[73]:

Եվ ուրեմն, ոչ մի անհավանական բան չկա, որ մետաղագործության մեծ ավանդույթների հայրենիքում՝ Հայաստանում են առաջինն ստացել բրոնզե համաձուլվածք.

«Հայկական լեռնաշխարհում մետաղամշակման ամենավաղ տվյալները երևան են գալիս դեռևս մ.թ.ա. IV հազարամյակում, էնեոլիթյան դարաշրջանում: Դրա լավագույն ապացույցներն են Արարատյան դաշտավայրի հնավայրերում՝ Թեղուտում (Ջրվեժի շրջան), Շենգավիթի և Նախիջևանի Քյուլ թափայի առաջին շերտերում, ինչպես նաև Վանա լճի արևելյան ափին՝ Շամիրամալթիի (Տիլկի թեփե) առաջին շերտում հայտնաբերված մետաղյա իրերը: Նախիջևանի Քյուլ թափայի առաջին շերտի մետաղյա իրերի լուսապատկերային վերլուծությունից պարզվում է, որ այդ իրերից երկուսը պատրաստված են մաքուր պղնձից, իսկ մյուս երկուսը՝ մկնդեղային բրոնզից: Մկնդեղային բրոնզից պատրաստված իրեր հայտնաբերվել են նաև Շենգավիթի առաջին շերտում և Թեղուտում»[74]:

Իհարկե, 4-րդ հազարամյակը բրոնզի հայտնագործման վաղ փուլն է եղել, ինչը հետագայում ավելի մեծ զարգացում է ապրել: Դրա համար էլ կան բրոնզե դարի տարբեր շրջաններ՝ վաղ, միջին և ուշ: Դա են վկայում Հայաստանի տարածքում հայտնաբերված տարբեր շրջանների բազմաթիվ ձուլարանները:

Է. Վ. Խանզադյանի ուսումնասիրությունից պարզվել է, որ միայն Մեծամորի ձուլարաններում տասնչորս տեսակի բրոնզ են ստացել:

Հնագետների գտածոները տվյալ ասպարեզում հայ մետաղագործների բարձր վարպետության վկաներն են.

«Միջին և ուշ բրոնզեդարյան շրջանում Հայաստանում կտրուկ բարելավվեց մետաղամշակման աշխատանքների որակը: Լավ հայտնի էր տարբեր ձուլվածքների էությունը, և դա օգտագործվում էր տարբեր ամրության բրոնզե առարկաներ, տարբեր երանգների գույներ և փայլեր պատրաստելու հմտության, իմացության մեջ...

Վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանի վերջում հայ արհեստավորները հրաշալի գիտեին անտիմոնի էությունը և նրա համաձուլումը պղնձի հետ և վարպետորեն տիրապետում էին այդ գիտությանը» [75]:

---

[73] Девид Лэнг... ст. 72.

[74] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 46:

[75] Девид Лэнг... ст. 85.

Հայաստան ժամանած օտարազգի հյուրերը, տպավորված լինելով Հայաստանի հնություններով, իրենց զարմանքն են հանձնել թղթին՝ այն հասու դարձնելով նաև իրենց ընթերցողներին: Այդ հյուրերից էր նաև Խորհրդային ժամանակաշրջանի թաթար գրող Ռամիլ Հաքիմովը.

«Մենք գնում էինք հնագիտական պեղումներից մեկից մյուսը, մի հին քաղաքակրթությունից՝ մյուսը: Սևանի ափին մի հին քաղաք են պեղել, գտել են անտիկ սայլեր և հետաքրքիր այլ առարկաներ: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են կիկլոպյան կառույցների ավերակներ, իսկ դրանց տակ՝ բրոնզի ձուլման հալոցներ: Մի խոսքով՝ մետաղագործական ձեռնարկություն: Լճաշենի պեղումները, ըստ նախնական ենթադրությունների, մեզ տեսակցության են տանում նախքան մեր թվարկության երրորդ հազարամյակի վերջի և երկրորդ հազարամյակի սկզբի հետ:

Իսկ Ջոդում հայտնաբերվել է ավելի վաղ շրջանի՝ չորրորդ հազարամյակի քաղաքակրթություն»[76]:

Բրոնզի տարածումը

Ինչպես պղինձը հայտնաբերվեց Հայոց լեռնաշխարհում և այնուհետև տարածվեց աշխարհով մեկ, նույնը կատարվեց նաև բրոնզի դարաշրջանում:

Եվ նորից առաջինը հարևան Միջագետքի երկրները հաղորդ եղան այդ նորույթին.

«Վաղ բրոնզեդարյան հնավայրերում հայտնաբերված մետաղաձուլությանը վերաբերող բազմաթիվ իրերի ուսումնասիրությունը ցույց է տալիս մի կողմից տեղական մետաղամշակության զարգացման բավականին հասուն մակարդակ, երբ արդեն հսկայական տեխնիկական թռիչք էր կատարվել դեպի իսկական գիտակցված մետաղամշակությունը և մկնդեղային բրոնզների ստացումը, և մյուս կողմից՝ այն անքակտելի աղերսները, որոնցով կապված էին Հայկական լեռնաշխարհին՝ Միջագետքի երկրները՝ մասնավորապես Շումերն ու Ակկադական թագավորությունը»[77]:

Բրոնզեդարի սկիզբը համեմատաբար ավելի ուշ շրջանում դնողները, թափանցելով Իրանի սարահարթ, յուրահատուկ մշակութային հետք են թողել նաև այնտեղ: Այդ մասին խոսում են Իրանի արևմտյան տարածքների պեղումների արդյունքները.

«Իրանական սարահարթում արմենոիդների ամենավաղ հայտնվելը թվագրվում է մ.թ.ա. I-ին հազարամյակի սկզբին: Այսպես կոչված «Սիլակ VI» շատ հարուստ դամբարաններում կտրուկ գերակշռում են արմենոիդական գանգերը... «Սիլակ VI-ի» նյութական մշակույթը նույնացվում է այսպես կոչված «Լուրիստանական բրոնզի» ստեղծողների հետ: Աշխարհի բազմաթիվ թանգարաններում

---

[76] Ռամիլ Հաքիմով, «Զրույց քարի հետ», գիրք II, Երևան 1983թ., էջ 299:

[77] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 75, 76:

ներկայացված «Լուրիստանական բրոնզը» վկայում է մ.թ.ա. առաջին հազարամյակի սկզբին Արևմտյան Իրան այցելած արտասովոր ճարտար մետաղագործների մասին: «Լուրիստանական բրոնզի» ֆանտաստիկ զարդանախշերում հանդիպում են միայն արմենոիդ տիպի մարդկանց պատկերներ»[78]:

Հայկական լեռնաշխարհից եվրոպական երկրներ թափանցած բրոնզե դարաշրջանի մետաղագործների և հանքախույզների զարմանալի գործունեության մասին պահպանվել են հետաքրքրական զրույցներ.

«Ինչպես գրում է պատմաբան Ալեքսանդր Գորբովսկին, Եվրոպայում «բրոնզե առարկաները հայտնվում են հանկարծակի և տարածվում ամենուրեք»: Ռուս մեկ այլ պատմաբան Նիկոլայ Ժիրովը գրում է. «Անբացատրելի է և այն, որ բրոնզե, անգամ ամենաառաջին առարկաներն իրենցից բարձրարվեստ նմուշներ են ներկայացնում. Այսինքն, չի երևում, որ մարդիկ այդ արվեստին տիրապետել են աստիճանաբար: Այն հայտնվում է միանգամից բարձր մակարդակով՝ առանց նախնական փուլի»: Ավելին՝ Եվրոպայի տարածքում հնագետների հայտնաբերած բրոնզե գործիքներն ու զենքերը ապշեցուցիչ նման են միմյանց: Եվ այդ նմանությունն այնքան ակնառու է, որ որոշ հետազոտողների կարծիքով կարելի է մտածել, որ դրանք բոլորը դուրս են եկել մի արհեստանոցից:

Այս փաստերն արդյո՞ք չեն վկայում, որ բրոնզի ձուլման արվեստը Եվրոպայում ոչ թե տեղում է հայտնագործվել, այլ ներմուծված մշակույթի արդյունք է, իսկ արտահանողները Հայկական լեռնաշխարհում՝ հնդեվրոպացիների նախահայրենիքում ապրող ցեղերն են:

Գամկրելիձեն և Իվանովը նշում են. «Հին հնդեվրոպական ցեղերի հետագա տեղաշարժը դեպի արևմուտք, հյուսիս-արևմուտք և հարավ-արևմուտք, որն սկսվել է Ք. ա. 3-րդ հազարամյակի կեսին, ավելի է ուժգնանում 3-րդ հազարամյակի վերջին: Այդ ժամանակաշրջանին պետք է վերագրել թեւե խեցեգործության մշակույթի և տապարների հայտնվելը Եվրոպայում»:

Եկեք հետևենք այդ տեղաշարժին: Ներխուժելով Եվրոպա՝ հնդեվրոպական ցեղերն ավելի հետամնաց տեղաբնիկներից տարբերվում էին ոչ միայն իրենց լեզվով, մարդաբանական հատկանիշներով, այլև հարուստ գիտելիքներով: Այդ ցեղերի մեջ կային նաև այնպիսիները, որոնք մասնագիտացել էին զուտ մետաղների արդյունահանման և մետաղաձուլման մեջ: Գերմանացի գիտնական Քվերինգն այդ վերջին՝ մետաղագործ ցեղերի գաղթը դեպի Եվրոպա՝ բացատրում է Հայաստանի և Հարավային Կովկասի պղնձահանքերով հարուստ լեռներում անագի բացակայությամբ: Անագի կարիքն ու պահանջը նրանց ստիպեց հեռանալ իրենց բնակավայրերից և պայմանավորեց Հայկական լեռնաշխարհի «պղնձարդյունահանող երկրներից ժողովուրդների բազմաթիվ ներխուժումները դեպի կենտրոնական Եվրոպա»: Ըստ Քվիրինգի՝ այդ գաղթը մեկ անգամ չէ, որ տեղի է ունեցել, այլ բազմաթիվ անգամներ:

Մեկ այլ գերմանացի գիտնական՝ Կարլ Բաքսը, իր խիստ ուշագրավ «Երկ-

---

[78] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

րային ընդերքի հարստությունը» գրքում նշում է. «Պղնձե կացինը մեզ հասած հնագույն մետաղե գործիքն է, որն օգտագործել են Կենտրոնական Եվրոպայի հանքերում: Այն բերել էին օտարականները, ովքեր ստորգետնյա գանձեր էին որոնում և շատ շուտով անհետացան... Ք. ա. 2 300-ական թվականներին նրանք բառացիորեն փորփրեցին Բալկանյան լեռներն ու Կարպատները: Ճիշտ է, նրանք անագ չգտան, բայց փոխարենը հայտնաբերեցին այնպիսի հանքանյութեր, որոնք նրանց հնարավորություն ընձեռեցին ոսկու, պղնձի աշխույժ հանույթ սկսել»[79]:

Հայոց հնագույն պատմությանն անծանոթ Արևմուտքի որոշ գիտնականներ և հետազոտողներ շատ քիչ բան գիտեն նաև ներկայիս Հայաստանի մասին, ինչից ելնելով էլ թերահավատությամբ են ընդունում այն փաստերը, որոնք ապացուցում են քաղաքակրթությունների զարգացման մեջ հազարամյակներ շարունակ Հայաստանի ունեցած ներդրումը՝ մանավանդ այն, որ հենց Հայաստանն ու հայերն են եղել այդ զարգացումների ակունքներում: Նույնիսկ մեզ՝ հայերիս համար էլ հեշտ չէ հավատալ այն բոլոր եղելություններին, որոնք դեռ Ադամի՝ առաջին մարդու ստեղծումից սկսած՝ կապված են Հայաստան անվան հետ: Մինչդեռ բազմաթիվ անհերքելի փաստեր խոսում են այդ ամենի ճշմարտության մասին:

Մենք չանում ենք խոսել միայն հավաստի փաստերի լեզվով, ինչի հետևանքով այս աշխատությունը պարունակում է մեծ թվով մեջբերումներ: Համաշխարհային քաղաքակրթության զարգացման մեջ Հայաստանի մեծ ավանդը փաստող նյութերի պակաս չի զգացվում: Նույնիսկ ստիպված ենք՝ շատ բաներ դուրս թողնել՝ աշխատությունը չափից դուրս չծանրաբեռնելու համար:

Հայաստանից Միջագետքի երկրներ, Եգիպտոս, Եվրոպա գնացած մետաղագործների հետքերը ի հայտ են գալիս ոչ միայն պեղումների մեջ, այլև եվրոպական ժողովուրդների ասքերում, ազգաբանական ավանդույթներում և հավաստի պատմական իրողություններում:

Գերմանական ասքերի և պատմության մեջ բավարացիները ներկայացվում են որպես Հայաստանից գաղթածներ: Եվրոպական երկրներում հայերի թողած հետքի մասին հետաքրքիր և հավաստի տեղեկություններ է հավաքել ժամանակին Մարսելի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու վարդապետ, ներկայումս Սուրբ Էջմիածնի միաբան Հայր Կոմիտաս Հովնանյանը:

1080 թվականի Աննոլի կոչված Գերմանական գրքերից մեկում տեղեկացվում է. «Նրանք՝ «բավարացիները» եկել են Արմենիայից, որտեղ Նոյը կանգ է առել Արարատ լեռան գագաթին և իջել տապանից, երբ աղավնին բերել է ձիթենու ճյուղը»:

Նույն իրողությունն է փաստվում նաև «Kasierchronik»-ում, ըստ որի՝ «Առաջին բավարացիները ծնունդով Արմենիայից են, որտեղ Նոյը իջել է տապանից, երբ աղավնին նրան բերել է ձիթենու ճյուղը, և տապանի հետքերը մինչև հիմա կարելի է տեսնել այդ լեռան վրա, որը նրանց մոտ կոչվում է Արարատ»:

---

[79] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 78, 79:

*Առավել ստույգ տվյալներ է հաղորդում բավարացիների մոտ մեծ հեղինակություն վայելող «Chronica Baioariorum» պատմական գիրքը. **«Բայոարիուսը իր ազատասեր ժողովրդի հետ, որոնց հայրենիքը Արմենիան է, երկար ու դժվար ճանապարհ անցնելով՝ հասել է այս երկիրը, որտեղ հանդիպել է ձկնորսությամբ և որսորդությամբ զբաղվող աղքատ ժողովրդի: Հաստատվելով այստեղ՝ նրանք երկիրը կոչում են իրենց առաջնորդի՝ Բայոարիուսի անունով՝ Բավարիա»:***

Այնտեղ կա նաև տեղեկություն, որ Բայոարիուսը ուներ երկու որդի՝ Բոհեմը և Ինգրաման:

Բավարացիների քերթողահայր Յոհաննես Տուրմայերը Բոհեմի անվան հետ կապված հետաքրքիր տեղեկություն է հաղորդում: Խոսելով Բոհեմիայի՝ Չեխիայի նախկին անվանման մասին՝ նշում է, որ այն հին գրքերում անվանվում էր Էրմինիա, և ինչպես որ Բավարիան է անվանվել Բայոարիուսի անունով, այնպես էլ Էրմինիան է վերանվանվել Բոհեմի անունով՝ Բոհեմիա:

*1776 թվին Վինցենց Պոլը անդրադառնալով այս հարցին՝ ասում է հետևյալը. **«Կայսր Ֆրիդրիխը խաչակրաց արշավանքի ժամանակ Արմենիայում հանդիպել է ժողովրդի, որոնք խոսում էին բավարացիների լեզվով»:***

Սա վկայություն է այն մասին, որ բավարացիները դեռ խաչակրաց արշավանքների ժամանակ պահպանել էին իրենց լեզուն և խոսում էին հայերեն:

Արմենիայից եկած այդ ժողովուրդը ժամանակին քաջաբար կռվել է Հուլիոս Կեսարի զորքի դեմ: Իսկ դա նշանակում է, որ նրանք հաստատվել են այնտեղ դեռ ն. Ք. II -I դարերում, եթե իհարկե ոչ ավելի վաղ:

Ֆրանսիայի հարավարևմտյան մասերում բնակվող բասկերի նախահայրենիքը նույնպես համարում են Հայաստանը: Այս հարցին անդրադարձել են տարբեր ազգերի ուսումնասիրողներ, հետաքրքիր հոդվածներ են տպագրվել հանդեսներում, թերթերում և գրքերում: Ըստ նրանց հաղորդած տեղեկությունների՝ Բասկերի պատմագրության հիմնադիրներից էստեբան դե Գարիբայը, Անդրես դե Պոսան և Բալթազար դե էչավեն համարում էին, որ Հայաստանն է եղել իրենց՝ բասկերի նախահայրենիքը:

Բասկերի նախահոր անունը եղել է «Haytor», ով առաջինն է եկել Բասկոնիա և հիմնել 7 գյուղ, որոնցից Իսաբա գյուղը մինչև օրս կա, և այդ գյուղում գոյություն ունի «Erminia» անվանումը կրող փողոց՝ ի հիշատակ իրենց նախնիների, որոնք եկել են Armenia-ից: Ասում են նաև, որ եկվորները տիրապետում էին մետաղի՝ հատկապես ոսկու մշակման գաղտնիքներին:

«Բասկերի առասպելներում գրված է, որ իրենց նախահայրը որի անունը եղել է ԱՅԻՏՈՒՐ (ՀԱՅԻԹՈՒՐ), որը նշանակում է ՀԱՅԱՅից եկած՝ Հայքից եկած – Հայի թոռ, Հայից սերող: Բասկերը պատմում են, որ այդ Այիտուրը գալով Հայաստանից իր հետ բերել է ցորենի մշակույթը, գյուղատնտեսությունը, մետաղագործությունը, օրացույցը...» [80]:*

Բասկերը ո՛չ իրենց լեզվով, ո՛չ մշակույթով ընդհանուր բան չունեն իսպանա-

[80] Վահան Սարգսյան, «Բասկերը և Հայերը»: http: //www.hayagitaran.info/2014/09/baskern-u-hayereh/

ցիների հետ, և նրանց լեզուն ոչ մի լեզվաընտանիքի չի պատկանում և նման չէ ոչ մի եվրոպական լեզվի: Ուսումնասիրողների համար դա առեղծված է մնացել:

19-րդ դարի վերջում անգլիացի գիտնական Էդվարդ Սպենսեր Ջոնսոնը, խորությամբ ուսումնասիրելով բասկերի պատմությունը, հետաքրքիր բացահայտում է արել: Նա նկատել է, որ հայերենի և բասկերի լեզվի մեջ շատ նմանություններ կան:

Բազմաթիվ ընդհանրություններ կան նաև Բասկերի երկրի և Հայաստանի տեղանունների մեջ, ինչը հիմք ընդունելով՝ Գարիբայը պնդում է բասկերի հայկական ծագման վարկածի ճշմարտացիությունը:

*Իսկ Բալթազար դե Էչավեն գրում է. **«առաջին եկվորները ժամանել են Իբերիա՝ Համաշխարհային Ջրհեղեղից հետո, Նոյի որդիների հետ՝ մեր սիրելի հայրենիքից՝ Արմենիայից»:***

Բասկերի հայկական ծագման կողմնակիցներ են նաև այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Գասպար Էսկոլանոն, Ջոզեֆ Կարստը, Բերնարդո Էստորնես Լասան և Նիկողայոս Մառը:

Ոչ պակաս հետաքրքական տեղեկություններ են պահպանվել բրիտանական աղբյուրներում՝ Բրիտանական կղզիներ գնացած հայաստանցիների մասին. Անգլիայի հնագույն տարեգրությունը, ըստ անգլոսաքսոնական ժամանակագրության տեղեկությունների, հաղորդում է, թե ինչ ազգեր են բնակեցրել Բրիտանական կղզիները, և ովքեր են այդ հողի վրա ոտք դնողները: Առաջինը նշվում են բրիտները, որոնք ըստ այդ քրոնիկոնի (ժամանակագրության)՝ եկել են Հայաստանից.

«Բրիտանիա կղզին ունի 800 մղոն երկարություն և 200 մղոն լայնություն: Այդ կղզում հինգ ազգություն կա՝ անգլիացիներ, բրիտներ, սքոթներ, պիկտեր, լատիններ: Կղզու առաջին բնակիչները եղել են բրիտները, որոնք եկել են Արմենիայից և ի սկզբանե բնակվել են Բրիտանիայի հարավում»:

*(«TheislandBritainis **800** mileslong, and **200** milesbroad. Andthereareintheislandfivenations; English, British, Scottish, Pictish, andLatin. Thefirstinhabitantswerethe Britons, whocamefrom Armenia, andfirstpeopled Britainsouthward»[81]):*

Սա խոսուն վկայություն է Հայաստանից Եվրոպա գնացած քաղաքակրթության սերմնացան միսիոներների մասին: Սակայն գիտենք, որ հեռու լինելով Հայկական լեռնաշխարհի խորհրդավոր պատմությունից՝ 19-րդ դարում մի թարգմանիչ ոչ մի կերպ չկարողացավ հասկանալ, թե ինչ կապ կարող է լինել Անգլիայի և Հայաստանի միջև: Ուստի, արհամարհելով քրոնիկոնի բնագրի բովանդակությունը, իր թարգմանության մեջ «Արմենիա» անվանումը դարձրել է «Արմորիկա»՝ ինքնագլուխ որոշելով, թե բնագրում հավանաբար սխալմունք է եղել: Չի բացառվում, որ բնագրի աղավաղումը ոչ միայն հին աշխարհի մասին սուղ գիտելիքներն են, այլև դիտավորությունը:

---

[81] Bede Ecclesiastical history I.1, TheAnglo-Saxon Chronicle, part 1: a.d. 1-748, (Բեդե, «Եկեղեցեկան պատմություն», մաս I, Անգլո-Սաքսոնական Քրոնիկա, 748թ.):

Արմորիկան շրջան և քաղաք է Ֆրանսիայի հյուսիս-արևմուտքում, և այդ խեղաթյուրման հետևանքով դուրս է գալիս, որ Ֆրանսիայի այդ տարածքներում կյանքը եռում էր, իսկ Բրիտանական կղզիները բնակեցնելու համար նրանց պետք էր մի նոր Կոլումբոս, որ հայտնաբերեր իրենց քթի տակ գտնվող կղզիները: Հավանական է, որ Արմորիկը Արմենիա անվան ձևափոխված կերպն է, և բասկերի տարածքում հիմնավորվելուց հետո հայերն անցել են Ֆրանսիայի տարածք, հիմնվել այնտեղ, ապա անցել են Բրիտանական կղզիներ: Իսկ այս դեպքում ոչ թե քրոնիկոնի բնագրի Արմենիան պետք է Արմորիկա հասկանալ, այլ Արմորիկայի անունը ճշտել՝ ըստ Արմենիայի:

*Հետաքրքիր է որ Օքսֆորդի համալսարանի գիտաշխատող Ստիվեն Օպպենհեյմերի մի աշխատությունում **(«Բրիտանացիների ծագումնաբանությունը՝ գենետիկական դետեկտիվ»)** ասվում է, որ բրիտները բասկերի հետ ունեցել են նույն գենետիկ կոդը և խոսել են բասկերի լեզվին նման լեզվով:*

Հայկական լեռնաշխարհի բնակիչներն աշխարհի չորս ծագեր են տարածել իրենց գիտելիքները, այդ թվում՝ մետաղագործության հմտությունները՝ նպաստելով տեղի բնակչության կենսամակարդակի բարձրացմանը:

Հայկական քաղաքակրթության հետքերն առկա են նաև Ռուսաստանի տարածքում, որտեղ ըստ ռուս և այլազգի հնագետների՝ վաղ բրոնզեդարյան շրջանում ի հայտ եկած տրիպոլյան մշակույթի հիմքում ընկած է հենց հայկական մշակույթը.

«Մ.թ.ա. ամբողջ երրորդ հազարամյակի ընթացքում բուռն համագործակցություն է սկսվել Հայաստանի և պղնձե-քարե և վաղ բրոնզեդարյան մշակույթների՝ Ուկրաինայի և հարավային Ռուսաստանի միջև:

Հատուկ հետաքրքրություն է առաջացնում Հայաստանի հնարավոր ազդեցությունը Տրիպոլի հայտնի մշակույթի վրա՝ տարածված Դնեպրյան ավազանից, Հարավային Բուգայից և Դնեստրից՝ ընդհուպ Սև ծով: Տրիպոլի բնակիչները հոյակապ հողագործներ և տարբեր մասնագիտության տեր վարպետներ էին և ապրում էին լավ կառուցված բնակարաններում, ինչպես իրենց ժամանակակիցները՝ Կուրարաքսյան մշակույթի ներկայացուցիչները: Նրանք կավագործության հիանալի վարպետներ էին՝ չնայած նրանց պատրաստած ապրանքները շատ էին տարբերվում Կուրարաքսյան սպասքներից: Տրիպոլի բնակիչները, կովկասից մետաղի հումք ստանալով, կարողանում էին վարպետորեն աշխատել բրոնզով և պղնձով: Տրիպոլում հանդիպում են բազմաթիվ կավե առարկաներ... Նույնը մենք տեսնում ենք նաև Հայաստանում: Որոշ խորհրդային գիտնականներ, օրինակ՝ Տ. Ս. Պասսեկը նշում է, որ այդ տրիպոլյան կավե արձանիկներն ունեն առանձնահատուկ հայկական նշաններ, ինչը մատնանշում է հնագույն գաղթերը Կովկասից և այլ Մերձարևելյան կենտրոններից: Եթե դա այդպես է, ապա չի բացառվում, որ Անատոլիայից և Հայաստանից եկած ցեղերը, խառնվելով Ռուսաստանի հարավում տեղական որսորդ ցեղերի հետ, ստեղծեցին հրաշալի տրիպոլյան մշակույթը» [82]:

---

[82] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 79, 80.

Պղնձի դարաշրջանից անցնելով բրոնզի դար՝ հայ մետաղագործների պրպտուն միտքը և աշխատանքային եռանդը դուռ բացեցին արդեն մի այլ՝ երկաթի դարաշրջանի համար.

«Այսպես, մենք մոտենում ենք Հայաստանը՝ երկաթյա դարի սկզբին, ինչը դրսևորվում է որպես նոր դարաշրջան՝ ժամանակակից տեխնոլոգիաների դարաշրջան»[83]*:*

Երկաթի դար

«Հին Հայաստանի տարածքում մարդուն հաջողվեց կռել այն (երկաթը)՝ հանքաքարից: Հայաստանին երկաթի հայրենիք անվանեց «ողբերգության հայր» էսքիլեսը՝ իր «Գամված Պրոմեթևսը» ստեղծագործության մեջ: Երկաթը վաղուց մարդու համար դարձավ ամենաանհրաժեշտ մետաղը, այն դուրս մղեց բրոնզը և թույլ տվեց մարդկանց՝ մտնել երկաթի դար»[84]*:*

Նշել ենք, որ պղնձին փոխարինեց բրոնզը, սակայն մետաղագործության առաջխաղացումը դրանով կանգ չառավ, և հետագա զարգացումները հանգեցրին հետջրհեղեղյան շրջանի երկաթի գյուտին, ինչը խթանեց համաշխարհային քաղաքակրթության կտրուկ վերելքը:

Այդ ողջ գործընթացը հետևյալ կերպ է ներկայացնում ամերիկացի ժողովրդագետ Դ. Լ. Մորգանը. ***«Երբ բարբարոսը քայլ առ քայլ սկսեց առաջ շարժվել, հայտնաբերեց բնակատոր մետաղներ և սկսեց հալեցնել հալոցում և լցնել կաղապարների մեջ. երբ նա հալեցրեց բնակատոր պղինձը անագի հետ և ստեղծեց բրոնզը, և երբ վերջապես մտքի մեծ լարմամբ նա հորինեց մետաղահալոցը և հանքաքարից երկաթ ստացավ, դրանով քաղաքակրթության համար պայքարի տասից ինը արդեն շահեց»***[85]*:*

Մորգանը բարբարոս համարելով տվյալ ժամանակաշրջանի ժողովրդին՝ էվոլյուցիայի տեսանկյունով է հարցին մոտենում, այլ ոչ Աստվածաշնչյան, քանզի մարդկային էությունը նույնն էր թե՛ այն ժամանակ, թե՛ ներկայումս: Ուղղակի Ջրհեղեղից հետո բոլոր մոռացված հայտնագործությունները նորից ժամանակի հետ սկսում էին ի հայտ գալ հենց այն տարածքում, որտեղ մինչև Ջրհեղեղ հայտնաբերվել էին: Բնական է, որ երկաթի գյուտը հնարավոր չէր լինի այնպիսի մի վայրում, որտեղ մետաղագործության լուրջ ավանդույթներ, առավել ևս հանքաքարի մեծ պաշարներ չլինեին.

«Հարավային Անդրկովկասում մ.թ.ա. 2-րդ հազարամյակի կեսերին երկու մեծ հայտնագործություն արեցին: Մարդիկ սովորեցին հանքաքարից երկաթ ստանալ և թրծել նրա մակերեսը: Այդ ձեռքբերումները արդյունք էին մետաղա-

---

[83] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 88.

[84] Карл Бакс. (И. Немков) Богатства земных недр. Москва. Из. “Прогресс”. 1986. ст. 27.

[85] Г. Л. Морган. “Древнее общество”. Л., 1934, с. 28.

գործության խորը գիտելիքների: Դրանք թույլ էին տալիս պատրաստել աշխատանքային գործիքներ և նախկինում չտեսնված ամրության և սրության զենքեր: Նրանք մարդկության համար բացեցին ճանապարհ բրոնզե դարից երկաթի և պողպատի դար, ինչն աշխարհում պետք էր զգալի աստիճանի ազդեր դեպքերի ընթացքի վրա՝ մինչ մեր օրերը»[86]:

Հայկական լեռնաշխարհում մշտական փնտրտուքներ են եղել՝ որակով մետաղ ստանալու համար: Արդյունքում՝ երկաթի դարից (մ. թ. ա. 1-ին հազարամյակ) դեռ շատ ավելի վաղ՝ Հայաստանում արդեն գտել էին հանածո երկաթը ձուլելու եղանակը, ինչն ընդունում են աշխարհի ճանաչված հնագետները:

Հայտնի հնագետ Գորդոն Չայլդը նույնպես այդ կարծիքի կողմնակիցներից է, սակայն նրա խոսքից երևում է, որ նա կարծես խորը տարակուսանք է ապրում, թե ինչպե՞ս կարող էր երկաթի գյուտը դուրս գալ Հայաստանից. չէ՞ որ այդ հնագույն ժամանակաշրջանում այդտեղ, ըստ իրեն, պետք է բարբարոսներ բնակված լինեին.

«Ինչպես պարզվեց, մետաղական առարկաներից մեկը՝ գտնված Ուրի թագավորական դամբարաններում, պատրաստված էր երկնաքարային երկաթից: Բայց դաշույնի շեղբը՝ գտնված Հաֆաջեում, պատրաստված է մետաղից՝ ձուլված սովորական հանքաքարից: Ի դեպ, այդ դաշույնը, ըստ երևույթին, բերվել է պատրաստի տեսքով, ամենայն հավանականությամբ՝ Հայաստանից, որտեղ, ինչպես մենք կարող ենք դատել հետագա իրադարձություններից, ինչ-որ բարբարոս ցեղեր բացահայտել են երկաթի ձուլման տնտեսական մեթոդը, ինչը նրանք մինչ II հազարամյակի վերջը գաղտնի էին պահում»[87]:

Հայաստանն այդ խորը հնության շրջանում տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ ոլորտներում լուրջ զարգացում էր ապրում, և այդ մասին շեշտում է նաև ինքը՝ Չայլդը. ***«Հայկական լեռնաշխարհի մշակույթն իր ազդեցիկ հնության և արժեքներով կարող է մրցակցել Միջագետքի և Նեղոսի հովիտների հնագույն մշակույթների հետ»***[88]:

Սակայն խիստ տարօրինակ է, որ նման կարծիք ունեցող գիտնականը հանկարծ հայտարարում է բաներ, որոնք հակասում են իր իսկ մտքերին. իբր թե նման զարգացում ապրած Հայաստանում երկաթ հայտնաբերողները կարող էին բարբարոս ցեղեր լինել: Դա անհեթեթություն է, և նման է նրան, որ պարզվի հանկարծ, թե միջուկային զենքն ստեղծել և քաղաքակիրթ աշխարհից երկար ժամանակ գաղտնի է պահել չունգլիների մի վայրենի ցեղախումբ: Չէ՞ որ երկաթի գյուտը հին աշխարհում տնտեսական և ռազմական տեսակետից նույնպիսի թռիչք էր, ինչպիսին միջուկային էներգիայի հայտնաբերումը՝ մեր ժամանակներում: Առավել զարմանալի և մերժելի է, որ այդ գիտնականները, ծանոթ լինելով քուռարաքսյան քաղաքակրթության պատմությանը և դրա կերտողներին՝ Հայկական լեռնաշխարհի բնիկներին, որոնց պատկանում է պղնձի, բրոնզի, երկաթի հայտնաբերման և տարածման պատիվը, բարբարոս ցեղեր են անվանում:

---

86 Карл Бакс... ст. 236.

87 Гордон Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956, ст. 163, 240.

88 http://www.apagaonline.com/archives/apaga_quarterly/Armenian/Ap-45-A.pd

Սակայն քիչ չեն նաև այն գիտնականները, այդ թվում գերմանացի Կարլ Բաքսը, անգլիացի Դեվիդ Լենգը, որոնք համոզված են, որ Հայաստանը շատ մեծ զարգացում է այդ ժամանակաշրջանում։

«Անդրկովկասում, թեև անսպասելիորեն, համենայն դեպս, մեծ հաջողության հասան. այնտեղ առաջինը հաջողվեց կռել երկաթը հանքաքարից։ Հայաստանը դարձավ, ինչպես գրում էր Էսքիլեսը (մոտ 525-456 մ.թ.ա.), «երկաթի հայրենիք»։ Մետաղագործների վարպետությունն այնպես էր ապշեցրել ժամանակակիցներին, նաև գալիք սերունդներին, որ Հարավային Անդրկովկասի հայ հանքագործների դարբնության և ձուլման արվեստը գնահատվում էր որպես հաջողված տնտեսության և մշակույթի հիմք։ Այլապես՝ ի՞նչ կերպ կարելի է բացատրել այն, որ ոչ միայն հունական առասպելները, այլև մեր գերմանական առասպելներն ու հեքիաթները, որ ստեղծվել են այդ վայրերից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա, հիշատակում են այդ եղելության մասին»[89]։

«Մ.թ.1000 տարի առաջ երկաթը Հայաստանում մտավ համընդհանուր օգտագործման մեջ բրոնզի հետ միասին՝ չնայած որ վերջինս երկաթից էժան էր և այդ պատճառով՝ ավելի մատչելի»[90]։

Այդպիսով, հայ մետաղագործների միջոցով աշխարհը ծանոթացավ պղնձին և ապա բրոնզին։ Իսկ միաժամանակ անց՝ Հայոց լեռնաշխարհում հայտնաբերվեց և արտադրության մեջ մտավ երկաթը։

Դեռ հազարամյակներ առաջվա տարբեր ազգերի բազմաթիվ հեղինակներ իրենց գրական աշխատություններում հիշատակություններ են թողել Հայաստանում երկաթի հայտնաբերման և գործածության մասին։

«Էսքիլեսը (Ք. ա. 6-րդ դար), մատնացույց անելով Փոքր Հայքը, նշում է, որ այնտեղ է «երկաթն առաջին անգամ հայտնաբերվել»։

Փոքր Հայքի երկաթի մասին հիշատակում է Էվրիպիդեսը ևս (Ք. ա. 5-րդ դար), իսկ համաձայն Քսենոփոնի (Ք. ա. 5-րդ դար)՝ բնակչության մեծ մասն այստեղ «զբաղվում էր երկաթաքարի մշակմամբ»։ Արիստոտելը (Ք. ա. 4-րդ դար) խոսելով Հայաստանում երկաթաքարի մշակման և հալման մասի՝ նշում է, որ «միայն այդ երկաթը չի ենթարկվում ժանգոտման»։ Եվդոքսոս Հռոդոսցին (Ք. ա. 3-րդ դար) հայկական երկաթը գովաբանում է կոփման պիտանիության համար»[91]։

Երկաթի մշակման տեխնոլոգիան Հայաստանում հասել էր զարգացման այնպիսի աստիճանի, որ կարողանում էին ստանալ եզակի կարծրության և չժանգոտվող երկաթ։

1943 թ. բազմաթիվ ականատեսների ներկայությամբ Երևանում երբ Հաղթանակի կամրջի համար հիմք էին փորում, հայտնաբերեցին երկաթե մեծ այուն, ինչի վրա ընդհանրապես ժանգի հետքեր չկային՝ չնայած գտնվել էր անմիջապես գետի ափին։ Իսկ շինարարների գործիքների հուժկու հարվածները ոչ մի հետք չէին թողնում այդ արտասովոր մետաղի վրա։

---

89 Карл Бакс... ст. 226.

90 Девид Лэнг... ст. 89.

91 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 93:

Որպեսզի կամրջի աշխատանքները չդանդաղեն, այդ այունը ծածկել են բետոնով և թողել, հավանաբար, կամրջի հիմքում կամ մոտակայքում:

1978 թ. Վերին Նավեր հնավայրում հայ հնագետները գտան թուչնի ոչ մեծ բրոնզե արձանիկ, որը ձուլվել էր անհայտ վարպետների կողմից՝ մոտ 3 000 տարի առաջ: Այդ արձանիկի մեջ տեղադրված էր մի այլ տեսակի մետաղի կտոր: Հետագայում պարզվեց, որ մետաղի կտորը սովորական բրոնզ չէր և ոչ էլ երկաթ, քանի որ ժամանակակից գործիքները ոչ մի կերպ չէին կարողանում դրա վրա ազդել: Այդ մետաղը «Պոբեդիտե» գայլիկոնով ծակելու փորձի ժամանակ գայլիկոնը շիկանում և հալվում էր, բայց յուրահատուկ մետաղի վրա նույնիսկ ոչ մի հետք չէր մնում:



Խիստ զարմանալի է, թե ինչպե՞ս են հայ ժողովրդի հեռավոր նախնիները կարողացել նման առեղծվածային մետաղ ստանալ և մշակել այն:

Այդ արձանիկն արդեն 30 տարի է, ինչ պահպանվում է Հայաստանի Պատմության պետական թանգարանում:

Հայտնաբերվել են նաև երկաթյա սանձեր՝ ձիերի համար, որոնք պատրաստված են մ. թ. ա. երրորդ հազարամյակում՝ ավելի քան 1000 տարի երկաթի դարից առաջ: Սակայն սանձերը չէին ժանգոտվել՝ չնայած ավելի ուշ շրջանի երկաթյա բազմաթիվ իրեր խիստ ժանգոտվել էին:



Գերմանիայում արված հետազոտությունից պարզվել է, որ այդ նյութը երկնաքարից չի ստացված, այլ ունի երկրային ծագում.

«Ամենայն հավանականությամբ, հենց Հայկական լեռնաշխարհո՛ւմ մարդն առաջին անգամ սովորեց ստանալ երկաթ, թրծել և օգտագործել այն: Այնտեղ մետաղագործության մեջ ձեռք բերված գիտելիքները երկաթի արտադրության սաղմերն էին և ունեցան համաշխարհային նշանակություն:

Այն մասին, թե հայերն ինչ հրաշալի հաջողությունների են հասել՝ շնորհիվ հանքագործության, վկայում է մոտավորապես մ. թ. ա. 800 թ. խմելու ջրի մատակարարման համար կառուցված «աշխարհում ամենահին» հանքագործության հուշարձանը՝ Վանին և Տոսպին ջուր մատակարարելու նպատակով կառուցված ջրանցքը» [92]:

Հայաստանում հետևողականորեն զարգացող մետաղագործությունն ուղեկցվում էր տեխնիկական հայտնագործություններով ու նորամուծություններ-

[92] Карл Бакс. Богатства земных недр. Москва. Из. “Прогрессс”. 1986, ст. 238.

րով: Մետաղագործության ավանդույթները փոխանցվում էին ժառանգներին, և յուրաքանչյուր սերունդ իր ներդրումն էր ունենում այդ գործում.

«Հին փորձառությունը սովորեցնում է, որ հանգչող կրակը նորից կարելի է բորբոքել, եթե դրսից ավելացվի օդի մղումը. կրակն այնքան ավելի կբոցավառվի, որքան ավելի ուժեղ լինի (օդի) ներփչումը: Դա բերեց ոչ միայն փչելով կրակ արծարծելու խողովակների հայտնաբերմանը, այլև միաժամանակ նպաստեց օդի մատակարարման արդյունավետ սարքի ստեղծմանը... անկասկած, միայն համառ աշխատանքը, գյուտարարության ընդունակությունը, համբերությունը և խելամտությունը թույլ տվեցին ստեղծել այդպիսի սարք: Հավանական է, որ Անդրկովկասում 1600 թ. մ.թ.ա. ստեղծվեցին «օդամղիչ փուքսերը»» [93]:

Երկաթի տարածումը

Նշել ենք, որ հնարավոր չէր մետաղագործության գաղտնիքները հավերժ պահել Հայաստանի սահմաններում: Վաղ թե ուշ, ինչպես պղինձն ու բրոնզը, երկաթը նույնպես պիտի հասանելի դառնար մարդկությանը:

«Ականավոր հնագետ Գորդոն Չայլդն իր «Հին Արևելքը նոր պեղումների լույսի ներքո» գրքում խոսելով Հայաստանում երկաթ արդյունահանող ցեղերի մասին՝ գտնում է, որ նրանք «հայտնագործել են երկաթի հալման տնտեսական եղանակը, որը սակայն, մինչև Ք. ա. 2-րդ հազարամյակի վերջը, գաղտնի էր պահվում»: Բայց այդ մենաշնորհը, որ ծածկված էր գաղտնապահության շղարշով, չէր կարող երկար տևել: Ք. ա. 1100 թվականից սկսվում է երկաթյա գործիքների ու զենքերի քիչ թե շատ երևան գալը Փոքր Ասիայում և Հունաստանում, Միջագետքում, Պաղեստինում և Իրանում: Այսուհանդերձ, երկաթաձուլությունը դեռ երկար դարեր, նույնիսկ միջնադարում, պահպանում է իր գաղտնիքներն ու առեղծվածները» [94]:

Ըստ էության՝ Հայաստանից ժամանած մետաղագործներն են հեռավոր Եգիպտոսին ծանոթացրել առաջինը պղնձին և որոշ ժամանակ անց՝ արդեն երկաթի գյուտին:

«Եգիպտոսում գտնված սալիկները տեղեկացնում են... որ դրանք հանքաքարից երկաթի կման ամենահին վավերագրի վկայություններն են, որ միանգամայն հստակ անվանում են այդ լեռնային երկրի անվանումը՝ Հարավային Անդրկովկաս» [95]:

Հայաստանի սահմաններից երկաթի գյուտը հասավ ոչ միայն հարավ և արևմուտք, այլև դրան հաղորդ եղան արևելքի երկրները՝ Չինաստանը և նրա շրջակա երկրները, ինչի մասին գրում է հայտնի հնդիկ հնագետ Ս. Կ. Դիկշիտը, ումից բերում ենք հատվածական քաղվածքներ.

«Մենք արդեն մեջբերեցինք Գորդոն Չայլդից քաղվածքներ, որտեղ հայկա-

---

93 Карл Бакс. Богатства земных недр. Москва. Из. “Прогрессс”. 1986, ст. 234.

94 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 94:

95 Карл Бакс... ст. 227.

կան լեռնականները հիշատակվում են որպես երկաթի առաջին հայտնագործողներ՝ հիմք դնելով երկաթե դարին...

Նախորդ մի քանի գլուխներում արդեն հիշատակվեց այն, որ հին աշխարհի բրոնզեդարյան քաղաքակրթությունն աստիճանաբար իր տեղը զիջեց երկաթի դարի քաղաքակրթությանը: Սա ոչ միայն տեղ էր գտնում ԽՍՀՄ-ի հարավային տափաստաններում, Կովկասում և այլուր , այլ նաև Ուրույա քաղաքում, Միկենախում, Աշշուրում, Անյանում (Չինաստան) և բազում այլ վայրերում՝ հին աշխարհի ամբողջ տարածքով մեկ...

Այն տարածքներից, որոնք ընկած էին այսպես կոչված երկաթեդարյան հեղափոխության էպիկենտրոն Կովկասից, Հայաստանի լեռներից հեռու, այդ հեղափոխության ալիքը՝ այսինքն, երկաթեդարյան քաղաքակրթությունը, նրանց հասավ ավելի ուշ, քան առավել մոտ շրջաններին»[96]*:*

Ոչ միայն եգիպտական սալիկները, այլև հնդկական վեդաները փաստում են, որ երկաթը շատ ավելի ուշ շրջանում է հայտնվել Հնդկաստանում.

«Ինդոսի հնագույն գրական հուշարձանը՝ Ռիգվեդա – Սամխիտան, համարվում է համաշխարհային գրականության միակ հնագույն ստեղծագործությունը, որտեղ չի հիշատակվում երկաթը: Մյուս վեդաները պատկանում են երկաթե դարին...

Նախորդ գլուխներից մեզ նաև հայտնի է, որ երկաթի դարասկիզբը դրվում է մոտավորապես մ.թ.ա. 1500 տարի՝ Հայոց լեռների շրջանում:

Հայաստանում երկաթեդարյան սկզբնական շրջանի և դրա՝ Ինդոսում հաստատվելու միջև, անխոս, որոշ ժամանակ է անցել... Արևելքում ասորեստանցիները նույնպես յուրացրեցին երկաթե զենքերի պատրաստումը, միայն մ.թ.ա. I հազարամյակի սկզբից ոչ շատ ուշ՝ մի քանի հարյուրամյակ հետո այն ժամանակաշրջանից, երբ երկաթը հայտնի դարձավ Հայաստանում» [97]*:*

Գիտական աշխարհի այն եզրահանգումը, որ Հայաստանից է երկաթի գյուտը տարածվել, ոչ ոքի մոտ արդեն կասկած չի հարուցում, և նույնիսկ հետազոտողներից ամերիկացի հանրահայտ գրող Այզեք Ազիմովը Հայաստանը անվանում է այն ժամանակների «երկաթի թագավորություն»:

«Երկաթի հալեցման տեխնոլոգիան արագ տարածվեց, այդ թվում իհարկե և Ասորեստանում, ինչը սահմանակից էր «երկաթյա թագավորության» Ուրարտուի հետ[98]*,- նշում է Ազիմովը և ավելացնում.- Մոտավորապես 1300 թ. մ. թ. ա. երկաթի հալեցման տեխնիկան մշակվել է Կովկասի նախալեռներում՝ Ուրարտուում»*[99]*:*

---

[96] С. К. Дикшит, Введение в археологию, Москва, 1960, ст. 424-425.

[97] Նույն տեղում, ст. 462-463.

[98] Азимов Айзек Ближний Восток. «История десяти тысячелетий»: Центрполиграф; М.; 2006 ст.32.

[99] Նույն տեղում:

Ոսկի

«Շումերական դրախտը Արատտայի թագավորությունն էր՝ հարուստ ոսկով, արծաթով, լաջվարդով և շինարարական քարերով: Մենք գիտենք, որ դա եղել է այն երկիրը, որտեղից սերվել են աստվածները՝ «Ողջերի երկիրը»»[100]:

Պատմության մեջ, բացի վերը նշված մետաղների դարաշրջաններից, ուրիշ մետաղի՝ նույնիսկ ոսկու դարաշրջան չի հիշատակվում: Սակայն ոսկին մարդկային քաղաքակրթության մեջ փոքր դեր չի խաղացել:

Իսկ ինչպիսի՞ն է եղել Հայկական մետաղագործության մեջ ոսկու տեղը:

Հայոց լեռների ընդերքում տարբեր մետաղների կողքին եղել են և կան նաև ոսկու պաշարներ: Գիտենք, որ Աստվածաշունչ մատյանում առաջին հիշատակված մետաղը ոսկին է, և այդ բարձրորակ մետաղի հանքը, ըստ Մովսես մարգարեի, գտնվում էր Հայկական լեռնաշխարհում՝ Փիսոն (Ճորոխ) գետի մոտակայքում (հավանաբար, Սպերում):

Ավելի ուշ շրջանի հույն պատմիչները լավ տեղյակ լինելով մերձակա երկրների աշխարհագրական դիրքին՝ նույնպես գրել են Հայաստանի ոսկու մասին.

«Հույն պատմագիրները բազմաթիվ հետաքրքրական տեղեկություններ են հաղորդում իրենց ժամանակակից և ավելի հին շրջաններում հայկական բարձրավանդակում հանքանյութերի հանույթի, մետաղի մշակման վերաբերյալ: Ստրաբոնը հաղորդում է Սպերի ոսկու և հարևան Խաղտիքի երկաթով և արծաթով հարուստ հանքերի մասին[101] ու նշում, որ այստեղ ապրող լեռնցիները հիմնականում զբաղվում են այդ հանքերի մշակությամբ»[102]:

Բացի Սպերի և Խաղտիքի ոսկու հանքերից՝ այլ հանքեր էլ են եղել Հայաստանում, որոնք ներկայումս դեռ շահագործվում են.

«Բյուզանդացի պատմիչ Մալալան հիշատակում է պարսկական սահմանի մոտ գտնվող ոսկով հարուստ Հայաստանի լեռները, որտեղ տեղատարափ անձրևներից հետո հողի երեսին հայտնվում էին դեղին մետաղի հատիկներ: Ք. ա. III հազարամյակում արդեն շահագործվում էր Սոդքի ոսկու հանքը, իսկ հազարամյակներ անց՝ Մեղրաձորի հանքը»[103]:

Հայաստանից ոսկու հումք և ոսկե զարդեր ու իրեր են ձեռք բերել Միջագետքի և այլ երկրները, քանի որ հայերը եղել են ոչ միայն հանքագործներ, այլև հմուտ ոսկերիչ վարպետներ.

«Վաղ բրոնզի դարաշրջանի Քուռարաքսյան մշակույթին վերագրվող հուշարձաններից գտնված ոսկե արդուզարդի ամենավաղ նմուշը հայտնի է Մեծա-

---

[100] Дэвид Рол... ст. 86.

[101] Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. ԺԴ, Հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940թ., էջ 61:

[102] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 45:

[103] Սամվել Դիլանյան... էջ 88:

մորից։ Մ. թ. ա. III հազարամյակում Մեծամորը քաղաք էր, ուներ պարսպապատ միջնաբերդ և նրանից դուրս՝ մոտ 30 հա տարածք» [104]։

«Կովկասյան մետաղամշակման կենտրոնների արտադրանքները նշված դարաշրջանում (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ) գրեթե բացառապես բրոնզե զենքեր են, զենքերի պարագաներ և տարբեր զարդեր։ Բացի դրանից՝ զարդեր են պատրաստել նաև թանկարժեք մետաղներից, հատկապես ոսկուց։ Այսպես՝ Ստեփանակերտի շրջանում գտնվել են երեք ոսկյա պատյաններ, ուլունգներ և երկար քունքային կախոց։ Գլանաձև ոսկյա շերտով զարդերի երկարությունը 2,5 սմ է. հայտնաբերվել են երկու գերեզմանաբլուրում՝ Ղարաբաղում՝ Խաչենագետի ափին. իսկ մյուս գերեզմանաբլուրում՝ երեք տակառաձև ոսկյա ուլունգներ։ Շենգավիթյան դամբարաններում գտնվել են ոսկյա քունքային օղակներ»[105]։

Հայտնաբերված ոսկե զարդերն ի ցույց են դնում հայ ոսկերիչների բարձր ճաշակն ու վարպետությունը։ Դա հնարավոր էր դարձնում ոչ միայն ոսկու հումքի, այլև պատրաստի իրերի վաճառքը.

«Հայկական լեռնաշխարհի հնագույն ոսկերչության նմուշներն իրենց կատարելությամբ ու հղկվածությամբ, տեսականու բազմազանությամբ ոչ միայն որոշակի աշխարհայացքի կանոնիկ համակարգի առկայության խոսուն վկան են, այլև գեղարվեստական ոճի ու էսթետիկական նորմերի, արտահայտչական պատկերավորման միջոցների, ոճն ընդգծող ձևերի, հարդարանքի ու մշակման կոնկրետ հնարքների մի որոշակի արեալ են սահմանագծում, որն իր ուրույն տեղն ունի Հին աշխարհի ոսկերչության համակարգում»[106]։

«Դամբարաններ են բացվել Սևանի լճափին՝ Լճաշենում, նաև Կիրովականում և այլուր։ Ոսկերչական նուրբ արվեստով պատրաստված ոսկե ու արծաթե մեծաթիվ առարկաները, որ գտնվել են երկրորդ հազարամյակի հիշյալ դամբարաններից, իրենց հարստությամբ ու ճոխությամբ հավասարը չունեն Հայաստանում»[107]։

Փաստորեն, ն. Ք. II հազարամյակում, գուցե և ավելի վաղ շրջանում, Եգիպտոսում և Քանանում արդեն լավ ծանոթ էին Հայաստանի ոսկու պաշարներին, ինչի մասին գրել է Մովսեսը։

Եվ եթե հինավուրց Հայաստանը պղնձի, բրոնզի և երկաթի աշխույժ առևտուր է արել այլ երկրների հետ, հնարավոր չէ, որ ոսկին անտեսած լիներ։ Հայաստանի հետ, որպես անմիջական հարևանների, ավելի աշխույժ առևտրական հարաբերությունների մեջ էին գտնվում Միջագետքի երկրները, որոնք Հայկական լեռնաշխարհի բարիքները, այդ թվում նաև ոսկին, գնում էին կամ փոխանակում իրենց երկրների բարիքների հետ.

«Բաբելոնի առևտրական գործընկերների մեջ եղել են Հայկական լեռնաշխարհի բնակիչներ... Որտեղից արդեն 2500 թ. մ.թ.ա. ոսկին, պղինձը և փայտածուխը հասցվում էին Միջագետքի երկրներ»[108]։

---

[104] Հին Հայաստանի ոսկին, հրտ. «Գիտություն», Երևան 2007թ., էջ 72:

[105] Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975, ст. 404.

[106] Հին Հայաստանի ոսկին, հրտ. «Գիտություն», Երևան 2007թ., էջ 57-58:

[107] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 245:

[108] Карл Бакс. Богатства земных недр. Москва. Из. “Прогресс”. 1986, ст. 234.

Կան աղբյուրներ, որոնք ոչ թե մ. թ. ա. III հազարամյակին, այլ շատ ավելի վաղ շրջանի են վերագրում Հայաստանի ու հարևան երկրների միջև ոսկու առևտրի սկզբնավորումը.

«Միջագետքում և Պաղեստինում ոսկե իրերը երևան են գալիս մ. թ. ա. IV հազարամյակում: Հանրահայտ է, որ այս տարածաշրջանները զուրկ են հանքային բազայից, և Միջագետքի ու Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան շրջանների միջև առևտրական փոխառնչությունների ակտիվացման ժամանակ ոսկու ի հայտ գալն այստեղ պատահական զուգադիպություն չէ»[109]:

Սակայն հարևան երկրները ոչ միշտ են ցանկացել ոսկու հանքերով հայտնի Հայաստանից ոսկի ձեռք բերել առևտրի միջոցով:

Կողոպուտի նպատակով շատերը հաճախակի ասպատակել են՝ աքքադացի Սարգոնի նման.

«Հայաստանում ոսկու հանքավայրեր կային Դերսիմում, Սպերում: Սպերի ոսկու հանքերն այնքան հայտնի են եղել, որ, հույն պատմիչ Ստրաբոնի վկայությամբ, Ալեքսանդր Մակեդոնացին Մենոնի հրամանատարությամբ մի գումարտակ զորք է ուղարկում՝ դրանք տիրելու համար, բայց հայերը Մենոնին խեղդամահ են անում»[110]:

Այսպիսով, կարող ենք ամենայն պատասխանատվությամբ պնդել, որ մարդկությունը Հայաստանին է պարտական մետաղների՝ հատկապես պղնձի, բրոնզի, երկաթի ու նաև ոսկու հայտնաբերման, ձուլման և մշակման համար:

Բայցևայնպես, միշտ երախտամոռությամբ է աշխարհը վերաբերվել Հայաստանին և նրա պատմությանը.

«Այնքան էլ չպետք է զարմանալ աշխարհիս անտարբերության և թերագնահատման վրա, որ երբեք առանձին կարեկցանք չի ցուցաբերել քարտեզից սրբված մի երկրի անցյալի հանդեպ: Բերենք մի օրինակ. 1897 թվականին Թուրքիայում անգլիական դեսպան Քլեյթը և ամերիկյան միսիոներ Դեյնոլդոսը Թուփրաք կալեի պեղումների ժամանակ հայտնաբերում են հսկայական քանակությամբ բրոնզե առարկաներ՝ ուրարտական և նախաուրարտական դարաշրջաններից՝ գահեր, զանազան զարդեր, վահաններ, պայտեր և այլն, որոնք անհապաղ տանում ցուցադրում են Բրիտանական թանգարանում: Նորահայտ հարստությունը, որի գոյության մասին դեռ ոչ ոք չգիտեր, առաջ է բերում հերթական հնագիտական տենդ: Բազմաթիվ մեծահարուստներ, վաճառականներ, դիվանագետներ և կոլեկցիոներներ փութով այդ գանձերը տանում վաճառում են Եվրոպայի և Ամերիկայի թանգարաններին: Հին հայկական լավագույն նմուշները բաժին են ընկնում Բրիտանական և Բեռլինի Պերգամոն թանգարաններին, որտեղ առանց դրանք ուսումնասիրելու որևէ փորձի՝ ցուցադրում են... ասորական արվեստի սրահներում»[111]:

Տիրոջ կամոք Հայաստանին անչափ շատ բան է բաժին ընկել, ինչի մասին հանգամանորեն խոսեցինք տարբեր բաժիններում և դեռ շատ կխոսենք հաջորդիվ:

---

[109] Հին Հայաստանի ոսկին, հրտ. «Գիտություն», Երևան 2007թ., էջ 14, 15:

[110] Սամվել Դիլանյան... էջ 88:

[111] Վրթան Ստամատով... 76 էջ:

Իհարկե, այս առատության մեջ կարելի էր չվրդովվել աշխարհի գործիչների սխալ կեցվածքի համար: Սակայն այն, ինչը մեզ տրված է վերուստ, մենք չենք կարող ուրանալ և պարտավոր ենք գոնե բարձրաձայնել:

Ձինագործություն

«Հայաստանը կարևոր շրջաններից մեկն է, որտեղից ամբողջ Կովկասում տարածվել է զենքերի մետաղական համակցումը՝ կտցող կացինների տեսքով: Զարմանալի չէ, որ Կովկասում հայտնաբերված այդ տեսակի զենքերի ճնշող մեծամասնությունը բաժին է ընկել Հայաստանի տարածքին»[112]:

Եթե մետաղի արդյունահանումն սկսվել և զարգացել է Հայաստանում, բնականաբար, մետաղագործության հետ կապված արհեստները ևս այդ երկրում պետք է սկիզբ առնեին.

«Արդեն 3-րդ հազարամյակում մ.թ.ա. մետաղի արդյունաբերությունը բարձր մակարդակի վրա էր գտնվում Հայկական լեռնաշխարհում, ուստի և այն կարող էր դառնալ մետաղագործական հումքի ու պատրաստի արտադրանքի հնագույն օջախ»[113]:

Զենքի արտադրությունը մետաղագործությունից կախում ունեցող ամենամեծ ոլորտներից է: Տարբեր դարաշրջանի հնագիտական հուշարձաններում գտնված տարատեսակ զենքերը խոսում են այն մասին, որ զինագործությունը Հայաստանում բարձր մակարդակի վրա է եղել.

«Զենքերի ու գործիքների զգալի կատարելագործում է նկատվում Արծն Կարազի, Էջմիածնի հավաքածուներում, Լենինականի, Սևանի հնագիտական համալիրներում, որոնց մեջ առանձնապես աչքի են ընկնում մ.թ.ա. 3-րդ հազ. վերջին դարերին պատկանող մարտական խողովակակոթառ տապարները»[114]:

«Բացառիկ հետաքրքրություն է ներկայացնում բրոնզե առարկաների չօգտագործված հիասքանչ գտածոն, որը հայտնաբերվել է 1967 թ. Երևանի շրջանում: Այն կազմված է ութ մեծ կտցող կացիններից և տասը տափակ ուրագանման անսովոր մեծ կացիններից: Այս պահեստարանի բացահայտումը դեռևս Կովկասում առաջինն է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի բրոնզեդարյան պահեստարանների մեջ»[115]:

Կտցող կացինները հիմնականում օգտագործվել են որպես զինամիջոց, սակայն հայտնաբերված բրոնզե զենքերի տեսականին չի սահմանափակվում մարտական կացիններով. հայտնաբերվել են նաև դաշույններ, նիզակներ և այլ զինատեսակներ.

---

112 Р. М. Мунчаев... ст. 399.

113 Ս. Ա. Սարդարյան... էջ 166:

114 Հարություն Մարտիրոսյան... էջ 77, 78:

115 Р. М. Мунчаев... ст. 389, 399.

«Հայաստանում վաղ բրոնզի դարաշրջանում մետաղամշակման, մետաղաձուլության գոյությունը վկայող փաստերից են հայտնաբերված տարատեսակ կացիններն ու նրանց ձուլման կաղապարները, մանգաղները, դաշույնները, նիզակները, տեգի ծայրերը»[116]*:*

Հազարավոր տարիներ ի վեր՝ զինագործության մեջ առաջնային երկրները տնտեսական բարձր մակարդակ են ենթադրել:

Հայաստանում հայտնաբերված զենքերի ձուլման կաղապարներն ապացույց են, որ զենքերը չեն ներմուծվել, այլ արտադրվել են տեղում և այնպիսի քանակությամբ, որ սեփական կարիքներից բացի՝ փոխանակվել կամ վաճառվել են հարևան, անգամ հեռավոր երկրներ.

«Անդրադառնալով Ք. ա. 3-րդ հազարամյակում մետաղագործության կարևոր ճյուղերից զինագործությանը՝ անհրաժեշտ է նշել, որ այդ ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհի հնավայրերից գտնված կոթառավոր սեպաձև կացինները, լայնաշեղբ դաշույնները և փետրավոր նիզակների գեղարդները բազմաթիվ զուգահեռներ ունեն Իրանի, Փոքր Ասիայի, Կովկասի և հատկապես Միջագետքի հնավայրերում: Բացի զենքերից՝ Հայաստանից գտնվել են նաև դրանց ձուլման բազմաթիվ կաղապարներ, որոնք վկայում են դրանց տեղական արտադրության մասին»[117]*:*

Ներքին և Վերին նավեր հնավայրերից բազմաթիվ զարմանալի առարկաների հետ միասին հայտնաբերվել է նաև Ն.Ք. 3-րդ հազարամյակին պատկանող սուսեր.

«Մեկ այլ գտածո, որն իր նշանակությամբ առանձնահատուկ տեղ է գրավում, սուսերն էր: Սուսերը ռազմական մասնագիտացված առաջին զենքն էր: Այն վերագրվում է մ.թ.ա. 23-րդ դարին: Լուսապատկերային հետազոտությունը ցույց է տվել, որ սուսերը պատրաստված է անագե բրոնզից: Անագի պարունակությունը սուսերում 11-12 տոկոս էր: Իզոտոպային հետազոտության տվյալների համաձայն՝ պղնձի հանքաքարը հայկական ծագման էր: Այն հանել են Ալավերդու հանքավայրերից»[118]*:*

*Զինատեսակների արտադրության մեջ Հայաստանը աչքի է ընկել հատկապես յուրահատուկ նետ ու աղեղի պատրաստման մեջ: Տեսիլքի միջոցով Հայկ նահապետին տրված եզակի խոշոր նետ ու աղեղի պատրաստումը գաղտնի և դարեր շարունակ գործածական է եղել Հայաստանում. **«...լայնալիճ աղեղը, որ գործածել է լեգենդար Հայկը Բելին սպանելիս**, 3-րդ հազարամյակից գալիս հասնում է առաջին հազարամյակ»*[119]:

Հայաստանի տարբեր հնավայրերում պեղված զենքերից կռահում ենք, որ

---

[116] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 46:

[117] Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան, 1992թ., էջ 65:

[118] Գայանե Վասիլյան, PanARMENIAN News, «Հայաստանը հնդեվրոպական քաղաքակրթության օրրանն է»: http://www.panarmenian.net/arm/details/51219/

[119] Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես Ամսօրյա, հունվար-դեկտեմբեր, 1998թ., էջ 424:

դրանք պատրաստողները եղել են բավականին բարդ տեխնիկաների տիրապետող հմուտ վարպետներ։

Զինագործության շնորհիվ հզորանում էին երկրի զինված ուժերը, իսկ զենքի առևտուրը նպաստում էր տնտեսության աճին.

«Մետաղաձուլման հմտությունը վիթխարի տեխնիկական նվաճում էր ամեն ազգի համար, որը տիրապետելով նոր գիտության գաղտնիքներին՝ կտրուկ առաջ էր անցել նեոլիթյան դարաշրջանի իր եղբայրներից։ Բոլոր նորագույն տեխնիկական նվաճումներն անմիջապես օգտագործվեցին զինվորական գործում՝ զինվորներին տալով մեծ առավելություն։ Զինվելով բրոնզե սրերով և զգեստավորվելով պղնձե զենք ու զրահով՝ նրանք դառնում էին անխոցելի»[120]։

Երկաթե զենքեր

Բրոնզի դարին վերջ դնող երկաթը հետզհետե նվաճեց աշխարհը։

Պղնձե և բրոնզե զենքերը փոխարինվեցին մեծ առավելություններ ունեցող երկաթե զենքերով.

«Ավելի քան մ.թ.ա. 2000 թ. Միջագետքում և Փոքր Ասիայում, բացի երկնաքարային երկաթի զարդերից, հանդիպում են երկաթե փոքր առարկաներ՝ երկար ժամանակ հողի տակ թաքնված մնացած։ Իսկ հաջորդ հարյուրամյակի ընթացքում այդ առարկաները շատացան։ Դա վկայում է այն մասին, որ երկաթի ստացման գաղտնիքը հայտնի էր դարձել։ Բազում հիմքեր կան ենթադրելու, որ այն հայտնագործվել էր և նախանձախնդրորեն թաքցվել բարբարոսական ինչ-որ աստիճանի վրա գտնվող հայկական ցեղերի կողմից, որոնց տեղանքում հանդիպում են հարուստ երկաթի հանքեր։ Այնուհետև մ.թ.ա. 1100 թվականից հետո սկսվեց երկաթե զենքերի ու զինամթերքի զանգվածային պատրաստումը»[121]։

Երկաթից պատրաստված աշխատանքային գործիքները մեծ առաջադիմություն պատճառ դարձան տարբեր տնտեսական ճյուղերի համար, սակայն անխուսափելի էր երկաթի կիրառումը նաև պատերազմական գործողությունների ժամանակ։ Երկաթյա զենքերն այն աստիճան արդյունավետ էին պատերազմներում, որ դրանք օգտագործողները երկաթի գյուտին անհաղորդ երկրների հետ պատերազմելիս՝ նրանց ծանր, կործանարար հարվածներ էին հասցնում։

«Դա բառի բուն իմաստով դարաշրջանային առաջադիմություն էր, սակայն միաժամանակ և համայն մարդկության համար ողբերգական հայտնագործություն։ Կենցաղում երկաթի օգտագործման մեծ հնարավորությունների հետ միասին մարդը գտավ նաև միջոց, ինչի օգնությամբ բռնություններ և ամենատարբեր բարբարոսական արարքներ էին գործվում։ Չկա երկաթին նման մի այլ մետաղ, որի պատմության մեջ այդչափ սերտորեն հյուսված լինեին առաջադիմությունը և արյունալի չարագործությունները»[122]։

---

120 Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли…”, Москва, 2005. ст. 84.

121 Гордон Чайлд, Прогрессс и археология, Москва, 1949, ст. 76-77.

122 Карл Бакс. Богатства земных недр. Москва. Из. “Прогресс”. 1986թ., ст. 227-228.

Երկաթե զենքերի մասին լուրը խռովքի էր մատնել Հայաստանի հարևան երկրներին, քանի որ այդ նորույթը շատ անգամ գերազանցում էր բրոնզից պատրաստված զենքերին.

«Թող կործանվի խալիբների տոհմը, ով հայտնագործեց հողից ծնունդ առած այդ չար ուժը»[123]: Ի՞նչն է առիթ տվել ալեքսանդրացի հույն բանաստեղծին՝ նզովքի խոսքեր ուղղել Սև ծովի հարավարևելյան ափին գտնվող Բարձր Հայքի Սպեր և Տայք գավառներին սահմանակից պատմական խաղտիք երկրի բնակիչներին, որոնք հույներին հայտնի էին արմենո խալիբներ անունով: Խալիբներն առաջիններից էին, որ զբաղվեցին երկաթաքարի մշակմամբ: Պարզվում է, որ եթե մեզ՝ 20-րդ դարի զավակներիս, սարսափեցնում է միջուկային զենքը, ապա Ք. ա. 4-րդ դարի մտածողներին ահաբեկել է երկաթյա զենքը՝ սուրն ու կացինը, նիզակների ու նետերի ծայրապանակները, որոնք իրենց ամրությամբ ու հզորությամբ գերազանցում էին բրոնզյա զենքերին և ավելի «դաժան» ու «անմարդկային» էին...

Բաքսը գրում է. «Նոր մետաղի և դրանից ստացված՝ իր ամրությամբ անգերազանցելի զենքի մասին լուրը, հավանաբար, եգիպտացիների՝ հանքանյութերի այդ գիտակների, փորձված մետաղաձուլողների մեջ առաջացրեց անասելի զարմանք՝ ինչ-որ անորոշ սարսափի զգացում»»[124]:

Ջինամթերքի տեսականու մեջ մեծ տեղ են գրավել մարտակառքերը և դրանց շարժիչ ուժը՝ նժույգները:

Գիտական աշխարհի գերակշիռ մասն այն համոզումն ունի, որ թե՛ մարտակառքերի, թե՛ ձիաբուծության հայրենիքը Հայաստանն է: Սակայն այդ մասին ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդ հատորի երկրորդ՝ «Հիքսոսներ» գրքում:

Գյուղատնտեսություն

«Առաջավոր Ասիայում եզներով լծված սայլի ի հայտ գալը 4 - 3 հազ. մ. թ. ա. մարդկության ամենակարևոր ձեռքբերումներից մեկն էր,- նշում է Ջայլդը: Վաղ բրոնզի շրջանում Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերի կողմից խոշոր եղջերավոր անասունների օգտագործումը բերեց մարդկության մի այլ, ոչ պակաս կարևոր հայտնագործության՝ պարզ գութանի, ավելի ստույգ՝ արորի ի հայտ գալուն»[125]:

Հայկ Նահապետի օրոք Հայաստանում բարգավաճում էր նաև գյուղատնտեսությունը: Երկիրն առանձնահատուկ էր իր եղանակային պայմաններով ու աշխարհագրական գոտիների բազմազանությամբ (լեռնային, կիսալեռնային, հարթավայրային): Դա հնարավոր էր դարձնում գյուղատնտեսության տարբեր ճյու-

---

123 Կալիմաքոս (Ք. ա. 310-235):

124 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ, էջ 91, 92, 93:

125 Л.Л. Карапртян. “Хозяйство и духовная культура древней Армении”. Ереван 1999. ст. 56.

ղերի զարգացումը: Լեռնային՝ ալպիական գոտիներում ավելի զարգացած էր անասնաբուծությունը, իսկ ցածրադիր գոտիներում՝ այգեգործությունը, բանջարանոցային և հատիկաբուսային կուլտուրաների մշակումը.

«Կովկասում և հատկապես Անդրկովկասում արտադրական տնտեսության հնարավորությունը ամենալայնն էր: Մեղմ կլիման, առատ անտառները, ուր շատ էին ուտելի վայրի պտուղները, հարուստ էր կենդանական աշխարհը, այս ամենը նպաստում էին այստեղ պալեոլիթի շրջանում մարդկային կյանքի ծաղկմանը: Իսկ նեոլիթի դարաշրջանում, հնարավոր է՝ հարավի և հարավարևմուտքի հաստատուն ազդեցության տակ, այստեղ հիմք դրվեց արտադրող տնտեսության ձևավորմանը՝ այսինքն, գյուղատնտեսությանը և անասնապահությանը»[126]:

Այն փաստը, որ Նոյան տապանը հանգրվանել էր Հայոց երկրում, և որ այստեղից էր սկսվել հետջրհեղեղյան կյանքը, հավաստում է, որ հենց այս տարածքն է եղել կենդանիների և պտուղ-բանջարեղենի հայրենիքը:

Դա հաստատում են նաև գիտական տվյալները.

«Էթնոլոգները սովորաբար երկրի այս մասը համարում են մարդկային ցեղի ծագման և տարածման սկզբնավայրը: Աշխարհի այս մասից են ելել կենդանիները՝ կովերը, այծերը, ոչխարները, ձիերը, խոզերը, շները: Նաև մրգերը՝ խնձորը, դեղձը, տանձը, սալորը, բալը, սերկևիլը, թութը, հաղարջը, խաղողը, ձիթապտուղը, թուզը, արմավը, նուշը: Նաև հատիկաբույսերը՝ ցորենը, գարին, վարսակը, ոլոռը, լոբին, նաև վուշը, սպանախը, բողկը, սոխը, սխտորը՝ այսինքն, մեր մրգերի և բանջարեղենի մեծ մասը»[127]:

Այս ոլորտին առնչվող հնագիտական հետազոտությունների արդյունքները համահունչ են Աստվածաշնչյան տեղեկություններին:

Հայաստանում գյուղատնտեսության տարբեր ճյուղերի զարգացման մասին են խոսում հնավայրերից, հատկապես Արարատ լեռան շրջակայքի պեղումներից ձեռք բերված նյութերը.

«Հայկական լեռնաշխարհի համեմատաբար լավ ուսումնասիրված հուշարձաններից է Արաքսի միջին հոսանքում տեղակայված Նախիջևանյան Գյուլ տեպեի առաջին (ներքին) շերտը: Հարկ է նշել, որ Գյուլ տեպեի տվյալ շերտի ուսումնասիրությունները սկիզբ դրեցին Կովկասի 5-6 հազ. մ. թ. ա. հողագործ անասնապահների մշակույթի հետազոտմանը»[128]:

«Հայաստանում՝ Արարատյան դաշտավայրում, նստակյաց հողագործական հուշարձանների հետազոտությունից ամբողջական տվյալներ են ստացվել: Դրանցից են Մաղկունքը, Խաթունարխը և այլն: Առավել հեղինակություն է վայելում էջմիածնի մոտ գտնվող Թեղուտի բնակավայրը»[129]:

---

126 Р. М. Мунчаев... ст. 9.

127 Генри Г. Геллей. Библейский Справочник Геллея. Торонто 1989. ст.72.

128 Л.Л. Карапртян. “Хозяйство и духовная культура древной Армении”. Ереван 1999. ст. 26.

129 Р. М. Мунчаев... ст. 35.

Անասնապահություն

Դեռ շումերական արձանագրություններում պահպանվել են Հայաստանի՝ Արատտայի գյուղատնտեսության տարբեր ճյուղերի մասին տեղեկություններ.

«Արատտայի պետական կարգի մասին խոսելիս ասվեց, որ դյուցազնավեպում հիշատակվում է պաշտոնյաների երկու խումբ, որոնք անմիջապես կապված են տնտեսության հետ. դրանք են հարկահավաքներն ու վերակացուները: «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգում Արատտայի տնտեսության մասին պահպանվել են կարևոր այլ տեղեկություններ ևս: Արատտան լեռնային երկիր էր: Նրա տնտեսության մեջ առաջնակարգ դեր է խաղացել անասնապահությունը»[130]:

Իսկապես, հնագիտական տարբեր շերտերում հայտնաբերված տնային կենդանիների մնացորդները խոսում են տարբեր ժամանակներում Հայաստանի տարածքում անասնաբուծության զարգացման մասին.

«Հետաքրքիր նյութեր է պարունակում Շենգավիթի բնակավայրի երևացող, ցածր շերտը: Այդպես 60-ական թվականների աշխատանքների արդյունքում Անդրկովկասում ի հայտ եկավ մեծ մշակութային ժամանակագրական շերտ, որը բնութագրվում է մ.թ.ա. 5–4-րդ հազարամյակների գյուղատնտեսության և անասնաբուծության տարբեր վաղ շերտերի զարգացմամբ»[131]:

«Բացի աշխատանքային գործիքներից՝ էնեոլիթյան երկրագործության մեջ զգալի դեր էին կատարում նաև բանող անասունները՝ հատկապես կալսման ու փոխադրման աշխատանքների ժամանակ: Անասնապահությունն էնեոլիթյան Հայաստանի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր: Վերը հիշատակած բնակավայրերում հանդիպում են ցուլերի (կովերի), այծերի, ոչխարների, խոզերի ոսկրային մնացորդներ: Այս կենդանիներն օգտագործվել են իբրև բանող ուժ և ապահովել մսի, կաթնամթերքների, կաշեգործության, մանածագործության, ոսկրագործության աճող պահանջները»[132]:

Հետազոտողներից շատերը բազմաթիվ կենդանիների ընտելացման վայր համարում են Հայաստանը: Ջիթաբուծությունը այդ առումով առաջնային տեղ էր գրավում: ***«Անասնապահության զարգացման մասին են վկայում նեոլիթյան և էնեոլիթյան բնակատեղիներում գտնված ընտանի կենդանիների՝ ցուլի, ոչխարի, այծի, ինչպես նաև խոզի, ձիու, էշի մեծ թվով ոսկորները:***

Մանր եղջերավոր անասունները մեր երկրում ընդհանուր տարածում են գտել՝ սկսած դեռևս նոր քարի դարից: Պետք է նշել, որ վայրի այծը և վայրի ոչխարը այժմ էլ պահպանվել են Հայաստանի տարածքում և համարվում են ընտանի ոչխարի ու այծի նախահայրերը: Սա կարևոր կռվան է ենթադրելու, որ Հայաստանը եղել է ոչխարների ու այծերի ընտելացման հայրենիք:

Կենդանիների ոսկրային մնացորդների մեծ մասը պատկանում է մանր եղջերավոր անասուններին. գտնված են այծի ու ոչխարի մեծ թվով ոսկորներ...

---

[130] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 57:

[131] Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975,ст. 36.

[132] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 61:

Սպիտակի շրջանի բնակավայրերից Ս. Կ. Դալը գտել է շատ հին ժամանակների (3 000 տ. մ.թ.ա.) ընտանի կենդանիների (ոչխար, այծ, ձի, ցուլ, գոմեշ) ոսկորներ» [133]*։*

Հացաբույսեր

Հացաբույսերը կարևոր դեր են խաղացել մարդկության կենսակերպի մեջ։ Հայաստանն ըստ մասնագետների՝ համարվում է նաև հացահատիկների հայրենիքը. այստեղ աճել են այդ բույսերի շատ տեսակներ, և այստեղից է այն տարածվել հարևան երկրներ.

«Հայկական լեռնաշխարհը երկրագործական մշակույթի ամենահնագույն օջախներից մեկն է։ Հայաստանը եղել է մշակութային, այդ թվում պեղածո հացաբույսերի՝ ցորենի, գարու տարբեր տեսակների նախահայրենիքը, որտեղ հանդիպում են նաև վայրի հացահատիկի ու բույսերի բազմազան տեսակներ՝ պեղածո մշակութային ցորեն, գարի, հաճար, ոլոռի մի քանի տարբերակներ, գյուղուլ (վիկ), այդ թվում պանոնյան և, հավանաբար, նարբոնյան վիկ, սիսեռ և այլն։ Մեր միահատիկ ցորենը, հատկապես փափուկ տեսակը, ծագում է շատ հին ժամանակներից։ Այն առաջացել է դեռևս ուշ պալեոլիթում։

Վայրի ցորենի մնացորդներ մեծ քանակությամբ գտնվել են Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում։

Օրգանական մնացորդների գյուտերը վկայում են, որ Հայաստանում նեոլիթի և էնեոլիթի դարաշրջանում երկրագործական մշակույթի հիմնական նյութը ցորենի ու գարու տեղական տեսակներն են։ Հայաստանում գտնված պեղածո մշակութային հացաբույսերը հիմք են տալիս ենթադրելու, որ հնագույն ժամանակներից Հայաստանի ազգաբնակչությունն օգտագործել է վայրի ցորեն։ Արարատյան դաշտավայրում՝ Շենգավիթում, Շրեշ բլուրում, Մոխրաբլուրում, Նախիջևանի Քյուլթափայում գտնվել է երեք տեսակի վայրի ցորեն՝ փոքրասիական միահատիկ, ուրարտական և կարմրահատ (հաճար)։

Մեզ մոտ բավական մեծ տարածում են ստացել ցորենի փափուկ և կոշտ տեսակները, որոնք մոտ են միահատիկին։ Էնեոլիթյան բնակատեղիներից փափուկ ցորեն գտնվել է Արարատյան դաշտում, այլ բնակատեղիներում և դամբանաթմբերում։

Ըստ երևույթին, փափուկ ցորենը, որ մոտ է գաճաճ և վանյան կամ վավիլովյան ցորենին, իր ծագումն առել է Հայաստանից՝ դեռևս նոր քարի դարի և էնեոլիթի ժամանակ։ Բացի ցորենների այս տեսակներից՝ Հայաստանում (Շենգավիթում) հայտնաբերվել է նաև կլորահատիկ փափուկ ցորեն, որն ունի մանր հատիկներ և չի պատկանում ցորենի մինչև այժմ հայտնի տեսակներին։ Այն լայնորեն տարածված է եղել Հայաստանում՝ պղնձի դարում»*[134]*։

---

[133] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան 1967թ., էջ 236, 238:
[134] Նույն տեղում, էջ 230, 231:

Այն, որ Հայաստանը հարուստ է եղել ցորենի տեսակներով, և դեռևս խոր անցյալում մեծ զարգացում է ապրել գյուղատնտեսության այս ճյուղը, համընդհանուր կարծիք է հնագետների շրջանում.

«Քննարկվող ժամանակում Հայաստանի բնակավայրերում հայտնի են բազմաթիվ հատիկաբույսերի տեսակներ, որոնք վկայում են ինտենսիվ երկրագործության մասին»[135]:

«Իրոք այստեղ՝ հիմնականում Անդրկովկասում, աճում են բազմազան և բարձր որակի վայրի ցորեն և գարի... Դեռ Վ. Լ. Կոմարովն[136] է նշել, որ աշխարհի ոչ մի երկրում գոյություն չունեն ցորենի այնքան տեսակներ, որքան Հայաստանում»[137]:

Գութան

Հայաստանում երկրագործության բարձր մակարդակի մասին են վկայում ոչ միայն հնագույն հուշարձաններից հայտնաբերված հասկերի և ցորենի հատիկները, այլև գյուղատնտեսական գործիքները.

«Բացի հացաբույսերի մնացորդներից՝ Թեղուտի, Նախիջևանի, Քյուլ Թեփեի, Շամիրամալթիի, Աղստևի բնակավայրերում հայտնաբերվել են ցանքսի, բերքահավաքի, երկրագործական մթերքների վերամշակման հարյուրավոր գործիքներ, որոնցով բնորոշվում է ժամանակի վաղ երկրագործական տնտեսության բնույթն ու մակարդակը»[138]:

Մետաղագործության, երկրագործության և անասնաբուծության զարգացումով էր պայմանավորված տնտեսության աննախադեպ աճը Հայաստանում.

«Վաղ բրոնզեդարյան Հայաստանում մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներից երկրագործության զարգացման նախնական էտապներին բնորոշ բրիչային երկրագործությունը մղվում է երկրորդ պլան, երևան է գալիս պարզունակ արորը, որի օգտագործումը խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ հասցնում է աշխատանքի արտադրողականության նոր մակարդակի: Մեծ քանակությամբ բուծվող լծկան անասունը լայնորեն օգտագործվում է ինչպես վար ու ցանքսի, այնպես էլ կալսման ու տեղափոխման աշխատանքների ժամանակ: Երկրագործության նոր մակարդակին համապատասխան՝ փոխվում ու զարգանում են նաև հունձի և վերամշակման գործիքների տիպերն ու ձևերը: Սանդերը, սանդակոթերը, աղորիքները փոխվում են որակապես ու քանակապես. ուրեմն, փոխվում են և նրանց ֆունկցիոնալ հատկությունները:

Պարզունակ ոռոգման կիրառումը, նոր վարելահողերի իրացումը, խոշոր եղջերավոր անասունների օգտագործումը երկրագործության մեջ և գյուղատըն-

---

135 Л.Л. Карапртян. “Хозяйство и духовная культура древной Армении”. Ереван 1999, ст. 39.

136 В. Комаров, Происхождение культурных растений. М.-Л, 1938.

137 Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975, ст. 9.

138 Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 60, 61:

տեսական գործիքների զգալի կատարելագործումը հասցնում են հասարակական արտադրության նոր վերելքի, նախնադարյան համայնքի բարգավաճմանն ու ծաղկմանը»[139]:

Հայաստանում մետաղագործության և անասնապահության զարգացմամբ ի հայտ եկավ գութանը, որն իր արդյունավետությամբ դարձավ երկրագործության մեջ անփոխարինելի աշխատանքային գործիք.

«Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում դառնում է Առաջավոր Ասիայի վաղ հողագործական զարգացած կենտրոններից մեկը: Հողագործության զարգացմանը վաղ բրոնզեդարյան դարաշրջանում նպաստել է քարշակ ուժերի օգտագործումը, ինչը բերեց գութանային հողագործության ի հայտ գալուն»[140]:

Այգեգործություն

Այգեգործությունը ևս Հայաստանի գյուղատնտեսական հնագույն, զարգացած ճյուղերից է: Այժմ էլ Հայաստանի մրգերը մեծ պահանջարկ ունեն տարբեր երկրներում՝ իրենց համի և բույրի շնորհիվ:

Արդարացված է գիտնականների հավաստումը, որ թե՛ ընտանի կենդանիների, թե՛ հացահատիկների և թե՛ մրգերից շատերի հայրենիքը Հայաստանն է.

«Ն. Ի. Վավիլովը գտնում է, որ մշակութային խաղողի ձևավորման հիմնական օջախներն Անդրկովկասն ու Հայաստանն են:

Այգեգործության զարգացումը Հայաստանում վերաբերում է, ըստ երևույթին, շատ հին ժամանակներին: Ըստ Ն. Վավիլովի և Պ. Մ. Ժուկովսկու՝ Անդրկովկասն ու Հայաստանը բազմատեսակ մրգերի ու պտուղների մշակման հայրենիքն են:

Հայաստանում այգեգործության մշակույթը զարգացել է մ.թ.ա. 3-րդ հազարամյակում՝ էնեոլիթում: Այդ են ապացուցում Հայաստանում հնագիտական պեղումներով հայտնաբերված այգեգործության հետքերը. Հայաստանի էնեոլիթյան բնակատեղիներից Գառնիի ստորոտին՝ էնեոլիթյան շերտում, գտնված են ծիրանի կորիզներ, իսկ Շենգավիթի բնակատեղիում՝ կեռասի, հոնի կորիզներ: Խանլարի էնեոլիթյան բնակատեղին (Արցախում) տվել է դեղձի, խաղողի կորիզներ, մորու սերմեր: Պետք է ենթադրել, ուրեմն, որ մշակութային ծիրանը, դեղձը, խաղողը, կեռասը, հոնը և սալորը առաջացել են նաև Հայաստանում»[141]:

Հատկապես այդ առումով առավել ճանաչված է ծիրանը, ինչը հին աշխարհին ծանոթ էր «արմենիկուս» անվամբ:

«Ծիրանի հայրենիքը Հայաստանն է»[142]:

---

[139] Հարություն Մարտիրոսյան... էջ 70, 71:

[140] Л.Л. Карапетян... ст. 36.

[141] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 235:

[142] Л.Л. Карапетян... ст. 41.

Ոռոգում

Երկրագործության համար կարևոր պայմաններից է ոռոգման ցանցերի ապահովումը:

Մետաղագործությունը խթանեց նաև դրա զարգացումը: Դա հնարավոր էր միայն մետաղե հատուկ աշխատանքային գործիքների օգնությամբ, որոնց պակասը Հայաստանի երկրագործները չունեին.

«Երրորդ հազարամյակի վերջում՝ մ.թ.ա., Հայկական լեռնաշխարհում արտադրողական ուժերի զարգացումը նոր աստիճանի հասավ: Պղնձի ձուլման տեխնիկայի յուրացումը հին հողագործներին տվեց ավելի կատարյալ գործիքներ: Այդ գործիքները հնարավորություն տվեցին նաև ոռոգող առուներ փորել»[143]:

Հայաստանի համար այդ օրհնաբեր ժամանակաշրջանում, ամենատարբեր ոլորտներ մեծ առաջընթաց էին ապրում, և նորանոր գյուտերի երևան գալը նպաստում էր ոչ միայն տեղական տնտեսության բարելավմանը, այլև վաղ թե ուշ՝ դրան հաղորդ էին դառնում նաև հարևան երկրները.

«Եվրոպական հնագետների վկայությամբ քեհարիզների (ստորգետնյա ջրատարների) գյուտը հայերին է պատկանում: Ստորգետնյա թունելները տասնյակ կիլոմետրերով ձգվել են հարթ դաշտերի տակով և ջուր հասցրել չորային բնակավայրերին»[144]:

Քանի որ Հայկական լեռնաշխարհը հարուստ էր ջրային պաշարներով՝ լճերով, գետերով, աղբյուրներով, հայ հողագործները ոչ միայն ստորգետնյա ջրատարներից էին օգտվում, այլև այդ նպատակին էին ծառայեցնում պարզ ոռոգման հնարավորությունները.

«Գետահովիտներում ու լեռների լանջերին սփռված բնակատեղիներին կից ցանքատարածությունները զգալի չափերով ընդարձակվում են նոր վարելահողերի իրացման ու անտառների ոչնչացման հաշվին: Ցանքատարածությունների տեղադրությունը լայն հնարավորություններ է ստեղծում մշակելի հողերի ոռոգման համար: Արաքս, Եփրատ, Տիգրիս և այլ գետերն ու նրանց հարյուրավոր վտակները պարզ ոռոգման անսպառ շտեմարաններ են դառնում: Նախալեռնային և լեռնային շրջաններում նպատակահարմար ձևով են օգտագործվում հեղեղատների, լեռնային գետակների ու հալվող ձյան ջրերը:

Շնորհիվ երկրի բարենպաստ բնակլիմայական պայմանների և պարզ ոռոգման՝ վաղ բրոնզեդարյան Հայաստանի երկրագործությունը բուռն վերելք է ապրում. երկրագործական բարիքների արտադրության առատությունն ապահովում է ոչ միայն տեղական համայնքների աննդամթերքի պահանջը, այլև աճող առևտրատնտեսական կարիքները: Այս շրջանի բնակատեղիների կացարաններում

---

143 Ս. Ա. Սարդարյան... էջ 242:

144 Գաբրիելյան Հ. Գ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես ամսօրյա, Երևան. 1998 թ., էջ 402:

ու նրանցից դուրս բացված հսկա կարասներն ու բազմաթիվ հորերը հաճախ բերնեբերան կամ կիսով չափ լցված են հացահատիկով»[145]*։*

Ոռոգման համար օգտագործվել են նաև արտեզյան ջրերը, ինչով ավելի հարուստ են հարթավայրային շրջանները՝ հատկապես Արարատյան դաշտավայրը։ Իսկ արագահոս գետերի առավելություններն օգտագործվում էին նաև ջրաղացներ կառուցելու համար.

«Հայկական լեռնաշխարհի գետերը ունեն մեծ անկում և սահանքավոր են։ Այդ հանգամանքը օգտագործել են հայերը, և ջրաղացների գյուտը հայերին է պատկանում»[146]*։*

Գինի

«Հայաստանի բարձրագույն լեռան վրա հանգրվանեց տապանը։ Հայաստանում սկսվեց ավերված աշխարհի վերաբնակեցումը։ Վերջապես Հայաստանում Նոյը տնկեց խաղողի այգին և առաջին անգամ փորձարկեց գինու զորությունը» [147]*։*

Գյուղատնտեսության կարևոր ճյուղերից մեկը Հայաստանի համար գինեգործությունն է։ Այս ոլորտի յուրահատկությունն այն է, որ հենց Սուրբ Գիրքն է վկայում, որ գինեգործության հայրենիքը Հայաստանն է։

Ջրհեղեղի բաժնում մենք արդեն անդրադարձանք այս թեմային, թե ինչպես Նոյ նահապետը խաղողի այգի տնկեց և գինի պատրաստեց Արարատ լեռան ստորոտում.

«Գալիս է ժամը. տապանը կանգ է առնում, և հայերի նախահայր Նոյ նահապետն իր ընտանիքով հեռանում է ժամանակավոր ապաստարանից և բնակություն է հաստատում Արարատի մերձակայքում՝ ներկայիս Հայաստանում։ Այնտեղ՝ այդ օրհնյալ երկրում, ըստ պատմաբանների վկայության՝ մարդկության օրրանում, որտեղ և ժամանակին գտնվում էր երկրավոր Դրախտը, նահապետը առաջին անգամ խաղող տնկեց և մարդկանց նվիրեց նոր խմիչք՝ պատրաստելով առաջին գինին։ Հայաստանում այդ կերպ էր ընթանում մարդկային ցեղի երիտասարդությունը, ում մարդիկ պարտական են նաև գինեգործության համար»[148]*։*

Գիտնականներից շատերը Սուրբ Գրքի այդ տեղեկությունն են հիմք ընդունել իրենց հետազոտական աշխատանքների համար.

---

[145] Հարություն Մարտիրոսյան... էջ 69, 70:

[146] Գաբրիելյան Հ. Կ., «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես ամսօրյա, 1998թ., էջ 402:

[147] Ալեքսանդր Դյումա (Հայր): Տե՛ս Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 212:

[148] М. Ахов. Очерки из истории Армянского “госвдарства”. С.- Петербург. 1897, ст. 5.

«Ինչ վերաբերում է մշակութային խաղողի հայկական ծագմանը, հնագետները և գինեգործության մասնագետները այս կապակցությամբ աջակցություն են ստանում Սուրբ Գրքից: Մննդոց գրքում տեղեկացվում է, որ տապանի հանգրվանելուց հետո Նոյի առաջին գործողություններից մեկը Արարատ լեռան վրա խաղողի տնկումն էր, ինչի տեղը ցույց էին տալիս ուխտավորներին այդ լեռան լանջերին՝ մինչ 1840 թիվը, երբ սարսափելի երկրաշարժի արդյունքում ավերվեցին մոտակա բնակավայրերը և վանքը»[149]:

Նրանք, ովքեր Սուրբ Գիրքն ընդունում են որպես Աստծո Խոսք՝ կատարյալ ճշմարտություն, անկասկած, ընդունում են նաև Հայաստանի՝ գինեգործության հայրենիք լինելու փաստը, հատկապես, որ Նոյի ժամանակներից մինչև օրս մեր երկրում՝ հատկապես Արարատյան դաշտավայրում, խաղողի մշակումն ու գինեգործությունը բարձր մակարդակի վրա են.

«Բավ է այցելել Երևանի մրգատու այգիներից թեկուզ մեկը, որպեսզի հասկանաս, թե ինչու են հին մարդիկ մերձարարատյան տեղանքը համարել խաղողի հայրենիք, և ի դեմս Նոյի՝ առաջին գինեգործ: Հազիվ թե որևէ տեղ կարելի է հանդիպել խաղողի տեսականու նման բազմազանության, միևնույն ժամանակ՝ բարձր որակի: Սկսած մանր, բայց քաղցր, առանց կորիզների քիշմիշից և վերջացրած երկար, ճկույթաձափ խաղողից՝ այստեղ հանդիպում են մինչև 32 տեսակի ամենատարբեր ձևի, գույնի և համի խաղողներ: Իսկ երևանյան գինին չնայած հնեցված է, բայց շատ թունդ է և գլխին է տալիս: Ներկայումս հայերի մեջ կան արտակարգ գինեգործներ» [150]:

Այո, հայոց համբավավոր գինիները և գինեգործությունը Նոյի օրերից սկսած՝ մշտապես եղել է Հայաստանի տնտեսության առաջատար ճյուղերից մեկը.

«Ուրարտական գինիների համբավը (ըստ երևույթին) հասել է մինչև հին հրեաներին, որոնք բնակվում էին հեռավոր արևմուտքում՝ Պաղեստինում, որտեղ այս հայտնագործությունը դեռևս անհիշելի ժամանակներից ներմուծվել է Հայաստանից, ինչի վկայությունը հենց Աստվածաշնչյան պատմությունն է:

Հնագիտությունը նույնպես իր արժեքավոր ներդրումն է ունեցել Հայաստանը առաջին գինեգործության վայր ճանաչելու հարցում: Միանդոաբական հարթավայրում կատարված պեղումների ժամանակ գտնված կավե անոթի մեջ հայտնաբերվել է թանձր նստվածք: Քիմիական հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ դա պարզ գինու նստվածք էր: Հենց հայտնագործման փաստը, ինչպես նաև խեցու ոճը, թույլ է տալիս այդ կավե անոթի ստեղծումը տեղափոխել մ. թ. ա. 6-րդ հազարամյակ, ինչը հիմք է տալիս թվագրել այդ աշխարհում հնագույն գինու մառանը՝ գտնված Արատտայի պալատում մ. թ. ա. մոտավորապես 5500 թ.»[151]:

Հայկական Լեռնաշխարհում՝ Արատտայի պալատներում, գտնված գինե-

---

149 ДевидЛэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 68.

150 Н. А. Александрова. Закавказье. Армяне. Москва 1901. ст. 24-25.

151 Дэвид Рол - Генезис цивилизации откуда мы произошли . . ., Москва, 2005, ст. 162-163.

գործության ամենահին վկայությունը եզակի չէ. վերջերս Արենիի քարանձավներից մեկում հայտնաբերվեցին մոտ 6000 տարվա հնության գինեգործության ամբողջական գործարանի հետքեր:



Եգիպտոսից, Ամերիկայից և Կալիֆոռնիայի համալսարանից ժամանած արշավախումբը Հանս Բեռնարդի ղեկավարությամբ այստեղ հայտնաբերեց նաև մամլիչի մնացորդներ, գինու պահպանման համար նախատեսված սափորներ և արտադրական թափոններ՝ խաղողի կորիզներ, քամված ողկույզների մնացորդներ...

Արենին մինչև օրս հայտնի է բարձրորակ գինիների արտադրությամբ:

Հայաստանում գինեգործության բարձր մակարդակի մասին խոսում են նաև ավելի ուշ շրջանի հնագիտական հուշարձանները՝ հատկապես Վանի թագավորության մեջ: Իսկ Երվանդունիների ժամանակաշրջանի գինեգործության մասին գրել են հույն պատմիչներ Քսենոֆոնը և Հերոդոտը.

«Հայաստանում խաղողագործության հետքերը հայտնաբերվել են դեռևս Ք. ա. 5-4-րդ հազարամյակների մշակութային շերտերում:

Նախքան հնդարիական ցեղերի ներխուժումը՝ Հնդկաստանը նույնպես չգիտեր, թե ինչ բան է խաղողը:

Հայաստանում խորը հնում խաղողից գինի են պատրաստել, որի համբավը հայտնի էր հեռավոր երկրներում: Մեծ Հայքի նահանգ Աղձնիքը պատմական աղբյուրներում նշվում է որպես այգեգործության և գինեգործության երկիր: Այս նահանգի գինու մասին հիշատակվում է նույնիսկ Արարատի թագավորության արձանագրություններում. իսկ պատմահայր Հերոդոտոսը հաղորդում է, որ այստեղից կաշեպատ նավերով գինի է արտահանվել Բաբելոն:

Քսենոֆոնը (Ք.ա. 430-355) «Անաբասիս»-ում նկարագրելով հայկական բնակավայրերի «պարենի ու բարիքների առատությունը» հիշատակում է նաև «անուշահոտ հին գինիները»...

Հնագետների առջև, հիրավի, զարմանահրաշ տեսարան բացվեց, երբ հողից ազատվեցին Կարմիր բլուրի (Երևան) գինու ութ մառանները, որտեղ հայտնաբերվեց մոտ 480 կարաս: Միջնաբերդի միայն երկրորդ հարկում հինգ շարքով տեղավորված էր 120 կարաս: Պարզվեց, որ ամրոցում պահվել է շուրջ 400 հազար լիտր գինի: Այդ խոշոր կարասների մեջ կան այնպիսիները, որոնք պարունակել են հազար լիտր հեղուկ: Ուշագրավ է նաև այն, որ Կարմիր բլուրի միայն թիվ 29 պահեստից հայտնաբերվել է գինու 1036 գավ» [152]***:***

Այսպիսով՝ Հայաստանը գինեգործության հայրենիք է ճանաչվում և՛ հոգևոր, և՛ աշխարհիկ գիտական շրջանակներում: Մինչդեռ չգիտես ինչու՝ գինեգործու-

[152] Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001թ., էջ 12-14:

թյան հայրենիք են ճանաչել Վրաստանը: Սակայն Արևմուտքի՝ հիմնավորումներից զուրկ որոշումը չի կարող օտարել այն, ինչը մեզ շնորհվել է Աստծուց:

Գարեջուր

*Հայաստանը նաև գարեջրի հայրենիքն է: Սակայն այդ մասին վկայություններն այնքան առատ չեն, ինչպես գինու դեպքում: Շենգավիթի պեղումներից պարզվել է, որ Հայաստանում դեռ Ն.Ք. III հազարամյակում գարեջրի արտադրություն է եղել. **«Շենգավիթում... զարգացած է եղել գինեգործությունը և գարեջրի արտադրությունը»**[153]:*

*Ն.Ք. 4-րդ դարում հունական 10 000-անոց բանակը Քսենոփոնի առաջնորդությամբ Պարսկաստանից Հունաստան վերադառնալիս՝ անցնում էր Հայաստանով: Հայկական գյուղերից մեկում հունական զորքը հանգստի համար կանգ է առնում: Քսենոփոնն ասում է, որ իրենց այդ գյուղում հյուրասիրում են առատ ուտեստներով և խմիչքներով, իսկ խմիչքների թվում եղել է նաև գարեջուր, ինչը հույների համար անծանոթ ըմպելիք էր. **«Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն, և կարասների մեջ գարուց պատրաստված գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ: Կարասների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկերի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»**[154]:*

Քսենոփոնը երկար ժամանակ էր անցկացրել Պարսկաստանի, Բաբելոնի, Ասորեստանի և հարավային այլ երկրների տարածքներում և քաջածանոթ էր նրանց կենցաղին: Սակայն հայկական գյուղերում ճաշակած գարեջուրը նրա համար նորություն էր: Դրանից ևս կարելի է եզրակացնել, որ գարեջրի մասին Հունաստանից բացի՝ անտեղյակ էին նաև վերը նշված երկրները:

Այս հնագիտական և պատմական տեղեկությունները անխորտակելի հիմք են, որպեսզի ինչպես գինու, այդպես և գարեջրի հայրենիքը համարվի Հայաստանը:

---

[153] Հակոբ Սիմոնյան, Հուշարձան տարեգիրք հատ. Ը, «Հուշարձան» հրտ., Երևան 2013թ., էջ 14:
[154] Քսենոփոն. Անաբասիս. Երևան 1970թ., էջ 97:

Գործվածքներ և կաշեգործություն

Մանածագործություն

«Հնագիտական մի շարք հայտնագործություններ ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. III հազարամյակում արդեն ծանոթ են եղել մանածագործությանը. թել են մանել և գործել հագուստներ» [155]:

Հայկական լեռնաշխարհի զարգացման ոլորտներից հիշարժան են նաև մանածագործությունը, գորգագործությունը և կաշեգործությունը.

«Ք. ա. 4-րդ հազարամյակի վերջից Հայկական լեռնաշխարհը թևակոխում է զարգացման վաղբրոնզեդարյան ժամանակաշրջան, որը տևում է շուրջ մեկ հազարամյակ: Այս ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում առկա են նստակեցության և տնտեսության ընդհանուր ձևեր՝ երկրագործություն, անասնապահություն, ինչպես նաև օժանդակ ճյուղեր՝ որսորդություն ու ձկնորսություն: Զարգանում են մանածագործությունը, կաշեգործությունը, քարի ու փայտի մշակությունը, բնակարանաշինությունը, այգեգործությունը» [156]:

Անասնաբուծության և հողագործության զարգացումը հնարավորություն էր տալիս զարգացնել նաև մանածագործությունը՝ բրդից ու բուսական հումքից թել մանելը և կտավ ու հագուստներ գործելը: Այդ մասին են խոսում Հայաստանի տարածքի 4 - 5 հազար տարվա վաղեմության տարբեր հուշարձաններից հայտնաբերված իլիկները, ճախարակները, նաև գործելու պարզունակ դազգահները.

«Ջուլհակային գործի զարգացման մասին, բացի գրավոր աղբյուրներից, վկայում են նաև հնագիտական նյութերը, որոնց թվին է պատկանում ոսկորե և քարե ճախարակը, որ գտնվել է վաղբրոնզեդարյան տարբեր հուշարձաններում, ինչպես Շրեշ բլուրում, Գառնիում, Ջրառատում, Կոսին Ջոտերում: Որպես աշխատանքային գործիք, կապված ջուլհակային արհեստի հետ, օգտագործվում էին նաև գործվածքային շյուղեր...

Հարկ է նշել նաև, որ Է. Վ. Խանզադյանը և Ս. Ա. Եսայանը համարում են, որ մ. թ. ա. 3-հազ. Հայկական լեռնաշխարհում գոյություն ուներ պարզ ջուլհակային հաստոց...

Ամենայն հավանականությամբ, տվյալ ժամանակաշրջանին է վերաբերում վուշի մշակումը, որն օգտագործվում էր կտորեղենի արտադրության մեջ» [157]:

Մետաղագործությունն ապահովում էր կարելու և գործելու համար անհրաժեշտ գործիքների պատրաստումը: Պեղումների ընթացքում գտնված ասեղները

---

[155] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 81:

[156] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 63-64:

[157] Л.Л. Карапетян. “Хозяйство и духовная культура древней Армении”. Ереван 1999, ст. 67-68, 69.

հուշում են, որ ոչ միայն հյուսել են բրդյա զգեստներ, այլև վուշից ստացված թելերից գործել են կտավներ, որոնցից հագուստ են կարել։

«Ասեղների հայտնագործությունը Գառնիում, Շենգավիթում, Էլարում և այլուր՝ ապացուցում է, որ կար են արել բավականաչափ բարակ թելով։ Հավանաբար, նման թելի վրա են շարվել շատ փոքր անցքով, տարատեսակ ուլունգները, որոնք Էլարի դամբարաններում հայտնաբերվում են կմախքների պարանոցային ողերի մոտ...

Ամփոփելով՝ կարելի է ասել, որ մանածագործության ծագումն ու զարգացումը պայմանավորված էին տեխնիկայի ընդհանուր զարգացմամբ, արմատացող երկրագործությամբ և անասնապահությամբ, որոնք մանածագործության համար հիմնականում նոր հումք մատակարարողներ էին։ Նուրբ գործվածքների առկայությունը Հայկական լեռնաշխարհում ապացուցվում է դեռևս մ.թ.ա. IV հազարամյակից սկսած. օրինակ՝ Լեռնային Ղարաբաղում Ստեփանակերտի դամբարաններում, ինչպես նաև Էջմիածնի շրջանի Թեղուտի էնեոլիթյան բնակատեղիում հայտնաբերված տեքստիլային խեցեղենի գործվածքները բավական նուրբ են պատրաստված» [158]։

Այդ որակական հատկանիշների շնորհիվ Հայաստանից տարատեսակ ապրանքների հետ նաև գործվածքներ են արտահանվել Միջագետքի երկրները.

«Ինչպես մատնանշում է Ն. Բ. Յանկովսկայան, մ. թ. ա. 2-հազ. սկզբին, ըստ ասորական արխիվների, տարբեր արտադրանքների առաքումների մեջ պղնձից հետո երկրորդ տեղում գտնվում էին բրդյա գործվածքները, որ բերվում էին բազմաթիվ շրջաններից, այդ թվում և Հայկական լեռնաշխարհից» [159]։

Գորգագործություն

«Ակնհայտ է, որ գորգի հայկական ծագման վարկածի վերաբերյալ տեսակետները շրջանառվում են դեռ վաղ ժամանակներից, և դրա վերաբերյալ կան բավականաչափ քանակությամբ նյութեր» [160]։

Գորգագործությունը պետք է սկզբնավորվեր և մեծագույն վերելք ապրեր Արարատյան երկրում՝ մանածագործության հիման վրա։ Քանզի ինչպես տեսանք, Հայկ նահապետի ժամանակաշրջանում Հայաստանում մեծ զարգացում էր ապրել գյուղատնտեսությունը՝ մասնավորապես անասնաբուծությունը։

Դրա ճյուղերից ոչխարաբուծությունը բրդի ստացման աղբյուրն էր, որը գորգագործության հիմնական հումքն է։

---

[158] Է.Վ. Խանզադյան... էջ 82:

[159] Л.Л. Карапетян. “Хозяйство и духовная культура древней Армении”. Ереван 1999. ст. 67.

[160] Տաթև Մուրադյան, «Հայոց գորգագործական մշակույթի ծագումնաբանության հիմնահարցի շուրջ», էջ 52: (Հայոց գորգագործական մշակույթը: http://cpc.am/hy/hraparakumner):

Մեծ կարևորություն ունեն գորգագործության համար նաև ներկանյութերը, ինչով էլ աղքատ չէ Հայոց աշխարհը:

Այդ մասին տեղեկություններ են պահպանվել նաև օտար աղբյուրներում.

«Հայկական լեռնաշխարհը հարուստ էր նաև ներկանյութերով: Դրանցից հայտնի էր հատկապես «հայկական» կոչված ներկը, որի մասին նշել են Ստրաբոնը, Պլինիոս Ավագը, Պրոկոպիոս Կեսարացին և այլք» [161]**:**

Որ հայկական ներկերը շատ բարձր որակի էին, այդ մասին ասում են նաև հույն պատմիչները.

«Ք. ա. 5-րդ դարի հույն պատմիչ Հերոդոտոսը նշում է, որ կովկասցիները ներկում էին բուրդը՝ բույսերից ստացված ներկով, այնուհետև դրանից մշակում էին թել և նկարազարդում այն: Իսկ դրա գույնը չէր խամրում ո՛չ ջրից, ո՛չ էլ ժամանակի ընթացքում» [162]**:**

Տեսնում ենք, որ հնագույն Հայաստանում, որտեղ մանածագործությունը մեծ զարգացում է ապրել, բոլոր պայմանները եղել են նաև գորգագործության համար: Սակայն միայն նպաստավոր պայմանների առկայությունից եզրակացնել գորգագործության գոյության մասին՝ կարծես այնքան էլ համոզիչ չէ:

Այս հարցում նորից օգնության է հասնում հնագիտությունը.

«Հաշվի առնելով Հայաստանի հնագույն բնակատեղիներից (Թեղուտ, Շրեշ բլուր, Շենգավիթ, Արթիկի դամբարանադաշտ և այլն) հայտնաբերված և Ք. ա. 3-2 հազարամյակ թվագրվող ոստայնանկի գործիքները՝ մանավանդ գորգ գործելու պարզունակ հարմարանքը, օժանդակ գործիքներն ու գործվածքները... մի շարք ուսումնասիրողներ եկել են այն եզրակացության, որ Հայկական լեռնաշխարհում կային գորգագործական մշակույթով զբաղվելու տեխնիկական և տեխնոլոգիական հնարավորություններ, նաև անհրաժեշտ հումքային ռեսուրսներ»[163]**:**

Այդ գտածոները և գորգագործության համար բոլոր մյուս նպաստավոր պայմաններն արդեն իսկ անժխտելի փաստեր են, որ այդ ոլորտը նույնպես առաջնային դիրք է ունեցել քուռարաքսյան մշակույթում՝ Հայաստանի տնտեսության մեջ.

«Պատմական Հայաստանի տարածքում եղած բազմաթիվ պեղավայրերից հայտնաբերվել են Ք. ա. IV-III ***հազարամյակներին վերաբերող գորգագործական աշխատանքային գործիքներ»*** [164]**:**

Սակայն ոչ միայն գորգագործության գոյության մասին հուշող պարագա-

---

[161] Լուսինե Մարգարյան, «Արենի 1 քարայրի նորահայտ գործվածքները որպես հայկական մանածագործության ուսումնասիրության սկզբնաղբյուր», հայկական հանգույց. Գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, էջ 56: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[162] Լուսինե Մարգարյան, «Արենի 1 քարայրի նորահայտ գործվածքները որպես հայկական մանածագործության ուսումնասիրության սկզբնաղբյուր», հայկական հանգույց. Գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, էջ 56: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[163] Աշխունջ Պողոսյան, «Պազիրիկ գորգի ծագումնաբանության մասին», «Էջմիածին», ԺԲ, 2008, էջ 63-79: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[164] Աշխունջ Պողոսյան, Զրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք», Երևան 2008 թ., էջ 73:

ներն են ստիպում ընդունել գորգագործության առկայության մասին, այլև հենց հնագույն գործվածքների նմուշները, որ հայտնաբերվել են Հայաստանի տարածքում՝ Արենիի քարայրներում, ինչը հնագույն ժամանակների գինու արտադրության, նաև աշխարհում ամենահին կոշիկի գտնվելու տեղանքն է.

«2007 թ. Արենի 1 քարայրում հայտնաբերվել են էնեոլիթյան և միջնադարյան մի շարք գործվածքներ: Դրանք ունեն չափազանց լավ պահպանվածություն, ինչը հնարավորություն է տալիս ուսումնասիրել դրանց ծագումն ու զարգացումը» [165]**:**

Իսկ որ Հայաստանում գորգագործությունը հնագույն ժամանակներից շարունակական է եղել, փաստում են ավելի ուշ շրջանի գտածոները:

Ուրարտական ժամանակաշրջանի կարպետների պատառիկներ են հայտնաբերվել Արթիկի շրջանում, Կարմիր Բլուրում, Անիում և այլուր, որոնք վերագրվում են Ք.ա. 13-րդ դարին.

«Հառիճի դամբարանադաշտից հայտնաբերվել են Ք.ա. 13-12 դդ. վերաբերող կարպետի մնացուկներ» [166]**:**

Պատմական աղբյուրներն իրենց հերթին հավաստում են ավելի ուշ շրջանի գորգագործության մասին.

«Գորգագործությունը Հայաստանի հնագույն արհեստներից մեկն է: Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ի Ք.ա. 714 թ. արձանագրություններում նշվում է Ուրարտուում գործված կարմիր գործվածքների մասին» [167]**:**

Ասորական աղբյուրներից բացի՝ կան Ք.ա. 5-րդ դարի տեղեկություններ՝ Քսենոփոնի և այլոց մոտ:

Այս ամենն ասում են, որ գորգագործությունը հազարամյակներ շարունակ, առանց ընդհատման, գոյություն է ունեցել Հայաստանում: Դեռ ցույց կտանք, որ հեռավոր ժամանակներից հայոց հինավուրց գորգագործությունը եկել հասել է մինչև մեր օրերը:

Ինչպես տնտեսության տարբեր ոլորտները Հայաստանում առաջանալով և զարգացում ապրելով տարածվեցին աշխարհով մեկ, այդպես և գորգագործության արհեստը տարածում գտավ հին աշխարհում: Սակայն հայկական գորգերը դարեր շարունակ մնացին չգերազանցված՝ իրենց որակական, խորհրդանշային և գեղարվեստական արժանիքներով:

Մասնագետների շրջանում գորգագործության ծագումնաբանության ուսումնասիրման համար ամենահավաստի նմուշ է համարվում 1949 թ. Լեռնային

---

[165] ԼուսինեՄարգարյան, «Արենի 1 քարայրի նորահայտ գործվածքները որպես հայկական մանածագործության ուսումնասիրության սկզբնաղբյուր», հայկական հանգույց. Գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ, էջ 56»: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[166] Աշխունջ Պողոսյան, «Պազիրիկ գորգի ծագումնաբանության մասին»,«Էջմիածին», ԺԲ, 2008, էջ 63-79: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[167] Ջանիս Բեդուկյան, «Հայկական կարպետներ և կարպետագործ գործվածքներ. Կառուցվածքի ու զարդահորինվածքի համեմատական ուսումնասիրություն», հայկական հանգույց. Գորգարվեստի ավանդույթները, միջազգային գիտաժողով, զեկուցումների դրույթներ:(Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան)»:

Ալթայում Պազիրիկ կուրգանի դամբարանից հայտնաբերված գորգը: Այն ամենահին, համարյա թե ամբողջական պահպանված գորգն է, ինչը վերագրվում է Ք. ա. 5-րդ դարին:

Իսկ թե ինչո՞ւ ավելի վաղ շրջանի ամբողջական գորգ դեռ չի հայտնաբերվել, պատճառն այն է, որ գորգը մետաղի կամ խեցու նման դիմացկուն չէ և դարերի ընթացքում տարբեր պատճառներից կարող է ոչնչանալ.

«Գորգի ու առհասարակ գործվածքի պահպանման հետ կապված՝ կան որոշակի առանձնահատկություններ: Գորգը բավական շուտ մաշվող, դյուրավառ և աննպաստ պայմաններում արագ քայքայվող մշակութային արժեք է:

Այս առումով բացառիկ է Սանկտ Պետերբուրգի Էրմիտաժում պահվող մի շատ հայտնի գորգ: Դա այսպես կոչված՝ «Պազիրիկ» գորգն է, որը վերաբերում է Ք.ա. V դ. և հայտնաբերվել է 1949 թ. Լեռնային Ալթայի Պազիրիկ կուրգանի (դամբարանադաշտի) թիվ 5 դամբարանից: Դամբարանը ջրով լցվելու հետևանքով այնտեղ գոյացել է սառցաշերտ, որի մեջ էլ գորգը պահպանվել և մինչև մեր ժամանակներն է հասել համարյա ամբողջական ու անվնաս վիճակում» [168]**:**

Սակայն հետաքրքրականն այն է, որ Ալթայում իրականացվող պեղումների ղեկավար Ս. Ռուդենկոն վկայում է, որ այդ տարածքներում հայտնաբերված գորգերից ոչ մեկը ընդհանրություն չունի այս գորգի հետ, ինչը բերել է այն եզրակացության, որ տվյալ գորգը այդ վայրերի մշակույթի համար օտար է և այլ երկրից է բերվել այդտեղ:

Իսկ թե ո՞ր երկրից՝ այդ հարցի շուրջ տարբեր երկրների մասնագետներ աշխատել են իրենց կարծիքները առաջ մղել: Սակայն առեղծվածային գորգի մանրամասն զննման տվյալները բերել են անսպասելի եզրահանգման. այդ գորգի հայրենիքը եղել է Հայաստանը.



«Մենք կարևորում ենք այն, որ այդ գորգը գործված է հայկական գորգագործական մշակույթին բնորոշ, այսպես կոչված՝ «կրկնակի» հանգույցներով, որն, ի դեպ, Իրանում կոչվում է հենց «հայկական հանգույց»: Ընդ որում, այդօրինակ հանգույցներով է նաև կարմիր բլրից պեղված պատառիկը» [169]**:**

Եվ ոչ միայն հայկական գորգագործությանը հատուկ կրկնակի հանգույցներն են խոսում ի նպաստ հայկական տարբերակի, այլև ներկանյութերը.

«1980-ական թվականների վերջին Էրմիտաժի քիմիկոս-ներկաբանների հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ այդ գորգի թելերի

[168] Աշխունջ Պողոսյան, Զրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք», Երևան 2008 թ., էջ 74:
[169] Նույն տեղում, էջ 75:

կարմիր գույնը ստացված է Արարատյան դաշտի «որդան կարմիր» ներկանյութից»[170]**:**

Օտար մասնագետներից Ուլրիխ Շուրմանը, Ֆոլկմար Գանցհոռնը և այլք, ելնելով այս հիմնավորումներից, գտնում են, որ Պազիրիկ գորգը գործվել է Վանի թագավորությունում և այն պետք է վերագրել հայկական մշակույթին.

«Այսպես, Ֆ. Գանցհոռնն այդ տեսակետը հիմնավորելու համար պատմահամեմատական ուսումնասիրության է ենթարկել փոյուգիական, ասորաբաբելական, վաղ հայկական կամ ուրարտական կիրառական գեղազարդման արվեստին վերաբերող սկզբնաղբյուրներն ու գորգի տեխնոլոգիական հատկանիշները, հատկապես գորգի՝ կրկնակի հանգույցով գործված լինելու փաստը: Նա հաշվի է առել նաև Հայկական լեռնաշխարհում գորգագործական մշակույթի վաղ ավանդույթների մասին վկայող գորգի պատառիկների ու համապատասխան աշխատանքային գործիքների առկայությունը:

Այս վարկածի կողմնակից է նաև գերմանացի ուսումնասիրող Ուլբրիխտ Շուրմանը, ով հիմնվելով գորգի կառուցվածքի, ձևավորման և մոտիվների վրա, Պազիրիկ գորգը վերագրում է վաղ ուրարտական կամ վաղ հայկական շրջանին» [171]**:**

Գորգի զարդանախշերը նույնպես խոսուն փաստեր են՝ հայկական ծագման մասին, քանզի նման զարդանախշեր կան ուրարտական շրջանի իրերի և շինությունների վրա:

Տեսնում ենք, որ բազմաթիվ են հիմնավորումները, որպեսզի նաև գորգագործությունը քուռարաքսյան մշակույթի բազմաթիվ ճյուղերի հետ ընդունվի՝ որպես Հայոց երկրի ծնունդ.

«Հայկական գորգերի գունային առանձնահատկություններին վերաբերող նշումներ կան նաև միջնադարյան աղբյուրներում: Արաբ պատմիչ Մակրիզին X դ-ի կեսերին նկարագրելով Կահիրեի շուկան, հիշատակում է հայկական գորգերի մասին, որոնք այդտեղ և առհասարակ խալիֆաթի ընդարձակ տարածքում հայտնի էին քըրմըզ անունով: Այդպես կոչելը Մակրիզին բացատրում է հայկական գորգերում կարմիր գույնի գերակշռությամբ»: [172]

Մի այլ արաբ հեղինակ՝ Իստախրին, նույնպես հիշատակում է հայկական գորգերի մեջ օգտագործվող հատուկ կարմիր գույնի մասին.

«Գորգագործական արհեստի զարգացմանը որոշ չափով նպաստում էին Հայաստանում ստացվող ներկերը, որոնք հաղորդում էին գորգին եզակիություն և վառ երանգավորում: Հատկապես օգտագործվում էր կարմիր գույնը, որը ստանում էին Հայաստանում շատ տարածված որդան կարմիր կոչվող միջատից: 10-րդ դարի արաբ հեղինակ ալ Իստախրին, անդրադառնալով Արտաշատ քաղաքին, պատմում է հետևյալը. «Այս քաղաքում պատրաստում են բրդյա շրջազգեստներ, գորգեր... և այլ հայկական արտադրանքներ: Այստեղ է պատրաստ-

---

[170] Աշխունջ Պողոսյան, Զրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք », Երևան 2008 թ., էջ 74:

[171] (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[172] Ա.Պողոսյան, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, Պատմա-բանասիրական հանդես, Երևան, 2000 թ., 1(153), էջ 177:

վում նաև «քըրմըզ» կոչվող հայկական ներկը, որով ներկում են մահուդը։ Ես պարզեցի, որ այն պատրաստվում է որդի մի տեսակից, որը շերամորդի նման մանում է իր շուրջը» [173]։

Մի՞թե խոսուն փաստ չէ այն, որ Ք.ա. 714 թ. ապրած Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ն նշում է, որ հայկական գորգերը կարմիր գույնով են աչքի ընկնում, և Ք.հ. 10-րդ դարի արաբ պատմիչները հայկական գորգերի մասին ասում են նույնը. այսինքն այն, որ Հայկական գորգերում հիմնականում գերակշռել է կարմիր գույնը։

Ուրեմն, այս նույն տարածքում հազարավոր տարիներ շարունակ գորգագործության նույն ավանդույթն է տիրում. Հայաստանում գորգագործությունը հազարամյա ավանդույթներ ունի, և քանի որ այստեղ գտնվել են մոտ հինգ հազար տարի առաջ եղած գորգագործության պարագաներ, ուստի հստակ է, որ գորգագործությունը որպես արհեստ և արվեստ՝ առաջացել է Հայաստանում և հետագայում տարածվել հարևան երկրներում, ինչպես քուռարաքսյան քաղաքակրթության մյուս ճյուղերը։

Օտարազգի պատմիչների աշխատություններում հաճախ կարելի է հանդիպել հայկական գորգերի մասին հիշատակությունների, հատկապես արաբ պատմիչների մոտ.

«Պարզվում է, որ խալիֆայության դարաշրջանում չափազանց մեծ նշանակություն էր տրվում հայկական գորգերին, մի հանգամանք, որը նույն աղբյուրները բացատրել են հայկական գորգերին բնորոշ գեղազարդման հարուստ համակարգով, բրդի բարձր որակով ու, մանավանդ, հռչակավոր «որդան կարմիր» ներկանյութից ստացված կարմիր գույնի առանձնահատուկ երանգներով։ Այդ ամենի շնորհիվ հայկական գորգը համարվում էր հարստության, հասարակության մեջ անհատի գրաված դիրքի չափանիշ ու մեծ նշանակություն ունեցող նվիրատվության առարկա։ Ամեն դեպքում, երբ խոսվում էր գորգերի մասին, միայն հայկական գորգերն էին շեշտում՝ դրանց էթնիկական ծագումը մատնանշող «հայկական» բառով։ Հայկական գորգը դարձել էր գորգագործական այլ կենտրոններում գործվող գորգերի որակավորման չափորոշիչ։ Համենայն դեպս, նմանօրինակ եզրահանգման է բերում X դ. արաբ մատենագիր Ալ Իստախրիի մի վկայություն, ըստ որի՝ շատ բարձր էին գնահատվում պարսկական այն գորգերը, որոնք չէին զիջում հայկական գորգերին. նույն դարի մեկ այլ մատենագիր՝ Իբն ալ Ռուստան, ուղղակի ասում է, որ գովական էին նաև Պարսկաստանի լավագույն՝ Սպահանի գորգերը, քանի որ դրանք մյուսներից առավել մոտ էին հայկական ճոխ գորգերին։ Մեր հիշատակած այս տեղեկությունները ցանկացողները կարող են գտնել Ադամ Մեցի «**Мусульманский ренессанс**» ուսումնասիրության էջերում։ Դրանք շատ կարևոր են նաև այն առումով, որ փաստում են հայոց գորգերին բնորոշ յուրահատուկ գեղազարդման ու գունային լուծումների առկայությունը, որն այնքան ցայտուն ու հանրահայտ է, որ հնարավորություն է տալիս

---

[173] Караулов Н. А. «Сведения арабских писателей X и XI веков по Р. Хр. о Кавказе, Армении и Адербейджане». (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

դրանք տարբերակել գորգագործական այլ կենտրոնների արտադրանքից: Մասնավորապես, X դ. սկզբներին Իբն Ֆադլանը Վոլգյան բուլղարների խանի վրանի հարդարանքը նկարագրելիս՝ հիշում է, որ դրա հատակն ամբողջովին ծածկված էր գորգերով, ու շեշտում է, որ այնտեղ կային նաև «հայկական» գորգեր» [174]:

Հայաստանում գորգագործությունը մեծ բարձունքների է հասել: Եղել են տարբեր տեսակի գորգեր, որոնցից է նաև ծիսական գորգը:

Եվ քանի որ հայկական գորգերը մեծ համբավ են ունեցել տարբեր երկրներում, հավանաբար, ժամանակին Իսրայելում նույնպես այդ գորգերին մեծ տեղ են տվել, քանզի ըստ ավանդության՝ նման մի գորգի պատմություն էլ կապված է Տիրոջ ծննդյան հետ.

«Ուշագրավ է մեռոնեփի ծեսը, որի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ է հայտնում XVII դ. թուրք ուղեգիր Էվլիա Ջելեբին: Նա գրում է, որ էջմիածնում մեռոն եփելու համար կրակը վառել են մետաքսե գորգի վրա, և գորգը մնացել է անվնաս, քանզի, ըստ վանականների պատմածների, այն վանքի սրբություններից մեկն էր, ու դրա վրա ծնվել էր Հիսուս Քրիստոսը» [175]:

Բազմաթիվ են հայկական գորգագործության մասին ասված գովասանական խոսքերը՝ տարբեր ժամանակների և տարբեր ազգի հետազոտողների կողմից.

Վ. Բարտոլդն իր աշխատությունում նշում է, որ հայկական գորգերը շատ մեծ անուն էին ձեռք բերել արևելքում, իսկ այդ շրջանի ժամանակակիցները կարծում էին, որ հայկական գորգերն օժտված են յուրահատուկ առանձնահատկություններով [176]:

«Ավստրիացի արվեստագետ Ալոիս Ռիեգլը գտնում է, որ Իտալիա և ապա Հոլանդիա ներմուծված հայկական գորգերի յուրահատուկ երանգավորումը ազդել է ողջ եվրոպական գեղանկարչության վրա» [177]:

«Նշանավոր վենետիկցի ճանապարհորդ Մարկո Պոլոն, ով 13-րդ դարին եղել է Արևմտյան Հայաստանում, իր «Գիրք աշխարհի զանազանության շուրջ» աշխատության 11-րդ գլխում անդրադառնում է հայերի ապրելակերպին և նշում հետևյալը. «Այստեղ, ինչպես գիտեք, արտադրվում են աշխարհի ամենաբարակ և ամենագեղեցիկ գորգերը, հյուսվում են նաև կարմիր և այլ գույների ընտիր և հարուստ գործվածքներ: Պատրաստվում են նաև շատ այլ արտադրանքներ»» [178]:

«Ինչ վերաբերում է հայկական թելերի արտադրանքին, որոնք են գորգերը, բուտը, նստոցները, ծածկոցներն ու բարձերը, ապա դրանց նմանը չկա աշխարհի ոչ մի ծայրում» [179]:

---

[174] Աշխունջ Պողոսյան, Զրույցներ հայ մշակույթի մասին, (Հարցազրույցների ժողովածու) «Նորավանք» ԳԿՀ, Երևան 2008 թ., էջ 77-78:

[175] Նույն տեղում, էջ 79:

[176] В. Бартольд, "Историко-географический обзор Ирана," СПб, 1903, стр. 150.

[177] DavidTsitsishvili, "Rugsand Carpetsfromthe Caucasus," Ленинград, 1984, № 672(7-20), стр 101.

[178] МаркоПоло, «Книга о разнообразиимира», глава XXI, (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[179] Ибн-Хаукаль, арабский писатель X в.// Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Вып. 38. Тифлис. 1908: (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

«11-րդ դարի պարսիկ պատմաբան Աբու Սահիդ Դարդիզին, նկարագրելով Քաղիր խանի ընդունելությունը, նշում է, որ էմիրը խանին որպես ընծա է մատուցում հայկական թանկարժեք գորգեր» [180]։

«Հայ ջուլհակների արտադրանքը համաշխարհային հռչակ էր վայելում և բարձր էր գնահատվում տարբեր երկրների արքունիքներում։ Օրինա՝ պարսիկ արքունի գիտնական Խալիլ աս Սաբին, նկարագրելով խալիֆի հագուկապն ու սպասքը, նշում է, որ գահի բարձն ու խալիֆին պատկանող այլ շքասենյակների բարձերը գործված են հայկական թելից։ Իսկ արաբ հեղինակ Աբդ ար Ռաշիդ ալ Բակուվին նշում է, որ հայ գորգագործները հմտորեն տիրապետում են գորգագործական արհեստին» [181]։

«Արաբական խալիֆայության դեսպան Իբն Ֆադլանը, ով ճանապարհորդել է Վոլգա գետի ափին բնակվող բուլղարների երկիրը, իր գրություններում նշում է, որ դեռ 10-րդ դարի 20-ական թվականներին այդտեղ հաստատված հայկական գաղութում զբաղվում էին գորգագործությամբ։ Ըստ նրա՝ կամյան բուլղարների թագավորի վրանը, ուր կարող էր տեղավորվել 1000 հոգի, ամբողջությամբ ծածկված էր հայկական գորգերով» [182]։

Հայկական գորգերը ներկայումս ցուցադրվում են աշխարհի տարբեր երկրների բազմաթիվ թանգարաններում, որոնց ոչ ամբողջական ցուցակից նշում ենք հետևյալ շարքը. Ամերիկայի հայկական գրադարան ու թանգարան (ԱՀԳԹ, ավելի քան 300 կարպետ), Վիեննայի Մխիթարյան միաբանության գորգերի հավաքածու, էրմիտաժի թանգարան (Պազիրիկ գորգ), Գերմանիայի պետական թանգարան (վիշապ-փյունիկ գորգ), Ռուսական ազգագրության թանգարան (ավելի քան 80 հայկական գորգեր և կարպետներ), Լոնդոնի «Վիկտորիա և Ալբերտ» թանգարան (17-րդ դարի գորգ), Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարան (16-րդ դարի գորգ), Բուդապեշտի կիրառական արվեստի թանգարան, Լոնդոնի տեքստիլի թանգարան, Ավստրիայի արդյունաբերության և արվեստի թանգարան (Վիեննա), Ամստերդամի Համալսարանի թանգարան, Բեռլինի Ֆրիդրիխ-կայզեր թանգարան, Բեռլինի իսլամական արվեստի թանգարան, Շվեդիայի պատմության թանգարան (Ստոկհոլմ), Բուդապեշտի դեկորատիվ արվեստի թանգարան, Չիկագոյի գեղարվեստի պալատ, Ֆիլադելֆիայի թանգարան, Թուրքական և իսլամական արվեստների թանգարան (Ստամբուլ), Ալբերտո Լևի պատկերասրահ (Միլան) և այլն։

Հայկական գորգերի ցուցադրումներից բացի՝ այդ թեմայով կան նաև բազմաթիվ գիտական աշխատություններ։ Սակայն ըստ մասնագետների՝ այդ ամենը դեռ բավարար չէ՝ հայկական գորգի հեղինակությունը պահպանելու համար։ Քանզի հարևան երկրների քարոզչական մեքենաները հայկական գորգը արևմտյան երկրներում ջանում են ներկայացնել որպես ադրբեջանական, թուրքական և այլն և բավականին հաջողել են իրենց զեղծարարության մեջ։

---

[180] В. Бартольд, “Историко-географический обзор Ирана,” СПб, 1903, стр. 150.

[181] Абдар-Рашидал-Бакуви «Книги о памятниках и чудесацарямогучего» Пятыйклимат. (Հայկական գորգ - Վիքիպեդիա՝ ազատ հանրագիտարան):

[182] Путешествие Ибн-Фадлана на Волгу. Перевод и комментарий под редакцией академика Крачковского И. Ю. М.-Л. 1939, стр. 73.

«Մինչդեռ մենք պարտավոր ենք տեր կանգնել մեր նախնիների Հայկական գորգարվեստի շուրջ թողած մշակութային ժառանգությանն ու այն ըստ արժանվույն ներկայացնել համաշխարհային մշակութային համակարգում: Չէ՞ որ Հայկական լեռնաշխարհը գորգի հնամենի օրրաններից է, իսկ հայ ժողովուրդը՝ դրա ստեղծողներից մեկը» [183]:

Իսկապես՝ մեր նախնիներից ժառանգած բազմաթիվ հնագույն արհեստները, որոնց թվում և գորգագործությունը, կարիք ունեն հեղինակային պաշտպանության և պատշաճ ուշադրության՝ հակահայկական տարբեր մարտահրավերների ոլորտում:

Կաշեգործություն

Անասնապահությանը զուգընթաց՝ անխուսափելիորեն զարգացել է նաև կաշեգործությունը: Հայաստանի Ն. Ք. 3-րդ հազարամյակի բնակավայրերի պեղումներից գտնվել են կաշվե իրերի պատրաստման գործիքներ.

«Սկզբնական կաթնամթերքային արտադրանքների հետ միասին՝ բրոնզե դարում, շարունակում էր կենցաղավարել և մեծ զարգացում ստացավ բրդի և կաշվի մշակումը, ինչը թույլ է տալիս խոսել զարգացած կաշեգործության և ջուլհակության մասին:

Շնորհիվ խոշոր և մանր եղջերավոր անասունների բուծման, նաև վայրի կենդանիների առկայության, որոնք որսի առարկա էին՝ Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերն ստանում էին մեծ քանակությամբ մորթիներ, որոնց մշակումը հնարավորություն էր տալիս պատրաստել ոտնաման, գլխարկ, ոչխարենու պարզամուշտակ, զրահներ և այլն: Հասկանալի է, որ վաղ բրոնզեդարյան կաշվե իրեր մեզ չեն հասել. սակայն ամենատարբեր աշխատանքային գործիքների առկայությունը թույլ է տալիս մեզ՝ խոսել այդ մասին... Մ. թ. ա. 3-րդ հազարամյակում կաշեգործության մեջ սկսել են օգտագործել մետաղական գործիքներ» [184]:

Այդ մարզը հետազոտող գիտնականների աշխատություններում խոսվում է կաշեգործության պահպանված գործիքների մասին, բայց բուն կաշվե որևէ նմուշ դեռ չէր հայտնաբերվել, քանզի 5 000 տարվա ընթացքում հազիվ թե պահպանվեր կաշվե որևէ իր:



Հիրավի, դժվար էր հավատալ, սակայն 2008 թ. Արենիի քարանձավներից մեկում գտնվեց կաշվե ոտնաման, որը պահպանվել էր քարանձավում տիրող

[183] Աշխունջ Պողոսյան, Ջրույցներ հայ մշակույթի մասին, (Հարցազրույցների ժողովածու) «Նորավանք» ԳԿՀ Երևան – 2008 թ., էջ 90-91:

[184] Л.Л. Карапетян. “Хозяйство и духовная культура древней Армении”. Ереван 1999. ст. 66, 67.

յուրահատուկ մթնոլորտի շնորհիվ: Այդ կաշվե տրեխը, ըստ եվրոպական գիտահետազոտական կենտրոնների ուսումնասիրությունների, 5500 տարեկան է և համարվում է կաշեգործության՝ երբևէ հայտնաբերված ամենահին նմուշը.

«Վաղ բրոնզեդարյան հնավայրերում հայտնաբերվել են տարբեր ձևերի ու չափերի կայծքարե և օբսիդաքարե պահանգավոր դանակներ, որոնք օգտագործվել են կաշեգործության մեջ: Քառանկյունաձև դանակներ, քերիչներ, շեղբեր հայտնաբերվել են Նախիջևանի Քյուլ թափայում՝ երկու շերտում, Լեռնային Ղարաբաղի Խաչենագետի դամբանաբլրում, Աղստև գետի հովտի Բաբա Դերվիշ բնակատեղիում, Վանում՝ Շամիրամալթիի բնակատեղիում և այլուր:

Կաշեգործության մեջ մեծ դեր են կատարել նաև ոսկրե հելունները, որոնք մեծ քանակությամբ հայտնաբերվում են համարյա բոլոր վաղ բրոնզեդարյան հնավայրերում: Կաշեգործության հետ կապված վերոհիշյալ գործիքներն ունեն ազգագրական մի շարք զուգահեռներ: Սակայն չպետք է մոռանալ, որ վերոհիշյալ դարաշրջանում կաշեգործության վերելքը նույնպես պայմանավորված էր մետաղագործության զարգացմամբ: Մետաղե գործիքների՝ դանակի, հելուններիի մուտքը կաշեգործության ասպարեզ՝ մի նոր խթան հանդիսացավ նրա զարգացման, առաջընթացի համար:

Այսպիսով, Հայկական լեռնաշխարհում տեղաբնիկները ուսումնասիրվող դարաշրջանում կրել են ոչ միայն գործված հագուստներ, այլ նաև մորթուց և կաշվից պատրաստված հագուստներ և կոշիկներ»[185]:

Կենցաղային ամանեղեն և սպասքեղեն

Խեցեգործություն

«Հայկական լեռնաշխարհի նյութական մշակույթի զարգացման աստիճանն այնքան բարձր էր, որ չէր կարող չազդել հարևան երկրների վրա: Այդ ազդեցությունը կարելի է նկատել Ասորիքում, Պաղեստինում և դեպի հյուսիս՝ Կովկաս՝ սև, փայլեցված խեցեղենի տարածումով, որի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է»[186]:

Կենցաղում ամենակարևոր ճյուղերից մեկն էլ բրուտագործությունն էր, որը սկիզբ դրեց կավե կենցաղային առարկաների, սպասքի և ամենատարբեր անոթների պատրաստմանը.

«Տնտեսության հիմնական ասպարեզներին զուգընթաց՝ զարգանում են արհեստագործության բազմազան ճյուղեր: Սրանցից ամենաառաջինը խեցեգործությունն էր, որն անմիջապես կապված էր երկրագործական ու անասնապա-

---

[185] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 83, 84:

[186] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 166:

հական մթերքների պահպանման, վերամշակման, տնային տնտեսության այլևայլ կարիքների հետ» [187]:

Հայկական լեռնաշխարհում խեցեգործությունն այն աստիճան զարգացավ, որ դարձավ շատ կարևոր արդյունաբերական ճյուղ: Հայաստանում այն ոչ միայն բարձրորակ էր, այլև յուրահատուկ՝ իր գեղարվեստական ձևավորմամբ.

«Նյութական արտադրության և հոգևոր մշակույթի զարգացմամբ կյանքի կոչված արվեստն էլ վաղ բրոնզեդարյան Հայաստանում բարձր մակարդակի է հասնում: Այս շրջանի հարյուրավոր կավե անոթներն իրենց զարմանալի փայլով, բուսական, երկրաչափական, կենդանական զարդանախշերի բարդ ու գեղեցիկ կոմպոզիցիաներով բարձր զարգացած արվեստի լավագույն նմուշներն են» [188]:

Հայաստանի տարբեր վայրերում՝ Աբովյանում (էլար), Շենգավիթում, Վանաձորում, Շիրակում, Էրզրումում, Խարբերդում, Մալաթիայում և այլուր հայտնաբերվել է տեղական արտադրության տարատեսակ խեցեղեն.

«Մատնացույց անելով Հայկական լեռնաշխարհի խեցեղենի մեծ բազմազանությունը՝ է. Վ. Խանզադյանը համարում է, որ հենց այս երկրամասն է Քուռ-Արաքսյան տեսակի տարածման հիմնական օջախը»[189]:

Նշված հնավայրերից հայտնաբերված կավե անոթներից բացի՝ Թեղուտի հուշարձաններից հայտնաբերվել են նաև կավե կենցաղային այնպիսի առարկաներ, որոնք հատուկ են միայն Հայկական լեռնաշխարհին.

«Թեղուտյան բնակավայրը Անդրկովկասի միակ էնեոլիթյան բնակավայրն է, որտեղ հայտնաբերվել են շարժական կավե կրակարան մանղալներ: Այս շրջանի հուշարձանները, ամենայն հավանականությամբ, վերաբերում են նաև Արարատյան դաշտավայրի մի քանի բնակավայրերին»[190]:



Արարատ լեռան ստորոտից դեռ չցրված ժողովրդի կողմից օգտագործվող խեցին չուներ այն որակը, ինչն ուներ արդեն 3-րդ հազարամյակի Հայաստանում՝ Հայկ Նահապետի ժամանակ:

Այդ շրջանի սև, փայլեցված խեցին հատուկ է Հայկական լեռնաշխարհին.

«Նյութական արտադրության այս ասպարեզում տեղի էր ունեցել վիթխարի տեխնիկական թռիչք՝ 5-4րդ հազ. անհարթ, անմշակ, վատ թրծված, հաճախ գունազարդ մասսայական խեցեղենը աստիճանական անցումների միջոցով տեղի էր տվել կատարելության ու բազմաձևության հասցված, բարձրորակ, սև,

---

[187] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 72:
[188] Նույն տեղում, էջ 79:
[189] К. Х. Кушнарева, Т. Н. Ч убинишвили, Древние культувы южного Кавказа, Ленинград 1970, изд. “Наука”, ст. 141.
[190] Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975, ст. 108.

փայլեցրած խեցեղենին (մ.թ.ա. 3-րդ հազ.), որը բոլորովին նման չէր ո՛չ հայաստանյան վաղ շրջանների արտադրանքին, ո՛չ էլ ժամանակակից կամ հին արևելյան գունազարդ ամանեղենին: Բարձր զարգացման շնորհիվ՝ ինքնատիպ ձևերով ու զարմանալի հարուստ զարդանախշերով խեցեղենը դառնում է Հայաստանի մ.թ.ա. 3-րդ հազ. մշակույթի ամենաբնորոշ տարրը» [191]:

Չնայած տնտեսության տարբեր ճյուղերը պատկանում են քուռարաքսյան մշակույթին, սակայն խեցեգործությունն է առավել ճանաչելի՝ որպես այս լեռնաշխարհի ծնունդ.



«Մենք անցնում ենք Հայաստանի մշակույթի պատմության մեծ շրջանի ուսումնասիրությանը՝ այսպես կոչված «Քուռարաքսյան» մշակույթի վաղ բրոնզե դարին, ինչն իր մեջ ընդգրկում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի մեծ մասը: Այդ հսկայական մշակույթի միասնական տարածքը՝ Հայաստան կենտրոնով... դրսևորվում է ձեռքով պատրաստած հատուկ տիպի խեցիների գոյությամբ, որոնք սովորաբար լինում են սև կամ մուգ գորշագույն» [192]:

Ըստ Մորգանի՝ Միջագետքի խեցին ներմուծված է եղել լեռնային վայրերից՝ որպես պատրաստի արտադրանք, ինչի մասին «պատմում են» խեցեղենի զարդանախշերը:

Այդ երկրներն ամենատարբեր ոլորտներում փոխհարաբերվում էին Հայկական լեռնաշխարհի բնակիչների հետ, և ամենայն հավանականությամբ՝ հայկական խեցին բազմաթիվ այլ ապրանքների հետ միասին թափանցել է Միջագետք.

«Տվյալ խեցեգործությունն առաջացել է ո՛չ Սուզում և ո՛չ էլ Քաղդեաստանում. այն կերկի գետի ափերի մոտ իջել է արդեն պատրաստի տեսքով: Կենդանազարդի սովորական տարր է հանդիսանում լեռնային ոչխարը՝ երկար եղջյուրներով լեռնաբնակներ՝ օտար Քաղդեաստանի և Էլամյան հարթավայրին, ինչն այսօր առատորեն հանդիպում են դեռևս Առաջավոր Ասիայի լեռներում: Ընդհակառակը՝ ծաղկամանների վրա պատկերված կենդանիների թվում չկան նրանք, որոնք ապրել են այն ժամանակ երկու գետերի երկրում՝ գետաձի, ռնգեղջյուր և այլն: Այս ամբողջի հիման վրա պետք է մտածել, որ նախասուզական մշակույթը առաջինն ի հայտ է եկել ոչ թե Միջագետքի հարթավայրերում, այլ լեռնային շրջաններում» [193]:

Դեվիդ Ռոլը, ով Հայաստանը համարում է Եդեմի երկիրը, Մորգանի հետ նույն համոզումն ունի Միջագետք թափանցած խեցու մասին, ինչն իր նախշերում կրում է Եդեմի ուրվագծերը:

«Ուբաիդական խեցու ի հայտ գալը պայմանավորված է Միջագետքի ցած-

---

[191] Հարություն Մարտիրոսյան... էջ 72:

[192] Девид Лэнг... ст.72.

[193] Жак де-Морган, Доисторическое человечество, Москва, 1926, ст. 211.

րադիր հարավային շրջաններ Եդեմի երկրի ցեղերի ներխուժմամբ հենց այն շրջանները, որոնք հետագայում՝ Ջրհեղեղից և ազգերի բնակութ֊յունից հետո ստացավ «Շումեր» անվանումը» [194]*։*

Ուսումնասիրութ֊յունները պարզել են, որ այդ հինավուրց ժամանակաշրջանում ոչ միայն Միջագետքում, այլև Եվրոպայի տարբեր երկրներում ի հայտ են եկել հայկական հետքեր.

«Մ.թ.ա. ամբողջ երրորդ հազարամյակի ընթացքում բուռն համագործակցութ֊յուն է սկսվել Հայաստանի և պղնձե, քարե ու վաղբրոնզեդարյան Ուկրաինայի և հարավային Ռուսաստանի մշակույթների միջև։ Հատուկ հետաքրքրութ֊յուն է առաջացնում Հայաստանի հնարավոր ազդեցութ֊յունը՝ Տրիպոլի հայտնի մշակույթի վրա. այն տարածված է Դնեպրի ավազանի, Հարավային Բուգայի և Դնեստրի շուրջ՝ ընդհուպ Սև ծով։ Տրիպոլի բնակիչները հոյակապ հողագործներ և տարբեր մասնագիտութ֊յան տեր վարպետներ էին և ապրում էին լավ կառուցված բնակարաններում, ինչպես իրենց ժամանակակից Քուռարաքսյան մշակույթի ներկայացուցիչները։ Նրանք կավագործութ֊յան հիանալի վարպետներ էին՝ չնայած նրանց պատրաստած ապրանքները շատ էին տարբերվում քուռարաքսյան ամաններից։

Տրիպոլի բնակիչները կարողանում էին վարպետորեն աշխատել բրոնզով և պողպատով՝ կովկասից մետաղի հումք ստանալով։ Տրիպոլում հանդիպում են բազմաթիվ կավե առարկաներ... Որոշ խորհրդային գիտնականներ՝ օրինակ՝ Տ. Ս. Պասսեկը, նշում է, որ այդ տրիպոլյան կավե արձանիկներում երևում են առանձնահատուկ հայկական նշաններ, ինչը մատնանշում է հնագույն գաղթերը Կովկասից և այլ Մերձարևելյան կենտրոններից» [195]*։*

Ապակեգործություն

Զարմանք են հարուցում Շենգավիթի, Ներքին և Վերին Նավերի հնավայրերից հայտնաբերված ինքնատիպ գտածոները։ Խոսքը ապակուց պատրաստված իրերի մասին է։ Այդ հնավայրերի Ն.Ք. 3-րդ հազարամյակի գերեզմանոցներից բազմաթիվ յուրահատուկ իրերի հետ միասին հայտնաբերվել են ապակուց և կվարցից պատրաստված զարդեր։

«Պատկերը լրացնում են նրբագեղ ոսկե զարդերը, գունավոր ապակուց պատրաստված ուլունգները։ Որոշ զարդեր պատրաստված են կվարցից։ Դա զարմացնում է, եթե հաշվի առնենք, որ կվարցի հալեցման համար պետք է 1700 աստիճանի ջերմութ֊յուն՝ ըստ Ցելսիուսի։ Թե ինչպես են նրանք այդ ջերմաստիճանը ստացել, դեռևս անհայտ է։ Այդ որակի ապակի չի հայտնաբերվել հնագույն Արևելքում մ.թ.ա. 3-րդ հազարամյակի վերջին վերագրվող գտածոներում։ Ապակյա ուլունգները գտնվել են նաև Շենգավիթ քաղաքում (մ.թ.ա. 4-3-րդ

---

[194] Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005. ст. 155.

[195] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г. ст. 79.

հազ.)։ Դրանք այդ գտածոներից 1000 տարով ավելի հին են»[196]*,- գրում է Գ. Վասիլյանը, ապա ավելացնում է.*

«Այս առիթով Փենսիլվանիայի համալսարանի պրոֆեսոր, հնագետ Միշել Ռոտմանը, որ մասնակցել է Շենգավիթի պեղումներին, հայտարարել է, որ բոլոր փաստերը վկայում են, որ մոտավորապես մ.թ.ա. 3-րդ հազարամյակում հին Հայաստանի մշակույթը տարածվել է ողջ աշխարհում» [197]*։*

Անկասկած, հայտնաբերված գտածոները ապակուց պատրաստված ամենահին իրերն են աշխարհում։

Ինչից էլ՝ տրամաբանական հետևություն. ապակի ստանալու եղանակի հայտնաբերումը, օգտագործումը և տարածումը նույնպես պատկանում է քուռարաքսյան մշակույթի կերտող հայոց ազգին (ինչպես գրքում հիշատակված բազմաթիվ այլ ոլորտների գյուտերը)։

Շինարարություն

«Ակնհայտ է, որ Շումերական (արքայական) ցուցակի աշխարհագրական անվանումների նմանությունը Աստվածաշնչյան, սլավոնական և հայկական ասքերի անվանումների հետ՝ ընդհանուր էպիկական ավանդության անդրադարձն է՝ վկայող այն մասին, որ ամենահին քաղաքները հիմնադրվել են «առաջին դարբինների կողմից»» [198]*։*

Հայկ Նահապետի չարահաղթ պատերազմից հետո Հայաստանում սկսվում է բուռն շինարարություն։ Դրա արձագանքները բնակավայրերի, առանձին շինությունների, նաև ասքերի միջոցով հասել են մինչև մեր օրերը։

«Հայկական լեռնաշխարհի վաղ բրոնզեդարյան մշակույթին բնորոշ էր նաև բավականաչափ զարգացած բնակարանաշինությունը» [199]*։*

Հայոց լեռնաշխարհում այնպիսի բնակավայրերի հետքեր են հայտնաբերվել, որոնց թվագրությունը հասնում է նույնիսկ Ադամի և Եվայի ժամանակները։ Դա զարմանալի չէ, քանզի մինչև Ջրհեղեղը, գիտենք, որ մարդկության հիմնական մասն ապրում էր Հայոց աշխարհում, իսկ Ջրհեղեղից հետո առաջին բնակավայրերն ստեղծվեցին Արարատ լեռան շուրջը.

«Հայաստանն իրավամբ համարվում է մարդկության մշակույթի հնագույն օջախներից մեկը... Հայաստանում և Մերձավոր Արևելքում հայտնաբերվել են բազմաթիվ բնակավայրեր, որոնք հիմնադրվել են նեոլիթի ժամանակաշրջա-

---

196 Գայանե Վասիլյան, PanARMENIAN News, «Հայաստանը հնդեվրոպական քաղաքակրթության օրրանն է»: http://www.panarmenian.net/arm/details/51219/

197 Նույն տեղում

198 Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

199 Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1967թ., էջ 85:

նում, գոյատևել քարե, պղնձե դարաշրջանի ընթացքում, բրոնզե դարաշրջանում և ավելի ուշ»[200]:

Երևանում առավել մեծ ուշադրության է արժանացել Շենգավիթ բնակավայրը, որը բազմաշերտ հնագիտական հուշարձան է.

«Ժամանակակից Հայաստանի տարածքում հուշարձանները կազմում են վառ, ինքնօրինակ և ինքնուրույն խումբ...

Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանում վերջին հայտնագործությունները: Այստեղ՝ էջմիածնի մերձակայքում, միմյանցից ոչ մեծ հեռավորության վրա հայտնաբերվել են մի քանի էնեոլիթյան բնակավայրեր...

Երևանում Հրազդան գետի ձախ ափին գտնվող Շենգավիթյան բնակավայրը Քուռարաքսյան մշակույթի ամենամեծ հետազոտվող բնակավայրն է. նրա տարածքը հասնում է 6 հեկտարի: Բնակավայրն ունի չորս մշակութային շերտ, որոնցից ամենաստորինը պատկանում է էնեոլիթին, մնացածները վաղ բրոնզի տարբեր փուլերին: Բոլոր շերտերում հայտնաբերվել են կլոր բնակարաններ՝ 5-7,5 մ. տրամագծով և բազմաթիվ ուղղանկյուն տնտեսական շինություններով...

Շենգավիթյան բնակավայրը իրենից ներկայացնում է յուրահատուկ ամրոց՝ կառուցված բարձր գետափին՝ զառիթափին: Այն երեք անպաշտպան կողմերից պատված էր քարե 4 մետր հաստությամբ հզոր պարիսպներով, որոնք ունեին աշտարակներ և ստորերկրյա ուղիներ...

Այս հսկայական բնակավայրի կողքին, որը անվիճելիորեն կենտրոնականն է Արարատյան դաշտավայրում, գտնվել են համեմատաբար ոչ մեծ գյուղեր: Սրանք առաջացել են հարմարավետ վայրերում՝ սովորաբար ջրի մոտ՝ աստիճանաբար վերածվելով արհեստական բլուրների» [201]:

Դա նշանակում է, որ հազարամյակներ անընդմեջ այդ վայրում շարունակվել է կյանքը:

Շինարարության և այլ ոլորտներում տեղաբնակների մեծ հմտությունների հետքերը ապացուցում են, որ նրանք քոչվոր ցեղեր չեն եղել, այլ հավատարմորեն ապրելով Տիրոջից պարգև ստացած տարածքում՝ մշտապես ջանացել և կատարելագործել են արհեստներն ու արվեստները.

«Վաղ բրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայաստանի շատ բնակիչներ նստակյաց կյանք էին վարում՝ վարպետորեն պատրաստված քարե, եղեգե և արևի տակ չորացրած աղյուսե տներում... Շենգավիթը Քուռարաքսյան մշակույթի հայկական քաղաքաշինության լավ օրինակ է» [202]:

Այդ հնագույն շրջանի բնակավայրերը աչքի են ընկնում նրանով, որ քառակուսի կառույցների շարքում կան բազմաթիվ կլոր կացարաններ: Նմանատիպ կլորավուն կացարաններ հայտնաբերվել են ոչ միայն Արարատ լեռան շրջակայքում, այլև Հայաստանի այլ վայրերում:

---

200 Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 52, 62.

201 К. Х. Кушнарева, Т. Н. Ч убинишвили, Древние культувы южного Кавказа, Ленинград 1970, изд. “Наука”, ст.18, 40, 70.

202 Девид Лэнг... ст. 78.

Նշել էինք, որ Հայկական լեռնաշխարհում տնտեսության տարբեր ճյուղերն սկիզբ առնելով՝ տարածվել էին աշխարհի տարբեր երկրներում: Դա հատկապես ակնհայտ է այն վայրերում, որոնք գտնվել են քուռարաքսյան քաղաքակրթության ազդեցության շրջանակներում:

Այդպես և տարածում է գտել շինարարական արհեստը.

«Աշխարհագրական այս ընդարձակ միջավայրում, բացի Հայկական լեռնաշխարհին կից շրջաններից, ուրվագծվում են մի շարք ծայրամասային մարզեր՝ Փոքր Ասիայի և Կովկասի սահմաններում, ինչպես նաև այլ մշակույթների տարածման ընդարձակ ոլորտներ՝ Կիլիկիայի, Ասորիքի, Պաղեստինի, Կուբանի, Ջեչենահինգուշեթիայի սահմաններում, որտեղ տեղական մշակույթների բնորոշ շերտերի մեջ նկատվում է Հայկական լեռնաշխարհի 3-րդ հազարամյակի մշակույթի ամբողջական հորիզոնների կամ նրա հատկանշական տարրերի առկայությունը» [203]:

Որոշ գիտնականներ կարծիք են հայտնել, թե իրարից բավականին հեռավորության վրա գտնվող նմանատիպ մշակույթները կապ չունեն մարդկանց տեղաշարժերի հետ, այլ նույնանման ապրելակերպի և պայմանների հետևանք են: Սակայն ժամանակի ընթացքում այդ կարծիքը հերքվեց:

Որ առաջին շինարարները եղել են առաջին մետաղագործները, հաստատում են նաև հին աշխարհի տարբեր ավանդությունները.

«Նորանոր փաստերը գալիս են հերքելու գիտության մեջ ընդունված այն կարծիքը, թե իբր իրարից հազարավոր կիլոմետրեր հեռավորության վրա գտնվող երկրներում կառուցված մեգալիթները հետևանք են ոչ այնքան այդ մշակույթը կրող ցեղերի տեղաշարժերի և մշակութային փոխազդեցությունների, որքան միմյանցից անկախ սոցիալական և աշխարհագրական նույնատիպ պայմանների: Ավելին. պարզվում է, որ այդ հետաքրքիր ու առեղծվածային կառույցների հեղինակները նույն այն ցեղերն են, որոնք անմիջական կապ ունեն հնագույն մետաղաձուլության և վերջինիս տարածման հետ: Մենք արդեն տեսանք, որ առաջին մետաղագործները դուրս են եկել Հայկական լեռնաշխարհից. իսկ կարո՞ղ ենք արդյոք նույն բանը նշել նաև մեգալիթյան կառույցների շինարարների համար, այսինքն՝ եզրակացնել, որ և՛ առաջին մետաղագործները, և՛ մեգալիթյան կառույցների առաջին շինարարները միևնույն ցեղերն են՝ նույն մշակույթի տարածողները: Դրա համար նորից վերադառնանք մեր լեռնաշխարհը:

Հնագետ Վ. Մարկովինը ապացուցել է Պորտուգալիայի, Սարդինայի, Կորսիկայի, Բալեարյան կղզիների իբերական դոլմենների նմանությունը կովկասյանների հետ: Թորոս Թորամանյանը գրել է. «Հայաստանում մի քանի դոլմեններրի շինություններն այնքան նախնական են, որ չի կարելի քարի դարից այս կողմ բերել»» [204]:

Հայաստանում շինարարության բարձր մակարդակի մասին է վկայում և այն փաստը, որ վաղ շրջանի մեծ զարգացում ապրած հարևան պետություններն

---

[203] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 74:
[204] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 81, 82:

իրենց երկրներում տաճարներ և պալատներ կառուցելու համար դիմում էին հայ շինարարներին: Այդ երկրները՝ հատկապես Շումերը, ճարտարապետների, շինարարների կարիք և շինարարական նյութերի մեծ պահանջարկ ունեին: Եվ շինանյութ ձեռք էին բերում՝ իրենց հարթավայրի բարիքներով փոխանակման միջոցով.

«Բացի մետաղներից ու թանկարժեք քարերից՝ Հայկական լեռնաշխարհից հարավ էր տարվում նաև շինարարական հումք՝ «լեռնային քարեր»: Ըստ «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգի՝ Ուրուկի նշանավոր էաննա տաճարը կառուցվել է Արատտայից ուղարկված քարով: Հայկական լեռնաշխարհից Եփրատով Միջագետք հսկայական քարաբեկորի տեղափոխման մասին տեղեկություն է պահպանվել Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկում:

Շումերները պահանջում էին, որ արատտացի վարպետներն իրենց երկրում կառուցեն տաճարներ, որին նրանք համաձայնեցին միայն հացահատիկ ստանալուց հետո: Արատտայում հիշվող արքունիքի գերագույն քրմի «լուսե կացարանի», շտեմարանի, «գաննուների», ինչպես նաև արատտացի ճարտարապետ շինարարների մասին տեղեկություններից պետք է ենթադրել Արատտայում տաճարաշինության և ճարտարապետության այլ ճյուղերի զարգացման բարձր մակարդակ» [205]*:*

Բժշկություն

«Տիգրիսի և Եփրատի հովիտներնի մոտակա տարածքները բնակեցված հայերի նախնիներով և նրանց մերձավոր հարևաններով, հնագույն ժամանակներից եղել են բժշկության օրրան» [206]*:*

Ինչպես տեսանք, հին Հայաստանը բազմաթիվ ոլորտների զարգացման օրրան է եղել: Նման երկրում չէր կարող առաջնային տեղ չգրավել նաև բժշկությունը:

Թ. Թորանեանը գրում է. ***«Եթե արագ ակնարկ նետենք հայ բժշկագիտության պատմության վրա, նույնիսկ հեռավոր անցյալը նկատի ունենալով, ոչ միայն ամոթով չենք մնա մեր աչքին ընդհանրապես, այլ անգամ մասնավոր հպարտության պատճառներ կունենանք... Պատմության վկայությունը անբեկանելի է: Այս մասին են խոսում հայ մագաղաթները, այս մասին են խոսում նաև օտար աղբյուրները»*** [207]*:*

Հնում բժշկության մեջ հիմնական բուժամիջոցը բուսաբուժությունն է եղել, իսկ Հայաստանը միշտ էլ ճանաչված է եղել իր դեղաբույսերի բազմազանությամբ.

---

[205] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ, 58-59:

[206] Л. А. Оганесов, История медицини в Армении, Эриван 1927 г., ст. 23.

[207] Թորոս Թորանեան, Երևանի Պետական Բժշկական հաստատությունը, Փարիզ 1986 թ., էջ 5:


«Հայ բժիշկները նույնիսկ մեր թվարկությունից առաջ են իմացել զանազան հիվանդությունների մեղմացման և բուժման համար դեղաբույսերի օգտագործումը» [208]**:**

Գաղտնիք չէ, որ դեղաբույսերից շատերի բուժական հատկությունները հայտնաբերվել են Հայաստանում. այդ մասին է խոսում նաև այն, որ օտարների մոտ էլ մեր դեղաբույսերը կրում են հայկական անվանումներ:

«Մի շարք դեղաբույսեր մեզանից անցել են օտարներին՝ պահպանելով իրենց անվանումը»,- *հաստատում է Թորանեանը* [209]**:**

Իհարկե, զարգացած բուսաբուժության առկայությունն այդ շրջանի համար այնքան էլ զարմանալի չպետք է դիտվի նրա համեմատությամբ, ինչը հնագետները հայտնաբերել են Լճաշենի հնավայրից. դա իսկապես արժանի է ոչ միայն աներևակայելի հիացմունքի, այլև գերագույն զարմանքի. 20-րդ դարավերջին Լճաշենում հայտնաբերվեցին գանգեր, որոնց հետազոտությունից պազվեց, որ հայ բժիշկները դեռ Հայկ Նահապետի ժամանակներում կարողանում էին նույնիսկ գլխուղեղի վիրահատություն (տրիպանացիա) անել [210]**:**

Քսաներորդ դարի ուշխունական թվականների հանճարեղ հայ վիրաբույժ Անդրանիկ Ճաղարյանը, ով աշխարհում ճանաչված էր նաև նրանով, որ կարողանում էր մարդկային հնագույն դեմքերը վերականգնել գանգոսկրի մնացորդների միջոցով, ուսումնասիրեց Լճաշենից հայտնաբերված այդ գանգերը, որոնց վրա կային վիրահատության հետքեր: Նա եկավ ապշեցուցիչ եզրակացության. պարզեց, որ վիրահատությունները հաջող ավարտ են ունեցել, և հիվանդները բժշկվել և ապրել են երկար տարիներ:



Այսօր էլ Հայաստանում դեռ հայտնաբերվում են գանգեր՝ վիրահատության հետքերով: Նրանցից մեկը գտնվում է Երևան քաղաքի պատմության թանգարանում՝ գլխի վերին մասում շատ վարպետորեն արված ոչ մեծ անցքով: Մասնագետներն ասում են՝ ոսկորի վրա եղող անցքի կերպից կարելի է եզրակացնել, որ այն արված է կենդանի վիճակում և ծակված է ինչ-որ փորող գայլիկոնով, որի մասին վկայում են անցքի եզրերը:

Գանգուղեղի վիրահատման նման նշաններով գանգեր, որ նույնպես խորը հնություններից են հասել մեր օրերը, հայտնաբերվել են նաև Բրիտանական կղզիներում՝ բրիտների մոտ, որոնք, ինչպես արդեն ասվել է, այդ կղզիների առաջին բնակիչներն են և եկել են Հայաստանից:

Ուրեմն, ինչպես որ ամենատարբեր ոլորտներ ի հայտ գալով տարածվել են

---

[208] Թորոս Թորանեան... Փարիզ 1986 թ., էջ 5:

[209] Նույն տեղում, էջ 6:

[210] Армянское нагорье 12 тысяч лет назад. https://www.youtube.com/watch?v=deulC739we0

աշխարհով մեկ, այդպես և բժշկության արվեստը, խորը զարգացում ապրելով Հայաստանում, տարածվել է նաև հեռավոր երկրներում:

Իսկ ամենաանհավանականն այն է, որ այդ հեռավոր ժամանակներում հայազգի բժիշկները հաջողությամբ կարողացել են նաև իմպլանտացիա անել. այսինքն, մարդկանց ոսկորները կենդանիների ոսկորներով էին փոխարինել:

Այդ զարմանալի հայտնագործությունները ժամանակին լայն քննարկման առարկա դարձան մամուլում, սակայն ոչ մի գիտական բացատրություն չգտնվեց մինչ օրս:

Հետաքրքրական է և այն, որ դեռ մեր ժամանակներում բժշկության համար այդ անհայտ հնարքը՝ իմպլանտացիան, քսաներորդ դարում առաջինը իրականացրել են հայ բժիշկները.

«Ոսկորի (տրանսպլանտացիան) վերապատվաստումը հայ բժիշկները իրագործել են Եվրոպացիներից ավելի քան կես դար առաջ» [211]**:**

Սա էլ մի խոսուն փաստ է, որ այսօր ապրող և գործող հայ բժիշկները մոտ չորս հազար տարի առաջ Հայաստանի տարածքում բնակված բժիշկների ուղիղ ժառանգորդներն են:

Այդ ժամանակների Հայաստանում մեծ զարգացում ապրած բժշկության տարբեր ճյուղերին հաղորդ եղան նաև հարևան երկրները, որոնք հայ բժիշկների շնորհիվ նույնպես առաջընթաց ունեցան բուժման ոլորտում:

«Այս բոլորը ցույց են տալիս Հայաստանի և Մերձավոր Արևելքի մեջ բժշկության բարձր զարգացումը՝ եգիպտական, Բաբելոնական, Ասորական և Շումերական քաղաքակրթություններին զուգահեռ» [212]**:**

Ի տարբերություն Հայաստանում տիրող բարեպաշտության՝ հարևան երկրներում տիրում էր կռապաշտությունը, հատկապես Բաբելոնում և նրա շրջակայքում: Իսկ դա չէր կարող ազդեցություն չթողնել տարբեր ոլորտների և հատկապես բժշկության վրա.

«Մոգական բժշկության իրական հայրենիքը եղել է Քաղդեաստանը: Այն զարգացել է այս երկրում այն աստիճան, որ տվել է հնարավորություն՝ նույնիսկ ամբողջ համակարգերի գոյացման համար և ընդունել ամբողջական ուսմունքի տեսք՝ ներկայումս անվանված դեմոնոլոգիա...

Քաղդեացիները համարում էին, որ հիվանդությունների և բնության արհավիրքների պատճառ հանդիսանում էին դևերը, և նրանց ամբողջ բժշկական ատրիբուտները կազմված էին տարբեր տեսակի թալիսմաններից, ամուլետներից, անեծքանման աղոթքներից, ծխեցումից և այլն:

Ի շնորհիվ այս հայացքների՝ քաղդեացիների կյանքը ամբողջովին ներծծված էր անոտիապաշտությամբ» [213]**:**

Իհարկե, հազարամյակների պատմություն ունեցող Հայաստանի բժշկության մակարդակի վերաբերյալ ոչ բոլոր ժամանակաշրջանների մասին է, որ

---

[211] Թորոս Թորանեան, Երեւանի Պետական Բժշկական հաստատութիւնը, Փարիզ 1986 թ., էջ 7:

[212] Ռոպեր Ճէպեճեան, Հայ բժշկութեան և հայ-արաբական նբժշկական դպրոցներու կապերը, Պեյրութ 1967 թ., էջ 5:

[213] Л. А. Оганесов, История медицинив Армении, Эриван 1927 г., ст. 24.

մենք տեղեկություններ ունենք, սակայն եղածն էլ քիչ չէ՝ ընդհանուր պատկերացում կազմելու համար։

Հատկապես շատ են օտար աղբյուրներից մեզ հասած նյութերը.

«Հայաստանում աճեցված կամ հայթայթված դեղամիջոցները, որոնք տարբեր նպատակներով օգտագործվել են տեղական բժիշկները, հնուց ծառայել են որպես ուշադրության առարկա՝ օտարերկրյա բժիշկների կողմից...

Բազմաթիվ են վկայությունները Հայաստանի դեղագործական նյութերի մասին՝ օտարերկրյա պատմաբանների և բժիշկների, հատկապես հույների և հռոմեացիների մոտ, որոնցից են կիլիկիացի հույն բժիշկ Դիոսկորիդոսը... Սալյուստ Կիրսիոսը, Ստրաբոնը և այլք» [214]***։***

Հայտնի է, որ մինչ Քրիստոսի ծնունդը եղած Հայոց տիրակալները, ըստ պատմական տվյալների, մեծ հոգատարություն են ցուցաբերել երկրում առողջապահության մակարդակը բարձր պահելու համար.

«Հայոց Վաղարշակ թագավորը Ք. ա. երկրորդ դարում ձեռնարկել է Հարավային Հայաստանի մեջ գտնվող ճահիճների չորացման աշխատանքները։

Դա նշանակում է, որ արքունիքը պայքարել է ճահճատենդի՝ մալարիայի դեմ։

Մեր թվարկության առաջին դարում հայոց Արտաշես թագավորը հիմնել է բուսաբանական այգի, ոչ միայն օդի մաքրության համար և գեղագիտական նպատակով, այլև տվյալ հանգստավայրի մեջ հիվանդներ ընդունելու և դեղաբույսերով նրանց բուժելու հաստատ որոշումով» [215]***։***

Հոգատար արքաները առողջության համար անբարենպաստ վայրերի՝ ճահճուտների դեմ պայքար են մղել, իսկ բարենպաստ վայրերը դարձրել են առողջարաններ.

«Սևանի կղզու շրջանը օգտագործվել է ջրային հիվանդություններով տառապողների համար՝ հանգստարան։

Դարերով մեր ժողովուրդը առողջարաններ է հաստատել մեր երկրի ընդերքից ժայթքող հանքային աղբյուրների մոտ՝ Կիլիկիայից մինչև Արարատյան դաշտ» [216]***։***

Իսկ Քրիստոնեության շրջանում առավել մեծ հոգատարություն էին ցուցաբերում ժողովրդի հանդեպ՝ եկեղեցու բարեպաշտ հոգևոր հայրերը։ Այդ առումով հատկապես մեծ հարգանքի և հիշատակության է արժանացել մեր սուրբ հայրապետներից Ներսես Մեծը (V դ.), ով Հայաստանի բազմաթիվ շրջաններում բորոտանոցներ և հիվանդանոցներ է կառուցել տվել.

«Եվ սուրբ Ներսեսը նստեց հայրապետական աթոռը... բոլորին նա խրատ էր տալիս, հորդորում էր, առաջնորդում դեպի բարեգործություն և նախանձախնդիր էր լինում, նախ ինքն էր անում, ապա ուրիշներին նույնը ուսուցանում։ Նույնը հրամայում էր կատարել Հայոց ամբողջ աշխարհում, գավառներում, կողմերում, անկյուններում։ Որոնում գտնում էին պատշաճ տեղեր, զա-

---

[214] Л. А. Оганесов, История медицини в Армении, Эриван 1927 г., ст. 20.

[215] Թորոս Թորանեան, Երեւանի Պետական Բժշկական հաստատութիւնը, Փարիզ 1986 թ., էջ 6:

[216] Նույն տեղում:

տում էին՝ նրանց մեջ աղքատանոցներ շինելու համար, որտեղ պետք է հավաքեին ախտավորներին, հաշմանդամներին, բորոտներին, ցավագարներին: Որոշեցին շինել ուրկանոցներ, սահմանել նրանց սնունդ և դարման» [217]:

Նրանից մնացած այդ ավանդությունը հետագայում էլ չկորցրեց իր արդիականությունը՝ հակառակ որոշ ամբարիշտ արքաների ընդդիմության:

«Հինգերորդ - վեցերորդ դարերում հիմնված բժշկական ձեռնարկություններից լավագույններ ճանաչվել են Սյունիքի մեջ՝ Արաքսի ափին, հիմնված բորոտանոցը, որ կարող էր տուն տալ 500 անձի և ուներ 2000 եղջերավոր կենդանի: Սվազի մեջ 4-րդ դարում հիմնված հիվանդանոցը անդամալույծների, ծերերի և որբերի համար և այլն» [218]:

Նմանատիպ հիվանդանոցային համակարգերը նույնպես տարածում են գտել այլ երկրներում, սակայն շատ ավել ուշ շրջանում.

«Հայերի հիմնած բորոտանոցները Եվրոպայի նույնանման հաստատություններից 300 տարի առաջ են գործել» [219]:

Իսկ բազմաթիվ բժշկական հնարքներ Հայաստանի բժիշկներն օգտագործել են դեռ շատ վաղուց.

«Հայ վիրաբույժները վարպետորեն օգտագործել են կեսարյան վիրաբուժական մեթոդը՝ դեռ միջին դարերում:

Ութերորդ դարից սկսած՝ հայ բժիշկները կատարել են փորձեր՝ հիվանդին երաժշտությամբ բուժելու մեթոդով, ինչը քսաներորդ դարում ոմանք ցանկանում են որպես նորություն ներկայացնել» [220]:

Հայ բժիշկները տարբեր դարերում փայլել են իրենց հմտությամբ և արհեստավարժությամբ, որոնց մասին հաստատումներ են պահպանվել օտար աղբյուրներում.

«Արաբական ծավալումների ժամանակ, 8-րդ և 9-րդ դարերի ժամանակ, արաբ գիտնականներն իրենց հիացմունքը չէին թաքցնում հայ բժիշկների հանդեպ: Բայց, դժբախտաբար, մենք քիչ աղբյուրներ ունենք նրանց մասին: Նշենք հատկապես Գաբրիել Շիրակացուն և Խոսրովին: Շիրակացին մեծ հռչակ հանեց պարսից ապարանքի մեջ՝ ամլությունից բուժելով Շահի կնոջը:

Ութերորդ դարում տաղանդավոր երաժիշտ Սահակադուխտը զբաղվում էր՝ երաժշտությամբ հիվանդներին բուժելով Հայաստանի մեջ. սույն մեթոդը ժողովրդական բժշկության կողմից գործածության մեջ մնաց մինչ 19-րդ դար» [221]:

Կիևյան Ռուսիայում էլ, տասներկուերորդ դարում, փայլել են հայ բժիշկները:

---

[217] Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Հայաստանհրատ., 1968 թ., էջ 127, 129:

[218] Ռոպեր ՃԷպեճեան, Հայ բժշկութեան և հայ-արաբական բժշկական դպրոցներու կապերը, Պեյրութ 1967 թ., էջ 5:

[219] Թորոս Թորանեան, Երեւանի Պետական Բժշկական հաստատութիւնը, Փարիզ 1986 թ., էջ 7:

[220] Նույն տեղում, էջ 6-7:

[221] Ռոպերճէպեճեան, Հայ բժշկութեան և հայ-արաբական բժշկական դպրոցներու կապերը, Պեյրութ 1967 թ., էջ 19:

«Մոնոմախի տարիներին Կիևում հռչակված էին հայ բժիշկները. Դրանցից մեկը (ինչպես գրում են) նայելով հիվանդին՝ միշտ կռահում էր՝ կարող է նա ապրել, իսկ հակառակ դեպքում սովորաբար ասում էր նրա մահվան օրը»[222]*:*

Պատմության մեջ հայտնի են այնպիսի հայ բժշկապետեր, որոնք ստացել են համաշխարհային ճանաչում: Այդպիսիներից են Մխիթար Հերացին, Գրիգորիսը, Ստեփանոսը, Ամիրդովլաթ Ամասիացին և այլք:

«Գրիգոր Մագիստրոսը, Մխիթար Հերացին, Ամիրդովլաթը և ուրիշներ մեծ երախտիք ունեն ոչ միայն մեր ժողովրդին, այլև հարևան ժողովուրդների համար: Այս հսկաների գործերի հրատարակումը օտար լեզուներով՝ մեր ժողովրդին բերել է ու պիտի շարունակի բերել ճանաչման նոր որակ»[223]*:*

Բժիշկ, բնագետ և փիլիսոփա Մխիթար Հերացին (1120-1200) համարվում է հայ դասական բժշկության հիմնադիրը:

«Մասնագիտական կրթությունն ստացել է Կիլիկյան Հայաստանում: Գիտաբժշկական գործունեությունը ծնվել է Սիսի մայրաքաղաքում ու կաթողիկանիստ Հռոմկլա ամրոցում՝ Ներսես Շնորհալու և Գրիգոր Դ Տղայի հովանավորությամբ: Տիրապետել է հունարենին, արաբերենին, պարսկերենին: XII դ. 60-ական թ. արդեն ուներ մեծ բժշկապետի համբավ» [224]*:*

Մխիթար Հերացին դարձել է նաև հայ բժշկության մի շարք ճյուղերի հիմնադիր և ստեղծել արժեքավոր երկեր, որոնցից են «Ախրապատինը», «Ջերմանց մխիթարությունը» և այլն:

Իսկ Ամիրդովլաթ Ամասիացին (1420-1496) ծնվել է Ամասիա քաղաքում: Նա բազմակողմանի զարգացած անձ էր, բնագետ-բժիշկ, մատենագիր և բառարանագիր: Տիրապետում էր հունարենին, լատիներենին, պարսկերենին, արաբերենին, թուրքերենին:

Ուսումնասիրել է հին և միջնադարյան բժշկագիտությունը և համարվել է կայսերության առաջին բժշկապետը. ***«Երկար տարիներ ապրել է Կ. Պոլսում, եղել է Մուհամմեդ II սուլթանի պալատական բժիշկը, հռչակվել «Ճառհապաշի ռամադան» (վիրաբուժապետ): Ա. Ա. հայկական բժշկական գրականությունը հարստացրել է արժեքավոր երկերով, որոնք ընգրկում են միջնադարյան բժշկագիտության և դեղագիտության գրեթե բոլոր ճյուղերը»***[225]*:*

Նրա գրչին են պատկանում «Ուսումն բժշկության», «Օգուտ բժշկության», «Ախրապատին», «Բառք այբուբենական՝ ի վերայ ցավոցն», «Անգիտաց՝ անպետ», «Վասն նշանաց հիւանդին, զկենաց և զմահուն» և այլ աշխատություններ:

«Ամիրդովլաթ Ամասիացին իր աշխատություններում ամենից խոր ու բազմակողմանի մշակել է դեղագիտությունը, սակայն մեծ տեղ է տվել նաև անատոմիայի, ֆիզոլոգիայի, ախտաբանության, թերապիայի, մանկաբարձության և

---

222 Նիկոլայ Կարամազին, ռուս գրող պատմաբան, Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Իսոյանը. Երևան 2014, էջ 156:

223 Թորոս Թորանեան, Երեւանի Պետական Բժշկական հաստատութիւնը, Փարիզ 1986 թ., էջ 7:

224 Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատ. VII, Երևան 1981թ., էջ 632:

225 Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատ. I, Երևան 1974 թ., էջ 321:

գինեկոլոգիայի, քիթ-կոկորդ-ականջաբանության, նյարդային, հոգեկան, մաշկային, վեներական հիվանդությունների և հիգիենայի հարցերին...

Նա նկարագրել է սրտի, թոքերի, երիկամների, լյարդի, փայծաղի, ստամոքսի, սրտի, աղիների, միզասեռական օրգանների ձևը, կառուցվածքը, դասավորությունը, դերը ու նշանակությունը: Նկարագրել է աչքի թաղանթների կառուցվածքն ու դերը, տեսողական նյարդի ուղին և այլն» [226]:

Հետագա դարերում էլ միշտ եղել են համբավավոր հայ բժիշկներ: Ներկայումս ոչ միայն Հայաստանում, այլև աշխարհի տարբեր երկրներում կան բժշկության տարբեր ճյուղերին պատկանող բազմաթիվ հեղինակավոր հայազգի բժիշկներ, սակայն այդ թեմային կանդրադառնանք ապագայում:

Աստղագիտություն

«Մենք կարող ենք հաստատել, որ աստղային պատկերների (կենդանակերպների) հայրենիքը Փոքր Ասիան է և Հայաստանը»[227]:

Ջրհեղեղից առաջ և հետո Հայաստանը երկիր մոլորակի վրա շարունակ նոր սկիզբների և մարդու զարգացման ու կենսապահովման տարաբնույթ ոլորտների հայրենիք եղավ:

«Պետք չէ մոռանալ, որ այն ժամանակ, երբ հնդեվրոպացիները հայտնվեցին Փոքր Ասիայում, մարդկային քաղաքակրթությունը Արարատ լեռան և Վանա լճի շրջաններում արդեն ուներ իր հին ավանդույթները» [228]:

Ինչպես գիտության և արդյունաբերության շատ մարզերում, այնպես էլ աստղագիտության ասպարեզում Հայաստանը դեռևս հնագույն ժամանակներում առաջատար դիրքերում է եղել: Տնտեսության և գիտության զարգացումը հիմքեր էր ստեղծում այլ ճյուղերի առաջացման համար.

«Մ. թ. ա. III հազարամյակի կեսերին և II հազարամյակի սկզբներին Հայկական լեռնաշխարհում զարգացած էր աստղագիտությունը՝ կապված հանքային գործի, մետաղագործության և երկրի մասին ուսմունքի բնագավառներում ընդհանուր առաջընթացի հետ» [229]:

Հայաստանում զարգացած աստղագիտության փաստեր են հայտնաբերվել հնագույն ժայռապատկերներում և այլուր: Հատկապես ուշագրավ է Հայաստանի ամենամեծ մետաղագործական կենտրոններից Մեծամորի աստղադիտարանը, որը թվագրվել է ն. Ք. III – II հազարամյակներին.

«Մեծամորի աստղադիտարանը եղել է իր ժամանակի համար տիպական կառուցվացք: Այժմ պահպանվել են հրաբխային ամուր խարամում փորված,

---

[226] Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատ. I, Երևան 1974թ., էջ 322:

[227] Уильям Таймер Олькотт «Легенды звёздного мира», С. Петербург, 1911 ст. 9.

[228] ДевидЛэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 18.

[229] Ս. Մ. Այվազյան. Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից. Երևան 1986 թ., էջ 82:

նույն բարձրությունն ունեցող յոթ աստիճաններ, որոնք կտրուկ ընդհատվում են մի քանի մետր բարձրությունից: Աստղադիտարանի դիրքային ընդհանուր կողմնորոշումն է՝ արևմուտք – հարավ արևմուտք, արևելք – հյուսիս արևելք (կենդանակերպի ուղղություն):

Աստիճանների թիվը համընկնում է այն մոլորակների թվի հետ, որոնք նկատելի են անզեն աչքով» [230]:

Հայաստանի հյուսիսային կողմերում նույնպես հայտնաբերվել են հնագույն աստղագիտական հուշարձաններ, որտեղից գտել են աստղագիտության ոլորտի բազմաթիվ պարագաներ: Սա խոսում է այն մասին, որ քուռարաքսյան քաղաքակրթության կենտրոնում, որ է Հայկական լեռնաշխարհը, աստղագիտությունը զգալի առաջընթաց է ունեցել.

«Ճարտարապետ Սուրեն Պետրոսյանը Վարդենիսի Սևասար լեռան շրջանում հայտնաբերել է եզակի աստղագիտական մի համալիր-կենտրոն: Այստեղ հայտնաբերվել են արևի, լուսնի օրացույցներ, արեգակնային ժամացույց, բազմաթիվ համաստեղությունների նշանագրեր և երկնային մարմինների հետ կապված հասկացությունների ժայռապատկերների մի բարդ համակարգ: Սևասար լեռան ստորոտով անցնող հնագույն քարավանային ճանապարհը Սելիմի լեռնանցքի մոտ ավարտվում է տասնյակի հասնող ժայռափոր աստղային քարտեզներով, որոնք ստեղծվել են հինգ հազար տարի առաջ» [231]:

Սևանա լճի ափին՝ Լճաշենում, նույնպես հայտնաբերվել են աստղագիտական ժայռապատկերներ, որոնք վերագրվում են մ.թ.ա. III-II հազարամյակներին: Այստեղ գտնվել են աստղային քարտեզներ, ուր տեսանելի են համաստեղությունների գծապատկերները: Նույն վայրում գտնվել են նաև մեր մոլորակի պատկերը և տիեզերքի մոդելը.

«Ժայռապատկերներից ամենահետաքրքիրն այն է, որը պատկերում է երկրագունդը՝ հակոտնյաներով... Ապշեցնում է այն հանգամանքը, որ երկիրը պատկերված է գնդի ձևով, իսկ մարդիկ գտնվում են գնդի վրա՝ նրա չորս կետերում այնպես, կարծես ձգվում են երկրի կողմից: Երկիրը բաժանված է չորս մասի...

Լճաշենում հնագետների հայտնաբերած տիեզերքի եզակի մոդելը վերաբերում է մ. թ. ա. II հազարամյակին:

Վերոհիշյալներից ակնհայտորեն երևում է, որ հնագույն Հայաստանում աստղագիտական-երկրաբաշխական գիտությունների զարգացման համար գոյություն ուներ գիտական ու մշակութային իրական հիմք» [232]:

«Մեր նախնիները երկիրը պատկերացրել են կլոր, գիշերային ժամերին կողմնորոշվել են Բևեռային աստղի միջոցով: Հետաքրքիր է, որ մեր նախնիները 3-2-րդ հազարամյակներում գաղափար ունեին տեսանելի հինգ մոլորակի մասին»[233]:

---

230 Ս.Մ. Այվազյան. Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից. Երևան 1986 թ., էջ 80:

231 Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 84:

232 Ս.Մ. Այվազյան... էջ 86, 87:

233 Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես Ամսօրյա, հունվար-դեկտեմբեր, 1998թ., էջ 424:

Կենդանակերպեր

Աշխարհի բազմաթիվ գիտնականներ են եկել այն համոզման, որ դեռ Ք. ա. 2800 թվականին ստեղծված կենդանակերպերի նշանների հայրենիքը Հայաստանն է:

Նման կարևորության հայտնագործությունը հնարավոր էր միայն այն դեպքում, եթե աստղագիտությունը գտնվեր զարգացածության բարձր մակարդակի վրա.

«Իսկ որ Հայաստանը եղել է աստղագիտական գիտելիքների ստեղծման կենտրոններից մեկը, հաստատում են աստղագիտության պատմության հանրահայտ հետազոտողներ Ֆլամարիոնը, Սվարցը, Մաունդերը, Օլբոթը և ուրիշներ: Նրանք առաջինն ուշադրություն դարձրին այն փաստի վրա, որ ո՛չ Միջագետքը, ո՛չ Եգիպտոսն ու Հունաստանը չեն կարող լինել այն տարածքները, որտեղ հնում ստեղծվել են կենդանակերպի (զոդիակոս) նշաններն ու այլ համաստեղությունների պատկերագրերը, կազմվել աստղային առաջին քարտեզները: Մաունդերը սահմանում է, որ երկինքը համաստեղությունների բաժանած մարդիկ ապրելիս են եղել հյուսիսային լայնության 36 և 42 աստիճանների միջև, որն է՝ Փոքր Ասիայում և Հայաստանում» [234]*:*

Օլբոթն առավել համոզիչ է շեշտում, որ Հայաստանն է կենդանակերպերի նշանների ստեղծման վայրը: Նա իր աշխատություններում քանիցս անդրադարձել է այդ թեմային.

«Աստղագիտության տվյալները համապատասխանում են պատմական և հնագիտական հետազոտությունների արդյունքներին այն առումով, որ անձինք, որոնք ստեղծել են հին համաստեղությունների ձևերը, ապրել են, ըստ երևույթին, Եփրատի հովտում, ինչպես նաև Արարատ լեռան շրջանում: Այս շրջանի կենտրոնի համատեղումը հարավային բևեռի հետ՝ հնարավորություն է տվել որոշել նաև համաստեղությունների անվանման ժամանակի վերջափուլը՝ մ. թ. ա. 2800 թ.»[235]*:*

Բնական պայմաններն էլ Հայաստանում աստղագիտության զարգացման համար ավելի նպաստավոր են եղել, քան միջագետքյան և եգիպտական հարթավայրերում: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանը լեռնաշխարհ է, որտեղ կան նաև անտառներ, լճեր և գետեր, որոնք խոնավացնելով՝ մաքրում են օդը, երկինքն առավել տեսանելի են դարձնում և նպաստում աստղերի ուսումնասիրմանը: Իսկ անապատային և տափաստանային փոշոտ տարածքներով ցածրադիր հարթավայրերը հարմար տեղանք չեն աստղագիտության զարգացման համար. առավել ևս այն ժամանակներում, երբ խոշորացնող սարքեր չկային, և երկնակամարն ուսումնասիրվում էր անզեն աչքով: ***«Պետք է նշել, որ Մեծամորի աստղադիտարանի ընդհանուր տեղադրությունը համընկնում է կենդանակերպի գոտու ուղղությանը, որի միջին գծի երկարությամբ ձգված է Արեգակի ամենամյա ուղին:***

Լուսնի և մոլորակների հետագծերը նույպես ընկած են այդ գոտու երկայնքով»[236]*:*

---

[234] Սամվել Դիլանյան... էջ 84:

[235] Уильям Тайлер Олькотт. Легенды звездного мира, С.-П., 1914, ст. 9.

[236] Ս. Մ. Այվազյան... էջ 80, 81:

Օրացույց

Օրացույցը կարևոր դեր է խաղում մարդկության կյանքում: Առանց օրացույցի անհնար է պատկերացնել ժամանակակից մարդու կենցաղը: Հնում էլ մարդիկ գիտակցել են օրացույցի անհրաժեշտությունը: Երբ ասում ենք «հնում», ի նկատի ունենք մարդկության ամենահին շրջանը, որը սկիզբ է առել Արարատ լեռան շրջակայքում: Հետևաբար, տրամաբանական է, որ առաջին օրացույցի հետքերն այս տարածքում պետք է փնտրել.

«Օրացուցային համակարգը պատկանում է մարդկության մեծագույն հաջողությունների թվին: Դրա սկզբնավորումը կապված է աստղագիտական և լեռնամետաղագործական գիտությունների զարգացման հետ: Սևանի ավազանի ժայռապատկերային օրացույցները, որոնք վերագրվում են պղնձե և բրոնզեդարյան Հայաստանին (մ.թ.ա 5-3-րդ հազարամյակ), մարդկության օգտագործած առավել վաղ օրացուցային համակարգերի թվին են պատկանում»[237]:

Առաջին օրացույցի ստեղծման վայրի մասին գիտնականները տարակարծիք են: Ոմանք այն վերագրել են եգիպտացիներին, ուրիշները՝ շումերներին կամ բաբելացիներին: Սակայն հետագա ուսումնասիրությունները նոր փաստեր ի հայտ բերեցին, որոնց հիման վրա այդ կարծիքները հերքվեցին.

«Լեհ աստղագետ Լյուդովիգ Զայդլերը «Ժամացույցի պատմությունը» գրքում վերլուծում է մի շարք ժողովուրդների օրացույցների պատմությունը: Ընդունված է այն կարծիքը, որ հնագույն օրացույցը ստեղծել են շումերները: Այդ ժողովրդին պատկանող հնագույն օրացույցում, որը հայտնի է Մուլ Ապինի սեպագրությունից (Ք. ա. 2000 թ.), տարվա ամենաերկար ցերեկվա տևողությունը հասնում է տասնվեց ժամի, իսկ ամենակարճինը՝ ութի: Սակայն Միջագետքի լայնությունում նման երկար ու կարճ ցերեկներ չեն լինում: Ավելի ուշ՝ բաբելական օրացույցներն ուղղում են այդ «սխալը»: Այսպես. Ք. ա. 300թ. օրացույցն արդեն հավաստում է, որ ցերեկվա ամենաերկար տևողությունը հավասար է 14 ժամ 24 րոպեի, իսկ ամենակարճը՝ 9 ժամ 36 րոպեի:

Լյուդովիգ Զայդլերը եզրակացնում է, որ շումերական հնագույն օրացույցը ստեղծվել է ոչ թե Միջագետքում, այլ Փոքր Ասիայի ու Հայկական լեռնաշխարհի հյուսիսային լայնություններում: Հիշենք, որ գոյություն ունի մի վարկած, ըստ որի՝ շումերները Միջագետք են եկել լեռնային երկրից: Նրանց լեզուն խիստ տարբերվում էր իրենց հարևան սեմական լեզվից: Շումերական էպոսից հայտնի է նաև, որ գլխավոր հերոսը՝ Գիլգամեշը, իր նախնիների երկիրը հյուսիսարևմուտքում էր որոնում: Եվ այսպես՝ բազմաթիվ փաստեր, որոնք կամա թե ակամա, ուղղակի թե կողմնակի ճանապարհներով մեզ բերում են մեր ժողովրդի հարազատ բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը, որտեղ սփռված ժայռապատկերներում քիչ չեն աստղագիտական նշանագրերը»[238]:

---

[237] С. Т. Саркисян, Энциклопедия Арцах-Карабах, Изд. Дом “Петрополис”, Санкт-Петербург, 2007, Ст. 64.

[238] Սամվել Դիլանյան, «Մանկական հանրագիտարան», Երևան, 2001թ., էջ 84:

Հայաստանի հնագիտական հուշարձաններից պեղված գտածոների մեջ առկա են նաև յուրահատուկ օրացույցներ.

«Խոսելով մեր նախնիների աստղագիտական գիտելիքների մասին՝ չի կարելի շրջանցել ու չհիշատակել Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված Ք. ա. երկրորդ հազարամյակի բրոնզե գոտի-օրացույցները, որոնց վրա դրվագված են Արեգակը, Լուսինը, կենաց ծառը, երկրաչափական զանազան պատկերներ, մարտակառքեր» [239]**:**

Հնախույզներն ու աստղագետները հետազոտել են Սանահինի և Մեծամորի հնավայրերում գտնված գոտի-օրացույցները և հաստատել, որ դրանց վրայի պատկերները վերաբերում են աստղագիտությանն ոլորտին.

«Հյուսիսային Հայաստանում Սանահին գյուղի մոտ, 1946 թ. հողային աշխատանքներ կատարելիս՝ հայտնաբերվեցին բրոնզե դարին պատկանող մի շարք իրեր, այդ թվում՝ բրոնզե գոտի, որը հետագայում ուսումնասիրեցին հնագետներն ու աստղագետները: Պարզվեց, որ բրոնզե գոտին լուսնային-արեգակնային օրացույց է...

Մեծ հետաքրքրություն են հարուցում հնագետ Է. Խանզադյանի՝ 1965 թ. Մեծամորում հայտնաբերած երկու պղնձաբրոնզային գոտիները, որոնք, մեր կարծիքով, վերաբերում են մ. թ. ա. II հազարամյակին» [240]**:**

Սթոունհենջ – Քարահունջ

«Հայաստանը դա վայր է որտեղ աղետից (Ջրհեղեղից) հետո սկսվեց նոր քաղաքակրթությունը: Ձեր նախնիները ուսումնասիրել են աստղերը և հասկացել նրանց իմաստը: Իմ համար շատ տպավորիչ էր այցելությունը Քարահունջ, ինչը շատ հետաքրքիր էր, և հանդիսանում է շատ հին աստղադիտարան: Մարդկանց մեծամասնությունը, կարծում են որ այդ մեգալիտ քարե կառույցները գոյություն ունեն միայն Եվրոպայում, սակայն ձերը շատ ավելի հին է» [241]**:**

Սիսիանի շրջանում կա հնագիտական հուշարձանների համալիր, որը կոչվում է Քարահունջ: Այդ համալիրի մոտակայքում հայտնաբերվել են մ.թ.ա. 3-2 հազարամյակների դամբարաններ:

Համալիրը բաղկացած է հարյուրավոր ուղղահայաց դիրքի քարերից: Դրանցից մի մասի վրա փորված են անցքեր, կան մինչև 3 մետր երկարությամբ քարեր՝ մոտ 10 տոննա քաշով: Ըստ հետազոտությունների՝ այդ համալիրը եղել է հնագույն աստղագիտական կենտրոն.

---

[239] Սամվել Դիլանյան... էջ 84:

[240] Ս. Մ. Այվազյան. Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից. Երևան 1986 թ., էջ 77, 78:

[241] Грэм Хэнкок, писатель, известных исследователей древних цивилизаций. https://www.youtube.com/watch?v=U7xIz-lq_hE).

«Քարահունջ աստղադիտարանը եղել է շատ զարգացած և ակտիվ գործել է ավելի քան 7500 տարի: Իսկ անընդմեջ գործել է ավելի քան 5500 տարիների ընթացքում (մինչև մ.թ. 1-ին հազարամյակի վերջը)» [242]:

Փաստորեն, այս աստղադիտարանն այնքան հին է, որ հասնում է մինչջրհեղեղյան ժամանակաշրջանը: Համալիրի վրա աշխատանքներ են ծավալել ոչ միայն հայ, այլև օտարազգի գիտնականներ՝ Շվեյցարացի հնագետ Հ. Պ. Կալայները, Ռուսաստանից՝ աստղագետ Ն. Գ. Բոչկարյովը և ուրիշներ, որոնք հանգել են շատ հետաքրքիր եզրակացությունների.

«Քարահունջի ժամանակներում բացահայտվել էր, որ արևային տարին բաղկացած է մոտավորապես 365.25 օրից: Այնպես որ՝ «շարժական» օրացույցը «կանգնեցնելու»՝ այսինքն, տոն օրերը տարվա ընթացքում ֆիքսելու և համապատասխանեցնելու համար արևի իրական շարժման հետ՝ հարկավոր էր 4 տարին մեկ՝ ավելացնել օրացույցին ևս մեկ օր: Այսպես, Քարահունջում հայտնաբերվել ու մշակվել է «անշարժ» օրացույց, ըստ որի՝ տարին սկսվում էր գարնանային Գիշերահավասարի՝ Արեգի 1-ի (21-ը մարտի) առավոտյան ժամը 6-ին: Այսպես, Քարահունջում հիմնվել է առաջին «անշարժ» Հայկական Օրացույցը, և 1 461 տարի ժամանակահատվածը կոչվել է «Հայկական շրջան»:

Հայերը ավելի քան 5000 տարվա ընթացքում զուգահեռ օգտագործել են «շարժական» և «անշարժ» օրացույցներ (մինչ մ.թ. 19-րդ դարը), և այլ երկրների ժողովրդներին՝ մասնավորապես շումերներին ու եգիպտացիներին, սովորեցրել են օգտվել դրանցից...

Ֆրանսիացի հռչակավոր աստղագետ և փիլիսոփա Կ. Ֆլամարիոնը, բրիտանացի գիտնական Ա. Բերրին և այլոք նշում են, որ նախապատմական ժամանակներում Հայկական Բարձրավանդակում աստղագիտությունը բարձր մակարդակ է ունեցել» [243]:

Քարահունջի տիպի աստղադիտարան հայտնաբերվել է նաև այդ համալիրից հարավ ընկած տարածքում՝ Խնձորեսկ գյուղի մոտակայքում:

Ինչպես տեսնում ենք, թե՛ կենդանակերպի, թե՛ օրացույցի գիտելիքները Հայաստանից են տարածվել հարևան երկրներ:

Կա նաև համոզմունք, որ հեռավոր երկրներում հայտնաբերված հինավուրց աստղադիտարանները նույնպես Քարահունջի աստղադիտարանի աստղագետներն են կառուցել:

Քարահունջի տիպի հուշարձաններ գտնվել են եվրոպական տարբեր երկրներում, որոնցից առավել հայտնի է Անգլիայի Ստոունհենջը:

Բրիտանացի գիտնականները նախկինում այն կարծիքին էին, որ Ստոունհենջը կառուցել են կելտերը: Որոշ ժամանակ անց՝ հրաժարվեցին այդ վարկածից և կառույցը վերագրեցին հռոմեացիներին: Սակայն այդ տարբերակն էլ հերքվեց:

Ի վերջո, եկան եզրահանգման, որ կառույցի հեղինակներն ավելի հին մշա-

---

[242] Պարիս Մ. Հերունի, Հայերը և հնագույն Հայաստանը, Երևան 2006թ., էջ 18:
[243] Նույն տեղում, էջ 32, 81:

կույթի կրող, Բրիտանիայի առաջին բնակիչ բրիտներն են, որոնք, ինչպես արդեն ասվել է, Հայաստանից են տեղափոխվել Անգլիա:

Եվ այսպես՝ եթե Քարահունջն աստղադիտարան է, ապա այդ նպատակին է ծառայել նաև Ստոունհենջը: Հետաքրքիր է, որ նախքան Քարահունջի հայտնաբերումը՝ բրիտանացի հետազոտողներից մեկը կարծիք էր հայտնել, որ Ստոունհենջի նմանակը պետք է Հայաստանում փնտրել.

«Ամերիկացի գիտնական, Ստոունհենջի և Քալենիշի հանրահայտ հետազոտող Ջ. Ս. Հոուկինսը 1970- ականներին գրել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պրեզիդենտ Վ. Հ. Համբարձումյանին, որ Ստոունհենջը եզակի չէ, և աստղագիտական նման մշակույթի առկայությունը պետք է փնտրել Հայաստանում» [244]:

Պետք է հաշվի առնել նաև այդ անվանումների նմանությունը. «Քարահունջ – Ստոունհենջ»: Երկու անվանումների առաջին արմատները նույնն են, քանզի Քարահունջի առաջին արմատը «քարն» է, իսկ Ստոունհենջինը՝ «ստոունը» , որն անգլերեն նույնպես նշանակում է քար կամ քարե: Իսկ երկրորդ արմատը՝ «հենջը», Պարիս Հերունուն չի հաջողվել ստուգաբանել: Նրա հարցին, թե ի՞նչ է նշանակում հենջ, անգլիացի գիտնականները ևս չեն կարողացել պատասխանել: Հետևաբար, պետք է կարծել, որ դա հայերեն հունջ, հունչ (ձայն) բառն է. այսինքն, քարահունջ և ստոունհենջ բառերը հոմանիշներ են:

2001թ.Եվրասիական Աստղագիտական Միության նախագահ ռուս պրոֆեսոր Ն.Գ.Բոչկարյովը հայտնեց իր եզրակացությունները, որ Քարահունջը բավականին լուրջ աստղադիտարան է, և նշեց. ***«Քարահունջը ավելի քան 7500 տարեկան է, այն աշխարհի ամենահին աստղադիտարանն է»*** [245]:

Հայոց տոմար

Բազմաթիվ տոմարագետներ են զբաղվել մեր տոմարի ծագման խնդրով: Հայկական տոմարն ամենահինն է աշխարհում: Այն ստեղծել է նահապետ Հայկը.

Ղևոնդ Ալիշանը գրում է. ***«Հայկը, ըստ ավանդության, Արարատ հասած օրը տարեգլուխ (տոմար) դրեց և Բելին հաղթելու և իր Թորգոմի տան ազատությունը ապահովելու ժամանակ նոր թվական դրեց, որով եթե ոչ ինքը, ապա գոնե իր որդիները դրանով պիտի հաշվեին իրենց ազգի տարիքը. և այդպես էլ արեցին ու անում են մինչև այժմ՝ չնայած անգիտաբար և մոռանալով դրա պատճառը...***

Մեր ազգահոր թվականը վայել է սկսել այն մեծ գործից (Բելին հաղթելուց), և այդպես էլ է: Իսկ այդ թվականը 2492 տարի առաջ է Քրիստոսի թվականից, որը մեր ազգի ժամանակագրության բևեռը լինելով՝ պետք է լավ ճանաչել և հաստատ բռնել, և որի երկու մեծ հավաստիք ունենք՝ մեկը պատմական, մյուսը՝ ուսումնական: Պատմական են Ափրիկանոս և Եվսեբեոս ժամանակագիրների հաշիվները,

---

[244] Պարիս Մ. Հերունի... էջ 81:

[245] Bochkarev N.G., Bochkarev Yu. N., Armenian Archaeoastronomical Monuments Carahunge and Metsamor, Report on International Conference on Folklor, Tartu, 2003.

որ բաբելացի նախնիների, նրանց հաջորդ ասորեստանցիների, մարերի, պարսիկ թագավորների տարիները մանր-մանր գումարելով Քրիստոսից մինչև Բելի թագավորության վերջին տարին՝ այս հիշյալ թվականից հանում են 2492։

Իսկ ուսումնական կամ չափաբերական փաստերը մեր ազգային ծանոթ ժամանակագիրներից ենք վերցնում, ինչը Հայոց թվական է կոչվում...

Այս հաշիվների միջոցով են գտնում եգիպտական շրջանի կամ թվականի սկիզբը, սրանով նաև մենք ենք մերը գտնում, քանզի արդեն մեր տոմարի մեջ երկու տեսակ թվական ենք նշանակում. մեկը հասարակ և հայոց թվական կոչելով, մյուսը՝ Հայամավուրաց կամ Սարկավագի կոչելով. վերջինս անշարժ արեգակի տարիներով է չափած և մեր տոմարագետներին ծանոթ է Հին Հայ անվամբ»[246]։

Տեսնում ենք, որ ի գին հավատարմության՝ Տերը Հայկին շնորհեց չարաստական լայնալիճ աղեղը, հայոց տոմարը և այլ օրհնություններ, ինչպես հետագայում սուրբ գիրը՝ սբ. Մեսրոպ Մաշտոցին.

«Հարկ է իմանալ գիտությունը և աշխատանքի արդյունքը մեր հին նախնիների, որոնցից առաջինը Հայկն է, որի մասին վկայում են նաև մեր հին տոմարագետները. որ ոչ միայն արեգակնային շրջանն է իր անվամբ Հայկի շրջան կոչվել, այլև ըստ ազգային հին ավանդության՝ նա է դրել տարվա և ամսվա կարգերն ու անունները. և մեր ազգի աստվածաշնորհ պարգևներից մեկն էլ այս դասակարգումն է. մինչև անգամ հայոց հին տոմարագիտության մեկնիչներից մեկն ասում է. «Եբրայական ամիսների շարժունությունը և հայ ամիսների անշարժությունը սահմանեց Բարձրյալը, քանզի հավատ, գիր և տոմար այս երկու ազգիս միայն տվեց Աստված, իսկ այլ ազգերի մոտ մարդիկ են ստեղծել... տոմարը այնտեղ՝ Մովսեսին, այստեղ՝ Հայկին՝ նրանից առաջ»։ Նույն մեկնիչը նորից ասում է. «Մովսեսից առաջ ոչ մի տեղ չկար այս արվեստի գիտությունը, բայց միայն հայերը գիտեին ամիսների մասին, որ Մովսեսից առաջ էին, քանզի ասում են, որ Հոգու ձեռով, որ ազդում էր Նահապետների վրա, Հայոց առաջին նահապետը՝ Հայկը, կարգեց ամիսները և դրանք կոչեց իր ուստրերի ու դուստրերի անուններով»։

Կա ավելի հոգեհարազատ կարծիք և համարում՝ մեր նախնիների մոտ իրենց նահապետի՝ Հայկի մասին, որպես ոչ միայն քաջությամբ, այլև գիտությամբ և բարեկարգությամբ ազգի հայր և հեղինակ...

Երկրորդ՝ որ Ներոովթին հաղթելու տարին թե ինքը և թե իր հաջորդները ազգային թվական համարեցին, և արեգակնային շրջանի գլուխը նրա անվամբ կոչվեց Հայկի շրջան, որի սկիզբն է վերոհիշյալ 2492 տարին՝ Քրիստոսի թվականից առաջ։ Իրավամբ կարող ենք և պետք է, որ մեր ժամանակագրությունը և ազգային թվականը սկսենք այդ տարուց, որն ամենաստույգ, հնագույն, նվիրականն ու պանծալին է ազգերի թվականության մեջ» [247]։

Երևանում 2008թ. օգոստոսի 11-ին Հայկ նահապետի արձանի մոտ հանդիսավորությամբ տոնվեց հայոց երկնառաք տոմարի 4500 տարին։

---

[246] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քանզ լինելն Հայաստան, Վենետիկ 1904թ., էջ 147, 148:
[247] Նույն տեղում, էջ 149, 150, 151:

Հայկ-Օրիոն

Հայկ նահապետի անունն առնչվում է նաև աստղագիտության հետ: Ամենապայծառ համաստեղություններից մեկը հնագույն ժամանակներից կոչվել է մեր նահապետի անվամբ՝ «Հայկ»:

Աստղագիտությունը Հայաստանում զարգացում է ապրել Հայկ նահապետի տիրապետության ժամանակաշրջանում: Հույներն այդ համաստեղությունն անվանել են իրենց դիցաբանական հերոսներից մեկի՝ Օրիոնի անվամբ: Դա տվյալ համաստեղության անհամեմատ ավելի ուշ անվանումներից է:

Ըստ աստղագետների՝ «Հայկը» համաստեղություններից ամենագեղեցիկն է: Բաբելոնում այն համարել են «երկնքի հավատարիմ հովիվ», Եգիպտոսում՝ աստղերի թագավոր, իսկ արևելյան կրոնների հետևորդները Օրիոնի համաստեղությունը համարում են տիեզերքի սիրտը:

Հայկ նահապետի մասին ավելի մանրամասն կխոսվի հաջորդ գրքում: Կլինեն բացահայտումներ, որոնք կամբողջացնեն Հայկ նախահոր խորհրդավոր և վեհ կերպարը և առավել քան պարզորոշ ցույց կտան, թե որքան հիմնավորված է նման համաստեղության հետ նրա նույնացումը.

«Իբրև Հայկի հատկանիշ՝ նշվում է քաջ աղեղնավոր լինելը և իր երեքթևյան նետով ախոյանին՝ Բելին սպանելը: Հայկը համարվում է առաջին տոմարադիրը, որը ժամանակի և տարվա չափն ու շրջանը որոշողն էր: Եվ սա, իհարկե, արվում է աստղագիտությամբ...

Այսպիսի քաջության և ուժի գործ անողը պետք է, որ լիներ հայոց դյուցազուններից մեծագույնը՝ արժանի ամենայն պատվի ու հավատքի: Սրանից ելնելով՝ մեր նախահորն ու վեհին կարող ենք գերազանց համարել օտարազգի բոլոր դյուցազուններից, որոնց անունները սփռված են նույն երկնքի աստղակաճառ մագաղաթի վրա» [248]:

Աստվածաշունչ մատյանի հայերեն թարգմանությունում երկու տեղ հունարեն Օրիոնը թարգմանվել է Հայկ անվամբ (Եսայի 13, 10 և Հոբ 38, 31). նաև հայսմավուրքներից մեկում է Հայկ անվամբ հիշատակվում տվյալ համաստեղությունը, նմանապես՝ և Դիոնիսիոս Արիսպագացու վարքում:

Դա նշանակում է, որ Սուրբ Գրքի թարգմանությունից առաջ Հայաստանում տվյալ համաստեղությունը Հայկ են անվանել.

«Հայկի ավանդության և ընդհանրապես նրա պաշտամունքի վաղեմության խնդիրը հստակ դարձնելու անհրաժեշտության տեսակետից կարևոր է անդրադառնալ մի հարցի ևս: Մեր բանասիրության և պատմագիտության մեջ քիչ չի պատահում, որ, Հայկի և Օրիոնի մասին խոսելիս՝ դրությունը այնպես է ներկայացվում, կարծեք թե Հայկն է հետնորդել Օրիոնին և ոչ հակառակը: Դրանով ակամա այն տպավորությունն է ստեղծվում, թե հայերը Օրիոն համաստեղությունն են վերակոչել Հայկ անունով: Մինչդեռ ճշմարտությունն այն է, որ հայերը նույն համաստեղությունը կոչել են Հայկ՝ միանգամայն ինքնուրույն կերպով

[248] Ղևոնդ Ալիշան «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը», Երևան, 2002թ., էջ 67, 123:

և այն դարաշրջանում, երբ հույները տակավին չունեին աստղային պատկերների իմացություն» [249]*։*

Անանիա Շիրակացի

Վաղ միջնադարում՝ յոթերորդ դարի Հայաստանում, աստղագիտության մեջ հայտնի էր Անանիա Շիրակացին, ով նաև աստվածաբան էր, մաթեմատիկոս, տոմարագետ, աշխարհագետ, փիլիսոփա և օդերևութաբան։

«Հայերն էլ քաղդեացիների պես հնագույն ժողովուրդ են, հասու են աստղերի փառքին ու տիեզերքի գաղտնիքներին, և իրենց արևելյան մտքին ներհակ է, որ Աստծո և բնության միասնությունը նույնքան ճշմարիտ է, որքան անհատի ամբողջական էությունը. որ Գերագույն Արժեքի շնորհիվ է, որ հոգին գոյություն ունի» [250]*։*

Աստղագիտական ոլորտին պատկանող նրա աշխատության՝ «Տիեզերագիտություն» մեջ, նա անդրադարձել է հետևյալ թեմաներին՝ «Երկնքի մասին», «Երկրի մասին», «Երկնային լուսատուների մասին», «Միր կաթինի մասին», «Հյուսիսային աստղերի մասին», «Լուսնի մասին», «Արեգակի մասին», «Կենդանակերպերի մասին», «Աստղաբաշխության մասին» [251] *և այլն։*

Շիրակացին Կոպեռնիկոսից ինը դար առաջ է կարծիք հայտնել տիեզերքի արեգակակենտրոն կառուցվածքի մասին. այն, որ Երկիրն է պտտվում Արեգակի շուրջ։ Անանիա Շիրակացին համոզված էր, որ Երկիրը գնդաձև է, գտնում էր, որ Լուսինը սեփական լույսից զուրկ, պինդ մարմին է, որը երևում է Արեգակի ճառագայթների անդրադարձմամբ, իսկ նրա վրայի մութ բծերը մակերևութային անհարթություններ են։ Շիրակացին բացատրել է նաև Լուսնի փուլերի առաջացումը, Արեգակի և Լուսնի խավարումները։ Ծովերի մակընթացությունն ու տեղատվությունը նա համարել է Լուսնի ազդեցության հետևանք։ Համեմատական դատողություններով եզրակացրել է, որ Արեգակը մեծ է թե՛ Լուսնից, թե՛ Երկրից և գտնվում է Երկրից շատ ավելի մեծ հեռավորության վրա։ Շիրակացին է առաջինը պարզել, որ լույսի տարածման արագությունն ավելի մեծ է, քան ձայնինը։ Նա նշել է նաև աստղագիտության մի շարք գործնական կիրառություններ, մասնավորապես՝ նավագնացության ժամանակ աստղերով կողմնորոշվելու և Արեգակի դիրքով օրվա ժամերը որոշելու եղանակը։

---

[249] Լևոն Միրիջանյան, Հայ բանաստեղծության ակունքները, Երևան 1977թ., էջ 28:

[250] Լոուրենս Դակին, կանադացի բանաստեղծ, Երկիր Դրախտավայր. Օտարերկրացիները Հայաստանի և հայերի մասին..., Մտահղացել է Ալբերտ Խոյանը. Երևան 2014, էջ 597-598:

[251] Անանիա Շիրակացի, մատենագրություն, Երևան 1979:

Բյուրականի աստղադիտարան

Քսաներորդ դարի կեսերին աստղագիտությունը Հայաստանում կրկին վերելք ապրեց: 1946 թվականին Արագածի հարավային լանջին՝ ծովի մակերևույթից շուրջ 1500 մ բարձրության վրա, հիմնվեց Բյուրականի աստղադիտարանը, որի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 1956 թվականին, և շուտով, կարևոր հայտնագործությունների շնորհիվ, այդ գիտական հաստատությունը հայտնի դարձավ ողջ աշխարհում: Այդ տարիներին աստղադիտարանում տեղադրվեցին աշխարհում խոշորագույն դասական, ինչպես նաև Շմիդտի համակարգի ռադիոօպտիկական աստղադիտակներ և շատ այլ բարձրակարգ սարքեր, որոնք հնարավորություն տվեցին՝ Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանում լուրջ հետազոտություններ կատարել:

Հայ գիտնականներն արժեքավոր գյուտեր արեցին աստղագիտության ոլորտում: Բյուրականի աստղադիտարանում մշակվեցին և հիմնավորվեցին գալակտիկաների կորիզների ակտիվության վարկածները, որոնք հեղաշրջեցին այդ գիտության մեջ իշխող պատկերացումները: Բյուրականի աստղադիտարանի հետազոտություններն զգալիորեն նպաստել են նաև արտամթնոլորտային աստղագիտության զարգացմանը:

Հիմնադրման օրից մինչև 1988 թ. աստղադիտարանի անփոփոխ տնօրենն էր Վիկտոր Համբարձումյանը: Նա ոչ միայն հանճարեղ գիտնական էր, այլև հմուտ կազմակերպիչ, Բյուրականի աստղադիտարանի հիմնադիրն ու տնօրենն էր, Հայաստանի Գիտությունների Ակադեմիայի նախագահը, ԽՍՀՄ Գիտությունների Ակադեմիայի նախագահության անդամ, Միջազգային Աստղագիտական Միության փոխնախագահ (1948–1955), ապա նախագահ (1961–1964), երկու անգամ ընտրվել է Գիտական Միությունների Միջազգային Խորհրդի նախագահ (1968–1970, 1970–1972): Նա ընտրվել է մի շարք արտասահմանյան ակադեմիաների պատվավոր անդամ (ԱՄՆ-ի, Ավստրիայի, Ադրբեջանի, Վրաստանի, Բելգիայի, Բուլղարիայի, ԳԴՀ-ի, Դանիայի, Իտալիայի, Լոնդոնի Թագավորական Ընկերության, Նիդերլանդների, Շվեդիայի, Ֆրանսիայի, Բոստոնի Արվեստների և Գիտությունների Ամերիկյան Ակադեմիայի, Նյու Յորքի Գիտությունների Ակադեմիայի, Հալեի Բնագետների Գերմանական, Անգլիայի և Կանադայի Թագավորական աստղագիտական ընկերությունների, Ամերիկյան աստղագիտական ընկերության, Քեմբրիջի փիլիսոփայական ընկերության): Եղել է նաև Լիեժի, Ավստրալիայի Ազգային, Լա Պլատայի, Փարիզի, Պրահայի, Տորունի Կոպեռնիկոսի անվան համալսարանների պատվավոր դոկտոր:

Վ. Համբարձումյանն արժանացել է Խաղաղօվկիանոսյան և Բրիտանական թագավորական աստղագիտական ընկերությունների ոսկե մեդալների, Սլովակյան Գիտությունների Ակադեմիայի ոսկե մեդալի, Ֆրանսիական աստղագիտական ընկերության Ժանսենի անվան ոսկե մեդալի, Բեռլինի Գերմանական Գիտությունների Ակադեմիայի Հելմ Հոլցի անվան ոսկե մեդալի: Վ. Հ. Համբարձումյանի անվամբ է կոչված 1905 փոքր մոլորակը:

Մեջբերենք Վիկտոր Համբարձումյանի մասին բազմաթիվ գիտնականների հիացական կարծիքներից մի քանիսը.

«Վիկտոր Համբարձումյանը, որպես Կարմիր Գերհսկա, փայլում է գիտության երկնակամարում»:

Տ. Համպլի

«Անցյալ տարի Հոլանդիայում, երբ բոլորն անհանգստությամբ հարցնում էին Վիկտոր Համազասպովիչի առողջության մասին /նա այն ժամանակ հիվանդ էր/, ես զգացի, որ նա բոլոր ժողովուրդների մեծագույն գիտնականն է: Հնում մարդիկ սրբավայրեր էին գնում՝ իրենց տոտեմներին և աստվածներին երկրպագելու. այժմ Բյուրականը մի յուրատեսակ ուխտատեղի է, որտեղ հոբելյարին հարգանքի տուրք մատուցելու են գալիս բազմաթիվ գիտնականներ՝ շատերը նույնիսկ սեփական նախաձեռնությամբ:

Հպարտ եմ, որ պատկանում եմ աշխարհահռչակ աստղագետի գիտնական թոռների սերնդին»:

Իվանով Վ.Վ. պրոֆ., Սանկտ Պետերբուրգի պետ. համալսարան

«Աստղագետներից ոչ մեկն այսօր չի ժխտի, որ գալակտիկաների կորիզներն իրոք պարուրված են առեղծվածներով, և առաջինը, ով հասկացավ, թե ինչպիսի հարուստ պարգև է պարունակվում այդ գանձարանում, Վիկտոր Համբարձումյանն էր»:

Սանդեյջ Ս., պրոֆ., ԱՄՆ

«Վ. Համբարձումյանի՝ աստղասփյուռներին նվիրված աշխատանքները, անկասկած, ամենաուժեղ և խթանիչ ազդեցությունն ունեցան աստղերի էվոլյուցիայի և գալակտիկաների կառուցվածքի վերաբերյալ ժամանակակից հետազոտությունների վրա»:

Սերսիկ Խ., Արգենտինյան ազգային ակադեմիայի վիցե պրեզիդենտ:

«Վիկտոր Համբարձումյանի գիտական աշխատանքները, նրա հիասքանչ հայտնագործությունները աստղաֆիզիկայի ասպարեզում՝ ընդմիշտ կմնան համաշխարհային գիտության գանձարանում»:

Բոգոլյուբով Ն. Ն.

«Եթե Համբարձումյանը արարքներ է գործում, որոնք մենք ներկայումս չենք կարող բացատրել, սկսում է աշխատանք, ինչի հետքրքրությունը բացարձակա-

պես անհասկանալի է, ապա պետք է սպասել։ Մի քանի տարի հետո ամեն բան կպարզվի»։

Սոբոլև Վ. Վ.

«Վիկտոր Համազասպի Համբարձումյանը մտավ գիտության պատմության մեջ՝ որպես մոլորակի հանրահայտ աստղագետներից մեկը։ Դժվար է պատկերացնել ժամանակակից աստղագիտության դեմքն՝ առանց Համբարձումյանի արած հայտնագործությունների»։

Ֆրիդման Ա. Մ.

«Ես դադարեցի զարմանալ այն բանի վրա, որ մեկը մյուսի հետևից հաստատվում են Համբարձումյանի հիպոթեզները, որոնց մասին նա մարգարեաբար ասել էր շատ տարիներ առաջ»։

Յօրտ Յան, Նիդեռլանդներ

Աստղագիտության մանկապատանեկան մրցույթ

Ներկայումս էլ անկում ապրած աստղագիտությունը կարծես նորից վերելքի ճանապարհին է։ Այդ մասին է խոսում այն փաստը, որ 2012 թվականին Հարավային Կորեայի Գվանջու քաղաքում հոկտեմբերի 16-24 տեղի ունեցած աստղագիտության մանկապատանեկան միջազգային օլիմպիադայում հայ երեխաները փայլուն հանդես գալով՝ արժանացան 1 ոսկե, 1 արծաթե և 2 բրոնզե մեդալների։ Հայկական աստղագիտական ընկերության տեղեկացմամբ՝ մինչ այդ ևս մեր օլիմպիականները գերազանց արդյունքներ են արձանագրել միջազգային օլիմպիադաներում՝ ընդհանուր առմամբ նվաճելով 7 ոսկե, 4 արծաթե և 13 բրոնզե մեդալ։ Մեր թիմը կարողացել է նաև թիմային հաշվարկով դառնալ լավագույն հավաքականներից մեկը՝ օլիմպիադաների 16-ամյա պատմության ընթացքում։

Աստվածպաշտությունը Հայաստանում՝ Հայկ նահապետի օրոք

«Հայաստանը Հին աշխարհի այն երկրներից է, որոնց պատմությունը պատկանում է ամենահոր հնությանը, քանզի նրա մասին հիշատակվում է դեռ Մննդոց գրքում: Ինչպես որ Արարատը Աստվածաշնչյան լեռ էր Սինայից առաջ, այնպես Հայաստանը դարձավ Սուրբ երկիր՝ Պաղեստինից առաջ, և արդարությամբ համարվում է մարդկության բնօրրան»[252]:

Քուռարաքսյան մշակույթի մասին արդեն խոսվեց: Այժմ կանդրադառնանք այդ հրաշալի ժամանակաշրջանում Հայաստանում տիրող բարքերին:

Հայաստանը նախաքրիստոնեական համաշխարհային պատերազմում հաղթելուց հետո դարձավ այնպիսի երկիր, որի կողմը մեծ երկյուղածությամբ էին նայում շրջակա երկրները. ոչ մեկի մտքով չէր անցնում Հայաստանն ասպատակել, քանզի Բելի և նրա հզոր բանակի պարտության իրողությունը նկուն էր դարձրել թշնամաբար տրամադրված երկրներին: Հատկապես որ ռազմական ոլորտում և տարբեր ճյուղերում Հայաստանն առաջատար էր:

Հայկ նահապետը հայր էր հայ ժողովրդի համար թե՛ ուղղակի՝ կենսաբանական իմաստով և թե՛ իր հոգատարությամբ: Նրա շնորհիվ հայ ժողովուրդն ապրում էր բարեպաշտ, խաղաղ և անխռով կյանքով: Այդ օրինավոր կենցաղի հիմքում ընկած էին այն օրենքները, որոնք Աստված տվեց Արարատ լեռան ստորոտում բնակվող Նոյ նահապետին: Նոյն այդ շրջանում դեռևս ողջ էր, և նրա օրհնությամբ Հայկ նահապետն այդ օրենքներով էր կառավարում Հայաստան աշխարհը.

«Ինչ որ ուսուցանում էր Մովսեսը, այդ նույնը պահում էր Աբրահամը, իսկ ինչը որ պահում էր Աբրահամը, այն գիտեին Նոյը և Ենոքը, որ տարբերում էին մաքուրն անմաքուրից՝ գոհացնելով Աստծուն: Աբելն էլ դարձավ նահատակ՝ իմացությամբ, ինչը սովորել էր Ադամից, երբ ինքը՝ Ադամն էլ սովորել էր Տիրոջից, Ով «այժմ՝ դարերի վախճանին, մեկ անգամ ընդմիշտ հայտնվեց՝ իր անձի պատարագումով մեղքը ջնջելու համար»[253] և ասաց՝ «նոր պատվիրան չէ, որ տալիս եմ ձեզ, այլ՝ հին, ինչը որ լսել էիք ի սկզբանե»» [254]:

Այսպիսով, Հայաստանում գործում էին այն օրենքները, որոնք տրված էին «ի սկզբանե» և, ըստ Աթանաս Մեծի, մինչ Աբրահամը և Մովսեսը՝ Հայաստանում արդեն իսկ ապրում էին բարեպաշտության օրենքներով: Այս մասին են վկայում ոչ միայն եկեղեցու սուրբ հայրերը, այլև հինավուրց ժողովուրդների թողած արձանագրությունները:

Շումերներից մնացած «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգում պատմվում է այն մասին, որ Արարատյան երկիրը ճանաչված էր որ-

---

[252] Жюль Леклерк. Поездка на Арарат. С.- Петербург 1893, ст. 37.

[253] Եբր 9:26-27:

[254] Святитель Афанасий Великий, ТВОРЕНИЯ в четырех томах. Том I. Москва 1994, ст. 404.

պես «Աստվածային սուրբ օրենքների երկիր», քանզի հակառակ այլ երկրների, որոնք դարձել էին կռապաշտության հետևորդներ և ապրում էին դրան հարիր բարբարոսական վարք ու բարքով, Հայաստանում ապրում էին բարեպաշտության սուրբ օրենքներով.

«Շումերական դյուցազնավեպում Արատտան հանդես է գալիս «աստվածային սուրբ օրինաց երկիր» պատվանուն մակդիրով [255]: «Աստվածային սուրբ օրենքներ» (շումերերեն՝ «մե») ասվածի տակ հասկացվում էին ոչ թե պարզապես օրենքները, այլ այն մեծազոր սրբազան ուժերը, որոնք կառավարում էին ողջ տիեզերքը, աստվածային ու մարդկային իրականության բոլոր ոլորտները: Այդ իսկ պատճառով առաջարկվում է շումերերեն «մե» բառը թարգմանել «էություն, լինելություն»[256]»[257]:

Հետևաբար, այն պատվիրանները, որոնք Սինայի անապատում Մովսեսն ավանդեց եբրայեցիներին, դարեր առաջ, թեկուզ ոչ բառացի, պահում էին Հայոց սուրբ հողում թե՛ Ջրհեղեղից առաջ, թե՛ հետո: Եվ դա օրինաչափ էր, քանզի այստեղ էր հանգրվանել փրկարար տապանը, որը Սուրբ Եկեղեցու խորհուրդն ուներ: Իսկ տապանի դուռն էլ իր հերթին խորհրդանշում էր Փրկչին, Ով ասաց՝ «Ես եմ Դուռը».

«Աշխարհի նահապետների բնակության սկզբնավայրը եղել է Հայաստանը, հայտնի է նաև որ ճշմարիտ կրոնի՝ աստվածպաշտության սկիզբը եղել է Հայաստանում: Այնտեղ կանգնեցվեց առաջին սեղանը ճշմարիտ Աստծո, և մատուցվեց առաջին ողջակեզը, որը մատուցեց Նոյ նահապետը, երբ ջրերի համայնատարած հեղեղումից հետո նա ելավ տապանից, և ողջակեզը շատ հաճելի եղավ Արարչին, ինչը զգալի օրինակով ներկայացնում է Սուրբ Գիրքը. «Եվ Տեր Աստված հոտոտեց անուշ բույրը»: Հայաստան աշխարհի լեռները և դաշտերն էին, որ լսեցին և ընդունեցին այս աստվածային առաջին օրհնությունը՝ առաջին անեծքի փոխարեն. «Մարդկանց չար արարքների համար ես երկիրն այլևս չեմ անիծի... Այսուհետև, քանի դեռ կա երկիրը, թող չդադարեն սերմն ու հունձը»: Հայաստան աշխարհի հողը եղավ այն տեղը, որտեղ կնքվեց Աստծո և մարդու մեծ դաշնությունը, իսկ նրա երկինքը՝ նշանը նույն դաշնության, որ ցույց տվեց Աստված՝ Նոյի հետ խոսելու ժամանակ: «Այս է նշանն այն ուխտի, որ հաստատեցի Իմ ու ձեր միջև և երկրի վրա գտնվող բոլոր էակների միջև... Թող Իմ ծիածանը լինի ամպերի մեջ, որպեսզի ես տեսնեմ...Իմ հաստատած հավիտենական ուխտը... Այս բանից հետո մնաց նույն ճշմարիտ աստվածպաշտությունը Հայաստանում՝ Նոյի որդիների և թոռների մոտ, բարեզգաց բարգավաճությամբ հանդերձ, մոտ հարյուր տարի, ինչն արժանավորապես ոսկե դար կոչվեց:

---

[255] Շումերերեն kur-me-sikil-la արտահայտությունը թարգմանվել է տարբեր կերպ (տես օրինակKramer, 1952, p. 21; Канева, 1964, с. 208, 210; Cohen, 1973, p. 123; Berlin, 1979, p. 57 և այլն): Քանի որ «մե» էին կոչվում աստվածային օրենքները, մենք նախընտրում ենք «աստվածային սուրբ օրինաց երկիր» թարգմանությունը:

[256] В. К. Афанасьева, Ме, МНМ, т. 2, 1992, с. 127.

[257] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ., էջ 36:

Եվ միայն դեպի Սենաար Հայաստանից բնակիչների ցրվելուց, այնտեղ՝ Սենաարում աշտարակաշինության վայրում, ըստ բոլոր հնախոսների, եղավ կռապաշտության սկիզբը, իսկ մեր քաջ նախնին՝ Հայկը, չխառնակվեց նրանց հետ, այլ վերադարձավ Հայաստան։ Եվ վերադառնալով այնտեղ, որտեղ բնակվում էին առաջին նահապետների մնացորդները, որոնք մնացել էին իրենց առաջին հավատքին, ասում է այն մասին, թե ինքը Հայկը ևս մնացել էր առաջին ճշմարիտ աստվածպաշտության մեջ» [258]։

Իսկապես, առանձին պատիվ է Հայաստանի համար և այն, որ Նոյ նահապետն իր ծնված օրից մինչև Ջրհեղեղ և Ջրհեղեղից հետո ապրեց Հայկական լեռնաշխարհի տարածքում և ննջեց Արարատ լեռան ստորոտում, որը Հայաստան աշխարհի սիրտն է։

Նոյի զոհ մատուցած վայրն այն կետն էր, որտեղ Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Տիրոջ պատվերով կառուցեց հայոց Մայր տաճարը՝ Սուրբ Էջմիածինը։

Իրավամբ, Սուրբ Էջմիածնի կառուցման վայրում տրվեցին հետջրհեղեղյան պատվիրանները.

«Եվ ապա փրկագործ սուրբ տապանը, որ իսկապես տեղ և օրինակ է ճշմարտության, իջևանեց բարձրաբերձ և աշխարհատենչ Մասիս լեռան վրա... Եվ ապա Տիրոջ հրամանով երանելի Նոյը դուրս գալով այստեղից՝ իջնում է Արարատյան դաշտի Վաղարշապատ քաղաքը։ Եվ այստեղ զոհասեղան է կառուցում, որի վրա հաշտության պատարագ է մատուցում» [259]։

Մայր տաճարի տեղում երևաց նաև ծիածանը, որ խորհրդանիշն էր թե՛ Տիրոջ Առաջին և թե՛ Երկրորդ փառավոր գալստյան։

Իսկ այդ ժամանակաշրջանում Հայաստանի շուրջբոլորը եղող երկրներում դեռևս տիրում էր կռապաշտության թանձր խավարը։ Աբրահամի նախնիներն էլ, ինչպես ասացինք լեզվի խնդրին վերաբերող բաժնում, չէին ճանաչում Աստծուն, քանզի դարձել էին կռապաշտության հետևորդներ։

«Մարդկանց լեզուները խառնվելուց հետո ճշմարիտ Աստվածպաշտությունը հետզհետե սկսեց թուլանալ, և այնուհետև մարդիկ սկսեցին քիչ-քիչ պաշտել արևին, լուսնին, աստղերը և մեծամեծ մարդկանց... Իսկ Հաբեթի Գամեր որդու՝ Թորգոմի որդի Հայկը, լեզուների խառնվելուց հետո իր առանձին խմբով վերադառնալով Հայաստան՝ չհոժարեց պաշտել Նեբրովթին, ուստի աշխարհի ստեղծման 1896 թ. իր երեքթևյան նետի հարվածով վերջ տվեց նրա կյանքին և սկսեց ազատ պաշտել իր հայրերի ճշմարիտ Աստծուն, որ Նոյը Հայաստանի մեջ պաշտում էր, և նա՝ Նոյը, այդ նույն ժամանակ 840 տարեկան էր (նա մահացավ 950 տարեկանում)։ Իսկ կռապաշտությունը Հայաստանի մեջ սկսվեց Նոյի մեռնելուց շատ տարիներ հետո։

Իսկ Բելի մահվանից հետո կռապաշտությունն անխափան կերպով շարունակվեց նրա ցեղի մեջ, և որից էլ սկսվեց տարածվել ընդհանուր ազգերի և ան-

---

[258] Ղուկաս վարդապետ Ինճիճյան. Հնախոսություն աշխարհագրական Հայաստանյայց աշխարհի, տպ. սբ. Ղազար, Վենետիկ 1835 թ., էջ 148:

[259] Անանիա Սանահնեցի, Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր և ուսումնասիրություններ, Սբ. Էջմիածին 2000 թ., էջ 343:

գամ մինչև Սեմի ցեղի մեջ, որոնք այդ ժամանակներում բնակվում էին քաղդեացիների Ուր քաղաքում, որտեղ արդեն տարածվել էր թանձր ավելորդապաշտությունը՝ մանավանդ հրապաշտությունը: Նույն քաղաքում Նաքովրի որդի Թարան, Նոյի մեռնելուց երկու տարի հետո, ծնեց Աբրահամին...

Իսկ Թարայի կռապաշտ լինելու ստույգ ապացույցը հետևյալն է. Հեսուն ամբողջ ժողովրդին ասաց. «Այսպես է ասում Իսրայելի Տեր Աստվածը. «Նախկինում ձեր նախահայրերը՝ Աբրահամի հայր Թարան և Նաքովրի հայրը պանդրխտել են գետի այն կողմը և պաշտել օտար աստվածներին»[260]»[261]:

Հակառակ կռապաշտության մեջ թաթախված աշխարհի՝ բարեպաշտությանը հետևելու շնորհիվ հայոց հողում տիրում էին արդարություն ու սեր, պարկեշտություն, հարգանք և ընդհանրապես բոլոր առաքինությունները, որոնց համար կենդանի օրինակ էին Նոյը և Հաբեթածին Հայկ նահապետը:

«Ն. Մառը պարզում է, որ հայկական հնագույն բարբառներում կան հաբեթական ծագում ունեցող կրոնական պաշտամունքին վերաբերող բառեր... Այդ ապացուցում է, որ հաբեթականներն ունեին բարձր աստիճանի հասած կրոն և երկար ժամանակ վարում էին գեղարվեստի ծաղկմանը նպաստող խաղաղ կյանք»[262]:

Բնական է, որ Հայաստանում երկրի կառավարումը Հայկը պիտի շարունակեր Ադամի, Սեթի, Ենովսի, Նոյի՝ մինչջրհեղեղյան «Աստծո որդիների» կերպով, քանզի նրանց բարեպաշտ ժառանգն էր:

«Ըստ պատմաբանների՝ միապետական կառավարումը Հայաստանում սկզբնավորվել է Հայկի ժամանակ: Բայց նրանք չէին սահմանել, թե ինչումն է կայանում այս կառավարությունը: Սակայն կարելի է որոշ հիմնավորումներից գուշակել, որ այն պահպանել է նահապետական կառավարման կերպը՝ խորշելով ասիական քմահաճությունից և բռնակալությունից»[263]:

Նույնիսկ հազարամյակներ անց՝ նախնիների սրբակիր գեները պահպանվել են հայերի մեջ՝ անկախ տարաբնույթ իրավիճակներից: Նպաստավոր պայմաններում դրսևորվել են առատորեն, իսկ աննպաստ միջավայրում՝ ավելի սակավ.

«Հիանալի, ամուր և խիստ է հայերի մոտ ընտանեկան կենցաղը: Այս իմաստով նրանք մնում են միանգամայն նահապետական ազգ, ինչպես որ պատշաճ է Արարատյան երկրի բնակիչներին, որ մինչ օրս շնչում են նախահայր Նոյի, Հաբեթի և նրա թոռ Հայկի նահապետական ավանդույթներով...

Հավանական է՝ Արարատին մոտ լինելու հետևանքով է, որ Նոյի ժամանակներից նահապետական բարքերը Հայաստանում ավելի հաստատուն մնացին, քան որևէ այլ տեղ, և խոստովանում եմ, որ ինձ վրա նրանք ավելի մեծ մխիթարական տպավորություն են թողնում, քան այն անպատկառ, անբռնազբոսիկ

---

260 Նավեի որդի Հեսուի գիրք 24:2:

261 Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբառը, աշխ. Գրիգոր քահանա, Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896թ., էջ 42-43:

262 Վալերի Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967թ.,էջ 182:

263 Сергей Глинка, “Обозрение истории Армянского народа”, Москва, 1832г., ст. 53:

հարաբերությունը, որ փարիզյան մոդայիկ փափկասուն զավակներն ունեն իրենց մոդայիկ փարիզյան հայրիկների հանդեպ...

Չի կարելի խորը ակնածանքով չվերաբերվել հայերի իսկապես արևելյան հյուրասիրությանը, ինչում մենք առիթ ունեցանք համոզվել ոչ մեկ անգամ: Հարուստ հայի մոտ ամբողջ օրը եռում է ինքնաեռը, և կերակուր պատրաստվում: Եվ նա որպես վիրավորանք կընդուներ, եթե նրան հյուրասիրության համար վճար առաջարկեին:

Այս նահապետական սիրալիր սովորույթները, ցավոք, ավելի ու ավելի սկսում են անհետանալ՝ քաղաքային բարքերի ներխուժման հետևանքով» [264]:

Ոչ միայն պատմական, այլև հնագիտական նյութերն են խոսում Հայաստանում ճշմարիտ աստվածպաշտության մասին: Մեծամորի պեղումների ժամանակ հայտնաբերվել են աստվածպաշտությանը պատկանող շինություններ և պարագաներ:

«Մեծամորի հուշարձանն անկասկած հետաքրքրական է նաև առայժմ քիչ ուսումնասիրված 3-2-րդ հազարամյակների ավերված շերտերով, քարայրային խցերով, վերգետնյա կառույցներով, կիկլոպային պատնեշով և դամբարանադաշտով, որոնք մասամբ ուսումնասիրվել են նախորդ տարիներին: Չափազանց հարմար աշխարհագրական դիրքն Արարատյան դաշտի կենտրոնում, հին աշխարհի առևտրական ճանապարհների խաչմերուկի վրա, սառնակունք ստորերկրյա աղբյուրների, լճերի, ծառ ու ծաղկի առկայությունը, հողի հարստությունն ու ոռոգման մեծ հնարավորությունները, հումքի մոտակա բազաների գոյությունը Մեծամորի բնակատեղին դարձրել էին (մ.թ.ա. 3-րդ հազարամյակից սկսած) ոչ միայն ծաղկուն ու բարեբեր օազիս, այլև նյութական արտադրության և մեր նախնիների կրոնի ու պաշտամունքի խոշոր կենտրոն» [265]:

Հետաքրքրական է, որ Շենգավիթում պեղվել են Հին Կտակարանի ծեսերին հարազատ գտածոներ. զոհաբերվող կենդանիներն այստեղ նույնպես միայն մաքուր կենդանիներից են եղել, որ թույլատրվում էր զոհել՝ ըստ Մովսեսի օրենքի: Ծեսերի համար օգտագործվող իրերն ու անոթներն էլ նմանատիպ են եղել[266]:

Սակայն այդ հնավայրերում գտնվել են նաև կռապաշտական ատրիբուտներ, և դա բնական է, քանի որ պատմությունը և բնությունը ցույց են տալիս, որ ինչքան էլ մոլախոտը քաղհանես, էլի ինչ-որ բան սպրդելու է:

Հնագետ Դեվիդ Ռոլը գտնում է, որ հնում մետաղագործության մեջ հմտություն ունեցողներին համարում էին նաև հոգևոր բարձունքների հասած ժողովուրդ. ***«Մետաղաձուլման հմտությունը ընկալվում էր նաև որպես հոգևոր գերազանցության խորհրդանիշ»*** [267]:

---

[264] Евгений Марков. Русская Армения. Вестник Европы. журнал 210- том, Том VI. Санкт-Петербург 1901. ст. 9, 48, 51.

[265] Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան» հրատ. 1971թ., էջ 89:

[266] Հակոբ Սիմոնյան, Հուշարձան տարեգիրք, հատ. Ը, հրատ. Հուշարձան, Երևան 2013թ., էջ 14, 25, 30:

[267] Дэвид Рол, "Генезис цивилизации откуда мы произошли...", Москва 2005. ст.84.

Ըստ գիտնականների՝ տոմարագիտությունը նույնպես խոսում է Հայաստանում Հայկ Նահապետի օրոք ճշմարիտ աստվածպաշտության առկայության մասին.

«Արարատյան լեռներում ճշմարիտ աստվածպաշտության վկայության խոր արմատների մասին Հովհաննես Իմաստասերը (1045-1129) իր «Հայկազնեաց տոմարի մեկնութեան» մեջ գրել է. «Աստված միայն այս երկու ազգերին՝ հայերին և եբրայեցիներին է տվել հավատ, գիր և տոմար, իսկ մնացած ազգերի համար մարդիկ են ստեղծել: Հայոց գիրը՝ հրեղեն աջով այստեղ՝ վեմի վրա, այնտեղ՝ քարեղեն տախտակների վրա. Տոմարը՝ այնտեղ Մովսեսը, այստեղ Հայկը՝ նրանից ավելի առաջ: Հավատքային առումով՝ Հայկի տոմարի հնագույն լինելը Հայոց պաշտամունքային ընկալումների վաղնջականության վկայությունն է: Հայկը հաստատեց Հայկազունների ազգատերությունը և հոգևոր առաջնորդությունը: Հայք ներխուժող ոսոխի և նրա կողմից կռապաշտության պարտադրման դեմ մղված պայքարը պսակվում էր աստվածափայլ, լուսաբեր ուժերի հաղթանակով...

Էթնոհոգևոր իմաստով՝ Հայկազունների գլխավորած հայոց ազգային հավատքային համակարգում չկար երկակիություն, քանի որ հնդեվրոպական ընդհանրության տրոհմամբ՝ հայ-արմենները մնացին Հայկական լեռնաշխարհում: Հայկազունների ճշմարիտ աստվածպաշտությունը նկատի ունենալով՝ Մովսես Խորենացին գրել է. «Ես շատ կփափագեի, որ այն ժամանակ Փրկիչն եկած և ինձ գնած լիներ» [268]***:***

Արարատյան երկիրն ի սկզբանե եղել է ընտրված վայր, որտեղ միշտ ընդդիմացել են չարիքին:

Ինչպես որ Ջրհեղեղից առաջ հակառակություն կար Արարատյան երկրի բնակիչ, Սուրբ Գրքի աստվածորդիների և Նայիդի բնակիչների՝ չարության հետևորդ մարդկանց որդիների միջև, այդպես էլ շարունակվեց Հայկի և Բելի հակամարտության շրջանում:

Եվ դա հարատևելու է բարեպաշտ Հայաստանի և չարափառ Բաբելոն-աշխարհի միջև՝ մինչև աշխարհի վախճանը.

«Հայկի պատերազմը Բելի դեմ, որը նույնացվում է Բաբելոնի հիմնադիր և աշտարակաշինության նախաձեռնող ու ղեկավար Նեբրովթի հետ, ոչ այլ ինչ էր, քան կրոնական պատերազմ՝ սկզբնական միաստվածության (Հայկ) և նորածին բազմաստվածության (Բել) միջև:

Հայկի և Բելի հակամարտության վերոհիշյալ իմաստավորման համատեքստում առանձնակի է կարևորվելու այն, որ հայ ժողովրդի ծագման իսկ հիմքում է դրված Բաբելոնից տարանջատվելու և նրա դեմ պայքար մղելու փաստը: Բանն այն է, որ Բաբելոնը ոչ միայն աշտարակաշինության դրվագում, այլև Սուրբ Գրքի ողջ տեքստում հանդես է գալիս որպես հեթանոսության հոմանիշ և խորհրդանիշ: Այն, ըստ Սուրբ Մատյանի, պիտի վերանա, կորստյան մատնվի,

---

[268] Էդուարդ Դանիելյան, «Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը», Աստվածաշնչյան Հայաստան, Երևան, 2005թ., էջ 155:

ընդ որում՝ Աստծո հրահանգով։ Հատուկ ուշադրության է արժանի, որ այդ հրահանգի շրջանակում Բաբելոնի դեմ մարտնչելու համար Աստված կոչ է անում այն նույն ազգին, որն իր ծագման պահից է կռվել բաբելոնյան կռապաշտության դեմ. «Զորագնդեր կանչեցեք նրա դեմ։ Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին և ասքանազյան գնդին» [269]։ «Այրարատյան թագավորություններ» արտահայտությունը մեկնաբանման կարիք չունի։ Ինչ վերաբերում է «Ասքանազյան գնդին», սա հանդես է գալիս որպես «Հայոց» բառի գրեթե հոմանիշ, որով նշվում է Հայոց աշխարհը բազում աղբյուրներում, ներառյալ հայկական. օրինակ՝ Կորյունի աշխատությունում, երբ նա խոսում է «Ասքանազյան ազգի և Հայաստանյան աշխարհի գրի մասին» [270]։ Աստվածաշնչի եբրայերեն բնօրինակում վերոհիշյալ թվարկությունը մի քիչ այլ է. «զԹագաւորութիւնս Արարատայ Մինւոյ եւ Ասքանեզայ»։ Այստեղ առկա և հունարենում բացակայող «Մինւոյ» բառը մատնանշում է Ուրարտուն։ Մենուա (Մինուա) թագավորի գահակալության ծաղկուն և արձանագրություններով ամենահարուստ ժամանակաշրջանը (Ք. ա. 810-786 թթ.) միանգամայն հնարավոր էր դարձրել, որ նրա գահակալությունից մեկ ու կես դար անց, երբ գրվում էր Երեմիա մարգարեի գիրքը (Ք. ա. 7-րդ դ.), Ուրարտու կոչվող Վանի թագավորությունը Մերձավոր Արևելքում ճանաչվեր ամենաշատ գործնական և գրավոր «հետք թողած» գահակալի անվամբ։

Այս համատեքստում նոր հնչողություն է ստանում սուրբգրային մի այլ դրվագ։ Բաբելոնից տարածված հեթանոսության ևս մեկ կենտրոն էր Նինվե քաղաքը։ Այն կառուցել էր ասորիների նախահայր Ասուրը, որը բաբելոնյան ծագում ուներ (Մննդ. 10։11) և աստվածացվել էր իր սերունդների կողմից։ Նշենք, որ Ասուր անվան հնչյունափոխությամբ էլ առաջացել է «ահուր. բառը, որն Ավեստայում նշանակում է «տեր»։ Ըստ Աստվածաշնչի՝ հետագայում, երբ Ասորեստանի արքա Սենեքերիմը մտադրվեց կործանել Երուսաղեմն ու անարգեց Տիրոջ անունը, Աստծո նախախնամությամբ նա սպանվեց Նինվե քաղաքում՝ իրենց կուռք Նիսրոխին երկրպագություն անելու պահին։ Այդ սպանությունը կատարվեց Իսրայելին փրկելու համար. ուստի տրամաբանական կլիներ ակնկալել, որ սպանողներն ապաստան գտնեին Իսրայելում։ Սակայն նրանք, ինչպես վկայում է Աստվածաշունչը, «Արարատի երկիր փախան» (Դ Թագ. 19։36-37, Եսայի 37։37-38, եբրայերենում ավելի հստակ է. «Հայաստան փախան»)։

Եթե դիտենք մարդկության հնագույն շրջանի կրոնական պատմությունը վերոշարադրյալ կտրվածքով, որպես ընթացք միաստվածությունից դեպի բազմաստվածություն, և եթե համաձայնենք, որ կռապաշտությունն ավելի ուշ շերտավորումների արգասիք է, ապա պիտի նշենք, որ հայկական կրոնում ավելի են պահպանվել հենց այս՝ նախնական միաստվածության տարրերը՝ այն նույն պատճառով, որով հերքվում է հայերի բռնի քրիստոնեացումը ... Այս հիմքով է Ղազար Փարպեցին համարել, որ քրիստոնեության ընդունումով մենք վերստին

---

[269] Երեմիա 51:27:

[270] Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1994 թ., էջ 34:

ճանաչեցինք «Զհայրենի և զբնիկ օրէնս մեր»[271]։ Ղազար Փարփեցու այս մտքի արդի մեկնաբանություններից մեկում նշված է, որ «պատմիչն այստեղ նկատի ունի քրիստոնեական ճշմարիտ աստվածպաշտության ազգային հնագույն վկայությունները, որոնց արմատները հասնում են մինչև Ք. ա 4-3-րդ հազարամյակները»[272]։ Հեղինակը հիշատակում է նաև մի այլ հետազոտողի մատնանշած շումերական սկզբնաղբյուրները, որոնցում Արատտա երկիրը բնութագրվում է իբրև «սուրբ ծեսերի (կամ օրենքների) երկիր»[273]։ Այս ամենը ցույց է տալիս, որ հայ կրոնական պատկերացումներն ավելի հարազատ են մնացել այն սկզբնականին, որն, ըստ մեր դիտարկումների, պիտի լիներ միաստվածությունը։

Հավանաբար, օրինաչափ պետք է ճանաչել, որ մարդու ծագման աստվածաշնչյան տարածքում, որն ընդգրկել էր Եփրատի և Տիգրիսի ավազանները՝ ջրհեղեղով մկրտված ու մաքրված մարդկության հայրենիքում, որն էր Արարատը, գենետիկ հիշողությունը միակ Արարչի մասին ավելի կայուն է եղել և համեմատաբար քիչ է ենթարկվել հետագա աղավաղումների...

Ուստի, քրիստոնեության ընդունումը Հայաստանում որպես պետական կրոն՝ պիտի որակվի իբրև վերադարձ սկզբնական միաստվածության, որը թեպետ կորսված էր և աղավաղված, բայց այնուհանդերձ, լիովին չէր ջնջվել հայ ժողովրդի թե՛ պատմական, թե՛ գենետիկ հիշողությունից, և հայտնվեց նրան որակապես նորացված վիճակում՝ քրիստոնեության վարդապետության միջոցով։ Եվ այս հանգամանքը՝ վերադարձի, սկզբնականը վերագտնելու իմաստը, հաստատվեց հայոց լեզվում, որում 301թ. իրադարձությունը՝ քրիստոնեության ընդունումը որպես պետական կրոն, արտահայտված է «հայոց դարձ» բառակապակցությամբ։ Այդ գիտակցությունն, իհարկե, շատ ավելի հստակ էր այն ժամանակ և խամրում էր այնքանով, որքանով իրադարձությունը դառնում էր ավելի «տարիքավոր», «հասակ առած» պատմություն։ 4-րդ դարի պատմական անցքերի ականատեսներից ու անմիջական մասնակիցներից մեկը Ագաթանգեղոսն էր, ուստի բնական է նրա աշխատության մեջ նշումն այն հանգամանքի, որ քրիստոնեության ընդունումով հայերը «դարձյալ հավատի մեջ սրտանց հաստատվեցին»[274]»[275]։

---

271 Ղազար Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթն առ Վահան Մամիկոնեան, Տփղիս, 1904թ.,, էջ 161:

272 Էդուարդ Դանիելյան., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997թ., էջ 17:

273 Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան, 1992թ., էջ 29-32:

274 Ագաթանգեղոս, «ՊատմությունՀայոց», Երևան, 1977թ., էջ 123:

275 Ռաֆայել Պապայան, «21-րդ ԴԱՀ», թիվ 1 (7), 2005թ., էջ 144, 146-147, 151-152:

Ար Աստծո երկիր Արարատը և Նրա սեփական ժողովուրդ Արմենները

«Արարատյան դաշտավայրից բացվում է հրաշալի տեսարան՝ Մեծ Արարատը, որին հայերը անվանում են Մասիս ... Ինչպես հաստատում է հայկական ավանդությունը, երբ ամբողջ աշխարհը լցված էր ջրով, այս հսկաների լանջերին հանգրվանեց Նոյան տապանը: Այս մասին վկայում է Աստվածաշունչը (Մննդ. 8.4-5): Սրանից բացի՝ Աստվածաշնչում միանգամ չէ, որ հիշատակվում է «Արարատյան լեռները» և «Արարատյան երկիրը»: Այսպիսով դուրս է գալիս, որ Հայաստանը և նրա ժողովուրդը քրիստոնեություն ընդունելուց դեռ շատ առաջ կապ են ունեցել Քրկության պատմության բուն սկզբի հետ»[276]:

Հայաստանը, լինելով մարդկության ամենահին բնակավայրը, օրինաչափորեն բազմաթիվ անվանումներ է ունեցել շուրջ 7000-ամյա պատմության շրջանում: Սուրբ Գրքում կոչվել է նախ՝ «Արևելք», ապա Եդեմ և Աստծո որդիների երկիր, Ջրհեղեղից հետո՝ Արարատ: Իսկ Միջագետքի երկրներն այն անվանել են «Արևածագի երկիր», Արատտա:

Հետջրհեղեղյան այդ անվանումը «Ար»-ով է սկսվում, որը հայերենում ամենաընդգրկուն արմատն է, և Արարիչ բառը արմատի կրկնությամբ է կազմված , ինչը հենց վերաբերում է այն Աստծուն, որին ի սկզբանե պաշտել են Հայկական լեռնաշխարհում՝ սկսած Ադամից:

Հայկի տիրապետության ժամանակ Արարչին անվանել են ԱՐ, ինչից էլ Արարատ նշանակում է Արարչության կամ Արարչի երկիր.

«Մեր երկրի հնագույն անունների մեջ մեծ թիվ են կազմում Ար-ով սկսվող անունները, Արատտա, Արարատ, Արմանի, Ուրարտու, Արմինա, Արմենիա և այլն: Հնագույն այս անունները կապված են Ար Աստծո անվան հետ, որից փաստվում է այն իրողությունը, որ Հայկական լեռնաշխարհը Արարիչ Ար Աստծո պաշտամունքի հնագույն երկիրն է» [277]:

Հայերից հարյուրամյակներ հետո հրեաները Արարչին անվանել են Յահվե:

Հայերենում Ար-ով սկսվող բառերում գերակշռում են լույսի, պայծառության, մաքրության, սրբության իմաստները.

«Ար-ի նախնական իմաստը հասկանալու համար մեծապես կարող են օգնել ար արմատ ունեցող հայերեն հնագույն արև, արփի, արշալույս, արուսյակ, արծաթ և այլ բառերը, որոնք «սպիտակ, փայլուն, լուսավոր» իմաստն ունեն» [278]:

Լեզվական այդ երևույթը պատահական չէ.

««Ար» - ով սկսվող բառերը կազմում են լեզվի բոլոր բառերի մի մեծ մասը՝ մոտ 3 %-ը, այսպիսով «ար»-ը հայկական բառերի գլխավոր արմատն է» [279]:

---

[276] Джовани Гуайт. 1700 лет вернвсти. Москва 2005, ст. 16.

[277] Անժելա Տերյան «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002թ., էջ 48:

[278] Մ. Էմին, Հնախօսութիւնք ի վերա հայկական հեթանոսությանց,1875թ., էջ 34:

[279] Պարիս Հերունի Հայերենը և հնագույն Հայաստանը Երեվան 2006թ., էջ 107:

Ար - ով են կազմված անձանց, բնակավայրերին, տեղանուններին, գետերին և այլ երևույթներին վերաբերող բնիկ հայերեն չափազանց շատ բառեր.

«Աշխարհի ոչ մի երկրում հնարավոր չէ հանդիպել Ար-ով սկսվող այնքան շատ անձնական ու աշխարհագրական անունների, որքան Հայաստանում: Հայոց հնագույն շատ անձնանուններ ու տեղանուններ հայոց ցեղանունների և երկրանունների նման ունեն Ար, նաև էր, Իր, Ուր բաղադրիչները:

Նախ խոսենք անձնանունների մասին: Գրավոր հիշատակված Ար-ով սկսվող անձնական անունների հանդիպում ենք մ.թ.ա. 2-րդ հազարամյակի առաջին կեսից սկսած: Դրանք Խուրրի Միտանիի արքաների անուններն են: Նշենք այդ անուններից մի քանիսը. Արտատամա, Արտաշումարա, Արտամանյա (վասալ իշխան): Այս անունները գրված են աքքադ բաբելական լեզվով ու սեպագրերով, որն ազդել է անվան ճիշտ գրության ու արտասանության վրա, քանի որ անունները հարմարեցվել են օտար լեզվի ու սեպագրերի:

Մ. Խորենացու «Հայոց պատմության» աշխատության մեջ հիշատակվում են 11 հայ նահապետների անունները, որոնցից 5-ը սկսվում են Ար-ով՝ Արամանյակ, Արամայիս, Հարմա, Արամ, Արա Գեղեցիկ: Հիշատակվում են նաև Արտավազդ, Արտաշես, Արշակ, Արշամ, Արտավան, Արքեղայոս, Արշավիր անունները: Վերոհիշյալ անուններին ավելացնենք Արմենակ, Արտան, Արգամ, Արբակ, Արծրուն անունները և այլն: Վանի թագավորության արքաների արձանագրություններում հանդիպում են Արամե, Արգիշտի, էրիմենա, նաև Ռուսա-Ուրսա անունները, պարսից Դարեհ 1-ին արքայի արձանագրության մեջ՝ Արախա անունը և այլն:

Ար Աստծո անունով են կոչվել ոչ միայն ցեղն ու բնօրրանը, այլև Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ աշխարհագրական անուններ, գետեր, լեռներ, ավաններ, շեներ ու քաղաքներ» [280]:

Երբ Հայկից դարեր անց հայերը նույնպես, օտարներից ազդված, հեռացան Աստծուց և խճճվեցին հեթանոսական մոլորության ցանցում, նրանց հիշողության մեջ պահպանվեցին նախնիների պաշտած Ար Աստծո մասին պատումները, ինչից ելնելով էլ նրանք իրենց երևակայական աստվածներին՝ կուռքերին, ինչ-որ կերպ նմանեցնում էին Տիրոջը.

«Հազարամյակներ շարունակ Ար Աստվածը, լինելով Հայկական լեռնաշխարհի բնիկների՝ հայ-արմենների հնագույն ու գլխավոր Աստվածը, պատմական ինչ-որ ժամանակահատվածում իր տեղը զիջել է այլ աստվածների (Արամազդ, Վահագն, Միհր, Ալդի-Խալդի)՝ նրանց փոխանցելով իր նկարագրի շատ հատկանիշներ: Այսպես. Արամազդը բոլոր աստվածների հայրն էր՝ երկնքի ու երկրի արարիչը, Վահագնը՝ Արևի, կրակի ու ռազմի աստվածն էր, Միհրը՝ արևի ու կրակի, Ալդին (Խալդի) գլխավոր աստվածն էր (կյանքի, բնության ու ռազմի)» [281]:

Հեթանոսությունից իրենց նախնիների՝ Ադամի, Նոյի, Հայկի Աստծուն դարձած հայոց մասին վերլուծաբանը գրում է.

«301 թ., երբ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակվեց,

---

[280] Անժելա Տերյան... էջ 67, 68:

[281] Նույն տեղում, էջ 90:

Քրիստոսն ու քրիստոնեությունն ընդունվեցին հայ մարդու կողմից: Քրիստոսն այս դեպքում ընկալվեց որպես Ար, Արեգակ, Լույս, որպես միակ Աստված»[282]:

Անվիճելի է, որ Արարատը և ար-ով սկսվող մյուս անվանումները Արարչի անվան հետ են կապված: Իսկ ինչպե՞ս բացատրել Հայաստանի մյուս անվանումը՝ «Արմենիան», որով այլ երկրների բնակիչներն են անվանում Հայաստանը:

Դրա համար նախ հարկ է պարզել Արմեն անվան ծագումնաբանությունը:

Կարծիքները տարբեր են, սակայն դրանցից ոչ մեկը վերջնական հավանության դեռևս չի արժանացել.

«Արմեն կամ Արմենիա անունը իր ամբողջությամբ տակավին չի բացատրված, մնում է մութ»[283]:

Ըստ հին հունական պատմաբանների՝ այն առաջացել հույն Արմենուսից: Սակայն գիտական աշխարհի կողմից դա միանշանակ մերժվում է, քանի որ Արմենիա անվանումը գոյություն ուներ Արմենուսի և ընդհանրապես հունական մշակույթի աշխարհ գալուց շատ դարեր առաջ: Դեռ Ք. ա. III հազարամյակում աքքադական արձանագրություններում թողած Նարամ Սուենի կողմից արդեն իսկ հիշատակվում է Արմենիա անվանումը՝ իհարկե որոշ աքքադական առոգանությամբ:

*Ինչպես Արարատին նրանք անվանել են Արատտա, նմանապես և Արմենիան հնչեցրել են որպես Արմանի.**«Նարամ-Սուենը բախվել էր Արմանումի (Արմանի) երկրի թագավորին: Հայկազունների գլխավորությամբ հայ ժողովրդի մղած պայքարը այս դարաշրջանում ուղղված է եղել հարավցի հարձակվող նվաճողների դեմ»***[284]:

*Բաբելոնից հետո երբ մարդիկ ցրվեցին աշխարհով մեկ, նոր կարգավիճակում հայտնվեցին: Ամեն մեկն արդեն առանձին ազգ էր, և իրենց անվանումն ու ավանդույթներն սկսեցին ձևավորել: **«Բացի այդ՝ որոշ ազգեր պահպանեցին իրենց նախկին, հիմնական կոչումը, ոմանք փոխեցին, մյուսները, վերջապես, այնպիսի անուններ ընդունեցին, որոնք իրենց կարծիքով ավելի հասկանալի կլիներ իրենց (նոր) հարևանների համար: Այս նորամուծության հեղինակներից էին նաև հույները, քանի որ ժամանակի ընթացքում նրանք սկսեցին հատուկ փառք փնտրել այն բանում, որ անուններ էին դնում տարբեր ազգերին, որոնք բնորոշ էին հենց հույներին, և պարտադրում էին նրանց՝ իրենց սեփական պետականության կառուցվածքը՝ կարծես թե այդ սերունդների հետ միևնույն ծագումն ունեին»***[285]:

Ըստ Հովսեփոս Փլավիոսի՝ հույներն ինչպես սիրում էին ինքնակամ անուններ կպցնել ամեն մի ազգի, այդպես էլ իրենցից շատ ավելի հինավուրց ազգի Արմենիա անվանումը կապեցին մի ինչ-որ հույն Արմենուսի հետ, ինչը հույների փառամոլության անհիմն վարկածն էր:

Իսկ Մովսես Խորենացին Արմենիա անվանումը կապում է հայոց Արամ նահապետի անվան հետ: Սակայն նույն հաջողությամբ կարելի է կապել Արամին նախորդող նահապետների՝ Արամայիսի և Արամանյակի անունների հետ:

---

[282] Անժելա Տերյան... էջ 8:

[283] Մ. Ս. Գավուքչեան, Արմէն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ 1973թ., էջ 131:

[284] Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան-2008 թ., էջ 31:

[285] Иосиф Флавий, Иудейские Древности, Том 1, “Феникс”, Ростов на Дону, 2000, ст. 22.

Բայց Արմեն անվանումը միանգամայն այլ ծագում ունի, ինչին կարելի է հասու լինել, եթե պատմական, հնագիտական, լեզվաբանական ուսումնասիրություններին ավելացնենք նաև հոգևոր՝ կրոնական կողմը։

Ասացինք, որ Ար-ը հասկացվում է Արարիչ։ Իսկ ինչպե՞ս կարելի է բացատրել «մեն» բառամասը։ Սա հնդեվրոպական բառ է, որ նշանակում է մարդ կամ տղամարդ.

Անգլերեն	Man *(մեն)*	*Հոլանդերեն*	Mensen
Մալթա	Man	*Էստոներեն*	Mees
Իսլանդերեն	Man	*Ռումիներեն*	Oameni
Իռլանդերեն	Man	*Ռուսերեն*	Mug *(Муж)*
Շվեդերեն	Mannisk	*Հայերեն*	Mard, Manuk
Գերմաներեն	Mensch		

Եվ, ուրեմն, «Ար»-ը Արարիչն է, «մեն»-ը՝ մարդը, իսկ միասին կլինի «Արմեն», որն է Արարչի՝ «Աստծո մարդ», ռուսերեն՝ «муж Божий», անգլերեն՝ «The man of God» և այլն։

Հետևաբար, Նոյի, Հայկի և նրանց հաջորդող դարաշրջաններում հարևան երկրները հայերին անվանում էին «Արմեն»՝ Աստծո մարդ, իսկ Հայաստանը՝ Արմենիա, որ նշանակում է՝ «Աստծո ժողովուրդի» կամ «Աստծո որդիների» երկիր.

«Երբ մ.թ.ա. 3-րդ հազարամյակի սկզբներին Արաբական թերակղզուց սեմական ցեղերը՝ աքքադացիները (ավելի ուշ՝ բաբելացիներն ու ասորեստանցիները), հայտնվեցին Հյուսիսային Միջագետքում և սկսեցին շփվել Հայկական լեռնաշխարհի բնակիչների՝ հայ-արմենների հետ, այնտեղ դեռ գոյություն ուներ Արարիչ Հոր՝ Ար Աստծո պաշտամունքը... Եվ սեմական ցեղերը ևս հայերին անվանում են Ար Աստծո որդիներ»[286]։

Ակնհայտ է դառնում, որ Հայաստանի տարածքում մինչև Ջրհեղեղն ապրած բարեպաշտ ժողովրդին անվանում էին «Աստծո որդիներ», իսկ հետո նրանք անվանվեցին «Արմեններ», ինչը նույնն է՝ «Աստծո որդիներ»։

Այսպիսով, Հայաստանի թե՛ Արարատ, թե՛ Արմենիա անվանումները Արարիչ Աստծո անվան և տեղաբնակ ժողովրդի հետ են կապված։

Մ. Գավուքչեանը ցեղանունները վերլուծելիս՝ հետևություն է անում, որ ***«...ցեղի կամ պետության ընդհանուր երկիրը կարող էր անունը ստացած լինել իր կենտրոնական կամ արքայական քաղաքի անունից, որը շատ անգամ կրել է տվյալ ցեղի գլխավոր աստծո անունը։***

Այդպես են ծագել, օրինակ, Ասորեստանի և Հռոմի մեծ կայսրությունների անունները, որոնք նախապես եղել են տվյալ ցեղերի կենտրոնական քաղաքների անունները՝ Ասուրի և Հռոմի, որտեղ հաստատված են եղել իրենց պաշտամունքի առարկա Աշուրն ու Հռոմուլոսը...

---

[286] Անժելա Տերյան «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002թ., էջ 2:

Աչքի առաջ ունենալով վերևում բերվածները՝ կարելի է սպասել, որ առաջավոր Ասիայի հնագույն ժողովուրդներից և ցեղային միություններից մեկը ներկայացնող Արմեն (և որով՝ Արմենիա) անունը առաջ է եկել այս անունը կրող ցեղի կանխագույն գլխավոր Աստծո անունից։ Մենք տեսանք, որ այդ գլխավոր Աստծո անունը եղել է Ար»[287]։

Ուրեմն, վերլուծությունը մի անգամ ևս հաստատում է, որ հեթանոսությունն ու կռապաշտությունը հայերիս համար եղել են խորթ, ժամանակավրեպ բաներ։

Իսկ պետականորեն առաջինը քրիստոնեության ընդունումով շտապեցինք մեր դարձով վերահռչակվել Արարիչ և Փրկիչ Աստծո որդիներ.

«Իսկ կռապաշտությունը ե՞րբ մտավ աշխարհ։ Նախ Բելը մտցրեց կռապաշտությունը՝ իր պատկերը պաշտել տալ ուզելով, ոմանք էլ Սեմի ցեղից Աբրահամի հորը կամ պապին են համարում դրա պատճառը։ Բայց սրանք մեզ համար ավելորդ խնդիրներ են։ Պետք է, որ բոլոր ազգերի համար ամենադժնդակ ժանտախտը՝ սուտ հավատքը, ուշ կամ շուտ հայերի մեջ էլ ճարակված համարենք։

Եվ որչա՛փ պժգալի է ողջախոհ քրիստոնյայի համար՝ թողնելով ստույգ աստվածպաշտության հիշատակները՝ դառնալ իր հնացած և մոռացված նախնիների ցնորքին, ախտերին, կրքերին ու տգիտությանը և ստեղծած կամ ենթադրած սնոտիքը փնտրելուն։ Սակայն գոնե նրանց փոխարեն մենք՝ ուղղահավատ, բախտավոր որդիներս, մի անգամ ևս երկրպագություն և գոհություն մատուցենք մեզ լուսավորող ու փրկող Քրիստոսին՝ Ճշմարիտ Աստծուն» [288]։

Հին աշխարհի երկրները բարեպաշտ Հայաստանի մասին

««Արմենոիդների» միակ ունիվերսալ, կրկնվող հատկությունը, ըստ անցյալի հետազոտության, սկսած նեոլիտից, այն է, որ նրանք անփոփոխ գտնվել են մարդկային ցեղի լինելիությունը պայմանավորող գլխավոր իրողությունների կենտրոնում։ Արդյոք մարդուն պե՞տք է՝ լինել պատկերը և նմանությունն Աստծո, օժտված՝ ազատությամբ և ունակությամբ, տարբերել բարին ու չարը, թե՞ լինել կայուն կենսաբանական մեխանիզմ, աշխարհի առարկաների մաս։ Մի խոսքով, լինել կենդանի, թե՞ մեռած մարդ։ Սա է այն խնդիրը, ինչը հազարավոր տարիներ առաջ արմենոիդները դրել են երկիր մոլորակի ցեղերի առջև» [289]։

Շրջակա երկրները (մասնավորապես հարավում գտնվողները) լավ էին հիշում, որ Հայաստանն այն վայրն էր, որտեղ եղել էր երբեմնի երկրային Դրախտը։ Այդ ժամանակի ամենազարգացած երկրներից Շումերի համար Արարատյան երկիրը՝ Արատտան, ամենախորհրդավոր վայրն էր՝ Ավետյաց երկիրը, որին

---

[287] Մ. Ս. Գավուքչեան, Արմէն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ 1973թ., էջ 132-133:

[288] Ղևոնդ Ալիշան «Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը», Երևան, 2002թ., էջ 21:

[289] Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

հարավի երկրներն, ինչպես բազմիցս ասվեց, անվանում էին, «աստվածների հավաքատեղի», «սուրբ օրենքների երկիր», «ողջերի երկիր», «բարեպաշտ արքաների երկիր» և այլն.

«Այսպիսով, շումերական, աքքադական և հին եբրայական աղբյուրների տեղեկությունների համադրումը ցույց է տալիս, որ «սուրբ օրենքների» և «անմահների» երկիր Արատտան, Ջրհեղեղից փրկվածներին ապաստան տված Նիցիր լեռը, Արարատ /դ/ լեռները և «Աստվածների ժողովի լեռը» գտնվում են Եփրատին ու Տիգրիսին ծնունդ տվող լեռներկրում՝ Հայկական լեռնաշխարհում»[290];

***«Հայկական լեռնաշխարհի համարյա կենտրոնում գտնվող Հարք գավառն իր շրջակա տարածքներով (Բարձր Հայք, Տուրուբերան) բազմաթիվ աղբյուրների, գետերի ու գետակների ակունքը լինելով՝ նաև իր անվամբ (Հարք) լիովին համապատասխանում է շումեր-աքքադական գրավոր աղբյուրներում հիշատակված «աստվածների ժողովի լեռ», «աստվածների հավաքատեղի» անուններին, որտեղ, ինչպես հայտնի է, Արարիչը՝ Հայր Աստվածը, արարել է մարդուն: Այս տարածքը լիովին համապատասխանում է նաև Աստվածաշնչյան Դրախտին, որտեղ նույնպես Արարիչը՝ Հայր Աստվածն, արարել է մարդուն»*[291];

Հայաստանի հանդեպ նման խորհրդավորությունը այնպիսի խորը ազդեցություն էր գործել շումերների վրա, որ նրանք Հայաստանը համարում էին աստվածային տարածք: Չնայած նրանք էլ մյուսների նման հեռացել էին ճշմարիտ աստվածպաշտությունից և ընկել բազմաստվածության մեջ, սակայն համարում էին, որ իրենց աստվածներն էլ ծագումով պետք է Հայաստանից լինեին.

«Եդեմի աշխարհագրությունը հեշտությամբ նույնացվում է Մեծ Հայքի տեղագրության հետ: Բացի դրանից, ես նույնպես համոզված եմ, որ պատմական Եդեմը դժվար չէ նույնացնել հնագույն Շումերի գրական հուշարձանների հետ: Իսկապես՝ հիմքեր շատ կան ենթադրելու համար, որ հին շումերների Արատտա երկիրը նույն Աստվածաշնչյան Եդեմի հնագույն նախատիպն է...

***Էպիկական պոեմի «Ողջերի երկիրը» մի վայր է, որտեղ, համաձայն ուշ շրջանի շումերական պատկերացումների, սերվել են իրենց աստվածները»*[292];**

Այդ ողջերի երկրի ժամանակները պարբերացնող հզոր նահապետը հոգ է տարել նաև տոնակատարությունների կայացման համար. ***«Հայկը, որպես ազգապետ և կարգ ու կանոն հաստատող, նաև հմուտ՝ նահապետական օրենքների մեջ, որպես սրբազան կարգ էր համարել տոներն ու հիշատակները և այլ օրերի հաստատումը, առաջին տոմարագետ կոչվեց»*[293];**

Բնական է, որ եթե բարեպաշտ Նոյ և Հայկ նահապետների օրոք Հայաստանում պաշտել են Արարչին՝ միակ ճշմարիտ Աստծուն, ուրեմն հարկ էր, որ այդ պաշտամունքն ունենար Նոյի հաստատած ծիսական զոհաբերության կարգերը, աղոթքները և հոգևոր երգեցողությունը:

---

290 Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 69:

291 Անժելա Տերյան «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002թ., էջ 24:

292 Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли...”, Москва, 2005г., ст. 94, 447.

293 Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, սր. Ղաղար, Վենետիկ 1904թ., էջ 151:

Հետաքրքիր է, որ շումերական «Էնմերքարը և Արատտայի գերագույն քուրմը» վիպերգում պատմվում է նաև Արատտայում աստվածպաշտության կերպի մասին.

«Երկրի կառավարման փաստից կարելի է պատկերացնել Արատտայի կյանքում պաշտամունքային երևույթների կարևորությունը: Վիպերգում մի քանի անգամ նշվում է, որ Արատտայում կատարվում են «զոհաբերություններ, աղոթք ու պաշտամունք», որ նրա բոլոր տաճարներում (բնագրում՝ «Գաննուններում») «երգում են սուրբ երգեր ու աղոթքներ»»[294]:

Երբ ասվում է «բոլոր տաճարներում» դրանից պետք է եզրակացնել, որ այդ ժամանակ Հայաստանում աստվածպաշտության տաճարները Սողոմոնի տաճարի պես կենտրոնացած չէին մեկ վայրում, այլ սփռված էին Հայաստանի ամբողջ տարածքով.

«Հայտնի է, որ հայոց հնագույն հոգևոր կենտրոններ են եղել Արդինի (Մուսասիր, Հայկական լեռնաշխարհի հարավարևելյան մաս) և Աշտիշատ (Հարք գավառ) քաղաքները: Բացառված չէ, որ այս քաղաքներում եղել են Ար աստծուն նվիրված տաճարներ»[295]:

Բնականաբար, աստվածպաշտության կենտրոն էլ պետք է լիներ, ինչը, հավանաբար, Արարատյան դաշտավայրում՝ այսօրվա էջմիածնի Մայր տաճարի տարածքն է եղել: Արարատից իջնելուց հետո հատկապես այստեղ Նոյը կատարեց իր առաջին զոհաբերությունը: Իսկ Հայկի աշխարհացունց հաղթանակից հետո ապրելով ևս 110 տարի՝ հենց այդ կողմերում կնքեց իր մահկանացուն:

Հայաստանն իրոք սրբության, բարեպաշտության ու անմահության երկիր էր, և միջագետքյան երկրների հզորները, տեսնելով կյանքի ունայնությունը, ջանում էին հասնել Հայաստան՝ հավիտենական կյանքի գաղտնիքն իմանալու համար, քանզի հին ավանդություններից գիտեին, որ կյանքի ծառը եղել է Եդեմում՝ Հայոց լեռնաշխարհում, ինչի համար էլ, հավանաբար, շումերներն այն անվանում էին անմահների երկիր:

Հիշենք, որ այդ ուխտավորներից էր Շումերի արքա Գիլգամեշը՝ այդ դյուցազունը, ով թողնելով իր թագավորությունը՝ ընկերոջ հետ ուխտագնացության ելավ դեպի Հայաստան՝ Ավետյաց երկիրը՝ անմահություն գտնելու հույսով:

Իսկ որ Գիլգամեշը եղել է իրական և ոչ թե առասպելական անձնավորություն, դրանում համոզված են ուսումնասիրողներից շատերը.

«Հնագիտությունը փաստացի ապացույցներ է գտել, որ Էնմեբարեգեսը՝ Գիլգամեշի ժամանակակիցներից մեկը, որը հիշատակվում է հենց այդ էպոսում, իրական կառավարիչն էր քաղաք-պետություն Կիշի: Այդ փաստը որոշ պատմիչների հնարավորություն տվեց գալ այն եզրակացության, որ հենց Գիլգամեշը իրական դեմք է եղել՝ մսից և արյունից կազմված մարդ, ով ապրել է հնագույն ժամանակներում: Այսպիսով, եթե ընդունենք այս տեսանկյունը, որ Գիլգամեշը պատմական դեմք է եղել, ապա ինչո՞ւ չենք կարող ընդունել այն հնարավորու-

---

[294] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 48:
[295] Անժելա Տերյան... էջ 63:

թյունը, որ նա ճանապարհորդել է մի հեռավոր երկիր, որը վաղ ժամանակներից ստացել էր «Ողջերի երկիր» անվանումը, ինչը բացատրվում է Դրախտը երկրի վրա գտնվելու՝ նրա լեգենդար կարգավիճակով» [296]*։*

Գիլգամեշի հենց Արարատյան երկիր՝ Նոյի մոտ գալը, ինքնին ապացուցում է, որ բոլոր տիտղոսները՝ «անմահների երկիր», «սուրբ օրենքների երկիր», «արևածագի երկիր», վերաբերել են Հայաստանին, որտեղ, ըստ շումերների, եղել է Դրախտը, և որտեղ գտնվել է Նոյ նահապետը։

«Բացի այդ, ըստ «Գիլգամեշը և անմահների երկիրը» վիպերգի, դեպի Արատտա էին ուղևորվում անմահություն որոնող շումերական հերոսները...

Իսկ ինչո՞վ բացատրել այն մեծ նշանակությունը, որ Հայկական լեռնաշխարհն ունեցել է Հարավային Միջագետքի բնակիչների համար։ Նախ և առաջ այն հանգամանքով, որ Հայկական լեռնաշխարհից էին ծնունդ առնում Միջագետքի համար կենսատու Եփրատ և Տիգրիս գետերը։ Տեղին է նշել, որ ըստ Հին Կտակարանի՝ այդ երկու գետերը սկիզբ էին առնում Դրախտից։ Բացի այդ, կարևոր դեր պետք է խաղացած լինի շումերական քաղաքակրթության կրողների նախնիների՝ հյուսիսից գաղթած լինելը (կապված նախահայրերի պաշտամունքի հետ)։ Եվ վերջապես, Ջրհեղեղի ավանդությունը, որի համաձայն՝ Ջրհեղեղից փրկվածներից մարդկությունը վերածնվեց՝ շնորհիվ Հայկական լեռնաշխարհի, որտեղ աստվածներն են ժողովի հավաքվել և անմահություն շնորհել Ջրհեղեղից փրկվածներին» [297]*։*

Գիլգամեշի՝ Նոյի մոտ հասնելու և մյուս դրամատիկ դեպքերի մասին պատմությունը՝ «Գիլգամեշը և անմահների երկիրը» խորագրով, ն. Ք. VII դարի աքքադական մի սալիկից 1872 թ. վերծանեց բնասեր Ջորջ Սմիթը։

Հավանաբար, այստեղ ևս, ինչպես հին պատմություններից շատերում, իրականությունը խառնված է առասպելի հետ։ Այն, որ Գիլգամեշը հասել է Արարատյան երկիր և զրուցել Նոյի հետ, կասկած չի հարուցում։ Սակայն ինչ վերաբերում է անմահության ծաղկին, որ Նոյը տվել է Գիլգամեշին, իսկ օձն այն գողացել է նրանից, դա ավելի շուտ առասպելաբանություն է։ Սակայն հնարավոր է, որ անմահության ծաղիկը խորհրդանիշն է եղել այն աստվածային պատվիրանների, որ Նոյը, որպես հավիտենական կյանքի ուղեցույց, հաղորդել է Գիլգամեշին։ Այսինքն, թե՛ կենաց ծառը և թե՛ կենաց պատվիրանները վերաբերել են Հայաստանին։

«Ուշագրավ է, որ ինչպես «Գիլգամեշ» էպոսի «անմահության ծաղիկն» է համադրվում Մննդոց գրքի «կենաց ծառին», այնպես էլ երկու աղբյուրներում նույնն է դրանց գտնվելու վայրը՝ Հայոց լեռնաշխարհը» [298]*։*

Ըստ հունական ավանդության, մոտ 2200 տարի անց, անմահության գաղտնիքներ փնտրող Գիլգամեշի օրինակին հետևում է Ալեքսանդր Մակեդոնացին՝ ճանապարհ բռնելով դեպի Հայաստան աշխարհ.

---

[296] Дэвид Рол, “Генезис цивилизации, откуда мы произошли...”, Москва, 2005г. ст. 59.

[297] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 24, 28:

[298] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ., էջ 42:

*«Հետաքրքրական է նաև, որ հնագույն միջագետքյան պատկերացումներն անմահության մասին՝ կապված Գիլգամեշի հետ, պահպանվել են Առաջավոր Ասիայում երկար ժամանակ. անմահության որոնման այս ժամանակ Գիլգամեշին փոխարինում է Ալեքսանդր Մակեդոնացին: Գիլգամեշին «անմահության երկիր» հասնելու համար տրվում են «դեպի Արատտա ճանապարհն իմացող» ուղեկիցներ, և նա Եփրատի հոսանքն ի վեր բարձրանալով՝ անցնում է Մաշու լեռներն ու հասնում «անմահության երկիր»: Նույն նպատակին հասնելու համար Ալեքսանդր Մակեդոնացին, ըստ հունական վեպի (գրի առնված Ք. ա. 240թ.), բռնում է «ճանապարհը դեպի Հայոց երկիր», որտեղ «ակունքներն են Եփրատի ու Տիգրիսի» (*Lipinski E., El's a bode, "OrentatliaLovaniensiaProdica", *1971, 2,* p. *46): Իսկ Ալեքսանդրի մասին սիրիական վեպում նրա ճանապարհին հիշվում է Մասիս անունով լեռնաշղթան (*Lipinski E., նշվ. աշխ. էջ 17): Փաստորեն, հին արևելյան և հելլենիստական վիպական ավանդույթներով, Գիլգամեշի ու Ալեքսանդր Մակեդոնացու անմահության որոնումներում «դեպի Արատտա ճանապարհը» փոխարինվում է «դեպի Հայոց երկիր ճանապարհով», Մաշու լեռները՝ Մասիս լեռնաշղթայով. երկու դեպքում էլ հերոսները գնում են դեպի Եփրատի ակունքները: Փաստերն այնքան պերճախոս են, որ մեկնաբանությունները, կարծում ենք, ավելորդ են» [299]:*

Վերջաբան

«Այնտեղ Սեմի տունն էր, այստեղ՝ Հաբեթի տունը՝ տունը Թորգոմի. Հայկի տունն էր, տունն՝ Աստծո» [300]:

Այսպիսով, Հայաստան աշխարհը Հայկ Նահապետի տիրապետության շրջանում ապրում էր իր ոսկեդարերից մեկը: Հայաստանը միակ երկիրն էր այդ շրջանում, որտեղ պաշտվում էր Ադամի և Նոյի Տեր Աստվածը, և բնական է, որ նման օրհնյալ վիճակում երկիրը ծաղկում կապրեր ու կբարգավաճեր, ինչի մասին վերը տեղեկացանք:

Այս ամենն արժանահավատ է հատկապես այն պատճառով, որ Հայաստանի և հայ ժողովրդի նման յուրահատկությունը հին ժամանակներից մինչ օրս փաստում են բազմաթիվ օտարազգի գիտնականներ, կրոնական գործիչներ և ուրիշներ:

*Ըստ հին միջագետքյան պատկերացումների՝ **«Մեր լեռնաշխարհը, նախքան մարդկության արարումը, եղել է աստվածների բնակության վայր, այստեղ է գտնվել դրախտը, որում արարվեց մարդկությունը, այստեղ էր գտնվում կենսատու արևի կացարանը: Մեղսագործ մարդկության կործանումից հետո կրկին***

---

[299] Աստվածաշնչական Հայաստան, Արտակ Մովսեսյան «Շումերական աղբյուրների Արատտա երկիրն ու Աստվածաշնչի Արարատը» Երևան, 2005թ., էջ 80-81:

[300] Անանիա Սանահնեցի, Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր և ուսումնասիրություններ, Սբ. Էջմիածին, 2000թ., էջ 343-345:

մեր երկիրը դարձավ մարդկության վերածննդի վայր, որտեղ կնքվեց Աստծո և մարդկանց հավիտենական ուխտը: Մեր երկրում են պահվել անմահության ու իմաստության խորհուրդները, տիեզերքը կառավարող սրբազան օրենքները: Աստվածային այդ երկրում ապրելու մենաշնորհն ունեին բարեպաշտ մեր նախնիները, որոնք ընտրյալներ էին բնության ու զարթոնքի Աստծո...

Մեր երկրի՝ սրբազան և ժողովրդի՝ աստվածընտրյալ լինելու մասին պատկերացումները շարունակեցին գոյատևել նաև քրիստոնեական շրջանում» [301]:

Ըստ հայտնի ռուս բանասեր և հետազոտող Վալերի Բրյուսովի՝ ոչ միայն Շումերը, Աքքադը և Ասորեստանը, այլև ավելի ուշ շրջանում արդեն պաղեստինաբնակ ժողովուրդը Հայաստան աշխարհի հանդեպ պահպանեց նույն խորհրդավորությունը.

«Աստվածաշնչի այն ավանդության մեջ, որը պատմում է, թե ինչպես Նոյի տապանը կանգ առավ Մասիսի գագաթին, թերևս թաքնված է պատմական ճշմարտության մի մասնիկ, այն է՝ հիշատակը այն բացառիկ դերի, որ «Արարատյան տերությունները» (նմանապես Աստվածաշնչի մեջ գործածվող անուն) խաղում էին նախկին հազարամյակների քաղաքակրթական կյանքում (2 և 3 հազարամյակներում Ք. ծ ա.): Աստվածաշնչի համաձայն՝ մարդկային սերունդը նորից սփռվեց աշխարհիս երեսին Մասիսի կողմերից, և ուրեմն, այնտեղից տարածվեց ամբողջ աշխարհի քաղաքակրթությունը: Հրեա պատմիչները, որոնք այդպես կերպարանափոխել էին քաղաքական ավանդությունը համաշխարհային Ջրհեղեղի մասին, պիտի հիշեին, որ մի ժամանակ Արարատի կողմերից էր սփռվում իրենց երկրում գիտության լույսը, այնտեղից էին սպասում իմաստասիրության ու գեղարվեստի հայտնություններ և նրբացած կյանքի դասեր: Մասիսի շուրջը բնակված ազգերը հինավուրց հրեաների աչքում ամենից լուսավորյալներն էին բոլոր ազգերի մեջ» [302]:

Հայկի ժամանակ Հայաստանում բազմաթիվ սրբություններ կային. նախ՝ երկրային դրախտի գտնվելու վայրը, ապա՝ հետջրհեղեղյան բոլոր բարեպաշտ նահապետների՝ Աբելի, Սեթի, Ենովսի և այլոց նշխարները, որ թաղված են Հայոց սրբազան հողում: Նաև Արարատ լեռը՝ Նոյի տապանով հանդերձ, Նոյի կառուցած զոհասեղանը և, վերջապես, հենց ինքն՝ Աստծո քահանա և թագավոր Նոյ նահապետը, ով Ադամի գանգը և մյուս մասունքները Տիրոջ պատվերով վերցրել էր տապան, և այն գտնվում էր Արարատյան դաշտավայրի տարածքում:

---

[301] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ., էջ 38:

[302] Վալերի Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967թ., էջ 182:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անժելա Տերյան «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002:
2. Անանիա Շիրակացի, մատենագրություն, Երևան 1979:
3. Անանիա Սանահնեցի, Հ. Քյոսեյան, Աստվածաբանական բնագրեր և ուսումնասիրություններ, Սբ. Էջմիածին 2000:
4. Աշխունջ Պողոսյան, Գորգի ծիսապաշտամունքային նշանակության առթիվ, Պատմա-բանասիրականհանդես, Երևան, 2000:
5. Աշխունջ Պողոսյան, Զրույցներ հայ մշակույթի մասին, «Նորավանք», Երևան 2008:
6. Աստուածաշունչ, արևելահայերեն նոր թարգմանություն, Ս. Էջմիածին, 1994:
7. Արտակ Մովսիսյան, «Շումերական աղբյուրների Արատտա երկիրն ու Աստվածաշնչի Արարատը», Աստվածաշնչական Հայաստան, Երևան, 2005:
8. Արտակ Մովսիսյան,«Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ:
9. Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000:
10. Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Հանդես Ամսօրյա, հունվար-դեկտեմբեր, Երևան 1998:
11. Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան1967:
12. Էդուարդ Դանիելյան, «Հայաստանն Աստվածաշնչում և Եղիշեի «Արարածոց մեկնութիւն» երկը», Աստվածաշնչյան Հայաստան, Երևան, 2005:
13. Էդուարդ Դանիելյան., Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու հոգևոր ակունքները և պատմական նշանակությունը, Երևան, 1997:
14. Է. Դանիելյան, Ա. Մելքոնյան, Հայոց Պատմություն, Երևան-2008:
15. Թորոս Թորանեան, Երևանի Պետական Բժշկական հաստատությունը, Փարիզ 1986:
16. Ժագ դը Մորգան, Հայ ժողովուրդի պատմութիւնը, Պոսթըն, 1947:
17. Կորյուն, Վարք Մեսրոպ Մաշտոցի, Երևան, 1994:
18. Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատ. I, Երևան 1974 թ:
19. Հայկական Սովետական Հանրագիտարան, Հատ. VII, Երևան 1981թ:
20. Հակոբ Սիմոնյան, Հուշարձան տարեգիրք հատ. Ը, «Հուշարձան» հրտ., Երևան 2013:
21. Հարություն Մարտիրոսյան, Քարի դարից Ուրարտու, Երևան, «Հայաստան»հրատ. 1971:
22. Հին Հայաստանի ոսկին, հրտ. «Գիտություն», Երևան 2007

23. Ղուկաս Ինճիճեան, Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի, հատորԱ, Վենետիկ1835:
24. Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:
25. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան 2002:
26. Մ. Էմին, Հնախօսութիինք ի վերա հայկական հեթանոսության, 1875:
27. Մ. Ս. Գավուքչեան, Արմէն և հայ անունների ծագումը և Ուրարտուն, Պեյրութ 1973:
28. Պարիս Մ. Հերունի, Հայերը և հնագույն Հայաստանը, Երևան 2006:
29. Ջեյմս Բրայս (Անգլիայի հասարակական խորհրդի անդամ), Վերելք Յաբարատ, Կ. Պօլիս, 1890:
30. Ռամիլ Հաքիմով, «Զրույց քարի հետ», Երևան էջ 299:
31. Ռաֆայել Պապայան, Հայաստանում քրիստոնեության ընդունման հոգևոր նախադրյալները, «21-րդ ԴԱՐ», թիվ 1 (7), 2005:
32. Ռոպեր ճէպեճեան, Հայ բժշկութեան և հայ-արաբական բժշկական դպրոցներու կապերը, Պեյրութ 1967:
33. Սամվել Դիլանյան, Մանկական հանրագիտարան, Երևան, 2001:
34. Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967:
35. Ստրաբոն, գիրք ԺԱ, գլ. ԺԴ, Հ. Աճառյանի թարգմանությամբ, Երևան, 1940, էջ 61:
36. Ս. Մ. Այվազյան. Հնագույն Հայաստանի մշակույթի պատմությունից. Երևան 1986:
37. Սուրբ Գրոց Հին Ուխտի պատմութեանց ընդարձակ աշխարհաբարը, աշխատասիրութիւն Գրիգոր քահանայի Մանդակունւոյ, Թիֆլիս, 1896:
38. Վրբան Ստամատով, Մակույկով մինչև Արարատ, Երևան 1989:
39. Վալերի Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Երևան, 1967:
40. Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Հայաստան հրատ., 1968:
41. Քսենոփոն. Անաբասիս. Երևան 1970:
42. А. А. Иессен Б. Е. Деген-Ковалевский “Изистории древней металлургии Кавказа”, изд. Огиз, Ленинград 1935 г.
43. А. Мартиросян. Армения в эпохубронзы и раннегожелеза. Ереван 1964.
44. Азимов Айзек Ближний Восток. «История десятитысячелетий»: Центрполиграф; М.; 2006.
45. В. Бартольд, “Историко-географический обзор Ирана,” СПб, 1903.
46. Г. Л. Морган. “Древнееобщество”. Л., 1934.
47. Генри Геллей, Краткий Библейский толкователь, Канада, 1989.
48. Гордон Чайлд, Прогресс и археология, Москва, 1949.
49. Гордон Чайлд, Древнейший Восток в свете новых раскопок, Москва, 1956.
50. Джовани Гуайт. 1700 летвернвсти. Москва 2005.

51. Дэвид Лэнг, “Армяненарод-созидатель”, Москва, 2004.
52. Дэвид Рол-известны и британский писатель и археолог, “Генезис цивилизаци, откуда мы произошли . . .”, Москва, 2005.
53. Е. Н. Черных, Металл – человек – время, изд. “Наука” Москва 1972.
54. Евгенний Марков. Русская Армения. Вестник Европы. Книга V, Том III. Санктпетербург 1901.
55. Жакде-Морган, Доисторическое человечество, Москва, 1926. (Президент Брюсселскаго и Член – Сотрудник Имп. Русскаго Географических Общества 1893 г.)
56. Жюль Леклерк. Поездкана Арарат. С.- Петербург 1893.
57. Иосиф Флавий, Иудейские древности, том 1, Феникс, Ростов-на-Дону, 2000.
58. К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа, Ленинград 1970, изд. “Наука”.
59. Л. А. Оганесов, История медицини в Армении, Эриван 1927.
60. Карл Бакс. (И. Немков) Богатства земных недр. Москва. Из. “Прогрес”. 1986.
61. Л.Л. Карапетян. “Хозяйство и духовная культура древнойАрмении”. Ереван 1999.
62. М. А. Кашкай, И. Р. Селимханов, Из истории древней металлургии Кавказа, изд. “Элм”,. Баку, 1973.
63. М. Ахов. Очерки из истории Армянского “госвдарства”. С.- Петербург. 1897.
64. Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.
65. Мулдашев Э. Р. “Откого мы произошли?”, СПб: Нева, 2005.
66. Н. А. Александрова. Закавказье. Армяне. Москва 1901.
67. Р. М. Мунчаев, Кавказ на заре бронзового века, изд. “Наука”, Москва, 1975.
68. С. К. Дикшит, Введение в археологию, Москва, 1960.
69. Святитель Афанасий Великий, ТВОРЕНИЯ в четырехтомах. Том I. Москва 1994.
70. Сергей Глинка (1775-1847), Обозрение истории Армянского народа, Москва, 1832.
71. С. Т. Саркисян, ЭнциклопедияАрцах-Карабах, Изд. Дом “Петрополис”, Санкт-Петербург, 2007
72. Уильям Таймер Олькотт «Легенды звёздного мира», С. Петербург, 1911.
73. Bochkarev N.G., Bochkarev Yu.N., Armenian Archaeoastronomical Monuments Carahungeand Metsamor, ReportonInternational Conferenceon Folklor, Tartu, 2003.

ԳԻՐՔ VI

Երկիր, որին շնորհված է հինավուրց խորհուրդների բացահայտումներ

Մելքիսեդեկ

«Շատ հարցերի պատասխաններ թաքնված են Հայաստանի հազարամյա ճակատագրի ընդերքում, ինչպես սերմը՝ խնձորի մեջ: Երկիր, որտեղ պատմությունն ու այսօրվա օրը զարմանալիորեն միախառնվում են ապրում բնական միասնությամբ»[1]:

Ինչպես տեսանք, Նոյ և Հայկ նահապետների տիրապետության շրջանում Հայաստանը տնտեսական և ռազմական ոլորտներում մեծ բարձունքների էր հասել և այդ ժամանակաշրջանի զարգացած երկրներից շատ ավելի բարձր մակարդակի վրա էր գտնվում:

Տեսանք նաև, որ հոգևոր առումով էլ Արարատյան երկիրը միակն էր, որ հաստատապես հավատարիմ էր մնացել Արարատյան երկրի նախկին բնակիչների՝ Ադամի, Սեթի, Ենովսի, Ենովքի և Նոյի դավանած ուղիղ հավատին:

Սակայն այժմ միառժամանակ թողնելով Հայկական լեռնաշխարհը՝ տեղափոխվենք այստեղից հարավ-արևմուտք՝ Պաղեստին՝ Քանանի երկիրը, որտեղ այդ շրջանում բնակվում էին Սեմի և առավելապես Քամի ազգատոհմերից սերված ժողովուրդներ՝ ամորհացիներ, գերգեսացիներ, հեբուսացիներ, ամաղեկացիներ, սոդոմացիներ, գոմորացիներ և այլք:

Դարեր անցան, և նոր միայն, բացի միակ բարեպաշտ երկրից՝ Հայաստանից, կռապաշտության խավարում խարխափող աշխարհի մի այլ անկյունում առկայծեց ճշմարիտ հավատի լույսը. Միջագետքում՝ քաղդեացիների Ուր քաղաքում, Աստված այցելեց Աբրահամ նահապետին:

Քրիստոսի մարդեղությունից առաջ՝ երրորդ հազարամյակի վերջին (մոտ 2091 թվականին) Աբրահամը, Տիրոջ պատվերին հետամուտ լինելով, իր ծննդավայր Ուր քաղաքից ելավ և տեղափոխվեց Խառան: Միառժամանակ անց՝ Խառանից եկավ Քանան: Իսկ երբ այնտեղ սով եղավ, գնաց Եգիպտոս և ապա նորից իր ունեցվածքով, կնոջ և Ղովտի հետ վերադառնալով Քանան՝ վերջնականապես հաստատվեց այնտեղ:

Քանանի տարածքում էին գտնվում Սոդոմն ու Գոմորը՝ քաղաքներ, որոնք հռչակված էին որպես անառակության և ամեն տեսակ պղծությունների որջեր:

---

[1] Կիմ Բակշի «Ճակատագիր և քար», էսսեներ, հրատ. «Սով. Գրող», Երևան 1985, էջ 190:

Վատ համբավ ունեին նաև մյուսները՝ Ամաղեկը, Երիքովը և բազմաթիվ այլ վայրեր։

Եվ ահա այդ կռապաշտ ազգերի մեջ հայտնվեց Աբրահամը՝ կարծես թե միակը, ով հավատում էր ճշմարիտ Աստծուն։

Սակայն ի զարմանս մեզ՝ տեսնում ենք այդ ազգերի կողքին նաև Տիրոջը հավատացող, Աստծո երկյուղն իրենց մեջ կրող այլ անձանց՝ նույնիսկ մի ամբողջ թագավորություն, ինչպես Սաղեմի թագավորությունն էր, որտեղ իր բարեպաշտ հպատակներին իշխում էր Մելքիսեդեկ արքան՝ միևնույն ժամանակ լինելով Բարձրյալ Աստծո քահանա, ինչի մասին մեզ տեղեկացնում է Սուրբ Գիրքը։

Իսկ որտեղի՞ց Հայոց բարեպաշտ Լեռնաշխարհից այսքան հեռու գտնվող տարածքում Տիրոջ երկյուղն ունեցող մի ամբողջ թագավորություն՝ այն էլ նման կռապաշտ ազգերի հարևանությամբ։ Եվ ո՞վ էր այս խորհրդավոր արքան՝ Մելքիսեդեկը, ում կերպարը մինչ օրս տարաբնույթ կարծիքների տեղիք է տվել և դեռ տալիս է։

Խորհրդավոր է և այն, որ նրա մասին մենք տեղեկություններ ենք գտնում Աստվածաշունչ Մատյանի երեք մասերում. սկզբում՝ Ծննդոց գրքում [2], միջնամասում՝ Սաղմոսների գրքում [3] և վերջնամասում՝ Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված ուղերձում [4]։

*Եվ չնայած որ սուրբգրային այդ բոլոր տեղեկությունների մեկտեղումը որոշ պատկերացում տալիս է Մելքիսեդեկի մասին, սակայն նրա ով լինելու գաղտնիքը մինչ օրս մնում է չբացահայտված. **«Մելքիսեդեկի անձը չափազանց առեղծվածային է»** [5]։*

Կարող է հարց առաջանալ՝ ի՞նչ կապ կարող է ունենալ պաղեստինյան այդ խորհրդավոր թագավորությունը և նրա առեղծվածային արքան՝ Հայաստանի հետ, ինչո՞ւ ենք անդրադառնում մի թեմայի, որն առեղծված է եղել հազարամյակներ շարունակ և մինչ օրս էլ մնացել է չբացահայտված։

Մելքիսեդեկի առեղծվածը վերծանելու համար բազմաթիվ մարդիկ են փորձել մեկնաբանել Սուրբգրային տվյալ նյութը, սակայն ոչ ոք Աստվածաշնչյան սուղ տեղեկություններից զատ՝ այլ հիմնավոր փաստարկներ ձեռքի տակ չի ունեցել՝ այդ խրթին հարցին լուծում տալու համար։

Մենք կաշխատենք քննել և տեսնել, թե Հայաստանի հնագույն պատմությունն արդյո՞ք որևէ առնչություն ունի այս անլուծելի խնդրի հետ։

Խորհրդավորության մշուշով ծածկված Աստվածաշնչյան սույն թեմային իրենց տարբեր աշխատություններում անդրադարձել են տիեզերական Եկեղեցու տասներկու մեծ վարդապետներից Դիոնիսիոս Արիսպագացին, Աթանաս Մեծը, Հովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորին, Կյուրեղ Ալեքսանդրացին և Եպիփան Կիպրացին։ Մելքիսեդեկի մասին հիշատակություններ կան Կիպրիանոս Կար-

---

[2] Ծննդ. 14:18- 20:

[3] Սղմ. 109:4:

[4] Եբր. 5-7:

[5] Святитель Филарет Дроздов, “Толкование на книгу Бытия”, Москва, 2004 г., ст. 291.

թագենացու, Մարկոս Ճգնավորի, Եվսեբիոս Կեսարացու, Թեոդորիտոս Կիրսացու, Մաքսիմոս Խոստովանողի, Գրիգոր Տաթևացու և այլոց աշխատություններում: Հատկապես ծավալուն է Հովհան Ոսկեբերանի խոսքը նրա մասին: Նա Մելքիսեդեկի անձին հիմնականում անդրադառնում է Ծննդոց գրքի և Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղված նամակի համապատասխան գլուխների մեկնություններում: Աստվածաշնչյան բազմաթիվ գրքեր մեկնող սուրբ Ոսկեբերան հայրապետը և մյուս սուրբ հայրերը մեծ երկյուղածությամբ են մոտեցել այս թեմային, քանզի համընդհանուր հետաքրքրության արժանացած տվյալ նյութը մեկնելը համարել են շատ դժվարին և նույնիսկ ոչ անվտանգ.

«Այժմ, անսպասելիորեն կանգնելով մեծագույն հարցի առջև, ես դժվարանում եմ, թե որ կողմ դարձնեմ մտքիս տեսադաշտը, չգիտեմ՝ որ կողմ ուղղեմ խրատի ղեկը: Եթե Առաքյալը, հասնելով գլխավորին, անվճռականություն էր ցուցաբերում մանրամասն շարադրել Մելքիսեդեկի մասին՝ ասելով. «Այս մասին մենք շատ խոսք ունենք ասելու, բայց դրանք դժվար է բացատրել» [6], ուրեմն ես ի՞նչ կարող եմ ասել, երբ այնքան եմ զիջում Առաքյալին, որքան որ կարող է մարդը դատել: Եվ ինչպես ճամփորդը, երբ դեռ գնում է փոքր թեքությամբ դեպի վար և հարթ ճանապարհով, հաճույքով է կատարում իր ճամփորդությունը, սակայն երբ հասնում է մի ինչ-որ անհարթ, կամ զառիվեր ու անանցանելի վայրի, ուր բարձր լեռ է, կանգ է առնում և խորհում վեր բարձրանալու մասին և սկսում է դանդաղ առաջ շարժվել, որպեսզի շուտով ուժասպառ չլինի: Այդպես և մենք, երբ մեզ մոտ Ավետարանի սահունություն և հարթություն էր, հաճույքով էինք ընթանում խոսքի ուղղով, իսկ երբ մոտեցանք հույժ բարձր մտքի, սկսում ենք դանդաղ վեր բարձրանալ մեկնաբանությունների երկնային սանդուղքով: Իսկ այդ ի՞նչ հարց է, որ հետազոտվում է բոլոր քրիստոնյաների կողմից» [7]:

Ահա, նման դժվարամատչելի լեռ հաղթահարելու հետ է համեմատում սուրբ հայրը Մելքիսեդեկի մասին պարզաբանումներ տալը և ասում, որ այս նյութի հետազոտությամբ հետաքրքրված են բոլոր քրիստոնյաները: Սակայն Եկեղեցու հայրերը հենց նրա համար էլ կոչվել են «Եկեղեցու սյուն», քանզի խուճապի չեն մատնվել այսպիսի հանկարծակի դժվարությունների հանդիպելիս, ոչ էլ տրվել նման պարագային անհարիր ջերմեռանդության, այլ ջանացել են աղոթքով և համբերատարությամբ խորանալ նյութի մեջ՝ ամեն բան կշռադատելով և ծանր ու թեթև անելով ի տարբերություն նրանց՝ ում ինքնավստահությունը և շտապողականությունը նորանոր հերձվածների և աղանդների ի հայտ գալու պատճառ դարձան:

Բարեպաշտ և երկյուղած հոգևոր այրերից շատերն էլ Մելքիսեդեկի մասին քննարկումները համարել են իրենց չվերաբերող, և ուղղակի խուսափել են այդ հարցի քննարկումներից.

«Մի անգամ հավաքվեցին սկիտյան եղբայրները՝ դատողություններ անելու Մելքիսեդեկի մասին և մոռացան կանչել աբբա Կոպրանոսին: Միառժամանակ

---

[6] Եբր. 5:11:

[7] Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Том 10, книга 2, SPURIA, Москва 2004, ст. 897.

անց՝ կանչեցին նրան և հարցրեցին Մելքիսեդեկի մասին։ Կոպրանոսը երեք անգամ հարվածեց բերանին՝ ասելով. «Վա՛յ քեզ, Կոպրանոս, վա՛յ քեզ, Կոպրանոս, վա՛յ քեզ, Կոպրանոս, դու թողեցիր այն, ինչ Աստված պատվիրել է քեզ անել, և փորձում ես անել այն, ինչը Նա չի պահանջում քեզանից»։ Ծաղրայրները, այս լսելով, իսկույն հեռացան իրենց խցերը»[8]։



Այժմ կարող է հարց առաջանալ. որ եթե նույնիսկ Պողոս առաքյալը տվյալ նյութը համարում է դժվարին և Եբրայեցիների թղթում եղածից բացի էլ ուրիշ ոչինչ չի ավելացնում իր մյուս ուղերձներում, և եթե եկեղեցու այսուն Հովհան Ոսկեբերանը խոստովանում է, որ Մելքիսեդեկին անդրադառնալը նման է խոչընդոտներով լի դժվարին լեռ բարձրանալուն, ապա մենք ինչպե՞ս ենք ընդհանրապես համարձակվում այս թեմայի կողմը շրջվել։ Այո, դա իհարկե այդպես է, և երբեք նման քայլի մենք չէինք դիմի, եթե այս ամենը սերտ առնչություն չունենար Հայոց աշխարհի՝ Արարատյան սուրբ երկրի հետ։

Ինչպես ասվեց, առաջին անգամ Մելքիսեդեկի մասին տեղեկանում ենք Ծննդոց Գրքից, երբ Աբրահամը Քանանում մշտական բնակություն հաստատելուց հետո իր եղբորորդի Ղովտին գերած բանակի վրա հարձակվելով՝ հաղթեց և ազատեց ոչ միայն Ղովտին, այլև սոդոմացի գերիներին։

Եվ երբ մեծ ավարով ետ էր դառնում պատերազմից, նրան ընդառաջ ելավ ինքը՝ Մելքիսեդեկ արքան.

«Սաղեմի արքայ Մելքիսեդեկը հաց ու գինի հանեց նրան, որովհետև ինքը բարձրյալ Աստծո քահանան էր։ Նա օրհնեց Աբրահամին՝ ասելով. «Օրհնյալ է Աբրահամը բարձրյալ Աստծո կողմից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը։ Օրհնյալ է բարձրյալն Աստված, որ քո թշնամիներին մատնեց քո ձեռքը»։ Աբրահամը նրան տասանորդ տվեց ամեն ինչից»[9]։

Ծննդոց գրքի այս հատվածից արդեն իսկ տեսնում ենք Մելքիսեդեկի անձի հետ կապված յուրահատուկ խորհրդավորություն. նա՝ բարեպաշտ ու հզոր արքա է, և բարձրյալ Աստծո քահանա, և նրան տասանորդ է մատուցում Աբրահամը՝ Աստծո ընտրյալը, հավատքի հայրը և Մելքիսեդեկի կողմից էլ օրհնվում է՝ որպես փոքրը մեծի կողմից։

Մելքիսեդեկի հզորությունն ակնհայտ է. այդ կողմերն ասպատակող և կողոպուտի մատնող արքաները համարձակություն չէին ունեցել հարձակվել Սաղեմի վրա։ Իսկ բարձրյալ Աստծո քահանա լինելը խոսում է այն մասին, որ նա լիովին տարբերվում էր տեղաբնակ կռապաշտ ժողովուրդներին սպասարկող քրմերից, քանզի սպասավոր էր միակ ճշմարիտ Աստծո։

Դեռ կտեսնենք, որ նրա՝ հաց և գինի բերելը ևս մեծ խորհուրդ էր պարունա-

---

[8] Луг духовный, творение блаженного Иоанна Мосха. Москва 2008, ст. 565.

[9] Ծննդ. 14: 18- 20:

կում: Իսկ մինչ այդ՝ այսքանն են Մելքիսեդեկի մասին պատմական տեղեկությունները: Մնացածը՝ Սաղմոսների գրքի և եբրայեցիների ուղերձի հատվածները, Ծննդոցի այս համարների հետ կապված խորհրդավոր արտահայտություններ և մեկնություններ են, որ ավելի մեսիական բնույթ են կրում, քան վերաբերում են անձամբ Մելքիսեդեկին:

Սուրբ հայրերը Մելքիսեդեկի մասին խոսելիս՝ շեշտադրել են ոչ թե Մելքիսեդեկի ով լինելը, այլ նրա մեսիական նախակերպարը, ինչը միանգամայն ընդունելի է:

Նրա ով լինելու մասին, ինչպես ասվեց, ոչ ոք վերջնական խոսք դեռ չի ասել, քանզի մինչ օրս դա կարծես թաքցված է եղել խորհրդավոր վարագույրի հետևում: Իսկ նրանք, ովքեր, թողնելով նրա մեսիական նախակերպար լինելու խորհրդավորությունը, ջանացել են տեսնել, թե ի վերջո ո՞վ է գտնվում այդ ծածկույթի տակ, փաստորեն, ցանկացել են բացահայտել մի գաղտնիք, որի քողազերծման համար այլ ժամանակ էր սահմանված:

*Ժամանակից շուտ «քողազերծողները» հիմնականում դարձել են աղանդավորական ուղղությունների հիմնադիրներ, շեղ վարդապետությունների ստեղծողներ, բազմաթիվ և տարաբնույթ թյուր աշխատությունների նախաձեռնողներ, պարականոն գրքերի հեղինակներ. **«Միգուցե որևէ մեկը... հետաքրքրվի այն մասին, թե ով է եղել Մելքիսեդեկը: Ոմանք տարբեր կարծիքներ են նրա մասին հնարում՝ անմտորեն ընկնելով դատարկաբանության մեջ»** [10]:*

Մեր ժամանակներում էլ բազմաթիվ են Մելքիսեդեկի թեմային անդրադարձողները, որոնց մեջ կան ողջախոհ անձինք, ովքեր իրենց մեկնաբանություններն անում են՝ հիմնվելով սուրբ հայրերի աշխատությունների վրա: Կան նաև այնպիսիք, որ հետևելով զուտ իրենց մտային կարողություններին՝ գրում են Մելքիսեդեկի մասին երևակայական, մտացածին և անհիմն բաներ՝ ավելացնելով դարերի խորքից մեզ հասած աղանդավորական գրականության քանակը:

Տիրոջ ողորմածությամբ կաշխատենք այս բաժնում Մելքիսեդեկի մասին տարաբնույթ կարծիքները ամփոփ ներկայացնել և այդ ամենին գումարելով հայոց պատմության ու հնագիտության տվյալները՝ ներկայացնել ընթերցողի դատին:

Սաղեմ

Դիտարկենք Ծննդոց գրքի այն հատվածը, որտեղ Աբրահամը հաղթանակած վերադառնում էր պատերազմից, և նրան ընդառաջ ելավ Մելքիսեդեկ արքան:

*Տեսնենք, թե ինչպես է ընկալվել և մեկնաբանվել **«Սաղեմի արքա Մելքիսեդեկը»** [11] արտահայտությունը:*

---

[10] Св. Кирилл Александрийский. Творения, Книга вторая. Москва 2001, ст. 50.

[11] Ծնն. 14: 18:

Ուսումնասիրողների մեծամասնությունը համարում է, որ Սաղեմը հենց Երուսաղեմ քաղաքն է, որ այդ քաղաքը հիմնադրել է Մելքիսեդեկը՝ կառավարելով այն՝ որպես այդ քաղաք-պետության աշխարհիկ և հոգևոր տիրակալ.

«Մելքիսեդեկը կառուցեց Երուսաղեմը և այնտեղ թագավորեց» [12]*:*

Ոմանք Հին Կտակարանի պատմական և որոշ մեկնողական նյութերին անդրադարձել են՝ առավելապես հիմնվելով հրեա մեկնիչների աշխատությունների վրա, որտեղ կան թե՛ հավաստի, թե՛ կասկածահարույց տվյալներ: Ինչ վերաբերում է Սաղեմ քաղաքին, ապա այս հարցում հրեա ուսումնասիրողների կարծիքն ընդունվում է գրեթե միանշանակ:

Սաղեմը Երուսաղեմի հետ նույնացնելու մասին են խոսում հնագույն հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսը, ինչպես նաև հնագույն այլ և համեմատաբար ավելի ուշ շրջանի ուսումնասիրողներ (Աբեն-Եզրա, Կիմխի, Դելիչ, Կեիլ, Մորֆի, Բուշ և այլք):

«Հերոնիմոսը Եվանգեղոսին ուղղած հինգերորդ թղթում հիշատակում է, որ եբրայեցիներից շատերը և վարդապետները համարում են, որ այն (Սաղեմը) Երուսաղեմն է» [13]*:*

Աստվածաշունչ մատյանն էլ հստակ վկայում է այս մասին, քանզի հայտնի է, որ Սիոնը գտնվում է Երուսաղեմում, իսկ Սաղմոսերգուն Սաղեմը և Սիոնը տեսնում է նույն տեղանքում. ***«Նրա խորանը Սաղեմի մեջ է, և Նրա բնակարանը Սիոնի մեջ»*** [14]*:*

Եվ չնայած Սուրբ Գիրքը հիշատակում է «Սաղեմ» անվամբ այլ վայրեր ևս[15]*, սակայն, ըստ հետազոտողների, Մելքիսեդեկի Սաղեմը Երուսաղեմի հետ նույնացնելը գրեթե անվիճելի է:*

Այս վերջին Սաղեմն ընկած էր Աբրահամի ճանապարհին և Սոդոմից գտնվում էր մոտավորապես վեց ժամվա հեռավորության վրա:

Հավանական է, որ Աբրահամի ժամանակաշրջանից դարեր անց՝ Քամից սերված հեբուսացիները գրավել են Սաղեմը Մելքիսեդեկի սերունդներից՝ այն անվանելով իրենց նախահոր անվամբ, իսկ Դավիթ թագավորն այն գրավելով՝ դարձրել է իր թագավորանիստը և երկրի մայրաքաղաքը՝ վերանվանելով Երուսաղեմ:

«Երուսաղեմը (հիմք կամ խաղաղության բնակավայր)՝ այս աշխարհահռչակ քաղաքը, քաղաքների մեջ հնագույնը և նշանավոր Ավետյաց երկիրը, հնում կոչվում էր Հեբուս (Հեսու. 18:28)՝ հեբուսացիների նախահոր՝ Հեբուսի անվամբ: Սակայն, գտնում են, որ նրա հնությունը գալիս է դեռևս Աբրահամի ժամանակներից՝ նրա մեջ ենթադրելով Սաղեմը, որտեղ Աբրահամի օրոք թագավոր և առաջին քահանան էր Մելքիսեդեկը: Հեբուսը նվաճվեց Դավթի կողմից, ով դարձրեց այն իր թագավորության մայրաքաղաքը և հին քաղաքի հյուսիս-արևմուտ-

---

[12] Վարդան Արևելցի (Բարձրաբերդցի). Մեկնութիւն սաղմոսաց Դավթի. Յաժդարխան 1797թ., էջ 373:

[13] Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի Առաքելոյ, աշխ. Տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 140:

[14] Սղմ. 75:3:

[15] Ծննդ. 33:18:

քում կառուցեց պարիսպ կամ նոր քաղաք՝ Երուսաղեմ անվամբ։ Նման ձևով Երուսաղեմը դարձավ հրեաների մայրաքաղաքը»[16]։

Եթե Մելքիսեդեկն է եղել Սաղեմի հիմնադիրը, ինչին գրեթե ոչ ոք չի կասկածում, ապա պետք է, որ հենց նա էլ լիներ այն անձնավորությունը, ով Ադամի ոսկորները և գանգը թաղեց Գողգոթայում։ Դրա մասին անդրադարձ կա նաև մահմեդականների ավանդություններում.

«Մելքիսեդեկը հիշատակվում է նաև Ղուրանում։ Համաձայն մի իսլամական լեգենդի, հենց նա էր, որ Ադամի մարմինը հուղարկավորության համար տարվ Երուսաղեմ։ Եվ դա եղավ ջրհեղեղից հետո»[17]։

Մելքիսեդեկի անվան մեկնությունը

Սաղեմի մասին որոշ պատկերացում կազմելով՝ այժմ անցնենք Մելքիսեդեկ անվան բացատրությանը. ***«Մելքիսեդեկը նախ թարգմանվում է արդարության թագավոր, ապա՝ թագավոր Սաղեմի, այսինքն՝ թագավոր խաղաղության»[18]։***

Մելքիսեդեկ անվանումն ըստ ուսումնասիրողների՝ սեմական ծագում ունի և կազմված է «մելքի» և «սեդեկ» բառերից.

«Մելքի՝ թագավոր, սեդեկ՝ արդարություն, նաև՝ թագավոր խաղաղության, որ նշանակում է թագավոր Սաղեմի»[19]։

Այդ անվանումները՝ ***«արդարության թագավոր»*** *և* ***«խաղաղության թագավոր»,*** *չնայած որ, ըստ մեկնիչների, լիովին համապատասխանում են Մելքիսեդեկի կերպարին, սակայն իրականում վերագրվում են Փրկչին։ Մելքիսեդեկն էլ, ըստ առաքյալի, նախակերպարն էր մեր Տեր Հիսուս Քրիստոսի, Ով էլ իրականում Արդարության Թագավոր[20] է և Խաղաղության Տեր[21]։*

«Պողոս առաքյալը 7-րդ գլխի 3-րդ համարում ցույց է տալիս չորս նմանություն Մելքիսեդեկի և Տեր Հիսուս Քրիստոսի միջև՝ առաջինին ներկայացնելով որպես Աստծո Որդու նախակերպար։ Այդ նմանությունները հետևյալն են՝ Մելքիսեդեկի բուն անունը, որ նշանակում է «արդարության թագավոր». այն, որ նա եղել է Սաղեմի թագավոր, ինչը նշանակում է «խաղաղության թագավոր». այն, որ նա եղել է Բարձրյալ Աստծո քահանա. այն, որ դիմավորելով Աբրահամին՝ նա օրհնեց նրան. և վերջապես այն, որ Աբրահամը նրան տասանորդ տվեց իր ավարի ամենալավ մասից»[22]։

---

16 Энциклопедия Библейская, (труд и издание архимандрита Никифора, М. 1891), Москва, 2005, ст. 274.

17 Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 39.

18 Եբր. 7:2:

19 Վարդան Արևելցի (Բարձրաբերդցի). Մեկնութիւն սաղմոսաց Դավթի, Յաժդարխան 1797թ., էջ 373:

20 Զաք. 9:9:

21 Ը Թես. 3:16:

22 Архиепископ Аврекий (Таушев). Четвероевангелие / Апостол. Москва 2012 ст. 741.

Քահանայություն

Այժմ այն մասին, որ նա՝ Մելքիսեդեկը Բարձրյալ Աստծո քահանա էր: Մելքիսեդեկի խորհրդավորության մասին է խոսում և այն փաստը, որ Սուրբ Գրքում քահանա բառը վերագրվում է առաջին անգամ հենց Մելքիսեդեկին. ***«որովհետև ինքը բարձրյալ Աստծու քահանան էր»***[23]*:*

Ո՛չ Ջրհեղեղից առաջ Աբելի, ո՛չ էլ Ջրհեղեղից հետո Նոյի համար, ովքեր քահանայագործելով զոհ էին մատուցում Աստծուն, նման անուն, այսինքն՝ «քահանա», չի հնչել: ***«Մելքիսեդեկն առաջինն է, որ Սուրբ Գրքում անվանվում է «քահանա», ընդսմին՝ Բարձրյալ Աստծո քահանա»*** [24]*:*

Միայն Սուրբ Գրքի տվյալների վրա հենվելով՝ շատ դժվար կլինի պատասխանել այն հարցին, թե որտեղից ի հայտ եկավ Քանանում Աստծո քահանա, այն էլ՝ մինչ Աբրահամի հավատքի գալը:

Նշեցինք, որ այս հարցը մինչ օրս էլ չի կորցրել իր արդիականությունը: Սակայն մի բան հստակ է. քահանա կարող է լինել ոչ թե կուռքերի, այլ միայն ճշմարիտ Աստծո սպասավորը. ***««Նա Բարձրյալ Աստծո քահանա էր»: Հատկապես «Բարձրյալ Աստծո» բառերով Մելքիսեդեկը տարբերվում է այլ աստվածությունների ծառայողներից (քուրմերից, մոգերից), ի մասնավորի «քահանա»-ով՝ մյուս թագավորներից և մանավանդ՝ Աբրահամից, քանզի չնայած սա քահանայագործում էր, սակայն քահանա չէր կոչվում»*** [25]*:*

Սակայն Մելքիսեդեկի մասին մեկնություններում հանդիպում ենք նաև այնպիսի կարծիքի, ըստ որի՝ Մելքիսեդեկը համարվել է հեթանոսների քահանա.



«Մելքիսեդեկը հրեաների քահանա չէր, այլ՝ հեթանոսների, այդպես և Տեր Քրիստոսը ոչ միայն հրեաների, այլև համայն մարդկության համար Իրեն զոհաբերեց Աստծուն»[26]*:*

Սա, իհարկե, այդպես ասվել է զուտ փոխաբերական իմաստով. մեկնիչներից ոմանք, ասելով «հեթանոսների», նկատի են ունեցել, որ ոչ թե քահանա էր հրեական օրինապաշտության, այլ ուղղակի մի այլ՝ ուրիշ որակի.

«Մելքիսեդեկը յուղով չի օծվել քահանայության, ինչպես Ահարոնը, ոչ էլ արյունոտ զոհեր է մատուցել. նա հեթանոսների քահանայապետ էր, և Աբրահամին էլ օրհնեց հաց ու գինով»[27]*:*

Չէ՞ որ Պողոս առաքյալը նույնպես անվանվում էր «հեթանոսների» առաքյալ, ինչը, բնականաբար, չի նշանակում, որ նա հեթանոսական քուրմ էր. ուղղակի նա ոչ թե ղևտա-

---

[23] Ծննդ. 14: 18- 20:

[24] Архиепископ Аревкий (Таушев). Четвероевангелие / Апостол. Москва 2012, ст. 741.

[25] Святитель Филарет (Дроздов, 1783-1867), “Толкование на книгу Бытия”, Москва, 2004г., ст. 289.

[26] Псалтирь с объяснением значения каждого стиха, блаженного Феодорита епископа Кирского. Москва 1997, ст. 540.

[27] Святитель Афанасий Великий. Творения. Том 4. Москва 1994, ст. 352.

կան օրինապաշտությունից քրիստոնեության եկած հրեաների էր քարոզում, այլ հեթանոսությունից քրիստոնեական հավատքի եկած տարբեր ժողովուրդների առաքյալ էր։

Նաև հարկ է հաշվի առնել, որ այս մեջբերման մեջ ասելով «հեթանոսների քահանա»՝ միևնույն ժամանակ չի ժխտվում Մելքիսեդեկի՝ Քրիստոսի նախակերպար լինելը։ Իսկ կռապաշտ մեկի համար նման բան ասելը միանգամայն անտրամաբանական կլիներ։

*Եվ օրհնելով Աբրահամին՝ նա այդ չարեց որևէ կուռքի անվամբ, այլ այն Աստծո, ում երկրպագում էր նաև Աբրահամը. **«Օրհնյալ է Աբրամը բարձրյալ Աստծո կողմից, որ ստեղծեց երկինքն ու երկիրը։ Օրհնեալ է բարձրյալն Աստված, որ քո թշնամիներին մատնեց քո ձեռքը»** [28]։*

Հաց և գինի

*Իսկ այժմ տեսնենք, թե ի՞նչ խորհուրդ ունի հացն ու գինին , որ Մելքիսեդեկը մատուցեց Աբրահամին. **«Սաղեմի արքայ Մելքիսեդեկը հաց ու գինի դուրս բերեց նրան»**[29], քանզի այդ նվիրաբերումն, ինչպես կտեսնենք, Մելքիսեդեկի՝ ճշմարիտ Աստծո քահանա լինելու ևս մի խորհրդանիշ է։*

Ոմանք ասում են, որ Մելքիսեդեկի մատուցած հացն ու գինին պատերազմից վերադարձող Աբրահամին և նրա զորքին կազդուրելու համար էր։ Սակայն դա այնքան էլ համոզիչ չէ, քանի որ այն մեծաքանակ ավարը, որ բերում էր իր հետ Աբրահամը, իրերից բացի, բնականաբար, պարունակում էր նաև ընտանի կենդանիներ և բազմապիսի ուտելիքներ, քանի որ մեծ թվով թագավորների կողոպտածն էր ավար առել, ինչով և Աբրահամը լիովին կարող էր սննդի խնդիրները լուծել։



Կարծիք կա նաև, որ դա հաղթողին դիմավորելու և մեծարելու արարողակարգ էր՝ այսօրվա «աղուհացի» նման։

Այս տարբերակը կարծես ավելի հավանական է, սակայն ինչ նպատակով էլ դա արված լիներ տվյալ պահին, դրա տակ թաքնված էր մի մեծ խորհուրդ, քանզի դա Նորկտակարանյան Սուրբ Հաղորդության նախատիպն էր։

*Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Շնորհք արքեպիսկոպոսը, տվյալ դեպքում չբացառելով հացի և գինու՝ հանդիսավոր խորհրդանիշ լինելը, միաժամանակ չի ժխտում Սուրբ Հաղորդության խորհրդի ակնարկումը. **«Նշանակալից է նրա՝ հաց և գինի մատուցելն Աբրահամին։ Ըստ երևույթին, իրար անծանոթները ծանոթանում և մտերմանում են, այսինքն՝ իրար հետ հաղորդվում են հաց ու գինով՝ սրբազան տարրերը մեր Սուրբ Հաղորդության, որ***

[28] Ծննդ. 14:19:
[29] Ծննդ. 14:18:

Քրիստոս Քահանայապետի խոսքով և օրհնությամբ վերածվում են «Մարմնի և Արյան», որոնցով արժանանում են հավիտենական կյանքի»[30]:

Աբրահամը, մեծ երկյուղածությամբ ընդունելով այդ նվիրաբերումն, այն չանաց արժևորել մեծաքանակ գանձերի մատուցմամբ, ինչը ևս ընդգծում է, որ դա չէր կարող ուղղակի պատերազմից վերադարձող զորքի համար կազդուրիչ սնունդ լինել և ոչ էլ՝ հանդիսավոր ընդունելության նշան. այլ անգին մի խորհուրդ էր, որին ոչնչով հատուցել հնարավոր չէր. այն գանձերը, որ մատուցեց Աբրահամը, միայն խորհրդանշական բնույթ էին կրում.

«Մելքիսեդեկը, լինելով քահանա, հաց և գինի մատուցեց, որը ստվերաբար օրինակ եղավ խորհրդավոր պատարագին, որ սահմանեց Քրիստոսը՝ հացի և գինու տեսքով»[31]:

Իհարկե, խորհրդանշական է, որ Քրիստոսի մարմնավոր ծննդից մոտ 2200 տարի առաջ ապրած քահանան արդեն քրիստոնեական շրջանի քահանաների առարյուն զոհաբերության՝ Սուրբ Պատարագի խորհրդի նախատիպով է ի հայտ գալիս Սուրբ Գրքում, այլ ոչ՝ այդ ժամանակ ընդունված կենդանիների զոհաբերումով. ***«Նա հաց և գինի նվիրեց Աբրահամին: Եվ Տերն էլ նույնը բաշխեց և ոչ անբան կենդանիներ»***[32]: *Սբ. Կիպրիանոս Կարթագենացին իր «Տիրոջ բաժակի խորհրդավորության մասին» աշխատությունում հաստատում է ընդունված տեսակետն առ այն, որ Մելքիսեդեկ քահանայի մատուցածը մարգարեական խորհուրդ ուներ. այդ մարգարեությունը պիտի իրականանար ավելի քան երկու հազար տարի հետո.*

«Մելքիսեդեկ քահանայի կերպարում նախապատկերված էր Տիրոջ զոհաբերության խորհուրդը... Մելքիսեդեկը Բարձրյալ Աստծո քահանան էր, որ բերեց հաց ու գինի և օրհնեց Աբրահամին: Քանզի ո՞վ է ըստ առավելության Բարձրյալ Աստծո Քահանա, եթե ոչ Մեր Տեր Հիսուս Քրիստոսը, Ով Հայր Աստծուն զոհաբերություն մատուցեց՝ այնպիսի զոհ, ինչպիսին բերեց Մելքիսեդեկը՝ հաց և գինի, այսինքն Իր Մարմինը և Արյունը» [33]:

Եվ ընդհանրապես, Մելքիսեդեկի անձի խորհրդավորությանն անդրադարձող գրեթե բոլոր մեկնիչները միակարծիք են. Աբրահամին հաց ու գինի մատուցելու ներքո նրանք Սուրբ Հաղորդության խորհուրդն են տեսնում.

«Մելքիսեդեկի հաց ու գինու մեջ շատերը տեսնում են Քրիստոսի Մարմնի ու Արյան խորհուրդը»,- *նկատում է նաև Ֆիլարետ եպիսկոպոսը* [34]:

Հետաքրքիր է, որ Աստվածաշնչյան թարգմանություններից մեկում գրված է ոչ թե ***«հաց ու գինի դուրս բերեց»****, այլ* ***«հաց ու գինի հյուրասիրեց»****, ինչը կնշանակեր, որ Աբրահամն անձամբ է եկել Սաղեմ՝ տասանորդը մատուցելու և օրհնություն ստանալու Մելքիսեդեկից: Եվ Մելքիսեդեկն էլ, իր թագավորական պալատում գահից վեր կենալով, ընդառաջ է գնացել նրան:*

---

30 Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Աստուածաշնչական Սուրբեր, Երևան 1997թ.,էջ 52:

31 Միքայէլ վարդապետ Չամչեանց, Մեկնութիւն Սաղմոսաց հտ 8, Ի Վանս Սրբոյն Ղազարու, Վենետիկ 1820թ.,էջ 125:

32 Վարդան Արևելցի (Բարձրաբեղցի),Մեկնութիւն սաղմոսաց Դավթի, Յաժդարխան 1797թ., էջ 373:

33 Священномученик Киприан Карфагенский, Таинство единой Церкви, Москва 2008, ст. 328, 329.

34 Святитель Филарет (Дроздов, 1783-1867), “Толкование на книгу Бытия”, Москва, 2004г., ст. 288-292.

Մելքիսեդեկն օրհնեց Աբրահամին

*Ծննդոցում, ինչպես ասվեց, Աբրահամը գլուխ խոնարհեց Մելքիսեդեկի առջև՝ օրհնության ակնկալիքով, և **«Նա օրհնեց Աբրահամին»** [35]:*

Աբրահամը երբեք իր գլուխը չէր խոնարհի Մելքիսեդեկի առջև, ինչպիսի մեծության և հեղինակության էլ նա արժանացած լիներ, եթե Մելքիսեդեկն ընդամենը հեթանոսական կուռքերի սպասավոր քուրմ լիներ: Իսկ նրա օրհնությունն ընդունելն ապացուցում է, որ Մելքիսեդեկը քահանա էր այն Աստծո, Ում հավատում և ծառայում էր նաև ինքը՝ Աբրահամը.

***«Մելքիսեդեկն ամենաբարձր Աստծո, Եհովայի անունից, որին նա երկրպագում էր, ինչպես և Աբրահամը, օրհնեց Աբրահամին»** [36]:*

*Ոմանք «օրհնեց» բառին, ինչպես հացի և գինու պարագայում, վերագրում են տարբեր իմաստներ՝ ողջույնի, բարեմաղթանքների և այլն, միայն ոչ՝ բուն օրհնության: Սակայն բազմաթիվ են Մելքիսեդեկի օրհնությունը որպես իսկապես քահանայական օրհնություն ընդունելու հիմնավորումները. Մելքիսեդեկը **«Բարձրյալ Աստծո քահանա էր»**, և դա արդեն խոսում է այն մասին, որ օրհնելու իրավունք ուներ և Աբրահամին օրհնեց հենց այն Աստծո անունով, Ում քահանան էր ինքը, և Ում պաշտում էր Աբրահամը: Սակայն «օրհնության» բառն, իսկապես, տարբեր իմաստներ ունի. այլ է այն օրհնությունը, որով Մելքիսեդեկն օրհնեց Աբրահամին, և այլ է այն, երբ Սաղմոսերգուն ասում է. **«Օրհնեցեք Տիրոջը բոլոր ազգեր, և օրհնեցեք Նրա անունը»**:*

Սաղմոսում «օրհնելը» նշանակում է գովել, փառաբանել, գոհություն հայտնել և այլն: Իսկ քահանայական օրհնությունն՝ Աստծո անվամբ երկնային պարգև, շնորհ է, որ տրվում է օրհնվողին.

***««Նա օրհնեց»: Առավելապես այս օրհնության իրավունքն իր մեջ պարունակում է Մելքիսեդեկի քահանայությունը: Այս կարգավիճակով կանգնելով Աստծո և մարդու միջև որպես միջնորդ՝ նա օրհնություն է առաքում առ Աստված՝ որպես գոհության պատարագ և տալիս է այն մարդուն՝ որպես շնորհի պարգև»** [37]:*

Տասանորդ

*Աբրահամն էլ, ընդունելով նրան որպես Տիրոջ քահանա, օրհնություն ստանալով, փոխարենն ավարից տասանորդ տվեց նրան. **«Աբրամը նրան տասանորդ տվեց ամեն ինչից»** [38]:*

Բնականաբար, թե՛ Աբրահամի ժողովուրդը և թե՛ նրան հարող դաշնակիցները պետք է գլուխ խոնարհեին նրա՝ Մելքիսեդեկի առջև՝ որպես Բարձրյալի քահանայի՝ նրանից օրհնություն ակնկալելով.

---

35 Ծննդ. 14.19-20:

36 Զենոն Կոսիդովսկի, «Բիբլիական Ավանդապատումներ», Երևան 1970 թ., էջ 58:

37 Святитель Филарет (Дроздов, 1783-1867), “Толкование на книгу Бытия”, Москва 2004г., ст. 289.

38 Ծննդ. 14. 18-20:

«Նրա քահանայությունն ընդունեց ոչ միայն Աբրահամը, այլև նրանք, որոնց ունեցվածքից տասանորդ տրվեց: Այս ամենից պարզ է դառնում, որ Մելքիսեդեկը մեծ ճանաչում էր վայելում» [39]:

Եթե Իսահակի օրհնությունն այնքան բարեբեր էր, որ Հակոբը խաբեությամբ մի կերպ այն ստացավ, իսկ Եսավը լացով ու աղաչանքով իսկ չարժանացավ դրան, ապա իր մեջ ի՛նչ զորություն պիտի կրեր Մելքիսեդեկի օրհնությունը, որով օրհնվեց հենց Աբրահամը:

Այդ ժամանակներում բազմաթիվ փոքր թագավորություններ կային Քանանում, սակայն մեկն էր միայն, որ առանձնանում էր իր ինքնատիպությամբ:

Դա Սաղեմի թագավորությունն էր, որտեղ բնակվում էր երկինքն ու երկիրը ստեղծող բարձրյալ Աստծուն հավատացող և պաշտող ժողովուրդ: Աբրահամն էլ, բնականաբար, ոչ թե Մելքիսեդեկի արքայական մեծության, այլ զուտ նրա քահանայական վեհության համար էր, որ իր ավարից տասանորդ բաժին հանեց նրան.

«Նահապետի կողմից Սաղեմի արքային ցուցաբերած այսքան մեծագույն հարգանքի պատճառը պետք է համարել ոչ թե թագավորական արժանիքը, որին Աբրահամը կարիք չուներ ենթարկվելու՝ լինելով թագավորներին հաղթող և փրկիչ, այլ հատկապես՝ քահանայությունը և օրհնությունը՝ ճշմարիտ Աստծո անվամբ» [40]:

*Տասանորդի թեմային անդրադառնում է նաև Պողոս առաքյալը՝ եբրայեցիներին ուղղված նամակում և խորհրդավոր մտքեր արտահայտում այդ կապակցությամբ. «**Եվ ինչպես խոսքի կարգ է ասել, Ղևին իսկ, որ տասանորդներ էր առնում, Աբրահամի միջոցով տասանորդ տալու ենթարկվեց, որովհետև նա դեռ իր հոր կողում էր, երբ Մելքիսեդեկը նրան ընդառաջ ելավ»*** [41]:

Հայտնի է, որ քահանաների դասն է տասանորդ ընդունում: Սակայն հրեական քահանայությունն այդ ժամանակ դեռ գոյություն չուներ, քանի որ, ըստ Պողոս առաքյալի, այդ քահանայության նախահայրը՝ Ղևին, այդ ժամանակ դեռ գտնվում էր Աբրահամի կողում, այսինքն՝ դեռ լույս աշխարհ չէր եկել:

Եվ երբ Աբրահամը տասանորդ տվեց Մելքիսեդեկին, ապա ըստ առաքյալի՝ այնպես ստացվեց, որ Աբրահամի մեջ եղող Ղևին էլ պարտադրված եղավ այդ տասանորդը տալ, ինչով էլ հաստատեց, որ Մելքիսեդեկի քահանայությունը շատ ավելի բարձր էր ղևտական քահանայական կարգից.

«Աբրահամն ինքն էլ մեծ խոստում ուներ Աստծուց, նահապետն էր Աստծո ընտրյալ ժողովրդի և միևնույն ժամանակ ղևտական քահանայության, և այնուամենայնիվ, Մելքիսեդեկն օրհնեց նրան: Այստեղից բնական հետևություն, որ Մելքիսեդեկը մեծ էր Աբրահամից և նրանից ծագած ղևտական քահանայությունից» [42]:

Իսկ եթե Ղևին և ամբողջ ղևտական քահանայությունը գլուխ է խոնարհում Մելքիսեդեկի քահանայության առաջ, ապա ոմանց մոտ հարց է առաջանում. մի՞-

---

[39] Энциклопедия Библейская, труд и издание архимандрита Никифора, Москва 2005, ст. 466.

[40] Святитель Филарет... ст. 290.

[41] Եբր. 7:9-10:

[42] Архиепископ Аревкий (Таушев). Четвероевангелие / Апостол. Москва 2012 ст. 742.

թե Քրիստոսն էլ տասանորդ մատուցեց Մելքիսեդեկին. չէ՞ որ Հակոբ նահապետի որդին՝ Հուդան, ում ճյուղից պիտի գար Փրկիչը, նույնպես Աբրահամի մեջ էր։

«Ոմանք պատասխանում են, թե այս գործը կապ չունի Քրիստոսի հետ, քանզի տասանորդ վերցնող Մելքիսեդեկը Քրիստոսի օրինակն էր և Նրա գերակայությունն էր նախախորհրդանշում, դրա համար էլ ի դեմս Մելքիսեդեկի՝ Նա է տասանորդ վերցնողը և չէր կարող Աբրահամի միջոցով տասանորդ տվող լինել։

Նաև Ղևին և այլք կային իրենց հոր՝ Աբրահամի մեջ, քանզի նրանք Աբրահամի մեջ էին ամբողջապես, իսկ Քրիստոսը միայն նյութապես կամ ըստ մարմնական գոյության, որի կազմությունը հորինվեց աստվածային զորությամբ, և այսպիսի ծնունդը վեր է բնության օրենքներից, ինչպես նաև տասանորդի օրենքից» [43]։

Հովհան Ոսկեբերանն էլ, խոսելով տասանորդի դրվագի մասին, նույն կերպ է մեկնաբանում այդ հատվածը՝ ապացուցելով, որ Մելքիսեդեկը շատ ավելի բարձր էր Աբրահամից։

Սակայն այս համարը նորից վերաբերում է առավելապես Քրիստոսին, այսինքն՝ քրիստոնեական քահանայական կարգին.

«Նա տասանորդ տվեց, ինչը հարկ էր տալ քահանային, իսկ նա էլ օրհնեց, ինչը հատուկ է բարձրի համար։ Այդ գերակշռությունը տարածվում է նաև սերունդների վրա» [44]։

Հրեաները, չցանկանալով ընդունել այն փաստը, որ Մելքիսեդեկն առավել բարձր է Աբրահամից, տասանորդի հետ կապված՝ Սուրբ Գրքին հակասող կարծիքներ են հայտնում, որ իբր ոչ թե Աբրահամն է տասանորդ տվել Մելքիսեդեկին, այլ ընդհակառակը՝ Մելքիսեդեկն է տասանորդ տվել Աբրահամին։ Իբրև թե երբ այդ թագավորները հարձակվեցին և ավարի մատնեցին Սոդոմն ու Գոմորը, նրանք այդ ժամանակ հարձակվեցին նաև Սաղեմի վրա և այնտեղից էլ մեծ քանակությամբ ավար տարան իրենց հետ, և երբ Աբրահամը հաղթեց նրանց և ամբողջ թալանը ետ բերեց, Մելքիսեդեկին էլ ետ վերադարձրեց Սաղեմից թալանվածը, իսկ Մելքիսեդեկը իբր հենց այդ ետ վերադարձվածից տասանորդ տվեց Աբրահամին. ***«Այդ բանը պնդում են հրեաները, որպեսզի իրենց նահապետը Մելքիսեդեկից փոքր չերևա։ Սակայն ոչ միայն Առաքյալն է վերջ դնում այս տարակուսանքին, այլև պատմությունը, քանզի ասում է, որ Մելքիսեդեկն էր քահանա, իսկ Աբրահամը՝ ավարը ետ բերող, և ըստ կարգի՝ ավար բերողը պետք է տասանորդ տա քահանային։ Եվ նորից, Աբրահամը երդումով հրաժարվեց սոդոմացիների արքային պատկանող որևէ բան իր հետ վերցնելուց և ինչո՞ւ պիտի ձեռք մեկներ Մելքիսեդեկի տված տասանորդին, ինչի մասին նույնիսկ Գիրքը չի պատմում, թե իբր նրա երկիրը թշնամու կողմից ասպատակության և կողոպուտի է ենթարկվել»*** [45]։

---

[43] Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի Առաքելոյ», աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 152:

[44] Св. Иоанн Златоуст. Полное собрание творений. Том 12, книга 2, Толкование на послание к евреям. Минск 2005 г., ст 1006.

[45] Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի Առաքելոյ, աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 141:

Հրեաներն ուղղակի, չընդունելով Փրկչին որպես Քրիստոսի, չեն կարողանում պատկերացնել, որ Մելքիսեդեկը ոչ միայն իր սեփական անձով, այլ հատկապես իր նախակերպար լինելով է, որ մեծ է Աբրահամից և ղևտական քահանաներից.

«Մելքիսեդեկը փառավոր է հրեական քահանաներից և ոչ միայն նրանցից, այլև բուն նահապետից: Եթե նախակերպարը գերազանցում է նրանց, ապա ինչքան առավել՝ ճշմարիտ Քահանայապետ Քրիստոսը կգերազանցի: Այսպիսով, տեսնում էք, թե ի՛նչ մեծ է, այսինքն՝ որքա՛ն է գերազանցում նա, որին նվերներ մատուցեց ոչ թե հասարակ մարդը, այլ՝ Աբրահամի նման մեծ նահապետը» [46]:

Հենց Պողոս առաքյալն է խոսում այն մասին, որ Սաղեմի խորհրդավոր արքան մեծ էր Աբրահամ նահապետից. ***«Արդ, տեսե՛ք, թէ ինչպիսի մեկն էր սա, որին Աբրահամ նահապետն էլ տասանորդներ տվեց ավարից... Իսկ նրանց ազգատոհմից չհամարվածը տասանորդ վերցրեց Աբրահամից և օրհնեց նրան, ով ընդունել էր խոստումը: Արդ, ամեն հակաճառությունից վեր է այն, որ օրհնողն ավելի բարձր է, քան օրհնվողը» [47]:***

Շատերն են ընդունում, որ Մելքիսեդեկն Աբրահամից մեծ է. այդպես համարելով՝ մնում են ուղղափառության սահմաններում՝ հակառակ աղանդավորական կարծիքների, ինչի մասին կխոսվի ստորև:

«Աբրահամը նրան տասանորդ չէր տա, եթե չիմանար, որ նա անհամեմատ բարձր է իրենից» [48]:

«Աբրահամ նահապետը ներկայացվում է որպես օրհնություն ընդունող և ավարից տասանորդ բերող, որպեսզի ցույց տա, որ նահապետն ամեն ինչով զիջում է նախակերպարին» [49]:

«Մենք համաձայն ենք և առանց հակաճառության խոստովանում ենք, որ օրհնողը մեծ է օրհնվողից: Հետևաբար, Մելքիսեդեկը՝ Քրիստոսի նախակերպարը, մեծ է Աբրահամից» [50]:

Իհարկե, Մելքիսեդեկը նախակերպար էր, դրանով էլ մեծ էր: Դա չի նշանակում, որ նա այլ արժանիքներ չուներ. չէ՞ որ հենց Տիրոջ նախակերպարը հարկ էր, որ լիներ շնորհազարդված մեկը:

Եվ Մելքիսեդեկն էլ բարձր հոգևոր արժանիքներով զարդարված մեկն էր: Այդ մասին է խոսում և այն ավանդությունը, որ ըստ մեկնիչների՝ Իսահակի կին Ռեբեկան՝ Աբրահամի հարսը, իր հղիության խնդիրները պարզելու նպատակով հարցում արեց ոչ թե Աբրահամին, այլ գնաց Սաղեմի արքա Մելքիսեդեկի մոտ և նրանից լսեց մարգարեական խոսքերն իր ծննդաբերության վերաբերյալ. ***«Քառասուն տարեկանում Իսահակն առավ Ռեբեկային, որը վաթսուն տարեկանում***

---

[46] Архиепископ Аревкий (Таушев),Четвероевангелие / Апостол, Москва 2012, ст. 544.

[47] Եբր. 7:4,7:

[48] Ефремъ Сиринъ, Творения, Том 6, Толкование на книгу Бытия, Москва 1995, ст. 277.

[49] Блажэнный Феодорит, Епископ Киррский, Толкование на четырнадцать Посланий святого апостола Павла, Москва 2013, ст. 574.

[50] Феофилакт Болгарский, Толкование на деяния и послания святых апостолов, Том 3, Москва, 2011. ст. 546.

հղիացավ և գնաց հարցնելու Մելքիսեդեկին. վերջինս նրան ասաց. «Քո արգանդում երկու ազգ կա, երկու ժողովուրդ»» [51]:

Այսինքն, Մելքիսեդեկի առավելությունը ոչ միայն քահանայության, այլև իր բարձր շնորհազարդության մեջ էր, քանզի ուներ թե՛ մարգարեական և թե՛ պայծառատեսության շնորհ:

Մելքիսեդեկը և Սաղմոսների գիրքը

Մելքիսեդեկի մասին Աստվածաշնչյան մյուս հիշատակությունը Սաղմոսների գրքում է. այստեղ խոսվում է հատկապես քահանայության մասին, ինչը նորից մեսիական բնույթ է կրում. ***«Երդվեց Տերը և չի զղջա, որ դու հավիտենական քահանա ես՝ ըստ Մելքիսեդեկի կարգի»*** [52]:

Սաղմոսի այս համարն առեղծվածային Մելքիսեդեկի անձին էլ ավելի խորհրդավորություն է տալիս.

«Նրա անունը և խորհրդավորությունը, ինչով նա հայտնվեց և նորից անհայտացավ Աբրահամի պատմությունում, նրան կարևոր՝ կարծես գերբնական անձնավորություն դարձրեցին: Ահա թե ինչու 109-րդ սաղմոսում նկարագրելով Մեսիային՝ որպես հավիտենական քահանայի՝ Նրան անվանեց քահանա Մելքիսեդեկի կարգի» [53]:

Չէ՞ որ նշված «Դու»-ն վերաբերում է Աստծո Որդուն՝ Փրկչին. ահա թե ինչ մեծ խորհուրդ ունի Մելքիսեդեկի կարգի քահանայությունը: Չէ՞ որ այստեղ Տիրոջ՝ Քրիստոսի մասին է ասվում, որ Նա գալու էր աշխարհ հատկապես հենց այդ քահանայական կարգով. ***«Ստացվում է, որ մինչ Հիսուս Քրիստոսն՝ արդեն գոյություն ուներ մի ինչ-որ քահանայական կարգ, ինչը վերագրվում է Աստծո Որդուն»*** [54]:

Տարածված մի կարծիք է ձևավորվել. երբ խոսվում է մինչքրիստոնեական շրջանի ճշմարիտ հավատքի՝ աստվածապաշտության մասին, շատերը համաձայն են, թե խոսքն անպայման հրեական՝ մովսիսական կրոնի մասին է: Քանզի կարծում են, որ այդ ժամանակաշրջանում աստվածապաշտ են եղել միայն հրեաները, իսկ մնացած ազգերը եղել են հեթանոս և կռապաշտ: Սակայն հենց հրեաների կողմից գրված Աստվածաշունչ մատյանն է տեղեկացնում, որ մինչ հրեա ազգի ձևավորվելն՝ արդեն եղել է Արարիչ Աստծուն պաշտող քահանայական կարգ, որ չնայած լիովին տարբերվում է շատ ուշ շրջանում առաջացած հրեական քահանայությունից, սակայն վերաբերում է նույն հավատքին . ***«...սա ինչ-որ հատուկ, արտակարգ քահանայություն է, որը տարբերվում է Ահարոնի քահանայական ճյուղից»*** [55]:

---

51 Վարդան Արևելցի, Տիեզերական Պատմություն, Երևան, 2001, էջ 46-48:

52 Սաղմ. 109:4:

53 Архиепископ Аревкий (Таушев)... ст. 741.

54 Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 3.

55 Мифы народов мира, энциклопедия 2, К-Я, Москва, 1992, ст. 135.

Թե այն ինչով է հատուկ և ինչով է տարբերվում հրեական քահանայությունից, բացատրում է Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը.

«Այդ Մելքիսեդեկը արդար այր էր և ճշմարտապես իր մեջ կրում էր Աստծո կերպարը: Շարժվելով մարգարեական Հոգով՝ նա խորհեց այդ ժամանակ իր կողմից Աստծուն բերել ապագա ընծաները Քրիստոսի կողմից՝ հացով և գինով մեծարել Աստծուն՝ նմանվելով ապագա Քրիստոսին: Քանի որ հրեաների մոտ Ահարոնյան կարգը զոհ էր մատուցում ոչ հաց ու գինի, այլ հորթեր և գառներ՝ փառավորելով Աստծուն արյունոտ զոհերով, ապա Աստված Հիսուսին, որ պիտի ծնվեր Կույս Մարիամից, բացականչում է խոսքերով. «Դու քահանա ես հավիտյան Մելքիսեդեկի կարգի», այլ ոչ Ահարոնի կարգի, որ ծառայում էր հորթերով, գառներով և արյունոտ զոհաբերություններով, այլ դու քահանա ես հավիտյան՝ ըստ Մելքիսեդեկի կարգի. հացով և գինով ես կատարում ընծայաբերումը» [56]:

Ղևտական քահանայությունն անկատար էր և ժամանակավոր. այն ընդամենը դաստիարակի դեր ուներ. պիտի օրենքի և ծեսերի միջոցով փրկության անհնարինությունն ի ցույց դներ և այդ անելանելի վիճակից դուրս գալու ելք ցույց տար՝ հավաստելով, որ պետք է ոչ թե կենդանիների զոհաբերությամբ հաճելի լինել Աստծուն, այլ ամբողջ էությամբ սևեռվել Աստծո Գառան զոհաբերության բազմաթիվ մարգարեությունների վրա, որոնցից մեկն էլ հենց Մելքիսեդեկի մատուցած հացն ու գինին էր:

Եվ այսպես, Մելքիսեդեկը մարդկության պատմության մեջ իսկապես մեծ, հզոր և առեղծվածային անձնավորություն էր: Բայց այդ ամենով հանդերձ՝ նրա ամենամեծ դերակատարումը պատմության ասպարեզում Տեր Հիսուս Քրիստոսի խորհրդանիշը լինելն էր.

«Քրիստոսն է ճշմարիտ Մելքիսեդեկը, որ հավիտյան քահանայություն ունի, Որի քահանայության ստվերն էր Մելքիսեդեկը» [57]:

Մելքիսեդեկի մասին Եբրայեցիներին ուղղված նամակից

Ընդգծեցինք, որ Հինկտակարանյան տեղեկությունները Մելքիսեդեկին ներկայացնում են որպես եզակի արտասովոր անձնավորություն: Բայց այն, ինչ ավելացնում է նրա մասին Պողոս առաքյալը, արդեն իսկ առեղծվածային Մելքիսեդեկին ի ցույց է դնում որպես մի գերբնական անձի. ***«Նա անհայր, անմայր էր, առանց ազգատոհմի. ո՛չ օրերի սկիզբ ուներ և ո՛չ կյանքի վախճան. նմանվելով Աստծու Որդուն՝ նա կայ ու մնում է մշտնջենապես քահանա»*** [58]:

---

[56] Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Том 10, книга 2, Москва 2004 г., стр. 899.

[57] Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի Առաքելոյ, աշխ. Տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պոլսեցւոյ, հատոր 3, Վենետիկ, 1812թ., էջ 143:

[58] Եբր. 7:3:

Այն, որ Մելքիսեդեկի մասին ասվում է, թե նա ո՛չ հայր ուներ, ո՛չ մայր, ո՛չ ազգատոհմ, կարելի էր հասկանալ, որ նա միգուցե որբ է եղել, սակայն այն, որ նա չուներ ո՛չ օրերի սկիզբ և ո՛չ կյանքի վախճան, նրա կարգավիճակը միանգամայն անբացատրելի է դարձնում: Եվ այս ամենը կարծես խոսում է այն մասին, որ Մելքիսեդեկն ընդհանրապես մարդկային ցեղին չի պատկանել, այլ եղել է մի արտասովոր էություն, ում վերագրված են աստվածային հատկություններ: Սա է պատճառը, որ Մելքիսեդեկի մասին կան տարաբնույթ, տարատեսակ և նույնիսկ ամենաանհավանական ընկալումներ և մեկնություններ.

«Ինչի՞ համար Առաքյալը, հիշելով Մելքիսեդեկի մասին, ասաց, որ նա անհայր և առանց ազգատոհմի է և չունի ո՛չ օրերի սկիզբ և ո՛չ կյանքի վախճան: Չէ՞ որ այդպիսի բան մարդու հետ լինել չի կարող, այլ միայն՝ Աստծու: Շատերը, չընկալելով նրա մասին ասվածը, համարեցին նրան Քրիստոսից մեծ և իրենցից ձևավորեցին հերձված» [59]:

Եկեղեցու հայրերը, ինչպես ասվեց, հավասարակշիռ մոտեցում են ցուցաբերել Մելքիսեդեկի մասին առեղծվածների պարզաբանման հարցում: Նրանք համարել են, որ Մելքիսեդեկն իսկապես եղել է յուրահատուկ անձնավորություն, նահապետական շրջանում մեծ սրբության հասած քահանայապետ. մարդ, ում առջև խոնարհվում էր աստվածընտրյալ հրեա ազգը՝ ի դեմս Աբրահամ նահապետի: Սակայն հայրերը չեն գայթակղվել նրա անձի առանձնահատկություններով և նրան չեն վերագրել աստվածային կամ հրեշտակային հատկություն, այլ համարել են մահկանացու մարդ: Իսկ ինչ վերաբերում է մարդկային բնությանը խորթ հատկություններին՝ նրա անհայր և անմայր, անսկիզբ և անվախճան լինելուն, ապա այդ ամենը նրանք վերագրել են ոչ թե բուն Մելքիսեդեկին, այլ Փրկչին՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսին.

«Իսկ ինչո՞ւ չի հիշատակվում Մելքիսեդեկի ազգատոհմը: Որովհետև Մելքիսեդեկը Քրիստոսի տիպարն էր և կրում էր Քրիստոսի կերպարը: Ինչի համար էլ Սուրբ Գիրքը բաց է թողել հորը և մորը և պատմում է նրա մասին՝ առանց ազգատոհմի, որպեսզի նրանում, որպես կերպարի, մենք տեսնենք Քրիստոսին, Ով իրականում անհայր է, անմայր և առանց ազգատոհմի: Քրիստոսը, ըստ մարմնի, անհայր է երկրի վրա, ըստ Հոգու, այսինքն՝ ըստ Աստվածության՝ անմայր է երկնքում: Այդպիսին է «ո՛չ օրերի սկիզբ և ո՛չ կյանքի վախճան ունեցողը»» [60]:

Հետագայում էլ վարդապետները, սուրբ հայրերի ժառանգությամբ կրթված, այս թեմայի շուրջ հարցերը քննել են՝ աշխատելով մնալ այն սահմաններում, որոնցից դուրս չեն եկել եկեղեցու այդ մեծ ուսուցիչները.

«Մելքիսեդեկը անհայր և անմայր է ոչ իսկապես, քանզի դա անհնարին է, այլ այն իմաստով, որ Աստվածաշնչում չեն հիշատակվում նրա ծնողները... Առաքյալը կարծես թե այսպես է ասում՝ ես ասեցի Մելքիսեդեկի մասին, որ նա

---

[59] Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Том 10, книга 2, Москва 2004 г., ст. 898.

[60] Նույն տեղում:

անհայր և անմայր է, որովհետև Աստվածաշնչում չկա նրա սերնդաբանությունը և չի հիշատակվում նրա ցեղի մասին...

Որպես մարդ՝ Մելքիսեդեկը, իհարկե, ունի և՛ սկիզբ, և՛ կյանքի վախճան, սակայն քանի որ մենք չգիտենք ո՛չ այն, թե երբ է նա ծնվել և ո՛չ այն, թե երբ է նա մահացել, ապա մեր ընկալմամբ նա կարծես թե չունի ո՛չ սկիզբ, ո՛չ վերջ» [61]*:*

*Իսկ ըստ Վենետիկի Սուրբ Ղազար վանքի վարդապետ հայր Միքայել Չամչյանցի՝ քահանան, որ իրեն հանձնել է Տիրոջ ծառայությանը, պետք է ամեն ինչ ուրանա՝ հանուն այդ սուրբ ծառայության, ըստ Տիրոջ խոսքի՝**«եթե չուրանաք ձեր հորը, մորը, կնոջը, երեխաներին, և եթե ինքներդ ձեզ էլ չուրանաք, չեք կարող իմ ետևից գալ»:***

Նա համարում է, որ Մելքիսեդեկն էլ հենց այդպիսին էր, ինչի համար էլ անվանվում էր անհայր, անմայր և առանց ազգատոհմ:

«Սա ցույց է տալիս այն, որ այսպիսի վիճակում պետք է լինի Տիրոջ քահանան՝ հրաժարվելով իսպառ հորից և մորից և ամբողջ ազգականներից, որպես անհայր և անմայր, չհամարելով, թե ազգականներ ունի» [62]*:*

Ըստ հրեական մի մեկնաբանության՝ Մելքիսեդեկի անհայր և անմայր լինելը կապվում է մի անսուրբ և անհեթեթ պատճառաբանության հետ.

«Մելքիսեդեկի ծագումնաբանության բացակայությունը կարող է մեկնաբանվել ոչ միայն որպես մեծ գաղտնիքի նշան, այլ նաև՝ որպես ցուցում նրա ցածր ծագման:

Քրիստոնեական հեղինակ Սպիփան Կիպրացու վկայությամբ՝ «հրեաները կրկնում են, թե... քանզի նա անառակ կնոջից էր սերված, դրա համար էլ նրա մայրը չի հիշատակվում, իսկ նրա հայրը հայտնի չէ» [63]*:*

Սակայն այս անհարիր բացատրությանն իր համոզիչ հերքումն է տալիս սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետը.

«Հրեաներն ասացին, որ նա ծնվել է անառակության արդյունքում, և դրա համար էլ Սուրբ Գրքում նրա ազգատոհմը չկա: Նրանց մենք կպատասխանենք. «Դուք համոզիչ փաստարկ չէք, որ բերում էք, քանզի մենք գտնում ենք, որ անառակության արդյունքում ծնված ուրիշները ազգատոհմ ունեն: Աբիմելեքը՝ Գեդեոնի որդին, ծնվել է անառակության հետևանքով, սակայն ազգատոհմ ունի»[64]*:*

Ըստ մի այլ կարծիքի էլ՝ սա վերաբերում է ոչ թե բուն Մելքիսեդեկի անձին, այլ այն քահանայական կարգին, որին պատկանում է նա.

«Այն, որ ղևտացիները մահանում են, իսկ Մելքիսեդեկն ապրում է, ոմանք հասկանում են այսպես, որ ղևտական քահանայությունը դարձավ մահացած, քանզի դարձավ անվավեր, իսկ Մելքիսեդեկի քահանայության կերպը կամ կյան-

---

61 Феофилакт Болгарский, Толкование на деяния и послания святых апостолов, Том 3, Москва, 2011. ст. 542.

62 Միքայէլ վարդապետ Չամչեանց,Մեկնութիւն Սաղմոսաց հտ 8, Ի Վանս Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1820թ., 124 էջ:

63 Мифологический словарь, Глав. ред. Е. М. Мелетинский, Москва 1991. Ст. 359.

64 Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Том 10, книга 2, Москва 2004 г., ст. 898.

քը Քրիստոսով՝ ապրում և հարատևում է և պիտ գոյություն ունենա հավիտյան»[65]*։*

Հինգերորդ դարի մի հետաքրքիր պատմություն է պահպանվել, որը ևս վկայում է Մելքիսեդեկի՝ ոչ թե գերբնական էակ, այլ սովորական մարդ լինելու մասին.

«Աբբա Դանիելը պատմում էր մի մեծ ծերի մասին, որ ապրում էր ներքին Եգիպտոսի կողմերում, ով իր պարզությամբ ասում էր՝ իբր Մելքիսեդեկը հենց Աստծո Որդին էր։ Նրա մասին հայտնել էին երանելի Կյուրեղին՝ Ալեքսանդրիայի արքեպիսկոպոսին, իսկ նա նրա ետևից մարդ ուղարկեց։ Իմանալով, որ այդ ծերը հրաշագործ է, և ինչ որ նա խնդրի, Տերը կհայտնի նրան, և որ իր պարզությամբ է ասել այդ խոսքերը՝ նա իմաստուն մի միջոցի դիմեց՝ ասելով. «Աբբա, ես մի խնդրանք ունեմ քեզ։ Միտքս ինձ ասում է, որ Մելքիսեդեկն Աստծո Որդին է, իսկ մի այլ միտք ասում է՝ ոչ. մարդ է, Աստծո քահանայապետն է նա։ Այս պատճառով էլ ես չեմ կողմնորոշվում և քո ետևից մարդ ուղարկեցի, որպեսզի դու խնդրես Աստծուն, որպեսզի Նա հայտնի քեզ, և իմանանք ճշմարտությունը։ Ծերը, հիմնվելով իր ապրելակերպի վրա, վստահորեն ասաց. «Տուր ինձ երեք օր, և ես կխնդրեմ Աստծուն այս մասին և կհայտնեմ քեզ, թե ով է նա»։ Գնալով իր խուց՝ նա այդ մասին խնդրեց Աստծուն։ Երեք օր անց գալով՝ ծերն ասաց երանելուն, որ Մելքիսեդեկը մարդ է։ Եվ հարցրեց նրան արքեպիսկոպոսը. «Ինչպե՞ս դու իմացար, աբբա»։ Իսկ նա պատասխանեց. «Աստված ինձ ցույց տվեց բոլոր նահապետներին, այնպես, որ նրանցից յուրաքանչյուրն անցավ իմ առջևով՝ սկսած Ադամից մինչ Մելքիսեդեկ, և հրեշտակն ասաց ինձ. «Ահա սա Մելքիսեդեկն է, դրա համար էլ վստահ եղիր, որ դա այդպես է»։ Ծերը, հեռանալով, ինքն էլ արդեն քարոզում էր, որ Մելքիսեդեկը մարդ է։ Եվ շատ ուրախացավ երանելի Կյուրեղը»*[66]*։

Բոլոր ապացույցները մեկնողական բնույթի են, իսկ այս մեկը երկնային հայտնության արգասիք է, ինչն ընդհանրապես անառարկելի է դարձնում Մելքիսեդեկի՝ ուղղակի մահկանացու անձ լինելու փաստը։

Տարաբնույթ կարծիքներ Մելքիսեդեկի մասին

«Սուրբ Գիրքը ոչինչ չի ասում սաղեմյան թագավորի ո՛չ ծննդյան,
ո՛չ մահվան, ո՛չ էլ ծագումնաբանության մասին, և այդ լռությունը
ծնունդ է տվել հազար ու մի՝ մեկը մյուսից անհեթեթ
ենթադրությունների»[67]*։*

Դարերի, ավելի ստույգ՝ հազարամյակների ընթացքում, Մելքիսեդեկի մասին ամենատարբեր կարծիքներ և հիշատակություններ են պահպանվել աշխարհի տարբեր կրոնական ուղղություններում։ Մելքիսեդեկի ով լինելը ծածկ-

---

65 Феофилакт Болгарский. Толкование на деяния и послания святых апостолов, том 3, Москва, 2011, ст. 546.

66 Древний патерик. Москва 1997 г., ст. 341-342.

67 Библейско-Биографический словарь, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва 2001, ст 510.

ված է Սուրբ Գրքում, և նրա մասին առկա տեղեկությունները բավարար չեն ի-մանալու համար, թե ինչ ազգի է նա պատկանել, չկան նաև իր ընտանիքի հետ կապված տեղեկություններ, իսկ եղածներն էլ առաջին հայացքից շատ խնդրահարույց են: Այդ պատճառով էլ ի հայտ են եկել բազմաթիվ շեղ և մոլար ուսմունքներ:

*Հավանաբար, մարդկության պատմության մեջ Մելքիսեդեկի անձի նման ուրիշ առավել քննարկված, հետազոտված, մեկնաբանված անձնավորություն չի եղել. **«Աբրահամին ընդառաջ ելած այլ մարդկանց թվում սուրբ պատմիչը մեր ուշադրությունը կենտրոնացնում է երևելի և միանգամայն բացառություն կազմող Մելքիսեդեկի՝ Սաղեմի թագավորի անձի վրա: Այն հանգամանքը, որ Մովսեսը մեզ ոչ մի կենսագրական տեղեկություն չտվեց Մելքիսեդեկի մասին, և որ Սաղմոսերգուն և Պողոս առաքյալը նրան խորհրդաբար կապում են հենց Հիսուս Քրիստոսի հետ, Մելքիսեդեկի անձի և նրա ծառայության արժանիքի հետ կապված՝ առաջացրեց բազմաթիվ տարաբնույթ տեսակետներ. ոմանք նրա մեջ տեսնում են ծերացած նախահայր Սեմին (Լյութեր), մյուսները՝ հրեշտակ (Որոգինես), այլք՝ Սուրբ Հոգուն (Հերքս Եգիպտացի), ուրիշներն էլ հենց Հիսուս Քրիստոսին (Ամբրոսիոս): Բայց չի կարող ընդունվել այս մեկնություններից ոչ մեկը՝ դրանց անհաստատության և ինքնակամության պատճառով: Մելքիսեդեկի անձի մասին պետք է լինի ամուր հաստատված երկու հիմնական տեսակետ. անկասկած, առաջինն այն է, որ նա եղել է շատ որոշակի պատմական դեմք՝ ապրած և նույնիսկ թագավորած Աբրահամի դարաշրջանում. անկասկած է նաև այն, որ այդ պատմական դեմքը հետագայում ստացել է նախատիպարի նշանակություն, որն էլ մասամբ բացահայտվում է Սաղմոսերգուի կողմից, իսկ հիմնականում՝ Պողոս Առաքյալի կողմից»*[68]*:*

Արդեն նշեցինք՝ ինչ են ասել սուրբ հայրերը Մելքիսեդեկի մասին, և չնայած նրանց աշխատություններում ոչինչ չկա Մելքիսեդեկի ով լինելու մասին՝ սակայն կան աստվածաբանական տեսանկյունից միանգամայն հիմնավոր և սպառիչ պատասխաններ այն հարցերին, որոնց բացատրություն տալու ոչ հավասարակշիռ մոտեցումը ծնունդ է տվել բազմաթիվ կեղծ և թյուր ուսմունքների. դեռ քրիստոնեության վաղ շրջանում խոսվել է ձևավորված աղանդի՝ «մելքիսեդեկյանների» մասին:

Բնականաբար, առաջին մեկնությունները Մելքիսեդեկի՝ ով լինելու մասին եղել են հրեական աղբյուրներում, քանզի, ինչպես տեսանք, նրա մասին տեղեկությունները Սուրբ Գրքում են, իսկ Հին Կտակարանն ի սկզբանե եղել է հրեա ժողովրդի ձեռքբերումը:

Սակայն հրեաներն էլ ամենատարբեր կարծիքներ ունեն: Կարծիքներից մեկն այն է, որ Մելքիսեդեկը իբր եղել է այդ ժամանակաշրջանի աշխարհի ամենատարեց մարդը՝ արդեն խորը ծերության հասած Սեմ նահապետը: Ըստ մի այլ կարծիքի՝ նա հենց Մեսիան է՝ Քրիստոսը. մյուսը, որ Մելքիսեդեկն իբր եղել է աննառակ կնոջից ծնված մեկը, ինչի մասին արդեն ասվեց. նաև՝ որ եղել է հրեշ-

---

[68] Толковая Библия, А. П. Лопухина, т. 1, Петербургъ, 1904-1907г., ст. 97.

տակների գլուխ՝ երկնաքաղաքացի և այլն։ Այս վերջին կարծիքի հետևողները հրեական մի աղանդի ներկայացուցիչներն են՝ եսսենականները.

«Հետազոտությունները ցույց տվեցին, որ եսսենականությունը որպես կառույց՝ կրոնական աղանդ էր՝ առանձնացված պաշտոնական հուդայականությունից... նրանք (եսսենականները) չէին կիսում նրանց (հուդայականների) ուսմունքն՝ անվանելով սրանց «խավարի որդիներ», որոնցից ժամանակների վերջում Տիրոջ դատաստանով վրեժ կլուծի... Մելքիսեդեկը։ Մելքիսեդեկի մասին միդրաշից (մեկնություններից) մենք իմանում ենք, որ «Մելքիսեդեկին վիճակված է մարդկանց» և «Բելիարին վիճակ հասած ոգիների» միջև պայքար մղել, ինչը վերջին «հոբելյանական» տարում կավարտվի Մելքիսեդեկի հաղթանակով։ Վադի-Կումրանի ձեռագրերում էլ «Արդարության Թագավորը» երկնաբնակ մեկն է՝ հրեշտակներին գլխավորող, Տիրոջ անունով դատավոր, աստվածային լուրի կրող, փրկություննն ավետող և քավչարար... Սակայն Մելքիսեդեկի առաքելությունն այսքանով չի սահմանափակվում։ Դատելով մեզ հասած հատվածներից՝ կարելի է ենթադրել, որ Մելքիսեդեկը եղել է ոչ միայն երկնաբնակ, այլև՝ եսսենական շարժման հիմնադիրը»[69]։

Եկեղեցու հայրերից Եպիփան Կիպրացին ծավալուն աշխատություն ունի IV-V դարերում գործող աղանդների մասին, որոնց թիվը հասնում է ութսունի։ «Տապան» կամ «Պանարիոն» կոչվող այդ աշխատությունում խոսվում է նաև Մելքիսեդեկի անվան առումով առանձնահատուկ կարծիք ունեցող աղանդների մասին.

«Նրանք փառավորում են Մելքիսեդեկին, ում մասին ասվում է Սուրբ Գրքում՝ խոստովանելով նրան որպես մի մեծ զորության, այդպես և ըստ իրենց մոլորության՝ պնդում են, որ նա գտնվում է երկնքի անճառելի վայրերում, կարծես թե նա ոչ միայն մի ինչ-որ զորություն է, այլև բարձր է Քրիստոսից։ Իսկ Քրիստոսի մասին կարծում են, որ Նա ուղղակի եկավ և արժանացավ Մելքիսեդեկյան կարգին, և դա այն խոսքի հիման վրա, որ ասում է. «Դու քահանա ես հավիտյան Մելքիսեդեկի կարգի», և ըստ այդմ՝ ասում են, որ Քրիստոսը ցածր է Մելքիսեդեկից։ Քանզի եթե Նա գտնվեր ոչ երկրորդական մի կարգում, ապա կարիք չէր ունենա Մելքիսեդեկյան կարգի... Եվ իրենք իրենց խաբելով՝ ստահոդ գրքեր են հորինում իրենց համար...

Եվ հենց այս նույն խոսքերից էլ սկիզբ է առնում այս հերձվածների հերքումը... Քանզի տեսնում ենք, որ առաքյալը նույն պահին իսկ ասում է. «Նմանվելով Աստծո Որդուն՝ մնում է հավիտյան քահանա»։ Իսկ եթե նման է Աստծո Որդուն, ուրեմն հավասար չէ Աստծո Որդուն։ Քանզի ինչպե՞ս կարող է ծառան հավասար լինել Տիրոջը...

Եգիպտական մի հերձվածի հիմնադիր Հերաքսը կարծում էր, որ Մելքիսեդեկը Սուրբ Հոգին է... և դեռ որքան ուրիշներ կան, որ սխալ պատկերացում ունեն այս Մելքիսեդեկի մասին...

Մեզ են հասել լուրեր, որ ոմանք մոլորվել են վերը նկարագրված բոլորից ա-

---

[69] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 15-16.

ռավել՝ իրենց ունայնամտությամբ տրվելով թյուր մտածումների և հասնելով հայհոյական եզրահանգման, քանզի ասում են՝ իբր այս Մելքիսեդեկը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայրն էր։ Օ՛, ինչ անզգույշ է մարդկային միտքը և ինչ հեշտությամբ է տրվում խաբկանքին. ցավոք, անկայուն է ճշմարտության մեջ մարդկային սիրտը»[70]։

Հրեա հայտնի փիլիսոփա և աստվածաբան Փիլոն Եբրայեցին էլ Մելքիսեդեկի անձի մեջ տեսնում էր Աստծո Որդուն։ Այս կարծիքի կողմնակիցներ եղել են նաև հետագայում։

«Մննդոցի 14։18-ի մեկնության մեջ Փիլոնը Մելքիսեդեկին տեսնում է որպես մարմնացած Բանի։ Փիլոնի դիտարկմամբ՝ Բանը, մարմնանալով ճշմարիտ մարդեղությամբ, դառնում է մի ինչ-որ միջին Աստվածային բնություն՝ բարձր, քան մարդկայինը, և ցածր, քան Աստվածայինը... Նա Մելքիսեդեկին անվանում է «ինքնուսույց՝ Աստծուն ճանաչելու գործում», «սկիզբը և ակունքն իմաստության», «Աստծո ճշմարիտ քահանայապետ», «բարեխոս և միջնորդ, Իր Հոր առջև աղոթող մարդկային ցեղի համար, քավիչ և փրկիչ մարդկության, որի հետ շփվելու շնորհիվ հոգին արժանանում է անդրանցական գոյության» [71]։

Հրեաների մոտ մի այլ տարօրինակ համոզմունք էլ կա Մելքիսեդեկի մասին. իբր նա Աբրահամին ժամանակից շուտ օրհնելու պատճառով խախտել է Նախախնամության կողմից նախատեսված կարգն ու կանոնը.

«Թալմուդական հրեաներն սկսեցին Մելքիսեդեկին համարել եղծվածող. չէ՞ որ նա օրհնեց Աբրահամին ավելի առաջ, քան Աստված։ Ինչպես ասում է Նեդարիմ տրակտատը, Աստված ցանկանում էր քահանայությունը ստեղծել Սեմից, բայց քանի որ Սաղեմի թագավորն աններելի սխալ թույլ տվեց, նրա սերունդները զրկվեցին այդ իրավունքից։ Այսպիսով, Սաղեմի թագավորի «սխալը» հիմք դարձավ, որպեսզի քահանայությունը փոխանցվի Աբրահամի գծին, իսկ ավելի հստակ՝ Ահարոնին և նրա սերունդներին» [72]։

Մելքիսեդեկյանների աղանդի մասին է գրել նաև չորրորդ դարի հայտնի հեղինակ, վանական սբ. Մարկոս Ճգնավորը. նա էլ, նման մյուս սուրբ հայրերի, Մելքիսեդեկին համարել է Քրիստոսի նախակերպար՝ ամբողջովին հերքելով և ջրի երես հանելով աստվածունն աղանդի, որը համարում էր, թե Մելքիսեդեկն «առավել» է Քրիստոսից.

«Իսկ Մարկոս Անապատականի խոսքերով այդ (եղծվածողների ասած) «առավելությունն» այս էր. «Մելքիսեդեկը չուներ ո՛չ հայր և ո՛չ մայր, երբ Հիսուսը միայն անհայր էր։ Այս աղանդի ներկայացուցիչները Մելքիսեդեկին համարում էին «Երկնային Տաճարի քահանայապետ» և «Միջնորդ»՝ Աստծո և մարդկանց միջև, այդ միջնորդության շնորհիվ էլ կարելի էր Աստծուց ներում գտնել։ Եվ այդ նպատակով նրանք իրենց զոհաբերություններն էին անում նրան» [73]։

---

[70] Творения Святаго Епифанія Кипрскаго. Часть вторая, Об Ересяхъ. Москва 1864 г. Ст. 435, 443, 450-451.

[71] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 25-26.

[72] Նույն տեղում, ст. 7.

[73] Նույն տեղում, ст. 28.

*Ասենք, որ բոլոր նրանք, ովքեր թե՛ հնում և թե՛ մեր օրերում Մելքիսեդեկին համարում են Աստծո Որդի, որպես հիմնավորում՝ բերում են Նոր Կտակարանի այն հատվածը, որտեղ Տերն ասում է, որ Ինքը եղել է Աբրահամից առաջ. **«Աբրահամը՝ ձեր հայրը, ցանկացավ իմ աշխարհ գալու օրը տեսնել. տեսավ և ուրախացավ»**: Հրեաները նրան ասացին. **«Դեռ հիսուն տարեկան չկաս Դու և Աբրահամի՞ն ես տեսել»**: Հիսուս նրանց ասաց. **«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, Ես ե՛մ նախքան Աբրահամի լինելը»**[74]:*

Տիրոջ այս խոսքից ելնելով՝ համարել են, որ դեռ այն նահապետական շրջանում Հիսուսը մարմնացել է՝ անվանվելով Մելքիսեդեկ:

Այսքանը հրեական ավանդություններից: Իսկ այժմ տեսնենք, թե ինչպիսին է Մելքիսեդեկի մասին կարծիքը՝ այլ կրոնական ուղղություններում.

«Բուդդիզմի տիբեթյան Մեծ Ազատագրման գրքում էզոթերիկ ուսմունքի հիմնադիր Պադմասամբհավան համեմատվում է Մելքիսեդեկի հետ:

***Տոլտեկները (կենտրոնամերիկյան ցեղ) հավատում են, որ աշխարհի բեմի հետևում կա ոմն Լռակյաց Դիտորդ, որին նրանք անվանում են Ատլի Ոգի... նրանք ասում են, որ քրիստոնեական Սուրբ Գրքում նրան համապատասխանում է Մելքիսեդեկը»** [75]:*

Մելքիսեդեկի մասին իրենց կարծիքն ունեն նաև մորմոնները, որոնց գրքում նրա մասին գրված է հետևյալը.

***«Մելքիսեդեկյան քահանայությունն իր ձեռքում է պահում Եկեղեցու բոլոր հոգևոր օրհնությունների բանալիները»** [76]:*

Իսկ ավստրիացի փիլիսոփա և էզոթերիկ Ռուդոլֆ Շտեյները Մելքիսեդեկին համարում էր «մինչ Քրիստոս՝ մաքրագործող սուրբ».

***«Շտեյների կարծիքով՝ Աբրահամին դիմավորեց Արևային Միստերիայի մեծ ընծայաբերողը»** [77]:*

Ըստ էզոթերիկ ավանդության ուսուցիչ Օմրաամ Միքայել Այխանովի՝ Մելքիսեդեկն է եղել այն անձնավորությունը, ով Հովհաննես Ավետարանչին թելադրել է «Հայտնության» գիրքը, և իբր Մելքիսեդեկն է տնօրինում մարդկային ճակատագրերը, և որ արևելքի մոգերին հենց Մելքիսեդեկն է առաքել Բեթղեհեմ:

«Երրորդ ուղու քրիստոնեություն» ուսմունքի հետևող ոմն Ա. Դուգինի կարծիքով՝ ինչպես հրեաներն Աբրահամի գոգում, այդպես և քրիստոնեական բարձր օծության արժանացածները հանգիստ պիտի գտնեն Մելքիսեդեկի գոգում: Ըստ գնոստիկների էլ՝ Մելքիսեդեկն իբր լույսի մեծ ժառանգորդն է... Մելքիսեդեկը էլոհիմներից մեկն է, ով աշխատում է հոգու էներգիաների հետ:

*Ամերիկյան Ուղղափառ Եկեղեցու եպիսկոպոս Սերաֆիմ Սիգրիստն իր դասախոսություններից մեկը՝ **«Մելքիսեդեկ-խաղաղության թագավոր՝ նշանակ մեր ժամանակների համար»** անվամբ, նվիրել էր Մելքիսեդեկի առեղծվածին: Իր ելույթում նա հատկապես շեշտում էր, թե իբր Մելքիսեդեկը կարող է միաստվա-*

---

[74] Հովհ. 8:56-58.

[75] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 39-40.

[76] Նույն տեղում, ст. 57.

[77] Նույն տեղում, ст. 51.

ծության երեք կրոնների՝ քրիստոնեության, հրեականության և մահմեդականության հարաբերությունների շահողը լինել, և միայն նա կարող է այնպես անել, որպեսզի նրանց բոլորի ջուրը մի առվով գնա.

«Թանկագին հայրեր, եղբայրներ և քույրեր, ես ցանկանում եմ իմ այսօրվա զեկուցումը նվիրել Մելքիսեդեկի անձին՝ թագավոր քահանային, որ, ինչպես նկարագրված է Մննդոցի 14-րդ գլխում, օրհնեց Աբրահամին, և ինչպես որ ես տեսնում եմ, խաղաղության միությունն է պատմության բոլոր ուղիների համար և նշանավոր անձնավորություն՝ մեր օրերի համար: Հատկապես խորհրդավոր Մելքիսեդեկը Սուրբ Գրքում իրենով ինչ-որ չափով մարմնավորում է պատմության գաղտնիքը և այն, ինչը որ մետապատմության տակ է...

Անձնավորություն, ով արդեն մեծ դեր է խաղում միաստվածություն դավանող երեք կրոններում՝ քրիստոնեությունում, հուդաիզմում և իսլամում...

Հարցն այն մասին, թե ով է եղել «պատմական Մելքիսեդեկը», կարող է մեզ տանել ավելի խորը՝ հասկանալու այն, թե ինչպես է Մելքիսեդեկը ելնում պատմական ավանդության բոլոր սահմաններից» [78]***:***

Իր խոսքում Սերաֆիմ Սիգրիստը մեջբերում է Ամերիկյան Ուղղափառ Եկեղեցու մի այլ հոգևորականի՝ հայր Մակ Միկիի կարծիքը Մելքիսեդեկի մասին.

«Ինչպես ասում է հայր Մակ Միկին, Մելքիսեդեկը ոչ միայն կանգնած է ազգերի և կրոնների պատմության ակունքներում, նա նաև դուրս է նրանցից: Նրանում մենք տեսնում ենք, որ պատմության մեջ կա մեզ շարժման մեջ դնող և դեպի ճիշտ ճանապարհն ուղղորդող մի ինչ-որ ուժ, սակայն դրա հետ միասին այն արդեն գոյություն է ունեցել մեզանից առաջ և գոյություն կունենա նաև մեզանից հետո: Այդ ուժը նախորդում և գերազանցում է հրեական Օրենքի ուժին և իշխանությանը, կարգավորված իսլամին. նա վեր է քրիստոնեական վանքից կամ տաճարից, նա նույնիսկ առավել է այն ամենից, ինչն անվանվում է «քրիստոնեական աշխարհ»: Մեր կրոններից յուրաքանչյուրն իր ներաշխարհում կրում է Մելքիսեդեկի անձը, ով նույնպես գոյություն ունի նրանից առաջ և նրանից դուրս. նա ցրիվ է տալիս յուրաքանչյուր փակ համակարգ: Դրա համար էլ հնարավոր է, որ մեզ նորից հարկավոր է Մելքիսեդեկի օրհնությունը, որպեսզի մենք կարողանանք հենց այդ նույն առաջին օրհնությամբ շարունակել դեպ առաջ՝ մեր այդքան վաղուց լքված ընթացքը: Մելքիսեդեկը նշանավորում է նաև սկիզբը և ավարտը մեր առանձին ուղիների:

Հնարավոր է, որ նրա օրհնությունը թույլ տա մեզ՝ նորից գնալ միասին... Դեհ, ուրեմն, թող դա իրականանա հնարավորինս արագ»[79]***:***

Զարմանալին և տարօրինակն այն է, որ այս կարծիքները պատկանում են այսօրվա բարձրաստիճան հոգևորականներին: Նրանք էլ Մելքիսեդեկին կարծես ավելի բարձր մեկն են համարում Տիրոջից, և իբր աշխարհում կան բաներ, որոնք ի զորու է իրագործել միայն ինքը՝ Մելքիսեդեկը:

Մելքիսեդեկի մասին կան պարականոն պատումներ, որոնցից մեկը պահ-

---

[78] http://www.bible-center.ru/article/melchizedek

[79] Նույն կայքում

պանվել է հին ռուսական ձեռագրերում, ինչի հեղինակ համարում են սբ. Աթանաս Մեծին: Սակայն դա, բնականաբար, ոչ մի կերպ չի կարող առնչություն ունենալ երևելի սուրբ հոր հետ.

«Մելքիսեդեկի մասին գոյություն ունեն հին ռուսական պարականոններ: Դրանցից մեկը վերագրում են արքեպիսկոպոս Աթանաս Ալեքսանդրացուն: Աթանասը պատմում է էլլինական թագավոր Մելքիլի մասին, ով ուներ երկու որդի՝ Մելքիլը և Մելքիսեդեկը: Հավատալով միակ Աստծուն՝ Մելքիսեդեկը հրաժարվեց հորթեր զոհել հեթանոսական աստվածներին: Այդ ժամանակ բարկացած հայրը որոշում է զոհել հենց Մելքիսեդեկին: Սակայն վիճակը որ գցվում է, Մելքիլի կնոջ խնդրանքով ընկնում է եղբորը: Մելքիսեդեկի աղոթքի արդյունքում հողը բացվում և կուլ է տալիս Մելքիլի ամբողջ ազգատոհմը և կռապաշտության բոլոր մյուս մասնակիցներին: Այս պահից ինքը՝ Մելքիսեդեկը, որ անվանվում էր առանց ազգատոհմի, յոթը տարի թաքնվում է Թաբոր լեռան վրա, այնտեղ նրան գտնում է Աբրահամը, հագուստ է բերում, կտրում մազերը և նրանից օրհնություն է ստանում»[80]:

Սա միանգամայն հակառակ է սուրբգրային տեղեկությանը, քանզի այստեղ Մելքիսեդեկը ներկայացվում է որպես մի խեղճ ու անճար փախստական, այլ ոչ՝ Սաղեմի հզոր արքա և քահանայապետ:

Հին գրառումներից մեկում էլ իբրև թե գրված են նրա ծնողների անունները, սակայն դա էլ դասվում է անընդունելի տարբերակների շարքին. ***«Ոմանց մոտ նշված են Մելքիսեդեկի հայրն ու մայրը, սակայն այդ նշումը բացակայում է ճանաչված և ընդունված գրքերում: Իսկ ոմանք նրա հորը անվանում էին Իրակլի, իսկ մորը Աստարֆ, նաև Աստորինա: Իսկ նա ծագել է տեղացի բնիկ ցեղերից մեկից»*** [81]:

Պահպանվել է նաև հնուց եկած մի այլ պարականոն պատմություն Մելքիսեդեկի ծագման մասին, ինչը, թերևս, ինչ-որ անճաշակ հորինողի երևակայության արդյունք է .

«Նիրը՝ Նոյի եղբայրը, կին ուներ: Նրան անվանում էին Սոֆոնիմա: Նա երեխաներ չուներ: Եվ ահա խոր ծերության օրոք նա անմեղությամբ հղիացավ: Որպեսզի ծածկի իր հղիությունը, նա առանձնացավ իր հանգստարանում, երբ հանկարծ հղիության 282-րդ օրն անսպասելիորեն նրան կանչեց ամուսինը: Տեսնելով իր ծերացած կնոջը՝ նա խիստ զայրացավ, քանի որ այն ժամանակից, ինչ Նիրը դարձել էր երեց, նա չէր մոտեցել կնոջը: Ամոթահար, մեծ վշտի մեջ Սոֆոնիման անշնչացած ընկավ ամուսնու ոտքերի մոտ... Եվ այդ ժամանակ վշտացած Նիրը մտածեց. «Արդյո՞ք իմ Տիրոջ կամոք չէ, որ եղել է այս ամենը նրա հետ»: Գաբրիել հրեշտակապետը հայտնվելով հաստատեց նրա ենթադրությունը և ավելացրեց, որ ծնված փոքրիկը պետք է հափշտակվի Դրախտ: Այս խոսքերից հետո Նիրը շտապեց այս ամենի մասին պատմել Նոյին, և եղբայրները գաղտնի թաղեցին ննջեցյալին: Նրան հագցրեցին սև շորեր, փակեցին դուռը և գնացին գերեզման փորելու: Վերադառնալով՝ եղբայրները մահճի վրա տեսան հազվագյուտ գեղեց-

[80] Григорьева Елена Валентиновна... ст. 35.

[81] Творения Святаго Епифанія Кипрскаго, Часть вторая, Об Ересяхъ. Москва 1864 г. Ст. 437.

կության երեք տարեկան տղայի՝ կրծքին հոգևորականի կնիքով։ Եղբայրները նրան զգեստավորեցին հոգևորականի զգեստներով, տվեցին օրհնված հաց և մանկանն անվանեցին Մելքիսեդեկ։ Գիշերով Նոյին հայտնվեց Տերը և ասաց, որ մարդկանց անօրինությունների հետևանքով երկիրը կկործանի, իսկ Նիրին կհայտնվի Գաբրիել հրեշտակապետը, կվերցնի տղային և կտեղավորի նրան Եդեմական Դրախտում։ Այնտեղ տղան, սպասելով Ջրհեղեղի վերջանալուն, կհայտնվի աշխարհին։ Նա կդառնա քահանաների քահանա հավիտյան և Տիրոջ կողմից կվերածվի մեծ ազգի։ Քառասուն օր հետո տղան համբարձվեց երկինք»[82]*։*

Մի այլ պարականոն պատմվածքի մասին էլ պատմվում է Եպիփան Կիպրացու՝ Ծննդոց Գրքի մեկնության մեջ, ըստ որի՝ Սեմը ծնեց Արփաքսադին, իսկ Արփաքսադը՝ Մելքիին՝ Սեղեկի հորը, և Մելքին ծնեց Սեղեկին։ Եվ երբ Սեղեկը դարձավ 30 տարեկան, Սեմը նրա հորից խնդրեց, որ Սեղեկն իր հետ մի տեղ գնա, և այդպես էլ արեցին։ Եվ գիշերով իրենց հետ վերցնելով Ադամի և Եվայի պատվական նշխարները՝ եկան-հասան Պաղեստին երկիրը, և Սեղեկը հարցրեց՝ «մինչև ո՞ւր», և այդ հարցման համար այդ վայրը կոչեցին Երուսաղեմ, այնտեղ ամփոփեցին Եվայի նշխարները, իսկ հետո բարձրացան Գողգոթա և այնտեղ ամփոփեցին Ադամի նշխարները։

Այստեղ Սեմը համոզում է Սեղեկին՝ մնալ և բնակվել այդ անմարդաբնակ վայրում՝ ասելով, որ նա պիտի լինի գալիք մարգարեությունների կատարման նախանշան։ Երեք տարի այդ վայրում ճգնելուց հետո նրան է այցելում մարմնացած Բանն Աստված և տանելով Զիթենյաց լեռը՝ այնտեղ նրան է տալիս քահանայական օծություն և արքայական պատիվ և նրա հոր անվամբ նրան անվանում է Մելքիսեդեկ։ Եվ իբր նա հրաման է ստանում, որպեսզի թլպատության պատվեր տա Աբրահամին և նրան օծի քահանա և թագավոր։

Նախ՝ Սուրբ Գրքում խոսվում է Սեմից ծնված Արփաքսադի մասին, որի որդիների մեջ ոչ մի Մելքիի մասին խոսք չկա և, բացի այդ, այստեղ ներկայացվում է ոչ թե թագավոր, այլ մենակյաց մի ճգնավոր. նաև անընդունելի է այն, որ մարմնացած Քրիստոս հայտնվում է Մելքիին իր իրական մարդանալուց դեռ մոտ 2000 տարի առաջ։ Մի խոսքով, սա էլ անընդունելի տարբերակ է և անհարիր՝ Սուրբգրային ճշմարտություններին։

Անընդունելի մի այլ տարբերակ կա իններորդ դարի հույն ժամանակագիր Գևորգ Վանականի «Քրոնիկոնում», որտեղ գրված է այսպես.

«Եվ նա (Աբրահամը) աստվածային Մելքիսեդեկի օրհնությանն արժանացավ...

Չէ՞ որ նա արդար և բարեպաշտ մարդ էր՝ ծագումով այլազգի, ինչի համար էլ ասվում է «ուրիշ ցեղի էր պատկանում»[83]***, այսինքն՝ Եգիպտոսի թագավորի որդու՝ Սիդի ցեղին, ում անունով էլ անվանվում է Եգիպտոսը։ Իսկ այդ Սիդը, դուրս գալով Եգիպտոսից և գրավելով Քանանի երկիրը, որ ներկայումս անվանվում է Պաղեստին, բնակվեց այնտեղ և քաղաք կառուցեց իր անվամբ՝ այն անվանելով***

---

[82] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012 ст. 33-34.

[83] Եբր. 7.13:

Սիդոն։ Իսկ հետո Սիդի սերնդից ելավ Մելքին՝ Սեդեկի հայրը։ Այդ Սեդեկը, որ քահանա և թագավոր էր, անվանվեց Մելքիսեդեկ՝ իր հոր անվամբ» [84]։

Մելքիսեդեկի մասին առավել քննարկելի տարբերակ կա, որն ընդունվել է ոչ միայն հրեաների, այլև հեղինակավոր որոշ քրիստոնյաների կողմից։

Ըստ հրեական մեկնության՝ Մելքիսեդեկը եղել է Սեմ նահապետը։ Դա տեղ է գտել նաև քրիստոնեա որոշ հեղինակների մեկնություններում։ Հատկապես սուրբ Եփրեմ Ասորին է այդ մասին գրում, սակայն միևնույն ժամանակ ասում է, որ դա իր անձնական ուսումնասիրությունների արդյունքը չէ.

«Իսկ այդ Մելքիսեդեկը Սեմն էր՝ Նոյի որդին։ Եվ այն, որ նա գոյություն ուներ Աբրահամի, Իսահակի և Հակոբի ժամանակ, այդ ցույց է տալիս Ծննդոց Գիրքը, ինչպես որ կարծում են ոմանք» [85]։

Սակայն սուրբ Եփրեմը, ինչպես բոլոր հայրերը, չէին տեսնում ոչ ոքի, ով կհամապատասխաներ Մելքիսեդեկի կերպարին, ինչից ելնելով էլ՝ նրանցից ոմանք կանգնել են Սեմի անձի վրա, ով գոնե ինչ-որ չափով կարող էր համապատասխանել այդ առեղծվածային անձնավորությանը։ Սեմը շատ կարկառուն անձնավորություն էր՝ Մելքիսեդեկին նման համարվելու համար, բայց ստորև կտեսնենք, որ չափազանց շատ անհամապատասխանություններ կան այդ առումով։

Նախ՝ նրա տարիքը. ըստ Յոթանասնից թարգմանության, որից իր մեկնաբանություններում օգտվել է Եփրեմ Ասորին, Սեմը կլիներ հազար տարուց շատ ավելի մեծ։ Իսկ Տերն Ադամին ասաց. ***«երբ այդ պտղից ուտեք, նույն օրը և կմեռնեք»***։ *Իսկ քանի որ ըստ Սուրբ Գրքի՝ մի օրը Տիրոջ մոտ հազար տարվա պես է, ուրեմն, մեղանչած մարդկությունից ոչ ոք հազար տարուց ավել չպիտի ապրեր. և տեսնում ենք, որ այդպես էլ եղավ. ոմանք 900-ից ավել ապրեցին, սակայն ոչ ոք հազար տարին չբոլորեց։ Ուստի, բացառություն չէր կարող լինել նաև Սեմը։*

Եպիփան Կիպրացին իր աշխատությունում, հաշվարկելով նահապետների տարեթվերը, գալիս է այն եզրակացության, որ Սեմը ոչ մի կերպ չէր կարող լինել Մելքիսեդեկը՝ ապրելով մինչև Աբրահամի ժամանակաշրջանը [86]։

Սեմի և Աբրահամի տարիքի անհամապատասխանության մասին է գրում նաև Գրիգոր Տաթևացին.

«Հարց. Իսկ ինչո՞ւ է Եփրեմն ասում, որ Մելքիսեդեկը Սեմն է։

Պատասխան. Իրինոսն ասում է, որ Նոյն օրհնեց Սեմին, իսկ Սեմն արժանի որդի չուներ, որ օրհներ նրան, և միայն Աբրահամն էր, որ արժանի էր օրհնության։ Սակայն Սեմն այդ ժամանակ կենդանի չէր, որ օրհներ նրան» [87]։

Իսկ եթե Սեմն է Մելքիսեդեկը, ապա ինչո՞ւ է այդ դեպքում նա անհայր, անմայր և անազգատոհմ մեկը, եթե հայտնի են թե՛ նրա ծնողները, թե՛ ազգաբանությունը և թե՛ վախճանը։

Այս հարցի պատասխանն, ըստ Եփրեմ Ասորու, կարելի է այսպես տալ. ինչպես որ Հակոբ նահապետը Տիրոջից նոր անուն ստացավ և անվանվեց Իսրայել,

---

[84] «Временник» Георгия Монаха, Вера Матвеенко, Людмила Щеголева, Москва 2000 г., ст. 82-83.

[85] Ефремъ Сиринъ, Творения, том 7, Толкование на книгу послания к евреям, Москва 1995, ст. 276.

[86] Творения Святаго Епифанія Кипрскаго. Часть вторая, Об Ересяхъ. Москва 1864 г. Ст. 443-446.

[87] Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս 1729թ., էջ 300:

իսկ Իսրայել անունը բացակայում է Սեմի ազգատոհմի մեջ, այդպես և իբր Սեմն է անվանափոխվել Մելքիսեդեկի, և այդ պատճառով էլ ազգատոհմի մեջ կան Սեմ և Հակոբ անվանումները։

Սակայն բացակայում են այն անունները, որոնք նրանց տրվեցին հետո, այսինքն՝ Մելքիսեդեկ և Իսրայել։ Իհարկե, սա տրամաբանական բացատրություն է, սակայն ինչո՞ւ Հակոբ-Իսրայելի համար երբեք չեն ասվել նման բաներ. չէ՞ որ այդ դեպքում նա էլ կարող էր նման կերպ բնորոշվել՝ իբրև անհայր, անմայր և այլն։

Շատ ավելի ուշ շրջանի փիլիսոփաներ ևս Մելքիսեդեկի՝ Սեմը լինելու հետ կապված մտքեր ունեն.

«Ռուդոլֆ Շտեյները խոսում է Մելքիսեդեկի մասին՝ որպես «մինչ Քրիստոս մաքրագործող սրբի»... ով հայտնվեց նրա առջև սեմիտների ցեղապետի՝ Սեմի եթերային մարմնով» [88]։

Նրանք, որ կարծում են, թե Մելքիսեդեկը պետք է որ Սեմը եղած լինի, որպես հիմնավորում՝ նշում են նաև այն հանգամանքը, որ իբր հենց Սեմի սերունդը մնաց ճշմարիտ աստվածպաշտության շրջանակներում։ Սակայն բարեպաշտ Սեմի սերունդն էլ, Բելի իշխանության տակ ընկնելով, դարձավ կռապաշտ։ Եթե Սեմն այդքան երկար ապրեր, ապա հնարավոր է, որ նա ի զորու լիներ պահպանել իր ժառանգներին կռապաշտության վարակից։ Բայց տեսնում ենք, որ Մելքիսեդեկի և Աբրահամի հանդիպումից դեռ շատ առաջ Աբրահամի նախնիներն արդեն իսկ կռապաշտ էին, և նույնիսկ ինքը՝ հետագայում հավատքի հայր Աբրահամը, երկար ժամանակ հեռու էր ճշմարիտ աստվածպաշտությունից, ինչի մասին, բացի Աստվածաշնչյան հիմնավորումներից, պահպանվել են նաև ավանդություններ.

***«Աբրահամը տասնհինգ տարեկանից մինչև յոթանասուն տարեկանը փնտրեց Աստծուն, քանի որ քաղդեացիների հարուստ և շատ օգտակար երկիրը նրանց դրդեց ամեն մի չարիքի... Աստված բազմաթիվ սերմնագուավների հրամայեց՝ արածել նրանց դաշտերն ու այգինները երկար ժամանակ։ Ամեն մարդ քիչ էր աշխատում և քիչ պաշար էր ունենում, և մարդիկ ընկան աղքատության մեջ։ Աբրահամն իր հայրենիքի պահապանն էր, գիշերն ուսումնասիրում էր աստղագիտությունը, իսկ ցերեկն աշխատում էր պահպանել դաշտերը։ Չնայած մարդիկ իրենց պաշտելի աստվածներին մատուցում էին ամեն տեսակի զոհեր, ուխտեր ու աղոթքներ, բայց դրությունը չէր թեթևանում։ Նույն բանն անում էր նաև Աբրահամը և ապա խորհում, թե այդ պատուհասները, միգուցե, մեր պաշտելիներից չեն, որովհետև իրենք չեն կարողանում վերացնել, և պետք է կարծել, որ դրանք նաև աստղերի ազդեցությունից չեն, որոնք միշտ շարժման մեջ են և ծառայության տակ։ Ուրեմն հայտնի է, որ կա դրանց կառավարող մեկը, որ մեզ անծանոթ է։ Եվ ապա նա սկսեց աղաչանքով ասել. «Անծանոթ Աստված՝ ամեն ինչի և այս թռչունների Արարիչ, Դու հալածիր սրանց», և իսկույն թռչուններն անհայտացան։ Եվ Աբրահամն ասաց. «Ահա՝ գտանք Աստծուն. օրհնյալ է Քո տերությունը, և Քո փառքը կլցնի ամբողջ աշխարհը»»* [89]։

---

[88] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 51.

[89] Վարդան Արևելցի, Տիեզերական Պատմություն, Երևան, 2001, էջ 46-47:

Իհարկե, համոզված չենք, թե Մելքիսեդեկի մասին առկա բոլոր կարծիքներն այստեղ ներկայացվեցին, սակայն, կարծում ենք՝ ավելացնելու կարիքն չկա, քանզի այսքանն ի ցույց դրվեց միայն այն նպատակով, որ տեղեկանանք, թե ինչպիսի խորհրդավոր անձնավորության մասին է խոսքը, և որ այդ խորհրդավորությունը պատճառ է, որպեսզի Մելքիսեդեկի անձին դարեր շարունակ վերաբերվեն մեծագույն պատկառանքով։

Ամփոփելով ասենք, որ Մելքիսեդեկի մասին բազմաթիվ կարծիքներ են եղել, և նորանոր կարծիքներ են դեռ ի հայտ գալիս։ Այդ կարծիքներից շատերը վերածվել են ուսմունքների՝ առաջացնելով աղանդավորական ուղղություններ, որոշները ողջամտության սահմաններում են, սակայն միևնույն է՝ չեն դիմանում քննադատության։ Միակ բանը, որ լիարժեք և անառարկելի է, սուրբ հայրերի խոսքն է Մելքիսեդեկի մասին առ այն, որ նա Քրիստոսի նախակերպարն է եղել, և շատ բաներ, որ ասվել է Մելքիսեդեկի մասին, պիտի վերագրել ոչ թե նրան, այլ հենց Տեր Հիսուս Քրիստոսին։

Եվ այսպես՝ Մելքիսեդեկը, լինելով թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա, կառուցեց Սաղեմ քաղաքը, որ հետագայում վերանվանվեց Երուսաղեմ։ Նա է Ադամի մասունքները թաղել Golgոթայում։ Նա ուներ երկնառաք շնորհներ։ Նա մահկանացու մարդ էր, այլ ոչ՝ գերբնական էակ։ Սուրբ Գրքում բացակայում են նրա ծնողների և ազգատոհմի մասին տվյալները, ինչի համար համարվում էր անհայր, անմայր և անազգատոհմ։ Եվ որ ամենակարևորն է, նա նախակերպարն էր Աստծո Որդու՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի։

Սակայն նորից բաց մնաց նրա՝ Մելքիսեդեկի ով լինելու մասին հարցը, և այժմ մեր հետազոտությունները շարունակելու նպատակով թողնենք Պաղեստինը և վերադառնանք հյուսիս-արևելք՝ Հայկական լեռնաշխարհ՝ Արարատյան երկիր։

Հազարամյակների առեղծվածը Հայկ-Մելքիսեդեկ

«Հայ ազգը ժամանակակից քաղաքակիրթ ազգերի մեջ հնագույններից մեկն է։ Նա եկել է մեր աշխարհ այնքան հեռու, հին օրերից, երբ դեռ ոչ միայն գոյություն չունեին ժամանակակից եվրոպական ազգերը՝ ֆրանսիացիները, իտալացիները, անգլիացիները, ռուսները, այլև նոր-նոր պատմության ասպարեզ էին իջնում անտիկ աշխարհի ազգերը՝ հռոմեացիները, հելլենները... <u>Հայաստանի պատմությունը յուրօրինակ գանձարան է, և ասես մթության մեջ թաքցված այդ գանձերից դեռևս կարելի է շատ բաներ լույս աշխարհ հանել»</u>[90]։

Այդ հնագույն ժամանակներում Արարատյան երկրում ապրում էր արդեն զառամյալ Նոյ նահապետը, այստեղ էր նաև Հայկի հայր Թորգոմը։ Եվ նրանց օրհնությամբ Արարատի երկրում իշխում էր Հայկը՝ հայոց նահապետը։ Հայկն էր

[90] Валерий Брюсов. Русские писатели об Армении, Ереван 1946г., ст. 85-86.

տիրում այս երկրում, քանի որ թե՛ հավատքով, թե՛ իմաստությամբ, թե՛ ուժով և թե՛ տարիքային առումով նա էր Հայաստանի նման խորհրդավոր երկրին համապատասխան կառավարիչը. մի երկրի, որտեղ որպես համայն մարդկության և կենդանական աշխարհի փրկության խորհրդանիշ՝ վեր էր սլանում Արարատ լեռը՝ իր վրա հանգրվանած Նոյան տապանով.

«Այնատարած բարձրավանդակի վրա, ծավալվելով Կասպից ծովից, Քուռի և Արաքսի ակունքներից մինչև հին Կապադովկիա և Վրաստանից մինչև հին Միջագետք, հնագույն ժամանակներից ապրում է հատուկ մի ցեղ՝ ճանաչված հայ անվամբ:

Այս երկրի կենտրոնում վեր է խոյանում Արարատ լեռը: Սա սրբազան և փառապանծ այն լեռն է, որի վրա հանգրվանեց Նոյան տապանը՝ դառնալով երկրի բնակիչների համար Բարձրյալի Գոյության և ներկայության հավիտենական վկայությունը...

Արևի շփոթեցնող շողերի պատճառով, որ անդրադառնում են նրանից, Հայաստանում Արարատը շատ մոտ է թվում ամեն տեղից՝ նրա բնակիչների համար լինելով միավորող սրբություն:

Արարատը կարծես իր կողմն է գրավում ամպերին... և խոժոռ ամպերից մերթ կայծակն է սրընթաց փայլատակում, մերթ էլ երևում է վեհասքանչ ծիածանը. «Այստեղ, - ասում է մի պատմաբան, - հոգին խանդավառվում է զմայլանքով, և միտքը լրացնում է այն, ինչը ծածկված է տեսողությունից»...

Նոյը պետք է իջներ Արարատի վրա, որպեսզի մարդկային ցեղը կրկին սկսեր իր գոյությունը Դրախտի դռների մոտից» [91]:

Ճիշտ է նկատել ռուս հետազոտողը. Արարատ լեռը և Եդեմական Դրախտը գտնվել են միևնույն տարածքում՝ Հայոց լեռնաշխարհում: Հատկապես Շումերական արձանագրություններն են վկայում այն մասին, որ իրենցից հյուսիս գտնվող լեռնաշղթայից այն կողմ գտնվում է աստվածների երկիրը՝ այսինքն, Դրախտը.

«Շումերա-աքքադական դյուցազնավեպից հայտնի է դառնում, որ Լույսը, Արևը ծագում են երկվորյակ Մաշու լեռներից...

Լեռներից (դարպասներից) այն կողմ գտնվում է կախարդական այգին՝ դրախտը, ուր ապրում են աստվածները: Հիշենք, որ Աստվածաշնչյան դրախտը ևս գտնվում էր Հայաստանում՝ Եփրատ, Տիգրիս, Գեհոն, Փիսոն գետերի ակունքների շրջանում» [92]:

Արարատի երկրում սուրբ նահապետների ներկայությունը երաշխիք էր, որ այստեղ ժողովուրդն ապրեր բարեպաշտության օրենքներով՝ պաշտելով երկինք և երկիր ստեղծող Բարձրյալ Աստծուն: Այստեղ էր, որ երկրի բնակիչները խոսում էին առաջին՝ ադամական լեզվով: Սա այն երկիրն էր, որ մեծ նվաճումներ ուներ մետաղագործության, գյուղատնտեսության, մանածագործության, ռազմական, արվեստի և անգամ գիտական ու մշակութային ոլորտներում.

---

[91] В. Потто, Страна Арарата, С. Петербург 1905. ст. 3-4, 22.

[92] Անժելա Տերյան. «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002, էջ 139:

«Հայաստանը մարդու ամենավաղ և անընդհատ բնակության վայրն է եղել՝ առաջին մշտական նստակյաց բնակավայրերի հիմնադրման ժամանակներից մինչև բրոնզի դարի սկիզբը: Հայաստանի տարածքում գտնված նյութական մշակույթի հարուստ մնացորդները և բնակավայրերը հիմք են տալիս ընդհանուր գծերով բնութագրելու առաջին նստակյաց մարդկային հասարակության զարգացման բոլոր աստիճանները...

Հնագիտական այս կարևոր եզրակացությունը ցույց է տալիս, որ Հայաստանում մարդկային հասարակությունը երկար և անընդմեջ զարգացում է ունեցել»[93]:

Հետջրհեղեղյան մարդկության նահապետ Նոյի՝ Արարատյան երկրում բնակվելն արդեն իսկ մեծագույն շնորհ էր Հայաստանի բնակիչների համար: Եվ չնայած Նոյի և տապանի մասին արդեն խոսվել է հանգամանորեն, սակայն այստեղ նորից մասամբ կանդրադառնանք ոչ միայն Նոյին, այլև Ադամին:

Ադամը՝ թագավոր և քահանա

Նոյի, Հաբեթի և Թորգոմի օրհնությամբ ճոխացած Հայոց աշխարհի ղեկապետ Հայկին հպատակվում էին նաև հարևան երկրները, քանի որ նա ուներ թե՛ մեծ հավատք առ Աստված, թե՛ մեծ հմտություն քաղաքականության ասպարեզում: Նաև անկոտրում, քաջարի ոգեմիկ էր պատերազմի դաշտում, զորեղ էր խոսքով և գործով:

Հայկն, այնուամենայնիվ, հանդես էր գալիս որպես առաջնորդ և ոչ թագավոր, քանի որ կենդանի թագավորի առկայությամբ նա չէր կարող թագավոր լինել Հայոց աշխարհում:



Իսկ ո՞վ էր այդ թագավորը: Հետազոտողներից և մեկնիչներից ոմանք համարում են, որ Ադամն է եղել մարդկության առաջին թագավորը. և ոչ միայն թագավոր, այլև՝ բարձրյալ Աստծո քահանա: Իսկ ո՞վ է նրան շնորհել այդ կարգավիճակը, երբ այդ ժամանակ իրենից բացի այլ մարդ չկար: Կարելի է հետևություն անել, ինչպես սբ. Եպիփան Կիպրացին, որ Ադամը հենց Աստծո կողմից էր ստացել քահանա և թագավոր լինելու բարձր պատիվը.

«Եվ տանելով նրան արևելքի դիմաց՝ իր աջ կողմը, և բացելով երկնքի հաստատությունը՝ Ադամի գլխին դրեց

[93] Ս. Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004, էջ 482-483:

Իր Աջը։ Դարձյալ օրհնեց նրան՝ շնորհելով քահանայության աստիճան և թագավորության պատիվ, դրա հետ միասին՝ նաև մարգարեության հոգի»[94]։

Նմանատիպ կարծիք է հայտնում Ադամի վերաբերյալ նաև սբ. Գրիգոր Տաթևացին իր «Ջմեռան հատոր» քարոզագրքի մեջ.

«Ադամն ուներ երեք շնորհ՝ քահանայության, թագավորության և մարգարեության։

Նրա թագավորությունը երևաց այն բանից, որ ասաց. «ամեն ինչ հնազանդեցրեց նրա ոտքերի տակ, անասուններին և այլն»։ Իսկ քահանայությունը այն էր, որ անվանակոչեց բոլոր կենդանիներին։ Իսկ մարգարեությունն էլ այն է, որ ասաց. «Սա ոսկոր է իմ ոսկորից, և մարմին՝ իմ մարմնից»[95]։

Գրիգոր Տաթևացին լիովին վստահ էր Ադամի՝ թագավոր և քահանա լինելու մեջ, և այդ մասին գրում է իր տարբեր աշխատություններում. ***«Ով պետք է իմանալ, որ Աստված Ադամին տվեց իրավունք թագավորելու և քահանայագործելու՝ դարձնելով նրան առաջնորդ՝ հոգու և մարմնի»***[96]։

Մեկնիչներից ոմանք էլ գրում են Ադամի՝ միայն թագավոր լինելու մասին՝ չանդրադառնալով քահանայությանը.

«Այստեղ կսկսենք պատմել թագավորների մասին՝ սկսած Ադամից, որ մեր նախահայրն է և երկրի վրա եղել է առաջին թագավորը ամենասկզբում։ Արարիչը բոլոր արարածներին ստեղծելուց հետո նրան թագավոր նշանակեց երկնքի տակ գտնվող բոլոր արարածների վրա, որովհետև, ինչպես Սուրբ Գիրքն է ասում, պարտ ու պատշաճ էր, որ նախ թագավորությունը գոյանար, ապա՝ ենթակա դառնար թագավորին, և նա լիներ թագավոր նրանց համար, ովքեր երկրի վրա են և Վերին թագավորության ներքո»[97]։

Ոմանք էլ խոսում են միայն Ադամի՝ քահանա լինելու մասին՝ նշելով, որ այդ աստվածաշնորհ քահանայական կարգը և թագավորական պատիվը միայն Ադամի մենաշնորհը չէր։

Իր վախճանին նա այդ մեծ պատիվը փոխանցել է իր սերունդներին, և այսպես այն հասել է Նոյին, ով թագավոր-քահանա էր թե՛ Ջրհեղեղից առաջ և թե՛ հետո.

«Նաև ասում են, որ Ադամը կրել է գերագույն հոգևորականի հագուստներ, որ նա կտակել է Սեթին, ով էլ թողել է Մաթուսաղային, սա էլ՝ Նոյին» [98]։

Նոյը՝ որպես քահանա

Եզրակացվում է, որ Նոյը թագավոր և քահանա կարգավիճակը ժառանգեց Ադամից, թագավոր և քահանա պատվով մտավ տապան և Ջրհեղեղից հետո այդ

---

[94] Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2013թ., էջ 73:

[95] Գրիգոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի Ջմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 275:

[96] Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 1264, էջ 8-բ.:

[97] Ուխտանես Եպիսկոպոս, Հայոց Պատմություն, Երևան, 2006, էջ 31:

[98] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, с. 112.

պատվով իջավ տապանից՝ դառնալով նոր մարդկության թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա։

Ջրհեղեղից հետո մնացել էր միայն Նոյի ընտանիքը, և Նոյի համար այդ տիտղոսները կարծես այլևս արդիական չէին, սակայն Նախախնամությունն աղավնու և ձիթենու ճյուղի խորհրդով վերահաստատեց Նոյի քահանայությունը.

«Աղավնին միամիտ քահանան է, որ իր բերանով թողություն է տալիս»,- *մեկնում է Տաթևացին[99]։*

Սուրբ Եփրեմ Ասորին հատուկ շեշտում է Նոյի քահանա լինելը՝ աղավնու դերը նմանապես համարելով քահանայության նշան.

«Բնակեցրեց Աստված Նոյին փայտեղեն ապարանքում, և փոխարենը նա բնակեցրեց Աստծուն իր մարմնի տաճարում։ Նա պաշտեց Աստծուն որպես քահանա, քանզի Աստված բնակվում էր նրանում։ Նա ընդունեց աղավնու բերանի ձիթենու ճյուղը, որ քահանայության նշան էր»[100]։

*Ոմանք, հակադրվելով համընդհանուր կարծիքին, ասում են՝ իբր Նոյը հեռացել է Հայաստանից։ Հետաքրքիրն այն է, որ Նոյը երբ իբր պատրաստվում էր հեռանալ Իտալիայի կողմերը, իր փոխարեն Հայաստանում ուրիշ մեկին է կարգել քահանայապետ. **«Հայաստանից դուրս գալու ժամանակ Նոյն այնտեղ թողեց Արաշային և Սկիտային և իր փոխարեն քահանայապետ նշանակեց Սապաթեոս-Սակային։ Այս ավանդության մեջ թե որքանն է հավանական և ընդունելի, դժվար է քննել, միայն ասենք, որ Նոյի՝ այդքան հեռու տեղ գնալը մեզ համար բոլորովին անընդունելի է»[101]։***

Նոյը տապանից դուրս գալուց հետո զոհ մատուցեց և Տիրոջը գոհություն հայտնեց, և սա, ըստ մեր եկեղեցու հայրերից սբ. Հովհան Ոսկեբերանի և Եպիփան Կիպրացու, նրա քահանայության մասին առավել խոսուն վկայություն է.

«Տապանում փրկված Նոյը, երբ ջուրը սկսեց տեղի տալ, և երբ այն կանգ առավ Արարատյան լեռների վրա, նույն ժամին նախաձեռնեց այդ քահանայությունը և անարատությամբ զոհ մատուցեց Աստծուն»[102]։

«Նոյը, քահանայական պատվով զարդարված, Տիրոջը պատարագ էր մատուցում մաքուր թռչուններից և անասուններից»[103]։

---

[99] Գրիգոր Տաթևացի. Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմեռան հատոր, Կ. Պոլիս, 1740, էջ 509:

[100] Սրբոյն Եփրեմի (Ասորւոյ) Մատենագրութիւնք, հատոր առաջին, Վենետիկ, 1836, էջ 42-43:

[101] Ղևոնդ Վ. Ս. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904թ., էջ 56:

[102] Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Издательство Белорусского Экзархата - Белорусской Православной Церкви. 1-3, Том 2, Творения, Седьмое слово о священстве. Минск 2005 ст. 966.

[103] Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2013թ., էջ 117:

Նոյը՝ որպես թագավոր

Նոյը, ինչպես ասվեց, ոչ միայն քահանայությունն էր ժառանգել, այլև արքայական օծումը, քանզի Ադիթենու ճյուղը, որ խորհրդանիշն էր քահանայական օծության, վերաբերում էր ոչ միայն քահանաներին, այլև թագավորներին, քանզի թագավորները նույնպես օծվում էին սուրբ յուղով, ինչպես՝ Սավուղը, Դավիթը և մյուսները.

«Նոյը, տապանից դուրս գալով, երկրի վրա թագավոր դարձավ՝ Ադամից հետո երկրորդ թագավորը: Քանզի Աստված հրամայեց նրան, ինչպես սկզբում Ադամին, որ նա տիրի այն ամենին, ինչը նրա ձեռքի տակ երկրի վրա կար» [104]:

*Ոչ միայն հայկական ավանդությունն է Նոյին թագավոր ճանաչում, այլև հունականը. «**Հունական առասպելը հետևյալն է պատմում. «Բարկանալով պիղծ պելասգովների մարդակերության վրա՝ ամենակարող Զևսը երկրի վրա հեղեց ջրի հոսանքներ՝ մտադրվելով դրանով խեղդել ամբողջ մարդկությանը: Սակայն Դևկալիոնը՝ Փտիի թագավորը, նախազգուշացվելով իր հորից՝ Պրոմեթևս տիտանից, որին նա այցելեց Կովկասում, տապան կառուցեց, բեռնեց այն պաշարով, այնուհետև մտավ նրա մեջ իր կնոջ՝ Պիրրոյի հետ, որ էպիմետեայի աղջիկն էր»»*** [105]:

Բաբելոնյան ավանդություններում էլ, երբ խոսվում է Ջրհեղեղի մասին, հիշատակվում են տապանը և այն կառուցող Նոյը, ով ըստ բաբելական տարբերակի՝ Քսիսութրոս արքան է.

«Ըստ Բերոսոսի հաղորդած ավանդության՝ Աստված արարչությունից հետո վեց անգամ հայտնվում է մարդկանց՝ տալով պատգամներ (այդ թիվը համընկնում է աստվածային համարված սրբազան գրքերի քանակին): Սակայն մարդկանց մեղսագործությունը սպառեց Աստծո համբերությունը, և Աստված որոշեց նրանց պատժել ջրհեղեղով: Աստծո արդարադատ Աչքը չանտեսեց նաև մի քանի բարեպաշտների՝ Քսիսութրոս արքայի գլխավորությամբ: Հենց նրան էլ պատվիրեց գրի առնել աշխարհի պատմությունը ու թաքցնել հողի տակ, Ջրհեղեղից փրկվելու համար պատրաստել մեծ նավ: Երբ ամեն բան պատրաստ էր, արքան ցանկացավ իմանալ, թե ուր պետք է հասնի իր նավը: Երկնքից պատասխան ստացվեց՝ «Աստվածների մոտ»... Իսկ երբ փրկվածները ցած իջան նավից, երկնային ձայնն ավետեց, որ նրանք Հայաստանում են» [106]:

*Նոյի թագավոր լինելը հաստատող այլ ավանդություններ էլ կան. օրինակ՝ փռյուգականը, ուր ասվում է. «**...ավանդում են սիբիլեացիների մատյանները, թե իբր Ջրհեղեղի մասին գուշակվեց Նաննակ կամ Աննակ կամ Ինակ (Նովքոս, Նոյ) թագավորի ժամանակ, և իբր նա մահացավ 300-ամյա հասակում: Ջրհեղեղը եղավ, և նախ Փռյուգիան ազատվեց ջրերից, և տապանը նստեց Արարատ լեռան վրա»*** [107]:

---

[104] Ուխտանես Եպիսկոպոս, Հայոց Պատմություն, Երևան, 2006, էջ 33:

[105] Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002, ст. 170.

[106] Արտակ Մովսիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 5:

[107] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904, էջ 93:

*Սուրբ Գրիգոր Լուսավորիչը Նոյին անվանում է **«հայր աշխարհի և տեր երկրի»**, ինչը նույնպես այդ խորհուրդն ունի. «հայր»՝ այսինքն քահանա, «տեր»՝ այսինքն թագավոր.*

«Պատուհասի անցնելուց հետո Նա արդար մարդուն հավիտենադիր ուխտով կարգեց հայր՝ աշխարհի և տեր՝ երկրի: Նրան երկարակյաց դարձրեց, որ պատմի գալիք սերունդներին իր բարկության տիեզերական պայմանը» [108]:

Այսպիսով տեսնում ենք, որ այդ հեռավոր ժամանակներում միայն Հայաստանում կար թագավոր-քահանա օծության կրող մեկը, և այդ մարդը Նոյ նահապետն էր:

Նոյը Քրիստոսի նախատիպն էր

Նոյը նաև համարվում է Փրկչի նախակերպարը, քանզի արդար թագավոր էր և Բարձրյալ Աստծո քահանա, ինչպես որ Տերն է թագավորների Թագավոր և հավիտենական Քահանայապետ: Նոյի տապանն էլ Քրիստոսի Եկեղեցու խորհուրդն ուներ, քանզի այն դարձավ մարդկային ցեղը իսպառ ոչնչացումից փրկելու միջոց .

«Նոյը մարմնավորում էր Մեսիային՝ խաղաղության Թագավորին և աշխարհի ճշմարիտ Մխիթարչին, և օրինակն էր Նրա՝ իր արդարության և խաչաձև տապանով, որով սրբվեց աշխարհը մեղքի հեղեղից և եղավ նոր ժողովրդի նախահայր» [109]:

«Սուրբ Գիրքը Նոյ նահապետին ներկայացնում է այսպես. նա իր մեջ միավորում է երեք կերպար՝ մարգարեի, կրոնի առաջնորդի և ճշմարտության քարոզչի և, վերջապես, մարդկային ցեղը նորոգողի կերպարները և նման ձևով ծառայում է որպես Հիսուս Քրիստոսի նախատիպ, Ով փրկեց մեզ խաչով և Իր երկրորդ գալստյան օրը նմանեցրեց Նոյի քարոզած օրերին: Նա նոր, լավագույն ցեղի հայր է, ինչպես Հիսուս Քրիստոսը եկեղեցու գլուխն է» [110]:

Մեծ նահապետի վախճանը և ժառանգությունը

Եվ ահա Նոյը, Ջրհեղեղից հետո ապրելով Արարատյան երկրում որպես «արդարության թագավոր և բարձրյալ Աստծո քահանա», նաև որպես Փրկչի նախակերպար՝ հասնելով խորը ծերության, պատրաստություն էր տեսնում՝ այս

---

[108] Ագաթանգեղոս, Հայոց պատմություն (Սուրբ Գրիգորի վարդապետությունը), Երևան, 1983, էջ 169:

[109] Տեսութիւն պատմութեանց Աստուածաշունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819, էջ 16:

[110] Библейско-Биографический словарь Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский, Москва 2001г., ст. 598.

ժամանակավոր աշխարհից հեռանալու և միանալու իր նախնիներին՝ Ադամին, Աբելին, Սեթին, Ենովսին, Ենովքին և մինչջրհեղեղյան մյուս բարեպաշտ «Աստծո որդիներին», որոնց բոլորի նշխարները հանձնված էին Հայոց սրբազան հողին ի պահ՝ մինչև Տիրոջ երկրորդ գալուստը:

Նոյի պատրաստության նպատակը մեկն էր. նա կամենում էր, որ իր վախճանից հետո Արարատյան երկրում չփոփոխվի բարեպաշտության կարգուկանոնը:

Այդ ժամանակ, ինչպես արդեն իմացանք մեկնիչներից, Սեմը և Քամը բնակվում էին Արարատյան երկրի սահմաններից դուրս, իսկ Հայաստանում Նոյի մոտ էին մնացել Հաբեթը, Թորգոմը (ում անունով Հայաստանի տարածքը նաև կոչվել է Թորգոմա տուն) և Հայկը:

Դառնանք Նոյ նախահոր կյանքի վերջին կարևոր հատվածին:

Նա 840 տարեկան էր, երբ Հայկը 2492-ին սպանեց Բելին:

950 տարի ապրեց Նոյը: Արդեն ժամն էր, որպեսզի Նոյ նահապետը մտածեր, թե ում պետք էր ավանդել այն բարձր պատիվը՝ «արդարության թագավորի և Բարձրյալ Աստծո քահանայի» վեհ կարգավիճակը, որը ժամանակին ինքն էր ժառանգություն ստացել:

Իհարկե, դա չէր կարող լինել զուտ Նոյի կամքը. նախախնամության կողմից արդեն նախատեսված էր ընտրյալը:

Քամի թեկնածությունը միանշանակ բացառվում էր, Նոյից առանձնացած Սեմն իր սերունդներին բարեպաշտության մեջ պահելու ջանքերով էր տարված, իսկ Հաբեթը և Թորգոմը չնայած մնացին Նոյի մոտ, սակայն թե՛ տարիքային, թե՛ այլ պատճառներով արդեն գալիք մարտահրավերներին հարմար չէին:

Բոլորի հայացքներն ուղղված էին գառամյալ Նահապետի որոշմանը, քանզի նրա հեռանալու լուրը մեծ տրտմություն էր պատճառել Արարատյան երկրի բնակիչներին: Նրանց համար մխիթարություն կլիներ՝ սուրբ Նահապետից լսել արժանավոր մեկի անունը, ով նրա տեղը պիտի զբաղեցներ:

Եվ երբ Նոյը հայտնեց իրեն փոխարինողի վերաբերյալ Երկնայինի կամքը, բոլորը մեծ ուրախություն ապրեցին. ընտրվել էր այն վեհաշուք այրը, ով հանուն Ճշմարիտ Աստծո՝ կենաց և մահու պայքարի ելավ Արարչի դեմ ըմբոստացած, կռապաշտության հիմնադիր Նեբրովթ-Բելի դեմ:

Խոսքը հայոց մեծ նահապետ Հայկի մասին էր: Այդ ընտրությունն ընդունելի էր թե՛ կրտսերների, թե՛ ավագների համար՝ հանձինս Հաբեթի, Թորգոմի, նաև Սեմի, ով եկել էր՝ իր հոր վերջին օրերին ներկա լինելու և, որպես հնարավոր ժառանգորդ, հանդես գալու համար:

Բարեպաշտ Հայկին սիրում էին բոլորը, ովքեր նախանձախնդիր էին աստվածապաշտությանը, և նրա ընտրության լուրն ընդունեցին որպես Նախախնամության կամք, Որի առջև բոլորը երկյուղածությամբ գլուխ էին խոնարհում:

Հայկի հեղինակությունը շատ բարձր էր ոչ միայն Հայաստանում, այլև շրջակա բոլոր երկրներում: Նա էր, որ Տիրոջից երկու անգամ հայտնություն ունեցավ՝ նետ աղեղի և տոմարի հետ կապված. նա էր, որ տապալեց առաջին աստվածամարտ Բել-Նեբրովթին, ով ինքն իրեն թագավոր էր կոչել և ապա աստված հռչակել:

Դժվար չէ կռահել, որ մեծ արարողություն տեղի ունեցավ, և Նոյը Հայկ նահապետին հանդիսավորությամբ օծեց և ձեռնադրեց «արդարության թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա»: Իսկ ինչո՞ւ «արդարության թագավոր»: Քանզի դա հենց Նոյից ժառանգած կարգավիճակ էր, նաև՝ որ Արարատյան երկրում տիրում էր արդարությունը, ինչի համար էլ այդպես պետք է անվանվեր, և որ հենց Հայկն ինքը Աստծո առաջ արդար էր:

Մեծ ուրախություն էր տիրում Հայոց աշխարհում, և ըստ արժանվույն գովերգում էին Հայկին: Մանրամասների շուրջ տվյալները չունենք, սակայն ենթադրելի է, թե դրվատանքի ի՛նչ խոսքեր են հնչել Հայկի մասին՝ ելնելով բազմաթիվ ավանդազրույցներից և հիացական արձագանքներից, որ տարբեր ժամանակներում ուղղվել են նրան ոչ միայն հայ, այլև օտար հեղինակների կողմից:

Շատ հավանական է, որ նաև այն ժամանակ երգած լինեն այնպիսի հիմն, ինչպիսին գրել է Հայկի մասին ռուս գրող և պատմաբան Սերգեյ Գլինկան՝ նկատի ունենալով մեծ պատերազմը, որտեղ Հայկը գետին տապալեց Բել-Նեբրովթին.

«Ընկավ, ընկավ աղմուկով, ընկավ մարդկանց թշնամին,
Ընկավ պատերազմի հայտնագործողն առաջին.
Իր հպարտությամբ վայրագացավ,
Ջքվեց աշխարհակալը և ոչնչացավ:

Եվ որոտաց լեռներից կանչը հայկական,
Ով բարեկամ էր մարդկանց, նա էլ մեծ դարձավ.
Պատերազմելով մարդկության համար՝
Հայկն Աստվածության հետ բարեկամացավ:

Պատիվ Հայկին, նրա որդիներին.
Հայկը ցեղակից է երկնքին»[111]:

Այսպիսով, Նոյը մեծ հանդիսավորությամբ ձեռնադրում է Հայկ նահապետին, նրան տալիս համապատասխան պատվերներ, ապա հանձնում է համայն մարդկության նախահայր Ադամի նշխարները, որն իր հետ էր վերցրել տապան մտնելիս և համապատասխան պատվեր տալիս նաև դրանց վերաբերյալ:

Այդ ամենից հետո Նոյը ննջում է խաղաղությամբ, և նրա մարմինը թաղվում է Նախիջևանում:

Հայկը Նոյի կողմից թագավոր և քահանա օծվեց Ն.Ք. 2382 թվականին, և այդ ժամանակ էլ նա ունեցավ իր երրորդ հայտնությունը Տիրոջից:

Իսկ թե դա ինչ հայտնություն էր, կանդրադառնանք ստորև:

Հայոց մեծ նահապետը՝ որպես Բարձրյալ Աստծո քահանա, առավել ճոխացնում և հաստատում էր աստվածապաշտության կարգ ու կանոնը Արարատյան թագավորությունում: Այդ մասին Ալիշանը գրում է.

[111] Сергей Глинка, Гайк. Русские писатели об Армении, Арменгиз, Ереван 1946. Ст. էջ 48.

«Հայկը որպես ազգապետ և կարգադիր՝ միանգամայն և հմուտ նահապետական օրենքներին, իբրև սրբազան կարգ հաստատեց տոները և հիշատակումները»[112]***:***

Հայկի՝ «թագավոր և քահանա» օծվելու մասին միտքը մեր մտացածին եզրակացությունը չէ. հենց այդ հին օրերից մեզ են հասել թե՛ բանահյուսական, թե՛ գրավոր ապացույցներ, որ առավել հավաստի են դարձնում Հայկի՝ Արարատյան երկրի «թագավոր և քահանա» լինելու փաստը.

«Ամենից առաջ հարկավոր է ասել Միջագետքի շումերական քաղաքակրթության և Արատտայի թագավորության քաղաքակրթության միջև մշակութային կապերի մասին... Օրինակ, շնորհիվ էնմերքարի պոեմի՝ մենք գիտենք, որ Արատտայի տիրակալը միաժամանակ եղել է նաև կրոնական և զինվորական առաջնորդ»[113]***:***

Բել-Նեբրովթի և նրա հսկա զորքի դեմ հաղթանակ տանելուց հետո Հայաստանի համբավը տարածվել էր աշխարհով մեկ՝ ուր կարող էր այդ ժամանակներում տեղեկություն հասնել:

Սուրբ երկրի՝Հայաստանի կողմն ուղղվեցին հայացքները, քանզի աշխարհի հետագա ընթացքը շատ հարցերում կախված էր լինելու այս հզորագույն տերությունից և նրա թագավոր-քահանա տիրակալից.

«Հայկը հռչակվեց գերագույն քուրմ-արքա՝ իր իշխանության տակ ունենալով Հայաստանի 18 նահանգ: Ավարտվեց Հայ-Միջագետքյան պատերազմը: Արդյունքում Արատտան պահպանեց իր լիակատար անկախությունը և տարածքային ամբողջականությունը, իսկ միջագետքյան տարբեր իշխանություններ երկար ժամանակով հրաժարվեցին Արատտայի վրա գերիշխելու գաղափարից»[114]***:***

Շումերական արձանագրություններում Հայկի՝ թագավոր-քահանա լինելու մասին պահպանված տեղեկություններում ոմանք «հոգևոր առաջնորդը» թարգմանել են «քահանա», ոմանք էլ՝ «քուրմ»: Քահանա անվանում էին միայն Տիրոջ սպասավորներին: Այդ բառը չկար միջագետքյան կռապաշտ ազգերի մոտ, այդ պատճառով էլ Հայկին «քահանայապետ» անվանելու փոխարեն, ըստ իրենց պատկերացումների, կա՛մ անվանել են «քրմապետ», կա՛մ «քուրմ», սակայն դա, ի դեմս Հայկի, միանշանակ պետք է հասկանալ «քահանայապետ» կամ «քահանա»:

---

[112] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904, էջ 151:

[113] Дэвид Рол, “Генезис цивилизации откуда мы произошли…”, Москва 2005. ст. 143-144.

[114] Մհեր Հակոբյան, Հայ ժողովրդի ռազմական տարեգիրքը, գիրք առաջին, մ.թ.ա. 3000-1561. Երևան 2007թ., էջ 20:

Այն մասին, որ Հայկին աստվածացրել են հարևան կռապաշտ ազգերը

Հայկ Նահապետի առաջնորդությամբ առաջընթաց ապրող Հայոց աշխարհը երկյուղ չէր կրում ռազմատենչ ազգերի սպառնալիքներից. ընդհակառակը՝ նրանք էին վախենում այս հզոր երկրից: Սակայն Հայկի խաղաղասեր բարքի շնորհիվ տարածաշրջանում խաղաղություն էր տիրում: Հարևան երկրները նաև տնտեսական կախման մեջ էին Հայաստանից, քանի որ, ինչպես արդեն տեսանք, մեծ զարգացում ապրած քուռարաքսյան մշակույթի կենտրոն Հայաստանից ամենատարբեր բարիքներ էին արտահանվում այլ երկրներ:

Հայկի մեծության համբավը, հասնելով տարբեր երկրներ, այնպիսի տպավորություն էր թողնում, որ հեթանոսության խավարի մեջ դեգերող վայրերում հաճախ աստվածացնում էին նրան՝ Հայաստանի տարածքն անվանելով «աստվածների երկիր»: Սա առավել արտահայտիչ է երևում շումերաաքքադական ավանդապատումներում, որտեղ նշված է Հայկի անունը գրեթե նույնությամբ՝ «Հայա».

«Աստվածային «սուրբ օրենքների տիրակալն», ըստ շումերաաքքադական դիցաբանության, Հայան (էնկին) էր՝ աստվածներից իմաստնագույնը, որի պաշտամունքն, ինչպես նշվել է, կապվում էր Հայկական լեռնաշխարհի հետ» [115]:

Հետաքրքրական է, որ միջագետքյան երկրներից մնացած ձեռագրերում պատմվում է Հայա և Բել աստվածների միջև եղող թշնամական հարաբերությունների և պատերազմի մասին.

«Բաբելոնյան «Ակտիվ տոնահանդես» կոչվող մի բնագիր պահպանել է Հայայի և Բել-Մարդուկի պատմությունը, որը փաստորեն, Մովսես Խորենացու միջոցով ավանդած Հայկի և Բելի պատմության բաբելոնյան տարբերակն է: Նրանում Բել-Մարդուկը նույնանում է հայկական ավանդության Բելի հետ, իսկ Հայան՝ Հայկի» [116]:

Ոչ միայն հնագույն ժամանակներում, այլև մեր օրերում որոշ հետազոտողներ համարում են, որ Հայկը սովորական մահկանացու չի եղել, այլ՝ աստված.

«Ամենայն տարակուսանքից վեր, ստույգ է, որ Հայկը... ոչ թե դյուցազուն էր, ինչպես կարծում է Աբեղյանը, այլ իբրև աստված և մեծագույն աստված է, ճիշտ այնպես, ինչպես Ինդրան՝ Հնդկաստանի, Ասուրը՝ Ասորեստանի, Խալդին՝ Ուրարտուի համար» [117]:

Հայկ Նահապետին աստվածացնող միջագետքյան կռապաշտ ազգերը, բնականաբար, մեծ խորհրդավորությամբ էին վերաբերվում նաև այն երկրին, որտեղ թագավորում էր Հայոց մեծ նահապետը. Հայաստան աշխարհը մեծարվում էր ամենապատվաբեր անվանումներով.

«Շումերների (նաև ամբողջ Միջագետքի) համար լեռների երկիր էր Հայաս-

---

[115] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ. էջ 36:

[116] Արտակ Մովսիսյան, Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա, Երևան 1992թ., էջ 40- 41:

[117] Մարտիկյան Հ. Ա., Կրոնի ծագումը և դիցաբանությունը ըստ համեմատական կրոնագիտության, Վիեննա 1920թ., էջ 319-320:

տանը: «Էնմերքարը և Արատտայի գլխավոր քուրմը» վիպերգում Արատտան հանդես է գալիս «բարձր լեռների երկիր», «անմահների երկիր», «սուրբ օրենքների երկիր» անուններով»[118]:

Բնական է, որ եթե աստվածացնում էին Հայկին, պատվաբեր անվանումներով մեծարում Հայաստան աշխարհը, անտարբեր չէին լինի նաև այդ երկրի բնակիչների՝ հայերի հանդեպ: Եվ իսկապես, այդ հեռավոր, հնագույն ժամանակներում Արարատյան երկրի բնակիչների մասին շումերաաքքադական ժողովուրդներն ունեցել են զարմանալի դրվատական կարծիք, որը պահպանվել է նրանցից մնացած աղբյուրներում.

«Միջագետքյան գրականության հաղորդումների համաձայն՝ սրբազան մեր լեռնաշխարհում, ուր տեղի էին ունեցել աշխարհարարման գլխավոր իրադարձությունները, և պահվում էին տիեզերքը կառավարող սուրբ օրենքները, անմահության ու իմաստության խորհուրդները, բնակվում էին ոչ թե սովորական մահկանացուներ, այլ՝ ընտրյալ ժողովուրդ: Այդ մասին վկայություն է պահպանել շումերական դյուցազնավեպը.

«Ժողովուրդն Արատտայի, որ առավել է մյուս ժողովուրդներից,
Ժողովուրդը, որին Դումուզին ընտրեց մյուս ժողովուրդներից...»[119]

Սա «ընտրյալ ժողովուրդ» հասկացության բացառիկ մի կիրառություն է ոչ միայն ժամանակի վաղեմության առումով, այլ հատկապես նրանով, որ «ընտրյալ» է համարում ոչ թե ժողովուրդն ինքն իրեն (ինչպես հրեաներն ու ճապոնացիները), այլ՝ օտարը նրան՝ ընդ որում հակառակորդ լինելով: Իսկ դա նշանակում է, որ մեր նախնիների աստվածընտրյալ լինելու մասին պատկերացումը գոյություն է ունեցել և ճանաչվել նաև Հայկական լեռնաշխարհի սահմաններից դուրս:

Նույն սկզբնաղբյուրը տեղեկություն է պահպանել աստվածընտրյալ մեր նախնիների՝ սեփական ճանապարհի գիտակցության՝ առաքելության ունենալու մասին, որը վկայվում է Արատտայի տիրակալի խոսքում.

«Երբ պսակն Արատտայի՝
Բարեգութ լաման[120] սուրբ օրինաց երկրի,
Երկնային լուսե պսակի նման որոշեց ճանապարհն Արատտայի,
Այնժամ ես իմ մեծության մասին հաստատ իմացա...»[121]»[122]:

Հայկ նահապետը ոչ միայն Բելին շուն կոչեց, այլև նրա կռապաշտ հետևորդներին անվանեց շների ոհմակ: Իսկ Հայկի սերունդները, իրենց բարեպաշտ Նահապետին նմանվելով, անվանվում էին ոչ միայն իրենց նահապետի անվամբ՝ հայեր, այլև՝ Ար-մեններ՝ Արարչի մարդիկ, ժողովուրդ և որդիներ, ինչպես որ Ջրհեղեղից առաջ այս տարածքի բնակիչներն էին անվանվում Աստծո որդիներ:

---

[118] Անժելա Տերյան «Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան», Երևան 2002, էջ 139:

[119] Kramer, 1952, p. 23; Канева, 1964, с. 211-212; Cohen, 1973, p. 140.

[120] Լամա է կոչվել հովանավոր աստվածությունն ընդհանրապես:

[121] Kramer, 1952, p. 23; Канева, 1964, с. 211-212; Cohen, 1973, p. 125.

[122] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ. էջ 36-37:

Հայաստանն ի սկզբանե, հատկապես Հայկի թագավորության ժամանակ, հեթանոսության մեջ թաղված աշխարհում եղել է այն միակ լուսավոր կենտրոնը, որտեղ ապրել է Արարչի ժողովուրդը՝ որպես Աստծո այն ժամանակվա նախնական եկեղեցի։

«Հեթանոսության սկիզբը, - ասում են, - Սերուքի[123] օրոք եղավ»։ Այնտեղից պարզ է, որ մինչև այդ՝ աստվածապաշտներ կային, և աշխարհի սկզբից կար Աստծո եկեղեցին» [124]։

Հայերը
Հայկին չէին աստվածացնում

Հայերը պաշտում էին միակ ճշմարիտ Աստծուն. նրանք Հայկ նահապետին երբեք չաստվածացրին, այլ մեծարեցին և պատվում են մինչ օրս։

Չպաշտեցին, քանզի մարդապաշտությունը կռապաշտություն է.

«Այդքան երկար դարերը (որ շատ քիչ ազգերի ժամանակագրության մեջ է գտնվում) չկարողացան մոռացության մատնել մեր ազգապետի՝ Հայկի անունը։ 4400 տարուց առաջ նրա որդիները և նրանց ապավինած անձինք՝ զանազան տոհմերից, Հայկին հռչակում էին որպես իրենց ազատարար և պաշտպան՝ Բելի բռնատիրությունից։ Այդքան դարեր հետո այսօր էլ իր սերունդների բերանի և սրտի համար քաղցր և պաշտելի է այդ անունը՝ Աստծո անունից հետո։ Քրիստոնեության ժամանակ և դրանից առաջ ճշմարիտ աստվածապաշտությամբ, օտար և մոլոր ազգերի զառանցանքներից զգուշանալով՝ մեր նախնիները չդասեցին նրան աստվածների կարգին, այլ որպես աստվածամերձ և վեհապանծ անձի՝ դասեցին համաստեղությունների շարքում, և այնտեղ Երիգանոսի և Երկվորյակի միջև մինչ օրս երևում և ճանաչվում է պայծառաճեմ Հայկը (Օրիոնը)» [125]։

Քանի որ այդ համաստեղությանը անհիշելի ժամանակներից Հայաստանում Հայկ են անվանել, Աստվածաշնչի հայերեն թարգմանությունում թարգմանիչները այդպես էլ գրել են՝ «Հայկի համաստեղություն».

«Մենք ուրախ ենք, որ մեր փառապանծ ազգապետը երկնքի լուսավորության մեջ է անվանվում, և տեսնում ենք իր անվամբ պայծառ աստղին և շնորհակալ ենք մեր սրբազան մատենագիրներին, որ այդ անկորուստ ավանդեցին՝ թարգմանությամբ Աստվածաշնչի գրքերում մտցնելով» [126]։

Շատերն են անդրադարձել Հայկ նահապետի պատմությանը, սակայն Հայ-


---

[123] Ըստ Աստվածաշնչի՝ Սերուքը Սեմի սերնդից էր, հրեական նախահայրերից մեկը: Նրա օրոք, ինչպես ավանդությունն է հաղորդում, երևան եկավ կռապաշտությունը:

[124] Եզնիկ Կողբացի «Եղծ աղանդոց», թգմ. և ծնթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994թ., էջ 189:

[125] Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904, էջ 125:

[126] Նույն տեղում, էջ 152:



կի անձի առավել ծավալուն ու խորը հետազոտությամբ, ինչպես նկատելի է, զբաղվել է Վենետիկի Սուրբ Ղազար վանքի միաբան հայր Ղևոնդ Ալիշանը: Այդ կարկառուն հոգևորական հայագետը ուսումնասիրել է ոչ միայն հայերի, այլև տարբեր ազգերի պատմությունները և հանգել է այն եզրակացության, որ Հայկի մասին մեզ հասած տեղեկություններում չկան մտացածին, առասպելական բաներ, ինչպես հունական և հին աշխարհի այլ երկրների առասպելներում.

«Ինչպիսի՞ խոր հնություն և ինչպիսի՞ խորին քննություն է պետք՝ մինչ մեր ազգահորն անդրադառնալը և մանավանդ մինչ հնագույն ավանդությունները մերժելը, ինչպես որ մերժվում է հելլենացիների և այլոց դիցաբանությունը: Այս բոլոր հիշատակությունների մեջ (մի կողմ թողնելով աղեղի հետ կապված երազը) բացի փիլիսոփայական հավաստիքից՝ այլ փիլիսոփայական անիմացություն և հրաշքներ չկան, ինչպես շատ այլ ազգերի ծագման և պատմության մեջ, և եթե նույնիսկ կային էլ մեր հին հեթանոսական նախնիների մեջ այդպիսի զրույցներ և առասպելներ, ապա մեր քրիստոնյա հայրերը դրանք վերացրեցին և ստույգը կամ ճշմարիտը առանձնացնելով՝ ավանդեցին մեզ, ինչն էլ խնդությամբ ընդունում ենք, որ այս ամենը ստուգապես ընդունված են մեզանից հմուտ և բարեպաշտ անձանց դատողությամբ: Բայց մի մեծ և ուսումնական փաստ էլ ունենք եթե ոչ այս պատմության կարևոր պարագայի, ապա գոնե դրա ժամանակի և տարեթվի մասին, որը նույնպես պանծալի հիշատակ և առանձնաշնորհ է մեր ազգի համար, ինչպես ազատության և ազգության ձևավորվելը: Դրա ապացույցն է Հայկի շրջանը կամ թվականը, ինչն ուրիշ տեղ մանրամասն բացատրել ենք»*[127]*:

Այն, որ Հայկը եղել է ոչ թե մտացածին առասպելական հերոս, այլ իրական պատմական անձնավորություն, ուսումնասիրողների դիտարկմամբ ակնհայտ է նաև այն պատճառով, որ Հայկի իշխանության օրոք Հայաստանում զարգացման բարձր աստիճանի հասած տարբեր ոլորտներին պատկանող շատ բաներ երկար ժամանակ համարվել են տվյալ ժամանակաշրջանի համար կատարյալ տեխնոլոգիաներ.

«Հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել Լ. Շահինյանը (1984), որը ցույց է տալիս, թե ինչպես խեցեգործությունը, տնաշինական արվեստը, կենցաղային սովորությունները, հենց թեկուզ լայնալիճ աղեղը, որ գործածել է լեգենդար Հայկը Բելին սպանելիս, 3-րդ հազարամյակից գալիս-հասնում է առաջին հազարամյակ»*[128]*:

---

[127] Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904թ., էջ 146, 147:

[128] Հանդես Ամսօրյա 1998 թ. հունվար-դեկտեմբեր 1-12, Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Վիեննա 1998թ., էջ 424:

Սրբադասում

«Նշխարները Հայկի՝ համբավն է ազգի,
Փառքն իր հայոց մեջ, ինքն էլ՝ երկնքի»[129]։

Կարող է հարց ծագել. եթե Հայկ նահապետը նման սուրբ և բարեպաշտ անձ է եղել, այդ դեպքում ինչո՞ւ մինչ այժմ գոնե Հայ Եկեղեցին չի սրբադասել նրան։

Պետք է ասել, որ Հայկ նահապետի հետ կապված շատ բաներ ծածկված գաղտնիքներ են. այո, դա մեծ խորհուրդ է և, հավանաբար, ծածկված պիտի մնա՝ մինչ սահմանված ժամանակի լրումը։

Բայց հետաքրքիրն այն է որ, ըստ մեզ հասած տեղեկությունների, տարբեր ժամանակաշրջաններում այդ հարցին անդրադարձել են.

18-րդ դարում էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների շարքում եղել է նաև Հայկ նահապետի սրբապատկերը, որտեղ նա պատկերվել է սրբերի խորհրդանիշ լուսապսակով։ Նկարի հեղինակ են համարում Նաղաշ Հովնաթանի որդի Հակոբ Հովնաթանին։

Յավոք, տաճարի վերանորոգման ժամանակ այլ սրբապատկերների հետ նաև Նահապետի պատկերն է վնասվել.

«1780-ական թվականներին, երբ Ղուկաս կաթողիկոսը ձեռնարկել է Էջմիածնի տաճարի վերանորոգումը՝ հրամայելով քանդել տաճարի պատերի ծեփը՝ եղած որմնանկարներով ու զարդանկարներով և նորը նկարել, «Հայկ Նահապետը» մեզ հասել է գլխի հատվածով. ակնհայտ է, որ դա պատկերի մի մասն է. իսկ մարմնի բացակայությունը հնարավորություն չի տալիս եզրակացնելու՝ պատկերի այուժեի մասին։ Նկատի ունենալով գլխի դիրքը և ուսերի դրվածքը՝ կարելի է ենթադրել, որ նա պատկերված է եղել ամբողջ հասակով, հավանաբար, կանգնած աղոթելիս։ Հակոբը ստեղծել է գեղեցիկ, նուրբ դիմագծերով, երազկոտ աչքերով, հանդարտ, խաղաղ հոգեվիճակով մի կերպար...



Հայկ Նահապետ կոչվելուն նպաստում է զորավարի նրա հանդերձանքը՝ սաղավարտը՝ վիզը պահպանող օղեզրահով, պատմուճանի տակի զրահազգեստը, ուսագլխին կոճկվող իշխանական պատմուճանը և նիզակը։ Դիմանկարը թեպետ ինքնաստեղծ է, բայց կերպարը գրեթե հասնում է մինչև կոնկրետու-

[129] Ղևոնդ Ալիշան, Նուագք, սուրբ Ղազար Վենետիկ 1867 թ., էջ 187:

թյան կենսունակ արտահայտության: Նկարչի մոտ իրականի, կոնկրետի զգացողությունը ուժեղ է, և հենց դա է ջերմություն հաղորդում պատկերին» [130]:

Հայկի սրբապատկերի լուսապսակը խոսում է այն մասին, որ Եկեղեցին ևս համարում է, որ Հայկ նահապետը սրբակենցաղ անձնավորություն էր, սակայն, ինչպես ասվեց, Հայկի խորհուրդը ծածկված էր:

Հանուն Աստծո՝ աստվածուրաց Բել-Նեբրովթի դեմ մղած կենաց և մահու պատերազմի արդյունքում Հայկը ճանաչվեց նաև որպես նահատակ, քանզի նման հզոր, մեծաքանակ բանակի դեմ ելնողը մահն աչքի առջև պիտի ունենար. ***«Պատմությունը որպես քաջ և հաղթող նահատակ է հռչակում Հայկին՝ ի մեծ պատիվ իր ազգին»*** [131]:

Աղթամարի կաթողիկոսության մատյաններից մեկում Հայկի մասին պահպանվել է մի գրություն, ինչն իր աշխատությունում զետեղել է Ղևոնդ Ալիշանը.

«Թերևս կարող ենք մեր Հայկին աղեղի հեղինակ անվանել, եթե ոչ իբրև հնարողի՝ անշուշտ, գործածությամբ առաջին աղեղնավորն աշխարհի: Թեպետ այստեղ (Դիվանք Աղթամարա) մի ազգազրույց և ավանդություն կա, ըստ որի՝ Հայկին են ընծայում նաև լարաշարժ գործիքների գյուտը՝ կարծես սրբացնելով նրան, քանի որ երազով նա տեսավ աղեղ և նետը» [132]:

Եվ ընդհանրապես, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, աղոթելով հայ ազգի բարգավաճության համար, չի զատել հայ ազգը մեծ Նահապետի անունից.

«Ի պատիվ Հայոց եկեղեցու՝ պետք է ասել, որ նա, ի սկզբանե հավատարիմ մնալով ազգային պատմության ավանդներին, երբեք չի տարակուսել Հաբեթի տոհմի պատմականության: Արժանին հատուցելով մեր ազգի մեծ անվանադիր Հայկի հայրենափրկիչ անմահ սխրանքին՝ Հայկական Եկեղեցին Հայաստան աշխարհի և հայկական պետականության գաղափարը միատեղել է «Հայկազնեայց աթոռ» խորհրդանշական արտահայտության մեջ: Իր նշանավոր շարականներից մեկում Հայոց Եկեղեցին, դիմելով Աստծուն, խնդրում է՝ միշտ հաստատ պահել Հայկազնեայց Աթոռը, որի համար բարեխոսում են նաև երկնային հրեշտակները.

«Բարեխոսութեամբ վերին քո զորաց՝
Միշտ անշարժ պահեա զԱթոռս Հայկազնեայց»» [133]:

Հայկի սրբությունը և խորհրդավորությունն ընդգծված են, քանի որ ամեն մի վեհ և առաքինի բան կապել են նրա անվան հետ, և որ ամենազարմանալին է, ինչպես ասում է Ղևոնդ Ալիշանը, նաև սուրբ Աստվածածնին են անվանել «Հայկանման»:

Նման արտահայտությունը կարելի էր հանդուգն և անպատշաճ համարել, եթե դա չլիներ տասներորդ դարի Հայ Եկեղեցու մեծագույն վարդապետներից

---

[130] Եղիշե Մարտիկյան. Հայկական կերպարվեստի պատմություն, Գիրք Ա, Երևան 1971թ., էջ 82-83:

[131] Հ. Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904, էջ 153:

[132] Նույն տեղում, էջ 132:

[133] Լևոն Միրիջանյան, Աստվածաշունչը և մենք, Սբ. Էջմիածին, 2009թ., էջ 68:

մեկինը՝ սուրբ Գրիգոր Նարեկացուն: Նա Երկնքի Թագուհուն բազմաթիվ գովաբանական աղոթքներ է ձոնել, իսկ «հայկանման» ասելով՝ ցանկացել է մեկ այլ վեհ անվանումով օրհնաբանել.

«Հայտնի է, որ ազգն ամեն ինչից առավել՝ իր նահապետին մեծամեծ քաջություններ էր վերագրում և հիանում՝ իբրև գերմարդկային շնորհ, ուժ և վայելչություն. այնպես, որ գրեթե հսկա և Հայկ բառերը հոմանիշներ են. ըստ այնմ՝ մեր հին, ընտիր գրիչները ազգային սիրով և լեզվով մեծամարմին հսկայի փոխարեն ասում են հայկաչափ, գերմարդկային ուժով կատարած գործը՝ Հայկաբար, ինչպես որ Ագաթանգեղոսը ասում է Տրդատի համար. «Արդ, հսկայազոր թագավորը, Հայկաբար վերցնելով ութը քար, դրեց իր թիկունքի վրա»: Անվախ և կտրիճ քաջերին կոչում են Հայկասիրտ (Թ. Արծրունի): Թերևս, Հայկի վայելչությունն էլ իրեն նվիրված աստղի հետ խառնելով միայն՝ կարելի է այնպիսի անվախ հանդգնություն անել՝ ամենաշնորհ Աստվածածնին իսկ կոչելով Հայկանման՝ Հայկի պատրվակով խորհրդաբանելով սուրբ և Քրիստոսածին որովայնը. «Գաբրիելը ավետիս տվեց Հայկանման Կույսին՝ երջանիկ և երանելի Տիրուհուն. հրեղեն թևերով սավառնելով, ուրախ լուրից բերկրելով՝ Տերը քեզ հետ է,- ասում էր» և վերջում՝ «Հայկի պես գեղեցիկ փայլելով՝ Աստծուն ընդունեք» (Սբ. Գրիգոր Նարեկացի)» [134]*:*

Սակայն զարմանալի է նաև, որ նման մեծագույն սուրբ այրի անունը չի հիշատակվում Աստվածաշունչ մատյանում, և Հաբեթի սերնդաբանությունը ավարտվում է նրա թոռ և Հայկի հայր Թորգոմով: Եթե մի սերունդ էլ ավելացված լիներ Մովսեսի կողմից, ապա Հայկի անունը ևս կգրանցվեր Հաբեթի ազգատոհմի մեջ.

«Սուրբ Գիրքը, ինչպես ասացինք, Հաբեթի ազգաբանությունը տալով իր հոր (Թորգոմի) անվամբ՝ ավարտում է, Հայկը մնում է անժխտելի պատմության և ավանդության մեջ, ինչի պատճառով էլ հակառակությունների և տարակարծությունների է ենթարկվում» [135]*:*

Եվ ուրեմն, հիմնական տեղեկությունները Հայկի մասին պատմական, հնագիտական և ազգագրական աղբյուրներից են, իսկ Սուրբ Գիրքը Հայկի մասին լռում է: Ճիշտ է, Աստվածաշնչում լռություն է պահպանվում Հայկ նահապետի կենսագրական տվյալների մասին, սակայն, ինչպես արդեն այդ մասին ասվեց, Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ երկու անգամ հիշատակվում է Հայկի անունը (Եսայի 13:10 և Հոբ 48:31), երբ խոսվում է այն համաստեղության մասին, որը կրում է իր անունը:

Այսպիսով, այդ համաստեղությունը դեռ 4000 տարի առաջ անվանվել է Նոյի Տեր Աստծուն պաշտող և երկրպագող Հայկի անվամբ, իսկ շատ ավելի ուշ, միայն հեթանոս հույների կողմից, այն անվանվել է առասպելական մի որսորդի՝ Օրիոնի անվամբ:

Հետաքրքիր ու խորհրդանշական է նաև այն, որ Եկեղեցու սրբերի վարքի

---

[134] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904թ., էջ 154:
[135] Նույն տեղում, էջ 125:

մասին պատմող Հայսմավուրք գրքում էլ նման կերպով է հիշատակվում Հայոց մեծ նահապետի անունը.



«Ըստ Թարգմանիչների աչքի և գրի՝ կարող ենք ասել, որ մեր նախահայրը գերազանց է և վեհ, քան բոլոր օտարների դյուցազունները...

Հայսմավուրքն էլ է հիշում (նրա անունը) հոկտեմբերի 21-ին. «Երևաց նշան երկնքում, և հուր՝ Հայկի յոթ աստղերի վրա» [136]**:**

Հայկի սրբադասման հարցը չի կորցրել իր արդիականությունը: «Մամիկոնեից ուխտ» կազմակերպության նախագահ, գրող, հրապարակախոս Ռաֆայել Համբարձումյանի գլխավորությամբ առաջադրվեց Հայկ նահապետի սրբադասման հարցը և կազմակերպվեց ստորագրահավաք. ***«Անհրաժեշտ է, որպէսզի Հայաստանեայց եկեղեցու հրաւիրելի Ազգային-եկեղեցական միաւորեալ ժողովը Հայկ Նահապետին դասի Հայաստանեայց Առաքելական Ս. եկեղեցու սրբերի շարքը՝ որպէս մեր անցեալ, ներկայ, անկասկած նաեւ ապագայ սերունդների հոգեւոր առաջնորդ»*** [137]**:**

Զուգահեռներ Հայկի և Մելքիսեդեկի միջև

«Գաղտնիք, և ոչ մեկը, այլ բազմաթիվ: Եվ այսպես, ո՞վ է նա՝ «Ճշմարտության Թագավորը» Մելքիսեդեկը» [138]**:**

Այժմ պահն է եկել՝ զուգահեռներ անցկացնելու Հայկի և Մելքիսեդեկի միջև. տեսնենք՝ ի՞նչ ընդհանրություններ կան նրանց միջև:

Տեսանք, որ նույն ժամանակաշրջանում գոյություն ունեին երկու թագավորություն, որտեղ ճշմարիտ Աստծո՝ միաստվածության հետևորդներ էին Արարատյան թագավորությունը՝ Հայկական լեռնաշխարհում, և Սաղեմը՝ Քանանում:

---

[136] Ղևոնդ Ալիշան, Հին հաւատք կամ Հեթանոսական Կրօնք Հայոց, Վենետիկ. Ս. Ղազար, 1895 թ., էջ 237, 238:

[137] Ռաֆայել Համբարձումյան: «Տե՛ս իմ 2004 թ. հոկտեմբերի 5-ի նամակը Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին եւ 2007 թ.հոկտեմբերի 29 –ի նամակները Ամենայն Հայոց եւ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսներ, նորին սրբութիւն Գարեգին Բ եւ Արամ Ա կաթողիկոսներին, Երուսաղեմի եւ Պոլսի Հայոց պատրիարքներին»:

[138] Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 3.

Մելքիսեդեկը Սաղեմի թագավորն էր և Բարձրյալ Աստծո քահանա. նա հիմնադիրն էր այդ քաղաքի՝ Սաղեմի, որ հետագայում վերանվանվեց Երուսաղեմ: Այստեղ ապրեցին Տիրոջ մարգարեները, այստեղ գործեց Աստծո Որդին՝ Իր աստվածային ոտքերով քայլելով այդ սուրբ հողի վրա: Այստեղ Նա խաչվեց, թաղվեց և երրորդ օրը հարություն առավ մեռելներից, այստեղ առաքյալները և սուրբ կանայք մեկտեղ հավաքվեցին, և նրանց վրա իջավ Սուրբ Հոգին, և հիմնվեց Եկեղեցին:

Իսկ Արարատյան թագավորությունը մի երկիր էր, որն ի սկզբանե անվանվել էր Արևելք. այստեղ արարվեց Եդեմական Դրախտը և մարդ արարածը, և Ինքն Աստված քայլեց Դրախտում, որն այս սուրբ երկրում էր:

Այստեղ Ջրհեղեղից հետո հանգրվանեց Նոյան տապանը, այստեղ Նոյը զոհ մատուցեց Աստծուն, այստեղ երևաց ուխտի ծիածանը, և Աստված մարդկանց տվեց հետջրհեղեղյան պատվիրաններ: Այստեղ ծնվեցին և կենցաղավարեցին բոլոր մինչջրհեղեղյան բարեպաշտ նահապետները:

Երկար ժամանակ այս օրհնյալ տարածքում ապրեցին նաև հետջրհեղեղյան նահապետները, և այստեղ թաղվեցին Նոյի, Հաբեթի, Թորգոմի և այլոց մասունքները:

*«Անմահների երկիր» են անվանել Շումերները Հայկ նահապետի թագավորությունը. **«Արատտան նույն «Անմահների երկիրն է»»** [139]:*

*Սակայն այդպես է անվանվել նաև Մելքիսեդեկի թագավորությանը. **«Մելքիսեդեկի թագավորությունը հիշատակվում է աշխարհի բոլոր կրոններում և անվանվում «Անմահների երկիր»»** [140]:*

Արդեն գիտենք, որ թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա Մելքիսեդեկը Տիրոջ նախակերպարն էր, ով հաց և գինի՝ գալիք փրկչական Սուրբ հաղորդության խորհուրդները մատուցեց:

Այդպիսին էր նաև թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա Հայկը. նա Փրկչի նախակերպարը խորհրդանշեց՝ սպանելով առաջին նեռ Նեբրովթ-Բելին.

***«Հայկը ստույգ աստվածապաշտ էր և գրեթե կրոնական եռանդով հակառակվեց Բելին. Վարդանը... Լուսավորչին վերաբերող իր ներբողում համարձակ ասում է, թե Աստված Հայկին հրամայել է հակառակվել կռապաշտությանը, և «Նա չպաշտեց Բելի պատկերին, ինչպես դա արեցին երկրի 71 նահապետները, այլ խրախուսվելով Աստծո կողմից՝ սատակեցրեց պատկերապաշտության կենդանի առաջնորդին»»** [141]:*

Սա ակնարկ էր Արևելքից՝ Արարատյան երկրից, Տիրոջ երկրորդ գալստյան և բուն նեռի կործանման մասին:

Ըստ ավանդության՝ Մելքիսեդեկի մոտ են եղել Ադամի նշխարները, և նա է դրանք թաղել Գողգոթայում: Բայց նաև տեսնում ենք, որ նախահոր նույն սուրբ մասունքները գտնվել են Հայկ նահապետի մոտ:

---

[139] Արտակ Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 16-17:

[140] Григорьева Елена Валентиновна... ст.44.

[141] Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 20:

Մելքիսեդեկը մարգարեության և պայծառատեսության շնորհ ուներ, ինչը երևաց Ռեբեկայի հղիության պարագայում. այդպես և Հայկ նահապետը հայտնություններ էր ունենում Աստծուց. նա հայտնությամբ Տիրոջից ստացել էր առանձնահատուկ լայնալիճ աղեղի և Հայոց տոմարի գյուտը, այսինքն՝ Տիրոջ հետ հարաբերվող խորը հոգևոր մարդ էր:

Ասում են, որ Աստվածաշեն անվամբ իր բերդն էլ նա երկնային պատվերով է կառուցվել.

«Դարձյալ «Աստծո ներշնչանքով Հայկը կառուցում է անառիկ բերդ և արժանավայել երախտագիտությամբ իր Աստծու անունով իր ձեռակերտը կոչում է «Աստվածաշեն»: Աստվածաշեն անունը նրա հնամենիության նշանն է: Քրիստոնեական դարերում այսպիսի անուն չէր կարող դրվել, և սա Աստված անվան հնագույն պահպանված հիշատակարան է» [142]:

Մելքիսեդեկին աստվածացրել են աղանդավորական հոսանքները. այդպես և Հայկին են աստվածացրել Միջագետքի կռապաշտ երկրները:

Մելքիսեդեկն անհայր-անմայր և անազգատոհմ էր համարվում, քանի որ նրա մասին տեղեկություններ չկային Սուրբ Գրքում: Նույնկերպ Հայկի նման աստվածային շնորհներով զարդարված անձի մասին Սուրբ Գրքում հիշատակություն չկա:

Հետաքրքիրն այն է, որ Սեմի սերունդների ազգատոհմը հասնելով Եբեր, Աբրահամ, Իսահակ, Հակոբ... այդպես շարունակվում է մինչև Քրիստոս: Իսկ Հաբեթի սերնդաբանությունը հասնում է մինչև Թորգոմ և կարուկ ընդհատվում հենց այն մասում, որտեղ պիտի գրվեր արդեն Թորգոմի անդրանիկ որդու՝ Հայկի անունը:

*Մելքիսեդեկը չէր կարող Սեմի ճյուղից սերված լինել, քանզի ըստ Պողոս առաքյալի՝ նա **«ուրիշ ցեղի էր պատկանում»** [143]:*

Ուրեմն, նա կա՛մ Քամի, կա՛մ Հաբեթի սերնդից էր:

Ինչ վերաբերում է Քամի ճյուղին, դա միանշանակ բացառվում է, քանզի այդ ճյուղից ելան նզովված Քանանը, աստվածուրաց Նեբրովթ – Բելը և բազմաթիվ այնպիսի անձինք, որոնց սերունդները դարձան կռապաշտ ազգեր:

Այսպիսով, մնում է միայն Հաբեթի ճյուղը, որին պատկանում էր նաև Հայկ նահապետը:

Տիրոջ համար ասված էր, որ Նա քահանա է՝ ըստ Մելքիսեդեկի կարգի, իսկ Սուրբ Աստվածածնին մեծարելու համար գործածվել է «հայկանման» գովասանական արտահայտությունը:

Թագավոր և բարձրյալ Աստծո քահանա Հայկ նահապետի պես մեկի համար մեծ շնորհներով զարդարված լինելը զարմանալի չէ, քանզի նա, ապրելով մի վայրում, որտեղ բնակվել են համայն մարդկության նախահայրերը՝ Ադամից մինչ Նոյ նահապետ, այդ երկրի բարեպաշտ տիրակալներից ավանդաբար կարող էր ժառանգել այդ բոլոր շնորհները: Իսկ ինչ վերաբերում է Մելքիսեդեկին,

---

[142] Ղևոնդ Ալիշան Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 19, 18:
[143] Եբր. 7.13:

նա նույնպես նման շնորհներով զարդարված անձ լինելով հանդերձ՝ Քանանում էր ապրում, իսկ այդ վայրը հայտնի էր միայն Սոդոմի և Գոմորի հոռի բարքերով ապրող ազգերով:

Հոգևոր այդ անապատում Մելքիսեդեկի քահանայական և թագավորական շնորհազարդությունը միանգամայն անհավանական, անիմաստ և անհիմն կլիներ: Դա նույնն է, թե ասեն՝ մեծ հոգատարություն և խնամք պահանջող, պտուղներով ծանրաբեռն որևէ ծառ աճել է հեռավոր ու չոր անապատում, որտեղ նրա փարթամության պայմանները բացառված են:

Մինչդեռ եթե նա ծագումով այնպիսի տեղանքից էր, որն Աստված զարդարել էր բազում հոգևոր շնորհներով, ինչպիսին Արարատյան երկիրն էր, դա լիովին դիմանում է առողջ տրամաբանությանը:

Ղպտիների երջանկահիշատակ պատրիարք Շենուդա Գ-ն իր աշխատություններից մեկում համոզմունք է հայտնում, որ անհիմք տեղում ինչ-որ լուրջ բան չի կարող ի հայտ գալ, քանզի ամեն ինչի համար հարկավոր են պայմաններ: Այդպես նա համարում է, որ Աբելը չէր կարող զոհ մատուցել Աստծուն, եթե նա այս գաղափարն ավանդության միջոցով ստացած չլիներ իր հայր Ադամից, ով այն ընդունել էր հենց Աստծուց: Խոսքը նաև մյուս նահապետների և Նոյի մասին է, ովքեր բոլորն էլ միմյանցից փոխանցման միջոցով են ստացել զոհաբերության մասին ավանդությունը:

Այդկերպ՝ և Մելքիսեդեկի քահանայությունը. դա ինչ-որ նորամուծություն չէր, այլ ավանդությամբ ստացված.

«Մելքիսեդեկի հետ մեր հայր Աբրահամի հանդիպման պատմության մեջ գրված է, որ Մելքիսեդեկը «Բարձրյալ Աստծո քահանա էր» [144]***: Ինչպե՞ս էր հայտնի քահանայության գաղափարը, որը Մելքիսեդեկին իրավունք տվեց՝ օրհնելու Աբրահամին, և որի պատճառով էլ Աբրահամը Մելքիսեդեկին իր ունեցած ամեն ինչից տասանորդ տվեց: Սրանով Մելքիսեդեկն ավելի բարձր մեկը համարվեց, քան Աբրահամը*[145]***: Այդ ժամանակ չկար գրավոր օրենք, որ բացատրեր քահանայությունը, նրա ազնվականությունը, գործը և ուրիշներին օրհնություն բաշխելը: Մննդոց գրքի նախորդող գլուխներում «քահանա» կամ «քահանայություն» բառը չի հիշատակվում: Ուրեմն ինչպե՞ս էր եկել քահանայության մասին գիտությունը, եթե ոչ ավանդության միջոցով»*[146]***:***

Տեսնում ենք՝ միանգամայն տրամաբանական է, որ Մելքիսեդեկը ժառանգաբար նախահայրերից էր ստացել քահանայությունը, իսկ դա խոսում է այն մասին, որ Մելքիսեդեկը հենց Նոյ նահապետից պետք է ստացած լիներ այն կարգավիճակը, ինչը որ ուներ Հայկ նահապետը: Եվ քանի որ հնարավոր չէր Նոյի համար՝ իր «թագավոր և քահանա» կարգավիճակը միևնույն ժամանակ ժառանգաբար փոխանցել երկու տարբեր անձերի (ինչպես Իսահակը չէր կարող նույն օրհնությամբ օրհնել թե՛ Հակոբին և թե՛ Եսավին), ուստի տեսնում ենք, որ

---

[144] Ծննդոց 14:18:

[145] Եբր. 7:6-7:

[146] Comparative Theology By H.H. Pope Shenouda III, Translated by Mary & Amani Bassilli First Edition COPA, Published by Coptic Orthodox Publishers Association, London 1988, 58 p.

խոսքը միևնույն մարդու մասին է. Նոյը որպես իր հաջորդ՝ օրհնել և ձեռնադրել է երկու տարբեր անվանումներով ներկայացող միևնույն ժառանգին՝ Հայկ – Մելքիսեդեկին։

Ուրեմն, Մելքիսեդեկը ինչ-որ հրաշքի միջոցով չէ, որ Քանանում հանկարծ դարձավ Բարձրյալ Աստծո քահանա, և բոլորովին ղևտական քահանայության ճյուղից չէր նրա քահանայությունը.

«Այս Մելքիսեդեկը Սուրբ Գրքում ներկայացված է որպես Բարձրյալ Աստծո քահանայապետ։ Նա... հրեաներից քահանայություն չէր ստացել՝ հաջորդաբար սերնդեսերունդ ժառանգելով» [147]։

Այսպիսով, ինչպես տեսանք, նույն ժամանակաշրջանում ապրած «արդարության թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա» Մելքիսեդեկի և «արդարության թագավոր և Բարձրյալ Աստծո քահանա» Հայկի միջև, անհավանականության աստիճանի այնքան ընդհանրություններ կան, որ կամա-ակամա, այդ փաստերի ճնշման ներքո, անխուսափելի է դառնում հանգելն այն եզրակացության, որ խոսքն այստեղ միևնույն անձնավորության մասին է։

Մովսես Խորենացու պատմությունից մեզ հասած տեղեկությունները Հայկի մասին շատ սակավ են, ինչը հետազոտողների մոտ առաջացրել է մի տեսակ անբավարարվածության զգացում, և համարել են, որ ուրիշ շատ այլ խորհրդավոր բաներ պետք է որ կապված լինեն հայոց մեծ նահապետի հետ.

«Հայկը միայն Բելին սպանելով չհաստատեց իր տունը, այլ ուրիշ դյուցազնական քաջագործություններ էլ արեց, ինչը մեզանից ծածկեց ժամանակը, և թերևս, դա դեռ հայտնի դառնա» [148]։

Ահա՝ կարծես թե արդեն հասել է ժամանակը, և բազմաթիվ հիմնավորումները, որ քաղել ենք հնագետների, պատմաբանների, հոգևոր գործիչների և տարբեր ոլորտների վերլուծություններից, բացում են այն խորհրդավոր վարագույրը, որի ներքո մինչ օրս մեզանից թաքցվել է Հայկ նահապետի կյանքի կարևորագույն դրվագների մի մասը։

Սակայն, ինչպես տեսնում ենք, բոլոր հաստատումներն առ այն, որ հենց Հայկն է եղել Մելքիսեդեկը, մեծ մասամբ անուղղակի են. մի՞թե այս մասին գոնե մի առավել դիպուկ՝ ուղղակի կարծիք չի եղել այս հազարամյակների ընթացքում։

Ահա, ի զարմանս մեզ, մենք իսկապես նման մի կարծիքի հանդիպեցինք, սբ. Գրիգոր Նարեկացու «Ապարանի Սուրբ Խաչի պատմությունը» աշխատության դրվագներից մեկում, որտեղ նա հայ ժողովրդի գովքն է անում.

«Քանզի սրանք (Թորգոմի սերունդները) իրենց տոհմային պայազատության երևելի այրեր էին, վեհերի ցեղից, դյուցազունների զարմից, իշխանական տնից, գովյալների գնդից, քաջերի դասակարգից, Մելքիսեդեկի հարազատ արյան շառավղից» [149]։

Միանշանակ ընդունելի է այն, որ հայ ազգը Հայկ նահապետի հարազատ

---

147 Евсевия Памфила, Церковная История, Санкт-Петербург, 2007, ст. 22.

148 Ղևոնդ Վ. Մ. Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904թ., էջ 146:

149 Սբ. Գրիգոր Նարեկացի, Ապարանի Սուրբ Խաչի պատմությունը, Երևան, 2005թ. էջ 13:

արյան շառավղից է սերվել, և ինչպես տեսնում ենք, միևնույն ժամանակ հայերը սերվել են Մելքիսեդեկի հարազատ արյան շառավղից: Եվ մի՞թե սա առավել խոսուն փաստ չէ, որ հայերը սերվել են մի խորհրդավոր, սուրբ և աստվածահաճո անձնավորությունից, ով պատմության մեջ հանդես է եկել երկու տարբեր անվանումներով՝ ***Հայկ - Մելքիսեդեկ:***

Այսպիսով, Մելքիսեդեկի՝ Հայկ նահապետը լինելուց ավելի հավանական կարծիք այս հազարամյակների ընթացքում դեռ չի եղել:

Սակայն այստեղ մի հարց էլ է մնում. արդյոք ժամանակագրական առումով համապատասխանո՞ւմ են Հայկ և Աբրահամ նահապետների ապրած տարիները, հնարավո՞ր էր, որ նրանք այդ ժամանակաշրջանում հանդիպեին միմյանց:

Հայկ նահապետը յուրահատուկ մարդ էր. նա Նոյ նահապետի ժամանակակիցն էր, ապրել էր նրա հետ նույն երկրում, բնականաբար, շփվել էր համայն մարդկության նահապետների՝ Սեմի, Քամի և Հաբեթի հետ, նա սպանել էր Նեմրութ-Բելին:

Մնում է պարզել, թե նա որքա՞ն է ապրել:

Ստորև կփաստենք, որ Հայկն ապրել է շատ երկար, ինչը հատուկ էր այդ ժամանակների սերունդներին:

Նախ հիշենք, որ քիչ չէին կարծիքները, որ Սեմ նահապետն է եղել Մելքիսեդեկը. ***«Սեմը ապրեց ոչ միայն Աբրահամի ժամանակ, ինչպես ասում է Սուրբ Գիրքը, այլ մինչ Հակոբը և Եսավը՝ Աբրահամի որդու որդիները»*** [150]*:*

Ինչքան էլ որ Հայկի տարիքը մեծ լիներ, միևնույն է, նա չորս սերնդով կրտսեր էր Սեմից, և Սեմին Մելքիսեդեկ համարողներին կարող ենք հակադարձել՝ նշելով, որ տարիքային առումով ևս առավել հավաստի է Հայկ նահապետի անձը:

Տարեթվերը և ժամանակները քննելը չափազանց դժվար խնդիր է, ինչի համար էլ մենք խորը ուսումնասիրություններից ձեռնպահ մնացինք, քանի որ եբրայերեն Աստվածաշնչում և հունարեն Յոթանասնից թարգմանություններում նախահայրերի տարեթվերի հետ կապված բավականին մեծ տարբերություններ կան:

Եվս մեկ տարբերություն. հունարեն թարգմանության մեջ նահապետները երկուսով ավելին են. եբրայերեն թարգմանության մեջ բացակայում է Սեմի որդի Արփաքսադին հաջորդող Կայնանի անունը, իսկ Հաբեթի որդիներից էլ բացակայում է Ելիսան:

Սակայն այդ հաշվարկներին անդրադարձել է սուրբ Եպիփան Կիպրացին՝ «Մելքիսեդեկյան» աղանդի դեմ աշխատությունում: Սբ. Եպիփանն ասում է, որ Սեմի ոչ միայն ազգատոհմն է նշված Աստվածաշունչ մատյանում, այլև նրա ապրած տարիների քանակը. նա ապրել է 602 տարի: Իսկ Աբրահամին հանդիպելու համար, ըստ Եպիփանի, նա պետք է ապրեր 1241 տարի, ինչը, բնականաբար, չի համընկնում Աստվածաշնչի տվյալներին.

«Սամարացիները համարում են, որ նա Նոյի որդի Սեմն է: Սակայն, սրանք էլ են արժանի ծաղրվելու... Սեմը չէր կարող ապրել մինչ Աբրահամի ժամանակ-

[150] Ефрммъ Сиринъ, Творения. Том 6. Толкование на книгу Бытия, Москва 1995. Ст. 277.

ները, որպեսզի կարելի լինի համարել, որ նա է Մելքիսեդեկը: Եվ լիովին ոչինչ է դառնում սամարացիների գարշելի կարծիքը» [151]:

Իսկ ինչ վերաբերում է Հայկին, ապա նա, ըստ մեկնիչների, 60-70 տարեկան էր, երբ Ն. Ք. 2492 թ. սպանեց Բել-Նեմրութին. այսինքն՝ նա ծնվել է մոտ Ն. Ք. 2552 թ. և քանի որ նրա ապրած կյանքի տարիների մասին գրված չէ Սուրբ Գրքում, ապա եթե համարենք, որ նա էլ ապրել է այնքան, որքան Սեմը՝ ըստ Աստվածաշունչ մատյանի՝ մոտ 602 տարի, ապա կտեսնենք, որ նա ապրել է մինչև Ն. Ք. 1950 թվականը: Եվ այս դեպքում նրա՝ ոչ միայն Աբրահամի, այլև Իսահակի և Հակոբի ժամանակ ապրած լինելը ժամանակային առումով կասկածի ենթակա չէ: Նաև հնարավոր է, որ նա իր հատուկ առաքելության կատարման համար ոչ միայն 600 տարի ապրած լիներ, այլև, ինչպես ժամանակին Սիմոն Ծերունուն իր առաքելությունը կատարելու համար հրամայված էր ապրել այդ ժամանակների համար անբնական երկար տարիներ, այսինքն՝ մոտ 300 տարի, այդպես և Հայկը կարող էր նույնիսկ 600-ից էլ ավել ապրել՝ չնայած այդ 600 տարին էլ լիովին բավարար էր, որպեսզի նա Մելքիսեդեկ անվան տակ իր առաքելությունն ի կատար ածեր՝ հանդիպելով Աբրահամ նահապետին:

Իսկ Աբրահամի հարցում ուսումնասիրողները եկել են այն եզրակացության, որ նա ապրել է Ն. Ք. XXII–XX դարերում: Եվ Սուրբգրային ժամանակագրությամբ հանգել են այն եզրակացության, որ Աբրահամը Խառանից դուրս է եկել Ն. Ք. 2091 թվականին, երբ 75 տարեկան էր: Ուրեմն, նա ծնվել է 2166-ին և քանի որ ապրել է 175 տարի, ապա մահացել է Ն. Ք. 1991-ին:

Այնպես որ՝ թե՛ Հայկի և թե՛ Աբրահամի ապրած տարիները լիովին բավարար են, որպեսզի Հայկը նաև ժամանակագրական առումով համապատասխանի Մելքիսեդեկ նահապետը լինելուն:

Ուստի, այլևս կասկած չպետք է լինի, որ Հայկ և Մելքիսեդեկ անվանումների ներքո գործել է միևնույն այրը, և տրամաբանական է, որ նա եղել է հայոց մեծ նահապետը՝ Հայկը: Ուստի, անկասկած հարկ է՝ նրան սրբադասել: Սակայն եթե նույն ինքն է գործել այդ երկու անվանումներով, ուրեմն նա՝ Հայկ նահապետը, դարեր առաջ արդեն իսկ սրբադասված է եղել թե՛ հայ և թե՛ ավանդական մյուս եկեղեցիների կողմից՝ իր երկրորդ՝ Մելքիսեդեկ ծածուկ անվամբ:

Այս տրամաբանությամբ հայոց մեծ նահապետ Հայկի հիշատակման տոնակատարությունը նշվում է տարբեր եկեղեցիների կողմից, և նրա բազմաթիվ սրբապատկերներն առկա են տարբեր եկեղեցիներում:

Նա նաև հիշատակվում է ծիսական արարողությունների ժամանակ.

«Մելքիսեդեկը... Աբրահամի զորեղ բարեկամը, խոստովանված Դավթի կողմից, նախակարապետը Հիսուսի, վեհացվել է արտասովոր կերպով: Մելքիսեդեկի անունը հիշատակվում է ծիսական գրքերում (խորանի օծման ժամանակ) և պատարագամատույցում (հաղորդության աղոթքում)» [152]:

Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին հուլիս ամսվա մեջ է նշում մեծ նահա-

---

[151] Творения Святого Епифанія Кипрскаго. Част вторая, Об Ересяхъ. Москва 1864 г. Ст. 443-446.

[152] Словарь библейского богословия / редкол.: К. Леон-Дюфур [и др.]. – Киев: Кайрос М.: Истина и жизнь, 1998. – 1288 с.

*պետ Մելքիսեդեկի հիշատակման տոնը՝ մյուս նախահայրերի և նահապետների հետ՝ հետևյալ հերթականությամբ. **«Սուրբ նախահայրերի Ադամի, Աբելի, Սեթի, Ենովսի, Ենովքի, Նոյի, Մելքիսեդեկի»**, և ապա շարունակում՝ **«Աբրահամի, Իսահակի, Հակոբի»** [153] և մյուս սուրբ նահապետների անունները: Առաջինները՝ Ադամից սկսած, մինչև Մելքիսեդեկը ներառյալ, ապրել են Մեծ Հայքի տարածքում, իսկ Աբրահամը և նրանից սերված նախահայրերը՝ արդեն Պաղեստինում: Իսկ Հայկ-Մելքիսեդեկը դարձել է կապող օղակ՝ Արարատյան երկրի նախահայրերի և պաղեստինյան նահապետների միջև.*

***«Մելքիսեդեկը Նախահայրերի և Նահապետների միջև ուրույն օղակ է, որ իրար է կապում այս երկու խմբերը: Ունի նախահայրերի բնական հավատքը՝ որպես Բարձրյալ Աստծո քահանա: Իսկ նահապետներից առաջինը օրհնություն է ստանում իրենից: Մելքիսեդեկը հոգևոր մի գիսավոր է, որ երեք անգամ երևում է Աստվածաշնչի երկնակամարի վրա՝ սկզբում, մեջտեղը և վերջավորությունում»**[154]:*



Եվ եթե այս ամենը ընդունվի որպես հիմք՝ իրողություն, հավանաբար, հարկավոր կլինի հուլիս ամսի համապատասխան այդ օրը նշել Մելքիսեդեկի, այսինքն՝ մեր նախահայր Հայկ նահապետի տոնը՝ Սուրբ Պատարագի արարողությամբ և համապատասխան հանդիսավորությամբ: Այս պարագայում սրբադասելու կարիք էլ չի լինի, քանզի այդ արդեն արվել է դարեր առաջ. ուղղակի հարկավոր կլինի՝ տոնացույցում գրել ոչ թե «Մելքիսեդեկ», այլ «Հայկ-Մելքիսեդեկ»: Այս սրբապատկերում նախահայրերի և նահապետների մեջտեղում մյուսներից առավել հանդիսավորությամբ ներկայացված է Մելքիսեդեկը՝ Սուրբ Խորհուրդների սկիզբը ձեռքին:

Իհարկե, դեռ մնում են պարզաբանման կարիք ունեցող հարցեր, որոնց արդեն կանդրադառնանք հաջորդ մասերում:

---

[153] Պաշտոնական օրացոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2015 թ., էջ 120-121:

[154] Շնորհիք արքեպիսկոպոս Գալուստեան, Աստվածաշնչական Սուրբեր, Երևան 1997, էջ 51:

Հայաստանից Քանան

«Եթե ընդհանրական և արտաքին վկայություններ չունենայինք, թերևս պետք էր վախենալ, որ ազգային եռանդով չմոլորվենք՝ մեր ազգի և երկրի խոր հնությունը տեսնելով, սակայն բախտավոր ենք, բավական լույս ունենալով՝ առանց խաբեության տեսնել մեր աշխարհի հնագույն դարերը՝ թերևս շատերից և նույնիսկ բոլոր աշխարհներից առավել: Եվ այսքան լույսն անտեսելով՝ ուրիշ ազգերի պես մեր երկրի պատմության սկիզբն էլ խավարապատ և աննշույլ ասել, դա կամավոր կուրություն է և տգիտություն»[155]:

Հայկ և Մելքիսեդեկ նահապետների միջև առկա բազմաթիվ ընդհանրություններից եզրակացնելով, որ այդ երկու անվանումների ներքո հանդես է գալիս միևնույն նախնին, մենք կարծես թե կանգնում ենք մի անլուծելի խնդրի առաջ. ինչպե՞ս կարող է նույն անձը միևնույն ժամանակ գտնվել և թագավորել տարբեր երկրներում: Եվ եթե իսկապես խոսքը միևնույն անձնավորության մասին է, ապա պետք է հետևություն անել, որ Հայկ նահապետը թողել է Արարատյան երկիրը և տեղափոխվել հարավ-արևմուտք՝ Քանանի երկիր: Սակայն, ինչո՞ւ պիտի այդ ժամանակաշրջանի ամենահզոր երկրի թագավորը և հոգևոր առաջնորդը թողներ անընդհատ բարգավաճող իր հայրենիքը՝ այդ ժամանակաշրջանի «Ավետյաց երկիր» Հայաստան աշխարհը, իր ժողովրդին և այն բոլոր առանձնահատուկ սրբությունները, որ կային այդ երկրում և ճանապարհ ընկներ ոչնչով աչքի չընկնող մի այլ երկիր՝ Քանան:

Հարցն այն է, որ Հայաստանն աստվածապաշտության կենտրոն էր, և Աստված խոսում էր թե՛ Նոյ և թե՛ Հայկ նահապետների հետ:

Եվ ահա երկնային մի նոր հայտնությունից մղված՝ Արարատյան երկրի թագավոր և քահանայապետ բարեպաշտ Հայկ նահապետը զորաժողով է անում և, առանձնացնելով ժողովրդի մի մասին, պատվիրում է, որ իրենց ընտանիքներով պատրաստվեն ճանապարհ ընկնել դեպի Պաղեստին՝ Քանանի երկիր: Ապա համապատասխան կարգադրություններ անելով՝ Արարատյան երկրում տեղապահ է կարգում Արամանյակին՝ իր ավագ որդուն և ճանապարհ ընկնում դեպի Քանան:

Բայց ինչո՞ւ հենց Քանան. այստեղ մի շատ կարևոր հանգամանք կար՝ մի մեծ առաքելություն իրականացնելու խնդիր, ինչն ի զորու էր անել միայն Հայկի նման ընտրյալ, հզոր, իմաստուն, իրավախոհ և աստվածապաշտ այրը:

Թե՛ այստեղ և թե՛ հաջորդ գրքերում դեռ կտեսնենք, թե Տերն ինչպես է ընտրել Հայաստան աշխարհը և հայ ժողովրդին՝ որպես Իր սուրբ կամքն իրականացնողներ:

Ինչպես Հովհաննես Կարապետն իր ժամանակին ճանապարհ էր հարթում՝

---

[155] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ, քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904թ., էջ 2-3:

ընթանալով Աստծո Որդու առջևից, այդպես և հայ ժողովուրդը հազարավոր տարիներ առաջ այդօրինակ առաքելության կատարման կիզակետում է գտնվել: Հայաստանում սուրբ Հովհաննես Կարապետի հանդեպ ընդգծված սերն ու մեծարումը գուցեև կապված է ժամանակ առ ժամանակ հայ ժողովրդի՝ կարապետի առաքելություն դրսևորելու հետ:

Առաքելությունը, որ հանձն էր առել Հայոց մեծ նահապետը, կներկայացվի հաջորդ մասում: Իսկ այստեղ կաշխատենք պարզել՝ արդյոք որևէ տեղեկություն կա՞ նման տեղաշարժի մասին՝ հնագիտական աղբյուրներում. այսինքն՝ քուռարաքսյան մշակույթի կենտրոն հանդիսացող Արարատյան երկրից արդյոք տվյալ ժամանակահատվածում դեպի Քանան–Պաղեստին իսկապես եղե՞լ է ներգաղթ, և եթե եղել է, ապա առկա փաստերը որքանո՞վ են հավաստի:

Արդեն տեսանք, որ Հայկ նահապետի տիրապետության շրջանում Հայաստանում ծաղկում էին տնտեսության մի շարք ճյուղեր, սակայն արտագնա տեղաշարժի հարցը քննելու համար հարկ է վերհիշել հատկապես այս տարածքում առանձնահատուկ դեր ունեցող խեցեգործության հարցը: Հնում խեցեգործությունն այնպիսի մի ծավալուն ոլորտ է եղել, որ հնագիտական պեղումների ժամանակ հայտնաբերված տարբեր տեսակի խեցեղենի հետազոտումից կարողացել են պարզել, թե ո՞ր ժամանակաշրջանին է պատկանել տվյալ իրը, և ինչպիսի՞ անցուդարձեր են եղել տվյալ ժամանակահատվածում.

«Հայաստանը դառնում է սև, փայլեցրած, երկրաչափական նախշերով ու գեղազարդ ոճով խեցեղենի հայրենիքը, որը միաժամանակ հանդիսանում է հայաստանյան մշակույթի տարբերակիչ հատկանիշ. այդ տեսակի խեցեղեն է հանդիպում լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան գրեթե բոլոր հնավայրերում, որոնց թիվն անցնում է 300-ից (հնավայրերի նման խտություն որևէ այլ տարածքում հայտնի չէ)» [156]:

Այսպես, այդ ժամանակի Հայկական լեռնաշխարհի խեցին յուրահատուկ էր և, որտեղ էլ որ գտնվեր, ճանաչվում էր որպես Հայկական լեռնաշխարհի՝ քուռարաքսյան մշակույթի կենտրոն Արարատյան երկրի խեցեղեն.

«Դա հասկանալը շատ կարևոր է, երբ մենք անցնում ենք Հայաստանի մշակույթի պատմության մեծ շրջանի ուսումնասիրությանը՝ այսպես կոչված «քուռարաքսյան» մշակույթի վաղ բրոնզե դարին, ինչն իր մեջ ընդգրկում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի մեծ մասը: Այդ հսկայական մշակույթի միասնական տարածքը՝ Հայաստան կենտրոնով, սակայն տարածվող հեռուներ՝ հյուսիս, հարավ, հարավ-արևմուտք, ի հայտ է գալիս հատուկ տիպի, ձեռքով պատրաստած խեցիների գոյությամբ, որոնք սովորաբար լինում են սև կամ մուգ գորշագույն...

Նման կավե առարկաներ հայտնաբերվել են Շենգավիթում՝ Երևանի ծայրամասում, երբ պեղվում էր հնագույն բրոնզեդարյան բնակավայր» [157]:

Իր ծագմամբ Հայկական լեռնաշխարհին բնորոշ խեցեղենի նմուշները հնագետների պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև Պաղեստինում: Բազ-

---

[156] Արտակ Մովսիսյան «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992թ., էջ 65:
[157] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 72, 73.

մազան գտածոները մեծ զարմանքի պատճառ են դառնում մասնագետների համար, քանզի Պաղեստինին բնորոշ խեցուց միանգամայն տարբեր են այդ նմուշները.

«Դեռևս 1920-ական թվականներին Պաղեստինի մի շարք հնավայրերում հնագետները հայտնաբերեցին այս տարածաշրջանի վաղ բրոնզեդարյան մշակույթի համար օտար խեցեղեն (Albright, *1926: 28;* Fitzgerald, *1935: 5*ff. *և այլն), որ հետագայում պայմանականորեն ստացավ «Քիբերթ-կերակյան» անվանումը: «Քիբերթ-կերակ» հնավայրը (նախկին անվանումը՝ Բեթ-Յերախ) գտնվում է Պաղեստինում՝ այնտեղ, որտեղ Հորդանան գետը հոսում է Գալիլիայի ծովից: 1945-46 թթ. կատարված պեղումները հայտնաբերեցին մի փոքր քաղաք, որ գոյություն է ունեցել վաղ բրոնզեդարում (մ.թ.ա.* III *հազարամյակ): Այստեղից հայտնաբերված սև և կարմիր թրծված խեցեղենը հետագայում գտնվեց նաև Պաղեստինի և Սիրիայի այլ վայրերում՝ Թել Ջուդեյդայից (Ամուքի հարթավայր) մինչև Պաղեստինի հարավում ընկած Լախիշ հնավայրը: Այդ խեցեղենը որոշ հնավայրերում կազմում էր խեցեղենի ընդհանուր քանակի շուրջ կեսը»* [158]:

Տեղական ծագում ունեցող խեցուց շատ տարբեր այդ խեցին, ըստ մասնագետների, յուրահատուկ էր իր որակական և գեղագիտական հատկանիշներով և իր ծագմամբ լրիվ համապատասխանում էր Հայաստանի խեցուն.

***«Իր «Պաղեստինի հնագիտություն»-ում Օլ Բրայթը նկարագրում է Կիբերդ-Կերակյան խեցիները՝ որպես Պաղեստինում երբևէ պատրաստված խեցեղենից ամենագեղեցիկը: Այն իսկապես միանգամայն յուրահատուկ է իր ոճով և կառուցվացքով, և նրա վրա չկան գունավորումներ կամ փոսորակներ, որ բնորոշ են տեղական պաղեստինյան մշակույթին: Չօգտագործելով կավագործական անիվը՝ Կիբերդ-Կերակի վարպետները պատրաստում էին անոթները միայն ձեռքով: Նման անոթներ հայտնաբերվում են Հայաստանում՝ վաղ բրոնզեդարյան պեղումներում»** [159]:

Դրա հարցում գիտնականները տարաձայնություններ չունեն. նրանք միակարծիք են, որ Պաղեստինում հայտնաբերված խեցեղենի հայրենիքը Հայկական լեռնաշխարհն է.

***«Երրորդ հազարամյակի մշակույթի համեմատաբար ցայտուն հուշարձաններ հայտնաբերվել են Հայկական լեռնաշխարհի տարածքում, ինչը մեզ լիովին հիմք է տալիս՝ այս շրջանը համարել Կովկասի հին բրոնզի դարաշրջանի յուրօրինակ մշակույթի կենտրոն: Սա շատ հավանական է, քանզի Սիրիայում և Պաղեստինում հայտնաբերված Կիբերտ – Կերակյան խեցին, որ կրում է Անդրկովկասյան «էնոլիտից» մի շարք տարրեր, գիտնականների կարծիքով, սկիզբ է առնում հենց Քուռ և Արաքս գետերի ավազանից: Այս կարծիքին են հակված, օրինակ Ս. Գուտը, Կ. Շեֆերը, Լ. Վուլը, Կ. Բերնեյը, և այլք»** [160]:

---

[158] Ջոն Ահմարանյան, Հայկական լեռնաշխարհը և Քանանը. Վաղ Շփումներ. Երևան-2005թ., էջ 14-15:

[159] Девид Лэнг... ст. 74.

[160] А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван 1964. ст. 22.

Պեղված խեցին, ըստ հնագետների, իր նախադեպը չունի տվյալ տարածքում. Պաղեստինում դա ժամանակի ընթացքում զարգացում չի ապրել, այլ կատարյալ վիճակով հայտնվել է Քանանում: Այս փաստը լիովին հաստատվել է գիտնականների կողմից:

«Ճշտվել է այն, որ Քիբերթ - կերակյան ամանեղենը Սիրիայի և Պաղեստինի բնակավայրերում հայտնվել է հանկարծակի և կապ չի ունեցել տեղի նախկին ավանդության հետ» [161]:

«Պաղեստինում և Սիրիայում հայտնվող օտարածին... խեցեղենը տեղական բնականոն զարգացման արդյունք չէր կարող լինել» [162]:

Եվ եթե այդ ժամանակաշրջանում Պաղեստինի բնակիչների կենցաղին հատուկ չէ նման խեցին, ուրեմն այն ներմուծված է: Եվ քանի որ այդ տեսակի խեցեղենը, ինչպես ասվեց, հատուկ է քուռարաքսյան մշակույթին, ապա պետք է եզրակացնել, որ հնում այդ տարածքներից տվյալ մշակույթի կրողներ են տեղափոխվել Պաղեստին.

«Հատկապես հռչակավոր է եղել քուռարաքսյան մշակույթի խեցեգործական ավանդույթը: Հենց այդ ավանդույթն է թույլ տվել հնագետներին՝ նկատել, որ մ. թ. ա. III հազարամյակի սկզբում Հյուսիսարևելյան Սիրիայի, Լիբանանի, և Իսրայելի տնտեսական կյանքում տեղի են ունեցել շատ էական փոփոխություններ: Ամենուր այդ շրջաններում ի հայտ է գալիս քուռարաքսյան տիպի խեցեղեն» [163]:

Հիրավի, այդ ժամանակաշրջանում Հայաստանից եղել է տեղաշարժ՝ դեպի Քանան: Հետաքրքիր է, որ մասնագետները համարում են, որ այդ մշակույթի ներթափանցումը Պաղեստին՝ եղել է հանկարծակի, բայց և՝ ժամանակավոր.

«Քուռարաքսյան խեցեղենի հետ են կապում մ. թ. ա. երրորդ հազարամյակի երկրորդ կեսում Պաղեստինի Քիբերթ-կերակյան խեցեղենը, ինչն էլ համարվում է որպես Պաղեստին քուռարաքսյան մշակույթի կրողների կարճաժամկետ ներխուժման վկայություն» [164]:

«Կիբերտ-կերակյան խեցու առաջացումը, որ արտերկրի գիտնականները համարում են Անդրկովկասի և Հարավային Անատոլիայի ներկրող ցեղերի միգրացիայի արդյունք, Ա.Ա. Իեսսենի դիտարկմամբ, առավել հավանական է, որ Սիրիա և Պաղեստին հյուսիս-արևելքի բնակիչների ժամանակավոր, բայց ինտենսիվ ներթափանցման արդյունք է» [165]:

«Ի սկզբանե, օտարածին այս մշակույթի հայտնվելու պատճառ հայտարարվեց արտաքին աշխարհից ընթացած ժողովուրդների տեղաշարժը: Սկզբնական շրջանում, արտաքին աշխարհում այս խեցեղենի զուգահեռների մասին տեղե-

---

161 К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного Кавказа, Ленинград 1970, ст. 15.

162 Զոն Ահմարանյան, Հայկական լեռնաշխարհը և Քանաանը. Վաղ Շփումներ, Երևան-2005թ., էջ 15:

163 Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. журнал «Ной» №19 Москва 1996.

164 Т. В. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и идоевропейцы, Тбилиси 1984, ст. 893.

165 Л. Л. Карапетян “История гончарного производства древной Армении” Ереван 1966. ст. 25.

կություն չունենալու պատճառով, հնագետները հակված էին ենթադրելու, որ դրա արմատները փոքրասիական շրջանում են՝ Արևմտյան Փոքր Ասիայում գտնվող Սանգարիոս գետից մինչև Արևմտյան Հայաստանի Էրզրումի շրջանը (Amiran, *1952: 96*ff.*)*:***

Հետագայում Քիբերթ-կերակյան խեցեղենի համեմատությունն այլ տարածաշրջանների խեցեղենի հետ՝ թույլ տվեց հնագետներին՝ հանգել այլ եզրակացության, որ դրա ստեղծողները եկել էին Արևելյան Անատոլիայից (Արևմտյան Հայաստան) և Անդրկովկասից (Amiran, *1952: 89*ff.*; *1956*; *1968: 317*f.*;* Braidwood and Braidwood, *1960: 358*; Todd, *1973: 181*ff.*;* Yakar, *1990: 99 և այլն)»*[166]:

*Պաղեստինի տարածքում այդ խեցեղենն, ըստ հնագետների թվագրման, հայտնվել է գրեթե նույն ժամանակաշրջանում, որում ապրել և իշխել է Հայկ Նահապետը. **«Քիբերթ-կերակյան մշակույթի կրողների մուտքը Սիրիա և Պաղեստին՝ հնագետները թվագրում են մ.թ.ա.** III **հազ. կեսերով (***Kelly-Buccellati, *1979: 425): Առաջարկվել են ավելի կոնկրետ թվագրություններ: Այսպես, Վ. Օլբրայթը հակված էր Քիբերթ-կերակը տեղադրելու մ.թ.ա. 2550-2350 թթ. միջև. (***Albright, *1965: 52*ff.*), իսկ Մ. վան Լունը՝ 5600-2400 թթ. (***ван Лун, *1985: 52.*): Ըստ Քոլավեյի (***Callaway, *1978: 53*)՝ այն պետք է թվագրել մ.թ.ա. 2700-2550 թթ.»***[167]:

Սրանով պարզվում է, որ Հայկական լեռնաշխարհից ժողովրդի և նրա մշակույթի ներհոսք է եղել Պաղեստին. ճանապարհին այն իր հետքերն է թողել նաև Սիրիայում, սակայն, ինչպես ցույց են տալիս հնագիտական տվյալները, բուն նպատակակետը եղել է Պաղեստինը՝ Քանանի երկիրը.

«Մ.թ.ա. 2,6 և 2,4 հազարամյակներում կիբերտ-կերակյան անոթները ժամանակավորապես փոխարինում են այդ տեղերի համար բնորոշ կավագործական անիվով պատրաստված առարկաներին, իսկ հետո նորից հավերժ անհետանում են: Այս բոլորը հանգեցնում է այն մտքին, որ կիբերտ-կերակյան խեցեղենի վարպետները եղել են եկվորներ, օտարներ»[168]:

Անհերքելի փաստերի առկայությունը հետազոտողներից ոմանց թույլ է տալիս՝ առանց երկմտելու ասել, որ Պաղեստինի համար այդ օտար ժողովրդի հայրենիքը հենց Արարատյան դաշտավայրն է եղել.

«Կիբերթ-կերակյան և Հայկական լեռնաշխարհի խեցեղենի՝ մեր կողմից կատարված համեմատությունները համոզում են, որ Կիբերթ-կերակյան խեցեղենը... զարդամոտիվների յուրահատկություններով, ինչպես նաև օջախի պայտաձև հենակներով, կապվում է ավելի շուտ Արարատյան դաշտավայրի, Շենգավթի և Էլարի հետ: Ուստի, շատ հավանական է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնակների ժամանակավոր ներթափանցումը Սիրիա, Պաղեստին՝ կատարված լիներ Արարատյան դաշտավայրից՝ Վանա լճի հյուսիսով»[169]:

---

166 Ջոն Ահմարանյան, Հայկական լեռնաշխարհը և Քանանը. Վաղ Շփումներ, Երևան-2005. էջ 14:

167 Նույն տեղում, էջ 15:

168 Девид Лэнг... ст. 75.

169 Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրա. Երևան, 1967թ., էջ 93-94:

Մասնագետների մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ խեցեղենի հետքերը կարողացել են բացահայտել հազարամյակների մշուշում թաքնված գաղտնիքները՝ մեզ հասու դարձնելով 4500-ամյա մանրամասներին, որոնցից մեկն էլ այն է, որ Հայաստանից բնակչության արտահոսք է եղել դեպի Պաղեստին.

«Երրորդ հազարամյակում մ. թ. ա. քուռարաքսյան մշակույթի հուշարձանները համարյա թե հանկարծ հայտնվում են Սիրիայում և հետո՝ Պաղեստինում»[170]:

Սակայն մի այլ՝ շատ կարևոր հարց դեռ անպատասխան է մնում. գիտնականները ոչ մի կերպ չեն կարողանում գտնել պատճառն այդ տարօրինակ միգրացիայի: Ինչո՞ւ հայերը գնացին Պաղեստին, իրենց բարձր մակարդակի մշակույթը տարածեցին այնտեղ և միաժամանակ անց՝ նորից անհետացան այնտեղից.

«Նման խեցեղենի երևան գալը Սիրիայում և Պաղեստինի կոմպլեքսներում մի շարք գիտնականների կողմից բացատրվում է «քուռարաքսյան» մշակույթի կրող արևելաանատոլիական, այսինքն՝ պատմական Հայաստանի ցեղերի միգրացիայով կամ էքսպանսիայով...

Անդրադառնալով Կիբերթ-Կերակյան մշակույթի ծագման հարցին՝ պետք է նշել, որ Ա. Իեսսենը համոզիչ է համարում հյուսիս-արևելքից մի խումբ բնակիչների ժամանակավոր, բայց ակտիվ ներթափանցումը Սիրիա և Պաղեստին, սակայն նշում է, որ այդ ներթափանցման բնույթը շատ առումներով դեռևս անհասկանալի է» [171]:

Իսկ անհասկանալի է, որովհետև դրա պատասխանին Տիրոջ ողորմությամբ կարելի է հասու լինել, եթե հնագիտությանը գումարվեն Սուրբգրային և Հայոց պատմության տվյալները:

Մետաղ

Ն. Ք. III հազարամյակի երկրորդ կեսից Հայաստանից Պաղեստին ներգաղթի ամենահավաստի, բայց ոչ միակ ապացույցն է վերոնշյալ առանձնահատուկ խեցեղենը, որի հայրենիք համարվել է Հայաստանը: Բնական է, որ չէին կարող այլ ապացույցներ ևս չլինել, քանզի Հայաստանում, ինչպես արդեն տեսանք, բազմաթիվ այլ ոլորտներ ևս մեծ զարգացում էին ապրել: Այդ ոլորտներից է մետաղագործությունը: Քանի որ Հայաստանը նաև մետաղագործության հայրենիքն էր, ապա նաև մետաղական առարկաներ են հայտնաբերվել Պաղեստինում: Սա ևս այդ ներգաղթյալների մշակույթի արդյունք կարող էր լինել:

*Ինչպես ասում է հետազոտող Բորիս Մոյշեզոնը, այդ ժամանակներում Պաղեստինում փոփոխություններ են տեղի ունեցել, որ վկայում են նոր մշակույթի ներթափանցման մասին. **«Քաղաքական կառուցվածքում փոփոխությունների***

---

[170] История древнего востока, Ред. Б.Б. Пиотровский, Москва 1988, ст. 38.

[171] Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրա. Երևան 1967թ., էջ 91,92:

վկայություններն ընդհանրապես և տեղական իշխող կառույցներում՝ մասնավորապես, հանդիսանում են հնագիտական գտածոները՝ զենքեր, թվագրվող III *հազարամյակով, որ շատ հավանական է՝ կապված են արևելաանատոլիական մետաղագործական կենտրոնի հետ...*

Հյուսիսարևելյան Անատոլիան մնում էր կարևոր մետաղագործական կենտրոն՝ մինչ մեր թվարկության սկիզբը (հունական աշխարհագրագետների և պատմաբանների վկայությամբ)։ Ամենայն հավանականությամբ, հենց այնտեղ մ. թ. ա. II *հազարամյակում զարգացում է ապրել երկաթի մետալուրգիան»*[172]։

Պաղեստինից հյուսիս-արևելք ընկած տարածքը հենց Հայոց լեռնաշխարհն է, ինչի մասին ասվել է, որ միայն վերջերս գիտական որոշ օղակներում սկսեցին անվանել Արևելյան Անատոլիա (հավանաբար, թուրքական իշխանություններին հաճոյանալու նպատակով. քանի որ ժամանակակից Թուրքիան հիմնվել է Հայաստանի տարածքի մեծ մասի վրա՝ հայությանը բնաջնջելու ճանապարհով).

«Ինչպես որ մատնանշում է էմմանուել Անատը, անատոլյան ազդեցությունը Պաղեստինում մ.թ. 3000 տարի առաջ երևում է և ավելի վաղ գտածոներում՝ ոսկե սկավառակ, բրոնզե կացիններ և այլն, որ հայտնաբերվել են Երիքովում և Թելլ-ալ-Խեզում, որոնք նման են այն զենքերին, որ հայտնաբերվել են Անատոլիայում» [173]։

Պաղեստինում պեղված շինությունների և այլ գտածոների մնացորդները նույնպես վկայում են Հայոց լեռնաշխարհից այդ տարածքներ ներթափանցած ժողովրդի մասին.

«Մ.թ.ա. III *հազ. կեսերից Սիրիայում (Թել Ջուդեյդա, Դահաբ, Համա) և Պաղեստինում (օրինակ՝ Բեյթ Յերախ) տները հիմնականում կլոր են, ավելի սակավ՝ ուղղանկյուն, այնպես ինչպես Անդրկովկասում (*Kelly-Buccllati, *1979։420)... Այս շրջանում Սիրիայում և Պաղեստինում հայտնվում են կլոր օջախը և պայտաձև շարժական օջախը, որոնք ավելի վաղ հայտնի էին Անդրկովկասում։ Հատկանշական է նաև օջախի վրա դրվող մարդակերպ եռոտանին՝ նույնպես անդրկովկասյան վաղ զուգահեռներով (*Braidwood and Braidwood, *1960։ 346*ff.; Hennesy, *1967։* Pl.LXXI;Kelly-Buccellati, *1979։ 420*ff.;*2004։ 67*jj.*)»*[174]։

Այսպիսով, Հայաստան աշխարհը մի լուսավոր կենտրոն էր, որտեղից թե՛ հոգևոր, թե՛ նյութատեխնիկական արժեքներ են տարածվել նրա չորս կողմը, ինչի մասին խոսում են և՛ շումերա-աքքադական գրերը, և՛ բազմաթիվ պեղումներից հայտնաբերված հնագիտական արժեքավոր գտածոները.

«Միջագետքյան հնագույն բնագրերի ու Աստվածաշնչի գաղափարաշուժետային առնչակցությունն ակնհայտ է նաև նախասկզբնական իմաստության թեմատիկայում։ Ինչպես նշվեց, բարու և չարի իմացության ծառն, ըստ Հին Կտա-

---

[172] Мойшезон Борис Гершевич, АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ, журнал «Ной» №19 Москва 1996.

[173] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 74-75.

[174] Հովհաննես Ահրամանյան, «Հայ Արիներ» պարբերական, թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, (Հայկական Լեռնաշխարհի Եվ Քանաանի Փոխառնչությունները Մ.Թ.Ա.IV-II Հազարամյակներում) 2007թ., էջ 9:

կարանի, գտնվել է Եդեմում՝ Հայկական լեռնաշխարհում, ուր և առաջին մարդիկ հասու են դարձել իմաստությանը: Այդ առումով առանձնահատուկ ուշադրության է արժանի շումերական բնագրերից մեկի հաղորդումը, որն իմաստության ու արվեստի ծագումը կապում է Հայկական լեռնաշխարհի հետ. «Իմաստությունն ու արվեստը ցած բերվեց Արատտայից»»[175]:

Տեսնում ենք, որ գիտական աշխարհը, միանգամայն հավաստի ապացույցների վրա հիմնվելով, հայտարարում է, որ իսկապես Հայաստանից այդ ժամանակաշրջանում նշանակալից արտագաղթ է եղել դեպի Քանան: Կրոնական, հնագիտական և պատմական փաստերը մեզ թույլ են տալիս եզրակացնել, որ Աստծո ընտրյալ Հայոց մեծ նահապետը՝ Հայկը, իսկապես, մեծաթիվ ժողովրդով Արարատյան երկրից տեղաշարժվել է դեպի Պաղեստին և այնտեղ տարածել այն բարձր մշակույթը, որի հայրենիքը Հայաստան աշխարհն էր:

Սակայն, այդ տեղափոխման բուն պատճառները մինչ օրս էլ անհասկանալի են գիտական աշխարհի համար.

«Շատ հավանական է, որ Հայկական լեռնաշխարհի էնեոլիթյան մշակույթը բնակչության հետ միասին տեղափոխված լինի հարավ՝ Ասորիք և Պաղեստին (Քիբերթ-կերակյան խեցին)՝ ժամանակավոր, բայց բավականաչափ եռանդուն թափանցումով: Սակայն այդ շարժման բնույթը պարզ չէ...

Այսպիսով, խեցեղենի թափանցման ճանապարհները Ասորիք ու Պաղեստին՝ դեռևս պարզ չեն: Մեզ ավելի հավանական է թվում, որ հյուսիս-արևելքից՝ Հայկական լեռնաշխարհից է կատարվել այդ մշակույթի տարածումը, քանի որ բոլոր զուգահեռները տանում են մեզ դեպի Առաջավոր Ասիայի հյուսիս-արևելք՝ Հայկական լեռնաշխարհ»[176]:

Քանանի մատույցներում

Հայոց մեծ Նահապետն ու նրա սերունդները, հասնելով Քանան, տեղաբնակ ցեղերի կողմից տարբեր կերպ են ընդունվում. այդ կողմերում բնակություն հաստատած սեմական ծագում ունեցող ցեղերը, որ լսել էին Հայկի և Բելի պատերազմի և Հայոց բարգավաճ և հզոր երկրի մասին, նրանց հարգանքով և երկյուղածությամբ են դիմավորում: Սակայն նրանց մեծ մասը Քամի սերունդների ներխուժմամբ Պաղեստինից դուրս էր մղվել.

«Հսկա Ներբովթը՝ որդին հսկա Քուշի, Քամի ազգից, Սեմի որդիների բազմանալուն նախանձելով, հանեց նրանց հայրենի ժառանգությունից՝ Պաղեստինի բովանդակ տարածքից և բնակեցրեց այնտեղ տասը ազգ՝ Քամի որդիներից»[177]:

---

[175] Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000թ., էջ 35:

[176] Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967թ., էջ 170:

[177] Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2013 թ., էջ 128:

*Եվ թեպետ Սեմի սերնդից Պաղեստինում մնացածները նույնպես հարել էին քանանացիների պարտադրած կռապաշտությանը, բայց նրանց միջև դեռ պահպանվում էին սառը, թշնամական հարաբերությունները: Այդ պատճառով էլ սեմականներն ուրախ էին նորեկների գալով, քանզի տեղյակ էին, որ Քամի սերնդի առաջնորդ Բելը և նրա զորքը հենց Մեծ Հայկից էին պարտություն կրել. **«Բելը արդեն ոչ միայն իր՝ Քամյան ցեղի նահապետների բազմությանն էր հնազանդեցրել, այլ նաև՝ սեմական ցեղերը...***

Քանզի Սեմի տոհմապետերը նվաճված էին քամածին Նեբրովթի կողմից, և մեր Հաբեթածին ազգապետը միայն մնաց պաշտպան հայրենիքին և աստվածային օրենքներին»[178]*:*

Ի տարբերություն սեմականների՝ Քամի սերնդի անխոհեմ և ռազմատենչ ցեղերը հայկյանների նկատմամբ անհանդուրժողականություն են ցուցաբերում. չեն ցանկանում թույլ տալ, որ իրենց՝ քանանացիների երկիր մտնեն նրանք, որոնց առաջնորդը սատակեցրեց իրենց ազգատոհմի պարծանք Նեմրութ-Բելին, որին աստված էին հռչակել:

«Հետագայում բաբելացիք, Նեբրովթին աստված ասելով, պաշտում էին՝ անվանելով Բել կամ Բահալ»[179]***,-*** *հիշեցնում է Ալիշանը:*

Քամի պաղեստինաբնակ տասը ցեղերը միանալով՝ պատրաստվում են Հայոց բանակի դեմն առնել՝ թույլ չտալու նրանց մուտքը Քանան: Սա հղի էր պատերազմական գործողությունների վտանգով:

*Այս մասին նորից հավաստում են հնագիտական պեղումները. **«Կիբերտ-Կերակյան անոթների հայտնվելը Սիրիայում և Պաղեստինում ուղեկցվում են բուռն ցնցումներով, ինչը կարող էր հետևանք լինել թշնամական ներխուժման. հազիվ թե դրանք այստեղ բերվեին խաղաղ առևտրի միջոցով: Դա ստիպել է մի քանի հայտնի գիտնականների, այդ թվում և՝ տիկին Քեթրին Քենոնին և Ռուտ Ամիրանին, գալ այն եզրակացության, որ Քիբերթ-Կերակյան մշակույթն այստեղ է բերվել Արևելյան Անատոլիայից եկած զավթիչների կողմից, հնարավոր է նաև՝ այն տարածքներից, որտեղ տիրում էր հայկական... քուռարաքսյան մշակույթը»***[180]*:*

Սակայն Քանանի բիրտ ցեղերն իրենց կաշվի վրա զգալով հայոց զենքի կործանարար ազդեցությունը՝ ցիրուցան են լինում, ինչը նաև լավ դաս է լինում ռազմատենչ տրամադրությամբ վարակված այլ ցեղերի համար:

---

[178] Ղևոնդ Ալիշան, Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ-Ս. Ղազար 1904, էջ 133, 137:

[179] Նույն տեղում, էջ144:

[180] Девид Лэнг, “Армяне народ-созидатель”, Москва, 2004г., ст. 75.

Հայկ նահապետը և նրա սերունդները՝ հայերը Պաղեստինում

«Հայ ժողովուրդը հնագույնն է աշխարհում և ամենակենսունակը. նա ունի մի հիանալի հատկանիշ՝ կայունությունը, որը չի կարողացել խորտակել նույնիսկ ինքը՝ ամենակործան ժամանակը: Հայ ժողովուրդն ունի իր պատմությունը. սակայն այն, ցավոք, իր ամբողջ հստակությամբ մեզ չի հասել, ինչի պատճառն, իհարկե, հեշտ է հասկանալ. այս ազգը գոյություն ուներ արդեն հազարավոր տարիներ, մինչ Հռոմը և Աթենքը դեռ չկային: Նա ուժեղ և հզոր էր նաև այն ժամանակ, երբ ջնջվելով դարերի կողմից՝ արդեն չքվել էին Եգիպտոսի և Ասորեստանի քաղաքակրթությունները»[181]:

Հայկ և Մելքիսեդեկ նահապետների միջև եղած բազմաթիվ ընդհանրությունները, և այդ ժամանակաշրջանում Արարատյան սուրբ երկրից դեպի Պաղեստին արտագաղթի առկայությունը, ինչպես համոզվեցինք, հիմք են՝ վստահորեն հավաստելու, որ Հայկ և Մելքիսեդեկ անվանումների ներքո գործել է միևնույն անձնավորությունը: Իսկ թե ո՞րն էր այդ արտագաղթի իմաստը, և ինչո՞ւ Հայկը Պաղեստինում անվանվեց Մելքիսեդեկ, կաշխատենք պարզաբանել այս մասում:

Նշված ժամանակաշրջանում Քանանում ոչ մի գրավիչ բան չկար. այն մի երկիր էր, որտեղ տիրում էին հոռի բարքեր, ինչի ապացույցն էին Սոդոմը, Գոմորը և դրանց շրջակայքի բնակավայրերը:

Սուրբ Գիրքն ասում է, որ քանանացիներն անբարո վարքը ժառանգել էին իրենց ամբարիշտ նախահայրերից.

«Նոյը, սթափվելով գինովությունից, իմացավ, թե ինչ է արել իր նկատմամբ իր կրտսեր որդին, և ասաց. «Անիծյալ լինի ստրուկ Քանանը»»[182]:

Սրանից հետևություն, որ Հայկ նահապետը իր թագավորության շրջանում նետ-աղեղի, տոմարի և Աստվածաշեն կոչվող բերդի հայտնությունների շարքում արդեն չորրորդ հայտնությանն էր արժանացել.

Աբրահամը Տիրոջ կանչով թողեց կռապաշտությամբ վարակված իր ծննդավայրը և ուղևորվեց դեպի Քանան: Նրանից շատ ավելի վաղ, նման մի հայտնությամբ, Նախախնամության կամոք, Հայկ նահապետը թողեց իր բարեպաշտ թագավորությունը և բռնեց Քանանի ճանապարհը:

Հնագիտական հետազոտությունների տվյալներով այդ ներգաղթի արդյունքում Պաղեստինում մեծ զարգացում ապրեցին տնտեսության մի շարք ոլորտներ:

Սակայն սխալ կլինի կարծել, թե այդ զարգացումն էր հենց հիշարժան տեղաշարժի առաքելությունը: Իհարկե՝ ոչ. չէ՞ որ այդ բարձր մշակույթը, ինչպես ասվեց, տարածվել էր Հայաստանի մերձակա այլ երկրներում ևս, սակայն դրա համար բնավ հարկ չի եղել, որ անձամբ մեծ նահապետն արտագաղթ գլխավո-

---

[181] Жюль Леклерк, Поездка на Арарат, С.- Петербург 1893 г., ст. 37.

[182] Ծննդոց 9: 24-25:

րեր: Եթե Հայոց լեռնաշխարհի մշակույթի ներթափանցումն այլ վայրեր իրականացվել է առևտրական, քաղաքական և այլ միջոցներով, ապա դեպի Պաղեստին Արարատյան երկրից ժողովուրդի մեծ զանգված էր եկել և բնակություն հաստատել այնտեղ՝ այն էլ երանելի նահապետի՝ Հայաստան աշխարհի թագավոր-քահանայապետ Հայկի առաջնորդությամբ:

*Մեծապես խորհրդավոր է Հայոց աշխարհը՝ Աստվածաշնչյան Արևելքը, քանզի ըստ Սուրբ Գրքի՝ այստեղից առաջին անգամ ծագեց արեգակը և իր լույսը սփռեց աշխարհով մեկ՝ հասնելով նաև Պաղեստին: Այստեղից՝ Դրախտի փակված դարպասների մոտից տարածվեց մինչջրհեղեղյան մարդկությունը, այստեղից՝ Արարատ լեռան ստորոտից նորից տարածվեց արդեն հետջրհեղեղյան մարդկությունը: Այստեղ՝ Արարատ լեռան մոտից բուն Արևելքից է ծագել Բեթղեհեմի Աստղը՝ մոգերին ուղեկցելով մինչև Պաղեստին. և վերջապես, այստեղից պիտի ծագեն Արդարության Արեգակի հրաշափառ ճառագայթները՝ հասնելով մինչև Երուսաղեմ: Այս պատկերն է ներկայացնում սբ. Գրիգոր Նարեկացին՝ իր «Հարության տաղում». Սայլում բազմած Աստծո Որդին Իր մարգարեներով, առաքյալներով, ավետարանիչներով պայծառացած՝ եկեղեցին խորհրդանշող սայլի կառապան Հովհաննես Մկրտչի ուղեկցությամբ Արարատ-Մասիս լեռնից իջնում և մտնում է Երուսաղեմ. **«...Սայլն այն իջնում էր Մասիս լեռն ի վայր... և ճռնչալով մտնում էր Երուսաղեմ»**[183]:*

Խորհրդավոր է և այն, որ ինչպես Քրիստոս Երկնային Դրախտից՝ վերին զորությունների բնակավայրից իջնելով եկավ Երուսաղեմ՝ խաչվելու, այդպես՝ այդ մեծ իրողության նախաշավիղ Հայկը, հազարամյակներ առաջ, երկրային Դրախտի երկրից՝ Աստծո որդիների Հայաստան լեռնահայրենիքից իջավ Պաղեստին՝ Երկնային Երուսաղեմը խոստացող Տիրոջ և Թագավորի Սուրբ ոտքերի համար Երուսաղեմ Քաղաքը հիմնելու, և քահանայագործելու:

Սա ևս Հայկ նահապետի՝ Քրիստոսի նախակերպարը խորհրդանշելու և Մելքիսեդեկը լինելու առհավատչյան է:

Եվ ահա Հայկ նահապետը, հասնելով այն վայրը, որտեղ, ըստ երկնային հայտնության, պիտի բնակություն հաստատեր, տարածքի բնակիչներին տեղյակ է պահում իր մտադրության մասին: Բնականաբար, մեծապես վախենալով նրանից՝ քանանաբնակ ցեղերը պատրաստակամ էին այդ հողերն անհատույց նվիրաբերել մեծ Նահապետին: Սակայն Նահապետը տվյալ տարածքում պետք է կառուցեր մի քաղաք և կոչեր այն «Խաղաղություն»: Իսկ այդպիսի անվամբ քաղաք հիմնադրելու համար տարածքը տեղաբնակներից ուժի միջոցով կամ անհատույց վերցնելը պատշաճ չէր:

Ուստի, Հայկը առավելով է վճարում այդ տարածքների համար և դարձնում իր սեփականությունը:

Եվ հիմք է դնում մի նոր՝ Քանանի համար անսովոր և առանձնահատուկ թագավորության:

Պատմության ընթացքում որպես հայոց թագավորություններ՝ հայտնի են

---

[183] Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր. Երևան 1979 թ., էջ 567:

Մեծ Հայքը, Եդեսիայի հայոց թագավորությունը, Կիլիկիայի հայկական թագավորությունը...

Նկատելի է, որ վաղնջական ժամանակաշրջանում Քանանում հիմնադրվել է Հայոց ևս մեկ հինավուրց տերություն՝ Պաղեստինի Հայոց թագավորությունը։

Եվ ահա այն հմուտ վարպետների ջանքերով (որ կառուցել էին Արարատյան երկրի, Շումերի և հարևան այլ երկրների պալատներն ու տաճարները) շուտով կառուցվում է մայրաքաղաքը՝ կոչվելով «Խաղաղություն»։ Վեր են բարձրանում նաև նրան կից բնակավայրերը։

Հայկն այլ նպատակ չուներ այս նորակառույց թագավորությունում, այլ միայն Տիրոջ կամքի իրականացումը. նաև ջանում էր՝ իր և հպատակների բարի օրինակով Քանանի կռապաշտ ցեղերին բերել դեպի Ճշմարիտ Լույսը՝ Աստծո ճանաչողության, որպեսզի նրանք էլ քայլեն բարեպաշտության, արդարության, սրբության և փրկության ճանապարհով։

Միևնույն ժամանակ նա չէր խառնվում քանանացիների գործերին ու անցուդարձին՝ չնայած իր զորությամբ կարող էր ամբողջ Քանանը հպատակեցնել իր իշխանությանը։

«Մեկնիչների կողմից մեծ հետազոտության պատճառ հանդիսացավ այն, թե արդարև ո՞վ էր Մելքիսեդեկը... հավանական կարծիքը նրանցն է, որ համարում են Մելքիսեդեկին՝ որպես արդար և խաղաղասեր թագավոր, աստվածապաշտ և Բարձրյալ Աստծո քահանա՝ Քանանի երկրում»[184]*։*

Տեսնելով Հայկի հզորությունն ու հանդուրժողականությունը և նրա հպատակների խաղաղասեր բարքը տեղաբնակների հանդեպ՝ այդ ցեղերի կողմից Պաղեստինի Հայոց թագավորության նորակառույց մայրաքաղաքն սկսեց անվանվել իրենց լեզվով՝ «Սաղեմ», այսինքն՝ Խաղաղություն։

Դա ներկայիս Երուսաղեմն է՝ հիմնադրված Նախախնամության կամոք, Հայկ նահապետի կողմից.

«Աստծո քահանա... Մելքիսեդեկը կառուցեց Երուսաղեմը»[185]*։*

Այստեղ հավանաբար ուրվագծվում է Նոյի օրհնության՝ աչքաթող արված մի դրվագ. երբ Հաբեթին օրհնելիս՝ ասաց. ***«Աստված թող բարգավաճեցնի Հաբեթին, նա թող բնակվի Սեմի տանը, իսկ Քանանը թող լինի նրա ծառան»***[186]*։*

Հայկին էլ իր արդար և սրբակենցաղ վարքի համար անվանեցին Արդարության Թագավոր՝ Մելքիսեդեկ, ինչը նույնպես տեղաբնակների լեզվով էր։ Քանի որ Հայկը Սաղեմի՝ Խաղաղության քաղաքի տիրակալն էր, անվանվում էր նաև Թագավոր Խաղաղության։

«Ինձ թվում է, որ Մելքիսեդեկը մարդ էր՝ անձնավորություն և հատուկ անվամբ էր այդպես կոչվում, և ոչ թե մի այլ էակ էր, կամ սովորական մարդկային անուն էր կրում, ինչպես ոմանք կարծում են» [187]*։*

---

[184] Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881թ., էջ 354:

[185] Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860թ., էջ 31:

[186] Ծննդոց 9:27:

[187] «Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի Առաքելոյ», աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 140:

Այդ անվանումը կարևոր էր, քանի որ Հայկ նահապետը պետք է ներկայացներ Փրկչին՝ լինելով Նրա նախակերպարը. այդ անունը նաև պիտի լիներ վարագույր՝ թաքցնելով Մելքիսեդեկի ով լինելն ավելի քան չորս հազարամյակ՝ մինչև նախատեսված ժամանակների լրումը.



«Այդ թագավորը, որին Ճշմարտության հանդեպ ունեցած սիրուց տրվեց «Արդար թագավոր» անունը, պատկերացում ուներ Աստծո մասին, և այն համապատասխանում էր պատրիարքի (Նոյի) պատկերացումներին. նա մերժում էր կուռքերին»[188]:

Ըստ Հովսեփոս Փլավիոսի՝ «Մելքիսեդեկ» անվանումը տեղաբնակների դիմելաձևի հետևանք է եղել, ինչն ուղղակի նրա բարեպաշտական վարքի արտացոլումն էր: Հետաքրքիր է նաև, որ, ըստ Հովսեփոսի, Սաղեմում Մելքիսեդեկը նաև տաճար է կառուցել՝ Աստծուն պաշտելու և փառաբանելու համար, և դա միակ նման կառույցն էր այդ վայրում, քանզի այդպիսի այլ կառույց չէր կարող լինել ուրիշ որևէ տեղ՝ իհարկե, բացի Արարատյան թագավորությունից.

«Քաղաքի առաջին հիմնադիրը եղել է քանանացի տիրակալը, ով տեղական բարբառով անվանվում էր «Ճշմարտության թագավոր», ինչպիսին և նա կար իրականում, ինչի համար էլ եղավ Աստծո առաջին քահանան և Տաճարի առաջին կառուցողը, և ինչի պատճառով էլ քաղաքին տրվեց Երուսաղեմի նախկին անունը՝ Սաղեմ»[189]:



Տիրոջը նվիրված այդ տաճարը Հայկի հրահանգով կառուցել են հայ շինարարները Սաղեմի այն մասում, որը հետագայում պիտի անվանվեր Սիոն.

«Նրա խորանը Սաղեմի մեջ է, և Նրա բնակարանը՝ Սիոնի մեջ»[190], *և պատահական չէ, որ արդեն մոտ հազար յոթ հարյուր տարի է, ինչ Երուսաղեմի Հայկական թաղամասում՝ Սիոնի բարձունքում, գտնվում է Սուրբ Երկրի Հայոց Պատրիարքարանը՝ «Սուրբ Հակոբյանց վանքը»:*

Ըստ ավանդության՝ այդ վայրը Սուրբ Հա-

---

188 Библейско-Биографический словарь, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский. Москва 2001г., ст. 509.
189 Иосиф Флавий, Иудейская война, Москва 1999, ст. 382.
190 Սաղ. 75:3:

կոթ Տեառնեղբոր տունն է եղել. այն առաքելական շրջանում գործում էր որպես համայն քրիստոնեության պատրիարքարան, որտեղ հավաքվում էին առաքյալները՝ նորաստեղծ եկեղեցում ծագող տարբեր հարցերին լուծում տալու համար:

Սաղեմի տաճարի կառուցումից մոտ 1300 տարի հետո, ոչ այնքան հեռու այդ վայրից, արդեն Սողոմոնը Երուսաղեմում պիտի ձեռնարկեր Ղևտական քահանայության տաճարի կառուցումը:



Իսկ Արարատյան երկրում մինչջրհեղեղյան առաջին սրբավայրը կառուցել էր Դրախտից վտարված Ադամը. այնտեղ զոհ էին մատուցել Աբելն ու մյուս նախահայրերը: Նոյն էլ կատարել էր իր քահանայական պարտականությունները, այդ նույն զոհասեղանի վրա, թե՛ Ջրհեղեղից առաջ և թե՛ հետո: Իսկ Նոյ նահապետի ննջումից հետո, որպես Բարձրյալ Աստծո քահանա, աստվածպաշտության կարգն էր կատարում արդեն մեր Հայկ նահապետը: Իսկ թե Արարատյան դաշտավայրի ո՛ր մասում էր գտնվում սրբավայրը, այդ մասին արդեն գրվել է.

«Հայոց ավանդությունը պատմում է նաև, որ էջմիածնի Մայր տաճարը Աստծո Միածին Որդու՝ Հիսուս Քրիստոսի ցուցումով կառուցվել է այն վայրում, ուր Նոյն Արարատից իջնելուց հետո պատարագ է մատուցել իր և իր ընտանիքի փրկության համար»[191]:

Այս երեք պատկերներում բոլոր ժամանակների նույն զոհասեղան է,



I-ը մինչ Ջրհեղեղ եղածի պատկերն է, որտեղ զոհ է մատուցում Աբելը:



II-ը Ջրհեղեղից հետո նորոգվածն է, երբ արդեն Նոյ նահապետն է նույն սեղանի վրա զոհ մատուցում:



III-ը արդեն հեթանոսությանը հաջորդող ժամանակաշրջանինն է, ուր ի վերջո՝ անարյուն զոհ՝ Սուրբ Պատարագ մատուցեց Ս. Գրիգոր Լուսավորիչ հայրապետը, և մինչ օրս այդտեղ՝ Իջման Սուրբ Սեղանին, հավուր պատշաճի կատարվում է Սուրբ Պատարագ՝ Արարատ-

[191] Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002, էջ 26:

յան սուրբ երկրի հոգևորականների ձեռամբ: Եվ կմատուցվի մշտնջենապես՝ մինչ Տիրոջ Երկրորդ Գալուստը:

Եվ հենց այդ զոհասեղանի վրա է Արարատյան երկրում կառուցվել Տիրոջ առաջին տաճարը:



Դա երևում է նաև սրբապատկերում, որտեղ պատկերված է տաճարի կամարաձև առաստաղը, իսկ զոհասեղանի երկու կողմերում՝ այուները և մուտքը: Զոհասեղանի մի կողմում Աբելը զոհաբերում է գառնուկին, իսկ մյուս կողմում Մելքիսեդեկը՝ Հայկ նահապետը, ընծայաբերում է հաց և գինի. այս երկու զոհաբերումներն էլ Փրկչի խորհրդանիշն են:

«Մելքիսեդեկի մոտ էր Քրիստոսի Հավիտենական Պատարագի նշանը՝ հացի և գինու տեսքով: Մելքիսեդեկը Պատարագի հաց և գինի մատուցեց Աբրահամին: Եվ մեր Տերն էլ նույնով ավանդեց Փրկչական Մարմինը և Արյունը»[192]*:*

Այդ սրբապատկերը ևս վկայություն է, որ Մելքիսեդեկը հենց Հայկ նահապետն է եղել, քանզի ինքը՝ Մելքիսեդեկը, եթե զուտ քանանացի մեկն էր, ապա ի՞նչ գործ ուներ Արարատյան երկրում, այն էլ սուրբ զոհասեղանի մոտ:

Իսկ Սաղեմյան տաճարում Հայկ-Մելքիսեդեկ քահանայապետը աստվածպաշտության կարգին, հավանաբար, աշխատում էր մասնակից դարձնել նաև քանանացիներին.

«Հիշենք Մելքիսեդեկ քահանայապետին՝ Աստծո սիրելիին՝ ոչ իբրև կեղծ աստվածների քահանայապետի, այլ Ճշմարիտ՝ Ամենաբարձրյալ Աստծո: Քանզի Աստվածաշնորհ այրերը հենց այնպես չանվանեցին Մելքիսեդեկին Աստծո բարեկամ և քահանա, այլ որպեսզի դրա միջոցով պայծառատեսներին ավելի հստակ ցույց տան, որ Մելքիսեդեկը ոչ միայն ինքն էր դարձել Ճշմարիտ Աստծուն, այլև ուրիշներին, որպես քահանայապետ, ուղղում էր Ճշմարիտ և միակ Աստծուն»[193]*:*

Այդ քարոզչության նպատակն այն էր, որ այն օրենքները, որ Տերն Արարատյան երկրում տվեց Նոյ նահապետին, հասու դարձվեն նաև Քանանի տեղաբնակներին՝ նրանց կոչ անելով հեռանալ կուռքերի գարշելի պաշտամունքից և հետևել Տիրոջ սուրբ պատվիրաններին:

«Սա սկզբնական կրոնի հայտնության համաշխարհային քահանայություն էր, որի մնացորդները, ինչպես աստղեր մութ հորիզոնում, դեռևս շարունակում էին պահպանվել նույնիսկ հեթանոսական խավարի սնահավատության և կռապաշտության մեջ» [194]*:*

Հայկյան քարոզչության արդյունքն էր, որ այդ ժամանակ Քանանում գտնվող

---

192 Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս 1729թ., էջ 301:
193 Дионисий Ареопагит, О небесной иерархии, СПб. 1997. ст. 183.
194 А. П. Лопухин, Толковая Библия, 1, Петербургъ, 1904-107г., ст.98.

որոշ թագավորներ Աստծու մասին պատկերացում ունեցան. այդպիսի մեկն էր Աբիմելեքը, հետագայում նաև՝ Հոբը՝ իր չորս իշխանավոր ընկերների հետ:

«Այս ամենից կարելի է ենթադրել, որ Մելքիսեդեկը ողջ Պաղեստինում հռչակված էր որպես ճշմարիտ Աստծո քահանա» [195]**:**

Իհարկե, այդ քարոզչությունն իրականացվել է միաժամանակ Սաղեմի Հայոց և Արարատյան թագավորության կողմից, ինչի մասին իր կարծիքն է հայտնել ամերիկացի հոգեբույժ Ուիլյամ Սեդլերը՝ «Ուրանտիի գիրքը» աշխատությունում, որտեղ ասվում է, որ Հայաստանի և Սաղեի միսիոներները թափանցել են Եվրոպայի բոլոր շրջանները և հասել նույնիսկ Բրիտանական կղզիներ: Հետաքրքիրն այն է, որ որևէ տեղեկություն չունենալով Հայկի՝ Մելքիսեդեկը լինելու մասին՝ նա գրում է.

«Քաջ տղամարդկանց և կանանց կյանքն ու փորձառությունը, որ ճանապարհ էին ընկել «Սաղեմից» և «Վանա լճի» ափամերձ տարածքներից արևելյան կիսագնդի ցեղերին լուսավորելու համար, իրենցից ներկայացնում են հերոսական էջ՝ մարդկության պատմության մեջ» [196]**:**

Սաղեմը հայկական թագավորություն էր, իսկ որ Վանա լիճը Մեծ Հայքի կենտրոնական մասերում է գտնվում, հայտնի է բոլորին:

Կառուցելով Սաղեմ քաղաքը և Սիոնի տաճարը՝ Հայկ-Մելքիսեդեկը Գողգոթայի բարձունքում կառուցում է նաև մի դամբարան և մեծ հանդիսավորությամբ համայն մարդկության նախահոր՝ Ադամի նշխարները թաղում է այնտեղ. ***«...այնտեղ (Գողգոթայում) մի մատուռ էլ կառուցեց Ադամի շիրիմի վրա»*** [197]**:**

Այսպիսով, Հայոց Սաղեմում կար երկու մեծ սրբավայր՝ տաճարը Սիոն լեռան վրա և Ադամի դամբարանը՝ Գողգոթայում: ***Ակնհայտ է, որ Աստված ընտրեց Երուսաղեմը՝ մինչ Աբրահամի ծնունդը, որպեսզի լինի երկրային մի կենտրոն՝ Աստծո կողմից մարդկանց հետ հարաբերվելու համար, քանի որ այնտեղ արդեն թագավորում էր Մելքիսեդեկը»***[198]**:**

Փաստորեն, քուռարաքսյան մշակույթի՝ Քանան ներթափանցման հետ՝ Ադամի նշխարները ևս բերվեցին Պաղեստին: Ապա ուրեմն, ոչ թե Սեմի կամ մեկ ուրիշի մոտ են եղել սուրբ նախահոր մասունքները, այլ հենց Հայոց մեծ նահապետի, քանզի նրա միջոցով Հայաստանից Պաղեստին են բերվել ոչ միայն նյութական, այլև հոգևոր արժեքներ, այդ թվում և՝ Ադամի նշխարներով մասնատուփը:

Հետաքրքիր կարծիք է հայտնում այս մասին Ղևոնդ Ալիշանը. ***«Ասում են, որ Նոյը նախքան տապան մտնելը՝ լալով հանեց Ադամի և Եվայի մարմինները և Դրախտի դիմաց վերջին ողջույնը տալով՝ դրեց տապանի մեջ, հետո ավանդեց Սեմին կամ Մելքիսեդեկին, որը տարավ և Գողգոթայում թաղեց»***[199]**:**

Ինչպես տեսնում ենք, Ալիշանն այն կարծիքին է եղել, որ Նոյն Ադամի մա-

---

[195] Святитель Филарет (Дроздов, 1783-1867), “Толкование на книгу Бытия”, Москва, 2004г., ст. 289.

[196] http://www.urantia.ru/book/Paper93.asp.

[197] Ղևոնդ Ալիշան, «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», սր. Ղազար, Վենետիկ, 1904թ., էջ 32:

[198] Генри Г. Геллей, Краткий библейский толкователь, Торонто – Канада, 1989, ст. 45.

[199] ՂևոնդԱլիշան, «Հայաստան յառաջ քան զլինելն Հայաստան», էջ 32:

սունքները տվել է երկուսից մեկին՝ կա՛մ Սեմին, կա՛մ Մելքիսեդեկին: Իսկ դա խոսում է այն մասին, որ Սեմը և Մելքիսեդեկը տարբեր անձնավորություններ են եղել և բնակվել են Արարատյան երկրում:

«Իսկ նրանց ազգատոհմից չհամարվեց»,- այստեղ ըստ Թեոդորիտոսի և այլոց ակնարկվում է, որ Մելքիսեդեկն ուներ իր ազգը, անծին չէր, այլ մի ուրիշ ազգից և օտար ժողովրդից էր սերված: Որից էլ իմանում ենք, որ այդ օտարազգին, որ եբրայեցիների ազգատոհմից չէր, արյունակցական կապ չուներ ո՛չ ղևտացիների և ո՛չ էլ աբրահամականների հետ...

Այստեղ շատերի թյուր կարծիքները փարատվում են, թե իբր Մելքիսեդեկը Սեմ նահապետն է, քանզի այդ դեպքում նա Աբրահամի համար օտարազգի չէր համարվի, այլ՝ նրա բուն նախահայրը» [200]:

Իսկ Մելքիսեդեկի՝ անձամբ Նոյի կողմից Ադամի նշխարները վերցնելը ևս մեկ անգամ մեր առջև բացում է այն տեսարանը, երբ թագավոր և քահանա ձեռնադրվելուց և օծվելուց հետո Հայկը Նոյից սուրբ երկյուղածությամբ ստացավ Ադամի նշխարները:

«Մելքիսեդեկի անձը շրջապատված է խորհրդավորությամբ, քանի որ նա չէր պատկանում ընտրյալ ցեղին, սակայն Ճշմարիտ կրոնի քահանա էր և այնքան վսեմ, որ հետագայում դարձավ քահանայության իդեալը՝ ավելի բարձր, քան ահարոնյան քահանայությունը» [201]:

Այո, միանշանակ է կարծիքը, որ Մելքիսեդեկը՝ Հայկն ինքը, չի պատկանել սեմական ճյուղին, առավել ևս՝ եբրայեցիներին, և նրա քահանայությունն էլ չէր կարող այդ ճյուղի հետ որևէ առնչություն ունենալ, քանզի գոյություն ուներ Ղևտականից շատ ավելի վաղ:

«Նա՝ Մելքիսեդեկը, նման չէր օրինապաշտ քահանաներին. նրանք քահանայությամբ ստացան օրենքում պարունակվող մարմնավոր պատվիրաններ՝ կտրիր մարմինդ և լվա մարմինդ, հանգստացիր մարմնով և արժանացիր մարմնավոր բարիքների: Մելքիսեդեկն այդպես չէ. նա Աստծո զորությամբ է, ինչի պատճառով էլ նրա քահանայությունը հավիտյան կենդանի է և անկործանելի» [202]:

Այս քահանայությունը, ինչպես արդեն ասվել է, սկիզբ է առնում Ադամից, ում ձեռնադրեց Ինքն Աստված, երբ դեռ թլպատության օրենքը չկար:

«Առաջին քահանայագործությունն անթլպատ Աբելն է կատարում, այդպես և՝ նրան հետևող Նոյը, և հիմա՝ Մելքիսեդեկը, ով Աստծո քահանա էր ոչ թլփատությամբ, այլ՝ կատարյալ ճշմարտությամբ և առաքինություններով, իսկ ըստ մարմնի՝ անթլպատ» [203]:

Այսպիսով, քաղաք-պետություն Սաղեմի հայոց թագավորությունը Հայկի

---

[200] «Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի Առաքելոյ», աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 148, 149:

[201] Энциклопедический словарь, Том XIX, Мекененъ-Мифу-Баня. изд. Ф. А. Брокгаузъ, И. А. Ефронъ. С.-Петербург 1896, ст. 42.

[202] Феофилакт Болгарский, Толкование на деания и посланиа святых апостолов, Том 3. Москва, 2011, Ст. 550.

[203] Творения Святого Епифанія Кипрскаго, Част вторая, Об Ересяхь, Москва 1864 г., Ст. 439.

գլխավորությամբ ապրում էր միաստվածության կանոններով՝ իր առաքելությունը կատարելով Պաղեստինում: Եվ միայն Սաղեմ քաղաքից չէր բաղկացած այդ թագավորությունը. ինչպես ասվեց, Պաղեստինում քուռարաքսյան մշակույթին բնորոշ կլորավուն տների և այլ կառույցների առկայությունից պարզ է դառնում, որ այդ թագավորությանը պատկանող այլ բնակավայրեր ևս ձևավորվեցին:

Հայկ-Մելքիսեդեկ և Աբրահամ

Սաղեմի թագավորությունն ամրապնդվեց, և նրա հին ու նոր բնակիչներն արդեն իրար չէին նայում որպես օտարների:

Այդ ժամանակաշրջանում Աբրահամ նահապետն իր համայնքով երկարատև դեգերումներից հետո նույնպես հաստատվեց Քանանում:

Սուրբ Գրքում Մելքիսեդեկի և Աբրահամի հանդիպման մասին նշվում է այն ժամանակ, երբ հաղթանակած Աբրահամը, վերադառնալով պատերազմից, իր հետ բերած ավարից տասանորդ է մատուցում Մելքիսեդեկին:

Սակայն բնական է, որ նա մինչ այդ՝ շատ անգամ պիտի հանդիպած լիներ Մելքիսեդեկ-Հայկ նահապետի հետ՝ որպես հավատակցի և Սաղեմի տաճարում մեծ քահանայապետի գլխավորությամբ մասնակցեր աստվածապաշտության արարողություններին.



«Մելքիսեդեկն այն հազվագյուտ մարդկանցից էր՝ Աբրահամի պես, որոնք շարունակում էին վերը հիշված արդարների կրոնական ավանդությունները՝ պաշտելով «Բարձյալ Աստծուն», և իբրև դավանակից՝ Մելքիսեդեկը «Օրհնեց Աբրահամին»»[204]:

*Իսկ որ երկու նահապետներն էլ պաշտում էին միևնույն Ճշմարիտ Աստծուն, ոչ ոքի մոտ կասկած չի հարուցել. **«Մելքիսեդեկը... նախամիաստվածության պաշտանմունքի՝ էլիոնի (Բարձյալ Աստծո) հոգևորական էր՝ նույնացված Աստվածաշնչյան ավանդության Յահվեի հետ»[205]:***

Մեկնիչներն ասում են՝ Աբրահամը և Մելքիսեդեկը (Հայկը) հանդիպել են Սաղեմում. ըստ ավանդության՝ դա Գողգոթայում էր: Պետք է եզրակացնել, որ Աբրահամն իր ճանապարհն ուղղել էր դեպի Սաղեմ, և արդեն այդ սրբա-

---

[204] Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Աստվածաշնչական Սուրբեր, Երևան 1997, էջ 52:
[205] Мифи народов мира, энциклопедия 2 к-я, глав. Ред. С.А.Токарев. Москва 1992, ст. 135.

վայրում գտնվող մեծ Քահանայապետ Հայկը, տեսնելով մոտեցող Աբրահամին, ընդառաջ էր ելել նրան։

Հարձակման պատրաստվելիս՝ Աբրահամի բոլոր բարեկամները միացել էին իրեն և միասին գրոհել թշնամու վրա։



Աբրահամի զորքին չմիացան Սաղեմի գնդերը, բայց Աբրահամը ավարից բաժին հանեց՝ տասանորդ տալով Հայկ-Մելքիսեդեկին, ով կարծես թե իր մասնակցությունը չէր բերել այդ պատերազմին։ Բայց դա այդպես չէ. Աբրահամը ոչ թե զորք էր խնդրել Սաղեմի թագավորից, այլ ավելին՝ որպեսզի քահանայապետն այդ սրբավայրում՝ Ադամի գերեզմանի մոտ, Աստծուն դիմի՝ իրենց հաղթանակի համար։ Այդ պատճառով էր, որ Աբրահամն առաջնահերթ Սաղեմի բարձունքը ելավ՝ իր շնորհակալությունը հայտնելու մեծ քահանայապետին՝ Աստծո առջև միջնորդ լինելու համար։ Նա վստահ էր, որ միայն Բարձրյալի աջակցությամբ իրեն հաջողվեց հասնել հաղթանակի։ Քանզի մեկտեղված բազմաթիվ ռազմատենչ թագավորներին հաղթելը զուտ իր ընդօծին ժողովրդով (ընդամենը՝ 318 հոգի) և իրեն միացած փոքրաքանակ բարեկամներով անհնարին էր։

*Դա շատ լավ գիտեր նաև Հայկ նահապետը, ով օրհնելով Աբրահամին՝ ասաց. **«Օրհնյալ է Բարձրյալն Աստված, որ քո թշնամիներին մատնեց քո ձեռքը»**[206]։*

Այստեղ էր, որ Հայկ նահապետը հաց ու գինի տվեց Աբրահամին, ինչը Քրիստոսի՝ Աստծո Որդու զոհաբերության խորհուրդն ուներ։

Եվ հենց այս վայրում, հազարամյակներ անց, խաչի վրա գամվելով՝ Աստծո անարատ Գառը, պիտի Իր Փրկչական արյունը հեղեր համայն մարդկության փրկության համար՝ տալով Իր մարմինն ու արյունը՝ որպես հավիտենական կյանքի կերակուր՝ Դա հավատով ընդունողների համար. և ամեն կիրակի քրիստոնյաներին Այն բաշխվում է Սուրբ Պատարագի արարողության ժամանակ՝ հացի և գինու երևույթով։

***«Ըստ ավանդության՝ Գողգոթայի մեջ էր, որ Աբրահամը հանդիպեց Մելքիսեդեկին, ում կողմից օրհնվեց իր պատարագներով՝ իբր օրինակ խաչի վրա կատարված Անմահ Պատարագի, որով օրհնվեցին արարածները»** [207]։*

Նաև Հայկ նահապետն Աբրահամի համար բարեխոսում էր Երկնքի և երկրի Արարչին՝ Ադամի գերեզմանի մոտ, քանզի նման կերպով մարգարեաբար Տիրոջ

---

[206] Ծննդ. 19- 20:

[207] Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, Սուրբ Երկրին Սրբավայրերու Ավանդութիւնները, Երուսաղէմ 1936, էջ 50:

առջև էր բերում այն, որ Տերը պիտի գա՝ փրկելու սատանայի իշխանությանը մատնված մարդկությանը։

Հենց նույն բարձունքի վրա Քրիստոս Տերն Իր սուրբ խաչով պիտի ջախջախեր թշնամու գլուխը՝ դժոխքի գերությունից ազատելով Ադամին, ում նշխարները գտնվելով այդ վայրում՝ Փրկչի քավչարար արյամբ պիտի ցողվեին։

Սաղեմի արքայի կողմից կառուցված Գողգոթայի սրբավայրը Տիրոջ կամոք արդեն քրիստոնեության արշալույսին բաժին ընկավ հենց իր՝ Հայկ նահապետի սերունդներին. դարեր շարունակ այն պատկանելով Հայ Եկեղեցուն։

Աբրահամը ևս զոհաբերություն էր անում, ինչը քահանայության գործ էր, քանզի նա էլ էր ճշմարիտ Աստծուն ծառայում, այլ ոչ՝ կուռքերին։ Սակայն ի տարբերություն Հայկի, որ Տիրոջ նախակերպարն էր, նա Բարձրյալ Աստծո քահանայապետ չէր։

«Թերևս, ոմանք կարծում են, թե Աբրահամը նույնպես քահանա էր, քանզի զոհասեղան էր կառուցում և զոհ էր մատուցում։ Սակայն, այդպիսի քահանայությունը ընդհանրական չէր և այլ ժողովուրդների վրա չէր տարածվում, ինչպես Մելքիսեդեկինը, այլ որպես տանտիրոջ՝ իր գերդաստանի և ընտանիքի վրա»[208]։

Այն, որ Հայկ-Մելքիսեդեկը Բարձրյալ Աստծո քահանայապետ էր և թագավոր, իսկ Աբրահամը միայն իր ժողովրդի համար էր քահանայություն անում և իշխում էր միայն նրանց վրա, ակնհայտ է դարձնում Հայկ նահապետի՝ ավելի մեծ լինելը. այդ է վկայում Աբրահամի տասանորդի մատուցումը Մելքիսեդեկին։

«Օրենքի տակ եղող քահանաները իրենց ազգակիցներից են պահանջում տասանորդ։ Իսկ Մելքիսեդեկը, լինելով այլազգի, տասանորդ վերցրեց Աստծո խոստումն ընդունած բուն նահապետից՝ փոխհատուցելով նրան օրհնությամբ»[209]։

Թեոդորիտոսն այստեղ խոսելով տասանորդի մասին՝ մեկ անգամ ևս շեշտադրում է այն փաստը, որ Աբրահամից տասանորդ վերցնող և նրան օրհնող քահանայապետը որևէ առնչություն չուներ սեմական ճյուղի հետ, և այդ այլազգի նահապետի հետ Աբրահամի ընդհանրությունը միայն դավանանքն էր։ Հայկ նահապետն իր մանկությունից իսկ պատկանում էր Աստծուն, մինչդեռ Աբրահամը Աստծուն ճանաչեց արդեն հասուն տարիքում։



«Գիտե՞ք, թե ինչպիսի մարդ էր Աբրահամը. հայրապետ էր ոչ թե մի տան կամ ցեղի, այլ մի ամբողջ օրհնյալ ազգի, հայրերի և ցեղապետերի հայր, քահանայական տոհմի արմատ, ամենայն բարիքների հիմք, որով բոլոր ազգերը օրհնություն գտան։ Այս նահապետն ընտրյալը և բարեկամն էր Աստծո, ո-

---

208 «Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի Առաքելոյ», աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 150:

209 Блажэнный Феодорит, Епископ Киррский. Толкование на четырнадцать Посланий святого апостола Павла. Москва 2013, ст. 576.

րով կարող էք պարծենալ, քանզի նաև Աստված էր պարծենում նրանով. սա, լինելով այսպիսի այր, կամավոր նվիրատվությամբ տասանորդ տվեց Մելքիսեդեկին: Տեսեք, թե ինչպիսին էր համարում նրան Աբրահամը՝ այդ Աստծուն հաճելի այրը, իրենից առավել նախապատվելի էր համարում, և եթե դուք Աբրահամի միախորհուրդ որդիներն էք, պարտավոր էք նրա ճանաչումը ձեր մտքերում հաստատել և խոստովանել, թե նա օրինակն ու ստվերն է Քրիստոսի, որով նա ավելի նախապատվելի է, քան Աբրահամը և մնացած բոլոր մարդիկ»[210]:

Աբրահամն իր խոնարհումով, ինչպես նշում է Պողոս առաքյալը, պարտադրեց իր բոլոր սերունդներին Հայկ-Մելքիսեդեկի առջև խոնարհվել:

«Առաքյալը 8-10 համարներում շատ բնական եզրակացություն է անում, որ ի դեմս Աբրահամի՝ ինքը՝ Ղևին և նրա բոլոր սերունդները՝ հինկտակարանյան քահանայությունը, խոստովանեցին, որ իրենք ենթակա են Մելքիսեդեկին՝ որպես հավիտենական արժանիքով անանց քահանայի»[211]:

Այսպիսով, Հայկ նահապետի առջև խոնարհվեցին Աբրահամի բոլոր սերունդները՝ նրա որդիները և նրանցից սերված Իսրայելի տասներկու նահապետները, նաև Մովսեսը, Ահարոնը, Ղևին և Աբրահամից սերված մյուս ազգերը. արաբները՝ Հագարից և պարթևները՝ Քետուրայից:

«Աբրահամը ոչ միայն իր, այլև ամբողջ սերնդի փոքրությունը խոստովանեց Մելքիսեդեկի առջև, հանուն իր ազգատոհմի՝ խոնարհեցրեց իր անձը և վերցրեց իր բաժինը Մելքիսեդեկի ձեռքից: Ահարոնն իր խույրով և պատմուճանով Մելքիսեդեկի առջև կանգնեց և օրհնվեց նրա կողմից. կարծես օտար ականջների համար խորթ է լսել նման բան, սակայն դեպքերի ընթացքն ու կարգը բերում են այս բանին և ցույց տալիս, որ դա բոլորովին էլ դժվար չէ»[212]:

Սակայն եթե տեսնենք, թե ինչ են ասել և ասում մեկնիչները Սաղեմի թագավորի մասին, արդեն զարմանալի չի թվա, այլ միանգամայն բնական, որ նույնիսկ Աբրահամի պես յուրահատուկ աստվածընտրյալ նահապետը գլուխ խոնարհեց Հայկի առաջ:

«Անբնական է այն, որ Աբրահամն ընդունեց քանանական քահանա-թագավորի իշխանությունը և իսկությունը, ինչը չունի զուգահեռներ աստվածաշնչյան գրականությունում» [213]:

Մեկնիչներից ոմանք Մելքիսեդեկին իր քահանայական պատվից և թագավորական իշխանությունից զատ՝ ներկայացրել են նաև որպես մեծագույն սրբության հասած անձնավորության: Իսկ սրբության հասնելու համար, ըստ սուրբ հայրերի վարքերի և խրատների, հարկ է համապատասխան հոգևոր դաստիարակություն ստանալ և մեծ ճգնությունների գնով բարձրանալ առաքինությունների աստիճաններով:

---

[210] Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի Առաքելոյ, աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պոլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 144:

[211] Архиепископ Аверкий (Таушев), Четвероевангелие / Апостол, Москва 2012, ст. 742.

[212] «Մեկնութիւն չորեքտասան թղթոյ երանելոյն Պօղոսի Առաքելոյ», աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պոլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812թ., էջ 151:

[213] Всемирная Энциклопедия Христианство, гл. ред. А. М. Вячеславович, Минск 2004. Ст. 436.

«Ահա այս սքանչելի և մեծ Մելքիսեդեկը, ում մասին մեծ և հրաշալի բաներ է պատմված Սուրբ Գրքում, արժանացավ լինել վեր ժամանակից և բնությունից և նմանվեց Աստծո Որդուն՝ ըստ շնորհի, որքանով որ դա հնարավոր է...

Նա, ով մահացրել է իր մեջ աշխարհում գոյություն ունեցող որևէ բանի հետ կապվածությունը և հանգցրել է իր բոլոր մարմնավոր իմաստությունները, կատարելապես մի կողմ է նետել ամեն մի առնչություն այն բանի հետ, ինչի պատճառով բաժանվում է (տարբեր առարկաների միջև) սերը, ինչը պարտավոր էինք տածել միայն Աստծո հանդեպ՝ մերժելով բոլոր մարմնավոր աշխարհային հատկանիշները՝ հանուն աստվածային շնորհի այնպես, ինչպես աստվածային Պողոսն էր ասում՝ «ո՞վ կբաժանի մեզ Քրիստոսի սիրուց», այդպիսինը դառնում է անհայր և անմայր և առանց ազգատոհմի, ինչպես մեծ Մելքիսեդեկը, որ (Աստծո) Հոգու հետ միանալու պատճառով էլ չէր գտնվում մարմնի և բնության իշխանության տակ»[214]***։***

Մաքսիմոս Խոստովանողի այս խոսքից կարող ենք եզրակացնել, որ Մեծն Հայկն իր բարեպաշտ կենցաղավարությամբ հասել էր սրբության այնպիսի բարձր աստիճանի, որ հանուն Աստծո մերժել էր ամեն ինչ՝ դառնալով մի տեսակ երկնաքաղաքացի՝ երկրի վրա ու նաև այսպես էր մարմնավորում Քրիստոսի նախակերպարը։ Ահա այդպիսին էր հայոց մեծ Նահապետը, և բնական է, որ նման սրբության կարելի էր հասնել մշտահովանի Նոյ նախահոր աջի ներքո, այլ ոչ՝ պղծաբարո Սոդոմի-Գոմորի մերձակայքում։

Սուրբ Գրքում նրա մասին հիշատակված է երեք անգամ՝ խորհրդավոր թվով, և դա պատահականություն չէ։

«Վերօրհնյալ Աբրահամը կարծես ցածր է համարվում քանանացի թագավորից, ով անսպասելիորեն հայտնվում է այստեղ։ Հետո՝ 1000 տարվա ընթացքում, նրա մասին ոչինչ չի ասվում, և հանկարծ 109-րդ սաղմոսի մարգարեությունում «Մեսիան» անվանվում է «հավիտենական քահանա՝ Մելքիսեդեկի կարգի»։ 1000 տարի անց՝ եբրայեցիների ուղերձը ևս ասում է, որ Հիսուս Նազովրեցին նմանվում է այս խորհրդավոր քահանայապետին» [215]***։***

Հիշենք նաև, որ Աբրահամի որդի Իսահակի կին Ռեբեկան իր հղիության ժամանակ դիմեց Սաղեմի արքա-քահանային. մեկնիչներն ասում են՝ դա ևս վկայում է Հայկ նահապետի մեծության և աստվածային շնորհազարդության մասին.

«Իսահակն աղաչեց Տիրոջը իր կին Ռեբեկայի համար, որովհետև սա ամուլ էր։ Աստված լսեց նրան, և նրա կին Ռեբեկան հղիացավ։ Նրա արգանդում իրար էին բախվում երեխաները։ Նա ասաց. «Եթե այսպես էր լինելու ինձ, հապա ինչո՞ւ հղիացա»։ Եվ նա գնաց այդ մասին Տիրոջը հարցնելու։ Տերը նրան ասաց. «Քո արգանդում երկու ցեղ կա, քո արգանդից երկու ժողովուրդ պիտի ծնվի»»[216]***։***

Այդ ժամանակ կենդանի էր նաև մեծ նահապետ Աբրահամը, սակայն Ռեբեկան չէր դիմել Աբրահամին, այլ մեկ ուրիշի։ Առաջին հայացքից կարող է ան-

---

[214] Максим Исповедник, прп. О различных недоумениях у святых Григория, и Дионисия / прп. Максим Исповедник. – М.: Институт философии, теологии и истории св. Фомы, Москва 2006 г., ст.118-119, 122.

[215] Библейский словарь. Составил Эрик Нюстрем. Санкт-Петербург 2004. Ст. 243.

[216] Ծննդոց 25:21-23:

հասկանալի թվալ: Բայց Ռեբեկան հարցումով ո՞ւր պիտի գնար, եթե ոչ Սաղեմ՝ Բարձրյալ Աստծո քահանա Հայկ նահապետի մոտ:

«Ռեբեկան չէր անտեսի հրաշքով մորթվելուց ազատված իր ամուսնուն և ոչ էլ իր կեսրարին, ում այդպես հաճախ աստվածային հայտնություններ էին տրվում, և չէր գնա հարցում անելու նրան, եթե չիմանար, որ նա մեծ է առավել, քան Աբրահամը և նրա որդին...

Չի կարելի մտածել, որ ինչ-որ մի քանանացու կամ սոդոմացու մոտ գնաց Ռեբեկան հարցում անելու... Քանի որ Մելքիսեդեկի կյանքի օրերը տևեցին մինչև Հակոբի և Եսավի ժամանակները» [217]**:**

Տեսնում ենք, որ Քանանում այդ ժամանակ Աստծուց մի բան իմանալու համար դիմում էին Մելքիսեդեկին, քանզի նա էր Տիրոջ առջև կանգնելու համարձակություն և շնորհ ստացել՝ որպես Բարձրյալ Աստծո քահանա: Ճիշտ է, Աբրահամը մեծ էր, սակայն Մելքիսեդեկին դիմելը կրկին վկայում է, որ Հայկ նահապետն առավել էր հայր Աբրահամից: ***«Մելքիսեդեկը ծագմամբ նրանցից չէր, այլ ծագել էր ուրիշ ցեղից, հետևաբար՝ Աբրահամն այլացեղին տասանորդ չէր տա, եթե չտեսներ նրա մեջ բարձր պատվականություն»*** [218]**:**

Ակնհայտորեն, Արարչից նախահայրերին փոխանցված ձեռնադրությամբ Հայկը Հայաստանից եկավ Քանան:



Եվ սուրբ վայրում, որն ավելի ուշ պետք է կոչվեր Գողգոթա, տեղի ունեցավ խորհրդակիր հանդիպումը. Աբրահամն իր խոնարհ հոգով և տասանորդով Հայկ-Մելքիսեդեկին ճանաչեց ու մեծարեց՝ որպես Քրիստոսի նախակերպարի, իսկ Հայկ նահապետն Աբրահամին օրհնելով և հաց ու գինու մատուցումով հայտնեց, որ մեծագույն խորհուրդը պիտի իրականանա հենց Աբրահամի միջոցով ... Նրա սերնդից պետք է գար Մեսիան՝ աշխարհի Փրկիչ մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ թագավորների Թագավորը և հավիտենական Քահանայապետը և քարոզեր Երկնքի արքայության մասին, ապա հրեաների և հեթանոսների ձեռքը մատնվելով՝ պիտի չարչարվեր, խաչը հանվեր հենց նույն վայրում, որտեղ նրանք՝ Հայկն ու Աբրահամը հանդիպեցին:

Երրորդ օրը Փրկչի հարությունը նույնպես պիտի տեղի ունենար Հայկի կառուցած քաղաքում՝ Սաղեմ-Երուսաղեմում:

Եվ ուրեմն, հեռավոր ժամանակներում, որպես մարդկության փրկության մեծ խորհրդի նախակարապետ, առաքվեց Հայկ նահապետը՝ Մեծն Մելքիսեդեկը՝ ճանապարհ հարթելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի աշխարհամուտի համար:

---

[217] Ефремь Сиринь, Творение, Томь 6, Москва, 1995, ст. 277-278.

[218] Св. Иоанн Злотоуст, Полное собрание творений, Том 12, кникга 1, Толкование на послание к евреям, Минск 2005, ст. 1005.

«Մելքիսեդեկի քահանայության գերազանցությունը հավերժական է թվում այն բանի համար, որ չենք տեսնում ո՛չ նրա նախորդներին, ո՛չ էլ հաջորդներին: Բայց իրականում այդպիսին է Հիսուս Քրիստոսի քահանայությունը» [219]:

Այո, Մելքիսեդեկի հաջորդին չենք տեսնում, քանզի հաջորդ՝ որպես այդպիսին, չի էլ եղել: Նա թագավոր-քահանա կարգավիճակը չի փոխանցել ո՛չ իր որդի Արամանյակին, ո՛չ էլ Աբրահամին: Դա նույնպես Տիրոջ նախակերպար լինելու նշանակ է. ***«Ինչպես որ Մելքիսեդեկի կողմից քահանայության ժառանգներ չեղան, այդպես և Քրիստոս ուրիշի չի փոխանցում քահանայությունը»*** [220]:

Փաստվում է, որ «Մելքիսեդեկի կարգի քահանա» հենց նշանակում է չփոխանցվող քահանայություն:

Իսկ եթե Հայկ-Մելքիսեդեկը քահանայությունը ստացել է Նոյից, Նոյն էլ իր նախնիներից, ինչո՞ւ չի ասվում «քահանա Նոյի» կամ մի այլ նահապետի կարգի: Պատճառն այն է, որ նրանք իրենց քահանայությունը փոխանցեցին, իսկ Մելքիսեդեկը՝ ոչ, քանզի նա այդ քահանայության վերջին կրողն էր:

«Մելքիսեդեկի «քահանայություն» բառի ողջ համատեքստում դրված է հատուկ, սրբազան ծառայություն, բայց սա էլ իր հերթին բազմիցս կրկնվող չէ, այլ հստակորեն տարբերվում է Սուրբ Գրքում իրար հաջորդող Ղևտական քահանայությունից և նույնիսկ հակադրվում է դրան [221]: ***Այստեղից կարելի է եզրակացնել, որ Մելքիսեդեկը եղել է վերջին ներկայացուցիչն այն սկզբնական քահանայության, որի մասին որոշ ակնարկներ գտնում ենք Ենոսի և Նոյի պատմության մեջ»*** [222]:

Այսպիսով, Հայկ նահապետի և նրա սերունդների՝ հայերի առաքելությունը Տիրոջ գալստյան ճանապարհը հարթելն էր՝ Մելքիսեդեկին տրված և Փրկչին խորհրդանշող մարգարեական նշաններով, Սուրբ քաղաքի՝ Երուսաղեմի կառուցումով, Ադամի նշխարները Գողգոթայի բարձունքում ամփոփելով, Աբրահամ մեծ նահապետին փրկչական խորհուրդներ «Հացն ու Գինին» հանձնելով՝ ի նշան նրա սերնդից Փրկչի գալուն և Խաչելությամբ աննարյուն Պատարագի հաստատման:

Սակայն մի այլ մարգարեական խորհուրդ էլ կար նրանում, երբ Հայկ նահապետը փրկչական խորհուրդները տվեց Աբրահամին. այն է, որ կգա ժամանակ, երբ միայն հայ ազգին տրված Աստվածային շնորհները, կվերցվեն Հայկի սերունդներից՝ հայերից, և կտրվեն Աբրահամի սերունդներին՝ հրեաներին, երբ հայերը կընկնեն ճշմարիտ աստվածպաշտության բարձունքներից՝ հեթանոսական խավարի գուբը:

Սակայն պիտի գա նաև մի այլ ժամանակաընթացք, երբ Աստվածային շնորհը այս անգամ կվերցվի արդեն հրեաներից և նորից կվերադարձվի այն ազգին, ով ի սկզբանե նրա կրողն էր, այսինքն՝ հայ ազգին: Այս մասին է խոսում խաղողի այգու չար մշակների՝ Տերունական առակը, ուր Նա հրեաներին ասաց. ***«Դրա համար ասում եմ ձեզ, որ ձեզնից կվերցվի Աստծո արքայությունը և կտրվի այն***

---

[219] Святитель Филарет Дроздов, “Толкование на книгу Бытия”, Москва, 2004г., ст. 292.

[220] Блажэнный Феодорит, Епископ Киррский. Толкование на четырнадцать Посланий святого апостола Павла. Москва 2013, ст. 579.

[221] Սղմ. 109:4, Եբր. 5:6:

[222] А. П. Лопухина, Толкования Библия, 1, Петербургъ, 1904-107г., ст.98.

ազգին, որ պտղաբեր կդարձնի այն»[223]*։ Այստեղ ընդգծվում է միայն ուրույն մի ազգ, և դա հենց Հայկ-Մելքիսեդեկի սերունդ հայ ազգն է, որ ի սկզբանե՝ առաջին աստվածապաշտ ազգն էր, քանզի հենում Արարատյան երկիրը առաջին և միակ աստվածապաշտ պետությունն էր։ Եվ քրիստոնեության ժամանակ էլ այն դարձավ առաջինը՝ անդրանիկ Քրիստոնյա պետությունը աշխարհում։*

Իհարկե՝ Քրիստոնեության փրկարար դուռը բացվեց բազմաթիվ ազգերի համար, սակայն այս առակում շեշտվում է հատկապես մեկ ազգ։ Հաջորդ՝ հարսանիքի առակի[224] *մեջ արդեն խոսվում է բազմաթիվ ազգերի մասին, որոնք դարձան Քրիստոսին։ Հրավիրվածները՝ այսինքն հրեաները, ըստ այս առակի՝ մերժեցին թագավորի որդու հարսանյաց հրավերը, և թագավորն էլ նրանց անարժան համարելով՝ հրավիրեց ամենատարբեր մարդկանց՝ այսինքն ազգերի, որոնք և լցրեցին հարսանյաց սրահը, (իհարկե՝ հայերի հետ)։*

Այսպիսով, հայերը ի սկզբանե եղել են առաջին աստվածապաշտ ժողովուրդը և քրիստոնեության շրջանում նորից դարձան առաջինը։

Հայերի՝ Պաղեստինում գտնվելու հետ կապված այլ հրաշալի խորհուրդներ և եղելություններ էլ կան։ Դրանց մասին կխոսվի սույն՝ «Հայաստան. Արարչագործությունից մինչ երկրորդ Գալուստ» աշխատության երկրորդ հատորում։

Հայկ-Մելքիսեդեկ մեծ նահապետի վախճանը

Ինչպես տեսանք, Մելքիսեդեկը մահկանացու էր, այլ ոչ գերբնական և անմահ մի էակ։ Երկար տարիներ թագավորելով Սաղեմում՝ մեր երանելի նախահայրը՝ Հայկ-Մելքիսեդեկ նահապետը, հասնելով խորը ծերության, կնքեց իր մահկանացուն։

Ըստ տրամաբանության՝ նրա մարմինը պետք է տանեին Հայաստան՝ հողին հանձնելու Նոյ նահապետի կողքին, ինչպես որ Աբրահամի կողքին պիտի թաղվեին Իսահակը, Հակոբն ու Հովսեփը։ Սակայն այս մասին մենք ոչ մի հիմնավոր փաստարկ չունենք։ Փոխարենը կան Հայկի գերեզմանատեղի մասին խոսող աղբյուրներ, ըստ որոնց՝ նրա օրհնյալ նշխարները մնացին հենց Սաղեմում և հողին հանձնվեցին ոչ թե Նոյի, այլ՝ Ադամի կողքին.

«Մելքիսեդեկի գերեզմանի վայրի մասին Հովհաննես եպիսկոպոս Երուսաղեմացին գրում է. «Ադամի գլխի մոտ կա մի գերեզման, որ ասում են, թե պատկանում է Մելքիսեդեկ քահանային. սակայն չկարողացա ստուգությունը ճշտել»։ Սակայն, ըստ երևույթին, այդ գերեզմանի վրա հետագայում սեղան է կառուցվել…

Այս ավանդությունը, որ պակասում է Աստվածաշնչի մեջ, հիշատակվում է նաև հունական Հայսմավուրքում»[225]*։*

---

[223] Մտթ. 21:43:

[224] Մտթ. 22:1-14:

[225] Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի. Սուրբ Երկրին Սրբավայրերու Ավանդութիւնները. Երուսաղէմ 1936. էջ 51, 52:

Վստահաբար, Հայկ-Մելքիսեդեկ մեծ թագավորի և Բարձրյալ Աստծո քահանայի մարմինը մեծագույն պատվով հուղարկավորում են իր իսկ կողմից պատրաստված նախահայր Ադամի դամբարանում: Քանզի Մելքիսեդեկի գերեզմանի՝ Golgotha-ում գտնվելու մասին է ասում նաև սուրբ Գրիգոր Նարեկացին՝ համարելով, որ նա Ադամի՝ համայն մարդկության նախահոր նշխարներին պահապան մնաց.

«Մելքիսեդեկը չէ՞ր ահավոր ճշմարտությանդ օրինակ՝ Golgotha-ի լեռան վրա, ուր հետո կանգնեցին մարմնացած Աստծուդ ոտքերը... Ուստի և նախահոր շիրմին պաշտպան նստեց՝ Քեզանից ստացած եպիսկոպոսական արքայապատիվ ճոխությամբ, մինչև հայտնվեցիր՝ որպես կատարյալ Իսկություն քահանա, ունակ, Ադամին կենագործելու» [226]:



Մեր նախահոր՝ Հայկի ննջման այս տեղանքը ճանաչված էր մեսիական բնույթի մարգարեական իրողություններով և հատկապես հայտնի էր նույն վայրում այդ մարգարեական իրողությունների իրականացմամբ.

«Այս լեռան (Golgotha-ի) վրա Աբրահամն իր Իսահակ որդուն հանեց՝ Աստծուն պատարագ մատուցելու համար և Սաբայական ծառից կախված գտավ խոյին՝ հապացույց Աստծո Միածին Որդու, որ Խաչափայտի վրա գամվեց: Այստեղ էր, որ երևաց Հակոբ նահապետի սանդուղքը, որի վերևում Տերն էր, իսկ հրեշտակները իջնում էին, և մարդիկ՝ բարձրանում, ինչը Սուրբ Խաչի խորհուրդն ուներ, որի վրա մեր Տերը գամվեց և բացեց Արքայության ճանապարհը, որով Ադամի զավակները երկինք են ելնում» [227]:

Պատահական չէ, որ Երուսաղեմի և ընդհանրապես Սուրբ Երկրի հետ շատ մեծ է եղել Հայաստան աշխարհի առնչությունը: Քանզի դեռ առաջին դարում հայոց Աբգար թագավորի տիկինը՝ Հեղինե թագուհին, Կոստանդիանոս կայսեր մորից՝ Հեղինեից դեռ 300 տարի առաջ, այցելելով Երուսաղեմ, խնամք տարավ տերունական սրբատեղիների համար:

Այնուհետ՝ չորրորդ դարում, երբ Սբ. Գրիգոր Լուսավորիչը գտնվում էր Երուսաղեմում, նրա աղոթքներով Սուրբ Հարության տոնին առաջին անգամ ի-

---


[226] Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի. Մատեան ողբերգութեան, (Բան ՂԳ. Ե). Զմիւռնիա 1870, էջ. 415-416:

[227] Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, Սուրբ Երկրին Սրբավայրերու Ավանդութիւնները, Երուսաղէմ 1936թ., էջ 50:

ջավ երկնառաք հուրը, որը դարձավ ավանդույթ: Այդ ժամանակ էր, որ տարբեր Եկեղեցիների առաջնորդներն աղոթքով իրենց խնդրանքը Տիրոջ առջև բերեցին և վիճակ գցեցին, թե ո՞ւմ ինչ սրբություններ պիտի բաժին հասնեն Սուրբ երկրում. և Հայոց աշխարհին վիճակվեցին բազմաթիվ սրբատեղիներ, որոնց մեջ նաև՝ Գողգոթան և Սիոնում Սբ. Հակոբ Տեառնեղբոր տունը՝ քրիստոնեության առաջին պատրիարքարանը, որտեղ մինչ օրս գտնվում է Հայոց պատրիարքարանը:

Պատահական չէ, որ Գողգոթան և Սիոնը բաժին ընկան հայերին. նշեցինք, որ ըստ ավանդության՝ հենց Գողգոթայում էին ամփոփված մեր մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկի նշխարները, իսկ Սիոնում կառուցվել էր առաջին տաճարը՝ հավանաբար, Հայոց պատրիարքարանի տեղում: Յավոք, Տիրոջից հայերին շնորհված և մեր խնամքին հանձնված Գողգոթայի հայապատկան սրբավայրը 14-րդ դարում հափշտակեցին Հայ Եկեղեցուց՝ քրիստոնյաներին անհարիր կերպով:

Չորրորդից մինչև իններորդ դարերը Երուսաղեմում և նրա շրջակայքում գործում էր մոտ 90 հայկական վանք:



Ամենախորհրդանշականն այն է, որ Երուսաղեմը բաժանված է չորս մասի, որոնցից երեքը կրոնական պատկանելությամբ են անվանվում՝ Քրիստոնեական, Հրեական, Մահմեդական, և միայն մեկը՝ Ազգային. այն է՝ Հայկական: Այս ամենը նույնպես խոսուն փաստեր են, որ իսկապես, Երուսաղեմի հիմքը դրել է Հայոց մեծ նահապետ Հայկ-Մելքիսեդեկը, և ի սկզբանե այն եղել է Պաղեստինի Հայոց թագավորության մայրաքաղաքը: Տպավորիչ է, որ հնուց մինչ օրս՝ Երուսաղեմի տեղաբնակ հայերն իրենց անվանում են ոչ թե երուսաղեմացիներ, այլ սաղիմահայեր, սաղիմցի, սաղիմուհի և այլն:

Հայերն ի սկզբանե ապրել են Քրիստոսի Եկեղեցու խորհուրդն ունեցող Դրախտի և Նոյան տապանի երկրում՝ համայն մարդկության և իրենց բուն հայրենիքում՝ Հայաստանում: Այստեղ, ինչպես բազմիցս ասվել է արդեն, բնակվել են մինչջրհեղեղյան բարեպաշտ նախահայրերը՝ Աստծո որդիներն՝ Ադամից մինչ Նոյ, և Ջրհեղեղից հետո այստեղ են ապրել համայն մարդկության նահապետներ Նոյը և նրա որդիները: Իսկ Հայկ նահապետի օրոք այն եղել է միակ բարեպաշտ երկիրը: Եվ միևնույն ժամանակ այդ հնագույն ժամանակաշրջանում հայերը Հայկ նահապետի առաջնորդությամբ ապրել են նաև Պաղեստինում՝ Սաղեմում, որ հետագայում պիտի դառնար մարգարեների, մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի և առաքյալների քաղաքը. այն խորհրդանիշն է երկնային Երուսաղեմի, որտեղ էլ բարեպաշտությանը հետամուտ հայերը իրենց հոգևոր սուրբ առաջնորդների հետ, ըստ միջնադարյան մի հայտնության, պիտի հավիտյանս բնակվեն Տիրոջ

կողմից նրանց շնորհված առանձնահատուկ փառավոր վայրերում, ինչի մասին կխոսվի սույն աշխատության համապատասխան հատորում:

Վերջաբան

«Ոչ թէ նա է ընտրյալը, ով ինքն իրեն է գովաբանում, այլ նա, ում Տերն է գովում»[228]:

Այսպիսով բացահայտվեց, որ առեղծվածային Մելքիսեդեկ անվան ներքո եղել է հենց հայոց մեծ նահապետ Հայկը, իսկ նրա հպատակներից Սաղեմի բարեպաշտ բնակիչները եղել են հայերը՝ նրա սերունդները:

*Դարերի խորքից Մելքիսեդեկի մասին առկա կարծիքները և մեկնությունները հանգեցրել են հետևյալ եզրակացության, որ **«Մելքիսեդեկի կերպարն անսպառ է»**[229]: Սակայն կարծում ենք, որ Տիրոջ շնորհով՝ սույն աշխատությամբ Մելքիսեդեկի ով լինելու մասին սպառիչ պատասխան տրվեց:*

*Իսկ այն հարցին, թե ինչո՞ւ են հազարավոր տարիներ ծածկված խորհուրդները ի հայտ գալիս հենց այս օրերին, կարող է պատասխանել հավանաբար Ժողովողի հետևյալ համարը. **«Ամեն բանի ժամանակը կա, և աշխարհում ամեն գործ ունի իր ժամանակը... լռելու ժամանակը և խոսելու ժամանակը»**[230]:*

*Իսկ թե ինչո՞ւ հատկապես այս աշխատությունում հարցին համակողմանի պատասխան չենք գտնում, հավանաբար այդ առթիվ տեղին է՝ հիշել Տերունական խոսքը. «**Գոհութիւն Քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից և գիտուններից և հայտնեցիր մանուկներին. այո՛, Հա՛յր, որովհետև այսպէս հաճելի եղաւ Քեզ**»[231]:*

*Մեր կողմից կարող ենք միայն ասել՝ **«Անպիտան ծառաներ ենք, ինչ որ պարտավոր էինք անել, ա՛յն արեցինք»**[232]:*

*Հայոց առանձնաշնորհների վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում հեղինակավոր անձանց կողմից միշտ էլ ինչ որ չափով անդրադարձ եղել է: Ինչպես եղիշեն իր Արարածոց մեկնության մեջ որպես հայոց առանձնաշնորհ է ներկայացնում ընդհամենը Դրախտի երկու գետերը (Տիգրիսը և Եփրատը) և Նոյան տապանը: Եվ դա արդեն իսկ համարում է մեծագույն շնորհ՝ հայոց ազգի համար. **«Երկու գետերով և տապանով վեր ենք բոլորից»**, և շարունակում է՝ ի ցույց դնելով այն մեծ օգուտը, որ սպասելի է նման շնորհների առկայությունից. **«Եվ թէ ի՞նչ օգուտ է. նախ՝ իմաստութեան պատճառ է մեզ համար, որպեսզի անմոռաց պահենք Աստծո արարչությունը, և ակնկալենք վերստին նորոգում: Ահա և երեք բարեխոս ունենք առ Աստված, քանզի այն որ փրկութեան պատճառ եղավ մի տան***

---

228 Բ Կորնթ. 10:18:

229 Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека…, Москва 2012, ст. 62.

230 Ժող. 3:1,7:

231 Ղուկ. 10:21:

232 Ղուկ 17:10:

համար, լինի և մեզ համար: Իսկ գետերը հրավիրակ են մեզ, որպեսզի գնանք այն ակնաղբյուրի մոտ (դեպի Դրախտ) որտեղից սկիզբ են առնում նրանք»[233]:

Ինչպես սույն աշխատությունում, նաև հաջորդ հատորներում էլ եթե Աստված կամենա, ի ցույց կդրվեն բազմաթիվ առանձնաշնորհներ՝ մեկը մյուսից զարմանալի, որ շնորհվել է հայ ազգին:

Հատկապես հաջորդ՝ II հատորում, որը նույնպես բաղկացած կլինի վեց գրքերից, կներկայացվի Հայկ Նահապետի ննջումից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած ժամանակաշրջանը: Այստեղ էլ կլինեն այնպիսի բացահայտումներ, որոնք ինչպես Մելքիսեդեկ նահապետի առեղծվածը, դարձյալ անհայտության քողի տակ են գտնվել հազարավոր տարիներ, իսկ նրանցից մեկը խորհրդավորությամբ է՛լ ավելի զարմանահրաշ և վեհաշուք է:

Եվ ուրեմն, ի տարբերություն մյուս ժողովուրդների, մենք բազմաթիվ մեծ և հրաշալի բարեխոսներ ունենք առ Աստված:

Ինչպես տեսանք այս հատորը լի էր բազմաթիվ տարբեր հեղինակավոր անձանց աշխատություններից բերված հղումներով: Սակայն օրեցօր աշխարհի տարբեր երկրներում հեղինակավոր հնագետների և պատմաբանների կողմից Հայաստանի մասին նոր գրքեր են լույս տեսնում: Ուստի այս հատորը կարող էր ավելի հարստանալ օտարազգի գիտնականների աշխատությունների մեջբերումներով: Հուսանք, որ դրանք ըստ պատշաճի կօգտագործվեն հաջորդ հատորներում կամ նույնի հաջորդ տպագրության մեջ:

Հույս ունենք, որ մեր ուսումնասիրությունը մեծապես կնպաստի, որպեսզի ծանոթանալով այս տեղեկություններին՝ ազգովի դառնանք սուրբ և փրկարար արժեքներին, որով Հայոց աշխարհի վրա լայնորեն կբացվեն Աստծո շնորհների և օրհնության դռները:

***«Հայաստան. Արարչագործությունից մինչև Երկրորդ Գալուստ»** գրքի առաջին հատորն ավարտենք Խաչատուր Աբովյանի հետևյալ մտորումով (փոխադրված՝ արդի հայերենի).*

***«Խորհում էի մեր կորցրած փառքի ու մեծության մասին, մեր առաջին՝ այն հիանալի թագավորների և իշխանների գործերի ու կյանքի մասին, մեր Հայրենիքի, մեր սուրբ աշխարհի առաջվա աքանչելիքների ու հրաշքների մասին, մեր ընտիր ազգի աննման բնության ու արած քաջագործությունների մասին. Մասիսը միշտ առջևս էր կանգնած և ցույց էր տալիս, թե ի՛նչ աշխարհի ծնունդ եմ ես, Դրախտը կենդանի էր մտքումս, որ ինձ քուն թե արթուն՝ միշտ մեր երկրի անունն ու պատվականությունը իմ առջև էր բերում: Հայկը, Վարդանը, Տրդատը, Լուսավորիչը քնած տեղս էլ ինձ ասում էին, որ ես իրենց որդին եմ. թե՛ Եվրոպան, թե՛ Ասիան ինձ անդադար ձայն էին տալիս, որ Հայկի զավակն եմ ես, Նոյի թոռը, Էջմիածնի որդին, Դրախտի բնակիչը»** [234]:*

---

[233] Եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Զվարթնոց, Երևան 1992 թ., էջ 245:

[234] Խաչատուր Աբովյան. Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի. Երևան 2004. էջ 62:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աստուածաշունչ, արևելահայերէն նոր թարգմանութիւն, Ս. Էջմիածին, 1994:
2. Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, Երևան, 1983:
3. Անժելա Տերյան, Հայաստանը արարչագործության և քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2002:
4. Արտակ Մովսիսյան, «Հնագույն պետությունը Հայաստանում՝ Արատտա», Երևան, 1992:
5. Արտակ Մովսիսյան, «Սրբազան Լեռնաշխարհ», Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2000:
6. Բառարան Սուրբ Գրոց, Կոստանդնուպոլիս, 1881:
7. Գրիգոր Նարեկացի, Ապարանքի Սուրբ Խաչի պատմությունը, Երևան, 2005:
8. Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Տաղեր, Երևան, 1979:
9. Գրիգոր Տաթևացի, Գիրք քարոզութեան, որ կոչի Ձմերան հատոր, Կ. Պոլիս, 1740:
10. Գրիգոր Տաթևացի, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729:
11. Եզնիկ Կողբացի, «Եղծ աղանդոց», թրգմ. և ծնթ. Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1994:
12. Եղիշե Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, Գիրք Ա, Երևան 1971:
13. Զենոն Կոսիդովսկի, «Բիբլիական ավանդապատումներ», Երևան, 1970:
14. Է. Վ. Խանզադյան, Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, ՀՍՍՀ ԳԱ հրատ. Երևան, 1967:
15. Լևոն Միրիջանյան, Աստվածաշունչը և մենք, Սբ. Էջմիածին, 2009:
16. Խաչատուր Աբովյան. Վէրք Հայաստանի, ողբ հայրենասիրի. Երևան 2004:
17. Կիմ Բակշի, «Ճակատագիր և քար», էսսեներ, «Սով. Գրող» հրատ., Երևան, 1985:
18. Հանդես Ամսօրյա 1998 թ. հունուար-դեկտեմբեր 1-12, Գաբրիելեան Հ. Կ, «Հայերի բնօրրանը՝ Հայկական լեռնաշխարհը», Վիեննա, 1998:
19. Հովհաննես Ահամրանյան, «Հայ արիներ» պարբերական, Թիվ 85, 86, 87, մայիս, հունիս, հուլիս, (Հայկական լեռնաշխարհի և Քանաանի փոխառնչությունները Մ.Թ.Ա. IV-II հազարամյակներում), 2007:
20. Ղևոնդ Ալիշան, Հայաստան, յառաջ քան զլինելն Հայաստան, Վենետիկ, 1904:
21. Ղևոնդ Ալիշան, Հայոց հին հաւատքը կամ հեթանոսական կրօնը, Երևան 2002:
22. Ղևոնդ Ալիշան, Նուագք, սուրբ Ղազար, Վենետիկ, 1867:
23. Մարտիկյան Հ. Ա., Կրոնի ծագումը և դիցաբանությունը ըստ համեմատական կրոնագիտության, Վիեննա, 1920:

24. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր 1264:
25. Մեկնութիւն չորեքտասան թղթոց երանելոյն Պօղոսի Առաքելոյ, աշխ. տեառն Հ. Գաբրիէլի աթոռակալ վարդապետի Աւետիքեան Կ.Պօլսեցւոյ, հատոր 4, Վենետիկ, 1812:
26. *Մխիթար Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկուա, 1860:*
27. Միքայէլ վարդապետ Չամչեանց, Մեկնութիւն Սաղմոսաց, հտ 8, Ի Վանս Սրբոյն Ղազարու, Վենետիկ, 1820թ:
28. Մկրտիչ Եպիսկոպոս Աղաւնունի, Սուրբ Երկրին Սրբավայրերու Ավանդութիւնները, Երուսաղէմ, 1936:
29. Միհեր Հակոբյան, Հայ ժողովրդի ռազմական տարեգիրքը, գիրք առաջին մ.թ.ա. 3000-1561, Երևան, 2007:
30. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան, Աստուածաշնչական Սուրբեր, Երևան, 1997:
31. Ջոն Ահմարանյան, Հայկական լեռնաշխարհը և Քանանը. Վաղ շփումներ. Երևան, 2005:
32. Ռաֆայել Համբարձումյան, Հանգանակ հայ ինքնության, Երևան, 2010:
33. Ս. Ա. Սարդարյան, Հայաստանը քաղաքակրթության բնօրրան, Երևան, 2004:
34. Ս. Ա. Սարդարյան, Հայաստանի նախնադարյան հասարակությունը, Երևան, 1967:
35. Սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Նարեկայ վանից վանականի. Մատեան ողբերգութեան, (ԲանՂԳ. Ե), Զմիւռնիա, 1870:
36. Սրբոյն Եփրեմի (Ասորւոյ) Մատենագրութիւնք, հատոր առաջին, Վենետիկ, 1836:
37. Սուրբ Եպիփան Կիպրացի, Ճառք, աշխատասիրությամբ Հակոբ Քյոսեյանի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2013:
38. Վարդան Արևելցի (Բարձրաբերդցի). Մեկնութիւն սաղմոսաց Դավթի, Յաժդրախան, 1797:
39. Վարդան Արևելցի, Տիեզերական պատմություն, Երևան, 2001:
40. Տեսութիւն պատմութեանց Աստուածաունչ Սուրբ Գրոց, բացաքննեալ երկասիրութեամբ տեառն տեառն Ստեփաննոսի վարդապետի Ագնոց արքեպիսկոպոսի և ընդհանրական Աբբայի Մխիթարեանց, Վենետիկ, հատոր Ա, 1819:
41. Ուխտանես Եպիսկոպոս**,** Հայոց Պատմություն**,** Երևան**,** 2006:
42. *А. Мартиросян. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964.*
43. Архиепископ Аверкий (Таушев), Четвероевангелие / Апостол, Москва 2012.
44. Библейско-Биографический словарь, Ф. И. Яцкевич, П. Я. Благовещенский. Москва, 2001.
45. Библейский словарь, Доктор Эрик Нюстрем 19-й в., 1989.
46. Блаженный Феодорит, Епископ Киррский. Толкование на четырнадцать Посланий святого апостола Павла, Москва, 2013.

47. В. Потто, Страна Арарата, С. Петербург, 1905.
48. Валерий Брюсов, Русские писатели об Армении, Ереван, 1946г.
49. Всемирная Энциклопедия Христианство, гл. ред. А. М. Вячеславович, Минск, 2004.
50. Генри Геллей, Краткий Библейский толкователь, Канада, 1989.
51. Григорьева Елена Валентиновна, По чину Мельхиседека..., Москва, 2012.
52. Девид Лэнг, "Армяне народ-созидатель", Москва, 2004г.
53. Дэвид Рол – известный британский писатель и археолог, "Генезис цивилизации откуда мы произошли...", Москва, 2005.
54. Дионисий Ареопагит, О небесной иерархии, СПб. 1997.
55. Древний патерик, Москва, 1997.
56. Жюль Леклерк, (Президент Брюссельскаго и Член Сотрудник Имп. Русскаго Географических Обществ 1893 г.) Поездка на Арарат, С.Петербург, 1893.
57. Евсевия Памфила, Церковная История, Санкт-Петербург, 2007.
58. Ефремь Сиринь, Творения, Томь 6, Москва, 1995.
59. Иосиф Флавий, Иудейская война, Москва, 1999.
60. История древнего востока, Ред. Б.Б. Пиотровский, Москва, 1988.
61. К. Х. Кушнарева, Т. Н. Чубинишвили, Древние культуры южного кавказа, Ленинград, 1970.
62. Л. Л. Карапетян "История гончарного производства древней Армении" Ереван, 1966.
63. Луг духовный, творения блаженного Иоанна Мосха. Москва, 2008.
64. Лопухина А. П., Толкования Библия, 1, Петербургь, 1904-1907.
65. Максим Исповедник, прп. О различных недоумениях у святых Григория и Дионисия / прп. Максим Исповедник. – М.: Институт философии, теологии и истории св. Фомы, Москва, 2006 г.
66. Мифы народов мира, энциклопедия 2 к-я, Глав. ред. С.А. Токарев. Москва, 1992.
67. Мифологический словарь, Глав. ред. Е. М. Мелетинский, Москва, 1991.
68. Мойшезон Борис Гершевич. АРМЕНОИДЫ – АРИСТОКРАТИЯ ДРЕВНОСТИ. Журнал «Ной», №19, Москва, 1996.
69. Полное собрание творений святителя Иоанна Златоуста в 12 томах, Издательство Белорусского Экзархата–Белорусской Православной Церкви. 1-3, Том 2, Творения, Седьмое слово о священстве, Минск, 2005.
70. Роберт Грейвс, Рафаэль Патай, Иудейские Мифы, Книга Бытия, Москва, 2002.
71. Псалтирь с объяснением значения каждого стиха, блаженного Феодорита епископа Кирского, Москва, 1997.
72. Св. Иоанн Злотоуст, Полное собрание творений, Том 12, книга 1, Толкование на послание к евреям, Минск, 2005.
73. Св. Кирилл Александрийский. Творения, Книга вторая, Москва, 2001.

74. Святитель Афанасий Великий. Творения, Том 4, Москва, 1994.
75. Святитель Филарет Дроздов, Толкование на книгу Бытия, Москва, 2004.
76. Сергей Глинка, Гайк. Русские писатели об Армении, Арменгиз, Ереван, 1946.
77. Словарь библейского богословия / редкол.: К. Леон-Дюфур [и др.]. – Киев: Кайрос М.: Истина и жизнь, 1998.
78. Священномученик Киприан Карфагенский, Таинство единой Церкви, Москва, 2008.
79. Т. В. Гамкрелидзе, Вяч. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Тбилиси, 1984.
80. Творения Святого Епифанія Кипрскаго, Часть вторая, Об Ересяхь, Москва, 1864.
81. Феофилакт Болгарский, Толкование на деаниа и послания святых апостолов, Том 3. Москва, 2011.
82. Филарет (Дроздов, 1783-1867), "Толкование на книгу Бытия", Москва, 2004.
83. Энциклопедия Библейская, (труд и издание архимандрита Никифора, М. 1891), Москва, 2005.
84. Энциклопедический словарь, Том XIX, Мекененъ-Мифу-Баня. изд. Ф. А. Брокгаузъ, И. А. Ефронъ, С.-Петербург, 1896.
85. Comparative Theology By H.H. Pope Shenouda III, Translated by Mary&Amani Bassilli First Edition COPA, Published by Coptic Orthodox Publishers Association, London, 1988.
86. Kramer, 1952, p. 23; Канева, 1964, с. 211-212; Cohen, 1973.
87. http://www.urantia.ru/book/Paper93.asp.
88. http://www.bible-center.ru/article/melchizedek

ՑԱՆԿ

Երկու խոսք *4*
Խմբագրի առաջաբան *6*
Առաջաբան *7*

ԳԻՐՔ I

Երկիր, որտեղ արարվեց Եդեմական Դրախտը *11*
Եդեմաբուխ չորս գետեր *12*
Տիգրիս և Եփրատ *18*
Փիսոն *21*
Գեհոն *24*
Աստվածաշնչյան Արևելք *47*
Դրախտի տեղանքը՝ ըստ շումերական ընկալումների *63*
Եդեմ *78*
Ներդրախտային շրջան *94*
Արտադրախտային շրջան *103*
Եզրահանգում *114*
Օգտագործված գրականության ցանկ *115*

ԳԻՐՔ II

Երկիր, ուր հանգրվանեց Քրկության Տապանը *118*
Տապանի ուղղությունը *120*
Հայաստանը որպես տապանի հանգրվանատեղի *122*
Արարատը որպես երկիր և գավառ *123*
Արարատ անվան ստուգաբանությունը *124*
Արարատը որպես լեռ *126*
Կորդուք *127*
Սուրբ Գիրքը և Կորդվաց լեռները *128*
Կորդուքը որպես երկիր *129*
Մասիս-Արարատ *131*
Գիլգամեշը և Նոյը *135*
Բարիս *136*
Մասիսի և նրա շրջակայքի հետ կապված ավանդազրույցները *139*
Երևան *140*
Հետջրհեղեղյան առաջին ոստանները՝ Ակոռի, Նախիջևան *142*
Առնոյոտն – Մարանդ *144*
Վարդավառ-Նավասարդ *145*
Գինեգործություն *146*
Ջրհեղեղի հետ կապված այլ վկայություններ *147*

Մասիսը որպես սրբազան լեռ *148*
Արարատ բարձրացողների վկայությունները *151*
Մասիսի–Արարատի մասին ականատեսների տպավորությունները *158*
Հետջրհեղեղյան շրջան *172*
Ավետաբեր աղավնին *173*
Հայաստանը որպես հետջրհեղեղյան առաջին բնակության վայր *174*
Նոյի զոհաբերությունը *176*
Հետջրհեղեղյան պատվիրաններ *179*
Ծիածան *180*
Նոյ և Քամ *183*
Նոյան շրջանի ոսկե դար *184*
Եզրահանգում *186*
Օգտագործված գրականության ցանկ *187*

ԳԻՐՔ III

Երկիր, որին բախվելով սասանվեց համաշխարհային չարիքը *190*
Արդյոք Նոյը լքե՞ց Արարատյան երկիրը *193*
Դեպի Սենաար *194*
Աշտարակաշինություն *196*
Լեզուների խառնակումը *201*
Բաբելոնից ժողովրդի ցրվելը *204*
Սենաարը լեզուների խառնակումից հետո *206*
Հայկ Նահապետ *211*
Արարատյան երկիրը Հայկի և Նոյի ժամանակաշրջանում *213*
Քաղաքաշինություն *217*
Նախապատրաստություն պատերազմի *217*
Պատգամավորներ Բաբելոնից *220*
Մինչ Քրիստոս առաջին համաշխարհային պատերազմը *222*
Լայնալիճ աղեղ *227*
Հաղթանակ *230*
Բաբելացիների փախուստը *234*
Դերեզմանք *235*
Հայկը Բելին սպանեց Աստծո օգնությամբ *238*
Ամփոփում *241*
Օգտագործված գրականության ցանկ *244*

ԳԻՐՔ IV

Երկիր, որտեղ գործածության մեջ է Դրախտի լեզուն *246*
Այն մասին, որ բոլոր լեզուներն առաջացել են մի նախնական լեզվից *249*
Հայոց լեզուն որպես առաջին՝ ադամական լեզու *253*

Հայկի, Նոյի և Ադամի շրջանից մնացած տեղանունները վկայում են հայերենի՝ առաջին լեզու լինելու մասին *259*
Հայերենը, թե՞ եբրայերենը *261*
Աբրահամի և իր նախնիների լեզուն ասորերենն էր *263*
Աբրահամի նախնիները կռապաշտ էին *265*
Երբ և ինչ պայմաններում առաջացավ եբրայերեն լեզուն *267*
Արդյո՞ք Ծննդոց Գրքի անվանումները վկայում են եբրայերենի՝ առաջին անխառն լեզու լինելու մասին *271*
Ինչո՞ւ են տիեզերական և հայ եկեղեցու հայրերից շատերը եբրայերենը համարում առաջին լեզու *274*
Հայոց լեզվի մասին գիտական աշխարհում արծարծվող կարծիքները *278*
Հայկական լեռնաշխարհը որպես հնդեվրոպական լեզվի հայրենիք *285*
Արդյո՞ք միայն հնդեվրոպական լեզու և հնդեվրոպական լեզվի հայրենիք .. *291*
Հայոց լեզվի մասին *300*
Հայոց լեզվի մասին օտարազգի գիտնականների դրվատական խոսքերը *302*
Հայոց լեզվի մասին հայ հեղինակավոր անձանց խոսքը *307*
Հայոց գրերը *312*
Ամփոփում *318*
Օգտագործված գրականության ցանկ *320*

ԳԻՐՔ V

Երկիր, որի մշակույթը եղավ հին աշխարհի զարգացման մատակարարը *323*
Քուր-արաքսյան քաղաքակրթություն *323*
Արմենոիդներ *329*
Մետաղագործության Հայրենիքը *336*
Պղնձի դար *341*
Պղնձի տարածումը *344*
Բրոնզի դար *348*
Բրոնզի տարածումը *351*
Երկաթի դար *357*
Երկաթի տարածումը *361*
Ոսկի *363*
Ջինագործություն *366*
Երկաթե զենքեր *368*
Գյուղատնտեսություն *369*
Անասնապահություն *371*
Հացաբույսեր *372*
Գութան *373*
Այգեգործություն *374*
Ոռոգում *375*
Գինի *376*

Գարեջուր *379*
Գործվածքներ և կաշեգործություն. Մանածագործություն *380*
Գորգագործություն *381*
Կաշեգործություն *389*
Կենցաղային ամանեղեն և սպասքեղեն. Խեցեգործություն *390*
Ապակեգործություն *393*
Շինարարություն *394*
Բժշկություն *397*
Աստղագիտություն *403*
Կենդանակերպեր *405*
Օրացույց *406*
Սթոուն հենջ – Քարահունջ *407*
Հայոց տոմար *409*
Հայկ-Օրիոն *411*
Անանիա Շիրակացի *412*
Բյուրականի աստղադիտարան *413*
Աստղագիտության մանկապատանեկան մրցույթ *415*
Աստվածապաշտությունը Հայաստանում Հայկ Նահապետի օրոք *416*
Ար Աստծո երկիր Արարատը և Նրա սեփական ժողովուրդ Արմենները *424*
Հին աշխարհի երկրները բարեպաշտ Հայաստանի մասին *428*
Վերջաբան *432*
Օգտագործված գրականության ցանկ *434*

ԳԻՐՔ VI

Երկիր, որին շնորհված է հինավուրց խորհուրդների բացահայտումներ *437*
Մելքիսեդեկ *437*
Սաղեմ *441*
Մելքիսեդեկի անվանման մեկնությունը *443*
Քահանայություն *444*
Հաց և գինի *445*
Մելքիսեդեկն օրհնեց Աբրահամին *447*
Տասանորդ *447*
Մելքիսեդեկը և Սաղմոսների գիրքը *451*
Մելքիսեդեկի մասին Եբրայեցիներին ուղղված նամակից *452*
Տարաբնույթ կարծիքներ Մելքիսեդեկի մասին *455*
Հազարամյակների առեղծվածը Հայկ-Մելքիսեդեկ *465*
Ադամը՝ թագավոր և քահանա *467*
Նոյը՝ որպես քահանա *468*
Նոյը՝ որպես թագավոր *470*
Նոյը Քրիստոսի նախատիպն էր *471*
Մեծ նահապետի վախճանը և ժառանգությունը *471*

Այն մասին, որ Հայկին աստվածացրել են հարևան կռապաշտ ազգերը 475
Հայերը Հայկին չէին աստվածացնում 477
Սրբադասում 479
Ջուգահեռներ Հայկի և Մելքիսեդեկի միջև 482
Հայաստանից – Քանան 490
Մետաղ 495
Քանանի մատույցներում 497
Հայկ նահապետը և նրա սերունդները՝ հայերը Պաղեստինում 499
Հայկ-Մելքիսեդեկ և Աբրահամ 507
Հայկ-Մելքիսեդեկ մեծ նահապետի վախճանը 514
Վերջաբան 517
Օգտագործված գրականության ցանկ 519

Աշոտ դպիր Արևշատյան

ՀԱՅԱՍՏԱՆ ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԳԱԼՈՒՍՏ

Հատոր I

Աշխատություններին իրենց մասնակցությունը բերեցին.

Գայանե Թերզյանը, Տ. Մինաս քահանա Մարտիրոսյանը,
Լիլիթ Թափալցյանը, Սաուսիկ Ալեքսանյանը,
Կարմեն Մարտիրոսյանը, Մանվել Բաբայանը, Անահիտ,
Մամիկոն և Վարդան Հովհաննիսյանները, Գագիկ Եգանյանը,
Արման Կարախանյանը, Արփինե Պապայանը և ուրիշներ։

Եւ արդ, աղաչեմ զձեզ, ո՛վ հանդիպողք եւ ընթերցողք յայսմ մատենին, յիշեսջիք ի Քրիստոս գրողաց սորա ի թողութիւն մեղաց, եւ դուք յիշեալ լիջիք առաջի ամենակեցոյց Գառինն Աստուծոյ, եւ Նմա փա՛ռք ընդ Հօր եւ Հոգւոյն Սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն։

Չափսը՝ 70x100 1/16։
Թուղթը՝ օֆսեթ։ Տպագրությունը՝ օֆսեթ։
33 տպ. մամուլ։ Տպաքանակը՝ 1000 հատ։

«Աստղիկ Գրատուն» հրատարակչություն
ք. Երևան, Գևորգ Քոչարի փ. 21։
Հեռ.՝ (+374 10) 52 88 00։
E-mail: info@astghik.am
www.astghik.am